ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1991

ԳՄԴ 63.3(2Հ)52
Հ249

Կազմողներ՝ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։
Հ249 Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ [կազմ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբ.].— Եր.։ Հայաստան, 1991.— 758 էջ։

Ժողովածուն ամփոփում է Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթեր և նյութեր հայկական, ռուսական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից։ Փաստաթղթերի մեծ մասը տարբեր պետությունների հյուպատոսների, դեսպանների, միսիոներների և բարձրաստիճան այլ պաշտոնյաների զեկուցագրեր են, տեղեկագրեր ու նամակներ։ Այդ հարուստ և հավաստի նյութերը ճշմարտացիորեն պատկերում են հայերի ոչնչացման ահավոր պատկերը Թուրքիայում XIX դարի վերջին և XX դարի սկզբին և, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ երիտթուրքերի արյունոտ ոճրագործությունների հետևանքով զոհվեցին մոտ մեկուկես միլիոն անմեղ մարդիկ և ամայացավ Արևմտյան Հայաստանը։

Հայերի ցեղասպանությանը նվիրված ներկա ժողովածուն 1966 և 1982 թթ. ռուսերեն հրատարակված «Геноцид армян в Османской империи» գրքի թարգմանությունն է (հայերենում ավելացված են մի շարք նոր նյութեր)։ Այս ժողովածուն ընդգրկում է 1876—1918 թթ. ժամանակաշրջանը։

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար։

Հ 0503020918 / 701 (01)—91 50—90 ԳՄԴ 63.3(2Հ)52

ISBN 5—540—00862—6

© Կազմող, թարգմանիչ, խմբագիր, ձեռավորում, 1991 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ մարդկության մեծագույն ողբերգություններից մեկը։ Իշխանության գլուխ անցած ազգայնամոլ «երիտասարդ թուրքերի» կուսակցությունը կազմակերպեց հայերի անօրինակ ցեղասպանություն և ծխացող անապատի վերածեց ամբողջ Արևմտյան Հայաստանը։

Արևմտահայերի զանգվածային ջարդերի քաղաքականությունը, սակայն, սկիզբ առավ դեռևս XIX դարի վերջերին։ Դաժան ու նենգ սուլթան Աբդուլ Համիդը միայն 1890-ական թթ. սրի քաշեց շուրջ 300 000 մարդ։ 1909 թ. Կիլիկիայի Ադանա քաղաքի հայ բնակչության զոհերի թիվը կազմեց մոտ 30.000։ Ուստի, երբ խոսք է լինում Մեծ եղեռնի մասին, ապա պետք է նկատի ունենալ ոչ միայն 1915—1916 թթ. համընդհանուր կոտորածը, այլև XIX դարի վերջերի և XX դարի սկզբի զանգվածային ջարդերը։

Մի քանի խոսք այդ արյունոտ անցքերի նախապատմության մասին։ Գտնվելով թուրքական բռնապետության լծի տակ, Արևմտյան Հայաստանը ենթարկվում էր դաժան ռազմաավատական ճնշումների և անլուր կեղեքումների։ Սոցիալական և ազգային ճնշումներն այստեղ ընդունել էին այլանդակ ու ամոթալի ձևեր։ Սահման չուներ սուլթանների ու փաշաների անսանձ կամայականությունը։ Հայերի վիճակը, որպես իրավազուրկ «գյավուրների», անտանելի էր. նրանք մշտապես գտնվում էին ջարդերի ու կոտորածի սպառնալիքի տակ։

«Հայերի, ինչպես և մյուս քրիստոնյաների դրությունը Թուրքիայում, խղճալի է... Ես տեսել եմ մի քանի հայերի կտրված

ականջներով և քթերով, և դա արված էր ոչ թե դատարանի վրոնով, այլ քմահաճությամբ ու բռնությամբ ինչ-որ մի հարուստ ու ազդեցիկ աղայի, գուցե և տեղական դիվանի մի անդամի կողմից: Հայերը մշտապես գտնվում են տագնապալի վիճակում»[1]: Այսպես է գրել ռուս գեներալ Մ. Լիխուտինը, որը 1854—1855 թթ. եղել է Արևմտյան Հայաստանում:

Մուշ գավառում տիրող վիճակը ականավոր ազգագրագետ ու հասարակական գործիչ Գ. Սրվանձտյանը 1864 թ. պատկերել է հետևյալ ձևով. «Գնդակների արձակում, արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կողոպտում, օրինաց եղծում, կենաց զրավում...»[2]:

Դիմելով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ IV-ին, արևմտահայերը 1876 թ. գրում էին. «Զօր ու գիշեր, միշտ և հանապազ տագնապի մեջ ենք, դաժանորեն տառապում ենք գավառական պաշտոնյաների, հարկահանների, կառավարիչների և այլ բռնավորների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ ճրանք անպատվում են մեր եկեղեցական հովվին, մեր կանանց համեստությունը, մեր աղջիկների պատիվը, հեղում են մեր երիտասարդների և ծերերի արյունը, անարգում մեր տաճարի ու ծեսերի սրբությունը»[3]:

Լոնդոնի «Թայմս» թերթի թղթակից Նորմանը նշում էր, որ 1877 թ. գարնանը, երբ դեռ նոր էր սկսվել ռուս-թուրքական պատերազմը, սուլթանական զորքը հայ բնակչության նկատմամբ կատարեց անլուր դաժանություններ: «Հայերի դրությունը այն երկրում, որով անցել է Խմայիլ փաշայի բանակը, անչափ աղետալի է: Ալաշկերտի դաշտի բոլոր 122 գյուղերը, բացի 9-ից, լրիվ ավերված են... Բայազետ քաղաքը և շրջակա գյուղերն էլ նույն բախտին են արժանացել: Այս վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք և երեխաները սպանվել են ամենադաժան ձևերով»[4]:

---

[1] М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854—1855 годах. СПб., 1863, с. 168.

[2] *Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 70։*

[3] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, փաստաթուղթ 2։*

[4] C. B. Norman. Armenia and the Campaign of 1877—1878. London, 1878, p. 299—300.

1882 թ. մարտի 14-ին Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Նովիկովին հղած զեկուցագրում Վանի ռուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարը գրում էր. «Պարտք եմ համարում հայտնել, որ թուրքերից սիստեմատիկորեն հալածվող այստեղի հայերի վիճակն իրոք դարձել է ավելի անտանելի, քան երբևէ: Պետք է լինել տեղում դատելու համար, թե ինչպիսի վրդովեցուցիչ չափերի են հասնում թուրքերի հալածանքները հայերի նկատմամբ»[1]: 1885 թ. Եվրոպայում գործող հայ հայրենասերների կոմիտեն, դիմելով մեծ տերությունների արտաքին գործերի մինիստրներին, գրում էր, որ թուրքական կառավարության կողմից նախօրոք մշակված քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում «զոհվում են մարդիկ, ավերվում են տնտեսություններ, կենսագործվում է ժողովրդի բնաջնջման ծրագիր: Բերլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի ընդունումից հետո թուրքական կառավարությունը իր բոլոր ջանքերը գաղտնի ուղղում է հայ ազգը իր հայրենիքում ոչնչացնելու նպատակին»[2]:

Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Թոմփսոնը 1893 թ. մարտի 13-ի իր նամակում Անգլիայի դեսպան Քլեր Ֆորդին հաղորդում էր. «Այն զեկուցագրերից, որ ստացել եմ Մարզվանից՝ Միացյալ Նահանգների հյուպատոս Ջյուլեթտից, ես ավելի ու ավելի եմ համոզվում, որ Թուրքիայի այդ անհանգիստ մասում քրիստոնյա բնակչության վիճակը չափազանց ծանր է»[3]: Հայտնի հրապարակախոս Էմ. Դիլոնը, որ ճանապարհորդել էր Հայաստանում, հանգեց այն եզրակացության, որ «հայկական գավառներում հաստատված է կառավարման գազանային կարգ, որի համեմատությամբ Ամերիկայի հարավային նահանգների ստրկատիրական սիստեմի դաժանությունները աննշան չարաշահումներ են թվում»[4]:

Ազգային և սոցիալական անտանելի ճնշման, թալանի ու բարբարոսական կոտորածների այդ իրադրության մեջ ծագեց Հայկական հարցը, որը շուտով դարձավ մեծ տերությունների դիվա-

---

[1] Архив внешней политики России (АВПР). Главный архив, д. 119, л. 48—49.

[2] АВПР. Посольство в Константинополе, д. 3133, л. 27—28.

[3] Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey 1892—1893. Turkey, № 3 (1896). London, [1896], p. 67—68.

[4] Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г. М., 1896, с. 329.

նագիտական խաղերի առարկան: Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ ուժեղացավ ձգտումը դեպի ազատությունը, դեպի պայքարը հանուն իր պատվի և մարդկային տարրական իրավունքների, մանավանդ որ կար սերբերի, հույների ու բուլղարների ոգևորիչ օրինակը: Ի պատասխան թուրքական իշխանությունների դաժան ճնշումների, հայերը, որտեղ դա հնարավոր էր, դիմում էին ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի, որը, ինչպես հայտնի է, եղել և մնում է ամեն մի ճնշված ժողովրդի անսասան իրավունքը և ազնիվ, սրբազան պարտականությունը:

Բայց թուրքական ռազմավատական բռնապետությունը լսել իսկ չէր ուզում իրեն ենթակա ժողովուրդների որևէ իրավունքի մասին: Ազգային հարցի լուծման համար նա գիտեր միայն մեկ ուղի՝ զանգվածային կոտորածների, ֆիզիկական ոչնչացման ուղին: Իշխանությունները գործում էին հրով ու սրով, անլուր դաժանությամբ: Եվ այդ բարբարոսական գործելակերպն ամեն կերպ աջակցություն էր գտնում ինչպես թուրքական ավատական վերնախավի, այնպես էլ նոր ձևավորվող բուրժուազիայի կողմից, որոնք որդեգրեցին իսլամիզմի և ավելի ուշ՝ պանթյուրքիզմի գաղափարները:

Բերլինի 1878 թ. վեհաժողովից շատ չանցած, սուլթան Աբդուլ Համիդը և նրա բարձրաստիճան պաշտոնյաները ցինիկորեն հայտարարում էին, որ Հայկական հարցը լուծելու համար պետք է ոչնչացնել հայ ժողովրդին: 1882 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարը հաղորդում էր Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին. «Առավել բարձրաստիճան կառավարական պաշտոնյաները բացեիբաց արտահայտվում են, թե իբր այստեղ նրանց (հայերի— Մ. Ն.) կողմից պատրաստվում է երկրորդ Բուլղարիա, և որ իրենք (թուրքերը— Մ. Ն.), փորձով դաս առած, կկարողանան խեղդել կառավարությանը վնասակար այդ տարրին և, այդպիսով, «Հայկական հարցին» վերջ կտան ընդմիշտ»[1]: Եվ «կարմիր» սուլթան Աբդուլ Համիդը, իրոք, շուտով սկսեց իրագործել իր հրեշավոր ծրագիրը:

Հայերին կոտորելու համիդյան քաղաքականությունը խոշոր մասշտաբներով իրականացվեց 1890-ական թվականներին: 1894 թ. օգոստոս-սեպտեմբերին Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններից մեկը՝ Սասունը, կողոպտվեց և ավերվեց, բնակչությունը սրի քաշվեց առանց սեռի և տարիքի խտրության: Թուրքական կանոնավոր զորքերը և ավազակախմբերը, ընկճելով հայ գյուղացիության հերոսական դիմադրությունը, կործանեցին տասնյակ գյուղեր, սպանեցին ավելի քան 10 000 մարդ:

Ջարդարարները գործում էին ամենադաժան եղանակներով: Ահա, օրինակ, ինչպես է նկարագրվում Սասունի կոտորածը ականատեսների ցուցմունքների հիման վրա կազմված մի փաստաթղթում. «Գելիեգուզանում երիտասարդներից շատերի ձեռնուտը կապկպել են, շարել կողք կողքի, վրաները ցախ լցրել և ողջ-ողջ այրել: Մի այլ գյուղում բռնել են քահանային և մի քանի երեխի քաղաքացիների: Խոստացել են նրանց ազատել, եթե ասեն, թե որտեղ են թաքնված մյուսները: Ասել են, բայց, այնուամենայնիվ, նրանց սպանել են: Քահանայի վիզը շղթա են գցել և ձգել են տարբեր կողմեր այնպես, որ համարյա խեղդել են: Ապա սվինները ուղղահայաց տնկել են գետնին, և քահանային վեր նետել այնպես, որ ցած է ընկել սվինների վրա: Մի ուրիշ գյուղում տղամարդիկ կանանց ու երեխաների հետ թաքնվել են քարայրում, որտեղ մնացել են մի քանի օր, մինչև որ թույները մեռել են քաղցից. մնացածներին էլ հայտնաբերել են զինվորները և սվինահար արել: Սվինն էր այն զենքը, որ հիմնականում գործադրվում էր բոլոր այդ իրադարձությունների ընթացքում: Մոտ վաթսուն կանանց ու աղջիկների լցրել են եկեղեցին, զինվորներին թույլ են տվել վարվել նրանց հետ ինչպես ցանկանան, իսկ հետո սպանել, ինչը և կատարվել է: Ընտրվել են մեծ թվով առավել գեղեցիկ կանայք, որոնց առաջարկել են մահմեդականություն ընդունել և ամուսնանալ թուրքերի հետ: Հրաժարվելով դրանից, նրանք բոլորն էլ սպանվել են»[1]:

Սասունի իրադարձություններից մեկ տարի անց սկսվեցին նոր զանգվածային ջարդեր: Բ. Դռան ցուցումներով 1895—1896 թթ. հայերի կոտորած տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում, ապա ամբողջ Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ շատ գավառներում՝ Տրապիզոնում, Էրզրումում, Մարաշում, Սեբաստիայում, Երզնկայում, Վանում, Բաղեշում, Խարբերդում, Դիարբեքիրում և այլ վայրերում: Թուրք սուլթանի ոճ-

[1] АВПР. Главный архив, д. 119, л. 48.

[1] АВПР. Посольство в Константинополе, д. 3135, л. 120.

ռազմագործությունները չդադարեցին նաև հետագայում: Երկու տարում զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, թալանվեցին հարյուրավոր գյուղեր, քաղաքներ, ամայացան ամբողջ շրջաններ:

Հայ ժողովրդի նկատմամբ Աբդուլ Համիդի արյունոտ քաղաքականությունը շարունակեցին երիտթուրքերը: Լինելով մոլի պանթյուրքիստներ, նրանք գերազանցեցին արյունարբու սուլթանին: «Նրանց ձգտումը՝ թուրքացնել Օսմանյան կայսրության մեջ ապրող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և ուրիշներին, առավել կոպիտ ու համառ բնույթ ստացավ, քան Աբդուլ Համիդի օրոք էր եղել»,— գրել է «Պրավդա» թերթը[1] 1912 թ.:

Երիտթուրքերի կուսակցության պարագլուխները մինչև իշխանության գալումը երկերեսանիորեն համարտակում էին ազատության, ժողովուրդների եղբայրության, հավասարության, դեմոկրատիայի մասին, սակայն հենց որ իշխանություն ձեռք բերեցին, դարձան սանձարձակ բռնակալներ ու ջարդարարներ: «Երբ երիտթուրքերը եկան Ստամբուլում,— գրել է Էմիլ Դուրքերը,— իրենց հետ բերեցին ազատամտություն և, ասում են, նույնիսկ՝ Մարսելիեզ: Բայց այդ կատակերգությունը տևեց այնքան, որքան այն անհրաժեշտ էր, որպեսզի զմայլեցնեին մի քանի դիվանագետների: Որոշ ժամանակ անց պանիսլամիզմը փոխարինվեց պանթյուրքիզմով, այսինքն՝ ամենակատաղի նացիոնալիզմով, որպիսին աշխարհը երբևէ կարող էր պատկերացնել»[2]: Եվ ահա այդ սանձարձակ ազգայնականները իրենց առջև խնդիր դրեցին «թուրքացնել» կայսրությունը բոլոր ոչ թուրք ժողովուրդներին բռնությամբ ձուլելու և ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով:

Երիտթուրքերը որոշեցին այդ դաժան քաղաքականությունը կիրառել ամենից առաջ հայերի նկատմամբ: Բանն այն է, որ հետապնդելով ագրեսիվ նպատակներ, նրանք ձգտում էին մասնավորապես զավթել և Թուրքիային միացնել Կովկասը: Բայց դրան զգալի չափով խանգարում էր հայ ժողովուրդը, որը, ինչպես հայտնի է, ուներ ռուսական կողմնորոշում, քանզի օսմանյան

[1] Правда, 1912, № 76.

[2] E. Doumergue. L'Arménie, les massacres et la Question d'Orient, Paris, 1917, p. 127.

անտանելի լծից իր ազատագրության հույսը նա կապում էր Ռուսաստանի հետ: Որպեսզի դյուրացներ Կովկասի նվաճումը և վերջ տար Հայկական հարցին առհասարակ, երիտթուրքական կառավարությունը վճռեց բնաջնջել հայ ժողովրդին: Հատկանշական է, որ դա չի հերքել նույնիսկ Կ. Պոլսի գերմանական դեսպան, ոչ անհայտ թուրքասեր Վանգենհայմը, որը սերտ կապերի և բարեկամական հարաբերությունների մեջ էր երիտթուրքերի պարագլուխների հետ: Գերմանիայի կանցլեր Բետման Հոլվեգին հղած 1915 թ. հուլիսի 7-ի թվակիր գաղտնի զեկուցագրում նա հայտնում էր, որ երիտթուրքերը «իսկապես նպատակ է դրել ոչնչացնել թուրքական պետության մեջ ապրող հայ ազգը»[1]: Ինչպես տեսնում ենք, ասված է պարզ ու հստակ:

Թուրքիայի այն ժամանակվա մի շարք պատասխանատու պաշտոնյաների հուշագրություններում և գրավոր ցուցումներում տեղեկություններ են պահպանված երիտթուրքերի պարագլուխների այն գաղտնի խորհրդակցության մասին, որտեղ որոշում է ընդունվել հայ ժողովրդի ոչնչացման վերաբերյալ: Ահա, օրինակ, ինչ է ասել այդ խորհրդակցության ժամանակ երիտթուրքերի ղեկավարներից մեկը՝ դոկտոր Նազիմ բեյը. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում (այսինքն՝ ողջ Օսմանյան կայսրության մեջ— Մ. Ն.) և մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի հարմար իրադրություն էլ չի լինի: Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները անկատ կմնան, իսկ եթե նրանք իմանան էլ, ապա կանգնած կլինեն կատարված փաստի առաջ, և դրանով էլ հարցը կփակվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդունեն հայերի գլխովին բնաջնջման բնույթ. անհրաժեշտ է ոչնչացնել մինչև վերջին մարդը... Ես ուզում եմ, որ այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու լիիշխան տեր լինի: Թող չմնան բոլոր ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգության ու կրոնի էլ պատկանելիս լինեն»[2]:

[1] Deutschland und Armenien, 1914—1918. Sammlung Diplomatischer Aktenstücke. Hrsg. und eingel. von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 80.

[2] Mevlan Zade Rifat. Türkiye inkilâbinin iç yüzü. Halep, 1920, s. 89—93.

Այսպիսի ոգով ելույթ են ունեցել նաև խորհրդակցության մյուս մասնակիցները, որոնց թվում՝ ռազմական մինիստր Էնվեր փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթը և ուրիշներ: Նրանք են մշակել հայերի ոչնչացման ծրագիրը, որը և իրականացրին Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, իրականացրին խորամանկորեն, հետևողականորեն, անողոքաբար:

Թուրք ջարդարարների կառավարությունը սկզբում զորակոչի պատրվակով զինծառայության կանչեց երիտասարդ հայերին, բայց շուտով այդ անմեղ մարդկանց զինաթափեցին, տեղափոխեցին «աշխատանքային գումարտակներ» և ապա առանձին խմբերով գաղտնի գնդակահարեցին: 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ օրը ձերբակալվեցին և ապա ուխտադրժորեն ոչնչացվեցին արևմտահայ մտավորականության մի քանի հարյուր ներկայացուցիչներ: Այսպիսով, վերջ տալով շափահաս արական բնակչության հիմնական մասին և հայ հասարակական գործիչներից շատերին, որոնք ունակ էին կազմակերպելու իրենց ժողովրդի զինված դիմադրությունը, մարդասպանները այնուհետև անցան կանանց, երեխաների ու ծերերի զանգվածային կոտորածին: Անօգնական բնակչության մի մասը ոչնչացվեց իր հայրենի գյուղում կամ քաղաքում, մյուս մասը բռնի տեղահանումների ժամանակ՝ ճանապարհներին, օտար վայրերում, տեղացի կողոպտիչների և բանտից ազատ արձակված քրեական հանցագործներից հատուկ կազմակերպված հրոսակախմբերի ձեռքով: Մեծ մասը նրանցից, ովքեր հասան Միջագետքի կիզիչ անապատները, մեռան սովից, հիվանդություններից կամ ընկան ոստիկանների ու վարձու մարդասպանների ձեռքով:

Իր ոճրագործությունը թաքցնելու և համաշխարհային հասարակական կարծիքը ապակողմնորոշելու նպատակով թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, թե ինքը, իբր, ելնելով ռազմական նկատառումներից, ժամանակավորապես «մեկուսացնում» է հայերին՝ տեղահանելով դեպի կայսրության խորքերը: Բայց դա բացահայտ խաբեություն էր: Հայ ժողովրդի դահիճներ Թալեաթ բեյը, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան և մյուսները կիրառում էին հայերի ոչնչացման նախապես ծրագրված, մանրազնին մշակված քաղաքականություն: «Հայերի՝ կանանց, երեխաների ու ծերերի տեղահանությունը սոսկ ճենգոռեն քողարկված մահվան դատավճիռ է եղել»,— արդարացիորեն գրել է ֆրանսիացի հրապարակախոս Ռրնե Պինոնը[1]:

Խոսելով հայերի տեղահանության մասին, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն նշել է. «Տեղահանության իսկական նպատակը կողոպուտն ու ոչնչացումն էր: Դա, իրոք, կոտորածի նոր մեթոդ է: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին տալիս այդ արտաքսումների վերաբերյալ, նրանք փաստորեն մահվան դատավճիռ էին արձակում մի ամբողջ ազգի նկատմամբ, նրանք դա հիանալիորեն հասկանում էին և ինձ հետ զրուցելիս առանձնապես չէին փորձում թաքցնել այդ փաստը»[2]:

Բեռլինի դատավարության ժամանակ, 1921 թ. հունիսին, երբ քննվում էր հայ հայրենասեր Սողոմոն Թեհլիրյանի կողմից Թալեաթ փաշայի սպանության գործը, դատարանում ունեցած իր ելույթում Յո. Լեփսիուսը հայտնել է. «Թալեաթ փաշայի կողմից ստորագրված հրամանում այսպիսի մի դարձվածք կա. «Ամբողջ դա ոչնչացում է»: Լեփսիուսը վկայել է նաև, որ «պաշտոնապես հաստատվում էր, թե այդ արտաքսումները սոսկ կանխիչ միջոցառումներ են, բայց առանձին հեղինակավոր անձինք բացեիբաց խոստովանում էին, որ արտաքսման նպատակը հայ ազգի ոչնչացումն է»[3]: Բնորոշ է նաև, որ Էրզրումի գերմանական հյուպատոսը՝ Շոյքներ-Ռիխտերը, 1915 թ. հունիսի 2-ին հեռագրել է Կոստանդնուպոլսի դեսպանատուն, ասելով, որ հայերի տեղահանությունը «հավասարազոր է զանգվածային ոչընչացման»[4]:

Ահա մի քանի թվեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ էր նշանակում «տեղահանություն»: Էրզրումցի 18 000 աքսորված հայերից տեղ են հասել միայն 150 հոգի: Խարբերդ, Ակն, Թոքաթ և Սեբաստիա քաղաքներից տեղահանվել է 19 000 հոգի. նրանցից կենդանի է մնացել ընդամենը 350-ը: Խարբերդից տեղահանվել է մի քանի հազար հայ, բայց շուտով, այդ քաղաքից դեռ շատ չհեռացած, նրանք բոլորը գնդակահարվել են[5]: Թուրք վան-

[1] René Pinon. La suppression des Arméniens: Méthode allemande-travail turc. Paris, 1916, p. 27.

[2] Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York, 1918, p. 310.

[3] Deutschland und Armenien, S. 485.

[4] *Նույն տեղը, էջ 94։*

[5] The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915—16, London, 1916, p. 267.

դալեները նույն կերպ են վարվել այլ քաղաքներից ու գյուղերից բռնագաղթված հայ բնակչության հետ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ իրագործվում էր անօրինակ վայրագությամբ: Կառավարությունը հրամայում էր իր տեղական մարմիններին լինել վճռական, ոչ ոքի չխնայել: Այսպես, ներքին գործերի մինիստր Թալեաթը իր հեռագրերից մեկում, հասցեագրված Հալեպի նահանգապետին, պատվիրում էր. «Ձեզ արդեն հաղորդվել է, որ Ջեմիեթի (երիտթուրքերի ղեկավար կոմիտեի— Մ. Ն.) ցուցման համաձայն որոշված է եղել լիովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր հանդես են գալիս այդ որոշման դեմ, չեն կարող մնալ իրենց պաշտոններում: Որքան էլ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, այնուամենայնիվ պետք է վերջ տալ հայերի գոյությանը: Ուշադրություն մի դարձրեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ խղճի խայթին»[1]:

Ղեկավար ցուցումները կատարվում էին ամենայն դաժանությամբ: Ջարագործները գործում էին ամենաբարբարոսական միջոցներով: Կորցնելով մարդկային կերպարը, նրանք իրենց զոհերին խեղդում էին ծովում ու գետերում, ծխահեղձ էին անում տներում ու եկեղեցիներում, ցած էին նետում բարձր ժայռերից, սպանում էին անլուր խոշտանգումներից հետո:

Ժամանակակիցները սարսափով են հիշում այդ ահավոր կոտորածը: Արաբական ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչ Ֆայեզ-էլ-Հոսեյնը գրել է. «Մի սպա ինձ պատմում էր, որ Բիթլիսում իշխանությունները հայերին փակում էին դարմանով լեցուն մեծ մարագներում, դռները դարմանով ծածկում և կրակ էին տալիս այնպես, որ խեղճերը շնչահեղձ էին լինում և մահանում: Հաճախ այս եղանակով ոչնչացնում էին մի քանի հարյուր հոգու միանգամից... Մեծամասնությունը, սակայն, զոհվել է գնդակով, դանակով ու դաշույնով: Իշխանությունները մսագործներ էին վարձում, որոնք մարդասպանի արհեստի համար օրական ստանում էին մեկ ֆունտ: Հաճախ նրանց խմբերով նետում էին ջրհորերը կամ փոսերը և հողով ծածկում: Շատ հայեր ջրահեղձ են արվել նաև

[1] The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian. London, 1920, p. 64.

Տիգրիսում ու Եփրատում: 2000-ից ավելի հայեր կոտորվել են Դիարբեքիրի պարիսպներից դուրս»[1]:

Այն դաժանությունները, գրել է Ա. Մանդելշտամը, «որոնց զոհ դարձան հայերը 1915 թ., իրենց նրբահնարությամբ ու բազմազանությամբ ոչնչով չէին զիջում այն ամենին, ինչին նրանք ենթարկվել էին 1895 և 1896 թվականներին: Մեծ մահակներով, հանված աչքեր ու եղունգներ, փետված մազեր, սղոցված ու բրատված քթեր, ձեռքեր, ոտքեր և մարմնի այլ մասեր, խարանում շիկացած երկաթով...»[2]:

Մի անգամ, պատմում է Հ. Մորգենթաուն, «ես զրույց ունեցա պատասխանատու պաշտոնյա մի թուրքի հետ, որն ինձ պատմեց գործադրվող խոշտանգումների մասին: Նա չէր թաքցրնում, որ կառավարությունը խրախուսում է դրանք և, ինչպես կառավարող դասակարգի բոլոր թուրքերը, ինքն էլ ջերմորեն հավանություն էր տալիս իրեն ատելի ազգի հանդեպ այդպիսի վերաբերմունքին: Պաշտոնյան ասաց, որ խոշտանգումների բոլոր այդ մանրամասները քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի շտաբում, գիշերային նիստի ժամանակ: Ցավ պատճառելու յուրաքանչյուր նոր մեթոդ գնահատվում էր որպես հիանալի հայտնագործություն, և պաշտոնյաները մրցապես գլուխ են կոտրում այն բանի վրա, որպեսզի հայտնաբերեն տանջանքների մի նոր տեսակ: Նա ինձ պատմեց, որ իրենք նույնիսկ դիմում էին իսպանական ինկվիզիցիայի կուտակած փորձին... և բնդհանրապես այն ամենը, ինչ գտնում էին այնտեղ: Նա ինձ չասաց, թե ում հասավ մրցանակը այդ սարսափելի մրցության մեջ, բայց այն կայուն համբավը, որ Հայաստանում ամենուր ձեռք էր բերել Ջևդեթ բեյը՝ Վանի վալին, նրան է տալիս անլուր նողկալիության գերազանցության իրավունքը: Ամբողջ երկրում Ջևդեթը հայտնի է եղել որպես «Թաշկալեի պայտար», քանի որ խոշտանգումների գծով այդ գիտակը հայտնագործեց այն, ինչը, իհարկե, գլուխգործոց էր, լավագույնն այն ամենից, ինչ մինչ այդ հայտնի էր եղել. այդ նա էր ձիու պայտեր խփում իր հայ զոհերի ներքաններին»[3]:

[1] Faiez el-Ghocéin. Témoignage d'un Arabe musulman sur l'innocence et le massacre des Arméniens. Trad. de l'arabe par El—G [Bombay], 1917, p. 40.

[2] A. Mandelstam. Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917, p. 258.

[3] Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story..., p. 315.

Ֆրիտյոֆ Նանսենը բազում փաստերի հիման վրա հաստատում էր, որ հայերի նկատմամբ երիտթուրքերի գազանությունները «իրենց չափերով և խստմնեցուցիչ դաժանությամբ գերազանցում են այն բոլորը, ինչ հայտնի է պատմությանը... Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ այնպիսի մի անավոր գլուխ, որն ստվերում է թողնում նախընթաց բոլորը»[1]:

Պետք է նշել, որ երիտթուրքերի անլուր բարբարոսությունը շատ բաներով հիշեցնում է հիտլերական դահիճների հանցագործությունները երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում: Երիտթուրքերը որոշ սոսումով եղել են ֆաշիստների նախորդներն ու նախատիպերը: Ահա մեկ օրինակ. 1915—1916 թթ. թուրք բժիշկները, համապատասխան ղեկավարության գիտությամբ ու համաձայնությամբ, Երզնկա քաղաքի հիվանդանոցներում ու լաբորատորիաներում հայերին օգտագործել են որպես փորձակենդանիներ: Բժիշկներից մեկը, լինելով այդ չարագործությունների ականատես, գրել է. «1915 թ. հայերից շատերին, որոնք դժվարությամբ թաքնվել էին Երզնկայում, առանձնացրին որպես փորձակենդանիների և տեղավորեցին քաղաքի կենտրոնական հիվանդանոցում, որպեսզի նրանց վրա բակտերիոլոգիական փորձեր կատարեն, որոնք սովորաբար արվում են ծովախոզուկների և ճագարների վրա: Այսկերպ մեռան շատ հայեր»[2]:

Նման փորձեր, ինչպես հայտնի է, կատարում էին հիտլերականները: Ակներևաբար նրանք ուսումնասիրել են իրենց նախորդների այդ փորձը, մանավանդ որ թուրքերի գազանություններին մասնակցում էին կայզերական Գերմանիայի շատ սպաներ: Բնութագրական է, որ դիվահար ֆյուրերը, պատրաստվելով իրականացնել լեհերի և այլ ժողովուրդների նկատմամբ իր ցեղասպանության ծրագրերը, առիթ է ունեցել հիշել հայերի կոտորածը: Մի խորհրդակցության ժամանակ, Օբերզալցբուրգում, 1939 թ. օգոստոսին, ֆաշիստական հրոսակների Լեհաստան ներխուժելու նախօրյակին, նա, որպեսզի քաջալերեր իր գեներալներին, ասել է, որ պետք է անողոքաբար սպանել բոլորին՝

[1] Fridtjof Nansen. L'Arménie et le Proche Orient, Paris, 1928, p. 357.

[2] Les persécutions contre les médicins arméniens. Pendant la guerre générale en Turquie. Constantinople, 1919, p. 24.

տղամարդկանց, կանանց, երեխաներին: Չպետք է ուշադրություն դարձնել հասարակական կարծիքին, «Ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»[1],— բարբառել է Հիտլերը:

Հայերի զանգվածային կոտորածը երիտթուրքերի կողմից, որն սկսվել էր 1914 թ. վերջին և ստացել համընդհանուր բնույթ 1915 թ. ամռանը, շդադարեց և հաջորդ տարիներին: Այն տարածվեց Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, օսմանյան տերության բոլոր հայաբնակ վայրերում: Հազարավոր գյուղեր, ավաններ ու քաղաքներ հողին հավասարեցվեցին: Մի շարք գավառներից փրկվեցին սոսկ տասնյակ կամ հարյուրավոր մարդիկ: Օրինակ, Խնուսի գավառի 27 գյուղերից, որտեղ հաշվվում էր 3322 հայ ընտանիք, փրկվեց լոկ 128 հոգի, Ներքին Բուլանըխի 11 գյուղերից՝ ընդամենը 21 հոգի, Մանազկերտի 25 գյուղերից՝ 34 հոգի[2]:

Արևմտահայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը, որը լավ տեղյակ էր կատարված իրադարձություններին, 1915 թ. դեկտեմբերին գրել է. «Պատմությունը չեմ կարծեր, թե արձանագրած լլա այսպիսի կոտորած մը... Չեմ կարծեր, թե ոևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուն մեջ Թուրքիոյ մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը... Համիդյան ռեժիմին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները չնչին բան մրն են ասոր քով: Այս անգամ գործադրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր մրն է, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ, թե հայը իր հայրենիքին մեջ պատմական դարձած է... Կուսակալներեն ոմանք պարծանոք հեռագրեցին կենտրոնական կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ *ոչ մի հայ* կգտնվի այլևս: Այս անգամ խուժանը չէր, որ հարձակվեցավ խաղաղ ժողովուրդին վրա, այլ նույն ինքն կառավարությունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանդարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսակախումբերու ձեռքով: Հրահանգը կենտրոնեն տրվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն: Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի օջախեն, լքելով ամեն ինչ և ճամփան կողոպտվեցավ

[1] "The New York Times". Nov. 24, 1945, p. 7; Guttmann Joseph, The Beginnings of Genocide. New York, 1948, p. 18.

[2] *ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 692, թ. 17։*

ու կոտորվեցավ: Սամսոնեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այր մարդ չե ազատված: Երիտասարդ կիներն ու աղջիկները առևանգվեցան ու մանուկները կոտորվեցան: Կոտորածը սահելի եղած է Մուշ, Բաղեշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին-Գարահիսար, Քղի, Բալու և Երզնկա-Քեմախ, ուր գրեթե ոչ մեկ հայ ազատված է, մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով: Հայաստանի մյուս նահանգներեն ազատվածներ կան, սակայն հազիվ 5 տոկոսի համեմատությամբ: Շատ մը քաղաքներե և գյուղերե հազիվ մեկ-երկու կիներ կան այսօր: Բաղեշ ու շրջականները, ուրկե հայ մը ազատված ըլլալու լուր չունենք տակավին, Տիգրանակերտի նահանգը, ուր ոչ միայն հայերը, այլև ասորիներն ու քաղդեացիներն ալ կոտորված են, կուսակալեն տրված ջարդի հրամանը չգործադրվելուն համար երեք թուրք գայմագամներ պաշտոնանկվելով սպանված են: Տրապիզոն և շրջականները, ուր հայությունը գրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամույն եղած է...»[1]:

Ֆրանսիացի լրագրող Անրի Բարբին, որը 1916 թ. եղել է Արևմտյան Հայաստանում, իր ճանապարհորդական նոթերում նշել է. «Ով որ այժմ անցնի ամայացած Հայաստանով, չի կարող չսարսռել, այնքան անսովոր շատ բան են ասում ավերակների և մահվան այդ անվերջ հեռաստանները: Չկա մի ծառ, մի ժայռ, մամուռի մի կտոր, որը վկա չլինի մարդու սպանության, սրբապղծված չլինի թափված արյան հեղեղներով: Չկա մի վտակ, գետ կամ գետակ, որը դեպի հավերժական մոռացում չտանի հարյուրավոր, հազարավոր մեռած մարմիններ: Չկա մի անդունդ, մի կիրճ, որոնք չլինեն գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքում սպիտակին չտան կմախքների բաց կույտեր, քանի որ համարյա ոչ մի տեղ մարդասպանները իրենց ներողություն չեն տվել ժամանակ ու ջանք վատնելու սեփական զոհերի թաղման վրա: Այս ընդարձակ մարգերում, որոնք երբեմն աշխույժ ու ծաղկուն հայկական բնակավայրեր էին, այսօր թագավորում է ավերն ու ամայությունը»[2]:

Հայերի զանգվածային կոտորածները, սակայն, տեղի ունեցան ոչ միայն Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայում, այլև Արևելյան Հայաստանում: 1918 թ. սկզբներին թուրքական զոր-

[1] ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 672, թ. 72—73:

[2] Анри Барби. В стране ужаса. Тифлис, 1919, с. 40.

քերը ներխուժեցին Անդրկովկաս, գրավեցին Արևելյան Հայաստանի և Ադրբեջանի մեծ մասը և կազմակերպեցին տեղական հայ բնակչության նոր ջարդեր ու կոտորածներ: 1918 թ. ապրիլի 12-ին ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմխարհատի հատուկ նոտայում, ուղղված Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը, նշվում էր, որ Կովկասյան ճակատում թուրքական զորքերի հարձակումը, որի հետևանքով Անդրկովկասի մի շարք մարզեր գրավված էին նրանց կողմից, «ուղեկցվում է հայ բնակչության զանգվածային ոչնչացմամբ. խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները կոտորվում են հազարներով, նրանց ունեցվածքը թալանվում է և հրի մատնվում... Հայ ժողովրդի ոչնչացման տասնյակ տարիներ կիրառվող քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ»[1]:

Խոսելով արևելահայերի նկատմամբ երիտթուրքերի քաղաքականության մասին, Կովկասում գերմանական ռազմական միսիայի պետ գեներալ ֆոն Կրեսսը իր պետության կանցլերին հղած 1918 թ. օգոստոսի 5-ի զեկուցագրում գրում էր. «Թուրքական քաղաքականությունը պարզ է: Թուրքերը մտադիր են ոչնչացնել հայերին: Նրանց հալածում են, որտեղ որ հնարավոր է, նրանց պրովոկացիայի մեջ են քաշում, որպեսզի առիթ ունենան նոր հարձակումների: Եթե դա չի հաջողվում, ապա նրանց դատապարտում են քաղցի և աղքատության»[2]:

Ավելի ուշ, 1918 թ. հոկտեմբերի 12-ին Չիչերինին հղած հեռագրում Գ. Օրջոնիկիձեն հաղորդում էր. «Դրությունը Հայաստանում (խոսքը Արևելյան Հայաստանի մասին է— Մ. Ն.) ողբերգական է: Երևանի նահանգի երկու գավառների մի փոքրիկ հողակտորի վրա կենտրոնացված են 600 000-ից ավելի փախստականներ, որոնք զանգվածաբար մեռնում են սովից ու խոլերայից: Գրավված նահանգներում թուրքերը բնակչության կեսին կոտորել են»[3]:

Միանգամայն ակներև է, որ հայերի բնաջնջման քաղաքականությունը երիտթուրքերը ջանում էին իրականացնել նաև Անդրկովկասում: Բայց, բարեբախտաբար, նրանց ծրագրերը

[1] Документы внешней политики СССР, М., 1957, с. 240.

[2] Deutschland und Armenien..., № 475.

[3] АВПР, фонд Чичерина, д. 56822, с. 14.

տապալվեցին, քանի որ Գերմանիայի և Թուրքիայի պարտությունը 1918 թ. նրանց ստիպեց թողնել Անդրկովկասը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանության հարյուր հազարավոր զոհերի թվում էին արևմտահայ ականավոր գրողներ ու հրապարակախոսներ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և գրականության, գիտության ու արվեստի ուրիշ շատ գործիչներ: Մեծ կոմպոզիտոր Կոմիտասը, պատահականության շնորհիվ ողջ մնալով, չկարողացավ տանել տեսած գազանությունների սարսափները և ծանր ապրումներից հետո զրկվեց բանականությունից:

Որքա՞ն է եղել Մեծ եղեռնի զոհերի ընդհանուր թիվը: Հարցի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ կոտորածների զոհ են դարձել մոտ մեկուկես միլիոն մարդ: Շուրջ 700 հազար փախստականներ ապաստան են գտել Կովկասում, Արաբական արևելքում, Հունաստանում և այլ երկրներում:

Հարկ է նշել, որ, չնայած խիստ անբարենպաստ պայմաններին, հայերը 1915—1918 թթ. շատ անգամ հանդես են եկել իրենց դահիճների դեմ, հաճախ դիմել են ինքնապաշտպանության և զենքը ձեռքներին պայքարել իրենց կյանքի ու պատվի համար: Անձնուրաց քաջությամբ է պաշտպանվել Վանի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուշի, Սասունի և մի շարք այլ քաղաքների ու վայրերի բնակչությունը: Հաջողությամբ պսակվեց հատկապես Վան քաղաքի ինքնապաշտպանությունը, որը տևեց մոտ մեկ ամիս: Շնորհիվ ժողովրդի հերոսական պայքարի և ռուսական Կովկասյան բանակի օգնության, որի կազմում կային և հայ կամավորական ջոկատներ, տասնյակ հազարավոր վանեցի հայեր փրկվեցին իրենց սպառնացող կոտորածից: Հաջող ավարտվեց նաև Անտիոքի (Սուեսիայի) շրջանի հայերի ինքնապաշտպանությունը Մուսա լեռան (Մուսա դաղ) վրա, որտեղ վատ զինված գյուղացիները մոտ քառասուն օր խիզախորեն մարտնչում էին հարձակվող թուրքական զորքերի շատ ավելի գերակշիռ ուժերի դեմ (հերոսական այդ իրադարձությունները տաղանդավոր կերպով վերարտադրված են ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի վեպում): Սակայն հայերի ինքնապաշտպանությունը մեծ մասամբ, ուժերի անհավասարության պատճառով, պարտության մատնվեց:

Արևմտահայերի զանգվածային կոտորածների քաղաքականությունը եղել է ցեղասպանության քաղաքականություն, որն անողոքաբար իրագործվում էր Թուրքիայի կառավարող շրջանների կողմից: Այն, ինչ տեղի ունեցավ մասնավորապես 1915 թ., եղել է չտեսնված բարբարոսություն, կարելի է ասել՝ առաջին ցեղասպանությունը ժողովուրդների պատմության մեջ: Իրավացի էր Հ. Մորգենթաուն, երբ գրում էր. «Ես վստահ եմ, որ մարդկության համայն պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր: Այն մեծ կոտորածներն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների հետ համեմատած»[1]:

Ի՞նչ դիրք բռնեցին մեծ տերությունները հայ ժողովրդի ապրած անավոր ողբերգության նկատմամբ:

Կայզերական Գերմանիան՝ Թուրքիայի «դաշնակիցը», խրախուսում և պաշտպանում էր երիտթուրքերի հանցավոր ծրագրերը և գործողությունները: Ելնելով իր զավթողական նպատակներից Մերձավոր արևելքում և Կովկասում, նա ամեն կերպ աջակցում էր վանդալներին հայ ժողովրդի բռնագաղթը և կոտորածը կազմակերպելու գործում: Դեռ ավելին. Թուրքիայում գտնվող գերմանացի սպաները որոշ դեպքերում մասնակցություն էին ունենում երիտթուրքերի գազանություններին: Անա, օրինակ, ինչ է գրել այդ մասին բազմաթիվ ողբերգական անցքերի ականատես Հերբերտ Գիբբոնսը. «Ասիական Թուրքիայի մեծ քաղաքներից մեկում ամերիկացի մի միսիոներ, որի հետ անձամբ ծանոթ եմ և որի խոսքին անպայման կարելի է հավատալ, տեսել է, թե ինչպես է գերմանացի սպան թուրքական հրետանու կրակը անձամբ ուղղում հայ խաղաղ բնակչության վրա: Համենայն դեպս, երկու այլ կետերում ևս գերմանական հյուպատոսներն ամեն կերպ աջակցում էին հայերի արտաքսման ու կոտորածի թուրքական քաղաքականությանը»[2]: Բնորոշ է, որ գերմանական կառավարությանն շատ ներկայացուցիչներ փորձեր էին անում արդարացնել մարդասպաններին:

---

[1] Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story..., p. 324.

[2] Гиббонс Герберт Адамс. Последние избиения в Армении. Пг., 1916, с. 20.

Անտանտի տերությունները, որոնք հայ ժողովրդին իրենց դաշնակիցն էին համարում, չձեռնարկեցին անհրաժեշտ գործուն քայլեր հայ ժողովրդին փրկելու համար: Այդ տերությունները սահմանափակվեցին միայն նրանով, որ 1915 թ. մայիսի 24-ին հրապարակեցին մի հայտարարություն, որով երիտթուրքերի կառավարության վրա դրեցին հայերի կոտորածի ամբողջ պատասխանատվությունը: Իսկ ԱՄՆ-ը, որն այդ թվականին դեռևս չեզոք երկիր էր, չարեց նույնիսկ նման հայտարարություն: Զճայած հասարակական մի շարք գործիչների և պաշտոնական անձանց բողոքներին, ամերիկյան կառավարությունը միջոցներ չձեռնարկեց բարբարոսներին սանձահարելու: Այն ժամանակ, երբ ցարդարարները անգթորեն ոչնչացնում էին հայերին, ԱՄՆ-ի գործարար շրջանները ամրապնդում էին իրենց արտաքին առևտրական կապերը թուրքական կառավարության հետ: ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը փորձեր կատարեց ստեղծել այն տպավորությունը, թե իբր զանգվածային կոտորածների մասին լուրերը չափազանցված են և ոչ ճշգրիտ: Ավելացնենք, որ անգլիական կառավարությունը 1916 թ. սկզբին մերժեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի առաջարկը ծայր աստիճանի թշվառ վիճակում գտնվող հայ փախստականներին ֆինանսական համատեղ օգնություն ցույց տալու մասին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ արևմտյան տերությունների բռնած դիրքը Մաքսիմ Գորկին որակել է որպես «զզվելի անտարբերություն»[1]:

Հայ ժողովրդի ցեղասպանության դեմ հանդես եկավ առաջադեմ հասարակայնությունը: Ցասումնալի բողոք արտահայտեցին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը և Յուրի Վեսելովսկին Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում, Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնեխտը, Յոհաննես Լեփսիուսը, Յոզեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում և առաջադեմ ուրիշ շատ գործիչներ՝ աշխարհի զրեթե բոլոր երկրներում: Բայց այդ ազնիվ մարդկանց ձայնը խորթ ու անհասկանալի մնաց ցարդարների համար: Երիտթուրքերը շարունակեցին իրենց սև գործը:

[1] «Наши достижения», М., 1919, № 1, с. 31.

Թվում էր, թե եկել է հայ ժողովրդի վերջը: Բայց որքան էլ դաժան ու անողոք լիներ թշնամին, այնուամենայնիվ, նա չկարողացավ ընկնել մեր ժողովրդի ոգին ու կամքը, չկարողացավ իրականացնել իր դիվային ծրագիրը:

***

Սույն ժողովածուում, որ նվիրված է Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած հայերի ցեղասպանությանը, ամփոփված են փաստաթղթեր ու նյութեր հայկական, ռուսական, արաբական, գերմանական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից: Փաստաթղթերի գերակշիռ մասը տարբեր արխիվներում հայտնաբերված պաշտոնական զեկուցագրեր, հաղորդումներ, դիմումներ ու նամակներ են՝ գրված հյուպատոսների, դեսպանների, մինիստրների, բարձրաստիճան պաշտոնյաների, տարբեր պետությունների կառավարությունների ղեկավարների և անդամների կողմից, ինչպես և հոգևոր անձանց ու միսիոներների տված ցուցմունքներ Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածի մասին: Շատ կողմերով արժեքավոր և հավաստի այդ փաստաթղթերը ճշգրիտ պատկերացում են տալիս հայ ժողովրդի մեծագույն ողբերգության մասին: Սակայն մի շարք նյութերում կան մտքեր, որոնց հետ չի կարելի համաձայնել: Այստեղ, հասկանալի է, հնարավորություն չկա թվարկել բոլոր այդ անճշտությունները և սխալները, բայց դրանցից մի քանիսի մասին, որոնք առավել կարևոր են, հարկ ենք համարում ասել մի քանի խոսք:

Որոշ փաստաթղթերում, երբ խոսվում է հայկական կոտորածների պատճառների մասին, գերագնահատվում են «մահմեդական խաժամուժի» ու քրդական ցեղերի դերն ու նշանակությունը: Մինչդեռ լավ հայտնի է, որ հայերի բոլոր զանգվածային կոտորածների կազմակերպիչները եղել են թուրքական կառավարությունը և դրա տեղական մարմինները, որոնք իրենց առջև նպատակ էին դրել բոլոր միջոցներով կենսագործել հայերի բնաջնջման քաղաքականությունը: Ճիշտ է, Թուրքիայի կառա-

վարող շրջաններին շատ անգամ է հաջողվել հայ բնակչության դեմ հրահրել խավարամիտ զանգվածներին, քուրդ ցեղապետերից շատերին և բեկական տարրերին, բայց այդ պրովոկացիան կատարվում էր պաշտոնական իշխանությունների կողմից: Հանրահայտ է, որ հայերի զանգվածային կոտորածների ողջ պատասխանատվությունը ընկնում է սուլթան Աբդուլ Համիդի և ավելի ուշ՝ երիտթուրքերի կառավարության վրա:

Մի քանի նյութեր կարող են ստեղծել այն տպավորությունը, թե իբր մեծ տերությունները լրջորեն մտահոգված են եղել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած արյունալի իրադարձություններով, որ իբր նրանք որոշակի քայլեր են ձեռնարկել Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Դա, իհարկե, հեռու է ճշմարտությունից: Անգլիական կառավարությունն, օրինակ, անտարբեր մնաց օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի նկատմամբ: Ավելին, նենգամիտ Ալբիոնի երկերեսանի քաղաքականությունը քիչ վնաս չի պատճառել արևմտահայերին: Նույնիսկ անգլիացի ոչ անհայտ պետական գործիչ Լլոյդ Ջորջը ստիպված է եղել խոստովանել, որ «բրիտանական կառավարության քաղաքականությունը նպատակագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թթ. սարսափելի ջարդերին և 1915 թ. անավոր կոտորածին»[1]:

Երբեմն ընթերցողը կարող է կարծել, թե թուրքական կառավարության բարբարոսական ոճրագործությունը հայերի կողմից չի հանդիպել արժանի հակահարվածի: Այդ, իհարկե, սխալ է: Չնայած ծանրագույն պայմաններին և ուժերի անհավասարությանը, հայերը, ինչպես ասվեց վերևում, շատ անգամ են զենքը ձեռքներին հանդես եկել ընդդեմ երիտթուրքական դահիճների, մեկ անգամ չէ, որ մարտնչել են իրենց պատվի, ազգային արժանապատվության, ֆիզիկական գոյության համար: Բայց անօգնական ժողովրդի հերոսական այդ կռիվները շատ դեպքերում հաջողություն չունեցան: Ուժերը անհավասար էին, չկար զենք, հայոց գավառները կտրված էին միմյանցից, արևմտահայության մարտունակ բնակչության զգալի մասը նախապես՝ 1914 թ. զորակոչվել էր բանակ և նենգորեն ոչնչացվել:

[1] **Ллойд Джордж.** Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

Անհրաժեշտ ենք համարում նշել մի հանգամանք ևս: Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն՝ գիտական աշխատություններ, ակնարկներ, հուշեր, հոդվածներ, նյութերի ժողովածուներ և այլն: Այդ մասին գրել են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և այլ երկրների հայտնի շատ պատմաբաններ, հրապարակախոսներ, գրողներ, գիտության ու մշակույթի գործիչներ, գրել են արյունալի իրադարձությունների ականատեսներ, որոնց թվում՝ հայեր, հույներ, արաբներ, քրդեր ու թուրքեր: Բավականին շատ գրվեց մասնավորապես 1965 և 1975 թվականներին, երբ նշվում էին Մեծ եղեռնի հիսնամյակը և վաթսունամյակը: Հրապարակումների հեղինակները վճռականորեն դատապարտել են սուլթան Համիդի, երիտթուրքերի և նրանց գործակիցների արյունոտ ոճրագործությունները: Հատկանշական է, որ եվրոպական շատ պետություններ ճանաչել են արևմտահայության ցեղասպանության փաստը: Այժմ դժվար է գտնել գրագետ մի մարդ, որը չիմանա հայ ժողովրդի մեծ ողբերգության մասին:

Սակայն, մեղմ ասած, զարմանք է պատճառում մի հանգամանք. ժամանակակից Թուրքիայի պաշտոնատար շատ անձինք և «մտավոր աշխատանքի» շատ ներկայացուցիչներ, անպատկառորեն ոտնակոխ անելով պատմական ճշմարտությունը, ձգտում են ժխտել Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած հայերի ցեղասպանության փաստը: Զուր ջանքեր: Խայտառակ այդ փորձերը, սակայն, շինծու են և անհեթեթ:

***

Հայտնի է, որ հայերի կոտորածները շարունակեց նաև բեմալական Թուրքիան: 1919—1922 թթ. թուրքական զորքերը կազմակերպեցին հայ բնակչության զանգվածային ջարդեր Արևելյան և Արևմտյան Հայաստանում, Թուրքիայի կենտրոնական գավառներում, Կիլիկիայում, Իզմիր քաղաքում և այլ վայրերում: Նկատենք, որ այդ ժամանակաշրջանի ողբերգական իրադարձությունները դեռևս թույլ են լուսաբանված: Այդ բացը լրացնելու նպատակով ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտա-

կան աշխատակիցների մի խումբ 1919—1922 թթ. հայկական կոտորածների մասին պատրաստում է փաստաթղթերի մի ժողովածու, որը հրատարակության կհանձնվի մոտ ապագայում։

Ներկա ժողովածուի հրատարակության պատրաստման գործին մեզ օգնել է Ն. Դերոյանը։

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

1982 թ., Երևան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հայերի կոտորածները սուլթան Աբդուլ Համիդի օրոք

1876 – 1908 թ.թ.

1. ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Վան, 19 (31) դեկտ. 1876

1876 դեկտեմբեր 1 (13)-ի գիշերը Վան քաղաքի պատմագրության մեջ բոցեղեն տառերով դրոշմվեցավ։ Այն քաղաքը, որ Հայաստանի մեջ յուր ճոխությամբ և շինությամբ կպանծար, մեկ գիշերվան մեջ հանկարծ ողբակից դարձավ Անի քաղաքին. հրդեհ, կողոպուտ և սպանություն — այդ բառերը սոսկալի մը երրորդություն կազմած էին, զոր ամեն բերան կհնչեր սարսափահար դողդոջուն շրթամբք։ Կարծես թե Լենկթեմուրի սև օրերուն դարադարձը կկատարվեր նույն գիշեր և վանդալներու ուրվականներ յուրյանց պատաններով գերեզմանեն դուրս ելած՝ կհրդեհեին ամեն կողմ։

Ժամը 2-ի միջոցներն էր, երբ Այգեստանը գտնվող հայեր սկսան նշմարել, թե մի հրդեհի բոց կծավալի երկնից երեսը։ Գրեթե ամենն ալ կարծեցին, թե մոտակա գյուղացոց խոտի դեզերը կայրին, որ հաճախ կպատահի քուրդերուն ձեռքով։ Բայց այն սոսկալի հրդեհը, որ քաղաքին շուկայն կճարակե եղեր, մեկուն մտքեն ալ չէր անցներ, զի այդպիսի բան երբեք չէր պատահած Վանի մեջ։ Գույժը սկսավ քաղաքեն Այգեստան տարածվել և անագան ուրումն այգեստանցի հայեր սկսան քաղաք թափել խուռներամ և զարմանքով տեսան, թե քաղաքին պահապան զորքերը, ոստիկանները, զինվորները և թուրք ժողովուրդը միացած՝ տապարներով կխորտակեն հայոց խանութները և գործասքնյակները, և ջահեր ձեռքերնին՝ կխուզարկեն ամեն կողմ, կկողոպտեն դրամարկղները, ծանրագին բաները և հաշվետոմարները և հրձիգ անելով՝ դուրս կելնեն։ Կառավարության պաշտոնյաներեն ալ թեև ոմանք ներկա, բայց իբր անկարող զսպել թուրքաց կատաղությունը, լոկ հանդիսատես կլինեն և ոմանք ալ

կքաջալերեն իսկ։ Տեղվույս պատրիարքական փոխանորդ գերերեմիա եպիսկոպոս և նախկին առաջնորդական փոխանորդ Պողոս վարդապետ, որ գիշերայն վազելով շուկայն՝ եկած էին հրդեհին առջևն առնելու համար, սվինի հարվածներով չարաչար կգանակոծվեն զորքերեն, ի ներկայության կառավարության պաշտոնեից։ Զորքերեն ոմանք կհանդգնին մինչև իսկ սուրեր քաշելով հարձակիլ նոցա վրա և սրախողխող անել սպառնալ, եթե ուզեն հայոց խանութները հրդեհե և կողոպուտե ազատել։

Հայերը թեև անզեն, անպատրաստ և շվարած մնացած, բայց մահը աչք առած կուզեն յուրյանց խանութները և վաճառքները ազատել։ Զորքերը սվիններով և հրացանի բուներով կհարվածեն զնոսա, որով ծանրապես հիվանդացողներ, հիմարացողներ և մեռնողներ ալ եղան։ Այս կերպով հազիվ ոմանք մի քանի ծրար վաճառք ազատեցին, բայց մեծագույն մասը և ոչ մի շյուղ մը կրցավ ազատել։ Հազարավոր ոսկվո տեր եղող հայ վաճառականներ և արհեստավորներ այսօր մոխիրի վրա մնացած են և 100 ղուրուշ չունեն յուրյանց գրպանին մեջ, զի յուրյանց ունեցածը՝ դրամ և վաճառք, ոչ թե տունը, այլ շուկայն կպահեին իբր ապահով տեղ։ Տունին մեջ, այստեղի սովորության համեմատ, արդեն պատրաստված ուտելիք կգտնվի քիչ մը, բայց մի քանի օրեն հետո այն ևս կսպառի։ Հայնժամ ի՞նչ պիտի անենք։ Թշվառությունը արդեն իսկ սկսած է յուր վերջին ծայրը հասնել։ Առևտուրը բոլորովին դադրած է։ Այստեղի վաճառականությունը և արհեստները հայոց ձեռքն են։ Այժմ ասոնց բոլորին ալ խանութները կամ այրված են կամ խորտակվելով բոլորովին կողոպտված։ Ո՞ւր երթան նստին և ի՞նչ ծախեն. ո՛չ շուկա կա, ո՛չ վաճառք։ Այս հրդեհին պատճառավ հայոց նյութական վնասը գրեթե 4 միլիոն օսմանյան ոսկի (28 միլիոն ռուբլի) կհասնի։ Վան կործանվեցավ, այլևս հույս չկա, որ կվերականգնի թուրք կառավարությունին տակ։ Հայաստանին մեջ կարծեմ միայն այս քաղաքն է, ուր հայերը այլազգիներե բազմաթիվ են, թուրքերը այժմ զայս ալ ավերեցին և արդեն ճնշված հայերուն քով կարողություն չթողուցին։ Եթե Ռուսաստանի հայերեն օգնություն չհասնի, մահը միայն բաժին մնացած է մեզ, մահ, զոր մի կողմեն մահմետականները կսպառնան մեզ և մյուս կողմեն սովն ու անոթությունը։ Այժմեն իսկ շատ աղքատիկ տուներ անոթի մնացած են և քիչ օրեն մի ընդհանրական սոսկալի սով կտիրե Վանի մեջ։ Ով որ հայ է, ով որ մարդ է, վերջապես ով որ յուր

կուրծքին տակ մի սիրտ ունի, որ կզգա, կաղաչեմք, որ օգնության հասնի մեզ։

Մահմետականները մեր ամեն ունեցածը կողոպտեցին և այժմ ևս կսպառնան սրախողխող անել զմեզ։ Իսկ մեր միակ հանցանք քրիստոնյա լինելն է, մանավանդ հայ լինելը, զի ուրիշ քրիստոնյա ազգեր գեթ յուրյանց դավանակից տերություններեն կպաշտպանվին, իսկ հայուն պաշտպան չկա բնավ։

Մեր աչքը հառած եմք առայժմ Ռուսաստանի վրա, որ մեզ սահմանակից քրիստոնյա միակ տերությունը լինելով՝ կրնա մոտեն տեսնել մեր անտանելի թշվառությունը և հանուն մարդկության, հանուն քրիստոնեության ի գութ շարժել։ Քանի անգամ Կ. Պոլիս մեր Ազգ. պատրիարքարանը և Բ. Դուռը հեռագիրներով ու հանրագիրներով բողոքած եմք մեր կրած հարստահարությանց համար, բայց օգուտ չլինելե զատ ավելի վնասված եմք։ Բ. Դուռը մեկ կողմեն պատրիարքարանին միջոցավ սին հույսեր և խոստումներ տալով՝ կխաբե զմեզ, մյուս կողմեն ալ կարծես գաղտնի հրահանգներ կղրկե տեղական կառավարությանց, որ աներկյուղ ավելի սաստկացուցեն հարստահարությունները և այնպես ճնշեն զմեզ, որ ձայն ալ չկրնամք հանել բողոքելու համար։ Մեր միակ հույսը այժմ ձեզ վրա մնացած է, ռուսիացի հայեր։ Եթե դուք ալ ի գութ չշարժեք ձեր արյունակից եղբարց անտանելի վիճակին վրա, եթե դուք ալ քարեղեն սիրտ և սառած արյուն ունեցողի պես լսեք մեր այս քաշածները և անշարժ մնաք, եթե ոևէ միջոցի դիմելով, մինչև իսկ ռուսական կառավարություն ալ ձեր թախանձանոք ձանձրացուցելով, ձեր արտասուք ի գութ շարժելով, մեզ օգնության չհասնիք, ալ գիտցեք, թե հայությունը մեռած է այս կողմեր, ալ մի կարծեք, թե ձեզ համարյուն և կրոնակից հայ եղբայրներ ունիք այստեղ։ Բայց սա ալ չմոռնաք, որ եթե այս կողմի հայեր հուսահատ թողուն յուրյանց պաշտելի եկեղեցիները, ազգային չքնաղ հաստատությունները, յուրյանց տուն-տեղ և ամեն բան և դրախտանման քաղաքեն գաղթեն օտար երկիրներ, և կամ կորսվին, սպառին, այս բանը պիտի անցնի պատմության մեջ և ապագա սերունդը պիտի կարդա, թե վանեցի հայը յուր վերջին դառն ճգնաժամին մեջ արտասվոք օգնություն խնդրած է Ռուսաստանի հայերեն, իսկ սոքա՝ անզգա և անշարժ, զլացած են նմա։ Պիտի կրնա՞ք դուք ընդունել զայս, պիտի կրնա՞ք այս տողերը կարդալե հետո այնչափ անզգա լինել, որ բնավ չմտածեք մեր վրա։ Թե ցերեկ ատեն ձեր անձնական շահերով զբաղած՝ զմեզ մոռնաք, գիշերները երազի մեջ պիտի երևամք ձեզ, ձեր քունը պիտի վրդովեմք մեր անդադար աղաղակներով և մեր սոսկալի վիճակը պիտի պատկերանա ձեր աչքին առջև։ Մինչ դուք այդտեղ հանգիստ կքնանաք, մեք այստեղ օրերով գիշերները անքուն կանցունեմք գողերեն վախնալով, զի չկա գիշեր մի, որ մի հայու տուն գող չմտնե։ Եվ գիտե՞ք, թե որոնք են այս գողերուն մեծ մասը. քաղաքիս պահապան զորքերը, որք գիշերները շրջագային իբր թե զմեզ պաշտպանելու համար, և այսպես ազատորեն աչքե անցունելով՝ դյուրություն տեսած տեղեր կմտնեն կողոպտել։ Գող մտած մի քանի տուների տնեցիք արթուն գտնվելով՝ աղաղակ բարձած և հրացան պարպելով դրացիները օգնության կոչած էին։ Գիշերապահ ոստիկանները կառավարության կբողոքեն, թե մեք այլևս գիշերներ պահպանություն չեմք աներ, զի հայերը հրազենք կպարպեն, և գողերը բռնելու համար ներս մտած ատեն կվախնամք, որ մեր կյանք վտանգվի։ Կառավարիչ փաշան ալ կարգելե հայոց մինչև իսկ տան մեջ գող մտած ատեն հրացան արձակել՝ այդ բանը պահապան զորաց հսկողությանը վրա իբր կասկած, հետևապես նոցա պատվույն իբր արատ և կառավարության դեմ ալ իբր ապստամբական ցույց համարելով։ Կառավարիչ փաշան յուր այս արգելքը հատուկ-հատուկ հրամանագրով հաղորդեց մեր ազգային առաջնորդարանը և այդ հրամանին համեմատ ալ պատվեր կարդացվեցավ եկեղեցիները։ Ալ ավելի զարմանալին կա. մի հայ, որ յուր տունը գիշերային գող մտած ատեն աղաղակ բարձած և հրացան արձակելով օգնության կոչած էր, կառավարությունը սպառնացավ բանտարկել զայն իբր աղմկահույզ և հազիվ կրցավ ազատիլ՝ պատվավոր երաշխավորներ տալով։ Այստեղի կառավարությունը, որ թե՛ հրդեհին և թե՛ շատ հարբստահարություններու մեջ հայտնապես գործակցություն ունի, ահա այսպես տանտերը կբանտարկե՝ փոխանակ գողը բռնելու և բանտարկելու։

Բ. Դռան կառավարությունն ալ փոխանակ պատժելու այս հրդեհող ու կողոպտող զորքերը, բավական համարած է այստեղի մյութեսարֆությունը (կառավարչություն) վալիության (կուսակալության) փոխել։ Քաղաքիս կառավարիչը, որ բավական ժամանակե հետե մահամերձ հիվանդ էր, այս երկուշաբթի օր մեռավ և քիչ օրեն Շքոտտայի Մեհմետ փաշայի որդին այստեղ պիտի գա կուսակալի պաշտոնով, հետևապես Վան իբր

գավառագլուխ քաղաք ավելի պիտի ամրանա և ավելի շատ զորքեր պիտի գտնվին, այսինքն՝ քաղաքիս մեջ գողերը ավելի պիտի շատնան և քրիստոնեից կյանքը ավելի վտանգի պիտի ենթարկվի, զի մեր ստացածները կողոպտող, շուկայն հրդեհող և քրիստոնեից մահ սպառնացողները զորքերն են արդեն։

Թեև ամեն ժամանակ հարստահարություն անպակաս էին այս կողմեր, բայց Սերբիայի և Բոլգարիայի ապստամբությունեն հետե, մանավանդ այս վերջերս, որ Ռուսիայի և Թուրքիայի մեջ պատերազմի կասկածներ կան, թուրքերը օրհասական արջերու պես հուսահատական կատաղությամբ կվարվին հայոց հետ և «դուք ալ այդ կյավուրներուն կրոնակից եք» ասելով՝ ամեն չարիք կհասուցանեն մեզ...

«Մշակ», 24 փետրվարի 1877 թ., № 13

3. ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԳԻՎՈՐԳ IV ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հատված նամակից — Դարալագյազ, 10 օգոստոսի 1877 թ.

...Տաճկական Հայաստանը, որ հինգ հարյուր տարի լռությամբ տարել է յուր իշխողի բռնակալ լուծը, այժմ անխնա ողողվում է յուր սեփական որդվոց արյունով։ Տաճկական անգթությունը դեպի հպատակ հայերը հասել է վերջին կետին։ Մեր սիրտը մորմոքվում է, երբ երևակայում ենք այն սոսկալի ոճիրները, որոնց ենթարկվել են Վանի, Բայազետի և թշվառ Հայաստանի այլ կողմերի հայ բնակիչները։ Մեր սրտի և հոգվո վերա ավելի են ազդում նոքա, ըստ որում մենք դեռ չենք մոռացել նույնիսկ ոճիրները, որ մոտ 50 տարի առաջ գործադրում էր մեր վերա պարսից ազգը Սալմաստու և Խոյի նահանգներում։ Մեր սիրտը տոչորվում է, որ մենք գաղթելով Պարսկաստանից՝ այժմ ազատ կյանք ենք վայելում ռուսաց կայսրության հովանավորության ներքո, այնինչ մեր արենակից եղբայրները Փոքր Ասիայումը զոհվում են բարբարոսների սրին և քանի խղճուկ Հայաստանը պետք է մնա տաճկական կառավարության ներքո, հայոց արյունը պետք է ողողե Հայաստանը...

Մենք աղերսանոք աղաչում ենք, որ... բարեհաճեք մատուցանել մեր և բոլոր ռուսաբնակ հայերի ամենահպատակորեն

խնդիրը մեր կայսերը, որպեսզի նորին մեծությունը յուր գութը տարածելով նաև Տաճկաստանի բազմաչարչար հայերի վերա, բարեհաճեն արժանացնել սորանց ևս այն արտոնություններին, որպիսիք պետք է վայելեն Տաճկաստանի մյուս քրիստոնյայք...

(351 ստորագրություն)

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վավ. 336

8. «ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿԻՑ ՆՈՐՄԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Էրզրում, 24 օգոստոսի 1877 թ.

Հայերի դրությունը այն երկրում, որտեղով անցել է Իսմայիլ փաշայի բանակը, ծայր աստիճան ողբալի է։ Ալաշկերտի դաշտի բոլոր 122 գյուղերը, իններից բացի, ավերված են։ Այն մի քանի քրիստոնյաները, ովքեր Տեր-Ղուկասովի նահանջի ժամանակ չեն օգտվել Ռուսաստանի հովանավորությունից, բարբարոսաբար սպանվել են, մի ամբողջ շարք գյուղեր այրված են մինչև վերջ։ Մուշի գավառում մի քանի գյուղեր ավերվել են, իսկ բնակիչներից շատերը՝ մորթվել։ Նույն բախտին են արժանացել Բայազետ քաղաքը և շրջակայքի գյուղերը։ Այդ վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք և երեխաները սպանվել են ամենադաժան ձևով...

C. B. Norman, Armenia and the Campaign of 1877. London, Paris and New York, p. 299—300.

4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ՆՈՏԱՅԻՑ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Կ. Պոլիս, 7 սեպտեմբերի 1880 թ.

Ներքոստորագրյալներն ստացել են հուլիսի 5-ով թվագրված նոտան, որի միջոցով Բարձր Դուռը պատասխանել է հունիսի 11-ի նրանց հաղորդագրության այն կետին, որը վերաբերում է բարեկավումներին ու վարչական բարենորոգումներին, որոնք

Օսմանյան կայսրությունը պարտավորվել է իրագործել հայաբնակ գավառներում՝ ըստ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի[1]։ Այդ փաստաթղթի ուշադիր ուսումնասիրումը ապացուցեց, որ օսմանյան կառավարության կողմից ձեռնարկված առաջարկությունները չեն համապատասխանում պարագրաֆի ոչ ոգուն, ոչ էությանը։ Տերությունները գիտեն, որ օսմանյան կառավարությունը երկու հանձնախումբ է ուղարկել հայաբնակ գավառները, բայց նրանք հիմք ունեն կարծելու, որ այդ միջոցառումը ոչ մի օգուտ չի տվել, և Բ. Դուռը, հակառակ այն պարտավորության, որ հանձն է առել 61-րդ հոդվածով, նույնիսկ չի տեղեկացրել այդ միջոցառման մասին։

Չի երևում նաև, թե արդարադատության իրագործման մեջ որևէ բարեփոխում է մտցված։ Բազմաթիվ հյուպատոսական զեկուցագրեր, ընդհակառակը, ապացուցում են, որ քաղաքացիական ու քրեական դատարանների սույն կանոնադրությունը ավելի լավը չէ, եթե ոչ՝ ավելի վատը, քան նախկինը։

Իսկ ինչ վերաբերում է ժանդարմերիային ու ոստիկանությանը, ապա հուլիսի 5-ի նոտան հաստատում է, որ Բ. Դուռը հրավիրել է մի քանի սպաների, որպեսզի իրեն նախագիծ ներկայացնեն այդ երկու հաստատությունների բարենորոգման վերաբերյալ, բայց տերություններին միանգամայն անհայտ են այդ նախագծերը, և օսմանյան կառավարությունը ի վիճակի չէ նույնիսկ պնդել, թե դրանք ներկայացված են եղել իրեն։

Ներքոստորագրյալները նույնիսկ չեն կարող ասել, թե Բարձր Դռան պատասխանը գոնե որոշ բավարարություն տվել է այն բողոքներին, որոնք շարադրված են հունիսի 11-ի իրենց նոտայում։ Նրանք իրենց առավել ևս իրավասու են համարում իր իսկական չափերին հանգեցնել այն գործունեությունը, որը դրսևորել է օսմանյան կառավարությունն այդ ուղղությամբ, և որ Բ. Դուռը, դատելով նրա պատասխանից, ինքն էլ պարզ պատկերացում չունի կանոնադրության և այն պարտականությունների մասին, որը նրա վրա դրել է Բեռլինի դաշնագիրը։

Այն արտահայտություններն իսկ, որոնցով Բարձր Դուռը իրեն իրավունք է վերապահել խոսելու հայաբնակ գավառներում կատարված ոճրագործությունների մասին, ապացուցում են, որ նա չի խոստովանում անիշխանության այն աստիճանը, որ տիրում է այդ գավառներում, և իրերի դրության լրջությունը, որի շարունակումը կարող է, ամենայն հավանականությամբ, իր հետևից բերել քրիստոնյա բնակչության ոչնչացում այդ ընդարձակ շրջաններում...

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Բ. Դուռը պարտավոր է առանց հետագա ձգձգումների կատարել այն բարելավումներն ու բարենորոգումները, որոնք պահանջվում են հայաբնակ գավառների տեղական կարիքները հոգալու համար։ Ներքոստորագրյալները, ցավոք սրտի, պետք է խոստովանեն, որ հունիսի 5-ի նոտայում նշված ընդհանուր բարենորոգումները չեն մատնանշում տեղական այն պահանջները, որոնց մասին խոսում է մեջբերվող պարագրաֆը։ Տերությունները, իհարկե, հաճությամբ կընդունեն լայն բարենորոգումների անցկացումը Օսմանյան կայսրության բոլոր մասերում, բայց նրանք ամենից քան կողմ են Բեռլինի դաշնագրի լրիվ կատարմանը և չեն կարող թույլ տալ, որ Բ. Դուռը ինքն իր վրա նայի որպես այդ հոդվածով հանձն առնված պարտավորություններից ազատվածի, առաջարկելով վերակառուցում, որի մեջ չմտնեն գավառների համար հատուկ վերապահված այն բարենորոգումները, որոնք հիշատակված են դաշնագրում։ Իսկ քանի որ այդ գավառների բնորոշ գիծը քրիստոնեական տարրի գերակշռությունն է առավել մեծ շրջաններում, ապա ոչ մի բարենորոգում, որն ի նկատի չի առնի այդ պարտավորությունը, չի կարող հանգեցնել բարենպաստ հետևանքների...

Օսմանյան կառավարությունը հայտարարում է, թե ինքն «արգեն ծառայության է ընդունել ազնիվ և ընդունակ մարդկանց, առանց դավանության խտրության, և որ այսուհետև այդ փաստը էլ ավելի մեծ զարգացում կստանա»։ Այս հայտարարությունը խիստ անորոշ է, և ներքոստորագրյալները կարծում են, թե անհրաժեշտ է էլ ավելի հաստատապես պնդել այս կետի վրա, որ, ինչպես հայերն են հաստատում, գավառներում, որտեղ իրենք մեծամասնություն են կազմում, հասարակական պաշտոններում ոչ մի հայ չկա։ Նրանց պահանջներն առավել ևս օրինական են, քանի որ Բ. Դուռը եթե նույնիսկ քրիստոնյաների նշանակի այդ գավառների կառավարիչ, ապա այն ժամանակ էլ հայերը չեն կարող կառավարման գործում ավելի մեծ հավասարության և արդարության իրականացման հույս տածել։

Ուրեմն անհրաժեշտ են ավելի լայն միջոցառումներ, քան այն, ինչ առաջարկում է օսմանյան կառավարության նոտան,

որպեսզի Բ. Դուռը ճանաչվի որպես Բեռլինում իր ստանձնած պարտավորություններն իրագործած։

Առաջարկված բարենորոգումների անբավարարությունն այնքան ակնհայտ է, որ անօգուտ է քննարկել Բ. Դռան նախագծի թերությունները։ Չնայած դրան՝ ուղղակի հնարավոր չէ չանել հետևյալ դիտողությունները։

Հայտարարելով, ամենից առաջ, թե համայնքների կառավարիչները պետք է կառավարության պաշտոնյաներ լինեն, որոնք կենտրոնական իշխանության իսկ կողմից նշանակվում են համայնքի խորհրդի ընտրված անդամներից, այլ ոչ թե ընտրվում են իրենց՝ համայնքների կողմից, դրանով իսկ Բ. Դուռը ընդունում է ծայրահեղ կենտրոնացման սկզբունքը վարչական պաշտոնակարգության մեջ։

Բացի այդ, օսմանյան նոտան չի սահմանում գավառային ժանդարմերիայի և մյուս տեսակների միջև տարբերությունները ո՛չ հավաքագրման եղանակով, ո՛չ էլ այլ տեսակետներից։ Համայնքային ժանդարմերիան մյուս բոլորից տարբերվում է միայն նրանով, որ այն դրված է համայնքի պետի կառավարման տակ։ Այն չի հավաքագրվում բուն համայնքի ըստ դավանանքի գերակշիռ տարրից և ոչնչով չի երաշխավորվում, որ դա կլինի այն, ինչ որ իսկապես լինելու է, այսինքն՝ տեղական պահպանական ուժ։

Գավառական ժանդարմերիայի կազմակերպումը ևս չի համապատասխանում գավառի տեղական շահերին, որոնք մատնանշված են 61-րդ հոդվածով։ Է՛լ ավելի անորոշ բնույթ է կրում «կայսրությանը հպատակ բոլոր դասակարգերի հպատակներից» ինչպես զինվոր, այնպես էլ սպա ընտրելու եղանակը։ Ցանկալի կլիներ, որ գավառական ժանդարմերիայի և՛ զինվորները, և՛ սպաները ընտրվեին համայնքային ժանդարմերիայի անդամներից, այսինքն՝ գյուղական պահակներից, որոնք իրենց հերթին ընտրվեին հենց համայնքների կողմից։ Գյուղական այդ պահակները, որոնց պարտականությունն է գյուղերը պաշտպանել քրդերի ասպատակություններից, գավառական ժանդարմերիային պետք է յուրաքանչյուր համայնքի բնակիչների համամասնությամբ կոնտինգենտ տրամադրեն։ Վարչության կամայականության տեղը բռնող ընտրական սկզբունքը պետք է որ հուսալի երաշխիք լիներ այն ուժերի ճիշտ դասավորման համար, որոնք կոչված են պահպանելու հասարակության անվտանգությունը։

Շարժական դատարանի հիմնադրմանը վերաբերող առաջարկությունների արժանիքը կախված է ամենից առաջ այն պայմաններից, որոնց առկայությամբ պետք է հիմնադրվի այդ դատարանը։ Իսկ հուլիսի 5-ի նոտան այդ առթիվ խորը լռություն է պահպանում։ Անհրաժեշտ է ուշադրության առնել որոշ գավառներում հայկական տարրի գերակշռությունը և այդ տարրին համապատասխան մասնակցության հնարավորություն ընձեռել արդարադատության կազմակերպման գործում։

Բացի այդ, այստեղ ծագում են էլի մի շարք հարցեր, որոնց լուծման վրա օսմանյան նոտան ոչ մի ուշադրություն չի դարձնում։ Դատավորներն արդյոք անփոփոխելի՞ կլինեն, թե՞ նշանակված որոշ ժամանակով։ Ըստ ո՞ր օրենքների պիտի դատեն նրանք. արդյոք Շարիաթի օրենքներո՞վ, թե՞ մի այլ օրենսգրքի օրենքներով։ Ի՞նչ կերպ պիտի դատարանը քրդական կիսանկախ, վայրենի ցեղերին ստիպի ճանաչել իր արձակած դատավճիռները...

Ցավոք սրտի, այն պարագրաֆը, որ վերաբերում է տեղական շահերի բավարարման համար հատկացվող որոշ գումարին, ինչպիսին ուսումնարաններ պահելն է, ձևակերպված է անչափ անորոշ։ Կարելի է, սակայն, ենթադրել, թե այն իր մեջ պարունակում է բավականին կարևոր մի սկզբունք, և այդ սկզբունքը, տերությունների կարծիքով, կայանում է հետևյալում. հարկերը պետք է բաժանվեն երկու կատեգորիայի. առաջինը, որի մեջ մտնում են մաքսատնից ստացվող եկամուտները և աղի ու ծխախոտի հարկերը, պետք է օգտագործվի կայսրության կարիքների համար, մյուսը, որ կազմվում է վիլայեթի ընդհանուր եկամուտներից, պետք է օգտագործվի գավառների վարչական նպատակների վրա։ Մնացորդի մի մասը կգնա տեղական պահանջմունքների վրա, իսկ մյուս մասը կուղարկվի Կ. Պոլիս։ Եթե այս մեկնաբանությունը ճիշտ է, ապա հուլիսի 5-ի նոտայի առաջարկությունները քիչ թե շատ կհամապատասխանեին Եվրոպական Թուրքիայի գավառների վարչական վերակազմավորման նախագծի 19-րդ հոդվածին, որ ներկայացված է Բ. Դռան կողմից Արևելյան Ռումելիայի եվրոպական հանձնաժողովի քննությանը։ Այդ միջոցառումն ունի լուրջ բարենորոգման բնույթ, որքանով որ սահմանում է մի սկզբունք, որ ամենից առաջ պետք է հոգալ տեղական ծախսերի ապահովման մասին՝ եկամուտների ու հարկերի մի մասից պահում կատարելու միջոցով, միայն

անհրաժեշտ է, որ այդ սկզբունքը հենվի երաշխիքների վրա՝ այն ամենի համապատասխան, ինչ որ ընդունված է եղել վարչական բարենորոգումների հանձնաժողովի կողմից։

Բացի այդ, ներքոստորագրյալները պետք է նշեն, որ չի կարելի որևէ այլ նպատակի համար ծախսել այն եկամուտը, որի օգտագործման նպատակն արդեն որոշված է։

Ապակենտրոնացման սկզբունքը, ինչն այնքան անհրաժեշտ է գավառների համար, որոնք բնակեցված են այնպիսի ցեղերով, որ դավանում են կենտրոնական իշխանությունների դավանած կրոնից տարբեր կրոններ, բավարար չափով լավ չի շարադրված Ձերդ գերազանցության նոտայում։ Հնարավոր չի լինի հույս դնել բարենորոգումների իրականացման վրա, մինչև որ պարզորոշ չսահմանվի գեներալ-նահանգապետների դրությունը։ Նոտան ասում է, թե նրանց իշխանությունը ընդլայնվելու է, բայց ընդհանուր բնույթի այդպիսի հավաստիացումները դեռևս չեն կարող լուծել խնդիրները։ Քանի դեռ ճշգրիտ որոշված չի լինի գեներալ-նահանգապետների իշխանության սահմանները և նրանց պատասխանատվության կարգը՝ իրենց պարտականությունները կատարելիս, քանի դեռ այդ բարձր պաշտոնյային չեն տրամադրվի ձևական երաշխիքներ իր ծառայության տևողության մասին, անհնար կլինի կարծիք հայտնել առաջարկված միջոցառումների վավերականության մասին։ Պարզ է, որ գեներալ-նահանգապետը պետք է որոշակի տվյալներ ունենա իր ծառայության տևողության մասին, պետք է ազատված լինի իր կառավարման գործի ամեն մի մանրուքի մշտապես միջամտելուց, ինչից մինչև այժմ ջլատված է եղել նրա գործունեությունը։ Ավելորդ է հիշեցնել, որ եթե վալիի այդպիսի ապահովված անկախությունը ցանկալի է ամենուրեք, ապա այն միանգամայն անհրաժեշտ է հայաբնակ գավառներում։ Մի խոսքով, տերությունները, որոնք համոզված են օսմանյան կառավարության առաջարկությունների անբավարարության մեջ, կարծում են, որ արդեն ժամանակն է առավել լուրջ ուշադրություն դարձնել այդ գավառների տեղական կարիքներին, առավել լայն զարգացում տալ հավասարության և ապակենտրոնացման սկզբունքներին, առավել գործուն միջոցներ ձեռք առնել ոստիկանության կազմակերպման և բնակչությանը քրդերի ու չերքեզների ասպատակություններից պաշտպանելու համար և որոշել, վերջապես, գեներալ-նահանգապետի իշխանության տևողությունն ու չափը։ Այս և միայն

այս պայմանների առկայությամբ կարող է լրիվ բավարարություն տրվել այն իրավունքներին ու հույսերին, որոնք ստեղծված են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով։

Ճիշտ է, որ Բ. Դուռը ձգտում է նվազեցնել այդ պարագրաֆի նշանակությունը՝ վկայակոչելով ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա բնակչության թիվը՝ համեմատած ամբողջ ժողովրդի ընդհանուր թվի հետ։ Նոտային կից ներկայացված աղյուսակը այն աստիճանի տարբերվում է մյուս բոլորից, որ տերությունները չեն կարող դա ընդունել որպես կատարելապես ճշգրիտ...

Շատ հավանական է, որ տեղական բոլոր պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ կլինի տարբեր վիլայեթների ներկա աշխարհագրական սահմանների վերանայում կատարել։

Չափազանց անհրաժեշտ է նաև, առանց ժամանակ կորցնելու, կատարել հայերի կյանքը և ունեցվածքը ապահովող բարենորոգումներ, իսկույնևեթ միջոցներ ձեռք առնել քրդերի ասպատակությունների դեմ, անհապաղ կիրառել ֆինանսական նոր համակարգ, ստեղծել ժանդարմական, թեկուզ ժամանակավոր, մի ավելի լավ կազմակերպություն և, մանավանդ, առավել լայն ու առավել տևական իշխանություն տրամադրել գեներալ-նահանգապետին։

Վերջում ներքոստորագրյալները Բարձր Դռանը կրկին անգամ խնդրում են ուշադրություն դարձնել այն էական փաստի վրա, որ հայաբնակ գավառներում մտցվող բարենորոգումները, ըստ միջազգային ակտով իր ընդունած պարտավորությունների, պետք է համաձայնեցվեն տեղական պահանջմունքների հետ և իրագործվեն տերությունների հսկողության տակ։

Ներքոստորագրյալներ՝

Գացֆելդ (*Գերմանիա*)
Նովիկով (*Ռուսաստան*)
Գոշեն (*Անգլիա*)
Կորտի (*Իտալիա*)
Կալիցե (*Ավստրո-Հունգարիա*)
Տիսսո (*Ֆրանսիա*)

Մ. Գ. Ռոլեն-Ժեքմեն. Արմենիա, արմյանե ի տրակտատի. Բ սբ.: Ոլոժենիե արմյան ի Տուրցիի դո վմեշատելստվա դերժավ ի 1895 գ. Մ., 1898, ս. 96—103.

5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԳՆԴԱՊԵՏ ՖԻԼԻՊՈՎԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆՈՎԻԿՈՎԻՆ

Զեկույց **Կ. Պոլիս, 19 հոկտեմբերի 1880 թ.**

Համաձայն Ձերդ բարձր գերազանցության կողմից ս. թ. հոկտեմբերի 17-ին ինձ տրված բանավոր հրամանի՝ իմանալ հայոց պատրիարք Ներսեսից. 1) գործերի իրական վիճակը Հայաստանում, 2) հայտնի՞ է նրան արդյոք, որ անդրկովկասցի հայ երիտասարդներից շատերը թաքուն անցնում են Թուրքիա և 3) այդ տարագրության նպատակները,— ես հաջորդ օրը (հոկտեմբերի 18-ին) եղա պատրիարքի մոտ։ Նրա տված բացատրությունները հանգում են հետևյալին։

Պատերազմի սկզբից Թուրքահայաստանը, պատրիարքի ասելով, Թուրքական իշխանությունների կողմից այնպիսի ճնշումների է ենթարկվել, որ որոշ վայրերում բնակիչներն արդեն համարձակվել են դիմադրության ելնել՝ չնայած հաջողության անհուսալիությանը, բայց ինքը պատրիարքը հասցրել է մտքերը հանդարտեցնել՝ համոզելով ու խոստումներ տալով։ Սակայն պատերազմից հետո Հայաստանում ամենուրեք կառավարության սիստեմատիկ հալածանքներին ավելացել են կողոպուտները։

Չնայած մտքերի ողջ բորբոքվածությանը՝ պատրիարքը ժողովրդին զսպել է չափավորության ու ողջախոհության սահմաններում՝ Հայաստանի շուտափույթ վերակառուցման խոստումով։ Այդ խոստումները հիմնված են եղել Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի հոդվածների և Կ. Պոլսի եվրոպական ներկայացուցիչների խոստումների վրա, թե՝ կարճ ժամանակամիջոցում կձեռնարկեն Հայաստանի ազատագրումը անարխիայի այն վիճակից, որի մեջ գտնվում է այժմ։ Ժողովուրդը այդ հույսից իսկապես կենդանություն է առել, երբ իմացել է, որ եվրոպական ներկայացուցիչների կողմից արդեն սկսված են բանակցությունները՝ Հայաստանում կանոնավոր կառավարչություն հաստատելու և նույնիսկ, ըստ եվրոպական տերությունների համաձայնագրի, հիմնական գծերով մշակված և Բ. Դուանն է ներկայացված այդ կառավարչության նախագիծը։

Ժողովուրդն արդեն երկու ամսից ավելի սպասում էր եվրոպական կողմից հարուցված Հայկական հարցի որևէ տեղաշարժման, բայց տեսավ, որ ինչպես եվրոպական տերություններից, այնպես էլ մանավանդ Բ. Դուան կողմից ընդունված կանոնադրությունը զրկում է Հայաստանի այժմյան անտանելի վիճակը շուտափույթ փոխելու հույսից։ Այնինչ Թուրքական կառավարությունը օգտվել է այդ ժամանակամիջոցից և ձեռնամուխ է եղել Աբբեդին փաշայի՝ Ձերդ բարձր գերազանցությանը հայտնի նախագծի ներդրմանը, որը եվրոպական ներկայացուցիչների կողմից միաձայն համարված է անբավարար։ Բ. Դուան սկսել է երկրամասի վարչական բաժանման փոփոխություններից։ Թուրքական կառավարության գործողությունների հիմքում ընկած է Հայաստանը գավառների (կայմակամությունների) և գավառակների (նահիյեների) այնպես բաժանելու մտադրությունը, որ հայ բնակչությանը, ըստ հնարավորին, զրկի մեծամասնություն լինելուց, այսինքն՝ մեկ վարչական ամբողջություն կազմող հայ հոծ բնակչությամբ վայրերը բաժանվում են այնպիսի մասերի, որոնք միացվում են հարևան՝ հիմնականում քրդերով կամ Թուրքերով բնակեցված վայրերի հետ։ Մյուս կողմից, Բ. Դուանը բոնի միջոցներ է ձեռնարկել ոչնչացնելու ինքնուրույնության այն անհնարին բաժինն էլ, որից ժողովուրդը, սուլթանների կողմից տրված վաղեմի իրավունքների շնորհիվ, օգտվում էր համայնքի ներքին և հոգևոր գործերը տնօրինելիս։ Ի հակադրություն այդ իրավունքների՝ Բ. Դուան սկսել է կապվել անմիջապես եպիսկոպոսների հետ և նրանց փոփոխում է, նույնիսկ նախապես չտեղեկացնելով պատրիարքին, որով իսկ խախտում է վերջինիս հեղինակությունը և է՛լ ավելի է թուլացնում միակ իշխանությունը, ինչը ընդունակ է ժողովրդի շարժումը որոշ չափով ուղղել դեպի օրինականության սահմանները։ Այսպիսով, հայ ժողովուրդը, պատրիարքի ասելով, ոչ միայն զրկվում է օրինական ճանապարհով իր վիճակի թեթևացման հույսից, այլև Բ. Դուան վերջին կարգադրությունների մեջ ապագայում էլ ոտնձգություն է տեսնում արդեն այնքան աղետաբեր եղած գործերի ներկա դրության կարգավորման դեմ։

Պատրիարքի ասելով, Թուրքիայում հայ ժողովրդի վիճակն այնքան է անհուսալի, որ նույնիսկ զինված դիմադրությունը չի կարելի համարել անհնարին։

Պատրիարքի մոտ արդեն եկել են և՛ Թուրքահայեր, և՛ կովկասահայեր այդ կարգի զանազան մտադրություններով, բայց նա վճռական մերժումով է պատասխանել, դրա հետ մեկտեղ պատվիրելով եպիսկոպոսներին՝ հակազդել այդ կարգի բոլոր

փորձերին, եթե էնտուզիաստների հրահրմամբ դրանք դրսևորվեն մանր ապստամբությունների ձևով։

Դրա հետ մեկտեղ, սակայն, պատրիարքը նկատեց, որ ինքն օգտվում է միայն հոգևոր հեղինակությունից, առանց որևէ գործադիր ոստիկանական իշխանության։ Ուստի կարող է բնակչության ձգտումներին հակազդել միայն որոշ չափով, իսկ այնուհետև իր բարոյական ազդեցությունը անզոր դուրս կգա, երբ համակումը համընդհանուր դառնա, այսինքն՝ երբ այժմյան աղետների պատճառած տառապանքը ժողովրդի համբերության բաժակը լցնի։

Архив внешней политики России (АВПР),
Ф. — Петербургский Главный архив, д. 119, л. 4—5.

6. ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՀԱՅԵՐԸ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ III ԿԱՅՍՐԻՆ

Նամակից **10 փետրվարի 1882 թ.**

Հայաստանի Վանի վիլայեթի հայ քրիստոնյա բնակչության անունից, ի լրացումն մեր խոնարհ դիմումի, որ հղված էր Ձերդ մեծությանը 1880 թ. մարտի 16-ին մեր ժողովրդի աղետալի վիճակի վերաբերյալ, նորից կրկնում ենք մեր խնդրանքը։ Մենք համարձակվեցինք վերստին դիմել Ձեզ այն պատճառով, որ ներկայումս հայ ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, քանզի վիճակը անտանելի է և հուսահատական։

Փոխանակ այն բանի, որ Բեռլինի դաշնագրի հայոց հարցին նվիրված 61-րդ հոդվածը վերջ դներ անտանելի հալածանքներին, նոր զոհերը հաստատում են, որ եթե այսպես շարունակվի, ապա այդ հոդվածը կդառնա մեր կործանման պատճառը։

Բեռլինի դաշնագրի կնքումից մինչև այժմ Բարձր Դռան կողմից չի նկատվում որևէ ցանկություն Հայաստանում արդարություն ու հավասարություն հաստատելու ուղղությամբ։ Ընդհակառակը, կենտրոնական կառավարական հիմնարկներում միանգամայն անտեսվում են հայ քրիստոնյաների շահերը, արմատավորվում են մոլեռանդություն ու ատելություն նրանց նկատմամբ, որի հետևանքով կառավարական պաշտոնյաները, ավազակախմբերը և ընդհանրապես բոլոր կեղեքիչները, է՛լ ավելի խրախուսված, մեծացնում են իրենց ոճրագործությունները։

Նույնիսկ այժմ, Ձե՛րդ մեծություն, երբ արդեն շատ ամիսներ բանակցություններ են վարվում Հայկական հարցի և Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու շուրջը, ինչպես Ձեզ հայտնի է, նորին սուլթանական մեծության կառավարությունը չի ցանկանում ճանաչել իր պարտականությունները, որոնք բխում են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից։ Նրա բոլոր խոստումներն ու խուսավարումները նպատակ ունեն ուժից զրկել այդ հոդվածը, որպեսզի հայ ժողովուրդը կորցնի իր վերջին հույսը։

Ահա թե ինչու, եթե Ձերդ մեծության հզոր ու մարդասիրական ազդեցությունը չփրկի մեզ, ինչպես դա տեղի ունեցավ Արևելյան Ռումելիայում, որին վարչական ավտոնոմիա տրվեց, և վարձահատուցում չդառնա մեր համբերության դիմաց, ապա տեղի կունենան անասելի աղետներ, որոնք կհանգեցնեն այն բանին, որ Հայաստանը կդառնա տառապյալ հայոց վերջին հույսերի գերեզմանը...

Խրիմյան
Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք,
Խորեն Հովհաննիսյան
Հայրապետ Խաչյան

АВПР, Главный архив, д. 119, л. 50.

7. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆՈՎԻԿՈՎԻՆ

№ 12 զեկույցից **14 մարտի 1882 թ.**

Պարտք եմ համարում հայտնել, որ այստեղի՝ Թուրքերից սիստեմատիկորեն հալածվող հայերի վիճակը իրոք ավելի անտանելի է դարձել, քան երբևէ։ Պետք է այստեղ՝ տեղում լինել, դատելու համար, թե ինչ վրդովեցուցիչ չափերի են հասնում Թուրքերի հալածանքները հայերի նկատմամբ։ Ըստ որում առավել բարձրաստիճան կառավարական պաշտոնյաները բացեիբաց արտահայտվում են, թե իբր այստեղ երկրորդ Բուլղարիա է պատրաստվում և որ իրենք, փորձից դաս առած, կկարողանան խեղդել իրենց կառավարությանը վնասակար տարրին և, այդպիսով, «Հայկական հարցին» վերջ կտան մեկընդմիշտ։ Թուրքական բարձր վարչության այդպիսի տրամադրությունը, որ ներ-

ընչված է, իհարկե, Բ. Դռան կողմից, և խոստացված բարենորոգումների որևէ նշանի բացակայությունը տեղացի հայերին դրդեցին նորից խնդրանքով դիմել մեր կառավարությանը։ Մատնանշեմ, ի միջի այլոց, հետևյալ փաստը. Վանի վիլայեթի հիմնումից ի վեր փոխնահանգապետի (մուավին) պաշտոնում մշտապես հայ է նշանակված եղել (վերջին ժամանակներս՝ ոմն Աղաթոն էֆենդի)։ Այժմ վերջինս կանչված է Կ. Պոլիս (ենթադրում են, թե մուավինի պաշտոնը կվերացվի) և Վանի նոր հաստատված մութեսարիֆի պաշտոնում նշանակված է Շուքրի էրը՝ նախկին մի մոլլա։ Այդ նշանակումը ծանր տպավորություն գործեց այստեղի հայերի վրա...

Վերջում ավելացնեմ, որ այստեղի հայերը ում էլ որ դիմեն օգնության խնդրանքով, բայց իրական աջակցություն սպասում են միայն Ռուսաստանից։ Եթե սովորող հայերի մեջ կան նաև անձինք, ովքեր ներելի մոլորությամբ հենվում են Անգլիայի վրա, ապա, մյուս կողմից, չի կարելի իսկություն չհամարել, որ նրանց ճնշող մեծամասնությունը գլխովին նվիրված է Ռուսաստանին և հավատում է միայն նրա հովանավորությանը։

Կամսարական

АВПР, Главный архив, д. 119, л. 48—49.

8. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Նամակից — 27 հոկտեմբերի 1885 թ.

Խոնարհաբար դիմելով Ձեզ հայ հայրենասերների անունից՝ մեր Կոմիտեն[2] համարձակություն է վերցնում իր վրա ապավինելու Ձերդ գերազանցության օգնությանը, որպեսզի նորին կայսերական մեծության կառավարության բարեհաճ ուշադրությունը հրավիրեք միլիոնավոր այն նահատակների ճակատագրի վրա, որոնք հեծեծում են Հայաստանում Թուրքական ներկա վարչակարգի լծի տակ և տառապում քոչվոր ցեղերի ասպատակություններից։

Լիակատար բացակայություն արդարադատության, որի իրագործումը կախված է ցանկացած մահմեդական մոլեռանդ կրոնավորից, ում աչքին յուրաքանչյուր քրիստոնյա անհավատ է. չարաշահում իշխանությունների, որոնք տառապյալ ժողովրդի հետ վարվում են, ինչպես իսկական ստրուկի հետ, որի կյանքը, ինչքն ու պատիվը զոհաբերվում են պաշտոնյաների քմահաճույքներին. ավազակություն, որ անում են քուրդ քոչվորները[3] գավառային իշխանությունների հրամանով և ի շահ նրանց,— այսպիսին է, Ձե՛րդ գերազանցություն, իրերի դրությունը Հայաստանում։

Գոյություն ունեցող պայմաններից հուսալքման հասած Կիլիկիայի բնակչությունը 1855—1860 թթ. անհաջողություններից հետո փորձեց նորից զենքի դիմել, որպեսզի պաշտպանի իր ազատությունը, բայց կիլիկեցոց մատնեց Ահմեդ փաշա Կոզանլին, և հիմա նրանք, Մարաշի բանտը նետված, դարձյալ հեծեծում են շղթաների մեջ։

Նույն վիճակն է Էրզրումում, որտեղ ճնշված է 1882 թվի շարժումը։ Վանը, Մուշն ու Դիարբեքիրը, առանց չափազանցության, հանդիսանում են անլուր գազանությունների ասպարեզ, որոնց հիշատակումն իսկ կսարսռեցներ Եվրոպայի ազնվաբարո ժողովուրդներին։

Այս ամենը հանգեցրել է նրան, որ մեր ժողովուրդը, Ձե՛րդ գերազանցություն, ակնհայտորեն կորստյան է դատապարտվում. զոհվում են մարդիկ, ոչնչանում են տնտեսություններ, իրագործվում է բնաջնջման ծրագիր։ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ընդունումից ի վեր Թուրքական կառավարությունը իր ջանքերը գաղտնի ուղղում է հայ ազգին իր հայրենիքում ոչնչացնելուն։ Նրանք, ովքեր դժբախտություն ունեն իրենց վրա հրավիրել Թուրքական իշխանությունների ուշադրությունը կա՛մ իրենց խելքով, կա՛մ զբաղեցրած սոցիալական դիրքով, կարող են խույս տալ հալածանքներից միայն երկրի սահմանները լքելով. այդկերպ ընտանիքների հազարավոր հայրեր սահմանից այն կողմ են ընկնում՝ լրացնելով հայրենասերների շարքերը, որոնց մենք պատիվ ունենք ներկայացնելու։ Նրանք, ընտանիքներից հեռու, թափառում են աշխարհով մեկ, միջոցներ փնտրելով վերադառնալու իրենց հոգեհարազատ օջախներն ու իրենց դժբախտ երեխաների մոտ։ Նրանք արտասահմանում կարոտում են իրենց ընտանիքներին, մինչդեռ իրենց ընտանիքները՝ հայրերը, մայրերը, երեխաները, հայրենիքում մեռնում են կարիքից ու զրկանքներից։

Այսպիսին են մեր ժողովրդի կյանքի պայմանները,— եթե կարելի է դա կյանք անվանել,— որոնք մեզ ստիպեցին համար-

ձակություն առնել դիմելու նորին մեծության կառավարությանը՝ հուսալով արժանանալ նրա բարեհաճ ուշադրությանը։

Զեռնարկելով մեր դեմարշը՝ մենք չենք հավակնում առանձին թագավորության, չենք ձգտում քաղաքական անկախության, այլ ցանկանում ենք պարզապես ապրել մարդկային պայմաններում։

Մենք ուզում ենք հնարավորություն ունենալ վերադառնալու մեր հայրենիքը, ապրել այնտեղ և խաղաղորեն մշակել այն սրբազան հողը, որ մեզ կտակված է մեր նախնիներից, նրանց արյունով է ոռոգված։

Մենք հուսով ենք, Ձե՛րդ գերազանցություն, որ նորին մեծություն ամենաողորմած կայսեր կառավարությունը, որը Բեռլինի վեհաժողովում իր ստորագրությամբ հաստատել է Հայաստանում վարչական համակարգի բարենորոգումների հրատապ անհրաժեշտությունը, կբարեհաճի բարյացակամ վերաբերվել հայ հայրենասերների խոնարհ խնդրագրին, որով մենք համարձակվում ենք դիմել Ձերդ գերազանցությանը...

Հանուն ազգի, Ձե՛րդ գերազանցություն, մենք այսօր համարձակվում ենք դիմել Ձեր ազնիվ միջնորդությանը, որպեսզի հրավիրեք նորին մեծություն ամենաողորմած ցարի կառավարության ուշադրությունը Հայաստանի դժբախտ նահատակների ճակատագրի վրա, թեկուզ և նրա համար, որպեսզի հարգել տաք այն ստորագրությունը, որով Դուք բարեհաճել եք վավերացնել Բեռլինի դաշնագիրը։ Մենք ենթադրում ենք, որ դժբախտ ժողովրդի վիճակը արժանի է այն կառավարության ուշադրությանը, որը Դուք այնքան արժանավայել կերպով ներկայացնում եք։

Հայ ժողովուրդը ցրված է Թուրքիայով մեկ, և Դուք, Ձե՛րդ գերազանցություն, տեսնում եք, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որը վերաբերում է Թուրքիայի բոլոր ասիական հայաբնակ գավառներին՝ ի նկատի ունենալով այդ բոլոր գավառների նկատմամբ դրա միանգամից կիրառելու դժվարությունը, Օսմանյան կայսրության կառավարությանը անվերջանալի պատրվակների հնարավորություն է տալիս, որպեսզի այդ որոշումը մնա թղթի վրա։ Բայց Սեբաստիան, Էրզրումը, Վանը, Դիարբեքիրը և Կիլիկիան, որտեղ հայերը դեռ հոծ մեծամասնություն են կազմում..., կարող էին ինքնավար գավառների միություն կազմել Բարձր Դռան գերիշխանության տակ և եվրոպական որևէ միապետի գայիսոնի ներքո։ Երկրի ոչ երկարատև ռազմական օկուպացիայի օգնությամբ այնտեղ կարելի կլիներ վերականգնել

կարգուկանոնը և անդորրը՝ բարենորոգված վարչակարգի պայմաններում, ինչպիսին գոյություն ունի Արևելյան Ռումելիայում։ Այսպիսով, անհապաղ կբացվեր բնական հարստությունների օգտագործման ուղին, ինչին կնպաստեր առևտրի և արդյունաբերության հանդեպ այն հակումը, որը բնորոշ է հային և նրան ստիպում է ձգտել կապեր հաստատելու եվրոպական ժողովուրդների հետ։

Մեր խոնարհագույն խնդրանքով դիմելով Ձեզ, Ձե՛րդ գերազանցություն, չենք կասկածում, որ մեր կողմից հաղորդվող փաստերը Ձեզ հայտնի են։ Բայց հիշելով, որ մենք խոսում ենք հայրենիքից զրկված հայրերի անունից, որոնք կարոտում են իրենց զավակներին, որդիների անունից, որոնք ստիպված են եղել լքել ծնողներին ու քույրերին ոչ նրա համար, որ խույս տան խոշտանգումներից, այլ որպեսզի, իրենց փրկելով, իրենց դժբախտ ընտանիքներին ապահովեն մի կտոր հացով,— մենք չէինք կարող տալ առավել սեղմ նկարագրությունն այն վիճակի, որի մեջ գտնվում են հայերը։ Նրանք դեռևս հեծեծում են՝ շարունակելով ապրել այն պայմաններում, որոնք Ձեզ հայտնի են..., չնայած տերությունների և նորին մեծություն համառուսական կայսեր կառավարության խոստմանը։

Հուսալով, որ Ձերդ գերազանցության բարյացակամ միջնորդության շնորհիվ նորին մեծության կառավարությունը կբարեհաճի անսալ այս աղերսանքներին և աղետից ու կործանումից փրկել այնքան մարդկային էակներ, մենք պատիվ ունենք Ձերդ գերազանցությանը արտահայտելու մեր խորին երախտագիտության զգացմունքները...

Հայ հայրենասերների կոմիտե

АВПР, Посольство в Константинополе, д. 3133, л. 27—28.

9. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ԴԵՆՆԵՏԻ ՀԵՌԱԳՐԻՑ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Էրզրում, 10 հունիսի 1890 թ.

Քրիստոնյա բնակչության, նրա հետ նաև՝ մեր, դրությունը ծայր աստիճանի վտանգավոր է։ Ամեն րոպե կարելի է սպասել մահմեդական մոլեռանդության պոռթկման՝ որևէ չնչին պատահականությունից։

Էրզրում, 12 հունիսի 1890 թ.

Մոլեռանդության այս տեղական բռնկումը կվերածվի՞ ընդհանուր շարժման, դժվար է դատել... Վիրավորները երկու հարյուրից ավելի են, սպանվածներից հայտնի են առայժմ տասնչորս հոգի։

АВПР, Политархив, д. 3431, л. 10, 18.

10. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԳԻՐՍԻՆ

Քաղվածքներ զեկույցից — Բուլուրդերե, 19 (31) հուլիսի 1890 թ.

Հույս ունենալով մոտիկ ապագայում Ձերդ բարձր գերազանցությանը անձամբ բանավոր հաշվետվություն ներկայացնել այստեղ ընթացիկ շաբաթում տեղի ունեցածի վերաբերյալ, ես ժամանակ չեմ գտնում այդ մասին մանրամասն գրավոր զեկույց կազմելու, մանավանդ որ գլխավոր իրադարձությունները շարադրված են եղել իմ վերջին հեռագրերում։

Դրանցից ամենաակնառուն այն արյունալի անկարգություններն են, որոնք տեղի են ունեցել կիրակի օրը Ստամբուլում, Հայ լուսավորչական պատրիարքարանի մոտ՝ Գում-Գափուում...

Հայերը սաստիկ բորբոքված են այն անարգել բանտարկություններից և հալածանքներից, որոնք գործադրվում են բոլոր նրանց նկատմամբ, ում վրա կասկածում են, թե անդամ է ենթադրյալ հեղափոխական կոմիտեի, որը ցույց էր կազմակերպել ընդդեմ պատրիարքի։

Գոյություն ունի՞ այստեղ արդյոք նման կոմիտե, դժվար է իմանալ...

Թուրքական իշխանությունները խելահեղ կասկածամտությամբ և խիստ միջոցների անտակտ գործադրմամբ հարուցում են ատելությունն ու թշնամանքը հայ բնակչության, որը բավականին շատ է մայրաքաղաքում և ցրված է Թուրքիայով մեկ։ Սրանից հետևությամբ կարող են խիստ վտանգավոր բարդություններ ծագել...

АВПР, Политархив, д. 3431, л. 30—31.

11. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԳԻՐՍԻՆ

Ծեպագրից — Պերա, 1 (13) նոյեմբերի 1890 թ.

Հուզումն ու անբավականությունը հայ բնակչության չափավոր մասի միջավայրում աստիճանաբար սաստկանում է և [հայերը] ձգտում են մեծ տերություններին, մանավանդ Ռուսաստանին, հարկադրել զբաղվելու Հայկական հարցով ու համառորեն պնդելու, որ կատարվեն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումները։

Ես այդ առթիվ վերջերս ուշագրավ մի զրույց ունեցա այստեղի ողջամիտ հայերից մեկի հետ, ովքեր լավ ծանոթ են Հայկական հարցի վիճակին և իրենց հայրենակիցների մտադրություններին։ Նա ջանում էր ապացուցել, թե ձերբակալություններով ու դատավճիռներով Թուրքերը չեն հասնի հայ բնակչության հանդարտեցմանը։ Դժգոհությունը չափից ավելի է համակել նրանց. անկեղծորեն հանդիմանելով ահաբեկչական կոմիտեների գործունեության անիշխանական եղանակները, բոլոր հայերը, սակայն, քիչ թե շատ մասնակից են իրենց անտանելի դրությունը բարելավելու ուղղությամբ ժողովրդին համակած ընդհանուր շարժմանը։ «Մենք ոչինչ չենք խնդրում Թուրքերից,— եզրափակեց նա։— Մեզ պետք չի ոչ մի զիջում կամ ողորմածություն, մենք պահանջում ենք այն, ինչը մեզ է պատկանում ըստ իրավունքի, ինչը ճանաչված է ողջ Եվրոպայի կողմից։ Եվ այդ իրավունքը մեզ տվել է Ռուսաստանը՝ այն գնելով իր զավակների արյան գնով։ Սան Ստեֆանոյի դաշնագրում դուք առաջինը գրեցիք Հայաստանի անունը, դուք չեք կարող մեզ մերժել ձեր աջակցությունը մեր արդարացի նկրտումներում։ Թող Դուռը մեզ բավարարություն տա, և նա կտեսնի, որ ժողովուրդը կհանգարտվի...»

Նելիդով

АВПР, Политархив, д. 3431, л. 172—173.

12. ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԸ՝ ՄԻՆԻՍՏՐ ԳԻՐՍԻՆ

Ծեպագրից **Պերա, 22 նոյեմբերի 1890 թ.**

Հայերի անդադար ձերբակալությունները, նրանց ողջ համայնքի հանդեպ կասկածանքներն ու հալածանքները աստիճանաբար համարյա անտանելի վիճակ են ստեղծել նրանց գըլխավոր անդամների համար։ Մշտապես իրենց զգալով ոստիկանական իշխանության կասկածավոր հայացքի տակ և վստահ չինելով, որ իրենք էլ չեն արժանանալու ցածր տոհմակիցներից շատերի բախտին, նրանք վերջապես վճռեցին հավաքվել, որպեսզի սուլթանին մի ուղերձ ներկայացնեն՝ հայտնելով իրենց նվիրվածությունը և պարսավելով գործողություններն այն խելացնորների, ովքեր մտածել են դեմ գնալ օրինական իշխանությանը։

Ուղերձի ստորագրությունները պատկանում են Թուրքիայի հայազգի պետական բարձրաստիճան պաշտոնյաներին։ Թեև նրանք բողոքում էլ են իրենց հայրենակիցների խելացնոր մտադրությունների դեմ, չի կարելի, սակայն, չտեսնել, որ ուղերձը կազմողները իրենց հոգու խորքում բնավ էլ անկեղծ չեն իրենց հավաստիացումների մեջ, թե «հայերն ապրում են գոհ ու երջանիկ՝ սուլթանի հայրախնամ կառավարության հովանու տակ և վայելում են բոլոր բարիքները»։ Ես առիթ եմ ունեցել խոսելու նրանցից մի քանիսի հետ, և նրանք դառնությամբ խոստովանել են, թե ստիպված են եղել կազմել այդ փաստաթուղթը, որպեսզի հրաժարվեն հեղափոխականների հետ համերաշխությունից և իրենց համար գոյության հնարավոր պայմաններ ստեղծեն՝ մերժելով մշտական կասկածանքներն ու կշտամբանքները։

Նրանք արդյոք լիովին հասա՞ն իրենց նպատակին, դժվար է ասել։ Հայերի ձերբակալություններն ու հալածանքները շարունակվում են...

АВПР, Политархив, д. 3431, л. 185—186.

13. ԱՆԳԼԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ՝ Կ. ՊՈԼՍԻՆ ԴԵՍՊԱՆ ՋԼԵՐ ՖՈՐԴԻՆ

Հալեպ, 20 հուլիսի 1892 թ.

Սը՛ր, պատիվ ունեմ սույնով Ձերդ գերազանցությանը հանձնելու պ. փոխհյուպատոս Լիկիարդոպուլոյի նամակի քաղվածքի պատճենը, որն ընթացիկ ամսվա 12-ին նա ինձ է հասցեագրել, տեղեկացնելով Ադանայի վիլայեթում գործերի վիճակի մասին։

Կարող եմ ավելացնել, որ, դժբախտաբար, մոտավորապես նույնպիսի իրադարձություններ, որոնց մասին հաղորդում է պ. Լիկիարդոպուլոն, կրկնվում են նույնիսկ Արիֆ փաշայի կողմից կառավարվող Հալեպի գավառում, և ես հակված եմ մտածելու, որ եթե եռանդուն միջոցներ ձեռք չառնվեն, ապա այս տեղերի քրիստոնյաների նկատմամբ թուրքերի այդ գործելակերպը աստիճանաբար կարող է լուրջ հետևանքներ ունենալ։

Ս. Քեթոնի

Առդիր

Փոխհյուպատոս Լիկիարդոպուլոն՝ հյուպատոսի պաշտոնակատար Քեթոնիին

Քաղվածք **Մերսին, 12 հուլիսի 1892 թ.**

Մեր վալի Խոջա Իզեթ բեյի ժամանելուց ի վեր մոլեռանդությունը հասել է իր գագաթնակետին։ Քրիստոնյաներն ընդհանրապես և հայերը մասնավորապես տառապում են դրանից. օր չկա, որ ինչ-որ մի նոր բան չծագի։ Վերջերս նա պահանջեց, որ իրեն ներկայացնեն դպրոցների ու եկեղեցիների վերաբերյալ ֆիրմանները, արգելելով հետազոտում կատարել՝ առանց Կ. Պոլսից համապատասխան կարգադրություն ստանալու։ Նա փակեց ալկոհոլի մանր առևտրականների համարյա բոլոր խանութները՝ պատրվակ բռնելով, թե դրանք գտնվում են մեչիդի կամ գերեզմանոցի մոտերքում և այլն։ Եթե մահմեդականը ուզում է քրիստոնյայից վրեժ լուծել, դրա համար բավական է, որ ներկայացնի երկու վկա, որոնք հաստատեն, թե նա անարգել է մահմեդական կրոնը. սրա համար կամ թե այդ մարդու պատիվը վիրավորելու համար տեղնուտեղը բանտ են նետում։

Մահմեդականների մեջ կան անձինք, որոնք դիմում են հայերին՝ նրանցից դրամ պահանջելով և հասկացնելով, որ մերժման դեպքում իրենք վրեժ կլուծեն։ Այս ճանապարհով հաջողվում է նրանցից դրամ շորթել։

Եթե իրերի այս դրությունը շարունակվի, կարելի է երկյուղել, որ հասարակական անդորրը խախտվելու է։ Ես կարող եմ Ձեզ հավատացնել, որ Ադանայի հայերը շատ հեռու են այն բանից, որ մտածեն կոմիտեների կամ քաղաքական այլ գործերի մասին։

Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey. 1892—93. Turkey, № 3 (1896). London, 1896, p. 32.

14. Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱՆԳԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՔԼԵՐ ՖՈՐԴԸ՝ ԿՈՄՍ ՌՈԶԲԵՐԻՈՒՆ

Կ. Պոլիս, 18 մարտի 1898 թ.

Պատիվ ունեմ սույնին կցել Կ. Պոլսում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանից հենց նոր իմ ստացած մի ճեպագրի պատճենը, որով հաղորդվում է Փոքր Ասիայի Կեսարիա քաղաքի հայ բնակչության խիստ ծանր վիճակի մասին։ Ես ժամանակ չունեի այսօր՝ մինչև սուրհանդակի մեկնելը, ստուգել ամերիկյան դեսպանի ճեպագրում բովանդակված հաղորդման հավաստիությունը, բայց ես չեմ հապաղի դա անել վաղը և Ձերդ պայծառափայլությանն ուղարկել իմ հարցուփորձի արդյունքները։

Ֆրեդերիկ Քլեր Ֆորդ

Առդիր I

ԱՄՆ-ի դեսպան Թոմփսոնը՝ Քլեր Ֆորդին

Կ. Պոլիս, 18 մարտի 1898 թ.

Պատիվ ունեմ սույնին կցել, Ձեզ ի գիտություն, Փոքր Ասիայում՝ Կեսարիայում ու Յոզղաթում գործերի վիճակի մասին մի հաղորդագրություն, որն ստացել եմ, ինչպես ինձ թվում է, հավաստի աղբյուրներից։

Մարզվանում Միացյալ Նահանգների հյուպատոս Ջյուլեստոնից ստացած զեկուցագրերից ես է՛լ ավելի եմ համոզվում, որ հաղորդագրություններում նկարագրված քրիստոնյա բնակչության գրությունը Թուրքիայի այդ անհանգիստ մասում արտակարգ ծանր է։

Դ. Պ. Թոմփսոն

Առդիր II

Հուշագրից

Կեսարիայից—... Կեսարիա քաղաքում մահմեդական ամբոխը թալանել է երեք հայկական եկեղեցի։ Հարձակումը տեղի է ունեցել շաբաթ օրը՝ ժամասացության ժամանակ։ Խլել են ներկա եղած կանանց մանյակներն ու ականջօղերը։

Դեպքեր են եղել, որ կանայք մահմեդականների կողմից հարձակման են ենթարկվել քաղաքի փողոցներում։ Նրանք հիմա չեն համարձակվում իրենց տներից դուրս գալ։

Ներկայումս որոշ անձինք Կ. Պոլսում լուր են ստացել մուսուլմանների ձեռքով Կեսարիայում սպանված իրենց ազգականների մասին։

Մահմեդականները կողոպտում են քրիստոնյա վաճառականների քարավանները, այնպես որ որոշ միջնորդներ այստեղ հրաման են ստացել դադարեցնել ապրանքների առաքումը այդ ջրջանը։

Հինգ հարյուրից ավելի հայեր գտնվում են Կեսարիայի բանտում։ Ուրիշներին դեռ բերում են գյուղերից, և նրանց տեղավորելու համար փայտե բարաքներ են սարքված։

Ի նկատի ունենալով մուսուլմանների ապօրինի գործողությունները, որ շարունակվում են արդեն չորս-հինգ շաբաթ, Կեսարիա քաղաքի խանութները փակ են։ Օրավարձու աշխատանքով ապրող մարդիկ չափազանց տուժում են, իսկ մթերքների գները շատ են բարձրացել։

Յոզղաթից.— Բանտերը լցված են հայերով, 60-ից ավելի տեղացի հարուստ հայերի ձերբակալած պահում են զինվորական հյուղակներում՝ բանտում տեղ չունենալու պատճառով։

Նրանցից մեկին՝ Համբարձում էֆենդուն, առաջարկել են բանտարկությունից ազատել այն պայմանով, որ վճարի 500 լիրա։ Նա հրաժարվել է և բանտարկված է որպես կասկածելի անձ։

Այս քաղաքում հայկական կամ բողոքական համայնքներից չկա մի հարուստ մտավորական, որը բանտում չգտնվի։

Մարզվանում մի քանի ղեկավար անձինք բանտարկված են, բայց նրանց չեն ասել, թե ինչում են իրենց մեղադրում, և նրանք շարունակում են մնալ բանտում առանց գործի քննության...

Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey. 1892—93. Turkey. № 3 (1896), London, 1896, p. 67—68.

15. ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԵՏԸ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Քաղվածքներ նամակից **Թիֆլիս, 20 օգոստոսի 1893 թ.**

Սույն թվի հուլիս ամսին քառասունհինգ թուրքահպատակ հայ ընտանիքներ ինքնակամ և առանց պատշաճ գրավոր փաստաթղթերի անցել են պետական սահմանը Երևանի նահանգի և Կարսի մարզի կողմերից ու կենտրոնացել վերջինում։ Հարցաքննության ժամանակ գաղթականները հայտարարել են, թե ինչպես իրենց, այնպես էլ իրենց մյուս ազգակիցներին, թուրքական իշխանությունները բռնի կերպով դուրս են անում սահմանամերձ գոտուց, իրենց տեղը բնակեցնում են քրդերի և որ այդ պատճառով մոտիկ ապագայում կարելի է թուրքահպատակ հայերի հետագա ներհոսք սպասել դեպի մեր սահմանները։ Ի նկատի ունենալով շարադրված հանգամանքները՝ գաղթականները խնդրում են իրենց տեղավորել և հող հատկացնել Կարսի մարզում...

АВПР, Политархив, л. 3434, л. 307—308.

16. ԴԵՍՊԱՆ ՔԼԵՐ ՖՈՐԴԸ՝ ԿՈՄՍ ՌՈԶԲԵՐԻԻՆ

Կ. Պոլիս, 28 հոկտեմբերի 1893 թ.

Պատիվ ունեմ Ձերդ պայծառափայլությանը ուղարկել նորին մեծության Էրզրումի հյուպատոսից ստացված ճեպագրի պատճենը, որով նա զեկուցում է հայերի՝ դեպի Ռուսաստան արտագաղթի ուժեղացման մասին։

Ֆրենսիս Քլեր Ֆորդ

Առգիր

Հյուպատոս Գրեյվսը՝ Ա. Նիկոլսոնին

Էրզրում, 5 հոկտեմբերի 1893 թ.

Սը՛ր, պատիվ ունեմ զեկուցելու, որ տվյալ վիլայեթի սահմանամերձ շրջանների հայերի մեջ ծավալվել է մշտական ու շարունակվող գաղթականական շարժում դեպի ռուսական տարածքը։ Դա ամենից ավելի նկատելի է Բասենի դաշտում և Ալաշկերտում, որտեղից, ինչպես ասում են, ամբողջ 400 ընտանիքներ՝ 2000 հոգուց ավելի, Ռուսաստան են գնացել անցած տարվա ընթացքում։ Եվ դա՝ անկախ այն մասնավոր դեպքերից, երբ մարդիկ մեծ քանակությամբ գնում են Ռուսաստան աշխատանք որոնելու կամ էջմիածին ուխտի և հաճախ չեն վերադառնում։ Ռուսական իշխանությունների կողմից ոչ մի խոչընդոտ չի հարուցվում արտագաղթողների նկատմամբ և նրանց ժամանակավորապես տեղաբաշխում են գյուղերում, մինչև որ ազատ հողեր տրամադրվեն՝ գլխավորապես Թուրքիա արտագաղթող մուսուլմաններից լքված տարածքներում։

Հազիվ թե կարելի է կասկածել, որ շատ հայեր կգաղթեին նաև ներքին շրջաններից, եթե չլինեին իշխանությունների դիմադրությունը և այն վտանգները, որ առկա են դեպի սահմանը տանող նրանց ճանապարհին։ Այսպես, օրինակ, Խնուսի շրջանի Կարա-Ջորան գյուղի բնակիչների մեծ մասը ձգտում է արտագաղթել, բայց կառավարությունը դա մերժել է։

1892 թ. անբերությունը և այս տարվա չնչին բերքը գյուղացիությանը գցել է անլուր դժբախտությունների մեջ, ինչն է՛լ ավելի են ծանրացնում վերոհիշյալ շրջաններում քրդերի ճնշումն ու շորթումները, ինչպես և տեղական իշխանությունների կողմից հասարակական անվտանգության պահպանման նկատմամբ ցուցաբերվող անտարբերությունը։

Ես իմացել եմ, որ շատ գաղթականներ զոհաբերել են իրենց հողերն ու տները, որպեսզի պարտքերն ու հարկերը փակեն, և լքել են երկիրը՝ իրենց հետ վերցնելով սոսկ անձնական օգտագործման որոշ իրեր, այն, ինչ կարողացել են հետները տանել...

Ռ. Վ. Գրեյվս

Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey. 1892—93. Turkey, № 3 (1896). London, 1896, p. 213.

17. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

№ 346 ճեպագրից **20 օգոստոսի 1894 թ.**

...Սասունցիները [հայերը] թողել են իրենց գյուղերը և հեռացել լեռները, որոնք աչքի են ընկնում անմատչելիությամբ և առավել ժայռոտ տեղանքով, քան Զեռնոգորիան է։

Թուրքերն սկսել են զորքեր կենտրոնացնել Սասունի մոտ։

№ 317 զեկույցում ես պատիվ էի ունեցել հայտնելու Էրզրումից 25-րդ գնդի 1-ին գումարտակի ճանապարհ ընկնելու մասին։

Այդ նույն ժամանակ, այսինքն՝ մոտ օգոստոսի 4-ին, դեպի Սասուն է ուղարկվել հետևակային մեկ գումարտակ Մուշից, մեկն էլ՝ Սղերդից, իսկ անցած շաբաթ այստեղից դուրս է եկել 25-րդ գնդի 2-րդ գումարտակը և ուղարկվել է 2 մարտկոց. մեկը՝ լեռնային, 6 հրանոթով, և մյուսը՝ դաշտային։

Համարձակվում եմ ենթադրել, որ հրետանին ունի սոսկ ցուցադրական բնույթ, քանի որ տեղանքի տեղագրությունը դժվար թե թույլ տա, որ այն գործի։

Օգոստոսի 19-ի գիշերը Երզնկայից եկավ և առանց Էրզրումում կանգ առնելու անցավ գնաց 7-րդ հրաձգային գումարտակը։

Կարելի է ենթադրել, որ թուրքերը մտադիր են շրջապատել սասունցիներին իրենց լեռներում և սովով ստիպել, որ հանձնվեն՝ նպատակ ունենալով նրանց մի մասին ոչնչացնել, մյուս մասին աքսորել այնպիսի վայրեր, որտեղ նրանց կառավարելը ավելի դյուրին է։

Ուստի, նիզամից բացի, Սասուն է բերվել մի քանի գունդ համիդիե։ Սասունցիների հացահատիկի արտերը, Մուշից այստեղ ստացված մասնավոր տեղեկությունների համաձայն, կամ այրված են, կամ անասուններով ոտնակոխ արված, ոչնչացված։

Շենիկ, Սեմալ, Շուշնամերկ, Ալյանք և Գելիեգուզան գյուղերը հրկիզված են։ Չնայած դրան, սասունցիները շարունակում են մնալ իրենց սարերում։ Այստեղ ասում են, թե քրդական մի տոհմ (աշիրեթ) նրանց հետ դաշինքի մեջ է։

Այսպիսի համաձայնություններից թուրքական կառավարությունը, ըստ երևույթին, սաստիկ վախենում է։

Իսկ այստեղ ավելորդ չեմ համարում հիշատակել, որ, ըստ լուրերի, քրիստոնյաների դրությունը, Սասունի կազայից բացի, Էրզրումի սանջակի Խնուսի կազայում և Մուշի սանջակի Բուլանրխի կազայում անցած դարնանը ծայրահեղ անմխիթարական է եղել. մարդիկ նման էին «մեռելների», քանզի թուրքերը դեռ աշնանը հայերից խլել էին ամբողջ հացահատիկը, խոստանալով այն բաժանել բնակիչների միջև, մինչդեռ բաժանել են միայն թուրքերին ու քրդերին, հայերին թողնելով միայն անպետք բաները՝ կորեկ, ինչ-որ մանր սերմ, որը մեզ մոտ հայտնի է դեղձանիկի կուտ անունով և այլն։

Այդպիսի սնունդը մարդկանց մեջ հիվանդություն է առաջացրել, որն ուղեկցվել է մահացու դեպքերով։

Այս վիճակին ավելացել է անասունների անկումը...

Մամսիմով

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 24—25.

18. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

№ 411 զեկույցից **1 հոկտեմբերի 1894 թ.**

Վերջին շաբաթում Էրզրումի սրճարանի հաճախորդները հաճախ են լսել թուրքերի միմյանց հետ ունեցած խոսակցությունն այն մասին, թե «աստված նրանց չի ների Սասունում թափված արյունը և մուսուլմաններին կպատժի դրա համար»։

Այսպես են այժմ իրենք՝ Էրզրումի թուրքերը վերաբերվում այն իրադարձություններին, որոնք անցյալ օգոստոսի առաջին կեսին տեղի ունեցան մասամբ նիզամի, մասամբ էլ մի քանի քրդական համիդիե հեծյալ գնդերի ձեռքով։

Այստեղ առայժմ լիովին հավաստի լուրեր չկան հիշյալ տեղերի հայ զոհերի թվի մասին, բայց զանազան լուրերը հանգում են այն բանին, որ Սասունի քրիստոնյա բնակչության մեծ մասը, չնայած բոլորի, մինչև իսկ կանանց անձնուրաց քաջությանը, զոհվել է անհավասար մարտում...

Բիթլիսի վալի Թահսին փաշան տեղի ունեցած իրադարձության պատասխանատվությունն իրենից թոթափելու մտադրությամբ՝ դա ներկայացրել է Բ. Դռանը որպես հայերի ապստամբություն։

Այս հայտարարությամբ գործը հանձնվել է զինվորական իշխանության տնօրինությանը։

Նիզամի գումարտակները հեծելազորի, լեռնային մարտկոցի և քրդերի հետ այրել, ավերել և թալանել են հայկական գյուղերը՝ Տալվորիկը (400 տուն), Գելիեգուզանը (360 տուն), Սեմալը (85 տուն), Շենիկը (106 տուն), Այյանքը (165 տուն), Իշխանաձորը (78 տուն)...

Մաքսիմով

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 26.

19. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Զեկույցից 29 հոկտեմբերի 1894 թ.

Ըստ վերջերս ստացված տեղեկությունների, թուրքերը Սասունում ոչնչացրել են մոտ 4000 հայ*։ Ընդ որում առանձնակի դաժանությամբ աչքի է ընկել գնդապետ Իզմայիլ բեյը՝ Սասունի բնակիչների դեմ ուղարկված զորքերի հրամանատարը, որը հրամայել է բռնել մի քանի հայկական գյուղերի պատվավոր բնակիչների և տանջամահ անել։ Երբ այդ գյուղերի բնակիչները, իմանալով այդ գազանության մասին, սարերն են բարձրացել, նա հրամայել է ոմբակոծել սրանց և պահանջել է հանձնվել։ Հենց նույն գիշերը բոլոր հանձնվողները անգթորեն ոչնչացվել են։ Թուրքերը վայրագություններ են արել 25 օր և կործանել են 30 գյուղ...

Վ. Մաքսիմով

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 152.

20. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԺԱՂՈՎՍԿՈՒ ՄԵՊԱԳՐԻՑ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Պերա, 10 (22) նոյեմբերի 1894 թ.

Հայերի դեմ ձեռնարկված վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնությունները թափանցել են եվրոպական մամուլ և Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ

* Զոհերի թիվը եղել է մոտ տասից-տասնհինգ հազար.— խմբ.։

թուրքական զորքերի գազանաբարո արարքների դեմ ամենուրեք մերկացնող հոդվածների փոթորիկ բարձրացրել։ Այդ պարսավանքների անպատկառ կեղծ հերքումը, որն անձամբ սուլթանի հրամանով օրերս հեռագրերով ուղարկվել էր արտասահմանի բոլոր թուրքական ներկայացուցիչներին՝ հնարավոր հրապարակումների համար, չկարողացավ ցանկալի տպավորություն գործել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա և չդադարեցրեց մեղադրանքների ու մերկացումների հեղեղը, ինչը և Դոանն ստիպեց վերջին օրերս արգելել արտասահմանյան համարյա բոլոր թերթերի մուտքը երկիր։

Այս պայմաններում դժվար է որոշել այն հետևանքները, որոնք կարելի է սպասել համընդհանուր վրդովմունքից, որը համակել է Եվրոպայի հասարակական խիղճը՝ չբացառելով և այն երկրները, որտեղ մինչև այժմ քաղաքական հաշիվների կամ շահի նկատառումներով աչք էին փակում որոշ հեռավոր մարզերում քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից գործադրվող աղաղակող բարբարոսության նկատմամբ...

АВПР, Политархив, д. 3435, л. 50.

21. ՎԻՐԱ-ԻՄԵՐԵԹԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԳԻՐՍԻՆ

Ս. Պետերբուրգ, 24 նոյեմբերի 1894 թ.

Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը սեփական ձեռքով գրած գաղտնի նամակում, որ ստացել եմ սույն նոյեմբերի 21-ին, ինձ հանձնարարում է թախանձագին խնդրել Ձերդ բարձր գերազանցությանը, որպեսզի թագավոր-կայսեր՝ Արևելքի քրիստոնյաների օգոստափառ հովանավորի ամենաողորմած ուշադրությունը հրավիրենք Թուրքահայաստանում ապրող հայերի ճնշման ու սիստեմատիկ ոչնչացման վրա։

Ռուսաստանի հանդեպ հայերի նվիրվածությունը, որը դրսևորվել է Թուրքիայի դեմ նրա վարած բոլոր պատերազմներում, ամենագլխավոր պատճառներից մեկն է նրանց նկատմամբ Թուրքիայում ատելության և հալածանքների։

Ոչ միայն հայերի, այլև բոլոր արևելյան քրիստոնյաների

համար ծայր աստիճանի ծանր կլինի, եթե այսպիսի ճգնաժամային կացության մեջ, երբ հարյուրավոր գյուղեր են ավերվում, ոչնչացվում է խաղաղ բնակչությունը առանց սեռի ու տարիքի խտրության, ի պաշտպանություն նրանց չհնչի ռուսաց միապետի հզոր ձայնը...

Իրենց հույսն ու ապավենը Ռուսաստանի վրա դնելով՝ հայերը զանգվածաբար ձգտում են դեպի նրա սահմանները և դիմում են իրենց հոգևոր պետի միջնորդությանը։ Վեհափառ կաթողիկոսը, չխնայելով էջմիածնի կաթողիկոսական աթոռի միջոցները, աջակցում է դժբախտ բնակչությանը, բայց այդ միջոցներն սպառվում են, վերահաս ձմեռն սպառնում է։ Նրանց ոչնչացնել Ռուսաստանի սահմաններում, մինչդեռ թուրքերի նոր գազանությունները գաղթականների նոր հոսք են առաջ բերում, որոնց համար, դժբախտաբար, ըստ վարչության տված պատասխանների, Անդրկովկասի երկրամասի սահմաններում ազատ հող չկա։

Այսպիսի ծանր պարագաներում վեհափառ կաթողիկոսը, որպես հայոց հոգևոր պետ, ամենաողորմած միապետի ոտքերի տակ է դնում ջերմեռանդ աղերսանքը, որ նա իր գահակալության սկիզբը նշանավորի Թուրքիայի ճնշված հայության հովանավորությամբ...

Գևորգ եպիսկոպոս Սուրենյանց

АВПР, Политархив, д. 3435, л. 112.

22. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԺԱԴՈՎՍԿՈՒՆ

Զեկույցից Էրզրում, 26 նոյեմբերի 1894 թ.

Անցյալ շաբաթվա ընթացքում իմ ստացած տվյալները ոչ միայն հաստատում են Սասունում քրիստոնյաների նկատմամբ թուրքերի դաժանությունները, այլև, ի մեծ ցավ մեզ, դրանք ներկայացնում են անհամեմատ ավելի զայրացուցիչ տեսքով և շատ ավելի մեծ չափերով։

Այսպես, եթե հավատանք պատմածներին, քրիստոնյա բնակչությունը ամենաանգութ և բարբարոսական ձևերով ոչնչացվել է հայկական 32 գյուղերում...

Դժվար է բառերով հաղորդել նորին մեծություն սուլթանի զինվորների վայրագությունները։ Նրանք սպանում էին մանուկներին։ Իրենց անասնական հակումները բավարարելով՝ անգթորեն ոչնչացնում էին աղջիկների ու կանանց...

Պատմողները հայտարարում են, որ զինվորները և քրդերը, ոչնչացնելով բնակիչներին և ավերելով գյուղերը, հավաքել տարել են վիթխարի քանակությամբ անասուններ ու տնային տնտեսության շատ ու շատ իրեր։

Նրանց ավազակությունն այդ առումով այնքան մեծ է եղել, որ ջարդից մեկ շաբաթ անց, Մուշ քաղաքում մեկ ոչխարը ծախելիս են եղել 5 ղուռուշով (42 կոպ.), ցուլը՝ 20 ղուռուշով (1 ռ. 58 կ.), մեկ փութ կարագը՝ 10 ղուռուշով (84 կոպ.), մեկ փութ մեղրը՝ 20 ղուռուշով (մոտ 1 ռ. 58 կոպ.) և այլն։

Վ. Մաքսիմով

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 45.

23. Կ. ՊՈԼՍԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՆԳԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

№ 589 Ցամակից 26 նոյեմբերի 1894 թ.

Վկայակոչելով այսօրվա № 202 հեռագիրը, պատիվ ունեմ սույնին կից Ձեզ ուղարկելու պատճենը մի զեկույցի, որն ստացել եմ Էրզրումում նորին մեծության հյուպատոսից՝ Վանում նորին մեծության փոխհյուպատոսի զեկույցի հետ միասին, որտեղ հետագա մանրամասնություններ են հաղորդվում Սասունի կոտորածի մասին...

Ֆիլիպ Քերրի

Առդիր I

Հյուպատոս Գրեյվսը՝ դեսպան Ֆ. Քերրիին

Էրզրում, 15 նոյեմբերի 1894 թ.

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը սույնին կից ուղարկելու մի զեկույց, որ ես չկնքված տեսքով ստացել եմ Վանում նորին մեծության փոխհյուպատոսից, որի առթիվ ես ինձ թույլ եմ տալիս անել հետևյալ դիտողությունը։

ժամանակ առ ժամանակ զանազան մասնավոր աղբյուրներից ինձ լուրեր էին հասնում այն սարսափելի դաժանությունների մասին, որոնք կատարվում էին Սասունում թուրքական զորքերի և նրանց քուրդ հանցակիցների կողմից, բայց ես չէի ուզում հավատալ դրանց և ձեռնպահ էի մնում այդ մասին պաշտոնապես հաղորդելուց, մինչև որ պ. Հոլլուորդը տեղում հետաքննություն կատարեց։ Հիմա, երբ նրա հետաքննությունն ավարտված է, ես իմ պարտքն եմ համարում Ձերդ գերազանցությանը ծանուցել, որ վերոհիշյալ հաղորդումները, որոնք ստացվել են բավական հուսալի աղբյուրներից, համարյա բոլոր առումներով համընկնում են պ. Հոլլուորդի հաղորդման հիմնական բովանդակության հետ։ Ես գիտեմ նաև, որ այստեղի իմ արտասահմանցի գործընկերները իրենց տրամադրության տակ ունեն տեղեկություններ, որոնք հիմնականում հաստատում են նրա հաղորդումների հավաստիությունը, և տարբերվում են գլխավորապես զոհերի ենթադրվող թվի վերաբերյալ... Եվ կոտորածի ու գազանությունների մասին այդ ամենօրյա ու մանրամասն պատմությունները այժմ տարածվել են բնակչության լայն խավերի մեջ և դարձել են քննարկման առարկա ամբողջ երկրամասով մեկ, այնպես որ ես համարձակվում եմ ասել, որ ոչ մի ողջամիտ մարդ այս գավառներում, եթե նա թուրքական պաշտոնյա չէ, չի կասկածում, որ Սասունի կոտորածը իրոք կատարվել է թուրքական զորքերի ձեռքով։ Ես համարձակվում եմ նաև ընդգծել, որ պ. Հոլլուորդի հաղորդումը հիմնականում համընկնում է հայկական աղբյուրներից ստացված տվյալների հետ, որոնք շարադրված են հոկտեմբերի 13-ի իմ գաղտնի զեկույցում։ Ավերված գյուղերի թվի տարբերությունը բացատրվում է պարզապես նրանով, որ այն նամակը, որից վերցված են իմ տեղեկություններից շատերը, գրված է եղել մինչ այն, երբ դադարել են սպանությունները և կոտորվել է Տալվորիկի մնացած բնակչությունը, ինչը, ըստ պ. Հոլլուորդի հաղորդման, տեղի է ունեցել միայն սեպտեմբերի 10-ին...

Ինձ թվում է, որ Մուշի նախկին մութեսարիֆը, որն այս պաշտոնն զբաղեցրել է միայն մի քանի շաբաթ, սխալվել էր, երբ պ. Հոլլուորդին ասել էր, թե Սեմալ գյուղի բնակչությունը բաղկացած էր միայն 350—400 մարդուց։ Մութեսարիֆը, հավանաբար, ի նկատի է ունեցել հարևան Գելիեգուզան մեծ գյուղը,

որն իրոք հաշվվում էր մոտ 1700 հոգի, որոնք, ինչպես հաղորդում են, համարյա բոլորը ոչնչացված են։

Քանի դեռ մոլեգնում է այժմյան տեռորը, իսկ Թահսին փաշան զբաղեցնում է Բիթլիսի վալիի պաշտոնը, ոչ մի հույս չկա, թե մարդի բնակիչները կհամարձակվեն հանդես գալ և ցուցում տալ տեղի ունեցածի մասին։ Ամեն ոք, ով որ փորձի զազանությունների ու կոտորածի մեջ մեղադրանքների հավաստիության սպառիչ հետաքննություն կատարել, պետք է լիակատար ազատություն ու լիազորություն ունենա՝ լսելու ականատեսների ցուցմունքները, այլապես նա մեկուսացված և կաթվածահարված կլինի տեղական իշխանությունների գործողություններից, ինչպես դա պատահեց պ. Հոլլուորդի հետ։ Բայց սպանությունները և ունեցվածքի ոչնչացումը այն աստիճանի նկատելի են, որ անհնար է հեշտությամբ թաքցնել դրանց հետքերը։ Ավերված ու ամայացած շրջանը մնում է որպես նշանակալի աստիճանի հավաստիության վկա պ. Հոլլուորդի պնդումների համար...

Ռ. Վ. Գրեյվս

Առդիր II

Փոխիշխանապետ Հոլլուորդը՝ դեսպան Ֆ. Քերրիին

Նամակից

Վան, 6 նոյեմբերի 1894 թ.

Վկայակոչելով հոկտեմբերի 9-ի զեկույցը, պատիվ ունեմ հաղորդելու, որ ես մնացի Մուշում մինչև հոկտեմբերի 16-ը և, անցնելով կարանտին, Բիթլիս ժամանեցի հոկտեմբերի 25-ին։

Իմ զեկույցի առաքումից հետո Մուշում և Բիթլիսում ստացած տեղեկություններս լիովին հաստատեցին Սասունի կոտորածի վերաբերյալ դրանում շարադրված գլխավոր փաստերի հավաստիությունը։ Իսկ այժմ այդ մասին ներկայացնում եմ ավելի մանրամասն մի հաշվետվություն։

Թվում է, թե կառավարության ուշադրությունը սևեռված է եղել այս շրջանի վրա ոմն Տամատյանի գործողությունների պատճառով, կոստանդնուպոլսցի մի հայ կաթոլիկի, որը 1892 թ. Սասունի գյուղերում ու Մշո դաշտում իրեն այնպես է պահել, որ առիթ է տվել իշխանություններին մտածելու, թե քաղաքական

ագիտացիա է տանում։ Որոշ ժամանակ անհաջող փորձեր են արվել ձերբակալելու նրան, բայց 1892 թ. մայիսին նա բռնվել է ոստիկանության կողմից, տարվել Բիթլիս, իսկ այստեղից՝ Կ. Պոլիս, որտեղ նրան ներում է շնորհվել։ Թե ինչպիսին է եղել այդ մարդու իրական բնութագիրը և գործողությունների նպատակը, դա ես չեմ կարող հաստատաբար որոշել, ինչպես և այն, թե ինչ ճանապարհով է նա ներում ձեռք բերել, բայց ես չեմ հավատում, թե այդ ագիտացիան իրենից ներկայացրել է նշանակալից ինչ-որ բան կամ բնակիչների վրա մեծ ներգործություն է թողել։ Մի բան պարզ է. նրա բռնվելուց շատ չանցած՝ վճռվել է Սասունի հայերի ճակատագիրը...

Բիթլիսից ուղարկված զորքերը իրենց հետ ունեցել են ութսուն բաք կերոսին և չորս լեռնային հրանոթ։

Սկզբում զորքերը գյուղերում չեն երևացել, քրդերին են համոզել հարձակվել գյուղերի վրա։ Հայերը կարծելով, թե գործ ունեն միայն քրդերի հետ, եռանդուն դիմադրություն են ցույց տվել և ետ մղել նրանց գրոհները։ Վերջիններս հրաժարվել են վերսկսել գրոհը՝ առանց զինվորների օգնության։ Այնժամ զինվորներից մի քանիսը քրդական զգեստներ են հագել և մասնակցել գրոհին, որն այս անգամ առավել հաջող է ստացվել։

Ապա զորքերը սկսել են երևալ որոշ գյուղերում, ասելով, թե եկել են նրանց պաշտպանելու։ Գիշերելու համար տեղավորվելով՝ նրանք գիշերը սպանել են բոլոր բնակիչներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին։ Ֆերիկը (գեներալը), որի իսկական անունը ըստ իս Օսման փաշա է (այլ ոչ թե Իսմայիլ բեյ, ինչպես նշված է իմ նախորդ զեկուցագրում), ժամանելով Երզընկայից, կարդացել էր սուլթանի ֆիրմանը, որը պատվիրում էր պատժել գյուղերին և զինվորներին կոչ էր անում կատարել իրենց պարտքը։ Ասում են, զինվորներն սկզբում հրաժարվել են՝ չխանդավառվելով այդ հրամանով, բայց սպաները նրանց ստիպել են սպառնալով։ Կոտորածը կատարվել է առանց որևէ խղճահարության և տարիքի կամ սեռի խտրության։

Երևելի անձանց մի մեծ խումբ, քահանայի գլխավորությամբ, ընդառաջ են եկել հրամանատարին՝ ձեռքներին բռնած հարկերի վճարման ստացագիրը, դրանով ցանկանալով ապացուցել կառավարության հանդեպ իրենց օրինապահությունը և գթություն խնդրել։

Նրանց շրջապատել են և կոտորել մինչև վերջին մարդը։

Գելիեգուզանում շատ երիտասարդների ձեռնուոտը կապել են, շարել կողք կողքի, վրանները ցախ լցրել ու ողջ-ողջ այրել։

Մյուս գյուղում բռնել են քահանային և մի քանի երևելի քաղաքացիների։ Նրանց խոստացել են ազատել, բայց նրանց դարձյալ սպանել են։ Քահանայի վզին շղթա են գցել և այս ու այն կողմ քաշքշել այնքան, որ համարյա խեղդել են։ Վերջապես, նրանք գետնին ուղղահայաց տնկել են սվինները և նրան վեր են նետել այնպես, որ ընկել է սվինների վրա։

Մի այլ գյուղում տղամարդիկ կանանց ու երեխաների հետ թաքնված են եղել քարայրում, որտեղ մնացել են մի քանի օր, մինչև որ թույլերը սովից մեռել են։ Մնացածներին էլ հայտնաբերել են զինվորները և խողխողել սվիններով, մի զենքով, որը և հիմնականում գործադրվում էր բոլոր այս իրադարձությունների ընթացքում։

Մոտ վաթսուն երիտասարդ կանանց ու աղջիկների քշել մտցրել են եկեղեցին։ Զինվորներին թույլ են տվել նրանց հետ վարվել ինչպես կամենան, իսկ դրանից հետո սպանել, ինչը և արվել է։

Ջոկել են մեծ թվով առավել գեղեցիկ կանանց, որոնց առաջարկել են մահմեդականություն ընդունել և թուրքերի հետ ամուսնանալ։ Նրանք հրաժարվել են և սպանվել։

Բիթլիսից բերված կերոսինն օգտագործվել է տներն իրենց բնակիչներով հանդերձ վառելու համար։ Բիթլիսում մի զինվոր պատմում էր, որ ինքը մի անգամ տեսել է, թե ինչպես բոցերի միջից դուրս փախչող մի փոքր տղայի զինվորը սվինով վերցրել է ու նետել կրակի մեջ։

Կերոսինն օգտագործվում էր նաև դիակներ հրկիզելու համար։ Ասում են, թե կատարվել են շատ այլ սարսռեցուցիչ դաժանություններ, այնպիսին, ինչպիսին է հղի կանանց փորը պատռելը, երեխաներին կտոր-կտոր անելը և այլն։ Վերոշարադրյալը բերված է իբրև օրինակ այն բանի, թե ինչ միջոցներով է կատարվել ոչնչացման այդ կամպանիան։

Ես պետք է իմ նախորդ զեկույցում արված հայտարարության մեջ փոփոխություններ մտցնեմ այն մասին, որ քրդերը որևէ նշանակալի մասնակցություն չեն ունեցել կոտորածին։ Զինվորների սադրանքով նրանք, իհարկե, մասնակցել են դրան, թեև վատթարագույն էքսցեսները, թվում է, կատարվել են զինվորների կողմից։

Մեծ թվով գյուղացիներ թաքնվել էին Տալվորիկի մոտ, լեռան գագաթին, վճռելով թանկ ծախել իրենց կյանքը։ Քրդերը, որոնք ուղարկված են եղել գրոհելու նրանց վրա, մի քանի օր շարունակ չեն հասել մեծ հաջողության։ Վերջապես, երբ սպառվել են գյուղացիների սննդամթերքն ու զինամթերքը, զինվորները ոչ մեծ զոհեր տալով՝ հասել են լեռան գագաթը և սպանել համարյա բոլոր գյուղացիներին։

Եզրափակիչ տեսարանը խաղացվել է Տալվորիկի հովտում, որտեղ հավաքված են եղել մեծ թվով տղամարդիկ, կանայք և երեխաներ։ Նրանց շրջապատել են քրդերը և զինվորները, մի մասին գնդակահարել են, իսկ մնացածների հաշիվը մաքրել են թրերով ու սվիններով։

Այս գործողությունները, որոնք շարունակվել են մոտ քսաներեք օր՝ օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10-ը, սկսել են Բիթլիսի և Մուշի կայազորները, իսկ հետո սրանք աստիճանաբար համալրվել են չորրորդ բանակային կորպուսի այլ զորամասերով։ Այդ ժամանակ Երզնկայից ժամանել է գլխավոր հրամանատարը և դադարեցրել հետագա կոտորածը։ Հակառակ դեպքում, ինչպես ասում էին, ծրագրված է եղել կործանել ևս չորս գյուղեր, որոնց թվում և՝ Մշո դաշտի Վարդենիսը, որն իշխանությունների մոտ վատ համբավ ուներ Մուսա բեգի դեմ դատավարության ժամանակներից, երբ մի քանի գյուղացիներ մեկնել էին Կ. Պոլիս նրա դեմ ցուցմունքներ տալու համար...

Վերևում բերված մանրամասնությունները ստացվել են գլխավորապես կոտորածին մասնակցած զինվորներից, իսկ հիմնական տեղեկությունները հաստատվել են զանազան աղբյուրների միջոցով, որոնց թվում և՝ վկայությունը թուրք զափթիեի, որը ներկա է եղել այդ ամենին և տեսել ամբողջ պատկերը։

Ես չեմ կարող ասել՝ իրականությանը մո՞տ է արդյոք սպանվածների թիվը՝ 8000, որ նշված է իմ նախորդ զեկուցագրում։ Բիթլիսում ես լսեցի շատ ավելի մեծ թիվ, բայց կասկած չի կարող լինել, որ քսանհինգ գյուղերի բնակչության ճնշող մեծամասնությունը կոտորվել է, ըստ որում գյուղերից մի քանիսը արտակարգ խոշոր են եղել այդ կողմերի համար։ Այսպես, օրինակ՝ Մուշի մութեսարիֆն ինձ ասում էր, թե Սեմալի բնակչությունը կազմում էր մոտ 1700 հոգի։ Դատելով ըստ այն ամենի, ինչ լսել եմ Բիթլիսում, փրկվածների թիվը պետք է որ համեմատաբար փոքր լինի։

Հաղորդում են, որ մի զինվոր, որը կարանտինում է գտնվելիս եղել Մուշից վերադարձի ճանապարհին, պատմում էր, թե ինքն սպանել է հինգ հոգու, բայց սպանել է ավելի քիչ, քան որևէ մեկը, մի ուրիշ զինվոր պարծենում էր, որ ինքն սպանել է հարյուր հոգու։ Գերի վերցվածների թիվը մեծ չէ. չեմ կարծում, թե քսան-երեսուն հոգուց ավելին լինեն նրանք, ում խնայել են գլխավոր հրամանատարի ժամանելուց հետո։ Նրանց մեջ եղել են մի քանի քարոզիչներ, ինչպիսին Տամատյանն էր, բայց ոչ մի օտարերկրացի չի եղել, ինչպես հաղորդվել էր սկզբում...

Մուշի մութեսարիֆին իմ մեկնելուց քիչ անց տեղափոխել են Կիրկուկ՝ Մոսուլի վիլայեթ, իսկ Կիրկուկի մութեսարիֆը պետք է նրա տեղն զբաղեցնի։ Ես չգիտեմ, թե այդ փոխանակության իրական իմաստն ի՞նչ է, բայց ենթադրում եմ, որ դա արված է վալիի կողմից, որը, հավանաբար, վճռել է, թե մութեսարիֆն ինձ տրամադրում է նրա դեմ, թեև իրականում նման որևէ բան տեղի չի ունեցել։ Ես վալիին չեմ տեսել, քանի որ նա Սղերդ էր մեկնել իմ ժամանելուց երկու օր առաջ։ Բիթլիսում շատ են մտահոգվում, որ չլինի թե նա հետագայում էլ շարունակի մնալ այդ պաշտոնում, քանի որ Սասունի կոտորածի համար պատասխանատվությունը գլխավորապես նրան է վերագրվում, և երկյուղում են, թե քրիստոնյաների կյանքը քաղաքում անվտանգ չի լինի, եթե նման բաներն աննկատ մնան։ Նա փաստորեն խոստովանել է իր մեղքը, քանի որ փորձում էր քաղաքացիների ստորագրությամբ ստանալ մի փաստաթուղթ, որի մեջ վերջիններս իբր թե նրան շնորհակալություն են հայտնում այն միջոցառումների համար, որ ձեռք էր առնված Սասունում, բայց նրանք հրաժարվեցին ստորագրել այդ փաստաթուղթը։ Նրան հաջողվեց, այնուամենայնիվ, գյուղացիների ավագներից շատերին ստիպել ստորագրելու այդպիսի մի փաստաթուղթ, որը և հրապարակվել է թերթերում։ Արդեն երեք տարուց ավելի էր, ինչ նա գտնվում էր Բիթլիսում, մշտապես խաղալով «Հայոց հարցի» վրա, սպառնալիքներով հայերից դրամ շորթելով ամբողջ գավառով մեկ։ Դա նրան չէր հաջողվել անել Սասունում, բայց հաջողվեց լիովին վրեժխնդիր լինել իր անհաջողության համար։

Վերջում ուզում եմ նշել, որ բավականին դժվարություններ եմ ունեցել հավաստի տեղեկություններ հավաքելիս, քանի որ

ամբողջ ժամանակ գտնվել եմ ոստիկանական զորձակալների սեեռուն հսկողության տակ, այնպես որ տեղի բնակչության մեծ մասը վախենում էր, որ իրեն կտեսնեն ինձ հետ զրուցելիս։ Ինձ թույլ չտվեցին այցելել Սասունի շրջանը իբր այն բանի հիման վրա, որ ես կարող եմ խոլերայի վարակ տանել զորքի մեջ, ինչպես հայտարարվել էր տեղական իշխանությունների կողմից, իսկ Կ. Պոլսի իշխանությունների հայտարարության համաձայն՝ նրա համար, որ իմ ներկայությունն այնտեղ կարող է ապստամբություն առաջացնել։ Ես մտադրություն չունեի այցելելու զորքերին, ուստի և նրանք չէին կարող ինձնից վարակվելու վտանգին ենթարկվել, իսկ այն բանից հետո, ինչ որ տեղի էր ունեցել, ապստամբության վտանգը, առնվազն, չափազանց հեռացած էր։ Այնուամենայնիվ, հիմնական փաստերը, կարծում եմ, պարզ են, իսկ վերևում բերված մանրամասնությունները ստացված են հուսալի աղբյուրներից։

АВПР, Посольство в Константинополе, д. 3135.

24. ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԵՔ ՆԱՄԱԿ ՍԱՍՈՒՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ[4]

Նամակ Ս.. 16 նոյեմբերի 1894 թ.

Անցած տարի Տալվորիկում հայերը հաջողությամբ ետ մղեցին հարևան քրդերի հարձակումները։ Երկիրը մեծ տագնապ ապրեց։ Այս տարի կառավարությունը միջամտեց և կանոնավոր զորքի ջոկատներ ուղարկեց հայերին հնազանդեցնելու համար։ Կանոնավոր զորքերին օգնում էին քրդական համիդիեները (Hamidiens — անկանոն զորքեր)։ Հայերը հարձակման ենթարկվեցին լեռնային ամրություններում, և նրանք վերջիվերջո հարկադրված եղան սնունդի ու ռազմամթերքի պակասության պատճառով հանձնվել։ Մոտ 20 գյուղ ոչնչացվեց, բնակչությունն սպանվեց և տներն այրվեցին։

Մի քանի ուժով լի երիտասարդ հայերի գերի են վերցրել, կապկպել, ցախով ծածկել և ողջ-ողջ այրել։ Մի խումբ հայեր (թիվն ստույգ հայտնի չէ, բայց ոչ պակաս քան 100 հոգի) հանձնվել են և գթություն հայցել։ Նրանցից շատերին տեղնուտեղը

գնդակահարել են, մնացածներին թրատել և սվինահար արել։ Մի խումբ կանանց (թիվն ստույգ հայտնի չէ. 60—160 հոգի) փակել են եկեղեցում և նրանց մեջ «բաց են թողել» զինվորներ։ Այդ կանանցից շատերը տանջամահ են արվել, իսկ մնացածները սվիններով ու սրերով սպանվել։ Մի քանի ջահել կանանց վերցրել են որպես ռազմավար։ Նրանց մասին երկու կերպ են պատմում. 1) թե նրանք հարեմ են տարվել այն մուսուլմանների կողմից, ովքեր առևանգել են նրանց, 2) թե նրանց առաջարկել են իսլամ ընդունել և մտնել հարեմ, և երբ մերժել են, նրանց սպանել են։ Երեխաներին իրար ետևից շարել են և շարքի վերջից կրակել, երևի, իմանալու համար, թե քանի հոգու կարելի է սպանել մեկ գնդակով։ Փոքրահասակ երեխաներին շարել են մեկը մյուսի վրա և գլխատել։ Զինվորները շրջապատել են տները, հրդեհել և մարդկանց սվիններով ստիպել ետ քաշվել բոցերի մեջ, երբ նրանք փորձել են դուրս փախչել։

Բայց բավական է այս կոտորածի մասին։ Մարդկային զոհերի թիվը 3000-ից 8000 է։ Սրանք համեստ թվեր են։ Համարձակ հաշվարկները սպանվածների թիվը սահմանում են 20 000-ից 25 000։ Այս ամենը տեղի է ունեցել օգոստոսի վերջին օրերին և սեպտեմբերի սկզբին... Պետք է նշել, որ կոտորածը տեղի է ունեցել կանոնավոր զորքերի կողմից՝ մեծ մասամբ բարձրաստիճան սպաների հրամանատարության տակ։ Դա չափազանց լուրջ նշանակություն է տալիս գործին։

Քրիստոնյան չի օգտվում այն հարգանքից, ինչին արժանանում է փողոցային շունը։ Եթե այս կոտորածը աննկատ անցնի, սա պարզապես մահվան դատավճիռ կլինի քրիստոնյաների համար։ Քրիստոնյայի կյանքը, սեփականությունն ու պատիվը պաշտպանություն չեն գտնի։ Սրանից մի շաբաթ առաջ, անցած երեքշաբթի օրը, երեկոյան, արևամուտի ժամանակ, մի թուրք առևանգեց հայ հարուստ վաճառականի կնոջը Խնուս Բերդ քաղաքում։ Հաջորդ առավոտյան կնոջը փնտրողները ճիշեր լսեցին և նրան ազատեցին թուրքի տնից։ Մեղավորին որևէ պատիժ տալու մասին խոսք լինել չի կարող։

Սարսափելի լուրերը արդեն վաղուց էին տարածվում, բայց վստահության արժանի տեղեկությունները դանդաղորեն էին գալիս։ Ամեն բան արվել էր, որպեսզի բերանները փակեին։ Իմ հաղորդած տեղեկություններում որոշ երկրորդական մանրամասնություններ գուցե ճշգրիտ չեն, բայց լիովին վստահ եմ այդ

պատմությունների գլխավոր կետերի հավաստիության վրա։ Համենայն դեպս չի կարելի հերքել այն, որ իրագործվել է քրիստոնյաների դաժան, բարբարոսական և վիթխարի մի կոտորած կանոնավոր զորքերի կողմից՝ քուրդ համիդիեների օգնությամբ և բարձրագույն ու պատասխանատու սպաների ղեկավարությամբ։

Հիմա ի՞նչ է անելու քրիստոնեական աշխարհը։

Նամակ Բ. **Նոյեմբեր, 1894 թ.**

...1893 թ. մայիսի վերջին ոչ տեղացի ագիտատոր Տամատյանը ձերբակալվեց Մուշի մոտ։ Կառավարությունը կասկածում էր, որ Տալվորիկի գյուղերում ապաստան են գտել նման ագիտատորներ, և մի քանի քուրդ առաջնորդների հրաման տվեց հարձակվել այդ շրջանի վրա. ընդ որում կառավարությունն իր վրա վերցրեց բոլոր այն սպանությունների պատասխանատվությունը, որոնք կկատարեն քրդերը, և խոստացավ վերջիններիս թողնել ամբողջ ավարը։

Տամատյանին Բիթլիս տանելուց շատ չանցած, հունիս ամսվա առաջին շաբաթվա մեջ բակրանլի քրդերն սկսեցին հավաքվել Տալվորիկից այն կողմ։ Գյուղացիները տեսնելով, որ քրդերը ամեն օր գալիս են ու գալիս և արդեն մի քանի հազարի են հասել, կասկածեցին նրանց մտադրության վրա ու սկսեցին պատրաստվել։ Ութերորդ օրը ճակատամարտ սկսվեց։ Գյուղացիների առավել ուժեղ դիրքը նրանց հնարավորություն տվեց, քիչ կորուստներ ունենալով, հակառակորդին նշանակալի վնաս պատճառել։ Մայրամուտին կռվի արդյունքն արտահայտվեց այն բանում, որ քրդերը տվել էին մոտ 100 հոգի սպանված, իսկ գյուղացիներից սպանվել էր միայն 6-ը, այդ թվում՝ մեկ կին, որը փորձել էր քրդերից ազատել իր ջորին։ Գյուղացիներին հաջողվեց ոչնչացնել գետի խոր մասի վրա գցված կամուրջը, նախքան քրդերի ջոկատը հակառակ կողմից կհասցներ գրոհել իրենց վրա։ Այսպիսով, քրդերն իրենց պարտված զգացին և այդ ամառ չկարողացան այլ հարձակում գործել։

Այս հանգամանքներում գեներալ-նահանգապետը Մուշ եկավ զորքերով ու երկու դաշտային հրանոթներով և բանակ դրեց Տալվորիկի մոտերքում, բայց արդյոք իր ուժե՞րն անբավարար

համարեց, թե՞ հրաման ստացավ հանգիստը չխանգարել, ինչպես, հարձակում չգործեց և սահմանափակվեց նրանով, որ պաշարեց Տալվորիկը։ Հեռանալուց առաջ նա, պատանդներ տալով, տեսակցություն ունեցավ Տալվորիկի առավել ազդեցիկ մարդկանց հետ և նրանց հարցրեց, թե ինչո՞ւ կառավարությանը չեն ենթարկվում ու տուրքերը չեն վճարում։ Նրանք պատասխանեցին, որ չեն ապստամբել կառավարության դեմ, բայց չեն կարող տուրքերը երկու անգամ վճարել՝ և՛ քրդերին, և՛ կառավարությանը։ Եթե կառավարությունը պաշտպաներ իրենց, իրենք նրան կվճարեին տուրքերը։ Բանակցություններից ոչինչ դուրս չեկավ և պաշարումը շարունակվեց, մինչև որ ձյունը դրեց։ Ժամանը, երբ վիլայեթում լայնորեն տարածվել էր ավազակությունը, տալվորիկցի մի քանի հարուստներ հրավեր ստացան այցելել գեներալ-նահանգապետին, բայց նրանք հարմար չհամարեցին ընդունել այդ հրավերը։

Վաղ գարնանը քրդական մի քանի ցեղերի հրաման տրվեց հարձակում գործել Սասունի գյուղերի վրա, այդ ընթացքում զորքեր ուղարկվեցին Մուշից ու Բիթլիսից։ Նրանք հետները բերեցին ռազմամթերք ու պարեն և տասը ջորի՝ նավթով բարձված (80 ման)։ Ամբողջ շրջանը պաշարվեց քրդերի ու զորքերի կողմից։ Գյուղերը, այդպես պաշարված լինելով, ժամանակ առ ժամանակ արտագրոհ էին կատարում, որպեսզի իրենց համար սնունդ ձեռք բերեին...

Մինչ այդ մյուս գյուղերի բնակիչներն սկսեցին հասկանալ, որ իշխանությունների նպատակն է հայերին ոչնչացնել, և խիզախաբար որոշեցին իրենց կյանքը հնարավորին չափ թանկ ծախել։ Այնժամ սկսվեց կոտորածը, որը տևեց մոտ 23 օր, կամ, ընդհանուր առմամբ, օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը։ Երզնկայից շուտափույթ եկած Ֆերիկ փաշան (մարշալ Զեքքի փաշան) կարդաց սուլթանի ֆիրմանը բնաջնջման մասին և ապա, հրամանագիրը իր կրծքին դնելով, զինվորներին հորդորեց չխուսափել իրենց պարտքը կատարելուց։ Օգոստոսի վերջին օրը, այսինքն՝ սուլթանի գահակալության տարեդարձին, զինվորներին հատուկ հորդորեցին աչքի ընկնել, և նրանք այդ օրը ամենագազանային կոտորածն արեցին։

Ջարդի և ավերի ժամանակ ոչ մի տարբերություն չէր դրվում անձանց և գյուղերի միջև, միևնույն էր՝ նրանք իրենց հանգի՞ստ էին պահել ու վճարե՞լ էին հարկերը, թե՞ ոչ։ Հրաման էր

եկել մաքրել մինչև վերջ։ Մի գյուղում քահանան գյուղի ավագների հետ ներկայացել է սպային, նրան ցույց տալով տուրքերի վճարման ստացականը և հայտնելով իրենց հավատարիմ հպատակության զգացմունքները՝ գթություն աղերսել։ Բայց գյուղը շրջապատել են և բնակիչներին սվինահար արել...

Գելիեգուզանում երիտասարդներից շատերի ձեռնուոտը կապել են, շարքով շարել, ծածկել ցախուցուխով և ողջ-ողջ այրել։ Ուրիշներին բռնել ու կտոր-կտոր են արել։ Մի այլ գյուղում բռնել են մի քահանայի ու մի քանի ավագների. նրանց խոստացել են ազատել, եթե ցույց տան, թե որտեղ են թաքնվել մնացած բնակիչները։ Իսկ երբ գերիները հրաժարվել են մատնել իրենց համագյուղացիներին, քահանայից բացի, բոլորին սպանել են։ Քահանայի վզին շղթա են գցել, ձգել են երկու կողմից, նա մի քանի անգամ համարյա խեղդվել է, բայց նորից են ուշքի բերել։ Ապա սվինները ծայրնիվեր տնկել են, որոնց վրա և նետել են դժբախտին։

Մի գյուղի բնակիչներ, փախուստի դիմելիս, հավաքել են կանանց ու երեխաներին՝ մոտ հինգ հարյուր հոգի, տարել մրտցրել են կիրճի քարայրերից մեկը։ Մի քանի օր անց զինվորները գտել են նրանց և սպանել բոլորին, ովքեր դեռ չէին հասցրել մեռնել քաղցից։

Մի այլ գյուղում ջոկել են 60 երիտասարդ կանանց ու աղջիկների, փակել եկեղեցում և ապա զինվորներին թույլ տվել վարվել նրանց հետ՝ ինչպես ուզենան, որից հետո կալանավորվածներին սպանել են։

Մի երրորդ գյուղում 50 ջոկված կանանց խնայել են. նրանց հորդորել են կրոնափոխ լինել և թուրքական հարեմի տիկիններ դառնալ։ Բայց նրանք հրաժարվել են ուրանալ Քրիստոսին, գերադասելով իրենց հայրերի և ամուսինների բախտին արժանանալ։

Ժողովրդին հավաքում էին տներում և կրակ տալիս։ Այդպիսի հրդեհներից մեկի ժամանակ բոցից դուրս է թռել մի փոքրիկ տղա, նրան սվինով շամփրել են և շպրտել կրակի մեջ։

Հաճախ երեխաներին մազերից բռնած բարձրացնում էին և թրատում կամ ծնոտները պատռում։ Հղի կանանց փորերն էին ճեղքում։ Մեծ երեխաներին քարշ էին տալիս՝ ոտքերից բռնած։ Գեղեցիկ, նորապսակ մի զույգ փախել բարձրացել է բլրի գագաթը։ Զինվորները հասել են երիտասարդներին և ասել, թե

գեղեցկության համար նրանց կխնայեն, եթե մահմեդականություն ընդունեն։ Բայց սարսափելի մահվան հեռանկարն անգամ, ինչը պետք է որ հայտնի լիներ փախստականներին, նրանց չի խանգարել հավատարիմ մնալ Քրիստոսի հավատին։

Վերջին ընդհարումը տեղի է ունեցել Անդոկ լեռան վրա (Մուշից հարավ), որտեղ ապաստանել էին մի քանի հազար հոգի։ Քրդերը ջոկատներով ուղարկվում էին փախստականների վրա հարձակվելու համար, բայց 10—15 օրվա ընթացքում չկարողացան մոտենալ նրանց։ Զինվորներն էլ իրենց լեռնային հրանոթներն էին ուղղում հայերի վրա և որոշ վնաս հասցնում։ Վերջապես, երբ շրջապատվածները մի քանի օր մնացին առանց ուտելիքի և ռազմական պաշարներն էլ սպառվեցին, զորքերին հաջողվեց անկորուստ հասնել լեռան գագաթը, և փախստականներից հավանաբար ոչ ոք չազատվեց։ Այնժամ ամբողջ ուշադրությունը սևեռեցին նրանց վրա, որոնց քշել էին Տալվորիկի շրջանը։ Այդ փոքրիկ հովտում երեք կամ չորս հազար պաշարվածներ են եղել։ Երբ սրանք տեսել են, որ իրենք բոլոր կողմերից սեղմ շրջապատված են թուրքերով ու քրդերով, ձեռքները կարկառել են երկինք, աղիողորմ ձայնով փրկություն աղերսել։ Սրանց մի մասին կոտորել են հրազենով, իսկ մնացածներին՝ թրերով ու սվիններով, այնպես որ վերջիվերջո սպանվածների կույտերից իսկական արյան գետ է հոսել...

Եթե որևէ մեկը նույնիսկ հնարավորություն ստանար այցելել այդ շրջանը, ապա կկարողանար որոշել զոհերի միայն մոտավոր քանակը, որովհետև շատերի դիակները նետվել են փոսերն ու հողով ծածկվել, և հիմա անձրևն արդեն սրբել է նրանց գերեզմանների հետքերը։ Այնտեղ, որտեղ այդպիսի փոսեր չեն եղել, սպանվածների դիակները փայտերի հետ մեջտեղ դարսել են, նավթ լցրել և այրել։ Բայց, ըստ երևույթին, անկասկած է, որ ամբողջ շրջանի գյուղերը ոչնչացված են...

Մի զինվոր, որը կարանտինի մեջ էր, ասաց, որ ինքը սպանել է 5 հոգու, և որ ինքն սպանել է, իմիջիայլոց, քիչ, քան ուրիշ որևէ մեկը։ Մի ուրիշը հայտնեց, որ ինքն սպանել է 100 հոգու։ Ինչ-որ մի զինվոր օրերս Բիթլիսի շուկայում կռվում էր մի հայի հետ և ասում, որ իրենք սպանել են հազար-հազարների և շուտով քաղաքում ապրող հայերին էլ կհասնեն։

Ըստ երևույթին, կարելի է աներկյուղ ասել, որ 40 գյուղեր ամբողջովին կործանված են, և հավանական է թվում, որ սպան-

ված է առնվազն 16 000 հոգի։ Ամենացածր թիվը 10 000-ն է, բայց շատերը շատ ավելին են հաշվում։

Ի լրումն ամենի գեներալ-նահանգապետը բանտարկություններին և ամեն կարգի ահաբեկումների միջոցով ողջ գավառի (բացի միայն Բիթլիս քաղաքից) առավել երեսելի մարդկանց ստիպեց սուլթանին ուղղված շնորհակալական ուղերձ ստորագրել այն բանի համար, որ նահանգապետը կարգ է հաստատել վիլայեթում։

Նամակ Գ. 12 հունվարի 1895 թ.

Բնակչությունը, ջարդի տպավորության տակ, սարսափի մեջ է։ Բավականին ժամանակ կլինի, ինչ սկսել են սպասել հանձնախմբի գալուն, և տեղական իշխանությունները, անկասկած, գործի են դրել բոլոր ուժերը, որպեսզի ծածկեն իրենց մեղքերը և է՛լ ավելի ահաբեկեն նրանց, ովքեր ամենայն հավանականությամբ պետք է հանդես գան որպես վկաներ։ Նրանք, ում հորդորում են ցուցմունք տալ, նորից պիտի թուրքերի իշխանության տակ մնան, հենց որ հանձնախումբը ցրվի։ Ես դույզնինչ կասկած չունեմ, որ ոմանք արիություն կունենան ցուցմունք տալու, բայց դա դժբախտությունների աղբյուր կդառնա։ Համարյա բոլոր պայմանները դեմ են հանձնախմբի գործի լիակատար հաջողությանը կամ, ավելի շուտ, եվրոպական պատգամավորների աշխատանքի բարենպաստ արդյունքին։ Ճիշտ չէր լինի Հայաստանի բախտը կապել այն արդյունքների հետ, որոնց կհանգի հանձնախումբը։

Պետք է, հատկապես, ի նկատի ունենալ, որ Սասունը (Սասունի կոտորածը) հանդիսանում է կառավարման որոշակի համակարգի արդյունք։ Վերջին տասնամյակի ընթացքում, ինչպես ձեզ հայտնի է, հարյուրավոր Սասուններ են եղել երկրով մեկ։ Եվրոպայի ներողամտությունը բարենպաստ պայմաններ է ստեղծել, որ այդ համակարգը անողոքաբար գործի իր ամբողջ ուժով։ Դա ծագել է կրոնական և ռասսայական ատելությունից և ուղղված է քրիստոնյաների բնաջնջմանն ու քրիստոնեության ոչնչացմանը։

Երկրի այժմյան դրության պատճառը թաքնված չէ քուրդ ավազակների կամ սովի ու խոլերայի մեջ։ Ավելի շուտ ավազակությունը, սովն ու ագետները, որոնք վատթար են, քան խոլերան, այդ համակարգի գործողության արդյունքն են երկրում։ Ոչ միայն 5 հազար տղամարդկանց, կանանց, երեխաների ու ծծկեր մանուկների արյունն է ահավոր ողբ ու կականով երկինքն ի վեր հառնում՝ պահանջելով արդար վրեժխնդրություն, այլև սահմռկեցուցիչ տառապանքները, լքված օջախները, հարկահավաքների ու մանր պաշտոնյաների վայրենի ընչաքաղցությունը և շատ-շատերի անարգված պատիվն է նույն այդ կոչն անում։

Թուրքերը մեղադրյալի աթոռին են նստած։ Թող մեն-միայն Սասունը ուշադրության չառնվի, հիշենք, որ նույն ողբն է հընչում երկրով մեկ...

Ես զրուցել եմ Սասունի կոտորածի մի քանի դեպքերի ականատեսի հետ։ Նա այցելել է երեք գյուղ։ Դրանք բոլորն ավերված են եղել, և այլանդակված դիակները վկայել են սարսափելի դեպքերի մասին։ Չորս կամ հինգ օր նա անց է կացրել մի գյուղում։ Յուրաքանչյուր օր դեսուդեն փախած բնակիչների խմբերը եկել են ու հանձնվել հրամանատար սպայի ձեռքը։ Արևամուտից մոտ երկու ժամ անց, օրվա ընթացքում այդ կերպ հավաքված գերիներին տարել են հարևան հովիտը, և օդը թընդացել է նրանց սրտակեղեք ճիչերից։ Պատմողը երբեք չի տեսել նրանց վերադարձը։ Նա կարծում է, որ այդ գյուղում իր եղած ժամանակ այդ ձևով զոհվել է 500 հոգի։

Բանակատեղ են բերել 200—300 կանանց ու երեխաների։ Նրանք նույնպես անհետացել են, բայց ինքը չգիտի, թե ինչպես։ Պատմողը հայ է, որն զբաղվել է զորքեր տեղափոխելով։ Նրան ուղարկել են Մուշ, և նա ու իր ընկերը միակ ականատեսներն են, որոնց հետ մեզ վիճակվել է խոսել։

Մյուս փախստականը, որը սահմանամերձ մի գյուղից է, պատմում է, թե ինչպես իր մայրը, սարսափելի տառապանքներից հետո, փախել է այն վանքը, որտեղ ինքը՝ այս երիտասարդը ծառա է եղել։ Մայրը պատմել է ընտանիքի մնացած բոլոր անդամների անողորմ կոտորածի և գյուղի ավերման մասին։ Նրան հաջողվել էր փոքր երեխայի հետ փախչել ընկնել վանքը, որտեղ և մի քանի օր հետո մահացել է վերքերից...

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М. 1896, с. 233--240, 246—247.

25. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊԱԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Մեպագիր № 89 **25 փետրվարի 1895 թ.**

Պատիվ ունեմ սույնին կից Ձերդ բարձր գերազանցության բարեհայեցողությանը ներկայացնել Շենիկ գյուղի առավել ունևոր ընտանիքներից մեկին պատկանող Հակոբ Տեր-Առաքելյանի, Տալվորիկի շրջանի Հարթք գյուղի բնակիչ Կիրակոսի՝ Պողոսի որդու, Սեմալի բնակիչ Ղազար Տեր-Առաքելյանի՝ հիշյալ Հակոբի եղբոր, և Մկլյուդի՝ 25-րդ հետևակային գնդի չաուշի (ֆելդֆեբել) պատմածները Սասունի իրադարձությունների մասին։

Ի նկատի ունենալով Ձերդ բարձր գերազանցության՝ անցած դեկտեմբերի 29-ի № 420 գաղտնի հեռագիրը, որով Դուք բարեհաճել էիք պատգամավորներին թույլատրել «ի գիտություն ընդունել այն, ինչ որ իրենք կիմանան, անկախ հետաքննությունից, և այդ մասին հաղորդել իրենց մասնավոր զեկույցներում», ես էլ իմ հերթին պարտք համարեցի Էրզրումում նյութ հավաքել...

Այդ իմաստով ինձ մոտ հրավիրեցի շենիկցի Հակոբ Տեր-Առաքելյանին և տալվորիկցի Պողոսի որդի Կիրակոսին։ Երկուսն էլ, որ աղքատ էին, եկել էին գլխավոր հյուպատոսարանը նպաստ ստանալու, պատմում են, ինչ որ իրենց հայտնի է Սասունում տեղի ունեցած դեպքերից։

Կարծում եմ, ավելորդ չէ զեկուցել Ձեզ, որ կենդանի մնացած սասունցիները, սարսափելի աղքատությունից տառապելով, երբեմն Էրզրում են գալիս ողորմություն մուրալու։

Մյուս երկուսի՝ Ղազար Տեր-Առաքելյանի և չաուշ Մկլյուդի պատմածները ես ստացել եմ ֆրանսերեն լեզվով՝ Էրզրումի ֆրանսիական հյուպատոսից։

Խղճիս պարտքը, սակայն, ստիպում է ինձ ավելացնելու, որ Ղազարի պատմածը գրի է առնված, կարծում եմ, Անգլիայի հյուպատոս Գրեյվսի կողմից, իսկ չաուշ Մկլյուդինը՝ այստեղ ապրող անգլիացի թղթակից Սկյուդամորի կողմից։ Սա [Մկլյուդի պատմածը] հայտնի է նաև Իտալիայի հյուպատոս Մոնակոյին։

Հաղորդելով սրանք, որպես նյութ Սասունում թուրքական իշխանության գործողությունների մասին դատելու համար, ես չեմ

կարող Ձերդ բարձր գերազանցության լուսավորյալ ուշադրությունը չհրավիրել այն հանգամանքի վրա, որ Սասունի դեպքերի վերաբերյալ իմ զեկույցներում, որոնք պատիվ եմ ունեցել ուղարկել ժամանակին, բնավ էլ տրված չի եղել թուրքական բոլոր դաժանությունների սպառիչ պատկերը, քանի որ ինձ համար դժվար էր հավատալ այն լուրերին, որ ստանում էի, և ես դրանք իմ զեկույցներում ներկայացնում էի որպես չափազանցություն։

Մամսիմով

Առդիր I

Հակոբի ու Կիրակոսի պատմածից

1. Հակոբը, որն, արտաքինից դատելով, 24 տարեկան է, պատմեց, որ իրենց տանը Սասունի դեպքերից առաջ 23 հոգի է եղել։ Հիմա ինն են մնացել։ Հինգ եղբայրներից երկուսն են ողջ։ Հայրը, մայրը և երեք եղբայրները սպանված են։ Երեք ամուսնացած քույրերը հայտնի չէ, թե ուր են...

Երիտասարդներն ու առողջները փրկվել են փախուստով, իսկ ծերունիները, պառավներն ու երեխաներից շատերը մնացել են տեղում։ Գյուղն այրել են, այնտեղ մնացածներն սպանվել են։ Փախածները թաքնվել են Անդոկ լեռան վրա, որը 4 ժամվա ճամփա հեռու է գյուղից։ Հաց չեն ունեցել և 25 օր հում միս են կերել։ Ձորքի հետ փոխհրաձգությունը միշտ շարունակվել է։ 26-րդ օրը թուրքական ճամբարից առաջարկ է եկել հանձնվելու։ Սնվելու համար ոչինչ չունենալով՝ նրանք եկել են Գելիեգուզանի մոտ գտնվող ճամբարը և տեսել են փոսեր։ Լուսադեմին զինվորները սկսել են նրանց սվինահար անել և նետել փոսը։ Հակոբը փախել է և թիկունքից սվինով վիրավորվել է, նա երեսնիվայր ընկել է քարերի վրա և երկու ատամը կոտրել։ Հետապնդող զինվորը նրան համարել է մեռած և թողել տ՝ողում, իսկ ինքն ուշքի գալով իրեն գցել է ճահճոտ եղեգնուտը, այնտեղից էլ անցել անտառ, որտեղ և մնացել է որոշ ժամանակ։

Հակոբը տեսել է, թե ինչպես Սեմալի քահանա Հովհաննեսին, որն [իրենց հետ] իջել էր Անդոկ սարից, աչքերը հանել են, ապա սվիններով սպանել։

2. Տալվորիկի շրջանի 22-ամյա բնակիչ, Պողոսի որդի Կիրակոսի պատմածը։ Կիրակոսը Հարթք գյուղից էր։ Այն տանը,

որտեղ նա ապրել է, ընտանիքը բաղկացած է եղել 28 հոգուց։ Նա ունեցել է 4 եղբայր, 4 քույր և երկու հորեղբայր՝ նույնպես ամուսնացած, երեխաների տեր։ Հայրը մահացած է եղել Սասունի դեպքերից առաջ, իսկ մայրը ողջ է եղել։ Նա ինքը ամուսնացած է, և այժմ որտե՞ղ է կինը, չգիտի։

Դեպքերի ժամանակ նա եղել է Տալվորիկ գյուղում։ Երբ զորքերը, մի քանի հրանոթներ առած՝ սկսել են մոտենալ, Կիրակոսը մի քանի հոգու հետ փախել է։ Մինչ գյուղում դատաստան տեսնելիս են եղել, նա մոտերքի մի ժայռի ետևում թաքնված՝ տեսել է, թե ինչպես են մոտ 600 կնոջ բերել լցրել եկեղեցին։ Դրանցից 50-ին՝ առավել գեղեցիկներին, ջոկել հանել են, իսկ մնացած բոլորին թողել են զորքերի ու քրդերի քմահաճույքին։ Կանանց բռնաբարել են և ապա կոտորել։ Տաճարն էլ կործանել են հրանոթի կրակոցներով, և դիակները մնացել են ավերակների տակ։ Կիրակոսը մի ժամանակ թաքնվել է Ֆրոֆրո Քարի քարայրում։ Նա գիտի, որ զինվորներն սպանել են բոլորին, ում որ տեսել են և ձեռք գցել։

Աղիր II

Սեմալցի Ղազարի՝ Տեր-Առաքելյանի որդու հետ կայացած հարցափորձից

Մոտ 30 տարեկան է։ Ամուսնացած։ Կինը երկու որդու և երկու դստեր հետ դեռ կենդանի է, Մարիամ անունով փոքրիկ աղջիկը կոտորածների ժամանակ սպանվել է։

Ղազարի մոտ ապրել է նրա հորեղբայր Հովսեփը՝ իր կնոջ ու Մարգարիտ դստեր հետ և մեկ էլ Ղազարի հորեղբոր որդի Տոնոն իր որդու՝ երկու տարեկան Ավետիսի հետ։ Սրանք բոլորն էլ սպանված են։

Հնձի սկզբի օրերին եկել են զինվորները և ճամբար դրել Մերկեմուզանում՝ Սեմալից կես ժամվա ճամփա հեռու։ Սասունցի քրդերը՝ գյուղացիների բարեկամներից, եկել ասել են, որ զգուշանան զինվորներից, որոնք եկել են վատ մտադրությամբ, և խորհուրդ են տվել փախչել։ Նրանք սկզբում այս խորհրդին չեն անսացել։ Անկարգություններն սկսվելուց առաջ տասն օր շարունակ նորանոր զորքեր են եկել։

Մի անգամ, երբ հունձ անելիս են եղել, բակրանլի ցեղի

քրդերը եկել են ոչխար փախցնելու և սպանել են Հովվին։ Գյուղացիների հետ բարեկամ քրդերը [հայերին] պատմել են, թե բակրանլի քրդերը դա արել են զորքերի կամ իշխանությունների սադրանքով։ Հովիվները հետապնդել են նրանց և ընդհարումից հետո, որի ընթացքում զոհվել են երկու կողմից էլ, նրանք նույն օրն իսկ ետ են խլել ոչխարը...

Հաջորդ օրը գյուղը շրջապատել են քրդի շորեր հագած մարդիկ, որոնք սկսել են կրակել գյուղի վրա։ Բնակիչները պաշտպանվելու համար զենքի են դիմել և կռվել են 3 օր։

Մի քանի գյուղացի սպանվել է... Բարեկամ քրդերը նրանց ասել են, որ կարծեցյալ քրդերի մի մասը զինվորներ են եղել՝ քրդի ձևով հագնված, և այդ պատճառով գյուղացիներն սկսել են փախչել՝ չհամարձակվելով կռվել իշխանությունների դեմ։ Նրանք գյուղից դուրս են եկել և նահանջել դեպի Գելիեգուզան։ Գյուղում թողնվել են փախչելու հնարավորություն չունեցող ծերունիներն ու պառավները՝ երեխաների հետ։ Նրանց հեռանալուն պես թշնամին մտել է գյուղ, որը թալանել ու կրակի է մատնել։ Իսկ այնտեղ մնացածներն այրվել են իրենց տներում։ Նրանց հեռանալու հաջորդ օրը Շենիկը նույնպես այրվել է, և բնակիչները եկել են Գելիեգուզան, որն իր արվարձան Ալիանցիքի հետ միասին 300 տուն ուներ։ Այդ ժամանակ նրանց վրա գրոհել են կայսերական զորքերն ու քրդերը։ Նրանք պաշտպանվել են հինգ օր, ի վերջո, գիշերային մի հարձակման ժամանակ զորքերը գյուղը հրդեհել են, և նրանք ստիպված են եղել գյուղը լքել՝ հետապնդվելով զորքերից, որոնք նրանցից շատերին կոտորել են փախուստի ժամանակ։ Նա ինքը տեսել է շատ երեխաների, որոնց սպանել են սվիններով, և նրանց մեջ եղել են Սիմոնը, Պողոսը և Խաչոն՝ նրա հարևանների ու բարեկամների երեխաները։ Նա տեսել է իր հորեղբոր որդի Տոնոյին՝ փախչելիս, շալակին երկու տարեկան տղան՝ Ավետիսը։ Տոնոն ընկել է՝ ոտքից գնդակով խփված, զինվորները վրա են հասել, և նրանցից մեկն ուզեցել է երեխային խփել դաշույնով (զամա), բայց հայրը հարվածը վանել է իր ձեռքով, որը համարյա կտրվել է, մյուս զինվորը սվինը խրել է երեխայի մարմինը և այդպես շամփրած տարել է, իսկ այդ միջոցին երկու այլ զինվորներ սվինահար են արել Տոնոյին։

Կենդանի մնացածները եկել են Անդոկ լեռ՝ Գելիեգուզանից երկու ժամվա ճամփա հեռու։ Սարը օղակվել է զորքերով։ Այս-

տեղ նրանք մնացել են 20 օր՝ առանց հացի, սնվելով միայն ոչխարների մսով, որոնց բշած բերած են եղել իրենց հետ։ Նրանք պաշտպանվել են, ինչպես կարողացել են՝ կրակելով և քարեր նետելով պաշարողների վրա,— բայց Ղազարը չի տեսել, որ սպանած լինեն որևէ զինվորի։ Նա կարծում է, որ մոտ 1000 հոգի է եղել Գելիեգուզանում և 600—700 հոգի՝ գյուղերից յուրաքանչյուրում՝ Շենիկում ու Սեմալում (ընդամենը՝ 2400 հոգի)։ Վերջապես, նրանք բանակցությունների մեջ են մտել՝ ցանկանալով հանձնվել։ Նրանց խոստացել են կենդանի թողնել, եթե իջնեն իրենց գյուղերը։ Սեմալի քահանա տեր Հովհաննեսը 500 հոգու հետ ընդունել է պայմանը, բայց Գրգոն՝ Շենիկի ռեսը, որը նրանց ղեկավարությունն է ստանձնած եղել, հրաժարվել է հանձնվել, հայտարարելով, որ թուրքերն իրենց խոսքը չեն պահում։

Նա ինքը [վկան] սկսել է տեր Հովհաննեսի հետ իջնել, բայց հետո, մտքները փոխելով, ետ են վերադարձել։

Թաքնվել են կաղնուտում և վերջապես ուղղաբերձ ժայռերի վրայով նրանցից շատերին հաջողվել է հեռանալ Փասուրի՝ Խուլբի կազայի գլխավոր կետի ուղղությամբ։ Ղազարը յուրայինների հետ մոտ 20 օր թաքնվել է, մինչև որ լուր է ստացել, թե Մուշիր փաշան դադարեցրել է կոտորածը։

Այնժամ Փասուրի կայմակամը դուրս է եկել և տնտառներից ու սարերից հավաքել փախստականներից շատերին ու ետ բերել Սասունի գյուղերը...

Վկան հետագայում փախել հասել է Խնուս (Քաղքիկ գյուղը), որտեղ թողել է կնոջն ու երեխաներին։ Նա եղել է բավականին ունևոր գյուղացի, իսկ այժմ ոչինչ չունի։ Նա էրզրում է եկել ողորմություն խնդրելու, որպեսզի իր ընտանիքի հետ բեռ չլինի իրեն ապաստան տված գյուղացիներին։

Առդիր III

Մեյդոդ աղայի պատմածից

25-րդ հետևակային գնդի նախկին ֆելդֆեբել, որը վերջերս՝ 4-ամյա ծառայությունից հետո, ազատվել է։ Մոտավորապես քսանվեց տարեկան է։

Նա Մուշում է գտնվել իրադարձությունից քիչ առաջ և ծառայել է զինվորական հոսպիտալի դեղատանը։ Բայց երբ զորքերը գնացել են Սասունի վրա, նա ուղեկցել է իր գնդին՝ որպես շարային ենթասպա։

Նրա գումարտակը մյուսների հետ գնդապետ Իսմայիլ բեյի հրամանատարության տակ է եղել (ընդամենը մոտ 4000 հոգի՝ ցրված տարբեր վայրերում)։

Նրանք առաջին դադարքատեղը՝ Շատախի նահիե են եկել հասել գիշերով։ Մյուս զորքերը արդեն ճամբար դրած են եղել։ Հեռվից հրաձգության ձայներ են լսվել։ Նրանք այդտեղ մնացել են մոտ երեք կամ չորս օր։ Հրաձգությունը լսելի է եղել համարյա ամբողջ ժամանակ...

Հինգերորդ օրը, ընթրիքից հետո, նրա գումարտակը գնացել է Շենիկի վրա՝ ճամբարից ոչ այնքան հեռու։ Այնտեղ կռիվ էր, և տներն արդեն այրվում էին։ Քիչ անց, գյուղացիների մեծ մասը, մի մեծ բազմություն, փախուստի է դիմել։ Նրանց հրաձգությունը համարյա դադարել է։ Զորքերը նրանց վրա կրակելիս են եղել երկու մորտիրներով և երկու լեռնային հրանոթներով, բայց նրանց չեն հետապնդել Գելիեգուզանից այն կողմ։ Ճանապարհին նրանք տեսել են շատ դիակներ, մի քանի վիրավորների և մի քանի փոքր երեխաների, որոնց իրենք սպանել են։ Երբ նրանք եկել են Գելիեգուզանի մոտ, գյուղն արդեն օղակված է եղել և այնտեղ կռիվ է ընթանալիս եղել։ Նրանք երկու-երեք օր մնացել են գյուղից դուրս։ Այդ օրերի ընթացքում նա նորից լսել է, որ հայերը եկել են ճամբար, որպեսզի դրամ տան սպաներին։ Նա չգիտի, վերադարձե՞լ են արդյոք այդ հայերը Գելիեգուզան, թե՞ նրանց թույլ են տվել փախչելով ազատվել։ Այնուհետև մի գիշեր զորքերը հրաման են ստացել գրոհել գյուղի վրա։ Նորից հրանոթները տարել են դեպի սարը, և այդ մարտկոցի պաշտպանության տակ հրդեհել են գյուղի առաջին տները։

Հաջորդ կամ երրորդ օրը նրա գնդի մի մասը հրաման է ստացել արշավի ելնել։ Նրանց հետ են եղել նաև ուրիշ գումարտակների զորամասեր, և նրանք իրենց հետ վերցրել են մի քանի լեռնային հրանոթներ։ Ճանապարհը շատ վատ է եղել, այնքան վատ, որ ջորիները չեն կարողացել քաշել հրանոթները և զինվորները ստիպված են եղել բարձրանալ ժայռերի վրա ու ձեռքով քաշ տալ հրանոթները դրանց միջով։ Մի քանի դժվարին լեռնանցքեր են եղել, նրանք շատ ժամանակ են ծախսել, որպեսզի Տալվորիկ հասնեին, որտեղ մի քանի օր մնացել են հանգստանալու համար...

Առավոտյան նրանք ոմբակոծել են տները և գրավել գյուղը։ Մոտերքում անտառ է եղել, որտեղ թաքնված են եղել շատ ու շատ գյուղացիներ՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ։ Անտառը մի կողմից շրջապատված է եղել քրդերով, մյուս կողմից՝ զինվորներով։ Ապա իրենց ունեցած վեց հրանոթները մոտեցրել են լեռանը և յուրաքանչյուր հրանոթից 13 արկ են բաց թողել անտառի վրա։ Ի վերջո ամբողջ անտառը բռնվել է բոցով։ Իհարկե, անտառում թաքնվածներից շատերին է հաջողվել փախչել, բայց մեծ մասն սպանվել է արկերից ու ողջ-ողջ այրվել։

Տալվորիկի գյուղերից մեկում մի մեծ ագարակ է եղել, որտեղ փակված են եղել շատ կանայք ու երեխաներ և մի քանի ծերունիներ։ Սրան էլ են մոտեցնում թնդանոթները և ճարտկոցային կրակ բացում։ Ոչ մեկը նրանցից, ով որ գտնվելիս է եղել այստեղ, փրկվել չի կարողացել։

Երկու աղջիկ, որոնք անտառում են եղել, բռնվել են. մեկը՝ փոխգնդապետի, մյուսը՝ մայորի ձեռքով։ Զորքերի հետ նրանց բերել են Գելիեգուզան, որտեղ նրանք կորել են։ Նա չգիտի՝ այդ աղջիկներն սպանվե՞լ են Գելիեգուզանում, թե՞ ոչ։

Դրանից հետո զորքի մեծ մասը հավաքվել է Գելիեգուզանում, որտեղ մնացել է մի քանի շաբաթ։ Զորքի վերադառնալուց մեկ կամ երկու օր անց, հայերի առաջին բազմությունը, որ փախել էր Անդոկ, սկսել է վերադառնալ։ Նրանք սկզբում մարդ են ուղարկել ասելու, որ ցանկանում են հանձնվել և կայսերական զորքի հովանավորությունն են խնդրում։ Առաջին բազմությունը եղել է 140—150 հոգի՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ...

Հաջորդ օրը եկել են նոր գերիներ։ Զինվորների կրկնակի զորափակ ջոկատը բռնած է եղել հովտի մուտքը, որոնք բոլոր ցանկացողներին թույլ են տվել ներս մտնել, բայց ոչ ոքի չեն թողել դուրս գալ։ Երկրորդ օրվա ընթացքում մի զորաջոկատ հովտի խորքում, նեղ ձորի ափը հանդիսացող զառիվայրի տակ երկու փոս է փորել։ Ձորի մեջ մի առու է եղել, իսկ ափերին՝ քարայրներ, որտեղ գյուղացիները սովորություն են ունեցել խոտ պահել...

Երբ լրիվ մթնել է և գիշերը վրա հասել, սպաները եկել են և հրաման տվել. «Առաջին վաշտից ջոկված մարդիկ, այստեղ» և այլն։ Հետո նրանք գնացել են մինչև հովտի եզրը, որտեղ զառիթափի վրա գյուղացիներ են եղել՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, երբեմն՝ 20, երբեմն՝ 50, երբեմն՝ 70 և նույնիսկ

ավելի թվով։ Այնժամ սպան նրանցից առանձնացրել է խմբեր՝ 10—20-հոգանոց և հրաման տվել. «Սպանե՛ք սրանց ու շպրտեք փոսը»։ Այնժամ ջոկված զինվորները գյուղացիներին սվինահարել են, դիակները նետել սանդղավանդի ստորոտի փոսը։ Այսպես է արվել յուրաքանչյուր գիշեր՝ բավականին երկար ժամանակ (գուցե 15 օր)։ Երբեմն մի գիշերում սպանել են մինչև 300 կամ 400 հոգու, երբեմն՝ համեմատաբար պակաս։

Զաուշին ասել են, թե՝ այդպիսով փոսերը պետք է որ արագ լցվեին։ Նա պատասխանել է, որ երբ դա տեղի էր ունենում, բանվորական ջոկատը կարգադրություն էր ստանում փոսերն ազատել, և դիակները նետում էին ձորը կամ խոտանոցները, որպեսզի փոսերում տեղ բացեին հաջորդների համար։ Նրան հարցրել են. «Հայերը զինվա՞ծ էին»։ Նա պատասխանել է, թե՝ նրանցից ոչ մեկը նույնիսկ դանակ չուներ գոտուց կախ։ Այն հարցին, թե՝ «Դիմադրո՞ւմ էին նրանք», նա պատասխանել է, թե նրանք մինչև վերջը անտեղյակ էին, թե ինչ է իրենց գլխին գալու, մինչև որ տալիս էին վերջին հրամանը և նրանք կանգնում էին սվիններ դիմաց։ Նրան հարցրել են. «Նրանց մեջ շա՞տ երեխաներ կայ՞ն»։ Նա պատասխանել է, թե՝ նրանք շատ էին և շնորհակալ է աստծուց, որ իրեն չի վիճակվել նրանց սպանելու։ Նրան հարցրել են. «Ինչո՞վ վերջացավ»։ Նա պատասխանել է. «Վերջապես Մուշիրը եկավ Մուշ և հրամայեց վերջ տալ կոտորածին, որից հետո շատ քիչ գյուղացիների են սպանել»։ Բայց նա մի քանի անգամ պնդել է, թե էլի առանձին սպանությունների դեպքեր եղել են...

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 70—77, 79—82.

26. ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Էրզրում, 4 մարտի 1895 թ.

Պատիվ ունեմ սույնին կից Ձերդ բարձր գերազանցության բարի հայեցողությանը ներկայացնել Շենիկ գյուղի բնակիչ Խեչոյի և նրա ազգականուհի Աննայի պատմածները Սասունի դեպքերի մասին։

Դրանք երկուսն էլ ինձ հաղորդել է Ֆրանսիայի հյուպատոս

Բերժերոնը՝ Ֆրանսերեն, բայց գրի են առնված Անգլիայի հյուպատոս Գրեյվսի կողմից։

Ավելորդ չեմ համարում սույնին ավելացնել, որ չաուշ Մակլյուդը, որի պատմածը ես հաղորդել եմ անցյալ փետրվարի 25-ի № 89 իմ զեկույցին կից, ձերբակալվել է ռազմական իշխանությունների կողմից և ուղարկվել Երզնկա, ինչպես որ մեզ այստեղ հայտնի դարձավ փետրվարի 26-ին։

Իմ ընկերները ենթադրում են, թե չաուշ Մակլյուդը կյանքով է հատուցել Սասունի իրադարձությունների մասին օտարերկրացիներին տեղեկություններ տալու համար։

Համենայն դեպս նրա ձերբակալությունը չի կարող չստիպել ենթադրելու, որ ճիշտ են եղել նրա պատմածները։

Վ. Մաքսիմով

Առդիր

1. Շենիկցի Խեչոյի պատմածից

Մոտ 35 տարեկան է։ Ծնբայրը՝ Գրգոն, Շենիկի ռեսն է (տանուտեր)։ Նրա կնոջ անունը Մայրե էր, նրանք ունեին 6 երեխա՝ 4 տղա, 2 աղջիկ, որոնցից ավագը կարող էր լինել 12 տարեկան։ Նրա երեխաներից երեքն այրվել են Շենիկը գրավելիս։ Մի երեխան սպանվել է Գելիեգուզանի վրա տեղի ունեցած գրոհի ժամանակ։ Նրա կինն ու մնացած երկու երեխաները կորել են Անդոկ սարը փախչելիս։ Գրգոյի տանը 50 շունչ է եղել, որոնցից, որքանով որ իրեն հայտնի է, միայն 10-ն են կենդանի։

Նա հաստատում է Ղազարի ցուցմունքները, թե՝ մինչև կոտորածը քրդերը իրենց բարեկամ գյուղացիներին զգուշացրել են, որ իշխանությունները մտադիր են կոտորել նրանց։ Նա բացատրում է, որ Սեմալից ու Շենիկից ոչխարների հափշտակումը զորքերի սադրանքով է եղել...

Խեչոն հավասարապես հաստատում է Գելիեգուզանի պաշտպանության մասին պատմվածը, որի շուրջը զորքերը ճամբար էին դրել բարձունքների վրա։ Գելիեգուզանից փախչելիս նա տեսել է, թե ինչպես են զինվորները սվիններով սպանել Տոնոյին իր որդի Ավետիսի հետ, ինչպես որ դա նկարագրել է Ղազարը, բայց՝ մանրամասնությունների մի փոքր տարբերությամբ։ Այդ

ժամանակ նա գտնվելիս է եղել շատ ավելի հեռվում, քան Ղազարը, որն էլ սույն պատճառով կարող էր նրանից ավելի լավ տեսնել։ Նա տեսել է նաև, թե ինչպես երկու տարեկան երեխային՝ շենիկցի Նիկոյին, որին մայրը կորցրել է փախուստի ժամանակ, մի զինվոր սվինահար է արել։ Երբ Հովհաննես քահանան 500-հոգանոց խմբով հանձնվել է՝ իջնելով Անդոկ սարից, մյուսները պաշտպանվել են մեկ օր ևս, ապա փախել տարբեր կողմեր։ Նա հայտարարում է, թե այդ ժամանակ մի ջահել կին, անունը՝ Շաքե, Գրգոյի ազգականներից մեկի՝ Մարդոյի կինը, մոտ 30 կնոջ տարել է բարձր ու գիրթ մի տեղ։ Նրանք որոշել են վերջ տալ իրենց կյանքին, որպեսզի խուսափեն զինվորների բռնաբարություններից։ Բայց վերջիններս նրանց բռնել են, բռնաբարել և սպանել։ Խեչոն ինքը փախել է շատ դժվարանցանելի ճանապարհով («որով անցնում են միայն արջերը»,— ավելացրեց նա)։ Սկզբում գնացել է Տալվորիկի շրջակայքում գտնվող Հոսնուտ գյուղը։ Այդ ժամանակ զորքերը շրթայած են եղել Տալվորիկ գյուղը, որը ռմբակոծել են հաջորդ առավոտյան։ Այդտեղից նա փախել է քրդական մի գյուղ, որտեղ նա իրեն քրդի տեղ է դրել՝ բակրանլի [ցեղից], և որտեղ սնունդ ու օթևան է ստացել։ Այդտեղ նա քրդերից լսել է, որ ֆիրման է ստացված եղել ոչնչացնել հայերին, և զինվորները նրանց հրավիրել են մասնակցելու, բայց նրանք հրաժարվել են, որի պատճառով նրանցից մի քանիսին բանտարկել են։ Որոշ ժամանակ թափառելով այլ վայրերում՝ Խեչոն վերադարձել է Շենիկ, իսկ այդտեղից գնացել Գելիեգուզան՝ իր մեռելներին գտնելու։ Բացել են մի փոս, որը լցված է եղել մեռելներով, բայց հոտն այնքան սաստիկ է եղել, որ նրանք ստիպված նորից ծածկել են։ Այնտեղ նա տեսել է տեր Հովհաննեսի դիակը՝ պարանը վիզը գցված, մորուքը սափրած, աչքերը հանված, ականջները, քիթը, շրթունքները կտրված և գլխի մաշկը քերթված ու երկու կողմից կախված (Նա այդ ամենը տեսել է քահանայի մահվանից մոտ 20 օր հետո)։

Իշխանությունները ջանացել են նրան և ուրիշներին ստիպել, որ վերակառուցեն իրենց տները և ստորագրեն մի մազբաթ, որով հայտնեն իրենց երախտագիտությունը սուլթանին իր ողջ գթասրտության համար և հայտարարեն, թե իրենք շատ գոհ են իրենց բախտից։ Բայց բոլորն էլ հրաժարվել են ստորագրել։

Նա այժմ ապրում է Խնուսի մոտի Գավենդիկ գյուղում և հայտնում է իր պատրաստակամությունը հանձնաժողովի առաջ ցուցմունք տալ, եթե հարկ լինի։

2. Շենիկցի Պողոսի դուստր Աննայի պատմածը

Շենիկցի Պողոսի դուստրը և Տոնոյի կինը, որն ամուսնացած է եղել ընդամենը մեկ տարի առաջ, երեխա չունի, մոտ 18 տարեկան է։ Նա նույնպես Գրգոյի ընտանիքից է եղել։

Նա հաստատում է Խեչոյի պատմածը եղելության սկզբի վերաբերյալ, ավելացնելով, որ Գելիեգուզանը գրավելիս նա ինքը շուրջ 250 կանանց հետ զինվորների ձեռքով փակված է եղել եկեղեցում։ Քրդական բակրանլի ցեղի ցեղապետ Օմեր աղան (իրոք այդպես է կոչվում այդ ցեղապետը) եկել է և ընտրել նրան, զինվորներին ասելով, թե ինքն ուզում է նրան կնության տալ իր որդուն։ Թեև զինվորները փորձել են կնոջը բաց չթողնել, բայց քրդին հաջողվել է տանել նրան։ Մի հղի կին բռնել է նրա ձեռքից՝ խնդրելով իրեն էլ հետը տանել և ազատել։ Երկու զինվոր, տեսնելով այս կնոջ վիճակը, գրազ են եկել. մեկն ասել է, թե կնոջ արգանդում եղած երեխան տղա է, մյուսը թե՝ աղջիկ է։ Նրանք պատռել են կնոջ փորը Աննայի աչքի առաջ և երեխային դուրս հանել և սվինով վերցրել գամել մոր կրծքին։ Աննային տարել են Օմեր բեյի՝ քուրդ ցեղապետի վրանը, որտեղ բռնաբարել են։ 7—8 օր անց, ցեղապետը նրան առաջարկել է մուսուլմանություն ընդունել, ինչին կինը համաձայնել է՝ դրանում տեսնելով փրկության միակ հույսը։ Նրան երեք-չորս օր տարել են ընկույզ հավաքելու և քիչ-քիչ նրան ավելի են ազատ թողել, կարծելով, թե հաշտվել է իր բախտի հետ։ Վերջապես, երբ նրան թույլ են տվել սովորականից մի քիչ ավելի հեռանալ, նա առիթն օգտագործել է, որպեսզի փախչի Անդոկ սարը, այն տեղը, ուր, ինչպես իրեն հայտնի է եղել, կար աղբյուր։ Երեք օր ու գիշեր սարերում անցկացնելով, նա գնացել հասել է Մուշ։ Աննան կարծում է, թե ամուսինը մեռած է և հայտարարում է, թե պատրաստ է որպես վկա հանդես գալ հանձնաժողովի առաջ... Նրան և Խեչոյին կարելի է գտնել Գավենդիկ գյուղում։ Թեև նրանց գերդաստանը ամենահարուստն է եղել ամբողջ Սասունում, սակայն այժմ ողջ մնացածները ծայրահեղ աղքատության մեջ են։

Նույնիսկ այն շորը, որ Աննան հագել է, նրան տվել են Բասենի բարի գյուղացիները, երբ նա գնալիս է եղել Էրզրում։

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 88—89.

27. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

№ 128 զեկույցից 18 մարտի 1895 թ.

Պատիվ ունեմ սույնին կից Ձերդ բարձր գերազանցության բարի հայեցողությանը ներկայացնել հետևակային շաուշ (ֆելդֆեբել) Մուստաֆա Սուլեյման օղլիի պատմածը Սասունի դեպքերի մասին։

Ես սա ներկայացնում եմ որպես նոր տվյալ այդ գործում թուրքերի գործողությունների բնութագրության համար։

Այս պատմությունն ստացել եմ Ֆրանսիայի հյուպատոս Բերժերոնից, իսկ սրա նախնական ծագումն ինձ անհայտ է։

Մամսիմով

Առգ.

Մուստաֆայի որդի Սուլեյմանի՝ նախկին հետևակային շաուշի (ֆելդֆեբել) պատմածից*

Արդեն մի քանի տարի ապրած լինելով Մուշում, նա մի քանի անգամ առիթ է ունեցել այցելելու Շատախի գյուղերը՝ ուղեկցելով հարկահավաքներին, և լավ ծանոթ է եղել դրանց բնակիչներին։

Նախանցյալ տարի (1893 թ.), Տալվորիկի խռովությունների ժամանակ, մեկ գումարտակ կանգնած է եղել Մերկեմուզանում՝ Շենիկի ու Սեմալի մոտ։

1894 թվին նրա գումարտակը նորից գնացել է Մերկեմուզան՝ իր հետ վերցնելով երկու հրանոթ։

...Գնդապետ Իսմայիլ բեյը Մուշից եկել է զորքերի հրամա-

* Թարգմանվել է ֆրանսերենից 1895 թ. Ռուսաստանի արտգործմինիստրությունում։

նատարությունը ստանձնելու համար։ Նրա ժամանումից երկու օր անց, բոլոր զորքերի զորահանդես է տեղի ունեցել, և Իսմայիլ բեյը իր քարտուղարի ու քաղաքացիական զգեստով մի պաշտոնյայի ուղեկցությամբ, որի մասին ասել են, թե մուշիրի վեքիլն է (ներկայացուցիչը), մոտեցել է՝ ձեռքին մի թուղթ, որը կարդացել է քարտուղարը։ Դա սուլթանի ֆիրմանն է եղել, որում ասվել է, թե հայերը խռովություն են բարձրացրել ընդդեմ նորին մեծության և թե նրանց պետք է պատժել՝ նրանց արյունը թափելով, որպեսզի ուրիշներին խրատ լինի։ Դրանից հետո Իսմայիլ բեյը արտասանել է մի ճառ, որով զինվորներին գրգռել է, որ գյուղերը կրակի ճարակ դարձնեն և խռովարարներին կոտորեն, ավելացնելով, թե նրանք կարող են անել՝ ինչ որ կամենան, այն պայմանով, որ ոչնչացնեն ամեն կենդանի շունչ, թե՝ այսպիսին է սուլթանի հրամանը։ Այնուհետև զինվորներին բաց են թողել իրենց տեղերը։ Հենց այդ երեկոյան երեք գումարտակներ հրաման են ստացել գրոհելու Շենիկի և Սեմալի վրա։ Երբ գյուղացիներն իմացել են, որ զորքը մոտենում է, իսկույն փախուստի են դիմել։ «Նրանք ինչպե՞ս կարող էին դիմանալ զորքերին»։ Երկու հրանոթ են դրել, որոնցից մի քանի արկ են նետել գյուղի վրա՝ գլխավոր փողոցում սպանելով մի քանի փախչող հայերի։ Ուրիշ շատերը հրետանուց թաքնվել են դպրոցում, որի վրա զորքը հետո է գրոհել։ Բոլոր նրանք, ովքեր գտնվելիս են եղել այնտեղ, սպանվել են։ Գյուղն այրվել է, և շատ ժողովուրդ է զոհվել հրդեհի բոցերի մեջ։

Հաջորդ օրը զորքը շարժվել է Գելիեգուզանի վրա։ Նորից հրաման է տրվել առաջ շարժել հրանոթները, ինչպես նախորդ անգամ, և նույն արդյունքն է ստացվել, ինչ որ Շենիկում ու Սեմալում։ Միայն թե ավելի շատ ժողովուրդ է եղել և կոտորածը՝ համապատասխանաբար ավելի մեծ չափերի։ Լուսադեմին զորքը գյուղ է մտել, և այնտեղ մնացած բազմաթիվ գյուղացիներ սպանվել են կամ այրվել իրենց տներում։ Մի մեծ տան դուռ ոչ մի կերպ չեն կարողացել ջարդել, մինչև որ մոտեցրել են հրանոթը, և դուռը ջարդվել է հրետանակոծումից հետո միայն։ Միակ զինված ծերունին և այնտեղ եղած բազմաթիվ կանայք ու երեխաներ կոտորվել են...

Զորքի մի փոքր մասին թույլատրված չի եղել մասնակցելու թալանին՝ հրաման ստանալով հետապնդել փախչողներին, ինչը և կատարել են նրանք, ընդ որում սպաները քաղավել են. «Քրիստոս, քրիստոս»— սպանի՞ր, ավինո՞վ սպանիր, մի՞ կրակիր։ Շուտով դադարեցրել են հետապնդումը, բայց նա ենթադրում է, թե հարձակման և փախուստի ժամանակ սպանվել է 600-ից 800 հոգի։ Փախածներից շատերը թաքնվել են կաղնու փոքր պուրակներում։ Նրանց հետևից ամեն օր հետապնդողներ են ուղարկել, քանի դեռ զորքերը մնացել են Գելիեգուզանում։ Անտառի թավուտում տեղ-տեղ նավթ են լցրել ու կրակ տվել։ Նրանք, ովքեր մնացել էին անտառում, այրվել են, իսկ ովքեր դուրս էին եկել, սպանվել են։ Ոմանք հասցրել են փախչել ուղղաբերձ սարը, որն Անդոկ է կոչվում, որտեղ արդեն գտնվելիս են եղել մինչև գյուղի վրա գրոհելը այնտեղից հեռացած բավականին թվով բնակիչներ։ Զորքի մի մասը և քրդերը շրջապատել են այս սարը։ Զորքի մյուս մասը մնացել է Գելիեգուզանի ճամբարում։ Բայց երկու գումարտակ՝ 6 և 8 հրանոթներով, առանձնացրել են լեռների այն կողմը գտնվող Տալվորիկի վրա գրոհելու համար։ Մի քանի օր անց, գնդապետը հրաման է տվել այլևս չսպանել նրանց, ում որ բռնում են անտառը խուզարկելիս, այլ՝ կենդանի բերել, և մի քանի գերիների նրանք ուղարկել են սարը՝ հայերի մոտ, որ առաջարկեն հանձնվել։ Միևնույն ժամանակ զորքերն ու քրդերը հրաման են ստացել դադարեցնել նրանց վրա կրակելը։ Այնժամ սարում եղածներից ոմանք սկսել են ցած իջնել ու հանձնվել։ Սրանց մեջ է եղել Սեմալի քահանա տեր Հովհաննեսը, որին նա ինքն անձամբ լավ ծանոթ է եղել, հետն էլ՝ մի բազմություն, բաղկացած մեծ մասամբ սովալլուկ երեխաներից ու կանանցից։ Որոշ ժամանակ անց, դուրս է եկել մի կապիտան, ջոկել է մոտ քառասուն առավել ուժեղ հայերի ու սրանց հրամայել է երեք փոս փորել՝ մոտ երեք մետր խորությամբ ու չորս մետր տրամագծով, ինչը արվել է մինչև արևի մայր մտնելը։ Այդ ընթացքում սարից իջել է մոտ 200-հոգանոց մի բազմություն։ Մայրամուտին զորահանդես է եղել, որից հետո գնդապետը հրամայել է բերել գերիներին։ Նա ինքը Զիլանի շեյխի հետ նստել է իր վրանի առաջ։ Այնժամ գնդապետը հարցրել է, թե ո՞վ է այս հայերի գլխավորը։ Քահանան պատասխանել է, որ ինքն է։ Շեյխը, որի հետ գնդապետը խորհրդակցել է, թե ինչ անեն սրան, ասել է. «Թող սափրեն ու աչքերը հանեն»։ Այնժամ կանչել են վարսավիրին, որը սափրել է քահանայի մորուքը, ապա հանել են նրա աչքերը և վզին թոկ գցել։ Զինվորները ձգել են թոկի երկու ծայրից և նրան ստիպել պարել։ Վերջապես

գնդապետն ասել է. «Վերջը տվե՛ք», և զինվորները սվիններով շամփրել են նրան, վեր բարձրացրել ու շպրտել գետին։

Այստեղից սկսած՝ Սուլեյմանի պատմածը, որ վերաբերում է գերիներին գիշերով կոտորելու մանրամասնություններին, միանգամայն նման է Մելյուդի պատմածին։ Նա ինքը (վկան) առանձնացվել է մսագործի դեր կատարելու համար և հայտարարում է, թե, իբր, մեկ գիշերվա մեջ սվինով սպանել է երեք հոգու՝ չհաշված այլ դեպքերը։ Նա չի եղել այն զորքերի հետ, որոնք գրոհել են Անդոկ սարում մնացածների վրա, բայց լսել է, թե այդ ջոկատին մի քուրդ դիք կածանով առաջնորդել է սարնիվեր՝ մինչև գագաթը, որտեղ զինվորներն սպանել են բոլորին, ով որ ձեռքներն ընկել է։ Հայերի բազմությունը, որը թաքնված է եղել լեռան խոր ճեղքում, որտեղից փախչել չէին կարող, կոտորվել է մինչև վերջին մարդը։ Այս կոտորածի ժամանակ ուրիշ շատերին հաջողվել է դեսուդեն փախչել և հեռանալ թաքնվել ժայռերի մեջ։ Նա զոհերի թիվը մոտ 5000 է հաշվում...

АБПР. Посольство в Константинополе, д. 3176, л. 97—98.

28. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՄԱՔՍԻՄՈՎԻՆ

№ 4 զեկույցից **20 մարտի 1895 թ.**

Ի լրացումն Սասունում անցյալ տարի տեղի ունեցած իրադարձությունների առթիվ կատարվող հետաքննության ընթացքի մասին իմ նախորդ զեկույցների՝ պետք է Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրեմ հետևյալի վրա.

I. Հետաքննությունը կատարվում է տեղական իշխանությունների վարչական ճնշման տակ։ Ոստիկանությունն աշալուրջ հետևում է, որ Կավառ և Տալվորիկ ավերված գյուղերի բնակիչները չերևան Մուշում, որտեղ նրանք կարող են իրենց գանգատները ներկայացնել թուրքական հետաքննական հանձնախմբին[5]։ Գյուղերից բացակայելը նրանց համար համարյա արգելված է, և նրանք հատուկ հսկողության տակ են։ Իսկ ովքեր էլ որ հասցրել են այս կամ այն կերպ իրենց գցել Մուշ, ձերբակալվում են և ապա արտաքսվում քաղաքից...

Ընտրությունն այն անձանց, ովքեր ներկայանում են հանձ-

նախմբին որպես դեպքերի կողմնակի վկա, մասամբ, եթե ոչ լիովին, կատարվում է տեղական իշխանությունների կողմից... Նախագահը հաճախ հայտարարում է, թե ինքը կանչել է այսինչ ու այնինչ գյուղերի մուխթարներին, մինչդեռ իրականում ներկայանում են զապթիեների կողմից բերված այլ անձինք։

Հանձնախմբի կողմից այդկերպ կանչված վկաները իրենց ցուցմունքների բնույթով բաժանվում են երկու կատեգորիայի. 1) ոմանք կրկնում են միևնույն սովորեցված պատմությունը, թեև տարբեր գյուղերի բնակիչներ են՝ ընտրված և՛ քրդերից, և՛ հայերից, 2) մյուսները, որոնք Կավառի և Տալվորիկի հայերից են, մեծ մասամբ չեն պատասխանում տրված հարցերին՝ պատրվակ բռնելով, թե բոլորովին անտեղյակ են այն ամենից, ինչ տեղի է ունեցել գյուղերում իրենց փախչելուց հետո։

Բացի այդ, որոշ վկաներ տալիս էին իրենց համար բացարձակ կեղծ ցուցմունքներ, որոնք դժվար էր բացատրել որևէ անձնական նկատառումներով կամ պատճառներով։

Մուշում եղած ժամանակ հայ վկաները գտնվում են տեղական ոստիկանության հսկողության տակ, ինչը չի կարող ազդեցություն չթողնել նրանց ցուցմունքների վրա. մարտի 4/16 նիստում սեմալցի ոմն Շահբազ, որի ամուսինը, իր ասելով, սպանվել է Գելիեգուզանում, տալիս էր լիովին որոշակի ու հանգամանալից պատասխաններ։ Իսկ հաջորդ օրը, Մուշում մի գիշեր անցկացնելուց հետո, նա հրաժարվեց որևէ բան ավելացնել իր նախկին ցուցմունքներին։ Վերադառնալով գյուղ, նա իր որդուն ասել է. «Ճշմարտությունն ասելուց մեզ ի՞նչ օգուտ։ Հենց դրա համար էլ մեզ կարող են սպանել, ինչպես հորդ սպանեցին»։ Տալվորիկցի Գևոն (փետրվարի 28-ի նիստ), որը մեկ գիշեր թողնվել էր ոստիկանական կոմիսարի հսկողության տակ, մյուս օրը հրաժարվեց իր մտադրությունից՝ ցուցմունք տալ 1894 թվին Տալվորիկում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ։

Երկու վկաներ՝ տալվորիկցի Մգրոն (փետրվարի 28-ի նիստ) և սեմալցի Եղոն (փետրվարի 17-ի նիստ) հանձնաժողովին իրենց տված ցուցմունքներից հետո ձերբակալվել են Մուշում։

Դժվար է ենթադրել, թե վերոշարադրյալ այդ ամենը տեղական իշխանությունների կողմից կատարվում է առանց հետաքննական հանձնախմբի գիտության։

II. Հանձնախումբը անաչառ չէ իր գործողություններում, ինչը ապացուցվում է ինչպես հենց նոր վերևում ասվածից, այն-

պես էլ վկաների հարցաքննության բուն կերպից։ Թուրքերի համար բարենպաստ ցուցմունքները նախագահը չի ընդհատում և քյաթիբը մանրամասնորեն գրի է առնում։ Իսկ այն վկաները, որոնք խոսում են ընդդեմ իշխանությունների ու զորքերի, միայն հարցերին են պատասխանում, և նրանց բուն հարցաքննությունը կատարվում է ծայր աստիճանի խճճված՝ նպատակ ունենալով բռնացնել հակասությունների ու մանրամասնությունների մեջ։

Հանձնախմբի կողմնակալությունը երևում է նաև այն բանից, որ նա ոչ մի փորձ չի արել պարզելու այնպիսի կարևոր փաստեր, ինչպիսիք են զինվորների կողմից կանանց ու երեխաների, ինչպես և Գելիեգուզանում զորքերին անձնատուր եղածների սպանությունները...

III. Այստեղի հայերը սկզբում հուզված էին հանձնախմբի և արտասահմանյան պատգամավորների գալստյամբ, իսկ այժմյան նրանց տրամադրությունը կարելի է ընկճված անվանել։ Նրանք պարզ տեսան, որ պատգամավորների ներկայությունը չի փոխել թուրքական վարչության գործողությունների սովորական եղանակը...

Գրժեալսկի

АВПР, Посольство в Константинополе. д. 3176, л. 103.

29. ՏՐԱԳԻԶՈՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Զեկույց 14 դեկտեմբերի 1894 թ.

Կերասունդում իմ ստորադրյալ արտահաստիքային փոխհյուպատոսը ինձ է հղել Շապին-Գարահիսարի հայ համայնքի կողմից անցյալ նոյեմբերի 26-ին իրեն ուղարկված խնդրագիրը՝ թուրքական տեղական իշխանությունների կողմից հայ բնակչության և քաղաքական ագիտացիայի կասկածանքով բանտարկված հայերի նկատմամբ հարուցվող ճնշումների ու բռնությունների մասին։

Խորին մեծարանքով սույնի հետ Ձերդ բարձր գերազանցության բարեհաճ հայեցողությանը ներկայացնելով հիշյալ խնդրագրի պատճենը, պարտքս եմ համարում ավելացնել, որ համաձայն «ը»-ն Կոլլարոյի բացատրության՝ այստեղ շարադրված տեղեկությունների հիմնավորվածությունը հաստատվում է Շապին-Գարահիսարից Կերասունդ ժամանող հույների ու հայերի պատմածներով։

Ն. Շելկունով

Առդիր

Կերասունդի ռուսական կայսերական փոխհյուպատոսին հասցեագրված խնդրագրի պատճենը

(Շապին-Գարահիսարի հայկական համայնքի կողմից)

26 նոյեմբերի 1894 թ.

Ցանկանալով նկարագրել մեր քաղաքի հայ համայնքին բաժին հասած դաժան տառապանքները, մենք Ձեզ ենք դիմում, մյուսների հանդեպ նախապատվություն տալով, որպես իր քաղաքակրթությամբ ու մարդասիրությամբ մեծ ազգի ներկայացուցչի։

Ձեզ, իհարկե, լավ հայտնի է Շապին-Գարահիսարում ապրող հայերի տաղնապալի դրությունը։ Այդ դրությունը, պ. փոխհյուպատո՛ս, միանգամայն անտանելի է դարձել հայ վեց բանտարկյալների սպանությունից հետո, որը տեղի ունեցավ մոտ հինգ ամիս առաջ։

Կառավարությունը կարծելով, ըստ երևույթին, որ այդ գազանային սպանություններից քաղաքի հայ բնակչության մեջ առաջացած սարսափը դեռևս բավականաչափ մեծ չէ, սկսել է գործադրել արտակարգ դաժան միջոցներ, որոնք կհանգեցնեն քրիստոնյա բնակչության ստույգ և աստիճանական կործանման։

Մենք կուզենայինք նկարագրել Ձեզ այդ դրությունը, որը կարելի է արդարացիորեն անվանել ողբալի։

Տեղական իշխանությունները և, առաջին հերթին, մութեսարիֆ Մուստաֆա բեյը, ցանկանալով աստիճաններ ու պարգևներ ձեռք բերել, մոգոնեցին, որ իբր մեր քաղաքում կան հայ հեղափոխականներ։

Մութեսարիֆը և իր մանկլավիկներ Սաբիթ էֆենդին՝ մունիցիպալիտետի պետը, Ջևադ բեյը՝ մութեսարիֆի փեսան, Սուշեհրիից, զբաղվում են հայ քրիստոնյաների հետապնդումով՝ իրենց նպատակին հասնելու համար կիրառելով կոպտագույն մեթոդներ։

Այն ժամանակից ի վեր, ինչ ընդհատված են հաղորդակցության բոլոր միջոցները, իշխանությունները հրաժարվում են անձնագրեր տալ, անկախ այն բանից, թե տվյալ անձը բնակչության որ դասին է պատկանում։ Այսպիսով, խափանված է իրերի վիճակի մասին դրսին հաղորդելու ամեն մի հնարավորություն։

Քաղաքի ու շրջակայքի բնակչության համատարած ձերբակալության փորձ է արվել։ Հանկարծակի խուզարկություններ, ձերբակալություններ. այս ամենը հիմա մեզ մոտ ամենօրյա երևույթներ են դարձել։

Բանտարկյալներին սկզբում ուղարկեցին Սու-Շեհրի կենտրոնը և Անդրեաս, որտեղ Ջևադ բեյի հսկողության տակ նրանք ենթարկվել են ամենադաժան խոշտանգումների, ինչպիսիք թերևս ինկվիզիցիան է գործադրել, և դրանք մենք չէինք կամենա նկարագրել։

Այդ ծանրաբեռն հալածանքներին ենթարկվեցին մեր քաղաքի բնակչության առավելապես հետևյալ երեք կատեգորիաները. մտավորականությունը, երիտասարդությունը, առևտրականները կամ դրամատերերը։ Նրանց զրկում էին սնունդից, մտրակածեծ անում, աքցաններով բզկտում մարմինները, խոշտանգում, խաչին գամում կամ եռման ջուր լցնում վրաները, խեղդում էին, բռնաբարում երիտասարդներին և այլն։ Բոլոր այս սարսափելի կտտանքներին են ենթարկվում բանտարկյալները։ Քրիստոնյա երկրների կառավարությունները, որոնք տիրապետում են ֆիզիկական և բարոյական անհրաժեշտ միջոցների, հնարավորություն ունեն ուղարկելու իրենց պաշտոնական կամ գաղտնի դիտորդներին՝ փաստերը հավաստելու համար։

Կենտրոնական կառավարական բանտը լեցուն է այդ կարգի բանտարկյալներով։ Դրանց են միացնում նորանոր կալանավորների։ Այժմ հաշվվում են մոտ 80 բանտարկյալներ։ Ձերբակալությունների համար առիթ է ծառայել մեր կողմից օտարերկրյա հյուպատոսներին արված դիմումը, որի մեջ մենք նկարագրել էինք մեզ մոտ ստեղծված տագնապալի վիճակը։ Վերջիններս բարեհաճել են ընդունել ի գիտություն մեր խնդրագիրը, ինչը մենք միշտ շնորհակալությամբ ու երախտագիտությամբ ենք հիշում։ Ասենք, կալանավորը կարող է ազատ արձակվել, եթե իշխանություններին վճարի 200—300 լիրա՝ հավելյալ մի ապացույց բանտարկյալի անմեղության օգտին։ Այլևս ոչ ոք չի մտա-

ծում առևտրի, գյուղատնտեսության, լուսավորության կամ այլ բաների մասին, որոնք համապատասխանում են պետության իսկական շահերին։ Դպրոցներն արդեն փակ են։ Քաղաքացիների պատիվը, գույքը, կյանքն իսկ սպառնալիքի տակ են։

Հասկանալի է, որ քաղաքից հանելով լավագույն մարդկանց, որոնք բանտ են նետված անաղնիվ ու անարդար մեթոդներով, մնացած բնակչությունը երբեք չի կարողանա ինքն իրեն պաշտպանել և արդեն սարսռում է անմիջական ներխուժման մտքից, ինչը լիովին հնարավոր է այսքան տագնապալի պայմաններում։

Թուրքերը, կառավարության գործողություններից խրախուսված, նորից համակվել են իսլամը բռնությամբ ընդունել տալու հին ոգով և իրոք պատրաստվում են ներխուժել համայնքի սահմանները, որը զրկված է պաշտպանության որևէ հնարավորությունից։ Կառավարությունը չի ցանկանում ուժով կամ խաղաղ միջոցներով պաշտպանել բնակչությանը, թույլ չտալ բարբարոսական ներխուժում, որի հետևանքները հեշտ է պատկերացնել։

Պարո՛ն փոխհյուպատոս, դժվար և նույնիսկ անհնար է մանրամասնությամբ նկարագրել հայերի սարսափելի վիճակը. վաղուց ի վեր մեր մարմինն ու հոգին հանգիստ ու անդորր չունեն, վաղուց ի վեր մենք չենք զգում այն ներքին բավարարությունը, որ ապրում են ազնիվ ընտանիքները իրենց զավակների ու բարեկամների շրջանում։ Չկա մի ընտանիք, որի հայրը, որդին կամ եղբայրը բանտում չլինի և օգնության չկանչի։ Իսկ մենք անզոր ենք թեթևացնելու նրանց վիճակը...

Քանի դեռ կան քրիստոնյա երկրների կառավարությունները, ներկայացնող բարի ու ազնիվ մարդիկ, մենք հույսներս չենք կտրում։ Մենք, հետևաբար, կրկին անգամ ջերմորեն խնդրում ենք Ձեզ հանուն մարդկայնության և արդարության գթալ մեզ՝ ազատելով այս անտանելի չարչարանքներից։ Մեզ ասում են. «Դուք պետք է մեռնեք խոշտանգումներով», բայց մեր մասին ոչինչ չեն հայտնում օտարերկրյա պետություններին, և ստիպում են տառապել է՛լ ավելի, երբ մենք Ձեր օգնությանն ենք դիմում։

Հուսալով, որ սույն աղերսանքը լսելի կլինի բարձր ոլորտներում, մնանք Ձեզ հավետ երախտապարտ։

Շապին-Գարահիսարի հայ բնակչություն

АВПР, Политархив, д. 1416.

80. ՀԱԼԵՊԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Զեկույց № 67 **15 դեկտեմբերի 1894 թ.**

Ներկայումս Հալեպում է գտնվում Ալեքսանդրետի կայմակամը, որն այստեղ է կանչված Ալեքսանդրետի հայերի կողմից նրա դեմ բազմիցս արված բողոքների պատճառով։

Կոստանդնուպոլսից հրաման ստանալով խստորեն հետևել հայ բնակչության վարքագծին՝ կայմակամը դրանում հարմար առիթ է տեսել քողարկված հարստահարության համար։ Լավագույն գործին արժանի փութաջանությամբ նա շտապել է ձերբակալել հայ բնակիչներին և Հալեպի վիլայեթից աքսորել մի այլ վիլայեթ կամ նույնիսկ նույն վիլայեթի մի գավառից մյուսը։ Բանտարկվածները, որպես քաղաքականապես անհուսալի հայեր, ազատվում էին փրկագին տալով՝ նայած իրենց հնարավորությանն ու նյութական վիճակին։ Միայն նրանք էին բանտարկված մնում, ովքեր չէին կարողանում բավարարել կայմակամի այդ պահանջները։

Դժվար, համարյա անհնար է սպասել, որ մեղադրյալը հանցավոր դուրս չգա ըստ հետաքննության, որն իրագործում է վարչական խորհուրդը՝ գեներալ-նահանգապետի նախագահությամբ, այն ամենի կատաղի թշնամու, ինչը կրում է հայկական անուն կամ անվանում։

Վերջին ժամանակներս այստեղ ձերբակալվել է մոտ 30 հայ՝ որևէ քաղաքական դավադրության պատկանելու մեջ կասկածանքով։ Նրանցից ոմանք, որպես առավել վտանգավորներ, պահակախմբի հսկողությամբ ուղարկվել են Կոստանդնուպոլիս, ուրիշներն աքսորված են Ադանայի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները։

Սսի հայոց կաթողիկոսի հոգեվարքի ժամանակ, որը մահացել է Հալեպում, նրա տան մոտ ոստիկանություն է կարգված եղել, որպեսզի նրա մահից հետո անհապաղ գրավեին նրա բոլոր թղթերը։

Բեյլանում հրդեհ է եղել։ Չնայած որ անհամեմատ ավելի շատ հայերի տներ են այրվել, քան մուսուլմանների, հայերն են մեղադրվել հրձիգության մեջ։

Այստեղի այսպես կոչված լիցեյում մի հայ սան, որ վիճել է իր մահմեդական ընկերոջ հետ, սրան անվանել է շուն։ Չնայած նույնիսկ կադիի բողոքին, որն այդ վեճի մեջ չի գտել ո՛չ հակակրոնական, ո՛չ հայ-քաղաքական որևէ բան, այնուամենայնիվ գեներալ-նահանգապետը հայ աշակերտին աքսորել է Ադանայի վիլայեթ։ Ես գեներալ-նահանգապետին խնդրեցի, որ կարգադրի բույուրուլդի հանձնել Հալեպից Անտիոք մեկնող ռուսահպատակ Աղավովին։ Իմանալով, որ Աղավովը հայ է, Հասան փաշան մերժեց իմ խնդրանքը։ Ես ստիպված եղա այդ գործով հատուկ գրագրություն վարել և բազմիցս արված պնդումներից հետո միայն կարողացա իմ պահանջած բույուրուլդին ստանալ ռուսահպատակի համար։

Երեկ մի խնդրագիր ստացա քաղաքացի 14 հայերի պաշտպանության և հովանավորության վերաբերյալ, որոնց ոստիկանությունը ձերբակալել է, որպեսզի հաջորդ օրը ուղարկի Խարբերդի վիլայեթ։ Այսօր առավոտյան 14 ձերբակալված հայերը պահակախմբի հսկողությամբ, իրենց ազգականների, մեծերի ու փոքրերի ողբ ու կոծի տակ, ուղարկվել են Խարբերդի ճանապարհով։

Հալեպի վիլայեթի աքսորված հայերը մեծ մասամբ խաների (իջևանատուն) տերեր կամ պահակներ են։ Նրանց մեջ կան մանր խանութպաններ, կոշկակարներ ու դերձակներ։

Յակիմաճակի

АВПР, Посольство в Константинополе, д. 3197, л. 81.

81. Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՌՇԴԻ ՓԱՇԱՅԻՆ

Նամակից **8 փետրվարի, 1895 թ.**

Իմ նախորդ թաքրիրում, որը ես պատիվ եմ ունեցել հղել Ձեզ հունվարի 9-ին, ես արդեն հաղորդել եմ իմ մտադրությունը. շարադրել հայաբնակ գավառներում կատարվող հակաօրինական արարքները, որոնք հայերի գանգատն են հարուցում...

Զգալով ինձ վրա ընկած պատասխանատվության ամբողջ ծանրությունը, համարձակվում եմ այս թաքրիրում պատմել Ձեզ ամբողջ ճշմարտությունը։ Համոզված եմ, որ հենց այս կերպ

կկատարեմ իմ պարտքը ինչպես կառավարության հանդեպ, այնպես էլ՝ իմ ժողովրդի, համապատասխան այն հանդիսավոր պարտավորության, որ ստանձնել եմ պատրիարքական աստիճան ստանալիս...

Հայ ժողովուրդը, որը գործում է գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի մեջ, մշտապես հանդիսացել է երկրի առաջընթացի կարևոր գործոնը։ Նա միշտ մուծել է իր վճարելիք հարկերը, լավ հարաբերություններ է պահպանել կայսրության մյուս բոլոր հպատակների և, մասնավորապես, իր թուրք հայրենակիցների հետ, պահանջելով, վերջին հաշվով, միայն հնարավորություններ տալ օգտվելու քաղաքակրթության բարիքներից։

Իրենց մասնավոր կյանքում հայերը պահպանել են հավատարմություն քրիստոնեական կրոնի հանդեպ և կամավոր նվիրատվություններով հոգացել իրենց եկեղեցիների, վանքերի ու դպրոցների պահպանման, ինչպես և իրենց երեխաների ուսման մասին, և հասարակությանը տվել են բոլոր մասնագիտությունների գծով մարդիկ, իսկ պետությանը՝ ընդունակ պաշտոնյաներ։

Եվ ի՞նչ, Ձե՛րդ գերազանցություն։ Այս ազգը այժմ այնպիսի վիճակի մեջ է ընկել, երբ ո՛չ առանձին անձինք, ո՛չ էլ ժողովուրդն ամբողջությամբ չեն կարող ապրել խաղաղ ու հանգիստ կյանքով։

Կառավարման այժմյան համակարգը, արդարադատության և զավառական ոստիկանության կազմակերպությունը իր չափազանց կենտրոնացմամբ և իր սահմանափակ ֆունկցիաներով անբավարար է բնակչության իրավունքների պահպանության համար։ Նույնը կարելի է ասել նաև այն մեթոդների մասին, որ կիրառում են մոլեռանդորեն տրամադրված կամ անընդունակ կատարողները։

Նման դրությունը, հայերի հանդեպ գոյություն ունեցող անվստահության առկայությամբ, հանգեցրել է կառավարական մի շարք ռեպրեսիաների, այնպես որ կյանքը, պատիվն ու բարեկեցությունը հայաբնակ գավառներում շարունակում են մնալ միանգամայն անապահով...

Հայերի գլխավոր զբաղմունքը երկրագործությունն է։ Մինչդեռ հողերը, որ նրանք զբաղեցնում են անհիշելի ժամանակներից՝ որպես երկրի բնիկներ, հողերը, որոնք պարարտացված են նրանց քրտինքով, հողերը, որոնց բերքերով է համալրվում պետական գանձարանը, խլված են նրանցից այս կամ այն եղանակով։ Մի դեպքում ազդեցիկ անձինք՝ թուրքեր ու քրդեր, ավելորդ ներողամտության շնորհիվ, որ նրանց տրամադրում են պաշտոնական շրջանները, թաքուն իրենց վրա են գրել տալիս իրենց չպատկանող հողերը և դուրս անում իսկական հողատերերին։ Այլ դեպքերում գյուղացիները, որպեսզի իրենց համար կանխապես ապահովեն որևէ ցեղապետի պաշտպանությունը և զերծ մնան վայրագություններից ու կողոպուտներից, ստիպված են իրենց հողերից լավագույնները զիջել նրան։ Պատահում է և այնպես, որ մշտական թշնամանքով ու անօրենությամբ ապրող ցեղերի պարագլուխների ողորմածությանը հանձնված հայերը ստիպված են լինում ամբողջ գյուղեր զիջել։

Երբեմն արտաքին ճնշման տակ արձակված անարդար դատավճիռը ավարտվում է կողոպուտներով։ Գյուղացին մնում է առանց ունեցվածքի, անպաշտպան՝ օրենքի անունից կատարվող բռնությունների հանդեպ։ Օրինական պաշտպանության ամեն մի փորձ դիտվում է որպես հանցագործություն և ռեպրեսիա է հարուցում։ Գյուղացին, այսպիսով, դառնում է բեյերի և աղաների սարուկը, նրանց առևտրական գործարքների առարկան։ Նա այդ ավատատերին վճարում է անհաշիվ հարկեր, նրանց տրամադրության տակ է դնում ինքն իրեն, իր ընտանիքը, իր նախիրները, ստիպված է լինում սեփական անասուններով դաշտեր մշակել նրանց համար ու նրանց օգտին, նրանց համար շինություններ շինել՝ ձրի տրամադրելով իր աշխատանքն ու շինանյութերը,— մի խոսքով՝ կատարել բոլոր ծանր պարհակները, որոնք իր վրա դրվում են։

Նույնքան քիչ հարգանքի են արժանանում նաև հայկական վանքերի տիրույթները, նրանց հողերը, որոնք միակ աղբյուրն են վանականների գոյության համար և նրանց թույլ են տալիս բավարարելու իրենց հոտի հոգևոր կարիքները։

Գյուղացիները, կայսերական գանձարանին վճարվող հարկերից բացի, պարտավոր են նաև քուրդ ցեղապետերին վճարել մի հարկ, որը հայտնի է քյաֆիրատ (անհավատների հարկ) անվանումով։ Նույնիսկ վանքերն են դարձել պարտապաններ որոշ աղաների, որոնք պարբերաբար հարկեր են հավաքում։

Պետական գանձարանի գործակալներն ու մուլտեզիմները լրման են հասցնում այս դժբախտությունները իրենց անօրինական գործողություններով։ Հարկեր հավաքելու համար պետու-

թյունն ութսունական հեծյալ ոստիկաններ է ուղարկում այնպիսի գյուղեր, որոնք երեսուն ծխից ավելին չունեն և գյուղացիներն ստիպված են կացարան ու սնունդ տրամադրել մարդկանց ու ձիերին։ Հարկահավաքները փայտերով ծեծում են գյուղացիներին ու ծխական քահանաներին, անարգում են քրիստոնեական կրոնը և պաշտամունքի առարկաները։ Նրանք խլում տանում են երկրագործական գործիքները, վերջին իսկ հագուստն են պլոկում նրանցից, ովքեր չեն կարող հարկը տեղնուտեղը վճարել։ Իսկ նրանց, ովքեր բնավ ոչինչ չեն ունենում, բանտ են նետում։

Ինչ վերաբերում է մուլտեզիմներին, ապա սրանք, գյուղացուն պատկանող անասուններն ու բերքը հաշվելիս, գումարը կրկնապատկում են և այդպիսով ստիպում են հարկ վճարել հնարովի եկամուտների դիմաց։ Սրանք բերքի հաշվարկումն այնքան ուշ են սկսում, որ գյուղացին կանգնում է այլընտրանքի առաջ. կամ չհավաքած բերքը թողնել, որ արմատի վրա փտի, կամ հավաքել, բայց հետո ենթարկվել մուլտեզիմների պահանջներին։

Տասանորդ գանձելիս՝ նախորդ տարվա բերքից ավել ցուցադրված եկամուտը դիտվում է որպես աստիճանավորների վարձատրման ձև։ Ուստի որոշ տեղերում նրանք փոխանակ նշանակելու այնպիսի գնահատողներ, որոնք անձնական ազնվության ու ֆինանսական կարողությունների անհրաժեշտ երաշխիքներ ներկայացնեն, աշխատանքի են ընդունում այնպիսի մարդկանց, որոնք ընդունակ են նրանց համար այդ եկամուտն ապահովել։ Այդ պայմաններում անխիղճ մարդիկ, որոնց համար ամենադաժան միջոցներն իսկ լավ են, միայն թե հարստանան, դառնում են գնահատողներ, ճնշում բնակչությանը։ Եվ քանի որ նրանք միշտ պարտք են լինում կայսերական գանձարանին, ապա նրանց հանդեպ տեղական իշխանությունները հանդուրժողություն են դրսևորում, որպեսզի նրանց հնարավորություն տան հաշիվները փակել։

Տանջահար գյուղացիները գերադասում են արտագաղթել, բայց արտագաղթելն էլ անվտանգ չէ...

Լինում է նաև, որ տղամարդիկ, իրենց ընտանիքները թողնելով, խմբերով մեկնում են արտասահման, որպեսզի ապրուստի փող վաստակեն։ Իսկ երբ այս վտարանդիներն ուզում են վերադառնալ իրենց երկիրը, խոչընդոտների են հանդիպում տեղական իշխանությունների կողմից, որոնք այս դժբախտների վրա

նայում են որպես հանցագործների, այն բանի համար, որ նրանք վաստակ որոնելու նպատակով լքել են երկիրը։

Ինչ վերաբերում է ընտանեկան պատվի նկատմամբ հանցագործներին, ապա որքա՜ն անգամ է եղել, որ մարդու դնացող աղջիկները առևանգվել են հենց իրենց հարսանիքի օրը։ Ապացուցված է, որ երիտասարդ կանայք, և նույնիսկ փոքրահասակները, ենթարկվել են ծանրագույն անպատվությունների։ Բանտերում ոճրագործները երիտասարդ հայուհիներին ստիպել են կենակցել իրենց հետ։ Հայտնի են դեպքեր, երբ ազգականները մահվան սպառնալիքի տակ ստիպված են եղել միմյանց հետ արյունապիղծ կապի մեջ մտնել։ Դժվար է այդ ամենի մասին խոսել առանց վրդովմունքի։

Ավելացնենք, որքան էլ դա դառը լինի, որ անվստահության ոգին իսկ, որով համակված է կառավարության վերաբերմունքը հայերի հանդեպ, ինչպես և անհամար անօրենությունները, որ կատարում են վարչապարատի, արդարադատության ու բանակի աստիճանավորները, ազգի թշվառ դրությունը հասցրել են մինչև վերջին սահմանը։ Հասարակ գանգատը, մարդկային կոխկրտված իրավունքների պաշտպանության ամեն մի փորձ, նվիրատվությունների հավաքումը հօգուտ դպրոցների և եկեղեցիների, մասնակցությունը մարդասիրական կազմակերպությանը, ընթերցումը վաղուց հրատարակված բանաստեղծական երկերի կամ ամսագրերի, որոնք կառավարությունը նույնիսկ չի համարել արգելված, զենք կրելը, վառոդ պահելը՝ թեկուզև ամենաչնչին քանակությամբ,— այս ամենը կառավարության աչքում ծանր հանցագործություն է, որ հայերը պետք է քավեն տարիների բանտարգելությամբ։

Պաշտոնատար անձինք և, սրանցից բացի, խարդախների մի ողջ դաս կա, որ չունի ոչ մի պաշտոնական դիրք, կեղծ մեղադրանքներ են առաջ քաշում ընդդեմ հայերի՝ նպատակ ունենալով նվեր կամ պաշտոնի բարձրացում ստանալ, կամ էլ պարզապես հագուրդ տալ անձնական ատելությանը։

Ամենաանվնաս զանցանքը, ցանկացած չնչին օրինախախտումը, անանուն մատնագիրը և ցուցմունքը, որ ստացվում է այնպիսի միջոցներով, ինչպիսին է սպառնալիքը, ուժի գործադրումը և այլն, բավարար հիմք են համարվում, որպեսզի պատասխանատվությունը դրվի ամբողջ բնակչության վրա։ Այնժամ սկսվում են զանգվածային ձերբակալություններ, և ձերբակալ-

վածները երկար տարիներ նախնական կալանք կրելուց հետո ենթարկվում են ամենածանր պատիժների՝ քաշքշուկարարության միջոցով, որը իբր թե պետք է պատկերացնի օրենքը։ Երբեմն նույնիսկ այդ ձևականություններն էլ ավելորդ են համարվում, և իսկական զինված դատաստան են տեսնում ժողովրդի հետ։ Բանը հասնում է ամենահավատարիմ ոճրագործությունների, որոնց զոհն է դառնում ողջ բնակչությունը, ինչպես այդ մասին վկայում են Էրզրումի, Կեսարիայի և Յոզգաթի դեպքերը և հենց վերջերս Սասունում տեղի ունեցած դեպքերը, որոնք կատարվել են ամենաողբերգական հանգամանքներում։

Մի քանի արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ, ի թիվս որոնց նաև՝ 82-ամյա արժանապատիվ մի ծերունի, կալանված էին բանտում ոճրագործների ու մարդասպանների հետ միասին։

Մի քանի տարվա նախնական կալանքից հետո հիշյալ հոգևոր անձինք դատապարտվել են տարբեր պատիժների. բերդում արգելափակման, աքսորի և նույնիսկ մահապատժի։

Պաշտոնական տվյալներ չունենալու պատճառով, պատրիարքարանը չգիտե այն կրոնավորների ճշգրիտ թիվը, որոնք այժմ բանտարկված են։ Չնայած այն տեղեկությունները, որոնք հասել են պատրիարքարանին, թեկուզև հույժ թերի, այնուամենայնիվ ցույց են տալիս, որ ներկայումս մոտ քառասուն հոգևոր անձինք, այդ թվում՝ հինգ եպիսկոպոս, տասնմեկ վարդապետ և քսաներկու քահանա, գտնվում են բանտերում։ Եկեղեցու մի քանի սպասավորներ մահացել են բանտերում։

Հեծյալ ոստիկանության ջոկատներն անընդհատ շրջում են գյուղերը հետաքննություն կատարելու համար։ Որպեսզի արդարացնեն իրենց գոյությունը բարձրագույն իշխանությունների աչքում, այդ ջոկատները պարզապես մոգոնում են գոյություն չունեցող քաղաքական դավադրություններ կամ հեղափոխական արարքներ։

Որպեսզի այդպիսի «մերկացումներին» ճշմարտանմանության տեսք տրվի, պահանջվում են ինչ-որ հանցանշաններ։ Այդ նպատակով անողորմաբար ծեծում են գյուղացիներին, որպեսզի ստիպեն տալ անհրաժեշտ ցուցմունքներ։ Հանկարծակի հարձակում են գործում տների վրա, ընդ որում խուզարկություններն ուղեկցվում են կողոպուտներով, ինչպես և՝ սարսափից իբելակորույս կանանց պատվի անարգումով։

Հետաքննական ջոկատներն այս եղանակով բանտերն են ուղարկել, ամենաշնչին պատրվակներով, մեծ թվով հայերի, որոնց մեջ եղել են նույնիսկ դպրոցականներ, պատանիներ։ Բանտերում ձերբակալվածներին ծեծում են լրիվ մերկացրած։ Նրանց կապում են խաչաձև սյուների և այրում շիկացած երկաթով։ Դժբախտներին առաջարկում են մահմեդական կրոն ընդունել՝ խոստանալով դրա դիմաց վերջ տալ տանջանքներին և ազատ արձակել։ Ամենահավատարիմները կիրառվում են դժբախտ պատանիների նկատմամբ, որպեսզի նրանցից խոստովանություն կորզեն այնպիսի բաների մասին, որոնցից նրանք բացարձակապես տեղյակ չեն։

Այլ դեպքերում գյուղացիներից փրկագին են պահանջում՝ խոստանալով ազատել։ Քանի որ ձերբակալվածները հաճախ հնարավորություն չեն ունենում վճարել պահանջվող գումարը, ժանդարմների ուղեկցությամբ նրանց ուղարկում են շուկաները, որպեսզի նրանք այնտեղ փող ձեռք բերեն, թեկուզև դրա համար հարկ լինի շրջել բոլոր կրպակները։ Կանանց առաջարկում են ազատել իրենց ամուսիններին փրկավճարի կամ անպատվության գնով։

Քաղաքացիական բնակչությունից ձերբակալվածների թիվը հազարների է հասնում։ Բայց քանի որ պատրիարքարանի գրագրությունները արքեպիսկոպոսների և գավառների մյուս եկեղեցական իշխանությունների հետ համարյա ընդհատված են հայտնի պատճառներով, ապա այդ անձանց ճշգրիտ թիվը սահմանելն անհնար է։

Մենք ստիպված ենք ցավով նշել, որ թաքրիրները, որոնց օգնությամբ պատրիարքը նման փաստերի մասին տեղեկացնում է կայսերական կառավարությանը և բարեխոսում ժողովրդին տառապանք բերող աղետների ու զրկանքների վերացման վերաբերյալ, նույնիսկ քննարկման չեն ընդունվում։ Այդ դիմումները, որոնցում պատրիարքը ելնում է կառավարության, երկրի և ազգի շահերից ընդհանրապես, դիտվում են որպես անօրինական ոտնձգություն զուտ վարչական գործերում, որոնք դուրս են պատրիարքարանի արտոնությունից և իրավասությունից։

Դիտարկելով դրությունը հավատի ազատության տեսանկյունից, ափսոսանքով նշում ենք, որ գոյություն ունեցող ճնշումների պատճառով հայ ժողովուրդը զրկված է նույնիսկ հոգևոր մխիթարանքից և քրիստոնեական կրոնով սահմանված պար-

տականություններն ու պատվիրանները ազատորեն կատարելու իրավունքից...

Կանոնական գրքերը, որոնցում շարադրված է մեր սուրբ հավատը և որոնցում ոչ մի տառ չպետք է աղավաղվի, գրաքննիչների կողմից ստուգման ու շտկման են ենթարկվում։ Կրոնական տոները ցույց տվող օրացույցներում որոշ մասեր, որտեղ խոսվում է սրբերի անունների ու նրանց նվիրված տոների մասին, ջնջված են, իսկ օրացույցները առանց այդ փոփոխությունների տպագրելն արգելված է։ Այս սուրբ երկերի հին հրատարակությունների ընթերցումը դիտվում է որպես հանցագործություն։ Հայոց պատմությունը տպագրել թույլատրվում է միայն փոփոխություններով ու կրճատումներով։ Դպրոցական դասագրքերում ժողկրթության մինիստրության գրաքննիչները բաց են թողնում հայոց նախկին թագավորների, իշխանների ու զորավարների անունները և դրանք փոխարինում այլ անուններով։ Արգելված է նույնիսկ որոշ քաղաքների հայկական անունների գործածությունը։ Ինչպես մնացած բոլոր քրիստոնեական եկեղեցիները, հայոց եկեղեցին ևս իր սեփական անվանումն ունի։ Այն կոչվում է Հայաստանյայց եկեղեցի։ Վշտաբեկ սրտով մենք տեսնում ենք, թե ինչպես են փորձում մեր սուրբ եկեղեցուն զրկել իր սեփական անունը կրելու իրավունքից։

Հայ ժողովրդի կողմից քրիստոնեական կրոնի ընդունումից ի վեր ազգային եկեղեցու գերագույն պետը հանդիսանում է էջմիածնի կաթողիկոսը, որի բարձրագույն հոգևոր իրավասության տակ է ողջ հայոց ազգը։ Սակայն կայսերական կառավարությունը արգելում է հրատարակել նորին սրբազնության անունը հայկական թերթերում և հրապարակել նրա կոնդակները...

Որքա՜ն եկեղեցիներ ու վանքեր են բռնագրավվել ու սրբալքծվել։ Քանի՜սն են թալանվել ու այրվել։

Հաճախ կարելի է տեսնել տաճարների դռներ և հուշարձաններ՝ սուրբ խաչի պատկերը վրան, որոնք արատավորված են աղտոտություններով։

Մի կողմից, պատրիարքարանն անզոր է բավարարելու բնակչության համար խնդրանքներն ու գանգատները գոյություն ունեցող վիճակը փոփոխելու մասին, մյուս կողմից, աճել են այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք ընդունակ են թ չիք դարձնելու պատրիարքի և արքեպիսկոպոսների արտոնությունները։ Այդ խոչընդոտներն ու արգելքները հայոց կրոնա-

կան ու եկեղեցական կազմակերպություններին տանում են դեպի անկում։

Թվարկենք այն հիմնական փաստերը, որոնք խոսում են այդ մասին.

I. Հայերն ունեն կայսերական իրադեով հաստատված ստատուտներ, որոնք սահմանում են օրենքներ և ըստ այդ օրենքների կանոնավորվում են նրանց հոգևոր ու եկեղեցական վարչությունը, ազգի հոգևոր ղեկավարների և զանազան խորհուրդների ու կոմիտեների ընտրության կարգը, ինչպես և այդ խորհուրդների ու կոմիտեների ֆունկցիաներն ու ձևերը։

Սակայն այդ ստատուտների հիմնական սկզբունքների կիրառումը, հայերեն լեզվով դրանց հիշատակումը թերթերում և դրանց հուշակման տարեդարձների կատարումը արգելվել են կառավարության կողմից զանազան պատրվակներով։

Ազգային վարչության զանազան խորհուրդների ու կոմիտեների անդամները զրկված են օրինական նիստեր անելու համար հավաքվելու հնարավորությունից, իսկ նրանցից ոմանք ձերբակալված են այն բանի համար, որ կատարել են իրենց պարտականությունները։ Ճիշտ այդպես էլ, մի քանի հայեր, որոնք օգտվել են զանազան խորհուրդներ ընտրելու իրավունքից, բանտ են ուղարկված այն բանի համար, որ նրանք իբրև թե հեղափոխական կոմիտեների անդամների են ընտրել։

Այս հանգամանքներն ապացուցում են, որ ստատուտները դադարել են գոյություն ունենալուց, իսկ դա իր հերթին հանգեցնում է ազգի հոգևոր կազմակերպությունների փլուզման։

II. Պատրիարքական աստիճանի ինվեստիտուրայի մասին բերաթը և եկեղեցական արտոնությունները սահմանում են, որ հոգևոր անձանց կողմից պաշտոնանկություն կամ աքսոր նախատեսող զանցանքների և հանցանքների մեջ մեղադրվող արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին վերաբերող հարցերում կառավարությունը չպետք է որևէ միջոց ձեռնարկի, մինչև որ գործը պատրիարքարանին հանձնելով՝ չստուգի մեղադրանքի ճշտությունը։ Այդ նույն արտոնություններից բխում է, որ հոգևոր անձանց վրա ոչ մի պատիժ չի կարող դրվել՝ նախքան պատրիարքի կողմից հոգևոր աստիճանից նրանց զրկելը։ Սակայն, ինչպես այդ մասին ասվել է վերևում, մի քանի հոգևորականներ ներկայումս գտնվում են բանտերում և աքսորում, իսկ պատիժը նրանց վրա դրված է պատրիարքության

արտոնություններին, ինչպես և կառավարական ցուցումներին ուղղակի հակասող պայմաններով։

Ընդհակառակը, անհնազանդ հոգևոր անձանց հնազանդության կոչելու և անհրաժեշտության դեպքում նրանց պատժելու պատրիարքի իրավունքի իրականացումը դժվարությունների և նույնիսկ խոչընդոտների է բախվում կառավարության միջամտության պատճառով։

III. Պատրիարքության ձեռագիր փաստաթղթերը, ինչպես և այն երկերը, որոնք նա ցանկանում է տպագրել, բնականաբար, չեն կարող ստուգվել գրաքննության կողմից։ Սակայն ժողկրթության մինիստրությունը այդ փաստաթղթերն ու երկերը հավասարեցնում է այն ձեռագրերին ու երկերին, որոնք ներկայացվում են մասնավոր անձանց կողմից, և արգելում է դրանք տպագրել՝ առանց գրաքննության թույլտվության։ Դրանց թվում այժմ մտցված են նույնիսկ այն հաղորդագրություններն ու հայտարարությունները, որոնք պատրիարքարանն ուղարկում է թերթերին։

IV. Հայկական ծխական դպրոցները ստեղծված են նրա համար, որպեսզի պատանեկությանը, ընդհանուր կրթության հետ միասին, կատարյալ գիտելիքներ տան լեզվի, կրոնի, ազգային պատմության վերաբերյալ, և որ նրան դաստիարակեն կրոնի ու բարոյականության սրբազան սկզբունքների ոգով։ Այդ դպրոցները պահվում են բացառապես բնակչության միջոցներով։ Սակայն ժողկրթության մինիստրությունը դրանք հավասարեցրել է սովորական մասնավոր հաստատություններին՝ դրանք հանելու պատրիարքության և եպիսկոպոսությունների իրավասության ու հսկողության տակից։

V. Թեև կտակների ու նվիրատվությունների հետ կապված վիճելի գործերի վերաբերյալ վճիռները իրենց բուն իսկ բնույթից ելնելով՝ պետք է գտնվեն եկեղեցական իշխանությունների տնօրինության տակ, սակայն կառավարությունը չի ճանաչում պատրիարքության և արքեպիսկոպոսների իրավասությունն այդ հարցերում։

Հայկական և հունական պատրիարքությունների արտոնությունների վերաբերյալ համաձայնագրի մասին բանակցությունների ժամանակ կառավարությունը բանավոր հայտարարություններում խոստանում էր հայոց պատրիարքությանը շնորհել հունական պատրիարքությանը տրամադրված «մոդուս վիվենդիի» բոլոր պայմանները։ Այնուամենայնիվ, դրանից հետո հայոց պատրիարքությանը մերժվեցին կտակների ու նվիրատվությունների վերաբերյալ այն արտոնությունները, որոնք տրամադրված են հունականին։

VI. Այն ձեռնարկությունները, որոնք վերջերս սահմանված են կառավարության կողմից նոր դպրոցներ, եկեղեցիներ և այլն կառուցելու և արդեն գոյություն ունեցողները նորոգելու թույլտվություն ստանալու համար, հեռու են այն բանից, որպեսզի օգնեն պատրիարքությանը, և նոր դժվարություններ ու լուրջ խափանումներ են հարուցում։ Իսկ մյուս կողմից էլ, նոր դժվարություններ են ծագել, քանի որ կառավարությունը որոշել է կայսերական ֆիրմաններ չունեցող դպրոցներն ու եկեղեցիները փակել, մինչև որ նոր ֆիրմաններ ստացվեն։ Այսպես, օրինակ, Ակնա գավառի երեք գյուղերում (Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթ) մյուդիրը հրամայեց փակել եկեղեցիները, քանի որ գյուղացիները չէին կարողանում ներկայացնել ստացած ֆիրմանները, որովհետև չգիտեին, թե որտեղ են դրանք։ Այս մյուդիրը նույնիսկ հանգեց այն մտքին, որ հրամայեց կնքել եկեղեցու դուռը, որպեսզի բնակիչները չկարողանան այնտեղ մտնել։

Պատրիարքարանը կառավարությանը հայտնել է շնորհված ֆիրմանների տարեթվերը և բազմիցս խնդրել վերաբացել եկեղեցիները, բայց՝ ապարդյուն։ Գրավոր պատասխանել են, թե անհրաժեշտ է նոր ֆիրմաններ ստանալ։ Եվ այսպես, նշված երեք գյուղերի բնակիչները երկար ժամանակ պետք է զրկված լինեն ամեն մի կրոնական ծառայությունից։

Այդ նույն որոշման համաձայն՝ փակվելու են դպրոցներ, եկեղեցիներ ու վանքեր, որոնք կառուցված են մինչև թուրքական նվաճումները և չունեն ֆիրմաններ, ինչպես և եկեղեցիներ, դպրոցներ ու վանքեր, որոնք կառուցված են նվաճումներից հետո և որոնց ֆիրմանները կորել են։

VII. Քրիստոնեական եկեղեցին միակ օրինական ամուսնությունը համարում է եկեղեցական ամուսնությունը, իսկ ժառանգման իրավունքը բացառապես պատկանում է այդ ամուսնությունից ծնված երեխաներին։ Հետևաբար, ժառանգության իրավունքը կարող է որոշվել և հաստատվել միայն այն եկեղեցական իշխանությունների կողմից, որոնց տնօրինության տակ է եղել հանգուցյալը։ Սակայն շարիաթական դատարանները ժառանգության մասին որոշումներ են հրապարակում՝ բավարար-

վելով առաջին իսկ հանդիպած մարդու ցուցմունքներով, մինչդեռ անհրաժեշտ է, որ նրանց համար որպես հիմունք ծառայեն պատրիարքարանի կողմից ներկայացվող տեղեկությունները։

Իբրև հետևանք, այս կարգի գործերը որոշվում են մահմեդական կրոնական հաստատության պատվիրաններին համապատասխան։

VIII. Կառավարության սահմանած հարկերից բացի, հայ ժողովուրդը վճարում է ևս մի հատուկ հարկ, որը սահմանված է ժողովրդական կրթության ծախսերը ծածկելու համար։ Սակայն այս հարկը երբեք չի օգտագործվում հայկական դպրոցների կարիքները հոգալու համար, որոնք պահվում են բացառապես ժողովրդի կամավոր նվիրատվությունների միջոցով։ Իսկ Բարձր Դռան ընդունած որոշումները ծայրահեղորեն դժվարացրել են նվիրատվությունների հավաքումը և հանգանակությունը հօգուտ դպրոցների և եկեղեցիների։ Օսմանյան կառավարությունը վերջերս արգելել է ընդհանրապես այդ կարգի որևէ հանգանակության հավաքում։ Դրա համար էլ դպրոցախնամ կազմակերպությունների խնայողություններն սպառվել են։

Հին սովորույթի համաձայն, որը սրբագործված էր, ի միջի այլոց, ֆիրմաններով ու բերաթներով, վանահայրերը իրենց ուխտի անդամներին ուղարկում էին համապատասխան եպիսկոպոսություններին ենթակա վայրերը՝ հավաքելու նվերներ և հանգանակություններ, որոնցով պահպանվում էր վանքերի գոյությունը։ Բայց որոշ ժամանակից ի վեր գավառական իշխանությունները արգելում են այս սովորույթի պահպանումը՝ քողարկվելով Բարձր Դռան կարգադրությամբ։ Այսպիսով, անհնար է դարձել վանքերի կարիքների բավարարումը...

Ահա, Ձե՛րդ գերազանցություն, հայ ժողովրդի ընդհանուր դրության համառոտ նկարագրությունը։ Այս հարցի վերաբերյալ ահռելի քանակի տեղեկություններ կան այն թաքրիրներում, որոնք բազում տարիների ընթացքում պատրիարքարանն անընդհատ ուղարկել է կայսերական կառավարությանը։

Օսմանյան կառավարությունը հնարավորություն ուներ բազմաթիվ հետաքննությունների հիման վրա ստուգել ու պարզել հայաբնակ գավառների դրությունը և ժողովրդի կարիքները։ Նրան նույնպես հայտնի են բոլոր փաստերը։

Պատրիարքարանը բազմիցս դիմել է կայսերական կառավարությանը և միշտ նրանից խոստումներ է ստացել բարենորոգումներ անցկացնել ու բարելավել դրությունը, սակայն այդ խոստումները և ստացված հավաստիացումները ապարդյուն են եղել։

Հայոց ազգը, Ձե՛րդ գերազանցություն, որպես քրիստոնեական համայնք ցանկանում է լիակատար ազատություն՝ իր կրոնը պաշտելու, քաղաքացիական և կրոնական կազմակերպությունների անարգել գործունեություն, իր եկեղեցական արտոնությունների լիակատար պաշտպանում։ Նա ցանկանում է աշխարհում գոյություն ունենալ որպես հայ ազգ՝ պահպանելով իր բնորոշ հատկություններն ու տարբերիչ գծերը, որոնք ներհատուկ են նրա ազգային անհատականությանը։

Նա ձգտում է որոշակի կարգուկանոնի հաստատման, ինչը կկարողանա նրան երաշխավորել բոլոր իրավունքներից օգտվելու հնարավորություն, իրավունքներ, որոնցով նախախնամությունն օժտել է մարդկությանը, և օգտվելու բոլոր բարիքներից, որոնք քաղաքակրթությունն ընձեռում է աշխատասեր ժողովուրդներին...

Թուրքահայոց պատրիարք
Մատթեոս

АВПР, Политархив, д. 1416.

82. ԷՐԶՐՈՒՄԻ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՄԱՔՍԻՄՈՎԻՆ

Նամակ **8 (20) մարտի 1895 թ.**

Շտապում եմ հաղորդել Ձեզ իմ հատուկ լիազորից հենց նոր ստացված տեղեկությունները Սպերի կազայում տեղի ունեցած ողբալի դեպքերի մասին։ Սպերը մեր քաղաքից ավելի հեռու չէ, քան մի յոթ ժամվա ճանապարհ։

1894 թ. դեկտեմբերի 15-ին Սպերի գլխավոր գյուղերից մեկի՝ Ճիպոտ թուրքական գյուղի բնակչությունը փորձել է զավթել նույն գյուղի հայերին պատկանող մի հողակտոր։ Հայերը, բնականաբար, ընդդիմացել են բռնության այդ գործողությանը, բայց մահմեդականները, քրիստոնյաների դիմադրությունից բորբոքված, զենք են վերցրել ու հարձակվել դժբախտ, անպաշտպան հայերի վրա, ընդ որում, գործելով ծայրահեղ դաժան արարք-

ներ։ Նրանք սկսել են տղամարդկանցից՝ հրացանով և սառը զենքով քիչ թե շատ լրջորեն վիրավորելով 13 հոգու։ Ահա զոհերի անունները (սրանցից յոթը անհուսալի վիճակում են).

Մկրտիչ, Գաբրիելի որդին
Թորոս,
Հովհաննես, տեր Գևորգի որդին
Վարդան, տեր Գևորգի որդին
Ղազար, տեր Գևորգի որդին
Ղազար, տեր Գաբրիելի որդին
Հակոբ, Ղազարի որդին
Գրիգոր, Պապի որդին
Փիլոս, Առաքելի որդին
Կիվաս, Գրելիմի որդին
Գալուստ, Սարգսի որդին
Համբարձում, Առաքելի որդին
Հակոբ, Մինասի որդին։

Զբավարարվելով այս գազանություններով և տեսնելով, որ տղամարդիկ ցրիվ են եկել դաշտով մեկ, չարագործները ներխուժել են հայերի տները, ծաղր ու ծանակի ենթարկել կանանց ու աղջիկներին։ Սրանցից մեկը՝ Մարթա անունով, դիմադրություն ցույց տալով անպատկառ բռնացողներին, սպանվել է։

Այս վայրագ հրեշները սպանել են նաև մի երեխայի, այն բանի համար, որ ճչացել է, երբ իր մոր ու քրոջ բռնաբարվելն է տեսել, այս ճչոցը բարկացրել է բռնացողներին։

Մի քանի օր անց, մի յուզբաշի, որ մի քանի զափթիեի ուղեկցությամբ շրջելիս է եղել այդ տեղերը հարկեր հավաքելու համար, եկել է նույն այս Ճիպոտ գյուղը։ Հարցուփորձ է արել պատահածի մասին և շատ զոհ է մնացել։ Նա խրախուսել է հավատակիցներին, որ շարունակեն ծանակել գյավուրներին, նրանց խորհուրդ տալով, սակայն, որ ավելի զգույշ լինեն, որպեսզի ուշադրություն չհրավիրեն իրենց վրա։

Նրա ցուցումով հայերի ծեծուջարդը շարունակվել է։ Հայերի ունեցվածքը նա զավթել է հարկերի գանձման պատրվակով, իսկ երեկոյան ջոկել է ամենագեղեցիկ հայ կնոջը՝ իր զազրելի բնազդները բավարարելու համար։ Դժբախտ կինը թաքնվել է իր տանը։ Յուզբաշիի ծառաները կտուրից անցք են բացել, որտեղից յուզբաշին մտել է տուն և առևանգել գեղեցիկ հայուհուն։

Այս դեպքերից հետո դժբախտ հայերին՝ Սպերի գավառի

գյուղերի բնակիչներին, սարսափն է պատել։ Կանայք, որոնք ստիպված են օրերով տանը մնալ, դուռ ու դարպաս փակումպաշտպանվում են հանկարծակի հարձակումներից, իսկ տղամարդիկ հազիվ են սիրտ անում երևալ գյուղի փողոցներում։ Ճիպոտում բնակվող հայերից ոչ ոք չի կարող քաղաք գալ, իսկ եթե որևէ մեկը շտապ գործ է ունենում, ապա նրան թույլատրվում է քաղաք մտնել միայն այն պայմանով, որ լռություն պահպանի տեղի ունեցածի մասին և ոչ ոքի ոչ մի բողոք չտա։

Էրզրումի հայոց եպիսկոպոս Ղևոնդ

АВПР, Посольство в Константинополе, д. 3176, л. 111.

88. ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Նամակից Շապին-Գարահիսար, 25 հունիսի 1895 թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս պարտք ենք համարում Ձերդ բարձր գերազանցությանը խնդրել, որ բարեհաճեք Ձեր կառավարությանը փոխանցել մեր խորին երախտագիտությունը այն հոգատար աջակցության համար, որ նա ցանկացել է ցուցաբերել անտանելի դրության մեջ գտնվող մեր երկրին՝ հայկական բարենորոգումների ընդհանուր ծրագրով և որի համառոտ շարադրանքին մենք պատիվ ունեցանք ծանոթանալու։

Սակայն, թող թույլ տրվի նկատել, որ բարենորոգումների ծրագրի հարցը նոր չէ, և մենք հաճախ ենք հիասթափվել մեր արդարացի հույսերից, որոնք, թվում է, վաղուց պետք է որ իրականացած լինեին։

Ձե՛րդ բարձր գերազանցություն, Ձեզ հիանալիորեն հայտնի է, որ երբ օրենքների կատարումը լիազորվում է անգործունյա մարմինների կամ էլ այդ օրենքները իրագործելու հայտնապես չհակված մարմինների, և կամ անհամապատասխան անձանց, ապա, որքան էլ լավ լինեն այդ օրենքները, դրանք մնում են մեռած տառ։

Չէ՞ որ հանրահայտ է այն փաստը, որ թուրքական կառավարությունը, հակառակ իր ունեցած մարդասիրական օրենքների առկայությանը, իր քաղաքականության մեջ մշտապես ղեկավարվել է բարբարոսական մեթոդներով։

Նորից հայկական բարեփոխումների ծրագրի իրագործումը հանձնարարել նորին սուլթանական մեծությանը — դա ծաղր չէ՞ արդյոք մեր հանդեպ։

Մեզ համար արդեն պարզ է, որ մեր դեռ չսպիացած վերքերը է՛լ ավելի պիտի արյունոտվեն։ Մի կողմից՝ տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից՝ հալածանքներն ու անասելի տանջանքները վերջնականապես մեզ կկործանեն...

Խորին հարգանքով [475 ստորագրություն]

АВПР, Посольство в Константинополе, д. 3181, л. 12.

84. ԷՄ. ԴԻԼՈՆԻ «ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀՈԴՎԱԾԻՑ (1895 Թ.)

1891 թ. Բարձր Դուռը, երկյուղելով Հայաստանում խոստացված բարենորոգումներ մտցնելու դեպքում իր համար լուրջ դժվարությունների ծագումից և պատերազմի ժամանակ Ռուսաստանի սահմանամերձ գավառներում ապրող քրիստոնյաների հնարավոր թշնամանքից, որոշեց մի գնդակով երկու նապաստակ խփել և կազմակերպեց այսպես կոչված համիդիե հեծելազորը՝ կազմված բացառապես քրդերից։ Կայսրության մի քանի բարձրագույն պաշտոնյաների կողմից առաջարկված ծրագիրը կայանում էր նրանում, որ պետք էր հայերին դուրս մղել սահմանամերձ հողերից, ինչպիսին է, օրինակ, Ալաշկերտը, և նրանց փոխարինել մահմեդականներով, որպեսզի նրանց թիվը բոլոր հինգ գավառներում կրճատվեր հասներ այնպիսի չափերի, որոնց դեպքում կչքանար հայ բնակչության համար հատուկ բարենորոգում անցկացնելու անհրաժեշտությունը, և որպեսզի պատերազմի դեպքում քրդերը գործեին ի հակակշիռ կոզակների։

Ոչնչացման այդ բացահայտ քաղաքականությունը ճշգրտորեն իրագործվել և նշանակալիորեն ընդլայնվել է այն ժամանակից ի վեր, և եթե դրան շուտով վերջ չտրվի, ապա դա անկասկած կհանգեցնի Հայկական հարցի վերջնական լուծմանը. բայց այդ լուծումը խայտառակություն կլինի քրիստոնեության համար և անարդ ծաղր՝ քաղաքակրթության նկատմամբ...

Այժմ ապացուցված է, որ Սասունի կոտորածը եղել է Բարձր Դռան ներկայացուցիչների գիտակցական գործը, մի գործ, որը եղել է խնամքով նախապատրաստված և անողոքաբար իրագործված, չնայած այն բանին, որ այդ սարսափները սարսռեցնում էին նույնիսկ քուրդ ավազակներին և կարեկցություն հարուցում նույնիսկ թուրք զինվորների սրտերում։

Հետևաբար, գանգատվել Հայաստանում կյանքի և գույքի անապահովությունից, քանի դեռ այդ երկիրը գտնվում է Բարձր Դռան անպատասխանատու կառավարչության տակ, դա միևնույնն է, թե զինվորը արյունալի ընդհարման ժամանակ գանգատվի թշնամու գնդակների վտանգավորությունից։ Գանգատների առարկա հանդիսացող արդյունքը հենց այն նպատակն է, որին ձգտում են, և այն կատարելությունը, որով ձեռք է բերվում այդ արդյունքը, համոզիչ ապացույցն է կիրառվող միջոցների վավերականության։

Օտարերկրացի նշանավոր մի պետական գործիչ, որը սովորաբար համարվում է համոզված թուրքասեր, վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի էր ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն։ Այս համակարգի դեմ բողոքները կարող են արդարացի լինել և տեղին, բայց հազիվ թե դրանք կարելի լինի օգտակար համարել։ Մարդասերը բանտ այցելելիս կարող է մեծ դառնություն ապրել, տեսնելով, որ բանտարկյալներից մեկի ձեռնուոտը կապված են, բայց նա դժվար թե ժամանակ կորցնի դրա դեմ բողոքելու վրա, եթե իմանա, որ այդ բանտարկյալը մահվան է դատապարտված և շուտով կախաղան է բարձրացվելու։

Բնաջնջման ծրագրի իրականացման առաջին քայլը կայանում էր նրանում, որ սիստեմատիկորեն սնանկացվեր ժողովուրդը։ Դա բնական է մի երկրում, որտեղ պաշտոնյաները ութ կամ տասն ամսով սպասում են իրենց ռոճիկին և ապա պարտավոր են բավարարվել իրենց հասանելիքի մի մասով միայն։ «Ես մեկ փարա իսկ չեմ ստացել տասներկու շաբաթվա ընթացքում և չեմ կարող մինչև իսկ մի շոր գնել ինձ համար»,— բացականչեց մի աստիճանավոր, որին հանձնարարված էր օրուգիշեր հետևել ինձ Էրզրումում։ «Ձեր ռոճիկը կանոնավոր վճարե՞լ են»,— հարցրի Քութեկի հեռագրական գրասենյակի պետին։ «Ո՞չ էֆենդի՛,— պատասխանեց նա,— արդեն ութ ամիս է, ինչ ոչինչ

չեմ ստացել։ Ասենք, մեկ ամսվա ռոճիկ ստացել եմ բայրամին»։ «Իսկ այդ դեպքում ինչպե՞ս եք ապրում»։— «Աղքատ»։— «Բայց ախր դուք պետք է գոնե որոշ գումար ունենաք, որպեսզի սովից չմեռնեք»։— «Իհարկե, մի քիչ դրամ ունենում եմ, բայց ոչ բավարար չափով։ Ալլահը ողորմած է։ Դուք ինքներդ հիմա ինձ մի քիչ փող տվեցիք»։— «Բայց ախր այդ փողը ձեզ համար չէ, դա հեռագրի դիմաց է վճարված և պետությանն է պատկանում»։— «Ես այդ փողը վերցնում եմ ռոճիկիս փոխարեն, դա շատ չի լինում, բայց այդ ձևով ինչքան որ գալիս է, իմ գրպանն եմ դնում»։ Այս մարդիկ, իհարկե, մանր աստիճանավորներ են, բայց սրանց վիճակը ըստ էության չի տարբերվում իրենց պետերի վիճակից. դատավորները, սպաները, փոխնահանգապետները, վալիները և այլն, գտնվում են հենց այս նույն փողապակասության մեջ, բայց և հաճախ աչքի են ընկնում առավել ագահությամբ։

Թասիկ [Թահսին] փաշան՝ Բիթլիսի նախկին գեներալ-նահանգապետը, ներկայացնում է բնաջնջման դարաշրջանի թուրքական բարձր պաշտոնյայի հիանալի մի նմուշ։ Նա սովորություն ուներ բանտում արգելափակել հայ հարուստներից շատերին՝ առանց որևէ բանի մեջ մեղադրելու համար որևէ հիմքի կամ գոնե պատրվակի։ Ապա նրանց առաջարկվում էր ազատություն այնպիսի մի խոշոր գումարով, որը ներկայացնում է նրանց ունեցվածքի մեծ մասը։ Վճարումից հրաժարվելու հետևանքը ձերբակալվածների համար լինում էր այնպիսի վերաբերմունքը, որի համեմատ միջնադարյան Անգլիայում հրեաների կտտանքները կամ ժամանակակից Հնդկաստանում արքայադուստր Ուդայի կողմից ներքինիների նկատմամբ գործադրվող տանջանքները ներկայանում են որպես մեղմ ու բարերար պատիժներ։ Որոշ ձերբակալվածներ պետք է ոտքի վրա կանգնեին մի ամբողջ օր ու գիշեր, ընդ որում նրանց թույլ չէին տալիս ո՛չ նստել, ո՛չ ուտել, ո՛չ շարժվել։ Եթե նրանք ուժասպառ, ուշակորույս էին լինում, ապա սառը ջուրը կամ շիկացած երկաթը նրանց շուտով ուշքի էին բերում, և կտտանքը շարունակվում էր։ Քանի որ ժամանակն ու համառությունը թուրքերի կողմն էր լինում, ապա ընդհանրապես բանը վերջանում էր նրանով, որ հայերը սովորաբար զոհաբերում էին ինչ ասես, միայն թե ազատվեին սարսափելի տառապանքներից։ Ստիպված էին լինում կամ ամեն ինչ զոհաբերել, կամ իրենք զոհ դառնալ, և նրանք, իհարկե, ընտրում էին չարիքի փոքրագույնը։

Բիթլիսի վիլայեթում մի քանի հարյուր հայեր, որոնք դրամ և անասուն ու հաց են ունեցել, քմահաճ բանտարկության են ենթարկվել և խոշոր կաշառք տալով ազատվել։ Նրանցից ոմանք մի վիճակի չեն եղել տեղնուտեղը վճարելու, ուստի նրանց պահել են մոտալ զնդանում այնքան ժամանակ, մինչև որ հայթայթել են պահանջվող գումարները, իսկ ոմանց էլ սպանել են։ Մոտ հարյուր հայեր զոհվել են միայն Բիթլիսի բանտում։ Հետևյալ խնդրագիրը ստորագրված ուղարկվել էր ինձ և, եթե չեմ սխալվում, ապա միաժամանակ նաև՝ Մուշում գտնվող օտարերկրյա պատգամավորներին։ Այս խնդրագիրը, որը ձեռնարկել էր լավ հայտնի մի մարդ, որի անունն ու հասցեն հայտնում եմ, կօգնի պատկերացում կազմելու, թե ինչպես է Բիթլիսի վալին կառավարել իր գավառները և միաժամանակ բարնգործություն արել. «Մենք՝ թուրքական կառավարությանը անվերապահ հավատարմությամբ ծառայողներս, մանավանդ վերջին տարիներին վատ վերաբերմունքի ու ճնշման ենք ենթարկվում մերթ կառավարության կողմից, մերթ՝ քուրդ ավազակների։ Այսպես, օրինակ՝ անցյալ տարի (1894) ես թուրքական ոստիկանության կողմից հանկարծակի ձերբակալվեցի իմ տանը Բուրքական ոստիկանության և ժանդարմների կողմից։ Ինձ տարան Բիթլիսի բանտը, որտեղ ես ենթարկվեցի վիրավորանքների և ամենասարսափելի կտտանքների։ Այնտեղ չորս ամիս նստելով՝ ազատվեցի այն պայմանով, որ վճարեմ 450 ֆ. ստեռլինգ։ Այդպիսի գործողությունների համար չէր ներկայացվել ոչ մի հիմունք կամ պատրվակ։ Տուն վերադառնալուց հետո ես իմ տնտեսությունը գտա անկանոն վիճակում, իմ գործերը՝ բարձիթողի, և իմ ապրուստի միջոցները կորան գնացին։ Իմ առաջին միտքը եղավ դիմել թուրքական կառավարությանը, խնդրելով, որ փոխհատուցվեն իմ կորուստները, բայց հրաժարվեցի այդ ծրագրից, որպեսզի նրանից բանտարկության չենթարկվեմ։ Լսելով, որ Դուք Հայաստան եք եկել, որպեսզի հետազոտեք ժողովրդի վիճակը, աղերսում եմ Ձեզ հանուն աստծո, ուշադրությո՛ւն դարձրեք իմ գործին։ Ստորագրված է՝ Բողոս Դարմանյան, Մանազկերտի կազայի Իկնաքաջիա գյուղից»։

Հայերից հավաքվող հարկերը չափազանց մեծ են։ Կաշառքները, որոնցով միշտ ուղեկցվում են գանձումները, վերցնում

են զափթիեները և կարող են հասնել աներևակայելի չափերի՝ ընդունելով ամենազազրելի ձևեր։ Իսկ ինչ վերաբերում է այն եղանակներին, որոնց օգնությամբ տեղի են ունենում հարկերի գանձումները, ապա դրանք ինքնին բավարար հիմք են հանդիսանում Հայաստանում օսմանյան տիրապետությունը ոչընչացնելու համար։

Որպեսզի քաղաքներում քրիստոնյաների ու մահմեդականների հարկման տարբեր մակարդակների համար հարմար օրինակ բերենք, բավական կլինի ասել, որ Էրզրումում, որտեղ գոյություն ունի 8000 մուսուլմանական տնտեսություն, մուսուլմանները վճարում են 395 000 ղուռուշ, մինչդեռ քրիստոնյաները, որոնք տնտեսությունների թվով հաշվվում են սոսկ 2000, մուծում են 450 000 ղուռուշ։

Գյուղական շրջաններում ամեն ինչ առանց բացառության շատ բարձր է հարկված կառավարության կողմից, բայց ամենածանր հարկային բեռը, որ գանձվում է օրինական հիմունքներով, ավելի թեթև է, քան զափթիեների շորթումները։ Ենթադրենք, օրինակ՝ ընտանիքը պետք է վճարի 5 ֆ., որը և մուծում է պատշաճ կերպով։ Բայց զափթիեները պահանջում են ևս 3 կամ 4 ֆ. իրենց համար։ Նրանց կտրուկ կերպով մերժում են, սկսվում են բանակցությունները, որոնք ընթանում են սուր ու վիրավորական արտահայտություններով, և վիճողները վերջապես հանգում են 1 ֆունտի։ Բայց զափթիեները չեն կարող հանգստանալ. մի շաբաթ անց նրանք վերադառնում են և նորից պահանջում նույն գումարը։ Հայերը համբերությունից դուրս են գալիս, բողոքում են և ցույց տալիս ստացականը, բայց զափթիեները, ծիծաղելով, հայտարարում են, որ ներկայացվող փաստաթուղթը ստացական չէ, այլ թուրքական ինչ-որ գրքից մի քանի բանատող։ Գյուղացիք վկայակոչում են իրենց աղքատությունը և գթություն աղերսում։ Ագահությունը, այլ ոչ թե կարեկցությունն է զափթիեներին դրդում համաձայնել 3 ֆ-ի, բայց այդքան դրամն էլ, պարզվում է, պատրաստի չկա։ Այնժամ զափթիեները պահանջում են, որ իրենց մատուցեն ընտանիքի չահել կանանց ու աղջիկներին՝ իրենց բուի հաճույքները բավարարելու համար, և մերժման հետևանքը լինում է այն, որ դրժբախտներն այնպիսի պատիժներ են կրում, որոնց նկարագրությունից անգամ մարդ խույս է տալիս՝ հանուն պատշաճության և մարդասիրական զգացումների...

Ես տեսել եմ Բարձր Դռան այդ ներկայացուցիչների զոհերին և խոսել հետները. ես զննել եմ նրանց վերքերը, հարցուփորձ եմ արել նրանց ընտանիքներին, դիմել եմ նրանց քահանաներին, նրանց հալածողներին ու բանտապաններին (նրանցից ոմանք բանտ են նստեցված այն բանի համար, որ բողոքել են), և ես առանց տատանվելու պնդում եմ, որ նման սարսափները ոչ միայն իրական փաստեր են, այլև հաճախակի տեղի ունեցող երևույթներ։ Ներքոհիշյալը թարգմանությունն է մի վավերական փաստաթղթի, որը գտնվում է իմ ձեռքին։ Այս փաստաթուղթը Մելիկանի (Քղիի կազա) բնակիչների ստորագրությամբ ու կնիքով հենց այս տարվա մարտի 26-ին ուղարկվել է նորին սրբություն, գիտնական, Էրզրումի առաջնորդ արքեպիսկոպոսին, որը ինչպես բարեկամների, այնպես էլ թշնամիների հարգանքն է վայելում։

«Սրանից շատ ժամանակ առաջ 4—5 զափթիեներ, որոնց հանձնարարված էր հավաքել պետական հարկերը, մեր գյուղն են ընտրել որպես գլխավոր կայանատեղ և հարակից վայրերի բնակիչներին ստիպում են ներկայանալ այստեղ հարկերը վճարելու համար։ Այս զափթիեները ուտում-խմում են և իրենց ձիերին կերակրում մեր հաշվին՝ չթաքցնելով, որ իրենք որոշել են մեզ ընչազրկության հասցնել։

Վերջերս ուրիշ 7 զափթիեներ, որոնք պատրվակ իսկ չունեին հարկեր հավաքելու, մեր գյուղն եկան, ծեծեցին բնակիչներին, անարգեցին քրիստոնեական կրոնը և անպատվեցին մեր կանանց ու աղջիկներին։ Ապա բռնեցին երեք հոգու, որոնք բողոքել էին՝ Պողոսին, Մարտիկին և Գրիգորին, կրկնակի շղթայով կապեցին և գլխիվայր կախեցին չորսուից։ Այդ վիճակում դրժբախտներին թողեցին այնքան ժամանակ, մինչև որ քթներից արյուն հոսեց։ Այդպիսի կտտանքից հետո այդ երեքը հիվանդացան։ Մինչդեռ զափթիեները հրապարակավ հայտարարեցին, որ իրենց գործողություններում ղեկավարվել են միայն ոստիկանության պետի հատուկ հրամաններով...

Ի նկատի ունենալով շարադրվածը՝ մենք դիմում ենք արդարադատությանը, որպեսզի նա մեզ փրկի այս անտանելի վիճակից»։ Քղիի կազայի Մելիկան գյուղի բնակիչներ։ 26 մարտի 1895 թ.։

Ահա նույն կազայի մի այլ գյուղից մի այլ խնդրագիր՝ նույնպես հղված Էրզրումի արքեպիսկոպոսին.

«Մի քանի զափթիեներ հարկահավաքման պատրվակով եկան մեր գյուղը թուրքական ժամանակով ժամը 5-ին (ճաշից հետո մոտ ժամը 10-ին), ջարդեցին մեր տների դռները, ներխուժեցին ներքին սենյակները, բռնեցին մեր կիսամերկ կանանց ու երեխաներին և նրանց, անկողիններով հանդերձ, դուրս նետեցին փողոց։ Ապա խիստ դաժանությամբ ծեծեցին։ Վերջապես, ջոկելով մեր 30-ից ավելի կանանց՝ փակեցին մարագում և նրանց հետ կատարեցին իրենց հանցավոր ցանկությունը։ Հեռանալուց առաջ նրանք իրենց մշտական սովորությամբ զավթեցին տարան ողջ ուտելիքն ու անասնակերը, ինչ որ մենք ունեինք։ Մենք Ձեզ խնդրում ենք Ձեր ուշադրությունը դարձնել այս փաստերի վրա և աղերսում ենք կայսերական ողորմածություն։ Քղիի կազայի Արեգ գյուղի բնակիչներ»։

Ստորագրված է՝ Մուրադյան, Ռեսսյան, Բերդովյան, Մելքոնյան։ 26 մարտի 1895 թ.։

Ես ինքս մի հայ շինականի տանն էի, Քյոփրի-Քյոյ գյուղում, երբ այնտեղ եկան մի քանի հեծյալ զափթիեներ։ Նրանք տանտերերին դուրս կանչեցին և կոպտորեն պահանջեցին, որ իրենց ուտելիք, քնելու տեղ և ձիերին էլ կեր տան։ Ձգիտեմ, թե ուրիշ էլ ի՞նչ կպահանջեին, բայց ես տանտիրոջս ազատեցի՝ ասելով, թե ես մի գիշերով նրա ամբողջ շենքը վարձել եմ...

Հայերը բնականից խաղաղասեր են, գյուղական շրջաններում նրանք եռանդագին նվիրված են հողագործությանը, իսկ քաղաքներում միանգամայն կլանված են առևտրով։ Բայց որպեսզի արյունահեղության հանդեպ նրանց բնածին խորշանքը չճնշվի պարտքի զգացումից, ինքնապաշտպանության բնազդից և իրենց համար մոտ ու թանկ արարածների հետ խորը կապվածությունից, նրանց արգելված է զենք ունենալ, և այն տանջանքները, որոնց ենթարկվում են այդ օրենքի մի քանի խախտողները, ամոթից կկարմրեցնեին Կոնֆուցիոսի հայրենակցի այտերը...

Հայերին խստորեն մերժում են արդարադատության ամեն մի ձև։ Միայն այն փաստը, որ հայը համարձակվել է դիմել դատարանին որպես բողոքարկու կամ որպես հայցվոր քրդի կամ թուրքի դեմ, միշտ բավարար հիմք է ծառայում, որպեսզի տեղի ունենա կերպարանափոխություն՝ բողոքարկուին վերածելով պատասխանողի կամ հանցապարտի, ինչը և նրան սովորաբար տանում է բանտ։ Այսպիսի դեպքերում բանտը հանդիսանում է

ոչ ավելին, քան անցման շրջան՝ համեմատաբար ունևոր վիճակից դեպի լիակատար ընչազրկությունը. բանտարկյալներին մաքուր պլոկում են և ապա բաց թողնում՝ ուր ուզում ես գնա։ Բայց թե ինչ է իրենից ներկայացնում բանտը, դա հնարավոր չէ բավարար հստակությամբ նկարագրել։ Եթե պատկերացնես Անգլիայի հին Աստեղային պալատի, իսպանական ինկվիզիցիայի, հաշիշածխման չինական քարանձավի, դեղնատենդի հիվանդանոցի ու դանթեական դժոխքի ամենամռայլ պարունակներից մեկի միավորումն իրար հետ, ապա դա թուրքական բանտի նմանությունը կունենա։ Կեղտ, դարշահոտություն, հիվանդություններ, այլանդակություններ, այն չափի ու տեսքի տանջանքներ, որ Եվրոպայում չեն էլ կարող պատկերացնել... Այդ սարսափելի զնդաններում մշտապես իրար են խառնվում դիվահնար կտտանքների աղաղակը հակաբնական հաճույքների ճիչերին, կեղտոտ երգեր են երգվում՝ սրտակեղեք հեծեծանքների նվագակցությամբ, և միևնույն ժամանակ վաղուց արդեն կենսական ուժերից զրկված մարմնից դուրս են թռչում հոգիները, որոնց չի ողբում ոչ ոք, բացի խոնավ պատերից, որոնց վրա անասելի վէրքերի և ահավոր հիվանդությունների գոլորշիները կուտակվում են մեծ կաթիլներով ու թափվում հատակի քարերին՝ այդտեղից վեր բարձրանալով գոլորշու տեսքով։ Դա հիրավի հրեջավոր մի մղձավանջ է, որ վերածվել է իրականության...

Անցած մարտ ամսին ես իմ մի բարեկամին խնդրեցի այցելել Բիթլիսի քաղաքական հանցագործներին և խնդրել նրանց, որ ինձ տան իրենց վիճակի հակիրճ նկարագրությունը։ Բանտարկյալներից չորսը պատասխանեցին կոլեկտիվ մի նամակով, որը ցնցող տպավորություն է թողնում։ Ահա այդ փաստաթղթի վերջին էջերը, որտեղ նշված է.

«Բիթլիսի բանտ, դժոխք, 28 մարտի (9 ապրիլի) 1895 թ.։ Բիթլիսի բանտում 7 խուց կա, որոնցից յուրաքանչյուրը կարող է տեղավորել 10—12 հոգու։ Իրականում դրանցում տեղավորում են 20—30 հոգու։ Սանիտարական հարմարաճներ բոլորովին չկան։ Թափոններն ու կեղտը, որոնք պետք է այդ նպատակի համար հատկացված մի տեղում լցվեին, կուտակված են խցում։ Ջուր չի կարելի խմել։ Հաճախ հայ բանտարկյալներին ստիպում են ջուր խմել այն թասից, որի մեջ մահմեդականները լվացում են կատարում...»

Այնուհետև հետևում է հակիրճ, բայց ուսանելի նկարագրու-

թյունը այն տանջանքների, որոնց ենթարկվել են գրողի ընկերները և որոնցից մահացել են շատերը։ Ահա, օրինակ՝ «Մալխաս Աղաջանյան և Սրապ Մալխասյան՝ Ավզուտից (Մուշ) ծեծի են ենթարկվել այնքան ժամանակ, մինչև որ ուշագնաց են եղել։ Առաջինին շիկացած երկաթով խարանել են ութ տեղից, երկրորդին՝ տասներկու»։ Սրապի նկատմամբ գործադրված մյուս բռնությունը չի կարելի նույնիսկ հիշատակել։ «Գոգոր Սրապյանին, Ավզուտ գյուղացի, այնքան են ծեծել, որ կորցրել է գիտակցությունը, ապա նրա վիզն են գցել մի գոտի և քարշ տվել տարել զափթիեի սենյակը, որտեղ նրա վրա շիկացած երկաթով 16 խարան են դրել»։ Նկարագրելով մյուս տանջանքները, որոնց ինքն է ենթարկվել, օրինակ՝ մազերը փետելը, հաց ու ջրից տևականորեն զրկելը՝ մի տեղ անշարժ կանգնեցրած դիրքով, պատմողն այնուհետև հաղորդում է այնպիսի կտտանքների մասին, որոնց համար անգլերեն անվանում չկա և որոնց մասին քաղաքակիրթ ժողովուրդը չի կարող լսել։ Ապա նա շարունակում է. «Միևնույն գյուղացի Սիրկո Միքաելյանին, Կարապետ Լեալկասյանին և Իզրո Աստվածատրյանին դաժանորեն ծեծել են և ստիպել անշարժ կանգնել երկար ժամանակ, որից հետո գլխներին լցրել են մի քանի կեղտամանների պարունակությունը։ Սեմալ գյուղացի Կորկի Մարդայանը դաժան ծեծի է ենթարկվել, փետել են նրա մազերը և ստիպել անշարժ կանգնել 24 ժամ։ Դրանից հետո Մուլազիմ-հաջի-ալին և բանտապան Աբդուլքադիրը նրան ստիպել են այսպես կոչված Sheitantopy*-ի ենթարկել, որն ավարտվել է դժբախտ զոհի մահով։ Նա 45 տարեկան է եղել։ Մխիթար Սաֆարյանը և Կատգո Բալոբյանը, (Բուլանըխի Կակաուլից) ենթարկվել են նույնպիսի կտտանքի։ Մխիթարը եղել է սոսկ 15 տարեկան, իսկ Կատգոն՝ ընդամենը 13։ Սողո Շարայանը՝ Ալվարինջից (Մուշ), Մուշից ձեռնակապերով տարվել է Բիթլիսի բանտը։ Բիթլիսում նրան դաժանորեն ծեծել են և ստիպել կանգնած մնալ առանց սննդի։ Երբ նա ուշաթափ է եղել, ուշքի են բերել սառը ջրով և մտրակի հարվածներով։ Նրա մազերն էլ են փետել և մարմինը խանձել շիկացած երկաթով։ Ապա ենթարկել են այնպիսի տանջանքների, որ չի կարելի նկա-

* Տառացիորեն նշանակում է «սատանի օղակ»,— ձեռքերը պինդ կապում էն և ոտքերն էլ մեծ մատներից կապած անց են կացնում ձեռքերի միջով ու կապում։ Sheitantopy-ի մնացած մասերը բաղկացած են սարսափելի կտտանքներից և զազրելի հանցագործությունից։

բագրել։ Համբարձում Բոյաջյանին ձերբակալությունից հետո երեք օր պահել են արևի կիզիչ ճառագայթների տակ։ Հետո նրան տարել են Սեմալ, որտեղ նրան և նրա ընկերներին ծեծել են ու փակել եկեղեցում։ Նրանց թույլ չեն տվել դուրս գալ նույնիսկ բնական պահանջները կատարելու համար և ստիպել են պղծել կնքավազանն ու սեղանը... Որտե՞ղ եք դուք, քրիստոնյա՜ Եվրոպա և Ամերիկա»։

Այս նամակն ստորագրող չորս անձանց մեջ կա մի շատ հարգելի և աստվածավախ հոգևոր անձի ստորագրություն*։

Ես անձամբ ծանոթ եմ բազմաթիվ մարդկանց, որոնք անցել են այս բանտերով։ Այն պատմությունները, որ նրանք պատմում են իրենց փորձությունների մասին, այնքան սարսափելի են, որ դժվար կլիներ դրանց հավատալ, եթե լիովին հաստատված չլիներին նրանց մթագնած բանականության, այլանդակված մարմինների, խոր սպիների, հրեշավոր հաշմության սարսափելի տեսարանով, խեղումներ, որոնք չեն չքանա, քանի դեռ գերեզմանը կամ ցիները չեն կլլել նրանց դիակները։ Կտտանքների և բռնությունների մեջ, որ հնարում են թուրքական բանտապետներն ու տեղական իշխանությունները, կա այն աստիճանի զազրելիորեն ֆանտաստիկ ու վայրենիորեն հրեշավոր մի բան, որ հասարակ ու անպաճույճ հաշվետվությունը նրանց մասին պատկերացվում է իբրև հիվանդ սատանայի ցնորամտություն։ Բայց դա մի բան է, որ անհնար է շարադրել բացեիբաց։

Այն ամենից, ինչ արդեն ասվել է, հեշտությամբ կարելի է եզրակացնել, թե ինչ հիմունքով են մարդիկ թուրքական բանտ ընկնում Հայաստանում։ Դրա համար բավական է, որ նրանք ունենան դրամ, անասուն, հաց, կին կամ դուստր կամ, վերջապես, թշնամիներ։ Մենք վրդովվում ենք, երբ կարդում ենք վայրենի քրդերի դաժանությունների մասին, որոնք ասպատակում են գյուղերը, հարձակվում տների վրա, ոչխար փախցնում, հափշտակում ունեցվածքից այն ամենը, ինչ կարող են տանել, անպատվում են կանանց և հանգիստ տուն են վերադառնում այն գիտակցությամբ, թե իրենք այդ օրը բարի գործ են կատարել։ Մենք դա անարգանք ենք անվանում քաղաքակրթության

* Քանի որ ստորագրողներից երեքը մինչև հիմա բանտում են, ապա գաղտնիությունն ինձ խանգարում է հայտնել նրանց անունները, որոնք, սակայն, հայտնի են Foreign Office-ին։

հասցեին և, գուցե, այդ որակումը ճիշտ է։ Բայց որքան էլ վատ լինեն այդ արարքները, դրանք ողորմածություն են թվում՝ համեմատած գործողության թուրքական հնարների հետ, որոնք հենված են օրենքի ու բանտի սարսափների վրա։ Նա, ով աղքատության պատճառով կամ նույնիսկ լիակատար ընչազրկության հետևանքով անկարող է լինում վճարել հարկերի երևակայական ապառքը, ով չի ցանկանում զափթիեներին իբրև «բախշիշ» տալ իր կովը կամ գոմեշը, կամ նրանց խնդրում է խնայել իր կնոջ կամ աղջկա պատիվը, ընկնում է այդ զնդաններից մեկը և երբեք այդտեղից դուրս չի գա՝ այդտեղի անջնջելի խարանը վրան չառած...

Հայերի մեջ գնալով ավելի ու ավելի է ամրապնդվում այն համոզմունքը, թե կյանքը դա միակ աստվածային կամ մարդկային ողորմածությունն է, որի դիմաց իրենց վիճակված է երախտագիտության զգացմունքներ արտահայտել։ Ճիշտ է, նրանց շատ անգամ են մխիթարել հույսով, և այդ մխիթարությամբ հանդես ենք եկել նույնիսկ մենք, ովքեր հենց սկզբից խանգարեցին Ռուսաստանին, որ օգնության դար հայերին ու կառավարման լավ ձև տար նրանց, և դրա հետ մեկտեղ Թուրքիային լիակատար հնարավորություն ընձեռեցինք, որ նա հինգ դավառներում հաստատեր մի նոր Դագոմեա։ Հիրավի, երբեմն անթափանցելի խավարը հանդիսանում է հենց մոտալուտ լուսաբացի նախագուշակը։ Բայց այդ արարածների համար կյանքը հավերժական խավար է անհայտ անձավների։ Հայերը քրիստոնյա են, և նրանք իրենց հայացքը դարձնում են աստծուն, իմանալով, որ չեն կարող հույս դնել ուրիշ ոչ ոքի վրա...

Բնաջնջման ծրագիրը, ակնհայտորեն, գործում է կանոնավորապես և լավ։ Քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն անցնում են ուրիշների ձեռքը համարյա նույնքան արագ, որքան արագ փոփոխվում են կոմիկական օպերայի դեկորացիաները, և դրա հետ միասին գաղթը դեպի Ռուսաստան ու թաղման թափորները դեպի գերեզմանոց աճում են։ Այստեղ տեղը չէ տալու ցուցակն այն գյուղերի, որոնք մահմեդականություն են ընդունել, բայց մի բնորոշ օրինակ կօգնի պատկերացում կազմելու այն պրոցեսի մասին, որն այժմ տեղի է ունենում։ Ալաշկերտի գավառում, որը սահմանակից է Ռուսաստանին, գոյություն ունեն հինգ գյուղեր՝ Ղարաքիլիսեից արևելք, այն է՝ Կեղր (կամ Կետեր), Մանգասար, Ջաջան, Ջիրո և

Կուրկերան։ Էյուբ փաշան իր որդիներին ուղարկել է, որպեսզի գրավի այդ գյուղերը... Գեներալ Էյուբն ունի երեք որդի՝ Ռեսգոբեյ, Կանիդ բեյ և Յուսուֆ բեյ, և այդ քաջարի սպաները իրենց զինվորների հետ անցյալ գարնանը դուրս են եկել ու գրավել հիշյալ գյուղերը։ Այն ժամանակ այնտեղ կար մոտ 400 տուն հայ, այսինքն՝ մոտավորապես 3000 քրիստոնյա բնակիչ։ Հիմա այդ տեղերում ոչ մեկը չկա։ Նախկին բնակիչներից միայն մեկը՝ Ավետիս աղա անունով, մնացել է երկրում, բայց նա ապրում է մի այլ գյուղում՝ Յունջանուում...

Երբ ես մեկնում էի Հայաստանից, Խնուսի շրջանի առավել աչքի ընկնող երեք հարյուր ներկայացուցիչներ իրենց ստորագրությամբ ինձ տվեցին մի խնդրագիր, որը նրանք խնդրեցին հանձնել «Անգլիայի մարդասեր և ազնիվ ժողովրդին»։ Այդ փաստաթղթում նրանք արդարացիորեն ասում են.

«Մենք հանդիսավորապես հավաստիացնում ենք ձեզ, որ Սասունում տեղի ունեցած կոտորածը միայն մի կաթիլն է հայերի արյան այն օվկիանոսում, որն աստիճանաբար և լռելյայն թափվում է կայսրությունով մեկ՝ ռուս-թուրքական պատերազմից հետո։ Տարեցտարի, ամսեամիս, օրեցօր անմեղ մարդկանց, շրջապատելով կանանց ու երեխաներին, գնդակահարում են, խողխողում ու սպանում իրենց տներում ու դաշտերում, բարբարոսական միջոցներով խոշտանգում կեղտոտ բանտերում կամ կոծանման դատապարտում աքսորավայրում՝ Արաբիայի կիզիչ արևի տակ։ Մինչ խաղարկվում էր այդ երկար ու սարսափելի ողբերգությունը, չհնչեց հանուն գթասրտության ոչ մի ձայն և չմեկնվեց մի ձեռք, որ օգներ մեզ։ Այդ ողբերգությունը շարունակվում է մինչև այժմ, բայց հիմա դա մտել է արդեն իր եզրափակիչ փուլը, և հայ ժողովուրդը գտնվում է վերջին շնչում։ Մի՞թե եվրոպական կարեկցությունը պետք է արտահայտվի մեր գերեզմաններին տնկվող խաչերի ձևով միայն»։

Ես ստացել եմ նաև Խնուսի շրջանի մի քանի հարյուր հայուհիներից անգլիացի կանանց ուղղված վշտալի կոչը. նրանք աղերսում են, որպես վերին ողորմածություն, իրենց պաշտպանել այն դաժան վերաբերմունքից, որին ենթարկվում են։ Այդ կոչն այստեղ տպագրելն անօգուտ է. գրավոր կոչերը հազվադեպ են ուժեղ տպավորություն թողնում։ Եթե ընթերցողը տեսներ իրենց՝ այդ դժբախտ կանանց, ինչպես ես եմ տեսել ու լսել նրանց տխուր պատմությունը իրենց իսկ շուրթերից, պարզ, անպահույճ

խոսքերով, որոնք հիմնավորվում էին հառաչանքներով ու հեկեկանքներով և լուսաբանվում իրենց աղքատությամբ ու դրժբախտություններով, այն ժամանակ նա կարող էր հասկացողություն կազմել Հայաստանում գործերի վիճակի մասին, մի վիճակ, որը աստվածպետության բարի հին ժամանակներում հանցագործների գլխին երկնային կրակ կթափեր...

Սասունի կոտորածը սահմռկեցրեց ամենասառը սրտերն անգամ։ Բայց այս ջարդը երկնային ողորմածություն էր՝ համեմատած այն դժոխային արարքների հետ, որոնք կատարվում են տարվա յուրաքանչյուր շաբաթ և յուրաքանչյուր ժամ։ Սովալլուկ երեխաների սրտակեղեք հեծեծանքներ, ծերունիների հառաչանքներ, որոնց վիճակվել է տեսնել այնպիսի բաներ, որ նկարագրել չի լինի, բռնաբարվող աղջիկների ու նրբին մանկիկների սարսափելի ճիչեր, մայրերի ողբ, որոնք իրենց զավակներից զրկվել են այնպիսի ոճրագործ եղանակներով, որոնց համեմատությամբ սպանությունը բարերարություն կլիներ, կանանց անմարդկային ծաղրանքներ, որոնք գալարվում են վազերի տակ. դրանք անապատում մեռնողների արյան ու տանջանքների անզոր ու զուր ճիչերն են, որոնք արձագանք չեն գտնում ո՛չ երկրի վրա, ո՛չ երկնքում։ Այդ ամենը, միասին վերցրած, ստվերում են թողնում Սասունն ու նրա սարսափները։

Այսպիսին են այն գործերը, որոնց համար մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում։ Եվ չնայած լիբերալ կառավարությանը հայտնի են եղել այս փաստերն ու սրանց նմանները, սակայն լորդ Քեմբերլեյը հնարավոր չի գտել հանդես գալ սրանց դեմ և հարմար չի համարել սրանք հրապարակել[6]...

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896, с. 332—335, 338—341, 352—357, 362, 366—368, 372—373.

85. Վ. ԳԼԱԴՍՏՈՆԻ ՃԱՌԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ 1895 Թ. ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ, ՁԵՆԹԵՐԻ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Հատվածներ

Մոտ կես տարի առաջ ինձ վիճակվեց Հայկական հարցի շուրջը խոսել ոչ թե հանրահավաքի ժամանակ, այլ շատ աննշան թվով ունկնդիրների ներկայությամբ։ Այն ժամանակ ես ինձ թույլ տվեցի ասել, որ մեր պարտքն է խուսափել հապճեպ եզրակացություններից։ Այն ժամանակ աշխարհը դեռևս հեղինակավոր ու անաչառ տեղեկություններ չուներ այն իրադարձության մասին, որը հայտնի է Սասունի կոտորած անվամբ, մի իրադարձություն, որը, դրա գլխավոր վկաներից մեկի խոսքերով ասած, ստվերի տակ է մնում, խունանում ու կորցնում նշանակությունը այն աներևակայելի սարսափների համեմատությամբ, որ ամսեամիս, շաբաթ առ շաբաթ, օրեցօր կատարվում են Հայաստանում։ Մենք պարտավոր էինք ձեռնպահ մնալ հապճեպ դատողություններից, և, կարծում եմ, մենք խուսափեցինք դրանցից։ Մենք շատ զուսպ էինք արտահայտվում, բայց, վերջապես կիրառվեց անաչառ հետազոտության մեխանիզմը, և այնժամ պարզվեց, որ մի այլ պարտականություն, որն առհասարակ շատ կարևոր է սույնին նման դեպքերում, այս դեպքում միանգամայն բացակայում է։ Ես նկատի ունեի չափազանցությունից խուսափելու պարտականությունը, մի սրբազնագույն պարտականություն, որը, սակայն, այս գործում կամ միանգամայն բացակայում է, կամ էլ շատ աննշան նշանակություն ունի. ամեն ոք, ով անձամբ ծանոթանա փաստերին, կհամոզվի, որ մարդկային լեզվի ուժը հազիվ թե ի զորու լինի նկարագրել այն, ինչ իրականում տեղի է ունեցել ու տեղի է ունենում, և որ չափազանցությունը, անգամ եթե մենք հակված էլ լինեինք դրան, մեր ուժերից վեր կլիներ։

Մեզ վիճակված է ծանր պարտականություն կատարել։ Միայն պարտքի ամենախիստ զգացումը կարող էր մեզ հավաքել այս պատերի ներսում, կարող էր հանգեցնել այն բանին, որ իմ տարիքի մարդը, մարդ, որն ստիպված է հաշվի նստել այլ դժվարությունների հետ, միաժամանակ հրաժարվեր քնից ու հանգստից, որոնք երկրային բարիքներից վերջիններն են, որ մատչելի են ինձ, և ձեզ հրավիրել քննարկելու այս հարցը. ես չեմ ուզում սրանով ասել, թե մտադիր եմ ձեզ մտցնել սույն խնդրի հետ կապված զարհուրելի մանրամասների մեջ։ Ես չեմ փորձի ձեզ մտցնել այդ ահավոր դաշտը. բայց, տիկնա՛յք և պարոնա՛յք, ես ձեզ եմ դիմում կոչով։ Ես հույս եմ հայտնում, որ ձեզանից յուրաքանչյուրը ջանք կգործադրի, որ ըստ կարելվույն ծանոթանա գործերի փաստական վիճակին։ Գիտեմ, որ մերժելով չափազանցության հնարավորությունը տվյալ դեպքում, ես շատ համարձակ միտք եմ հայտնում, բայց ձեզանից նրանք, ովքեր ծանոթանան փաստերին, իմ պնդումը արդարացի կհա-

մարեն։ Մենք ի՞նչ վկայությունների դիմենք։ Ես հակված եմ պնդելու, որ դա նշանակություն չունի, որքանով որ խոսքը վերաբերում է վկայությունների բովանդակությանը, քանզի դրանք բոլորն էլ համընկնում են իրար։ Երբ 6 թե 8 ամիս առաջ հարկ զգացվեց, որ խոսեմ, մենք գործ ունեինք միայն մասնավոր անձանց հաղորդումների հետ։ Թեպետև մենք հետագայում էլ չտեսանք պաշտոնական հանգամանալի փաստաթղթեր, այդուհանդերձ, մեզ հայտնի է, որ բոլոր կարևորագույն հաղորդումները, որոնցից մեր արյունը սառչում էր, ստուգվել են ու հաստատվել։ Դրանք չեն հերքել և հետ չեն վերցրել, չեն կրճատել ու չեն մեղմացրել, այլ հաստատել են դրանց ամբողջ ահավոր էությունը՝ իրենց բոլոր ճնշող մանրամասնություններով հանդերձ։

Ես այժմ կարող եմ հայտարարել, որ մենք գործ ունենք ոչ միայն եվրոպացիների, այլև ամերիկացիների վկայությունների հետ, և որ վերջիններս ասում են նույնը, ինչ որ առաջինները... Իմ հարգարժան բարեկամ Մաք Քոլը կհավատա, որ եվրոպական ու ամերիկյան վկայությունների միջև տարաձայնություններ չկան։ Ես այստեղ կանդրադառնամ այդ գործով վկաներից վերջինի ցուցմունքներին։ Դա պարոն Դիլոնն է, որի անունով է ստորագրված մի շատ ընդարձակ հոդված, որ օրերս երևացել է Contemporary Review-ում։ Բայց դուք, թերևս հարցնեք, ինչպես ես էի առաջ հարցրել. իսկ ո՞վ է պ. Դիլոնը։ Ես կարող եմ նրան բնութագրել ի մեծ պատիվ նրա. դ-ր Դիլոնը մի մարդ է, որը որպես Daily Telegraph-ի հատուկ թղթակից, նախազգուշական միջոցներ ձեռնարկելով և դժվարություններով ու կյանքի համար վտանգն աչքի առաջ ունենալով, մի քանի ամիս սրանից առաջ մեկնեց Թուրքիա և այնուհետև, թաքցնելով իր նպատակները, անցավ Հայաստան, որպեսզի տեղում ծանոթանա փաստերին։ Նա իր ուսումնասիրության արդյունքներն ավելի վաղ է հրապարակել, քան կերևար որևէ պաշտոնական հաղորդման մեջ, և այժմ նրա տեղեկությունները լիովին ճաստատվել են երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի անցկացրած քննության ժամանակ։ Ես ասում եմ, որ նա իր կյանքը վտանգի ենթարկելով է վստահության իրավունք նվաճել և մեզ հաշվետվություն ներկայացրել, որն իր վրա կրում է հավաստիության բոլոր նշանները, որին մենք չենք կարող չհավատալ և որը, միաժամանակ, կարող է անհավանական թվալ մեզ։ Դժբախտաբար, անհավանական թվացող բաները, պարզվում է,

որ հնարավոր են մեր տարօրինակ ու արտասովոր աշխարհում. ուստի մենք իրավունք ունենք այս արտահայտությունը կիրառել զարհուրելի, դիվային նողկալիության այն ոգու վերաբերմամբ, որը դրսևորվում է պ. Դիլոնի պատմածում հանդես եկող մարդկային կերպարանքներում։

Եթե կարդաք նրա հոդվածը, ապա կհամոզվեք ասածիս ճշմարտության մեջ, այն է՝ մենք գործ չունենք իշխանության չարաշահման, վատ ուղղության հարցի հետ։ Մեր առջև շատ ավելի լուրջ ու նշանակալի մի բան է, մեզ վրա շատ ավելի ծանր պարտավորություններ դնող մի բան։ Այդ հիանալի հոդվածի էությունը, որը հաստատվում է, ինչպես ասացի, այլ վկաների ցուցմունքներով, կարելի է արտահայտել չորս բառով. կողոպուտ, սպանություն, բռնություն և խոշտանգումներ։ Յուրաքանչյուր փաստ համընկնում է այդ հասկացություններից մեկի կամ մյուսի կամ դրանց ամբողջության հետ։ Կողոպուտն ու սպանությունն ինքնին սարսափելի են, բայց դրանք խունանում են պ. Դիլոնի նկարագրած և ներկայումս լիովին հաստատված բռնության փաստերի կողքին։ Ես չեմ մտնի այդ հոդվածում նկարագրված իրադարձությունների մանրամասնությունների մեջ, բայց ձեզ կհայտնեմ հետևյալ կարծիքը, որին խնդրում եմ հավատ ընծայել, մինչև որ փաստեր բերեմ։ Երբ բոլոր սովորական դեպքերում մեզ լուր է հասնում որևէ հանցագործության, անգամ ամենաահավոր ոճրագործության, ինչպես օրինակ, վերջերս Չինաստանի մի քանի վայրերում տեղի ունեցած կոտորածի մասին, մենք ասում ենք. «Բոլոր երկրներում էլ, դժբախտաբար, գոյություն ունեն չարագործներ, կողոպտիչներ ու մարդասպաններ», բայց ներկա դեպքում այն մարդիկ, որոնց արարքները նկարագրել է պ. Դիլոնը, պատկանում են բոլորովին այլ կարգի մարդկանց թվին։

Մենք բնավ գործ չունենք հասարակության այսպես կոչված վտանգավոր դասակարգերին պատկանող մարդկանց արարքների հետ։ Մենք ծանոթանալու ենք ոչ թե նրանց արարքներին, այլ Կոստանդնուպոլսի կառավարության ու նրա գործակալների արարքներին։ Հայաստանում կատարվող ոճրագործություններից չկա գեթ մեկը, որի համար բարոյական պատասխանատվություն չկրի Կոստանդնուպոլսի կառավարությունը։ Ովքե՞ր են նրա գործակալները։ Թույլ տվեք ինձ դա մի քանի խոսքով բացատրել ձեզ։ Նրանք բաժանվում են երեք դասակարգի։ Նախ, դա վայ-

բենի քրդերն են, որոնք, դժբախտաբար, հարևաններն են հայերի՝ քրիստոնեական քաղաքակրթության ամենահին ժողովուրդներից և աշխարհի ամենախաղաղ, ձեռներեց ու խելամիտ ժողովուրդներից մեկի...

Եթե դուք կարդաք Դիլոնի հոդվածը, ապա կտեսնեք, որ նա յուրաքանչյուր քայլի կենթարկվեր հերքման վտանգին, եթե նրա հաղորդումները ճիշտ ու ստույգ չլինեին։ Նա ձեզ տալիս է մասնակցող անձանց անունները, մատնանշում է տեղի ունեցած դեպքերի վայրն ու ժամանակը և նշում նկարագրվող իրադարձությունների ամեն մի մանրամասն, այնպես որ թուրքական կառավարությունը հնարավորություն ուներ ստուգել նրա հաղորդումները և դրանց անհավաստիության դեպքում նրան հրապարակայնորեն նշավակել։ Մինչդեռ Դիլոնի հոդվածները ոչ մի պաշտոնական հերքում չհարուցեցին։ Ես համարձակ հայտարարություն կանեմ, բայց կարտահայտեմ այն համոզմունքս, որ թուրքական կառավարության կողմից երբեք էլ չի լինի այնպիսի հերքում, որը խարխլի անձնական դիտարկումների հիման վրա Դիլոնի հաղորդած փաստերի արժանահավատությունը և ավերի այն պատկերը, որ նա նկարագրել է մեծագույն դժվարությամբ հավաքած նյութերի հիման վրա...

Օսմանյան կառավարության այդ գործելակերպը նոր չէ։ Այն ճիշտ նույնկերպ էր կիրառվում Բուլղարիայի նկատմամբ 1876 թ., այն բանից հետո, երբ գազանություններ էին կատարվել, որոնք հետագայում հաստատեց լորդ Քրոմերը, հետաքննություն անցկացնելով Անգլիայի կառավարության անունից։ Լոնդոնում Թուրքիայի դեսպանորդը այն ժամանակ իր կառավարության անունից շրջաբերական տարածեց (ես ունեմ այդ փաստաթղթի պատճենը), շրջաբերական, որը կտրականապես ժխտում էր բուլղարական գազանությունները։ Դեսպանորդի հավաստիացմամբ, բուլղար բնակչության մի որոշ մասը խախտել էր կարգ ու կանոնը, որն էլ հարկ էր զգացվել վերականգնել, բայց ջարդի մասին ամբողջ պատմությունը ծայրեծայր հորինված է։ Փաստերի ժխտումը թուրքական կառավարության զենքն էր, և նա շատ ջանադրաբար էր օգտվում դրանից։ Բայց տերությունները գիտեին, թե ում հետ գործ ունեին. Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը նշանակեցին անկողմնակալ պատվիրակներ և նրանց անցկացրած քննությունը լիովին հաստատեց մեղադրանքը։ Բայց օսմանյան կառավարությունը համակված էր

միայն մի ցանկությամբ՝ ճշմարտությունը թաքցնել կեղծիքով, խաբեությամբ ու քաշքշուկներով։ Այժմ արդեն անցել է մի քանի ամիս այն բանից հետո, երբ հանձնաժողովը իր հաշվետվությունը ներկայացրեց տվյալ ժամանակի վերաբերյալ։ Մինչ այդ էլ էր անցել մի քանի ամիս, և ես չեմ կարծում, որ այդ հապաղման մեղքն ընկնում էր կառավարությունների ու նրանց լիազորների վրա։ Որքան ինձ հայտնի է, ամիսները վատնվել էին այն բանի վրա, որ հաղթահարվեին բոլոր ձևական դժվարությունները և հնարավորություն ստանային ձեռնամուխ լինելու հետաքննությանը. թուրքերն ամեն քայլափոխի դժվարություններ էին հարուցում։ Այն բանից հետո, երբ լիազորները ներկայացրին իրենց զեկուցագիրը, սկսեցին երևալ զանազան լուրեր դրա ճակատագրի մասին. մերթ հաղորդվում էր, թե սուլթանը որոշել է այն հանձնել հատուկ կոմիտեի քննարկմանը, մերթ ասվում էր, թե նա մտադիր չէ դիմել զիջումների, մերթ պնդում էին, թե որոշ կետերում նա կզիջի, բայց կհրաժարվի բավարարել տերությունների մյուս պահանջները։ Իսկ մենք ինչի՞ վրա կարող ենք հույս դնել այդ գործում ինչ-որ բանի հասնելու համար։ Նախ և առաջ պետք է ձեզ հիշեցնեմ այդ հարցին առնչվող պայմանագրերը։ 1856 թվականի համաձայնագրերը տերություններին միանգամայն որոշակի և անվիճելի իրավունք էին տալիս մտնելու Հայաստան և իրենց ձեռքը վերցնելու այդ երկրի կառավարումը, քանի որ Թուրքիան խախտել էր այն խոստումները, որ նա ստանձնել էր Եվրոպայի հանդեպ։ Բացի այդ, մենք ունենք հատուկ իրավունք։ Անգլիան 1878 թվականին պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, ըստ որի օսմանյան կառավարությունը պարտավորվեց մի շարք բարենորոգումներ կատարել Հայաստանում, և եթե նույնիսկ այդ բարենորոգումների մի մասը անգամ կատարվեր, ապա անհնար կլինեին այն ահավոր իրադարձությունները, որոնց հետ գործ ունենք ներկայումս։

Բայց պայմանագրերը, որոշ իրավունքներ ընձեռելով, դրա հետ մեկտեղ նաև պարտականություններ են դնում։ Եթե դուք թուրքական կառավարությունից պահանջել եք պարտավորություններ, որ նա կվերացնի չարաշահումներն ու քաղաքացիական և կրոնական ազատություն կհաստատի, ապա այդ խոստումները չկատարելու դեպքում դուք պետք է միջոցներ ձեռք առնեք, որպեսզի ապահովեք դրանց իրականացումը։ Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը ներկայումս։ Վերջին հաղորդումները հան-

գում են նրան, որ սուլթանը զարմացած էր տերությունների կողմից իրեն ներկայացված պահանջների սահմանափակությունից, քանի որ նա ենթադրում է, որ կառավարման համակարգը խոշոր թերություններով է տառապում ոչ միայն Հայաստանում, այլև Թուրքիայի մյուս նահանգներում։ Այս հաղորդման իմաստն այն է, որ, սուլթանի կարծիքով, Հայաստանի համար Եվրոպայի պահանջած բարենորոգումները պետք է իրականացվեն ամբողջ կայսրությունում։ Բայց դա ի՞նչ է նշանակում։ Դա նշանակում է, որ սուլթանը կձեռնարկի հետաքննությունների մի անվերջ շարք և այդ կերպ կվերացնի այդ հարցը։ Թույլ տվեք ինձ այդ վիճակը պարզաբանել հետևյալ օրինակով։ Պատկերացրեք, որ մենք հավաքել ենք պառլամենտական որևէ ակտի անկատարելության բազում ապացույցներ և, մեր համոզմամբ, լուրջ փաստարկներ ենք ներկայացրել դրա բարենորոգման օգտին, և ահա երբ մենք այդ առաջարկություններով դիմում ենք ստորին պալատին կամ կառավարությանը, մեզ պատասխանում են. «Ոչ, ձեր պահանջը շատ նեղ է, միայն ա՛յդ օրենքը չի տառապում անկատարելությամբ»։ Նման պատասխանը կլինի տարօրինակ ու հրեշավոր. մինչդեռ օսմանյան կառավարությունը մշտապես դիմում է դրան, որպեսզի քողարկի այնպիսի սարսափներ, որպիսիների հետ գործ ունենք ներկայումս։ Այսպիսին է առաջին հաղորդումը, որը վերջերս հասավ մեզ։

Երկու օր առաջ լուր ստացվեց, թե օսմանյան կառավարությունը մտադիր է մերժել Հայաստանի վերաբերյալ առաջարկությունը, բայց համաձայն է զինաթափել քրդերին։ Ենթադրենք, թե դուք կբավարարվեք այդ զիջումով և կասեք. «Մենք չենք կարող ստանալ ամբողջը, դրա համար էլ կբավարարվենք մի մասով»։ Իսկ ի՞նչ տեղի կունենա։ Հավանաբար, 50 կամ 100 քրդերից կխլեն զենքը և այդ զենքը կտան ուրիշ, է՛լ ավելի վայրագ ավազակների։

Հարցի էությունը, ինչպես լավ հայտնի է օսմանյան կառավարությանը, հանգում է ոչ թե խոստումներին, այլ երաշխիքներին, որոնցով պայմանավորված է այդ խոստումների կատարումը։ Օրերս թերթերում հաղորդում երևաց, թե տերությունները, հուսահատվելով Թուրքերի քաշքշուկներից, որոշել են վերջ տալ այդ իրավիճակին։ Նրանք լիակատար իրավունք ունեն

Հայաստան ուղարկեր իրենց կոմիսարին և նրան լիազորել սուլթանի անունից՝ կառավարելու այդ երկիրը։ Այս լուրը հաղորդող թերթը նշում է, որ դա այնքան լավն է, որ հազիվ թե հավաստի լինի։ Ես իրավունք չունեմ ձեր առջև պնդելու, թե հիշյալ լուրը հավաստի է, բայց ես ամբողջ հոգով ցանկանում եմ, որ այն արդարանա։

Իմ կարծիքով, ամբողջ հարցը հանգում է երեք դրույթի. դրանցից առաջինի էությունն այն է, որ դուք պետք է չափավորեք ձեր պահանջները։ Դուք չպետք է պահանջեք ոչինչ, բացի իսկապես անհրաժեշտից, և, ինչքան մեզ հայտնի է, այս կանոնը ամենայն խստությամբ կիրառվել էր տերությունների առաջարկություններում։ Ես առանց տատանվելու կասեմ, որ հարցի ամենաճիշտ և ուղղակի լուծումը կլիներ Թուրքերի վտարումը Հայաստանից. նրանք իրավունք չունեն մնալու այնտեղ, բայց ամենևին հնարավոր չէ վստահ լինել, որ Եվրոպան կամ թեկուզ երեք տերություն համաձայնեին ներկայիս դժվարությունների նմանօրինակ լուծման։ Ուստի մի կողմ թողնենք բոլորը, բացի անպայմանորեն անհրաժեշտից։

Այժմ անցնում եմ մյուս երկու դրույթներին, որոնցից առաջինի էությունն այն է, որ դուք չընդունեք Թուրքական խոստումներից և ոչ մեկը. դրանք ոչ մի արժեք չունեն, դրանք անօգտակարից էլ վատ են, որովհետև դրանց հետևանքով որոշ անձինք, բավականաչափ իրազեկ չլինելով, մոլորության մեջ են ընկնում, կարծելով, թե Թուրքական կառավարությունը, խոստումներ տալով, մտադիր է կատարել դրանք։ Հիշեցեք, որ ոչ մի առաջարկություն արժանի չէ ուշադրության, եթե այն չի խարսխվում Թուրքական խոստումներից միանգամայն անկախ երաշխիքների վրա։ Մյուս հայտարարությունը, որը պետք է ձեզ անեմ, հանգում է հետևյալին. չվախենաք, եթե լսեք, որ սույն հարցը քննարկելիս մտցված է մի բառ, որն առհասարակ պետք է բացառվի դիվանագիտական հարաբերություններից. դա հարկադրանք բառն է։ Այն հիանալի են հասկանում Կոստանդնուպոլսում և բարձր են գնահատում։ Դա ուժգին գործող միջոց է, որը միշտ հանգեցնում է նպատակին, երբ այն կիրառում են Թուրքական գործերում։ Ես չէի խոսի այսպես, եթե անձամբ մեծ փորձ չունենայի այդ ասպարեզում։ Ես ասում եմ. դուք նախ և առաջ պետք է համոզվեք ձեր գործի արդարացիության մեջ և այդժամ որոշեք, որ ձեր նպատակը պետք է իրագործվի։ Այստեղ հար-

կավոր է փոքր-ինչ դիմել քերականությանը։ Հիշեցեք, որ «պարտավոր է» բառը ոչ մի նշանակություն և ուժ չունի Կոստանդնուպոլսում, և, ընդհակառակը, «պետք է» բառն այնտեղ հիանալի են հասկանում։ Փորձը, որը կարող է ստուգվել Եվրոպայի քարտեզով, ցույց է տալիս, որ այդ բառի ժամանակին կիրառումը երբեք անարդյունք չի մնում։

Տիկնա՛յք և պարոնա՛յք, ես պետք է ձեզ ասեմ, որ մենք հասել ենք իսկապես ճգնաժամային վիճակի։ Եվրոպական երեք մեծ կառավարություններ, որոնք կառավարում են 209 միլիոնանոց բնակչություն, որը ութ կամ տասը անգամ գերազանցում է Թուրքիայի բնակչությանը, կառավարություններ, որոնց միջոցները քսան անգամ ավելի են Թուրքական կայսրության միջոցներից, որոնց ազդեցությունն ու ուժը հիսուն անգամ գերազանցում են Թուրքիայի հզորությանը, այս հարցում որոշակի պարտավորություններ են ստանձնել. եթե նրանք ընկրկեն սուլթանի և օսմանյան կառավարության հակազդեցության պատճառով, նրանք կխայտառակվեն ամբողջ աշխարհի աչքում։ Պարտականության բոլոր դրդապատճառները այս դեպքում համընկնում են ինքնահարգման բոլոր շարժառիթների հետ...

Եթե մեր մեջ կենդանի է մարդասիրության գեթ թույլ զգացողություն, եթե մենք թանկ ենք գնահատում մեր արժանապատվությունը, ապա վերջին 12 կամ 18 ամսվա ընթացքում ձեռնարկված միջոցառումներից հետո մենք պետք է միջամտենք։ Մենք պետք է մեր պահանջները խստիվ սահմանափակենք միայն անպայմանորեն արդարացիով ու անհրաժեշտով, բայց որոշենք, որ այդ արդարացին ու անհրաժեշտը պետք է կատարվի։

Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, 2-ое изд., М., 1896, с. XVII—XXVIII.

86. Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՌԶԱ ՓԱՇԱՅԻՆ

Նամակ 15 օգոստոսի 1895 թ.

Համարձակվում եմ Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրել Սվազի վիլայեթի Գարահիսարի-Շարքիի սանջակի գյուղերում և, մանավանդ, Անդրեաս ու Թամզարա գյուղերում,

շարագործների կողմից նյութվող դաժանությունների վերաբերյալ իմ անունով ստացված գանգատների վրա։

Շտապում եմ բերել մի քանի փաստեր։

Անդրեաս գյուղում մուսուլմաններն սպանել են մի հայի, անունը՝ Սահակ Այվազյան։ Նույն տեղում սպանել են մի այլ հայի՝ Սահակ Կարաբեյանին, նետելով այն ժայռի գագաթից, որը հայտնի է Շեմշե անունով։ Նույն այդ գյուղում տասնութամյա Թուրք Մեհմեդը՝ դերվիշ Կարա-բալ-օղլիի որդին, դաշույնի հարվածով սպանել է մի հայ տղայի՝ Ազարիկին, տասնչորս տարեկան, Գալայջյանի որդուն։

Այնուհետև, մի քուրդ ավազակի կեղծ վկայությամբ, որը Կեսչե-Յուրդ գյուղի հայերին մեղադրել է իրեն վերջ հասցնելու և իր երկու հասակակիցներին սպանելու մեջ, ձերբակալվել են տասնմեկ հայեր, որոնց ենթարկել են կտտանքների, որպեսզի խոստովանեցնեն իրենց վերագրվող ոճրագործությունները։ Ձերբակալվածների հարազատները իմանալով, թե ինչ պայմաններում են իրենց հարազատները, քսանմեկ կառքով կազայի կենտրոն էին մեկնել արդարադատություն պահանջելու։

Հայտնում եմ նաև, որ Անդրեաս գյուղի մուսուլման բնակչությունը, հրահրված մոլեռանդ խոջաներից և ուլեմներից ու խրախուսված իշխանությունների անգործությունից՝ սպառնում է մորթել բոլոր քրիստոնյաներին։

Ինչ վերաբերում է Թամզարա գյուղի բնակչության բողոքներին, ապա ներքևում բերվող տվյալները սպառիչ կերպով բնութագրում են իրավիճակը։

Մի քանի թուրք խուլիգաններ ծեծել են մի հայուհու՝ փորձելով պատվազրկել նրան։ Ճչոցներ լսելով՝ հայերն շտապել են կնոջն օգնության հասնել։ Բռնացողները, որոնց միացել են գյուղի մուսուլման բնակիչները, դանակներով ու դաշույններով զինված, թափվել են հայերի վրա։ Այդ հարձակումը կասեցվել է միայն ոստիկանության միջամտությամբ, որը Թամզարա է ուղարկվել տեղական իշխանությունների կողմից։ Մի քանի վիրավորներ կամ ծեծվածներ կան հայերից։ Ցարսափով բռնված հայ բնակչությունը, սիրտ չանելով մնալ այս գյուղում, ստիպված է եղել փախչել ամենամոտ կենտրոնը, որտեղ և ապրում է ներկայումս՝ իր ճամբարը դնելով գերեզմանոցի շրջակայքում։ Մարդիկ տառապում են վատ եղանակից ու դատապարտված են անելանելի աղքատության։

Նշենք մանավանդ Սալիհ էֆենդու դեմ արվող գանգատները՝ Գարահիսարի-Շարքիի անշարժ գույքերի ցուցակները կազմող ու գնահատող գլխավոր պաշտոնյայի, որը բնակություն է հաստատել Թամզարայում։

Սպառնալիքներից ու զրպարտություններից բացի, որոնց դիմում է ծախու Սալիհ էֆենդին, նա հարկեր գանձելու պատրվակի տակ այդ գյուղերն է ուղարկում ոստիկանների, որոնք ծեծում ու բանտարկում են հայերին։ Հարկերի ամենաչնչին ապառքի համար Սալիհը հայերի ունեցվածքը մինչև վերջին թելը ծախծխում է ամենացածր գներով։

Չբավարարվելով իշխանության չարաշահումով, այդ պետական աստիճանավորը համարձակվում է խախտել ազնիվ բարքերը՝ ոտնձգություն կատարելով օրինավոր կանանց պատվի հանդեպ։

Այսպես, օրինակ, հայ Քերոբ Բոզարյանի կինը՝ Թամզարա գյուղի բնակչուհի, որը ներկայումս գործով գտնվում է Կերասունդում, Սալիհի լկտի հետապնդմանն է ենթարկվել և ստիպված է եղել լքել գյուղը՝ հետագա հետապնդումներից խուսափելու համար։ Լուր ստանալով այդ կնոջ մեկնման մասին, Սալիհը փորձել է նրան հետ դարձնել ճանապարհից, պնդելով, թե նա հարկի գծով պարտք ունի։ Նրա հետևից ուղարկվել է ձիավոր ոստիկան Մուստաֆան, որին հանձնարարված է եղել ձերբակալել կնոջը, բայց արիասիրտ կինը, իր պատիվն ամեն գնով պաշտպանելու վճռականությամբ լեցուն, հրաժարվել է հնազանդվել ոստիկանին, և այդպիսով նրան հաջողվել է հեռանալ։

Անշարժ գույքերի ցուցակագրման և գնահատման գլխավոր պաշտոնյայի այս արարքը, ինչպես և նրա կատարած այլ չարարկումներն ու դաժանությունները հայ բնակչությանը հասցրել են ծայրահեղ հուսահատության։ Բոլոր հայերը ստորագրել են և տվել համատեղ գանգատ։ Նրանք մեղադրում են Սալիհին ու գյուղի մյուդիրին, ինչպես և մյուդիրի եղբայր Մուհարրեմին ու ոստիկաններին։ Հանձնարարություն ունենալով հետևել կարգուկանոնին՝ այս մարդիկ, Սալիհի գործողություններից խրախուսված, չարաշահումներ են անում։

Պատրիարքարանին տրված գանգատներում ցավով արձանագրվում է, որ նշված դիմումը արդյունքներ չի տվել։

Ցավում եմ, որ այս բողոքներին ստիպված եմ կցել նաև Գարահիսարի-Շարքիի վիճակի մասին տեղեկություններ՝ ամփոփված զանազան զեկույցներում և այն հեռագրի պատճենում, որի բնագիրը ուղարկված լինելով պատրիարքարանի հասցեով, ինչպես և՝ մեծ վեզիրությանն ու Սվազի վիլայեթին, պատրիարքարանը չի ստացել։

Համաձայն այդ տեղեկությունների, Գարահիսարի-Շարքիի հայերը սիրտ չեն անում տներից դուրս գալ՝ վախենալով իրենց կյանքի համար։ Եկեղեցին փակ է և ժամասացություն այլևս չի կատարվում։

Իմ կողմից արդեն հեռագրով կարգադրություններ են արված համապատասխան անձանց՝ եկեղեցին բացելու և ժամասացությունը վերսկսելու մասին։

Ի նկատի ունենալով, որ դրությունը, համաձայն տեղեկությունների ու բողոքների, ավելի ու ավելի է լրջանում, համարձակվում եմ Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրել այս փաստերի վրա...

Մատթեոս Իզմիրլյան

АВПР. Политархив, д. 1416.

87. ՄԱՐԶՎԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՄՍՈՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՆԱԼՅՈՏՈՎԻՆ

Նամակից — Մարզվան, 9 նոյեմբերի 1895 թ.

1895 թ. նոյեմբերի 3/15-ը՝ ուրբաթ օրը, մեր քաղաքի համար սև օր դարձավ, վշտալի ու սարսափելի օր։ Այդ օրը Թուրքիան իր արյունոտ պատմությունը հարստացրեց ևս մի «փառավոր» էջով, արյունոտ էջով, գրված սև տառերով՝ ի սոսկումն և ի վրդովմունք համայն քաղաքակիրթ աշխարհի... Թուրքիան մեկ անգամ ևս իր արյունոտ գահն օծեց բազմաթիվ անմեղ քրիստոնյաների արյամբ։ Օ՜, գոնե այլևս չկրկնվեն այս տանջանքներն ու տառապանքները, որոնք անընդհատ կրում են հայերը։ Գոնե մեկընդմիշտ լուծվեր Հայկական հարցը, որպեսզի քաղաքակիրթ եվրոպական տերություններն այլևս չլսեին այսքան նողկալի իրադարձությունների մասին։

Հիշյալ օրը մենք բոլորս, սովորականի պես, ոչինչ չկասկածելով, գնացինք շուկա՝ մեր կրպակները, բացեցինք և սկսեցինք զբաղվել մեր գործերով։ Կեսօրից քիչ առաջ ոստիկանապետ

Թևֆիկը իր ոստիկաններով մտավ իրեն մոտիկ հայերի կրպակները և նրանց գաղտնի նախազգուշացրեց սպառնացող վտանգի մասին, որից հետո նրանք անհապաղ փակեցին իրենց կրպակները և գնացին։ Այդ նույն օրը կայմակամի աղջիկը իր հայ աղախնին հայտնել էր, թե հայերին այսօր կոտորելու են։ Խանութպաններն սկսեցին ինչ-որ բան կասկածել, մանավանդ այն բանից հետո, երբ թուրքերը, որոնք գնում էին իրենց մեչիդները կեսօրվա աղոթքն անելու, սկսեցին փակել իրենց կրպակները (նրանք սովորաբար միայն ծածկում էին վարագույրներով)։ Մի քանի վաճառականներ ու արհեստավորներ նույնպես շտապեցին փակել իրենց խանութներն ու կրպակները և տուն գնալ, բայց այդ ժամանակ շուկայում նորից երևաց ոստիկանապետը իր ոստիկաններով և թույլ չտվեց փակել կրպակները, ասելով. «Ձեր արարքով դուք ապի՛թ եք տալիս, որ խռովություն ծագի»։ Հենց որ ավարտվեց կեսօրվա աղոթքը, թուրքերի մեծաթիվ մի ամբոխ, զինված խանչալներով, սվիններով ու կացիններով, դուրս եկավ մեչիդից, նրան միացան զորանոցից եկած զորամասը, ինչպես և՝ մերձակա գյուղերի թուրքերը։ Այս ամբողջ ամբոխը իր դարանից դուրս նետվելով՝ հանկարծակի հարձակվեց շուկայի վրա և շեփորների խլացուցիչ շաչյունների տակ սրբեց տարավ իր ճանապարհին եղած ամեն ինչ՝ սպանելով ամեն հայի, առանց տարիքի ու սեռի խտրության՝ ծերերի, երիտասարդների, երեխաների, կանանց։ Հենց նույն ժամանակ թուրքերը թալանում էին ու ջարդուխուրդ անում հայերի կրպակները։ Բոլոր թալանված ապրանքները զորամասերի պահպանությամբ կրում տանում էին սայլերով ու ջորիներով։ Ամբողջ շուկայում անվնաս մնացին միայն թուրքերի ու հույների կրպակները (մեր քաղաքում մրգավաճառների 3 հունական և 30 թուրքական կրպակներ կան, մնացած բոլոր առևտուրն ու արհեստները հայերի ձեռքին են)։ Սարսափելի ջարդ եղավ և կողոպուտ։ Կրպակներում արժեքավոր ոչինչ չմնաց. հափշտակել են նույնիսկ կոշկակարների փայտե կաղապարներն ու հացավաճառների ցախը, իսկ մնացած ամեն ինչը, որ պիտանի չեն համարել, ջարդել-փշրել են։ Այդ օրը ջարդ ու թալանի ենթարկվեցին նաև քաղաքի թուրքական թաղամասի հայերի տները, իսկ բնակիչները մորթվեցին։ Փորձեր արվեցին հարձակվելու նաև հայկական թաղամասերի վրա, բայց հայ բնակիչների կատաղի դիմադրության շնորհիվ ջարդարարներին չհաջողվեց թափանցել քաղաքի հայկական թաղի խորքը։ Այս ալան-թալանը մենք դիտում էինք հեռվից՝ մեր տներից, և մեր սրտից արյուն էր հոսում։ Մենք զգում էինք, որ մեր քաղաքի հայերը լրիվ կորցնում են իրենց ունեցվածքը։ Իմանալով տեղի ունեցած կոտորածի մասին՝ մենք ոչնչով չէինք կարողանում օգնել գործին և խելամտորեն որոշեցինք, ավելորդ զոհերից խուսափելու համար, լռություն պահպանել։ Երեկոյան 11-ի մոտերքը, երբ շուկայում ոչինչ չէր մնացել, այդտեղ եկավ մեր անվտանգության մասին «հոգացող» կայմակամը՝ ոստիկանների հետ։ Խղճի խայթ չզգալով, ներքին բավականության զգացումով այն մարդու, որը կատարել է իր բարձր պարտականությունը՝ նա քայլում էր դիակների վրայով և մի կողմ քշում հատ ու կենտ ուշացած թուրքերին։ Այս ընդհանուր ջարդից խուսափեց միայն Թաշխանի շրջանը, որտեղ ապաստան էին գտել մոտ 40 հայեր, որոնց զինվորականների և ոստիկանների ուղեկցությամբ կայմակամն ուղարկել էր հայկական եկեղեցին։ Վիրավորները, որոնք չեն կարողացել իրենց տները հասնել և մնացել են շուկայում, սպանվել են զինվորների ձեռքով, որոնց այստեղ էին թողել իբրև թե պահպանություն ապահովելու համար։ Այս սպանությունները տեսել են այն հայերը, որոնք թաքնված են եղել ապաստարաններում և պատրաստ են երդմամբ հաստատել այս փաստը։

Ուրբաթ լույս շաբաթ գիշերը մեր քաղաքի թուրքերի համար եղավ բերկրանքի ու տոնակատարության գիշեր, իսկ հայերի համար՝ սուգ ու արցունքի գիշեր։ Յուրաքանչյուր ընտանիքում կորուստ կար. մեկն իր սիրելի որդուն էր փնտրում, մեկը կորած ամուսնու մասին էր հարցուփորձ անում, մեկն՝ իր եղբոր և այլն։ Եվ յուրաքանչյուրն սպասում էր լուսաբացին, հուսալով, թե կգտնի մերձավորին, բայց, ավա՜ղ, հաջորդ օրվա լուսաբացը է՛լ ավելի սաստկացրեց նրանց վիշտը, քանզի շուկայում հայտնաբերվել էին միայն դիակներ։ Դրանք այն մարդկանց դիակներն էին, որոնք մի օր առաջ զբաղված էին իրենց խաղաղ գործերով և փառաբանում էին ամենաբարձրյալին՝ իր բարերարության համար։

Շաբաթ օրը՝ նոյեմբերի 4-ին, վաղ առավոտյան, երբ հայերի տները դեռևս շրջափակման մեջ են եղել և ոչ ոք սիրտ չի արել շեմքը դուրս գալ, կայմակամը և ոստիկանապետն իր ոստիկաններով եկել են շուկա և կարգադրել են դիակները բարձել այն սայլերին, որոնք աղբ են կրում և ամեն կարգի աղտեղու-

թյուններ։ Դիակները կրել տարել են հայկական գերեզմանոցը, գարսել են չորս շարքով և թաղել մեծ փոսում։ Այդ նպատակով պահակախմբով հայեր են բերել։ Դիակները թաղել են առանց անունները գրանցելու, առանց բժշկական զննության։ Օ՜, ինչպիսի՜ անհանդուրժելի բարբարոսություն, ինչպիսի՜ մեծ ոճրագործություն, ինչպիսի՜ դաժանություն։ Մենք նույնիսկ զրկված էինք մեր մեռելներին ողբալու և հրաժեշտի առթիվ նրանց սառը ճակատները համբուրելու հնարավորությունից։ Ինչպիսի՜ սարսափելի հանդգնություն ու բռնություն թուրքերի կողմից, որոնք համարձակվում են պղծել մեր կրոնական սովորույթները և ստիպում են, առանց կրոնական ծեսերի, ինչպես անասունների, հողին հանձնել մեր մեռելներին։ Ամո՜թ, հազա՜ր ամոթ ու անարգանք թուրք կառավարությանը, որն իրեն համարելով աստվածապաշտ՝ թույլ է տալիս այսքան սարսափելի և աղաղակող հանցագործություններ, որոնք աներևակայելի են նույնիսկ հեթանոսական երկրներում...

Հայերն սպանվել են դաժան ու սարսափելի մահով։ Մահակներով ջարդելուց ու գնդակահարելուց հետո, թուրքերը խանչալներով կտրել են նրանց գլուխները և մարմնի մյուս մասերը, բազմաթիվ վերքեր հասցրել։ Դիակներն այնքան այլանդակված էին, որ անհնար էր ճանաչել։ Եթե մոտիկ ժամանակներս այստեղ՝ մեզ մոտ գա անաչառ մի հետաքննիչ, ապա նա, անկասկած, կհաստատի մեր խոսքերի ճշտությունը։

Հայ գերեզմանափորների հաշվարկով, սպանվածների թիվը կազմում է. 80 տղամարդ, 13 երեխա և 5 կին։ Այս թվի մեջ չեն մտնում քաղաքի սահմաններից դուրս՝ դաշտերում, այգիներում և թուրքական գյուղերում սպանվածները։ Սրանց թիվը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, զգալիորեն ավելի է։ Ներկայումս վիրավորները մոտ 500 հոգի են, մեծ մասը ծանր վիճակում է, օրական մահանում են 4—6 հոգի։ Իշխանությունների դաժանությունն այն աստիճանի է հասել, որ նրանք արգելել են վիրավորներին դեղ հասցնելը։ Ինչ վերաբերում է նյութական վնասներին, ապա առայժմ կարող ենք բերել հետևյալ տվյալները. ավերվել և թալանվել են հայերի 150 կրպակներ, ընդհանուր կորուստները զգալիորեն անցնում են 150 000 ոսկուց, իսկ մուրհակների և հաշվեմատյանների հափշտակումից առաջացած կորուստները առայժմ դժվար է սահմանել։

Կառավարությունը մինչև այժմ ոչ մի միջոց չի ձեռնարկել,

որպեսզի մեզ դուրս բերի այս անտանելի վիճակից։ Մենք դեռևս շարունակում ենք մնալ պաշարման վիճակի մեջ։ Շատ ընտանիքներ, բացի այն, որ զրկվել են իրենց սիրելիներից, ներկայումս մնացել են առանց հաց ու ջրի և ամեն բանի կարիք ունեն։ Նույնիսկ դադարեցված է ջրի մատակարարումը հայկական թաղերին։ Եվ եթե այս վիճակը թեկուզ մի քիչ էլ շարունակվի, շատերը սովից կմեռնեն...

Ուստի մենք, արցունքն աչքներիս, ամբողջովին հանձնվում ենք Ձերդ ողորմածությանը և աղերսում, որ, հանուն քրիստոնեության, հանուն մարդկայնության, Ձեր միջամտությամբ փրկեք մեզ այս ծանրագույն ու տագնապալի վիճակից, հակառակ դեպքում, մոտիկ ապագայում դուք կիմանաք այն մասին, որ Մարզվանում կենդանի չի մնացել ոչ մի հայ։

Բացառված չէ, որ թուրքական կառավարությունը իրեն հատուկ անամոթությամբ փորձի ժխտել իր մեղքը և այդ ծանր իրադարձությունների ողջ պատասխանատվությունն ու մեղքը բարդի հայերի վրա, բայց ամեն դեպքում ու հանգամանքներում մենք պատրաստ ենք ապացուցելու, որ այս կոտորածի կազմակերպիչը կառավարությունն է։ Մենք ունենք բազմաթիվ հավաստի փաստեր և անհերքելի ապացույցներ, որոնք օրվա լույսի պես պարզ են և կարող են հաստատել, որ այդ կոտորածը կանխամտածված գործողությունների հետևանք է։

Ելնելով այս ամենից, մենք խնդրում ենք մեր քաղաքն ուղարկել հետաքննիչ հանձնախումբ՝ կազմված տարբեր ազգերի և օտարահպատակ քաղաքացիների ներկայացուցիչներից։ Այնժամ հնարավոր կլինի որոշել, որ մեր այս հաղորդագրությունը հանդիսանում է սոսկ մի փոքր մասի նվազեցված նկարագրությունն այն բոլոր ոճրագործությունների, որոնք գործել են թուրքական կառավարությունն ու թուրք խաժամուժը։

Այն ժամանակ, երբ մենք ավարտում էինք սույն դիմումը, լուր ստացանք, թե մեր քաղաքն է ժամանել մի հանձնախումբ՝ Աբդուլլա փաշայի նախագահությամբ։ Մենք անհապաղ կազմեցինք թուրքերեն մի բացատրագիր տեղի ունեցած իրադարձությունների մասին, որպեսզի հանձնեինք հանձնախմբին։ Նոյեմբերի 8-ին, չորեքշաբթի օրը, հիշյալ հանձնախումբը ժամանեց քաղաք և իջևանեց կառավարական շենքում։ Ցերեկվա ժամը 12-ին մի քանի երևելի անձինք և հայ հոգևորականության ներկայացուցիչներ ունկնդրություն խնդրեցին այդ հանձնախմբ-

քից, որպեսզի հանձնեին տեղեկագիրը։ Ունկնդրության ժամանակ Աբդուլլա փաշան, առանց կարդալու մեր տեղեկագիրը, դայրացած հայտարարեց. «Հայերին հնազանդեցնելու համար Թուրքական կառավարությունը հավաքել է 150 հազար զինվոր և մտադիր է ոչնչացնել բոլոր հայերին, որպեսզի վերականգնվի կարգուկանոնն ու անդորրը» (ստացվում է այնպես, որ իբրև թե մենք ապստամբել ենք Թուրքական կառավարության դեմ)... Այս ասելով, Աբդուլլա փաշան դուրս վռնդեց մեր հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներին՝ Թույլ չտալով, որ որևէ խոսք ասեն։

Հանձնախումբն այսօր առավոտյան մեկնեց քաղաքից՝ չանելով բացարձակապես ոչ մի կարգադրություն։

Ողորմա՜ծ տեր, ներկայումս մենք բոլորովին գլուխներս կորցրել ենք ու շվարել։ Չգիտենք ինչ անենք։ Մեր հույսը միայն դուք եք։ Միայն ձեզնից է կախված մեր կյանքի անվտանգությունը։

Ահա թե ինչու մենք աղերսում ենք Ձեզ. անուշադիր մի՛ թողեք մեր դիմումը և բարեհաճեք մեզ դուրս բերել այս ահավոր դրությունից ու փրկել։

Անհամբեր ու հուզմունքով սպասելով Ձեր մարդասիրական հոգատարությանը՝ մնանք խոնարհագույն հարգանքով։

Մարզվանի ամբողջ հայ բնակչության անունից։

[Ստորագրություններ և կնիք]

АВПР, Посольство в Константинополе, д. 3181, л. 38.

88. ՁԱՐՍԱՆՋԱԿԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՄՍՈՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՆԱԼՅՈՏՈՎԻՆ

28 Սեպտեմբերի 1895 թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ձարսանջակում ապրող հայ բնակչության անունից համարձակվում ենք, հանուն մարդասիրության և քրիստոնեական սիրո, խնդրել Ձերդ գերազանցությանը բարեհաճել ներկայացնելու մեր թախանձագին խնդրանքը Ձեր բարձր կառավարությանը, ազերսելով, որ նա անհապաղ իր հզոր հովանավորության, իր պաշտպանության տակ առնի

քրիստոնյա բնակչությանը, որն իր գոյության վերջին ժամերն ու րոպեներն է ապրում՝ մեր նկատմամբ Թուրք բնակչության ու կառավարության թշնամական վերաբերմունքի հետևանքով։

Ա՜խ, երանի կարողանայինք պատմել այն բազմաթիվ (զարտուղի ճանապարհներով մեզ հասցեագրված) սպառնալիքների և կամ այն դիվային ծրագրերի մասին, որ մտմտում են նրանք գիշերները։ Հայը զրկված է ինքնապաշտպանության որևէ միջոցից և բառիս բուն իմաստով նման է կապված ու սպանդանոց ուղարկված ոչխարի, չխոսելով արդեն այն մասին, որ Թուրքական կառավարությունը, ինչպես և Թուրք բնակչությունը, վայրկենական քմահաճույքի դրդմամբ պատրաստ են մորթել այդ ոչխարին՝ չվախենալով որևէ պատժից կամ խոշընդոտից։ Մի խոսքով, մեզ հասած տեղեկությունների համաձայն, Թուրք խաժամուժը, խրախուսված կառավարության կողմից՝ սպասում է աննշան առիթի, որպեսզի մի քանի օր հետո տեղացի հայերին բախտակից դարձնի մյուս քաղաքների հայերին, որոնք ենթարկվեցին անողորմ կոտորածի։

Ուստի, Ձե՛րդ գերազանցություն, ստանալով մեր լալագին դիմումը, բարեհաճեք անհապաղ միջնորդել Ձեր բարձր կառավարության առաջ, որպեսզի նա իր հզոր պաշտպանությամբ ստույգ ոչնչացման սպառնալիքից փրկի 1700 գերդաստանների՝ ներառյալ նաև գյուղերի բնակիչներին, որոնք սպասում են նրա ամենագթառատ օգնությանը։

(13 ստորագրություն)

АВПР, Посольство в Константинополе, д. 3181, л. 48.

89. ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՑ՝ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ

Խարբերդ, 14 դեկտեմբերի 1895 թ.

Խարբերդում ու նրա շրջակայքում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունները հետևանք են վերևից եկած հրամանի, որն իրականացվում է մաքիավելիական հնարների կիրառումով գեներալ-նահանգապետի ժամանակավոր պաշտոնակատար Մուստաֆա փաշայի և զինվորական պարետ Ռահիբ փաշայի կողմից։

Օգոստոսին Ռահիբ փաշան խաղաղություն հաստատեց քրի-

թյուններին հայտնեին կատարվածի մասին։ Բայց այս միջոցառումը, ինչպես և հայ արքեպիսկոպոսի գործողությունները, ապարդյուն դուրս եկան՝ կառավարության անպատասխանատու վարքագծի հետևանքով, որը սահմանափակվեց սոսկ կեղծ խոստումներով, դրանով ապացուցելով իր մասնակցությունը կոտորածին։

Նույն օրվա երեկոյան քրդերը ձեռնարկեցին նոր հարձակում Բերդակի և Կուզու-Օվայի գյուղերի վրա, դրանց հետ նաև՝ Հարսիկի, Ճորկուխի, Կորնեի, Բեգլուշենի, Կուլկուխի և այլն։ Ամենուրեք բնակիչները կամ սպանվել են, կամ վիրավորվել, իսկ մնացածներին բռնի մուսուլմանացրել են։ Բնակելի տները և այլ շինությունները հրդեհված են։ Քահանաները և դպրոցական ուսուցիչները նույնպես զոհ են գնացել կոտորածին, նրանց մարմինները փրթել են, կտոր-կտոր արել, եկեղեցիները պղծել են։ Մի խոսքով՝ ամբողջ երկրամասը ավերակի է վերածվել։

Հրոսակապետներից մեկը՝ Սուլեյման բեյը, և նրա եղբայրը, որոնք մինչ այդ արդեն հռչակված էին քրիստոնյաների հանդեպ իրենց դաժան վերաբերմունքով, այս անգամ աչքի ընկան նոր գազանություններով. պնդում են, թե նրանք անասունի պես խողխողում էին ամեն մի ձեռքն ընկած հայի։ Ըստ հավաստի տեղեկությունների, նրանց ձեռքով կամ նրանց հրամանով սպանվել են 300-ից ավելի հայեր։

Այն ժամանակ, երբ Բերդակում ու դրա շրջակայքում կատարվում էր այս ավազակային հարձակումը, հորդաները շարժվում էին դեպի Ուլուլ-Օվա, Զիշմեից մինչև Ուլուլ-Օվա ընկած իրենց ճանապարհին կատարելով ոչ պակաս գազանային ոճրագործություններ։ Զիշմեում խնայվել էր քառասուն անվանի հայերի կյանքը, որոնց թույլ էին տվել ապաստանելու եկեղեցում։ Սակայն մի շաբաթ անց, շեյխերից մեկը դատապարտելով այդ քառասուն հայերի հանդեպ դրսևորված չափավորությունը՝ նրանց առաջարկեց մահմեդականություն ընդունել։ Հայերը հրաժարվեցին։ Շեյխը հրամայեց, որ նրանց մեկը մյուսի հետևից սպանեն եկեղեցու շեմքին։ Նա եկեղեցու մոնթին և մի ուրիշ հայի ստիպեց ներկա լինել այդ սպանությանը, իսկ ապա կարգադրեց, որ նրանք դիակները ոտներին թոկ գցած քարշ տան տանեն դեպի գետը։ Շեյխն այդ բանը բացատրել էր, թե՝ «շուն գյավուրներին ձեռք տալ չեմ ուզում, որ չպղծվեմ»։

Բուզսուում բնակիչները, պաշտպանվելով ավազակներից,

դական բեյերի և շրջակա ցեղերի ու գյուղերի աղաների միջև՝ հուսալով նրանցից օգնություն ստանալ ծրագրված կոտորածի ժամանակ։ Հաշտեցումը տեղի ունեցավ Ռահիբ փաշայի և Մուստաֆա փաշայի կողմից գյուղերն ու ցեղերի քոչերը շրջագայելիս։ Քուրդ ցեղապետները և քուրդ մեծամեծները, որոնք այս կամ այն պատճառով գտնվում էին բանտերում, ազատ արձակվեցին։ Այս բոլոր անձինք ցուցումներ ստացան կոտորածի իրագործման վերաբերյալ։

Այդ հաշտեցումից և կալանավորների արձակումից մի քանի օր անց, կատարվեց Մարտին սիստեմի հրացանների համատարած բաշխում քրդերի միջև։ Զենքը վերցնում էին զինվորական պահեստներից։ Խարբերդի և Արաբկիրի զինվորական կայազորները փոխարինվեցին մեկը մյուսով։ Այսպիսով, կոտորածի մասնակիցները պետք է անճանաչ մնային այդ երկու կարևոր կետերի բնակիչներին։ Մոբիլիզացվել էին ռեդիֆներ՝ իբրև թե հայերին պաշտպանելու համար։ Սակայն այդ ռեդիֆների նշանակալի մասը գիշերով զգեստափոխվեց՝ հագնելով գեղջկական շորեր, և ուղարկվեց գյուղերը ամեն կարգի ալան-թալանի համար։ Մյուս կողմից էլ՝ գյուղացիներին զինվորական համազգեստ էին հագցրել, հրամայելով հարձակվել հայերի վրա ու ոչնչացնել նրանց։ Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթում կոտորածն սկսվեց Բերդակ գյուղի վրա (Զարսանջակի գավառ) տեղի ունեցած հարձակումով։ Դա կատարվեց հին տոմարով հոկտեմբերի 10-ին։

Բերդակի բնակչությունը, քրդերի մտադրությանը տեղյակ լինելով, քաջաբար կռվեց և հարձակվողներին ստիպեց նահանջել։ Բայց ոստիկանները թակարդ լարեցին. նրանք խոստացան հայերին պաշտպանել, եթե ոստիկաններին թույլ տային մտնել իրենց տները։ Հայերը դժբախտություն ունեցան հավատալու պետական ներկայացուցիչների խոսքերին, իսկ վերջիններս, տները հազիվ մտած, իրենց հորդային հրամայեցին հարձակվել բնակիչների վրա։ Սկսվեցին բարբարոսական կոտորածն ու թալանը։ Դրանով չբավարարվելով՝ մարդասպաններն ու թալանչիները հրդեհեցին մի շարք տներ։ Բնակիչներից նրանք, ովքեր խուսափել էին կոտորածից, բռնի մահմեդականացվել են։

Թիլ գյուղի հայերը իմանալով Բերդակ գյուղի վրա կատարված հարձակման մասին, իրենց մի քանի ներկայացուցիչներին հապշտապ ուղարկեցին Մեզրե, որպեսզի տեղական իշխանու-

Կարողացան երեք օր նրանց պահել պատկառելի հեռավորության վրա, բայց հետո հարձակվողներին օգնության հասան կանոնավոր զորքերը և նրանց հետ ներխուժելով գյուղը՝ սկսեցին կոտորածը։

Հայերը թաքնված են եղել եկեղեցում՝ իրենց միակ ապաստարանում, բայց հարձակվողները եկեղեցին այնպես են շրջթայել, որ ոչ ոք չի կարողացել փախչել, և եկեղեցին այրել են։ Հայերի մի մասը կրակի զոհ է դարձել։ Նրանք, ովքեր փորձել են փախչել, դաշույնից են ընկել։ Կենդանի մնացածներին զոռով մահմեդականացրել են։ Առևանգված ջահել կանայք և աղջիկները պատվաղրկվել են։

Ծովքում բնակչությունն արդեն իմացած լինելով շրջակայքում կատարված գազանությունների մասին՝ լքեց գյուղը։ Ջարդարարները Ծովքում չգտնելով ոչ մի կենդանի շունչ, տները հրդեհեցին և թալանեցին, տարան այն ամենը, ինչ կարող էին։ Երկու շաբաթ անց գյուղացիները վերադարձան Ծովք՝ հավատալով կառավարության խոստումներին, բայց հենց որ գյուղ մտան, նոր հարձակման ենթարկվեցին։ Սկսվեցին սարսափելի կոտորածն ու կողոպուտը։

Կոկուլուում բնակչությունը որոշել էր պաշտպանվել 2000-հոգանոց բաշիբոզուկների հորդայից։ Բայց ի՞նչ կարող էին անել գյուղացիները ավազակների հանդիման, որոնց առատորեն բաշխված էին զենք ու զինամթերք։

Դաժան հարձակման ենթարկվելով՝ խաղաղ բնակիչները ստիպված եղան փախուստի դիմել։ Ջարդարարները գյուղն ամբողջովին կողոպտեցին, ավերակների վերածեցին։ Նրանց պետը, որը զինվորական էր, նրանց հրամայեց մի քանի բիդոն կերոսին ճարել և վառել Կոկուլու, Գոմք և Դադեմ գյուղերը։ Կոկուլուի եկեղեցու քահանային ողջ-ողջ այրել են, Դադեմի եկեղեցու քահանային սպանել և կտոր-կտոր արել։

Այս գյուղում հրոսակապետ Հաջի Բեգոն հրեշավոր դաժանություն է դրսևորել. հրամայել է չորս մասի բաժանել մի կնոջ և նրա մարմնի մասերը կախել սյուներից ի տես ամենքի։ Այս դահճի հրամանով մի այլ կնոջ մերկացրել են և պտտեցրել գյուղում։ Ասում են, նա իր ձեռքով սպանել է մոտ հարյուր հոգու։ Գյուղը միանգամայն թալանված է, ջարդարարները տարել են ամեն ինչ, ընդհուպ մինչև շենափայտերը, գոնեքի փականները և այլն։

Դադեմի վանքում հայ Պողոս էֆենդուն, Փերշինչ գյուղից, սպանել են, մարմինը կտոր-կտոր արել։

Բարձրահայաց վանքի վարդապետ Հովհաննեսին առաջարկել են հրաժարվել իր հավատից։ Նա երկու ժամ ժամանակ է խնդրել մտորելու համար։ Նրա խնդրանքը բավարարել են։ Եվ այս սուրբ մարդն սկսել է աղոթել աստծուն՝ արցունք թափելով։ Ներկա գտնվող ջարդարարները որոշել են չսպասել նրան տրամադրված ժամկետի լրանալուն։ Նետվելով դժբախտի վրա՝ նրանք սկսել են կտրել նրա ձեռքերը՝ հոդ առ հոդ։ Հասնելով արմունկին՝ դահիճները նորից են վարդապետին առաջարկել մուսուլմանական կրոն ընդունել։ Վերջինս հանգիստ ասել է. «Ես հավատում եմ հայր աստծուն, Հիսուս Քրիստոսին՝ նրա որդուն և սուրբ հոգուն»։ Լսելով այսպիսի պատասխան՝ ավազակները վերջնականապես գազազել են. նրանք վարդապետին բերել են եկեղեցու շեմքը և այնտեղ վերջը տվել՝ կտրելով կոկորդը։

Վանքը թալանել են, ապա այրել։ Կողոպուտների և հրդեհների այսպիսի փաստեր կրկնվել են համարյա բոլոր վանքերում։

Կեսարիկում կոտորածից երկու օր առաջ Թուրք բնակչությունը, մոտ 300 հոգի, շրջապատեցին ոմն Ցաղջյանի տունը այն պատրվակով, որ նրա մոտ իբր թե դինամիտ կա։ Ցաղջյանի տան անդամները և Կեսարիկի հայ բնակչությունը որոշելով, որ այս հարձակումը ամբոխի ինքնակամ ձեռնարկումն է, սկսեցին եռանդուն պաշտպանվել։ Թուրքերն շտապեցին լուր տալ գավառական իշխանություններին, որոնք զինվորներ ուղարկեցին Կեսարիկ, ուղարկեցին նաև հայ Գևորգ Ջաֆարյանին՝ հայերին համոզելու, որ զենքը ցած դնեն ի նշան կառավարության հանդեպ հնազանդության։ Հավատալով իշխանությունների խոսքերին՝ հայերը հանձնեցին զենքերը, բայց հենց որ զինվորները զենքերը հավաքեցին և հեռացան գյուղից, տեղի ունեցավ նոր արյունոտ ասպատակություն։

Անհնար է թվարկել այն բոլոր դաժան արարքները, որոնք կատարվել են այս գյուղում։ Լուսանկարիչ Մարտիրոսին ողջողջ այրել են, նրա մորուքին կերոսին են լցրել և կրակ տվել, նրա կնոջն սպանել են։ Մի Թուրք հացավաճառ հայտարարել է, թե ինքն սպանել է իննսունյոթ հայերի և պարծեցել է, թե դեռ երեքին էլ պիտի սպանի, որպեսզի թիվը կլորացնի հացնի հար-

յուրի։ Սպանելիս նա իր զոհերին անասելի տանջանքների է ենթարկել, նախապես կտրել քթերը, ականջները և այլն։

Ողջ-ողջ այրել են հայոց եկեղեցու մի քահանայի, մի ուրիշին բռնի մահմեդականացրել են՝ ստիպելով չալմա կապել։

Բնակիչները, փորձելով փախչել-ազատվել այս սարսափներից, սպանվել են զինվորների ձեռքով, որոնք տեղավորված են եղել գյուղի շրջակայքում։ Այսպիսով հայերին կոտորելու ու նրանց ունեցվածքը թալանելու մասին վերևից եկած հրամանը ի կատար է ածվել ամենայն ջանադրությամբ։

Հուսեյնիկում տեղական իշխանությունները և քուրդ հրոսակապետները հայերին առաջարկեցին զենքերը հանձնել իշխանություններին ի նշան հնազանդության։ Հայերը դրան պատասխանեցին իրենց կյանքի և ինչքի անվտանգության ապահովության խնդրանքով։ Կառավարական պաշտոնյաները, բեյերն ու քուրդ մեծամեծները երդվեցին իրենց մարգարեով և հայերին համոզեցին, թե այլևս ոչ ոք նրանց ձեռք չի տա։ Հայերը իրենց զենքի մեծ մասը հանձնեցին։ Այնժամ թուրքերն ու քրդերը իջեցրին հայկական եկեղեցու զանգը, գլորելով տարան գետափ և նետեցին ջուրը։ Նրանք հայտարարել էին, թե հայերի վարքը ցույց կտա, իրո՞ք հնազանդվել են, թե՞ մտադիր են բողոքել իրենց այդ չնչին արտոնության խախտման դեմ։ Որոշելով կանխել իրենց սպառնացող վտանգը, հայերը շատ հանգիստ վերաբերվեցին այդ ամենին։ Չնայած դրան, հաջորդ օրը ժամանեց կանոնավոր բանակի զինվորների մի գունդ՝ Հուսեյնիկը պաշարելու համար։ Զինվորների մի ջոկատ գրավեց Հուսեյնիկի ամրոցը։ Կոտորածի ազդանշանն եղավ փողերի ջայլունը։ Թուրքերն ու քրդերը միասին սկսեցին սպանել քրիստոնյաներին։ Շատ կարճ ժամանակում սպանեցին ութ հարյուր հոգու։ Հայեր Գրիգոր Կերկերջյանը և Տիգրան Նախիկյանը գազանաբար մորթվեցին։ Դահիճներն սպանեցին հայոց եկեղեցու քահանա տեր Վահրամին և էլի տասը հոգու, հայ Հարությունին, որը հրացանի կրակոցով սպանել էր կոտորածի ազդանշանը տված թուրքին։ Ոչ միայն Հարությունին սպանեցին, այլև նրա բազմանդամ ընտանիքի բոլոր անդամներին, մի մանկանից բացի, միակը, որը փրկվեց մարդասպանի դաշույնից։

Ավելացնենք, որ բերդում գտնվող զինվորները սպանել են բոլոր նրանց, ովքեր փորձում էին փրկվել՝ փախչելով Մեզրե։ Սարերը փախածներին մորթոտել են քրդերը։ Ցեր Հովհաննես քահանան կրոնափոխ լինելու և մահմեդականություն ընդունելու մասին իրեն արված առաջարկին պատասխանել է խաչակնքելով։ Նրան սպանել են և մարմինը կտոր-կտոր արել...

Թուրքերը Հուսեյնիկին սպառնում էին երկու հրանոթներով, բացի այդ, նրանք երկու հրանոթ էին ուղարկել Խարբերդ և երկու ուրիշն էլ՝ Մեզրե։ Ամեն մի կապ քաղաքների ու գյուղերի միջև խախտված էր։ Խարբերդում ոչինչ չգիտեին, թե ինչ է տեղի ունենում Հուսեյնիկում կամ Մեզրեում։ Խարբերդում ջարդերն սկսվեցին Բերդակի, Հուսեյնիկի և այլ վայրերի ոչբերգական իրադարձություններից հետո։

Սկսվեց թուրքական թաղամասերում և ծայրամասերում եղած հայերի տների թալանով։ Կոտորածի հաջորդ օրը լրիվ թալանվեց հայոց թաղը։ Միաժամանակ հրանոթներ արձակվեցին ամերիկյան միսիոներներին պատկանող շենքերի վրա։ Բռնկված հրդեհը ոչնչացրեց այդ տները։ Հրանոթների կրակոցները ավերակների վերածեցին հայկական դպրոցները և եկեղեցին։ Զոհվածների թիվը կազմում է մոտ հարյուր հոգի, վիրավորներինը՝ երկու հարյուր... Քաղաքի վերին թաղի բոլոր շենքերը հրի ճարակ են դարձել։ Երեկոյան 500-ից ավելի կանանց ու աղջիկների տարել են Բեյնիկ Օղլի խանը (իշևանատուն), որտեղ ապաստան են տվել նրանց։

Խարբերդի հայկական եկեղեցու քահանա տեր Հակոբից պահանջեցին, որ հրաժարվի իր հավատից։ Տեր Հակոբը պատասխանեց, թե ինքը հավատում է աստծուն և նրա բոլոր մարգարեներին, բայց այս խուսափողական պատասխանը չբավարարեց թուրքերին։ Հիսուն զինվոր դուրս քաշեցին թրերը և, մերկացնելով քահանային՝ սայրերը դեմ արեցին նրա կրծքին՝ շարունակելով ուրացում պահանջել։ Այդ սպառնալիքներն այնպես ազդեցին քահանայի վրա, որ նա ուշաթափ եղավ և սկսեց ինչոր անկապ բաներ ասել՝ հետն էլ այնպիսի շարժուձևեր անելով, որոնք անկասկած նշան էին նրա ցնորվածության։ Թուրքերը նրան բանտ ուղարկեցին, հայտարարելով, թե մուսուլմանական կրոնը թույլ չի տալիս կրոնափոխել խելագարին, բայց որոշել են նրան մահմեդականացնել հաջորդ օրը, երբ նրա խելքը տեղը կգա։ Դժբախտ քահանան մինչև օրս գտնվում է զնդանում։

Սպանություններ ու կողոպուտներ տեղի ունեցան նաև Մինամուդի թաղամասում, որտեղ սպանվել են 19 և վիրավորվել 40 հոգի։ Ատորական թաղամասում սպանվել է 12 հոգի և 20-ը

փրավորվել։ Այստեղ ասորիները ապաստանել էին իրենց տաճարում՝ սուրբ Կույսի եկեղեցում։ Երբ սկսվեց հարձակումը, նրանք ջարդարարներին խնդրեցին խնայել իրենց, մանավանդ որ իրենք ասորի են, այլ ոչ թե հայ։ Այս նկատառումը բնավ չազդեց ջարդարարների վրա, որոնք պատասխանեցին, թե իրենք ոչ մի տարբերություն չեն դնում այս կամ այն քրիստոնյա ազգի միջև։ Մտնելով եկեղեցին, ջարդարարները կողոպտեցին և պղծեցին այն, սպանեցին կրոնավորին՝ իր հավատից չհրաժարվելու համար, իրենց հետ տարան փախստական այն կանանց և աղջիկներին, որոնց արտաքինը նրանց դուր եկավ...

АВПР, Посольство в Константинополе, д. 3184.

40. ԱԼԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼՅԱՆ.

Նամակից 19 դեկտեմբերի 1895 թ.

Ձերդ գերապատվությանը, անշուշտ, հայտնի են այն ողբալի իրադարձությունները, որոնց զոհը դարձավ Ասիական Թուրքիայի քրիստոնյա բնակչությունը և, գլխավորապես, հայկական հոտը...

Ամենագազանային եղանակներով մորթվել են հազարավոր անմեղ մարդիկ։ Համարյա ամենուրեք կրկնվում էին քրիստոնեության առաջին դարերի հոգեցունց նահատակության տեսարանները... Մարդկային ուժերից վեր է շարադրել բոլոր դաժան արարքները, բոլոր չարագործությունները. դժբախտ ժողովուրդը, անզեն և հլու-հնազանդ, անողորմաբար մորթվել է։ Քաղաքներն ու գյուղերն ամայացել են և տեղ-տեղ էլ ջնջվել երկրի երեսից՝ չարագործ ձեռքով հրդեհի ճարակ դառնալով։

Հոգևորականների մաշկը գլխից պլոկում էին, հասարակ մարդկանց, ցանկացած տարիքի ու խավի, գազանային կտտանքների ենթարկում, ապա սպանում։ Նրանց, ում հաջողվում էր փրկվել վայրի հորդաների հրից ու սրից, թաքնվում էին քարայրներում, մագլցում ելնում ժեռուտ լեռները կամ մեկնում արտասահման, հաղթահարելով մահացու վտանգներ՝ հանուն սեփական կյանքի փրկության։

Կանայք ու ջահել աղջիկները բռնաբարվել են, բազում երեխաներ որբացել։ Հիմա ամենուրեք հանդիպում ես ծնողների,

որոնք լալով-մորմոքալով իրենց որդու կամ դստեր հետքերն են որոնում։ Ի լրումն բոլոր սարսափների, այս կողմերում կենդանի մնացած բնակիչները հիմա էլ սովի ճարակ են դառնում։ Ողբալով իրենց թանկագին էակների մահը և ունեցվածքի կորուստը՝ նրանք տառապում են նաև ուտելիքի բացակայությունից... Իր ամբողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը երբեք չի տեսել այսպիսի աղետներ, և կարելի է ավելացնել, որ ոչ մի քրիստոնյա ազգ այսքան դաժան հալածանքների զոհ չի եղել...

Որտե՞ղ է տեսնված եղել, որ հազարավոր քրիստոնյաներ բռնի մահմեդականային՝ ստույգ մահից խուսափելու համար, ընդ որում նրանց ստիպում էին ամեն կարգի անբարո արարքներ կատարել, ընդհուպ մինչև արյունապղծությունը՝ հանուն նրանց վզին փաթաթված կրոնի օրենքների։

Հետևյալ բնավ ոչ լիակատար ցուցակը ցույց կտա, թե ինչ մեծ չափերի գազանություններ են տեղի ունեցել և որքան ծանր են հայերի գլխին եկած դժբախտությունները։

Գյուղերի անունները	Տների քանակը	Սպանվածների թիվը	Գյուղերի անունները	Տների քանակը	Սպանվածների թիվը
1. Սևքար	20	13	15. Տալարս	12	14
2. Դիանչուն	50	25	16. Բաղրանց	16	6
3. Ներքին Գոդենց	30	13	17. Խուզբ	18	8
4. Ներպան	10	6	18. Ներքին Խորուգ	12	6
5. Օխանց	13	5	19. Խութ	10	5
6. Խորուգ	40	25	20. Սորի	10	5
7. Վերին Գոդենց	12	7	21. Պախտ	60	50
8. Պագանց	20	12	22. Սոգանց	18	13
9. Լուան	13	5	23. Արնեիս	20	12
10. (չի կարդացվում)՝	12	5	24. Դուագռ	20	13
11. Քղի	13	7	25. Գերան	10	6
12. Տանձիկ	10	4	26. Տաշտ	13	7
13. Սոս	20	13	27. Հանգ	20	9
14. Արգուփն	5	3	28. Տծմեն	16	8

Սղերդի գավառ: Այս գավառում թուրքերը մորթել են մի ամբողջ շարք գյուղերի բնակիչների, կենդանի մնացածների մեծ

մասը ստիպված է եղել մահմեդականություն ընդունել։ Եկեղեցիները կործանված են կամ մեչիդի վերածված։ Բոլոր գյուղերը թալանված են։

Սուրբ Աստվածածնի վանքը, որը գտնվում է Բասենի շրջակայքում, թալանվել է։ Այս վանքի վանահայր Կարապետ վարդապետին բռնությամբ մահմեդականացրել են և երկու կին են տվել նրան։ Սուրբ Կիրակոսի վանքը, որը գտնվում է Կեչսուում, նույնպես թալանվել է։ Ավազակներն սպանել են վանքի վանահայր Պողոս Խաչատրյանին։ Ճիշտ նույնկերպ կործանվել ու ամայացել է Սարի սուրբ Աստվածածին վանքը։ Թալանված է նաև Սգավարակի վանքը։ Վանականներից երեքն սպանված են։ Հովհաննես քահանային՝ այս վանքի վանահորը, ստիպել են մահմեդականություն ընդունել և երկու կին առնել...

Խիզանի գավառ։ Խիզանի գավառի 40 գյուղերում մորթել են 400 հայի։ Ավազակներին գլխավորել են հետևյալ հրոսակապետները. 1. Սեիդ Ալի՝ շեյխ Ջելալէդդինի որդին, 2. Ալի՝ Խորոս գյուղից, 3. Բեշիր, 4. Մուստաֆա բեյ, 5. Մրադի, 6. Խալիլ՝ խարիտցի Ֆաքի, 7. Հալիդ, 8. Շամ։

Կենդանի մնացած հայերը, ինչպես և եկեղեցիների հոգևորականությունը, բռնի մահմեդականացված են։ Եկեղեցիների կեսը կործանված է, մյուս կեսն էլ մեչիդ է դարձված։ Շրջանի բոլոր վանքերն ամայացված են, թալանված ու պղծված։

Սահակ քահանայի՝ սուրբ Խաչի վանքի վանահոր փորը պատռել են ավազակները և ծղոտ լցրել։

Մամրտանի գավառ։ Այս գավառի 20 գյուղերում ամենագազանային եղանակներով մորթվել են 160 հայեր։ Ողջ մնացածների մեծամասնությունը ստիպված է եղել իսլամ ընդունել։

Վանքերն ու եկեղեցիները կործանված են, թալանված և մեչիդի վերածված։

Շատախի գավառ։ Շատախի գավառի բոլոր գյուղերը, գավառական կենտրոնից բացի, կործանել են հորդաները՝ քուրդ հրոսակապետներ Շաքիրի, Մեհմեդի և Քուրդո բեյի գլխավորությամբ։

Նույն այս Շաքիրը, իր ավազակների հետ միասին, կործանել է Նորդուզի գավառի տարածքի գյուղերը, որտեղ ներկայումս բնակիչներին սպառնում է բռնի մահմեդականացում...

Հայոց Ձորի գավառում հրոսակախմբերն ամեն կարգի գազանություններ են արել Շաքիրի, Թեյֆուրի գլխավորությամբ,

ինչպես և Ոստանի ու Արտամետի քրդերը։ Կողոպուտը տեղի էր ունենում ամենուրեք, հրոսակները չէին խնայում նույնիսկ վանքերը։

Հատկապես տուժել է նույն գավառի Սուրբ Վարդան գյուղը։ Անդթորեն թալանել են, որի հետևանքով գյուղացիները զուրկ են մնացել ամեն ինչից։ Ինչ վերաբերում է Արտամետ, Բերդախ և Քենդրանց գյուղերին, ապա սրանք էլ են իրենց տառապանաց բաժակը խմել մինչև վերջ։

Կողոպուտներ էին տեղի ունենում ամբողջ Կարճկանի գավառով մեկ։

Սպանությունները կատարվում էին ամենաբարբարոսական եղանակներով։ Այսպես, օրինակ՝ Սորբի սուրբ Կարապետի վանքի վանահայր Պետրոս վարդապետի մարմինը կտոր-կտոր են արել, կտրել են լեզուն և դաժանագույն խոշտանգումներից հետո սպանել...

Մոկաց գավառի գյուղերը նույնպես ավերվել ու թալանվել են։ Նույնպիսի բախտի են արժանացել խիտ բնակեցված Ողմի և Դեխ գյուղերը, որտեղ շրջակայքի քուրդ աղաները աներևակայելի չարագործություններ էին կատարում։ Մենք մանրամասն տեղեկություններ չունենք այն գազանությունների մասին, որոնք կատարվել են Բոհտանի գավառում և շրջակայքում, բայց հայտնի է, որ այդ գավառներում՝ վիլայեթի ամբողջ տարածքում և մերձակա շրջաններում չի մնացել ոչ մի քաղաք, ոչ մի գյուղ, որ անվնաս լինի, որ խուսափած լինի այս աղետներից։ Այստեղ մեր կողմից բերված սակավաթիվ տեղեկությունները մեզ հասցրել են փախստականները, որոնք արցունքն աչքներին՝ մեզ պատմել են այս գազանությունների մասին։

Ամեն օր Ախթամարի պատմական վանքը՝ մեր հովվապետի աթոռանիստն են գալիս լցվում հազարավոր գժբախտներ՝ մերկ ու բոբիկ, սոված ու ընչազուրկ։ Նրանք բոլորը դեռևս աննկարագրելի սարսափի տիրապետության տակ են, այն վայրենի տեսարանների տպավորության տակ, որոնց վկաներն են եղել իրենք։ Աղետն այնքան ահռելի է, որ, չնայած մեր ողջ բարի կամեցողությանը, մենք հաճախ անզոր ենք լինում թեթևացնել օգնության համար մեզ դիմողների տառապանքները...

АВПР, Посольство в Константинополе, д. 3184.

41. ՄՇՈ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԸ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄՅԱՆԻՆ

Նամակ — Մուշ, 26 դեկտեմբերի 1895 թ.

Սույնին կից ներկայացված գրությունից Ձերդ սրբազնությանը թող հաճո լինի տեսնել, թե ինչ ողբալի բախտի են արժանացել և հիմա ինչ վիճակում են երեք վիլայեթների՝ Խարբերդի, Դիարբեքիրի և Բիթլիսի ընդարձակ գավառներում ապրող բազմաթիվ հայերը։ Մեր տեղեկությունները կազմում են միայն մեկ հարյուրերորդ մասը նրանց նկատմամբ գործված դաժանությունների ու բարբարոսությունների, քանզի գոյություն ունեցող ահ ու սարսափի հետևանքով հաղորդակցությունները միանգամայն ընդհատված են, և մինչև այժմ անհնար է եղել ամեն ինչ ճշգրիտ ու մանրամասնորեն իմանալ։

Բոլոր այս ողբալի իրադարձությունների մեջ ամենից շատ տուժել են Դենջի՝ մեր թեմի մեջ մտնող 47 հայկական գյուղերի բնակիչները, որոնք այժմ մնալով անտուն և օրվա հացի կարոտ, ցրիվ են եկել քարայրերով մեկ և այլուր՝ սովալլուկ ու ցրտահար։ Օգնության խնդրանքով նրանց կողմից մեզ արված դիմումները մնում են առանց որևէ բավարարության, քանզի մենք հնարավորություն չունենք դա անելու և սրբելու այդ դժբախտների դառն արցունքները։ Սովորաբար մենք նրանց մխիթարում ենք այն բանով, որ նրանց շարաղետ վիճակի մասին գրել ենք ուր որ հարկն է և ամոքում խնդրել։ Նրանք էլ, իրենց կողմից, սփոփվելով դրանով, հազիվհազ քարշ են տալիս իրենց սև օրերը։

Անհնար բան է, որ նրանք իրենք կարողանան որևէ տեղ գնալ, քանզի տեղնուտեղը արյունռուշտների զենքի զոհն են դառնում։ Ենթադրենք, թե նրանք կարողանան թաքուն հեռանալ։ Բայց ո՞ւր գնան։ Դիարբեքիրն այլևս չկա, Մուշ գնալ չեն կարող, այնպես որ եթե այս դժբախտներին անհապաղ օգնություն չցուցաբերվի, ապա ձմեռս նրանք բոլորը սովի զոհ կդառնան։

Ուստի և, սիրելի՛ հայոց Հայրիկ, շտապում եմ Ձեր համբավյալ ողորմածությունն ու կարեկցանքը հրավիրել այս դժբախտների վրա և խնդրել, լիահույս լինելով, որ կբարեհաճեք ամենակարճ ճանապարհով կամ էրզրումով օգնության ձեռք մեկնել այս սովյալներին և դրանով իսկ փրկել նրանց կյանքը։

Նրանց, ինչպես և մեր բոլորիս, հույսն ու մխիթարությունը Ձեր սրբազնությունն է։ Հայրի՛կ, աղերսում ենք բարեհաճել փրկել 15 հազար բնակչությամբ այդ 47 գյուղերի բնակիչների կյանքը։

Հանդգնելով խնդրել Ձեր սուրբ օծության օրհնությունը՝ մնամ Ձեր խոնարհ ծառա և որդի։

Մշո թեմի առաջնորդական փոխանորդ և Դենջի հաչորդ
Վարդան վարդապետ Հակոբյան

Առդիր

Մայրագույն պատրիարքին մերո՝ տեառն Մկրտիչին, սրբազնագույն կաթողիկոսին Ամենայն Հայոց

26 դեկտեմբերի 1895 թ.

Ձե՛րդ սրբություն, երանելի՛ Հայրիկ.

արցունքն աչքերիս և վշտահար սրտով ուղում եմ, ո՛վ աստծով իմաստնացած հայր, սույն գրությանս մեջ Ձերդ երանելիությանը ներկայացնել այն ողբալի իրադարձությունները, որոնք վերջին երկու ամիսներին՝ հոկտեմբերին և նոյեմբերին, պատահեցին Ձերդ սրբության՝ Թուրքիայում ապրող հարազատ զավակներին։

Ես չէի համարձակվի, սրբազնագույն Հայրիկ, հանձն առնել կատարելու սույն գրառումը կամ, ավելի ճիշտ, այս տխուր լուրերի հաղորդումը, որպեսզի առանց այն էլ անթիվ վշտերով լեցուն Ձեր վիրավոր սիրտը չցնեի նորանոր տառապանքներով, բայց վստահ լինելով, որ այս ողբալի դեպքերի ու դժբախտ ազգակիցներիդ մարտիրոսական տառապանքների մասին լուրերն արդեն հասել են Ձերդ երանելիությանը, ուստի անհրաժեշտ համարեցի հաղորդել վստահելի և, ըստ հնարավորին, մանրամասն տեղեկություններ այս իրադարձությունների մասին, ինչի կարիքը, Ձե՛րդ երանելիություն, անկասկած, զգում եք։

Գրությանս սկզբում, ինչպես երևում է, համառոտակի հիշատակված են այն վիլայեթները, որտեղից, չափազանց հեռու լինելու պատճառով, մեզ համար անհնար էր մանրամասն տեղեկություններ ստանալ այնտեղի հայերի տված զոհերի վերաբերյալ, որոնք անկասկած արժանացել են միևնույն բախտին՝ են-

թարկվել անգութ ու բարբարոսական կոտորածի։ Իսկ Տարոն-Մուշին և Գենջին սահմանակից Դիարբեքիրի, Խարբերդի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների հայերի մասին մենք հասցրել ենք, ըստ հնարավորին, ստանալ առավել մանրամասն և ճշգրիտ տեղեկություններ զանազան կողմեր ուղարկված մարդկանց միջոցով և մանավանդ՝ հարևան քրդերի ու նրանց հետ Խարբերդից ու Դիարբեքիրից վերադարձած հայերի, որոնք ըստ սովորության աշնանը գնացել էին այդ կողմերը ոչխար վաճառելու։

Թվարկենք այն վիլայեթները, որոնցում դժբախտ հայերը զոհն են դարձել թուրքական անգութ ու բարբարոսական կոտորածի։

I. Հալեպի վիլայեթում՝ 1. Հալեպը, 2. Անթաքիան՝ չորս մեծ գյուղերով, 3. Քիլիսը, 4. Բիրեջիկը, 5. Նիզիբը՝ Մեզար գյուղի հետ, 6. Մարաշը՝ իր գյուղերով, 7. Այնթապը՝ իր գյուղերով, 8. Ուրֆան՝ իր մեծ գյուղերով. Կարմունջ, Բոզովա և Բուջակ, 9. Ջիբին գյուղը՝ Հոմկլայի մոտերքում։ Այս բոլոր տեղերը մեծ մասամբ ենթարկվել են կոտորածի և կողոպուտի։

II. Ադանայի վիլայեթում՝ 1. Հաճընը իր շրջակայքով կոտորվել է և կողոպտվել։

III. Գարահիսարը Թալաշ և Էվերեկ գյուղերով ու սրանց շրջակայքը կոտորվել են ու կողոպտվել։

IV. Սեբաստիան իր շրջակայքով. Գուրուն, Տիվրիկ, Ջարա, Շապին-Գարահիսար քաղաքները, Թամզարա և Ավշար-Օվա գյուղերն իրենց շրջակայքով, Եվդոկիան, Ամասիան ու Մարզվանը իրենց շրջակայքով կոտորված են և թալանված։

V. Տրապիզոնը իր շրջակայքով և Սամսոնը կոտորված են ու կողոպտված։

VI. Էրզրումը ենթարկվել է կոտորածի և կողոպուտի։ Էրզրումի հարթավայրը թալանվել է և տեղ-տեղ սպանություններ են կատարվել։ Բայբուրդն իր շրջակայքով կոտորված է և կողոպտված։ Հասան-Կալեի ս. Աստվածածնի վանքը կողոպտված է և այրված։ Վանքի ծառային սպանել են, վանքի վանահայր Տիմոթեոս վարդապետին սպանել են և այրել։ Բասենը թալանել են և տեղ-տեղ սպանություններ են եղել։ Խնուսն իր գյուղերով թալանվել է և տեղ-տեղ կոտորածներ են եղել։ Դերջանն իր գյուղերով թալանված է, բնակչությունը՝ կոտորված, ողջ մնացածները տեղի հաջորդ Ներսես վարդապետի հետ բռնությամբ մահմեդականացվել են։ Երզնկան իր գյուղերով կոտորված է և կողոպտված։ Քղին տեղ-տեղ կոտորվել է և կողոպտվել։

VII. Խարբերդում, Մեզրե թաղից բացի, մնացած բոլորը, ինչպես և բողոքականների նշանավոր դպրոցն իր աշակերտներով, կոտորվել են, կողոպտվել և այրվել։ Ասոր, Սինամուր, Հուսեյնիկ, Խապուսին, Կեսարիկ, Մորենիկ, Հագամբ և Իզմե գյուղերը, որոնք բնակեցված էին բազմաթիվ հայերով, սարսափելիորեն կոտորվել են և թալանվել։ Տներն հրկիզվել են։

Բալու քաղաքը դաժանորեն սրի է քաշված ու կողոպտված շրջակա Բուլուշկիր, Յարմջայ, Էնիքյոյ, Ճեթ, Խոշմատ, Սողանլու, Մեզրե, Նեհրի, Տերկան, Լախան, Նիջարան, Սարիղամիշ, Վարդենիս, Կապուաշմազ և այլ գյուղերի հետ։

Խարբերդի և Բալուի շրջաններում ոչնչացված է 93 գյուղ, որոնց բոլորի անունները առայժմ չենք կարողացել իմանալ։

Խարբերդի և Բալուի վերոհիշյալ գյուղերի սպանված բնակիչները մինչև այժմ մնացել են անթաղ՝ մարդկանց բացակայության պատճառով, և նրանց դիակները նետված են ի կեր գազանների ու թռչունների։

Ամենասարսափելի կոտորածը Բայբուրդում է եղել։ Բայբուրդի շրջանի Սողանլու գյուղի բնակիչների կոտորածի ժամանակ բռնաբարել են երիտասարդ հայուհիներին, սպանել և ապա մերկ ու արյունաշաղախ, հակառակ ամոթխածության, նետել ամենուրեք։ Ծծկեր երեխաներին սպանել են՝ գլխատելով, ձեռքուտները թրատելով։ Ոմանք էլ, ողջ մնալով, իրենց մեռած-սառած մայրերին կպած՝ սարսափելի ճչոցով ծծել են նրանց արյունաշաղախ ու ցամաքած կրծքերը։

Բայբուրդի հայուհիներից շատերը բարբարոսների ձեռքից ազատվելու համար, ծծկեր երեխաների հետ նետվել են Եփրատը, որը հոսում է Բայբուրդի մոտով։ Այս ամենը մեզ պատմել են Խարբերդից քրդերի հետ վերադարձած հայերը, որոնք ականատես են եղել այդ բոլոր սարսափելի տեսարաններին։

Նույնպես և Կապան-մադեն, Արաբկիր, Ակն, Ջարսանջակ, Ջմշկածագ, Մալաթիա, Բեհեսնի, Հիսն-Մանսուր ու Ադիաման քաղաքներն ու գյուղերը իրենց շրջակայքով կոտորված են ու կողոպտված։

VIII. Դիարբեքիր քաղաքը ենթարկվել է կոտորածի և կողոպուտի։ Տներն ու կրպակները հրկիզված են։ Քանի որ Դիարբեքիրում հայերն ավելի շատ են, քան մուսուլմանները, ուստի

ղեկավարությունը քաղաք է հրավիրել համիդիեի զորամասերին... Ոչնչացնելով Դիարբեքիրի հայերին՝ նրանք նետվել են դեպի Տիգրիսի այն կողմում գտնվող, Դիարբեքիրին մոտիկ, խետերբոզ գյուղը, որի բնակիչները անհաջող դիմադրությունից հետո փակվել են իրենց քարե եկեղեցում ու պաշտպանվել՝ կրակելով լուսամուտներից, բայց զորքերը, ի վերջո, հասցրել են մագլցել եկեղեցու կտուրը և, անցք բացելով, այնտեղ ծղոտ են լցրել, կերոսին թափել և, այդպիսով, վառել են եկեղեցին՝ պաշտպանվողների հետ միասին։ Այնուհետև նետվել են տների վրա և այնտեղ գտնվող կանանց, աղջիկներին ու երեխաներին կոտորել են բարբարոսական եղանակներով։

Այս ամենից հետո հարձակվել են Դիարբեքիրի ընդարձակ հարթավայրի վրա, որն անվանում են «ներքին դաշտ», և անկարագրելի բարբարոսական գործողություններով սպանել են բոլոր հայերին, բռնաբարել են գեղեցիկ կանանց ու աղջիկներին, թալանել են նրանց ամբողջ ունեցվածքը և տները վառել վերածել ավերակների կույտերի։

Տեղ-տեղ ողջ մնացած բնակիչներին էլ քահանաների հետ միասին բռնի մահմեդականացրել են, այնպես որ Դիարբեքիրի հարթավայրի ողջ ընդարձակ տարածքում չի մնացել ոչ մի քրիստոնյա։

Մեր ունեցած հավաստի տվյալներով, ներքին դաշտում կոտորվել են ու թալանվել հետևյալ գյուղերը՝ 1) Բաշխա, 2) Կնիատ, 3), Հուսեյնան, 4) Աբո, 5) Միրալյան, 6) Չերեկ, 7) Գուրեշան, 8) Հեզել-հասար, 9) Սալեկան, 10) Նաջիժան, 11) Ինոջան, 12) Գունդեջանո, 13) Բալավալա, 14) Դերիկ, 15) Խաշավան, 16) Ալբենցի, 17) Տրբեսեպի, 18) Խելեն, 19) Ադչա, 20) Բլբեզ, 21) Հավշան, 22) Բաշ-Բեյուկ, 23) Ֆերակ, 24) Չերե, 25) Խաշդար, 26) Չենզեն, 27) Խալդա, 28) Կլիխոկ, 29) Փարխանդ, 30) Բամեյդան, 31) Դիրան, 32) Հասամդալու, 33) Դասնա, 34) Փայաթի, 35) Զոր, 36) Բիշմեթ, 37) Հաջի Չերքեզ, 38) Մխուր, 39) Հարտուլա, 40) Գունդերաշո, 41) Կորիտ, 42) Բերեհաշան, 43) Ալդին, 44) Տախիկ, 45) Բաղեկանե-Կեմե, 46) Թեշմեն, 47) Զակո, 48) Ալոդինա, 49) Բաշ-Քյոյ, 50) Սորիկան, 51) Չատալ, 52) Գրաբաջ, 53) Փորիշան, 54) Տոկե, 55) Շերեֆիկան, 56) Բոշատ, 57) Հազո, 58) Կերեկ, 59) Լաճիկ, 60) Գունդեկ, 61) Վերդասուտի, 62) Բախեզրեզ, 63) Ներքին Դանատ, 64) Իշկիստեկ, 65) Բաշդարի, 66) Խոնի, 67) Սինուն, 68) Էլմեդին, 69)

Էլոխան, 70) Գրեսեդան, 71) Չերջել, 72) Բելեյդիր, 73) Բազբուդ, 74) Բարեզ, 75) Վերին Քեֆերջու, 76) Ներքին Քեֆերջու, 77) Քրերի, 78) Պասորդ, 79) Մեծինան, 80) Թլմերջ, 81) Խլխամեզ, 82) Զոխ, 83) Բրա, 84) Զվախեզ, 85) Զոմանիկ, 86) Կոխան, 87) Դմսերիկ, 88) Մելխեն, 89) Պալոնիկ, 90) Խեզխեզ, 91) Ջեֆան, 92) Սեերդան, 93) Գոլեմասան, 94) Բրզանջե-Ժորին, 95) Բրզանջե-Ժերին, 96) Մելեֆան, 97) Մամլա, 98) Ջեզին, 99) Սբխիզ, 100) Բարենջ, 101) Գրեհասան, 102) Քեմիր, 103) Հրեֆաս, 104) Բաղչեթթ, 105) Հալինոկ, 106) Հոպին, 107) Հզանմեր, 108) Թխրեք, 109) Դաքի, 110) Ջեյեսկեր, 111) Հոպ, 112) Դուսադչիկ, 113) Ջիզարֆ, 114) Հիդուկ, 115) Սալաս, 116) Տկող, 117) Այնքեր, 118) Փեկենդ, և 119) Արանջ։

Լիճեի ավանը երկու մեծ գյուղերի՝ Սարնիսի և Օկումի հետ, իրենց 7 քահանաներով բռնությամբ մահմեդականացվել են, նրանց վրա կատարել են թլպատման ծես։ Իսկ Լիճեի հետևյալ գյուղերը՝ Մալախտա, Կումե, Աղկան, Այնգուզ, Շեմշեմ, Խարբախեն, ենթարկվել են կոտորածի, կողոպուտի և հրկիզման։ Լիճեի շրջակայքից եկած և Յաղապայի վանքում պաշտպանվող 2000 հայերը կոտորվել են։ Վանքի վանահայր Բախան քահանան սպանված է, վանքը թալանված ու հրկիզված։

Կոտորած ու կողոպուտ է եղել նաև մոտերքում գտնվող Նեստորական վանքում։

Ներքին դաշտին պատկանող հետևյալ գյուղերը՝ Ջերնոխի, Փիրամեն, Գրեսալաթ, Հիշիկան, Քֆերջին, Դարսել, Բաշնեղ, Հայդարիկան, Մարայա, Գուլամիրա, Շերաշ, Վանք, Խոդնով, Շելեման, Շեխան, Թրջել, Թասդելան և Դադալ, նույնպես կոտորվել են, կողոպտվել և հրկիզվել։

Նույնը կատարված է նաև Խայնե ավանում և սրա գյուղերում՝ Դլնե, Քարաճիկ, Ջումա և Սարդեշ։

Դիարբեքիրի վիլայեթի գավառները՝ Սևերեկը, Արղնին՝ ս. Աստվածածնի տաճարի հետ, Էգիլը, Ջերմուկը Ջընգուշը և Ադիշը նույնպես կոտորվել են, կողոպտվել և հրկիզվել։

Մարդին քաղաքն իր կաթոլիկ բնակչությամբ ոչնչացվել է և թալանվել։

IX. Բիթլիսի վիլայեթ։ Բիթլիս քաղաքը կոտորված է և թալանված՝ շրջակա գյուղերով ու գավառներով հանդերձ, որոնք են՝ 1) Խուլտիկ, 2) Մուշգոնի, 3) Գելնոկ, 4) Գեղեր, 5) Բաս, 6) Ոսդին, 7) Ցխգամ, 8) Վանիկ, 9) Սասիկ, 10) Շեն, 11) Սան,

12) Անդ, 13) Դոպ, 14) Դաշդոմ, 15) Որցակ, 16) Սակ, 17) Նիշ, 18) Գարպ, 19) Խումս, 20) Գուտ, 21) Հոձետ, 22) Ղարտ, 23) Ջլկան, 24) Սիդյան, 25) Գոմք, 26) Մեզրե, 27) Բաբժեն, 28) Բոր, 29) Գամախ, 30) Ծվար, 31) Խախրև, 32) Ալամեկ, 33) Ջրհոր, 34) Շամիրամ, 35) Պարխանդ, 36) Ամբ, 37) Գորվու, 38) Խմելջուր, 39) Վերին Մարկորկ, 40) Ներքին Մարկորկ, 41) Նորմիզ, 42) Խարտկոտ, 43) Խուրդապ, 44) Խնձորկին, 45) Տուղ, 46) Փրխուս, 47) Կուլիկ, 48) Ջամալդին, 49) Ագրակ, 50) Մատնավանք, 51) Ծորգոնք, 52) Ծղակ, 53) Խերսոնք, 54) Տեգուր, 55) Ազախ, 56) Դափավանք, 57) Մեծք, 58) Գոշդյան, 59) Սոխուրտ, 60) Ջերոկ, 61) Գձվանք, 62) Ծագե, 63) Գամբուրջ, 64) Խարաբ-Շեհիր, 65) Սիսաձոր, 66) Նազիկ, 67) Գարպ, 68) Բրուտք, 69) Մեգուկ, 70) Ործինգ, 71) Գզեխ, 72) Մարիտագ, 73) Հավուտագ, 74) Խուր, 75) Վերին Ասբիշեր, 76) Ներքին Ասբիշեր, 77) Գիձու, 78) Մցու, 79) Կամախ, 80) Մեծձոր, 81) Մրծանք, 82) Բոգնուտ, 83) Շոն, 84) Արփի, 85) Նիջ, 86) Ղրխու, 87) Ալբերտ, 88) Կարուգան, 89) Էրեստագ, 90) Օխնախ, 91) Ջեններ, 92) Սասնուտ, 93) Բայական, 94) Գոդում, 95) Շիկրանիս, 96) Խեզ, 97) Սարիխաշ, 98) Խիարտին, 99) Ուսնուս, 100) Խարզետ, 101) Աղքձոր, 102) Ավաք Թաղ։

Գյուղերից մի քանիսում բնակիչները կոտորված են, իսկ մյուսներում՝ միայն կողոպտված։ Զգալի թվով մարդիկ էլ իրենց քահանաների հետ բռնի մահմեդականացվել են, եկեղեցիները վերածված են մզկիթների։

Խիզանի գյուղերի մեծ մասը կողոպտված են և կոտորված, բռնաբարված են աղջիկներն ու կանայք և շատ գերդաստաններ բռնի մահմեդականացված են։ Եկեղեցիները թալանված են, սրբությունները՝ պղծված, սուրբ Խաչ և Գամաղիել վանքերի վանահայրերին սպանել են սարսափելի կոտանքներով, իսկ վանքերը կողոպտված են։

Կոտորել են Սղերդ քաղաքի բնակիչներին։ Կրպակներն ու տները թալանված են, կանայք ու աղջիկները՝ բռնաբարված, թեմական առաջնորդարանի, եկեղեցիների և դպրոցների դռները ջարդոտված են ու թալանված։ Թեմական առաջնորդի քահանան, ուսուցիչը և ծառան սպանված են։ Առաջնորդական տեղապահ Տիմոթեոս վարդապետ Տիվրիկլյանը մահացու վիրավորված է, իսկ մնացածները բռնի մահմեդականացվել են, և այդ ամենը կատարվել է ամենաանամոթ և բարբարոսական եղանակներով։

Սղերդի կազայի էրուն նահիեի հետևյալ գյուղերը՝ Սարուս, Հավավ, Նոմբաին, Սերմետ, Դերիկ, Գենջիկ, Սըզյակ, Ջումբուխ, Մեզրե և ուրիշն., ենթարկված են կոտորածի, կանայք ու աղջիկները բռնաբարված են։ Սարերն ու կիրճերը փախածները կոտորվել են սովից ու ցրտից, մնացածներն էլ իրենց քահանաների ու եկեղեցիների հետ բռնի մահմեդականացված են։

Ստորև թվարկվող Սղերդի կազայի Շիրվան նահիեի գյուղերը՝ Մարեն, Կուրինա, Գունդե խեզան, Գեղան, Մինար և ուրիշն., թալանված են ամբողջովին, բնակիչների մեծ մասը կոտորված է, կանայք և աղջիկները բռնաբարված են, նրանց մի մասը ցրիվ է եկել տարբեր կողմեր և մեռել քաղցից ու ցրտից, իսկ մյուսները բռնի մահմեդականացված են։

Սղերդի շրջակայքի Խանեկ, Սուլթան, Հրեբենց Դուսադիկ, Մզրե Հալք, Քանիսորեք, Խեմդունա, Ղուզանա, Վասիտ, Սիլախար, Ներքին Սուլան, Վերին Սուլան, Հոպ, Մեզրեշեն, Բաղեմ, Նիր, Ազիկ, Բեր, Աշիկ, Ջինազկեր, Ջեուկ, Ներ, Դիլան, Բերի Դիլան, Պլուր, Հալևի, Բինարեն, Իզնամիր գյուղերի բնակիչներին կոտորել են, իսկ գյուղերը՝ թալանել։ Ողջ մնացածները բռնի մահմեդականացված են։

Նախիբանի նահիեում գտնվող գյուղերը՝ Գելխոկ, Տեխիրի, Տակի, Խեդխեղբ, Տերբեսե, Ջերֆաս, Ռաջաբա, Բաջուդ, Միլիկա, Ջելդիկա, Խուլիկ, Ռաշեկ, Միրերիկ, Հաֆեկ, Ջիգովիկ, Բիմեր, Խաշդար, Շեշմա, Բաշդերամ, Մլկեշա, Բնունիք և Դիրա, կոտորվել են, կողոպտվել և հրկիզվել, բնակիչների մի մասը բռնությամբ մահմեդականացված է։

Գենջի, Ճապաղջրի գյուղերը՝ Ջելիկ, Մարագ, Սևսար, Դարբասան, Սնակ և Դեկ, Գենջի շրջակայքի գյուղերը՝ Գրիոշ, Դյուշմալան, Վալեր, Դիարի-Բոք, Ջմասնի և Կուպիր, ինչպես և՝ Բեշարեի նահիեի Բեշար, Ռիե, Նորաշեն, Մուրդարեկ, Անդիվ և Իզակ գյուղերը տեղ-տեղ կոտորվել են, կողոպտվել։ Ողջ մնացածները մեծ մասամբ բռնի մահմեդականացվել են, իսկ եկեղեցիները՝ մեչիդների վերածվել։

Մանազկերտում Բոկլան, Խարաբե, Հասանբեկի փոր, Բայրաման, Անհակ, Նորեկ, Բոգի, Փարիու, Գձու, Ճավգնուտ գյուղերը թալանված են մինչև վերջ, և բնակչությունը զրկված է ապրելու ամեն մի միջոցից, խլել տարել են բոլոր անասունները։

Խուլբի և Խիանքի կազաներում՝ Գեղերվան, Աղարանք, Ընձքար, Էհուբ, Գասկե, Շուղեք, Խրոճ, Տեգո, Ներվեկ, Թլթավ,

Փասուր, Մաշտակ, Ընկուզնակ, Մշխիձոր, Սկիթ, Ահարոնք, Հեղին, Սաղտուն, Փարկա, Արսրք, Գրեմորի, Պհամպա, Ջումարա, Բերմ, Բացի, Արխունդ, Դանի և Գրեխոխի գյուղերը ամբողջովին թալանված են ու մարդիկ զրկված են ապրուստի միջոցներից։ Տեղ-տեղ սպանություններ են կատարված, և որոշ գյուղեր այրված են։ Դրանցից վեց՝ Սաղտունը, Փարկան, Արսրքը, Գրեմորին, Գրեխոխին և Պհամպան ավերակների են վերածված, իսկ բնակչությունը փախել պատսպարվել է անձավներում։ Ինչպես այս վեց գյուղերի բնակիչները, այնպես էլ մնացած գյուղերը, զրկված լինելով ապրուստի որևէ միջոցից և հնարավորություն չունենալով որևէ տեղ գնալ, անկասկած, այս ձմեռ կոտորվելու են գլխովին, եթե օգնություն ցույց չտրվի։

Մուշ քաղաքում. Մուշում ապրող հասարակ խալվի մահմեդականները հանկարծակի նետվեցին շուկա՝ հայերի վրա, վեցին սպանեցին և 30 հոգու վիրավորեցին...

Դաշտի գյուղերից՝ Զիյարեթ, Սորդատ, Մեշտի, Բաղլու, Բոդու, Հայբյան, Հերգերտ, Կոմո, Ավրան, Խաշխաշդաղ, Հոպեր, Տատրագոմ, Ռեղխաու և Դերիկ, թալանված են և տեղ-տեղ բռնաբարություններ են կատարված։

Բուլանըխի գյուղերից՝ Կոփ, Խարաբաշհեր, Փիրան, Կակավու, Լոթար, Բլուր, Միրբար, Շեհագուբ Մեջերլու, Շերվան Շեխ, Հարագել, Լիզ, Բրկաշեն, Գողակ, Ակրյակ և Խոշգյալդի, քշել տարել են խոշոր ու մանր եղջյուրավոր անասունները և տեղ-տեղ սպանություններ են կատարել։ Սպանվածների թվում է և լիզեցի Լևոն էֆենդի Մաքսուդյանը...

Վտանգն սպառնում է ամեն օր ու ամեն ժամ, և մի փոքր պատրվակն իսկ կարող է Մուշն ու շրջակայքը վերածել ավերակների կույտի, դրա համար էլ բնակչությունը իրեն շատ զգույշ է պահում։

Այստեղի ղեկավարությունը ձգտում է մեզնից և բոլորից բռնությամբ վերցնել շնորհակալական նամակներ։ Առայժմ մենք չենք համաձայնել և մտադիր չենք ընդունել նրա առաջարկը. ախր ինչի՞ համար պետք է շնորհակալ լինենք — կոտորածի՞, թալանի՞, բռնաբարությունների՞, բռնի մահմեդականացմա՞ն և այլ ոճրագործությունների՞ համար։ Բայց հաղիվ թե կարողանանք դիմանալ մինչև վերջ, և վախենում եմ, որ դրա դիմաց հարկ լինի կյանքով փոխհատուցել, և ոչ միայն իմ, այլև՝ շատերի։ Եվ այսպես, Մշո երկիրը նույնպես գտնվում է բուն վտանգի մեջ՝ կյանքի և մահվան արանքում...

Սրբազնագո՛ւյն Հայրիկ, ահա՛ մեր բախտն ու վիճակը։ Խնդրում ենք, աղաչում արտասվալի, գթացե՛ք ողջ մնացած այս մի բուռ ժողովրդին և, եթե հնարավոր է, ապա մի՛ մերժեք մի բուռ ջուր նետել նրան այրող կրակի վրա։ Եթե միջոցներ ձեռք չառնվեն սույն սպառնացող հրդեհի դեմ, ապա Տարոնը մնացած մասերով հանդերձ կընկնի իբրև զոհ բարբարոսության, և այնժամ Ձերդ վեհափառությանը հարկ կլինի Արարատի բարձունքից աղոթել նրանց հոգու հանգստության համար ու նրանց երկնային երանություն մաղթել...

Վարդապետ Հակոբյան

АВПР, Посольство в Константинополе, д. 3184, л. 193—205.

42. ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

№ 54 նամակից Էջմիածին, 18 հունվարի 1896 թ.

Սույնին կից առաքում եմ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքից իմ ստացած դեկտեմբերի 20-ի նամակը, որտեղ ամփոփված է դեկտեմբերի 4-ին Բ. Դռանը նրա հանձնած թաքրիրի պատճենը, որով ներկայացնում է թուրքական կայսրության հայաբնակ գավառներում անցած տարվա վերջին ամիսներին կատարված անօրինակ ավերածությունների մասին տեղեկություններ։

Ստորագրություն

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի գրությունից՝ ուղղված Թուրքիայի մինիստրին 1895 թ. դեկտեմբերի 4-ին

Հայ ժողովուրդը ապրելով Անատոլիայում՝ հնուց ի վեր չի օգտվում ո՛չ կյանքի, ո՛չ գույքի, ո՛չ պատվի անվտանգությունից և զրկված է արդարադատությունից։ Նա մշտապես հայտարարել է իր աղետալի դրության մասին և գթասրտություն հայցել, ինչպես դա երևում է բազմաթիվ թաքրիրներից, որոնք պատ-

ռիարքության կողմից ներկայացված են եղել Բ. Դռանը և անուշադրության մատնվել։ Թերթերում վեց մարզերի համար բարենորոգումների հրապարակումից հետո հայերի նկատմամբ ամենուրեք անօրինակ չարագործություններ ու վայրագություններ են կատարվել։ Նամակներով ու հեռագրերով պատրիարքարան ուղարկված տեղեկությունները պատկերում են սարսափելի չափերի հասնող այդ ոճրագործությունները, թեև, իհարկե, այդ տեղեկությունները դեռ բնավ էլ լիակատար չեն։ Այնուհետև գալիս է ոճրագործությունների՝ վերոհիշյալ տեղեկությունների վրա հիմնված նկարագրությունը, ոճրագործություններ, որոնք կատարված են հայերի նկատմամբ, ըստ քաղաքների ու գավառների՝ սկսած Տրապիզոնից և Էրզրումից, ամբողջ Անատոլիայով մեկ, ներառյալ մինչև Կիլիկիան (Մարաշ, Սիս և այլն)։ Այդ տեղեկությունների հիման վրա, ոճրագործությունները եղել են նախապես կազմակերպված, տեղական իշխանությունները ոչինչ չեն արել կամ խրախուսել են հայերի կոտորածը և կողոպուտը, զորքերը մասնակցություն են ունեցել խժդժություններին ու կողոպուտներին։ Եկեղեցիները և մի քանի վանքեր թալանված են. որոշ դեպքում քահանաներն ու վանահայրերը սպանվել են։ Դեպքեր են եղել, որ նրանց մաշկաղերծ են արել։ Բիթլիսի մարզի Խորխոս գյուղում երեք քահանաների ստիպել են մահմեդականություն ընդունել։ Ջոռով չալմա են հագցրել գյուղերին և մոտ 800 ընտանիքների, որոնք կենդանի էին մնացել կոտորածից հետո, ստիպել են մահմեդականություն ընդունել։ Ադանայում՝ կանանց ու աղջիկների հավաքել են մի վայրում լավագույններին ջոկելու և մնացածներին կոտորելու համար։ Այդ նույն վայրերում պատարագող քահանայի ներկայությամբ բռնաբարել են նրա կնոջը։ Քահանային էլ դրանից հետո բանտ են նետել այն բանի համար, որ իրեն թույլ է տվել պատահածի մասին տեղեկացնել եպիսկոպոսին։ Այս ոճրագործություններն ամենուրեք միանման են եղել. հարձակվել են կրպակների վրա և, եթե չեն կարողացել ներս թափանցել, ապա հրդեհել են։ Գյուղերում ողջ ունեցվածքը թալանել են, անասունները քշել տարել, այնուհետև ամբողջ պաշարները և տունուտեղը կրակի են մատնել, այնպես որ բնակիչները մնացել են առանց պատսպարանի, առանց ապրուստի, և, եթե շտապ օգնություն չցուցաբերվի, նրանք քաղցից ու ցրտից կմեռնեն...

Ոչնչացումից զերծ մնացած բնակչությունը զրկված է ծածկից, ուտելիքից, հագուստից և իրենց զբաղմունքը շարունակելու համար անհրաժեշտ գործիքներից։ Բնակչությունը ենթակա է ձմռան սառնամանիքներից սպասվող բոլոր հետևանքներին, ուստի և կարիք է զգում շտապ օգնության...

АВПР, Политархив, д. 3449, л. 62—63.

48. ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԵՆ

Տիգրանակերտ, 31 դեկտեմբերի 1895 թ.
12 հունվարի 1896 թ.

1895-րդ տարին խիստ դժբախտ տարի մը եղավ բոլոր Թուրքիո քրիստոնեիցս համար, նույնպես և Տիգրանակերտին. վերջին երեկոն է, կփորձեմ անգամ մը ևս գրել այն դժբախտությանց վերջին մասը, որով վերջացուցինք տարին, թեև տակավին ապահովություն չունինք։

Տե՛ր, թեև գրած եմ ձեզ տարբեր միջոցներով, նույնիսկ վերջին կոտորածին առթիվ ալ, բայց այս միջոցով իսկ փորձել չեմ հետաձգեր։

Գոլերայեն հազիվ ազատված էինք, ամեն ոք իր կորսված մի ազգականի և բարեկամի մասին կողբար, և բոլոր նահանգը կմտածեր գոլերային առթիվ ընդհանուր դադարի պատճառած նյութական կորուստը դարմանել և ահա զրույց մը կդառնա իսլամներու մեջ, թե «Կյավուրներն պետք է ջարդվին»։ Շատ տարիներե ի վեր իսլամներու խորհածը իրագործել ոչ ոք կհավատար առաջին առթիվ, բայց հետզհետե իրականության կերպարանք առնուլ սկսեց իսլամ գոմիթեի մը հրահանգներուն շնորհիվ։ Սույն առթիվ քաղաքի Գաղիական հյուպատոսն ու Հայոց առաջնորդական տեղապահն առանձին դիմեցին քաղաքիս վալիին և զորաց հրամանատարին և մոտալուտ վտանգի մը կասկածը հայտնեցին, բայց վալին և հրամանատարը թրքական ամենամեծ երդմամբ վստահացուցին հյուպատոսն ու հայոց տեղապահը։

Գաթոլիկաց Ամենայն սրբոց տոնի օրն էր, արևածագին բոպե առ բոպե մոտալուտ վտանգի մը տագնապը կաճեր քրիստոնեից մեջ։ Թուրքեր կանուխեն սկսած էին գործնական նշան-

ներ ցույց տալ. բոլոր քաղաքը տագնապի ալեկոծության մեջ կտատաներ, վերջապես մոտ էր Թրքական կեսօրն, և ահա Թուրքերն հակառակ իրենց սովորության՝ խանութնին կգոցեն աղոթքի երթալու համար։

Թրքական աղոթքը շուտ կվերջանա. նկատելով այն՝ քրիստոնյայք ևս փութացին խանութները գոցել, և դեպի թաղերը փութաց ամեն ոք իր տունը ապաստանելու։

Հոկտ. 20/1 նոյ-ի ուրբաթ օրը, Թրքական կեսօրին, Ուլի Ճամիի օրվան քարոզիչն էր Ապաս Հոճան և իր քարոզի հետևյալ վերջաբանով հարձակման նշանը տրվեցավ. «Քանի որ կյավուրները իրենց լուծը թոթափել կջանան, մեր Քուրանի օրինոք և կայսեր հրամանով պետք է ամեն մի ճշմարիտ իսլամ 25 անհավատ քրիստոնյա ջարդե և նոցա ընչից, ստացվածոց և կնոջ տիրանա, ձեզ տեսնեմ, ղազի ըլլաք թե շեիտ, Մուհամմետ ձեզ գրկաբաց արքայության մեջ կսպասե»։

Մինչ քրիստոնյայք կփութային իրենց տունները, Ուլի Ճամիի աշտարակեն նշան տրվեցավ, Թուրք ու քուրդ (շրջակա քուրդեր սովորականեն խիստ ավելի քաղաք լցված էին) պոռալով Մուհամմետի սալավաթը, հարձակեցան մեծ մասամբ շուկաներուն վրա. արյունարբու գազաններուն առաջին զոհերն եղան այն պարզամիտներն, որք տակավին չէին հավատար մոտալուտ վտանգի մը հետևանքին, և անոնք, զորոնք իրենց Թուրք ընկերները խաբելով վստահացուցած էին՝ աղոթքե ետք պատրաստ զոհ գտնելու նպատակավ։ Մզկիթներեն ելնելով՝ զեն ի ձեռին հարձակեցան իրենց առաջին հանդիպած քրիստոնեից վրա։ Սուրով, տապարով ու կացինով ջարդուփշուր մարտիրոսեցին և հետզհետե գազանաբար ցրվելով ձեռք ձգածնին ոչխարի պես մորթեցին և կամ ողջ-ողջ մսավաճառներու կեռերին կախելով, ջարդեցին՝ հայհոյելով Քրիստոս և ոռնալով Մուհամմետի սալավաթը։

Ան գազանաբարո խուժանը արքայություն երթալու հուսով ամեն մեկը գեթ մի զոհ կփնտրեր, որ քրիստոնեից ջարդին մասնակից եղած ըլլար։ Ամեն անոնք, որ հապաղած էին վտանգեն առաջ մեկնիլ, արդեն ջարդվեցան և ոմանք անոնցմե, որ հաջողած էին այդ նեղ րոպեներուն խանութներու ներսերը պահվտիլ, ջարդվելե առաջ ականատես եղան քանի մը րոպեներ վերջը իրենց վրա կատարվածներուն։

Խանութներն արդեն սկսած էին խորտակվիլ և անթիվ խուժանի մը փութաջանությամբ հազիվ րոպեներ կտևեին ամբողջ շուկաներն պարպելու և հանկարծ աղմուկը կբարձրանար. «Հա՜ կյավուր, հա՜ ֆլայ, հա՜ ֆլայ». և ահա սուրերու ու կացիններու հարվածներուն տակ փշուր-փշուր կտապալեր խեղճ զոհը, և այս կերպով գրեթե խուժանը ժամ ու կես զբաղեցավ. թաղերու վրա հարձակելե առաջ կջանար ավար տանել։

Միևնույն ժամանակ քաղաքիս կառավարությունն ալ կգործեր. փոլիսներեն, ժանտարմաներեն և զորքերեն մաս մը ուղղակի աջակից էին խուժանին, և ժանտարմաներու Ալա Պաշի Ազիմաթ փաշան ալ խիստ զբաղյալ էր ոսկերճինոցի թանկագին ավարով։ Եվ ահա զորանոցեն փողը հնչեց և երկչոտ քուրդը խույս տալ կպատրաստվեր, կարծելով, որ զորաց հրաման կըտրվի ավերումը դադրեցունել. գիտակից Թուրքերուն աջակից զինվորներ կպոռան. «Ո՞ւր, կեցե՜ք, մի՜ փախչիք, կրակի փող է, կրա՜կ տվեք խանութներուն»։ Եվ ավերիչներու բուռն ջանքով ու կազերու շնորհիվ վայրկենաբար բոցերը բարձրացան բազմաթիվ շուկաներե, իսկ Ազիմաթ փաշա բավական ժամանակ ունեցավ ոսկերճինոցի շուկայեն զատ քանի մը վաճառականաց դրամարկղներու խորտակման ալ հասնիլ, որոնք գրեթե ամենն ալ լի էին կանանց ոսկիե ու մարգարտե թանկագին զարդերով, որ գոլերայի առթիվ քաղաքես դուրս ելնելուն ապահովցուցած էին գողերեն։

Կրակը շուկաներու մեջ սկսեց վայրագաբար վառել այրելու ու խորովելու խանութներու խորերը պահվտած անձեր և ստաքվածոց մեծ հարստությունն ալ։ Նույնպես վայրենի քուրդը, բարբարոս Թուրքը, ժանտարմա ու զորքը վայրագաբար սկսեցին քալել դեպի թաղերը։

Այն քրիստոնյաներ, որք հաջողած էին իրենց կամ վերջապես քրիստոնեի տուն մտնել, մի աստիճան բախտավոր կնկատեին իրենք զիրենք։ Եվ բոլոր տուներեն այս մեծ սուգի օրվան լացի հեծկլտանքը կլսվեր. էին, որք կուլային հայրերնին, եղբայրնին, զավակնին կամ, վերջապես, իրենց ամեն մեկն, որ ժամանակ չէր ունեցած տուն հասնիլ։

Այս գազանաբարո խուժանը հազիվ ժամանակ ունեցավ քանի մը Թրքախառն թաղեր մուտ գտնել. մեծ մասամբ զբաղեցան շուկայի ջարդով, ավարով ու հրդեհով և ջանացին հրդեհը մղել դեպի քրիստոնեից թաղերն, որ հակառակ իրենց ջանից՝ կբալեր դեպի Թրքաց թաղերն։

Ֆաթիհ փաշայի ճամիեն հարձակողներն ավարեցին ու ջարդեցին Աղմազար թաղի քրիստոնյա տուները, ուրտեղ թաղեցիք դեպքը ծագելու պահուն հավաքված էին մի տան մեջ 80-են ավելի։ Ատոնք անգթաբար մորթեցին, աչքեր փորեցին, անդամահատեցին և վերջապես մեծ մասը շարշարանոք նահատակեցին և ամենափոքր մաս մը կույսեր ու կիներ գերեցին։ Նույնպես Առպատաշի թաղն ալ բավական ավարեցին ու կոտորեցին, բայց այնչափ զոհեր ի մի հավաքված չհաջողեցան գտնել, այլ հազիվ 5—10—20։ Ս. Սարգիս եկեղեցին ավարեցին, ժամարար տեր Հարությունն քահանան, ժամկոչը և քանիներն որք եկեղեցին գտան, անլուր շարշարանոք նահատակեցին։ Քանդեցին տաճարներն ու գարշելի պղծություն գործեցին անդ. պատառեցին, գնտակահարեցին սրբոց պատկերները, ս. գրյանց մատենադարանի և դպրոցի գրյանքը պատառելով՝ կոյուղիներն ու ջրհորները լեցուցին, վերջապես բնաջինջ ըրին թանկարժեք հնությունքը։

Ահա այսպես անցավ առաջին օրն ու գիշերը։ Շաբաթի արշալույսին երկու ժամ մնացած էր, անթիվ նահատակներու դիակաց սարսեցուցիչ բուրմունքն, հրդեհին մուխն ու ծուխը բոլոր քաղաքիս վրա տարածված էին։ Բոցերը կցածնային, ալ իրենց պաշտոնը լմնցած էր շուկաներուն մեջ և հրդեհի մեկ ծայրը հասած էր խիստ մոտ ս. Կիրակոս և Մար Փթիոն եկեղեցիներուն։

Շաբաթի արշալույսը դեռ չծագած՝ բարբարոսներն սկսած էին վերստին գործի. ժանտարմայի ու բոլոր պաշտոնական անձանց դերը նույնը մնաց շաբաթ ալ. ինչ որ սուրը, կացինը, դաշույնը ու ռևոլվերը անկարող էին գործել, կգործեին կառավարական զենքերը։

Հետզհետե պաշարվեցան քրիստոնեից թաղերն ու տուները, մարդագազան խուժանի Մուհամմետի սալավաթի շեխի տաֆի, կանանց լրլիի, հրացաններու պայթմանց և այլոց աղմուկով լեցված էր բոլոր քաղաքը։

Վտանգն անխուսափելի էր։ Ամեն ոք դարման կմտածեր և կառաջարկվեր. «Փախչի՞նք, ֆրանսական դրոշի՞ն ապաստանինք»,— կգոչեին։ Արդեն լեցված են 2 դրոշակներու ալ տակը (հյուպատոսարան և լատինաց եկեղեցի)։ «Մեռնինք հանուն Հիսուսի արիաբար»... Եվ արի երիտասարդները կխոսեին հրստակ և անվրդով. «Փախչիլը վատություն է։ Մնալ, մեռցունել և մեռնիլ հանուն Խաչելույն, զի մեր դիրքերը լավ են անձնապաշտպանության համար։ Եթե չունենանք զենք, կարող ենք քանի մը ժամ դիմանալ՝ մեր թշնամու գլխին քար ու ջուր տեղալով»։ Գտնվեցան արի կիներ, որ քարն ու ջուրը իրենք հանձն առին և երիտասարդներուն հորդորեցին զենքով կռվիլ։ Թերահավատ քրիստոնյայք միջոց կառաջարկեին ընդունիլ Մուհամմետի սալավաթը և ապրիլ։

Մինչ քրիստոնյայք այս խորհուրդներով վրդովված էին, բարբարոսներու նպատակն էր բուռն զորությամբ ոչնչացունել բոլոր մնացող քրիստոնեից թաղերն, պարիսպներու բոլոր հարմար դիրքերեն, մզկիթներու աշտարակներեն, բերդեն ու թուրք տուներու բարձունքեն կառավարական զենքերու գնդակներն անընդհատ կարձակվեին քրիստոնեից թաղերուն վրա։

Որչափ որ բարբարոս թուրքեր գործի սկսելե առաջ վայրենի քուրդեր քաղաք բերել տված էին, իրենց փափաքածեն ավելի ալ երեկ մինչ երեկո և գիշեր հասան։ Ալ այլևս քաղաքիս դուռները փակ են նորեկ գազաններու առջև և մեն-մի խմբապետի կառաջարկվի այսինչ կամ այնինչ գյուղի վրա քալել և ոչնչացունել, ինչպես Ալոյե քաշալը յուր խմբով 4—500-ի չափ քաղաքիս ստորոտը Գթբրպիլ գյուղին վրա ղրկվեցավ, և զորքն ալ քաղաքիս պարսպեն և Ֆսգայասի ըսված բարձունքներեն գնդակահարելով օգնեց ավերման ու կոտորածին։

Քաղաքիս քրիստոնեից թաղերն ալ բուռն զորությամբ պաշարված էին հետևյալ փողոցի անցքերեն. Մերտին դռան կողմեն Տիգրանյաններու թաղն, որ թուրք դրացիներու շնորհիվ հաջողեցան շուտ ավարել ու մասամբ քանդել, և այն ուղղությամբ քալեցին Գույումճյան (Կյուլպենկ) Հակոբ աղայենց և Գաղազյան խոճա Հովսեփենց թաղը թե ուղղակի փողոցեն և թե Կյավուր մեյտանի կողմեն։ Քրիստոնեից կողմեն անձնապաշտպանության ամեն ճիգ սկսեց գործվիլ՝ հակառակ պարիսպներեն և աշտարակներեն տեղացող գնտակներուն և խուժանի բուռն հարձակման։ Հար և նման հարձակումներ միևնույն ժամանակ տեղի կունենային և Մերտին դռան թրքախառն թաղերու քրիստոնեից տուներուն վրա։ Մալաքի փողոցեն, Փալանճինոցի, Շեխմաթարի, Զուֆթա խանի, Զռիկի, Փոխլի քուշի, Պահապ աղայի Մանտալճիյանենց տուները կավրեն։ Ալի Պարտազի, Բերդի փողոցներեն, Նոր Շուկայի ավերակներեն, Ղարիպ Ղասթալի փողոցեն մինչ Կյավուր մեյտանը և երկու Պաղչի փողոցները բուռն կերպով պաշարած էին թուրք, քուրտ, զազա, զորք, ժանտարմա, ռետիֆ,

փոլիս և վերջապես Քրիստոսի բոլոր հակառակորդը։ Քրիստոնեից թաղերուն մեջտեղն էին նաև ֆրանսական դրոշները, որոնք նույնպես պաշարված էին։

Հիշյալ պաշարված սահմանները հարձակման դեմ անձնապաշտպանության բուռն ջանքեր կգործեին։

Տանիքներու բարձունքեն կարելի էր նշմարել քաղաքիս շուրջը պարիսպներեն դուրս 20-են ավելի քրիստոնյա գյուղեր, որք իրենց հրդեհի մուխն ու ծուխը ողջակեզի մը պես դեպի երկինք բարձրացուցած էին և երկնից ամպեր հետզհետե կթանձրանային։ Գյուղերու վիճակը քաղաքիս յուղոտ ավարին ուշ հասնող անխիղճ բարբարոսներու հանձնված էր, որոնք կավերեին ու կկոտորեին։

Քաղաքիս քրիստոնեից թաղերը պաշարող խուժանը քրիստոնեից անձնապաշտպանությունեն խիստ զայրացած՝ իրենց ուժերը կբաղմապատկեին։ Վերջապես, այդ օր խուժանը իր երեվակայածը իրագործել չհաջողեցավ քաղաքիս մեջ, բայց գյուղերը մեծավ մասամբ անձնատուր լինելով ոչխարի պես մորթվեցան էրիկ մարդիկ, կույսերն ի հաճույս գործածվեցան, կիները և մանավանդ հղի կիները անդամազննության և անդամահատության ենթարկվեցան։ Ավելորդ է հիշել, թե գյուղերու եկեղեցիները թալանվելե վերջ մասնավոր ջանյուք այրվեցան և քահանաները մասնավոր շարշարանոք նահատակվեցան։

Իբր նմուշ համառոտակի պատմեմ քաղաքիս ամենամոտ Գթբրպիլ և Ալի-Փունար գյուղերու կոտորածը։

Ալիփունարցի (Թրքախառն) քրիստոնյայք, երբ գյուղացի Թուրքերը կհարձակին վրանին, կապաստանին ս. Աստվածածին հոյակապ և մոտերս յուր բազմաթիվ սենյակներով նախանձելի եկեղեցին։

Գյուղական տուներու ավարն ու տավարը բաժնվելե վերջ կհարձակին եկեղեցիին վրա, կխորտակեն դուռները, կմտնեն բակը, կրակ կվառեն եկեղեցիին բուն դռան առջևը, կայրեն դուռը և մուխով ու ծուխով կլեցունեն եկեղեցին։ Վերջապես ապաստանող ժողովուրդը անձնատուր կընեն, բոլորն ալ կկապեն, կլմնցունեն եկեղեցիին ավարը, կրակ կուտան եկեղեցիին, իրիկվան դեմ բոլոր քրիստոնեից էրիկ մարդիկը արդեն կապված կտանին գյուղի պարտեզն առվակին մոտ, դանակնին, դաշույնին, սուրերնին ու գնդակնին կփորձեն և գիշերը պարտեզի քանի մը ծառի կոճղերով կայրեն նահատակաց մարմինները և

կխորովեն յանարդանս քրիստոնեից։ Իսկ կույսերն ու կիները ըստ քմաց պահեցին 10 օրի չափ և մաս մը ղրկեցին քաղաք։

Գթբրպիլցիք (բոլորը քրիստոնյա) առաջին առթիվ անձնապաշտպանություն փորձեցին։ Բայց երբ 4—5000-ի չափ խուժան մը և քաղաքի բարձունքեն զորաց գնդակներն անգթաբար կրսպառնային իսպառ բնաջինջ ընել գյուղը յուր ժողովրդով, հուսահատ ոևէ պաշտպանություն՝ ապաստանեցան ս. Թումայի եկեղեցին՝ անդ միմիայն աստծով ունենալով հույս։ Քահանան, գյուղի բողոքականաց քարոզիչն ու Եգիպտոսեն տեղս նոր հասնող պատ. Խորշան կխոսին։ Քահանան կպատարագե և բոլոր ժողովուրդը քրիստոնեական վերջին պարտականությունը կկատարե՝ պատրաստվելով մահվան։ Իսկ դուրսը խուժանը կավերե, կթալնե և կջանա բոպե մը առաջ ձեռք ձգել Լաֆիրները։ Վերջապես խորհուրդ կտրվի զորքերին բարձրանալ եկեղեցվո տանիքը ծակել, վառած գերանները վար ձգել։ Ներսը փակված ժողովուրդը այս կերպով մուխեն հեղձամահ եկեղեցիին դուռները կբանա։ Քահանան ու քարոզիչները մասնավոր շարշարանոք կնահատակեն և ժողովրդեն ամեն մեկը ըստ հաճույս շարշարելով՝ կկոտորեն, կույսերեն ու կիներեն ամեն անոնք, որք մեռնելը նախադաս սեպեցին գերությունեն, նահատակվեցան։ 1/5 հազիվ ազատվեցավ. մեծ մասամբ կիներ ու վիրավորներ։ 400-են ավելի ջարդվեցան։

Այսպես և ավելի բարբարոսությամբ 20 օրի չափ նահանգս գյուղերը, գյուղաքաղաքները, վանքերը ավերակ դարձուցին և քրիստոնյա ժողովուրդը բնաջինջ ըրին և նոցա դիակները շուներու, գազաններու կեր թողլով, ոսկորները ցրվեցին դաշտ ու ձոր։

Շաբաթն սկսեց մթննալ։ Ինչպես հիշեցի, Թուրքերն քրիստոնեից թաղերը պաշարելով՝ երևակայածնուն չափ գործ չկրցին առաջ տանիլ. սահմաններեն փախչող քրիստոնյայք թաղին ներսերը կստվարանային, և այսպես սահմաններու անհարմար տուներեն թեև շատերը թողուցին իրենց ունեցածը, բայց մեծ մասամբ կյանքերնին ազատեցին, և այսպես, երթալով պաշարված թաղն ավելի անձնապաշտպանության ձգտեցավ, պաշարման սահմանին մեջ եղած եկեղեցիներն անթիվ վիրավորյալներով ու թշվառներով լեցվեցան։ Մայրն անգիտակից է զավակներեն, այրը՝ կնոջմեն։ Ահ ու սարսափին հետ ցուրտն ու անձրևները սաստկացան, ապրելու հույսեն իսպառ կտրվել

սկսեցինք։ Խուժանի անդուլ ջանքերուն առջև քրիստոնեից անձնապաշտպանությունն ավելի ևս զայրացուց Մուհամմետի իսլամը։ Գաղիական դրոշներն անընդհատ նշանացի ելևէջները կշարունակեն, և բարբարոս խուժանը ոմբակոծելու խորհուրդն իրագործելու կջանա։ Ալ հուսահատության սահմանին մոտեցած ենք։ Խիստ անձրևն ու գիշերվա մութը վրա հասան։

Կիրակի կանուխեն զենքի պայթումներն կսաստկանային։ Բազմապատիկ ուժերով հարձակեցան ս. Կիրակոս և Մար Փթիոն եկեղեցիներուն վրա։ Գազազյանենց ու Գույումճյանենց փողոցն և այսպես քանի մը նշանավոր փողոցներեն թաղին ներսը մրտնել կփորձեն։

Այսպես շարունակվեցան անձնապաշտպանության բոլոր ճիգերը բուռն հարձակմանց դեմ։ Կիրակի մինչ թրքական ժամը 11-ն էր, ս. Կիրակոս թաղին խիստ մոտ Հաճի Սատրդ ըսված արյունարբու պարագլուխն իր տունը քրիստոնյա թաղերուն մեջ ըլլալով՝ հաջողեցավ իր շրջակա տուները ավերել և վերջապես տանիքը հանել զայրացած խուժանի մեկ մասը, որ խիստ մոտեն քրիստոնեից տանիքներն ու տուները, նույնիսկ ս. Կիրակոս եկեղեցին գնդակահարել կարենան։ Ճիշտ այդ պահուն կառավարության կողմեն բոլոր ազգերե կազմված խումբ մը փողոցներուն մեջ ազդարարեց, որ զենքերը լռեն և խաղաղությունը հաստատվի, մինչդեռ հիշյալ Սատրդ առիթեն օգտվիլ ուզելով՝ չէր դադրեր գնդակահարելե։ Վերջապես 2 գնդակներ ալ Սատրդի խուժանեն 2 շեիտ զրկեցին Մուհամմետի արքայությունը։ Լռեցին զենքերը քաղաքիս մեջ։ Ազդարարություններ և մունետիկներ պոռացին. «Քրիստոնյայք զենքերը պետք է հանձնեն կառավարության, որ կառավարությունը խաղաղությունը հաստատե»։

Շաբաթ մը չտևեց՝ քրիստոնեից զենքերը հանձնվեցան կառավարության։ Թուրքն ու քուրտը ազատ համարձակ ավերեցին ու կոտորեցին նահանգիս բոլոր գյուղերն ու վանքերը և յուրացուցին քրիստոնեից բոլոր հարստությունը։

Քաղաքիս եկեղեցիներն լեցվեցան անթիվ վիրավորներով և ունհամար աղքատներով, որոնց մեծ մասը 2—3 օր առաջ հարուստ էին կամ կարող էին իրենց պետքերը հոգալե վերջ, աղքատաց ալ օգնել։ Իսկ այսօր ո՞վ հոգա այսչափ կարոտյալներ։ Գաշարված սահմանին ներսն եղող թաղին մեջ մաս մը ձմռան

պաշար մնացած կար։ Ահա այդ չնչին պաշարներով խնամել սկսանք։

Հետզհետե ձերբակալվեցան քրիստոնյաներե մաս մը բարձր անձնավորություններ և խումբ մը միջին դասակարգի անձեր և հարցաքննվիլ սկսան դատախազեն։

Ուսկի՞ց սկսավ դեպքը, ո՞վ և ո՞ւր տեղերե կրակ տվիք շուկաներուն, ի՞նչ բաներե կամ ո՞ր եվրոպական ազգերե թելադրվեցաք, ի՞նչ առթիվ է ձեր բանակցություններն եվրոպական կառավարությանց հետ, և այլն, և այլն հակառակ հարցումներ։

Ավելորդ է հիշել, թե ի՞նչ պատասխան կրնային տալ դատապարտյալք։ Բանտի և փոլիսի անլուր չարչարանքներն սկսեցին ի գործ դրվիլ։ Շատերն արդեն չկրնալով դիմանալ՝ մեռան այդ չարչարանոք և շատերը մահամերձ հիվանդ և կան շատեր, որ արյուն կմիզեն։

Անցան 4—5 տաժանելի օրեր։ Բանտարկյալք բանտերու մեջ չարչարվելով, գյուղերն և ամեն քրիստոնեից հաստատությունք քանդվելու դրության մեջ, կույսերը և պատանիները թրքական բարբարոս կրից խաղալիք, գերիները ամենաստրուկ ծառայության մեջ և քաղաքիս քրիստոնյայք ողորմություն կխնդրեն իրարմե։ Ի՞նչ կերպով կարելի է անոթին՝ վիրավորյալին, վիրավորյալը՝ մերկին, մերկը՝ անդամահատվածին և վերջապես թշվառը՝ թշվառին օգնել։ Եվ ահա այս կերպով մխիթարել կջանային և կջանան։

Վերջապես հասան մեկ զինվորական ֆերիդ և երեք բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ, ինչպես որ ծանուցին Կ. Պոլսո թերթեր, և այսօր 25 օրե ավելի կլինի կարծեմ, ի՞նչ է պաշտոնին կամ գործերնին, չենք գիտեր։

Այսչափ գիտեմ միայն՝ թե թուրքը յուր զենքեր համարձակ կկրե և քրիստոնյաներեն տարած ավարը համարձակ վաճառի կհանե և անհուն ուրախության մեջ կլողա բոլոր մահմետական խուժանը և միշտ կերագեն կրկին կոտորել և ավարել մնացորդ թշվառ մասն ալ քրիստոնեից։

Ահա այսչափ հազիվ կարող ենք գրել մեր նեղ դրության մեջ։ Ինչպես ըսի, ամեն կերպով պաշարման և ճնշման մեջ ենք և կարելի չէ կոտորածի և նյութական վնասուց իսկական թիվը գտնել, բայց վստահ եղեք, թե հետևյալ սահմաններեն պակաս կարելի չէ նկատել նահանգիս և քաղաքիս անձի և նյութական կորուստը։

Քաղաքիս մեջ — 2000 անձ քրիստոնյա դեպքի օրերն ջարդված և մեռած։

1500 անձ քրիստոնյա վիրավոր ազատված և սոցա մոտ հազարը առած վերքերեն մեռած կամ անդամալուծված։

Եվ մինչ ցարդ մեռած են մոտ 500-ի ալ անկարող լինելով թշվառության դիմանալու և ջարդի առթիվ սարսափումներեն հառաջ եկած հիվանդություններեն և վերջինք կշարունակին մեռնիլ։

Իսկ նյութական կորուստը քաղաքիս մեջ՝ 2000-են ավելի խանութի ավարը տարված, 1200 խանութ այրված և 1500 տան ավարը տարված։ Վերջապես քրիստոնեից ունեցածին հարյուրին 95-ը կորսված է։ Մեկ հաշվով մը 10 միլիոն ոսկիի կհասնի քաղաքիս քրիստոնեից կորուստը։

Նահանգիս մեջ վանքեր ու գյուղական եկեղեցիներ չեն մնացած։ Քրիստոնյա գյուղացիք վերջին ծայր թշվառության մեջ են։ Եթե 1/4-ը ազատած են ցիր ու ցան, գյուղական տներն իսկ բոլորն ալ այրված և մոխիր դարձած են։

Նյութական կորստյան սահման մը գծել չեմ կարող։ Այսչափ միայն գիտեմ, թե ինչ որ ուներ քրիստոնյան, այսօր երբեք չունի։ Իսկ անձի վնասը նահանգիս մեջ 25 000-ե վար չէ կարելի հավատալ։ Բայց մինչ գարուն այս ընթացքով, նույնչափ ալ զանազան ձևերով և ցավերով կմեռնին։

Տե՛ր, թեև խիստ ստվար հատորներու կարոտ նկարագրություն մը այսչափ համառոտ գրել ջանացի, երջանիկ պիտի սեպեմ զիս, եթե այս ալ ձեզ հասնելով հրատարակվի։

Տիգրանակերտցի մը

«Արմենիա» №№ 54, 55, 56
1896 փետր. 8—12—15

44. ՀԱԼԵՊՈՒՄ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Զեկույցից

Հալեպ, 29 Ցունվարի 1896 թ.

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը շարադրելու այն վշտալի իրադարձություններին մասին, որոնք տեղի են ունեցել անցյալ տարվա դեկտեմբերի 28-ին և 29-ին, քրիստոնյա բնակչությանը զինաթափ անելուց մի քանի օր հետո։ Ցուցմունքներն ինձ տվել են Ուրֆայից եկած մի քանի անձինք։

Չորեքշաբթի օրը՝ 28-ի առավոտյան մի քանի մահմեդականներ իրենց բարեկամ քրիստոնյաներին խորհուրդ են տվել հեռանալ շուկայից և տանը նստել, որովհետև այդ օրը մտադիր են եղել կոտորած անել։ Իրոք, կեսօրվա դեմ, Տելֆեդերում՝ մահմեդականների թաղամասում, որն իշխող դիրք ունի հայկականի նկատմամբ, ժողովրդի մեծ բազմություն է կուտակվել։

Հարևան բերդից ինչ-որ մեկի տված ազդանշանի համաձայն զինված մուսուլմանների և պահեստայինների բազմամբոխ ավազակախմբերը ներխուժել են հայոց թաղը չորս տարբեր կետերից։ Տների դռները ջարդել են կացիններով և բնակչությանը անողոքաբար մորթել։ Շրջապատվածները, բնականաբար, անկանոն փախուստի են դիմել, վայր են ցատկել սանդղավանդներից կամ ջրհորներն են նետվել՝ մահից խույս տալու հույսով։ Ջարդարարները փնտրտել են բոլոր անկյունները, նկուղներն են գցել բոցավառ նյութեր, որպեսզի փայտե շինությունների հետ միասին վառվեին նաև այնտեղ թաքնված դժբախտները։ Կոտորածը շարունակվել է մինչև հաջորդ օրվա կեսօրը և դադարել միայն այն ժամանակ, երբ արդեն զոհ չի մնացել...

Հայոց եկեղեցին, որտեղ 2500-ից ավելի մարդ է պատսպարված եղել, գլխավորապես կանայք, երեխաներ ու ծերեր, նավթ են լցրել ու վառել։ Հիսուն հոգուց բացի, որոնց ժամանակին հաջողվել է բարձրանալ կտուրը, մնացած բոլորը զոհվել են։ Եկեղեցու նկուղում խեղդվել է 400 հոգի։

Պնդում են, Ձե՛րդ գերազանցություն, որ մոլլա Սեիդ Ահմեդը՝ դերվիշների շեյխն ինքն է անձամբ սկսել կոտորածը։ Նա մի հայի ստիպել է պառկել գետնին և իր ձեռքով մորթել է նրան, հետո էլ արտասանել ծիսական ոտանավորի տողեր, որոնք մուսուլմանները բարձրաձայն կարդում են մատաղ անելիս։ Դեռևս դեկտեմբերի 26-ի հինգշաբթի օրվանից այդ մոլլա Ահմեդը Կալա Բուանյա հրապարակում հավաքել է երևելի մուսուլմաններին, կոչ արել, որ կոտորեն հայերին, որոնց, նրա ասելով, պետք է բնաջնջել որպես պետության թշնամիների, որպես սուլթանի իշխանությանը չենթարկվողների։

Պատմում են, թե ջարդարարների մի խումբ հարձակվել է մի տան վրա, որտեղ գտնվելիս են եղել 150 հայեր։ Ջարդարարներն սպանել են 120 հոգու և կոտորածը դադարեցրել են

միայն միջնաբերդից հնչած փողի ազդանշանը լսելուց հետո։ Այսպիսով, երեսուն հոգի փրկվել է։ Հայերի տներն ու խանութները թալանված են, իսկ ամբողջ գույքը, ինչը հնարավոր չի եղել տանել, ոչնչացրել են տեղում։

Երկուշաբթի օրն էլ պարզվել է, որ բավական է մի քանի զինվորական ուղեկալ ուղարկել մահմեդականների թաղերը, որպեսզի կանխվեն նոր ջարդերը։ Իսկ 13 ոստիկանները, որոնք կանգնեցված են եղել ֆրանսիական և ամերիկյան շենքերի մոտ, լիովին բավական են եղել, որպեսզի նրանց պաշտպանեին որևէ հարձակումից։

Դեկտեմբերի 31-ի երեքշաբթի օրը մունետիկը մուսուլման բնակչությանը[7] կոչ է արել իշխանություններին հանձնել առևանգված ջահել հայուհիներին։ Երեսուն հայուհու հանձնել են իշխանություններին, իսկ երկուսը կրոնափոխ են եղել և ընդունել մահմեդականություն։

Սպանված հայերի թիվը, հայերի ասելով, 10-ից 12 հազար է, բայց պետք է սպասել նոր մարդահամարի, որպեսզի պարզվի ճշգրիտ թիվը...

Այս տխուր իրադարձությունների ժամանակ մուսուլմաններից մարդասիրական զգացմունք են դրսևորել և ամենայն գովեստի են արժանի Մուստաֆա աղա Ռեջեպը, Հայդար և Խալիլ Ռեջեպները։ Նրանք փրկել են մոտ հիսուն հոգու, որոնք բարձրացած են եղել այրվող եկեղեցու տանիքը, և, բացի այդ, պատսպարել են իրենց թաղում ապրող քրիստոնյաներին ու նրանց, ովքեր կարողացել են իրենց մոտ ընկնել։ Սպանությունների գլխավոր հրահրիչները, ինչպես հաղորդում են, եղել են մոլլա Սեիդ Ահմեդը, Մուստաֆա էֆենդին, Հուսեին փաշա էրտադի զաքեն, Հարիֆ փաշան՝ ռեդիֆների պետը, Քյուրդո աղան, Հաջի Բեքիր Միքյաիլ օղլին, Ալի աղա Ազալ Իսեն Աղասին, Հաջի Մահմեդ Օնասուան օղլի Ասադ էֆենդին, Հաջի Կարա աղան, Հաջի Իսսա Աբդուլլայի որդիները։

Չե՛րդ գերազանցություն. այս բոլոր գազանությունների համար մեղավորները առ այսօր պատժված չեն, իսկ կոտորածից ազատված դժբախտները (դրանք մոտ 6800 հոգի են), մնացել են առանց գոյության միջոցների... Տուժածների մեծ մասը, որոնք մնացել են առանց ծածկի և առանց հագուստի, դաժան ձմռանը չեն դիմանա։

Հայ լուսավորչականներից բացի, սպանված են մոտ հարյուր այլ քրիստոնյաներ, որոնց թվում և՝ հիսուն հայ կաթոլիկներ։ Պաշտոնական թվերը, որ հաղորդել են տեղի իշխանությունները, հետևյալն են՝ 600 սպանված քրիստոնյա և 120 մուսուլման։ Իրականում, դատելով Ուրֆայից փախածների պատմածներով, որոնցից անձամբ ինքս եմ լսել, որոնք հարցաքննված են առանձին-առանձին և ոչ մի կապ չունեն հայ լուսավորչականների հետ, մահմեդականներից սպանվել են ոչ ավելի, քան հինգ հոգի։ 3-ը՝ եկեղեցու վրա հարձակվելիս և 2-ը՝ ավարը բաժանելիս։

АВПР, Посольство в Константинополе, д. 3182. л. 2.

45. ՌԻԶԵՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Քաղվածքներ № 39 զեկույցից **18 փետրվարի 1896 թ.**

Ես բազմիցս պատիվ եմ ունեցել իմ զեկույցներում Ձերդ բարձր գերազանցությանը իմ գնահատականը տալու հայերի ապստամբության կամ հայերի կողմից ապստամբության նախապատրաստվելու վերաբերյալ թուրքական իշխանությունների պնդումների մասին. բացի խոսքերից ու գրություններից, հայ հեղափոխականների կողմից հեղափոխության նախապատրաստումը, գոնե Տրապիզոնի վիլայեթում, ոչ մի բանում չի արտահայտվել։ Հայերը զենք չունեն, և թուրքական իշխանությունների բոլոր պնդումներն այդ մասին պետք է որ հետին միտք ունենան՝ արդարացնել հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործելակերպը։

Տրապիզոնում 1895 թվի սեպտեմբերի 26-ի խժդժություններին նախորդեցին այս հայտանիշները. թուրքական իշխանությունների կողմից հայերին զենք պահելու մեջ մեղադրանքները, տնային խուզարկությունները, քաղաքական դատավարությունները, վերջապես, թուրք պաշտոնյաների վրա կատարվող մահափորձերը։ Իրականում չի հայտնաբերվել զենքի ոչ մի պահեստ, և, բացի այս, հայերի մոտ չեն հայտնաբերվել նույնիսկ միևնույն ընդհանուր տեսակի առանձին հրացաններ և ատրճանակներ, ինչը ցույց կտար քաղաքական որոշակի նպատակով հայերին զինելու ընդհանուր ղեկավարության գոյության մասին։ Այս բանը չեն կարող չգիտենալ թուրքական իշխանությունները, և եթե, չնայած դրան, պաշտոնական փաստաթղթում նորից մե-

զարդանք է հանդես գալիս հայի նկատմամբ զենքի ստացման և բաժանման միջնորդության խնդրով, ապա ես կհամարձակվեմ արտահայտել իմ կռահումը, թե՝ այդպիսի փաստը հանդիսանում է Տրապիզոնի վիլայեթի Ջանիկի սանջակում իշխանությունների կողմից նախապատրաստվող իրադարձությունների հագնապալի հայտանիշը։ Որոշ (թեև Թուրքիայում գոյություն ունեցող կարգերում՝ թույլ) մխիթարանք է Սամսոնի մութեսարիֆի մասին ընդհանուր գնահատականը՝ որպես կարգին մարդու և եռանդուն կառավարիչի...

Սույն փետրվարի 16-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 10-ին Տրապիզոնում, բոլոր թաղերում միաժամանակ, հանկարծակի սկսվեց հրացանաձգություն։ Բաց թողեցին նաև հրթիռներ։ Ո՛չ հյուպատոսներից որևէ մեկը, ո՛չ էլ մեր հրետանավակի հրամանատարը, նախազգուշացված չէին այդ հրացանաձգության մասին։ Կրակոցների թնդյունները շարունակվեցին մեկուկես ժամ անընդմեջ։ Ինչ ասել կուզի, թե այդ գիշերային կրակոցները, որոնք, ոչ դեպ ոչ դեն, թնդում էին հենց տների լուսամուտների տակ, ինչպիսի իրարանցման մեջ գցեցին քրիստոնյա ողջ բնակչությանը, մանավանդ հայերին, որոնք ոչ առանց հիմքի վախենում ու դողում էին իրենց կյանքի համար։ Միայն հաջորդ օրը պարզվեց, որ փետրվարի 16-ի գիշերային հրաձգությամբ թուրքերը «լուսնից ստվերն էին քշում-փախցնում» (այդ ժամանակ լուսնի մասնակի խավարում էր եղել)։

Այդպիսի հրաձգությունը մի քաղաքում, որը համարվում է պաշարողական դրության մեջ, չի վկայում վալիի կողմից հասարակական հանգստի խանգարումից խուսափելու հոգացողության մասին...

Փետրվարի 16-ի գիշերային հրաձգությունից պետք է հանել հետևյալ եզրակացությունը. մահմեդական բնակչությունը զինված է։ Դա բոլորի կողմից հաստատվում էր առաջ էլ, և միայն գեներալ-նահանգապետի հայտարարություններում, որոնք փակցվում էին փողոցների բոլոր անկյուններում, հայտնվում է, թե «Օրենքը մասնավոր անձանց խստորեն արգելում է զենք կրել, և ով որ այդ հանցանքի մեջ բռնվի, խստագույն պատժի կենթարկվի»։

Հիմք չկա ենթադրելու, թե մահմեդական բնակչությունը զինված է միայն Տրապիզոն քաղաքում, իսկ վիլայեթի մյուս վայրերում զինված չէ։ Այսպիսով, թուրքական իշխանությունների

այն խոսքը, թե հայերը զինված են և զինվում են, չի համապատասխանում մեր աչքով տեսածին, ինչը վկայում է, որ հայերը բնավ էլ զինված չեն ու չեն զինվում, այլ՝ մահմեդականներն են զինված։ Այս փաստը կարևոր է, մանավանդ, կապված այն տագնապալի հայտանիշի հետ, որի մասին ես պատիվ ունեցա արտահայտվել վերևում։

Գիպպիուս

АВПР, Посольство в Константинополе, д. 3184, л. 102.

46. ԿՈՆԻԱՑԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Մարտ, 1896 թ.

Կեսարիայում հայերի կոտորածի ժամանակ [1895 թ. նոյեմբերի 18-ին] ոստիկանությունն ու զինվորները սկսեցին մասնակցություն ունենալ կոտորածի դադարեցմանը միայն չորս ժամ անց։

Այն, որ որոշ կետերում հայերի կոտորածը նախանշված է եղել կենտրոնական բարձրագույն իշխանությունների կողմից և հրամայված է եղել ի կատար ածել,— դա հազիվ թե կասկածի ենթակա լինի...

Իսկ ընդհանրապես մուսուլմանները հայերին կոտորում էին ցուպերով, մանգաղներով, մահակներով, դանակներով ու դաշույններով,— մի խոսքով՝ սառը զենքով։ Ասում են, հայերի կողմից, մանավանդ տներում, հրացաններ և ատրճանակներ են արձակվել։ Սակայն այն տները, որտեղից կրակոցներ են հնչել, ոչ միայն կողոպտվել են, այլև հրկիզվել՝ նույնիսկ բնակիչներով հանդերձ։

Կոտորածից, խանութների ու տների թալանից և կանանց ու աղջիկների առևանգումից, մի խոսքով՝ ջարդից հետո, ոստիկանությունը հույներին հրավիրել է, որ ջոկեն շուկայում եղած իրենց սպանվածներին և հայերին, որ տանեն իրենց զոհերին։ Իսկ ինչ վերաբերում է Փամբուկլի-Խանում սպանվածներին (մոտ 200 հոգի), ապա սայլապանները նրանց տարել ու շպրտել են հին բերդի բակը։

Բոլոր սպանվածների ու թալանվածների թվի վերաբերյալ ես հավաքել եմ հետևյալ տեղեկությունները։

Մութեսարիֆի ասելով՝ լուսավորչական և կաթոլիկ հայերից՝

սպանված	 235	հոգի
հույներից՝	. . . 10	»
բողոքականներից՝	7—8	»
առևանգված են աղջիկներ	3	»

որոնցից 2-ը վերադարձված են և 1-ը դեռ չի գտնված։

Իսկ ըստ հայ լուսավորչական վարդապետ Տրդատի ցուցմունքների, բոլոր հայերից (տղամարդիկ, կանայք և երեխաներ)

սպանված	. . . 346	հոգի
թալանված	մոտ 400	տուն
այրված	 27	»

ընդ որում երկու տան մեջ այրվել են մոտ 13 հոգի

առևանգված կին և աղջիկ . . . . 21 հոգի

Վերադարձված են բոլոր աղջիկները, մեկից բացի։ Թաղման համար վարդապետին են հանձնվել միայն 288 հայերի դիակներ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ։

Իսկ ըստ Կեսարիայի ճիզվիտական դպրոցի պետի գրառումների՝

սպանված	. . . 360	հոգի
վիրավոր	. . . 427	»
թալանված տներ	. 362	»
այրված տներ	. . 27	»
թալանված խանութներ	140—150	

աղքատների թիվը (ովքեր թալանված են) հասնում է

մինչև	 2500	հոգու
սպանված կաթոլիկներ	12	հոգի
բողոքականներ	. . 21	»
առևանգված աղջիկներ	25	»

Հայ կաթոլիկ եպիսկոպոսի կողմից ինձ տրված ցուցակի համաձայն՝

սպանված	. . . 395	հայ
վիրավոր՝ մոտ	. 400	»
առևանգված աղջիկներ	մոտ 60	հոգի
թալանված տներ	. . 500	
թալանված խանութներ՝	մոտ 200	
այրված տներ	 27	

Հայերը մինչև հիմա վախից չեն բացում իրենց կրպակները և չեն բողոքում իշխանություններին։ Գուցե հարյուրից ոչ ավելի քան հինգը համարձակվել են նստել շուկայի իրենց կրպակներում և խնդրագրերով դիմել վերևներին։

Տեսնելով Կեսարիայում նոյեմբերի 18-ի խժդժությունների անպատժելիությունը, թուրքերը քրիստոնյաների թալանումն ու բռնությունը տարածեցին, և ճանապարհներին կողոպտում էին անցնող հույներին ու հայերին և հափշտակում նրանց ապրանքները...

Հայերի ու հույների ահն ու երկյուղն այնտեղ է հասել, որ հիմա առանց ոստիկանների նրանք սիրտ չեն անում Անգորայից անցնել Կեսարիա և հակառակը, ինչում ինքս անձամբ համոզվեցի։ Եվ իրոք, քրիստոնյաներն ինչպե՞ս չվախենան, երբ Կեսարիայի ջարդի, Կիրշեհիրի սպանությունների և ճանապարհներին կատարված կողոպուտների համար մեղավորներից մինչև այժմ ոչ մեկը չի պատժված...

Տեսնելով իշխանությունների անարդարացիությունը, մուսուլման հանցագործների անպատժելիությունը և զորքի անվստահելիությունը, քրիստոնյաները, մանավանդ հայերը, ապրում են մշտական վախի մեջ՝ իրենց կյանքի համար և իրենց ունեցվածքի անվթարության համար, ստորանում են մահմեդականների առաջ և ստորաքարշությամբ նրանց բարեհաճությունը հայցում։

Բայց, չնայած այս բոլորին, մուսուլմանների ատելությունը նրանց հանդեպ չի դադարում, և ամեն առիթով, «գյավուր» հայհոյանքի հետ մեկտեղ, այդ ատելության դրսևորումը, մանավանդ գյուղերում, երևում է այն խոսքերում, որ «սպիտակ թե սև շուն» — իրենց համար մեկ է, այսինքն՝ հույները թե հայերը միևնույն քրիստոնյաներն են։

Մի խոսքով, հայերի և ընդհանրապես քրիստոնյաների այժմյան վիճակը Անգորայի գավառի իմ այցելած քաղաքներում ու գյուղերում վտանգավոր է, տառապալի և անպաշտպան...

Արքունի խորհրդական Ալ. Ակիտսկի

АВПР, Посольство в Константинополе, д. 3184, л. 146.

47. ԿՈՏՈՐԱԾԸ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ

«Արարատի» թղթակիցը, լինելով ականատեսն ու վկան շատ դեպքերի, որոնք տեղի են ունեցել Թուրքահայաստանում, մանրամասնություններ է հաղորդում անցյալ տարվա (1896) Վանի ջարդերից...

Հունիսի 3-ին, երբ սկսվեց քաղաքի կոտորածը, պաշտոնական հեռագրերն այդ մասին տեղեկացրին գավառական իշխանություններին, որոնք այդ պատճառով հրամայեցին սկսել ջարդը։

Թեև Փոքր Ասիայում հաղորդակցության ճանապարհների փակման հետևանքով ընդհանրապես չի կարելի ճշգրիտ թվերով արտահայտել սպանվածների քանակը, այնուամենայնիվ ըստ մեզ հասած պաշտոնական տեղեկությունների կարելի է ենթադրել, որ սպանվածների ընդհանուր քանակը ամբողջ վիլայեթում 20 000-ից պակաս չէ, իսկ ուրիշների կարծիքով էլ՝ 30 000-ից։

Ամենասարսափելի կոտորածը եղել է Արճեշում, Հայոց Ձորում, Գավաշում, և Կարճկանում։ Առաջին երկուսում սպանվել է 1650 հոգի, իսկ մյուս երկուսում՝ 850։ Արճեշի գավառի բոլոր գյուղերում համարյա ոչ մի բնակչություն չի մնացել։ Նարեկ գյուղում սպանվել է 200 հոգի, իսկ Բալուում՝ դրանից էլ ավելի։ Բոլոր այդ գյուղերից միայն տասն է փրկվել։ Երկու ավազակ՝ Աբդուլ Համիդը և նրա եղբայր Աբդուլ Քաֆյուրը, սպանել են ավելի քան 200 հոգու։ Շահպազում սպանվել է 10 հոգի։

Արճակ գյուղը անցյալ տարի ավերածության չենթարկվեց, այնտեղ կարգուկանոնը պահպանում էր զորքի 130-հոգանոց մի ջոկատ։ Իսկ երբ կոտորածն սկսվեց ամբողջ մարզում, այդ ջոկատի պետը երդվեց հասարակության առաջ, որ թույլ չի տա նրանց մոտ մտնեն թալանչիները։ Բայց դա լոկ խաբեություն էր։ Շուտով հենց ինքն է թալանի մատնում գյուղը և նրան օգնության է գալիս մի ուրիշ՝ ավելի մեծ ջոկատ։ Այստեղ սպանվել է 200 հոգի, 60—65 ջահել կանայք ու աղջիկներ անպատվված են։ Մի քանիսը փախչում են քրդական Մեզրե գյուղը և այնտեղ իսլամ ընդունում, որպեսզի փրկվեն անխուսափելի մահից։

Վերոհիշյալ գավառներում, բացի մեծ թվով սպանվածներից, շատ են եղել նաև իսլամ ընդունածները։ Իսլամ ընդունելու պատճառը այն հանգամանքն էր, որ շատ մարզեր չունեին այնպիսի

բնական ապաստարաններ, որտեղ հնարավոր լիներ թաքնվել, որի հետևանքով շատերն ուղիղ փախչում էին մեշիդ, շեյխերի, մոլլաների, դերվիշների տները, որոնք մահվան սպառնալիքի տակ բռնի իսլամ էին ընդունել տալիս նրանց։ Շատ են եղել նաև այնպիսի քուրդ բեգեր, որոնք փրկել են շատ հայերի։ Մահմուդ զադե Բեյտուլլահ բեյը, որն աչքի էր ընկնում մարդկայնությամբ ու մարդասիրությամբ, կոտորածից պաշտպանել է ամբողջ Մոկսի գավառը։ Նա լավ ծանոթ է հայերեն լեզվին, շատ է կարդում հայերեն։ Կոտորածի ժամանակ նա իր գավառում չի եղել։ Բայց իմանալով, որ վայրենի քրդերը կոգտվեն իր բացակայությունից և հայերի ջարդ կսկսեն, շտապ հետ է եկել Վանից և, իր շուրջն հավաքելով 400 քաջ քրդերի, քշել հալածել է քուրդ աշիրեթների ամբոխներին, որոնք եկած են եղել Մոկսի գավառը՝ կոտորելու նպատակով։ Այս նույն բեգը անցյալ տարի, բացի հայերին մատուցած շատ ծառայություններից, նաև 300 լիրա է նվիրել հայերին։ Վարագա լեռան վրա ապաստանել էր 5000 հոգի, որոնց մեծ մասը զոհվել է սրից, հրդեհից, քաղցից, համաճարակից։ Շատերը նաև նավակներով փախել են Լիմ ու Կտուց կղզյակները։ Սրանց թիվը հասցվում է մինչև 8 հազարի։

Եղել են և զինյալ ջոկատներով հապճեպ կազմակերպված ինքնապաշտպանության շատ օրինակներ, չնայած դրան՝ ոչ մի տեղ նրանց չի վիճակվել մինչև վերջ պաշտպանել իրենց անվտանգությունը։ Ասրաֆ գյուղը անցյալ կոտորածին պաշտպանել էր իրեն, այժմ միանգամայն ոչնչացված է։ Ոչ պակաս քաջաբար պաշտպանվել է նաև Բանոն գյուղը, բայց ի վերջո ընկել է էմին փաշայի գազանություններից։ Գենդոտն գյուղը զոհն է դարձել համիդիեների խաբեության, որոնք կյանքի ապահովության դիմաց հայերից պահանջել են հանձնել զենքերը։ Բնակիչները հավատացել են և գլխովին կոտորվել։

Ամենից շատ տուժել է Շատախի գավառի Շահ մեծ գյուղը... Ընդհանրապես գյուղերում, բնակչության նոսրության, միջոցների ու զենքերի բացակայության պատճառով ավելի շատ զոհեր են եղել, քան քաղաքներում։ Կոտորածներն էլ սարսափելի բարբարոսական բնույթ են կրել։ Այսպես, օրինակ՝ Արճեշի քահանային կապել են վայրի ձիու պոչից, իսկ Գանձակ գյուղում ոմն Ալի բեյ և Նադիր օղլին մոտ 20 երեխաների ու 10 պառավների նետել են խոր փոսի մեջ, որտեղ այդ դժբախտներին քարկոծել են այնքան, մինչև փոսը լցվել է քարերով և երկու օր անց

էլ դեռ լսելի է եղել նրանց հեծեծանքի ձայները։ Բուն Վանում կանանց ու երեխաներին խնայել են։ Օրինակ՝ այնտեղ Խալիբ փաշան այնպես է պահպանել երեխաներին ու կանանց, որ հրամայել է ջուր տալ, երբ ուշագնաց են եղել՝ տեսնելով իրենց հարազատների այն տառապանքները, որոնք հենց ինքը՝ Խալիբ փաշան է պատճառելիս եղել։ Այլ կերպ է եղել գյուղերում, այստեղ չեն տարբերել ո՛չ սեռ, ո՛չ տարիք։ Եթե կենդանի էին մնում կանայք և նույնիսկ երեխաներ, ապա նրանց էլ պատվաստում էին։ Որպեսզի այդ անարգանքից խուսափեին, քաղաք փախչող կանանցից շատերը սափրում էին գլուխները, հոնքերը, երեսներին ցեխ էին քսում։ Շատ գյուղեր կրկնակի, եռակի, նույնիսկ քառակի ավերածության են ենթարկվել, այնպես որ այնտեղ ոչինչ չեն թողել, նույնիսկ դռների ու լուսամուտների շրջանակներն են հանել տարել։

Հայերից նրանք, ովքեր այս կամ այն նկատառումով փրկություն են որոնել՝ փախչելով մահմեդականների մոտ, կրոնափոխ են արվել։ Այդպիսի շատերը կան Արճեշի, Արծկեի, Գավաշի, Կարճկանի, Խոշանի և այլ գյուղերի բնակիչներից։ Հայտնի է, որ դեռևս անցյալ կոտորածի ժամանակ Խիզանի, Սպարկերտի, Կարկարի, Մամրտանի իսլամ ընդունած բնակիչները արդեն ութ ամիս է շարշարվում են, որ նորից քրիստոնեություն ընդունեն, բայց կառավարությունը ձգձգում է։ Վանի վիլայեթում մահմեդականացվածների թիվը հասնում է մոտ 30 000-ի։ Այժմ նրանք ի նշան իսլամ ընդունած լինելու՝ գլխներին սպիտակ շալմա են կապում, իսկ գոտիներից՝ դաշույն։

Բացի նյութական կորուստներից, որ հասցված են շատ վանքերի, ոչնչացված են բազում հնություններ՝ եկեղեցական հին սպասք, շատ ու շատ հազվագյուտ ձեռագրեր և այլն։

Братская помощь пострадавшим в Турции армянам. М. 1897, с. 120, 122—124.

48. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԳՆԴԱՊԵՏ ՊԵՇԿՈՎԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻՑ

Ա. Քաղվածք № 84 զեկույցից **16 օգոստոսի 1896 թ.**

Օգոստոսի 14-ին, կեսօրվանից, և այսօր գիշերը Կոստանդնուպոլսում տեղի ունեցան հայերի կոտորածներ։ Բնակչության մեջ խուճապը է՛լ ավելի մեծ է նրանից, որ վստահություն չկա իշխանությունների միջոցառումների նկատմամբ։ Ոստիկանությունը սադրում է և մասնակցություն ունենում ջարդերին։ Պարեկները դիտավորյալ չեն լսում կամ համագործակցում են մարդասպաններին...

Բ. Քաղվածք № 36 զեկույցից **19 օգոստոսի 1896 թ.**

Կոստանդնուպոլսում երկու օրում սպանվել են 5500-ից ավելի անպաշտպան հայեր, որոնց թվում և՝ ուրիշ շատ քրիստոնյաներ։ Ստույգ պարզված է, որ կոտորածները կատարել են կառավարության կողմից նախապես կազմակերպված հրոսակախմբերը՝ ոստիկանության պաշտոնյաների գլխավորությամբ։ Շնորհիվ դիվանագիտական կորպուսի, մանավանդ մեր դեսպանի, վճռական բողոք-դիմումներին, երեկ և այսօր ավելի հանգիստ է, բայց խուճապը շարունակվում է...

АВПР, Политархив, д. 3449, л. 183—184.

49. Կ. ՊՈԼՍԻ ԿՈՏՈՐԱԾԸ

(Օ. Կայդանովայի նամակը Կ. Պոլսից)

Օգոստոսի 14-ին և 15-ին (1896 թ.) մենք կանգ էինք առել Կոստանդնուպոլսի մոտ։ Մեզ վիճակվեց վկան լինել թուրքերի կողմից հայերի կոտորածի։ Մեր տեսած սարսափելի պատկերները հիմա էլ աչքիս առաջ են։ Հազիվ ես հավատում այն բանին, որ դա իսկապես եղել է, որ մենք երազում չենք տեսել այդ բոլոր սարսափները։ Մենք Կոստանդնուպոլիս եկանք չորեքշաբթի օրը՝ առավոտյան։ Մեր նավը („Sidon" — Messagerie Maritime ֆրանսիական ընկերությանը պատկանող) կանգնեց նավահանգստում։ Մենք ժամը 10-ի և 11-ի միջև ափ իջանք, եղանք քաղաքի երկու (Պերա՝ եվրոպական և Գալաթիա՝ ասիական) մասերում, եղանք հեռագրատանը և փոստում։ Ամեն տեղ կատարյալ անդորր էր։ Մենք շոգենավ վերադարձանք ժամը 1-ին։ Հետո ես մի անգամ էլ դուրս եկա նամակ ուղարկելու ռուսական փոստով (նավահանգստից մի քանի քայլ այն կողմ) և զարձյալ ոչինչ չնկատեցի։ Մինչդեռ, ինչպես հետո պատմում

էին ուրիշ ականատեսներ, հենց այդ ժամանակ (12-ի և 1-ի միջև) է սկսվել կոտորածը։ Այն սկսելու համար, ինչպես ասում են, ազդանշան է ծառայել հայերի կողմից գանձապահին բանկում սպանելը և կռիվը փոստատանը։ Իսկույն սկսվել է թուրքերի կողմից բոլոր հայերի հետապնդումն ու անխտիր սպանությունը։ Խանութները, կրպակները մեկը մյուսի հետևից արագ փակվել են։ Զինաքարշների երթևեկությունը դադարեցվել է։ Միանգամից քաղաքի տարբեր կողմերի չորս փողոցներում ահեղ իրարանցում է սկսվել։ Բոլորը, ոչինչ չհասկանալով, փախել են։ Բոպե առ բոպե փողոցների մեջ, մայթերի վրա ընկել են սպանվող հայերը՝ իրենց գլխին տեղացող մահակների ու թրերի հարվածներից։ Չբավարարվելով փողոցներում սպանելուց, թուրք ամբոխները ներխուժել են տները, և այնտեղ շարունակվել է ջարդը։ Տվյալ դեպքում ուշագրավն այն է, որ կոտորածը ամբողջ քաղաքում սկսվել է միաժամանակ, և այդ իսկ պատճառով էլ դա բացատրել, ինչպես հետո էին ասում, բանկում հայերի կողմից գանձապահին սպանելու վրեժով, տարօրինակ կլիներ...

Մենք մինչև ժամը 2-ը դեռ ոչինչ չգիտեինք սկսված իրարանցման մասին։ Նավի վրա նստած՝ խաղաղ զրուցում էինք։ Հանկարծ...— այս պահը առանձնապես է տպավորվել հիշողությանս մեջ,— ծովափին հնչեց ինչ-որ սարսափելի, աղեկեզ, աղերսական, ծորուն, բարձր մի ճիչ, իսկ դրան իսկույն հետևեցին ատրճանակի մի քանի կրակոցներ, արագ եկան անցան մի քանի կերպարանքներ, առջևից փախչում էր ինչ-որ մեկը՝ ուժասպառ, սայթաքելով։ Մի տասը հոգի ընկել էին նրա հետևից,— այս ամենը տեղի ունեցավ մի ինչ-որ ակնթարթում, և դրանից հետո մենք փախչողի դիակը փռված տեսանք ծովափին։ Դա մի հայ օրամշակ էր, որ աշխատելիս էր եղել նավահանգստում՝ նավակի մոտ, մահը նրան այդպես էլ վրա էր հասել աշխատանքի պահին. նա հետապնդողներից փրկվելու համար հասցրել էր փախչել ընդամենը մի հարյուր քայլ։ «Այս ի՞նչ է, ի՞նչ է»,— հարցնում էինք մենք՝ մեր տեսածից շշմած։ Մեզ պատասխանեցին հապշտապ. «Թուրքերը ջարդում են հայերին»։

Բոլորը նետվեցին դեպի շոգենավի կողը, որտեղից կարելի էր տեսնել հետևյալ տեսարանը։ Ծովափին, հենց ճիշտ մեր դիմացը, որտեղ կառանել էր մեր շոգենավը, կար վիթխարի, հին, սևացած մի շենք՝ ածխի պահեստ, իսկ դրա հետևի նրբանցքում, որը դեպի ծովափի խորքն էր գնում, բայց այնպես, որ կարելի

էր ամեն ինչ լավ տեսնել, մի ուրիշ հենց այդպիսի շենք էլ կար, որտեղ ապրում էին բանվոր հայերը՝ մեծ մասամբ տարբեր տեղերից եկածներ, որոնք նավահանգստում օրավարձու աշխատանքով էին զբաղվում. գետանավ ու շոգենավ էին բեռնում, իրեր տեղափոխում և այլն։ Նրանցից շատերն այդ ժամանակ աշխատում էին նավահանգստում, մյուսները, հավանաբար, իմանալով սպառնացող վտանգի մասին, պատսպարվել էին այդ տանը, դեպի ուր էլ հենց ուղղվեց թուրքերի ամբոխը՝ մահակներով ու թրերով զինված։ Նավահանգստում աշխատող մի քանի հայեր սրանց ձեռքով սպանվեցին վայրկենապես, տեղնուտեղը, փայտի մի քանի հարված ստանալով գլխներին. թռչելով անցնելով նրանց դիակների վրայով, դրանք փռված թողնելով նավահանգստում, հետապնդողները նետվեցին դեպի բանվորների տունը։ Առջևից գնացողները վազեվազ բարձրանում էին սանդուղքներով, ներս նետվում լուսամուտներից, իսկ մնացած ամբոխը կանգնել էր ներքևում՝ սպասելով այն ավարին, որ նետելու էին իրեն՝ բռկտելու համար։ Մի բոպե աղաղակները դադարեցին, ինչ-որ ոռնոց էր լսվում միայն։ Ահա լուսամուտներից երևացին թուրքերը՝ իրենց հետևից քարշ տալով հայերին, որոնց գտել էին տանը։ Դժվար էր որոշել՝ նրանք արդեն սպանվա՞ծ էին, ծեծված-կիսամե՞ռ, թե՞ սարսափից ուշքները կորցրած։ Նրանց նետեցին ամբոխի մեջ, որն սկսեց նրանց ջարդել, քարշ տալ փողոցով, կոխկրտել փոշու մեջ։ Տեսարանն այնքան զարհուրելի էր, որ անհնար էր նայել։

Ուզում էիր ինչ-որ տեղ փախչել, բայց դրա հետ մեկտեղ հեռանալն էլ անհնար էր, քանի որ սասափը բոլորովին սառեցրել էր արյունդ և ինչ-որ բան ստիպում էր ինչ-որ հույսով հետևել դժբախտ զոհերին... չե՞ն փրկվի արդյոք որևէ հրաշքով։ Ահա նրանցից մեկը, մի օրամշակ՝ կապույտ, կարկատած վերնաշապիկով, գլխին սպիտակ թաշկինակ կապած, փախչում է փողոցով։ Մի անգամ մեր աչքի առջևով երևաց անցավ մեռելի պես գունատ նրա դեմքը։ Հասան նրան, գետին տապալեցին. արդեն նրա անշարժ դիրքից երևում էր, որ մեջը կյանքի նշան չկար. պառկած էր փողոցի լայնքով, մեջքի վրա, ձեռքերը տարածած։ Մոտից անցնող թուրքը ոտքով խփեց նրան՝ մեռածին, ուղիղ դեմքին, իսկ մյուսը նրա մարմինը խրեց իր թուրը։ Այս ամենը տեղի ունեցավ արտակարգ արագ. մեռնողներից չլսվեց ո՛չ մի ճիչ, ո՛չ մի ողբ. նրանց գետին էին գցում, ինչպես խոր-

ձեր, կիտում իրար վրա։ Երբ մենք մի քիչ ուշքի եկանք, նրբանցքից արդեն դուրս էր գալիս մի սայլ՝ սպանվածների դիակներով բարձված։ Դրանցից մի քանիսը կարծես թե շարժվում էին...

Սայլին ուղեկցում էին մի քանի ոստիկաններ, որոնք ծանրումեծ դուրս էին եկել երկու կողմից. ոստիկանությունն այդ օրը, ինչպես նկատեցինք, ամեն անգամ բեմում հայտնվում էր միայն այն ժամանակ, երբ կոտորածից հետո կատարվում էր փողոցների մաքրում դիակներից։ Նրբանցքն ամայացավ։ Ամբոխը սլացավ դեպի նրբանցքի խորքը, և մենք արդեն չէինք տեսնում նրան։ Բանվորների տան առաջ, որտեղ հենց նոր տեղի էր ունենում ահավոր տեսարանը, մի քանի շներ էին թափառում։ Մի քանի րոպե լռություն տիրեց, և ոչ ոք չէր երևում։ Հեռվից կրակոցներ ու շների ահավոր հաչոց էր լսվում։ Ծովափով՝ մեր մոտով ևս երեք սայլ տարան՝ մեռած մարմիններով լեցուն, որոնք անկանոն նետված էին, չծածկված։ Դատելով հագուստներից, բոլորն էլ աղքատ բանվորներ էին եղել (քանի որ դա հենց այն թաղամասն էր, որտեղ ապրում էին բանվոր հայերը)։ Քիչ անց, այն նրբանցքում, որը մենք կարող էինք տեսնել, նույն բանվորական տան շուրջը նորից քիչ-քիչ սկսեց հավաքվել թուրքերի ամբոխը։ Նրանք ներս էին մտնում դռներից, մագլցում լուսամուտներից և նորից հայտնվում փողոցում՝ բեռնված տնային զանազան կահ-կարասիով՝ ներքնակներով, շորերով, խղճուկ կահույքով, մի խոսքով՝ մարդասպանները հենց նոր սպանված աղքատ օրամշակների խղճուկ ունեցվածքն էին քարշ տալիս տանում։ Այդ զազրելի թալանը օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, շարունակվեց ամբողջ օրը։ Երբ կողոպտելվերջացրել էին ողջ ունեցվածքը, սկսեցին ջարդել լուսամուտների շրջանակները,— թալանված իրերը տանում էին զանազան կողմեր, մեծ մասամբ՝ գարեջրատունը, որը հենց մեր շոգենավի դիմացն էր, և այստեղ հիմա գինարբուք էին անում... Հաջողությունից ուրախացած ընկեր-տղերքը նստոտել էին սեղանիկների շուրջը՝ գարեջրատան առջևի մայթի վրա և ինչ-որ բանի մասին (դժվար չէր գուշակել, թե ինչի) տաք-տաք խոսում էին։ Ոմանք ձեռքներն էին շփում, ձեռքներն էին թափահարում։ Հետո հանկարծ բոլորը տեղներից վեր կացան և, ինչպես որսի հոտ առած գայլեր, նետվեցին դեպի հարևան նրբանցքներից մեկը։

Մենք ամբողջ օրը մինչև երեկո անշարժ մնացինք միևնույն տեղում՝ շոգենավից հետևելով մեր աչքի առաջ կատարվող սպանության ու թալանի սարսափելի տեսարանին։ Մեր մոտով էլի ու էլի տարան մեռած մարմինների մի քանի ձիասայլեր։ Հենց այդտեղ՝ մեր շոգենավի դիմաց սպանեցին ևս մի հայի, որ տանից դուրս վազեց՝ միտք ունենալով փախչել փրկվել նավակով, բայց, հավանաբար, արդեն դարանակալել էին, և վայրկենապես վերջ տվին նրան... Որոշ ժամանակ նրա դիակն ընկած մնաց փողոցում, և անցորդները հրում ու խփում էին ոտքով։ Զգոն ու ճշտապահ ոստիկանությունը, սակայն, չհապաղեց վերցնել տանել նրան։ Իջավ երեկոն։ Խավարն արագ խտացավ քաղաքի վրա, համարյա ոչ մի տեղ կրակ չէին վառում, սկսվեց գիշերային լռությունը, որը խախտվում էր քաղաքի տարբեր մասերից լսվող շների հաչոցներով ու կրակոցներով։ Նավահանգստի մոտով անընդմեջ, մեկը մյուսի հետևից, անցնում էին թուրքերի հրոսակախմբերը՝ փայտերը ձեռքներին, որոնք գիշերային որսի ելած շնագայլեր էին հիշեցնում։ Մեր շոգենավի դիմաց, գերանների վրա, մի քանի թուրքեր նստեցին, որոնք, ըստ երևույթին, այնտեղ տեղավորվեցին ամբողջ գիշերը մնալու համար։ Դժվար չէր գուշակել դրանց մտադրությունը. դրանք հետևում էին որսին, որի առկայությունն զգում էին շոգենավի վրա։ Հիրավի, մի քանի հայերի հաջողվել էր պատսպարվել մեր նավում, որոնց ֆրանսիացիներն ընդունել էին, հանգստացրել և խոստացել Կոստանդնուպոլսից անվճար տեղափոխել հունական նավահանգիստներից մեկը։

Կարելի է պատկերացնել, թե ինչ վիճակում էին նրանց ընտանիքները քաղաքում։ Չիմանալով, որ նրանք իրենց համար ապաստան են գտել, նրանց հարազատները, իհարկե, նրանց զոհված էին համարում։ Կորածների հարազատներից ոչ ոք նրանց մահվան մասին հավաստիանալու որևէ հնարավորություն չուներ։ Դիակները, որոնք, ինչպես տեսնում էինք, տանում էին ձիասայլերով, հետո լցնում էին մեծ շոգեմակույկները և առանց հաշվելու ջուրն էին թափում այն մասում, որտեղ Բոսֆորից Մարմարա ծովը մտնելիս բավականին ուժեղ հոսանք կա։ Ասում էին, թե սպանվածների դիակներով ծանրաբեռնված 42 շոգեմակույկներ են իրենց բեռը ծովը թափել գիշերվա ընթացքում։ «Զոհերի իսկական թիվը նույնիսկ մոտավորապես ոչ ոք երբեք չի իմանա»,— նկատեց ինչ-որ մեկը։ Սարսափելի

ծանր, տագնապալի, ճնշող էր այդ գիշերը։ Տախտակամածի վրա անընդհատ ցածրաձայն խոսում էին տեղի ունեցածի մասին, իսկ ափից սպասում էին որսի սպասող թուրքերի մեր կողմն ուղղված ագահ հայացքները, շները ոռնում էին, իսկ թուրքերը ներքևում մի քանի անգամ մոտեցան շոգենավից ափ տանող զառիվայրին և երկար ժամանակ ճղփացնում էին ջուրը՝ կամրջակին նստած։ Մի անգամ, երբ լուսինը դարձյալ դուրս եկավ ամպերի տակից, մենք տեսանք, որ նրանք արյունն էին լվանում իրենց մարմինների վրայից։

Արևածագի հետ նորից նույնն սկսվեց։ Հավանաբար, գիշերն էլ չդադարած գազանությունները, որոնց որոշ ժամանակով խավարը ծածկել էր, կրկին տեսանելի դարձան ամենուրեք։ Առավոտյան մի քանի նավաստիներ քաղաք գնացին և լուր բերեցին, որ հայերի բոլոր խանութներն ու կրպակները անխիր թալանված են, որ սպանվածների թիվն առանձնապես մեծ է Ստամբուլում, որտեղից նույնիսկ չէին հասցնում կրել տանել դիակները և որ այսօր ջարդը սպառնում է էլ ավելի մեծ չափեր ընդունել... Մեր շոգենավի դիմացի նրբանցքում, որտեղ երեկ մենք դիտում էինք վերևում նկարագրված տեսարանը, հենց նույն տան առաջ նորից ամբոխ հավաքվեց։ Նրանք տեղեկացել էին, որ այդ տանը դարձյալ մի քանի հայեր կան թաքնված, և եկել էին նրանց փնտրելու։ Անցան անորոշության մի քանի տանջալի րոպեներ. կգտնե՞ն արդյոք նրանց, թե՞ ոչ։ Փողոցում կանգնած ամբոխը չէր կարողանում երկար սպասել. էլի շատերը ներս սողոսկեցին, որ տունը ասես թե գրոհով գրավեն։ Մնացածները կիպ սեղմված պատ կազմեցին փողոցի լայնքով, որպեսզի թույլ չտային փախչել ոչ մի հայի, որին որ գտնեին այդ տանը։ Քիչ անց, լուսամուտներից և տան ինչ-որ ելուստից երևացին մի քանի թուրքեր, որոնք քարշ էին տալիս նոր զոհերի...

Ես այլևս չտեսա, թե հետո ինչ տեղի ունեցավ... Ասում են, նրանց գլխիվայր ցած են նետել սալահատակի վրա, ապա գցել են սայլն ու տարել։ Իսկ ամբոխը նորից բաժանվեց. ոմանց քաշեց հեռուն տարավ արյունարբության բորբոքված բնազդը, մյուսներին ագահությունը կլանեց. սրանք մնացին, և դեռ երկար ժամանակ շարունակեցին ալան-թալանը... Ծովափի մոտով անցնում էին կառքեր, բաց կառքեր, որոնց մեջ նստած էին, դատելով ըստ հագուստների, քաղաքի երևելի մարդիկ։ Անցնում-դառնում էր ոստիկանությունը. ոչ մեծ շոկատներ էին՝ 10-ական հոգով։ Կյանքն ընթանում էր իր կարգով։ Ոչ ոք ասես չէր ուզում ուշադրություն դարձնել բոլորի աչքի առաջ տեղի ունեցող սպանության ու կողոպուտի վրա։ Եվ մի բան, որ առանձնապես տարօրինակ տպավորություն էր թողնում, դա այն էր, որ ի տես մարդկանց այդ համատարած բնաջնջման, ափի երկայնքով և ծովածոցի հեռվում կանգնած էին վիթխարի նավեր՝ եվրոպական բոլոր տերությունների ներկայացուցիչները։ Այս ամբողջ կոտորածը, թվում է, այսպես կրկնապատիկ սարսափելի տպավորություն չէր գործի խուլ մի վայրում, թուրքական ինչ-որ մի հետ ընկած քաղաքում, եթե այստեղ չլիներ՝ մայրաքաղաքում, բոլոր իշխանությունների ներկայությամբ՝ տեղական թե օտարերկրյա։ Դա ընդհարում չէր, պատերազմ չէր, ապստամբության ճնշում չէր, այլ պարզապես զազրելի, համատարած, զանգվածային մի սպանություն, մարդասպանություն, գոնե այդպիսի տեսք ուներ կոտորածը քաղաքի այն մասում, որը մենք կարողանում էինք տեսնել։ Բայց ուրիշներից վիճակվել է լսել, որ այնտեղ էլ նույն բանն է եղել։

Մյուս օրը (հինգշաբթի) վիճակվեց տեսնել (փառք աստծո, գոնե հեռվից) է՛լ ավելի սրտաճմլիկ տեսարաններ. խելահեղ սարսափի մեջ տանիքի վրա ապաստանած հայերին հասան բռնեցին, և հալածողները նրանց այնտեղից՝ 3—4-հարկանի տների բարձրությունից, նրանց կանանց, երեխաների աչքի առաջ, ցած էին շպրտում։

Братская помощь пострадавшим в Турции армянам. М. 1897, с. 75—79.

50. ՆԱՄԱԿ ԱՄՆ-Ի ՄԻՍԻՈՆԵՐ ԲԱՐՆԵՄԻՑ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՍԻԱՅԻՆ

29 սեպտեմբերի 1896 թ.

Ակնի իրադարձությունների վերաբերյալ լուրերը, որոնք ես ձեզ ուղարկել էի անցած շաբաթ, ստացվել էին գլխավորապես կոտորածի ժամանակ այնտեղ եղած երկու անաչառ թուրքերից։ Նրանք այնտեղից մեկնել էին ավելի վաղ, քան՝ որոշվել է աղետի չափերը։ Չգիտեմ, մինչև հիմա Ակնից ժամանե՞լ է որևէ մեկը, թե՞ ոչ, բայց այսօրվա փոստով ստացված նամակները առավել քան հաստատում են առաջին հաղորդումների

ճշտությունը։ Անցած շաբաթվա ընթացքում փոստով ոչ մի լուր չի եկել։ Բոլոր նամակներում, որոնք ես կարդացել եմ, սպանվածների թիվը հաշվվում է 2000 հոգի։ Ըստ երևույթին, դաժան ճակատագրի զոհ գնացած կանանց ու երեխաների թիվն այս անգամ համեմատաբար ավելի մեծ է, քան անցած որևէ այլ կոտորածի ժամանակ, որ ինձ հայտնի է։ Սպանվածներից շատերը մի քանի օր մնացել են փողոցներում՝ շներին ի կեր։ Մեծ թվով դիակներ նետվել են Եփրատը։ Այդ դիակները տեսել են լողալիս Ակնից 45—50 մղոն ներքև։

Որոշ դեպքերում ոչնչացվել են ամբողջ ընտանիքներ։

Ճշգրիտ հաշվարկ, իհարկե, անել չի լինի, բայց երկյուղ կա, որ 2000 թիվը նվազեցված է։

Դա քրիստոնյա բնակչության նշանակալի մասն է կազմում, որի թիվը հաշվվում է մինչև 5—6 հազար։

Տների թիվը նամակներում հաշվվում է 1100։ Ասում են, այդքանից անվնաս է մնացել միայն 150-ը։ Արյան ու հրի այդ բաշխումատոնը սկսվել է ամսի 15-ին՝ երեքշաբթի օրը և շարունակվել մինչև հինգշաբթի՝ ամսի 17-ը։

Բոլոր վկաների ցուցմունքները հաստատում են, որ կոտորածը կազմակերպված է եղել պաշտոնական շրջանների կողմից և որ այն սկսվել է առանց որևէ առիթի։ Խռովարար տարրերը սոսկ որոշ աստիճանավորների երևակայության մեջ են գոյություն ունեցել։ Վերջիններս անհանգստացրել են կենտրոնական կառավարությանը։ Այստեղի վալին և զինվորական պետը, կոտորածի օրերին, սկզբից մինչև վերջ ժամանակի մեծ մասը անցկացրել են հեռագրատանը, կապ պահպանելով Ակնի և Կոստանդնուպոլսի միջև։ Որքանով որ ինձ հաջողվեց իմանալ, զոհերը դույզն-ինչ դիմադրություն չեն ցույց տվել և չի սպանվել ոչ մի թուրք, բացի նրանցից, ովքեր սպանվել են հետագայում, ամենայն հավանականությամբ, թալանն իրար մեջ բաժանելիս։ Այս տեղերում քրդեր չեն եղել։ Ամեն ինչ կատարվել է քաղաքացիների և զինվորների ձեռքով։ Կոտորածը տարածվել է Ակնի շրջակայքի շատ գյուղերում...

Գ. Ն. Բարնեմ

ABПР, Посольство в Константинополе, д. 3183, л. 12—13.

51. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

5 հոկտեմբերի 1896 թ.

Էրզրումում Անգլիայի հյուպատոս Գրեյվսը ինձ հանձնեց հայերեն մի նամակ՝ գրված անցած սեպտեմբերի 4-ին, այն անարգարությունների մասին, որ ցուցաբերվել է հայերի նկատմամբ Բայբուրդում 1895 թ. հոկտեմբերի 14-ի կոտորածից հետո... Պարտք եմ համարում Ձերդ բարձր գերազանցությանը հայտնել ի գիտություն, որ բայբուրդցի 27 հայեր, որոնք հիմա ուղարկված են Էրզրում և որոնք պետք է տարբեր ժամկետներով տաժանակրության գնան Սերասկերատի ռազմական դատարանի կողմից Բայբուրդի ռազմական դատարանի որոշման հաստատման ու սուլթանի իրադեով դրա վավերացման հետևանքով, Էրզրումի վալի Ռեուֆ փաշայի ասելով՝ անմեղ են։

Այս վերջին հանգամանքը ես պատիվ ունեմ Ձեզ հաղորդելու լիովին վստահաբար համոզված լինելով, որ այն հայտնի չի դառնա թուրքերին...

Մաքսիմով

Առոիր

Բայբուրդցի հայերի նամակից՝ ուղղված Էրզրումի անգլիական հյուպատոսին

4 սեպտեմբերի 1896 թ.

Բայբուրդում անցյալ տարվա հոկտեմբերի 14-ին տեղի ունեցած սարսափելի կոտորածներից հետո իշխանությունները մեզանից ձերբակալել են 200-ից ավել մարդու։

Մեզանից մի քանիսին էլ, որոնք ստորագրել են այստեղ, գիշերը ենթարկելով կտտանքների ու անտանելի խոշտանգումների, աստիճանավորները, թուրք կալանավորների օգնությամբ, բռնի ստիպել են ստորագրել նախապես սարքված թղթեր, որոնք բովանդակում են կեղծ մեղադրանքներ մեր քաղաքի պատվավոր անձանց դեմ, որ Նրանք, իբր, կոմիտե են ստեղծել ընդդեմ սուլթանական կառավարության և Ռուսաստանից զենք են բերել, որպեսզի հեղափոխություն անեին Բայբուրդում։

Կտտանքներն անում էր գլխավորապես ոստիկանական մի

չաուշ, անունը՝ Ալի, որը հիմա Էրզրումի բանտային գերատեսչությունում է աշխատում։ Նա ռազմական դատարանի նախագահ Զեքի Սալեհ փաշայի հրահանգով մեզ ենթարկում էր զանազան կտտանքների, ինչպիսիք են՝ աքցաններով կսմթելը, մախաթով ծակծկելը և այլն։

Այն, որ մենք անմեղ ենք, կարեկցանքով խոստովանում են նույնիսկ մեր թուրք հարևանները։

Ձերդ գերազանցությանը հաղորդելով մեր ողբալի վիճակի մասին, խնդրում ենք, հանուն արդարադատության, միջնորդ լինել նորին մեծություն սուլթանի առջև և դրանով մեզ փրկել այս անարդար բանտարկությունից։

Խորին հարգանքով՝ Բայբուրդում բանտարկված հայերից, որոնք կտտանքի ենթարկված լինելով, ստորագրել են խղճի դեմ վնասակար ու կեղծ թղթեր։

(Վեց ստորագրություն)

АВПР, Посольство в Константинополе, д. 3197, л. 204—206.

52. Կ. ՊՈԼՍԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Նամակ **10 նոյեմբերի 1896 թ.**

Համաձայն այն հեռագրի, որ ստացվել է Խարբերդի բրիտանական փոխհյուպատոսից, հետևյալ հանգամանքներն են առիթ ծառայել Ակնում տեղի ունեցած սպանությունների համար... Հայ տղամարդկանց մեծ մասը թաքնված է եղել այն թաղամասում, որտեղ տեղավորված են զինվորական բարաքները։ Նրանց հրամայել են հեռանալ այդ շրջանից և գնալ դեպի նահանգապետի տունը, բայց ճանապարհին նրանց վրա հարձակվել են զորքերը, որոնց օգնել են մուսուլմանները։ Սպանվել է ընդամենը մեկ ու կես հազար մարդ, որոնցից 200-ը՝ կանայք և երեխաներ։ Հայերը բոլորովին անմեղ են եղել. ոչ մի հեղափոխական շարժում չի եղել։ Հայերը ոչ մի գնդակ չեն արձակել։ Միայն մի քանի ռևոլվերներ և ատրճանակներ են գտնվել այրված տների ավերակներում։ Հետաքննության համար առաջարկվում է ստեղծել եվրոպական հանձնաժողով։

АВПР, Посольство в Константинополе, д. 3183, л. 12—13.

53. Կ. ՊՈԼՍԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Նամակ **18 նոյեմբերի 1896 թ.**

Անգորայում նորին մեծության հյուպատոսի պաշտոնակատարը էվերեկի կոտորածի կապակցությամբ հաղորդեց, որ տեղական հայ համայնքը Կեսարիայի իշխանություններին է հանձնել սպանվածների ու վիրավորների հետևյալ պաշտոնական ցուցակը.

Էվերեկ		Փենեսսե	
Սպանված	30 հոգի	Սպանված	23 հոգի
Վիրավորված	30 »	Վիրավորված	43 »
Կողոպտված տներ	40	Կողոպտված տներ	15
Կողոպտված կրպակներ	37	Կողոպտված կրպակներ	15
Այրված տներ	38	Այրված տներ	3

Ընդամենը՝

Սպանված	53 հոգի
Վիրավորված	73 »
Կողոպտված տներ	55
Կողոպտված կրպակներ	52
Այրված տներ	41

Փենեսսեն գյուղ է հովտի մյուս կողմում, էվերեկից մոտ մեկ ու կես մղոն հեռու, սակայն սովորաբար էվերեկի գավառի մեջ է մտցվում։

АВПР, Посольство в Константинополе, д. 3183, л. 28.

54. ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ 1895—1896 ԹԹ.

(Ըստ ֆրանսիական «Դեղին գրքի» փաստաթղթերի)[8]

1895 թ. վերջին և 1896 թ. սկզբին՝ կես տարվա ընթացքում, Փոքր Ասիայով մեկ՝ հայաբնակ քաղաքներում ու գյուղերում, տեղի ունեցան կազմակերպված զարհուրելի զանգվածային կոտորածներ, որոնց հանդեպ խամրեցին նույնիսկ Սասունի թուրքական գազանությունները։ Սկիզբը եղավ այն միջոցառումը,

որը հայերին խոստանում էր խաղաղության սկիզբ։ Համառ դիմադրությունից հետո սուլթանը ստիպված եղավ 1895 թ. հոկտեմբերին հաստատել Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչների կողմից հայկական վեց վիլայեթների համար մշակված բարենորոգումների նախագիծը, և դրանից անմիջապես հետո սկսվեցին հայերի կոտորածն ու կողոպուտը։ Դեղին գրքի երկու հատորներում բերվում են բազում ցնցող մանրամասնություններ, որոնցից մենք մեջբերում ենք միայն մի փոքր մասը։

Ա. Տրապիզոն

Տրապիզոնը, որտեղ բոլորից շուտ հասան լուրերը մայրաքաղաքից, տվեց հայերի կոտորածի առաջին օրինակը։ Հոկտեմբերի 5-ին ֆրանսիական հյուպատոսն արդեն հեռագրել է «կոտորածի ու կողոպուտի» սկսման մասին։ Հաջորդ զեկույցներում նա, ի միջի այլոց, գրում էր.

«Այն անձինք, ովքեր քաղաքը տեսել են սպանություններից մի քանի րոպե առաջ,— գրում էր իր ճեպագրում Կամբոնը 1895 թ. հոկտեմբերի 15-ին,— ոչ մի կերպ չէին կարող կանխատեսել, թե այդքան մոտ են կատարվելու պատրաստ իրադարձությունները։ Ժողովրդի բազմությունը, իր սովորական գործով զբաղված, լցված է եղել փողոցները։ Հիմա լիովին ապացուցված է, որ մուսուլմանները, առանց որևէ ազդանշանի, միահամուռ ու միաժամանակ նետվել են հայերի վրա։ Ներքին բաժանման-բաշխման բեռնակիր բանվորները, ովքեր մեծ մասամբ հայկական համքարությանն էին պատկանում, իրենց գործին են եղել՝ մաքսատան մոտ, մեծ թվով. սրանք սպանվել են։ Մի քանի դժբախտներ, որոնք փորձել են մակույկներով փախչել դեպի նավահանգստում կանգնած նավերը, սպանվել են մակույկավարների թիակների հարվածներից, մեկին ծովն են գցել ու քարկոծել։ Բոլոր փողոցներում ու հրապարակներում ջարդել են հանդիպող բոլոր հայերին, ընդ որում նրանց վերջ են տվել անլուր դաժանությամբ։ Առևտրականներին դուրս են քաշել իրենց խանութներից ու տվել մարդասպանների ձեռքը։

Շատ կարճ ժամանակում սպանություններն ավարտվել են։ Այնժամ ամբոխը նետվել է թալանելու կրպակները։ Փողոցներում բեռնակիրներ էին հանդիպում, որոնք ապրանքներ էին տանում, և ոչ ոք չէր խանգարում նրանց կողոպուտը։

Պնդում են, որ այդ ընթացքում զինվորներն ու զափթիեները ոչ միայն չէին խոչընդոտում դրան, այլև նույնիսկ խրախուսում էին։ Ինձ պատմել են, որ մի տեղ, օրինակ, խռովարարները չէին կարողանում գրավել հայի տունը, քանի որ նրանց կրակոցները (հրացանով) հեռուն չէին հասնում։ Զինվորները, տեսնելով այդ, հանեցին իրենց բաճկոնները և մարդասպանների հետ միասին կրակ բացեցին։ Համենայն դեպս կարող եմ վկայել devisu, որ ոստիկանական պոստն զբաղեցրած զափթիեները զենքը ձեռքներին կանգնած էին պաշտպանական դիրքով, փոքրինչ իսկ փորձ չանելով կասեցնել խռովարարներին։

Զոհերի ճշգրիտ թիվը դեռևս հայտնի չէ։ Իշխանությունները այն սահմանում են, թե 80 հոգի են եղել։ Բայց, դատելով ըստ ամենայնի, սպանվածների թիվը Տրապիզոնում, հավանաբար, 500-ից անց է։ Հայերից համարյա ոչ ոք տուն չի վերադարձել։ Ֆրերները (ֆր. վանականներ) ապաստան են տվել 3300 հոգուց։ Ըստ պաշտոնական հայտարարության, կոտորածի առիթը եղել է ատրճանակի կրակոցը, որ արձակել է մի հայ և որը սխալ է հասկացվել մուսուլմանների կողմից։ Կոտորածի միաժամանակյա սկիզբը քաղաքի բոլոր մասերում այս բացատրությունը դարձնում է միանգամայն անճշմարտանման։ Դա եղել է, առանց որևէ կասկածի, դավադրություն՝ մանրամասն մտածված (un complot soigneusement régle): Կանոնավոր զորքերի մասնակցությունը ոճրագործություններին և կողոպուտների թույլատրումը ակնհայտ են։

Բ. Դիարբեքիր

Նույն տարվա նոյեմբերին տեղի է ունեցել Դիարբեքիրի կոտորածը։ Այդ իրադարձության մանրամասն նկարագրությունը մենք գտնում ենք ֆրանսիական փոխհյուպատոս Մեյրիեի զեկույցում։ Ահա թե ինչ է հաղորդում նա 1895 թ. դեկտեմբերի 18-ի իր ճեպագրով...

«Նոյեմբերի 1-ին, ուրբաթ օրը, Ամենայն սրբոց տոնին, ես իմ ընտանիքով գնացի պատարագի։ Մի քանի զինված քրդերից բացի, մենք առանձնապես ոչինչ չնկատեցինք։ Երբ ես տուն վերադարձա, ինձ ասացին, որ մի մահմեդական այս առավոտ վազվզել է փողոցներով և իր հավատակիցներին կոչ է արել կոտորել քրիստոնյաներին։ Հայ լուսավորչական եպիսկոպոսը գնացել է վալիի մոտ, որպեսզի սրան հայտնի այդ փաստի մա-

սին, և վերջինիս հավաստիացումներից հետո, թե՝ վախենալու հարկ չկա, նա գնացել է շուկա, որպեսզի հանգստացնի քրիստոնյաներին, համոզի, որ չվախենան ու շարունակեն աշխատանքը։ Բշվառ եպիսկոպոսը այդ օրից դառնորեն ղղջում է իր արածի համար և իրեն մեղադրում այն հետևանքների մեջ, որ ինքն է առաջ բերել։ Կաթոլիկների համար տոն էր այդ օրը և, բարեբախտաբար, նրանք չէին բացել իրենց խանութները։

Առավոտյան ժամը 11-ի մոտ իմ թարգմանիչը եկավ ինձ ասելու, թե քրիստոնյաների մեջ խուճապ է ընկել, թե փողոցներում փախչում են և արդեն մի քանի հոգի սպանվել է։ Ես դուրս եկա ու տեսա երկու վիրավորների, որոնք փախչում էին շուկայից։ Ես կանգնած էի դռան մոտ, փողոցը բոլորովին դատարկ էր, բայց տանիքից ինձ ձայն տվեցին, որ նրանք գալիս են և որպեսզի ես անհապաղ տուն վերադառնամ։ Ես այդ ժամանակ տեսա երեք զափթիեների, որոնք պատահաբար այնտեղ էին և նրանց հրամայեցի, որ պահպանեն հյուպատոսարանը։ Այդ պահին փողոցի հակառակ կողմում, 20 քայլ հեռվում, ես տեսա ոտից գլուխ զինված մի ամբոխ, որ խուժել էր փողոցը և վայրենի գոռում-գոչյուն էր դրել։ Այդ ժամանակ ինը զափթիե ու մեկ սպա եկան հյուպատոսարանը պահպանելու։

Ժամը տասներկուսից հինգ էր պակաս։

Այդ րոպեից սկսվեց կոտորածը։ Փողոցում հնչում էին հալածվողների և տներում ապաստանածների աղաղակները։ Կոտորածը անընդմեջ շարունակվեց երեք օր ու երեք գիշեր այնպիսի մոլեգնությամբ, որ նրանք, ովքեր ողջ են մնացել, մինչև օրս էլ հարցնում են իրենք իրենց, թե աստվածային նախախնամության ինչ հրաշքով են խույս տվել ընդհանուր ճակատագրից։ Սպանություններն սկսվեցին Salavat Mahomed կանչերով, նշանակված ժամին, ըստ նախապես պայմանավորված ազդանշանի, առանց որևէ մեկի կողմից արված կոչի։

Ես իմ առաջին պարտականությունը համարեցի վալիի մոտ զափթիե ուղարկել՝ պահանջելով վանքի համար ավելի հուսալի պահպանություն (քանի որ ես ենթադրում էի, թե դա արդեն կա այնտեղ)։ Զափթիեն չվերադարձավ, և ես ոչ մի պատասխան չստացա իմ պահանջի վերաբերյալ։

Ուրբաթ օրը բացառապես նվիրված էր շուկային։ Նախ սպանվեցին բոլոր քրիստոնյաները, որոնք չէին հասցրել թաքնվել, իսկ հետո սկսվեց կողոպուտը...

Երբ շուկան կողոպտվեց, ինչը շատ քիչ ժամանակ խլեց, հրդեհեցին։ Ցերեկվա ժամը 2-ի մոտ էր- հրդեհը շարունակվեց մինչև հաջորդ օրը։ Քրիստոնյաների բոլոր խանութներն ավերված են։ Կորուստները նշանակալից են։

Իրականում իսկական կոտորածն սկսվեց միայն շաբաթ օրը՝ առավոտյան. մինչև այժմ քրիստոնյաներին սպանում էին փողոցներում, սպանում էին տների տանիքներին՝ նրանց վրա կրակելով լուսամուտներից ու մինարեթներից։ Դեռ նրանց տները չէին խուժում։

Հենց այդ նույն օրը, արևածագի հետ, սկսվեց արյունահեղությունը և շարունակվեց մինչև կիրակի օրվա երեկոն։

Նրանք բաժանվել էին ջոկատների և գործի անցել սիստեմատիկորեն՝ մի տնից մյուսն անցնելով, փութաջանորեն շրջանցելով մուսուլմանների տները։ Ջարդելով դռները՝ թալանում էին ամեն ինչ և, եթե կենդանի մարդ էին գտնում, սպանում էին, սպանում յուրաքանչյուրին, ով ձեռքներն ընկնում էր՝ տղամարդ, կին, երեխա։ Աղջիկներին առևանգում էին։

Հյուպատոսարանի բոլոր պատերը ծակծկվել էին գնդակներից, և երկու դիակ ընկած էր համարյա հենց մեր լուսամուտների տակ՝ հարևան տանիքներին։ Քոչվոր քրդերի ցեղերը չէին մասնակցում...

Մինչդեռ քրիստոնյաներից նրանք, ովքեր զենք ունեին և ովքեր կարողացան հավաքվել բավարար թվով, փորձում էին պաշտպանվել։ Դա նրանց հաջողվեց որոշ թաղերում, որոնց վրա պաշարողները սիրտ չարին հարձակվել։ Այսպիսով նրանց հաջողվեց պաշտպանել այդ թաղերը։ Ինչ վերաբերում է մյուսներին, ապա սրանք էլ փրկվում էին, երբ կարողանում էին փախչել պատսպարվել եկեղեցիներում ու հյուպատոսարաններում։ Սուրբ Հարանց վանքը ընդունեց մոտ 3000 հոգու, ինձ մոտ ապաստան գտածների թիվը հասավ 1500-ի։ Փողոցներով անցնել հնարավոր չէր, ուստի այս դժբախտները ստիպված էին անցքեր բանալ պատերի մեջ և այդ անցքերից փախչել փրկվել։ Կամ էլ թաքնվում էին տանիքներին, տախտակների վրայով անցնում փողոցի մի եզրից մյուսը և վախից կիսամեռ դարձած՝ իրենց զգում որևէ ապաստարան։ Մի կին մեր աչքի առաջ ընկավ այն րոպեին, երբ մուտքին էր հասել։ Որքա՜ն այդպիսի դժբախտներ ընկան ջախջախվեցին այդ սարսափելի անցումների ժամանակ։

Կիրակի օրը կեսօրվա ժամը երեքին ես իմ լուսամուտից տեսա, ինչպես բոլորն էլ կարող էին տեսնել, զինվորների, զափթիեների, քրդերի և մուսուլմանների, որոնք միասին տանիքներից ու մինարեթներից կրակում էին հայ լուսավորչական եկեղեցու վրա։ Ես պահակախմբի սպայից պահանջեցի այս փաստն անցկացնել արձանագրության մեջ, և միևնույն ժամանակ խընդրեցի հոգևոր մի անձի՝ ինձ հարևան և քաղաքում շատ հարգված Աբաս Խոջային, որ միջամտի այդ արյունահեղությանը վերջ տալու համար։ Մինչև այժմ մենք դեռ կարող էինք մտածել, թե զորքերը կջանան ճնշել ապստամբությունը և կարող էինք հուսալ, թե նրանք կհասնեն այդ բանին։ Բայց այդ բոպեից արդեն ոչ մի կասկած չկար։ Ապաստանածների սարսափն այնքան մեծ էր, որ ես իմ կոչով դիմեցի Ձերդ բարձր գերազանցությանը, ինչը փրկեց մեզ բոլորիս։

Իմ խիղճն ինձ պարտավորեցնում է վստահությամբ հայտարարել,— գրում է հյուպատոսը,— որ սպանությունները Դիարբեքիրում կատարեցին մահմեդականները և դրանք ոչ մի բանից չէին հարուցվել, որ գեներալ-նահանգապետը, զորքերի հրամանատարը, ոստիկանապետը անտարբեր էին սարսափի տեսարանների հանդեպ և ոչինչ չէին ձեռնարկում, որպեսզի դրանք դադարեցնեին, որ եթե ուղղակիորեն չէին էլ մասնակցում, ապա գոնե նրանց վերաբերմունքը չարդարարների հանդեպ խրախուսական բնույթ ուներ, որ ես իմ աչքով տեսել եմ զինվորների ու զափթիեների, որոնք միացել էին մուսուլմաններին ու քրդերին և միասին կրակում էին քրիստոնյաների վրա, որ վերջիններս զենքի են դիմել միայն հանուն ինքնապաշտպանության, երբ որ ստիպված են եղել։ Ոստիկանությունն ու զորքը միջամտել են սոսկ նրա համար, որպեսզի հարվածեն զոհերին։

Թեև ես հեռագրով զեկուցել եմ կորուստների թվերի մասին և դրանցում փոփոխելու ոչինչ չունեմ, բայց ավելորդ չեմ համարում դրանք այստեղ բերել.

Հայ լուսավորչականներ

Սպանվածներ	1000
Վիրավորներ	250
Կողոպտված տներ	1500
Կողոպտված և հրկիզված խանութներ	2000

Հայ կաթոլիկներ

Սպանվածներ	10
Վիրավորներ	1
Կողոպտված տներ	36
Կողոպտված և հրկիզված խանութներ	65

Ասորի կաթոլիկներ

Սպանվածներ՝ հայտարարված	36
Սպանվածներ՝ իրականում	150
Վիրավորներ	11
Կողոպտված տներ	35
Կողոպտված և հրկիզված խանութներ	200

Ասորի հերձվածողներ (հակոբիկյաններ)

Սպանվածներ	3
Վիրավորներ	1
Կողոպտված տներ	6
Կողոպտված և հրկիզված խանութներ	30

Քաղդեացիներ

Սպանվածներ	14
Վիրավորներ	9
Կողոպտված տներ	58
Կողոպտված և հրկիզված խանութներ	78

Հույներ

Սպանվածներ	3
Վիրավորներ	3
Կողոպտված տներ	15
Կողոպտված և հրկիզված խանութներ	15

Բողոքականներ

Սպանվածներ	11
Վիրավորներ	1
Կողոպտված տներ	51
Կողոպտված և հրկիզված խանութներ	60
Անհետացածներ բոլոր գավանանքի մարդկանցից	1000
Քրիստոնյա գյուղացիներ, որոնք աշխատում էին քաղաքում՝ սպանվածներ և անհետացածներ	1000

Դիարբեքիրի սանջակի 119 գյուղեր կողոպտվել են և հրդեհվել. դրանք բաղկացած են եղել 6000 ընտանիքներից, 30 000 քրիստոնյաներ հաշվվում են սպանված և անհետացած։

Քաղաքում 50 կին և աղջիկ է առևանգվել։ Գյուղերում՝ անհաշիվ են։ Միայն քաղաքի նյութական կորուստը հաշվվում է 2 միլիոն թուրքական ֆունտ։

Մուսուլմանների մեջ 195 սպանված կա, որոնց թվում՝ 70-ը հենց իրենց իսկ ձեռքով է սպանվել՝ թալանված ավարը բաժանելիս...

Երեք օրվա սպանություններից հետո, երբ զոհվել էին 3000-ից ավելի քրիստոնյաներ, կողոպտվել էր նրանց ամբողջ ունեցվածքը, կարելի էր հուսալ, թե կառավարությունը, թեկուզև ձևի համար, քրիստոնյաներին իր պաշտպանության տակ կառներ։ Ավա՜ղ, ամենևին։ Նրանց նույնկերպ հալածում էին դրանից հետո էլ, ինչպես մինչ այդ էր։ Նրանք զոհը դարձան ամենաաղաղակող անարդարության։ Նրանց զինաթափ արեցին մեծագույն խստությամբ, այնինչ մահմեդականների զենքերը թողել էին իրենց մոտ։ Նրանք, ովքեր բանտ էին նետվել ապստամբության պատճառ լինելու համար, տանջամահ արվեցին՝ նպատակ ունենալով նրանցից փոխադարձ մատնություններ կորզել և այդպիսով իշխանություններին առիթ տալ նրանց մեղադրելու։ Մինչև այնտեղ հասան, որ հայ բնակչությունից խլեցին այն փոքր օգնությունն իսկ, որ նա ստանում էր բոլոր միջոցներից զրկված ընտանիքներին կերակրելու համար, և դա՝ այն պատճառով, որ եպիսկոպոսը չհամաձայնեց ստորագրել յուրայինների հանցավորությունը հաստատող թղթերը։ 46 օր շարունակ, մինչև Զիյա փաշայի և մանավանդ Աբդուլլա փաշայի գալը, սարսափ էր տիրում քաղաքում։ Կառավարությունը ոչինչ չարեց, որպեսզի փարատեր այն։ Ընդհակառակը, մահմեդականները, վստահ իրենց անպատժելիության վրա, չէին վախենում բացեիբաց արտահայտել իրենց թշնամանքը քրիստոնյաների նկատմամբ և օրը ցերեկով նոր բռնություններ էին գործում։ Կարելի է ասել, որ Անիզ փաշան նպատակ էր դրել հովանավորել հանցագործներին և պատժել նրանց զոհերին»։

Գ. Սվազ

Դիարբեքիրի նկարագրված իրադարձությունների հետ համարյա միաժամանակ խառնակություններ բռնկվեցին Սվազում։

Ֆրանսիական փոխհյուպատոս Կարնիեն դրանց մասին հետևյալն է հաղորդում.

«Կոտորածն սկսվեց ուղիղ կեսօրին, քաղաքի բոլոր մասերում միաժամանակ»։ Այսպես է սկսում Սվազի հյուպատոս Կարնիեն 1895 թ. նոյեմբերի 12-ի իր ճեպագիրը։ Կողոպուտի և սպանությունների առանձին դեպքեր հաղորդելուց հետո, նա շարադրանքը շարունակում է ըստ կետերի.

«Շուկա։ Հայերի բոլոր կրպակներն ու խանութները միանգամայն ավերված ու թալանված են։ Նույնիսկ լուսամուտներն են հանել տարել։ Չեն թողել ոչինչ, թեկուզև հին-մին թղթեր։

Դեղատներում թալանչիները վախենալով վերցնել դեղորայքը՝ շարդոտել են բոլոր սրվակները։

Շուկայում կա մի մեծ քարե շենք, որը վերջերս է կառուցվել և կոչվում է «Նոր խան»։ Այն փակվում է երկաթե երկու դռներով։ Լուսաճեղք ունի միայն ներքևի հարկում և զբաղեցված է ամենահարուստ վաճառականների պահեստներով ու խանութներով։ Մոտ 400 հայեր փակվել էին այնտեղ։ Այդ շինության մեջ զգալի քանակությամբ զենքեր էին պահվում (երբևէ կոմիտեի կողմից ուղարկված) և շատ զինամթերք կար։

Մուսուլմանները առնվազն մի ամբողջ ժամ շարժվում էին, որպեսզի դռների մեջ 1 մետրանոց անցք բաց անեին, ինչին նրանց չեն խանգարել ո՛չ ոստիկանությունը, ո՛չ պաշարվածները, և երբ առաջին մարդը ճեղքից դժվարությամբ ներս է թափանցել, հայերը հանձնվել են և բաց արել իրենց խանութները, որոնք ամբողջովին լրիվ թալանվել են։

Սպանություններ։ Կոտորածը հավանաբար պետք է որ վաղօրոք նախապատրաստված լիներ, քանի որ աչքի էր ընկնում առանձնահատուկ միահամուռությամբ։ Որ այստեղ իշխանությունների կողմից խրախուսիչ թողտվություն է եղել, դա շատ հնարավոր է։

Գաղտնիքը լավ պահպանվում էր, թեև նախօրեի երեկոյան մի քանի խնամքոտ նախազգուշացումներ արվել են։ Բայց նախազգուշացումները չափազանց անորոշ են եղել։ Չնայած դրան, նոյեմբերի 11-ի երեկոյան ես մեր միսիոներներին խորհուրդ տվեցի գաղտնաբար պաշար տեսնել ի դեպս խռովության, որի մոտիկությունը ես չէի կասկածում, և նրանց հրաման տվեցի ոչ մի պատրվակով դուրս չգալ տանից՝ նվազագույն իսկ տագնապի դեպքում։

Ավելորդ է ասել, որ զափթիեները, զինվորները, վարչության ծառայողները և ուրիշներ անձնական մասնակցություն էին ունենում ինչպես սպանություններին, այնպես էլ կողոպուտներին։ Նրանք երեկոյան նոր միայն ոստիկանության իրենց դերն ստանձնեցին։ Երկու համիդիե սպաներ ուրիշների հետ մեկտեղ ուղեկցում էին ավարով բեռնված ձիասայլերին։

Հաջորդ օրը իշխանությունները որոշել են սպանվածների քանակը՝ 200—300, որոնց դիակները հավաքած են եղել շուկայի խաներից մեկում։ Իրականում դրանք 500 են եղել, մի քանի մահմեդական է սպանվել հայերի ձեռքով։ Երկուսը պատահաբար սպանվել են իրենց հավատակիցների ձեռքով։ Հետագայում ես իմացա, որ մյուս խանում ևս սպանվածների նույնքան դիակներ են եղել՝ քաղաք մտնողների, որոնք մեծ մասամբ շուկա ապրանք բերող գյուղացիներ են եղել։ Այս ամենը նոյեմբերի 12-ի համար կազմում է մոտ 1000 հոգի, չհաշված անհայտ մնացածներին։

Սպանվածների մեջ շատ քիչ են զնդակահարվածները. համարյա բոլորի գանգերը ջարդված են կացիններով, փայտերով, երկաթե լինգերով, թեև 2—3 ժամ տևած հրաձգությունը շատ ուժգին է եղել։ Այս տարօրինակությունը բացատրվում է համարյա բացառապես ռևոլվերների և ատրճանակների օգտագործմամբ, մի զենք, որը շատ վտանգավոր է փորձված մարդկանց ձեռքին, բայց և անփորձի ձեռքին ավելի շատ աղմուկ է անում, քան՝ գործ։

Վիրավորներ։ Վիրավորները համեմատաբար քիչ են, քանի որ նրանց շուտով վերջ էին տալիս։ Նրանք, ովքեր մեռածի տեղ են դրվել կամ հրաշքով ազատվել են մահից, կենդանի մնալու քիչ հույս ունեն։ Ես մեկին գիտեմ, որի վրա տասներկու զնդակ են արձակել և ուրիշ վերքեր հասցրել։

Մի հայի, արհեստով վառարանագործ, որը զինվոր էր սպանել, սպանել էին ու կտոր-կտոր արել։

Մյուս օրը իշխանությունները դադարեցրին կոտորածը, և նրանցից մեկն ասում էր. «Երեկ մուսուլմանի պարտքն իրեն պարտավորեցնում էր սպանել, և թալանածը պարգև եղավ իրեն, այսօր ամեն ինչ պետք է դադարեցվի»։

Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. 101—109.

55. ՆԱՄԱԿՆԵՐ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻՑ (1895—1896 ԹԹ.)

I

Վերջերս „Les Massacres d'Arménie"[6] վերնագրով երևան եկած գիրքը իր մեջ ամփոփում է փոքրասիացի հայերի 34 նամակներ... Այդ նամակները հրատարակելու միտքը պատկանում է Եվրոպայում ապրող հայերին, որոնք ցանկանում են Եվրոպային ծանոթացնել Փոքր Ասիայում իրենց եղբայրների գլխին եկած աղետի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների իսկական պատկերին։ Նամակների մեծ մասի տոնը տառապանքի և ահաբեկվածության տպավորություն է առաջացնում։ Ակնից գրված նամակի հեղինակը, նամակ, որ գրված է մյուդիրի (համայնքի գլուխ) ներկայությամբ, վախենում է նույնիսկ մարդասպանների անունները տալ, դեպքերի մասին խոսում է զուսպ, ինչ-որ բաների մասին ընդհանրապես չի խոսում (էջ 167—169)։ Մենք չենք կարող,— ասվում է բայբուրդցի կանանց խնդրագրում՝ ուղղված թուրքական հետաքննական հանձնախմբին,— անուններ տալ (մահմեդական սադրիչների) լսվող սպառնալիքների և անվտանգության լիակատար բացակայության պատճառով (էջ 66)։ Բուն նամակները, որոնք պատկանում են իրենց դիրքով և այլ հատկանիշներով այնքան տարբեր անձանց, ուղարկված ավելի քան 20 վայրերից և գրված գլխավորապես նրա համար, որպեսզի հեղինակներն իրենց վիշտը պատմեն հարազատներին ու ծանոթներին, բավականաչափ և հուսալի տվյալներ են ներկայացնում իրադարձությունների, գոնե գլխավոր գծերով, վերականգնման համար։ Կփորձենք գրանց հիման վրա ընթերցողին հասկացողություն տալ այն աղետների ընթացքի ու բնույթի մասին, որոնք բաժին հասան փոքրասիացի հայերին 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. փետրվարը։

Շատ տեղերում այդ աղետին նախորդում է ընդհանուր տագնապալի վիճակը, որը լավ է պատկերվում Մուշից 1895 թ. նոյեմբերի 22-ին (հին տոմարով) ուղարկված նամակում. «Ներկայումս,— ասվում է դրանում,— հայ բնակչությունը քաղաքում ու շրջակայքում սարսափի մեջ է՝ ամեն օր լսվող սարսափելի սպառնալիքների հետևանքով։ Կյանքը, ունեցվածքն ու պա-

տիվը վտանգի տակ են, և ընդհանուր կոտորածը անխուսափելի է թվում։ Շուկան և հասարակական վայրերը փակ են։ Հաղորդակցությունը գյուղերի հետ, նույնիսկ՝ Մշո դաշտի գյուղերի, կտրված է (էջ 84—85)։ Այստեղ ու այնտեղ տեղի են ունենում առանձին կամ զանգվածային բռնություններ ու կողոպուտներ, որոնք անում են տեղացիները ավարառության, անձնական վրեժի և այլ դրդապատճառներով։ Զգացվում է, որ հայերի նկատմամբ արվելիք ամեն մի հաշվեհարդար անպատիժ է մնալու»։

Այսպես, օրինակ՝ Գավավ գյուղն է գալիս ավազակ Կաշիկը և հայ Մ-ից պահանջում 15 թուրքական լիրա... Մի քանի օր անց նույն գյուղն է ներկայանում Բալուի բեյերի պատգամավորությունը և պահանջում այդ տարվա հավաքած ամբողջ հացահատիկը, սպառնալով, որ չհնազանդվելու դեպքում թուրքեր ու քրդեր կբերեն և գյուղը հրի ճարակ կդարձնեն (Նամակ Բալուից, էջ 182—183)։ 1895 թ. հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, հայ բանկիր Պողոսը խանչալի հինգ հարված է ստանում չորս թուրքերից, որից հետո, քառորդ ժամ անց, մահանում է։ Ամբողջ քաղաքն իրար է անցնում, ամենուրեք գոռգոռոց, սպառնալիքներ...

Երկուշաբթի առավոտյան թուրքերը, խրախուսված ոստիկանության և զինվորների կողմից, հարձակվում են շուկայի վրա, թալանում կրպակները՝ գոռալով. «Սպանե՛ք հայերին, փա՛ռք Մուհամմեդին» (Ուրֆա, էջ 239—241)։ Եվ ապա, երբ հայերի բնաջնջման համար գործի է դրվում կանոնավոր և անկանոն բանակը, հայերին թշնամի տեղացիներն իրենց գործը շարունակում են՝ հանդես գալով որպես կազմակերպված կոտորածի գործուն մասնակիցներ։

Կանխազգալով իրենց գլխին գալիք անխուսափելի աղետը՝ զոհերը նետվում են դեպի տեղական իշխանությունները, և հենց այդ պահին նրանց տալիս են ամենակեղծ և ամենաշռայլ հավաստիացումներ, որպեսզի հայերը չանհանգստանան, գնան տներն ու զբաղվեն իրենց գործերով, որ, իբր թե իրենք, այսինքն՝ իշխանությունները, պատասխանատու են կարգուկանոնի համար։ Մինչդեռ այն ժամանակ, երբ հայերն այս դավաճանական խոսքերի ազդեցության տակ հանգստանում են ու վերադառնում իրենց սովորական զբաղմունքներին, կուլիսների հետևում կոտորածի գործուն նախապատրաստություն է տեղի ունենում անվտանգության հավաստիքներ տվող նույն այդ իշ-

խանությունների կողմից, մահմեդականների մեջ անհեթեթ լուրեր են տարածվում, որպեսզի նրանց դրդեն հայերի դեմ, զենք է բաժանվում առաջիկա հարձակման համար։ Այդպես է եղել, օրինակ՝ Երզնկայում, որտեղ հավաստիացումներից հետո տեղի է ունենում հարձակում շուկայի վրա, որը շատ տեղերում շատ հասկանալի պատճառներով հայերի նախնական կողոպուտի (օրինակ՝ Կեսարիայում, էջ 227, Ուրֆայում, էջ 240—241, Սվազում, էջ 222) և կոտորածի վայրն է հանդիսացել։ Նույնն է եղել նաև Խարբերդում (էջ 138—140), Արաբկիրում (էջ 164), Հուսնի-Մանզուրում (էջ 217—218)։ Բալուում կապիտան Հուսեին բեյը՝ կազայի վարչական խորհրդի անդամը, միևնույն ժամանակ և՛ հանգստացնում է իրեն դիմող հայերին՝ տեղական գյուղական հասարակության ներկայացուցիչներին, և՛ թաքուն կապի մեջ մտնում քրդերի հետ, նրանց հրահանգներ տալիս առաջիկա ջարդի վերաբերյալ։ Հայերին էլ հավատացնում է, թե ինքը քրդերի հետ բանակցել է, որպեսզի նրանք հեռու մնան հայկական գյուղերից։ Նա ձևի համար նույնիսկ բանտարկում է քուրդ հայտնի ավազակներին, որոնց հետո թաքուն բաց է թողնում (էջ 183—185)։ Տրապիզոնում տեղի վալին (վիլայեթի պետը, նահանգապետը)՝ Կադրի բեյը, տեղի հայոց եպիսկոպոսի ուղարկած մարդկանց երդվում է, թե ոչ ոք չի համարձակվի հայերին վնաս տալ և նույնիսկ ավելացնում է. ձեզ վրա կհարձակվեն՝ անցնելով իմ դիակի վրայով միայն։ Իսկ այդ նույն ժամանակ թուրքերը շուկայից ատրճանակներ են գնում, ոստիկանությունը զինաթափ է անում հայերին, մոլլաներն ու իշխանությունները ամբոխներին գրգռում են զանազան հերյուրանքներով, տեղական իշխանությունը թուրքերին խմբերի է բաժանում, նրանց զենք ու փամփուշտ է բաշխում և նշանակում է հարձակման օրը (էջ 21—25)։ Հուսեյնիկում թուրքական իշխանությունները, որպեսզի հայերին համոզեն զենքերը հանձնել, մարգարեի անունով երդվում են, թե նրանց ոչ ոք ձեռք չի տա, իսկ մի քիչ անց սկսվում է կոտորածը (էջ 132)։ Եվ ահա իշխանությունների խոսելաձևը փոխվում է, հենց որ հավաստիացումներն իրենց նպատակին են հասնում և հայերն ընկնում են թակարդը։ Այդ ժամանակ իշխանություններն սկսում են հայ պատգամավորներին հանդիմանել չափազանցության համար, բանտարկում են առավել պատվավոր անձանց (Երզնկա, էջ 53—54, Ուրֆա, էջ 246), պահանջում են

հանձնել մեղավորներին (Տրապիզոն, էջ 24), հանձնել զենքերը (Արաբկիր, էջ 142—143), այդ զինաթափումն էլ դարձյալ արվում է նախապատրաստվող հարձակումն ի նկատի ունենալով (Արաբկիր, էջ 142—144), վերջապես, ի լրումն ծայրահեղ ցինիզմի, զոհերին ստիպում են շնորհակալական համախոսական գրել սուլթանին (Արաբկիր, էջ 149)։ Սրանից է սկսում հետաքննական հանձնախումբը Մուշում, որը կոտորածից հետո ուղարկվում է այնտեղ, որպեսզի բարենորոգումներ անցկացնի։ Այդ հանձնախումբը տեղական իշխանություններին հանդիմանում է, որ նրանք հայերին չեն ստիպել շնորհակալական հանրագիր գրել, և իշխանությունները տեղնուտեղն սկսում են հայերի ներկայացուցիչներին ստիպել, որ շնորհակալական հեռագիր ստորագրեն և ուղարկեն սուլթանին (Մուշ, էջ 88)։ Այդ նույն ձևով Բալուում ահավոր կոտորածից մեկ օր առաջ զոհերը շնորհակալություն են հայտնում սուլթանին՝ ժամանած զորքերի համագործակցությամբ կարգուկանոնը վերականգնելու համար (Բալու, էջ 184—185), Մարաշում նրանք իրենց հանրագրում, որը հենց ճիշտ այսպիսի հանգամանքներում է կազմված, խոստովանում են, թե իրենք ուզում էին կոտորել մահմեդականներին և որ անկարգությունների համար պատասխանատվությունն ընկնում է իրենց վրա (Մարաշ, էջ 236)։

Այն սիստեմատիկությունը, որով կատարվել են կոտորածի նախապատրաստությունները, ապշեցուցիչ է։ Ամեն մի միջոց գործի է դրված, կանխատեսված են բոլոր մանրամասնությունները։ Հայերի ոչնչացման միջոցառումներին դավաճանաբար այնպիսի տեսք են տալիս, որ իբր թե դրանք ձեռնարկվում են հայերի պաշտպանության համար։ Ուրֆայում մութեսարիֆը (վալիից հետո եկող առաջին պաշտոնյան, շրջանի, սանջակի պետը) հայոց հոգևորականության ներկայացուցիչներին ասում է. «Գնացե՛ք, ոչնչից մի՛ վախեցեք, ես ձեր թաղամասը զորք կուղարկեմ ձեզ պաշտպանելու համար» և, իրոք, ուղարկում է 3000 զինվոր կանոնավոր բանակից ու 1500 համիդիե (քրդական անկանոն հեծելազոր), որոնք էլ հենց հարձակվում են հայերի տների վրա (Ուրֆա, էջ 249—250)։ Հուսնի-Մանզուրում իշխանությունները մահմեդական բնակչությանը Մարտին սիստեմի 200 հրացան են բաժանում՝ իբրև թե քրիստոնյաներին պաշտպանելու համար, որոնցից շատերը հաջորդ օրը հենց այդ զենքերի գնդակներից են վիրավորվել (Հուսնի-Մանզուր, էջ 212,

Խարբերդ, էջ 123)։ Զենքի հենց այդպիսի բաշխում է տեղի ունենում և Տրապիզոնում, Արաբկիրում... (էջ 244)։ Դրա կողքին տեղի է ունենում տեղական հայ բնակչության զինաթափում, որպեսզի նրան անպաշտպան դարձնեն, ինչը և ձեռնարկվում է դարձյալ զանազան վայելուչ պատրվակներով, օրինակ, որպեսզի հայերը դրանով ապացուցեին իրենց հնազանդությունը, ինչպես որ եղավ Հուսեյնիկում (էջ 132—133), Ուրֆայում, Տրապիզոնում։ Տրապիզոնում նախապես նշանակվում է կոտորածի օրը։ Թուրքերն այդ նպատակով բաժանվում են խմբերի, միջոցներ են ձեռնարկվում զոհերին այլազգիներից տարբերելու համար, այդ նպատակով հիմնվում է լրտեսություն, Կադրի բեյն ինքը՝ վալին, որը, ինչպես վերևում տեսանք, դավաճանաբար հանգստացուցիչ խոստումներ է տվել, իսկ կոտորածի օրը, շրջապատված թուրք հրոսակներով, անձամբ ցուցումներ է տալիս, թե ում սպանեն, գլխավորապես՝ հարուստներից։ Խարբերդ են տեղափոխվում Արաբկիրում կանգնած զորքերը և, ընդհակառակը, որպեսզի ոճրագործությունների համար հանցավորները չճանաչվեն տեղական բնակչության կողմից, Խարբերդում էլ զենքի են կոչում ռեդիֆներին՝ տեղական բնակչությանը պաշտպանելու պատրվակով։ Ռեդիֆների մի մասին զգեստավորում են գյուղացիների նման և ուղարկում գյուղերը թալանի, և ընդհակառակը՝ գյուղաբնակներին զինվորի շորեր են հագցնում և հրահանգ տալիս ջարդել (էջ 123—124)։ Արաբկիրում որոշում է կայացվում, որ յուրաքանչյուր թուրք կոտորածն սկսի իր հայ բարեկամներից (էջ 144)։ Երզնկայում իշխանություններին հաջողվում է կեղծ հանգստացումներով հայերին ստիպել տներից դուրս գալ, գնալ շուկա, որտեղ և սկսվում է ջարդը (էջ 51)։ Խարբերդում հայերը, ոստիկանների խոսքերից հանգստացած, որոնք խոստանում են պաշտպանել նրանց, բացում են տների դռները և ապա ենթարկվում կոտորածի ու կողոպուտի (էջ 124)։ Բալուում Սահրադ գյուղի տեր քուրդ Իբրահիմ բեյը այդ գյուղն է հրապուրում-տանում կոտորածից փրկություն փնտրող բազում հայերի, որով նա քրիստոնյաների հովանավորի համբավ է վաստակում։ Սակայն նա փախստականներից վարձ է վերցնում իր հովանավորության դիմաց, կորզում է նրանց անասունները և ունեցվածքը՝ դրանք ավելի լավ պահպանելու պատրվակով, նրանց ամեն կարգի անարգանքի է ենթարկում, շորթում ինչ որ հնարավոր է և, վերջապես, մատ-

նում է ամենաբարբարոսական ոչնչացման (էջ 205 և հաջ.)։ Դրա հետ մեկտեղ փութեռանդ հարաբերություն է հաստատվում կառավարության և քրդերի միջև, որպեսզի նրանց նախապատրաստեին հայերի ոչնչացմանը։ Այս նպատակով խարբերդում քուրդ հանցագործներին բանտերից բաց են թողնում (էջ 122—123, Բալուում՝ էջ 184—185)։

Որպեսզի գեթ մի փոքր արդարացնեն ջարդը, ինչպես և է՛լ ավելի լավ գրգռեն տեղական բնակչությանը հայերի դեմ, իշխանությունները բազմիցս փորձեր են անում մինչև ջարդը, ջարդի ժամանակ և հետո, մեղադրելու հայերին մի շարք հանցանքների մեջ, հանցավոր մտադրությունների մեջ, և գլխավորապես՝ հայերին ներկայացնելով որպես ապստամբների։ Ապրստամբության մեջ մեղադրանքը իշխանությունների կողմից գործի է դրվել Ուրֆայում (էջ 240, նաև էջ 246), Տրապիզոնում, որտեղ փախչող հայերի հետևից թուրքերը կանչում էին «հանձնվե՛ք», իբր թե նրանք ապստամբներ էին (Երզնկայում, Մուշում, էջ 27)։ Իսկ Ուրֆայում թուրքերը պատմում են, թե հայերն ուզում էին հարձակվել մուսուլմանական թաղի վրա, բայց դա նրանց չհաջողվեց։ Ոստիկան Գաբգարը խոստովանում է, թե այն կրակոցները, որոնք գիշերը լսվել են Ուրֆայում, թուրքերինն են եղել, բայց ուզում են դրանք հայերին վերագրել։ Հեռագիր է ուղարկվում Բարձր Դուռ, տեղեկացնելով, թե հայերը կործանել են մեչիդները և կոտորել հազար մուսուլման։ Տրապիզոնում իշխանությունները տեղացիների մեջ տարածում էին այսպիսի լուրեր. հայերը անգլիացիների հետ դաշնակցած՝ ուզում են կործանել Օսմանի դինաստիան և ոչնչացնել մահմեդականությունը։ Եկող ուրբաթ օրը այստեղի հայերը զենքը ձեռքներին հարձակվելու են մեչիդների վրա և մորթելու են մահմեդականներին։ Մենք պետք է կանխենք այդ անհավատ շներին, որպեսզի նրանք մեզ չոչնչացնեն։ Իշխանությունների նախաձեռնությամբ արվող կոտորածի կոչերում երբեմն ասվում է, որ ջարդի իսկական նպատակն է եղել հայերի ոչնչացումը, իսկ կողոպուտը երկրորդական դեր է խաղացել։ Մուշում, օրինակ, մի պաշտոնական անձ այսպես է արտահայտվել մեծ թվով քրդերի և հայերի ներկայությամբ. քրդերը վատ էին գործում. մենք նրանց հրաման տվեցինք ոչնչացնել հայերին, նրանք ավելի շուտ թալանում էին, քան սպանում (էջ 88—89)։ Բալուում մուֆթիներն ու ջարժման առաջնորդները կանչում ասում էին հարձակվողներին. «Գլխավորապես սպանե՛ք և ժամանակ մի՛ կորցրեք թալանի վրա»։ Երզնկայում բարձր աստիճանավորները ամբոխին ձայն են տալիս. «Փրթե՛ք գյավուրներին, ոչընչից մի՛ վախեցեք»։ Արաբկիրում դեռ կոտորածից առաջ մուհեդիկները շրջում են գյուղեգյուղ ու գոչում. «Մուհամմեդի զավակները պարտավոր են իրենց պարտքը կատարել՝ ոչնչացնե՛լ բոլոր հայերին, թալանե՛լ և այրե՛լ նրանց տները։ Ո՛չ մի հայ չպետք է ողջ մնա...»։ Ուրֆայում Հասան փաշան կանչում ասում է ամբոխին. «Գնացե՛ք, զավակնե՛րս, ձեր տրամադրության տակ 48 ժամ ժամանակ կա, մորթե՛ք բոլոր գյավուրներին, և նրանց հարստությունը ձերը կլինի»։ Հենց այսպիսի հրամաններ է տալիս կապիտանը այստեղի զորքերին (էջ 241—242)։ Իշխանությունները նման ձևով գրգռում են ամբոխին նաև Տրապիզոնում (տե՛ս վերևում՝ էջ 29), Սղերդում (էջ 83), Բալուում (էջ 186)։

II

Այդ դժոխային մեքենայություններին, որոնց սիստեմատիկությունն ստիպում է մտածել, որ մենք գտնվում ենք սպանդանոցում, այլ ոչ թե մարդկային հասարակության մեջ, հաջորդում է բուն կոտորածը։ Վերջինիս սարսափելի կալեյդոսկոպում արագորեն իրար են փոխարինում սպանությունը, թալանը, հրկիզումը, բռնաբարությունը, կոտանքների մի ամբողջ գամմա՝ բարդ և նույնպես սիստեմատիկ։ Լսենք ականատեսներին։ Ահա թե ինչ է գրում Ուրֆայի կոտորածի ականատեսը։ Հայերը չգիտեին, թե ինչ անեին, նրանք նույնիսկ գրչահատ դանակ չունեին պաշտպանվելու համար (բոլոր զենքերը վաղօրոք խլված էին իշխանությունների կողմից), նրանք լաց էին լինում, թաքնվում էին տների անկյուններում, աստված էին կանչում, որ գթա իրենց։ Թուրքերը բահերով ջարդում էին դռները և տուն մտնում, սպանում ու կտոր-կտոր անում ամենքին, ովքեր հանդիպում էին՝ ջահելներին, ծերերին, տղամարդկանց, կանանց։ Չի կարելի ո՛չ կարդալ, ո՛չ նկարագրել նրանց անամոթությունները և այն հրեշավոր բաները, որ նրանք կատարում էին։ Նրանք բազում կանանց ու աղջիկների էին խայտառակում սրանց հայրերի և ամուսինների աչքի առաջ, կտրում էին խայտառակվածների կրծքերը, քառատում և սպանում էին սրանց՝ տեսականո-

րեն և սարսափելի տանջելով։ Սատանայական դաժանությամբ նրանք մորթում էին նախ երեխաներին, իսկ ապա արդեն ծնողներին՝ զվարճանալով նրանով, որ խոշտանգվողներն աղերսում էին շուտ վերջ տալ իրենց կյանքին։ Եղել են գազաններ, որոնք իրենց կիրքն են բավարարել խայտառակությունից խուսափելու համար իրենց կյանքին վերջ տված աղջիկների դիակների վրա։ Հայերը փորձում էին դիմադրել, բայց նրանց ջանքերը թույլ էին բոլոր կողմերից իրենց վրա հարձակվող թշնամիների հեղեղի դեմ։ Այդ դիմադրությունը միայն շարունակեց կոտորածը, քանի որ մուսուլմաններին, չնայած իրենց քանակին, հարկ եղավ շատ ժամանակ ծախսել հայերի բազմությանը ոչնչացնելու վրա։ Սպանդը դադարեց միայն գիշերվա վրա հասնելով։ Զինվորները դեռ շարունակում էին տների շրջափակումը, բայց ամբոխը՝ հոգնած ու ջարդից հագեցած, արագորեն հետ քաշվեց... Հարյուրավոր հայ կանայք և աղջիկներ այդ գիշեր անարգվել էին մուսուլմանների տներում։ Կիրակի առավոտյան նորից լսվեց փողի ձայնը, և ամբոխը վերադառնալով հայոց թաղը, նորից անցավ կոտորածի։ Այդ օրը արյունը վտակ-վտակ հոսում էր՝ ներկելով փողոցներն ու տները, և ոչ մի տեղից՝ ո՛չ մի օգնություն, ո՛չ մի գթություն։ Մայրերն ընկնում էին մարդասպանների ոտքերը, որոնք նետվել էին հոշոտելու նրանց զավակներին, քույրերին, եղբայրներին, ամուսիններին, նրանք մարդասպաններին տալիս էին իրենց ողջ ոսկին, իրենց ողջ ունեցվածքը՝ խնդրելով խնայել մերձավորների կյանքը, բայց գազանները կոխկրտում էին կանանց և նրանց մարմինները ոտքի տակ տալով՝ մորթոտում էին նրանց ողջ գերդաստանը։

Կեսօրին ամբոխը եկավ լցվեց մայր տաճարի առաջ, որտեղ ապաստանել էին մոտ 3000 հայեր։ Կես ժամ անց գուռը ջարդվեց, հարձակվողները ներս խուժեցին, բայց տեսան, որ իրենք ստիպված կլինեն շատ ժամանակ վատնել, եթե ուզենան հայերին սպանել մեկ առ մեկ։ Վերջիններս այնպիսի քանակությամբ էին կուտակվել տաճարում, որ ճզմում էին իրար, որ երեխաները խեղդվում-մեռնում էին։ Այնժամ հարձակվողները սարսափելի մի բան մտածեցին։ Մայր տաճարի բակում մոտ հիսուն արկղ նավթ կար։ Թուրքերը նավթը լցնում են եկեղեցու վրա և կրակ տալիս, և քիչ անց, մոտ 3000 դժբախտներ ողջակիզվում են։ Նրանք, ովքեր փորձում են փախչել, անգթորեն մորթվում են ամբոխի ձեռքով։ Հայերի ողջ բազմությունից միայն մեկ մարդ

է կենդանի մնացել՝ մի քանի տեղից վիրավորված, որը երեք օր պառկած է մնացել դիակների տակ։ Հայոց արքեպիսկոպոս Խորեն Մխիթարյանը այս ամբողջ զարհուրելի տեսարանը տեսնում է իր տան կտուրից։ Նա այն աստիճանի ցնցված է լինում, որ լալով քաշվում է իր սենյակը, երակը կտրում և իր արյան մեջ թաթախելով գրիչը՝ մուֆթեսարիֆին նամակ է գրում։ Դուք ոչնչացրիք իմ ժողովրդին,— ասում է նա,— ինձ՝ նրա հովվին էլ հարկ չկա մնալու այս աշխարհում, ես կգնամ նրա հետևից։ Դու ես այս բռնությունների և այս՝ արյամբ գրված տողերի պատճառը, և, քանի որ այս աշխարհում ոչ ոք չի ուզում պաշտպանել իմ ժողովրդին, ուստի ես նրան հանձնում եմ աստծուն՝ անմեղաց պաշտպանին։ Արքեպիսկոպոսը թուրքերից շատ սիրված ու հարգված էր իր ազնվության և գիտունության համար։ Մուֆթեսարիֆը կարդալով այս նամակը՝ շփոթմունքի մեջ է ընկնում և ազդեցիկ մարդկանց խորհրդով իսկույնևեթ բժիշկներ է ուղարկում արքեպիսկոպոսի մոտ, որոնց հաջողվում է ժամանակին հասնել ու փրկել նրան։ Արքեպիսկոպոսը ողջ է մինչև հիմա, թեև թույլ է։ Սպանվածների թիվը հասնում է 10 հազարի։ Օրական մեռնում է 25—30 հոգի՝ ծանր վիրավորներից ու խեղվածներից։ Ոչինչ չի մնացել՝ ո՛չ ժողովուրդ, ո՛չ հովիվ։ Ութ քահանաներից ողջ է մնացել միայն մեկը, բողոքականների առաջնորդական տեղապահը կտոր-կտոր է արվել։ Ողջ մնացածները ծայրահեղ կարիքի մեջ են, իսկ դահիճները դեռ չեն հագեցել (էջ 250—256)։

Տրապիզոնում 1896 թ. սեպտեմբերի 26-ին սպանել են բոլորին՝ «և՛ նրանց, ովքեր հանձնվում էին, և՛ նրանց, ովքեր գուռ էին աղերսում, և՛ նրանց, ովքեր փախչում էին։ Մերերը, երեխաները, երիտասարդները, բոլորը անգթորեն մորթվել են, կտոր-կտոր արվել այդ օրը՝ մոտ 300 հոգի, ի թիվս որոնց նաև՝ մի քանի կանայք։ Կային թուրքեր, որոնք սպանում էին իրենց հարևաններին, ընկերակիցներին, բարեկամներին։ Նրանք, մոլեգնած, ինչպես գազաններ, փրթում էին նույնիսկ դիակները։ Ողբալի տեսարան էին ներկայացնում հայկական թաղերը։ Կանայք, նորապսակներ, երեխաներ վազվզում են փողոցներով՝ գլխակորույս, չգիտեն, թե ուր։ Ոմանք իրենց գցում են բարձր պարիսպներից, ուրիշներն ուշաթափ են լինում։ Ջահել կանայք, մի ձեռքով կրծքներին սեղմած երեխաներին, իսկ մյուսով լուսամուտից կախված պարանը բռնած, ամեն վայրկյան ընկնելու

վտանգի տակ, գետին են իջնում։ Ծերունիները թաքնվում են նկուղներում։ Մեծ է սարսափը։ Զինվորներն ու ավազակները հարյուրներով մտնում են տները և պահանջում հանձնել տղամարդկանց, զինվորները կրակում են լուսամուտներից ներս, բաշիբոզուկները մորթում են ու կտոր-կտոր անում տղամարդկանց՝ նրանց կանանց ու երեխաների աչքի առաջ» (էջ 27—28)։

Արաբկիրի կոտորածի մասին հետևյալ մանրամասնություններն են պատմում. «Սկսեցին սպանել, այրել։ Սարսափահար հայերը տներից փախչում են դաշտերը, սարերը։ Բայց մեծ մասը ճանապարհին ընկնում է թուրքերի ձեռքը և ահավոր մահով մեռնում։ Ոմանց կրակն են նետում, ոմանց գլխիվայր կախում, ինչպես ոչխարների, և կաշիները քերթում, մյուսներին մորթում ու փրթում են կացիններով ու մանգաղներով, ուրիշների վրա նավթ են լցնում ու վառում, սրանց վրա նետում են այլ զոհերի, որոնք ծիից են խեղդվում։ Շատերին ողջ-ողջ թաղում են գետնի մեջ, ուրիշներին գլխատում են և գլուխները ձողերին տնկում։ Հայերին, հիսուն հոգանոց խմբեր կազմած, թուրքերը պարաններով կապում են իրար, գնդակահարում և դիակները կացիններով ու թրերով փրթում։ Պոկում են կանանց կուրծքը, քառատում են նրանց, վառոդ լցնում ծամերի մեջ ու կրակ տալիս։ Ճեղքում են հղի կանանց փորերը, երեխաներին դուրս հանում ու սպանում։ Այս նույն կարգի տեսարաններ են մշտապես կրկնվում այլ վայրերում ևս, օրինակ՝ Բալուում, Սվազում, Էրզրումում (էջ 41—43), Կեսարիայում»։

Ինչպես երևում է այս տեղեկություններից, ջարդերին ուղղակի մասնակցություն են ունեցել զորքերը. Ուրֆայում՝ 3000 կանոնավոր և 1500 համիդիե, Արաբկիրում՝ 1600 կանոնավոր և ռեդիֆներ, Բայբուրդում՝ Էրզրումից ուղարկված կանոնավոր դումարտակներ, Խարբերդում՝ ռեդիֆներ, Հուսեյնիկում՝ կանոնավոր զինվորների մի գունդ, Սվազում՝ կանոնավոր զորք և ժանդարմներ, նույնը և Էրզրումում, Բալուում, Տրապիզոնում, Սղերդում։

Տեղական իշխանությունները՝ աշխարհիկ, հոգևոր, զինվորական, որոշ տեղերում բացահայտորեն ղեկավարում են ջարդը կամ էլ ուղղակի մասնակցություն ունենում դրան։ Այսպես, Տրապիզոնի կոտորածի ժամանակ վալի Կադրի բեյը անձամբ հրահանգներ է տալիս, թե ում սպանեն, և կողոպուտի կոչ է

անում (էջ 26), Բալուում կոտորածին մասնակցում են կայմակամը, մուֆթին, ոստիկանական կոմիսարը, Բայբուրդում՝ ժանդարմների պետը, Ուրֆայում՝ Հասան փաշան և զինվորական ջոկատի պետը, Երզնկայում՝ մեծամեծ պաշտոնյաները։ Մյուս տեղերում էլ իշխանությունները իրենց մասնակցությունն են բերել կոտորածի հատկապես նախապատրաստման և հրահրման գործում, ինչպես օրինակ՝ Ախթամարում՝ կայմակամը (օկրուգի, թուրքերեն կազայի պետը), կազայի զինվորական պետ և վարչական խորհրդի անդամ Հուսեին բեյը՝ Բալուում, նույն տեղում՝ ոստիկանական կոմիսարը, Տրապիզոնում՝ մոլլաները (էջ 25), Հուսնի-Մանզուրում՝ մուֆթին (էջ 221)։ Ջորքին ու ամբոխին, ինչպես պատերազմում, ռազմափողերի հնչյուններով են կոչ անում սկսելու կոտորածը. այսպես է եղել Խարբերդում, Բալուում։

Ոչնչացվում է գլխավորապես արական սեռի հայ բնակչությունը (Տրապիզոն, Գյումուշհանե, էջ 35, Էրզրում, էջ 44)։ Առանձին հաճույքով են սպանում ու բանտարկում հարուստ մարդկանց, կողոպուտի նպատակով առավել հետաքրքիր խոշոր վաճառականներին (Գյումուշհանե, էջ 37, Արաբկիր, էջ 164, Էրզրում, էջ 42—43, Ուրֆա, էջ 258), ինչպես և ազդեցիկ մարդկանց (Խարբերդ, էջ 126, Բալու, էջ 201, Հուսնի-Մանզուր, էջ 218, Մարաշ, էջ 236, Ուրֆա, էջ 258)։ Զոհվածների մեջ շատ են, ինչպես կտեսնենք, հոգևոր դասին պատկանող անձինք...

Մարդասպանների եռանդի պերճախոս վկայությունն են խարբերդցիների պատմած հետևյալ փաստերը։ Այնտեղ Սուլեյման բեյը իր եղբոր հետ սպանել է 300-ից ավելի հայերի, իսկ Հաջի Բեգոն՝ մոտ 100 հոգու (էջ 125—126, 129)։ Նույն տեղում մի հացավաճառ ի լուր ամենքի ասում էր, թե սպանել է 97 հայի և պարծենում էր, թե այդ թիվը 100-ի է հասցնելու։ Կոտորածի ու ջարդի արդյունքների մասին կարելի է դատել ըստ հետևյալ թվերի. Մարաշում՝ 850 սպանված և 500-ից ավելի վիրավոր, 300-ից ավելի ձերբակալված, Կեսարիայում՝ մոտ 340 սպանված, մոտ 200 ծանր վիրավոր, թալանված է մոտ 400 տուն և 200 խանութ, Սվազում կոտորածից հետո գերեզմանոց է տարվել 450-ից ավելի դիակ, թալանված կրպակների թիվը հասնում է մինչև 2000-ի (էջ 223—224), Հուսնի-Մանզուրում եղել է 617 զոհ։ Արաբկիրում սպանվածների թիվը հասնում է 3000-ի։ 3000 տնից մնացել է միայն 150-ը՝ կիսավեր ու թա-

լանված, Բիրեջիկում սպանվածները հաշվվում են 3400 հոգի, Ուրֆայում մոտ 10 000։ Բալուի գավառում թուրքերի կողմից անպատվված կանանց և աղջիկների թիվը կարելի է համարել 60—70 տոկոսը, դեռ մի կողմ թողնելով նրանց, որոնց թուրքերն առևանգել են և բռնությամբ իրենց կինը դարձրել (էջ 191)։

Մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում այն սարսափելի արարքներից, որ կոտորածի ժամանակ կատարել են Ուրֆայում, Արաբկիրում և այլ տեղերում... Խարբերդում Հաջի Բեգոն հրամայել է քառատել մի կնոջ և սյուներից կախած ցուցադրել, Ախթամարում ոմն Ջևեր երկու եղբայրների կապել է պարաններով, ցցերով գամել գետնին և այդպես մեռցրել (էջ 109)։ Բայբուրդում հրեշները զվարճանում էին նրանով, որ խանչալը խրում էին վիրավորների կուրծքը կամ վիզը և պտտում շաղափի պես (էջ 1)։ Տղամարդկանց խոշտանգումն ու ոչնչացումը, կանանց բռնաբարումն ու ծանակումը մշտապես կրկնվող դեպքեր են եղել հայկական կոտորածներում։

III

Շարժման ղեկավարներ կամ էլ սադրիչներ որոշ դեպքերում, ինչպես տեսանք, հանդիսանում են հոգևորականության ներկայացուցիչները, մոլլաները, մուֆթիները։ Մա՜հ քրիստոնյաներին, փա՜ռք Մուհամմեդին. ահա այս կանչերով է ամբոխը հայերի վրա գնում (Սվազում, էջ 225, Ուրֆայում, էջ 241—242, 250)։ Հուսնի-Մանզուրում հարձակվողները գոռում են. «Մուսուլմանությո՜ւն ընդունեք, թե չէ բոլորիդ կմորթե՜նք» (էջ 218)։ Այնթապում թուրքերն ասում են. «Կտեսնե՜ք, ո՜չ մի գյավուրի կենդանի չենք թողնելու» (էջ 257)։ Ուրֆայում հարձակվողները բացականչում են. «Եթե մենք գյավուրներին չոչնչացնենք, երբեք դրախտ չե՜նք ընկնի» (էջ 246)։ Արաբկիրում դեռ կոտորածից առաջ մուֆթիները հրապարակորեն հայտարարում էին, որ հայերի ոչնչացումը, նրանց տների կողոպտումն ու հրկիզումը Մուհամմեդի զավակների պարտականությունն է (էջ 143—144)։ Ամենուրեք, որտեղ որ կոտորած էր լինում, թուրքերը առանձին կատաղությամբ կործանում էին եկեղեցական շենքերը և սպանում հոգևոր անձանց։ Ամեն կողմից լուրեր են գալիս վանքերի ու եկեղեցիների հրկիզման, կողոպուտի և կործանման մասին (Բիթլիս, էջ 73, 74, 76, Ախթամար, էջ 105, 108, 110, 113, 115,

116, 118, Խարբերդ, էջ 137, Մալաթիա, էջ 177, Մարաշ, էջ 234—235)։ Վանից ուղարկված նամակում հաշվվում է 120-ից ավելի կողոպտված եկեղեցիներ ու վանքեր՝ միայն 8 օկրուգում (District, էջ 97—101)։ Դրա կողքին տեղի է ունենում նաև հարձակվողների կողմից եկեղեցիների ու սրբազան իրերի սրբապղծում ու ծանակում։ Մարաշում ավերվում ու պղծվում է հայկական գերեզմանոցը (էջ 237)։ Հաճախ հայկական եկեղեցիներն ու վանքերը մուսուլմանները վերածում են մզկիթների (Բայբուրդում, էջ 62, Բիթլիսում, էջ 74, Սղերդում, էջ 82, Ախթամարում, էջ 106, 110, Հուսնի-Մանզուրում, էջ 221)։ Հարձակվողները առանձին դաժանությամբ են կոտորում հոգևոր կոչում ունեցողներին, քահանաներին և վանականներին, սպանությունները զուգակցելով խոշտանգումներով ու ծանակումներով (Վանում, էջ 91, Ախթամարում, էջ 111—112, Արաբկիրում, էջ 163, Մարաշում, էջ 235), զոհերին ողջ-ողջ այրելով (Խարբերդ, էջ 131), կենդանի մարդկանց մաշկը քերթելով (Ախթամար, էջ 104)։ Կարճկանի գավառում վանահայր Պետրոսին կտոր-կտոր են արել հոդերից, լեզուն կտրել և սարսափելի խոշտանգումներից հետո վերջ տվել (էջ 118)։

Եկեղեցիների կործանման և հոգևորականության կոտորածի հետ միասին տեղի է ունենում նաև հայ բնակչության բռնի մահմեդականացում անհատաբար և զանգվածայնորեն (Բայբուրդ, Խարբերդ, Բիթլիս, Արաբկիր, Հուսնի-Մանզուր, էջ 221)։ Կենդանի մնացած բնակիչները ամբողջ գյուղերով ստիպված էին լինում մուսուլմանություն ընդունել և միայն այդ գնով կարող էին պահպանել իրենց կյանքը, ինչպես, օրինակ՝ Էգինի տասնըչորս գյուղերի բնակիչները, ամբողջ գյուղեր Վանում (էջ 91, նույնը Սղերդում, էջ 82, Բիթլիսում, էջ 74, Ախթամարում, էջ 106)։ Արաբկիրում հայ բնակչությունը մի շատ բարձր պաշտոնյայից առաջարկություն է ստանում մուսուլմանություն ընդունել և դրանով անվտանգություն ձեռք բերել։ Հայերը մերժմամբ են պատասխանում և դրա հաջորդ օրը ենթարկվում են կոտորածի (էջ 165)։ Կրոնափոխ լինելուց հրաժարվողներին անհապաղ սպանում էին, հաճախ՝ խոշտանգումներով։ Խարբերդում հայ քառասուն երևելի անձանց, որոնք ապաստանել էին եկեղեցում, շեյխն առաջարկում է մուսուլմանություն ընդունել, և երբ նրանք հրաժարվում են, հրամայում է, որ նրանց մեկը

մյուսի հետևից մորթեն եկեղեցու շեմքին (էջ 126, հենց այդպիսի դեպքեր են պատկերված 134, 138 էջերում)։ Նման դեպքեր են տեղի ունենում Էգինում (էջ 168), Ջենկուգում (էջ 210)...

IV

Տխուր պատկեր են ներկայացնում այն քաղաքներն ու գյուղերը, որտեղ կոտորած է եղել։ Էրզրումում կոտորածի հաջորդ օրը հայկական գերեզմանոցը մի սարսափելի ու սրտաճմլիկ տեսարան էր ներկայացնում. հարյուրավոր արյունաշաղախ, ջախջախված, այլանդակված, անճանաչելի դարձած դիակներ, իրար վրա կիտված, և դրանց մոտ՝ բազմաթիվ հայեր, որոնք ճանապարհին սպանվելու վտանգն արհամարհած, եկել փընտրում են իրենց հարազատներին, կռանում են յուրաքանչյուր սպանվածի վրա և այնուամենայնիվ չեն կարողանում ճանաչել նրանց, ում որոնում են (էջ 43)։ Հալեպից եկող-անցնող վաճառականները Խարբերդում, Բալուում, ճանապարհներին և դաշտերում տեսնում են հարյուրավոր կանանց, միանգամայն մերկ, անպատվված, խոշտանգված, մեռած կամ հոգեվարքի մեջ։ Ոմանց մոտ՝ կրծքի երեխաներ, դեռևս կենդանի (էջ 82—83)։ Կոտորածից հետո տներում մնացած դիակներն սկսում են քայքայվել, օդն անտանելի հոտով է բռնվում (Բալու, 210)։ Մեր քաղաքը, գրում են Սվազից, այժմ ավերակ է։ Շուկա չկա, ոչ ոք չի աշխատում, բանվորներից խլել են նույնիսկ գործիքները։ Ոչ ոք չի վաճառում, ոչինչ չկա։ Ամենքն աղքատ են, անգործ, անհաց, անփող, ամենքը սարսափով սպասում են։ Եկեղեցիներն ու դպրոցները փակ են։ Դժվար է որևէ ուտելիքի պաշար ճարել։ Թուրքերը, որոնք ամեն ինչ խլել են, հիմա 40 ղուռուշ են առնում այն բանի դիմաց, ինչը 10 արժեր։ Մենք սարսափելի դրության մեջ ենք (էջ 226)։ Այս ահավոր դժբախտությունների հետևանքով (այսինքն՝ կոտորածների և կողոպուտների), հաղորդում են Մալաթիայից, աղքատությունն ու սարսափելի սովը իրենց զգալ են տալիս։ Սննդից ու ծածկից զրկված ժողովուրդը ստիպված է ողորմություն մուրալ, կրպակից կրպակ անցնել, տնից տուն, նույնիսկ նրանց է խնդրում, որ խղճան իրեն, ովքեր դեռ երեկ իր դահիճներն են եղել։ Փողոցները լիքն են դժբախտ զոհերով, որոնց մեջ հաճախ տեսնվում են կիսամերկ կանայք ու աղջիկներ, և ծերունիներ, որոնք հազիվ են շարժ-

վում։ Խստաշունչ եղանակի հետևանքով շատ դժբախտներ զոհվել են սովից, և նրանց դիակները գտնում են քաղաքում ու շրջակայքում (էջ 176—177)։ Նույնանման պատկերներ են դիտվում նաև Ախթամարում, Արաբկիրում, Վանում, Բիթլիսում, որտեղ եղել են սովամահ լինելու դեպքեր (էջ 79)։ Ամեն տեղից աղաղակներ են գալիս ջարդից հետո հայ բնակչության սովահարության և լրիվ ընչազրկության մասին. Բայբուրդից, Մուշից, Վանից, Ախթամարից (էջ 105, 119—120), Արաբկիրից, Ակնից, Հուսնի-Մանզուրից, Կեսարիայից (էջ 232)։ Մենք ո՛չ տուն ունենք, ո՛չ անկողին, ո՛չ հաց,— գրում են Տրապիզոնից (էջ 32)։ Սվազում նրանք, ում հաջողվել է խույս տալ մահից, ոչինչ չունեն. ո՛չ դրամ, ո՛չ հագուստ, ո՛չ նույնիսկ անկողին (էջ 225)։ Ջեմ կարող այլևս գրել քեզ, սիրելի զավակս,— ասվում է որդուն ուղարկված հոր նամակում,— ձեռքս դողում է ցրտից, բացի այդ, մենք համարյա երեք օր ոչինչ չենք կերել (էջ 165)։ «Մեծ թվով երեխաներ,— գրում է Խաչատուրը՝ Ախթամարի կաթողիկոսը,— որը են մնացել։ Ամենուրեք հանդիպում էին անմխիթար ծնողներ, որոնք փնտրում էին որդու կամ կորած դստեր հետքերը» (էջ 105)։ «Սպանել են հորս,— գրում է մի կին Արաբկիրից,— պապիս, հորեղբայրներիս, մորս հորեղբորը... սպանել են մեր բարեկամ Բ-ին ու նրա կնոջը, որը են մնացել նրանց չորս երեխաները, որոնք լալիս են, մորը կանչում։ Սպանել են Ա-ին ու նրա կնոջը, նրանցից հետո մնացել են հինգ երեխաներ, երկուսը՝ ծծկեր, բայց ոչ ոք չկա, որ նրանց կուրծք տա» (էջ 160)։ Ուստի հասկանալի է, որ որոշ նամակներ ավարտվում են նյութական օգնության կոչով...

Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1897, с. 48—61.

56. ՍԱՄՍՈՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՆԵԼԻԴՈՎԻՆ

Զեկույցից

Թոքաթ, 27 մարտի 1897 թ.

Ըստ այն տեղեկությունների, որ ինձ հաջողվել է հավաքել տեղում, խժդժությունները Թոքաթում սկսվել են ամսույս 7-ին, ուրբաթ օրը, ժամը 9-ից հետո և շարունակվել մինչև առավոտյան 11-ից քիչ անց...

Թոքաթում սպանվել է ընդամենը 98 հոգի, ի թիվս որոնց՝ երկու կին և մեկ աղջիկ, և վիրավորվել է 40 հոգի։ «Խփե՞ք դրանց,— ասում էին չարագործները,— դրանց ունեցվածքը մե՞զ է պատկանում»։ Կողոպտել են 18 կրպակ, ջարդոտել են 80 կրպակ։ Կողոպտվել է նաև քաղաքի առավել հեռու ընկած ծայրամասերում ոչ ունևոր մարդկանց պատկանող մոտավորապես 100 տուն։ Շրջակա գյուղերից՝ Ջիպրեկում զոհվել է 33 հոգի, որի մոտ գտնվող հայկական վանքը նույնպես թալանված է։ Սպանվածների թվում են երկու աբեղա և մեկ սարկավագ։ Ինեկինջիկում կոտորել են 12, իսկ Բիզերիում՝ 8 հոգու։ Բոլոր տուժածները հայեր են։

Այս ցավալի իրադարձությունը ամենուրեք մուսուլմանների միջավայրում ուժգին խմորում է առաջացրել, որոնք իրենց միջի առավել ունևորների և մահմեդական հոգևորականության կողմից հրահրվել են կոտորելու հայերին, ինչը և մեծ խուճապ է առաջացրել շրջակա վայրերի քրիստոնյա բնակչության մեջ։ Սվազում, Թոքաթի խառնակություններից հետո, այդ քաղաքից եկածներից իմ ստացած տեղեկությունների համաձայն, կըրպակները երկու շաբաթից ավելի փակ են եղել, և քրիստոնյաները վախեցել են շուկայում երևալ։ Իմ՝ Թոքաթ գալուց առաջ Սինոպից ստացած լուրերի համաձայն, այնտեղ էլ նույնպիսի խուճապ է տիրել։ Ամասիայում, ինչպես ինձ հաղորդեցին այդ քաղաքում, տեղական սոֆտաներն ու մոլլաները ամսույս 13-ին՝ շորեքշաբթի օրը, եկել են շուկա և սրել տվել դանակներ, խանչալներ և այլն, բացեիբաց հայտարարելով, թե դա արվում է քրիստոնյաներին կոտորելու համար, իսկ տեղացի բեյերը, ասում են, ապաստան են տվել որը՝ վեց, որը՝ տասը, ոմանք էլ շատ ավելի մեծ թվով մարդասպանների՝ նրանց հետ ավարը կիսելու նպատակով։

Բայց ի պատիվ այլ մուսուլմանների, պետք է ասել, որ փրկել են բազմաթիվ քրիստոնյաների՝ սրանց իրենց մոտ ապաստան տալով, իսկ մուսուլման մի աղջիկ՝ 13 տարեկան, հում աղյուսե պատի մեջ անցք բացելով, հնարավորություն է տվել հարևան տնից իրենց մոտ անցնելու 15 հայերի, որոնց օգնությամբ նորից է փակել անցքը, և դրանով նրանց փրկել վերահաս մահից։

Անցնելով այն պատճառներին, որոնցից ծագել են խժդժություն-

թյունները, համառնակվում եմ Ձերդ բարձր գերազանցության լուսավորյալ ուշադրությունը հրավիրել անցյալ փետրվարի 15-ի իմ № 41 զեկույցի վրա։ Կրետեի հարցը և պատերազմը Հունաստանի հետ ֆանատիզմի պայթյուն առաջացրին, ինչը քիչ դեր չխաղաց երկրամասի ներկա դրության համար հող նախապատրաստելու գործում։

Սրան պետք է միացնել նաև երիտթուրքական կուսակցության կոմիտեների գործունեությունը, որոնք միասնաբար աշխատում են հայկական կոմիտեների հետ և ունեն շահերի ընդհանրություն։ Նրանք երկրամասը միանգամայն հեղեղել են հակակառավարական ամսագրերով ու պամֆլետներով և շատ ջատագովներ են ձեռք բերել տեղական կիսակիրթ ունևոր դասակարգի մեջ։ Նրանց հավասարապես միացել են մահմեդական հոգևորականության հենց այդպիսի կիսակիրթ բազմաթիվ անդամներ, որոնք իրենց քարոզներով խուժանի ֆանատիզմն են գրգռում։ Առաջիններից շատերը հանդիսանում են խժդժությունների ուղղակի հրահրողները և այդ ամենի համար գլխավոր մեղավորները...

Ցիմմերման

АВПР, Посольство в Константинополе, д. 3185, л. 4—6.

57. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԼԱՄԶԴՈՐՖԻՆ

№ 160 ճեպագրից 5 հուլիսի 1897 թ.

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը ինձ է դիմել մի նամակով, որի մեջ շարադրում է իր հոտում տեղի ունեցած կոտորածի զոհերից կենդանի մնացածների համար պատրիարքարանի վրա ընկած հոգսերի ամբողջ ծանրությունը։

Պատրիարքի ասելով, միայն որբ մնացածները 50 000 են և մոտավորապես նույնքան էլ այրիներ կան՝ առանց գոյության որևէ միջոցի, չխոսելով արդեն տուժած վայրերում, առևտրի դադարեցման ու գյուղատնտեսական գործիքների ոչնչացման պատճառով, բնակչության ընդհանուր սնանկացման մասին։

Պատրիարքարանի վրա, իհարկե, ամենից առաջ ընկած է իր հոտի կրած այդ սարսափելի աղետի ըստ հնարավորին թեթևացման, ահռելի քանակությամբ անօգնական էակների փրկության և ապա՝ կործանված ու տուժած եկեղեցիների ու դպրոցների վերականգնման խնդիրը։ Պատրիարքարանի միջոցները չնչին են նրա առջև ծառացած գործերի ծավալի հետ համեմատած։

Ուստի, հենվելով ռուս թագավորների կողմից արևելյան քրիստոնյաների նկատմամբ դարավոր հովանավորության վրա՝ պատրիարքն աղերսում է, որ Ռուսաստանի սահմանները փախած հայերի օգտին ամենաողորմածորեն թույլատրված հանգանակությունը բարձրագույն հրամանագրով տարածվի նաև Թուրքիայի սահմաններում մնացած անհամեմատ ավելի մեծաթիվ դժբախտների վրա...

Կարծում եմ, թե շատ տեղին կլիներ, որ ի պատասխան ուղղակի կայսերական կառավարությանը պատրիարքի արած խնդրանքին, մեր կողմից աջակցություն ցուցաբերվեր այս կամ այն ձևով...

Նելիդով

АВПР, Политархив, д. 3450, л. 24.

58. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

№ 12 զեկույցից 24 հունվարի 1898 թ.

Պատիվ ունեմ Ձերդ բարձր գերազանցությանը սույնին կից առանձին թերթով ներկայացնել «1895—1896 թվերին տեղի ունեցած հայկական կոտորածների և հայերի դեպի Ռուսաստան դրանց հաջորդած արտագաղթի հետևանքով Վանի վիլայեթի գյուղերում բնակչության կազմի ու թվի փոփոխության մասին տեղեկությունները» առայժմ երկու կազայի վերաբերյալ՝ Աղբլչևազի և Արճեշի։

Ըստ երևույթին, սրանք այն երկու կազաներն են, որոնցում այժմ առավել զգալիորեն է փոփոխվել բնակչության կազմը՝

համեմատած 1895—1896 թթ. խժդժություններին նախորդած ժամանակաշրջանի հետ։

Թեև նշված տեղեկությունները, որոնք ստացվել են պարզ հարցուփորձի միջոցով, այստեղ՝ Վանում էլ տարբեր անձանց համար չեն կարող անվիճելիորեն ճշգրիտ լինելու հավակնություն ունենալ, սակայն, քանի որ հարցուփորձի համար ընտրվել են այնպիսի անձինք, որոնք ըստ իրենց պարտականությունների հաճախ են գյուղերն այցելում, ուստի և կարող են գիտենալ իրավիճակը, ապա ես այդ անձանց հանդեպ վստահություն ունենալով, կարծում եմ, որ, դրության բնութագրման իմաստով, այս տեղեկություններն արժեք ունեն։ Այժմ՝ ձմռանը ես ոչ մի հնարավորություն չունեմ գյուղերը գնալ այս տեղեկություններն ստուգելու համար, իսկ մյուս կողմից՝ ըստ Վանի փոխհյուպատոսների նախկին դիտարկումների տրված այս տեղեկությունները ստուգելու համար ես այստեղ՝ Վանի փոխհյուպատոսարանում, բացարձակապես ոչ մի տվյալ չունեմ։ Իսկ բնակչության կազմի փոփոխման հարցը, որքանով որ նման փոփոխության մեջ երևում է թուրքական ներքին քաղաքականության ընդհանուր ուղղությունը, բացի այն, որ հույժ հետաքրքիր է, մեզ համար ունի նաև գործնական կարևորություն՝ հատկապես դրա վաղօրոք լուսաբանման դեպքում, թեկուզև դրա հիմքում անվերապահորեն ճշգրիտ թվական տվյալներ չկան...

Կցված տեղեկությունները շատ համոզիչ կերպով ցույց են տալիս ինչպես հայ բնակչության նոսրացումը, այնպես էլ քրդերի ներթափանցումն այստեղ։ Այս թվերում մի համակարգ է երևում, այսինքն՝ որոշակի ծրագրի կենսագործում...

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1895—1896 թթ. տեղի ունեցած հայկական կոտորածների և հայերի՝ դեպի Ռուսաստան դրանց հաջորդած արտագաղթի հետևանքով Վանի վիլայեթի գյուղերում բնակչության կազմի ու թվի փոփոխությունների մասին։

Սերիա առաջին՝ Աղբյուրևազի և Արճեշի կազաներ։

Կազաներ	№№	Բնակավայրերի անունները	Մինչև 1895—1896 թթ. եղել են Տխերի քանակը: Հայեր	Նեստորականներ	Քուրդեր	Թուրքեր	1898 թ. հունվարին Կան տխեր: Հայեր	Նեստորականներ	Քուրդեր	Թուրքեր	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Աղբյուրևազ	1	Նորշեն	40	—	—	—	4	—	8	—	
	2	Խեկյասոր	15	—	—	—	6	—	4	—	
	3	Փեշնեկեմյուր	45	—	—	—	—	—	—	—	
	4	Կազուխ	75	—	—	—	15	—	5	—	
	5	Աշաղը Սիփան	15	—	—	—	4	—	10	—	
	6	Ցորարի Սիփան	40	—	—	—	10	—	10	—	
	7	Նորշենջիկ	30	—	—	—	5	—	10	—	
	8	Անուշաղբյուր	10	—	—	—	—	—	—	—	
	9	Կոչերեն	20	—	—	—	20	—	4	—	Ավերված է
	10	Գյուզել	8	—	—	—	6	—	2	—	
	11	Հորանց	50	—	—	—	35	—	5	—	
	12	Արեն	100	—	—	—	80	—	10	—	
	13	Պարկատ	12	—	—	—	12	—	2	—	
	14	Արաննլկուս	50	—	—	—	40	—	5	—	
	15	Արչրա	50	—	—	—	45	—	5	—	
	16	Կարաքեշիշ	35	—	—	—	28	—	5	—	
	17	Վիշկացրուկ	10	—	—	—	10	—	3	—	
	18	Զարեկլու	40	—	—	—	15	—	20	—	
		Ընդամենը	645	—	—	—	335	—	—	108	
Արճեշ	1	Արծրունյաց վանք	15	—	—	—	—	—	5	—	
	2	Ջուղաղ	40	—	—	—	5	—	10	—	
	3	Ջայզակ	40	—	—	—	2	—	20	—	
	4	Ակսարայ	120	—	—	—	15	—	50	—	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արճեշ	5	Մատաղավանք	40	—	—	—	—	—	10	—	
	6	Գանձակ	60	—	—	—	—	—	20	—	Ավերված է
	7	Արմիզոնք	50	—	—	—	—	—	15	—	
	8	Պանով (Պանի)	40	—	—	—	—	—	—	—	
	9	Դիլան	50	—	—	—	—	—	10	—	
	10	Էսպսինսկ	30	—	—	—	—	—	15	—	
	11	Կինափիրվանք	15	—	—	—	—	—	5	—	
	12	Պորտախ	40	—	—	—	—	—	10	—	
	13	Օրորան	5	—	—	6	3	—	—	3	
	14	Պուլուրմաք	60	—	—	13	30	—	—	13	
	15	Խարգեն	20	—	—	15	15	—	—	15	
	16	Կաղրաշկար	15	—	3	—	15	—	3	—	
	17	Սոսկուն	70	—	8	—	70	—	6	—	
	18	Սկիմն աղա Քիլիսա	15	—	—	5	12	—	—	5	
	19	Կերտիս	4	—	10	—	4	—	10	—	
	20	Աղավիս (վարչ. կենտրոն*)	150	—	—	150	120	—	—	150	
		Ընդամենը	919	—	21	186	291	—	189	186	

Վերոհիշյալ տեղեկությունները հարցափորձով ստացված են այն անձանցից, որոնք մասնավոր այցելությունների շնորհիվ հնարավորություն ունեն տեղյակ լինել իրավիճակից։ Այս տեղեկություններն անվիճելի ճշգրտության հավակնություն ունենալ չեն կարող։

Գիպպիուս

АВПР, Посольство в Константинополе, д. 1584, л. 32—34.

59. ԲԵՅՐՈՒԹԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Գաղվածք № 149 զեկույցից **28 հուլիսի 1898 թ.**

Չնայած թուրքերի բազմիցս տված խոստումներին՝ չհալածել հայերին սոսկ նրա համար, որ նրանք հայ են, այդ հալածանքները շարունակվում են Օսմանյան կայսրության ամբողջ տա-

* *Այստեղ 15 հայկական ընտանիքներ մահմեդականացվել են, յուրաքանչյուր տնից՝ մեկ, երկու կամ երեք հոգի։*

բածքում, և Բարձր Դուռը շարունակում է խրախուսել գործողությունները տեղական իշխանությունների, որոնք զանազան պատրվակներով չեն դադարում ճնշել խաղաղ հայերին՝ նպատակ ունենալով նրանցից ավելի շատ դրամ շորթել, կամ, ինչպես պնդում են որոշ անձինք, նպատակ ունենալով հայերին ստիպել, որ գաղթեն և տեղ մաքրեն նորաբնակների համար...

Կ. Փշին

АВПР, Посольство в Константинополе, д. 3179, л. 279.

60. ԲԵՅՐՈՒԹԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Զեկույց 12 սեպտեմբերի 1898 թ.

Վերջին ժամանակներս այստեղ լուրեր են տարածվում մահմեդականներին հավաքագրելու մասին, որպեսզի բնակեցնեն Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների ջարդից սպանված կամ փախած հայերին պատկանող հողերում...

Չնայած տեղական Թուրքական իշխանությունների բացասական պնդումներին, ինձ թվում է, թե դեպի Ռուսաստանին սահմանամերձ մարզերը մուսուլմաններին արվող տեղափոխման հրավերը իրոք գոյություն ունի։ Այդ միջոցառումը կարծես թե Կոստանդնուպոլսից է հրահանգված։

Գաղթականներին մեծ արտոնություններ են խոստանում. տասը տարով ազատել զինվորական ծառայությունից, ձրի երթևեկություն, ձրի հողաբաժին (հայկական, այսինքն՝ հարմար և համեմատաբար լավ մշակված հողերից) և դրամական նպաստ՝ ճանապարհի ու նոր տեղում բնակության առաջին երեք ամիսների համար, օրական 3 ղուռուշ՝ տղամարդկանց, 2 ղուռուշ՝ կանանց և 1 ղուռուշ՝ երեխաներին։

Ըստ լուրերի, Բեյրութում ապրող ազդեցիկ շեյխ Աբդուռահման Նախասը հավաքագրում է Հայաստան մեկնել ցանկացող մուսուլմանների։ Մատնանշում են մի քանի անձանց, որոնք գրվել են գաղթականների ցուցակում...

Կ. Փշին

АВПР, Посольство в Константинополе, д. 3182, л. 144.

61. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Քաղվածք № 251 ճեպագրից 2 (14) հոկտեմբերի 1899 թ.

Թուրքիայի հայ բնակչությունը շարունակում է սիստեմատիկ հալածանքի ենթարկվել կառավարության կողմից, մի հալածանք, որը գերազանցապես դրսևորվում է հայերի նկատմամբ կիրառվող ոստիկանական բացառիկ միջոցառումներով։

Թուրքական բանտերում տառապում են բազմաթիվ հայեր, որոնք կասկածվում են երբևէ հեղափոխական կոմիտեների մեքենայություններին մասնակցելու մեջ, չնայած որ նրանց մեծ մասի դեմ գոյություն չունի որևէ համոզիչ հանցանշան։ Հենց այդպիսի մեքենայությունների մեջ կասկածելը այժմ էլ հաճախ պատրվակ է դառնում հայերին ձերբակալելու համար։

Ամեն տեսակի խոչընդոտ է հարուցվում Օսմանյան կայսրության սահմաններում հայերի տեղափոխումների դեմ։

Հենց որ գավառից կամ արտասահմանից հայ է գալիս Կոստանդնուպոլիս, նրան անմիջապես տանում են ոստիկանատուն և այնտեղ պահում այնքան, մինչև որ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքից վկայագիր ստացվի նրա բարեհուսության վերաբերյալ։ Նույնիսկ այդպիսի վկայագիրը միշտ չէ, որ երաշխիք է հանդիսանում հայերին իրենց տեղը հետ ուղարկելու դեմ։

Այսպիսի միջոցներ են կիրառվում նաև գավառներում։

Սամսոնում և Տրապիզոնում վերջերս ձերբակալվել են մոտ հարյուր երիտասարդ հայեր, որոնք սովորում են Կոստանդնուպոլսի զանազան դպրոցներում և որոնք արձակուրդն անցկացնելով Անատոլիայում ապրող իրենց ազգականների մոտ՝ մտադիր են եղել վերադառնալ մայրաքաղաք...

Գործերի այսպիսի վիճակը կործանելով հայ բնակչության բարեկեցությունը՝ ոչ պակաս աննպաստ է անդրադառնում նաև Թուրքիայի շահերի վրա, որտեղ հայերը հնուց ի վեր առևտրական առավել գործարար տարրն են հանդիսանում։ Բայց, չնայած դրան, սուլթանը համառորեն հետևում է իր որդեգրած քաղաքականությանը...

Վիճոմ

АВПР, Политархив, д. 3452, л. 76.

62. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Ձեկույցից **19 հուլիսի 1900 թ.**

Ի լրացումն սույն հուլիսի 17-ի գաղտնի հեռագրի՝ պատիվ ունեմ Ձերդ բարձր գերազանցությանը հայտնելու ի գիտություն, որ Սասունի Սպաղանք գյուղում հայերի կոտորածի մասին հեռագրում իմ հաղորդած տեղեկությունը լիովին հաստատվել է, թեև իշխանությունները դա միանգամայն հերքում են, բայց ես գաղտնաբար ստացել եմ դրա հաստատումը թուրքական աղբյուրից...

Վ. Ն. Նախովսկոյ

АВПР, Посольство в Константинополе, д. 3197, л. 320.

63. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ՝ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Ձեկույց № 207 **29 օգոստոսի 1900 թ.**

Ի լրումն Սասունի գավառի Սպաղանք գյուղի հայերի կոտորածի առթիվ սույն թվի հուլիսի 19-ի իմ № 183 ձեկույցի՝ պատիվ ունեմ հայտնել ի գիտություն Ձերդ բարձր գերազանցությանը, որ այս օրերին այստեղ եկավ և արդեն Բիթլիս է մեկնել մի հատուկ հանձնաժողով...

Բայց, ըստ գաղտնաբար ստացած իմ տեղեկությունների, Կոստանդնուպոլսից նույնպես գաղտնի ուղարկվել է բարձրաստիճան մի պաշտոնյա, որը նույնպես պետք է մեկնի Սասուն։ Այդ անձը օրերս լինելու է Էրզրումում, բայց ինձ դեռ չի հաջողվել իմանալ նրա անունն ու դիրքը։

Իսկ ինչ վերաբերում է վերոհիշյալ հանձնախմբին, ապա չի կարելի որևէ արդյունք սպասել նրա հետաքննություններից, քանի որ Սպաղանքի կոտորածը, ինչպես հիմա պարզվել է, տեղի է ունեցել ըստ անմիջականորեն պալատից եկած հրամանի, ուղղված անմիջականորեն ֆերիկ Ալի փաշային՝ Բիթլիսի պարետին, որն ինքն ասել է. «Ես չեմ արել այդ կոտորածը, դա հրամանն է արել»։

Բիթլիսի իշխանություններն այժմ ջանում են կոծկել այդ գործը. դրա համար բռնությամբ ստիպում էին Բիթլիսի հայոց մուրախխասին ստորագրել մի մոզբաշու, որն ասում է, թե Սասունի կոտորածի մասին բոլոր լուրերը կեղծ են կամ չափազանցված և որ միայն մի քանի ավազակներ են սպանվել Սպաղանքում։ Հայկական մուրախխասը հրաժարվեց ստորագրել նշված մոզբաշուն և, քանի որ սպառնալիքի էր ենթարկվում տեղական իշխանությունների կողմից, ստիպված եղավ Բիթլիսից մեկնել Էրզրում, որպեսզի խույս տար իշխանությունների հետապնդումներից։

Սպաղանքի իրադարձությունները, ինչպես որ ամեն մի հալածանք, որ կրում են լեռնաբնակ հայերը, ավելի ու ավելի են հաստատում արդեն կազմված այն կարծիքը, թե թուրքական կառավարությունը ցանկանում է ինչ գնով էլ լինի ստիպել մասնավորապես Սասունի լեռնական հայերին, որ լքեն իրենց նստակեցության վայրերը ու տեղափոխվեն Մշո դաշտ, և ընդհանրապես ստիպել հայերին, որ արտագաղթեն Փոքր Ասիայից և հայերից լքված վայրերում քրդերին բնակեցնի։ Կառավարությունը հուսով է դրան հասնել՝ ահաբեկելով հայ բնակչությանը և ամեն կարգի ճնշումների ենթարկելով։ Վերջին տարիներին հայաբնակ շրջանում շարունակ կրկնվող տեղական կոտորածները, որոնց վրա քիչ ուշադրություն է դարձվել, պարզ ապացուցում են, որ թուրքերը նվազագույն իսկ հարմար պատրվակ են փնտրում, որպեսզի վրա տան հայերին որևէ բնակավայրում, և այդպիսի պատրվակ է սովորաբար հանդիսանում ֆիդայիների այս կամ այն գյուղում գտնվելու մասին մատնությունը։

Նախովսկոյ

АВПР, Посольство в Константинополе, д. 3197, л. 318.

64. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ՝ ՏՐԱԳԻԶՈՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ

4 նոյեմբերի 1900 թ.

Ապառքների բռնագանձման միջոցառումները առանձնահատուկ խստությամբ են աչքի ընկնում Էրզրումի վիլայեթի սահմաններում։ Երկրում ամեն մի արհեստի ու վաստակի լիակատ

տար բացակայության պայմաններում սնանկացած և հացի վերջին պատառից իսկ զրկված հայ ընտանիքները սովամահությունից փրկվելու համար իրենց նետել են Տրապիզոն և շրջակա գյուղերը։ Առանձնապես վրդովեցուցիչ է այն փաստը, որ բրոնագրավման է ենթարկվում ոչ միայն 1895—1896 թթ. սպանված հայերի գույքը, այլև նրանց, ում հայրերն ու զավակները գտնվում են Ռուսաստանում և չեն կարող հայրենիք վերադառնալ՝ անցյալ տարի բոլոր վալիներին ուղարկված խստագույն հրահանգի համաձայն, ըստ որի մեր սահմաններից, առանց դասի և ունեցվածքի որևէ վերապահման, թուրքահայերին չի թույլատրվում հետ վերադառնալ։

Աջակցությունն այս կատեգորիայի ընտանիքներին, որոնք Տրապիզոն են եկել գերազանցապես Բայբուրդի գավառից (Էրզրումի վիլայեթ), որն առանձնապես տուժել էր 1895 թվին, էլ ավելի է մեծացրել այստեղի հայ համայնքի ծայրահեղ նեղ նյութական վիճակը, մի համայնք, որի մեջ այժմ խիստ աննշան թիվ են կազմում ունևոր մարդիկ...

АВПР, Посольство в Константинополе, д. 3197, л. 323.

65. ՍԱՄՍՈՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

№ 374 Ցամակից — Սամսոն, 12 սեպտեմբերի 1901 թ.

...Սամսոնի հայ բնակչությունը դարձյալ չափազանց անհանդստացած է այն լուրերից, որոնք օրերս տարածվել են երկրի ներսում, այն է՝ Հալեպի, Էրզրումի և Բիթլիսի վիլայեթներում վերջերս ծայր առած խառնակությունների և իբր թե Սասունի ու Վանի մոտ տեղի ունեցած կոտորածների մասին։

Մեր սանջակում թեև ամեն ինչ, այսպես ասած, բարեհաջող է, այնուամենայիվ պետք է նշել, որ հայկական առաջին խժդժությունների ժամանակներից դժբախտ հայ գյուղացիների վիճակը տարեցտարի սկսել է վատթարանալ, և իշխանությունների կողմից շարունակվող մշտապես դաժան ու ճնշիչ վերաբերմունքը (մանավանդ բեռան պես նրանց ուսերին ծանրացած անհաշիվ հարկերի գանձումը) նրանց դժբախտությունը դարձնում է կատարյալ։

Վերջին 10 տարում այս սանջակից հայ շատ գյուղացիներ են դուրս եկել սահմանից և այլևս չեն վերադարձել։ Նրանց մեծ մասը մեր կողմն են անցել և բնակություն հաստատել կովկասյան ծովափին։

1890 թվին ամբողջ սանջակում 22 000-ից ավելի հայ է եղել, մինչդեռ այժմ նրանք ընդամենը 12 000 են, որոնց հետևյալ կերպ են բաշխում ըստ քաղաքների.

Սամսոնում	2500 հոգի
Չհարշամբայում և շրջակա գյուղերում . .	7200 »
Թերմում, Ունիում, Ֆաշում ու շրջակա գյուղերում	1500 »
Բաֆորում ու շրջակա գյուղերում . . .	800 »
Ընդամենը	12 000 հոգի

Սանջակում այժմ հաշվվում են ընդամենը 30 հայկական գյուղ, յուրաքանչյուրում՝ 50—70 ծուխ։

Ջիուգիչ

АВПР, Посольство в Константинополе, д. 2232.

66. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻ ՄԵՆԳԱԳՐԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Բոյուքդերե, 20 սեպտեմբերի (3 հոկտ.) 1901 թ.

Օգոստոսի 31-ի (սեպտեմբերի 13) № 200 գեկույցով ես պատիվ էի ունեցել կայսերական մինիստրությանը ի գիտություն հայտնելու, որ փոքրասիացի հայերի նկատմամբ նորից հարուցված հալածանքների մասին ինձ հասած լուրերի պատճառով անհրաժեշտ եմ համարել Վանում մեր փոխհյուպատոսին առաջարկել այցելելու Մուշ և Սասուն հիշյալ լուրերն ստուգելու համար։

Կոլեգիական խորհրդական Տումանսկու օգոստոսի 29-ի հենց նոր իմ ստացած գեկույցից, որի պատճենը նրա կողմից անմիջականորեն ներկայացվելու է Ձերդ պայծառափայլությանը վստահված մինիստրության Առաջին դեպարտամենտին, պարզվում է, որ ինձ հասած տեղեկությունները բնավ էլ չափազանցված չեն եղել։

Հասնելով Մոկունք գյուղը, որը Մշո դաշտում է, Տումանսկին անձամբ համոզվել է, որ այն ավերված և հրկիզված է... որ տեղացի հայերից մոտ 60 հոգի ձերբակալված են Մուշի կառավարչության կարգադրությամբ և որ ամբողջ գյուղում մնացել է 5 տղամարդ։

Դրանից բացի, Տումանսկու հավաքած տեղեկություններից պարզվում է, որ ընթացիկ տարվա հունվարից Մուշի և Սասունի գյուղերում սպանվել է 64 հայ, վիրավորվել է 18-ը...

Մուշ հասնելով՝ մեր փոխհյուպատոսը քաղաքը գտել է տագնապալի վիճակում, որի հետևանքով էլ որոշել է իր շենքի վրա փոխհյուպատոսական դրոշ բարձրացնել։ Այս միջոցառումը ազդու ներգործություն է ունեցել թուրքական տեղական իշխանությունների վրա...

Տումանսկու հավաքած տեղեկությունների ամբողջությունից պետք է եզրակացնել, որ թուրքական կառավարությունը գիտակցորեն ձգտում է կամ ազատվել հայերից, կամ էլ նրանց այնպիսի վիճակի մեջ դնել, որ նրանք վերածվեն անծպտուն ստրուկների։ Այս նպատակով, ի միջի այլոց, միջոցներ են ձեռնարկվում հայերին ստիպելու, որ Սասունի լեռներից, որտեղ նրանք հնարավորություն ունեն պաշտպանվել ավազակային հարձակումներից, տեղափոխվեն Մշո դաշտ։ Ես չեմ հապաղի սուլթանի ու նրա կառավարության ամենալուրջ ուշադրությունը հրավիրել Մուշի սանջակում գործերի վիճակի վրա...

АВПР, Политархив, д. 3454, л. 36.

67. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԻՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

27 նոյեմբերի 1901 թ.

Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը, որը Կոստանդնուպոլսում կայսերական դեսպանի կարգադրությամբ անցյալ օգոստոս ամսին գործուղված էր Մուշ ու Սասուն՝ տեղի հայ բնակչության նկատմամբ նոր բռնությունների վերաբերյալ լուրերն ստուգելու համար, իր աչքով տեսնելով՝ համոզվեց, որ հիշյալ վայրերում քրիստոնյա բնակչության վիճակը ծայր աստիճանի ծանր է։

Սպանությունները, կողոպուտները և բռնությունները, որոնց ենթարկվել են հայերը, սկսվել են ընթացիկ տարվա հունվարից և, կրկնվելով համարյա յուրաքանչյուր ամիս, վերջացել են հուլիսին՝ Մշո դաշտի Մոկունք գյուղի լիակատար ջարդով, որտեղ մի մահմեդականի սպանելու կասկածանքով համարյա բոլոր արական բնակչությունը բանտարկվել է, և թուրքերը օգտվելով դրանից՝ այրել են կալսելու համար դիզված հացահատիկը և հայերի տների մեծ մասը։ Տագնապը, որ բռնել է Մշո դաշտի քրիստոնյա բնակչությանը նշված դեպքերի հետևանքով, այնքան մեծ է եղել, որ կոլեգիական խորհրդական Տումանսկին անհրաժեշտ է գտել Մուշ հասնելուն պես բարձրացնել Ռուսաստանի դրոշը։ Այս միջոցառումը, ինչպես և Ռուսաստանի փոխհյուպատոսի դրսևորած վճռականությունը՝ առաջիկայում Մուշը շլթել, մինչև կարգուկանոնի վերջնական վերականգնումը, որոշ չափով հանգստացրել են հայերին։

Որպես արդարացում իրենց չարագործությունների, թուրքերը սովորաբար մատնանշում են հայ հեղափոխականների դեմ պայքարելու անհրաժեշտությունը։ Նման պնդումն անհիմն է։ Հեղափոխական շարժումը, բառիս բուն իմաստով, 1894—1895 թթ. դաժան դասի ազդեցության տակ, ըստ երևույթին, մարել է Հայաստանում։ Մինչդեռ հեղափոխականների մեքենայությունների վկայակոչումը մինչև օրս հիմք է հանդիսանում հայերի դեմ ծավալվող հալածանքների համար և թուրքական իշխանության աչքում դա միանգամայն բավարար է քրիստոնյաների դեմ մահմեդականների ակնհայտ բռնությունների արդարացման համար։ Եթե քրիստոնյաների միջավայրից իրոք դուրս են գալիս մարդիկ, որոնք պատրաստ են կռվելու թուրքերի դեմ, ապա դա լիովին բացատրվում է անձնական ատելության ու վրեժի զգացմունքներով, որոնք հայերի մեջ ծագում են իրենց հանդեպ կատարված ոճրագործություններից։

Հայ բնակչությունը երկրամասում միանգամայն իրավազուրկ վիճակում է։ Թուրքական իշխանությունները ոչ միայն ոչինչ չեն անում, որպեսզի ապահովեն նրանց անձնական ու գույքային անձեռնմխելիությունը, այլև բացահայտորեն խրախուսում են նման խախտումները...

Տեղի թուրքական զինվորական վարչության կազմը ծայրահեղորեն վատ է։ Վիլայեթի գործերի վրա առանձնապես վատ ազդեցություն է գործում Մուշի մերձակայքում տեղակայված 4-րդ

կորպուսի հրամանատար Զեքի փաշան, որը բացահայտորեն խրախուսում է բռնությունները հայերի նկատմամբ և ընդդիմանում իշխանության այլ մարմինների կողմից տեղական կառավարումը գեթ փոքր-ինչ կարգավորելու ամեն մի փորձի։

АВПР, Политархив, д. 3454, л. 58.

68. ԺԱՆ ԺՈՐԵՍԻ ՃԱՌԻՑ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՓԱՐԻԶՈՒՄ 1903 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ

Այստեղ հավաքվել են հռետորներ և բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, և այդ հանգամանքը բավական պերճախոս վկայությունն է այն բանի, որ հայկական և մակեդոնական հարցերը ներկա պահին այն հիմնական պրոբլեմներն են, որոնց լուծման մեջ կարող է և պե՛տք է երևան դա համայն մարդկության, քաղաքակիրթ բոլոր երկրների համերաշխությունը։ Եկել է ժամանակը, որպեսզի Եվրոպայի հասարակական կարծիքը վերջապես շարժվի մեռյալ կետից... Յոթ տարի առաջ Հայկական հարցում մեծ տերությունների բռնած դիրքի համար և՛ մենք, և՛ Եվրոպան ներկայումս հատուցում ենք այն դժվարություններով, որոնցով հղի է մակեդոնական հարցը։ Այս երկարաձգված անտարբերությունը, այս երկար անիրազեկությունը, հիրավի դարձան մեծագույն հանցագործություն, որը սրբեց հրեշավոր սպանությունների հետքերը...

Եվ եթե Եվրոպայի այդ լռելյայն ու պասսիվ կարեկցանքը մեծ հանցագործություն էր, այն միաժամանակ նաև մեծ սխալ էր, որովհետև, եթե մենք հիմա կանգնած ենք այրվող ու վտանգներով լեցուն մակեդոնական հարցի դեմ-հանդիման, մի հարցի, որը վաղը մեզ կարող է ներքաշել պատերազմական հրդեհի մեջ, ապա դա այն պատճառով, որ Հայաստանի հանդեպ մեր վարվելակերպը սրանից յոթ տարի առաջ խրախուսեց սուլթանին և այն հանցագործություններն ու անօրինականությունները, որոնք միշտ էլ խռովություններ են հարուցում։

Տեսեք, թե որքան տրամաբանորեն և ինչ խորաթափանցությամբ Մակեդոնիայի մարդասպանները, կազմ ու պատրաստ կանգնած, իրենց հետևություններն են անում հայերի ջարդի մեղավորների անպատժելիությունից։ Հայաստանում ջարդերը տեղի էին ունենում ոչ միայն շտապ կարգով ժանդարմի հա-

գուստ հագած կանոնավոր զորքերի կամ ավազակների կողմից, այլև, ինչ որ ավելի վատ է, դրանք բնակչության վայրենի բնազդների հետևանք էին։ Կարդացեք Սալոնիկում մեր հյուպատոս պր-ն Ստեեգի 1902 թ. հոկտեմբերի 28-ի նամակը և դուք կտեսնեք, որ ներկայումս Մակեդոնիայում շրջում են նույն խոսակցությունները. «Մենք էլ կարող ենք սուլթանին ազատել նրանցից, ովքեր բեռ են դարձել՝ անելով այն, ինչ որ արվեց Հայաստանում»։ Եվ այն, ինչ հասունանում է այժմ Մակեդոնիայում, համանման է նրան, ինչը որ հանցագործ ու անխոհեմ Եվրոպան հանդուրժում էր Հայաստանում՝ զանգվածային սպանությունների նախապատրաստումը...

Անհրաժեշտ է միացյալ Եվրոպայի շտապ միջամտությունը պահանջվող նշանակալից բարենորոգումներն անցկացնելու համար։ Եվ որպեսզի այդ միջամտությունը գործուն լինի, անհրաժեշտ է կանխել թյուրիմացությունները։ Ո՛չ, մենք չենք ուզում պատերազմ իսլամի դեմ, և եթե մենք ուզում ենք պաշտպանել քրիստոնյա ժողովուրդներին Հայաստանում ու Մակեդոնիայում, ապա դա ամենևին էլ ոչ այն պատճառով, որ նրանք քրիստոնյաներ են... Այստեղ խոսք անգամ լինել չի կարող կրոնական խաչակրաց արշավանքի մասին. մեզ քաջ հայտնի է, որ այն բարենորոգումներն ու երաշխիքները, որ մենք պահանջում ենք կեղեքված քրիստոնյա ազգությունների համար, աստիճանաբար պիտի մտցվեն նաև հենց իրեն՝ թուրք ժողովրդի համար։ Նա ինքը, արդեն իսկ տառապում է իր կողմից գործադրվող ճնշումից ճիշտ այնպես, ինչպես այն ժողովուրդները, որոնց նա կեղեքում է։

Այն, ինչ մենք իրավունք ունենք պահանջելու (և դա ստիպում են Եվրոպային նրա իրավունքն ու պարտականությունը), դա այն է, որ թուրքական կառավարությունը իր բոլոր ազգություններին, ցեղերին ու նրանց կրոններին ապահովի տարրական անվտանգություն, ազատություն ու արժանապատվություն, որոնք միաժամանակ կապահովեին տարբեր ցեղերի ու կրոնների զարգացումը առանց որևէ ճնշման կամ իրար կլանման։ Չի կարելի թույլ տալ, որ մահաբեր ու արյունոտ բարբարոսությունը հարցը լուծի ժողովուրդների մի մասի ոչնչացման ճանապարհով[10]։

Pour l'Arménie et la Macédoine. Paris, 1904, p. 43—46.

69. ՀՈՒՆԱՆԻ ՀԱՅԵՐԻ 1904 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Հունան գյուղը, որ Նորաշենից ձիով մեկուկես ժամվա ճամփա հեռու է, լրիվ ավերված է։ Սպանությունները կատարվել են աննկարագրելի դաժանությամբ։

Ինչ վերաբերում է կանանց, ապա նրանց առևանգել են անկախ տարիքից...

Pour l'Arménie et la Macédoine, Paris, 1904, p. XXI—XXII.

70. ՄՈՒՇ-ՍԱՍՈՒՆԻ 1904 Թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Եվրոպական մամուլում տպագրված բդքակցություններ)

1. Մուշ (Սոֆիայի վրայով), 31 հունվարի 1904 թ.

Զմռան ընթացքում իշխանությունները սաստկացրին հայերի նկատմամբ դաժանությունները և ճնշումները։ Որպեսզի իրենց գործողություններին օրինական տեսք տան, բոլոր կարգի աստիճանավորները դիմում են ստի։ Այսպես, վերջերս լուր տարածվեց, թե Մշո դաշտի հայերը, իբր, վաճառում են իրենց ամբողջ ունեցվածքը, որպեսզի իրենց համար զենք ձեռք բերեն։ Կառավարությունը օգտվեց այդ ստից, որն ինքն էր տարածել, և ոստիկանական կոմիսար Հուսնին դաշտ ուղարկվեց գործը հետաքննելու համար։ Հուսնին եղավ գլխավոր գյուղերում և, երկարատև ու ապարդյուն շրջագայությունից հետո, ոչ մի ապացույց չգտավ և, չնայած դրան, Մուշ վերադառնալուց հետո, նա իր հաշվետվության մեջ հայտարարեց, թե հայերը զինվել են։ Հիմա կառավարությունը պատրաստվում է խուզարկություններ կատարել դաշտի գյուղերում, և դա հիմք է տալիս ենթադրելու, որ շուտով նոր գազանություններ են կատարվելու։ Թուրք ամբոխն առանց այդ էլ չափազանց գրգռված է Սասունի ֆիդայիների խաղաղ հաղթանակի պատճառով։ Կոստանդնուպոլսում բազմիցս հեռագրեր են ստացվել, որպեսզի թույլ տրվի ծայրահեղ միջոցը գործադրել, այսինքն՝ սպանել։ Հրամանն ստացված է, բայց այն հանձնարարում է սպասել մինչև գարնան գալը։ Որպեսզի արդարացվի ծրագրվող կոտորածը, զինվորական պարետը տարածել է մի այլ սուտ. իբր թե ֆիդայիները պատրաստվում են իջնել դաշտ, որ հարձակվեն թուրք զինվորների վրա։

2. Սոֆիա, 12 մարտի 1904 թ.

Մուշի շրջանում դրությունը լուրջ է այն բանի հետևանքով, որ հարկագանձումը ուղեկցվում է բռնություններով և ահավոր դաժանություններով։ Հունանի հուսահատության հասցված բնակչությունը ստիպված է եղել դիմադրություն ցույց տալ։ Խուճապը տարածվել է մինչև Մուշ, որտեղ խանութները վեց օր է, ինչ փակ են։ Կառավարությունը կարգադրել է Սասունի սարերը փախած հայերի դեմ ուղարկել 4-րդ բանակային կորպուսի մեկ դիվիզիա։

3. Վիեննա (Թիֆլիսի վրայով), 22 մարտի 1904 թ.

Փետրվարի 5-ին, գիշերվա ժամը 4-ին, մուսուլմանների զինված ամբոխը, կանոնավոր զորքերի աջակցությամբ, ներխուժել է Հունան գյուղը։ 120 տուն կողոպտվել է և հրկիզվել։ Փոքր աղջիկներն ու կանայք, սրանց թվում և մի ծննդկան, առևանգվել են։ Բազում փոքր երեխաների ողջ-ողջ թաղել են ձյան մեջ կամ նետել ջրհորները, ուր նետել են նաև Հրանտ անունով մի ծերունու։ Տղամարդիկ սպանվել են անլուր դաժանությամբ։ Զոհերի թիվը դեռ հայտնի չէ։

4. Բիթլիս (Կոստանդնուպոլսի վրայով), 30 ապրիլի 1904 թ.

Պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, Սասունի շրջանում լուրջ ճակատամարտեր են տեղի ունեցել զորքերի և հայ 2000 ապստամբների միջև, որոնցից շատերը եկել են Ռուսաստանից ու Պարսկաստանից։ Զորքերը տվել են 20 սպանված և 23 վիրավորի կորուստ։ Ապստամբների կորուստներն անհայտ են։ Նորմալ կյանքը կանգ է առած։ Պարենամթերքի գները կրկնակի բարձրացել են։ Հայ բնակչությանը սով է սպառնում։ Չնայած դրան՝ հարկահավաքներն զբաղվում են շորթողությամբ, իսկ իշխանությունները բնակչությանն ստիպում են երախտագիտության ուղերձներ ստորագրել։

5. Թիֆլիս, 15 մայիսի 1904 թ.

Մշո դաշտի բոլոր հայկական գյուղերը գրավված են կանոնավոր զորքերի կողմից, որոնք ամեն կարգի գազանություններ ու բռնություններ են գործում։ Քրիստոնյա բնակչությունը ապաստան փնտրելու համար զանգվածաբար փախչում է Սասունի սարերը, որոնք շրջապատված են զորքերով ու բաշիբոզուկներով։ Այստեղից են սկսվել սասունցիների և կառավարական ուժերի միջև բռնկված մի շարք արյունահեղ մարտեր։ Մարտի 31-ին (ապրիլի 13) սասունցիները «Հայ հեղափոխական դաշնակցության» ջոկատների հետ ուժով հետ մղեցին պաշարողների գրոհը՝ նրանց մեծ կորուստներ պատճառելով։ Ապրիլի 10/23-ին մի քանի հազար կանոնավոր զորքերի ու քրդերի հետ միասին՝ Մուշի և Բիթլիսի հայ եպիսկոպոսների ուղեկցությամբ ժամանեց Բիթլիսի նահանգապետը։ Չնայած եպիսկոպոսների ներկայությանը՝ Շենիկ գյուղը գրավվեց և հրկիզվեց։ Այնուհետև նրանք շարժվեցին Սեմալի ուղղությամբ։ Սակայն սասունցիները, Հրայրի ղեկավարությամբ, հետ շպրտեցին նրանց՝ սպանելով մի քանի տասնյակ մարդ։ Այնժամ, ապրիլի 12/25-ին, նահանգապետի կարգադրությամբ, ս. Առաքելոց վանքի վանահայրը, Բիթլիսի և Մուշի եպիսկոպոսների հետ, պատրիարքի նամակով հանդերձ՝ վերադարձան Սեմալ, նպատակ ունենալով սասունցիներին հնազանդության պարտավորեցնել։ Բայց դա սոսկ զորախաղ էր, քանի որ ապրիլի 13/26-ին, այն ժամանակ, երբ հայերի պարագլուխները, թողնելով լեռնագագաթը, ընդառաջ էին գալիս հանձնախմբին Գեղաշենում նրա հետ բանակցություններ վարելու համար, նահանգապետը հրաման տվեց հարձակվել սասունցիների վրա, որպեսզի հանկարծակի բռնի նրանց ղեկավարներին։ Այս ծրագիրը հաջողությամբ չպսակվեց. ղեկավարներին ու բնակիչներին հաջողվեց հեռանալ այն ժամանակամիջոցում, երբ Սեմալն ու Դաշտակը հրետանային մարտկոցի կրակի տակ էին առել, ավերել ու գրավել։ Հետապնդելով բնակիչներին՝ զորքերը գնացին դեպի Գելիեգուզան, որտեղ ընդհարվեցին ամեն կողմից փախած եկած հայ բնակիչների հետ, որոնք արդեն հասցրել էին խմբավորվել։ Սկսվեց արյունահեղ մի ճակատամարտ։ Թուրքերը պարտվեցին ու հետ շպրտվեցին՝ մարտի դաշտում թողնելով 136 սպանված և բազմաթիվ վիրավորներ ու մեծ քանակությամբ հրացաններ։ Հայերից սպանվել

էին 7 հոգի, որոնց թվում և՝ նրանց պարագլուխ Հրայրը, և կային 8 վիրավորներ։ Ապրիլի 14/27-ին նահանգապետը համալրում ստացավ։ Սպասվում են նոր ճակատամարտեր։

6. Մուշ (Թիֆլիսի վրայով), 22 մայիսի 1904 թ.

Ահա նոր մանրամասնություններ ապրիլի 22-ի Սասունի կոտորածի մասին։ Այն բանից հետո, երբ Գելիեգուզանը գրավվել է և կոտորածի ենթարկվել, ողջ մնացածները փախել են չորս ուղղությամբ. դեպի Անդոկ, Կեփին, Քաջիկ սարերի և դեպի Մշո դաշտի կողմը, բայց զորքերից հետապնդվելով՝ նրանք բռնվել են իրենց ապաստարաններում և հերոսական դիմադրությունից հետո, երբ վերջացել է ամբողջ զինամթերքը, ոչնչացվել են։ Տալվորիկը, որտեղ հավաքված էին 12 գյուղերի բնակիչները և որը պաշարված էր ապրիլի սկզբից, դիմադրել է մինչև մայիսի 6-ը և ընկել այն բանից հետո, երբ համալրում է եկել։ Կոտորածը դաժան ու ահավոր է եղել։ Բաշիբոզուկները անլուր գազանություններ են արել։ Կանանց առևանգել են, նրանց կրծքերն են կտրել, փորերը պատռել, երեխաներին ցից են հանել, ծերերին կտոր-կտոր արել։ Անթիվ-անհամար ջահել աղջիկների առևանգել տարել են։ Սասունի շրջանը լրիվ կործանված է և ամայացված... Մշո դաշտն էլ է կոտորածների ասպարեզ։ Սկսած մայիսի 5-ից՝ թուրքական զորքերը մեկը մյուսի հետևից երկրի երեսից ջնջել են Բերդակի, Մկրագոմի, Ալիկրպոյի, Ավազաղբյուրի, Առնիստի շրջանների գյուղերը։ Սպանությունների թիվն օրեցօր ավելանում է։ Աննկարագրելի են սարսափն ու հուսահատությունը...

7. Մուշ (Վիեննայի վրայով), 29 մայիսի 1904 թ.

Սասունում և նրա շրջակայքում 45 գյուղ է ավերվել։ Ութ օր շարունակ սասունցիները Տալվորիկի գագաթներին հերոսաբար պաշտպանվում էին 14 գումարտակ կանոնավոր զորքերի և 7 հազար քրդերի դեմ...

Բիթլիսի վալին, որն անձամբ էր հրամայում զինվորներին ու քրդերին, որպեսզի եվրոպական հյուպատոսների համար անհնարին դարձներ զինվորների կատարած դաժանությունները տեղում արձանագրելը և զոհերի թիվը որոշելը, հրամայեց դիակ-

ները կտոր-կտոր անել և գետը նետել։ Դիարբեքիրից եկող ճանապարհորդները պատմում են, որ իրենք Տիգրիսի ափերին տեսել են բազում մարդկային մարմնի մասեր, որոնք գետը ափ է շպրտած եղել։ Մինչև մայիսի 14-ը տասն օր շարունակ 200 հայ ապստամբներ խիզախորեն պաշտպանվում էին Տալվորիկի և Գելիեգուզանի միջև՝ ընդդեմ գերակշիռ ուժերի։ Նրանց հաջողվեց կամուրջ կապել, որպեսզի 150 ընտանիքների հնարավորություն տային անցնելու։ Այդ ժամանակ Մուշից ժամանեցին թուրքական համալրումներ հրետանու հետ։ 300 ընտանիքներից, 22 հոգուց բացի, մնացած բոլորը՝ կանայք, երեխաներ ու ծերունիներ, կոտորվել են։ Վալին վերադարձավ Մուշ։ Նա հավաքեց հայկական գյուղերի տանուտերերին ու մեծամեծներին և ստիպեց նրանց սուլթանին հղվելիք շնորհակալական ուղերձներ ստորագրել։

8. Մուշ (Ժնևի վրայով), 8 հունիսի 1904 թ.

Բազմօրյա ռմբակոծությունից և հայերի կատաղի դիմադրությունից հետո, թուրքական զորքերը տիրեցին Գելիեգուզանին, որտեղ պատսպարված էր քառասունհինգ հրկիզված գյուղերի հայ բնակչությունը։ Ապստամբները, Անդրանիկի[11] առաջնորդությամբ, կռվով նահանջեցին դեպի Տալվորիկի բարձունքը։ Հազարավոր կանայք, երեխաներ ու ծերունիներ, որոնք չկարողացան հետևել նրանց, անգթորեն կոտորվել են։ Ներկայումս Տալվորիկը ռմբակոծվում է օսմանյան զորքերի կողմից։ Ապստամբները, արտաքին աշխարհից մեկուսացված, դիմադրում են։ Մշո ամբողջ դաշտը տեռորի է ենթարկվում՝ չնայած հյուպատոսների ներկայությանը...

9. Կոստանդնուպոլիս, 9 հունիսի 1904 թ.

Ֆրանսիական, ռուսական և անգլիական հյուպատոսների Սասունում տեղի ունեցող դեպքերի մասին հաշվետվություններում հաղորդվում է այն մասին, որ վերջին հուզումների հետևանքով հայերի մեջ կան երեք հազար զոհեր։

Sassoun et les atrocités hamidiennes. Interpellation. Les atrocités. Rapport officiel. Genève, 1904, p. 27—32.

71. ԺԱՆ ԺՈՐԵՍԻ ՆԱՄԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ (1904 Թ. ՀՈՒՆԻՍ)

Թանկագին սըր.

Շատ եմ ցավում, որ ներկայումս չեմ կարող գալ Լոնդոն, բայց ես նորից հավաստիացնում եմ Ձեզ, որ ուզում եմ բաժանել քաղաքակիրթ աշխարհի մարդկանց զգացմունքները և բողոքել այն նողկալի ռեժիմի դեմ, որին ենթակա են հայերը, և այդ մեծ հանցագործության պատասխանատուների շարունակվող անպատժելիության դեմ։

Հուսով եմ, որ շարունակաբար կրկնվող այդ բողոքները հաջողությամբ կպսակվեն, եթե հաջողվի ճեղքել եսասեր ու անգութ մարդկանց հաստ մաշկը և տերություններին ստիպել հետևելու գործուն մարդկայնությանը՝ նրանց մեջ արթնացնելով ամոթի զգացում։ Հանձնեցեք ընդունել իմ կարեկցանքի զգացումների հավաստիքը հանդեպ Ձեզ և բոլոր նրանց, ովքեր Ձեզ հետ միասին պաշտպանում են այդ ազնիվ գործը, որի դեմ, անասնական վախի հետևանքով, այդքան շատ կրքեր են կուտակվել[12]։

Report of the International Conference on the situation in the Near East held in London on 29th June, 1904. London, 1904, p. 23.

72. ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄՅԱՆԸ՝ ՆԻԿՈԼԱՅ II-ԻՆ

Էջմիածին, 1 հուլիսի 1904 Թ.

...Ամենաողորմա՜ծ տեր իմ և մե՜ծ արքա. աղերսանքս վերաբերում է իմ հոտին, որը Թուրքիայում այժմ մահմեդականության լծի տակ հասել է ծայր աստիճան թշվառության և հուսահատության։ Առաջին անգամ 1878 թվականին էր, երբ Բեռլինի վեհաժողովի ժամանակ իմ դժբախտ հոտի աղաչանաց ձայնը Եվրոպայի մեծ պետությունների դռներին հասավ։ Ես այնժամ որպես ավագագույն արքեպիսկոպոս և Կ. Պոլսո նախկին պատրիարք, ազգիս թշվառ վիճակին գիտակ անձ, զգուշացրի հայցեցի մեծ պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի, իսկ իմ ընկերակից խորեն արքեպիսկոպոս Նարպեյը երջանկություն ունեցավ ներկայանալու բարեհիշատակ ազատարար թագավոր Ալեքսանդր

II-ին և նրա ոտքերի տակ դնել բազմաչարչար հայ ժողովրդի դատը՝ պաշտպանության համար։ Մեր աղաչանաց արգասիքը եղավ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որի նպատակն էր թեթևացնել թուրքահպատակ հայերի վիճակը։

Մե՜ծ արքա. չեմ համարձակվում երկարաբանությամբ ձանձրացնել Ձեր կայսերական վեհափառությանը, բայց և չեմ կարող ծածկել իրերի իսկությունը. այն, որ վերջին քառորդ դարի ընթացքում խաղաղ հայ ժողովրդի վիճակը Թուրքիայում առավել ևս ծանրացավ, քան թե թեթևացավ։ Հիշեցնեմ սոսկ 1895—96 թվերի աղետները, որոնց մասին ժամանակին ճշգրիտ տեղեկագրեր եմ հղել Ձերդ կայսերական մեծության արտաքին գործոց մինիստրին։ Ի մեծ վիշտ իմ՝ նույնօրինակ աղետներ այժմ կրկնվում են Սասունում և Մուշում՝ Բիթլիսի նահանգում, և օրըստօրե սպառնում են ընդարձակ ծավալ ստանալ ու տարածվել հայաբնակ այլ գավառներում ևս...

Այժմ կրկին ամենախոնարհաբար Ձերդ մեծության պաշտպանությունն եմ հայցում, և հաստատուն է հավատն իմ, որ Ձեր վեհանձն խոսքով վերջ կդրվի անսանձ բռնություններին և բոլոր աղետներին Թուրքիայի սահմաններում ապրող իմ թշվառ հոտի։

Ընդսմին պարտքս եմ համարում ամենախոնարհաբար տեղյակ դարձնել Ձերդ մեծությանը, որ իմ կողմից հանձնարարված է Հովսեփ արքեպիսկոպոսին՝ առաջնորդին ամերիկահայոց թեմի, և Սահակ արքեպիսկոպոսին՝ առաջնորդին Պարսկաստանի ու Հնդկաստանի հայոց թեմի, իմ անունից միջնորդել Բեռլինի դաշնագիրն ստորագրած այլ տերությունների մոտ՝ Թուրքիայի կառավարությունից պահանջելու, որ նա ապահովի հայ ժողովրդին մահմեդականների բռնություններից։

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1—2, գ. 338:

78. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ծնն, 19 հունվարի 1905 թ.

Վանից, Թավրիզի վրայով, հեռագրով հաղորդում են, որ թուրքական իշխանությունները զենք են բաժանում մուսուլմաններին։

Կարճկանի շրջանում կազմակերպված է մի հրոսակախումբ՝ իր դաժանություններով հռչակված Մուսա բեգի հրամանատարությամբ։ Գարգարում թուրք զինվորները բռնություններ են գործադրել։ Ծղեգիսում առևանգել են հինգ կանանց։ Հարկերի գանձումն անտանելի է դարձել։

"Pro Armenia", 1 fev.ier, 1905, № 103, p. 654. Paris.

74. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ՆԱՄԱԿԻՑ

Հալեպ, 5 մարտի 1906 թ.

Հայերի ձերբակալությունները շարունակվում են։ Վերջերս այստեղ մարդիկ էին բերել, որոնց ձերբակալել էին Զեյթունում, Մարաշում, Ադանայում և Հաճընում։

Հայերի վիճակը, մանավանդ զեյթունցիների, ողբալի է։ Զեյթունի զինվորական պարեսը նոր է վախճանվել։ Նա էր բանտարկությունների պատճառը...

Հալեպի նոր նահանգապետ Նազըմ փաշան իսկական դահիճ է. այդ նա է հրաման տալիս քաղաքական մեղադրյալներին ձերբակալել և Հալեպ տանել, որպեսզի անձամբ ինքը դատի նրանց...

"Pro Armenia", 5 mai 1906, № 133, p. 893.

75. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԷՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Գաղվածք № 315 զեկույցից **21 հուլիսի 1906 թ.**

Հուլիսի սկզբին Ղարաքիլիսայի մոտ թուրքական սահմանային պահազորը բռնել է Մուշի սանջակից փախած 11 հայ ընտանիքների, որոնք փորձել են անցնել Ռուսաստան։ Բռնվելիս բոլոր տղամարդիկ, թվով 16 հոգի, գազանաբար մորթվել են զինվորների ձեռքով, կանայք ու երեխաները ուղարկվել են Հասան-Կալե քաղաքի բանտը։

Կասկած չկա, որ Էրզրումի վալին չի ձեռնարկելու ո՛չ սպանության հետաքննություն, ո՛չ էլ միջոցներ է ձեռք առնելու ոճրագործություն կատարած սահմանապահ զինվորներին տույժի ենթարկելու համար։

Ընդհանրապես վիլայեթի այժմյան կառավարչության պայմաններում կարելի է իշխանության կողմից սպասել բռնության ու կամայականության էլ ավելի աղաղակող փաստեր, քանի որ Աթա բեյը թույլ չի տալիս, որ որևէ բողոք լինի իր ստորադրյալների դեմ, խստորեն հետապնդելով մարդկանց՝ այդ առումով կատարվող ամեն մի փորձի համար։

Որտեղ որ բանը գալիս է քրիստոնյաներին, ամենատարրական արդարության փոխարեն Աթա բեյը դրսևորում է մշտական ձգտում անգթորեն հետապնդել ինչպես իրենց՝ քրիստոնյաներին, այնպես էլ յուրաքանչյուրին, ով որ հանդես է գալիս նրանց պաշտպանությամբ։ Եվ դա, ըստ երևույթին, բացատրվում է ոչ այնքան նրա ֆանատիզմով, որքան իր դիրքերը Յըլդզի հանդեպ ամրապնդելու ցանկությամբ, որտեղ նա իր ողջ նախկին, հաճախ լրտեսության հասնող, գործունեությամբ, իր համար սուլթանի բոլոր գաղտնի մտադրությունների նախանձախնդիր կատարողի վարկ է ստեղծել։

Սկրյաբին

АВПР, Политархив, д. 3456, л. 22.

76. ԲԱՅԱԶԵՏՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բայազետ, 5 փետրվարի 1907 թ.

Անհնար է նկարագրել հայի տառապանքները։ Նրան ծեծում են, և ոչ ոք նրան օգնության չի հասնում, իսկ նրա գանգատները մնում են մեռած տառ։

Նրա տունը թալանում են, նրա գեղեցիկ դստերը՝ առևանգում։ Դաշտերը քայքայված են, անապատի վերածված։ Եթե որևէ մեկը տնից դուրս է գալիս, համոզված չէ, որ ողջ կվերադառնա։

Հունվար ամսին զինվորները բռնությամբ տարել են Վերտոյանի, Հովհաննես Ղազարյանի, Մարտիրոս Ավագյանի, Մկրտիչ Հակոբյանի դուստրերին...

Արծափում չորս զինվոր գիշերը մտել են Խաչատուր Խալաթյանի տունը՝ նրա դստերն առևանգելու և կնոջը բռնաբարելու նպատակով։ Խաչատուրը դիմադրություն է ցույց տվել և սպանվել թրի հարվածից, իսկ նրա որդին վիրավորվել է և մահացել հինգերորդ օրվա վերջում։ Հայ ընտանիքները տագնապի մեջ են։

Հայ ճանապարհորդները ձերբակալվել են ու բանտ նետվել և ազատվել են միայն այն բանից հետո, երբ մեծ փրկագին են վճարել։ Կալանավորները քաղցից մեռնում են։

"Pro Armenia", 1907, 20 mars, № 154, p. 1062.

77. ԴՎՆԻԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՍԿՐՅԱԲԻՆԻՆ

Նամակ

21 փետրվարի 1907 թ.

Մենք Կարինի (Էրզրում) սանջակի Դվնիկ գյուղի բնակիչները, դիմում ենք Ձեզ, խնդրելով, որ մեզ ռուսական մեծ պետության հպատակության տակ առնեք։ Մեր գյուղի ամբողջ քրիստոնյա բնակչությունը ձգտում է ապաստան ու հովանավորություն գտնել Ձեր բարյացակամ ու հզոր կառավարության մոտ, որպեսզի կարողանա հանգիստ կյանք ապահովել իր համար։ Ուստի մենք խնդրում ենք Ձերդ բարձր գերազանցությանը ուշադրություն դարձնել մեր խնդրանքին և հանգամանքներին համապատասխան անհրաժեշտ օգնություն ցույց տալ մեզ։

Ահա մեր ապրած անտանելի տառապանքներից մի քանի փաստ՝ ի տեղեկություն Ձեր արդարացի և առատաձեռն կառավարությանը։

1. Ձեզ արդեն հայտնի է, որ մեր մեջ կան մարդիկ, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ։ Երբ մեր կանայք դուրս են գալիս դաշտային աշխատանքների, բռնության են ենթարկվում...

2. Իրենց տուն կանչելով՝ մեկը գլուխն է բռնում, մյուսը փայտով ծեծում է, հետո էլ ասելով. «Սա դեռ ոչինչ, սպասեք, դեռ կտեսնեք, թե ձեր գլխին ինչ է գալու»։

3. Մեր գյուղատնտեսական գործիքները, որոնք թողնում ենք

բակում, անհապաղ հափշտակում են։ Այսպես, օրինակ՝ վերջերս գողացան մեր սայլերից մի քանիսը և այլ գործիքներ։ Դուռը ջարդելով, ներխուժում են մեր տները, տանում են մեր տնային կահ-կարասին և այրում մեր խոտի դեզերը։

4. Իսկ ինչ վերաբերում է զինվորական հարկին, ապա այդ առումով է՛լ ավելի աղետալի դրության մեջ ենք։ Առաջ յուրաքանչյուրը վճարում էր միայն 2 արծաթե մեջիդիե, իսկ հիմա ստիպված ենք լինում վճարել 0,75 լիրա։ Ցխոսելով դեռ այն մասին, որ պետը իր ոստիկաններով ամիսը երկու անգամ կանոնավորապես գալիս է մեր գյուղը, անգթորեն ծեծում ու հայհոյում մեզ՝ պահանջելով սահմանված հարկերից դուրս դրամ վճարել։

Այստեղ նկարագրված տանջանքները և ծաղրուծանակը մի քառորդ մասն իսկ չեն կազմում այն ամենի, ինչ որ մենք կրում ենք։ Եթե մանրամասն գրենք մեր բոլոր տանջանքների մասին, ապա հարկ կլինի մի ամբողջ հատոր լցնել։

Ահա թե ինչու մենք դիմում ենք Ձեր արդարացի կառավարությանը՝ խնդրելով ուշադրություն դարձնել մեր աղերսանքներին և մեզ անհապաղ օգնություն ցույց տալ։

Մնանք՝ սպասելով Ձեր մեծահոգությանը։

[62 ստորագրություններ՝ Դվնիկ գյուղի բնակիչների անունից]

АВПР, Посольство в Константинополе, д. 2675.

78. ԳԱՐՄԱՍԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՍԿՐՅԱԲԻՆԻՆ

Նամակ **1 ապրիլի 1907 թ.**

Ձեր խոնարհ ծառաները՝ Էրզրում (Կարին) քաղաքի մոտ գտնվող Գարմասան գյուղի բնակիչները, թուրքահպատակ հայեր են։

Չնայած որ մենք դարեր շարունակ հնազանդորեն ծառայել ենք մեր միապետին, սակայն ներկայումս անհնար է դարձել տանել այն տանջանքները, որոնք վիճակված է կրել ազգովին և որոնց հետևանքով մենք դարձել ենք դժբախտ ու ընչազուրկ։ Միանգամայն չհիմնավորված պատրվակներով մեզ ենթարկում են կեղեքման ու հալածանքների։ Մեր ընտանիքները ստրկական

դրության մեջ են, մեր խեղճությունն ու անպաշտպանությունը հանրահայտ են։ Եվ այս բոլորն արվում է աշխարհի երեսից մեզ ջնջելու համար։

Ողորմա՛ծ պարոն, մենք ինչպե՞ս տանենք այս անտանելի տանջանքները, որոնք շարունակվում են անընդմեջ։

Մենք ուզում ենք Ձերդ ողորմածությանը տեղյակ դարձնել, որ փոխանակ մեր միապետը մեր նկատմամբ դրսևորի կարեկցանք ու պաշտպանություն ցույց տա, հալածանքներն ու կեղեքումներն օրեցօր ավելի են սաստկանում։

Մի քանի ամիս սրանից առաջ այլադավանները փախցրին մեր գյուղացի Մանոյի փոքրահասակ աղջկան՝ Թոռնիկին։ Մեր ամբողջ հասարակությունը ենթարկվում է սարսափելի բռնությունների և ծայր աստիճանի աղքատացել է...

Ահա թե ինչու մենք դիմում ենք ամենաողորմած ու մեծ Ռուսաստանի հովանավորությանը և, կամավորապես ընդունելով ձեր հպատակությունը, խնդրում ենք անսալ մեր աղերսանքներին և օգնություն ցույց տալ...

(72 ստորագրություն)

АВПР, Посольство в Константинополе, д. 2675.

79. ԿԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ՝ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՍԿՐՅԱԲԻՆԻՆ

2 ապրիլի 1907 թ.

Մենք՝ Ձեր խոնարհ ծառաները, որոշ ժամանակ սրանից առաջ Ձեզ էինք հղել մեր արտասվալի աղերսանքները մեզ այս տառապանքներից ազատելու մասին։ Այս խնդրագիրը թվով երկրորդն է։

Ինչպես արդեն հաղորդել ենք մեր նախորդ նամակում, 500—600 տարի շարունակ մենք ծառայում ենք մեր միապետին, բայց այլևս ուժ չունենք հրամաններ լսելու և հալածանքներ կրելու, քանի որ օրեցօր մեծանում են մեր տանջանքները և վատթարանում է մեր վիճակը։

Ստորև բերում ենք մի քանի բնորոշ դեպքեր։

ա) Մեր գյուղում արհեստավորներ կան։ Մուսուլմանները նրանց զանազան պատվերներ են տալիս՝ խոստանալով արժեքը

վճարել։ Երբ նրանցից պահանջում են վարձը, նրանք պատասխանում են ծեծերով, հայհոյանքներով և նույնիսկ սպանություններով, ինչպես արդեն մի քանի անգամ տեղի է ունեցել։

բ) Ցերեկվա ու գիշերվա ցանկացած ժամին մարդիկ խմբերով ներխուժում են տները և օղի պահանջում, մինչդեռ տանտերերը չեն խմում և օղու վաճառքով չեն զբաղվում։ Մերժելու դեպքում սպառնում են խլել տանել մեր կանանց՝ հասարակաց տներում տեղավորելու համար։

գ) Իմանալով, որ մենք դիմել ենք Ձեզ՝ օգնության խընդրանքով, նրանք սկսել են է՛լ ավելի դաժանորեն վարվել մեզ հետ։ Նրանք մեզ ծեծում են ճանապարհներին և թալանում։ Զազրելիորեն հայհոյելով, բռնի ներխուժում են մեր տները, մեր կանանց հափշտակելու համար։

դ) Հարկահավաքը հարբեցող է։ Հարբած գալիս է գյուղ, հավաքում է պարտապաններին և հրամայում. «Անհապաղ վճարեք պարտքերը, իսկ թե չեք կարող վճարել, ձեր կանանց առեք տարեք քաղաք, թող պոռնկություն անեն, որ ձեր պարտքերը վճարեք»։ Եվ այս ամենը վերջանում է ծեծով, սյունին կապելով և վրան սառը ջուր լցնելով...

Մենք այլևս ուժ չունենք տանելու այս տանջանքներն ու ծաղրուծանակները։ Մենք դիմում ենք Ձերդ բարձր գերազանցությանը և աղերսում. մի՞ մերժեք ձեր ողորմածությունը, մեր միջնո՞րդը դարձեք և մեր անպաշտպան ժողովրդին ազատե՞ք այս տանջանքներից։

(4 ստորագրություն)

АВПР, Посольство в Константинополе, д. 2675, л. 142.

80. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՋԻՆՈՎԵՎԻՆ

№№ 88, 89 զեկույցներից **9 ապրիլի 1907 թ.**

Վանի վիլայեթում ապառքների հավաքումը շարունակվում է աճող խստությամբ։ Գանձվում են 10 տարվա հարկեր միանգամից, իսկ որոշ գյուղերից՝ նույնիսկ մինչև 1895—96 թթ. իրադարձություններն ընկած ժամանակաշրջանի համար։

Ուժեղացող ճնշումները, ըստ երևույթին, նպատակ ունեն հայերին վտարել Ռուսաստան, որպեսզի արտագաղթողների՝ պետության կողմից գրավվող հողերի վրա նստեցնեն մահմեդական գաղթականներին և այդպիսով երկրամասը աստիճանաբար բնակեցնեն վերջիններով...

Վիլայեթում տեղի ունեցող իրադարձությունների ուշադիր ուսումնասիրումը հանգեցնում է այն համոզմանը, որ թուրքական իշխանությունները նպատակ ունենալով հայերին արմատախիլ անել երկրամասից, 1895—96 թթ. զենքով կոտորելու իրենց ծրագրի փոխարեն, ընտրել են տնտեսական ու վարչական ճնշման ուղին։ Մի կողմից, հայերին հասցնելով լիակատար ընչազրկության, իսկ մյուս կողմից, նրանց արգելելով լքել հարազատ վայրերը,— վաստակի համար Ռուսաստան և Պարսկաստան մեկնողներին թուրքերը հայտարարում են հանցագործներ և նրանց արգելում են հայրենիք վերադառնալ։

Տերմեն

АВПР, Политархив, д. 3456, л. 52.

81. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՋԻՆՈՎԵՎԻՆ

Քաղվածք № 425 նամակից **10 մայիսի 1907 թ.**

Էրզրումի, Բիթլիսի, Վանի ռուսական հյուպատոսական ներկայացուցիչների վերջին զեկույցները մատնանշում են Ռուսաստանի հետ սահմանակից հայ բնակչության հատկապես տագնապալի տրամադրությունը։ Ըստ երևույթին թուրքական տեղական իշխանությունները, փոխադարձ համաձայնությամբ, իրենք են սաստկացնում այդպիսի տրամադրությունը՝ ձեռք առնելով այնպիսի միջոցներ, որոնք ընդունակ են առաջ բերելու հայերի համատարած ջարդ, որի հետևանքը, անկասկած, կլինի նրանց զանգվածային փախուստը դեպի Ռուսաստանի սահմանները, ինչպես որ դա տեղի ունեցավ 1895—96 թվականներին։

Արտագաղթի շարժումն այժմ էլ հայերի մեջ ընդունում է խիստ լայն չափեր...

Իզվոլսկի

АВПР, Посольство в Константинополе, д. 3706, л. 47.

82. ԲԻԹԼԻՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

27 մայիսի (9 հունիսի) 1907 թ.

Վիլայեթի բոլոր հայերը, վալի Ֆերիդ փաշայի բռնություններից, չարագործություններից և կատարյալ անգործունեությունից հուսահատության եզրին հասած՝ հյուպատոսությանն աղերսում են հետևյալ հեռագիրն ուղարկել նորին կայսերական մեծությանը. «Նորին մեծություն համայն Ռուսիո թագավոր-կայսերը, հայերի և ուղղափառ եկեղեցու բարեգութ ու միակ հովանավորին։ Ի վիճակի չլինելով այլևս տանել այն բռնությունները, որոնց ենթարկվում ենք այստեղ վաղուց ի վեր, Բուլանրխում, Մելազգերտում (Մանազկերտ), Մուշում և Ախլաթում ապրող հարյուր քսան հազար ճնշված հայերի անունից Ձերդ կայսերական մեծությանը աղերսում ենք, կարեկցանքից և հանուն նորին կայսերական մեծության ու թագաժառանգ արքայազնի, մեր ստրկացված ժողովրդի գաղթականներին ընդունել Ռուսաստան...»

Հյուպատոսարանում պահպանվող թուրքական բնագրում սույն տեքստի տակ դրված են հայերի 107 կնիքներ ու ստորագրություններ։ Ձեկուցելով վերոշարադրյալը, պատիվ ունեմ Ձերդ բարձր գերազանցությանը խնդրել սույն հեռագիրը ներկայացնելու նորին կայսերական մեծությանը և իմ կողմից ես թախանձանոք բարեխոսում եմ Ձեր առաջ, որ բարեհաճեք ուշադրություն դարձնել վիլայեթի հայերի վիճակի ու Ֆերիդ փաշայի գործունեության վրա, մի վալի, որը բնակչությանը հասցրել է լիակատար քայքայման և ուժասպառության։

Շիրկով

АВПР, Политархив, д. 3456, л. 75.

83. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

№ 216 ճեպագրից **2 (15) օգոստոսի 1907 թ.**

Անցյալ հուլիսի 1-ի № 166 զեկույցով, որի պատճենը ներկայացված է 1-ին դեպարտամենտին, Սամսոնում մեր փոխհյուպատոսը ինձ ի գիտություն հայտնել էր, որ Սամսոնի սանջակի թուրքական իշխանությունները տեղացի հայերին դաժան հալածանքների են ենթարկում, որոնց պատճառով վերջիններս զանգվածաբար արտագաղթում են։ Վերջին երեք ամսվա մեջ, ինչպես հաղորդել է պր-ն Ջիուդիչին, 1500-ից ավելի թուրքահայեր, Կովկասում ապրող իրենց ազգականների կողմից վարձված առագաստանավերով թաքուն լքել են Սամսոնի սանջակը և մեկնել մեր սահմանները։

Ի նկատի առնելով, որ Սամսոնի իշխանությունների գործելակերպը լիովին համանման է այն բանին, ինչը դեռ վերջերս արվում էր Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների իշխանությունների կողմից, ես պետք է եզրակացնեի, որ Սամսոնում հայերի դեմ հարուցվող հալածանքները հավասարապես պայմանավորված են Բ. Դռան գաղտնի կարգադրություններով, նպատակ ունենալով Փոքր Ասիան լիովին մաքրել հայերից, որոնց թուրքերը համարում են իրենց համար վտանգավոր տարրեր...

Զինովև

АВПР, Политархив, д. 3456, л. 147.

84. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄՅԱՆԸ՝ ՆԻԿՈԼԱՅ II-ԻՆ

[1907]

Երկար տարիների ծանր լռությունից և սպասումից հետո, համարձակվում եմ, ո՜վ թագավոր, կրկին անգամ, գուցե վերջին անգամ իմ հառաջացյալ տարիքում, Ձերդ մեծության ուշադրությունը հրավիրել այն անսահման ծանր դրության վրա, որի մեջ տառապում է Թուրքիո հայությունը։

Իմ հոտը Թուրքիայում, մանավանդ բնիկ հայկական գավառներում, անանխընթաց տառապանքների մեջ է։ Ընդդեմ Փոքր Ասիայի հայ բնակչության ստեղծված է խաղաղ ոչնչացման մինչև այժմ չտեսնված մի համակարգ։ Արդարադատության բացակայությունը, կառավարության կողմից հայ ժողովրդի արդարացի պահանջների լրիվ անտեսումը նրան հանձնել են անբարեխիղճ աստիճանավորների, քուրդ բեգերի և համիդիե հեծելազորի լիակատար իշխանությանը։ Չափից դուրս ծանր հարկերը և պարհակները, անցած տարիների ապառքների հավաքումը (երբեմն՝ 10 տարվա, նույնիսկ՝ 20), դրանց գանձման

կամայական սիստեմի հետ, հայ հողագործ բնակչությանը հասցրել են ծայր աստիճանի աղքատության։

Երբեմնի հացառատ և անասուններով հարուստ գյուղերը այժմ զրկված են ոչ միայն բանող անասուններից, այլև ամենավերջին հացուստից, հանապազօրյա հացից։

Ապրուստի միջոցների բացակայությունը պայմանավորում է սովի սարսափները հացառատ մարզերում։ Հուսահատության հասցված բնակչությունը գրավ է դնում և չնչին գնով վաճառում այն դաշտերը, որոնք ցողված են իր հայրերի արյամբ, և վերածվում է ընչազուրկ մշակների։ Հազարավոր անհող գյուղացիները մեծացնում են քուրդ բեգերի մոտ աշխատող «մարաբա» կիսարարների թիվը։ XX դարի սկզբին հողագործական Հայաստանում վերստեղծվում է միջնադարյան ճորտատիրություն։ Թուրքիո կառավարությունը ոչ միայն ոչ մի միջոց չի ձեռնարկում ընդդեմ այդ ողբալի վիճակի, այլ՝ ընդհակառակը, մուհաջիր-գաղթականներին՝ այլ պետություններից եկած մուսուլմաններին բնակեցնելով հայկական գյուղերում, նա խորացնում է քրիստոնյա ռայայի վիճակի ծանրությունը։ Հայերին արգելելով վաստակ որոնել Թուրքիայից դուրս և միաժամանակ թույլ չտալով իրենց զավակների մոտ վերադառնալ նրանց, ում որ հաջողվել էր փախչել փրկվել կոտորածից, կառավարությունը արհեստականորեն և սիստեմատիկաբար նպաստում է հայ ժողովրդի բարոյալքմանը, սովահարությանը և բնաջնջմանը, մի ժողովուրդ, որը միշտ եղել է համբերության և աշխատասիրության օրինակ։

Ինչպես հյուծված նախիր, որ նետված է գիշատիչներով լեցուն անապատը, քրիստոնյա բնակչությունը Թուրքիայի հայկական մարզերում այս կողմից այն կողմն է նետվում՝ ելք չգտնելով իր ողբերգական վիճակից։

Նրա մի մասը, կորցնելով հավատը օրինական միջոցների նկատմամբ, կանգնում է իշխանություններին դիմադարձ լինելու ուղու վրա, կործանելով և՛ իրեն, և՛ իր անմեղ հարևաններին։

Շատերը կյանքները վտանգելով՝ ազատություն են փընտրում Ռուսաստան գաղթելու մեջ, որտեղ տասնյակ հազարավոր նույնպիսի փախստական հողագործներ, չունենալով վարելահող, ապրում են օրավարձու աշխատանքով, սնվում են մուրացկանությամբ, հաճախ իրենցով լրացնելով տեղական բնակչության մթին խավերը։

Վերջապես, մեծ է թիվը նաև այն դժբախտների, որոնք աջակցությունից հույսները կտրած, հուսահատ դրությունից դուրս գալու միակ ելքը գտնում են կրոնափոխության մեջ՝ կործանվելով ինչպես քրիստոնեական եկեղեցու համար, այնպես էլ բարոյապես առողջ հասարակության համար։

Ձերդ մեծության գործակալները Թուրքիայում, ո՞վ թագավոր, վստահ եմ, կտան ավելի ճշգրիտ ու պերճախոս տվյալներ այդ ամենի մասին, ինչպես և կհաստատեն, որ վերջին տասը տարվա ընթացքում սպանված, ձերբակալված, աքսորված, սովից մեռած, բռնի իսլամացած հայերի թիվը չի զիջում և նույնիսկ գերազանցում է սարսափելի 1895—1896 թթ. կոտորածների թվին...

АВПР, Политархив, д. 3456, л. 151.

85. ԲԻԹԼԻՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՇԻՐԿՈՎԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՋԻՆՈՎԵՎԻՆ

Հեռագրից 2 (15) մարտի 1908 թ.

Կոստանդնուպոլսի կողմից ներում ստացած ավազակ Քասիմը փետրվարի վերջին Մշո դաշտի Ալիքլբոն գյուղում սպանել է մի հայի, Արտոնք գյուղում՝ մի ուրիշի, Վարդենիս գյուղում՝ մի երրորդի և Մուշախթեն գյուղում՝ երեքին։ Նույն տեղում նա բռնի խլել է 300 լիրա։ Մուշի իշխանությունները Քասիմ բեյին օգտագործում են ֆիդայիներին հալածելու համար, իսկ նա զինվորների հետ ամեն տեղ այդ պատրվակով մտնելով՝ սպանություններ ու կողոպուտներ է անում...

АВПР, Канцелярия МИД, д. 34, л. 475.

86. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆԻՆ

Հեռագրից 12 (25) մարտի 1908 թ.

Մարտի 10-ին տեռորիստներից մեկը ծանր վիրավորեց դավաճան Դավթին և փախավ։ Գրգռված մուսուլմանները, ոստիկանների ու ժանդարմների կողմից հրահրված և նրանց օգնությամբ, սկսեցին սպանել շուկայից վերադարձող խաղաղ ու

անզեն հայերին... Ես և իմ գործընկերները իսկույն քաղաք մտանք հայերին հանգստացնելու և շուկայից վերադարձնելու համար։ Առանձին սպանությունները ձգվեցին մինչև գիշեր։

Գիշերը բոլոր դիակները թաղել էին կամ նետել զանազան գետեր... Տրամադրությունը ծայրահեղորեն տագնապալի է։ Առայժմ հաշվվում են 38 սպանված, 6 վիրավոր և 23 անհայտ կորածներ...

Տերմեն

АВПР, Канцелярия МИД, д. 34, л. 477.

87. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻ ՃԵՊԱԳՐԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Գերա, 22 մարտի (4 ապրիլի) 1908 թ.

Այն բացատրության հետևանքով, որ ես ունեցա մեծ վեզիրի հետ Վան քաղաքի հայերի կոտորածի գործով և որի մանրամասնությունների մասին ես պատիվ եմ ունեցել հաղորդելու Ձերդ բարձր գերազանցությանը մարտի 15-ի (28) № 62 զեկույցով, Ցերիդ փաշան ինձ տրամադրեց այդ նույն գործի վերաբերյալ հեռագրի քաղվածքը, որն ինքն ստացել է Վանի վալիից։

Այդ հեռագրում վալին, ըստ երևույթին, ջանում է նվազեցնել խժդժությունների նշանակությունը և դրանց համար պատասխանատվությունը դնել բացառապես հայ հեղափոխականների վրա[13]...

Վալիի կեղծությունն ինձ համար էլ ավելի աներկբա դարձավ պ. Տերմենից մարտի 18 (31)-ին նոր հեռագիր ստանալով, որից պարզվում է, որ գործերի վիճակը Վանում ոչնչով չի լավացել մեծ վեզիրին իմ առաջին գրությունը հանձնելուց հետո...

Վալին, մեր փոխհյուպատոսի ասելով, շրջապատված է ստախոսներով և ահաբեկված այն ագիտատորներից, որոնք վրեժից դրդված՝ կոտորած են ցանկանում։ Նրա բոլոր ձեռնարկած միջոցները բացառապես հայերի դեմ են ուղղված, և ինչպես խժդրժությունների հրահրողներին, այնպես էլ մարդասպաններին պատասխանատվության ենթարկելու համար ոչինչ չի ձեռնարկվում։ Այսպիսի պայմաններում հանգստության վերականգնումը անհնարին է... Պ. Տերմենի հեռագրից երևում է, որ սադրիչների թվում եղել են այնպիսի անձինք, որոնք Վանում պաշտոնական դիրք ունեն, այն է՝ Բողոքարկման պալատի նախագահը, ժանդարմական սպաներ Ահմեդ բեյը և դատական քննիչի պաշտոնակատար Թևֆիկ բեյը։

Հեռագրում թվարկված են գլխավոր մարդասպանների անունները։ Սպանված հայերի թիվը հասնում է մինչև 60-ի, իսկ վիրավորների և անհայտ կորածներինը՝ մինչև 50-ի...

АВПР, Политархив, д. 3456, л. 195.

88. ՎԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Քաղվածք № 45 զեկույցից — 31 մարտի 1908 թ.

Սույն թվի մարտին Վան քաղաքում բռնկված հակահայկական խժդժություններին նախորդել է մի հայ հեղափոխականի մահափորձը նույն կազմակերպության մի այլ անդամի՝ Դավթի վրա, որը տեղական հեղափոխական կոմիտեի պահեստների տեղը մատնած է եղել թուրքական կառավարությանը, ինչի շնորհիվ բռնագրավվել էին խիստ նշանակալի քանակությամբ զենքեր ու զինամթերք։

Հիշյալ Դավթիթը վիրավորվել է ս. թ. մարտի 15-ին զբոսանքի ժամանակ իրեն մոտեցած 18-ամյա մի հայի՝ հեղափոխական կազմակերպության պարագլուխներից մեկի ձեռքով, որը կիպ մոտենալով Դավթին, դիմահար կրակել է նրա վրա, և վերջինս արյունաշաղախ ընկել է սալահատակին։

Այս տեսարանին ներկա եղած մուսուլմանները, որոնց մեջ եղել են նաև մի քանի ոստիկանական սպաներ, որոնք Դավթի ու տեղական քաղաքացիական իշխանությունների ագիտացիայի ազդեցությամբ հայերի դեմ մինչ այդ թշնամաբար էին տրամադրված, չարագործին անհաջող հետապնդելուց հետո, հարձակվել են հանցագործության վայրում գտնվող հայերի վրա, ընդ որում նրանց մեծամասնությունը սպանվել է։ Հուզումներն արագ տարածվել են քաղաքով մեկ, և ամենուրեք սկսվել է հայերի կոտորածը, որը շարունակվել է մինչև ուշ գիշեր։ Ծագած հուզումները հաջողվել է դադարեցնել միայն շնորհիվ ռուսական,

ֆրանսիական և անգլիական փոխհյուպատոսների եռանդուն գործողությունների, որոնք զորքերի հրամանատարին հարկադրել են միջոցներ ձեռք առնել խժդժությունները ճնշելու համար, մինչդեռ տեղի վալին ոչ միայն չի հոգացել քաղաքի հայ բնակչության պաշտպանության մասին, այլև մերժել է ապաստան տալ իր պաշտպանությունը խնդրող հայերին։

Ըստ մեր փոխհյուպատոսի ստացած տեղեկությունների, Վանում կոտորածից հետո գտել են 42 դիակ և 6 ծանր վիրավոր, իսկ 29 հոգի էլ՝ անհայտ կորած են։ Բացի այդ անձանցից՝ Վան քաղաքի բնակիչներից, սպանվել են նաև հարևան գյուղերի շատ գյուղացիներ, որոնք կոտորածի ժամանակ գտնվելիս են եղել քաղաքում։

Հիշյալ իրադարձությունների պատճառով Վան քաղաքի հայերի մեջ առաջացած խուճապը վերջիններիս ստիպել է պաշտպանություն գտնել օտարերկրյա տերությունների ներկայացուցիչների մոտ և նրանց հայտարարել են, որ իրենք լոկ այն ժամանակ կկարողանան վերադառնալ իրենց նախկին զբաղմունքներին և, մասնավորապես, բացել շուկան, երբ հյուպատոսներն ընդունեն, որ հայերի համար վտանգն անցած է։

Այնինչ տեղական իշխանությունները հարկ եղած չափով չեն հոգացել հայերի մեջ ծագած տագնապալի տրամադրության հանդարտեցման մասին՝ սահմանափակվելով զինվորական պարեկներ ուղարկելով քաղաքի առավել սպառնալից կետերը։ Կառավարությունն անպատիժ է թողել խժդժությունների բոլոր հրահրիչներին և մասնակիցներին...

Ներմեն

АВПР, Политархив, д. 3456, л. 203.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԵՐԻ ՋԱՆԳՎԱԾՈՒՅՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1909 - 1918 թ.թ.

89. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ Ի. Ա. ԶԻՆՈՎԵՎԻՆ՝ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ

19 հունվարի 1909 թ.

Հռչակված ազատություններով հայերի հրապուրվելը ավելի ու ավելի է գրգռում մուսուլմանների ատելությունը նրանց դեմ։ Նույնիսկ առավել առաջադեմ երիտթուրքերի մեջ, որոնք դեռ վերջերս այնպես բացահայտորեն իրենց երախտագիտությունն էին հայտնում հայերին՝ Թուրքիայում ազատագրական շարժման նախաձեռնողներ լինելու համար, անվստահությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրեցօր, այլ՝ ժամեժամ։

«Միության և առաջադիմության» ենթակոմիտեն գաղտնի հրամայողություն է սահմանել հայ գործիչների նկատմամբ և գավառների իր գործակալներին պատվիրել է առիթը եկած դեպքում կանգ չառնել ոչ մի եռանդուն միջոցի առաջ...

АВПР, Посольство в Константинополе, д. 2677, л. 17.

90. ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՈՎԵՎԻՆ

Քաղվածք զեկույցից **2 մարտի 1909 թ.**

Երիտթուրքերն սկսել են հապճեպորեն զինել մուսուլմաններին, մանավանդ քաղաքային դադաշներին, որոնք հայտնի են իրենց անսանձությամբ և հայերի հանդեպ ատելությամբ։

Ո՛չ այդ գործողությունները, ո՛չ դրանց պատճառները, հասկանալի է, չէին կարող գաղտնի պահվել, և մուսուլմանների մեջ արդեն խուլ հուզում է սկսվել, Էրզրումի վիլայեթից բացի, նաև Բիթլիսի, Սվազի, Խարբերդի ու Դիարբեքիրի վիլայեթների շատ վայրերում...

АВПР, Посольство в Константинополе, д. 2677, л. 29.

91. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՉԱՐԻԿՈՎԻՆ

№ 86 ճեպագրից **Պերա, 18, ապրիլի (1 մայիսի) 1909 թ.**

Ինչպես երևում է Մերսինում մեր փոխհյուպատոս պ. Մավրոմատիից իմ ստացած հեռագրերից, մահմեդականների վայրագությունները Ադանայի վիլայեթում հրեշավոր չափերի են հասել։ Զոհված քրիստոնյաների թիվը, մանավանդ հայերի, հասնում է մոտ 15 000-ի։

Կարճ ժամանակով ընդհատված խժդժությունները Ադանա քաղաքում վերսկսվել են՝ հենց որ Թուրքական կառավարության կարգադրությամբ անդորրությունը վերականգնելու համար այնտեղ է ժամանել ռումելիական զորքերի մի ջոկատ։ Զինվորներն անցել են տեղի մուսուլմանական բնակչության պարագլուխների կողմը և սկսել կոտորել քրիստոնյաներին՝ խտրություն չդնելով ո՛չ սեռի, ո՛չ տարիքի մեջ, և թալանել ու հրդեհել նրանց տները։ Դատելով ըստ պ. Մավրոմատիի ամսույս 15 (28)-ին հղած հեռագրի, Ադանա քաղաքն այլևս գոյություն չունի, իսկ ամբողջ ունեցվածքի և պաշարների ոչնչացման հետևանքով, կոտորածից խույս տված քրիստոնյա բնակչությունը սկսում է սովի մատնվել։

Ադանայի մահմեդականների օրինակին են հետևել Տարսուսի մահմեդականները, որտեղ սույն ամսի 3 (16)-ից սկսվել են հրդեհներ, կողոպուտներ և սպանություններ։ Այնուհետև խժդժությունները տարածվել են նաև հարևան վայրերում, մանավանդ՝ Ալեքսանդրետում, որի շրջակայքում հրկիզվել են մի քանի գյուղեր։ Ղըրխ Խանում մորթվել են 50 հայ ընտանիքներ, Փայասում տեղական բանտից բաց են թողնվել 500 բանտարկյալներ, որոնք չեն հապաղել մասնակցություն ունենալ վայրագություններին։ Վերջապես, ինչպես ինձ հաղորդել է Հալեպի մեր հյուպատոսը ամսույս 6 (19)-ի և 7 (20)-ի հեռագրերով, հակաքրիստոնեական շարժում է սկսվել նաև Զեյթունում, Մարաշում, Անտիոքում ու Բիրեջիկում...

Անգլիական, ֆրանսիական և իտալական նավերի Թուրքական նավահանգիստները ժամանելուց հետո, անդորրությունն այդ վայրերում վերականգնվել է, բայց ափերից հեռու տեղերում խժդժությունները, ըստ երևույթին, դեռևս լիովին չեն դադարել։

Մեր հրետանավակ «Ուրալեցը» 2-րդ կարգի նավապետ Կուզնեցովի հրամանատարությամբ ամսույս 15 (28)-ին ժամանել է Ալեքսանդրիա...

Ջինովև

АВПР, Политархив, д. 3456, л. 206.

92. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՉԱՐԻԿՈՎԻՆ

№ 94 ճեպագրից **Պերա, 2 (15) մայիսի 1909 թ.**

Մերսինում մեր փոխհյուպատոսից ապրիլի 28-ին (մայիսի 11-ին) իմ ստացած հեռագրից երևում է, որ, ինչպես Ադանայում գտնվող թուրքական զորքերը, այնպես էլ տեղացի մուսուլման վերնախավը շարունակում է թշնամաբար տրամադրված մնալ քրիստոնյաների հանդեպ, որ հիշյալ քաղաքում մտցված պաշարողական դրության կանոնները գործադրվում են գերազանցապես քրիստոնյաների նկատմամբ, և որ տեղական իշխանությունները ակնհայտ թողտվություն են ցուցաբերում քրիստոնյաների կոտորածների մեղավորների հանդեպ ու ջանում են քրիստոնյաների վրա դնել տեղի ունեցած խժդժությունների պատասխանատվությունը։ Պ-ն Մավրոմատին սրան ավելացնում է նաև այն, որ իրենց ողջ ունեցվածքը կորցրած քրիստոնյաները միանգամայն զրկված են ապաստանից և որ մահացությունը նրանց մեջ խիստ նշանակալից չափի է հասնում, չնայած վստահություն վայելող սանիտարական բժշկի ներկայությանը։

Ես չհապաղեցի այս հանգամանքների վրա հրավիրել ինչպես մեծ վեզիրի, այնպես էլ ներքին գործերի մինիստրի ուշադրությունը։

Պ-րն Մավրոմատիի կողմից հաղորդված տեղեկություններն ինձ հույժ հավաստի են թվում, քանի որ թուրքական կառավարությունը, ըստ երևույթին, ջանում է նվազեցնել Ադանայի խառնակչությունների նշանակությունը և, ի միջի այլոց, տարածում է խառնակչությունների ժամանակ սպանվածների թվի վերաբերյալ տեղեկություններ, որոնք միանգամայն հակասում են այն տվյալներին, որոնք ստացված են ինչպես իմ, այնպես էլ արտասահմանցի իմ մի քանի ընկերակիցների՝ տեղերում մեր գործակալների կողմից...

Ջինովև

АВПР, Канцелярия МИД, д. 35, л. 107.

93. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

№ 144 ճեպագրից **18 (31) մայիսի 1909 թ.**

Իշխան Գագարինը հեռագրում է Մերսինից։

«Փոխհյուպատոս Մավրոմատիի զեկույցներում չափազանցություններ չկան։ Վերջերս բարգավաճ Ադանա քաղաքի երեք քառորդը կործանված է... Խժդժությունների իսկական մեղավորները՝ մուսուլմանները ազատության մեջ են։ Ես համոզված եմ, որ հալածանքների ենթարկված են միայն անմեղ հայերը։ Երկյուղ կրելով խառնակչություններից՝ դատարանը սիրտ չի անում անհանգստացնել մահմեդական մեծամեծներին։ Նիստերը [դատարանի] տեղի են ունենում փակ դռների հետևում, վկաների հարցաքննությունը կատարվում է ծայր աստիճանի կողմնակալորեն։ Խառնակչությունների վերսկսումը խիստ հավանական է, և օտարերկրյա ռազմանավերի ժամանումն այստեղ անպայման անհրաժեշտ է։ Խարսխակայանում կանգնած են գերմանական, ֆրանսիական և ամերիկյան հածանավերը և սպասում են իտալական հածանավի ժամանելուն»։ Ի նկատի ունենալով վերոշարադրյալը՝ Գագարինը միջնորդում է առայժմ Մերսինում թողնել «Ուրալեց» հրետանավակը...

Ջինովև

АВПР, Канцелярия МИД, д. 38, л. 274.

94. Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

№ 116 ճեպագրից **Պերա, 30 մայիսի (12 հունիսի) 1909 թ.**

Ի լրացումն մայիսի 18 (31)-ի գաղտնի հեռագրի, որով ես հաղորդել էի Ադանայի վիլայեթում գործերի դրության մասին Բեյրութի մեր գլխավոր հյուպատոսից իմ ստացած տեղեկու-

թյունների բովանդակությունը, պարտքս եմ համարում սույնին կից ուղարկել Մերսինի մեր փոխհյուպատոսի երկու գաղտնի հեռագրերի պատճենները։

Պր-ն Մավրոմատին մայիսի 23-ի (հունիսի 5) հեռագրում մանրամասնություններ է հաղորդում այն ցավալի իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել Դորթ-Յոլ գյուղում և մի քանի քրիստոնյաների մահվան պատճառ դարձել։

Ինչպես այդ, այնպես էլ հաջորդ՝ մայիսի 28-ի (հունիսի 10), հեռագրում, մեր փոխհյուպատոսը մատնանշում է այն կողմնակալությունը, որ դրսևորվել է Ադանայում հիմնված ռազմադատական հանձնախմբի կողմից[14], որի դատին են հանձնված խառնակչություններ հրահրելու մեջ կասկածվող բոլոր անձինք կամ դրանց մասնակիցները։ Մայիսի 28 (հունիսի 10)-ին մահապատժի են ենթարկվել 9 մուսուլման և 6 հայ։ Մահապատժի ենթարկված մուսուլմանները հասարակ ժողովրդից են, և մեծամեծներից՝ խառնակչությունների իսկական մեղավորներից ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկվել։ Մինչդեռ մահապատժի ենթարկված հայերի ամբողջ մեղքն այն է եղել, որ նրանք պաշտպանվել են հարձակումներից։

Այն հանգամանքը, որ հետաքննությունն ու դատը տեղի են ունենում փակ դռների հետևում, ընդ որում կողմնակի ոչ ոքի չի թույլատրվում ներկա լինել ռազմադատական հանձնաժողովի նիստերին, իմ կարծիքով, հաստատումն են հանդիսանում ինչպես իշխան Գագարինի, այնպես էլ պ. Մավրոմատիի կողմից հանձնախմբի ծայրահեղ աչառության վերաբերյալ հարուցած մեղադրանքների։

Ես չհապաղեցի մեծ վեզիրի հատուկ ուշադրությունը հրավիրել այս հանգամանքի վրա և նրան ասել, որ, ի նկատի ունենալով այն ծանր տպավորությունը, որ Ադանայի վիլայեթում տեղի ունեցած քրիստոնյաների ջարդը գործել է Եվրոպայում, Թուրքական կառավարությունը պետք է բոլոր միջոցները ձեռք առներ, որպեսզի ի չիք դարձներ ինչպես իր, այնպես էլ Ադանայի ռազմադատական հանձնախմբի հանդեպ հարուցվող կասկածանքը անարդարադատության մեջ և, ի միջի այլոց, հանձնախմբին պատվիրեր, որ զոնե տերությունների գործակալներին թույլ տվեր մասնակցելու դրա նիստերին։

Հուսեին Հիլմի փաշան ինձ պատասխանեց, թե ինքը լիովին համամիտ է ինձ հետ, բայց ոչինչ չարեց։

Անգլիայի դեսպանն էլ իր հերթին հաղորդել է ինձ, թե մեծ վեզիրը օրերս դիմել է նրան, խնդրելով, որ հրահանգի Մերսինում Անգլիայի փոխհյուպատոսին, որպեսզի նա հանձնախմբի տնօրինությանը հանձնի փոխհյուպատոսությունում պատսպարված հինգ հայերին։ Սըր Ջերալդ Լոուիթերը Հուսեին Հիլմի փաշային հայտարարել է, որ նրա միջնորդությունը կարող է բավարարել միայն այն դեպքում, երբ իրեն նախապես հայտնեն հիշյալ հայերի դեմ հարուցված մեղադրանքները և անգլիական փոխհյուպատոսին թույլ տրվի ներկա լինել դատավարությանը։

Մեծ վեզիրը, անգլիական դեսպանի ասելով, չի համաձայնել դրան։

Այսպիսին է վերաբերմունքը երիտթուրքերի կողմից վերափոխված Թուրքիայում արդարադատության հարցի նկատմամբ։ Խրախուսված եվրոպական մամուլի մի մասի շողոքորթ, այլ ոչ թե անկեղծ կարծիքներից, երիտթուրքերը դադարել են պատշաճ հարգանքով վերաբերվել Եվրոպայի կարծիքին...

Ի. Չիճովն

АВПР, Канцелярия МИД, д. 35, л. 255—257.

95. ԿՈՎԿԱՍԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԿՐՈՒԳԻ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՏԱՐԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԳԵՆԵՐԱԼ-ԿՎԱՐՏԻՐՄԵՅՍՏԵՐԻՆ

Զեկույցից

Թիֆլիս, 5 հունիսի 1909 թ.

Ձերդ գերազանցությանը հաղորդում եմ վերջերս Ասիական Թուրքիայից ստացված քաղաքական բնույթի տեղեկություններ...

Ադանայի վիլայեթում տեղի ունեցած արյունոտ անկարգությունների առաջին բռնկումը ապրիլի 10-ին մոտ մարեց, իսկ արդեն ապրիլի 14-ին, հենց որ ժամանեցին ռեդիֆի առաջին մոբիլիզացված զորամասերը, դրանք վերսկսվեցին նոր ուժով բուն Ադանայում, չնայած Մերսինում եվրոպական 7 ռազմանավերի առկայությանը, որոնք դեսանտներով գրավել էին Մերսինը և Ալեքսանդրետը, բայց դրանք չէին շարժել դեպի երկրի խորքը։ Անկասկած, եվրոպացիների այդպիսի տարօրինակ վարքագիծը է՛լ ավելի համարձակություն տվեց մարդասպաններին

ու թալանչիներին, և անկարգությունները չհապաղեցին տարածվել նաև Հալեպի վիլայեթի սահմաններում. Ղըրդ խան, Բեյլան, Քեսաբ, Անտիոքի մի մասը, Հաճըն, Մարաշի մի մասը, Քիլիս, Օսմանիե, Համիդիե և հայկական մանր շատ գյուղեր բառացիորեն մորթոտվել են ու հրկիզվել։

Ադանայի վիլայեթում այդ նույն բախտին են արժանացել Սիսը, Մասիսը, Այասը և Փայասը։ Կոտորածի ու կողոպուտի բոլոր դեպքերին զինվորները շատ եռանդուն մասնակցություն են ունեցել։ Սա մի փաստ է, որ հաստատված է հարյուրավոր վկաների և հենց իր՝ Ադանայում այժմ գործող հետաքննական հանձնախմբի կողմից։ Դեռ ավելին. առաջինը Մերսին ժամանած նիզամի 3-րդ կորպուսի զորամասերը, որոնք լիովին գտնվում էին իրենց սպաների՝ երիտթուրքերի տրամադրության տակ, կատարում էին նույնպիսի գազանություններ, ինչպես որ այստեղի կորպուսի նրանց ընկերները. սրանք դարձյալ փաստեր են, որոնք երիտթուրքերն էլ չեն հերքում, բայց բացատրում են ռեակցիոն տարրերի պրովոկացիաներով։ Սկզբում երիտթուրքերը Ադանայի կոտորածի մեղքը վերագրում էին սուլթան Աբդուլ Համիդի խարդավանքներին, որը դրանով ցանկացել էր շեղել ուշադրությունը իր դեմ Կոստանդնուպոլսում նախապատրաստվող հեղաշրջումից, այնուհետև նրանք պատասխանատվությունը բարդում էին «եվրոպական մի տերության վրա, որը շահագրգռված է առիթ ստեղծելու Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար», այսպես ասած՝ ակնարկ ոչ այն է Անգլիայի, ոչ այն է Ռուսաստանի վերաբերյալ...

Ի տեղի շտաբի պետի՝ գեներալ-մայոր Կարպով

ՀԳՎԻԱ, ֆ. 2000 (ԳՈՒՇ) օп. 1, д. 1004.

96. ԿՈՎԿԱՍԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԿՐՈՒԳԻ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԳԵՆԵՐԱԼ-ԿՎԱՐՏԻՐՄԵՅՍՏԵՐԻՆ

Զեկույցից **Թիֆլիս, 15 հուլիսի 1909 թ.**

Տիտուլյար խորհրդական Շելկովնիկովը, որը հունիսի 9-ին մանել էր Ադանա, հետևյալ նկարագրությունն է տալիս. – «Հունիսի 9-ի առավոտյան ես ժամանեցի Ադանա։ Կործանված թաղամասերի տեսքը աննկարագրելի է. քաղաքի երեք քառորդը գոյություն չունի, անվնաս են մնացել միայն Սիհուն գետին հարող մուսուլմանական թաղամասերը։ Քաղաքի մնացած մասը (մոտ 5—6 հազար տուն) իրենից ներկայացնում է խճաքարի, աղյուսի, ջարդված լուսամուտներով, փուլ եկած առաստաղներով ու հատակներով պատերի այստեղ ու այնտեղ երևացող ավերակների կույտեր։ Քաղաքի այս մասում մեռելային լռություն է տիրում, երևում են լոկ սոված կատուներ, շներ ու ագռավներ, և երբեմն՝ դժբախտ մի հայ, որ քչփորում է իր տան ավերակները՝ հուսալով, թե իր ունեցվածքից մնացած որևէ բան կգտնի...

Իսկական մեղավորներն ու մարդասպանները՝ իշխանություններն ու մակեդոնական [երիտթուրքական] զորքերը, չեն էլ մտածում թաքնվել, նրանք դրա կարիքը չունեն, քանի որ նրանք իրենք ռազմական դատարանների ու հետաքննական հանձնաժողովի անդամներ են և նրանք իրենք են այժմ կարգ պահպանում այն երկրում, որտեղ իրենց իսկ ձեռքով կոտորվել են 25—30 հազար քրիստոնյաներ։ Այն, ինչ արդարադատության անվան տակ կատարվում է ռազմական դատարաններում, մանավանդ Ադանայում, չարամիտ ծաղր է արդարադատության հանդեպ։ Ադանայում մահապատժի ենթարկված 15 հոգուց 6-ը հայեր են։ Հիմա էլ դատվածների երկրորդ խմբի 9 հոգուց 8-ը հայեր են՝ դատապարտված 5—10 տարվա տաժանակիր աշխատանքի, և միայն 1 մահմեդական՝ 6-ամսյա բանտային կալանքի։

Այնպիսի տպավորություն է ստացվում, թե հայերն են կոտորել 30 հազար անզեն մուսուլմանների և հիմա դրա համար նրանց պատժում են։ Հայ վկաներին ահաբեկում են, հետաքննական հանձնախումբը նրանց չի հավատում, մահմեդականը քրիստոնյայի հետ առերեսման ժամանակ միշտ արդարացի է դուրս բերվում։ Երիտթուրքերն իրենք են խոստովանում, որ չի հաջողվել հաստատել Աբդուլ Համիդի մասնակցությունն այդ կոտորածին... Ադանայի իրադարձությունների ժամանակ նրանք ուզում էին միանգամից հասնել երկու արդյունքի. առաջինը՝ դրանց ողջ պատասխանատվությունը բարդել Աբդուլ Համիդի վրա, դրանով նրան զրկել եվրոպացիների համակրանքից ու իրենց կողմը գրավել նրանց և, երկրորդ, թուլացնել անհանգիստ հայ տարրը Ադանայի վիլայեթում։ Հիմա Ադանայում ձերբակալված է ևս 362 հոգի, որոնցից 149-ը՝ մուսուլման և 213-ը՝

քրիստոնյա։ Հիրավի, անցյալ տարվա հուլիսից Թուրքիայի հայ բնակչությունը, որը հիացմունքով դիմավորեց նոր վարչակարգը և շատ նպաստեց դրա հաղթանակին, գլուխ բարձրացրեց. հավատ ընծայելով երիտթուրքերի խոստումներին՝ նա պահանջում էր իրավահավասարություն և պետական ծառայության մտնելու հնարավորություն։ «Հնչակ» կոմիտեն գուցեև ձգտում էր ավտոնոմիայի, բայց անկախ հայոց թագավորության մասին խոսք իսկ չի եղել, Ադանայում չի եղել նաև ո՛չ մի դավադրություն Թուրքական կառավարության դեմ, ո՛չ մի զինված ապստամբություն, ինչպես որ հիմա ուզում է ներկայացնել կառավարությունը, այլ պարզապես ապրիլի 1-ի առաջին կոտորածի ժամանակ հայերը ինչ-որ զենքով (որսորդական հրացան և այլն) պաշտպանում էին իրենց կյանքը, բայց եվրոպական զորքի գալուստը ապրիլի 16-ին և 17-ին սկիզբ դրեց նոր, է՛լ ավելի ուժգին կոտորածի։ Եթե ռազմական դատարաններն ուզենային անաչառ լինել, ստիպված կլինեին դատել իրենց զինվորների կեսին, «Միության և առաջադիմության» Ադանայի կոմիտեի շատ անդամների, մահմեդական այն կալվածատերերին, որոնք այժմ տիրել են սպանված ու փախած քրիստոնյա գյուղացիների հողերին... Ուստի զարմանալի ոչինչ չկա, որ իսկական մեղավորները անպատիժ մնան և որ Թուրքիայի քրիստոնյաները մի ավելորդ անգամ ևս համոզվեն, որ Թուրքը, «ծեր» անվանես նրան թե «երիտասարդ», կրոնական ատելությունից կամ քաղաքական մղումներից դրդված, էլի նույն մոլեռանդը կմնա։ Ադանա ուղարկված պառլամենտական հանձնախմբի անդամը՝ մի հայ պատգամավոր, հրաժարական տվեց, տեսնելով դատարաններում ճշմարտության դիտավորյալ աղավաղումը։

Կոտորածի համար մեղավորներից մեկը՝ վալի Ջևադ փաշան միայն պաշտոնից հանված է, բայց դատի չի տրված, մյուսները՝ սանիտարական տեսուչ Էշրաֆ փաշան և «Իթիհադ» թերթի խմբագիր Իհսան էֆենդին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ազդեցիկ անդամներ են։ Այս թերթը շարունակում է լույս տեսնել և տպագրել քրիստոնյաների դեմ գրգռիչ հոդվածներ...

Շտաբի պետի ժամանակավոր
պաշտոնակատար գեներալ-մայոր
Յուզենիչ

ЦГВИА, ф. 2000, оп, 1, д. 1004, л. 223—225.

97. ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլիս, 26 ապրիլի 1909 թ.

Երեկոյան թերթերը տպագրում են Ադանայում, Անտիոքի շրջակայքում և Սիրիայի այլ վայրերում տեղի ունեցած կոտորածների նկարագրություններ՝ սարսափելի մանրամասնություններով։ Թերթերի հաշվումներով 35 000-ից ավելի մարդ է սպանվել, այրվել են մի քանի տասնյակ գյուղեր։ Ադանան բոլորովին այրվել-ոչնչացվել է։ Իսկ Մերսինը փրկել է միայն արտասահմանյան հածանավերի ժամանումը։

«Тифлисский листок», 1909 г., № 93.

98. «ԱԴԱՆԱՅԻ ՍԵՎ ՕՐԵՐԸ» ԳՐՔԻՑ (1909 Թ.)

...Հաջորդ օրն իսկ այն նշանավոր ցույցի, որ կազմակերպված էր Կոստանդնուպոլսում «իսկական մահմեդականների» և կաշառված զինվորների կողմից, ծայր առան ընդհարումները Կիլիկիայում՝ սկսվելով Ադանայից։ Սա վարչական կենտրոնն է, բամբակի ու հացի բավականին աշխույժ առևտրի քաղաք...

Այդ օրվա [1909 թ. ապրիլի 1-ի] իրիկնադեմին քրիստոնյաներն սկսում են նկատել մահմեդականների առանձնապես անբարյացակամ ու կովաշունչ տոնը։ Ման եկող խմբերը... քայլում են՝ ձեռքներին մահակներ։ Մի քանի հայեր, որոնք պատահաբար անցնելիս են լինում Թուրքական թաղով, սպանվում են տեղնուտեղը։ Այս դեպքի լուրը տարածվելուն պես՝ կրպակներն ու արհեստանոցները փակվում են, յուրաքանչյուրն իրեն շտապ տուն է գցում ու փակվում ներսում։ Առավոտյան դեմ սկսվում են ամբոխի հարձակումները խանութների, տների վրա, կոտորում են ձեռքն ընկածներին։ Խանութների ավերումը կատարվում է անվրեպ. մուսուլմանների սեփականությունը պահպանվում է բոլորի կողմից։ Խանութներից հետո ամբոխը շարժվում է դեպի տները... մահակներով, կացիններով, հրազեններով կոտորելով ձեռքն ընկածներին։

Շփոթահար և խելակորույս հայերը պաշտպանություն են փնտրում հուսալի մուսուլմանների, հատուկենտ եվրոպացինե-

ri մոտ, ոչ օտարահպատակների դպրոցներում ու ֆաբրիկաներում։ Զենք ունեցողները, շուկան թողնելով կողոպտիչների քմահաճույքին, զուտ հայկական թաղամասի շուրջը բարիկադներ են սարքում և ինքնապաշտպանություն կազմակերպում, հարձակվողների գրոհներին պատասխանելով հրաձգությամբ։ Պաշտպանվողների դրությունը վատթարանում է հարևան հայկական գյուղերի և ագարակների ավերմամբ, որտեղից հաջորդ օրերին 5—7 հազար կանայք ու երեխաներ գալիս լցվում են քաղաք։

Գնդակները, դաշույնի և մահակի հարվածները գետնին են փռում հարյուրավոր բնակիչների... Հրդեհը, թալանը լրացնում են պակասը։ Քաղաքը բռնել է ողբ ու կոծ, անասնական ստոր բնազդները իրենց զգալ են տալիս ամեն քայլափոխի։ Երեք օր ու երեք գիշեր շարունակվում է ջարդն ու արյունահեղությունը քաղաքում։ Տեղական վարչությունը՝ հանձինս վալիի, կայազորի հրամանատարի և ոստիկանության պաշտոնյաների, ոչ մի միջոց չի ձեռնարկում։ Նրանց ներկայությամբ սպանվում են նահանգական խորհրդի անդամներ, կանայք, կողոպտվում են խանութներ։ Կարգ պահպանելու համար ռեդիֆներ են կանչվում և նրանց զենք է բաժանվում։ Վերջիններս խառնվում են բաշիբոզուկներին և է՛լ ավելի են վատթարացնում դրությունը։ Միակ բանը, որով զբաղված էին իշխանությունները, դա կոտորված հայերին հավաքելն ու կիտելն էր սայլերի վրա և տանել գետը թափելն էր։ Իշխանավորների այդպիսի գործելակերպի դեպքում զարմանալի չէ, որ կոտորածը տարածվում է մարզով մեկ...

Անցնում է մեկ օր, մեկ շաբաթ, 10 օր։ Հայերից շատերը, որոնք այդքան սարսափներ էին տեսել, գաղթում գնում են Եգիպտոս, Կիպրոս կղզին։ Հազարավոր վիրավորների տեղավորում են հապշտապ սարքված բարաքներում, բուժում դպրոցներում։ Կենդանի մնացածները սկսում են, թեև վախվխելով, երևալ փողոցներում...

Բայց ահա, բոլորի համար անսպասելի, կիրակի օրը՝ ապրիլի 14-ին, հրաձգություն է սկսվում հայկական թաղամասի բոլոր կողմերից... Հարձակումից հետո սկսվում է հրդեհը։ Քաղաքն այրվում է բոլոր կողմերից։ Հրշեջները հրդեհը հանգցնելու փոխարեն, ղեկավարության հրամանով, նավթ են լցնում քարաշեն դպրոցների, եկեղեցիների վրա, և քսանհազարանոց բնակչության կոծ ու կականի և չդադարող հրաձգության տակ

քաղաքը կողոպուտի է ենթարկվում ու ավերակների վերածվում...

Սակավաթիվ պաշտպանվողները և անմեղ տղամարդկանց բազմությունը գնդակահարվում են։ Կանայք երեխաների ու փրկված տղամարդկանց հետ բաց են թողնվում «ազգային հաղթահանդեսային դարպասի» միջով ու քշվում դեպի պ. Տրիպանիի և ուրիշ օտարահպատակների ֆաբրիկաների բակերը։ Ճանապարհին, հասկանալի է, նրանց ձեռքից խլում են այն ամենը, ինչը որևէ արժեք է ներկայացնում, կողոպուտի են ենթարկվում անվնաս մնացած տները։

Գավառում։ Ադանայի կոտորածն ու ջարդը ասես թե ազդանշան է դառնում քրիստոնյաների ընդհանուր կոտորածի համար, մանավանդ՝ հայերի։ Կոտորածների հենց առաջին իսկ օրը ավերվում են գյուղերից շատերը՝ Արդոզլուն, Քրիստիանքյոյը, Ինջիրլիկը, Կայերլիկը, Թեփրի-վերդին, ինչպես և հայերի ու այլ քրիստոնյաների մոտ 40 չիֆթլիկներ։

Ջարդի ալիքը կենտրոնից հաջորդ օրերին տարածվում է ավելի ու ավելի հեռուները, գավառի խորքերը։ Մեկը մյուսի հետևից կոտորվում են Մսիսի, Տարսուսի, Համիդիեի, Օսմանիեի, Կարաթամա Բախչեի և այլ վարչական կենտրոնների հայերը՝ շրջակա գյուղերով ու ագարակներով։ Այդ կետերի մեծ մասում ռեդիֆները, որոնք կանչված էին իբրև թե կարգ պահպանելու համար, միանում են բաշիբոզուկների ամբոխին, տեղական կառավարությունը կամ խրախուսում է, կամ սահմանափակվում բանավոր հորդորանքով, որը բանի տեղ չեն դնում։

Մեծ ճանապարհների մոտերքում եղած քաղաքներում ու բնակավայրերում, մեկ-երկու օր անց, ջարդը դադարում է, և ողջ մնացածները ապաստան են գտնում կամ ծանոթ մուսուլմանների մոտ, կամ վարչական շենքերում։ Շատ ավելի վատթար է վիճակը հեռավոր շրջաններում գտնվող, մուսուլմաններով շրջապատված գյուղերում։ Օսմանիեի և Բախչեի շրջաններում, օրինակ, լեռներում ու արտերում թաքնված տեղացի քրիստոնյաների և Անատոլիայից եկած հնձվորների քսան օր տևող մի իսկական որս է տեղի ունեցել։ Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսը, որը Հալեպից գնալիս է եղել Ադանա, պատմում էր, որ ջարդից 16 օր հետո Համիդիեի արտերն իրենցից ներկայացնում էին մարտադաշտ։ Մայիսի 28-ին, այսինքն՝ Ադանայի կոտորածից երկու ամիս անց, Ջիհանի ափին, Ավրադ Մաղրա կալ-

վածքում, ինձ վիճակվել է հաշվել 14 դիակ ու կմախք, որ գետը նետել էր ավազուտ ափը։ Չիֆթիլիկի տերն էլ ինձ ցույց տվեց մի այլ վայր, որտեղ կար 40 մարդկային դիակներից կազմված մի կույտ։ Ինջիրլիկում, Կայրքիում, Բախչեում և այլ գյուղերում հիմա էլ ջրհորերը լցված են նախկին տանտերերի դիակներով, և չկա մի կալվածք, որտեղ կանանց հառաչանքները չհիշեցնեն այն սարսափելի դեպքերը, որոնք տեղի են ունեցել այդտեղ 2—3 ամիս առաջ...

Չնայած բոլոր այդ զարհուրելի իրադարձություններին, մեծ սխալ կլիներ բոլոր, առանց բացառության, տեղացի մուսուլմաններին դնել մեկ կատեգորիայի տակ՝ որպես գլուխներն ու խիղճները կորցրած արարածների...

Օսմանիեում դերենդացի մի հասարակ առևտրական, մի քանի ուրիշ մարդկանց հետ փրկել է հարյուրից ավելի բնակիչների։ Նա իր մոտ է տարել բոլոր իրեն դիմած մարդկանց և կնոջ ու որդու հետ մի քանի օր կերակրել է իր տունը լցված մոտ 50 կանանց ու երեխաների։

Մի քանի օր անց, երբ կրքերը մի փոքր հանդարտվել են, նա նրանց մեկ առ մեկ տարել է կայմակամի կոնակը, բայց հետները մնացել է նրանց հանձնելուց հետո էլ՝ այնքան էլ չվստահելով վարչության օրինապահությանը։

Բնորոշ է, որ բավականին մարդասիրություն է դրսևորվել առավել «վայրենի» տարրերի՝ Աֆրինի հովտի քրդերի, Զուկուրովի կիսաքոչվոր յուրյուկների կողմից։ Սակավակիրթ անասնապահները չէին կարող, հավանաբար, տոգորվել հոգևոր դաստիարակների հայրենասիրական ու աստվածային խրատներով։ Մահմեդական մյուս տարրերից համեմատաբար իրենց լավ են պահել չերքեզները, որոնք լեռնային շրջանների բնակչության նշանակալի մասն են կազմում։

Ինձ հայտնի են երևելի չերքեզների և նույնիսկ մի չերքեզուհու անուններ, որոնք Համիդիեում, Տարսոնում, Հաճընում, Գյոքլունում, Ազազիեում և այլ վայրերում ոչ միայն մասնակցություն չեն ունեցել կողոպուտներին, այլև փրկել են շատ քրիստոնյաների, երբեմն էլ վտանգելով իրենց կյանքը...

Կարելի է վստահ լինել, որ... առանց իրենց՝ հայերի ինքնապաշտպանության իրադարձությունները շատ ավելի ծանր ընթացք կստանային... Ինչպես կոտորածի կենտրոնում՝ Ադանայում, այդպես էլ բոլոր վարչական մասերի կենտրոններում՝ Տարսուսում, Մսիսում, Անտիոքում, Օսմանիեում, Համիդիեում, Բախչեում, Ղարադաշում և Սորգեչիտում իշխանությունները կամ ուղղակի մասնակցություն էին ունենում, կամ խրախուսում էին ջարդարարներին իրենց հանցավոր անգործությամբ... Բաշիբոզուկներին խելքի բերեց նաև այն դիմադրությունը, որ ցուցաբերեցին հայկական բազմաթիվ փոքրիշատե նշանակալի բնակավայրեր, ինչպիսիք են՝ Քեսաբը, Զոք-Մարսվանը, Ֆինդիջախը, Շեյխ-Մուրադը, Շարդերեն, Տարսոնը, Հաճընը և այլն...

Շեյխ-Մուրադը կամ Շարդերեն, թեկուզև աննշան բնակավայրեր են, սակայն փրկվեցին առանձին անձանց հերոսական ջանքերի շնորհիվ։ Որսորդական հրացաններով զինված երեք կտրիճներ ամբողջ բնակչությանը հավաքելով գյուղի կենտրոնում, գրավելով գլխավոր կետերը և պաշտպանական տների պատերին հրակնատներ բանալով՝ այնպես արագորեն էին կրակ բացում տարբեր կետերից, որ հարձակվողները կարծեցին, թե, իբր, պաշարվածները նշանակալի ուժի տեր են, և սիրտ չարեցին գրոհի դիմել։ Երեք օր անց սպառվեց գյուղացիների ռազմամթերքը։ Նրանց մնում էր երկուսից մեկն անել. կամ հանձնվել ամբոխին, կամ փորձել թշնամական շրջանի միջով ճեղքել անցնել դեպի Ադանա՝ գյուղից երեք ժամվա ճամփա հեռու։ Նրանք կանգ առան երկրորդի վրա, և երրորդ գիշերը գյուղի բնակչությունը, իր ամբողջ ունեցվածքը թողնելով բախտի քմայքին՝ ճամփա ընկավ։ Ճամփին վխտում էին թալանչիների խմբերը, և անհրաժեշտ էր ծայրահեղ զգուշություն պահպանել։ Մայրերին հրամայված էր, որ երեխաների լացի ձայնը ոչ մի դեպքում չլսվի... Ճամփորդությունը հաջողվեց, բայց Ադանա հասնելիս ծծկեր երեխաներից մի քանիսին, որոնք կապված էին մայրերի կրծքերին՝ բերանները փակած վիճակում, հարկ եղավ թաղել։

Թեև Շեյխ-Մուրադը թալանվեց մինչև վերջ, իսկ անասունները թալանչիները բաժանեցին միմյանց միջև, այնուամենայնիվ բնակիչների փրկությունը մեծ պարտություն էր պաշարողների համար, քանի որ գյուղի պատերի տակ ընկած էին մի քանի տասնյակ բաշիբոզուկներ։

Շեյխ-Մուրադի պատմությունը աննշան փոփոխակությամբ կրկնվեց նաև այլ վայրերում... Սիս քաղաքում, որտեղ հայերը մահմեդականներից շատ են, վերջիններս միացան հայերին և

մի ամբողջ շաբաթ մեկտեղ պաշտպանում էին քաղաքը բաշիբոզուկներից։ Դա, այնուամենայնիվ, չխանգարեց, որ հայերի շրջակայքի բոլոր ագարակներն ու գյուղերը թալանվեին ու 500-ից ավելի մարդ կոտորվեր...

Շատ ավելի դժվարին էր Ջոք-Մարսվանի (Դորթ-Յոլ) պաշտպանությունը։ Այս խոշոր գյուղը Ալեքսանդրետից 6 ժամվա ճամփա հեռու է՝ Փայաս բերդի մոտ։ Այս և հարևան գյուղերն զբաղվում են նարնջի մշակությամբ և ջերամապահությամբ։ Գյուղից հեռու ընկած հատուկ ագարակներում գյուղացիներից շատերը, ինչպես և Պաղշարլի ավանի բնակիչները, զբաղվում են հացահատիկի մշակությամբ։

Հայերի տնակներն ու կավե խրճիթները, ավելի քան 100 ծուխ, թաղված են ստվերախիտ այգիներում՝ շրջապատված քարե պարիսպներով։ Մինչև հինգշաբթի օրը՝ ապրիլի 2-ը, գյուղում ամեն ինչ ընթանում էր իր կարգով։ Բայց այդ և հաջորդ օրերին ավերվեցին բոլոր ագարակները, ինչպես և հարևան Օթդաքլի ու Օզարլի գյուղերը,— ընդ որում վերջիններում սպանվեց մոտ 850 հոգի։ 8 ժամվա ճամփա հեռու Նաջարլին, դիմանալով հինգշաբթի ցերեկվա պաշարմանը, գիշերն ստիպված եղավ փախչել ապաստանել Ջոք-Մարսվանում։ Վերջինս ապաստան տալով դրսեցի մոտ 5000 մարդու, ամուր ինքնապաշտպանություն կազմակերպեց ընդդեմ 20—30 հազար ռեդիֆների և բաշիբոզուկների, որոնք ավարի էին եկել Ջուկորովից, Մարաշից, Այնթապից և Քյոմդ-Դաղից։ Գյուղի շուրջը կառուցվեց մոտ 150 պաշտպանական հրակնատ։ Ամբողջ երիտասարդությունը բաժանված էր ըստ հրակնատների։ Հապշտապ ստեղծված արհեստանոցում հարյուրից ավելի մարդ էր աշխատում։ Վառոդ էին սարքում, փամփուշտ լցնում, յուրատեսակ հրանոթներ շինում երկաթալարով փաթաթված հաստ գերաններից։

Առաջին օրերի սարսափներից հետո տղամարդկանց միացան մոտ 100 աղջիկ ու ջահել կանայք՝ զինված նիզակներով ու գերանդիներով։

Բաշիբոզուկների առաջին հարձակումները հաջողությամբ հետ մղվեցին...

Հայերն արդեն նախապատրաստվում էին վերջին ընդհարմանը. շինել էին մոտ 3000 նիզակ, որոնցով գրոհի դեպքում ենթադրվում էր զինել մնացած կանանց ու պատանիներին։

Որոշված էր հանդուգն արտագրոհ կատարել՝ ջուրը հետ խլելու կամ դեպի Ալեքսանդրետ ճեղքել-անցնելու համար։

Եվ ահա պաշարման 13-րդ օրը Ալեքսանդրետում եղած հյուպատոսների ու միսիոներների միջամտությամբ թուրքական նավի վրա հայտնվեց հաշտարար մի հանձնախումբ՝ բաղկացած Ալեքսանդրետի միսիոներից և հյուպատոսներից։ Վերջիններիս հազիվ հաջողվեց բաշիբոզուկներին համոզել և ստիպել, որ ցրվեն։

Անհետաքրքիր չէ նշել, որ պաշարման ամբողջ ժամանակաշրջանում հայերի կողմից Ջոք-Մարսվանում սպանվել է ընդամենը 6 հոգի, մինչդեռ կոտորածի առաջին իսկ օրը հարևան Օթդաքլի, Օզարլի գյուղերում և մյուս ագարակներում կոտորվել է 350 հոգի, չհաշված 650 թալանված և կրակի մատնված շինությունները։ Ըստ լուրերի, Ջոք-Մարսվանի պատերի տակ ընկել են ոչ պակաս թվով մուսուլման-բաշիբոզուկներ, ինչը չէր կարող խրախուսել նրանց, որ շարունակեին իրենց ասպատակությունները այլ վայրերում։ Այս բոլոր փաստերը նոր ապացույցներ են, որ Թուրքիայում կրոնա-ազգային հուզումների պահին ավելի շատ պետք է հույսը դնել սեփական ինքնապաշտպանության վրա։

Դրա լավագույն ապացույցն է Զեյթունի ճակատագիրը։ Զեյթունը հայկական միակ շրջանն է Փոքր Ասիայում, որը հայերի լիակատար ստրկացման ժամանակաշրջանում պահպանեց մուսուլմանների հետ իր իրավահավասարությունը։ Շնորհիվ իրենց բնակավայրի լեռնային դիրքի՝ զեյթունցիները ոչ միայն զենք են կրում, այլև բազմիցս հարվածներ են հասցրել թուրքական զորքերին։ Նույնը պատահեց նաև 1895—96 թթ. կոտորածներին, երբ էհդեմ փաշայի 30-հազարանոց բանակը ջախջախվեց 4500 զինվոր ունեցող լեռնցիների կողմից և երբ եվրոպական հյուպատոսների միջնորդությամբ նրանց հետ հայերի համար համեմատաբար պատվաբեր դաշինք կնքվեց...

Ջարդն ու կոտորածը Ադանայում, ինչպես որ եղել էր 1895—96 թթ., ուղեկցվում էին կողոպուտներով։

Հայերի ողջ ունեցվածքը՝ անասուն, գործիքներ, ամանեղեն, անկողիններ, հացի պաշարներ, նույնիսկ դռներ ու լուսամուտների փեղկեր, բացարձակապես ամեն բան, ինչ որևէ արժեք էր ներկայացնում,— թալանեցին տարան։ Իսկ մնացածը, որ հնա-

բավոր չէր տանել, ինչպիսիք էին՝ տունը, ծանր գործիքները, ծառերը, կրակի մատնեցին կամ ջարդոտեցին։

Ընդ որում ուրիշի ունեցվածքը ոչնչացնելու համար ոչ ջանք էին խնայում, ոչ էլ նենգ հնարամտություն[15]...

С. З., Аданские черные дни, Баку, 1909.

99. ՋԱՐԴԵՐՆ ԱԴԱՆԱՅՈՒՄ

(Ա. Ադոսիդեսի[16] «Հայերը և երիտթուրքերը» գրքից)

Առաջին կոտորածն Ադանայում։ Ապրիլի 9-ից մինչև 14-ը [1909 թ.] Ադանայի մուսուլմանների մեջ անվերջ ժողովներ ու գաղտնի հավաքույթներ են տեղի ունենում։ Նրանք միմյանց հետ պայմանավորվում են նաև շուկայի կրպակներում և նույնիսկ փողոցում։ Նրանք ակնհայտորեն առիթ են փնտրում հայերին դրդելու անկարգության։ Եթե հայ է անցնում, վիրավորում են, հրում, հետևից թքում կամ դիմավորում ծաղր ու ծանակով։ Ապրիլի 12-ին՝ Զատկի երկրորդ օրը, փողոցում սպանում են երկու հայերի, հաջորդ օրը՝ ապրիլի 13-ին, սպանում են երրորդին։ Լուրեր են տարածում, թեև միանգամայն կեղծ, թե գյավուրներից մեկը վիրավորել է մի թուրք կնոջ և սպանել նրա ամուսնուն։ Պնդում են, թե հայերը պատրաստվում են մասսայաբար ոչնչացնել թուրքերին, կարճ ասած, հոգում են, որ մրտքերը շարունակ գրգռված մնան։ Դա Հայաստանում ամեն մի կոտորածի դասական սկիզբն է։ Ապրիլի 15-ին, օրվա երկրորդ կեսին, լուր է հաղորդվում Կոստանդնուպոլսում բռնված հուզումների մասին։ Փադիշահը, ինչպես ասում են, պատժի է ենթարկում կրոնի բոլոր հակառակորդներին և պահանջում է հարգել շարիաթի օրենքները։ Երեկոյան Ադանա քաղաքը բաշիբոզուկների իշխանության տակ է ընկնում... Նրանց կանչել բերել են շրջակայքից և նույնիսկ հեռավոր գյուղերից... Նրանք զինված են ծայրերը հաստ, վրան մեխեր տնկոտած մտրակներով, կացիններով, կեռ թրերով, եղաններով։ Միայն քչերի մոտ կա հրազեն։ Շատերը զորանոցներն են գնում զենք ձեռք բերելու։

Այդ ընթացքում Ջևադ բեյի մոտ (Ադանայի վիլայեթի նահանգապետը) տեղի էր ունենում խորհրդի նիստ՝ անձամբ նրա նախագահությամբ։ Բարձր աստիճանավորները, ուլեմները և

անվանի քաղաքացիները՝ կողմնակիցներն այն բանի, որ վաղը պետք է պատժել հայերին։ Մեն-միայն Հաքիմը՝ դատարանի նախագահը, առարկում է այդ որոշման դեմ և առաջարկում, որ եթե լուրջ հուզումներ սկսվեն, ի խրատ մյուսների, պատժեն խռովարար մուսուլմաններին։ Բայց հաղթող է դուրս գալիս հակառակ կարծիքը։ Հայերը նույնիսկ պնդում են, որ իբրև թե մուֆթին որոշման փոխարեն արտասանել է սովորական ասույթը. «Թույլատրվում է սպանել անհավատներին և տիրանալ նրանց ունեցվածքին»։

Սակայն Ջևադը հանգստացնում է օտարերկրացիներին ու հայերին, որոնք բնակիչների և բաշիբոզուկների վարքից անհանգստացած՝ գալիս են նրա մոտ տեղեկություններ ստանալու։

«Երեքշաբթի երեկոյան ժամը 9-ին,— գրում է ամերիկացի միսիոներներից մեկը՝ Ուիլյամ Չեմբերսը,— գնացի նահանգապետի մոտ։ Նա պնդեց, թե բոլոր նախազգուշությունները ձեռք են առնված, որպեսզի կարգ ու անվտանգություն ապահովվի...»։

Համարյա բոլորը հավատում են այս պնդումներին։ Դրա համար էլ հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, Զատկի տոներից երեք օր հետո, հայկական, ֆրանսիական, ամերիկյան դպրոցները իրենց դռները բացում են հաճախող չորս հազար աշակերտների առաջ։ Այգեգործները, հերկվորները գնում են դաշտերը, խանութպանները գնում են շուկա։

***

Վաղ առավոտից ջարդարարների նոր խմբեր, որոնք արդեն հմտացել էին շրջակա ագարակներում սպանություններ անելով, ներխուժում են քաղաք։ Հիշարժան մի մանրամասն. բոլոր մուսուլմանները՝ բարձր պաշտոնյայից մինչև հետին թափառաշրջիկը ի ցույց էին հանել սպիտակ փաթթոցները։ Այդ գլխանոցը՝ իսլամի գիտնական աստվածաբանների գլխանոցը, միաժամանակ ծառայում է որպես կրոնական խորհրդանիշ և տարբերիչ նշան, քանի որ ընդհարման ժամանակ օգնում է տարբերել ուղղադավաններին անհավատներից։ Մի այլ նախազգուշություն էլ էր ձեռք առնվել, որպեսզի խուսափեին տհաճ խառնաշփոթություններից. մահմեդականներին պատկանող բոլոր կրպակների վրա նշված էր «իսլամ» բառը, որը պետք է դրանց

ազատեր թալանից ու հրդեհից։ Առավոտյան ժամը 7-ից խմբերը են հավաքվում, գլխավորապես շուկայում, որտեղից շուտով պետք է ամեն ինչ սկսվի և որտեղ նախքան կոտորածի բռնկումը պիտի թալանվեն հայերի խանութները, և ամենից առաջ՝ ոսկերիչներինը։ Խուճապ է ընկնում։ Վաճառականներից շատերը հապշտապ հավաքում են ցուցադրված ապրանքները, փակում կրպակները։ Սակայն վալին առաջվա պես բարեհաճորեն, հայրաբար սրտապնդում է [հայերին] և շռայլում կեղծավոր հավաստիացումներ... Նա նույնիսկ համոզում է հայոց եկեղեցու սպասավորներին, որ գնան ժողովրդին կոչ անեն վերադառնալու իրենց գործերին։ Վախենալու բան չկա։ Ինքը պատասխանատու է դրա համար։ Ինքը երդվում է։

«Ցավոք սրտի, ես պետք է ասեմ,— գրում է պարոն Ջեմբերսը,— որ ես ինքս էլ հավատալով վալիի խոսքերին՝ շատ վաճառականների համոզեցի բացել իրենց կրպակները»։

Ապրիլի 14-ի առավոտյան բռնկված իրադարձությունների մասին մեզ մոտ շատ բաներ են պատմում, որոնցից մի քանիսը՝ շատ հանգամանորեն։ Սահմանափակվենք մի քանի հատվածներով մի հաշվետվության, որը հասցեագրված է մայոր Դոտի-Վիլիին՝ Մերսինի անգլիական հյուպատոսին և ներկայացված է պատվելի Հերբերտ Ադամս Գիբբոնսի՝ Տարսոնի ամերիկյան դպրոցի դասատուի և «Նյու Յորք հերալդ»-ի թղթակցի կողմից։ Պարոն Գիբբոնսը, որը, ինչպես և պարոն Ջեմբերսը, հաջորդած սարսափելի օրերին աչքի է ընկել խիզախությամբ ու անձնուրացությամբ, Ադանայի շուկայի փողոցներում առավոտյան ժամը 7-ին «շրջագայություն է կատարել զննման նպատակով»։

«Ծածկած շուկայում ես նկատեցի,— գրում է նա,— որ հայերի խանութները բաց չեն և որ դրանց հարող դեռ բաց խանութները արագ-արագ փակվում էին։ Ես կանգնեցի թուրք զինագործների երկու կրպակների դիմաց, որտեղ մուսուլման խոջաները գնումներ էին կատարում։ Հետո գնացի դեպի հայոց թաղը...

Պարոն Ջեմբերսն ու ես դեռ դուրս չէինք եկել հայոց թաղից, երբ մեզ ընդառաջ ելավ մի արյունաշաղախ պատանի։ Նրան ծեծել էին թուրքերը, որոնց մենք հանդիպեցինք մի քիչ ավելի հեռվում՝ մի փողոցի շրջադարձում։ Ամբողջ ճանապարհը լցված էր թուրքերով՝ փայտերով զինված, և փայտերի ծայրերին՝ մեծ ծապավենակապեր։ Դրանք հապշտապ ձեռքն առած փայտերի

տպավորություն չէին թողնում, այլ երևում էր, որ նախապես հավաքած պատրաստած էին եղել։ Փողոցները թուրքերի իշխանության տակ էին դեռևս խժդժություններն սկսվելուց առաջ։ Ես այդ բանը առանձնապես եմ պնդում։ Վախեցած հայերը փախել էին իրենց թաղամասը, բացառությամբ ատրճանակներով զինված մի խումբ պատանիների, որոնք հավաքվել էին շուկայի կենտրոնում, որպեսզի պաշտպանեին իրենց խանութները...

Մենք գնացինք դեպի սերայ*, ցանկանալով ճեպագիր հղել և տեսնել վալիին, շուտով մենք դեմառդեմ ելանք Ֆերիկին՝ հայոց եպիսկոպոսի տեղապահի ուղեկցությամբ։ Նրանց հետևից գալիս էր զինվորների պահակախումբը։ Մենք միացանք նրանց։ Երբ մենք թեքվեցինք կողքի փողոցներից մեկը, որը տանում է դեպի բաց շուկա, նկատեցինք կողոպտիչներին, որոնք ջարդել էին մի կրպակ և ապրանքները հափշտակում էին։ Ֆերիկը սահմանափակվեց նրանով, որ կողոպտիչներից մեկի ձեռքից առավ փայտը և ձեացրեց, թե ուզում է խփել նրա գլխին։ Մենք մոտեցանք բաց շուկայի մուտքին։ Մեզանից 150 յարդ հեռու հավաքված էր հոծ, կատաղի մի ամբոխ...

Ժամը 11-ին մոտ քաղաքի շատ տեղերում կրակոցներ հընչեցին, սկզբում՝ ընդմիջումներով, այնուհետև կրկնակի արագ, և, վերջապես, թափվեցին կարկտի պես։ Բոլոր կողմերից կանչեր էին լսվում. «Փրթե՛ք, փրթե՛ք գյավուրներին»։ Այդ կանչերն այնքան գազանային էին, որ երբեմն խլացնում էին հրացանների ձայները։ Ամբողջ քաղաքով մեկ հետապնդում էին մարդկանց, գրոհում սարսափից խելակորույս ժողովրդի վրա։ Տղամարդիկ, կանայք, երեխաները փախչում էին ամեն կողմ, գլխակորույս, աննպատակ, բախվում պատերին, վայր ընկնում, ինչպես կայծակնահար։ Նրանց սպանում էին հրացանների կրակոցներով, դանակներով, մահակներով, կացիններով, քարերով։ Ահա 30—40-հոգանոց ավազակների մի ամբոխ կատաղորեն հարձակվում է հենց մեկ զոհի վրա. մեկ երեխայի վրա երևում են 50-ից ավելի թրի ու դանակի հարվածներ։ Մյուս ավազակները հսկում են նրբանցքների մուտքերի մոտ՝ հանկարծակիորեն հարձակվելով փախչող հայերի վրա։ Զորամասերը գործում են

* Սերայ կամ կոնակ— կառավարական շենք, որտեղ տեղավորված են Բելեդիեն՝ քաղաքապետարանը, հեռագրատունը և այլն։

խուժանի հետ համատեղ։ Լինում են սպաներ, որոնք փորձում են հետ պահել իրենց մարդկանց, բայց խոջաները միջամտում են և արագորեն իրենց հետևից տանում նրանց, ովքեր տատանվում են։ Սակայն,— գրում է անգլիական հյուպատոսը,— «բոլոր խոջաները չէ, որ միաբան էին։ Ինձ հանդիպել են և այնպիսիները, որոնք ջանում էին հանդարտեցնել ամբոխին։ Ուրիշներն էլ, խլելով հրացանները, իրենք էին կրակում»։

Սպանում են իշխանության աչքի առաջ, ոստիկանների համագործակցությամբ, ոստիկանների, որոնք ինչպես որսահաղածներ, մարդասպաններին մատնացույց են անում որսի տեղը, որը կարող էր սպրդել նրանց ձեռքից։ Եվ ամենուրեք, սպանություններից հետո, սկսվում է թալանը, թալանից հետո՝ հրդեհը։

Մի կաթոլիկ միսիոներուհի՝ քույր Մարիա-Սոֆիան, գրում է.

«Մենք լսում ենք դռների շրխկոց, որոնք տեղահան են անում, սեյֆերի շրխկոց, որոնք ջարդում են, տեսնում ենք կահույք, որ փողոց են շպրտում...»

Իրիկնադեմին մի քանի տեղից միաժամանակ հրդեհներ են սկսվում։ Տների վրա նավթ են լցնում ու վառում։ Ամբողջ ընտանիքներ են դրանց մեջ խեղդվում մեռնում, ածխանում։ Այն դժբախտները, ում հաջողվում է դուրս պրծնել բոցերից, տեղնուտեղն ընկնում են մարդասպանների լեգեոնների ձեռքով, որոնք կրնկակոխ հետապնդում, որսում են նրանց։

Այնուամենայնիվ իրենց երեք թաղերում հայերը լավ են պաշտպանվում։ Շատ տեղերում նրանց վիճակվում է դիմանալ 24, 48 ժամ՝ մի քանի անգամ հետ մղելով հարձակվողների գրոհը, նրանց նույնիսկ խոշոր կորուստներ պատճառելով։ Տեր-Կապուում նրանք գրավում են մզկիթը և փախուստի մատնում թուրք հրոսակախմբերին։ Տեղ-տեղ հինգ հոգուն հաջողվում է հաղթել մի ամբողջ ավազակախմբի։ Ոմանք նույնիսկ համարձակ արտագրոհ են կատարում, որպեսզի օգնություն ցույց տան հայերի առանձին տների։ Որոշ տեղերում գրոհին մասնակցող ավազակախմբերը ստիպված են լինում նահանջել այն պատճառով, որ հարձակվողները թեև ավելի բազմամարդ են և ավելի լավ զինված, սակայն գործում են բաց տեղում, մինչդեռ հայերը լավ ամրացած լինելով որոշ փողոցներում՝ մարտնչում են կատաղի խիզախությամբ։ «Մուսուլմանները,— գրում է մի հյուպատոս իր մասնավոր նամակում,— հայերի պաշտպանությունից վրդովված ու գազազած՝ էլ ավելի կատաղի են դառնում»։

Հաջորդ օրը՝ հինգշաբթի, ապրիլի 15-ին, գործողությունները դառնում են ավելի կազմակերպված ու մեթոդիկ...

Կոտորածը շարունակվում էր ապրիլի 15-ի ամբողջ օր ու գիշերվա ընթացքում և հաջորդ՝ ուրբաթ օրը, ամսի 16-ին։ Դրանք կոտորածի, սարսափների, հեշտասիրության հազարավոր պատկերներ էին, որոնք երևակայությունը չի կարող պատկերացնել։ Քաղաքը այնպիսի մարդկանց իշխանության տակ է, որոնք այլևս մարդկային ոչինչ չունեն։ Նրանք վրա են տալիս, սպանում, խոցում, փրթում, կտոր-կտոր անում և հեռանում, հևալով, քրտինքով ու արյամբ շաղախված, ոռնալով ինչպես վայրի գազաններ։ Նրանք ներխուժում են տները, եկեղեցիներն ու դպրոցները, որոնք լեփ-լեցուն են փախստականներով։ Զոհերը հարյուրներով նետվում են նեղ ու ծուռումուռ փողոցները ելք փնտրելու և հանկարծ նրանց կանգնեցնում է հրդեհը, դիակների ու վիրավորների կույտը՝ իսկական մի բարիկադ մարդկային մարմիններից, կամ էլ՝ մարդասպանների մի այլ ոհմակ։ Որոշ տեղերում հայերին սպանում են զանգվածաբար, 100—200 հոգի՝ մի փոքրիկ հողակտորի վրա։ Եվ միշտ, սպանություններից հետո, գալիս է թալանի հերթը։ Կահույքը բարձում են սայլին ու տանում... Հետո նավթ են շաղ տալիս տներում և մեկը մյուսի հետևից վառում։ Տները մեծ մասամբ փայտից են և բոցավառվում են ծղոտի պես ու պայթում են ինչպես հրթիռը։ Եվ չնայած այն բանին, որ չորս կողմից շրջապատված են զինվորներով, խուժանով և հրդեհի բոցերով, այնուամենայնիվ որոշ փողոցներում հայերի մի քանի խմբեր դեռ դիմադրում են։

Ադանայում, ինչպես և ամբողջ գավառում, գոյություն ունի մի լոզունգ. խփել միայն հայերին։ Մի քանի դեպքերում այս արգելքը խախտվել է և վերջին հաշվով ցուցակներում լինելու են նաև մի քանի հարյուր հույներ ու ասորիներ։ Բայց սրանք սպանվել են որպես բացառություն կամ սխալմունք։ Շարժումն ուղղված է ընդդեմ ատելի ռասայի, ընդդեմ հայերի։ Իսկ նրանց մեջ թուրքերը հատուկ թշնամանք են տածում տղամարդկանց հանդեպ։ Ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես նախնադարյան մարդկանց ու վայրենիների մոտ է եղել, իսլամի այս պատերազմներում և խաղաղ ժամանակ կազմակերպվող զանգվածային սպանություններում, սովորույթ է դարձել ոչնչացնելու արական

բնակչությանը։ Ինչ վերաբերում է կանանց ու երեխաներին, ապա դրանց ստրկության են դատապարտում և մարգարեի հավատին դարձնում։ Ամենից շատ խնայում են աղջիկներին, որոնցով համալրում են հարեմները։ Ադանայի կոտորածի ժամանակ այս կետն էլ է խախտվել. շատ կանանց, աղջիկների ու պատանեկան հասակի երեխաների սպանել են անլուր դաժանությամբ, ամենից հաճախ՝ ծանրագույն անարգանքներ հասցնելուց հետո։

Այն, ինչը ընդհանրապես ապշեցնում է Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների մեջ, դա դաժանությունն է և աներևակայելի ցինիզմը, որով ոչնչացվում են մի ամբողջ ժողովուրդ...

Տիկին Դոտի-Վիլին գրում է.

«Թուրքերը միանգամից չեն սպանում տղամարդկանց, և մինչ վերջիններս լողում են արյան մեջ, նրանց կանանց բռնաբարում են նրանց աչքի առաջ»... Որովհետև նրանց սպանելը դեռ բավական չէ։ Խեղում են, տանջում։ «Մենք լսում ենք,— գրում է քույր Մարիա-Սոֆիան,— դժբախտների աղեկտուր ճիչերը, վայունները, որոնց փորերն են ճեղքում, որոնց կտտանքի են ենթարկում»։

Շատ վկաներ պատմում են, որ հայերին ոտքերից գլխիվայր կախում էին և կացինով փրթում, ինչպես անասուններին սպանդանոցում։ Ոմանց կապում էին փայտե մահճակալին և մահճակալը վառում։ Շատերին ողջ-ողջ մեխում էին հատակին, դռներին, սեղաններին։

Կատարվում են նաև հրեշավոր կատակներ, չարամիտ զվարճություններ։ Հային բռնում են, կապում և նրա անշարժ ծունկների վրա կտոր-կտոր անում կամ սղոցում նրա երեխաներին։ Հայր Բենուան, ֆրանսիացի միսիոներներից, հաղորդում է նաև այլ կարգի արարքների մասին.

«Դահիճները ձեռնածություն էին անում նոր կտրած գլուխներով և նույնիսկ ծնողների աչքի առաջ վեր էին նետում փոքր երեխաներին և իրենց սակրերի ծայրերով որսում օդի մեջ»։

Կտտանքները լինում են մերթ կոպիտ, մերթ ճարտարորեն նրբահնար։ Որոշ զոհեր ենթարկվում են մի ամբողջ շարք կրտտանքների, որոնք կատարվում են հույժ անբասիր արվեստով, որպեսզի ավելի երկարացնեն նահատակի կյանքը և դրանով իսկ երկարացնեն իրենց բավականությունը. նրանց խեղում են

դանդաղորեն, չափավոր, քաշելով նրանց եղունգները, կոտրելով նրանց մատները, շիկացած երկաթով դաջելով նրանց մարմինները, գանգից քերթում են նրանց գլխամաշկը, ի վերջո նրանց վերածում են խյուսի, որ նետում են շներին ի կեր։ Ոմանց ոսկորներն են մի քիչ կոտրում, ոմանց խաչում են կամ վառում որպես ջահ։ Զոհի շուրջը հավաքվում է ամբոխը, որը զվարճանում է՝ նայելով այդ տեսարանին և ծափահարում խոշտանգվողի ամեն մի շարժման հետ։

Երբեմն դա սոսկալի զազրելիություն է լինում, սադիստների խրախճանք։ Կտրում են հայի վերջույթները, ապա ստիպում են ծամել սեփական մարմնի կտորները։ Խեղդում են կանանց՝ նրանց բերանները խցկելով իրենց իսկ երեխաների միսը։ Ոմանց փորերն են ճեղքում և նրանց քառատված երեխայի փոքրիկ մարմինը, որը քիչ առաջ մոր ձեռքին է եղել, խցկում են խոր բացված վերքի մեջ։

Ադանայի երկրորդ կոտորածը։ Հիշենք ապրիլի 24-ը, շաբաթ օրը. դա մի ամսաթիվ է, երբ երիտթուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը[17]։ Դա նաև այն օրն է, երբ Ադանա ժամանեցին ռումելիացիների սահմանադրական դումարտակները։ Վաղը կիրակի է՝ ապրիլի 25-ը, երբ բռնկվելու է երկրորդ, առաջինից ավելի ահավոր կոտորածը։

Ապրիլի 22-ից՝ հինգշաբթի օրվանից, հայերը զգուշացվել են։ Այդ օրը «Իթիդալ» թերթի մի թունոտ հոդվածում, որտեղ երիտթուրք Իսմայիլ Սեֆան հանդես էր եկել որպես թուրքական կարծիքի մեկնաբան, ասվում էր.

«Այն, ինչ կատարված է, դեռ ամեն ինչ չէ, դա անբավարար է։ Մենք միայն կարճատև դադար ենք առել։ Բայց մենք դեռ կտեսնենք, թե այդ ամենն ինչով կվերջանա...»

Դա հակիրճ էր ու պարզ։

Այդ ընթացքում իշխանությունները բանտերն են նետում բազմաթիվ աշխատունակ մարդկանց, հասկանալի է, հայերին։ Նրանք մանրազնին խուզարկում են ձեռք չտված տները ու բռնագրավում ամբողջ զենքը։ Հրամանը կտրական է. հայերը պարտավոր են հանձնել ատրճանակները և ռևոլվերները. դա պայման է հանդիսանում հանգստության պահպանման,— հայտարարում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական պաշտոնյաները։ Հայերը, հոգեպես միանգամայն ընկճված,

աղետից ճնշված՝ ենթարկվում են հրամանին։ Ասենք, ընդդիմության ամեն մի փորձ անօգուտ էր։

Մուսուլմաններն, իհարկե, չեն զինաթափվել։ Ընդհակառակը՝ հրացաններ, մահակներ, զինամթերք են ձեռք բերել, ամեն ինչ՝ ընդհուպ մինչև պոմպեր ու նավթ, որոնք անհրաժեշտ էին հրդեհ գցելու համար։ Պահանջել են մարդասպանների նոր համալրում, հրդեհաշեջներ են հավաքել, կարճ ասած, նախատեսել են ամեն ինչ, նախապատրաստել ամեն ինչ, որպեսզի այս անգամ գործողությունը ի կատար ածվի արագ, արմատականորեն, անսխալ։

Քաղաքի հայ բնակչության մեծ մասը իրենց օջախներից զրկված՝ կուտակվել էին եկեղեցիներում, դպրոցներում և միսիաներում։ Այդ տեղերում էին ապրիլի 17-ից հետո ապաստանել նաև հարևան գյուղերի փախստականները (մեծ մասամբ կանայք ու երեխաներ, քանի որ տղամարդիկ ոչնչացված էին), փրկվելով ավազակախմբերից, որոնք գյուղերում վայրագություններ էին անում։ Ոչ մի հայ չի կարող քաղաքից դուրս գալ։ Մարդկանց այս զանգվածին, որը կենտրոնացած է մի քանի տեղերում, հեշտ կլինի շրջապատել ու հրկիզել, ինչպես միջատների։

***

Կիրակի օրը՝ ապրիլի 25-ին, ժամանում են երիտթուրքերի զորամասերը։ Առավոտյան և օրվա երկրորդ կեսին հայերը, եկեղեցում ժամասացությունից հետո, սկսում են ինչ-որ բան հուսալ, բայց դեռ սահմանադրական գումարտակը չէր հասցրել Կիշլա-Մեյդանի շրջանում՝ քաղաքի դարպասների մոտ, տեղավորվել, երբ հնչեցին կրակոցները։ Դա զինվորները և Ջեադի մարդիկ են հրացաններ կրակում. կոտորածի ղեկավարներին շուտով հաջողվեց համոզել ռումելիացիներին, որոնք արդեն դժգոհ էին, որ իրենք ստիպված պիտի լինեն պաշտպանել քրիստոնյաներին իրենց հավատակիցներից, թե հայերը հարձակվել են սրանց վրա, թե այդ գյավուրները խռովարարներ են, թե նրանք ոչնչացրել են մուսուլմաններին, թե նրանք մտադիր են նոր հարձակում գործել։

Այդ մեղադրանքները կայծակնորեն իրենց արդյունքը տվեցին, և երբ հետո՝ երեկոյան ժամը 5-ին, ավազակախմբերը

գրոհի են նետվում փախստականների ապաստան շենքերի վրա, «ազատագրական բանակի զինվորները» քայլում են մարդասպանների ու հրձիգների առաջն ընկած։ Ահա հայկական խոշոր մի հիմնարկությունն՝ Աբգարյան քոլեջն ու գիշերօթիկը, որտեղ կուտակված են երկու հազար հոգի, որոնց մեջ շատ հիվանդներ կան, կան անցյալ շաբաթվանից հետո կենդանի մնացածներ։ Զորամասերը շրջապատում են շենքը, հրշեջները նավթ են լցնում վրան, և՛ սրանք, և՛ նրանք ծխացող մեծ ջահերով կամ բամբակի բոցավառվող հակերով հրդեհում են։ Շուտով դրպրոցը վերածվում է բոցավառվող խարույկի, որտեղից լսվում են զոհերի սրտակեղեք ճիչերը և բարձրանում է այրվող մարմինների կսկծացնող, հեղձուցիչ հոտը։

Մի ականատես ինձ ասաց. «Խորաբաց մեծ անցքի միջով արդեն ածխացած դիակների կույտի վրա ես տեսա մարդկանց, որոնք ոռնալով սողում էին, դեսուդեն խփվում, գալարվելով դաժան տառապանքների մեջ։ Հետո այլևս ոչինչ չտեսա. սարսափելի տեսիլքը չքացավ ծխի, կայծերի ու բոցերի մրրիկի մեջ։ Սահմանադրական զորքերը, այդ խարույկի շուրջը կանգնած, գնդակահար էին անում յուրաքանչյուրին, ով որ փորձում էր փախչել»։

Այս վերջին մանրամասնը հաստատվում է բոլոր վկաների պատմածներով։

Աբգարյան դպրոցից հետո հերթը գալիս է մյուս դպրոցներին, եկեղեցիներին, հայոց առաջնորդարանին, հունական եկեղեցուն, ս. Հովսեփի վանքի քույրերի գիշերօթիկին, ս. Պողոսի ֆրանսիական քոլեջին։ Այս շենքերը, որոնք ապաստան էին տվել հայերին, հեղեղվում են փախստականների նորանոր խմբերով, որոնց հետևից ընկած՝ փողոցներով հետապնդում են հրոսակախմբերը։

«Այս անգամ,— գրում է քույր Մարիա-Սոֆիան,— փախստականները ներս էին մտնում ոչ միայն դռնից. նրանք բարձրանում էին դարավանդների վրա, սյուների վրայով մագլցում էին պատշգամբները, որոնք նմանվել էին մարդկային կախված ոգկույզների։ Մեր աչքի առաջ գնդակները գալիս էին դիպչում այդ խեղճ մարդկանց։ Նրանք ավելի էին ցնորվել, քան անցած անգամ»։

Սակայն բավական է այդ իրադարձությունների մասին, որտեղ կրկնվում են այն նույն չարագործությունները և սարսափ-

ները, որոնց մասին արդեն խոսվել է։ Շենքերը մեկը մյուսի հետևից այրվում ու կործանվում են։ Ի վերջո չոր անտառի պես սկսեցին բոցավառվել այդ հայկական քաղաքի մնացորդները՝ տների մի մեծ խումբ։ Այդ գիշերն ու հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին, Ադանայի վրայով ասես կրակե մրրիկ էր անցնում։ Իսկ կողոպուտը շարունակվում էր 24 ժամ անընդմեջ։ Սահմանադրական զորքի զինվորները գործուն մասնակցություն էին ունենում դրանում, իսկ մի քանի օր անց, նրանք սպաների հրամանների տակ անցնում էին Մերսինի փողոցներով և փոխադրամիջոց բարձրանում՝ թալանված իրերը ձեռքներին։

Ապրիլի 26-ին, օրվա երկրորդ կեսին, սկսեցին հավաքել դիակները... Երեքշաբթի օրը՝ ապրիլի 27-ին, ոճրագործություններն սկսեցին նվազել։ Մի քիչ ավելի հետո հրացանների երկարատև համազարկերը վերջին տագնապն առաջացրին։ Բայց դա, ինչպես պարզվեց, սոսկ սալյուտ է եղել՝ ի պատիվ նոր սուլթան Մեհմեդ V-ի։ Երեկոյան ռազմանավերը, որոնք խարիսխ էին ձգել Մերսինի մոտ, լուսավառ շողշողում էին՝ տոնելով այդ փառապանծ գահակալությունը։ Ջրի երեսին, հոսանքով քշված-եկած, դանդաղորեն լողում էին ուռած, այլանդակված դիակներ, գլուխներ, իրաններ, մարդկային անձև աճյուններ, որ գետը բերել հասցրել էր ծովը։ Երբեք Ալեքսանդրետի ծովածոցում շնաձկների այդպիսի արշավանք չէին տեսել։ Մի քանի օր շարունակ սպաները ներկա էին այս տեսարանին, և նրանք բազմաթիվ վավերագրական լուսանկարներ արեցին*...

Ապրիլի 27-ին միջադեպերն սկսեցին նվազել, բայց լրիվ չդադարեցին. այդ օրը կրակի ճարակ դարձավ բողոքականների եկեղեցին։ Առանձին սպանություններն ու հրդեհները շարունակվում էին դեռ ամբողջ օրը։ Մինչև մայիսի առաջին օրերը հրդեհներն ու կողոպուտները դեռ էլի տեղի էին ունենում։ Մայիսի 4-ին զինվորները կործանել են գերմանական մի մեծ ֆաբրիկա։

Այսպես, երկրի երեսից ջնջվեցին Ադանա քաղաքի բոլոր հայկական թաղամասերը։

Կոտորածը Ադանայի վիլայեթում։ Գավառում կոտորածը պակաս դաժան չի եղել, քան գլխավոր քաղաքում։ Դեռ մինչև հիմա էլ այդ բանն ավելի արտահայտիչ, քան մարդկային ձայնը, վկայում են Կիլիկիայի ավերված քաղաքների, ավանների ու գյուղերի փլատակները, որոնք, Ուիլյամ Չեմբերսի արտահայտությամբ, «ընկղմվել էին շիկացած դժոխքում»։

Ապրիլի 14-ից գործում էին այն լոզունգի համաձայն, որը գալիս էր Ադանայից։

Վալին իրեն ենթակա բոլոր իշխանության մարմիններին ուղարկել էր հենց այդ ամսաթվով թվագրված նշանավոր շրջաբերականը. «Հայերը հարձակվել են մեզ վրա։ Ուղարկեցեք պահեստի զինվորներ և միջոցներ ձեռք առեք, որպեսզի պաշտպանեք ձեր մարզի մուսուլմաններին»։ Շատ տեղերում թուրքերն արդեն պատրաստ էին։ Ջեբել-Բերեքեթի սանջակում, որն առավել շատ է տուժել, բոլորը հավաքագրվել էին ու զինվել՝ շնորհիվ հենց նահանգապետի՝ Ասաֆ բեյի անձնական ջանադրության, և բաց թողնվել քրիստոնյաների վրա նրա պաշտոնյաների տված ազդանշանով։ Այնտեղ, ինչպես և ամենուրեք, նրանք գործում էին միևնույն կանոնի համաձայն. սպանում էին, թալանում ունեցվածքը, բերքը, անասունները, տներն ավերում, «առևանգում բազմաթիվ աղջիկների և գրաստների ու անասունների հետ խառն նրանց քշում տանում էին հեռուները, որպեսզի ազատվեին որոնումներից»*, մահմեդականացնում էին կանանց, երեխաների և նույնիսկ տղամարդկանց, որոնց խոստանում էին խնայել միայն այն պայմանով, որ իրենց կրոնն ընդունեն։ Շատ դեպքերում բոլոր ձևականություններն ու ծեսերը կատարելուց հետո, ներառյալ նաև թլպատումը, թուրքերը հանկարծակի վերջին պահին փոխում էին որոշումը և պարզապես սպանում էին նորադարձներին կամ տանջանքների ենթարկում նույնպես, ինչպես նրանց, ովքեր հակառակվել էին ընդունել մուսուլմանական կրոնը։

Գավառում, ինչպես և Ադանայում, սպանությունները հաճախ ուղեկցվում էին կոտանքներով և զազրելի հնարքներով։ Նույնիսկ կանանց երբեմն չէր հաջողվում խույս տալ դրանցից։

Հայր Հովսեփը՝ Կարմերի միսիայի վանահայրը, գրում է.

«Կանանց, երեխաներին, աղջիկներին անարգել են, անպատվել, կախել ծառերից, ժայռերին խփելով ջախջախել... Եթե կնոջ մանյակը հեշտությամբ դուրս չէր գալիս, դանակի հարվածներով կտրում էին գլուխը։ Որպեսզի ականջօղեր ձեռք

* Տե՛ս "Illustration", 1909, 12 մայիսի։

* Գերմանական հանձնաժողովի հաշվետվությունը։

գցեին, ականջներն էին կտրում, իսկ որպեսզի ապարանջաններ վերցնեին, կտրում էին աղջիկների ձեռքերը և նրանց մայրերի ձեռքերի վրա վերջ տալիս»։

Լոուսոն Ջեմբերսը գրում է.

«Հայերին ձեռքները կապած նետում էին գետը և զվարճանում, կրակելով ամեն անգամ դժբախտների գլուխներին նշան բռնած, ինչպես թիրախի, երբ նրանք ջրի երես էին դուրս գալիս»։

Հայր Ռիգալը, կաթոլիկական միսիայից, գրում է.

«Մի տերտերի հավատուրաց դարձնելու նպատակով աչքերը հանեցին չերքեզական երկսայրի սրով, որը պտտեցնում էին աչքերի արյունաշաղախ բներում այնպես, ինչպես փայտի կտորն են շաղափում։ Այդ նույն սրով կտրեցին նրա լեզուն և ջարդեցին ատամները»։

Ամերիկյան մի հաշվետությունից. «Մի մարդու բերանը վառոդ լցրին և լուցկով կրակ տվին»...

***

Այստեղ չի կարելի տալ լրիվ պատկերը կամ վերապատմել այս տեսարանները, որոնք ներկայացվում էին յուրաքանչյուր քաղաքում և յուրաքանչյուր գյուղում։ Ամենուրեք միակերպ կրկնվում են միանման շարագործություններ ու սարսափներ, որոնք կատարվում են իրար այնքան նման մեթոդներով։

Մսիսում կենդանի են մնացել միայն 80 հոգի իգական և 6 հոգի արական սեռից՝ ծծկեր երեխաներին էլ հետը հաշված։ Այս փոքրիկ բնակավայրում, որտեղ կային միայն երկու դարբին, երկուսն էլ՝ հայ, թուրքերը չցանկանալով հետագայում զրկվել նրանցից, հոգացին, որ նրանց թաքցնեն անվտանգ մի տեղ, չհապաղելով, սակայն, ստիպել, որ իսլամ ընդունեն։

Ճատ աղջիկների ողջ-ողջ այրեցին։ Երբ սկսեց այրվել այն տունը, որտեղ ապաստան էին գտել, նրանք իրենց հյուսքերն իրար կապեցին ու միմյանց երդում տվեցին՝ չբաժանվել և ավելի շուտ մեռնել, քան թուրքերի ձեռքն ընկնել։ Նրանցից մեկը, որը փորձում էր ազատվել, քանի որ մի թուրք խոստացավ պահպանել նրա կյանքը, բոցերի մեջ շպրտվեց հարազատ մոր ձեռքով։ Փողոցներում հետապնդվող մյուս կանայք խուսափեցին անպատվությունից՝ նետվելով գետը։

Ինջիրլիկում կար 145 հայկական տուն։ Դրանք բոլորը փլեցրին։ 700 շունչ բնակչությունից ողջ մնացին 60 հոգի, որոնցից 28-ը՝ տղամարդ։

Ինջիրլիկից հետո հերթը եկավ Քրիստիան-Քյոյ գյուղին, որտեղ 45 տներից կոտորածից խուսափեցին միայն երեքը, ապա՝ Աբդոզլուին (500 սպանված) և շրջակայքի մանր գյուղերին։

Տարսոնում հուզումները տևել են ապրիլի 16-ի ուրբաթ օրվանից մինչև ապրիլի 17-ի շաբաթ օրը։ Անգլիական հյուպատոսի զեկույցից երևում է, որ դրանք սկսվել են այն ժամանակ, երբ քաղաքի խաժամուժին միացել են 400 պահեստային զինվորներ, որոնք հատուկ գնացքով եկել էին Ադանայից, երբ կոտորածն այնտեղ արդեն վերջացած է եղել։ Նրանք սկսել են այն բանից, որ գործից հանել են երկու հայերի՝ կայարանի ծառայողների, ապա միացել են քաղաքի թուրքերին ու գործի անցել...

Հրդեհները, որոնց ժամանակ այրվել են 797 նախապես կողոպտված տներ, շարունակվել է մինչև առավոտ։ Քանի որ երկու տուն դեռ մնացած է եղել անվնաս, բաշիբոզուկները դրանք հրդեհել են կիրակի օրը՝ ապրիլի 18-ին։ Այստեղ, ինչպես և ամենուրեք, գործողություններին մասնակցել են նաև զորամասերը։

Ըստ էության Տարսոնում զոհերի թիվը սահմանափակ է եղել. 73 հոգի՝ բուն քաղաքում, ևս 242 հայ ոչնչացվել է արվարձաններում և 138-ն էլ՝ մերձակա Կոզոլուկ գյուղում, որն այրված է հիմնովին։

Ադանայի հովտում հայերին պատկանող մեծ քանակությամբ ագարակներ կային։ Դրանք բոլորն ավերված են։

Ամիդում 600-ից ավելի մարդ սպանվել են շուկայում՝ իրենց կրպակներում։ 400 տուն, 4 դպրոց և երկու եկեղեցի այրվել են...

Հարնիի իրադարձություններին (ապրիլի 15-ին) սկիզբ դրեց Էկիզոլուի հարուստ ընտանիքի բոլոր արական սեռի անդամների մահապատիժը և նրա կնոջ ու երեխաների առևանգումը։ Հետո անցան հայոց թաղերին՝ գրավելով տուն տան հետևից։ Դողդոջուն ձեռքերով ալեհեր մի ծերունի, քաղաքի դարպասների մոտ նստած, հրահանգներ էր տալիս և ղեկավարում կոտորածը։ Մոտ 100 հոգի, մի տան մեջ ամրացած, քաջարի գիմադրություն էին ցույց տալիս հարձակվողներին։ Քանի որ չէին կարողանում նրանց վերջը տալ, թուրքերը դադարեցրին հրաձգությունը և

սկսեցին հաշտություն առաջարկել։ Դյուրահավատ հայերը դուրս եկան իրենց թշնամիների հանդիման, բայց նրանց տեղնուտեղը շրջապատեցին, զինաթափ արին, քշեցին տարան ձորը և կոտորեցին մինչև վերջին մարդը...

Հարնիում 190 հայ առողջ տղամարդկանցից կենդանի մնացին միայն 9-ը։ Սպանդից 6 օր անց, յոթ պատանիներ դյուրահավատորեն իջնելով սարերից՝ անհապաղ ձերբակալվել են և գլխատվել կոճղի վրա...

Մի քանի գյուղերում, ինչպես օրինակ՝ Քենեսում, ոչ ոքի չի հաջողվել փրկվել։ Ապաստանելով Հիսարում՝ Քենեսի բնակիչները ընկել են ոստիկանապետ Ժուժի բեյի ձեռքը, որը նախապես խոստանալով նրանց ողջ ու առողջ տանել հասցնել Հիսար, հրամայել է բոլորին կողոպտել ու սպանել...

Հիմա Հասան-Բեյլիկի մասին։

Հասան-Բեյլիկը գեղեցիկ, բարգավաճ գյուղ էր՝ հովտի լանջին փռված։ Այնտեղ հաշվվում էր մոտ 2000 հայ՝ շնորհքով, ձեռներեց մարդիկ, որոնք հիմնականում շերամապահությամբ էին զբաղվում։ Ապրիլի 16-ին Հասան-Բեյլիկի բնակիչները, անհանգստացած այն բանից, ինչ տեղի էր ունենում հարևան գյուղերում, պատգամավորություն ուղարկեցին թուրք աղաների մոտ, որպեսզի բանակցեն նրանց հետ։ Նրանք սրանց ամեն կերպ հանգստացրին։ Սակայն աղաները միաբան էին չարագործ ավազակախմբերի հետ, որոնք հաջորդ օրը շրջապատեցին գյուղը և թափանցեցին այնտեղ՝ իբրև թե երկնային նախանշանակով։

Մի քանի հոգի պաշտպանություն կազմակերպեցին. որսորդական հրացաններով զինված՝ նրանք երկու օր մարտնչում էին հապշտապ սարքված բարիկադների հետևից ու հետ մղում բոլոր գրոհները։ Բայց երրորդ օրը նրանք ստիպված էին դիմադրել արդեն մի քանի հարյուրյակ թուրքերի գրոհին։ Հայր Լաբարդենը՝ Ակբեզի Տրապպա վանքի վանահայրը, Հասան-Բեյլիկի պաշարման առթիվ գրում է հետևյալը.

«Երբ Բախչեի մուֆթին Օսմանիեի պահեստներից զենք ու զինամթերք ստացավ, ամեն մի դիմադրություն դարձավ անհնարին»։

Հայերը որոշեցին նահանջել։ Վերևում մեջբերված ամերիկյան հաշվետվության մեջ այնուհետև ասվում է.

«Բլուրների վրա սրտաճմլիկ տեսարաններ էին երևում։ Ճղա-

մարդիկ չէին վստահանում լքել իրենց կանանց... Կանայք ու երեխաները դեռ կարող էին գթության հույս տածել, մինչդեռ տղամարդկանց միակ հույսը փախուստն էր։ Նրանք խմբերով հեռանում էին սարերը՝ Մարաշի և Իսլահիեի կողմերը։ Կանայք էլ, իրենց հերթին, ձգտում էին որքան կարելի է ավելի հեռու գնալ իրենց գյուղից։ Այս դժբախտներին սովորաբար շրջապատում էին երեխաները։ Կանայք ու երեխաները երկու օր ու գիշեր թափառում էին բլուրների վրա՝ առանձնապես վախ զգալով աղջիկների համար։ Վերջիններս երեսներին ցեխ էին քսում, որպեսզի զզվելի տեսք ունենան։ Վերջապես, գթության խոստում ստանալով՝ կանայք իրենց երեխաների հետ եկան Բախչե։ Այստեղ նրանց փակեցին եկեղեցում, որտեղ այնքան նեղվածք էր, որ նրանք կանգնած էին իրար սեղմված մի քանի օր շարունակ։ Նրանք մեռնում էին սովից։ Երբեմն նրանց մի քիչ հաց էին տալիս։ Երեք անգամ փորձեցին հրդեհել այդ եկեղեցին։ Իսկ գիշերները զինվորները շրջում էին շենքի շուրջը՝ ջանալով առևանգել ջահել աղջիկներին։

Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա նրանցից 300-ից ավելին սպանվել էին բլուրների վրա, անտառներում, քարայրներում... Հասան-Բեյլիկում համարյա ոչ մի աշխատունակ տղամարդ չմնաց։

Քանի որ Հասան-Բեյլիկի տները ցրված էին և այգիներով շրջապատված, ապա դրանք թալանելուց հետո այրում էին մեկ առ մեկ, հիմնովին։ Որպեսզի այդ գործը գլուխ բերեին, պահանջվեց 12 օր։ Այստեղ կային 416 տուն, 56 կրպակ, 3 դպրոց և 2 եկեղեցի։

Ճիշտ նույնկերպ գործեցին նաև Բախչեում. 113 սպանված, 115 այրված տուն՝ 127-ից։ Թուրք մուֆթի Օյքեշը՝ Խաքբաբայի որդին, անձամբ կացնի հարվածներով սպանել է 45 հայերի, որոնց կապկպած բերել էին նրա մոտ։

Մյուս՝ Լապաջլի գյուղում, Բախչեից ոչ հեռու, հրի ճարակ դարձրին 120 տուն, 140 հոգու մահապատժի ենթարկեցին։ Քսան այլ բնակավայրեր ու գյուղեր Ջեբել-Բերեքեթի շրջանում և շրջակա կազաները՝ Իսլահիե, Հասա, Յարբուզ, Գեչաիր, Ազերլի (որտեղ 200 հայեր քաջաբար պաշտպանվում էին), մի քիչ այն կողմ՝ Ղարադաշ, Այաս և այլ կազաները հրի ու սրի ճարակ դարձրին։

Այասում՝ ծովափին գտնվող այդ փոքրիկ բնակավայրում,

գործում էին ապրիլի 15-ից սկսած՝ ըստ նախապես կազմված ցուցակի, որի մեջ չէր մոռացված ոչ մի հասուն հայի անուն։ Այստեղ կոտորածն առանձնապես արագ կատարեցին. տևեց չորս ժամ։ Դրան ուղեկցում էին թալանը, բռնությունը, հրդեհը։ Սպանվածներ՝ 77 քրիստոնյա, որոնցից 71-ը՝ հայ և 6-ը՝ հույն...»

Կոտորածի հանրագումարը: Որպեսզի որոշենք մոտավոր հանրագումարը, չպետք է սահմանափակվենք միայն խոշոր քաղաքներով ու գյուղերով, որտեղ կոտորած է տեղի ունեցել։ Ադանայի վիլայեթում շատ կան մերձակա ու հեռավոր վայրեր, որոնց կոտորածը չի դիպել և որոնք այնուամենայնիվ մեծապես տուժել են։ Գարնանը Անատոլիայի բոլոր կողմերից հազարավոր հայ աշխատավորներ սարերից իջնում են Կիլիկիայի հարթավայրը, որը նրանց գրավում է դաշտային աշխատանքներով։ Այս տարվա ապրիլին նրանք 15 հազարից ավելի էին՝ գլխավորապես բամբակի քաղհանով զբաղվածներ։ Նրանց մեջ կային նույնիսկ Սեբաստիայից, Բաբերդից և Էրզրումից եկածներ։ Նրանցից շատերը, որոնց վրա են տվել ագարակներում, դաշտերում, պանդոկներում, ճանապարհներին, նույն բախտին են արժանացել, ինչին արժանացել է տեղի նատակյաց բնակչությունը։ Խարբերդի մարզում, որտեղ շնորհիվ տեղի վալիի ձեռք առած միջոցառումների, խժդժություններ չեն կատարվել, այնուամենայնիվ պակասում են հազար հոգի։ Մարաշի մարզում, որտեղ համեմատաբար քիչ են սպանվածները, ընդամենը՝ 700 հոգի, մեծամասնությունը կոտորվել է հարթավայրում։ Նույն դրության մեջ է Հաճընի շրջանը, որտեղ հաշվվում են 1500 սպանվածներ։ Փոքրիկ գյուղերը, որտեղ չի լսվել հրացանի ոչ մի կրակոց, մնացել են առանց որևէ աշխատունակ տղամարդու։ Ողբերգության վայրից շատ կիլոմետրեր հեռու՝ Կեսարիայի և Սեբաստիայի միջև զոհվել է 250 հոգի՝ Գերեմեկում, 100-ը՝ Շեֆրինում, 50-ը՝ Բուրխանում։ Հարավում՝ Հալեպի վիլայեթում, հինգ գյուղեր, որոնք խուսափել են ջարդերից ու թալանից՝ շնորհիվ Սուեսիայի ծովածոցում կանգնած եվրոպական ռազմանավերի, կորցրել են 97 տղամարդ՝ անտառում կացիններով փրթված, 61 տղամարդ անհայտ կորել է։ Կարելի է նմանատիպ շատ օրինակներ բերել, որոնք հարկ է ի նկատի ունենալ՝ մարդկային խորտակված կյանքերի հաշվառումը կատարելիս։ Մենք կարող ենք վստահ լինել, որ չենք չափազանցնի, եթե սահմանենք հա-

ղերի նվազագույն թիվը՝ 20 000 սպանված[18] ու այրված՝ ապրիլի 14-ից մինչև 30-ը։ Բայց սրանով չի ավարտվում այս ողբալի ցուցակը։ Այստեղ պետք է ներառնել նաև բոլոր նրանց, ովքեր փախչելով մարդասպաններից ու հրձիգներից՝ հետագայում վախճանվել են վերքերից, սովից, իսկ է՛լ ավելի շատերին տարել է համաճարակը, որն սկսվեց գյուղերում՝ հոտած դիակներից վարակվելուց, ճամբարներում, որտեղ կենտրոնացած են կենդանի մնացածները։

Մասնավոր մի նամակում, թվագրված օգոստոսի 11-ով, պարոն Դոտի-Վիլին գրում է, թե «միայն Ադանա քաղաքում գտնվում էին 19 հազար սովյալներ»։ Մի այլ նամակում, թվագրված օգոստոսի 5-ով, պարոն Զեմբերսն ասում է. «Յոթ հազար հայերի մահ է սպառնում»։ Ահա մի մեջբերում Փարիզի Արևելքի գործերի կաթոլիկական միսիայի հաշվետվությունից. «Հազարավոր մարդիկ քշված լցված են ճամբարները՝ առանց պատսպարանի։ Այս դժբախտները թողնված են առանց հացի, առանց հագուստի։ 20—30 երեխա է օրական մեռնում կարմրուկից, տենդից, ջրծաղիկից, բայց ամենից ավելի՝ սովից։ Վիրավորները հոգեվարքի մեջ են՝ խնամքի բացակայության պատճառով...»

Ահա մի մեջբերում ամերիկյան միսիայի հաշվետվությունից.

«Մենք անց ենք կենում ճամբարի միջով։ Դիշեր է։ Կանայք իրենց երեխաներին ծածկում են խղճուկ լաթերով կամ խոտով։ Մյուսները կծկված, ցրտից դողալով՝ ամուր գրկել են իրենց երեխաներին։ Մի տղամարդ փորձում է ցրտից պահպանել չորս որբերի՝ յուրաքանչյուրին պարկի մի կտոր բաժին հանելով։ Երեկ 15 երեխա մեռել է կարմրուկից, երկու ծծկեր մանուկ՝ սովից...»։

Զոհերի թվում պետք է հաշվել նաև նրանց, ովքեր այդ դժոխքից դուրս են եկել տկար, խեղված, անաշխատունակ, ցնորված, ինչպես և այն կանանց ու երեխաներին, ովքեր իսլամ են ընդունել, առևանգված, պատվազրկված աղջիկներին, որոնք արգելափակված են դաժան, անասնական պարտականություններ կատարելու համար։ Կիլիկիայում աղջիկների հունձը առատ է եղել։ Շատերին վաճառել են կամ վիճակահանությամբ տնօրինել։ Կոտորածից մեկ ամիս անց, Ադանայից ինն օրվա ճամփա հեռու՝ Սեբաստիա ժամանեց աղջիկների մի քարավան, որոնց գնել էին որպես ստրկուհիների։ Շատ փոխադրամիջոցներ,

բեռնված կենդանի ապրանքով, ճամփա էին ընկնում դեպի Անատոլիայի տարբեր վայրեր։ Հետագայում, հայոց եկեղեցական իշխանությունների պահանջով, առևանգիչներն ու վաճառականները ստիպված եղան վերադարձնել իրենց ավարի մի մասը։ Բայց ինչպիսի՜ խղճուկ վիճակի մեջ են գցված եղել նրանք՝ մեծ մասամբ բոլորովին մանուկ այդ աղջիկները։ Համարյա բոլորն իրենց վրա ունեին անպատվության հետքեր, որ ստիպված էին եղել կրել։ Նրանց մեջ կային և այնպիսիները, ովքեր ինքնասպանությամբ վերջ տվին իրենց կյանքին։ Ոմանց հիվանդանոց ուղարկեցին՝ բուժման համար։ Կոստանդնուպոլսում հայ տիկնայք կազմակերպեցին բարեգործական մի հաստատություն, որտեղ Կիլիկիայի որբուհիները, շատերը՝ 12 տարեկանից ոչ մեծ, սպասում են իրենց ծննդաբերությանը։

***

Կոտորածի ժամանակ ծովափնյա բնակիչների մի մասը հեռացավ երկրից։ Հազիվ թե որևէ մեկը արժանի լինի առավել կարեկցանքի, քան պատահականության կամքով ցրիվ եկած այդ մարդիկ, որոնց հավաքել տարել են նավերով։ Ինչպես և նրանք, ովքեր խռովությունից հետո, չնայած արգելված էր երկրից դուրս գալը, փախան Եգիպտոս, Կիպրոս, Լիբանան, Ամերիկա։ Ամբողջ ամռան ընթացքում Կահիրեի և Ալեքսանդրիայի հայոց եկեղեցիները լիքն էին փախստականներով, որոնցից շատերը չէին կարողանում ապրիլ ամսին տեղի ունեցած դեպքերից հետո նույնիսկ փոխել իրենց սպիտակեղենը*։ Հետագայում շատերը որոշեցին վերադառնալ հայրենի երկիրը և նորից սկսել կառուցել իրենց կյանքը։ Վերադառնալով նրանք հազիվ թե կարողացած լինեն օթևան գտնել։

«Վատ եղանակը և սառը գիշերները այլևս թույլ չեն տալիս ապրել վրաններում, ինչպես ամռանը։ Նրանք, ովքեր ողջ են մնացել ոչնչացված և աշխարհով մեկ ցրիվ եկած գերդաստաններից, սկսեցին աստիճանաբար հավաքվել գալ Ադանա, որտեղ մնացել են միայն ավերակների անձև կույտեր՝ անկարող ընդունելու և ապաստան տալու իրենց բնակիչներին։ Գարշահոտ խրճիթները լիքն են այդ դժբախտներով։

* Կաթոլիկական միսիայի հաշվետվությունը («Euvre d'Orient», Paris).

Մի տան մեջ, որը 20 քմ-ից նեղ էր, ես հաշվեցի 60 հոգու։ Մերկ գետնին՝ առանց խսիրների, որոնք կարելի է գտնել ամենուրեք, նույնիսկ ամենաաղքատ տներում։ Տանիքի փոխարեն՝ հարթ հողե կտուր, որը մաղի պես ջուր է բաց թողնում։ Եհ՜ զմարդիկ։ Նրանց համար ճամբարում ավելի հեշտ կլիներ։ Այնտեղ ավելի քիչ բորբոս կլիներ և ավելի շատ թարմ օդ։

Եթե հանուն հետաքրքրասիրության դուք այցելեիք այրված թաղամասերը, ձեզ, ինչպես որ ինձ, կապշեցներ այն տեսարանը, թե ինչպես են ավերակների միջից հայտնվում ստվերներ, որոնք ապաստանել են ինչ-որ սև ծածկանման բանի տակ, որին իր դիրքի պատճառով խնայել է հրդեհը և որն այժմ որպես ապաստարան ու օթևան է ծառայում իր տերերի համար։ Այդ բվի բնի մեջ նրանք դողդողալով անց են կացնելու այս ձմեռը՝ սպասելով տաք օրերի»*։

Ադանա քաղաքում հրի ճարակ են դարձել 1190 տուն, 6 եկեղեցի և ամբողջ հայկական շուկան։ Մենք տեսանք, որ Տարսոնում հրկիզել էին 800 տուն, Հասան-Բեյլիկում՝ 416, Բախչեում՝ 115, Լապաջլիում՝ 120, Ինջիրլիկում՝ 145, Օսմանիեում՝ 200 տուն, տեսանք, որ շատ ավաններում, գյուղերում և գյուղակներում ոչ մի անվնաս տուն չէր մնացել։ Հենց միայն Ջեբել Բերեքեթի մարզում այրել-մոխրացրել էին 915 բնակելի տուն, 6 եկեղեցի, 12 դպրոց, չհաշված կոպակներն ու խանութները։

Իր հաշվետվության մեջ դեպուտատ Յուսուֆ Քեմալը[19] հիշատակում է 5189 տուն Կիլիկիայում, որոնք ենթակա են վերականգնման։ Այս թիվը շատ ավելի ցածր է իրականից։ Երիտթուրքական գործիչներից մեկը, որը քննություն էր կատարում Ադանայում, ցանկանալով մեղմացնել աղետի լրջությունը, ինձ բացատրում էր, թե այդ տները եղել են աղյուսից ու կավից, ոչ մի արժեք չներկայացնող սոսկ խղճուկ խրճիթներ։ Բայց դա ի՜նչ նշանակություն ունի, չէ՞ որ դրանք որպես ապաստարան էին ծառայում մի ամբողջ ընտանիքի համար։ Բացի այդ, ոչ միայն այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Ադանան, Տարսոնը կամ Անտիոքը, այլև նույնիսկ գյուղերում, որոնք ավերակների են վերածվել, երբեմնի գեղեցիկ շատ տներ կային՝ ամուր ու քարաշեն։ Չի կարելի, վերջապես, մոռանալ և այն,

* Կաթոլիկական միսիայի հաշվետվությունը («Euvre d'Orient", Paris).

որ ավերվել են ոչ միայն օջախները, այլև ամայացել են դաշտերը, ոչնչացվել են գյուղատնտեսական մեքենաները, անասունները, հափշտակված է անշարժ գույքը, կարճ ասած, դա եղել է սարսափելի կործանում և ամայացում...

A. Adossidès, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cillicie. Paris, 1910, p. 21—79, 98—116.

100. ՄՈՆԱՍՏԻՐԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԼՈՒԹԵՐԻՆ

Մոնաստիր, 28 օգոստոսի 1910 թ.

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը զեկուցելու, որ ես գաղտնի աղբյուրներից ձեռք եմ բերել բովանդակությունն այն ճառի, որը վերջերս արտասանել է Թալեաթ փաշան Սալոնիկի գաղտնի խորհրդակցության ժամանակ՝ «Միության և առաջադիմության» տեղական կոմիտեի անդամների առաջ... Ես, իհարկե, չեմ կարող դա հաղորդել բառացիորեն, բայց բավարար հիմքեր ունեմ հավատալու, որ ներքոհիշյալ տողերը ճշգրտորեն վերարտադրում են Թալեաթի ճառի էությունը։

«...Դուք գիտեք, որ սահմանադրության համաձայն, հաստատված է մուսուլմանների ու գյավուրների հավասարություն, բայց դուք բոլորդ միասին և յուրաքանչյուրդ առանձին գիտեք և զգում եք, որ սա անիրագործելի իդեալ է։ Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները, և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանացմանը, անհաղթահարելի խոչընդոտ են ներկայացնում իրական հավասարություն հաստատելու համար։ Մենք անհաջող փորձեր արեցինք, որպեսզի գյավուրներին դարձնեինք օրինապահ օսմանցիներ։ Նման բոլոր ջանքերը մշտապես անհաջողություն են կրելու, քանի դեռ Բալկանյան թերակղզու անկախ փոքր պետությունները հնարավորություն ունեն անջատողական գաղափարներ տարածել Մակեդոնիայի բնակիչների մեջ։ Ուստի և չի կարող հավասարության մասին նույնիսկ խոսք լինել, մինչև որ հաջողության չհասնենք կայսրության օսմանացման մեր խնդրում՝ վաղեմի ու դժվարին խնդրում, որում, ես համարձակվում եմ կանխագուշակել, մենք հաջողության կհասնենք, երբ վերջը տանք բալկանյան պետությունների ագիտացիային ու պրոպագանդային»։

Արքուր Բ. Հերն

British Documents on the origins of the war. 1898—1914. Edited by G. P. Gooch and Harold Temperley. Vol. IX. The Balkan wars. Part I. The Prelude; The Tripoli war. London, 1933, p. 208—209.

101. ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՍՎԵՉԻՆԻՆ

№ 264 զեկույցից **29 սեպտեմբերի 1910 թ.**

Չնայած սահմանադրությանը, որ մտցված է արդեն երկու տարի սրանից առաջ, և Թուրքերի ու հայերի քաղաքացիության թվացյալ հավասարեցմանը, վերջիններս Թուրքերի հետ ընդհարվելիս՝ միշտ մեղավոր են դուրս գալիս և պատժվում ամենայն խստությամբ ըստ հնացած սկզբունքի. հայ է, ուրեմն մեղավոր է։

Օրերս Բասենի կազայի Քյոփրի-Քյոյ գյուղում հայերի և մահմեդականների միջև բավականին մեծ ընդհարում տեղի ունեցավ հողի պատճառով, ընդ որում մեկ հայ վիրավորվեց։

Հին վարչակարգի օրոք հայկական շատ հողային կալվածքներ ժամանակավոր օգտագործման տրվեցին մուսուլմաններին։ Իսկ այժմ, երբ պետական կյանքի փոփոխված կարգի պայմաններում հայ հողատերերը ջանում են հետ վերցնել իրենց կալվածքները, միշտ բախումներ են տեղի ունենում, որոնք մեծ մասամբ ավարտվում են ի վնաս հայերի։ Տվյալ դեպքում էլ նույնն է տեղի ունեցել. հայերը, լինելով թեկուզև տուժածներ, այնուամենայնիվ ձերբակալվել են, իսկ Թուրքը, որը վերք է հասցրել հային, ձևի համար բռնվել է և իսկույն բաց թողնվել...

Շարիաաթ

АВПР, Посольство в Константинополе, д. 2678, л. 15.

102. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՇԱՐԻԿՈՎԻՆ

№ 877 գեկուցից — 24 Նոյեմբերի 1910 թ.

Ինչպես որ առաջ պատիվ եմ ունեցել տեղեկացնելու Ձերդ գերազանցությանը, այժմ էլ Թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ մնում է անբարեհաճ. բոլոր դեպքերում, երբ հայերը հանդես են գալիս որպես տուժածներ, նրանց բողոքներն ու դիմումները մնում են ձայն բարբառո հանապատի։

Դիմեմ փաստերի։

Ավազակ Միր-Մխեն օրերս ամենագազանաբարո եղանակով սպանեց հայ աստիճանավոր Սահակ էֆենդի Մարգարյանին, որը գնում էր Սիդնիկ կալե։ Ոճրագործությունը անպատիժ մնաց, և հայերը Կոստանդնուպոլիս ուղարկած իրենց բողոքի պատասխանը չստացան։

Միր-Մխեի ընկեր Կադրին Վանի վիլայեթի Խումար գյուղում սպանեց հայ Խաչատուրին։ Ոչ մի միջոց ձեռք չառնվեց մարդասպանին բռնելու համար...

Շարունակվում է զենքի և զինվորական հանդերձանքի առաքումը տարբեր քաղաքներ։ Նոյեմբերի 18-ին Բիթլիս է ուղարկվել 38 արկղ հրացան։ Բիթլիսի վիլայեթի Սերտ գյուղում հին տիպի հրացանները, մաուզերները փոխարինվել են նորերով՝ հինգհարվածայիններով։ Այս նույն տիպի հրացաններից են ուղարկվել Ալաշկերտ ու Ղարաքիլիսա։ Հին մաուզերները կփոխարինվեն Մարտին տիպի հրացաններով, որոնք զինանոց կմտնեն։

Նորիտտեր

АВПР, Посольство в Константинополе, д. 2678, л. 29.

108. Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԹԱՔՐԻՐԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Կ. Պոլիս, 14 փետրվարի 1911 թ.

Երկար տարիներ առաջ, ինչպես և 1872, 1876 տարիներու, և անկե վերջ պարբերաբար թե՛ պատրիարքարանես և թե՛ գավառական ազգային առաջնորդարաններու կողմե Բ. Դրան և տեղական իշխանությանց ներկայացված տեղեկագրերն ու հիշատակագրերը, ուր պարզվելով հայաբնակ նահանգներու բազմատեսակ հարստահարությունները, զեղծ պաշտոնյաներու պաշտպանության տակ բռնակալներու կողմե անպատիժ գործված ոճիրները, առևանգումները, հարկապահանջումները ու կեղեքումները և այլն, կը խնդրվեր միայն օրենքի անաչառ կիրառում և կյանքի, պատվի ու գույքի ապահովություն։ Դժբախտաբար, սակայն, օրինավոր և արդարացի այս գանգատները և գերազանցորեն իրավական այս պահանջները իր ատենի կառավարության կողմե ոչ միայն մնացին անլսելի և անհետևանք, այլ երթալով վատթարացավ հայ ժողովրդի վիճակն և հալածական նոր քաղաքականություն մը ևս ենթարկվեցավ, հակառակ որ այդ ժողովուրդը ոչ մեկ ատեն թերացած չէր իր քաղաքացիական պարտականությանց մեջ։

Ահա այդ հակապետական-հալածական քաղաքականությունը, և այն գիտակցությունը, թե ինքն օրենքի պաշտպանությենեն զրկված է, ծայրահեղ միջոցներու մղեց այդ անպաշտպան, հուսահատ ժողովուրդը այսպես կարգ մը վայրերու մեջ, մեկ կողմե պայքարելու հալածիչներու դեմ իր գոյությունը պահպանելու համար, մյուս կողմե՝ ճարահատ և հուսաբեկ՝ հարկադրվեցավ օտար երկիրներու մեջ ապաստան փնտրելու։

Այսպես զանազան կարգի հարստահարիչներ, մյութեկալիպները իրենց խժդժությունները ավելի սաստկացուցին, ժամանակի կառավարության քաջալերության և պաշտպանության տակ, ի գործ դրին զեղծումի բոլոր միջոցները, իրենք զիրենք տեր հռչակեցին գաղթած կամ ցրված և շատ տեղեր նույնիսկ իրենց օճախներու մեջ ապրող հայերու տունին, հողին, այգիին, մարգագետնին և այլ ստացվածքներուն։

Իսկ տեղական իշխանությունները, օրենքի անսահման զեղծումներով, նվիրագործեցին այդ բոլոր հափշտակությունները, ինչպես և հերյուրանքով գրավեցին շատ մը հողեր ու չանսալով զրկվածներու բողոքներուն ինթիգալի և թափուի բազմաթիվ խարդախ գործողություններ կատարեցին ու մուհաճիրներ [գաղթականներ] զետեղեցին բռնի հալածվածներու հողերուն վրա, յուրացնել տալով նաև բազմաթիվ եկեղեցիներու, վանքերու, գերեզմանատուններու հողերը, նույնիսկ շենքերը և այլն։

Այդ ապօրեն և անարդար միջոցներով առ այսօր տասնյակ

հազարներով թշվառ հայեր սեփականազուրկ են դարձած, վտարվելով իրենց դարավոր բնակավայրերեն և այլն։

Հայ ժողովուրդը չանաց մոռնալ այս ահավոր անցյալի ամբողջ արհավիրքը, զայն զոհաբերելու համար օսմանյան մանուկ սահմանադրության, այն հույսով, որ նոր կարգերը արմատապես վերջ պիտի տային կյանքի, պատիվի, անապահովության և քաղաքական բացառիկ վիճակներուն, և պիտի թույլատրեին անձնատուր ըլլալու խաղաղ քաղաքակրթական առաջդիմության։

Հայ ժողովուրդը իրավամբ կը սպասեր, որ նոր ռեժիմը ըմբռնելով այս իրողությունը, իր առաջին պարտականություններեն մին պիտի համարեր հայաբնակ նահանգներու անմիջական բարեկարգության հոգն ու գործադրությունը, թեև արդարությունը պարտք կը դնե մեր վրա հայտնելու թե սահմանադրության առաջին օրերուն մեջ կեդրոնի կառավարությունը փորձեց մեկ քանի քայլեր, որոնք կը խոստոնային նախաշավիղ մը ըլլալ Անատոլուի ընկերային ու քաղաքական հիմնական բարեկարգությանց, ինչպես, օրինակ՝ զրկյալ տարրերուն պետական պաշտպանությունը, դատարաններու և վարչական դիվաններու արագ, արդար և անաչառ գործունեության ձգտումը, զենք կրելու դեմ խիստ արգելքը և պատիժը բռնակալներու, որոնց կենդանի օրինակը ծառայեց տիգրանակերտցի Իպրահիմ փաշայի իշխանության ոչնչացումը, որ ի թիվս այլ ցեղապետներու պետության մեջ պետություններ կը կազմեն։

Դժբախտաբար, ոչ միայն այդ սկսված բարենորոգչական նախաձեռնարկը հանկարծ ընդմիջվեցավ, այլ դեռ հայերուն վիճակվեցավ կրել այնպիսի եղեռնական, սոսկալի արհավիրք մը, որ համիտյան շրջանի պատմական արյունահեղությունները ու տառապանքները գերազանցեց։ Կիլիկիո ամենաքստմնելի և բարբարոսական ջարդին է, որ կակնարկենք — ահավոր անակընկալ մը, որ եկավ սահմանադրության նվիրված, անոր համար պայքարած ժողովուրդի մը սրտին մեջ նոր ի նորո բանալու անջնջելի և շատ խորունկ վերք մը, արատավորելով միանգամայն օսմանյան սահմանադրության մաքուր էջերը։

Այս ահավոր աղետեն հետո, սահմանադրության կարգերու դեմ գավառներու մեջ ստեղծված ընդվզեցուցիչ հակազդեցությունն ու կառավարության տատամսող, վերապահ քաղաքականությունը հառաջ բերին իրենց անմիջական տխուր ներգործությունը, վատթարացնելով հայաբնակ նահանգներու վիճակը,

և վայրկենապես ոչնչացնելով օրենքի և արդարության վրա հիմնված հույսերն ու ձեռնարկները։ Ու անկե ետքն ալ շարունակվող կառավարական ոչ անփույթ ու վարանոտ քաղաքականությունը բռնակալներու կողմե իրավամբ մեկնվեցավ իբր քաջալերություն իրենց առանձնաշնորհյալ տերեպեյության ու ոճրապարտ արարքներուն, և մանավանդ հայ ժողովուրդի սեփականության դեմ անոնց ունեցած սանձարձակություններուն։ Միևնույն ատեն կուգար բռնի գրավումները օրինականացնելու բնույթ ունեցող պետական խորհրդի 1326 սեպտեմբեր 1-ի [1910 թ.] հրամանը, որ ոտնահարելով զրկվածներու իրավունքը, նաև ոչնչության կը դատապարտեր կայսերական իրատեով հաստատված նախարարական ժողովի 1325—6 օգոստոս [1909 թ.] 27 և 31-ի հրամանները։ Պետական խորհրդի այս անսպասելի միջամտությունը չարաչար կնճռոտեց հողային վեճերը, և թշնամությունները բորբոքելով բռնակալներու և զրկվածներու միջև, պատճառ դարձավ արյունհեղությանց, ոճիրներու, որպիսիքն են Թեմրանի ու Խութի քստմնելի ոճիրները, դժբախտ հայերու հոշոտումը և այլն, և այլն։

Հիշյալ վերջին հրամանը գործիք եղավ նաև տեղական իշխանությանց զեղծ և անարժան պաշտոնեից ձեռք բռնապետներու հետ վերսկսելու սահմանադրությամբ արգելված հողային գրավումները՝ զանոնք օրինականացնելով։

Այս ընթացքին ոչ նվազ օգնեցին երկրագործական դրամատան գավառական մասնաճյուղերը, այնպես որ երկրագործներու հարյուրավոր ոսկի արժեք ունեցող հողերը տասնապատիկ նվազ արժեքով ու շատ հեղ զեղծ միջոցներով խլվեցան ու տրվեցան հարստահարիչներու, մյութեկալիպներու, ու շատ տեղեր՝ նույնիսկ վճռաբեկ ատյանեն (թեմիզեն) ի նպաստ հայերու տրված կարգ մը հողային վճիռներ իսկ անիրագործելի մնացին։

Ստեղծված այս անհանդուրժելի կացության շնորհիվ՝ հանրային ապահովությունը նորեն կվրդովվե, ոճիրի ու թալանի բնազդը կը զորանա քյուրտ աշիրեթներուն մեջ, որոնք կը սկսին զինված համարձակ շրջիլ, քանի մը տասնյակ հոգիներե կազմված ավազակախումբեր դուրս կուգան ասպատակելու, կեղեքելով հայ ժողովուրդը, սահմանադրական օրենքով ջնջված բռնապետական տուրքեր նորեն կը պահանջվին, տարապարհակներու կ'ենթարկվին և ավելի հանդգնությամբ հայ կիներու և աղջիկներու պատիվն ու կրոնը կը բռնաբարվին, հանցապարտ-

ներու հանդգնությունն ու կառավարության համակերպությունն այն աստիճանի կը հասնի, որ օրորոցեն նշանված ըլլալու պատրվակով՝ Շերիի դատարանին առջև կը հանին հայ աղջիկ մը իսլամացնելու խնդիրը, Սեբաստիո Պյունյան գավառակը։ Տիյեթի դատ մը կը բացվի Մուշ, և անոր ընթացք կը տրվի այնպիսի վայրի մը մեջ, ուր հայեր տասնյակ հազարներով զոհեր տված են, և այս այնպիսի ատեն մը, իբր ցեղային համերաշխությունը ավելի քան թանկագին է երկրին համար։ Օսման փաշային նման բարձր զինվորական մը անհամերաշխության որոմներ կը ցանե և անպատիժ կը մնա։

Ձեր վսեմության մոտավոր գաղափար մը տալու համար այս վերջին տարվան մեջ միայն հայերու դեմ գործված ոճիրներու և հարստահարությանց մասին, ավելորդ չենք համարիր անոնց մեկ ցանկը ներփակյալ մատուցանել։

Մենք, որ կհավատայինք, թե սահմանադրության հաստատումով վերջ պիտի գտնեին պատմական դարձած մեր բողոքները. այսօր, դժբախտաբար, հուսախաբ ենք եղած սահմանադրական վերջին երկու տարիներու մեջ ալ կառավարության անփույթ վերաբերումեն, մանավանդ Բաղեշ, Վան, Տիարբեքիր և Խարբերդ նահանգներու նկատմամբ, ուր կյանքի, գույքի ու պատիվի բացարձակ անապահովություն կը տիրե։

Պատրիարքարանս, բռնապետներու վերանորոգված հալածանքի տխուր հետևանքներու դեմ, հանուն հայրենիքի օգտին և հայ ժողովուրդի բարօրության իր պարտականության բերումով պարբերական թաքրիրներ, մուիթերեներ մատուցած և բերանացի դիմումներով ալ շարունակ աղերսած է Բ. Դռնեն վերջ մը դնել այս քայքայող չարիքներու, որոնց իբր նմուշ կներփակենք Բ. Դրան մատուցված մեր փաստաթղթերուն ցանկը, որոնցմե ոչ մին արժանացած է լուրջ և իրական ուշադրության։

Կեդրոնի կառավարության այս անհասկանալի ընթացքը երթալով այն անհանդուրժելի աստիճանին հասավ, որ հայկական նահանգներու մեջ մեկե ավելի բարեհոժար ու գործունյա վալիներ՝ լ՚Ատած, թողուցին իրենց պաշտոնատեղիները։ Ու այս բոլոր՝ն հետևանքը եղավ այն, ինչ որ կ՚սպասվեր արդեն, այսինքն՝

1. Դժբախտաբար կասեցավ Անատոլուի խաղաղացման ցանկալի գործը, քաղաքային անապահովությունը ա՛լ ավելի ծանր

կերպարանք մը առավ, ժողովուրդի անդորրությունը խանգարող ոճիրները սկսած են անարգել տեղի ունենալ և շատնալ օրեօր։

2. Նույն նահանգներու մեջ խռովության դրդապատճառներու առանցքը տեղի ունեցած և ունենալիք արյունհեղությանց գլխավոր շարժառիթն եղող հողային հարցը ոչ միայն չ՚լուծվեցավ, այլև թույլ տրվեցավ բոլորովին նոր հափշտակությանց, որոնք նոր թափուներով, ինթիգալներով, իլամներով ստեպ նվիրագործվեցան տեղական իշխանությանց ու դատարաններու կողմե։ Իրավազրկված երկրագործ հայերու հողերը սկսան հափշտակիչներու սեփականություն հռչակել, ու ոչ միայն նախորդ շրջանին, այլ նույնիսկ հերու և այս տարի ապօրեն մահկանացուներով և առանց մահկանացուների հայերե խլված հողերու վրա նոր մուհաճիրներ բնակեցուցին ու կը բնակեցնեն։ Ու հողային հարցի շուրջը եղած ապօրինությունները նվիրագործվեցան Շուրայի Տեղվլեթի 1326 թ. [1910 թ.] ապրիլ 1 և 1327 թ. [1911 թ.] սեպտեմբեր 30-ի նախարարական ժողովի անսպասելի որոշումներով։

3. Երկար ատենե ի վեր ձերբակալված շատ մը հռչակավոր ոճրագործներու դատերը ցարդ ձգձգվելով՝ անոնցմե և ոչ մեկը իր ոճիրին համապատասխան պատիժ կրեց (Պիթլիս՝ Թեմրանի, Խութի, Ալճավազի սպանությանց հեղինակները), Վան՝ Կրավլը Շաքիր, Ճաֆատ, Գատիր, Բեշիտ և այլն ոճրագործներու շատերն ալ անպարտ արձակվեցան (Պիթլիս՝ Սասնլը, Փափուրե Կինճո, Մուշ՝ Հաջի Ֆերո և այլն, Խարզան՝ Պշարե Ճեմիլ)։

4. Լրջորեն և ուժգնորեն չհետապնդվեցան այն ավազակներն ու մարդասպանները, որոնք քանի մը տասնյակ զինյալ ծառաներով բազմաթիվ ոճիրներ գործեցին և կգործեն (Վան՝ Սայիտ, Սըրմեռ, Միր Մհե, Մամե և այլն, Պիթլիս՝ Պրշարե Չաթո, Խութի ոճրագործներ, Գասրմ պեյի ծառա Խալիլ և այլն)։ Չհետապնդվեցան նույնպես սահմանադրական ներման արժանացած և կըրկին ոճիրներու դերակատար հանդիսացողները (Սեյիտ Ալի, Հուսեին փաշա, Պերվարլը Թահար աղա, Կեցանի Մուսա պեյ և այլն), և ոմանք ալ չպատժվելե զատ՝ պետական պաշտոններով վարձատրվեցան (Պիթլիս՝ Խիյանի մյուտիր Քյոր Ալո, Փեչարի մյուտիր Ալի պեյ, Կինճի իտարե Աղասի, Տերելի Մեհմետ պեյ։ Վան՝ Կեցանի Մուսա պեյ՝ Օրման մյուտիրի և այլն)։

5. Կառավարությունը թույլ տվավ, որ Մուշի մեջ ընթացք առնի Տիյեթի ամոթալի և անիրավ դատը։

6. Վավերացվեցան բազմաթիվ առևանգումներ, բռնի խլամացումներ՝ հակառակ սահմանադրության և խղճի ազատության օրենքին, և այս պատճառ եղավ, որ զինյալ խումբերով առևանգությունները շարունակվին։

7. Պետության մեջ պետություն կազմող ավատականությունը քաջալերված ու զորացած՝ մարդկային արժանապատվությունը ստորացնող խաֆիրության նման տուրքերու ու տարապարհակ ծառայություններու ենթարկեցին դարձյալ հայ գյուղացիները։

8. Զենք կրելու առանձնաշնորհումը անարգել վայելեցին ավատականներ և իրենց ստորադասյալներ, մինչդեռ արգիլման օրենքը միմիայն հայերու դեմ գործադրվեցավ։

9. Ըստ առաջնույն, տեղական-պետական պաշտոնները գըլխավորաբար շարունակեց մնալ մյութեկալիպեներու ձեռքը, որոնք իրենց ծանոթ գործելակերպով կ՚արատավորեն կառավարությունը և շարիքի աղբյուր կը հանդիսանան, և այս տեսակ ապիկար ու հանցավոր պաշտոնյաներ՝ փոխանակ պատասխանատու բռնվելու ու պատժվելու, կեդրոնական կառավարությունը կը բավականանա տեղափոխությամբ մը, շատ հեղ պաշտոնի բարձրացումով։

10. Այսպիսի անպարտաճանաչ պաշտոնատարներե կազմված գավառային վարչական և թե դատական իշխանությունները իրենց գործառնությանց մեջ ընդհանրապես աչառություն և անհավասարություն կիրարկելով՝ հաճախ հուսաբեկ և իրավազուրկ թողուցին ժողովուրդը։

11. Երկրի ապահովությունը խանգարելու ոճիրին գլխավոր դերակատարներեն եղող վաչկատուն ցեղերը, որոնք ընդդեմ օրենքի և իրավունքի միայն բռնության ու զենքի ուժով կ՚ապատակեն, հողային գրավումներ, ոճիրներ և այլն կը գործեն, կառավարության կողմե լուրջ պատասխանատվության չենթարկվեցան, ցարդ միջոցներ ալ ձեռք չ՚առնվեցան զանոնք իրենց նախկին բնակավայրերու մեջ մշտապես բնակեցնելու և արգելելու, որպեսզի չխուժեն Վանա, Պիթլիսի և այլն լեռնաստաններ ու խաղաղ ժողովուրդի արոտավայրերը և անոնց սեփական հողերը չ՚գրավեն և անխնա ամեն կարգի վնասներ գործեն՝ փչացնելով բազմաշխատ հողագործի վաստակը։

Բնականաբար, հայ ժողովուրդի գոյության այսքան բացահայտորեն սպառնացող ծանր վտանգին առջև չէր կրնար անտարբեր մնալ հայ ազգի ներկայացուցչական ժողովը, որուն

կողմե այս առթիվ արտահայտված հուզումը և վիշտը կարծենք հայտնի ըլլալու է Ձեր վսեմության։

Ուստի, վսեմափա՛յլ տեր, մեր պարտավորություններեն և զգացումներեն դրդված՝ կը դիմենք Ձեր վսեմության, խնդրելով, որ ժամ առաջ դարմանվին եղած սխալները և վերացվի երկրին ու հայ ժողովուրդին սպառնացող շարիքը...

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 3—8

104. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ՉԱՐԻԿՈՎԻՆ

11 մարտի 1911 թ.

Էրզրումի վիլայեթի հայ բնակչությունը հեծում է հարկերի ու դաժանությունների ծանրության տակ։

Ըստ Մուշից ստացված տեղեկությունների, հայերը դաժան հարկապահանջությունից և ապառքների մուծման համար իրենց ունեցվածքը աճուրդով վաճառելու պատճառով համբերությունից դուրս գալով, որոշել են բոլորն անխտիր ուղղափառություն ընդունել՝ հուսալով, որ դրանով կազատվեն թուրքական վարչակարգի դաժանություններից։ Մուշի որոշ գյուղերում ընդհարումներ են տեղի ունեցել ժանդարմների և հայերի միջև, որոնք ավարտվել են, իհարկե, ոչ հայերի օգտին։

Ա. Շարիտաեր

АВПР, Посольство в Константинополе, д. 2680, л. 38.

105. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՉԱՐԻԿՈՎԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆԵՐԱՑՈՎԻՆ

Մեպագրից **8 Սեպտեմբերի 1911 թ.**

Վերջին ժամանակներս հայերի սպանությունների և նրանց կյանքի, պատվի ու ունեցվածքի նկատմամբ հանցափորձերի դեպքերը ոչ միայն չեն նվազել, այլև, ընդհակառակը, ավելի ու ավելի են հաճախացել։ Հայերը հատկապես ընկճված են նրա-

նից, որ հանցավորները մինչև այժմ համարյա ոչ միայն օրինակելիորեն չեն պատժված, այլև նույնիսկ լրջորեն չեն հետապնդվում արդարադատության կողմից...

Ամեն օր հայկական թերթերը հաղորդում են նոր միջադեպերի ու նոր ոճրագործությունների մասին։ Եվ Բիթլիսի վիլայեթն է ամենից շատ տուժում դրանցից։ Բոլորովին վերջերս՝ օգոստոսի 30-ին, այս վիլայեթի արքեպիսկոպոսը հաղորդել է պատրիարքարանին. «Քուրդ ցեղապետները խրախուսված են պաշտոնատար անձանց անտարբեր կամ, ավելի ճիշտ, բարյացակամ վերաբերմունքից։ Նրանք ահաբեկում են իրենց շրջանների բնակչությանը և պատրաստվում են կրկնել իրենց նախկին «սխրանքները»... Բնակչությունը ոչ մի տեղ իրեն անվտանգ չի զգում, ամենուրեք տագնապալի լուրեր են պտտվում...»

Քաղաքացիների կյանքի և պատվի դեմ կատարվող հանցափորձերը ու դրանց զուգակցվող կողոպուտները, առևանգումները և բռնի իսլամացումը դարձել են խրոնիկական երևույթներ։ Պետք է նշել, որ այդ խայտառակ արարքների կազմակերպիչների մեջ հոլովվում են պետական աստիճանավորների անուններ՝ Կախտա-Միրզեի (Մալաթիա) մյուդիր Ֆեհմի էֆենդու, որը առևանգել է Զարուհի անունով մի հայուհու, և Գելենջիկի մյուդիրի, որի արարքներից տուժել են քահանան և գավառի հայերը։ Մալաթիայի աշխարհիկ համայնքը պատրիարքներին տեղեկացրել է, որ կառավարությունը փոխանակ պատժի հանցավորներին, նրանց նշանակել է ուրիշ, ավելի բարձր պաշտոնների։ Սամսոնում ոստիկանական երկու գործակալներ խուզարկության պատրվակով զոռով ներխուժել են մի այրի հայուհու տունը և այդտեղ սանձարձակություններ արել։ Միևնույն ժամանակ Ֆարկինի եպիսկոպոսի փոխանորդը 1911 թ. հուլիսի 18-ին պատրիարքարանին հաղորդել է, որ կառավարությունը շրջակայքի մի քանի քրդական ցեղերի կողմից կատարվող կողոպուտներին վերջ տալու համար այդտեղ է ուղարկել մայոր Մուրադ բեյին՝ 66 հեծյալներով, բայց մայոր Մուրադ բեյը փոխանակ ավազակներին հալածելու, հայերին է ճնշում և նրանցից զենք պահանջում...

АВПР, Политархив, д. 3457, л. 68—70.

106. Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԻՑ

Հուլիս—սեպտեմբեր 1912 թ.

1. Ախթամարի կաթողիկոսական տեղապահ Եղնիկ վարդապետից։ 19 հուլիսի 1912 թ.։

Վերջին օրերս Ախթամարի թեմի Գավաշում, Խիզանում և Շատախում սպանվել են երկուական մարդ. ընդամենը՝ վեց հայ։

Անվտանգության բացակայության հետևանքով ժողովուրդը գտնվում է հուսահատության մեջ...

2. Վանի թեմի առաջնորդ Սարաջյան եպիսկոպոսից։ 18 օգոստոսի 1912 թ.։

Ավազակապետ Միր Մհեն օգոստոսի 16-ին Շատախի գավառի Կրեմենց գյուղից սպանեց չորս տղամարդու, երկու կնոջ։ Գյուղացիները սարսափահար լքելով գյուղերը և ցանքերը՝ փախել ապաստանել են Շատախում։ Սպանությունների և կողոպուտների հաճախացման հետևանքով վիլայեթում հաղորդակցությունն ընդհատված է...

3. Ախթամարի կաթողիկոսական տեղապահ Եղնիկ վարդապետից։ 25 օգոստոսի 1912 թ.։

Խիզան, Սպարկերտ և Կեցան գյուղերը կողոպուտի ու խժդժությունների են ենթարկվել։ Ազլարում և Սպարկերտում սպանվել է 6 հոգի, առևանգվել է մեկ կին։ Այդ ավանների հայ բնակչությունը լքելով իր տունուտեղն ու ցանքսերը՝ դեսուդեն է փախել...

4. Մշո թեմի առաջնորդարանից։ 1 սեպտեմբերի 1912 թ.։

Դրությունը նախկինն է, դեպքերը [սպանություններ] կրկնվում են, կառավարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկել։

АВПР, Политархив, д. 3459, л. 68—69.

107. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԻՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԵՆՅԱՆԻՆ

Նամակից **Կ. Պոլիս, 4 սեպտեմբերի 1912 թ.**

Կսպասեինք ազգովին և լի հուսով, որ օսմանյան սահմանադրության հռչակումն ետքը, որ քանդեց հայոց արյամբ ողողված բռնապետական նախորդ դրությունը, այլևս վերջ գտնեն

այդ անլուր չարիքները, սակայն, ցավոք սրտի, կհարկադրվինք հաստատելու, որ իրաց վիճակը հայոց նկատմամբ որևէ նպաստավոր փոփոխություն չկրեց, և Ատանայի ահավոր կոտորածով սկսավ այնպիսի նոր շրջան մը, ուր անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործությունք, որոնց ի մասնավորի թատր դարձան վերջերս Վանա, Աղթամարա, Բաղեշի, Մշո և Սղերդի վիճակները։ Նոր ի նորո հասած հեռագրեր գուժեցին սպանության, ավարառության, առևանգումներու դեպքեր, և բռնազբոսիկ իսլամացումներ, նույնիսկ անչափահասներու, որք տեղական իշխանության պաշտոնեից աչքին առջև և անոնց անտարբերության, չըսենք գաղտնի համամտության կամ մեղսակցության շնորհիվ՝ ի գործ կդրվին մերազնեից դեմ, որ անզեն ու անպաշտպան կգտնվին խուժդուժ ու զինյալ խուժանին առջև, խաղալիք թողված անոր մոլեռանդական վայրագ կրից, որ դեռ ծարավն ունի իր երբեմնի կոտորածներուն և ավարները շարունակելու, և կսպառնա սպառսպուռ չքացնելու հայ ժողովուրդը, եթե անմիջական ու իրական միջոցներ ի գործ չդրվին պաշտպանելու համար զայն։

Քանի՜-քանի՜ անգամներ Բ. Դռան ուշադրության և տնօրինության ներկայացուցած են արդեն հայաբնակ նահանգներու ողբալի վիճակը, քանի՜-քանի՜ թագրիր մատուցած են Բ. Դռան՝ թե հողային խնդրույն կարգադրության համար, որ երկրագործ ժողովուրդը զրկած է իր ապրուստի միջոցեն, և թե այլազան հարստահարությանց վերջ տրվելու խնդրանոք, և խոստումներ ընդունված, որպիսիք են՝ լիազոր հանձնաժողով կարգել, ամեն ինչ ի տեղվոջ քննելու և ի գործ դնելու համար արդարությունը, զինվորական զորություն ղրկել՝ զսպելու համար չարագործներու ոհմակը, բայց այս խոստմանց և ոչ մին գործադրվեցավ, մինչև որ իրերն եկան հասան ներկա դառնագին վիճակին, ու հարկադրվեցանք վարչական պատգամավորության մը հետ դիմել տերության բոլոր նախարարաց, պարզել իրաց վիճակն, և այս անգամ դառնացած հոգով ու ճարահատ, բուռն կերպով բողոք բառնալ այն չարագործությանց մասին, որ նույնիսկ ահմանադրական կառավարության օրով ի գործ կդրվին բազմաշարշար ժողովրդի մը դեմ, որու բաժին եղած է միշտ տառապիլը իր հայրենի հողին վրա, և սակայն ընդհանուր երկրին զարգացման ու քաղաքակրթության մեկ զորեղ ազդակն եղած

է, կատարելով իր՝ քաղաքացիի ամեն պարտականություններն, և միշտ այս տերության բարգավաճման ու զորության մեջ փընտրելով իր օգուտը։ Ըստ սովորականին դարձյալ խոստումներ եղան ազդու հրամաններ ուղղելու գավառական իշխանությանց, պատժելու և զսպելու չարագործները, հրամաններ, զորս փութացինք հաղորդել մեր առաջնորդարաններուն և սակայն ի պատասխան Մուշեն, Բաղեշեն և Սղերդեն գուժաբեր հեռագրեր հասան մեզ նոր ի նորո ծանուցանող, թե ոչ մեկ գործադրություն տեղի չէ ունեցած, թե վիճակն կշարունակե և թե ժողովուրդն մատնված է նույնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին։

Ահավասիկ, վեհափա՜ռ ս. Հայրապետ, այս է Թուրքիո Ձեր հոտին վիճակը՝ հարատև կեղեքում, անվերջ ու անասելի տառապանք, անմեկնելի անտարբերություն կառավարության կողմե, հուզմունք ազգին մեջ, արտասահմանի ազդայիններու կողմե ալ բողոք և առաջարկ, դիմելու ուր որ անկե և հասկցնելու մեր վիճակը, լսելի ընել տալու մեր աղերսը և դարման մը ձեռք բերելու համար։

Ձեր վեհափառության հրամանին համաձայն պարզելով իրաց այս վիճակը, նախ պարտավոր կզգանք զմեզ Ձեր վեհափառության հայտնելու, թե ինչպես մեր նախորդներն, նույնպես և մենք չենք թերացած կատարելու մեր պարտականությունը և հետապնդելու կենաց, ընչից և պատվո ապահովություն հաստատել տալու համար հայաբնակ նահանգաց մեջ, և հետո ըստ որում մեր ձեռք առած միջոցներն այլևս ապահովություն չէին ազդեր մեզ փափագված արդյունքը հառաջ բերելու, ըստ որում Ձեր վեհափառությունն իբր հայր հասարակաց կպահանջե մեզմե իր հոտին անդորրությունն ու ապահովությունն, և ըստ որում իր բարձր դիրքով և պաշտոնական հարաբերությանց դյուրությամբ և ընդհանուր կացության գիտակցությամբ ի վիճակի կգտնվի մեզ տալու կարևոր հրահանգներն, կխնդրենք, որ շնորհ բերեք մեզ հաղորդել Ձեր խորհուրդն, որով կարելի պիտի լինի որոշել այն ուղղությունն, որու հետևիլ բանավոր և գործնական կրնա լինիլ և սատարել իրաց ելք մը գտնելու, որով և փրկելու զմեզ թե՛ ազգին և թե՛ Ձեր վեհափառության առջև պատասխանատու մնալու դժբախտ հարկեն, և նույնիսկ խղճի խայթե, զոր կըզդամք հանապազոր, տեսնելով Թուրքիո Ձեր հոգևոր հոտին տառապանքն, անոր անէացման համար ի գործ դրված անողո-

քելի ծրագիրը, և մեր աղերսներուն և բողոքներուն ապարդյուն մնալը...[20]

АВПР, Политархив, д. 3459, л. 70—73.

108. ԱԴԱՆԱՅԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻՆ

Զեկույցից Մերսին, 8 (21) սեպտեմբերի 1912 թ.

Որքան էլ տարօրինակ թվա, այնուամենայնիվ, ինչպես արդեն պատիվ եմ ունեցել հաղորդելու այդ առթիվ արված իմ զեկույցներում, բոլոր հիմքերը կան կարծելու, որ անցյալ ռեժիմի օրոք իրադրությունն այս վիլայեթում շատ ավելի քիչ երկյուղ էր ներշնչում, քան այժմ, և դա չնայած այն բանին, որ այն ժամանակ Հայկական հարցը չափազանց սուր էր դրված։ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, որը պետք է վերականգներ կարգուկանոնը և սահմաններ իրավունքներ, ազատություններ ու արդարություն, սոսկ կարողացավ այստեղ սերմանել, ինչպես և վիլայեթների մեծ մասում, մեծագույն անարխիա։ Նույն այն զինվորները, որոնց կոմիտեն Սալոնիկից Ադանա ուղարկեց 1909 թվի ապրիլյան իրադարձությունների ժամանակ հայկական ջարդեր հրահրողներին պատժելու համար, հենց իրենք շատ ավելի չարիք գործեցին՝ լրման հասցնելով արյունոտ ու բարբարոսական այն սանձարձակությունները, որ սկսել էին իրենց հավատակից մուսուլմանները։ Այդ զինվորներն սպանում ու գնդակահարում էին բոլոր այն հայերին, ովքեր դեռ կենդանի էին մնացել, խտրություն չդնելով տղամարդկանց, կանանց ու երեխաների միջև, հրդեհում էին տները, խանութներն ու բնակարանները և թալանում այն ամենը, ինչ ձեռքներն ընկնում էր։

Որպես արդարադատության բարձրակետ՝ ռազմական դատարանը, որ կոչված էր գազանություններ կատարած հանցագործների գործերը քննելու համար, կախել տվեց մի քանի անմեղ հայերի...

Ինչ վերաբերում է իսկական ոճրագործ մուսուլմաններին, պպա նրանց դատապարտեցին մի քանի ամսով աքսորի այնպիսի պրովինցիաներ, որտեղ գտնվելը նրանց համար դժվար

թե տհաճ լինի. Ալեքսանդրիա (Եգիպտոս), Կահիրե, Հռոդոս կղզի։

Թող հիմա որևէ մեկը փորձի հերքել, թե բոլոր անդամներն այս դատարանի, որի որոշումները բողոքարկման ենթակա չէին, Ադանայից չեն մեկնել ոսկով լեցուն գրպաններով։ Կոտորածի ժամանակ այս ոսկին, իհարկե, հայերից է խլվել, քանի որ հայերին պատկանող բոլոր սնդուկները կոտրել էին ու դատարկել։ Հասարակ զինվորներն էլ ստացան իրենց բաժինը. չէ՞ որ նրանք «բարի գործ» էին կատարել՝ օգնություն ցույց տալով իրենց հավատակիցներին այդ խնդրի կատարման ժամանակ։ Այստեղ փորձում էին կոծկել այդ բանը և նույնիսկ արդարացնել զինվորների այդքան խայտառակ արարքները։

Այսպես է, ըստ երևույթին, հասկանում իրավունքի, ազատության և արդարության սկզբունքները «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, մի կազմակերպություն, որը պետք է փոխարիներ բռնության, աքսորների և սպանությունների տիրապետությանը... Զարմանալի չէ, որ վալին և քաղաքացիական աստիճանավորները, որոնք միմյանց փոխարինում են այս վիլայեթում, այս իրադարձությունները վերածելով իրենց ընչաքաղցությունը հագեցնելու աղբյուրի, ոչնչի հանգեցրին արդարադատության վերջին խղճով մնացորդները։ Այսպիսով, բավական է, որ մարդս քրիստոնյա լինի, որպեսզի նրա գործը տանուլ տրվի դատարանում և որպեսզի սրան կախաղանի արժանի ճանաչեն ամեն անգամ, երբ հակառակ կողմում հանդես գա մուսուլմանը։ Կոտանքները, որոնք նախկին իրավակարգի օրոք անհայտ էին այս կողմերում, այսօր բանտերում կիրառվում են քրիստոնյաների նկատմամբ... Բայց կասեն. Ադանայի մուսուլման բնակչությունը ամենալավ հարաբերությունների մեջ էր քրիստոնյաների հետ. այդ բնակչությունը կարողացավ դիմակայել բոլոր սադրիչներին և ազդեցությանը այն մարդկանց, ովքեր տրամադրված են ընդդեմ հայերի... Ինչո՞վ բացատրել, որ մուսուլմանները վերածվեցին այն աստիճանի ֆանատիկոսների, որ ընդունակ դարձան կատարելու պատմության մեջ չտեսնված ամենաբարբարոսական արարքներ...

Եթե մենք վերականգնենք փաստերը ժամանակագրական կարգով, ապա կկարողանանք արձանագրել, որ դա ևս հանդիսանում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ձեռքի գործը, այլ ոչ թե նախկին կառավարության... Այն բանից հե-

տո, երբ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն իշխանությունն իր ձեռքն առավ և նրա առաքյալներն սկսեցին քարոզել բոլոր մզկիթներում..., արթնացան արյունռուշտ բնազդները այդ տգետ, բայց մինչ այդ խաղաղ բնակչության մեջ, որի հետևանքը եղան 1909 թվի ողբերգական դեպքերը...

Մավրոմատի

АВПР, Политархив, д. 3459.

119. ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ

Երևան, 25 սեպտեմբերի 1912 թ.

Թուրքահայաստանից եկող տխուր լուրերը չեն դադարում։ Մասնավոր ջարդերը վերսկսվել են, և հայ ժողովուրդը նորից կանգնել է վտանգավոր սպառնալիքի առաջ։ Ստեղծվել է մի դրություն, որի դեպքում կարող են կրկնվել 1895—1896 թթ. ողբերգական իրադարձությունները։ Առաջվա նման այնտեղ կյանքի, գույքի և պատվի երաշխիք չկա, որի հետևանքով Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի են ունենում բողոքի միտինգներ։ Վանից, Բաղեշից, Մուշից, Տիգրանակերտից և Կիլիկիայից եկող անհանգստացուցիչ լուրերը այստեղ՝ Ռուսաստանում, ցնցել են հայ հասարակայնության լայն շրջաններին։ Հիշյալ երևույթներից վրդովված, վերահաս վտանգն ու սարսափները կանխելու նպատակով, մենք՝ հայոց բարեգործական և լուսավոր-լուսավորական հաստատությունների ներկայացուցիչներս, գումարելով թեմական խորհուրդ, որոշեցինք, Ձե՛րդ սուրբ օծություն, դիմել Ձեզ՝ ամենայն հայոց կաթողիկոսիդ, դիմել մեր հորը՝ որդիական խորագույն ակնածանքով և խնդրել, որ դիմեք Ռուսաստանի հզորազոր կայսերը, որպեսզի նա իր միջամտությամբ պաշտպանի Թուրքահայերին և վերջ դնի նրանց տառապանքներին։

(31 ստորագրություն)

ՀԽՍՀ ԳԳԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 679, թ. 1։

110. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՕՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ

2 հոկտեմբերի 1912 թ.

Ծանր պատուհաս է բաժին ընկել Թուրքիայի սահմաններում բնակվող բազմաչարչար հայ ժողովրդին։ Նահատակ ժողովրդի կոծն ու հառաչն է լսվում ամենուրեք։ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը դիմելով ինձ՝ նկարագրում է իր ու Կոստանդնուպոլսի հայոց ազգային ժողովի անելանելի վիճակը և ինձնից խորհուրդ ու աջակցություն է խնդրում։ Թուրքիայի անատոլիական վիլայեթներում և Կիլիկիայում հայերը անպատիժ կերպով ենթարկվում են անլուր հալածանքների. նրանց սպանում են, թալանում, նրանց կանանց ու աղջիկներին տանում են իրենց հարեմները և շատերին բռնությամբ իսլամացնում են։ Հայոց պատրիարքը բազմիցս դիմել է Բարձր Դռանը արդարադատության և իր հոտի պաշտպանության համար, բայց ստանալով միայն փուչ խոստումներ՝ իր հայացքը իմ միջոցով հառում է ռուս մեծ ժողովրդին ու մեր մեծազոր թագավորին և նորին մեծությունից է սպասում պաշտպանություն ու հովանավորություն...

Ես վճռեցի Ձերդ պայծառափայլության մոտ՝ Պետերբուրգ ուղարկել էջմիածնի հայ լուսավորչական սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսին՝ նրա վրա դնելով Ձերդ պայծառափայլությանը ներկայանալու պարտականությունը, Ձեզ հանձնելու Կոստանդնուպոլսի պատրիարքի զեկույցի ու թաքրիրի (հուշագիր) թարգմանությունը և բանավոր ծանոթացնելու հանգամանքների հետ։ Ձե՛րդ պայծառափայլություն, ծանր լուրերի ազդեցության տակ հուզվել են սկսել նաև մեր պետության սահմաններում ապրող հայերը և իրենց խնդրագրերով, հեռագրերով ինձ խնդրում են միջնորդել մեր միապետի առաջ և նորին մեծությանն աղերսել իր հզոր հովանավորության տակ առնել հայ ժողովրդին Թուրքիայում... Այս պատմական ծանր օրերին, երբ բալկանյան քրիստոնյա ժողովուրդները, որոնք ազատագրված են Ռուսաստանի հզոր հովանավորությամբ և զենքի ուժով, իրենք զինված գնում են պաշտպանելու իրենց հարազատներին Թուրքիայում, ես՝ հայ ժողովրդի ընտրյալս, անսալով նրա ձայնին ու զգացմունքներին՝ Ձեր միջոցով դիմում եմ Արքելոի

քրիստոնյա ժողովուրդների վաղնջական պաշտպանին և հանուն աստծո աղերսում եմ, որ Ձեր հովանավորության տակ առնեք Թուրքահայաստանի բազմաչարչար հայ ժողովրդին։

Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԵՎՈՐԳ V

АВПР, Политархив, д. 3459, л. 59—60.

111. ՏԱՐՈՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ

18 հոկտեմբերի 1912 թ.

Օսմանյան սահմանադրության հռչակումը որքան որ մեծ խանդավառությամբ ընդունվեցավ բոլոր հայերու կողմանե՝ սակայն անոր արդյունքը չեղավ այն, ինչ որ կակնկալեր ճնշված ժողովուրդը։ Իրավ է, մեկ-երկու տարի մասնակի խաղաղություն մը և ապահովություն տիրեց ու երթևեկությունները դյուրացան, բայց հիմնական բարենորոգում մը և բարեկարգություն մը երբեք չգործադրվեցավ և մեր թեմի մութ անկյունները, ինչպես են Սասուն, Խութ, Բռնաշեն, Մոտկան և այլն, նույնիսկ ենթարկված մնացին հնեն ի վեր տիրող բռնության ներքև և, որ աստիճան մը ավելի ծանրացավ, որովհետև ի լուր սահմանադրության ճնշվածները շարժում մ'ըրին անոնց լուծը թոթափելու. սպանություններ, առևանգություններ և ավարառություններ ու գողություններ շարունակվեցան, և չարագործները մնացին անպատիժ։

Մեր գավառի համար ժողովրդյան ամեն դասակարգին խորին ցավ պատճառող և շատ մը չարյաց պատճառ եղող ամենեն կարևոր խնդիրը հողային հարցն եղած է։ Հայերը բռնության շրջանին ոչ միայն կողոպտված էին, ոչ միայն հազարավոր պատվական կյանքեր զոհված էին, այլ Համիդի հայաջինջ քաղաքականությունեն քաջալերված թուրք և քուրդ պեյեր ու աղաներ հայերու կալվածներ հափշտակած էին։ Գյուղ չկա, որ այդ զրկանքին ենթարկված չըլլար։ Հայերը միամտություն ունեցան կարծելու, թե սահմանադրության շնորհիվ վերստին տեր պիտի ըլլան իրենց սեփական հողերուն, այս հույսով ժողովրդական բողոքները միմյանց հաջորդեցին, բռնավորները սարսափահար

եղած էին։ Եղան անոնցմե ոմանք, որ օրվան տպավորությունեն ազդված՝ իրենց ձեռքի տակ գտնված հողերը իրենց սեփականատերերուն դարձուցին, սակայն շուտով երևան ելավ օսմանյան պաշտոնեից հին նենգ քաղաքականությունը, որ ոչնչացուց, ցրեց բոլոր հույսերը։ Քանի՜-քանի անգամ վարչական ժողովներով վճիռներ տրվեցան — հողերը ետ տալ իրենց սեփականատերերուն, որոնք ի ձեռին ունեին օրինական կալվածագրերը, այդ մտքով բարձրագույն հրամաններ ալ ստացվեցան, բայց այդ ամեն չկրցան ազդել բեկերու, աղաներու ազդեցության տակ գտնվող անպարտաճանաչ պաշտոնեից, և բռնավորները տեր մնացին հայերեն հափշտակված հողերուն։ Այս մասին մանավանդ անտանելի է այն հայերու վիճակը, որոնք ժամանակին սուրե և հուրե փախչելով գաղթած էին աստ և անդ, մեծ մասը ռուսական հողի վրա ապաստանած ու սահմանադրության լուրը առնելով՝ վերադարձած էին հայրենիք։ Ասոնք մինչև ցայսօր ալ չկրցան ձեռք ձգել իրենց կալվածները ու կմնան երեսի վրա դռնեդուռ, թափառական, ո՛չ վարելահող ունին և ո՛չ տուն-բնակարան, ո՛չ ոք կը գթա անոնց արտասուքներուն։ Կառավարությունը չէ բավականացած գաղթող հայերու հողեր գրավել ու չերքեզ և թուրք գաղթականներուն տալ, այլ իրենց տեղերեն չշարժվող ու հայրենիք մնացող բազմաթիվ հայերու հողերն ալ առած՝ մահմեդական գաղթականներուն տված է։ Այս տեսակ անիրավ զոհերու մեջ նշանավոր են գավառիս Վարդենիս, Առնիստ, Դրմերտ և Պոստաքյանտ գյուղերը, որոնց հողերու ահագին մասերը բաժնված են չերքեզներուն, և հայերու մշտական բողոքները անլսելի մնացած են։ Սահմանադրությունեն ասդին ալ նոր-նոր դրավումներ եղան, օրինակ՝ Մանազկերտու Գարագայակ գյուղի Ավտալ աղայի «Պոսթանգայա» անունով ընդարձակ կալվածը՝ զոր 1910-ին նույն գավառի կայմակամը չերքեզներուն տվավ։ Սասունի Ձիթենք և Դաշտ-պատրիկ հայ գյուղերը նույն գավառի դատարանի անիրավ վճռով վերոհիշյալ թվականին տրվեցան մուսեցի և բողրքցի քյուրտերուն, Սասունի Գապլճոզ գյուղի երեք հայ ընտանիքները իրենց տուներեն դուրս ձգվեցան, և անոնց տուները և բոլոր կալվածները տրվեցան մուսեցի ավազակաբարո քյուրտերուն...

Կովկասեն և Բումելիեն գաղթող մահմեդականներն ալ հայերու հողերու վրա տեղավորցուցին և այսպես հայու հայրենիքը հայի համար անտանելի դարձուցին։ Համիտը ինկած, մեջ-

տեղեն ելած է, բայց համիտական հայաջինջ քաղաքականությունը հավատարմաբար կշարունակվի։ Իզուր կամբաստանվին քյուրտերը, չերքեզները և կամ ուրիշ ավազակաբարո տարրերը, շարության ու նենգության բույնը Թուրք կառավարությունն է, որ կուսակցությունն ալ ըլլա զայն վարողը՝ ի՞թիատ կամ իթիլաֆ, տարբերություն չկա։ Քյուրտը ինչպե՞ս երես չառնի և իր ամեն ուզածը չընե, երբ, հակառակ իր ոճրագործություններուն, պաշտպանություն կը վայելե թե զինվորական իշխանություններեն, թե ոստիկանությունեն և թե ժանտարմաներեն, և ասոր ընդհակառակը՝ կը տեսնի, որ հայերը կը հալածվին, անոնց բողոքներու հանդեպ աչքերնին և ականջներնին կը փակեն, անոնց վրա տեսնված ամենահասարակ զենքն անգամ կը գրավեն և դանոնք պատժի կը ենթարկեն, կը տեսնե, որ անոնց (հայերու) հետ կվարվին թշնամիի պես, մինչ իրենք՝ քյուրտերը ոտից ցգլուխ զինյալ կը շրջին և երբեք դիտողություն մը չեն լսեր։ Ահա այսպես, Թուրք կառավարությունը ի գործ կը դնե երկու չափ և երկու կշիռ, և անոր համար հայ ժողովուրդը, սկսյալ գեղջուկ ռամիկեն մինչև քաղաքացին, տգետն ու ուսյալը, հավասարապես հուսահատած են և բոլորովին կորսնցուցած են իրենց վստահությունը Թուրք կառավարության վրայեն և աչքերնին դեպի հյուսիս դարձուցած՝ քրիստոնյա մեծ կայսրությունեն կը սպասեն իրենց փրկությունը։

Մենք իբրև առաջնորդ հաճախ մեր պաշտոնի բերումով Թուրք պաշտոնյաներու հետ շփման մեջ լինելով՝ չպատահեր երբեք, որ մեր սիրտը դառնությամբ չեցվի և ի խոր չխոցվինք, տեսնելով այդ պաշտոնյաներու հայտնի անարդարությունը և ազգայնամոլ կողմնակալությունը, զոր ամեն պարագայի մեջ ցույց կուտան դեպի հայը։ Իսկապես, ինչպես ոմանք կըսեն, ոչ թե հայերը այս երկրի խորթ զավակներն են, ավելի ճիշտ կլինի ըսել, թե՝ ստրուկներն են, և եթե Թուրք կառավարությունը մնա, հայը դատապարտված է մնալ հավիտենական ստրուկը, իր կաշիի վրա կրելու ամեն կերպ բռնությունները և իր քրտինքի գառն աշխատությամբ կշտացնելու Թուրք մյութեղալիպը (բռնավոր) և քյուրտ պեյն ու աղան։

Մեր գավառի ցավերուն մեջ նույնպես կարևոր տեղ մը կը բռնե տասանորդի կապալառուներու (մյուլթեզիմ) ի գործ դրած բռնությունները, որոնց պատրվակներով հայ և քյուրտ գյուղացին կը կեղեքեն և կը կողոպտեն, շաբաթներով կալերը երեսի

վրա կը ձգեն, մաքրված ցորենը չեն չափեր՝ ավելորդ հարկ պահանջելով, մինչև որ գոհացում ստանան, իրենց բաժինը գլուխգլուխ, այսինքն՝ չափը դիզված, առանց փայտ զարնելու կառնեն, գիշերով ցորենի շեղջերու կնիքը գաղտնի ավրել տալով՝ առավոտուն տուգանք կը պահանջեն։ Դատախազն ալ, դատավորն ալ իրենք ըլլալով, ո՞վ կարող է դիմադրել։ Եթե երբեք գտնվին ոմանք, որ համարձակին կառավարության դիմել, ոչ միայն ապարդյուն ետ կը դառնան, այլ ավելի ծանր վնասներու կենթարկվին, որովհետև այդ կապալառուներու ազգականներ ու բարեկամներ են կառավարական ժողովներու մեջ պաշտոն վարողները։ Եթե այդ պարագան ալ չըլլինի, բավական է, որ բողոքողները քրիստոնյաներ և ամբաստանյալները մահմետական են՝ հետևանքը հայտնի է... Բանջարանոցներու, այգիներու և սեխաստաններու համար ալ անդր քան զչափ եռապատիկ և քառապատիկ տուրք կը պահանջեն։ Տասանորդի վարձակալության այս քանդիչ, կեղեքիչ դրության դեմ թեև տարիներե ի վեր երկրի ամեն կողմերեն շարունակ բողոքներ բարձրացած է, սակայն դրությունը կը շարունակվի։ Նախորդ տարվան ելևմտից մինիստր Ճավիտ բեյը Օսմ[անյան] խորհրդարանի մեջ խոստովանելով հանդերձ այդ դրության վնասակարությունը, բայց ի շահ պետական արկղին դեռ ատեն մըն ալ շարունակվելու է, ըսավ։ Ճանապարհի տուրքը՝ անձի գլուխ 12 ղրշ. ողջ դրամ՝ ամեն տարի կառնվի, բայց Թուրքիո ճանապարհներու վիճակը, մանավանդ այս կողմերուն, թողված է անձրևներու և հեղեղներու քմահաճույքին։ Սասունի մեջ շրջելուս քանի-քանի անգամ ձիով մեկտեղ գլորվեցա և մահեն մազապուրծ ազատվեցա։ Ուրիշ զեղծում մ'ալ այդ տուրքի մեջ. մինչ այդ տուրքեն զերծ պետք է մնային կաղեր, կույրեր, հաշմանդամներ, քահանաներ, ուսուցիչներ և օտարության մեջ գտնվողներ, սակայն այս տեղերը առանց բացառության ամեն կարգի անձերեն, նույնիսկ ջատ անգամ մեռածներեն ալ տուրք կգանձեն։

Թուրքական ոստիկան զինվորները (ժանտարմա), որոնց պաշտոնը գլխավորապես գավառի ապահովության հսկելն է՝ չարագործները հալածելով և ձերբակալելով, սակայն իրենք ավազակներեն ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զորս կը ծեծեն, կը խոշտանգեն, կը կեղեքեն, որոնցմե ձրի կը ստանան իրենց և ձիերու կերակուրը. ասոնք սովորական գործերնին է, մանավանդ հայ զինվորցուները ժողվելու կ'երթան ու

զանոնք պատրաստ չեն գտներ, կրակ ու բոց կը գառնան անոնց ազգականներու գլխուն։ Ասոնց բարբարոսական և օրինազանց վարմունքի դեմ քանիցս հեռագրերով բողոք բարձրացուցի, իբրև թե քննություն բացվեցավ, ժողովուրդներեն ոմանք հրավիրվեցան, բայց քննիչներու բոլոր ջանքն եղավ ճշմարտությունը ծածկել և ոստիկան զինվորները արդարացնել, ու անոնք իրենց պետերու և կառավարության այս հայտնի պաշտպանությունեն քաջալերված՝ կը շարունակեն իրենց բռնությունները և վայրագությունները անօգնական ժողովրդյան հանդեպ։

Սահմանադրությունեն առաջ՝ հայերը հալածելու, թալանելու և կողոպտելու ամենահաջող միջոցը եղած էր հայերը կասկածելի ցույց տալ։ Հիմա ևս կը թվի, թե թուրքերը նորեն կ'աշխատեն նույն ձամբան բռնել։ Թեև հայը օսմանյան պետության ամենահավատարիմ հպատակ եղած է և է, մանավանդ սահմանադրական շրջանին մեջ, և զոհողություններու առջև կանգ չէ առած, այսօր իր զավակն ալ թուրք և քյուրտ զինվորի հետ հայրենյաց պաշտպանության համար կողք կողքի արյուն կթափե, բայց այդ ամենը արժեք մը չունի, և թուրք ժողովուրդը, մանավանդ անոր պուրժուա դասակարգը, շատ ուրախ կը լինի, որ հենց այսօր հայու զինվորագրությունը արգելվի, և արդեն այնքան գեշ կերպով և խտրական հոգիով կվարվին հայ զինվորներու հետ, որ զորանոցը անոնց համար դժոխք կը դարձնեն։ Նախանցյալ ձմեռը տեղվույս զորանոցի մեջ գտնված 80-ի չափ հայ զինվորներեն 25—30-ը թիֆոյի հիվանդության զոհ գացին աննպաստ պայմաններու պատճառով։ Այս և ուրիշ շատ առթիվ հայ զինվորներու ցավալի գանգատներուն հաճախ թարգման հանդիսացած ենք թե պատրիարքարանը և թե անոնց հրամանատարներուն դիմելով ու արդարություն խնդրելով, բայց գրեթե արդյունք մը չէ տեսնված։

Իսկ սպանություններու և ալան-թալանի մասին ավելորդ կը համարիմ մանրամասն նկարագրություններով ձանձրացնել Ձեր վեհափառությունը։

Ի տեղեկություն կը ներփակեմ այս մեկ տարվան մեջ պատահած սպանություններու և ավարառություններու ցանկը։ Սակայն, ըստ իմ խոնարհ կարծյաց, խորին ուշադրության արժանի և նկատելի կետը ոչ թե այս դեպքերն են, որոնց մասին թուրք պաշտոնյայի ստորագրությունեն մինչև բարձրագույնները միշտ ջանադիր եղած են իբր մասնավոր դեպքեր ցույց տալ,

այլ այն վնասակար և հայակեր ուղղությունը, սև ատելության ոգին ու թունավոր զգացումը, որ ընդհանուր է ոչ միայն թուրք պաշտոնեից, այլ նաև անոր հարուստ ու զարգացյալ դասակարգին, շատ ցանցառ բացառությամբ։ Հայերու գանգատներու նկատմամբ անոնց բոլոր խոսքերը, խոստումները կեղծ են։ կը խաբեն թե՛ հայտնի, թե՛ գաղտնի և կը խաբեն առանց ամչընալու, թերևս մտքովնին կը ծիծաղեն դյուրահավատներուն վրա ալ։ Անոնց տգետները սոսկալի մոլեռանդ են և աչքերնին տնկած հայու ունեցածին, իսլամ չեղողի մը վրա արև անգամ չեն ուզեր որ դպի, իսկ կրթվածները կամ ժեոն թուրքերը սոսկալի ազգայնամոլ են և ավելի վտանգավոր[21]...

Երախտագիտական ամենաջերմ զգացմամբ համբուրելով
Ձեր սուրբ աջը՝ մնամ խոնարհ որդիդ ընդհ. վան [ահայր]
առաջն[որդ] Տարոնո

Ներսես եպիսկոպոս Խորոխանյան

ՀԵՍՀ ՊԳԳԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 39—50

112. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՒՍՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳԻ ՇՏԱԲԻՆ

Էրզրում, 28 Նոյեմբերի 1912 թ.

Սահմանադրություն հայտարարվելուց հետո Թուրքիայում ըստ էության ոչինչ չի փոխվել. փոփոխվել է սոսկ իշխանությունն ինքը, իսկ կարգերն ամբողջովին նույնն են մնացել։

Կարելի է առանց չափազանցության ասել, որ Թուրքիայի արևելյան վիլայեթների հայ բնակչության դրությունը ներկայումս ոչնչով ավելի լավ չէ, քան համիդյան ժամանակներում, այլ ընդհակառակը՝ նույնիսկ ավելի վատ է. առաջ գոնե որևէ իշխանություն կար, իսկ այժմ գավառներում լիակատար անիշխանություն է տիրում։ Թերթերը համարյա ամեն օր նորանոր լուրեր են բերում հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների մասին...

Թուրքիայում իմ բազմաթիվ ուղևորությունների ժամանակ ինձ վիճակվել է շատ բան տեսնել, հարկ է եղել նաև շատ խոս-

սել բոլոր դասերի հայերի հետ՝ սկսած հասարակ հողագործ գյուղացիներից ու վերջացրած մտավորական անձանցով, և իմ ողջ տեսած-լսածից ես ստացել եմ սոսկ մեկ տպավորություն, այն, որ այդ ժողովրդի վիճակը, որը նետված է մոլեռանդ և իրեն թշնամի մուսուլմանների միջև, իրոք սարսափելի է. յուրաքանչյուր ժամ, յուրաքանչյուր րոպե նրանք ստիպված են դողալ ոչ միայն իրենց գույքի համար, այլև՝ իրենց կյանքի, քանի որ նախապատրաստվող ջարդերի մասին լուրերը երբեք, ըստ էության, Թուրքիայում չեն դադարում։ Բնական է, որ այդպիսի պայմաններում ապրելը շատերի ուժից վեր է. ով որ կարող է, արտագաղթում է Թուրքիայից, մնում են լոկ նրանք, ովքեր այս կամ այն պատճառով ի վիճակի չեն արտագաղթել...

Հայկական ջարդերի չափերը չի կարելի անմիջականորեն կոտորածից ընկած զոհերով միայն հաշվել։ Անհամեմատ ավելի խորն են ընդգրկում և բնակչության կրճատման վրա ազդում դրանց անուղղակի հետևանքները, որոնք արտահայտվում են ծնելիության և դրա հետևանքով էլ՝ բազում տարիներով բնակչության աճի նվազման մեջ, ի հետևանք ջարդերին մշտապես ուղեկցող ֆիզիկական, հոգևոր և մանավանդ նյութական սպառման ու անկման...

Արմենի խորհրդական ՎԻՇԻՆՍԿԻ

ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1004, л. 433—436, 444.

118. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 117 ճեպագրից

26 նոյեմբերի 1912 թ.

Ս. Թ. նոյեմբերի 5-ի № 755 գրությամբ Ձերդ բարձր գերազանցությունը բարեհաճել էր ինձ ուղարկել Մինիստրների խորհրդի նախագահի հոկտեմբերի 31-ի № 6125 ինքնագիր նամակը՝ Թուրքահայերի պաշտպանության վերաբերյալ հինգ առդիրներով, և խնդրել էիք իմ եզրակացությունը տվյալ գործի կապակցությամբ։ Ձերդ բարձր գերազանցությունից իմ ստացած այդ գաղտնի հաղորդագրությունը համարյա համընկավ երկու երևելի հայ գործիչների կողմից ինձ տրված այցելությանը, որոնց

հետ ունեցած իմ զրույցի շարադրանքը օգտակար եմ համարում նախակցել իմ եզրակացությանը։

Վերոհիշյալ անձինք՝ Թուրքական պառլամենտի նախկին ազգամավոր Զոհրապը և հայոց պատրիարքարանի խառը ժողովի անդամ Մարտիկյանն էին։ Հայտարարելով, որ իրենք ինձ հետ խոսում են պատրիարքարանի և ամբողջ հայ ազգի անունից, նրանք ծայր աստիճանի մռայլ գույներով ներկայացրին իրենց ժողովրդի վիճակը, որը Թուրքական կայսրության մեջ ավելի ու ավելի զարգացող անիշխանության ազդեցությամբ վատթարանում է օրեցօր...

«Մեր պահանջները,— ասում էին պպ. Զոհրապն ու Մարտիկյանը,— շատ համեստ են։ Մենք ցանկանում ենք մեր անձի և ունեցվածքի անձեռնմխելիության ապահովությունը միայն. ապրելու իրավունք օրենքի սահմաններում։ Այդ իրավունքն իսկ Թուրքական կառավարությունը չի ուզում կամ չի կարողանում ապահովել մեզ համար։ Երբ Թուրքիայում հռչակվեց սահմանադրությունը, հայերն անկեղծորեն ողջունեցին այն, մտածելով, որ իրենց դարավոր տառապանքներին վերջապես վերջ է տրված։ Նույնիսկ Ադանայի 1909 թվի սարսափելի կոտորածը ներվեց Թուրքերին և մեղքը վերագրվեց հին վարչակարգին։ Բայց հետագա հանգամանքները հայերին ստիպեցին դառնորեն զղջալ իրենց դյուրահավատության համար։ Քրդերն առաջվա պես թալանում են, բռնաբարում և սպանում անպաշտպան հայ բնակչությանը, իսկ Թուրքական վարչությունը առաջվա պես երիթեսիանիորեն ներկա է լինում բոլոր այդ սարսափելի իրադարձություններին՝ ոչ մի միջոց ձեռք չառնելով դրանց վերջ տալու համար։ Քրդերի զավթած հողերը չեն վերադարձված հայերին, որոնք սնանկացած են մինչև վերջ։ Ամենավերջին ժամանակներս ուժգնանում են նախապատրաստվող նոր ջարդերի մասին չարագուշակ լուրերը։ Այս բոլոր փաստերը Թուրքահայերին հասցրել են լիակատար հուսահատության»։

Ապա անցնելով իրենց այցելության նպատակին՝ հայ պատգամավորները կտրականապես հայտարարեցին, որ հայ ժողովուրդը այժմ ոչ մի այլ ելք չի տեսնում, բացի Ռուսաստանին դիմելը, միայն որը կարող է փրկել նրան սարսափելի դրությունից։ Ընդ որում հիշյալ հայ գործիչները մատնանշեցին, որ հայ ժողովուրդը կորցրել է ամեն մի հույս Թուրքական որևէ բարենորոգության իսկության նկատմամբ՝ թեկուզև նույնիսկ

եվրոպական հսկողության տակ։ Մակեդոնիայի բարենորոգությունների, նրանց կարծիքով, անհաջող ելքը վկայում է բնակչության համար որևէ շոշափելի արդյունքի հասնելու անհնարինությունը թուրքական վարչության պահպանման պայմաններում։ Ուստի պպ. Զոհրապն ու Մարտիկյանը կարծում են, որ հայ ժողովուրդը կարող կլինի փրկվել միայն առավել արմատական միջոցառումների կիրառման դեպքում, այն է՝ հայկական վիլայեթների ռուսական օկուպացմամբ, ընդ որում՝ ոչ թե ժամանակավոր օկուպացմամբ, այլ՝ մշտական, որը լինի Ավստրիայի կողմից Բոսնիայի մինչև 1908 թ. օկուպացիայի բնույթի։ Ռուսական այդ օկուպացիայի ցանկության մեջ այժմ, իբր, համերաշխ են հայկական բոլոր կուսակցությունները։

Գտնելով, որ բնավ էլ մեր օգտին չէ մեզանից վանել հայերին, ես իմ զրուցակիցներին պատասխանեցի, թե ռուսաց կառավարությունը, հետևելով դարավոր ավանդույթներին՝ խորին կարեկցությամբ է վերաբերվում հայ ժողովրդի տառապանքներին։ Իսկ հայ ներկայացուցիչների կոնկրետ առաջարկություններին պարտք համարեցի վերաբերվել մեծագույն զսպվածությամբ՝ խոստանալով միայն կայսերական կառավարությանը տեղեկացնել դրանց մասին և մատնանշելով, որ ներկայումս, երբ դեռ վերջ չի տրված Բալկանյան պատերազմին, անպատեհ է որևէ գործողություն ձեռնարկել տվյալ հարցի կապակցությամբ։

Այն բանում, որ պպ. Զոհրապն ու Մարտիկյանը իրոք արտահայտում են թուրքահայերի մեծամասնության հայացքներն ու հույսերը, հավանաբար հիմք չկա կասկածելու։ Օրերս պատրիարք Արշարունու հետ իմ ունեցած զրույցը, նույն այդ պ. Մարտիկյանի ներկայությամբ, ինձ լիովին համոզեց այդ բանում։ Նորին սրբազնությունը կրկնելով հայ պատգամավորների բոլոր տրտունջները՝ ջերմորեն խնդրում էր թագավոր-կայսեր հովանավորությունը դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ։

Թուրքիայում հայոց հարցի այժմյան դրության վերաբերյալ Ձերդ բարձր գերազանցությանը արդեն տեղեկացված է ինչպես հոֆմայստեր Զարիկովի զեկուցագրերից (12(25) սեպտեմբերի 1909 թ., 3(16) հոկտեմբերի 1909 թ., 22 նոյեմբերի (5 դեկտեմբերի) 1911 թ., 17(30) դեկտեմբերի 1911 թ.), այնպես էլ իմ՝ սույն թվի հունիսի 16-ի № 18 զեկուցագրից, իսկ ինչ վերաբերում է հայոց հարցի այժմյան փուլին, ապա պետք է հավաստեմ, որ հիշարժան 1894—96 թվերից, երբ հայերը բարբարոսաբար կոտորվում էին Փոքր Ասիայում և բուն Կոստանդնուպոլսում, այդ դրությունը ոչնչով չի փոխվել դեպի ավելի լավը։ Հայոց գավառներում բարենորոգումների մասին դեկրետը, որ հրապարակեց սուլթան Աբդուլ Համիդը 1895 թ. հոկտեմբերի 20-ին՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճնշման տակ, մնաց որպես մեռած տառ...

Թաքրիրը, որը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի կողմից ներկայացված է Բարձր Դռանն ու արդարադատության մինիստրին և կցված է Մինիստրների խորհրդի նախագահի՝ ս. թ. հոկտեմբերի 31-ի գրությանը, ցավոք, տալիս է հավաստի պատկերը այն աղետների ու ճնշումների, որոնց ենթարկվում են սուլթանի հայ հպատակները։

Վերոհիշյալ հանգամանքներն ինքնըստինքյան բավարար չափով պարզաբանում են հայ զանգվածների կողմից Ռուսաստանի հանդեպ ավելի ու ավելի ուժգնացող հակումը և լիակատար հիմք են տալիս հավատալու այդ ուղղության անկեղծությանը։ Բայց Ռուսաստանի հանդեպ համակրանքը ներթափանցել է նաև հայ բուրժուազիայի և մտավորականության շրջանները, որոնց մեջ, ինչպես արդեն առիթ եմ ունեցել մատնանշելու, հեղափոխական կուսակցություններն սկսում են կորցնել իրենց հեղինակությունը, և կազմավորվում են նոր կուսակցություններ՝ պահպանողական ծրագրերով։ Օրերս Վանում, Բայազետում, Բիթլիսում, Էրզրումում և Տրապիզոնում մեր հյուպատոսներին արած իմ հարցապնդումները միահամուռ կերպով վկայում են, որ այժմ բոլոր հայերը, առանց կուսակցությունների խտրության, Ռուսաստանի կողմն են։ Օրինակ՝ Վանի մեր փոխհյուպատոսը ս. թ. նոյեմբերի 21-ին հեռագրում է, թե «բոլոր հայերը այժմ Ռուսաստանի կողմն են, անկեղծորեն ցանկանում են մեր զորքերի գալուստը կամ բարենորոգում՝ Ռուսաստանի հսկողության տակ»։ Բայազետի փոխհյուպատոսը նոյեմբերի 21-ի հեռագրով հաղորդում է. «Հայերը՝ բոլորը, առանց կուսակցությունների խտրության, խիստ թշնամաբար են վերաբերվում այժմ Թուրքիային և շատ են ցանկանում Ռուսաստանի պրոտեկտորատը և նրա կողմից Հայաստանի օկուպացումը»։

Այժմ ամենայն հայոց կաթողիկոսը նորին կայսերական մեծությանը Կովկասի փոխարքայի միջոցով դիմում է Ռուսաստանին, որպես «Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վաղն-

ջական պաշտպանի և հանուն աստծո աղերսում իր հովանավորության տակ առնել Թուրքահայաստանում ապրող բազմաչարչար հայ ժողովրդին»։

Ամբողջ վերոշարադրյալի հիման վրա ես պետք է խոստովանեմ, որ կաթողիկոսի դիմումը լիովին ճիշտ է արտացոլում թուրքական կայսրության հայ բնակչության ժամանակակից տրամադրությունը Ռուսաստանի նկատմամբ։ Հայ ժողովրդի հոգևոր առաջնորդի կողմից պաշտոնապես հարուցված հարցը Ռուսաստանի համար առաջնակարգ պետական կարևորության հարց է, որը պահանջում է համակողմանի մշակում, որին և ես մտադիր եմ ձեռնամուխ լինել մոտ ապագայում՝ հենց որ դեսպանությունն ստանա պատրիարքարանից ու մեր հյուպատոսներից իմ պահանջած տեղեկությունները...

Գիրս

АВПР Политархив, д. 3459, л. 48—50.

114. 8000 ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆՅԻՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ

Վան, 11 դեկտեմբերի 1912 թ.

Վեց դարե ի վեր է, որ թյուրք ցեղի արշավանքը կատարված է Փոքր Ասիո և Հայաստանի երկիրներու վրա և անիկա միշտ ալ մնացած է արշավանքի քանդող ու ավերող պայմաններու մեջ։ Որևէ աղետ, ինչպես պատերազմներ, երկրաշարժ, ուրագան, մարախ և այլն առժամանակյա կլինեն, որոնց անցնելեն հետո ավերումը կը դադարի և կը սկսի վերաշինության շրջանը. բայց ատոր հակառակ օսմանյան տիրապետության աշխարհակալած երկիրները շարունակած են մնալ աղետի սկզբնավորության քանդումի շրջանին մեջ. ո՛չ միայն վերաշինություն կատարված չէ, այլ քանդումի գործը շարունակված է ցայսօր։ Քննեցե՛ք այս երկրի վեց դարու պատմությունը, շրջեցե՛ք թյուրք տիրապետության սահմաններուն մեջ և պիտի տեսնեք շեն քաղաքները կործանված, գյուղերը չքացած և ամբողջ երկրամասեր, որոնք երբեմն ծաղկած էին՝ վերածված անապատի։ Այդ երկրին մեջ պիտի տեսնեք ընդարձակ ավերակներ հանրային հաստատություններու, վանքերու, ճամբաներու, կամուրջներու, գերեզմանատներու և այլն, որոնք ապացույցներ են անոր նախկին քաղաքակրթության։

Թյուրք իշխանության ներքև կամ ուղղակի թյուրք նախաձեռնությամբ ո՛չ մի շինարար ձեռնարկ ու աշխատանք չէ կատարված, ոչ մեկ կուլտուրական առաջադիմություն չէ եղած, և եթե տեսնեք ոևէ հոյակապ շինություն, մի հանրային ձեռնարկ, անոնք կամ երկրի նախկին քաղաքակրթության բեկորներն են, կամ երկրի բնիկ քրիստոնյա ժողովուրդներու նախաձեռնության արգասիք և կամ պարզապես օտար ձեռնարկներու միջոցավ կատարված գործեր, որոնք առաջ եկած են մեծ դժվարություններով ստացված արտոնություններովը։

Մեկ դարե ի վեր թյուրք բռնապետության գերության ներքո հեծող քրիստոնյա ժողովուրդներն աղաղակի ձայներ բարձրացուցած և քրիստոնյա Եվրոպայի, քաղաքակիրթ աշխարհի օգնությունը աղերսած են կամ ըմբոստության դրոշներ բարձրացուցած և ամբողջ երկրները իրենց արյունով ներկած են. այս պատճառով մեկ դար է, այն է՝ հունական ապստամբության թվականեն ի վեր, Եվրոպայի ու քաղաքակիրթ աշխարհի խղճին վրա ծանրացած է թյուրքիո քրիստոնեից ազատության կամ թյուրքիո բարենորոգումներու վաղեմի հարցը, ուստի թյուրք իշխանությունները ժամանակ առ ժամանակ տեղի տալ պարտավորված են Եվրոպայի ճնշումին, որով առաջ եկած են հանդիսավոր օրենսդրություններով կամ դաշնագրություններով բարենորոգմանց լոստումներ և հանձնառություններ, ինչպես են Կյուլհանեի օրենսդրությունը, Փարիզի և Պերլինի դաշնագիրներ, կամ մերթոնդ մերթ բարենորոգմանց հանձնաժողովներ ճամբա հանված ե բարենորոգումներ գործադրել տալու պատրվակով. բայց դոնք ամենը պատճառ եղած են թյուրքերու ցասումը ևս ավելիհրավիրելու իր քրիստոնյա ժողովուրդներու վրա և առաջ բերելու ջնջումի հրեշային քաղաքականություն մը հսկա չարդերու միջոցավ, զորս թյուրքի միտք մը միայն կրնա հղանալ։

Եվրոպային մոտիկ գտնվող պալքանյան ազգերը քաղաքակիրթ աշխարհի ուժեղակությամբ և իրենց հարաբերությանց և սպառազինությանց լուրությունններով մեկ դարե ի վեր կարողացան հետզհետե խթափել թրքական գերության լուծը և 30 տարիներեն ի վեր հսկայական հառաջադիմություններ ընել քաղաքակրթության ու ուլտուրայի մեջ, այնպես որ այսօր կհա-

ջողին իրենց համարյուն եղբայրներու ազատությունն ալ ձեռք բերել, որոնք այսուհետև գերության դարավոր շղթաները թոթափած՝ առաջ պիտի երթան քաղաքակրթության ճամբու մեջ։ Ուստի հայերը միայն կը մնան նույն գերության շղթաներուն մեջ և որոնց վրա այսուհետև ևս ավելի պիտի ծանրանա թյուրք բարբարոսության լուծը՝ իբրև նոխազ քավության, եթե քաղաքակիրթ աշխարհը և մասնավորապես Ռուսիան՝ իբրև ավանդական պաշտպան Արևելքի քրիստոնեից, չ'պաշտպանեն զայն ընդդեմ բռնավորին։

Հայերը՝ իբրև Ասիո միակ քրիստոնյա ժողովուրդը, որոնք Արևելքի մեջ արևմտյան քաղաքականության հառաջապահները լինելու սահմանված էին, 600 տարիներե ի վեր թրքական գերության ներքո միշտ կոտորակվելով հսկա ջարդերու միջոցով, այսօր հազիվ թե մեկուկես միլիոնի թիվ մը կը կազմեն թյուրքիո մեջ իրենց նախորդ 8—10 միլիոն ֆվին հանդեպ։ Վերջին Արևելյան պատերազմեն հետո անոնք ալ համարձակություն ունեցան իրենց գոյության հարցը եվրոպական Արեոպագոսին օրակարգին վրա դնելու, բայց ատիկա ավելի գրգռեց թյուրք բարբարոսությունը և Ապտյուլ Համիտի խելագար վրեժխնդրությունը. ուստի պարզ բարենորոգման հարց մը՝ Պերլինի դաշնագրության 61-րդ հոդված մը արժեց 300 000 հայերու կոտորած, կազմված թյուրք կառավարության հրամանավ, հայ ազգի ջնջումովը հայկական բարենորոգումներու հարցը թաղելու դժոխային նպատակավ, բան մը, որ կատարվեցավ քաղաքակիրթ աշխարհի աչքին առաջ և որ լուսավորյալ դարումը պատմական ամենամեծ արատներեն մինը պիտի մնա։ Ձնք հիշեր ջարդերու հետևանոք առաջ եկած անթիվ որբերը ու այրիները, որոնցմե մաս մը մարդասերներու նպաստներով իրենց ողբալի գոյությունը քաշքշեցին, համատարած թալաններ հրկիզումներ, բռնի կրոնափոխություններ, առևանգություններ, բանտարկություն, կախաղան, աքսոր, գաղթականություններ, հողերու հափշտակություն և այլն. չենք հիշեր համիտիե կոչած քյուրդ ելուզակներու ոհմակը, զոր թյուրք կառավարությունե զինեց և արձակեց երկրին և մանավանդ հայ ազգին վրա, կազելով այդպես պաշտոնական համատարած ավազակություն և ոճրագործ ավազակները բարձրացնելով փաշայության ատիճաններու, վարձատրված ոռճիկներով ու պատվանշաններով։

Մի ժամանակ ինչպես հայ ժողովուրդ, նույնպես ալ օտարազգիներն, նույնիսկ դիվանագիտական աշխարհին մեջ դյուրահավանություն ունեցան կարծելու, որ այս բոլոր աղետները կը բխեն Ապտյուլ Համիտի հիվանդ մտքեն և թե բեժիմի փոփոխումը և սուլթանի փոփոխությունը պիտի բարեփոխեին երկրի բախտը, ուստի ինչպես դիվանագիտական աշխարհը, հայ ազգն ալ հավատք ու վստահություն ունեցավ ժեոն-թյուրքերու սահմանադրական բեժիմին վրա, այնպես որ հայերը մոռնալով անցյալը՝ սրտովին հարեցան սահմանադրության, իրենց դահիճներու հետ եղբայրակցեցան, համբույրներ փոխանակեցին, բայց, ավա՜ղ, հայերու սույն անմեղ հարումը սահմանադրության 30 000 նոր կյանքեր արժեց Ատանայի մեջ, կոտորված ուղղակի ժեոն-թյուրքերու ձեռամբ, դարձյալ թալաններ, հրկիզումներ, առևանգումներ, դարձյալ որբացածներ ու այրիացածներ և դարձյալ նույնիսկ կախաղաններ, որոնց վրա անմեղ հայերու մարմինները ճոճեցին Ատանայի մեջ՝ իբրև փայլուն ապացույց ժեոն-թյուրքերու արդարության։

Ատանայեն հետո ալ ժեոն-թյուրքերը շարունակողը եղան համիտյան հայաջինջ քաղաքականության, ո՜չ միայն սահմանադրության վրա հույս դնելով վերադարձյալ հայ գաղթականներու հողերը չվերադարձվեցան իրենց՝ հակառակ Ազգ[ային] պատրիարքարանի թախանձանքներուն և տրված բազմաթիվ խոստումներուն, այլ շարունակվեցան Հայաստանի մեջ սիսթեմատիկ ջարդեր՝ մեկով, հինգով, տասնով։ Վերջին վեց ամսվան մեջ միայն Վասպուրականի մեջ 60-է ավելի հայեր ջարդվեցան այն եղանակավ, ինչպես լսեցիք անշուշտ, շարունակվեցան առևանգություններ , թալան և այլն, իսկ այս ամենեն հետո ժեոն-թյուրքերը համիսլամության ծրագիր մըն ալ մշակելով և երկրի ուրիշ տարրերու, մանավանդ քրիստոնեից հանդեպ թշնամական ընթացք բռնելով, ցույց տվին, որ իրենք ալ կատարյալ հետևողներն են սուլթան Համիտի քաղաքականության, և որ առաջ բերավ սահմանադրության վրա կատարյալ հիասթափություն, թե՜ երկրին և թե՜ Եվրոպային մեջ և որոնք հետևանքը եղան արաբական և ալբանական ապստամբություններ և հուսկ ապա՝ ներկա Պալքանյան պատերազմը։

Վերջապես, վեհափա՜ռ հայր, թե՜ վեց դարու պատմությունը և թե՜ վերջին չորս տարվան սահմանադրական կյանքը բացեիբաց ցույց տվին, որ թյուրք ցեղը կրոնական և ցեղային զանազան ազդակներու պատճառավ հառաջադիմելու, քաղաքակրթ-

վ՝լու անընդունակ է, որ անիկա կը պահե դեռ իր բարբարոս նկարագիրը, որ թյուրք մտայնությունը կը մնա անփոփոխ և թյուրք ցեղը աններող հանդեպ երկրի մյուս տարրերուն և ֆանատիկ հանդեպ քրիստոնյա ազգություններուն. ուստի նկատելով, որ բարենորոգմանց խոստումներու վրա հույս դնել այլևս անօգուտ է, որ թյուրք կառավարությունը ոչ միայն անկարող և անընդունակ, այլև անփափագող է երկիրը բարեկարգելու և ապահովելու հայոց կենաց, պատվո և ընչից պահպանությունը, որ դարերե ի վեր հայ ժողովրդյան միակ բանավոր և տարրական պահանջն եղած է և է, նկատելով, որ ի մոտո Արևելյան հարցը նորեն Եվրոպայի օրակարգին վրա պիտի դրվի և վճռվի անոր ժողովուրդներու բախտը, նկատելով որ 35 տարի առաջ Եվրոպան 61-րդ հոդվածով հանձնառու եղած և երաշխավորած է ապահովել հայերը քյուրդերու, չերքեզներու բռնություններեն, հանձնառություն մը, որ ոչ միայն ցարդ անգործադրելի մնացած, այլ մասսայական հսկա ջարդերու առիթ եղած է, ուստի Վասպուրականի թշվառ ու տառապյալ ժողովուրդը կը խնդրե Զերդ Վեհափառութենեն դիմել լուսավորյալ Եվրոպայի արդարության ու խղճին և հանուն դարավոր տառապյալ հայ ժողովրդյան, հանուն անոր հարյուր հազարավոր նահատակներուն, հանուն 20-րդ լուսավորյալ դարու քաղաքակրթության խնդրել, որ հավատ չընծայեն այլևս թրքական խոստումներուն և անոր դաշնագրական զանազան հանձնառություններուն, որոնք բան մը չեն արժեր, հավատ չընծայեն վերջի աղետներն ալ նախորդներու նման թյուրք կառավարության կազմած կամ կազմել մտադրած բարենորոգմանց հանձնաժողովին, որ եղած է Եվրոպան կրկին խաբելու և Հայկական հարցը թաղելու նպատակով, այլ եվրոպական քոնթրոլի ներքև հաստատեն Հայաստանի մեջ բարեկարգ և արդար վարչություն մը և կենաց, պատվո և ընչից ապահովություն՝ արդարության և հավասարության սկզբունքին համաձայն։ Կը խնդրենք այս նպատակով աղերսել մանավանդ ռուսական պետության՝ որ եղած է և է բնական պաշտպանը ճնշված և հարստահարյալ ազգություններուն, ինչպես է հայ ազգը ի Տաճկահայաստան։

ՀԽՍՀ ԳԳԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 64—66։

115. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ՆԻԿՈԼԱՅ Բ-ԻՆ

Նամակից **24 դեկտեմբերի 1912 թ.**

Վերջին ժամանակներս Բալկանյան թերակղզում ծավալված արյունոտ իրադարձությունները վերստին և ամբողջ ուժով առաջ են քաշում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների դրության բարելավման վաղուց հասունացած հարցը։

Եկել է այն պահը, երբ ամենքը սրտի դողով սպասում են Ռուսաստանի պատմական մեծ առաքելության իրականացմանը՝ դարավոր տառապանքներից Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը։ Այդ ժողովուրդների թվում է և իմ հոտը՝ բազմաչարչար հայ ժողովուրդը, որի մարտիրոսագրությունը հանրահայտ է։ Այդ ժողովրդի ոչ միայն հեռավոր անցյալի, այլև վերջին տասնամյակների կյանքի տխուր փաստերը ճնշող տպավորություն են թողնում։

Թուրքիայի հայերի դրության բարելավման մասին եվրոպական տերությունները առաջին անգամ համառորեն սկսեցին խոսել Թուրքիայի հետ Ռուսաստանի 1877—1878 թթ. ազատագրական պատերազմից հետո, երբ, հզոր Ռուսաստանի պնդմամբ, 1878 թ. մարտի 3-ի դաշնագրում, որն ստորագրված է պատերազմող կողմերի միջև Սան Ստեֆանոյում, հայերի օգտին մտցվել էր 16-րդ հոդվածը, որն ասում էր. «Քանի որ ռուսական զորքերի դուրս գալն այն վայրերից, որոնք նրանք գրավել են Հայաստանում և որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է առիթ ծառայել երկու տերությունների միջև լավ հարաբերությունները փչացնող բախման ու բարդությունների, ուստի Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել այն բարելավումներն ու ռեֆորմները, որոնք պահանջվում են հայաբնակ գավառների տեղական կարիքներից ելնելով, և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»։

Այն պարտավորությունը, որ Թուրքիան ստանձնել էր Ռուսաստանի հանդեպ, Ռուսաստանի պահանջը՝ մինչև ռուսական զորքերի դուրսբերումը հայաբնակ վայրերում անհապաղ բարենորոգումներ անցկացնելը, լիովին համոզեցին հայերին, որ բարենորոգումներն անցկացվելու են և որ դրանից հետո իրենք,

հանձին իրենց բարձր հովանավորի՝ Ռուսաստանի, կստանան հանգիստ կյանքի իրական երաշխիք ու հնարավորություն՝ տրրվելու խաղաղ, կուլտուրական զարգացման գործին։

Սակայն Բեռլինի վեհաժողովում Սան Ստեֆանոյի դաշնագրի 16 հոդվածը փոխարինվեց 61-ով, որտեղ ասված է.

«Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման անցկացնել հայաբնակ գավառների պահանջներից ելնող ռեֆորմներ ու բարելավումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից։ Բ. Դուռը այդ ուղղությամբ իր ձեռնարկած միջոցառումների մասին պարբերաբար հաղորդելու է տերություններին, որոնք պետք է հետևեն դրանց իրագործմանը»։

Այս փոխարինումը կործանարար եղավ Թուրքահայերի համար։ Իսկական, ռեալ երաշխիքը, որը սահմանված էր Սան Ստեֆանոյի դաշինքի 16-րդ հոդվածով, հանձին Ռուսաստանի, տեղը զիջեց այնպիսի միջոցառման, որը ներգործություն չուներ Թուրքիայի վրա։

Հայերի ուրախությունը շուտով փոխարինվեց նախկին տրխրությամբ, հոգեկան այլայլմունքով ու հուսահատությամբ՝ ի նկատի ունենալով իրենց իրավազուրկ և անպաշտպան դրությունը...

Ամբողջ Թուրքիայով մեկ սկսվեց հայ բնակչության սիստեմատիկ ոչնչացումը, ըստ երևույթին, այն նպատակով, որպեսզի արմատից ոչնչացվեր Հայկական հարցի ծագման հնարավորությունը։

Մեծ տերությունների դեսպանները իրենց կառավարություններին տեղեկացնում էին, որ Դուռը ոչ մի միջոց չի ձեռնարկում խոստացված ռեֆորմների իրագործման ուղղությամբ և որ Թուրքիայի հայ բնակչության դրությունն անտանելի է։

Վերջապես հանգամանքները մեծ տերություններին ստիպեցին բողոք արտահայտել ընդդեմ Թուրքիայի։ 1880 թ. հունիսի 11-ին եվրոպական տերությունների դեսպանները Դռանը դիմում ներկայացրին, որտեղ, պնդելով խոստացված ռեֆորմների անցկացման վրա, Դռանը զգուշացրին, որ եթե նա բարենորոգումներ չանցկացնի հօգուտ հայերի, ապա անխուսափելիորեն կհարուցի տերությունների անմիջական միջամտությունը։

Այս դիմումի ազդեցության տակ Դուռը սոսկ եվրոպական տերություններին և եվրոպական քրիստոնյա պետությունների

վրդովված հասարակական կարծիքը հանգստացնելու համար խոստացավ բարենորոգումներն անցկացնել և հայտարարեց, թե ինքն արդեն մշակում է բարենորոգումների նախագիծը։

Նույն՝ 1880 թվի սեպտեմբերի 7-ին դեսպանները Կոստանդնուպոլսում Դռանը ներկայացրին նոր հուշագիր, որտեղ կրկին անգամ հիշեցում կատարվեց, որպեսզի Դուռը չհապաղի ռեֆորմներն իրագործել և որպեսզի դրանք համաձայնեցված լինեն տեղական պահանջների հետ և անցկացվեն եվրոպական տերությունների հսկողությամբ։

Բայց Բարձր Դռան խոստումները և բարենորոգումների նախագծերը մնացին որպես մեռած տառ, և եվրոպական տերությունների հիշեցումները ոչ մի գործնական հետևանք չունեցան՝ հայերի դրության թեկուզև որոշ բ՝ լավման իմաստով։

Անցավ ամբողջ 15 տարի, և այդ ժամանակաշրջանի ընթացքում Թուրքիան ոչ մի ռեֆորմ չանցկացրեց, իսկ հայերի նկատմամբ հալածանքները սաստկացան։

Մարդկային տարրական իրավունքներից զրկված հայերը չտեսնելով ո՛չ կյանքի, ո՛չ պատվի ապահովվածություն, ո՛չ իրենց նյութական ունեցվածքի ապահովվածություն, իրենց զգալով ծայրահեղ անելանելի վիճակում, որոշ տեղերում փորձեցին ինքնապաշտպանության դիմել և անձնական ուժերով պաշտպանվել բռնավորներից...

Ի պատասխան ինքնապահպանության այդքան բնական զգացման դրսևորման՝ սկսվեց հայերի կազմակերպված կոտորածը։ Բացառիկ դաժանություններ տեղի ունեցան 1894 թվին Սասունում։

Բազմահազար անմեղ զոհերի արյունը եվրոպական պետություններին հիշեցրեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մասին։ 1895 թ. մայիսի 11-ին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները Դռանը դիմում ներկայացրին հայկական մարզերում խոստացված բարենորոգումները շուտով անցկացնելու անհրաժեշտության մասին։

Շուտով, դեսպանների ներկայացրած այդ դիմումից հետո, սպասվող բարենորոգումների փոխարեն, 1895 թվին հետևեց նոր, մարդկային պատմության մեջ չտեսնված-չլսված հայերի կոտորածը, մի քանի ամսվա ընթացքում Թուրքիայի հայերին կոտորեցին ամենուրեք, նույնիսկ Կոստանդնուպոլսում, մեծ տերությունների ներկայացուցիչների աչքի առաջ, մորթեցին տղա-

մարդկանց ու կանանց, ծերերին ու երեխաներին, գթություն չկար ոչ ոքի հանդեպ։

Այս արյունալի սպանդը խլեց մոտ 300 000 հայերի կյանք։

Սարսափահար հայերը, որպեսզի փրկեին իրենց կյանքը, ապաստանում էին դեսպանատներում ու հյուպատոսարաններում, թաքնվում լեռներում ու անտառներում, որտեղ նրանցից շատերը մեռնում էին ցրտից ու քաղցից, իսկ մոտ 100 000 հայեր, լքած իրենց հայրենի օջախը, իրենց հայրենիքը, ընդմիշտ փախչում էին Թուրքիայից, գերազանցապես դեպի Ռուսաստան, իսկ մասամբ նաև՝ Եգիպտոս, Բուլղարիա և Ամերիկա։ Քիչ դեպքեր չեն եղել, երբ հայերին բռնի մահմեդականացրել են, իսկ եկեղեցիներն ու հին վանքերը դարձրել մզկիթներ։ Թուրքիայում մնացած հայերի տնտեսական դրությունը ողբալի էր. նրանց շարժական գույքը թալանված էր ու ոչնչացված, իսկ գյուղերում եղած հողերը, տները և այլ անշարժ կայքը տրամադրվեցին քրդերին ու թուրք գաղթականներին։

Դրանից հետո, մինչև Թուրքիայում սահմանադրական կարգեր մտցնելը, թեև զանգվածային ջարդեր չեն եղել, բայց չէին դադարում բաշիբոզուկների կողմից սարքվող հայերի անհատական ու խմբային սպանությունները, բռնի իսլամացումը, հրկիզումները, կանանց և աղջիկների առևանգումներն ու պատվազրկումները և այլ բռնություններ, և մեղավորները կառավարական իշխանությունների կողմից պատժի չէին ենթարկվում, ինչը նրանց դրդում էր նոր դաժանություններ գործելու հայերի դեմ։

1908 թվի հուլիսին Թուրքիայում մտցվեցին սահմանադրական կարգեր։ Թուրքիայի հայ բնակչությունը բերկրանքով ողջունեց նոր կարգերը, հուսալով, որ վերջապես Թուրքիայում սահմանվում է իրավական կարգ, որը հայերի համար կապահովի մարդկային տարրական իրավունքներ։

Սահմանադրության հաստատումից անմիջապես հետո, թուրքական Ադանա մարզում տեղի ունեցավ զանգվածային ահավոր ջարդ, որին զոհ գնացին մոտ 30 000 հայեր, իսկ նրանց ունեցվածքը ամբողջովին թալանվեց։

Այդ կոտորածը և դրան հաջորդած իրադարձությունները վերջնականապես համոզեցին հայերին, որ թուրքական ամեն մի իրավակարգի դեպքում, առանց քրիստոնեական ուժեղ տերության իսկական հովանավորության, հայերը մնալու են իրավազուրկ և օրենքի պաշտպանությունից դուրս։

Այսքան ծանր փորձությունները, որոնք մինչև այժմ բաժին են ընկել Թուրքիայի հայ բնակչությանը, նրա գոյությանն սպառնացող ակնհայտ վտանգը, նրան իրավունք են տալիս օգնության կոչել ռուսական մեծ տերությանը՝ Արևելքի քրիստոնեության պատմական պաշտպանին։

Թուրքիայի դեմ Բալկանյան պետությունների կողմից մղվող պատերազմի կապակցությամբ այժմ ստեղծված արտաքին իրադարձությունները, բնականաբար, առաջ են քաշում Թուրքիայի հայերի դրության բարելավման վաղուց հասունացած հարցը։

Իմ հոտի խնդրանքներն ու ակնկալիքներն են՝ թուրքահայերի կյանքի, սյատվի և ունեցվածքի իսկական ապահովում և նրանց հոգևոր ու կուլտուրական ազատ զարգացման հնարավորությունների ընձեռում՝ Թուրքահայաստանում Զերդ կայսերական մեծության հզոր հովանավորության տակ անհրաժեշտ ռեֆորմների անցկացումով։

Ներկայումս Լոնդոնում տեղի է ունենում մեծ տերությունների դեսպանների խորհրդակցություն, և մոտիկ ապագայում սպասվում է կոնֆերանսի կամ կոնգրեսի գումարում՝ լուծելու համար Բալկաններում կռվող կողմերի միջև գոյություն ունեցող վիճելի հարցերը՝ կապված Արևելքում քրիստոնյաների վիճակի հետ։

Հայկական հարցը 34 տարի է, ինչ լուծմ·ն է դրված եվրոպական դիվանագիտության առաջ, սակայն մինչև օրս մնում է չբավարարված։ Եթե հայերը հիմա էլ անտեսվեն, ապա դա հավասարազոր կլինի մի ամբողջ ժողովրդի վերջնական ոչնչացման հանձնելուն...

Գեորգ V

АВПР, Политархив, д. 3460, л. 32—35.

116. «ՊՐԱՎԴԱ» ԹԵՐԹՈՒՄ (1912 Թ.) ՏՊԱԳՐՎԱԾ «ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈԴՎԱԾԻՑ

...Երիտթուրքերը առաջին իսկ քայլերից, ասես դիտավորյալ, սկսեցին իրենցից վանել Օսմանյան կայսրության ժողովուրդների համակրանքը։ Նրանք դրսևորեցին լիբերալ բուրժուազիայի

բոլոր արատներն ու թուլությունները, իսկ մյուս կողմից՝ իշխանության գլուխ կանգնած ռազմասպայական կաստայի ողջ դեսպոտիզմը։ Լիբերալություն անելով խոսքով, գործով նրանք լեցուն էին սեհարյուրակային ամենաթունդ նացիոնալիզմով և բուրժուական անհոգի եսամոլությամբ։ Ժողովրդից, որի մասին նրանք, թվում էր, այնպես հոգում էին, սարսափ էին զգում։ Բնակչության լայն շրջանների ամեն մի ինքնագործունեություն նրանց կողմից հանդիպում էր անվստահության և խոչընդոտների։ Խոստացված բարենորոգումները, որոնք գոնե ինչ-որ չափով թեթևացնում էին աղքատացած բնակչության դրությունը, արգելակում էին, իսկ նոր մարդիկ, որոնք կառավարման գլուխ էին անցել, զբաղվում էին փառասիրական խաղերով և մութ գործերով, ինչով և իրենց վերջնականապես վարկաբեկում էին ժողովրդական զանգվածների աչքում...

Նրանց ձգտումը՝ թուրքացնել սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և այլոց, որոնք բնակվում են Օսմանյան կայսրության մեջ, ընդունեց է՛լ ավելի կոպիտ ու համառ բնույթ, քան Աբդուլ Համիդի օրոք էր եղել։

Правда, 1912, 27 июня, № 76.

117. «ՊՐԱՎԴԱ» ԹԵՐԹՈՒՄ (1912 Թ.) ՏՊԱԳՐՎԱԾ «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ» ՀՈԴՎԱԾԻՑ

...Երիտթուրքերը իրենց չափազանց վարկաբեկել են կայսրության բնակչության աչքում։ Նրանց իշխանությունը հենվում էր բացառապես կոպիտ ֆիզիկական ուժի վրա։ Թուրք չքավորությունը և Թուրքիային ենթակա ժողովուրդները ճնշվում էին ու ոչնչացվում նախկինի պես՝ չնայած «պառլամենտի գոյությանը»։ Նոր ռեժիմի գազանությունները, կաշառատվությունները և կաշառակերությունները համարյա ոչնչով չէին տարբերվում «կարմիր սուլթանի» օրոք եղածներից։

Правда, 1912, 17 августа, № 93.

118. ՊՐՈՖԵՍՈՐ Մ. ԿՈՎԱԼԵՎՍԿՈՒ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ» ՀՈԴՎԱԾԻՑ

...XIX դարում Առաջավոր Ասիայի մեր հավատակիցներին օգնության հասնելու մեր փորձերը հայերի համար միայն ամենածանր հետևանքներ ունեցան։ Որպեսզի խուսափեին հալածանքներից, նրանք ստիպված եղան զանգվածաբար արտագաղթել այժմյան Անդրկովկասը, քանի որ թուրքերն ու պարսիկները դաժանորեն վրեժխնդիր էին լինում այն համագործակցության համար, որ նրանք ցուցաբերում էին ռուսական զորքերին։ Այդպես եղավ 1826 թվին, պարսիկների դեմ մեր պատերազմի ժամանակ, այդպես եղավ 1828—29 թվերին՝ Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմի տարիներին։ Իսկ Պարսկաստանի հետ Թուրքմենչայի դաշնագրի կնքումից հետո, մոտ 40 000 հայեր գաղթեցին մեր կայսրության սահմանները։ Թուրքիայի հետ պատերազմը նույնպես հանգեցրեց ամբողջ տասնյակ հազարավոր թուրքահայերի գաղթին։ Ասվածը կիրառելի է նաև 1854—55, 1877—78 թվերի պատերազմների նկատմամբ։ Ռուսական զորքերին անպայման գրկաբաց էին դիմավորում Հայաստանում, նրանց բազմազան և էական օգնություն ցույց տալիս։ Թուրքերը նրանցից վրեժ էին լուծում դրա համար։ Հայերը գաղթում էին ուղղափառ կայսրության սահմանները կամ դաժանորեն հատուցում էին մեզ համակրելու համար։

Սան Ստեֆանոյի դաշնագրով նրանց օգտին, հայոց պատրիարք Ներսեսի պնդմամբ, 16-րդ պարագրաֆով վերապահված էր Բարձր Դռան խոստումը՝ «առանց հետագա հապաղման իրականացնել այն բարենորոգումները, որոնք պահանջվում են հայաբնակ գավառների տեղական կարիքներից ելնելով, և ապահովել նրանց անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»։ Այդ պարագրաֆը հետագայում ընկավ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի հիմքում։ Դրանից հետո կարելի էր հուսալ, թե Թուրքիայի հայերի համար նոր ժամանակներ են գալու։ Եվրոպան հանձն էր առնում հոգալ նրանց ապագայի համար և կարողացավ կանխապես Թուրքիայի ձևական խոստումն ստանալ։ Թուրքիան պարտավորվում էր իր հետ պայմանագիր կնքած կառավարություններին նույնիսկ պարբերաբար հաղորդել այդ ուղղությամբ իր ձեռնարկած միջոցառումների մասին, իսկ տերությունները պարտավորվում էին հետևել այդ միջոցառում-

ների կատարմանը։ Բայց գործնականում բոլոր այդ խոստումներից ոչինչ դուրս չեկավ։ Բ. Դուռը կարողանում էր ձևական գրությամբ օձիքն ազատել, իսկ եվրոպական պետությունները հաստատակամություն չէին դրսևորում իրենց պնդումներում։ Կարելի է նույնիսկ ասել, որ Բեռլինի դաշնագիրը վերջիվերջո հանգեցրեց հայերի վիճակի վատթարացմանը։ Կանխատեսելով մեծամասնությամբ հայերով բնակեցված գավառների կառավարումը քրիստոնյա նահանգապետներին վստահելու անհրաժեշտությունը՝ թուրքական կառավարությունը Աբդուլ Համիդի օրոք դեմ չէր լինում հայ բնակչության խտությունը նոսրացնել ջարդերի օգնությամբ՝ հայերին ամեն անգամ քրդերի կամ չերքեզների դատաստանին հանձնելով...

Կարելի էր հուսալ, թե Կոստանդնուպոլսում երիտթուրքական ռեժիմի հաստատումով կդադարեր հայերի հալածանքը։ Հաշվարկը սխալ էր արված. երիտթուրքերը դուրս եկան նեղմիտ նացիոնալիստներ և անընդունակ իրականացնելու այն խոստումները, որ իր մեջ պարունակում էր Բեռլինի դաշնագիրը Հայաստանում իրականացվելիք բարենորոգումների վերաբերյալ։ Ռուսական կառավարության շարունակվող թշնամանքը վերջիններիս նկատմամբ Անդրկովկասի սահմաններում՝ այնտեղ իշխան Գոլիցինի կուսակալության ամբողջ ժամանակաընթացքում անպաշտպան էր թողնում թուրքահայերին իրենց դարավոր կեղեքիչների հանդեպ։

1894 և 1896 թվականների ջարդերը, ինչպես արդեն մատնանշել ենք, ընդունեցին զանգվածային բնույթ և տեղի էին ունենում կայսրության համարյա ամբողջ տարածքում։

1908 թվին դրանք պակաս դաժան չէին, բայց քիչ թե շատ նեղ սահմաններում էին։ Առավել հայտնի է Ադանայի ջարդը, որի ընթացքում զոհերի թիվը 20 հազարից[22] ավելի է եղել...

«Вестник Европы», 1915, июнь, с. 256—258.

119. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ» ԳՐՔԻՑ

Նույնիսկ տխրահռչակ թուրքական սահմանադրությունը, որը պիտք է, ինչպես ենթադրում էին, Օսմանյան կայսրության բոլոր հպատակներին երաշխավորեր հավասարություն օրենքի առաջ, ընդհանրապես հաստատեր օրինականության, հավատահանդուրժողության թագավորություն, մշակույթի և առաջադիմության սկզբունքներ, բոլորովին չփոխեց իրերի հին կարգը։ Միայն այն փաստն արդեն, որ նոր ռեժիմի օրոք կարող էին, թեկուզև երբեմն տեղի ունենալ, ինչպես նախկինում՝ Աբդուլ Համիդի օրոք, ջարդեր, ինչպիսին Ադանայինն էր,— ամենաարյունահեղներից մեկը,— պերճախոս կերպով վկայում է, թե ինչ անպտուղ զբաղմունք է նոր գինին հին տկի մեջ լցնելը, թե ինչ անզգույշ բան է հույս դնել վերացական սկզբունքների վրա, երբ պետական օրգանիզմի ընդհանուր ոգին ու կառուցվածքը մնում է անփոփոխ։ Զափազանց պարզ է նաև, որ թուրքական սահմանադրությունը թուրքական քաղաքացիներին որոշ իրավունքներ ընձեռելով՝ միևնույն ժամանակ տոգորված էր Թուրքիային ենթակա ժողովուրդների ազգային առանձնահատկությունների համահարթեցման ձգտմամբ, այն առավելությունները և հատուկ օրինականացումները ոչնչի հանգեցնելու ձգտմամբ, որոնք դեռ հին դեժիմի օրոք այսպես թե այնպես ձեռք էին բերել եթե ոչ գավառական, ապա գոնե Կոստանդնուպոլսի քրիստոնյա համայնքները։ Այսպիսով, XX դարում էլ Թուրքիան դեռ հանդիսանում է ինչ-որ անախրոնիզմ, բարբարոսական անցյալի վերապրուկ։ Եվրոպայից արդեն համարյա արտաքսված, այնտեղի համարյա բոլոր տիրույթներն աստիճանաբար կորցրած Թուրքիան ասես թե ամբողջ ժամանակ ջանում էր տանուլ տված ետ ստանալ ասիական գավառներում, ցույց տալ, թե այնտեղ, գոնե, ոչ ոք իր համար օրենք չէ, թե ինքը կարող է գործել՝ ինչպես խելքին փչի, երբեմն իր պարքները քողարկելով բարձրագոչ դարձվածքներով և հանդիսավոր հավաստիացումներով, որոնք, ինչպես գիտեր իր փորձով, միևնույն է, ոչնչի չէին պարտավորեցնում...

Այն, ինչ մենք գիտենք Թուրքահայաստանի իրավիճակի մասին, ցավոք սրտի, իրենից ներկայացնում է ինչ-որ իրական, դեռևս լիովին ժամանակակից, կրկնակի սարսափելի մի բան, հենց նրա համար, որ այն հնարավոր դուրս եկավ մեր օրերում, երբ արտաքին կուլտուրան թափանցել է մինչև անգամ նախկինում նրա ոտքն իսկ չդիպած խուլ անկյունները, և նույնիսկ Թուրքիան ակամա ստիպված է եղել ինչ-որ բան փոխ առնել Արևմուտքից... Թուրքական վայրագություններն ու ծանր տուրքերը, որոնք պահպանվել են և մեր օրերում, այնուամենայնիվ,

պերճախոս ապացույցն են այն բանի, որ միայն արտաքին կուլտուրան դեռևս ոչինչ չի նշանակում և որ որոշ տեխնիկական կատարելագործումներն ու արտաքին տեսքի բարետեսությունը կարող են գոյակցել հոգեկան բռիության և իսկական մարդկայնության բացակայության հետ։

Երբ Փոքր Ասիայի հայ բնակչության գլխին եկող աղետների մասին մենք իմանանք վիպագիրների ու բանաստեղծների երկերից, գուցե, թերևս կասկած ծագի մեր մեջ, թե արդյո՞ք լիովին ճշգրիտ պատկերն են մեզ տալիս այդ գրողները, տվյալ դեպքում չկա՞ն արդյոք չափազանցություններ, նկարագրությունների և բնութագրերի չափազանց միանմանություն, միանգամայն ակամա շեղումներ չե՞ն, արդյոք, իսկական, անգունազարդ իրականությունից։ Բայց ավա՜ղ... Այն, ինչ մենք գտնում ենք գրական երկերում, երբեմն ապշեցուցիչ կերպով համընկնում են այն փաստական տվյալների հետ, որոնք բերվում են դիվանագիտական փաստաթղթերում, Կապույտ գրքերում, հյուսպատոսների ու դեսպանների զեկույցներում, հետաքննական հանձնախմբերի արձանագրություններում... Երբեմն իսկական, մերկ, չոր փաստերը մեզ վրա ներգործում են ոչ պակաս ուժգնորեն, քան հենց նույն գազանությունների ու կեղեքումների արձագանքները գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Բոլոր այդ գործնական, զուսպ հաշվետվությունները, թե ի՛նչ է իսկապես կատարվել տվյալ պահին այս կամ այն վիլայեթում, թե ի՛նչ իրադարձություններ են այնտեղ ծավալվել, շա՞տ են արդյոք զոհերը, ինչպե՞ս է այդ ամենն անդրադարձել ժողովրդի նյութական դրության վրա, երբեմն մարդու ցնցում են մինչև հոգու խորքը՝ իրենց ամբողջ արտաքին սառնասրտությամբ հանդերձ։ «Վերք Հայաստանի». այսպես էր վերնագրված Խաչատուր Աբովյանի դեռևս անցյալ դարի 40-ական թվականներին գրված հայրենասիրական վեպը, որն ուժգին ազդեցություն է թողել հայ մտավորականության վրա։ Հայաստանի ծանր ու տանջալի վերքերի մասին մենք կիմանանք այն ժամանակ ևս, երբ ծանոթանանք վերջին տասնամյակներում հայկական միջավայրից եկող գանգատներին, խնդրագրերին ու բողոքներին։

Բայց եթե պետք լիներ մատնանշել բոլոր այդ աղետների ու ճախորդությունների գլխավոր, հիմնական պատճառներից մեկը, անկասկած, առաջին հերթին պետք էր նշել օրինականության և արդարադատության բացակայությունը, փաստացի տիրապետությունն ու գերակշռությունը ոմանց և իրավազրկությունը, անպաշտպան վիճակը մյուսների, որոնք երբեք չեն զգացել, որ իրենց կյանքը, ընտանիքը, սեփականությունը պահպանվում են որևէ մեկի կողմից... Ընդհուպ մինչև նորագույն ժամանակներս քրիստոնյայի վկայությունը ի նկատի չէր առնվում նույնիսկ այն կարգի դատարաններում, որոնք ըստ օրենքի իրավունք չունեին խտրություն դնել մահմեդականների և «գյավուրների» ցուցմունքների միջև։ Հայերը, ճիշտ է, կարող էին ցուցմունք տալ դատարանում, բայց նրանց խոսքին նշանակություն չէր տրվում, եթե այն չէր համընկնում մուսուլման վկաների ասածներին։ Քրդերի ու թուրքերի շատ հանցագործություններ անպատիժ էին մնում, իբրև թե հանցանշանների բացակայության պատճառով։ Ընդ որում տասնյակ հայեր կարող էին հանդես գալ որպես վկաներ, բայց քանի որ բոլոր մահմեդականները, ընդհակառակը, միանգամայն հասկանալի պատճառներով, ժխտում էին հանցավոր արարքի առկայությունը, այդպիսի դեպքերում հարցը լիովին պարզաբանված և սպառված էր համարվում։ Մահմեդական վկաների ցուցմունքները, ովքեր էլ լինեին նրանք, այնպիսի անկանոնություն էին ստեղծում, ինչպիսին է կաշառումը գործին միանգամայն անմասնակից մարդկանց, որոնք որոշ վարձ առնելով՝ համաձայնում էին դատարանում հանդես գալ իբրև «վկաներ»...

Թուրքահայերի տնտեսական դրությունը կարելի է, ընդհանուր առմամբ, անվանել առավել քան աննախանձելի, չնայած նրանց համար բնորոշ աշխատասիրությանը, ձեռներեցությանը և եռանդին*։ Ֆինանսական գործերի վայրիվերո կառավարման պատճառով միանգամայն զրկված լինելով միջոցներից՝ պետությունը, անկարող վճարելու վիթխարի պարտքերը, երբեմն՝ նույնիսկ աստիճանավորների ռոճիկները, ծանր տուրքերի ու հարկերի տակ էր դնում Թուրքահայաստանը։ Տուրքերը գանձվում էին ծայրահեղ դաժանությամբ։ Ժամանակին հրապարակվել են արտասովոր հնարամտությամբ ու վիրտուոզությամբ մտածված այն խոշտանգումների մանրամասնությունները,

* Վանի վիլայեթում, ինչպես նկատում է Ռեկլյուն, չկա մի տուն, որը հայի ձեռքով կառուցված չլինի, չկա մի կտոր տեղական գործվածք, որը գործված չլինի նրանց իսկ ձեռքով, համարյա չկա մի պտուղ, որ չաճեցվի նրանց այգիներում (Диев, Армянский вопрос в Турции, с. 45).

որոնց ենթարկում էին հարկահավաքները, կամ, ավելի ճիշտ, նրանց ուղեկցող թուրքական ժանդարմերիան, այն անձանց, ովքեր հնարավորություն չունեին վճարելու իրենցից պահանջվող տուրքերը... Որոշ հարկահավաքներ, աճուրդով գնելով այդ կոչումը, այնուհետև ավելի թանկ գնով վերավաճառում էին ուրիշներին, ընդ սմին այս առուծախը տեղի էր ունենում լրիվ բացեիբաց և վավերացվում էր եթե ոչ օրենքով, ապա գոնե սովորույթով, և ծեծկված գյուղացիությունը պետք է որոշ դեպքերում կախում ունենար այն անձանց քմահաճույքից, որոնք նույնիսկ ոչ մի վարչական պաշտոն չէին զբաղեցնում, այլ, միանգամայն պատահաբար, որոշ գումարի դիմաց, որոշ հարաբերություններում, գեղջուկ ժողովրդի բախտի տնօրինողներն էին դառնում։ Մյուս կողմից էլ, հարուստ հողատերերը, այսպես կոչված աղաներն էին հայ գյուղացիության անողոք շահագործողները, որոնք իրենց բանվորներին ու մշակներին դնում էին ամենածանր, անշահավետ պայմանների մեջ՝ կոռ ու բեգարով ուժասպառ անելով նրանց, հաճախ պլոկելով նրանց մինչև վերջին թելը...

Վերջապես, թուրքական հասարակարգը անդրադառնում էր նաև հայ ժողովրդի մտավոր, հոգևոր կյանքի վրա, այն ամենի վրա, ինչը կրում էր ազգային կնիք և միաժամանակ կապված էր որոշ կուլտուրական խնդիրների և ավանդույթների հետ։ Թեկուզև դա տեղի էր ունենում ոչ ամենուրեք և ոչ բոլոր սուլթանների օրոք ոչ միևնույն աստիճանի,— կարելի է առանց դժվարության բերել փաստերի երկար մի շարք, որոնք բնութագրական են հայ եկեղեցու, դպրոցի, գրականության, մասնավորապես նկատմամբ ֆանատիզմի, անհանդուրժողականության, կասկածամտության դրսևորումների առումով։ «Հայաստան» բառն ինքը հենց, նույնիսկ որպես աշխարհագրական կամ պատմական անվանում, արգելվում էր,— կարելի էր խոսել միայն Վանի, Էրզրումի, Բիթլիսի վիլայեթների մասին, կամ Քրդստանի մասին,— ինչպես որ եվրոպական դիվանագիտական ոլորտում էլ էին երբեմն սխալ կերպով անվանում բուն պատմական Հայաստանը[23]։

Юрий Весловский. Трагедия Турецкой Армении. М., 1915.

120. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ԱԴԱՄՈՎԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻՆ

Զեկույցից

Էրզրում, 7 ապրիլի 1918 թ.

Հայերի հանդեպ թուրքերի տրամադրության մասին ընդհանրապես դատելու համար չի կարելի չբերել հետևյալ բնորոշ փաստը, որը տեղի է ունեցել Հասան Կալա գյուղում։ Հասան Կալան գտնվում է Էրզրումից 35 վերստ դեպի հյուսիս-արևելք, դեպի ռուսական սահմանը տանող ճանապարհի վրա, և Բասենի կազայի վարչական կենտրոնն է։ Մարտի 21-ին տեղի պանդոկում, որ պատկանում է հայ Քերոբին, Բասենի Ղարաքիլիսայից եկած հետևակային կապիտան Հասան աղան, չքաշվելով հայերի ներկայությունից, իր շուրջը հավաքած քրդական աշիրեթային հեծելազորի մի քանի սպաների՝ բացեիբաց քարոզել է հայերին շուտափույթ կոտորելու անհրաժեշտության մասին։ «Մեր այժմյան բոլոր դժբախտությունները,— ասել է խանը,— մեր նախկին քրիստոնյա ռայայից են գալիս, որի հանդեպ մենք չափից շատ փափկանկատ եղանք, քանի դեռ նա մեր իշխանության տակ էր։ Հիմա չպետք է կրկնել նույն այդ սխալը, քանի դեռ ուշ չէ, մանավանդ որ սահմանադրությունն արդեն հավասարեցրել է հայերին ու մուսուլմաններին։ Ես իմ կողմից ձեռք եմ առել անհրաժեշտ միջոցներ և Բասենի կազայի քրդական բոլոր ոյուզերի քրդերին հորդորել եմ այլևս չհապաղել կոտորելու հայերին և նրանց ունեցվածքը թալանելու, այդ նույն խորհրդով դիմում եմ և ձեզ։ Բոլոր բեկերը, որոնց հետ ինձ վիճակվել է հանդիպել, չէին կարողանում չհամաձայնել ինձ հետ, ուստի և հուսով եմ, որ դուք էլ կհետևեք նրանց գովելի օրինակին»։ Հայերին կոտորելու այսպիսի անթաքույց քարոզը չի կարող իր պտուղները չտալ...

АВПР, Посольство в Константинополе, д. 2684, л. 36—37.

121. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Կոստանդնուպոլիս, 24 ապրիլի 1918 թ.

Դիարբեքիրի ֆրանսիական հյուպատոսը դեսպանությանը հեռագրում է տեղիս հայ եպիսկոպոս Զավենի հայտարարությունը, որ քրիստոնյաների կողոպուտները, սպանությունները

շարունակվում են։ Վալին ավելի՝ շուտ-կխրախուսի մուսուլմաններին՝ քրիստոնյաների հանդեպ նրանց ատելությունը բորբոքելու համար։ Հյուպատոսն էլ իր կողմից վկայում է, որ եպիսկոպոսի խոսքերը լիովին համապատասխանում են ճշմարտությունը, և չի բացառվում հայերի նոր կոտորածի հնարավորությունը։ Այսօր իսկ արտաքին գործերի մինիստրին դիմում կկատարեմ այս առթիվ։

АВПР, Политархив, д. 3460, л. 136.

122. ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՆ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 870 ճեպագրից **2 մայիսի 1913 թ.**

Անցյալ ապրիլի 27-ին Թիֆլիսում զինվորական մասի գծով իմ օգնական, հետևակազորային գեներալ Շատիլովին ներկայացել է կովկասահայերի պատգամավորությունը հետևյալ կազմով՝ Թիֆլիսի թեմի եպիսկոպոս Մեսրոպ, Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Խատիսով, հայոց բարեգործական միության նախագահ պ. Հարությունով, հայկական «Մշակ» թերթի խմբագիր պ. Քալանթար և Պետական դումայի անդամ պ. Պապաջանով։ Պատգամավորությունը գեներալ Շատիլովին գաղտնաբար հայտնել է հետևյալը.

Թուրքիայի վերահաս իրադարձությունները ակամա սաստիկ մտահոգում են բոլոր կովկասահայերին, որոնք չեն կարողանում անտարբեր մնալ հիշյալ պետության մեջ իրենց դժբախտ ազգակիցների ճակատագրի հանդեպ։ Խորապես երախտապարտ լինելով կայսերական կառավարությանը Թուրքիայում կեղեքվող իրենց եղբայրակիցներին օգնություն ցույց տալու մասին կաթողիկոսի անունով իմ նամակում ազդարարված խոստման համար, բոլոր ռուսահպատակ հայերը հաստատապես հավատում են, որ Ռուսաստանը ժամանակին կասի իր ծանրակշիռ խոսքը և Թուրքիային կստիպի կիրառել երկար սպասված բարենորոգումներն ու Թուրքահպատակ հայերի դրության բարելավումները, և վերջիններս, վերջապես, հնարավորություն կստանան հանգիստ ապրել ու խաղաղ զբաղվել իրենց գործով...

Ցավոք, Թուրքիայում իրադարձությունների ընթացքը հայերին ստիպում է մտածել այն փորձությունների մասին, որոնք ամենամոտիկ ապագայում, հավանաբար, ստիպված պիտի լինեն կրել Թուրքիայի իրենց եղբայրակիցները։ Ավելի ու ավելի հաճախ են լուրեր ստացվում հայերի դեմ կատարվող բռնությունների մասին, և դժբախտ անզեն հայերը՝ Թուրքահպատակները, ակամա օգնության ճիչ են արձակում այնտեղից։ Օգնության այդ ճիչը բխում է ինքնապահպանության զգացմունքից, ինքնապահպանության — քառիս ամենանեղ իմաստով, քանզի յուրաքանչյուր Թուրքահպատակ հայի կյանքին այս րոպեիս անմիջական վտանգ է սպառնում... Միայն համառ պաշտպանության հնարավորությունը կարող է բռնավորներին հետ պահել գազանություններից։ Ուստի և կովկասահայերը, հանձինս իրենց ընտրյալների, իմ միջոցով աղերսում են կայսերական կառավարությանը՝ չմերժել Թուրքահայ իրենց եղբայրներին միջոցներ հասցնելու ինքնապաշտպանության համար՝ ընդդեմ բացահայտորեն հարձակվող թշնամու։ Պատգամավորությունը խնդրում է կայսերական կառավարությունից չմերժել Թուրքիայի հայերին նրանց ինքնապաշտպանության համար անհրաժեշտ զենքի թաքուն հանձնումը՝ գոնե բերդանկաներ ու փամփուշտներ։ Պատգամավորության անդամները երաշխավորում են, թե այդ զենքը, որ ռուսական կառավարության կողմից տրվելու է անհատույց կամ պետական գնով, վստահելի մարդկանց ձեռքով կհասցվի Թուրքիայի իրենց ազգակիցներին, ովքեր որ իսկապես դրա կարիքն զգում են, և որ դա կգործադրվի բացառապես ինքնապաշտպանության համար, բառիս ուղղակի իմաստով, և այն էլ՝ միայն ծայրահեղ կարիքի դեպքում, այլ ոչ թե որևէ մի այլ ակտիվ գործողության։ Ռուսաստանը, որը խոստացել է պաշտպան կանգնել Թուրքահայերին և նրանցից համբերություն է պահանջում, չպետք է մերժի տառապյալների խնդրանքը՝ սպասելով այն պահին, երբ շնորհիվ Ռուսաստանի անելիք քայլերի վերջ կգտնի նրանց մշտական վախը իրենց կյանքի ու կայքի համար, չպետք է մերժի ջարդարարներից պաշտպանվելու հնարավորություններն ու միջոցները...

Կովկասահայերի պատգամավորության այս դիմումի մեջ արտահայտվում էր նրանց նյարդայնությունը, որը նորից է սաստկացել Թուրքիայի հայաբնակ վայրերում տեղի ունեցող հուզումների մասին լուրերի ազդեցության տակ։ Մեր հայերի և հարևան Փոքր Ասիայի նրանց եղբայրակիցների ազգային ու կրո-

նական կապերն այն աստիճանի սերտ են, որ վերջիններիս կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները չեն կարող ամենաջերմ հետաքրքրություն չառաջացնել մեր հայերի մեջ և չազդել նրանց տրամադրության վրա։

Ինչպես մեր, այնպես էլ այլահպատակ հայերը, միշտ ջանացել են օգնություն ցույց տալ Թուրքիայի իրենց եղբայրակիցներին՝ Թուրքերի դեմ մղած նրանց անընդմեջ պայքարի ընթացքում. ընդ որում Թուրքիայի թուլության յուրաքանչյուր պահից օգտվել են միշտ, որպեսզի գոնե որևէ բան նվաճեն Թուրքահայերի համար։ Թեև 1878 թվին էլ Բեռլինի դաշնագրի մեջ մտցրվեց № 61 հոդվածը, որը Թուրքիային պարտավորեցնում է բարենորոգումներ իրագործել հայաբնակ մարզերում, ու թեև 1895 թվին տերությունների կողմից կազմվեց այդ բարենորոգումների նախագիծը, սակայն մերձավորարևելյան հարցի բարդությունը և տերությունների կողմից առանց ծայրահեղ անհրաժեշտության այն շոշափելու երկյուղը հանգեցրին նրան, որ ինչպես Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, այնպես էլ բարենորոգումների 1895 թվի նախագիծը մնացին որպես մեռած տառ։

Լիովին հասկանալի է, որ տեսնելով ներկայումս Թուրքիայի պարտությունը Բալկանյան դաշնակիցներից և բոլոր մեծ տերությունների միջամտությունը Մերձավոր արևելքի գործերին, հայերը չեն կարող հանգիստ մնալ։ Նրանք վախենում են, որ եթե ներկա պահին էական ու իրական բարենորոգումներ ձեռք չբերեն, իրենք վերստին երկար ժամանակով հանձնվելու են Թուրքերի կամայականություններին։ Հայերի անհանգստությունը է՛լ ավելի է մեծանում նրա համար, որ վճռական պահի մոտեցման հետ միաժամանակ, երբ պետք է որոշվի Թուրքահայ իրենց եղբայրների ճակատագիրը, սկսվել է տարվա այն եղանակը, որը բարենպաստ է Թուրքերի ու քրդերի կողմից հայերի դեմ թշնամական ելույթների համար։ Թուրքահայերը իրենց շուրջը տեսնում են համատարած զինված մուսուլման բնակչություն, մինչդեռ իրենց դեմ ամեն կարգի խոչընդոտներ են հարուցում զենք ձեռք բերելու գործում։ Վերջապես, Թուրքահայերը սարսափով են սպասում Մակեդոնիայից գաղթող մուսուլմաններին իրենց տեղերում և իրենց հողերի հաշվին բնակեցնելուն։ Թուրքահայերի վիճակը իսկապես կրիտիկական է դառնում, և նրանք գուցե ոչ առանց հիմքի վախենում են, որ ամենամոտիկ ապագայում իրենց սպասվում են առավել ծանր ժամանակներ, քան իրենք ապրել են մինչև այժմ...

Վորոնցով-Դաշկով

АВПР, Политархив, д. 3461, л. 1—4.

123. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 881 հեռագրից 14 (27) մայիսի 1913 թ.

Մայիսի 7-ին Շիրկովը հեռագրում է, որ սպանություններն ու կողոպուտները անվերջանալի են դառնում։ Նա վկայակոչում է հայերի և ասորիների 7 սպանություն և անասունների հափշտակում։ Ըստ նրա տեղեկությունների, հայերի վիճակը անտանելի է, և նրանք Խիզանի, Երունի ու Թաթիկի գավառներում վախենում են տներից դուրս գալ դաշտերը մշակելու համար։ Սարուան գյուղի հայերը, թվով 72 ծուխ, գնացել են Թաթիկի գավառը, որպեսզի Ռուսաստան գաղթեն, բայց գավառի կայմակամը չի թողել[24]...

Գիրս

АВПР, Политархив, д. 3461, л. 37.

124. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻՆ

Նամակից 20 մայիսի 1913 թ.

Թուրքահայոց պատրիարքը պատիվ ունի սույնի հետ Ձերդ գերազանցությանը հղել թարգմանությունը այն թաքրիրի, որը շաբաթ օրը նա հանձնել է նորին պայծառափայլություն մեծ վեզիրին...

Ձերդ գերազանցությանը հայտնի է, որ հայերի վիճակը կըտրուկ կերպով վատթարացել է Բալկանյան պատերազմից հետո։

Անատոլիայով մեկ հայերի դլխին կախված է զանգվածային կոտորածի վտանգը։ Նրանք պատանդ են դարձել մուսուլմանների ձեռքին։ Եթե զանգվածային կոտորած տեղի չի ունեցել, ապա բացառապես շնորհիվ այն բանի, որ այդ զարհուրելի ոճրագործությունների զոհերն իրենք հրաժարվել են նույնիսկ արդ-

դարություն հայցել, վախենալով, որ իրենց կմեղադրեն պրովոկացիայի մեջ։ Ճիշտ է, մինչև այժմ նրանց հաջողվել է խուսափել հեկատոմբից, բայց սպանությունների թիվը չի դադարել աճելուց, և որոշ ժամանակից ի վեր սպանությունների բուն բնույթը վկայում է հայերին ահաբեկելու ակնհայտ մտադրություն։

Ծանոթանալով մեր թաքրիրին՝ Ձերդ գերազանցությունը պարզ պատկերացում կկազմի հայերի վիճակի մասին։ Ձերդ գերազանցությունը կարձանագրի, որ հուշագրի հանձնման ժամանակից ի վեր օսմանյան կառավարությունը, չնայած այս առթիվ նրա տված պաշտոնական հավաստիացումներին, չի հոգացել նույնիսկ ամենատարրական կանխիլ միջոցներ ձեռք առնելու մասին։

Հալեպից մինչև Վանա լճի ափը հայ ժողովուրդը ապրում է վաղվա օրվա հանդեպ մշտական վախի մեջ։ Նորից հայ ընտանիքների երկար շարանները ձգվում են դեպի սահմանը։ Հայերն ստիպված են կտրել այն թելերը, որոնցով պատմության դարերը և համառ աշխատանքի դարերը իրենց կապել են այս հողի հետ։

Ի նկատի ունենալով, որ հայերի այսպիսի վիճակը դարձել է անտանելի, ինչպես և՝ մեր դեմարշների ապարդյունությունը, պատրիարքը չկորցնելով Հայաստանում բարենորոգումների հարցի լուծման հույսը՝ դրա հետ միասին Ձերդ գերազանցությանը խնդրում է ձեռք առնել այնպիսի միջոցներ, ինչպիսիք դուք տեղին կհամարեք, որպեսզի վերացվի Անատոլիայում զանգվածային անխուսափելի կոտորածի վտանգը...

Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունի

Առդիր I

Թաքրիր, որ մայիսի 18(31)-ին պատրիարքի կողմից հանձնված է մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշային

Արևելյան Անատոլիայի վիլայեթներում և Կիլիկիայում հայ բնակչության կոտորածի սպառնալիքի վերաբերյալ Ձերդ պայծառափայլությանը հուշագրի հանձնումից մինչև օրս ոչ մի միջոց չի ձեռնարկվել, որ կարողանար մեր ազգակիցներին զերծ պահել այդ սպառնալիքից։ Կոտորածներ հրահրելով զբաղված անձինք ոչ մի հետապնդման չեն ենթարկվել։ Պաշտոնյաները

շարունակում են վիրավորել մարդկանց այն բանի համար, որ նրանք հայ են։

Դեռ ավելին. տեղերից ստացված վստահության արժանի հաղորդումներից պարզվում է, որ վտանգն աճել է և որ սպանությունները, բռնությունները, առևանգումներն ու կողոպուտները կրում են, առանց չափազանցության, զանգվածային ջարդերի բնույթ։

Պատիվ ունեմ սույնին կից Ձերդ գերազանցությանը ուղարկել գրանցված նոր հանցագործությունների ցուցակը։

Վերևում նշված հաղորդումներից հավասարապես բխում է, որ հայ դժբախտ ազգը, որին ոչնչացում է սպառնում, միևնույն ժամանակ աստիճանավորների կողմից ենթարկվում է բռնապետական, անտանելի ճնշման։ Մարդիկ աննկարագրելի ճնշվածության պայմաններում են ապրում։ Հերկվորները սիրտ չեն անում իրենց գյուղի սահմաններից դուրս գալ՝ դաշտերը մշակելու համար։ Մյուս բնակիչներն էլ չեն կարող իրենց գործով զբաղվել։ Բացի այդ, հայերից շատերը այլ ելք չգտնելով, արտագաղթից զատ, խմբերով բռնում են տարագրության ուղին, ինչպես որ այդ տեղի էր ունենում հին ռեժիմի օրոք։

Դա նշանակում է, որ հայերն այլևս իրավունք չունեն ապրելու Օսմանյան կայսրության մեջ։

Քանի որ իրերի այսպիսի վիճակը պետք է հանգեցնի հայ բնակչության ոչնչացմանը վերը նշված շրջաններում, քանի որ կառավարության բազմաթիվ հավաստիացումները՝ մեր ազգակիցների կյանքի, պատվի և գույքի ապահովությունը երաշխավորող միջոցառումների մասին, չարդարացան, և քանի որ բոլոր միջոցները՝ աղերսանքները, բողոքները, գանգատները սպառվել են, ինձ մնում է դիմել սոսկ կայսերական կառավարության և օսմանյան ազգի խղճին ու պատասխանատվության գիտակցությանը, ինչպես և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի գթասրտության զգացմանը, որը պետք է իմանա, որ հայ ժողովուրդը այժմ հասարակության օրենքներից դուրս է դրված։

Արևմտահայոց պատրիարք

Առդիր II

Անատոլիայի տարբեր վիլայեթներում 1913 թ. ապրիլի 29-ից կատարված կողոպուտների, սպանությունների, առևանգումների և այլ հանցագործությունների ցուցակը, որը կցված է եղել

1913 թ. մայիսի 18 (31)-ին մեծ վեզիրին հասցեագրված հուշագրին.

1. Խարզանի կազայի (Բիթլիս) ավազակները 1329 [1913] թվի ապրիլի 29-ին կատարել են կողոպուտ Կիանիկոլ և Բիշեր գյուղերում և վիրավորել երկու հոգու։

2. Այն բանից հետո, երբ Զարսանջակի կայմակամ՝ Շուքրի բեյը կատարեց վալիի կարգադրությունը հայերի սեփականությունը նրանց վերադարձնելու մասին, որը գրավել էին աղաները, վերջիններս բոլոր սանկցիաներն ի չիք դարձնելու նպատակով սկսեցին հայերի տները քարուքանդ անել և 300-հոգանոց խմբի գլուխն անցած՝ շրջապատեցին իշխանությունների նստավայրը։ Վերջիններս փոխանակ գլխավորներին բռնելու և պատ[illegible]լու, կայմակամին տեղափոխեցին։

3. Հայտնի ավազակ Սեիդ Ալիի անթիվ կողոպուտների պատճառով Դադբեյ գյուղի բնակիչները փախան Բիթլիս, իսկ Արոնի բնակիչները պատրաստվում են արտագաղթել։

4. Ավզուտ գյուղում (Մուշ) բեյերի ճնշումներն սկսեցին այնպիսի բնույթ կրել, որ այդ գյուղի բնակիչները ստիպված եղան լքել գյուղը։

5. Այստեղ հայտնի ոճրագործ, ավազակ Հասո Իբրահիմը, որին ձերբակալելու հրաման կա, հարձակվեց Բեշերի կազայի (Դիարբեքիր) Էլիվո գյուղի վրա, թալանեց և սպանեց երկու հոգու։ Մեզ հայտնում են, որ իշխանությունների անգործունությանն հետևանքով բնակչությունը դեսուդեն է ցրվում, և դրությունը օրեցօր էլ ավելի հուսահատական է դառնում։

6. Սպանությունների և կողոպուտների թիվը անընդհատ աճում է Գավաշի կազայում։ Գավ ցեղը Շատախի կազայից քշել տարել է 2000 ոչխար և սպանել երկու հայ հովիվների։ Ոչ անհայտ Միր Մահեն իր 60 մանկլավիկների գլուխն անցած՝ ներխուժել է Խարզանի կազան և սպառնալիքներով բնակչությանն ստիպել է դրամ տալ իրեն։ Սպանել է հարկահավաքին։ Այս տեղերում գոյություն չունի ո՛չ կարգուկանոն, ո՛չ անվտանգություն։

7. Հարկահավաքը՝ Խոսրով անունով մի հայ, գազանաբար սպանվել է իր պարտականությունները կատարելիս։ Հանցագործությունը կատարվել է Իբրահիմ էֆենդու՝ սանջակի քարտուղարության պետի ագարակում, միանգամայն բացահայտ, մուսուլման և ոչ մուսուլման ժանդարմների ներկայությամբ, որոնք գտնվելիս են եղել փողոցում։ Գործելով ճնշման տակ՝ տեղա-

կան իշխանությունները չեն ձեռնարկել հանցագործների ոչ մի հետապնդում։ Սրանք շարունակում են իրենց համար ազատ ման գալ։

8. Էդրեկի կազայի (Կարասու) Էդինջիկի նահիեի բնակիչ ոմն Էլմաս զոռով տարել է հայ Հակոբ Շեքերյանի 14-ամյա աղջկան։ Չնայած բազմաթիվ բողոքներին, առևանգիչը ո՛չ ձերբակալվել է, ո՛չ հետապնդվել, իսկ աղջիկը չի վերադարձված ծնողներին։ Ուզում են նրան զոռով մահմեդականացնել։

9. 1913 թ. մայիսի 12-ին Գորգոր գյուղից (Բիթլիս) դուրս են հանել 5 հոգու և տարել սարերը։ Հենց այստեղ է սպանվել Արոնի գյուղի ասորի քահանան։

10. Սպանվել են 4 հայեր Խիզանի կազայում (Բիթլիս), 1 հայ՝ Բանիչան գյուղում և 54 հայ՝ Քարոն գյուղում, ընդամենը՝ 59 հայ։ Դրանից բացի, վիրավորվել են 4 հայեր և հափշտակվել է 1000 ոչխար։

11. Բազմաթիվ գանգատները այստեղի հայտնի ավազակ Մահմեդ Էմինի վրա մնացել են անհետևանք։ Այս նույն չարագործն սպանել է Գևորգ քահանային։

12. Միխալիջ կազայից (Բրուսսա) հայ Հակոբը գնդակահարվել է ոմն Հասանի ձեռքով։ Մարդասպանը չի ձերբակալված։

13. 11 հայեր, որոնք Ռուսաստանից վերադառնում էին իրենց երկիրը, որտեղ նրանք ապրում են Վանա լճի մոտ և դրա շրջակայքում, վիրավորվել են և կողոպտվել պարետ Ահմեդ աղայի կողմից։

14. Երկու ժանդարմներ, անունները՝ Նուման և Ալի չաուշ, գնացել են Զուխուր և Քիլինջ գյուղերը՝ դասալիք փնտրելու պատրվակով։ Չգտնելով նրանց, ում փնտրելիս են եղել, ծեծել են նրանց հարազատներին և կոտանքի ենթարկել մուխթար Հակոբ էֆենդուն, որին հետո տարել են Յալովա և բանտարկել։

15. Սպանություններն ու կողոպուտները շարունակվում են Մուշում և Սղերդում։ Կապը հայկական գյուղերի միջև կտրված է։

16. Ճանապարհները Դիարբեքիրի, Բիթլիսի և Վանի շրջաններում փակ են և գյուղատնտեսական աշխատանքները լրիվ դադարեցված են։ Ավազակախմբերն անպատիժ գործում են ամենուրեք։

17. Թիմար գյուղում (Վան) 8 զինվորներ բռնաբարել են մեկ հղի կնոջ։

18. Բիթլիսում նշանավոր ավազակ Մեհմեդը առևանգել է 4 հայերի և տարել սարերը։ Հարձակվել է Գելհոք գյուղի վրա։ Մեհմեդը առևանգված հայերի ազգականների մոտ մի քրդի և մի կնոջ է ուղարկել փրկագին ստանալու։ Թշվառ ազգականներն ստիպված են եղել իրենց հողերը գրավ դնել, որպեսզի ճարեին 23 լիրա, որը նահանգապետ Նեհնեն փոխանցել է ավազակին՝ Խալիլ շաուշի և մի ուրիշ ժանդարմի միջոցով։

19. Լիակատար հուսահատության հասցված և այլևս անկարող լինելով հաշտվել այդքան դրամաշորթությունների հետ՝ Երզնկայի և շրջակայքի հայերը արտագաղթում են Ամերիկա։

20. Սիլվանի և Բեշարիի կազաներում (Դիարբեքիր) քրդերը տենդագին զինվում են՝ շարունակելով սպանել ու կողոպտել հայերին և սպառնալ նրանց։

21. Այսօր Բիթլիսի մեր արքեպիսկոպոսից ստացված ճեպագրում հաղորդվում է, որ Խիզանի կազայում հենց նոր սպանել են 3 հայերի և որ տեղական իշխանությունների կարգադրությունները մնացել են անհետևանք։

АВПР, Политархив, д. 3465.

125. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՌԱԳՐԻՑ՝ ՀՂՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

20 մայիսի (2 հունիսի) 1918 թ.

Մայիսի 18-ին պատրիարքը մեծ վեզիրին նոր թաքրիր է հանձնել՝ սուր արտահայտություններով հայտարարելով, որ վերջին հուշագրի հանձնումից հետո դրությունը վատացել է և հայ տարրը լրիվ ոչնչացման սպառնալիքի առաջ է կանգնած։ Կառավարության բազմաթիվ խոստումները չեն կատարված, և պատրիարքին մնում է միայն դիմել օսմանյան կառավարության ու ժողովրդի պատասխանատվության զգացմունքին և քաղաքակիրթ աշխարհի կարեկցությանը։ Թաքրիրը հանձնելով, պատրիարքը շտապությամբ հեռացել է՝ հրաժարվելով զրույցի բռնվել մեծ վեզիրի հետ։ Այսօր պատրիարքի կողմից ուղարկված պատգամավորությունը ինձ հանձնեց մի գաղտնի դիմում հետևյալ բովանդակությամբ։ Նոր թաքրիրի հանձնումը Բ. Դռանը չունի կառավարության դեմ ուղղված ցույցի բնույթ, այլ նպատակ ունի

նրան դրդել շտապությամբ բարենորոգումների անցկացման։ Պատրիարքարանը Դռնից չի սպասում բարենորոգումներ և միայն մատնացույց է անում հայերին սպառնացող կոտորածի վտանգը. սպանությունների թիվն անընդհատ աճում է, իսկ կառավարությունը առաջվա նման մատը մատին չի խփում։ Հայ բնակչությունն ահաբեկված է և սկսում է արտագաղթել։ Սույնը ի նկատի ունենալով՝ պատրիարքը դեսպանին խնդրում է շտապ կարգով ձեռք առնել բոլոր միջոցները, որոնք կարող են կանխել կոտորածը Հայաստանում։ Փաստաթուղթն ինձ հանձնելով՝ պատգամավորները հայտարարեցին, որ դրությունը շատ լուրջ են համարում...

Գիրս

АВПР, Политархив, д. 3461, л. 68.

126. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 578 հեռագրից **4 հունիսի 1918 թ.**

Հայոց պատրիարքի պատգամավորությունը այցելեց դեսպանատուն՝ բողոքելով Ռոդոսթոյի հետգրավումից հետո թուրքերի կողմից հայերին կոտորելու մասին։ Այնտեղ ուղարկված անգլիական ստացիոնարի հրամանատարը երեկ երեկոյան վերադարձավ այստեղ և տեղեկացրեց, որ դրությունը կրիտիկական է եղել առաջին օրը, բայց ճշգրիտ չի հաջողվել որոշել սպանվածների թիվը. դա տատանվում է 26—60-ի միջև՝ ներառյալ նաև 5 կամ 6 բուլղարացի ժանդարմներին...

Գիրս

АВПР, Посольство в Константинополе, д. 3734, л. 398.

127. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻՆ

Գաղվածք № 78 զեկույցից **26 հոկտեմբերի 1918 թ.**

Նորընտիր պատրիարք Զավեն Եղիայանը, որն սպասվում էր Էրզրումում դեռևս հոկտեմբերի 6-ին, այստեղ ժամանեց ամսույս 13-ին միայն, ճանապարհին՝ Դիարբեքիրից Էրզրում իր երեկ

սուներկուօրյա ճանապարհորդության ընթացքում հաճախակի կանգառներ կատարելու պատճառով։

Պատրիարքի ժամանման պահից սկսած՝ մուսուլմանների մեջ զգալի գրգռություն է ծայր առել նրա հանդեպ ցուցաբերված պատիվների առթիվ։ Այս հանգամանքից օգտվեցին ագիտատորները, որոնց թվում վերջին դերը չէր խաղում գերմանական հյուպատոսի գաղտնի գործակալ Կառլ Լեները։ Վերջինս, որն արդեն իր անձնագիրը ներկայացրել էր գլխավոր հյուպատոսություն Ռուսաստանի վրայով Կոստանդնուպոլիս մեկնելու համար և պատրաստվում էր էրզրումը թողնել հոկտեմբերի 15-ին, բոլորովին անսպասելիորեն մնաց այստեղ մինչև պատրիարքի մեկնումը, այսինքն մի ամբողջ շաբաթ ավելի, քան ենթադրում էր։ Այդ ընթացքում մուսուլմանների միջև տարվող ագիտացիան աստիճանաբար աճում էր...

Քաղաքի տարբեր թաղերում տեղի էին ունենում մահմեդականների գաղտնի ժողովներ, որոնցում կրքոտ կերպով դատապարտվում էին պատրիարքին ցույց տրված չափազանց մեծ պատիվները, քանի որ թուրքական իշխանություններն իրենք դրանով բորբոքում էին հայերի մեծամտությունը և մուսուլմանական կրոնին անտեղի ստորացում բերում։ Այդպիսի ժողովներից մեկը տեղի է ունեցել Հասան-Բասրիում՝ Գուլի բեկի որդի քուրդ Հուսամ էդ-դինի տանը, մյուսը՝ Էրզինջան-Գափու թաղում՝ Աշա էֆենդիի տանը, որտեղ երկար խոսք ու զրույցից և կատաղի վեճերից հետո վճռվել է մեկընդմիշտ դաս տալ հայերին, սպանել պատրիարքին Տրապիզոն գնալու ճանապարհին կամ էլ, անհաջողության դեպքում, ուղղակի Կոստանդնուպոլիս մեկնող շոգենավը բարձրանալու պահին։

Այդ նպատակով, 50 լիրայով ճարել են երկու դաղաշ, կամ էրզրումցի խուլիգաններ, անունները՝ Իբրահիմ Հասան-օղլի և Խաքքի Խալիլ-օղլի, որոնք պարտավորվել են պատրիարքին հետևել էրզրումից մեկնելու պահից, որպեսզի առաջին իսկ հարմար դեպքում մահափորձ կատարեն նրա վրա։ Այս մասին տեղեկություններ ստանալով մինչև նորին սրբազնության մեկնումը քաղաքից՝ ես շտապեցի գլխավոր հյուպատոսության թարգմանի միջոցով նրան առանձին նախազգուշացնել պատրաստվող մահափորձի մասին...

Պատրիարքին նախաճաշի հրավիրելով, ես ջանացի խոսք բացել քրդերի և հայերի փոխհարաբերությունների մասին, ընդ

որում նորին սրբազնության արտահայտած կարծիքների էությունը հանգում էր հետևյալին. եթե քուրդ աշիրեթների մեջ, մանավանդ Բիթլիսի վիլայեթում, հանդիպում են այնպիսիները, որոնց պետք է համարել հայերի թշնամիներ, ապա մյուսները հայերին վերաբերվում են բարեկամաբար և պատրաստ են նրանց հետ ձեռք ձեռքի տված ընթանալ։ Թուրքական կառավարությունը, որը վաղուց ի վեր կասկածամտությամբ է վերաբերվել հայ-քրդական բարեկամությանը և չի դադարել միջոցներ ձեռք առնել մի ժողովրդին մյուսի դեմ գրգռելու, հիմա քրդերի արդեն գուրս պոռթկացող շարժումը ի նկատի առնելով՝ առանձին ջանքեր է գործադնում, որպեսզի այդ շարժման սուր ծայրն ուղղի հայերի դեմ...

Ադամով

АВПР, Посольство в Константинополе, д. 2684. л. 126—127.

128. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 1068 **7 (20) դեկտեմբերի 1918 թ.**

Ադամովը հեռագրում է. պառլամենտի ընտրությունների առթիվ հայերի ելույթների կապակցությամբ քաղաքում [էրզրումում] մուսուլմաններին արհեստականորեն գրգռում են հայերի դեմ։ Այս նպատակով իթթիհատականներից շատերի տներում գաղտնի ժողովներ են տեղի ունենում։ Իթթիհատական ակումբը մայրաքաղաքի կոմիսար Ահմեդ Հալիմ բեյի նախագահությամբ հակահայկական եռուն պրոպագանդա է մղում։ Տեղացի խուլիգան-դաղաշները, որոնց պարագլուխը կանչվել էր գերմանական հյուպատոսարան, եռանդագին զինվում են։ Մի խոսքով՝ ամեն ինչից երևում է, որ խառնակչության ուժեղ նախապատրաստություն է տեղի ունենում։ Որոշ հայեր երկյուղ են հայտնում, թե Գերմանիան դիտմամբ ձգտում է անկարգություններ ստեղծել, որպեսզի դրանով կործանի բարենորոգումների գործը։ Ուրիշները կարծում են, թե ագիտացիան տարվում է տերությունների կողմից մշակված բարենորոգումներն իսկապես իրագործելու պահին անկարգություններ ստեղծելու նպատակով։

Գիրս

АВПР, Политархив, д. 3465, л. 66.

129. ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(«Նովոյե վրեմյա» թերթի հաղորդագրությունը)

Հայերի նկատմամբ գործադրվող դաժանությունները, անկասկած, խրախուսվում են կամ նույնիսկ, գուցեև, կազմակերպվում Կոստանդնուպոլսի երիտթուրքերի կողմից, այսինքն՝ կենտրոնական կառավարության։ Այս լրացուցիչ հանգամանքը հայոց տառապանքների պատկերին տալիս է այնպիսի միանգամայն յուրահատուկ երանգավորում, որի հետ անհնարին է հաշվի չնստել...

Այսպիսով, հայկական հարցի էությունը ներկայումս կայանում է ոչ թե նրանում, որ երեք շաբաթվա ընթացքում տեղի են ունեցել 70 բռնաբարություն և սպանություն, այլ նրանում, որ մեր հավատակից քրիստոնյաների անձնական անձեռնմխելիության դեմ կատարվող այդ հանցափորձերը տեղի են ունենում կենտրոնական երիտթուրքական կառավարության բարեհաճ թույլտվությամբ և գիտությամբ...

«Новое время», 1913, 22 мая, С-Петербург.

130. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 1184 **29 դեկտեմբերի 1913 թ.**

Ադամովը հեռագրում է Էրզրումից. Գաղտնի ժողովները քաղաքում շարունակվում են ամբողջ ուժով, ընդ որում դրանցում բացեիբաց սկսել են խոսել հայկական կոտորածի մասին։ Մոլլաների հրամանի համաձայն մուսուլմաններն սկսել են սպիտակ շալմա փաթաթել գլխներին։ Ըստ լուրերի, ամեն ինչ պատրաստ է կոտորածի համար, և սպասում են միայն մայրաքաղաքից տրվելիք ազդանշանին։ Իթթիհատականները բացեիբաց ստորագրություններ են հավաքում վերահսկողության դեմ գրված բողոքի տակ, կանխապես տերությունների վրա դնելով, բարենորոգումների գործում նրանց միջամտության դեպքում, տեղի ունենալիք կոտորածների մեղքը։ Տրամադրությունը տագնապալի է, և ցանկալի կլիներ վճռական միջոցներով կանխել կոտորածը, որ ձեռնտու է սոսկ մեր հակառակորդներին՝ Ռուսաստանի նկատմամբ հայերի համակրանքը շեղելու համար։

Գիրս

АВПР, Политархив, д. 3465, л. 125.

131. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Էրզրում, 4 հունվարի 1914 թ.

Այստեղի հայերը ուրբաթ օրը իսկական խուճապ ապրեցին։ Առավոտյան կրպակների մեծ մասը փակ էր, և հայերը բոպե առ բոպե սպասում էին հարձակման։ Չնայած մուսուլմանների գրագրված վիճակին, որոնց հրահրել էին իթթիհատականները՝ մայրաքաղաքից եկած էմիսար Հիլմի բեյի ղեկավարությամբ, իթթիհատական ակումբը, գերմանական հյուպատոսի նախաձեռնությամբ, քաղաքի ծայրամասում կազմակերպել էր ատրճանակի մրցանակային հրաձգություն։ Հավաքվել էր տեղացի խուլիգանների, կամ դաղաշների մեծ մասը՝ իրենց զենքերով, և հյուպատոսն ինքը մասնակցում էր հրաձգությանը, որին հրավիրված էին միայն մուսուլմանները, նույնիսկ՝ քաղաքի մերձակա գյուղերից։ Նման անժամանակ և մինչ այս անհայտ զվարճությունը հայերի մեջ վստահություն ծնեց, թե ուր որ է եկել է կոտորածն սկսելու պահը, և ռուսահպատակների մեջ երկյուղ առաջացրեց, որի համար էլ ես թարգմանի միջոցով բողոքեցի վալիին ընդդեմ խուճապ սերմանող այդ զվարճության։ Հայերը վստահ են, իսկ դաղաշները բացեիբաց ասում են, թե կոտորածը սոսկ հետաձգված է։

Ադամով

АВПР, Посольство в Константинополе, д. 3726, л. 94.

132. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ԱԴԱՄՈՎԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Էրզրում, 15 փետրվարի 1914 թ.

Տեղական իթթիհատական ակումբի կողմից հիմնված «Թուրք գյուշի», կամ «Թուրքերի ուժ» ընկերությունը, սկսում է քիչ առ քիչ զարգանալ և հաշվեհոտ ամսի [հունվար] առաջին կեսին

արդեն հաշվվում է մոտ 200 անդամ, որոնց մեծ մասը, բացառությամբ Dette Publique-ի [Օտտոմանյան պարտքի վարչություն] վիլայեթի վարչության ծառայողների և արհեստավորների, բաղկացած է Էրզրումի դաղաշներից կամ խուլիգաններից։ Ընկերության նախագահ է համարվում Էրզրումի միջնաբերդի և ամրոցների ծառայությունից վերջերս հեռացված տեսուչ Համդի փաշան, որը յուրաքանչյուր ուրբաթ օրը «Թյուրք գյուջի»-ի անդամների հետ ռազմական զբոսանք է կատարում Էրզրումի շրջակայքում։ Նոր ընկերության կազմման նպատակների մասին կարելի է դատել ըստ այն ճառի, որը Համդի փաշան ասել է այդ զբոսանքի մասնակիցների առաջ և որի մեջ, մատնանշելով Ռուսաստանին որպես Թուրքիայի վաղնջական թշնամու՝ նրանց խորհուրդ է տվել ձեռքները չծալելով աշխատել ռազմական արհեստի յուրացման վրա, որպեսզի դրսից հարձակման դեպքում նրանք կարողանան լինել բանակի գործուն օգնականները թշնամուն դիմագրավելու գործում։ «Այդ նպատակով, շարունակել է փաշան, որոշված է «Թյուրք գյուջի» ընկերության անդամների համար ռազմական վարժությունների, համաքայլվածքի, հրաձգության ուսուցում անցկացնել, մի խոսքով՝ այն ամենի, ինչ անհրաժեշտ է, որ իմանա զինվորը, հենց որ դրանցվածների թիվը հասնի հազարի»։ Իսկ իթթիհատական ակումբի գործիչների կողմից վերոհիշյալ ընկերության խնդիրների առթիվ տրված պարզաբանումներից չի կարելի չգալ այն եզրակացության, որ նրանց կողմից ստեղծվող «ժողովրդական միլիցիան» նախատեսվում է հակագործելու համար ոչ միայն արտաքին թշնամիների դեմ, այլև՝ ներքին, որի տակ հասկանում են գլխավորապես հայերին։ Մտահոգված լինելով ինչպես հարկն է զինել այդ միլիցիոներներին, իթթիհատական ակումբը որոշել է «Թյուրք գյուջի» ընկերության յուրաքանչյուր անդամից, ովքեր պետական կամ հասարակական ծառայության մեջ են գտնվում, գանձել ամսական երկուական մեջիդիե, իսկ արհեստավորներից՝ շաբաթական 5-ական ղուռուշ, որպեսզի աստիճանաբար հավաքվի այնքան կապիտալ, որը բավականացնի Եվրոպայից 600-ից 1000 հատ հրացան բերել տալու համար, պայմանով, որ պատվերը կատարողների վարձի ամբողջ գումարը վճարվի ոչ պակաս քան չորս նվագով։ Դրամի հավաքումն արագացնելու համար «Թյուրք գյուջի» ընկերությունը պատրաստվում է վարձով կազմակերպել «Սուլթան Սելիմ III» պիեսի

թուրքերեն ներկայացումը, որը նշանակված է սույն թվի մարտի 1-ին։ Դրա հետ միաժամանակ իթթիհատական ակումբի նախագահ Ահմեդ Հիլմի բեյը դիմել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին, խնդրելով, որ արտասահմանյան զինագործական ֆաբրիկաների հետ նամակագրական կապ հաստատեն իրենց 4000 ատրճանակ մատակարարելու վերաբերյալ, այն պայմանով, որ վճարումը կատարվի երեք նվագով, իսկ զենքը բաժանվի Էրզրումի իթթիհատներին և սրանց համախոհներին, որոնք աղքատության պատճառով պարտավորված կլինեն ատրճանակների արժեքը վճարել աստիճանական մուծումներով։ Այսպիսով, Էրզրումում իթթիհատները մտադիր են միաժամանակ զինել և՛ խաժամուժին, հայերի դեմ գործելու համար, հայերի, որոնք այժմ համարվում են լավ զինված, և՛ իրենց համախոհներին՝ քաղաքական հակառակորդների դեմ կռվելու համար...

АВПР, Посольство в Константинополе, д. 2685, л. 13—14.

188. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ԱԴԱՄՈՎԸ՝ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Զեկուցից **15 մարտի 1914 թ.**

Հայերի դեմ զրգռումը, որ բորբոքել է Էրզրումում երիտթուրքական կուսակցությունը, կամ, ավելի ճիշտ, իթթիհատական ակումբը, բնավ էլ չի հանդարտվել, և թեև այն արդեն չի սպառնում անհապաղ կոտորածով, ինչպես եղավ ընթացիկ տարվա հունվարի սկզբին, այնուամենայնիվ ժամանակ առ ժամանակ հասցնում է դուրս պոռթկալ հայերի ու մուսուլմանների միջև տեղի ունեցող զինված ընդհարումների ձևով։ Այսպես, օրինակ՝ բարեկենդանի շաբաթվա մեջ Աղտաձոր գյուղում, որը կես ժամվա ճամփա հեռու է քաղաքից և բնակչության կեսը հայ է, կեսը՝ մուսուլման, զինված ընդհարում տեղի ունեցավ սրանց ու նրանց միջև այն պատճառով, որ մուսուլմանները չէին ուզում հայերին թույլ տալ բարեկենդանն անել գյուղում՝ երթով և նվագ ու պարով։ Հայերի վրա հարձակվելիս սպանվեց մեկ մուսուլման՝ Հուսեյն անունով, իսկ մի ուրիշը ծանր վիրավորվեց։ Հայերից նույնպես տուժեցին մի քանի հոգի՝ շատ թե քիչ ծանր վիրավորվելով։ Նույնպիսի ընդհարումներ և նույնպիսի առիթով, թեև

առանց մահացու դեպքերի, տեղի ունեցան Տուվանջ գյուղում և Էրզրումի շրջակայքի այլ վայրերում, որն առիթ տվեց տեղիս հայ լուսավորչական եպիսկոպոս Սմբատ Սահադեոյանին զանգատով դիմելու վալիին՝ ընդդեմ մուսուլմանների, որոնք սոսկ առիթ են փնտրում, որպեսզի հարձակվեն հայերի վրա։ Վալին ժանդարմական յուզբաշի Մուստաֆայի միջոցով տեղում հետաքննություն կատարելուց հետո, եպիսկոպոսին պատասխանեց կտրուկ մի նոտայով՝ ամեն ինչում մեղադրելով հայերին, որոնք մտածում են լոկ այն մասին, թե ինչպես անկարգություններ առաջացնեն, որպեսզի հետո ամբողջ մեղքը բարդեն մուսուլմանների վրա։ Որպեսզի գործով ապացուցեն, որ հայերը նպատակ են դրել այսպես թե այնպես գրգռել մուսուլմաններին, այժմ ճիգեր են գործադրում նաև թուրքական կառավարական գործակալները բուն Էրզրումում, որտեղ հաշվետու ամսվա երկրորդ կեսին հաճախացել են հայերի ձերբակալությունների դեպքերը, իբրև թե թուրք կանանց պատվի դեմ արված ոտնձգությունների համար։ Այսպես, օրինակ՝ վարսավիր Հակոբը մեղադրվել է Թրքուհի Գյուլշանին բռնությամբ իր կրպակը տանելու մեջ։ Հարբած հայերը՝ սրճարանի տերեր Սիմոնը և Զիլինգար Հմայակը, Իքի-Գյոբեկ հասարակական բաղնիքի մոտով անցնելիս, այն ժամանակ, երբ այնտեղ են գտնվելիս եղել թուրք կանայք, մի քանի մուսուլմանների կողմից զոռով մտցվել են բաղնիքի նախասրահը, այնտեղ ծեծվել են կանանց ձեռքով և ապա ձերբակալվել ոստիկանության կողմից։ Փետրվարի 14-ի երեկոյան մի քանի հարբած հայերի ձերբակալել են ոստիկանները Գյումրյուկ-Արկա փողոցում՝ երկու անցորդ մուսուլմանուհիների վրա հարձակվելու մեղադրանքով։ Բոլոր այս լուրերը, հույժ ծաղկեցված ձևով տարածվելով՝ քաղաքում ծնունդ են տալիս մուսուլմանների նորանոր գաղձզումների։ Վերսկսված գաղտնի ժողովներում, որոնք տեղի են ունեցել հաշվետու ամսում. 1) Մուրադ-փաշա թաղամասում՝ Հաջի Քյամիլ էֆենդու տանը, 2) Հաբիբ-էֆենդի-Ուլյա թաղամասում՝ Համիդ բեյի տանը, 3) Զեդիդ թաղամասում՝ Մուստաֆա էֆենդիի մոտ և, վերջապես, 4) Թոփչի-օղլի թաղամասում՝ Դեդե բեյ Մումջիդաղեի մոտ,— ամենուրեք ձայներ էին հնչում հայերին դաս տալու անհրաժեշտության մասին...

АВПР, Посольство в Константинополе, д. 2685, л. 31—32.

194. ԷՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻՆ

Զեկույցից **5 մայիսի 1914 թ.**

Ռուս-թուրքական սահմանի և Էրզրումի միջև համարյա կես ճանապարհին, Արաքս գետի կամրջի մոտ կա մի գյուղ՝ Քյոփրի-Քյոյ, բնակեցված բացառապես հայերով։ Մարտի սկզբին կամրջի մյուս կողմում, մոտ մեկ վերստ Քյոփրի-Քյոյից հեռու գտնվող մուսուլմանական էմրակամ գյուղի բնակիչների ցուցմամբ, կամրջի կամարներից մեկի տակ իշխանությունները հայտնաբերեցին Կալեն-դերի անունով թուրք ժանդարմի դիակը։ Հենվելով այն բանի վրա, որ դիակը ավելի մոտ էր գտնվում հայկական գյուղին, քան մուսուլմանականին, և որ ժանդարմի պետական զենքը սպանողները տարել էին, թուրքական իշխանությունները մեղավոր համարեցին քյոփրիքյոյցի հայերին, և Բասենի կայմակամ Թահիր բեյը, որն այդ ժամանակ վերադարձել էր Ռուսաստանից, մեծ աշառությամբ ձեռնարկեց նշված հայկական գյուղում հետաքննության անցկացումն ու խուզարկությունները։ Թուրքական քննչական աստիճանավորները և ժանդարմները այդ ընթացքում ոչ միայն ծաղրուծանակի ենթարկեցին կասկածելի հայերին, այլև բռնություն գործադրեցին նրանց կանանց ու երեխաների նկատմամբ, չնայած այն բանին, որ պատասխանատվության կանչված քյոփրիքյոյցիները պնդում էին, թե ժանդարմն սպանվել է խանդի հողի վրա՝ էմրակամ գյուղի մի քանի բնակիչների ձեռքով, իսկ նրա դիակը, մեղքն իրենցից վանելու համար, նետված է հայկական գյուղի մոտ, սառույցի վրա։

Թուրքերի ծաղրուծանակը անպաշտպան գյուղացիների նկատմամբ վրդովմունքի պոռթկում առաջացրեց հայերի մեջ, որոնք բացեիբաց ասում էին, թե իշխանությունները նպատակ են դրել հայերին ստիպել, որ լքեն ռուսական զորքի՝ դեպի Էրզրում շարժման ճանապարհին ընկած գյուղը, ուստի և բռնադատման ամեն միջոց թույլատրելի են համարում։ Էրզրում քաղաքի հայ լուսավորչական եպիսկոպոս Սմբատ Սահադեոյանը մի քանի անգամ դիմեց վալիին՝ համառորեն պահանջելով, որ անաչառ կերպով հետաքննվեն Քյոփրի-Քյոյի իրադարձությունները, բայց այն բանից հետո, երբ Էրզրումի ոստիկանապետ Խուլլուսի բե-

յին ու քաղաքացիական տեսուչ Ֆուադ բեյին այնտեղ ուղարկելը ոչ մի արդյունքի չհանգեցրեց, եպիսկոպոսը դիմեց ինձ՝ խնդրելով, որ այս ամենի մասին խոսեմ գեներալ նահանգապետի հետ։ Ես, լսած լինելով, թե Բասենի կայմակամ Թահիր բեյը, իբրև պարգև այժմյան կառավարությանը իր մատուցած ծառայությունների դիմաց, նշանակվել է Բայազետի մութեսարիֆ, իմ անձնական տեսակցության ժամանակ այդ առթիվ երկար խոսակցություն ունեցա վալիի հետ, որն ինձ հավաստիացրեց, թե Բայազետում աշխատելու համար նշանակված է մի աստիճանավոր, որն արդեն մեկնել է Կոստանդնուպոլսից, և որ Թահիր բեյին կառավարությունը որոշել է տեղափոխել մի այլ կողմ...

Ա. Ադամով

АВПР, Посольство в Константинополе, д. 2685, л. 47—48.

185. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-Ը՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ

Նամակ № 1181 **Էջմիածին, 5 օգոստոսի 1914 թ.**

1912 թվի հոկտեմբերի 2-ին ես համայն հայոց անունից Ձերդ պայծառափայլության միջոցով ամենախոնարհ խնդրանքով դիմեցի մեր ամենաբարեգութ թագավորին, որ նա բարձր պաշտպանություն ցուցաբերեր հայ ժողովրդի հանդեպ՝ նրա վիճակի կայուն բարելավման համար։

Ի պատասխան այդ դիմումի ստացա կայսերական կառավարության հավաստիացումը Թուրքիայի հայերի վիճակին լուրջ ուշադրություն դարձնելու և այդ ժողովրդի ճակատագրի կարգավորմամբ զբաղվելու մտադրության մասին։

Հիրավի, Ռուսաստանը պաշտոնապես հանդես եկավ այնպիսի բարենորոգության նախագծի առաջարկով, որը խոստանում էր թուրքական ռեժիմի բավականաչափ և բավարար փոփոխություն հայերի նկատմամբ։

Բայց ի հետևանք Գերմանիայի և նրա դաշնակիցների օպոզիցիայի և Ռուսաստանի հաստատուն ցանկության՝ պահպանել տերությունների կամքի միասնությունը ապագա հաջողությունների համար, բարենորոգումների Ռուսաստանի առաջարկած

նախագիծը ենթարկվեց ուժգին փոփոխության և դրա նշանակության նվազեցման։

Իսկ երբ սրան ավելացան Դոան հրահանգները գեներալ-տեսուչներին, Դոան շփումները նրանց հետ և հայկական վիլայեթներում այժմ գործադրվող կանխիչ միջոցառումները, ապա ժողովրդի ու Կոստանդնուպոլսի պատրիարքի կասկածանքը այդ բարենորոգումների գործնականության նկատմամբ էլ ավելի սաստկացավ։

Այժմ բռնկված պատերազմը արևմտահայերի կյանքն ու ռեֆորմների ճակատագիրը նորից դնում է մեծ փորձության տակ։

Հիմա, երբ յուրաքանչյուր ռուս քաղաքացի տագնապով հետևում է այն իրադարձություններին, որոնք կառավարությունից պահանջում են ուժերի մեծ լարվածություն, ես երջանիկ եմ հայտարարելու Ձերդ պայծառափայլությանը, որ հայ ժողովուրդը խլացնելով իր մեջ սեփական վերքի ցավի զգացումները, իր բոլոր մտադրությունները կենտրոնացրել է մեծ հայրենիքի վրա, որի փառքի համար նա ոգեշնչված արձագանքեց իր թագավորի կոչին՝ իր սուրբ պարտքը կատարել նորին մեծության և հայրենիքի հանդեպ։

Ես երջանիկ եմ հայտարարելու Ձեզ, մեծապատիվ կոմս, նաև այն մասին, որ սահմանից այն կողմ ապրող հայ ժողովուրդը նույնպես անսասանորեն հաստատ է ռուսական մեծ տերության հանդեպ իր նվիրվածության մեջ։

Բայց որպես իմ ժողովրդի հոգևոր հովիվ, ես չեմ կարող չտագնապել և Ձերդ պայծառափայլությանը չմատնանշել այն, որ Թուրքիայում հայ բնակչությունն ապրելու է խորապես վըշտալի օրեր, եթե Ռուսաստանի ուշադրությունը Հայոց հարցի նկատմամբ ժամանակավորապես թուլանա։

Ես կարծում եմ, որ կայսերական կառավարության մոտ չի կարող այլևս կասկած մնալ, որ իր բոլոր փորձերը՝ ազդել Թուրքիայի վրա բարեհաճությամբ, չեն տալու դրական արդյունքներ։

Բ. Դուրը, որը ծածուկ խրախուսվում է Գերմանիայից, սույն տարվա հունվարի 26-ին կարողացավ անվավեր հայտարարել պայմանագիրը, ուստի և մշակված ռեֆորմը չի կարող ոչ ոքի բավարարել։

Ի նկատի ունենալով Կոստանդնուպոլսի պատրիարքարանից և հայոց ազգային ժողովից ստացվող բազմաթիվ տվյալները՝ ես գալիս եմ այն տխուր եզրակացության, որ հնարավորություն

չի ընձեռվում հավատալու, թե Թուրքիայում, այնտեղ գոյություն ունեցող կառավարական ռեժիմի օրոք, հնարավոր կլինի կենսագործել որևէ բարենորոգում՝ հայերի դրությունը բարելավելու համար, եթե իրոք դրանց իրականացումը չկարգավորվի հատուկ ու հաստատուն երաշխիքներով։

Քանի դեռ Թուրքահայաստանը գտնվում է Թուրքիայի սահմաններում, մինչև համայն հայության համար տանջալի այդ հարցի վերջնական լուծումը, անձամբ իմ և ամբողջ հայ ազգի կարծիքը կայանում է հետևյալում.

ա) Անատոլիայի հայկական գավառներից կազմել մեկ անբաժանելի մարզ.

բ) այդ մարզի կառավարիչ պետք է կարգել քրիստոնեական գավանանքի տեր մի անձի, Դռնից անկախ, բարձր տիտղոսով կամ աստիճանով օժտված և Ռուսաստանի կողմից ընտրված մեկին.

գ) այդ մարզում մտցնել ներքին լայն ինքնակառավարում՝ ընտրական սկզբունքների հիման վրա, քրիստոնյաներից և մուսուլմաններից հավասար թվով ներկայացուցիչներով.

դ) որպեսզի հայ բնակչությունը հավատա կառավարման նոր կազմակերպության և կարգի կայունությանն ու կենսականությանը, ամբողջ բարենորոգման վերահսկողության և իրականացման իրավունքը վերապահել բացառապես Ռուսաստանին։

Նկարագրված կառավարման կարգը մտցնելը հնարավոր է միայն այժմյան պատերազմի ավարտից հետո։ Այնինչ, ի նկատի ունենալով Թուրքիայում հայտարարված զորակոչը, տագնապալի նշաններ են նկատվում, որի հետևանքով հայ բնակչությունը երկյուղ է կրում գալիք նոր աղետներից։ Ուստի ցանկալի է, որ կայսերական կառավարությունը հիմա ևեթ Թուրքական կառավարությանը ներկայացնի եռանդուն պահանջներ.

ա) հայերի կյանքի և գույքի անհրաժեշտ պահպանության միջոցառումների գործադրում, և

բ) գլխավոր տեսուչների տեղավորում տեղերում՝ նրանց հնարավորություններ տալով առայժմ անցկացնելու այն ռեֆորմը, որն ընդունված է 1914 թ. հունվարի 26-ին...

АВПР, Политархив, д. 3484, л. 1—9.

186. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 1802 Հեռագրից **20 սեպտեմբերի 1914 թ.**

Էրզրումի գլխավոր հյուպատոսը հեռագրում է. սեպտեմբերի 18-ին մեծ զորաշարժեր սկսվեցին ռուսական սահմանի մոտ։ Մուսուլմաններին զենք են բաժանում հայերի առաջիկա կոտորածի համար։ Կապիտուլյացիաների վերացումն ի նկատի ունենալով՝ կոտորելու են նաև հյուպատոսարանում, որտեղ նրանք կթաքնվեն։

Գիրս

АВПР, Политархив, д. 3484, л. 18.

187. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 1564 **11 հոկտեմբերի 1914 թ.**

Բայազետից փոխհյուպատոսը հեռագրում է. իշխանությունները շարունակում են զինել ավազակախմբերին։ Հայերը խուճապահար փախչում են Ռուսաստան՝ վախենալով կոտորածից, որին սպասում են օրեցօր։ Ակիմովիչ։

Գիրս

АВПР, Политархив, д. 3504, л. 9.

188. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-Ը՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ

Նամակից **Էջմիածին, 8 նոյեմբերի 1914 թ.**

Կովկասյան սահմանին պատերազմական գործողություններն սկսվելուց ի վեր, պատերազմ, որը հարուցվեց մեր սևծովյան առափնյայի վրա Թուրքական նավատորմի նենգ հարձակումով, Թուրքիայի հետ պատերազմի գլխավոր թատերաբեմը դարձել է Թուրքահայաստանը, և կասկած չկա, որ սկված սարսափելի

իրադարձությունները հետագա զարգացման ընթացքում իրենց հետևից անհաշիվ, անլուր աղետներ կբերեն բազմաչարչար հայ ժողովրդի համար։

Թուրքական իշխանությունների կողմից, զորքերի կողմից, մանավանդ անկանոն զորքերի, և մոլեռանդացված զանգվածների կողմից, սպասվում են հայերի գլխին գալիք այնպիսի աղետներ, որոնք դժվար թե կարողանա պատկերացնել մարդկային երևակայությունը...

Հայ ժողովրդի ուշադրությունն ու հոգսը այժմ կենտրոնացած է Թուրքահայերի ճակատագրի վրա։

Այն ամենը, ինչ ձեռնարկել էր կայսերական կառավարությունը եվրոպական տերությունների հետ համատեղ, սկսած վերջին ռուս-թուրքական պատերազմից, չի տվել դրական արդյունքներ Թուրքահայերի վիճակի բարելավման իմաստով...

Ներկայումս, երբ ողջ Ռուսաստանի և հաղթական ռուսական զորքի հետ հայերը պետք է ծայր աստիճանի լարեն իրենց ջանքերը ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում, ես այժմյան պատմական պահի հետ լիովին համապատասխան եմ գտնում թագավորի անունից Թուրքահայերին ուղղված կոչ հրապարակել, հայ ժողովրդին ներշնչել, որ այժմ հնչել է Թուրքիայի հայերի դրության հարցի վերջնական և անդառնալի որոշման ժամը և որ հայ ժողովրդին Թուրքահայաստանի վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի) և իր անբաժան մասի՝ Կիլիկիայի հետ, որպես մեկ օրգանական ամբողջության, սահմաններում մեծ Ռուսաստանից պետք է ինքնավարություն ընծայվի, որով լրումն կառնի Թուրքերի լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ազատագրման նրա պատմական առաքելությունը...

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 209, թ. 3—51։

189. ԲԱՇԿԱԼԵԻ ԿՈՏՈՐԱԾԸ 1914 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

Այս կոտորածը տեղի է ունեցել 1914 թ. դեկտեմբերի առաջին շաբաթում։ Ահմեդ բեյը՝ հարյուր վաթսուն ժանդարմների գլուխն անցած, և Շերեֆ բեյը՝ Շիկարի աշիրեթապետը, հարյուր հիսուն համիդիեների հետ ասպատակում են Բաշկալեն՝ ռուսների նահանջից հետո։

Նրանք թալանում են և այրում հայերի տները, սպանում տղամարդկանց, որոնց դիակներն ընկած են թողնում փողոցներում, իրենց հետ տանում են գեղեցիկ աղջիկներին և բախտի քմահաճույքին թողնում անհաց ու անօթևան կանանց ու երեխաներին։

Հարևան հայկական գյուղերն էլ նույն բախտին են արժանանում։

Պաղ, Արաք, Պիսս, Ալալիան, Ալոզ, Սորան, Ռասուլան և Ավագ գյուղերի հայերին բոլորին մեկտեղ հավաքում են, տանում հովիտը և բոլորին կոտորում։

Վերջին վիճակագրական տվյալների համաձայն, Բաշկալեում ու վերևում նշված գյուղերում հաշվվում էր հազար վեց հարյուր հայ (մի աննշան մասն էլ նեստորականներ էին)։

Barby Henry. Au pays de l'epouvante: L'Arménie marture. Préf. de M. Paul Deschanel. Paris, 1917.

140. ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԱԿԱՏԻ 1-ԻՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Դիլման, 24 փետրվարի 1915 թ.

Երեկ ժամը 2-ին մոտ ես ձիավորներով եկա Դիլման և իսկույն ևեթ սկսեցի հետաքննությունը։ Հարցափորձերից իմացա, որ սպանություններ են կատարվել Հարիվում, Խոսրովում և Մեհլեմում։ Անհապաղ շտապեցի այնտեղ, որտեղ գտա հարյուրավոր դիակներ։

Այս ամսվա 14-ի լույս 15-ի գիշերը սպանվել է ուղիղ 707 հոգի։

Մինչև այս ամսվա 14-ը հայերը համարյա անվնաս էին մնում՝ շնորհիվ տեղի պարսիկ բնակչության, իսկ նույն օրերին Թուրքական կառավարությունը մունետիկների միջոցով սպառնում էր պատժել այն պարսիկներին, ովքեր թաքցնում են քրիստոնյաներին՝ հայերին ու ասորիներին։ Դիլմանի պարսիկները նույնիսկ այդ սպառնալիքի տակ չկատարեցին Թուրքական կառավարության պահանջները, իսկ Թուրքական կառավարության գազազած ներկայացուցիչ կայմակամ Ռուստեմ բեգը հրամայեց քրդերին ու զինվորներին մտնել պարսիկների տները և դուրս

բերել քրիստոնյաներին ու սպանել քրիստոնյաներին թաքցնող պարսիկներին։ Այս հրամանն իսկույնևեթ կատարվել է, դուրս են հանել 7 հոգու։ Մնացած 700 հոգուն էլ նույն եղանակով բռնել ու տարել են Հաֆիվան ու Խոսրով, որտեղ թուրքերի 2-րդ շտաբն էր։ Այնտեղ շտաբի ներկայացուցիչների հրամանով նրանց մեռցրին այնպիսի տանջանքներով, որոնք նկարագրել հնարավոր չէ և որոնք անբացատրելի ու աններելի են քսաներորդ դարի համար։

Ես ինքս անձամբ իմ աչքով տեսել եմ հարյուրավոր խողխողված, փոսերը նետված դիակներ, որոնց հոտը վարակում էր այդ քաղաքների օդը, տեսել եմ գլխատված դիակներ, քարերի վրա կացիններով փրթված ձեռքեր, սրունքներ, կտրված մատներ, մաշկազերծ արված գանգեր, դիակներ՝ փլվածքների տակ, տասնյակ զոհվածներ՝ ցանկապատերի տակ, որոնց մեջ էր նաև Մեհլեմի քահանա տեր Վարդանը։

Սպանություններ են կատարվել մյուս հայկական գյուղերում ևս։

Կ. Մատիկյան

Հայաստանի ԿԿ արխիվ, ֆ. 47/2, թ. 2, գ. 2, էջ 1։

141. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Հեռագիր № 164 **15 մարտի 1915 թ.**

Հայերի վիճակը Թուրքիայում նշանակալիորեն վատացել է։ Բանակում ծառայող բոլոր հայերը զինաթափված են։ Զեյթունում, ուր զորաջոկատ է ուղարկված այնտեղ թաքնված դասալիքներին բռնելու համար, ընդհարումներ են տեղի ունեցել, որը հանգեցրել է ռազմական դատարանի հաստատմանը և բնակիչների հետ դաժան դատաստան տեսնելուն։ Դերտեղ ավանի ամբողջ արական բնակչությունը տեղահանված է։ Էրզրումի շրջակայքի 17 գյուղերից միայն երեքն են փրկվել։ Մնացածները թալանվել են և ոչնչացվել։ Երկրով մեկ հայերի ձերբակալություններ են կատարվում։ Հենց Կոստանդնուպոլսում բռնված են 14 հնչակյաններ, որոնք հանձնված են ռազմական դատարանին։ Հայոց պատրիարքարանը խիստ անհանգստացած է ստեղծված դրությունից և վախենում է կոտորածից։

Սերաֆիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 19.

142. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-Ը՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր **7 ապրիլի 1915 թ.**

Ըստ ստացված հեռագրական հաղորդագրության, որն հաստատված է նաև այլ աղբյուրներով, տեղի է ունենում անպաշտպան, զինաթափ արված հայերի կոտորած՝ Էրզրումում, Դերջանում, Զեյթունում ու շրջակայքում, արյունալի ընդհարումներ՝ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, կողոպուտներ՝ Ակնում, Կիլիկիայում, հայ ամբողջ ազգաբնակչության տնտեսության քայքայում։ Իմ հոտը խռովված է։ Թախանձագին խնդրում եմ Ձերդ բարձր գերազանցությանը չմերժել հետագա Ձեր մարդասիրական հովանավորությունն ու պաշտպանությունը իմ ժողովրդի նկատմամբ այս ճգնաժամային պահին, Ձեզնից կախված ամեն միջոց գործ դնել փրկելու համար անմեղորեն կոտորվող քրիստոնյաներին։ Սահմռկեցուցիչ լուրերից վշտաբեկ՝ միաժամանակ հեռագրով դիմում եմ չեզոք տերություններին՝ Միացյալ Նահանգների պրեզիդենտին և Իտալիայի թագավորին՝ կոտորվող խաղաղ բնակչության պաշտպանության խնդրանքով։ Ակնածանոք խնդրում եմ հնարավոր համարեք բարեհաճել հիշյալ պետություններում ձեր դեսպաններին հանձնարարել, որ հանուն քրիստոնեության ու մարդասիրության ազդեն վերջիններիս կառավարությունների վրա՝ Թուրքահայաստանում հայերի կոտորածներն ու վայրագությունները դադարեցնելու նպատակով։

Սայրագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս
ԳԵՎՈՐԳ V

АВПР, Политархив, д. 3508, л. 4.

143. Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

№ 191 հեռագրից **10 ապրիլի 1915 թ.**

Իշխանությունների շորթողականությունը ծայրահեղ չափերի է հասել։ Քրիստոնյա, մանավանդ հայ, բնակչությունը ենթարկվում է ամեն կարգի հալածանքների, հաճախ էլ՝ խոշտանգումների։ Զինվորական ծառայության կանչելու պատրվակով բանտարկում են անխտիր բոլոր տարիքի մարդկանց՝ բռնելով փողոցից, եկեղեցիներից, խանութներից, տրամվայներից և այլուր, ժամանակ չտալով, որ ո՛չ իրենց գործերը կարգավորեն, ո՛չ հարազատներին նախազգուշացնեն։

Հաճախացել են նաև մեր հպատակների անհիմն բանտարկությունները, որոնց հաճախ ոտքով արտաքսում են Փոքր Ասիա կամ ձերբակալում նետում են այստեղի բանտերը։

Շարադրված հանգամանքների կապակցությամբ դրությունն է՛լ ավելի տագնապալի է դառնում և բարելավում չի խոստանում, եթե միայն արտաքին հանգամանքները Դռանը չհամոզեն, որ իրեն անխուսափելի պատիժ է սպասվում։

Սերաֆիմով

АВПР, Политархив, д. 3804, л. 22.

144. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻՑ

Հեռագիր № 451 **10 ապրիլի 1915 թ.**

Դիադինից Հայոց ազգային բյուրոն այսօր ստացել է հետևյալ հեռագիրը. Առավոտյան Դիադին եկած 23 տղամարդիկ, որոնք փախել էին Արճեշից և Սոսոմոնից, պատմում են ոստիկանության ձեռքով այնտեղի հայերի գլխովին գնդակահարության ու կոտորածի մասին, որ կատարվում է թուրքական իշխանությունների կարգադրությամբ։ Թուրքերը նրանց տեղեկացրել են Վանում հայերի հետ մուսուլմանների ընդհարումների, հայերի կոտորածի մասին։ Անհրաժեշտ է ժամանակին հոգալ Վանի վիլայեթից սպասվելիք փախստական զանգվածներին բավարար օգնություն ցուցաբերելու մասին։

Ստոլիպին

АВПР, Политархив, д. 3504, л. 23.

145. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԸ՝ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐ ԻԶՎՈԼՍԿՈՒՆ ՈՒ ԲԵՆԿԵՆԴՈՐՖԻՆ

Հեռագիր № 1876 **12 ապրիլի 1915 թ.**

Վկայակոչում եմ իմ № 1818 հեռագիրը

Մինիստրությունում ստացվել են նոր տեղեկություններ Ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածի մասին։ Բարեհաճեք առաջարկել ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ և Անգլիայի (Ֆրանսիայի) հետ համատեղ դիմում հրապարակել՝ ուղղված Բ. Դռանը, որի մեջ անձնական պատասխանատվությունը հայերի կոտորածի համար դրվի Թուրքիայի մինիստրների խորհրդի բոլոր անդամների, ինչպես և՝ այդ իրադարձությունների հետ առնչվող բոլոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձանց վրա։

Դիմումի մեջ կարելի է հիշեցնել այն ճնշամիջոցները, որոնք ընդունված են Եվրոպայի կողմից 1860 թվին՝ Սիրիայում տեղի ունեցած կոտորածից հետո։ Ֆրանսիական (անգլիական) կառավարության համաձայնության դեպքում բարեհաճեք պայմանավորվել դիմումի տեքստի կապակցությամբ, որը ցանկալի կլիներ որքան հնարավոր է շուտ հրապարակել երեք երկրներում էլ՝ միևնույն օրը[25]։

Սազոնով

АВПР, Политархив, д. 3493.

146. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻՑ

№ 490 հեռագրից **28 ապրիլի 1915 թ.**

Բելեզովսկին հեռագրում է Խատիսովին. Ադրբեջանական շտաբն են բերվել երեք հայեր, որոնց ուղարկել է Արամը Վանից, տեղեկացնելու, որ նոր տոմարով ապրիլի 15-ից բոլոր հայերը

փակված են քաղաքի հայկական թաղում։ Ջևդեթ փաշան ոչնչացնում է քաղաքը, արձակված է 1700 արկ։ Շրջակայքի մոտ 100 հայկական գյուղեր կոտորված են, կանանց տարել են լեռները... Շրջափակված հայերի ուժերն սպառվում են։

Ստոլիցա

АВПР, Политархив, д. 3505, л. 2.

147. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԻՑ

Հեռագիր № 518 **29 ապրիլի 1915 թ.**

Հայերը նամակ են ստացել Վանից, կարված բանբերի հագուստի աստառի մեջ, հետևյալ բովանդակությամբ. Գավառում սպանվել են մոտ 6 հազար հոգի։ Վանն ու Շատախը համառորեն դիմադրում են, արկերը քիչ են վնասում Վան քաղաքին։ Լարում ենք մեր վերջին ուժերը։ Ամեն օր սպասում ենք ռուսական օգնությանը։ Աղերսում ենք շտապել։ Հետո ուշ կլինի։ Նամակը գրված է ապրիլի 15-ին։

Ստոլիցա

АВПР, Политархив, д. 3505, л. 4.

148. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԼՈՆԴՈՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

1 մայիսի 1915 թ.

Նասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել Թուրքերի գերակշիռ ուժերի դեմ։

Սազոնով

ՀԽՍՀ ՊԱ, Բաղվածքների ֆ., գ. 45, էջ 5։

149. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-Ը՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Քաղվածք № 884 նամակից **Էջմիածին, 14 մայիսի 1915 թ.**

Վերջին հավաստի տեղեկությունները ցույց են տալիս, որ Թուրքահայաստանի իմ հոտը փորձության սարսափելի օրեր է ապրում։ Հայերի համար ամեն մի սուրբ բան՝ կրոն, սրբություններ և ընտանեկան պատիվ, վրդովեցուցիչ կերպով պղծվում են Թուրքերի, ասկյարների և քրդերի կողմից, և նրանց ողջ ունեցվածքը հրի ու սրի ճարակ է դարձվում։ Թուրքական ժանդարմները Վանի վիլայեթում զորակոչի անվան տակ կամ էլ իբրև թե հասարակական աշխատանքների համար հավաքում են հայ տղամարդկանց և հայրենի տեղերից հեռու տանելով՝ զանգվածաբար գնդակահարում, իսկ կանանց և երեխաներին՝ առևանգում...

Ամբողջ վերոշարադրյալը ինձ դրդել է դիմելու Ձերդ բարձր գերազանցությանը, չեզոք պետությունների և մեր դաշնակիցների աջակցությանը։

Գործի հաջողության և Թուրքական կառավարության կողմից կազմակերպված գազանությունների դեմ բողոքելու համար իմ ներկայացուցիչն եմ նշանակել Ձեզ արդեն հայտնի Պողոս Նուբար փաշային և ուղարկել Փարիզ ու Լոնդոն։

Խորին մեծարանքով խնդրում եմ Ձերդ բարձր գերազանցությանը բարեհաճել հանձնարարելու Լոնդոնի ու Փարիզի Ձեր դեսպաններին, որ իրենց իմաստուն խորհուրդներով աջակցեն Պողոս Նուբար փաշային...

АВПР, Политархив, д. 3508, л. 16.

150. ՆԱՄԱԿ՝ ՀՂՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԵՆՅԱՆԻՆ

Մանազկերտ, 28 մայիսի 1915 թ.

Խնուսի, Ներքին Բուլանըխի, Արծկեի, Ականցի, Բաղնոցի ու Այնթապի աղետների մասին առաջին թղթակցությամբս արդեն գրած էի Ձերդ վեհափառության, այս անգամ կուզեի լիակատար

տեղեկագիր մը ղրկել, բայց ցավոք սրտի պետք է ըսել, որ հիշյալ գավառակներեն ողջմամբ ոչ ոք կրցավ անցնել մեր կողմերը, որպեսզի որակով ու քանակով կատարյալ տեղեկագիր մը կազմեինք հասցնեինք Ձեր վեհափառության։ Շատ որոշ է, որ այդ կողմերը հայ բնավ չեն թողուցեր, առանց խնայելու և կարեկցելու սուրե անցուցեր են, եթե ազատվողներ ըլլային, իրենց մյուս գավառակիցներու հետ հիմա շատունց զիրենց ձգեր էին այս կողմերը՝ բերելով իրենց սիրելի ու սիրականներու սրախողխող պատմությունները։ Մինչև հիմա Խնուսի 27 հայ գյուղերու 3322 տուն հայերեն ազատվեր են 128 մարդ. 50 մարդ՝ Գոպալեն, 18՝ Կովանտուկեն, 50՝ Գարաշոպանեն և 10 հոգի ալ Գրմխայայեն։ Ներքին Բուլանըխի 11 հայ գյուղերու 1000 տուներեն ընդամենը ազատվեր են 21 անձ. 10 անձ՝ Գատկոնեն, 1՝ Ապրիեն, 2՝ Կյապոլանեն, 8 հոգին ալ՝ Խոշկելտիեն, իսկ Վերի Բուլանըխի 15 հայ գյուղերու 2225 տուն հայերեն ազատվեցին. 40 հոգի՝ Կոփեն, 1՝ Խարապաշեհրեն, 2՝ Եռնճալուեն, 55 անձ՝ Գարաղըլեն, 325 անձ ալ՝ Շերվանշեխեն. ընդամենը 423 հոգի։ Մանազկերտի 27 հայ գյուղերու՝ ոմանք քրդախառն, 1089 տուներեն ազատվեր են. 15 անձ՝ Տյուկնուկեն, 5՝ Նորատինեն, 12՝ Ռստամգետուկեն և 2՝ Հսեից, գումար՝ 34 անձ։ Խլաթա 24 հայ գյուղերու 2150 ընտանիքներեն ազատված են միայն 20 մարդ Շամիրամեն, 2 մարդ Թեղուտեն, 10՝ Տափավանքեն, 10՝ Մեծքեն, 5՝ Ճեզիրից, 15՝ Սպռաձորեն, 7՝ Ծաղկեից, 1՝ Մատնավանքից, 2՝ Երսոնքից, 10՝ Խուլկա, 6՝ Խարտանկից, 160 հոգի ալ՝ Փրրխուսեն, ընդամենը՝ 248 անձ։

Փրխուսեն ազատվածները երեկվա գաղթականներով 160 հոգիի կհասնեն. 130 հոգի կին ու երեխա երեկ եկան։ Աստվա՜ծ իմ, ի՜նչ տխուր տեսարան կներկայացուցնեին. ամենքն ալ մերկ ու բոբիկ, քուրջեր ու մազե խարարներ ըրած էին իրենց ծածկույթ։ Երեսուն օրե հետե հաց բնավ չէին կերած, սնած էին բանջարներով ու բույսերով, կատարելապես մեռելի դեմք ունեին, բոլորն էլ՝ հիվանդ...

Նույն պատկերը գրեթե կներկայացնեն Արծկեի, Ականցի, Բաղնոցի ու Այնթապի արկածյալները, հատկապես մարդ ղրկված ու ստուգված է, որ հիշյալ գավառներու մեջ ալ էրիկ մարդ չեն թողուցեր, ամենքն ալ սուրե անցուցեր են։ Գեղանիներն գերի տարեր են հետերնին, իսկ անպետները փախած Բաղնոցի կողմերը կթափառին։ Բաղնոցի մոտիկ Արծկեի ու Ականցի մի քանի

գյուղերու վիճակագրությունն ալ կազմված է, Բաղնոցի ու Այնթապի տեղեկագիրներու հետ ահավասիկ կներկայացնեմ Ձերդ վեհափառության։

Արծկեի վիճակը

— Նորշընճղ ունի 45 տուն հայ բնակիչ. սպանված է 193 մարդ։

— Գզլյուսուֆ 5 տուն հ. բնակիչ ունի. զոհերի թիվն է 5։ Իսկ բուն Արծկե քաղաքեն այժմ 5 հոգի միայն ազատվեր են։

— Սքանչելագործի վանքի զոհերու թիվն է 26։ Սպանված է նաև վանքի վանահայրը՝ Եղիշե վրդ. և վանքի բոլոր սրբություններն ալ կողոպտեր են։ Արծկեի մյուս գյուղերը ամայի ըլլալու համար մինչև հիմա մարդ չկրցի ղրկել, հետո մյուս գյուղերու վնասները կգրեմ, երբ ստուգելու ըլլամ։

Արտիշու (Ականց) վիճակը

— Գրակոմ ունի 33 տուն հայ բնակիչ, զոհերու թիվն է 61, գերիներու թիվը՝ 13։

— Ջիրաքլու 25 տուն հայ բնակիչ ունի, սպանված են 50 մարդ, գերի տարված 15 կին ու աղջիկ։

— Քոչեր 50 տուն բնակիչ ունի, զոհ տվեր են 107 անձ, գերի տարված 22 հոգի։

— Նորշեն բնակիչ 24 տուն հայ, սպանված 62 հոգի, գերի՝ 5 հոգի, Ականց գյուղաքաղաքի զոհերու թիվը, ռուսներու պաշտոնյաներու տեղեկություններուն նայելու ըլլանք, 2300 անձի կհասնի եղեր։

Բաղնոցի հովիտ

— Բաղնոց 150 տուն հայ բնակիչ ունի, զոհերու թիվն է 104, գերիներուն՝ 17։

— Խարապակորը 6 տ. բնակիչ ունի։ Սպանված է 11 անձ, գերի տարված՝ 4։

— Ավթնա 12 տուն բնակիչ ունի, զոհ տված է 9 անձ, գերի տարված՝ 5։

— Պանզտե 35 տուն բն. ունի։ Սպանված է 12 անձ։

— Մարմուս՝ տուն 20, սպանված՝ 3 հոգի։

— Ջիարեթ՝ տուն 2, սպանված՝ 2։

Այնթապ

— Խարղալրդ՝ տուն 4, զոհ՝ 3 անձ։
— Պոտո ունի 10 տուն բն., սպանված՝ 13 անձ, գերի՝ 5։
— Քյոշկ՝ 2 տուն հայ կար, 7 անձ սպանվեր է հոս։
— Մլան՝ 2 տուն բնակիչ, սպանված 2 անձ։
— Շամե՝ տուն 2, սպանված՝ 7 անձ։
— Տերիկ՝ տուն 7, սպանված՝ 17 անձ։
— Խարախու՝ 4 տուն, զոհ տվեր են 14 անձ, իսկ գերի՝ 1։

...Կոտորածներու գլուխը կանգնած էր ինք՝ կառավարությունը. եթե քյուրտ մը իր դրացի հայ պաշտպանելու ըլլար, կառավարությունն ինք կղրկեր սպանել կուտար ժանտարմաներու ձեռամբ. Խուլիկի, Շերվանշեխի ու Համզաշեխի հայերը, որ կպաշտպանվեին Խուլիկ և Սիմոն անուն գյուղերու շերքեզներու կողմանե, կառավարությունը ինք զրկեր է ժանտարմաներ ու սպաննել տվեր է։ Նույնպես Խնուսի Գարաշոպան, Կովանդուկ, Գոբալան են գյուղերու ընտանիքները, որ փախած ու ապավինած էին Հասանանցի պապա անուն Թոսբնի գյուղը, նորեն Խնուսի կառավարության կողմանե գայմագամ ինք անձամբ եկեր տարեր էր իր շահատակությունները ի գործ դրեր է...

Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա
Տեր-Ավետիսյան

ՀԵՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 692, էջ 17—20։

151. ՎԱՆԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԸ՝ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Վան, 31 մայիսի 1915 թ.

Պատիվ ունեմ Ձեզ ի գիտություն հայտնել այն իրադարձությունների մասին, որոնք երկու ամսվա ընթացքում տեղի են ունեցել Վանում և վիլայեթում...

Վանի ու վիլայեթի վիճակը մինչև պաշարումը։ Այն ժամանակ, երբ Ջևդեթ բեյը՝ Վանի վալին, որը նաև Թուրք-պարսկական սահմանի պաշտպանի պարտականությունն է կատարում, ամայացնում էր Սալմաստ, Խոզրավու և Բաշկալե քաղաքները և կոտորում այնտեղի քրիստոնյաներին, Վանի ժամանակավոր

վալին պահանջում էր, որ բանակ վերադառնային հայ զինվորները, որոնք ծառայությունը լքել էին, քանի որ իրենց զինաթափել էին և հեռացրել։ Վալին պահանջում էր նրանց վերադարձը՝ նրանցից հողափոր բանվորների խմբեր կազմավորելու պատրվակով, բայց իրականում նպատակն այն էր, որ կոտորեր նրանց, ինչպես մի անգամ Ջևդեթ բեյն արդեն արել էր՝ հրամայելով դավաճանաբար գնդակահարել բազմաթիվ զինվոր հայերի, որոնք նրա հրամանատարության տակ էին գտնվում...

Երեք կարևոր իրադարձություն անհրաժեշտ է նշել։ Ամենից առաջ՝ գյուղերի կոտորածները, որոնք Վանի իրադարձություններից շատ ավելի առաջ էին սկսվել։ Այս կոտորածներում զոհերի թիվը հաշվվում է մոտ 16 000։

Հայ գյուղացիները, թեև զինված են եղել, բայց, փոխանակ իրենց զենքով պաշտպանվելու, դա հանձնել են իշխանություններին, թույլ տալով, որ խեղդեն իրենց։ Բոլոր այդ կոտորածները կատարվել են արտասովոր անողորմությամբ։ Պատռել են փոքր տղաների փորերը, կանանց ու աղջիկներին մերկացրել են և այդպես մերկ քշել լեռները, ինչպես վայրի գազանների։

Վանում ապաստանած գյուղացիների՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների թիվը, նրանց, ում պետք էր կերակրել, թեկուզև սովի սպառնալիքի տակ, քաղաքում հասնում էր տասնըհինգ հազարի։

Երկրորդ իրադարձությունը։ Հայերի հետ ազատորեն դատաստան տեսնելու համար Ջևդեթ բեյը անհրաժեշտ էր համարում նախ և առաջ վերջ տալ նրանց երեք գլխավոր առաջնորդներին՝ Վռամյանին, Արամին և Իշխանին, օժտված և իրենց հարազատ գործին նվիրված այդ մարդկանց։ Նա սկսեց Իշխանից։ Դա կառավարության հետ իմ և հայկական կոմիտեների բանակցությունների ժամանակ էր։

Այն ժամանակ դեռ հույս ունեինք համաձայնության գալ։ Մինչդեռ Շատախում մեծ անկարգություններ էին տեղի ունենում։ Վալին կարգը վերականգնելու պատրվակով այնտեղ հանձնաժողով ուղարկեց, որպեսզի հայկական կոմիտեի համար հաճելի բան արած լիներ, ինչպես և՝ պատիվ աներ Իշխանին զործի նկատմամբ նրա նվիրվածության և ազդեցիկության համար։ Նա վերջինիս խնդրում էր մասնակցություն ունենալ նշանակված հանձնաժողովին։ Իշխանը իր երեք ընկերների ուղեկցությամբ ճանապարհ էր ընկել և շուտով նրանց վրա էր հասել վա-

լի ուղարկած չերքեզների ջոկատը։ Երեկոյան, երբ ճամփորդները ընթրելիս են եղել, այդ չերքեզները համարյա դիմահար գնդակահարել են նրանց։

Հենց նույն օրը Վռամյանն ու Արամը հրավիրվել էին վալու մոտ, որն ուզում էր խորհրդակցել նրանց հետ։

Վռամյանը շափից ավելի հույս դնելով երեսփոխանի իր կոչման վրա՝ գնաց նահանգապետի մոտ և տեղնուտեղը ձերբակալվեց։ Ի բարեբախտություն Վանի՝ Արամը ժամանակին նախազգուշացվեց, թե ինչ է տեղի ունենում, և վերադարձավ տուն։ Իսկ ինչ վերաբերում է Վռամյանին, ապա նրան նստեցրել են ծով դուրս եկող առագաստանավ, և նրա հետագա ճակատագիրն անհայտ է։

Երրորդ իրադարձությունը։ Վանի՝ կառավարական զորքերի կողմից ռմբակոծվելու նախօրյակին բոլոր հայ աստիճանավորներին և հայ մեծամեծերին բոլոր «կազա»-գավառներում գնդակահարել են կամ խեղդել, ընդ որում նախքան գնդակահարելը նրանց մի ամբողջ ժամ քշել են հետ ու առաջ նրանց վրա ուղղված հրացանների փողերի տակ։

Վանի պաշարումը։ Շաբաթ օրը՝ ապրիլի 1-ին, հայկական թաղամասերը հանկարծակի պաշարվեցին հրետանիով զինված զորքերի կողմից։ Կիրակին ու երկուշաբթին անցնում են վալիի հետ իմ ապարդյուն բանակցություններով։ Երկուշաբթի օրը, մի քանի հայերի սպանության հետևանքով, որոնք պաշտպանում էին թուրք զինվորների ձեռքն ընկած հայ գեղջկուհիների, հուզումն ընդհանուր է դառնում։ Բոլոր զորանոցներից դուրս են գալիս զինվորները, որոնք կրակ են բացում բնակչության վրա։ Ռմբակոծությունը սկսվում է։

Որպեսզի ավելի պարզ դառնան հետագա եղելությունները, ես պետք է ասեմ, որ Վանը բաժանվում է երկու մասի, որոնցից մեկն անվանվում է «քաղաք», իսկ մյուսը՝ «այգեստան»։

«Քաղաքը» տեղավորված է լճի մոտ և այնտեղ են գտնվում կառավարական հիմնարկությունները՝ դատարանը, զորանոցները, քաղաքացիական գերատեսչության շատ վարչություններ, ինչպիսիք են՝ բանկը, ակցիզային վարչությունը, փոստը, հեռագրատունը և շուկաները։ «Քաղաքում» են նաև հայկական տներից մի քանիսը։

«Այգեստանը» բաղկացած է հայկական թաղամասից և մի քանի թուրքականներից։ Մուսուլմանական բնակչության կորիզը բնակվում է հրապարակի վրա, որը «քաղաքը» բաժանում է «այգեստանից»։ Երբ ռմբակոծումն սկսվեց, կառավարության տրամադրության տակ կային տասներկու հրանոթ ու վիթխարի քանակությամբ զինամթերք, վեց հազար զինվոր (թուրքեր, քրդեր, չերքեզներ), հինգ զորանոց, նավահանգիստ՝ լճափին, ոչ մեծ մի շոգենավ ու բոլոր առագաստանավերը։

Իսկելե-Քյոյ գյուղի բնակիչները, սպառնալիքներից վախեցած, դավաճանեցին հայոց գործին...

Հայերը հրանոթ չունեին, իսկ մարտիկներ «քաղաքում» ունեին հարյուրից հարյուր քսան հոգի և հազար հինգ հարյուր հոգի՝ «այգեստանում»։

Նրանք կազմակերպվեցին հիանալի արագությամբ ու խորաթափանցությամբ, հիմնեցին գլխավոր շտաբ, կազմակերպեցին ինժեներական ջոկատ, հրաձիգների գոմարտակ, «կարմիր խաչ», վիրակապական կետեր, ոստիկանություն։ Խրամատներ փորեցին, բարիկադներ կանգնեցրին և այնքան խելամիտ եղան, որ ընդունեցին գործողությունների պաշտպանական եղանակ, որպեսզի խուսափեին անօգուտ կորուստներից, ինչպես և արգելեցին աննպատակ հրաձգությունները։

Թուրքերի համար բոլոր պաշարողական գործողությունները կայանում էին «քաղաքի» և «այգեստանի» օր ու գիշեր ռմբակոծման, մեկ էլ նրա մեջ, որ հրկիզեին հայերի տները, ձրգտելով, բայց ապարդյուն, գրավել հայկական դիրքերը և հայերին ահաբեկել անլուսելի հրաձգությամբ։ Հրանոթները համեմատաբար քիչ վնաս հասցրին (մոտ 10 հազար արկ է նետվել «քաղաքի» վրա և 6 հազար էլ՝ «այգեստանի»), սպանելով մոտ հարյուր կին ու երեխա և մի քանի տղամարդու, որոնք անցնելիս են եղել այգիների միջով։ Իսկ ինչ վերաբերում է հայկական դիրքերին պատճառված վնասներին, ապա ամեն մի ավերածություն իսկույն վերականգնվում էր։ Հայերը թուրքերից ավելի բախտավոր դուրս եկան. նրանց ոչ միայն հաջողվեց հետ մղել գրոհները, այլև իրենք գրավեցին թուրքական դիրքերը՝ հրի ճարակ դարձնելով դրանք։

Անգլիական հյուպատոսարանը, որտեղ վալին, չնայած իմ բողոքներին, շենքը պահպանելու պատրվակով տեղավորել էր երեսուն ժանդարմների, որոնք անդադրում կրակում էին բնակչության վրա, գրոհի ենթարկվեց հայերի կողմից և մի քանի ժամվա պաշարումից հետո հրկիզվեց։ Քաղաքում նրանց կողմից հրը-

կիզվել են Օտտոմանյան բանկը, ակցիզային վարչությունը, փոստը, հեռագրատունը և Dette Publique գրասենյակը, որոնք Թուրքերի կողմից ուժեղ դիրքերի էին վերածվել։ Թուրքերի գիշերային գրոհը, Էրզրումից եկած գերմանացի սպայի ղեկավարությամբ, այնպես հաղթականորեն հետ մղվեց, որ սպան պարտության հաջորդ օրն իսկ մեկնեց Վանից։ Միայն այս գրոհի ժամանակ Թուրքերը կորցրին 60—70 հոգի։ Պաշարումը շարունակվեց 27 օր։

Չնայած ամենօրյա հաջողություններին, հայերն, այնուամենայնիվ, գիտակցում էին, որ հետագա դիմադրության համար դրսից իրենց օգնություն է պետք։ Ռուսներին սպասում էին անհամբերությամբ։ Եվ վերջապես, նրանք եկան։ Հենց որ նրանք մոտեցան, մուսուլմանները մեկ մարդու պես փախուստի դիմեցին։ Այդ փախուստն այնքան հապշտապ էր, որ իրենց հետ ոչ մի իր չվերցրին։ Ջևդեթ բեյը Վանից դուրս եկավ նախօրյակին։ Մուսուլմանները դեռ չէին հասցրել թողնել քաղաքը, երբ սկսվեցին նրանց տների հրկիզումները։

Ռուսների օկուպացիան։ Հայ կամավորները առաջինը մտան քաղաք։ Նրանց համար հաղթահանդեսային դիմավորում կազմակերպեցին։ Նրանց հետևից, մեկը մյուսին փոխարինելով, անընդհատ գնում էին ռուսական կանոնավոր զորամասերը։ Հիմնադրվեց քաղաքացիական վարչություն, որը ռուսները հանձնեցին հայերի ձեռքը։ Գեներալ-նահանգապետ նշանակվեց Արամը։ Նա ինքն էր եղել, պետք է ասել, դիմադրության ոգին։

Գ. Սբորդոն

Barby Henry. Au pays de l'epouvante: L'Arménie martyre. Préf. de M. Paul Deschanel. Paris, 1917.

152. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՇՈՖԵՐՆԵՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ Կ. ՊՈԼՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Էրզրում, 2 հունիսի 1915 թ.

Գլխավոր հրամանատարի [բանակի] հետ հայերի արտաքսման վերաբերյալ իմ բանակցությունները չհանգեցրին գրական արդյունքների։ Հայ բնակչությունը բոլոր հովիտներից, քստ երևույթին, նաև Էրզրումից, պետք է աքսորվի Դեր-էլ-Զորի

կողմը։ Մեծ մասշտաբի այս տեղահանությունը հավասարազոր է զանգվածային ոչնչացման, քանի որ որևէ փոխադրամիջոցի բացակայության պատճառով տեղահանվածների նույնիսկ կեսը հաղիվ թե կենդանի հասնի նշանակված տեղը և, երևի, այս տեղահանությունը իր հետևից բերի ոչ միայն հայերի, այլև՝ ամբողջ երկրի քայքայում։ Ռազմական բնույթի հիմնավորումները չեն կարող պատճառաբանում լինել այս գործողությունների համար, որովհետև տեղացի հայերի ապստամբության հնարավորությունը բացառված է, քանզի տեղահանվողները ծերեր են, կանայք ու երեխաներ։ Այն հայերը, որոնք իսլամ են ընդունում, չեն աքսորվում։ Իմ կողմից զննված հայկական լքված գյուղերը կողոպտված են։ Կողոպտված է նաև Կիզիլվանք մենաստանը, որի եկեղեցին ավերված է։

Շոյբներ

Deutschland und Armenien. 1914—1918. Sammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Engeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 80.

153. Կ. ՊՈԼՍՈՒՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱՋՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 848 (Բուխարեստի վրայով) 4 հունիսի 1915 թ.

Հունիսի 2-ին Սերասկերության դիմաց մահապատժի են ենթարկվել 22 հայեր, որոնց թվում և՝ ռուսահպատակ, կովկասցի Մատթեոս Սարգսյանը։ Վերջինիս առթիվ իտալական դեսպանությունը այսօր Դոանը բանավոր նոտա է հղում։ Սպասվում են նոր մահապատիժներ։

Սերաֆիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 31.

154. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՋԵԿՈՒՅՑԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

Պերա, 17 հունիսի 1915 թ.

Միանգամայն ակնհայտ է, որ հայերի արտաքսումը միայն ռազմական միջոցառումների հետևանք չէ։ Ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը վերջերս բացեիբաց հայտարարեց ներ-

կայումս կայսերական դեսպանությանն առընթեր հավատարմագրված դոկտոր Մորդտմանին, որ «Բ. Գուն ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնականապես հաշիվ մաքրի ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հետ, ընդ որում զերծ մնալով արտասահմանի դիվանագիտական միջամտությունից»։

Մի քանի օր անց, հայոց պատրիարքը դեսպանության վերոհիշյալ աշխատակցին հայտնեց, որ Դռան գործողությունները ավելի շուտ նպատակ են ունեցել հայ բնակչության արտաքսումը Թուրքիայից և, դեռ ավելին, նրա ոչնչացումը, քան թե ժամանակավոր վնասազերծումը։ Արտաքսումը նույնքան ծանր է, որքան որ զանգվածային ոչնչացումը, և զարմանալի չի լինի, եթե հայերը վերջիվերջո սկսեն դիմադրել՝ նույնիսկ առանց հաջողության հույսի, «տանջահար կենդանու նման, որը նետվում է իրեն տանջողի վրա»։ Նա (պատրիարքը), ըստ երևույթին, կորցրել է հույսը, թե թուրքական կառավարության մոտ ի ձեռնարկած քայլերը կշրջեն իրադարձությունների ընթացքը դեպի լավը։ Այս բոլոր ժամանակաընթացքում նա, ինչպես և, ըստ երևույթին, բոլոր հայերը, որոնք իրազեկ են այս իրադարձություններին, հաստատ համոզված է, որ կառավարության կողմից հայերին վերագրվող ելույթները հրահրված են իշխանության մարմինների կողմից։

Վանգենհայմ

Deutschland und Armenien... S. 83—84.

155. ԿԱՀԻՐԵԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Ճեպագիր № 58 — Կահիրե, 25 հուլիսի 1915 թ.

Սիրիայի և հարևան գավառների հայերի նկատմամբ կատարված դաժանությունները անասելի չափերի են հասնում։ Կողոպուտները, բռնությունները, կոտորածը և հաճախ ամբողջ հայկական գյուղերի բնակչության գլխովին ոչնչացումը կրկնվում են մշտապես։ Ընտանիքները բաժանվում են անգթորեն. կանանց բաժանում են ամուսիններից, երեխաներին՝ ծնողներից, և բոլորին աքսոր են ուղարկում տարբեր կողմեր։ Առանձնապես դաժանորեն է հալածվում հայ հոգևորականությունը. քահանաներին տանջում են, կտտանքի ենթարկում, պոկում են նրանց եղունգները։

Վերջերս թուրքական 12-հազարանոց զորքը գրավեց Զեյթունը, որը հայության համար որպես հենարան էր ծառայում և թույլ չէր տալիս, որ թուրքական ուժերը մուտք գործեին այնտեղ։ Սպառնալիքներով, խաբեություններով և խոստումներով թուրքերը հայերին դրդեցին հանձնվել և, գրավելով քաղաքը, ամենադաժան կերպով հաշվեհարդար տեսան նրա բնակիչների ու պաշտպանների հետ։ Հազարավոր մարդիկ մորթոտվեցին ու կոտորվեցին, չնայած լիակատար անպատժելիության մասին տրված մեծամեծ խոստումներին։

Ասում են, հայերի դաժան կոտորածներ են տեղի ունեցել նաև Ալեքսանդրիայում (Մարաշի օկրուգ)։

Գերմանական ազդեցությունը, ըստ երևույթին, ուղղված է այն բանին, որպեսզի թուրքերին գրգռեն հայերի դեմ։ Հալեպի գերմանացի մի հարուստ վաճառականի կին՝ տիկին Կոխը, որն արդեն երկար տարիներ զբաղվում է քաղաքականությամբ և դա քողարկում է հնագիտության նկատմամբ իր հետաքրքրությամբ, վերջերս մեկնել է Ուրֆա և Դիարբեքիր, որտեղ նա կապեր ուներ քրդական ցեղերի հետ։ Նրա ուղևորության նպատակն է քրդերին գրգռել Ռուսաստանի դեմ և հայերի դեմ։ Տիկին Կոխը, իհարկե, միակը չէ այդ ասպարեզում։ Գերմանական բազմաթիվ ագիտատորներ Սիրիայում և Հայաստանում եռանդագին աշխատում են ընդդեմ դաշնակիցների։

Սմիռնով

АВПР, Политархив, д. 3804, л. 34.

156. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-Ը՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագրից — Էջմիածին, 5 հուլիսի 1915 թ.

Կոստանդնուպոլսից և Կիլիկիայից իմ ստացած հավաստի տեղեկությունները հաստատում են, որ թուրքական կառավարության հրամանով Թուրքիայում կատարվում են հայերի զանգվածային կոտորածներ, անլուր գազանություններ, հայերը բրո-

նագաղթեցվում են Իկոնիա և Միջագետք, որտեղ անբարենպաստ պայմաններից ու կլիմայից վերջնականապես կործանվում են, ի՛նչը և Թուրքական կառավարության նպատակն է...

АВПР, Политархив, д. 3504, л. 38.

157. ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԸ՝ ԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

Պերա, 7 հուլիսի 1915 թ.

Դեռևս 14 օր սրանից առաջ հայ բնակչության արտաքսումը սահմանափակվում էր մոտավորապես այն գավառներով, որոնք գտնվում են պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմի մոտ, ինչպես և՝ Ադանայի գավառի որոշ շրջաններով։ Դրանից հետո Դուռը որոշում է ընդունել այդ գործողությունները տարածել Տրապիզոնի, Մամուրեթ ուլ-Ազիզի և Սեբաստիայի գավառների վրա և արդեն ձեռնամուխ է եղել վերևը ասվածի իրագործմանը, թեև երկրի այդ մասերը դեռ չեն գրտնվում որևէ թշնամական ներխուժման սպառնալիքի տակ։

Այս գործողությունները և եղանակները, որոնցով կատարվում է արտաքսումը, վկայում են, որ կառավարությունը իսկապես նպատակ ունի ոչնչացնել հայ ազգին Թուրքական պետության մեջ։

Վանգենհայմ

Deutschland und Armenien... S. 94.

158. ԷՐԶՐՈՒՄՅԻ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Ծտաբերկրացի ականատեսի հաշվետվությունից։ 11 հուլիսի 1915 թ.)

Այնքան էլ սարսափելի չէր լինի, եթե դա [տեղահանումը] լիներ պարզապես հարկադրական գաղթ մի վայրից մյուսը, բայց ամեն ոք գիտե, որ այս դեպքում ուղարկվում էին միայն դեպի մահ։ Եթե այս առումով որևէ կասկած էլ կար, ապա դա փարատվեց պահակախմբերի ուղեկցությամբ Էրզրումից Երզնկա հասած մեծ թվով աքսորյալների խմբերի ժամանումից հետո։

Ես շատ անգամ եմ գնացել նրանց կայանատեղը և զրուցել այդ մարդկանցից մի քանիսի հետ։ Անհնար է պատկերացնել առավել խղճալի մի տեսարան։ Նրանք բոլորը, առանց բացառության, ցնցոտիների մեջ էին, կեղտոտ, սոված ու հիվանդ։ Դա զարմանալի չէ, եթե ի նկատի ունենանք, որ նրանք համարյա երկու ամիս ճանապարհին էին՝ շոր չփոխելով, հնարավորություն չունենալով լվացվելու, զրկված լինելով ապաստանից և գոնե մի փոքր ուտելիքից։ Այդ կայանատեղում նրանց կառավարական խղճուկ կերակրաբաժին էին տալիս։ Ես մի անգամ դիտում էի, երբ նրանց համար կերակուր բերեցին։ Վայրի գազաններն էլ նրանցից ավելի լավ կլինեին։ Նրանք նետվեցին այն պահնորդների վրա, որոնք նրանց համար ուտելիք էին բերում, և պահնորդները նրանց հետ էին քշում մտրակներով, երբեմն այնպիսի հարվածներ հասցնելով, որոնք բավական կլինեին, որպեսզի սպանեին մարդուն։ Դիտելով այդ տեսարանը՝ դժվար էր հավատալ, թե այդ մարդիկ մարդկային էակներ են։

Երբ որևէ մեկն անցնում էր ճամբարի միջով, մայրերը իրենց երեխաներին մեկնում էին նրան, աղերսելով, որ նա վերցնի տանի իր հետ։ Եվ, իրոք, Թուրքերն իրենց համար ընտրում էին այդ երեխաներից և աղջիկներից ոմանց, որպեսզի ստրուկներ դարձնեին և կամ էլ ավելի վատ նպատակների համար։ Նրանք իրենց հետ նույնիսկ բժիշկներ էին բերում, որպեսզի զննեին առավել հարմար աղջիկներին և այդպիսով լավագույն ընտրություն ապահովեին։

Նրանց մեջ տղամարդիկ շատ քիչ կային, քանի որ մեծ մասն սպանվել էր ճանապարհին։ Նրանք բոլորը պատմում էին միևնույն պատմությունը, թե՝ իրենց վրա հարձակվել են ճանապարհին և... կողոպտել։ Նրանցից շատերը այդպիսի հարձակման էին ենթարկվել մի քանի անգամ, և նրանցից ահագին թվով մարդիկ, մանավանդ տղամարդիկ, կոտորվել էին։ Սպանում էին կանանց ու երեխաներին նույնպես։ Բնական է, որ շատերը ճանապարհին մեռել էին հիվանդություններից ու հյուծումից, և ամեն օր, քանի դեռ մեզ մոտ էին, նրանց վրա նույնպես սավառնում էր մահը։ Տարբեր քարավաններ էին ժամանում, և մեկ կամ երկու օրվա դադարից հետո, նրանց շտապեցնում էին, որ շարունակեին ճանապարհը, որոշակի չասելով, թե ուր էին գնալու։ Սակայն նրանք, ովքեր գալիս հասնում էին այստեղ, իրենց թափառումներն սկսած մարդկանց միայն մի փոքր մասն էին

կազմում արդեն։ Այդպիսի անընդմեջ հալածանքների ենթարկելով՝ թուրքերը նրանցից կազատվեին համեմատաբար կարճ ժամանակում։ Նրանց մեջ, ում հետ զրուցել եմ, երեք քույրեր կային։ Նրանք կրթություն էին ստացել...-ում և հիանալի խոսում էին անգլերեն։ Նրանք պատմեցին, որ իրենց ընտանիքը Էրզրումում ամենահարուստներից մեկն է եղել, և այն պահին, երբ իրենք հեռանում էին այնտեղից, բաղկացած է եղել 25 հոգուց, իսկ հիմա կենդանի են մնացել միայն 14-ը։ Մնացած 11-ը, որոնց թվում և՝ նրանցից մեկի ամուսինն ու պառավ տատիկը, սպանված են... Ամենատարեց տղամարդն այդ ընտանիքից, որ կենդանի է դեռ, ընդամենը 8 տարեկան է։ Երբ նրանք թողնելիս են եղել Էրզրումը, ունեցել են դրամ, ձիեր և անձնական իրեր, բայց ճանապարհին ամեն ինչ թալանել են, նույնիսկ շորները։ Նրանք պատմում էին, որ իրենցից ոմանց բացարձակ մերկ են թողել, ոմանց էլ՝ միայն մեկ շորով։ Երբ հասել են մի գյուղի, ժանդարմները տեղացի կանանցից շոր են վերցրել նրանց համար։ Մյուս աղջիկը, որի հետ խոսել եմ, Էրզրումի բողոքական պաստորի դուստրն էր։ Նա պատմեց, թե իրենց ընտանիքի բոլոր անդամները, որոնք իր հետ են եղել, սպանված են, և միայն ինքն է կենդանի մնացել... Նրանց, ալահակախմբի հսկողությամբ, պահում էին քաղաքից դուրս գտնվող դպրոցական մի լքված շենքում, և ոչ ոքի չէր թույլատրվում մտնել այնտեղ։ Նրանք ասում էին, թե փաստորեն գտնվում էին բանտում, թեև իրենց թույլատրվում էր գնալ մինչև աղբյուրը՝ դպրոցի շենքի մոտ։ Հենց այդտեղ էլ ես հանդիպեցի նրանց։ Մյուս բոլորին պահում են բաց դաշտում գտնվող ճամբարում, արևի տակ։

Այդ մարդկանց վիճակը պարզ ցույց է տալիս, թե ինչ բախտ է սպասվում բոլոր նրանց, ովքեր թողել են կամ պատրաստվում են թողնել այս կայանատեղին։ Ես կարծում եմ, թե այլևս ոչ ոք նրանցից որևէ մեկի մասին ոչինչ չի լսի կամ, հնարավոր է, կլսի շատ քիչ բան...

Թվում է, թե տեղաշարժումն իսկ լավագույնս հարմարեցված է այն բանին, որպեսզի հանգեցնի հայերի նույնիսկ այս երկրում չտեսնված ոչնչացման։

Վերջին մի քանի շաբաթվա մեջ ձերբակալվել են մի քանի հազար հայ տղամարդիկ։ Նրանց բանտ են նետել։ Հենց որ այնտեղ մի քանի հարյուր հոգի հավաքվում էր, գիշերով բանտից նրանց հանում տանում էին։ Առաջին խումբը հանվել է լույս

հունիսի 23-ի գիշերը։ Նրանց մեջ եղել են քոլեջի մի քանի պրոֆեսորներ և այլ երևելի հայեր, որոնց թվում և հայ լուսավորչական եկեղեցու արքեպիսկոպոսը։ Դրանից անմիջապես հետո լուր է տարածվել, թե նրանց բոլորին կոտորել են, և համարյա կասկած չկա, որ դա ճշմարտություն է։ Նույնկերպ աքսորվել են բոլոր հայ զինվորները։ Նրանք ձերբակալվել են և տարվել քաղաքի ծայրամասի բանտը։ Ոչ մի տարբերություն չի դրվել, թե զինծառայությունից ազատվելու հարկը ով է վճարել, ով՝ ոչ։ Նրանց փողերը վերցրել են, իսկ ապա ձերբակալել և ուղարկել մյուսների հետ։ Ասել են, թե նրանց պիտի ուղարկեն ինչոր տեղ ճանապարհաշինության մեջ աշխատելու, բայց, անկասկած, դա կեղծիք է եղել, քանի որ ոչ ոք այլևս ոչինչ չի լսել նրանց մասին։

Մնացած բոլորի ճակատագրի մասին բավարար պարզությամբ կարելի է դատել ըստ հավաստի պատմության մի դեպքի մասին, որը տեղի է ունեցել շորեքշաբթի՝ հուլիսի 7-ին այդպիսի խմբերից մեկի հետ։ Երկուշաբթի օրը, ինչպես Ն-ում, այնպես էլ Ժ-ում, ձերբակալել և բանտ են նետել բազմաթիվ տղամարդկանց։ Երեքշաբթի լուսադեմին բանտից հանել են նրանց և ստիպել գնալ լեռան ուղղությամբ, որտեղ համարյա ոչ ոք չէր ապրում։ Նրանք բոլորը մոտ 800 հոգի են եղել, տասնչորս հոգանոց խմբերի բաժանված և պարանով միմյանց կապված։ Նույն օրվա իրիկնադեմին նրանք հասել են քրդական մի փոքրիկ գյուղ, որտեղ կանգ են առել գիշերելու մզկիթում և այլ շենքերում։ Ձերբակալումից հետո նրանց տված չեն եղել ո՛չ հաց, ո՛չ ջուր։ Նրանցից խլել են բոլոր դրամները և շորերի մեծ մասը։ Չորեքշաբթի առավոտյան նրանց բերել են մի հովիտ՝ մի քանի ժամվա ոտքի ճամփա հեռու, և բոլորին ստիպել են նստել գետնին։ Ապա ժանդարմներն սկսել են նրանց գնդակահարել և սպանել են համարյա բոլորին։ Նրանց, ովքեր չեն զոհվել գնդակից, սպանել են դանակով կամ սվինով։ Նրանցից մի քանիսին հաջողվել է կտրել պարանը, որով նրանք կապված են եղել իրենց ընկերներին, և փախչել, բայց հետևներից հասել են և սպանել։ Նրանցից մի քանիսին, հավանաբար ոչ ավելի, քան երկու-երեքին, հաջողվել է փախչել։ Սպանվածների մեջ են եղել քոլեջի գանձապահը, ինչպես և պատվարժան շատ այլ անձինք։ Այս մարդկանցից ոչ մեկին երբեք ոչ մի մեղադրանք ներկայացված չի եղել։

Այդ ձերբակալություններն ու սպանությունները պարզապես մի մասն են հայ ազգի ոչնչացման ընդհանուր ծրագրի։

Երեկ գիշերը ևս մի քանի հարյուր տղամարդիկ, որոնց թվում էին և՛ քաղաքացիական իշխանությունների կողմից ձերբակալվածները, և՛ նրանք, ովքեր զինվորներ են համարվել, տարվել են այլ ուղղությամբ ու սպանվել նույն ձևով։ Պատմում են, թե դա տեղի է ունեցել այստեղից երկու ժամվա ոտքի ճամփա հեռվում։ Ես մի քանի օր հետո գնալու եմ այնտեղ, երբ ամեն ինչ մի փոքր հանդարտվի, և ինքս կփորձեմ ստուգել այդ ամենը։

Նույնանման դեպքեր սիստեմատիկաբար տեղի են ունենում գյուղերում։ Մի քանի շաբաթ սրանից առաջ Ատ-ում և Բժ-ում, գյուղեր, որոնք համապատասխանաբար 4 և 5 ժամվա ոտքի ճամփա հեռու են այստեղից, հավաքել են 300 տղամարդկանց, տարել սարերը և սպանել։ Դա, թվում է, ճշգրիտ հաստատված է։ Այդ գյուղերից շատ կանայք եղել են այնտեղ և հետագայում պատմում էին այդ մասին։ Լուրեր են տարածվել այն մասին, որ նման դեպքեր տեղի են ունեցել և այլ վայրերում[26]...

The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—16. Documents presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce. With a preface of Viscount Bryce. London, 1916, p. 262—264.

159. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՊՈՒՊԱՏՈՍ ՇՈՅԲՆԵՐ-ԴԻՖՏԵՐԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ՝ ՀՂՎԱԾ ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻՆ

Էրզրում, 28 հուլիսի 1915 թ.

Տեղիս վալիի՝ Թահսին բեյի կողմնակիցները բացահայտորեն խոստովանում են, որ իրենց գործունեության վերջնական նպատակն է հայերի լիակատար ոչնչացումը Թուրքիայում։ Պատերազմից հետո «մեզ մոտ՝ Թուրքիայում այլևս հայ չի լինի»,— այսպիսին է մի հեղինակավոր անձի բառացի արտահայտությունը։

Որքանով որ այս նպատակին չի կարելի հասնել զանազան կարգի կոտորածներով, այստեղ հուսով են, որ մինչև Միջագետք երկար ճանապարհի զրկանքներն ու անսովոր կլիման ի լրումն կհասցնեն ամեն ինչ։ Հայկական հարցի այս «լուծումը» իդեալական է թվում ծայրահեղ ուղղության բոլոր կողմնակիցներին, որին պատկանում են համարյա բոլոր զինվորական և կառավարական աստիճանավորները։ Թուրք ժողովուրդն ինքը ոչ մի կերպ համաձայն չէ հայոց հարցի այսպիսի լուծման հետ և հիմա արդեն նեղվում է տնտեսական ծանր կարիքից, որն առաջանում է երկրի այս մասում հայերի արտաքսման հետևանքով։

Շոնյբեր-Ռիխտեր

Deutschland und Armenien... S. 113.

160. ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ I ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՊԵՏԻՆ

Քաղվածք № 108 զեկույցից **8 օգոստոսի 1915 թ.**

Զեկուցում եմ, որ այսօր իմ կողմից լրացուցիչ հարցաքննված է ռազմագերի Հուսեյն Սաբրին՝ համահավաք կորպուսի շարժական հոսպիտալի ավագ գրագիրը։ Երեք ամիս սրանից առաջ Լիզում գտնվող Մուշի ժանդարմական գումարտակը հավաքեց բոլոր հայ տղամարդկանց՝ 10 տարեկանից վեր։ Հավաքելով, այսպիսով, մոտ հարյուր հիսուն հոգի, տարան։ Հաջորդ օրը բոլոր այդ հայերին մորթված գտան լեռան ստորոտում՝ Լիզից մոտ մեկ ժամվա ոտքի ճամփա հեռու։ Նույնկերպ են վարվել շրջակա գյուղերի բոլոր հայերի հետ։ Հայ տղամարդկանց տանելուց մի քանի օր հետո, Հուսեյն Սաբրին վկան է եղել զինվորների կողմից հայ աղջիկների բռնաբարությունների...

Մաքսիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 43.

161. ՍՈՖԻԱՅԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 515 հեռագրից **5 օգոստոսի 1915 թ.**

Թուրքիայում նոր դաժան կոտորածի առթիվ Սոֆիայի հայկական գաղութը մխսային հեռագրով հաղորդել է իր դիմումը ամբողջ աշխարհի քաղաքակիրթ ազգերին ուղղված նոր աղերսանքով՝ պահպանել նահատակ ազգի գոնե մնացորդները։ Միա-

ժամանակ հայերի մի պատգամավորություն ներկայացավ զինվորական գործակալին, խնդրելով, որ կամավորներին թույլ տրվի Ռուսաստան անցնել Թուրքերի դեմ մղվող պատերազմին մասնակցելու համար...

Սավիցկի

АВПР, Политархив, д. 3504, л. 42.

162. ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄ ՊԱՊԱԶԱՆՅԱՆԸ՝ ԱՐՏԱԴԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Քաղվածք Ամակից **8 օգոստոսի 1915 թ.**

Ես ամեն օր հեռագրեր ու նամակներ եմ ստանում Թուրքահայաստանում հայ բնակչության և մեր սահմաններն անցած փախստականների սարսափելի վիճակի մասին։

Խոսք չեմ գտնում հաղորդելու իրականությունը, և միայն ամուր նյարդերի տեր մարդը կարող է մինչև վերջ լսել ականատեսի պարզամիտ պատմությունը։

Մանազկերտի և Մուշի շրջաններում ամբողջ արական հայ բնակչությունը կոտորված է, Լիզում 800 տղամարդու իրար կապած՝ փողոտել են, Կոփի, Լիզի ընդարձակ դաշտերում և այլ վայրերում փռված են կանանց ու երեխաների դիակներ։

Ես կարող էի անվերջ շարունակել վերջին օրերի մարտիրոսագրությունը։

Ռուսաստանի սահմաններն են անցել 200 000-ից ավելի փախստականներ՝ սովահար, հիվանդ, ահաբեկված։ Նրանք անցել են սարսափելի ճանապարհներով, դժվարանցանելի լեռնանցքներով, անցած ուղով մեկ դիակներ սփռելով։ Բոլորը կանայք և երեխաներ են։

Զմռանը եկած 60 000-ի հետ միասին՝ փախստական հայերը հապճեպ հաշվումներով 260 000-ից ավելի են։

Հայ հասարակությունը ի վիճակի չէ պահելու փախստականներին՝ ինչպես ի նկատի ունենալով վիթխարի միջոցների անհրաժեշտությունն ու բարեգործական օգնության անբավարարությունն ընդհանրապես, այնպես էլ այն պատճառով, որ անդադար վճարվող տուրքերից գյուղացիական և քաղաքային դասակարգերը ուժասպառ են եղել։

Փախստականներին պահելու վրա մինչև օրս ծախսվել է մեկուկես միլիոն ռուբլուց ավելի (չհաշված կողմնակի ոչ մեծ օգնությունը), դրուժինաները արժեցել են մոտ 700 000 ռուբլի, նշանակալի ծախսեր են արվել Վանում քաղաքացիական վարչության վրա (վստահված է եղել Վանը գրաված հայերին), մի շարք քաղաքների ու ռազմական գործողությունների թատերաբեմի զինվորական հիվանդանոցների վրա և այլն։

Միջոցներն սպառվել են։ Չգիտեմ Ռուսաստանի ուրիշ ո՞ր ժողովուրդն է պատերազմի մեջ մտել և ավելի շատ զոհեր տվել։

Անհրաժեշտ է պետության լայն օգնությունը, միլիոններ են անհրաժեշտ, որպեսզի թշվառները չկործանվեն մեր աչքի առաջ։ Արդեն Դումա է մտցվել փախստականներին ապահովելու միջոցառումների մասին օրինագիծը, և ես մասնակցություն եմ ունենում օրինագծի քննարկմանն ու շուտափույթ իրագործմանը։ Բայց դրա համար ժամանակ է պետք։ Իսկ փախստականները մնում են բաց երկնքի տակ՝ ջարդված, սոված, մերկ, մեռնում են ուժասպառությունից։

Միայն սննդակետերում օրական ծախսվում է 30 000 ռուբլի։

Թախանձագին խնդրում եմ Ձեզ, մեծարգո՛ Սերգեյ Դմիտրիևիչ, նախաձեռնությունը Ձեզ վրա վերցնել և միջոցներ ձեռք առնել, որպեսզի պետության միջոցներից անհապաղ բաց թողնվի ոչ պակաս քան մեկ միլիոն ռուբլի՝ ի տնօրինություն փախստականների օգնության հայկական կազմակերպություններին։

АВПР, Политархив, д. 3492, л. 5—6.

163. ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ Ի ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՊԵՏԻՆ

Քաղվածք № 187 զեկույցից **11 օգոստոսի 1915 թ.**

Զեկուցում եմ, որ այսօր իմ կողմից հարցաքննված է հայ փախստական Մուշեղ Մամիկոնյանը, 17 տարեկան, բնիկ մշեցի, որտեղից փախել է 12 օր սրանից առաջ։ Մեկ ամիս առաջ Թուրքական իշխանությունները Մուշի ամբողջ հայ բնակչությանը հրամայել են հավաքվել Ուրֆա մեկնելու համար, բայց հայերը վախենալով, որ ճանապարհին իրենց կկոտորեն, ինչ-

պես որ եղել է արդեն ուրիշ գյուղերում ու քաղաքներում, հրաժարվել են կատարել այդ հրամանը։ Այնժամ սկսվել է հայկական ջարդը... Համարյա բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, մորթվել են, որոնց թվում և՝ Մամիկոնյանի մայրը, հայրը, եղբայրներն ու քույրը։ Շրջակա գյուղերում էլ են եղել նույնպիսի ջարդեր։ Միայն Սասունն է բոլոր կողմերից թուրքական զորքերով շրջապատված՝ դիմադրություն ցույց տվել և մնացել հայերի ձեռքին... Ձենք ունեցող երիտասարդ հայերը փախել են սարերը։ Մուշից, ջարդից հետո, մի խումբ հայեր են փախել՝ 80 հոգի։ Նրանք բոլորը մնացել են Դուտախում և մտել հայկական դրուժինայի մեջ։ Մամիկոնյանը ճանապարհին հիվանդացել է, այդ պատճառով էլ ուղարկվել է Սարիղամիշ։

Մախիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 47.

164. ԱԹԵՆՔԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

№ 824 հեռագրից 11 օգոստոսի 1915 թ.

Սերաֆիմովը խնդրում է հաղորդել. Դեուդեսը հուլիսի 28-ին տեղեկացնում է, որ հայերի հալածանքները Թուրքիայում գնալով սաստկանում են։ Կոստանդնուպոլսի մերձակա քաղաքների և գյուղերի հայ բնակչությունը աքսորվում է Փոքր Ասիայի խորքերը։ Նույն բախտն է սպասվում նաև մնացած հայերին՝ առանց հպատակության խտրության...

Դեմիդով

АВПР, Политархив, д. 3504, л. 45.

165. ԿՈՆԻԱՑՈՒՄ ԱԳՐՈՂ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻԾ ՈՒՂՂՎԱԾ Կ. ՊՈԼՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Կոնիա, 16 օգոստոսի 1915 թ.

...Այսպիսով, բոլոր ձեռնարկված միջոցառումները, ըստ երևույթին, հանգում են հայերի լիակատար ոչնչացմանը։

Այս անմարդկային վերաբերմունքը անջնջելի խայտառակ բիծ է համաշխարհային պատմության մեջ ոչ միայն Թուրքերի, այլև մեզ՝ գերմանացիներիս համար, եթե մենք այդ գործին նայենք ձեռքներս ծալած և թույլ տանք, որ ոչնչացնեն այդ ժողովրդին։ Միանգամայն անկախ որևէ այլ բանից, գործողությունների խիստ ողբալի այս եղանակը հակասում է երկրի տնտեսական դրության շահերին, ընդ որում գերմանական ձեռնարկություններն էլ կտուժեն, եթե կործանվի այդ աշխատասեր ժողովուրդը։

Եթե ներքոստորագրյալները համարձակություն են ստանձնում կայսերական դեսպանությանը հաղորդագրություն ուղարկել այս փաստերի մասին, ապա նրանք այդ անում են, ենթադրելով, որ դրանք լրիվ չափով ծանոթ չեն գերմանական կայսերական դեսպանությանը։

Մենք՝ գերմանացիներս, որ ստիպված ենք ամեն օր տեսնել այս վրդովեցուցիչ վայրագությունները, մեզ պարտավոր ենք համարում բողոքել այդ ամենի դեմ որպես կիսակիրթ ժողովրդի մեջ գտնվող կուլտուրական պետության ներկայացուցիչներ։

Մենք հուսով ենք, որ մեր խնդրանքը կհարգվի և որ հաղարավոր անմեղ կանանց ու երեխաների ճակատագիրը գոնե կթեթևացվի։

Խորին հարգանքով՝

ՎԻԼԼԻ ԶԵԵԳԵՐ— Անատոլիայի առևտրաարդյունաբերական բաժնետիրական ընկերության Կոնիայի բաժանմունքի գլխավոր,
ԳԵՈՐԳ ԲԻԳԵԼ — միջնակարգ դպրոցի ուսուցիչ,
ՀԱՅՆՐԻԽ ՅԱՆՍՈՆ— գործարանի վարպետ,
ՅՈՒ. Ե. ՄԱՈՒՐԵՐ — դիպլոմավոր ինժեներ։

Deutschland und Armenien..., S. 134—135.

166. Կ. ՊՈԼՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆԸ՝ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՅՈՒԱՆԳԵՐԻ ԶԵԿՈՒՅՑԻՑ

Էրզրում, 23 օգոստոսի 1915 թ.

...Պատահած ամեն ինչից հետո կարելի է վստահորեն խոստովանել հետևյալը։

Հայերի արտաքսման և ոչնչացման որոշումն ընդունված է Կոստանդնուպոլսի երիտթուրքական կոմիտեի կողմից։ Հենց նրանց կողմից է, ըստ երևույթին, դա կազմակերպված և իրա-

գործված զինվորական իշխանությունների ու զանազան հրոսակախմբերի օգնությամբ։ Դրա հետ մեկտեղ, տեղական վարչության ոստիկանության պետ Հուլուսի բեյից և գլխավոր հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայից բացի, տեղերում գտնվելիս են եղել կոմիտեի անդամներ Հիլմի բեյը, Շաքիր բեյը, Էրզրումից դեպուտատը, Սեյֆուլլա բեյը։

Փոխգնդապետ Շտանգե

Deutschland und Armenien..., S. 142.

167. ԿԱՀԻՐԵԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 89 — 2 սեպտեմբերի 1915 թ.

Հալեպի ամերիկյան հյուպատոսը վստահելի անձի միջոցով հայտնում է ի գիտություն դաշնակիցների, որ դաշնակից տերությունների Ուրֆա աքսորված 2000 հպատակները գտնվում են ծայրահեղ վտանգավոր դրության մեջ՝ մեր կովկասյան բանակների առջևից նահանջող թուրքական զորքերի զայրացածության և հուսահատության պատճառով։ Իրենց ճանապարհին այդ զորքերը ամենուրեք կոտորում են հայերին։ Զոհերի թիվը, կարծես թե, միլիոնի է հասնում։ Մերձափնյա վայրերի հայերը, ֆրանսիական էսկադրայի պետի աջակցությամբ, զենքի են դիմում՝ կանանց ու երեխաներին ուղարկելով Եգիպտոս, որտեղ արդեն նրանցից ժամանել են մոտ 3000 հոգի։

Սմիռնով

АВПР, Политархив, д. 3490, л. 107.

168. ԲԻՐԻՉԿ ԶԱՎՐԻԵՎԻ ՆԱՄԱԿԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Պետրոգրադ, 8 սեպտեմբերի 1915 թ.

Ձերդ բարձր գերազանցությանը ընդհանուր գծերով հայտնի է այն անտանելի դրությունը, որ ստեղծված է հայերի համար Թուրքիայում։

Աստիճանաբար ստացված մանրամասնությունները մեզ համար պարզում են խորապես մռայլ մի պատկեր.

1. Այս տարվա գարնան և ամռան ընթացքում թուրքական համարյա ամբողջ բանակում հատուկ հնարքներով, մասնակիորեն, բայց անզիջում մորթոտվել են զորակոչված համարյա բոլոր հայերը։ Այդկերպ սպանվել են մի քանի տասնյակ հազար տղամարդիկ՝ իրենց ծաղկուն տարիքում։

2. Համարյա ամբողջ Կիլիկիայից, Զեյթունից ու Սվազից գլխովին արտաքսված է հայ բնակչությունը։ Դրանից առանձնացվել է առավել երիտասարդ տղամարդկանց մեծ մասը, որոնց քշել տարել են ինչ-որ տեղ։ Նրանց ճակատագրի մասին տեղեկություններ չկան, և նրանց, անկասկած, սպանել են։ Մնացած բոլորը, առանց բացառության, ոտքով, առանց որևէ ունեցվածք վերցնելու, քշվել են Միջագետք։ Կանանց ու երեխաների վիթխարի բազմությունն կոտորվել է հյուծումից, ջրամույն եղել գետերն անցնելիս և մեռել քաղցից ու ծարավից։ Հետ մնացողներին անգթորեն սպանել են։ Ջահել աղջիկներին ջոկել տարել են։ Միջագետքում ուզում են նրանց իբրև թե տարաբնակեցնել քոչվորների մեջ։

Նրանց խիստ մեծ մասն արդեն իսլամ է ընդունել։

3. Էրզրումի վիլայեթի արևմտյան մասը և Խարբերդի ու Դիարբեքիրի վիլայեթի մի մասը առայժմ դեռ քիչ են տուժել, բայց հերթը, հավանաբար, նրանց էլ կհասնի։

4. Մուշ քաղաքը և Մուշի ամբողջ փարթամ հովիտը վերածված են ավերակների. տների մեծ մասը, բոլոր եկեղեցիներն ու վանքերը այրված են։ Բնակչությունը կոտորվել է, բացի նրանցից, ովքեր հասցրել են փախչել Սասունի սարերը։

Ամբողջ Սասունը առայժմ անվնաս է, բայց շրջապատված է քրդերով ու զորքերով։ Մարդիկ արիաբար դիմանում են, բայց նրանք արդեն փամփուշտի պակասություն են զգում։ Ուտելիքն էլ է սպառվում։ Այսպիսով, հպարտ Սասունը շուտով կընկնի, եթե օգնություն չհասցվի։

5. Վանից նահանջած ռուսական զորքի հետ հեռացած մոտ 200 000 հայերը խռնվել են Անդրկովկասում և Երևանի նահանգում։

Ականատեսները, որոնք այնտեղից հեռագրեր են հղում, չեն կարողանում առանց արցունքի նկարագրել այն ամենը, ինչ տեղի է ունենում այդ սովալլուկ, խառնիճաղանջ մարդկային զանգ-

վածի մեջ, որ մնացել է առանց բժշկական օգնության և անխտիր ամեն ինչի կարիք է զգում։

Խոլերան և մյուս համաճարակները օրական երեք հարյուրից ավելի մարդ են տանում։ Հեռագրում են, որ հարյուրավոր դիակներ անթաղ են մնում՝ և՛ նյութական միջոցների, և՛ հարկ եղած կազմակերպման բացակայության պատճառով։ Այդ դրժբախտ մարդկանց կործանումը անխուսափելիորեն սպառնալիք է ծնում, թե համաճարակը կտարածվի Կովկասով մեկ՝ գյուղերում փախստականների տեղաբաշխմանը զուգընթաց։

Հայ ժողովուրդը Թուրքիայում կործանման է դատապարտվում։

Ձերդ բարձր գերազանցությանը հայտնի է, թե ով է ոչնչընչողն ու ղեկավարը ամբողջ տեղի ունեցածի և ինչի համար են այդ ժողովրդի դեմ այդպես գազազել գերմանո-թուրքերը։ Բարեբախտաբար, առայժմ դեռ ամենուրեք չէ, որ նրանց հաջողվել է իրականացնել իրենց չար դիտավորությունը։

Հայ ժողովուրդը չունի այլ պաշտպան, որ կարողանա ինչ-որ բան անել, բացի Ռուսաստանից...

Տաղնապալի կասկածանքով և այն մարդու վիճակում, որ զրկվում է հոգեկան վերջին ուժերից և իր ղեկավար գաղափարի սրբության նկատմամբ հավատից, ես դիմում եմ Ձեզ՝ հենարան փնտրելով Ձեր մարդկայնության և Ռուսաստանի պետական շահի Ձեր գիտակցության մեջ՝ կապված հայ ժողովրդի պահպանման հետ...[27]

АВПР, Политархив, д. 3479, л. 19—20.

169. ԷՐԶՐՈՒՄԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՍԻԱՅՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ԵՐԿՈՒ ԳԹՈՒԹՅԱՆ ՋՈՒՅՐԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1915 թ. մարտին մենք իմացանք մի հայ բժշկից, որը հետագայում տիֆից մահացավ, թե թուրքական կառավարությունը պատրաստվում է հայերի կոտորած կազմակերպել լայն մասշտաբով։ Նա մեզ խնդրեց, որ գեներալ Պասելտից իմանանք, թե ճի՞շտ է արդյոք այդ լուրը։ Դրանից հետո մեզ հայտնեցին, որ գեներալը (փայլուն սպաներից մեկը) նույնպես երկյուղ է ունեցել այդ առթիվ և այդ պատճառով էլ խնդրել է ազատել իրեն

զբաղեցրած պաշտոնից... Մենք տիֆով հիվանդացանք և հիվանդանոցի սպասարկող անձնակազմում տեղի ունեցած որոշ փոփոխությունների հետևանքով ստիպված եղանք հեռանալ Էրզրումից։

Շնորհիվ Էրզրումի գերմանական հյուպատոսի սիրալիր ծառայության, մի մարդ, որը հայերի մոտ հարգանք էր վայելում, մենք աշխատանքի ընդունվեցինք Երզնկայի Կարմիր խաչում և այդտեղ աշխատեցինք յոթ ամիս։

Հունիսի սկզբին Երզնկայի Կարմիր խաչի միսիայի ղեկավար վիրաբույժ Ա-ն մեզ պատմեց, որ Վանում հայերն ապստամբել են և նրանց դեմ ձեռնարկվել են միջոցներ, որոնք կարող են հայերի համընդհանուր ոչնչացման կերպարանք ստանալ, ինչպես և այն, որ Երզնկայի ու շրջակայքի ամբողջ հայ բնակչությունը ուղարկվելու է Միջագետք, որտեղ նրանք արդեն մեծամասնություն չեն կազմի, ինչպես այստեղ։ Սակայն ոչ մի կոտորած չի սպասվում, և պետք է ուղեկցող զինվորական պահակախմբի օգնությամբ միջոցներ ձեռք առնվեն աքսորյալների սնունդի ու նրանց անձնական անվտանգության համար։ Նա ասաց, որ, ինչպես հայտնում են, Երզնկայում հայտնաբերվել են վագոններ՝ զենքերով ու ռումբերով բեռնված, և որ շատերն են ձերբակալվելու։ Կարմիր խաչի անձնակազմին արգելված է որևէ շփում ունենալ աքսորյալների հետ, ինչպես և ոտքով կամ ձիով որևէ շրջագայություն կատարել որոշակի շառավղից դուրս։

Դրանից հետո Երզնկայի բնակչությանը մի քանի օր ժամանակ տրվեց իրենց ունեցվածքը վաճառելու համար։ Ինչպես և պետք էր սպասել, վաճառքը տեղի էր ունենում ծիծաղելիորեն ցածր գներով։ Հունիսի առաջին շաբաթվա մեջ ուղարկվեց առաջին քարավանը։ Հարուստներին թույլատրվում էր կառք վարձել։ Նրանք պետք է գնային խարբերդ։ Հաջորդ երեք օրերին ճամփա ընկան աքսորյալների այլ քարավաններ, որոնց երեխաներին վերցրին մուսուլմանների ընտանիքներում պահելու համար։ Բայց հետագայում իշխանությունները որոշեցին, որ այսուհետև երեխաները նույնպես պետք է արտաքսվեն։

Մեր հիվանդանոցում աշխատող հայերի ընտանիքները, այդ թվում և՝ մի հիվանդ կին, պետք է գնային մնացածների հետ։ Այդ կնոջը բուժող բժիշկ Նեյկիրխի բողոքը ոչ մի ներգործություն չունեցավ։ Այդ կնոջն ուղարկելը հետաձգվեց միայն երկու օրով։ Մեր հիվանդանոցին որպես կոշկակար կցված զին-

վորը բուժքույր Բ-ին ասաց. «Ես արդեն 45 տարեկան եմ, բայց էլի ինձ դինծառայության են վերցրել, թեև ես ամեն տարի զինծառայությունից ազատվելու համար կանոնավորապես հարկ եմ վճարել։ Ես երբեք կառավարության դեմ ուղղված որևէ բան չեմ արել, իսկ հիմա նրանք ինձանից խլում են իմ ամբողջ ընտանիքը՝ իմ յոթանասունամյա մորը, կնոջը և հինգ երեխաներին, ընդ որում ես նույնիսկ չգիտեմ, թե նրանց ուր են ուղարկում»։ Նա հատկապես անհանգստանում էր իր մեկուկես տարեկան աղջկա համար. «Նա էնպե՞ս անուշիկն է։ Նա էնպե՞ս սիրուն-սիրուն աչքեր ունի»։ Այդ ասելիս՝ նա երեխայի պես լաց էր լինում։ Հաջորդ օրը նա նորից եկավ. «Ես ճիշտը գիտեմ։ Նրանք բոլորը զոհվել են»։ Եվ իրոք, դա այդպես էր...

Հետագայում զինվորները մեզ պատմեցին, թե ինչպես են անպաշտպան հայերն սպանվել մինչև վերջին մարդը։ Սպանդը տևել է չորս ժամ։ Կանայք ծունկի էին իջնում, իրենց երեխաներին Եփրատը նետում։

«Դա սարսափելի էր,— ասաց մի հասարակ զինվոր։— Ես չէի կարողանում կրակել, ես միայն ձևացնում էի»։ Մենք հաճախ էինք լսում, թե թուրքերն ինչպես էին այդ առթիվ անհավանություն ու կարեկցանք արտահայտում։ Զինվորները մեզ պատմում էին, որ նախապատրաստված են եղել եզան սայլեր, որպեսզի դիակները տանեն նետեն գետը և կոտորածի հետքերը ոչնչացնեն։

Հաջորդ օրը իսկական շուրջկալ սարքեցին ցորենի դաշտում (ցորենի արտերը մնացել էին առանց հնձելու, և հայերից շատերը թաքնվել էին այնտեղ)։

Այդ ժամանակից սկսած՝ անընդհատ գալիս էին տեղահանվածների նոր քարավաններ, որոնք ուղարկվում էին սպանդանոց։ Մենք ոչ մի կասկած չունեինք նրանց հետագա ճակատագրի վերաբերյալ՝ այն միահամուռ վկայություններից հետո, որ մենք ստանում էինք տարբեր տեղերից։ Հետագայում մեր հույն կառապանը պատմեց, որ ձեռքները հետևներին կապված այդ զոհերին գետն են նետել գիրթ ժայռերից։ Այսպիսի մեթոդ էր կիրառվում այն դեպքերում, երբ զոհերի թիվը այնքան մեծ էր լինում, որ դժվար էր նրանցից ազատվել որևէ այլ եղանակով։ Դրանից բացի, հեշտանում էր մարդասպանների աշխատանքը։ Բուժքույր Բ-ն ու ես իսկույն սկսեցինք, իհարկե, մտածել այն մասին, թե մենք ինչ կարող ենք անել, և որոշեցինք այդ պա-

հակախմբերից մեկի հետ գնալ Խարբերդ։ Մենք այն ժամանակ դեռ չգիտեինք, որ կառավարության հրամանով կոտորածը կատարվում է հենց ճանապարհին, և կարծում էինք, թե կկարողանանք չափավորել ժանդարմների դաժանությունը, ինչպես և կանխել քրդերի հարձակումները, քանի որ մենք խոսում էինք քրդերեն և որոշ ազդեցություն ունեինք նրանց վրա։

Հետո մենք հեռագրեցինք Էրզրում՝ հյուպատոսին, հիվանդանոցից մեր ազատման մասին և պնդեցինք, որ նա ի շահ Գերմանիայի գար Երզնկա։ Ի պատասխան նա հեռագրեց. «Իմ պոստն անհնար է լքել։ Սպասում եմ ավստրիացիներին, որոնք պետք է գան անցնեն այստեղով հունիսի 22-ին...»

Հունիսի 17-ի երեկոյան մենք զբոսանքի գնացինք պ. Կ-ի՝ Կարմիր խաչի շտաբի դեղագործի հետ։ Նա, ինչպես և մենք, ցնցված էր կատարված դաժանություններից և շատ պարզ արտահայտում էր իր կարծիքն այդ առթիվ։ Նա նույնպես ազատվել էր աշխատանքից։ Զբոսանքի ժամանակ մենք հանդիպեցինք մի ժանդարմի, որը պատմեց, թե այստեղից տասը րոպեի ոտքի ճամփա հեռվում երթադադար էր արել Բայբուրդից աքսորվածների մի մեծ քարավան։ Նա սահմռկեցուցիչ ճշմարտացիությամբ պատմեց, թե ինչպես էին ոչնչացնում այդ մարդկանց և մեկը մյուսի հետևից նետում կիրճի անդունդը. «Քեսի՞ն, քեսի՞ն, գելյորլա՞ր» (Սպանե՞ք, սպանե՞ք, գալի՞ս են)։ Այնուհետև նա ասաց այն մասին, որ բոլոր գյուղերում բռնաբարում էին կանանց և որ նա ինքը նույնպես ուզում էր բռնաբարել մի աղջկա... Նա նկարագրում էր, թե ինչպես են ջախջախում երեխաների գլուխները, երբ նրանք լաց են լինում կամ խանգարում են ընթանալ։ «Այնտեղ երեք մերկ աղջիկների դիակներ էին ընկած։ Ես դրանց թաղեցի, որպեսզի բարի գործ արած լինեի»,— այսպես ավարտեց նա իր պատմությունը։

Հաջորդ օրը վաղ առավոտյան մեր տան առջևով անցավ աքսորյալների մի շարասյուն՝ ուղղվելով դեպի Երզնկա տանող խճուղին։ Մենք գնացինք դրա հետևից, հետ չմնալով, մինչև քաղաքից դուրս գալը, ինչը տևեց մոտ մեկ ժամ։ Մեզ հետ գալիս էր նաև պ. Ժ-ն։ Դա մի մեծ քարավան էր, բայց մեջը ընդամենը երկու-երեք տղամարդ կար, մնացածը կանայք ու երեխաներ էին։ Շատ կանայք նման էին խելագարների։ Նրանք բղավում էին. «Ենայեցե՞ք մեզ, մենք կդառնանք մուսուլմաննե՞ր, գերմանացիանե՞ր կամ ինչ որ ուզո՞ւմ եք, միայն թե խղճացե՞ք մեզ։ Մեզ տա-

նում են Կամախ-Բողազ, որ մեր վիզը կտրե՞ն»,— և նրանք ցույց էին տալիս, թե ինչպես։ Մյուսները լռում էին և համբերատար գնում, շալակներին՝ մի քանի կապոց և ձեռքներին՝ երեխաներ։ Մի քանիսը մեզ աղերսում էին փրկել իրենց երեխաներին։ Շատ թուրքեր էին գալիս, որպեսզի երեխաներ ու աղջիկներ վերցնեին՝ ծնողների համաձայնությամբ կամ էլ առանց նրանց հարցնելու։ Մտածելու ժամանակ չկար, քանի որ ձիավոր ժանդարմները մտրակները թափահարելով՝ անկանգ քշում էին նրանց։ Քաղաքի ծայրամասում Կամախ-Բողազ տանող ճանապարհը ճյուղավորվում էր գլխավոր խճուղուց։ Այս կետում տեղի ունեցավ այն, ինչը սովորաբար լինում է ստրկավաճառության շուկայում։ Մենք նույնպես վերցրինք մի փոքրիկ աղջկա և երեքից տասնըչորս տարեկան վեց երեխաներից բաղկացած մի ընտանիք։ Նրանք բոլորը կառչեցին մեզանից։ Աղջկան մենք իսկույն հանձնեցինք մեր խոհարար Թրքուհու խնամքին։ Թրքուհին ուզեցել էր երեխային տանել իր մոտ՝ խոհանոց, բժիշկ Ա-ի մասնավոր տունը, և պահել այնտեղ, մինչև որ մենք վերադառնայինք, բայց բժշկի ասիստենտը աղջկան ծեծել էր ու փողոց նետել։ Այդ ընթացքում տառապյալ ու հոգեվարք ապրող մարդկանց ամբոխը ճիչ ու ողբով շարունակեց իր ճանապարհը, իսկ մենք վերադարձանք հիվանդանոց՝ մեր վեց երեխաների հետ։ Բժիշկ Ա-ն թույլատրեց նրանց պահել մեր սենյակում՝ քանի դեռ մենք կապկրպում էինք մեր եղած-չեղածը։ Նրանց կերակրեցինք, և նրանք սկսեցին հանդարտվել։ «Հիմա մենք փրկվա՞ծ ենք»,— բացականչեցին նրանք, երբ մենք վերցրինք նրանց։ Նրանք հրաժարվեցին բաց թողնել մեր ձեռքերը։ Նրանցից ամենափոքրը՝ բաբերդցի մի հարուստի տղա, գունդուկծիկ եղած պառկած էր՝ մոր թիկնոցի մեջ փաթաթված։ Սրա դեմքը ուռել էր լալուց և, թվում էր, թե անհնար էր հանգստացնել։ Մի անգամ նետվեց դեպի լուսամուտը և ցույց տալով ժանդարմին՝ բղավեց. «Ա՜յ էս մարդն էր, որ սպանեց իմ հորը»։ Երեխաները մեզ տվեցին իրենց դրամը՝ 475 ղուռուշ (մոտ 4 ֆունտ ստերլինգ), որ ծնողները տվել էին նրանց, հուսալով, որ միգուցե իրենց երեխաները չեն գնդակահարվի։

Ապա մենք քաղաք մեկնեցինք, որպեսզի թույլտվություն ստանանք մեզ հետ վերցնելու այդ երեխաներին։ Մեզ ասացին, թե իշխանություններն այժմ խորհրդակցության մեջ են և վրճռում են հենց նոր ժամանած աքսորականների ճակատագիրը։

Չնայած դրան՝ բուժքույր Բ-ին հաջողվեց խոսել մի ծանոթի հետ, որը թույլատրեց երեխաներին հետը վերցնել և խորհուրդ տվեց նրանց կեղծ անուններ տալ անձնագրում։ Դա մեզ համար բավական էր և վերադառնալով հիվանդանոց՝ մենք հենց նույն երեկոյան մեր բեռով, երեխաներով և մեր եղած-չեղածով տեղափոխվեցինք Երզնկայի հյուրանոցը։ Թուրք սանիտարները հյուրանոցում լավ վերաբերվեցին մեզ հետ։ «Դուք բարի գործ եք կատարել՝ վերցնելով այս երեխաներին»,— ասում էին նրանք։

Հյուրանոցում 8 հոգու համար մենք կարողացանք ստանալ միայն մեկ փոքր սենյակ։ Գիշերը սարսափելի ծեծեցին մեր դուռը։ Ինչ-որ մեկը հարցրեց, թե այստե՞ղ են ապրում երկու գերմանուհիները։ Այնուհետև ամեն ինչ նորից հանդարտվեց ի մեծ ուրախություն մեր սենյակի փոքրիկ բնակիչների։ Երեխաների առաջին հարցը եղավ, թե՝ կհամաձայնե՞նք մենք, արդյոք, որպեսզի իրենց մուսուլման դարձնեն։ Մեր խաչը (բուժքրոջ Կարմիր խաչը) արդյոք այնպիսի՞ն է, ինչպիսին իրենց խաչն է։ Դրանից հետո նրանք հանգստացան։ Մենք նրանց թողեցինք սենյակում, իսկ ինքներս գնացինք թեյ խմելու հյուրանոցի սրճարանում։ Նկատեցինք, որ մեր հիվանդանոցից դուրս գրված հիվանդներից մի քանիսը, որոնք միշտ ձգտում էին ցույց տալ իրենց բարյացակամությունը մեր հանդեպ, իրենց այնպես էին պահում, ասես թե չէին ճանաչում մեզ։ Հյուրանոցի տերն սկսեց ճամարտակել։ «Կոստանդնուպոլսում,— ասում էր նա,— որոշում է ընդունված, որ այս կանայք ու երեխաները պետք է մեռնեն»։ Մտավ նաև մեր հիվանդանոցի թուրք խոջան և, ի միջի այլոց, ասաց մեզ. «Եթե աստված գութ չունի նրանց հանդեպ, ապա էլ ինչո՞ւ պիտի գթաք նրանց։ Հայերը գազանություններ են արել Վանում։ Դա տեղի է ունեցել այն պատճառով, որ նրանց կրոնը վատն է։ Մուսուլմանները չպետք է հետևեն նրանց օրինակին, նրանք պետք է կոտորածն իրականացնեն շատ ավելի մարդասիրաբար»։ Մենք ամեն անգամ պատասխանում էինք, որ իրենք պետք է որ բացահայտեին հանցագործներին և արդարադատություն իրագործեին նրանց նկատմամբ, իսկ կանանց ու երեխաների ոչնչացումը միշտ եղել է և կմնա որպես ոճրագործություն։

Այնուհետև մենք գնացինք մութեսարիֆի մոտ, որի հետ առաջ մենք չէինք կարողացել տեսակցություն ստանալ։ Այդ մարդը դևի մարմնացում էր, նրա վարքը համապատասխանում

էր իր արտաքինին։ Նա բղավեց մեզ վրա. «Կանանց գործը չէ՛ քիթը խոթել քաղաքականության մեջ, պետք է հարգել կառավարությանը»։ Մենք նրան պատասխանեցինք, որ ճիշտ նույնկերպ կվարվեինք, եթե զոհերը մուսուլմաններ լինեին, և որ քաղաքականությունը ոչ մի կապ չունի մեր արարքների հետ։ Ի պատասխան նա ասաց, որ մեզ վռնդել են հիվանդանոցից և որ նույնպիսի վերաբերմունքի կարժանանանք իր կողմից ևս, քանզի ինքը չի հանդուրժի մեր այստեղ գտնվելը և, իհարկե, մեզ թույլ չի տա մեկնել Խարբերդ՝ մեր եղած-չեղածը բերելու, այլ ուղիղ Սեբաստիա կուղարկի։ Ամենավատն այն էր, որ նա արգելեց մեզ հետ վերցնել երեխաներին և իսկույն ժանդարմ ուղարկեց, որ նրանց հանեն տանեն մեր սենյակից։

Տուն վերադառնալով՝ մենք իսկապես հանդիպեցինք երեխաներին, բայց նրանց շտապեցնում էին, և նրանք մեր մոտով անցան այնպես արագ, որ մենք նույնիսկ զրկվեցինք նրանց դրամը վերադարձնելու հնարավորությունից։ Այնժամ խնդրեցինք բժիշկ Լինդենբերգին՝ հետևել, որ այդ դրամները հանձնվեն երեխաներին, բայց որպեսզի իմանար, թե որտեղ են նրանք, պետք է դիմեր թուրք սպային։ Մեր մեկնման պահին երբ մեզ ասացին, որ նրանք սպանված են, իսկ մենք արդեն հնարավորություն չունեինք հետագա որոնումներ կատարելու, վերոհիշյալ Ռզա բեյը եկավ մեզ մոտ և այդ դրամը խնդրեց իբրև թե այն բանի համար, որ վերադարձնի երեխաներին։ Մենք որոշեցինք դրանք ծախսել ուրիշ հայերի ազատագրման վրա։

Երզնկայում հիմա մեզ վրա նայում էին կասկածանքով։ Մեզ թույլ չտվեցին մնալ հյուրանոցում և տեղավորեցին հայերից լքված մի տան մեջ։ Քաղաքի այդ ամբողջ բնդարձակ մասը մեռած էր թվում։ Մարդիկ այստեղ հայտնվում էին միայն նրա համար, որ տները թալանեին։ Դրանցից մի քանիսն արդեն բնակեցված էին վերաբնակեցված մուսուլման ընտանիքներով։ Մենք ծածկ ունեինք մեր գլխավերևում, բայց ոչ ոք մեզ ուտելիք չէր բերում։ Չնայած դրան՝ հնար գտանք մի գրություն ուղարկել բժիշկ Ա-ին, որը մեզ սիրով թույլատրեց վերադառնալ հիվանդանոց։ Հաջորդ օրը մութեսարիֆն ուղարկեց անզսպակավոր մի կառք, որով մենք պիտի յոթնօրյա ճանապարհորդություն կատարեինք դեպի Սեբաստիա։ Մենք նրան հասկացրինք, որ այդ կառքով չենք գնա, և այն բանից հետո, երբ նրանց դիմեց բժիշկ Ա-ն, նրանք ուղարկեցին մարդատար մի կառք և սպառնացին, որ կձերբակալեն մեզ, եթե իսկույնևեթ չմեկնենք։ Դա երկուշաբթի օրն էր, հունիսի 21-ին, և մենք ուզում էինք սպասել ավստրիացիներին, որոնք պետք է ժամանեին երեքշաբթի առավոտյան, որպեսզի ճանապարհվեինք նրանց ընկերակցությամբ։ Բայց բժիշկ Ա-ն հայտարարեց, թե ինքն այլևս չի կարող պաշտպանել մեզ, և մենք ստիպված եղանք մեկնել։ Բժիշկ Լինդենբերգն այնքան սիրալիր եղավ, որ մեզ ուղեկցեց մինչև Ռիֆախիա*։ Ճանապարհորդության առաջին օրը մենք տեսանք հինգ դիակ. մեկը կնոջ էր, հագին շոր կար։ Մյուս դիակներն առանց հագուստի էին, իսկ մեկը գլխատված էր։ Ինչպես ասաց մեզ ուղեկցող ժանդարմը, մեզ հետ նույն ճանապարհով գնում էին երկու թուրք սպաներ, որոնք իրականում հայեր էին։ Նրանք պահպանում էին իրենց ծպտվածությունը և մեծ զսպվածություն դրսևորում մեր նկատմամբ, բայց միևնույն ժամանակ ամեն կերպ ջանում էին մեզ աչքից բաց չթողնել։ Չորրորդ օրը նրանք չերևացին։ Երբ մենք սկսեցինք հարցուփորձ անել նրանց մասին, մեզ հասկացրին, որ ինչքան քիչ հետաքրքրվենք նրանցով, այնքան լավ մեզ համար։ Դադար առանք հունական մի գյուղի մոտերքում։ Ճանապարհի մոտ կանգնած էր կատաղի տեսքով մի մարդ։ Նա խոսեց մեզ հետ և ասաց, թե այստեղ կանգնել է, որ սպանի անցնող հայերին և որ ինքն արդեն սպանել է 250 հոգու։ Նա հայտարարեց, որ հայերը արժանի են դրան, քանի որ նրանք բոլորն անարխիստներ են— ոչ թե լիբերալներ կամ սոցիալիստներ — այլ՝ անարխիստներ։ Նա ոստիկաններին ասաց, որ հեռախոսով հրաման է ստացել սպանել ճանապարհի մեր երկու ընկերակիցներին. այդ երկու մարդը և նրանց կառապան հայը պետք է սպանվեն այստեղ։ Մենք չկարողացանք մեզ զսպել և չվիճել մարդասպանի հետ, բայց երբ նա մեզնից հեռացավ, մեր կառապան հույնը նախազգուշացրեց. «Ոչ մի բառ մի՛ ասեք, եթե դուք...» — և նա շարժուձևով ցույց տվեց, թե ինչպես են նշան բռնում կրակելիս։ Իրոք, արդեն խոսք էր եղել, թե մենք հայուհիներ ենք, իսկ դա բավական էր, որպեսզի մենք համարվեինք մահվան դատապարտված։

Մի անգամ հանդիպեցինք աքսորյալների մի քարավանի, որոնք հրաժեշտ տալով իրենց ծաղկուն գյուղերին՝ գնում էին Կամախ-Բողազի կողմը։ Մենք երկար ժամանակ կանգնած մնա-

* Աքսորյալների խմբերն այս ճանապարհով չէին գնում։

գինք ճամփեզրին, մինչև որ նրանք անցան մեր մոտով։ Մեզանից ոչ մեկը երբեք չի մոռանա այդ տեսարանը. մի քանի տարեց տղամարդ, մեծ թվով կանայք, եռանդուն կերպարանքներ՝ արտահայտիչ դիմագծերով, սիրունիկ երեխաների բազմություն, նրանցից մի քանիսը՝ շեկ ու կապուտաչյա։ Մի փոքրիկ աղջիկ ժպտում էր ամեն մի անծանոթ բանի, ինչ որ հանդիպում էր ճանապարհին, բայց մյուսների դեմքերին կարելի էր տեսնել մահվան նախազգացումը։ Ոչ մի ձայն չէր լսվում, բոլորը լուռ էին, և նրանք գալիս անցնում էին առանց կանգ առնելու, խիստ կարգուկանոնով։ Երեխաները հիմնականում եզան սայլերի մեջ էին։ Նրանցից ոմանք անցնելիս մեզ ողջունում էին։ Մի պառավ կին ստիպված եղավ իջնել իր էշից. նա այլևս չէր կարողանում նստած մնալ փալանի վրա։ Նա ի՞լ է այնտեղ սպանվել իսկույն։ Մեր սրտերը սարսուռ էր պատել։

Մեզ ուղեկցող ժանդարմը պատմեց, թե ինքը 3000 կանանցից ու երեխաներից բաղկացած մի քարավան է ուղեկցել դեպի Մամախաթուն (Էրզրումից ոչ հեռու) և Կամախ-Բողազ։ «Բոլորը զոհվեցին, բոլորը մեռած են»,— ասաց նա։ Մենք նրան հարցրինք. «Ինչո՞ւ եք նրանց դատապարտել այդպիսի սարսափելի տանջանքների։ Ինչո՞ւ նրանց չեք սպանել իրենց գյուղերում»։ Նա պատասխանեց. «Այն, ինչ արվում է հիմա,— դա լավագույն եղանակն է։ Նրանց պետք էր ստիպել, որ տառապանք կրեին, և, բացի այդ, բոլոր այդ դիակները տեղ չէին թողնի մեզ՝ մուսուլմաններիս համար։ Դրանք գարշահոտություն կտարածեին»։

Մենք գիշերն անցկացրինք Էնդերեսում, որտեղից մեկ օրվա ճամփա էր մինչև Շապին-Գարահիսար։ Ինչպես սովորաբար լինում էր, գիշերելու համար մեզ տրամադրեցին հայերից լքված մի տուն։ Պատի վրա մատիտով թուրքերեն գրված էր. «Մեր ապաստարանը հիմա սարերում է, մեզ այլևս ծածկ պետք չէ։ Մենք արդեն լմպել ենք մահվան դառը բաժակը։ Մենք այլևս դատավորների կարիք չունենք»։

Տան մեծ նկուղները դեռ էլի լցված էին կանանցով ու երեխաներով։ Ժանդարմները մեզ ասացին, որ նրանց տեղահանելու են վաղն առավոտյան, բայց նրանք այդ մասին դեռ չգիտեն։ Նրանք չգիտեն, թե ինչ է պատահել այդ տան տղամարդկանց։ Նրանք անպաշտպան էին, բայց հույսները դեռ չէին կտրել։

Դեռ չէի հասցրել ննջել, երբ արթնացա կրակոցներից, որոնք հնչում էին անմիջապես սար մոտերքում։

Կրակոցներն արագ հետևում էին մեկը մյուսին, և ես պարզորոշ լսեցի հրամանի բառերը։ Իսկույն հասկացա, թե ինչ է պատահել, և նույնիսկ թեթևացում ապրեցի այն մտքից, որ այդ գժբախտներն այժմ գտնվում են մարդկային դաժանության հասանելիությունից դուրս։

Հաջորդ առավոտյան մարդիկ մեզ պատմում էին, որ սպանվել են 10 հայեր, դրանք այն կրակոցներն էին, որոնք ես լսում էի, և որ տեղացի թուրքերը հետապնդում են փախածներին։ Մենք, իրոք, տեսնում էինք նրանց՝ ձիեր հեծած և հրացանները ձեռքներին. ճանապարհի մի կողմում երկու զինված մարդ, ծառի տակ կանգնած, իրար մեջ բաժանում էին սպանված հայի շորերը։ Մենք անցանք այն վայրի մոտով, որ ծածկված էր շրացած արյունով, թեև դիակներն արդեն տարել էին։ Դրանք այն 250 զինվորներն էին, որոնք ճանապարհ էին շինում և որոնց մասին մեզ պատմել էր ժանդարմը։

Մի ուրիշ անգամ հանդիպեցինք մեծ թվով աշխատավորների, որոնց մինչ այդ դեռ թույլ էին տվել խաղաղ աշխատել։ Երեք խմբի էին բաժանված. մուսուլմանների, հույների և հայերի։ Վերջիններիս մեջ մի քանի սպաներ կային։ Մեր պատանի Հասանը բացականչեց. «Սրանց բոլորին տանում են սպանելո՞ւ»։ Մենք շարունակում էինք դեպի բլուրը տանող մեր ճանապարհը։ Շուտով մեր կառապանը մտրակով ցույց տվեց հովիտը, և ճամփեզրին մենք տեսանք հայերի խումբը։ Նրանք՝ մոտ 400 հոգի, մեկ շարքով շարված էին վիհի եզրին։ Մենք գիտեինք, թե հետո ինչ է լինելու։

Սեբաստիա հասնելուց երկու օր առաջ մենք նորից տեսանք ճիշտ այդպիսի մի պատկեր։ Զինվորների սվինները փայլփլում էին արևի տակ։ Մի կողմ կանգնած 10 ժանդարմներ գնդակահարում էին հայերին, իսկ մյուսները դանակներով ու քարերով էին զոհերի վերջը տալիս։ Այս անգամ 10 հայերի հաջողվեց փախչել։ Նրանցից մեկին հետագայում մենք հանդիպեցինք Սեբաստիայի հիվանդանոցի միսիայում։ Նա մեզ պատմեց, որ այնտեղ սպանվել են մոտ 100 հայեր։ Պատմողն ինքը սարսափելի վերք էր ստացել ծոծրակից և ընկել ուշաթափ։ Հետո ուշքի էր եկել և երկու օրում եկել հասել էր Սեբաստիա։

Սեբաստիայից կառքով 12 ժամվա ճամփա հեռվում մենք

կանդ առանք գիշերելու կառավարական մի շենքում։ Ժանդարմը ժամերով նստած մեր դռան առաջ անընդմեջ ու միապաղաղ կրկնում էր. «Էրմենիլերի հեփ կեսդիլեր» («Բոլոր հայերն սպանված են»)։ Հարևան սենյակում ժանդարմները հեռախոսում էին։ Մենք հասկացանք, որ նրանք ինչ-որ մեկին հրահանգավորում էին, թե ինչպես պետք է ձերբակալել հայերին։ Նրանք խոսում էին գլխավորապես ոմն Հովհաննեսի մասին, որին ոչ մի կերպ չեն կարողանում բռնել։

Մի անգամ գիշերն անցկացրինք մի հայի տանը, որտեղ կանայք հենց նոր էին իմացել, որ իրենց ընտանիքների տղամարդիկ դատապարտված են մահվան։ Սարսափելի էր լսել նրանց հոգեցունց աղաղակները։ Նրանց հետ խոսելու մեր փորձը անօգուտ դուրս եկավ։ «Չի՞ կարող արդյոք ձեր կայսրը մեզ օգնել»,— գոչում էին նրանք։ Ժանդարմը տեսավ մեր դեմքի հուսահատական արտահայտությունը և ասաց. «Սրանց ձայներն անհանգստացնում են ձեզ։ Ես սրանց կարգելեմ լաց լինել»։ Սակայն մեզ հաջողվեց հանգստացնել նրան։ Նա առանձին մի բավականություն էր զգում, երբ մեզ ցույց էր տալիս հանդիպող որևէ սարսափելի տեսարան, և ջահել Հասանին ասում էր. «Մենք նախ բոլոր հայերին կկոտորենք, հետո՝ հույներին ու քրդերին»։ Նա, իհարկե, մեծ հաճույքով կավելացներ. «Իսկ հետո էլ՝ օտարերկրացիներին»։ Մեր կառապան հույնը նրա է՛լ ավելի սարսափելի մի կատակի զոհը դարձավ. «Նայի՞ր էն փոսի մեջ։ Էնտեղ հույնե՞ր էլ են պառկած»։

Վերջապես մենք հասանք Սեբաստիա։ Մենք ստիպված եղանք մոտ մեկ ժամ սպասել կառավարական շենքի մոտ, մինչ ուսումնասիրում էին մեր փաստաթղթերը։ Հետո մեզ թույլատրեցին գնալ ամերիկացիների մոտ։ Այստեղ նույնպես բոլորը տխուր ու տագնապալի դրության մեջ էին։

Սեբաստիայից մենք մեկնեցինք հուլիսի 1-ին և Կեսարիա հասանք հուլիսի 4-ին։ Երբ ճիզվիտական դպրոցում մենք հանձնեցինք մեր ուղերեռը, մեզ թույլ տվեցին մեկնել Թալաս, բայց հենց որ մենք վճռեցինք ճամփա ընկնել Կեսարիայից, մեզ դա արգելեցին և վերադարձրին ճիզվիտական դպրոցը՝ ժանդարմ կանգնեցնելով մեր դռան առաջ։ Սակայն ամերիկացի միսիոներներին հաջողվեց մեզ ազատել տալ։

Այնուհետև մենք վերադարձանք Թալաս, որտեղ ապրեցինք մի քանի օր, քանի որ այստեղ, ինչպես և Կեսարիայում, շատ

բանտարկություններ եղան։ Խեղճ հայերը երբեք չէին իմանում, թե իրենց ինչ է բերելու վաղվա օրը։ Իսկ շուտով եկավ սարսափելի այն լուրը, որ բոլոր հայերը պետք է թողնեն Սեբաստիան։ Այն մասին, թե ինչ է տեղի ունեցել այնտեղ և հարակից շրջանների գյուղերում, կպատմի ամերիկյան միսիան։

Երբ մենք հասկացանք, որ մտադիր են մեզ պահել այստեղ, որպեսզի մեզ խանգարեն միանալ ավստրիացիներին՝ հետագա ճանապարհը շարունակելու, մենք հեռագրեցինք գերմանական դեսպանություն և այդկերպ թույլտվություն ստացանք մեկնելու[28]...

The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916. London, 1916, p. 246—254.

170. 1915 Թ. ՀՈՒՆԻՍԻՆ ԷՐԶՐՈՒՄՑԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻՑ

1. Պարսիկ Մեշեդի Հաճի Իպրահիմը պատմեց հետևյալն.

«1915 մայիսի մեջ վալի Թահսին բեյը իր մոտ կը կանչե չեթուպաշի Համբրվանլի էյուպ օղլի Նատրին և Պոլսեն եկած հրամանը ցույց տալով՝ կ'ըսե անոր. «Տեղվույս հայերուն քեզ կը հանձնեմ, անվտանգ կը տանիս մինչև Քեմախ, այնտեղ քյուրտեր և այլն վրաները պիտի հարձակին։ Դուն առ երեսս ցույց պիտի տաս, թե կուզես անոնց պաշտպանել և մի քանի զենք կը նետես դեպի հարձակողներն, սակայն վերջ ի վերջո ցույց կուտաս, թե չես կարող պուխ գալ, ետ կը նահանջես ու կը վերադառնաս։ Քիչ մտածելե վերջ Նատրը կը պատասխանե. «Ո՞չ, փաշա՛, ես այդ առաջարկդ չեմ կարող ընդունել։ Դուն ինձ կը հրամայես ոտներն ու ձեռքերը կապած գառներու տանիլ սպանդանոց։ Դա անգթություն է և ինձ չի վայելեր, ես զինվոր եմ, զրկե ինձ թշնամու դեմ, որը գնդակով կամ ինձ կսպաննե և ես կիյնամ քաջաբար, կամ ես նրան կը տապալեմ և երկիրս կազատեմ, իսկ անմեղներու արյունով իմ ձեռքս ներկել երբեք չեմ համաձայնիլ»։ Վալին շատ կը ստիպե նրան, որ գործադրե իր հրամանը, բայց մեծահոգի Նատրը վճռականապես կը մերժե։ Այս անգամ վալին կը կանչե վերանշեհերցի Միրզա պեգին և անոր վերոգրյալ նույն առաջարկը կընե։ Սա ալ կը պնդե, թե զուր տեղը մի սպաննեք, կըսե՝ այնպիսի պայմաններու մեջ կը դնենք հայերուն, որ իրենք արդեն ճանապարհ-

ներուն կը ՝եռնին, և Միջագետք այնպիսի տաք երկիր է, որ չեն դիմանար և կը ոչնչանան։ Բայց վալին կը կրկնե իր առաջարկը, որն և կ՚ընդունի Միրզան։ Միրզան իր ստանձնած գազան պաշտոնը լիուլի կը կատարե և չորս ամիս վերջ 360 հազար լիրա հետն առած՝ կուգա Կարին, 90 հազար կուտա Թահսինին, 90 հազար՝ Օրտու քոմանտան Մահմուտ Քյամիլին, 90 հազար՝ տեֆտերտարին և մնացյալն ալ՝ մեյհարտարին, Սեյֆալուկին և արփանյակներուն։ Սակայն հայոց այս ավարը բաժանման ժամանակ կռիվ կ՚իյնա մեջերնին և Միրզան կը բանտարկե վալին։ Բայց Միրզան կը սպառնա այնպիսի մերկացումներ ընել, որ աշխարհ զարմանա։ Այս սպառնալիքին վրա զինքը ազատ կարձակեն»։ Էյուպ օղլի Նատրը, Վերանշեհերլի Միրզան անձամբ այս պատմությունը ըրած են պարսիկ Մեշետի Հաճի Իպրահիմին։

2. Ուղտապան պարսիկ Քերպելա Ալի Մեմետը պատմեց հետևյալն.

«Ես ռազմամթերք կը փոխադրեի Երզնկայեն Կարին։ Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա Խոթուրի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերուս։ Անթիվ-անհամար մարդու դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջեն անդին կը վազեր։ Սոսկալի էր տեսնիլը, երկար սպասեցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քշվեցան և կարողացա կամուրջեն անցնիլ։ Սակայն կամուրջեն մինչև ճինիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով. ծերեր, կիներ, երեխաներ արդեն հոտած, նեխված և ուռած։ Այնպիսի մեծ գարշահոտություն կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհնար էր։ Իմ երկու ուղտապաններս արդեն հոտեն հիվանդանալով՝ մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել։ Անլուր և զարհուրելի ոճրագործության զոհեր և հետքեր էին ասոնք։ Իսկ բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին։

3. Ալաֆտար Իպրահիմ էֆենտին պատմեց հետևյալն.

«Հայերուն տեղահանելու մասին Պոլսեն եկած հրամանն շատ խիստ և ստիպողական էր այս մտքով. անխնա կոտորել բոլոր այր մարդկանց՝ 14-են մինչև 65 տարեկան, իսկ երեխաներուն, ծերերուն և կիներուն չդիպչել, այլ աշխատիլ խլամացնել»։

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 106, թ. 18, (շրջ.)։

171. ՄՈՒՇՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԱԿԱՆԱՏԵՍ ԳԵՐՄԱՆԱՑՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոկտեմբերի վերջին (1914), երբ Թուրքերի համար սկսվեց պատերազմը, Թուրք աստիճանավորներն սկսեցին խլել հայերից այն ամենը, ինչի կարիք Թուրքերն ունեին պատերազմ մղելու համար։ Նրանց ունեցվածքը, նրանց դրամները — ամեն ինչ պետականացվեց։ Հետագայում ամեն Թուրք կարող էր մտնել հայի խանութ և վերցնել այն, ինչի կարիք ուներ կամ ինչ որ ուզում էր ունենալ։ Ամենայն հավանականությամբ, իրականում այս ամենի միայն մեկ տասներորդ մասն էր պետք պատերազմ մղելու համար, մնացածը պարզապես կողոպուտ էր։ Հարկ եղավ ռազմաճակատի՝ կովկասյան սահմանի մոտ, մթերք և այլն հասցնել։ Այս նպատակի համար կառավարությունը երեքշաբաթյա ճամփորդության՝ Մուշից ռեպի ռուսական սահմանը, մոտ 300 հայ ծերունիների էր ուղարկել, որոնց մեջ կային շատ հաշմանդամներ, ինչպես և երեխաների՝ տասներկու տարեկանից ոչ մեծ։ Քանի որ հայերից կողոպտել էին այն ամենը, ինչ նրանք երբևէ ունեցել էին, ապա այդ խեղճ մարդիկ ճանապարհին մեռնում էին քաղցից ու ցրտից։ Հագուստ բոլորովին չունեին, ճանապարհին խլել էին բոլորը։ Եթե այդ երեք հարյուր հայերից 30 կամ 40 հոգի վերադարձել էին, ապա դա հրաշք էր համարվում։ Մնացածները կամ ծեծվել էին մահու չափ, կամ մեռել վերևում նշված պատճառներով։

Ցմեռը Մուշում շատ ցուրտ էր։ Բարձր հարկերը գանձելու համար ժանդարմներ էին ուղարկվում, բայց քանի որ հայերը Թուրքերին տվել էին այն ամենը, ինչ ունեին, ապա ի վիճակի չէին վճարելու այդ ահռելի հարկերը, իսկ դրա համար նրանց ծեծում էին մահու չափ։ Հայերը երբեք չէին դիմում ինքնապաշտպանության, բացի այն դեպքերից, երբ ժանդարմները վատ էին վարվում նրանց կանանց ու երեխաների հետ։ Եվ ամբողջ գյուղեր էին հրի ճարակ դարձնում միայն նրա համար, որ մի քանի հայեր փորձել էին պաշտպանել իրենց ընտանիքները։

Մոտավորապես ապրիլի կեսերին մեզ լուր հասավ Վանում տեղի ունեցած մեծ անկարգությունների մասին։ Մենք այդ մասին լսել էինք ինչպես Թուրքերի, այնպես էլ հայերի պատմածներից, և քանի որ այդ պատմածները բոլոր առումներով համ-

ընկնում էին, ապա պարզ էր, որ դրանցում բավականին ճըշմարտություն կար։ Պատմում էին, թե Օսմանյան կայսրության կառավարությունը հրաման է հանել, որ բոլոր հայերը զենքերը հանձնեն, բայց հայերը հրաժարվել են, հայտարարելով, թե զենքն իրենց կարող է պետք լինել անհրաժեշտության դեպքում։ Դա առիթ էր ծառայել իսկական կոտորածի համար։ Հրդեհել էին հայաբնակ բոլոր գյուղերը։ Թուրքերը պարծենում էին, թե իրենք հիմա գլուխներն ազատել են բոլոր հայերից։ Ես ինքս լսել եմ, թե ինչպես աստիճանավորները հրճվում էին այն մըտքից, որ հայերի վերջը տրված է։

Այսպես անցավ ամեռը։ Յուրաքանչյուր օրը այնպիսի ցնցող սարսափներ էր բերում, որ անհնար է նկարագրել։ Ապա մենք լսեցինք այն կոտորածի մասին, որն սկսվել էր Բիթլիսում։ Մուշում նույնպես ամեն ինչ նախապատրաստված էր կոտորածի համար, երբ ռուսները մտան Լիզ, որը ձիով մոտավորապես 14—16 ժամվա ճամփա հեռու է Մուշից։ Դա շեղեց Թուրքերի ուշադրությունը, և կոտորածը ժամանակավորապես հետաձգվեց։ Բայց հենց որ ռուսները թողեցին Լիզը, հայաբնակ բոլոր շրջանները ենթարկվեցին կողոպուտի և ամայացման։

Դա մայիսին էր։ Հունիսի սկզբին մենք իմացանք, որ Բիթլիսի ողջ հայ բնակչությունը ոչնչացված է։

Միևնույն ժամանակ մենք հաղորդագրություն ստացանք, որ ամերիկացի միսիոներ դ-ր Նապպը վիրավորվել է հայի տան մեջ և թուրքական կառավարության կողմից ուղարկվել է Դիարբեքիր, որտեղ իր հասնելու հենց առաջին գիշերը մահացել է։ Կառավարությունը փորձում էր նրա մահը բացատրել այն բանով, որ նա իբր չափից դուրս շատ է կերել։ Դրան, իհարկե, ոչ ոք չհավատաց։

Երբ Բիթլիսում կոտորվել էին բոլորը և այլևս ոչ ոք չէր մնացել, թուրքերի ուշադրությունը բևեռվեց Մուշի վրա։ Սպանություններ առաջ էլ էին կատարվում, բայց այն ժամանակ դրանք զանգվածային չէին։ Իսկ հիմա սկսեցին մարդկանց սպանել առանց որևէ պատճառի և նրանց մահու չափ ծեծում էին պարզապես հանուն բավականության։

Բուն Մուշում, այդ մեծ քաղաքում, 25 000 հայ կար։ Քաղաքի շուրջը կային 300 գյուղեր։ Այդ բոլոր տեղերում հիմա չես հանդիպի ոչ մի հայ տղամարդու, միայն որոշ տեղերում կանայք են հանդիպում։

Հուլիսի առաջին օրերին Կոստանդնուպոլսից խարբերդով ժամանեցին 20 հազար զինվորներ՝ լրիվ հանդերձավորված և 11 թնդանոթներով, որոնք շրջապատեցին Մուշը։ Իրականում Մուշը պաշարված էր դեռ հունիսի կեսերին։ Այդ ժամանակ մութեսարիֆը հրաման տվեց, որ թողնենք քաղաքը և մեկնենք խարբերդ։ Մենք աղերսեցինք նրան, որ թույլ տա մնանք, քանի որ մեր խնամքի տակ էին բոլոր որբերն ու հիվանդները, բայց նա անդրդվելի եղավ և սպառնաց, թե մեզ զորով կհեռացնի, եթե չենթարկվենք։ Սակայն քանի որ մենք մեզ վատ էինք զգում, մեզ թույլ տվին մնալ Մուշում։ Ես թույլտվություն ստացա որբանոցից ինձ հետ վերցնել հայերի, եթե մենք Մուշից հեռանալու լինենք, բայց երբ խնդրեցինք ապահովել նրանց անվտանգությունը, միակ պատասխանը եղավ. «Դուք կարող եք նրանց ձեզ հետ վերցնել, բայց ճանապարհին հայերի գլուխները գուցեև կտրեն, և կկտրեն»։

Հուլիսի 10-ին Մուշը մի քանի ժամ ռմբակոծման ենթարկվեց, այն պատրվակով, որ մի քանի հայեր իբր թե փորձել են փախչել։ Ես գնացի մութեսարիֆի մոտ և խնդրեցի խնայել մեր շենքերը, բայց նա պատասխանեց. «Ձեզ տեղն է, որ մնացիք, փոխանակ մեկնելու, ինչպես հրամայված էր։ Թնդանոթները նրա համար են այստեղ բերված, որ Մուշի վերջը տան։ Ապաստան փնտրեք թուրքերի՛ մոտ»։ Դա, իհարկե, անհնար էր, որովհետև մենք չէինք կարող հրաժարվել մեր պարտականություններից։ Հաջորդ օրը հրապարակվեց նոր հրաման հայերի արտաքսման մասին և երեքօրյա ժամկետ տրվեց մեկնման նախապատրաստության համար։ Նրանց հրամայված էր մեկնումից առաջ գրանցվել կառավարական շենքում։ Նրանց ընտանիքները կարող էին մնալ, բայց ունեցվածքն ու դրամները ենթակա էին բռնագրավման։ Հայերը չէին կարողանում մեկնել, քանի որ դրամ չունեին ճամփի համար, ուստի նրանք գերադասում էին մեռնել իրենց տներում, քան թե ընտանիքներից բաժանվելով՝ դանդաղ մահով մեռնել ճանապարհին։

Ինչպես արդեն ասվեց, հայերին տրված էր երեքօրյա ժամկետ, բայց երկու ժամ էլ չէր անցել, երբ զինվորներն սկսեցին ներխուժել տները, ձերբակալել բնակիչներին և բանտ ուղարկել։ Թնդանոթներն սկսեցին կրակել, և մարդիկ ըստ էության զրկվեցին կառավարական շենքում գրանցվելու հնարավորությունից։ Մենք թաքնվեցինք նկուղում, երկյուղելով, թե մեր ման-

լատունը կայրվի։ Անհնար էր հանգիստ լսել մեծերի ու մանուկների հոգեցունց աղաղակները, որոնք ողջ-ողջ այրվում էին իրենց տներում։ Զինվորները մեծագույն հաճույք էին զգում՝ լսելով դրանք։ Երբ փողոցում գտնվող մարդկանցից որևէ մեկը մեռած ընկնում էր թնդանոթային արկից, զինվորները միայն ծիծաղում էին դրա վրա։

Կենդանի մնացածներին ուղարկեցին Ուրֆա (հիվանդներից, կանանցից ու երեխաներից բացի, ոչ ոք կենդանի չէր մնացել)։ Ես գնացի մութեսարիֆի մոտ ու խնդրեցի նրան խնայել գոնե երեխաներին, բայց իզուր։ Նա պատասխանեց, որ հայերի երեխաները պետք է մեռնեն իրենց ազգի հետ միասին։ Մեր բոլոր մարդկանց հավաքել էին հիվանդանոցից ու որբանոցից։ Այնտեղ թողել էին երեք կնոջ՝ սպասուհիներից։ Այդ սարսափելի պայմաններում Մուշը վառվել մոխրացել էր մինչև վերջ։ Յուրաքանչյուր սպա պարծենում էր իր սպանած անձանց թվով՝ դա համարելով իր ներդրումը Թուրքիան հայ ազգից ազատելու գործում։

Մենք մեկնեցինք Խարբերդ, որը դարձել էր հայերի գերեզմանոցը. բոլոր կողմերից նրանց բերում էին այստեղ թաղելու։ Նրանք ընկած էին այստեղ, իսկ շներն ու անգղները խժռում էին նրանց դիակները։ Խարբերդում ու Մեզրեում մարդկանց վիճակվել է սարսափելի խոշտանգումներ կրել։ Նրանց հոնքերն են փետել, կրծքերն են կտրել, եղունգները հանել, դահիճները ջտրել են նրանց ոտնաթաթերը, կամ մեխ են խփել ներբաններին, ինչպես անում են ձիերին պայտելիս։ Այս ամենը կատարվում էր գիշերը, որպեսզի մարդիկ չկարողանային լսել նրանց ճիչերը և տեսնել նրանց հոգեվարքը։ Զինվորները դասավորվելով բանտի շուրջը՝ թմբուկներ էին խփում և շվացնում։ Անհրաժեշտություն չկա խոսելու այն մասին, որ շատերը մեռան հենց այս կտտանքներից։ Զինվորները մեռնողներին բղավելով ասում էին. «Թող հիմա ձեր աստվածը ձեզ օգնի՞»։

Մի ծեր քահանայի դաժան կտտանքի էին ենթարկել, որպեսզի խոստովանեցնեին։ Նա հուսահատ բղավել էր. «Մենք հեղափոխականնե՞ր ենք», հուսալով, թե այդ խոստովանությունից հետո կտտանքները կդադարեցնեն և իրեն հանգիստ կթողնեն։ Բայց այդ ժամանակ զինվորներն սկսել են գոռալ. «Ա՜յ թե ինչ էինք ուզում լսել։ Մենք դա լսեցինք նրա՛ իսկ բերանից»։ Դրանից հետո նրանք դադարել են զոհեր ընտրելուց, ինչպես մինչ այդ անում էին, և խոշտանգել են բոլոր հայերին անխտիր։

Հունիսի սկզբին 2000 զինվոր հայեր հրաման ստացան գնալ Հալեպ՝ ճանապարհաշինության համար։ Լսելով այդ՝ Խարբերդի բնակչությանը սարսափը պատեց, և քաղաքում խուճապ սկսվեց։ Վալին մարդ ուղարկեց գերմանացի միսիոներ պ. Էխեմանի հետևից և խնդրեց, որ գնա հանգստացնի մարդկանց, համոզի, թե այդ զինվորներին ոչ մի վտանգ չի սպառնում։ Պ. Էխեմանը հավատաց վալիի խոսքերին և ժողովրդին հանգստացրեց։ Բայց նրանց մեկնումից շատ չանցած՝ հայտնի դարձավ, որ նրանց բոլորին սպանել են ու նետել անդունդը։ Միայն մի քանիսին էր հաջողվել փախչել, և մենք այս իրադարձության մասին նրանցից իմացանք։ Անօգուտ բան էր բողոքով դիմել վալիին։ Խարբերդի ամերիկյան հյուպատոսը մի քանի անգամ բողոքով դիմել էր նրան, բայց վալին բանի տեղ չէր դրել և նրան սպառնացել էր ամենավիրավորական խոսքերով։ Մի քանի օր անց 2000 ուրիշ հայ զինվորների են ուղարկել Դիարբեքիր։ Որպեսզի նրանք ուժ չունենային ճանապարհին փախչելու, նրանց սովի էին մատնել...

Հայ բողոքականներին ու կաթոլիկներին աքսորից ազատելու մասին կարգադրությունը եկավ լոկ այն բանից հետո, երբ նրանք արդեն աքսորված էին։ Կառավարությունն ուզում էր ողջ մնացած փոքրաթիվ հայերին ստիպել, որ մահմեդական հավատ ընդունեին։ Մի քանիսն ընդունեցին, որպեսզի իրենց կանանց ու երեխաներին փրկեին այն սարսափելի տառապանքներից, որոնց վկաներն էին իրենք եղել։ Մարդիկ մեզ աղերսում էին գնալ Կոստանդնուպոլիս և որևէ չափով անվտանգություն ապահովել իրենց համար։ Կոստանդնուպոլիս գնալու ճանապարհին մենք հանդիպում էինք միայն պառավ կանանց։ Չէր երևում ոչ մի երիտասարդ կին կամ աղջիկ։

1914 թ. նոյեմբերին արդեն մենք իմացանք կոտորածի նախապատրաստության մասին։ Մուշի մութեսարիֆը, որն էնվեր փաշայի անձնական բարեկամն էր, միանգամայն բացահայտորեն հայտարարեց, որ թուրքերը կձեռնարկեն հայերի կոտորածը առաջին իսկ հարմար պահին և որ իրենք կոչնչացնեն այդ ամբողջ ազգին։ Նրանք մտադիր էին նախ կոտորել հայերին և ապա նոր կռվել ռուսների դեմ։ Մոտավորապես ապրիլի սկզբին էքրան բեյը մայոր Լանգեի և մի քանի այլ բարձրաս-

տիճան պաշտոնյաների ներկայությամբ, ներառյալ նաև ամերիկյան ու գերմանական հյուպատոսները, միանգամայն բացահայտորեն հայտարարեց, որ կառավարությունը մտադիր է ոչնչացնել հայ ազգին։ Այս բոլոր մանրամասնությունները ցույց են տալիս, որ հայերի կոտորածը պատրաստվել է կանխամտածված կերպով։

Մի քանի գյուղերում խեղճ կանայք, թույլ ու անպաշտպան, դալիս էին մեզ մոտ՝ ողորմություն ու պաշտպանություն աղերսելու։ Մեզ արգելված էր նրանց որևէ բան տալ և կամ նրանց մեզ հետ վերցնել. փաստորեն մեզ արգելված էր որևէ բան անել նրանց համար, և նրանք մեռնում էին մեր աչքի առաջ[29]...

The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915—1916. London, 1916, p. 88—91.

172. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1915 թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 20-ը ես ճամփորդեցի Մարաշում...

Օգոստոսի 6-ին Ֆինդիջախ հայկական գյուղը, որը գտնվում է Մարաշի մոտերքում, ամբողջովին ավերվել է, և բոլոր բնակիչները (3000 հոգի) կոտորված են։ Վերջին երեք ամսում ջորեպանները մեծ թվով հայերի են քշել տարել դեպի Եփրատ։ Նրանք իրենց աչքով Եփրատի մեջ տեսել են դիակներ և վկա են եղել կանանց ու աղջիկների վաճառքի, ինչպես և նրանց նկատմամբ գործադրված բռնությունների։

Մարաշի ամերիկյան մի դպրոցում ես տեսել եմ ամենաանասելի կերպով խեղված (անձեռք, անոտք) հարյուրից ավելի կանանց ու երեխաների, և նրանց մեջ՝ 1—2 տարեկանների։

Օգոստոսի 14-ին 34 հայերի գնդակահարեցին Մարաշում, որոնց թվում և՝ 12 տարեկան երկու երեխայի։ Օգոստոսի 15-ին գնդակահարեցին 24, իսկ հետո կախեցին 14 հայերի։ Գնդակահարվածները ծանր շղթաներով վզներից կապված են եղել միմյանց հետ և փոսը նետվել։ Մուսուլմանական բնակչության ներկայությամբ նրանց մահապատժի են ենթարկել ամերիկյան քոլեջի հետևում։ Ես տեսա, թե բարբարոս բնակչությունը ինչպիսի խոշտանգումների էր ենթարկում դեռևս հոգեվարքի ցնցումների մեջ գտնվող մարմինները. ոտքից էին ձգում, ձեռքից, և, որպեսզի գվարճացնեին մուսուլման ամբոխին, ոստիկաններն ու ժանդարմները ատրճանակներով կրակում էին անկարագրելիորեն այլանդակված դիակների վրա։ Այնուհետև ամբոխը նետվեց դեպի գերմանական հիվանդանոցը՝ գոռալով. «Յա՜շասըն Ալմանիա» (Կեցցե՜ Գերմանիան)։ Մուսուլմաններն անվերջ կրկնում էին, թե հենց Գերմանիան է մեղավոր, որ իրենք այսպես են վարվում հայերի հետ։

Քաղաքից մեր ֆերման տանող ճանապարհին, տների մոտ, աղբակույտի վրա տեսել եմ մարդկային գլուխ, որը որպես թիրախ էր ծառայում թուրք երեխաների համար։ Նույնիսկ իմ՝ Մարաշ եղած ժամանակ քաղաքացիները ամեն օր սպանում էին հայերին, որոնց դիակները ամբողջ օրը ընկած էին մնում կեղտաջրի առուներում կամ ուր որ պատահեր։

Մարաշում Կադին փաշան ինձ ասել է. «Ինձ հայտնի է, որ իշխանությունների հրամանով, այն շրջանում, որտեղ տեղավորված է 4-րդ բանակային կորպուսը, ամբողջ արական բնակչությունը ոչնչացված է»։

1915 թ. օգոստոսի 20-ի երեկոյան ժամը 6-ին Մարաշի բնակչությանը հայտնի դարձավ, որ Ադանայի վալիի հրամանով, 15 տարեկանից բարձր ամբողջ արական բնակչությունը, այսինքն՝ ընդամենը 5600 հոգի, շաբաթ օրը, մինչև կեսօր, պետք է հավաքվի քաղաքի պարիսպներից դուրս, պատրաստ՝ մեկնելու համար։ Ով որ կեսօրից հետո մնա քաղաքում, առանց որևէ ձևականության՝ կսպանվի։ Բոլորը գիտեին, թե ինչ է նշանակում իշխանությունների հրամանը, և մեզ հարկ եղավ ապրել խումապի ահավոր ժամեր։ Վերջին վայրկյաններին, շնորհիվ Մարաշ քաղաքի հույժ մարդասեր նահանգապետի միջամտության, հրամանը փոխվեց, և տղամարդկանց թույլ տվեցին գնալ իրենց ընտանիքների հետ։ Օգոստոսի 28-ին վալին իր մոտ կանչեց հոգևորականությանը և հավաստիացրեց, թե հայերը չեն գաղթեցվի։ Դժբախտները հետո ստիպված եղան ճամփա ընկնել առանց նախապատրաստության։

Բյուվերեն գյուղում, Ալբիստանի մոտ, ամբողջ հայ բնակչությունը՝ 82 հոգի, սպանվել է։ Միայն 12 տարեկան մի տղայի, որն իրեն ջուրն էր գցել, հաջողվել է փրկվել։

Զեյթունի մոտի մի գյուղի բնակիչներին, որտեղ մոլեգնում էր ծաղկախտը, զոռով արտաքսել էին։ Ծաղկախտով հիվանդ-

ներին, մեծ մասամբ թարախաբշտիկներից կուրացած, տեղավորեցին Մարաշի իշխանատանը, որտեղ գտնվում էին ուրիշ շրջաններից աքսորված մարդիկ։

Մարաշում ես տեսա 200-հոգանոց մի շարասյուն։ Նրանք համարյա բոլորը կույր էին։ Վաթսունամյա մի կին, բռնած կաթվածահար դստեր ձեռքը՝ տանում էր։ Բոլորը ոտքով էին գնում։ Մեկ ժամ քայլելուց հետո, մի տղամարդ ընկավ Էրկենեսի կամրջի մոտ։ Նրան կողոպտեցին և սպանեցին։ 4 օր անց, նրա դիակը դեռ ընկած էր առվում։

Երեկ երեկոյան ես այցելեցի իմ ծանոթին։ Նրա մոտ հյուրընկալվել էր մի կին՝ երեխայի հետ, Սեբաստիայից աքսորված։ Միայն այդ երկուսն էին կենդանի մնացել քսանվեցհոգանոց ընտանիքից, որ Սեբաստիայից արտաքսվել էր երեք ամիս առաջ։ Նրանք այստեղ էին եկել բոլորովին վերջերս։

Այնթապում տեսա նահանգապետի արձակած հրամանը, որի համաձայն մուսուլմաններին արգելվում էր որևէ բան վաճառել քաղաքով անցնող աքսորական հայերին։ Նույն այդ նահանգապետը զանազան միջոցներ էր ձեռք առնում աքսորյալների շարասյուների վրա հարձակվելու համար։ Երկու շարասյուն ամբողջապես թալանվել էին։

2800 հայեր՝ Գյուրունից (Մարաշից 12 ժամվա ճամփա հեռու) աքսորված, Ինկուզեկ-դաղ կիրճում ամբողջովին թալանվել էին։ Այդ հարձակման ժամանակ մոտ 200 հոգի սպանվել էր, 70 հոգու՝ ծանր վիրավորների, թողել էին տեղում, իսկ հիսունից ավելի վիրավորների տարել շարասյան հետ։ Ես հանդիպեցի այդ 2500-հոգանոց քարավանին, որը մնացել էր Կարաբոյուքում։ Մարդիկ անասելի ողբալի վիճակում էին։ Կարաբոյուքից մեկ ժամվա ոտքի ճամփա հեռավորության վրա երկուսն ընկել էին ճանապարհին. նրանցից մեկը ստացել էր թրի երկու, մյուսը՝ յոթ հարված։ Մի քիչ այն կողմում ընկած էին երկու ուժասպառ կանայք, է՛լ ավելի հեռվում՝ չորսը. սրանց մեջ էր 17-ամյա մի աղջիկ՝ երկու օրական երեխայի հետ։ Վաթսունամյա մի տղամարդ ընկած էր ճանապարհին՝ երեսին խոր վերք...

Ուժասպառներին թողնում էին ճանապարհին, որի երկու կողմերում դիակներ էին երևում։ Երկուսուկես հազարանոց այդ քարավանում ես տեսա միայն 30—40 տղամարդ։ 15 տարեկանից վեր տղամարդկանց կանանցից առաջ էին քշել տարել և, հավանաբար, ոչնչացրել։ Այս դժբախտներին դիտավորյալ էին ուղարկում վտանգավոր ղարտուղի ճանապարհներով. փոխանակ Մարաշ հասնեին 4 օրում, նրանք ճանապարհին էին եղել մոտ մեկ ամիս։ Գնում էին առանց գրաստների, առանց անկողնու, առանց սննդի, օրական մեկ անգամ ստանալով հացի մի բարակիկ շերտ, որը չէր կարող կշտացնել նրանց։ Այս քարավանից 400 բողոքականներ հասան մինչև Հալեպ։ Յուրաքանչյուր օր մահանում էր 3—4 հոգի։

Այրան-Պունարում հարձակումը կատարվել է Ալբիստանի կայմակամի համաձայնությամբ... Այդ հարձակման ժամանակ մարդկանց կապել էին ծառերին և այրել։ Ականատեսն ինձ պատմում էր, թե ինչպես Այրան-Պունարի մերձակայքում երկու ինչ-որ տիպեր, եղբայրներ, վեճի էին բռնվել միմյանց հետ ավարը բաժանելիս։ Մեկը մյուսին ասել է. «Էս երեք կապոցն ստանալու համար ես 40 կին եմ սպանել»։

Հաջի անունով մի մուսուլման, որին երկար տարիներ ծանոթ էի Մարաշում, հետևյալը պատմեց. «Նիսիբինում ջորեպանների հետ ինձ էլ փակեցին քարվանսարայում։ Այդ գիշեր ջահել շատ կանանց բռնաբարեցին այդ քարավանն ուղեկցող ժանդարմներն ու քաղաքացիական ծառայողները...»

Խարբերդից ու Սեբաստիայից աքսորված 18 հազար հայերից մինչև Հալեպ հասել են 350 կին ու երեխա, իսկ Էրզրումից աքսորված 19-հազարից՝ ընդամենը 11 հոգի. մեկ հիվանդ երեխա, չորս աղջիկ և վեց կին։ Կանանց և աղջիկների քարավանը 65 ժամում ոտքով անցել է Ռաս ուլ-Այնից մինչև Հալեպ ձգվող երկաթգծի պաստառը, չնայած այն բանին, որ այդ ամբողջ ժամանակ զորքեր տեղափոխող գնացքները դատարկ էին վերադառնում։ Մուսուլման ճանապարհորդները, որոնք անցել են այս ճանապարհով, պատմում են, թե այդ ճանապարհը անանցանելի է բազմաթիվ դիակների պատճառով, որոնք այդտեղ ընկած են և իրենց գարշահոտությամբ թունավորում են օդը։ Հալեպում մնացած աքսորականներից 100—200 հոգին մեռան ծանր ճանապարհից հետո։ Երբ կանայք ու երեխաները, որոնք սովից նիհարել էին այն աստիճան, որ սկսել էին կմախքի նմանվել, գալիս էին Հալեպ, նետվում էին ուտելիքի վրա, ինչպես գազաններ։ Բայց նրանցից շատերի ներքին օրգանների ֆունկցիաները խախտված էին. մեկ-երկու պատառ կուլ տալուց հետո, նրանք գդալը մի կողմ էին նետում...

Իշխանության մարմինները ոչ միայն չեն հոգում այդ դժ-

բախտ մարդկանց մասին, այլև թույլատրում են խլել նրանցից այն, ինչ որ մնացել է նրանց մոտ։ Ռաս ուլ-Այն եկավ աքսորական հայերի մի քարավան՝ բաղկացած 200 կանանցից ու աղջիկներից, բոլորովին մերկ վիճակում. նրանցից խլել էին ամեն ինչ, ընդհուպ մինչև կոշիկներն ու շապիկը, և չորս օր շարունակ նրանք քայլել էին մերկ՝ արևի կիզիչ ճառագայթների տակ (ստվերում 40°), ենթարկվելով ուղեկցող զինվորների ծաղր ու ծանակին։ Մ-ն ասում էր, թե ինքը տեսել է աքսորականների մի քարավան՝ բաղկացած 400 կանանցից ու երեխաներից, հենց ճիշտ այդ վիճակում։ Երբ դժբախտները աստիճանավորներից գութ էին հայցում, նրանց պատասխանում էին. «Մեզ կտրականապես հրամայված է հենց այսպես վարվել ձեզ հետ»։

Սկզբում Հալեպում հանգուցյալներին գերեզմանոց տանում էին հայոց եկեղեցու միջոցներով շինված դագաղներով։ Այս պարտականությունը կատարող բեռնակիրները ամեն հանգուցյալի համար երկու ղուռուշ էին ստանում։ Երբ արդեն նրանց ուժերից վեր դարձավ այդ գործն անել, կանայք սկսեցին իրենք իրենց հանգուցյալներին կրել տանել գերեզմանոց. փոքր երեխաներին՝ ձեռքերի վրա, ավելի մեծերին՝ պարկի մեջ մտցրած, որը տանում էին չորս կանայք՝ ամեն մեկը մի անկյունից բռնած։ Ես տեսել եմ հանգուցյալների, որոնց գերեզմանոց էին տանում էշի վրա գցած։ Իմ ծանոթներից մեկը տեսել է մի դիակ՝ ձողին կապված, որը տանելիս են եղել երկու տղամարդ։ Մի ուրիշ ծանոթ տեսել է մի եզան սայլ՝ լեցուն հանգուցյալներով, որոնց տանում էին գերեզմանոց։ Երկանիվ սայլը չէր կարողանում անցնել գերեզմանոցի նեղ դռնով։ Սայլապանը իր սայլը շուռ տվեց և դատարկեց։ Հետո հանգուցյալներին ոտքից կամ ձեռքից բռնած՝ քարշ տալով տանում էր դեպի փոսը։ Երբեմն հինգ-վեց սայլ հազիվ էին հասցնում դիակները կրել տանել գերեզմանոց։ Մի անգամ, կիրակի օրը, ես 30 դիակ տեսա քարվանսարայի փոքրիկ բակում, որը 20 մ լայնություն և 40 մ երկարություն ուներ, իսկ այդ օրն արդեն թաղել էին մոտ 20 դիակ։ Այդ 30 դիակներն այնտեղ մնացել էին մինչև երեկո։ Իմ կինը կարգադրեց թաղել դրանք՝ երեք բեռնակիրներից ամեն մեկին տալով մեկական մեջիդիե (մոտ 4 ֆրանկ և 4 սանտիմ)։ Դիակներն այնպես սաստիկ քայքայվել էին, որ դրանցից մեկի մաշկը լխկվել կպել էր բեռնակրի ձեռքին։ Հանգուցյալների միջև, կիզիչ արևի տակ, պառկած էին նաև մեռնողները. նրանք մոտ

1000 հոգի էին։ Դա սահմռկեցուցիչ մի տեսարան էր, որի նմանը ես չէի տեսել մինչ այդ, նույնիսկ ամռանը՝ Մարաշում, որտեղ ինձ վիճակվեց ականատեսը լինել 24 հայերի մահապատժի... Մեռածին տանում էին, և նրա տեղն իսկույն բռնում էր մեկ ուրիշը։ Պատահում էր, որ հանգուցյալների հետ գերեզմանոց էին տանում դեռևս կյանքի նշաններ ցույց տվող մարդկանց։ Այդպիսիներին մի կողմ էին դնում, մինչև համոզվում էին, որ մահն իր գործն արդեն արել պրծել է։ Մի աղջիկ շատ շուտով ուշքի էր եկել, և նրան նորից հետ էին տարել քաղաք, իսկ տղամարդը, որին նախորդ օրն էին թաղել, վաղ առավոտյան կենդանի նստած է եղել իր գերեզմանի մեջ։ Թել-Աբիադում Մ-ն տեսել է բաց փոսեր՝ 20—30 դիակներով։ Երբ փոսերը լցվում էին, դրանք ծածկում էին ընդամենը մի քանի բահ հողով։ Մ-ն ինձ ասում էր, թե քայքայված դիակների հոտն այնտեղ այնքան ուժեղ է, որ անհնար է մոտերքում մնալ, իսկ աքսորականները պետք է հենց այդտեղ տեղավորվեին։ Մեկ տենյակում տեղավորված 35 որբերից 30-ը, ամեն մի խնամքից զուրկ լինելով՝ վախճանվեցին մեկ շաբաթվա ընթացքում։ Մ-ն պատմում էր, որ իր ուղևորությունից վերադառնալիս՝ ամբողջ ճանապարհի երկարությամբ դիակներ է տեսել։

1915 թ. օգոստոսի 12-ին, կիրակի օրը, ես գործով եղա Հալեպի Դամասկոսյան կայարանում, և ինձ վիճակվեց տեսնել, թե ինչպես հազարավոր կանանց ու երեխաների անասնատար վագոններն էին լցնում տեղափոխելու համար...

1915 թ. սեպտեմբերի 13-ին հայտնի դարձավ 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի հետևյալ բովանդակությամբ ճեպագիրը. «Աքսորված հայերի շարասյուներին վերաբերող բոլոր լուսանկարները, որոնք արվել են Բաղդադի երկաթգիծը կառուցող ընկերության ինժեներների և այլ ծառայողների կողմից, պետք է 48 ժամվա ընթացքում հանձնվեն Հալեպում Բաղդադի երկաթգծի զինվորական կոմիսարիատին։ Այս հրամանը չկատարողները պատասխան կտան զինվորական տրիբունալի առաջ»[30]։

Ես երբեմն տեսնում էի աղբանոցներում ուտելիքի մնացորդներ փնտրող կանանց ու երեխաների, որոնք այնտեղից գտածն անհապաղ խժռում էին։ Ես տեսել եմ երեխաների, որոնք ասկեր էին կրծում...

Մարաշի և Այնթապի միջև մուսուլմանական մի գյուղի բնա-

կիլներն ուզում էին հաց ու ջուր տալ աքսորականների քարավանին, որը բաղկացած էր 100 ընտանիքից, բայց քարավանին ուղեկցող զինվորները ընդդիմացան դրան...

Մ. Լ-ն, որը մեկ ամիս առաջ իմ ներկայությամբ խոսում էր այդ «անպետք հայերի» մասին, բառացիորեն ասաց հետևյալը. «Ես չեմ պատկանում այն մարդկանց թվին, որոնց կարելի է հեշտությամբ հուզել, բայց այն բանից հետո, ինչ տեսա Ռասուլ-Այնում, չեմ կարող արցունքներս զսպել։ Ես կարծում էի, թե մեր ժամանակներում չեն կարող տեղի ունենալ նման գազանություններ, նման բռնություններ, որոնք խայտառակում են ամբողջ մարդկությանը...»

Այն ժամանակ, երբ ես գրում եմ այս տողերը, կինս, որ քաղաք էր գնացել զբոսնելու, վերադարձավ՝ դեմքն ամբողջովին արցունքով ողողված և պատմեց, թե հանդիպել է աքսորյալ հայերի մի քարավանի՝ 800 հոգուց ավելի, ոտաբոբիկ, ցնցոտիներով, հազիվհազ շարժվող, շալակներին՝ փոքր երեխաներ և այն չնչին բաները, որոնք մնացել են իրենց իրերից։

Բեսնից տեղահանված էր ամբողջ բնակչությունը (1800 հոգի), մեծ մասամբ կանայք ու երեխաներ։ Նրանք իբր թե պետք է վերաբնակվեին Ուրֆայում։ Եփրատի վտակ Գյոքսուի մոտ նրանց ստիպել էին հանվել։ Ապա բոլորին սպանել էին, իսկ դիակները նետել գետը։ Դեռ վերջերս կարելի էր տեսնել, թե ինչպես են Եփրատն ի վար լողում դիակները. մի օր՝ 170, մի ուրիշ անգամ 50—60 դիակ տեսանք։ Իր ճամփորդություններից մեկի ժամանակ ինժեներ Ա-ն նկատել էր 40 դիակ։ Շները խժռում էին ափին դեմ առած դիակները։ Գետի մեջ, ավազի ծանծաղուտներում, դրանք կեր էին դառնում անգղներին։

Այն 800 հայերը, որոնց մասին հիշատակեցինք վերևում, գալիս էին Մարաշի մերձակայքից։ Նրանց ասել էին, թե իրենք գաղթեցվում են Այնթապ և որ պետք է երկու օրվա պաշար վերցնեն։ Երբ նրանք մոտեցել են Այնթապին, նրանց ասել են. «Մենք սխալվել ենք, պետք է Նիսիբին գնալ»։ Իշխանության մարմինները նրանց համար պարենի պաշար տեսած չեն եղել և նրանց զրկել են մթերք գնելու հնարավորությունից։ Նիսիբինում նրանց ասել են. «Մենք դարձյալ սխալվել ենք, պետք է գնալ Մամբիջ», իսկ այնտեղ նորից. «Սխալ է տեղի ունեցել, պետք է գնանք Բաբ» և այլն։ Այսպես նրանք թափառել են 17 օր՝ իրենց ուղեկցող զինվորների կամայականությանը հանձնված։ Այս ընթացքում նրանք իշխանություններից չեն ստացել ոչ մի մթերք և հացով են փոխել այն քիչ-միչ բաները, որ ունեցել են հետները։ Մի կնոջից զոռով խլել էին ավագ դստերը, հուսահատված՝ նա իր մյուս երկու երեխաների հետ նետվել է Եփրատը...

Բիրեջիկում բանտերը ցերեկը լցվում են, իսկ գիշերը դատարկվում։ 3000 բնակիչ ունեցող Թել-Արմեն գյուղը հանկարծակի հարձակման ենթարկվեց. բնակիչներին մորթեցին, ողջերին մեռածների հետ նետեցին ջրհորները, իսկ մյուս գյուղերում՝ այրեցին։ Մայոր ֆոն Միկուշը վկա է եղել այդ բնաջնջմանը։ Գերմանական հեծելավաշտի մի հրամանատար Դիարբեքիրի և Ուրֆայի արանքում ճանապարհի երկու կողմերում տեսել էր կոկորդները կտրված մարդկանց դիակներ։ Մ. Ս-ն նույնպես ճանապարհին տեսել էր բազմաթիվ երեխաների դիակներ։

1915 թ. հոկտեմբերի 5-ին Մ-ն վերադարձավ Նուս-Թելից և պատմեց հետևյալը.

«Թել-Աբիադի և Քուլթեփեի միջև ճանապարհի կողքին վեց տարբեր տեղերում տեսա մեռած մերկ կանանց, մի քիչ այն կողմում՝ մեռած մերկ մի կնոջ՝ այլանդակված ոտքերով, մի այլ կնոջ տեսա՝ հագուստով, նրանից այն կողմ՝ երկու մեռած երեխայի, էլ ավելի հեռվում՝ մեռած մի աղջկա, մի քիչ տարիքով, կողքին մեռած երեխայի և, վերջապես, մեռած մի կնոջ՝ խցոցը բերանին,— ընդամենը 18 դիակ։ Կանայք, մեկից բացի, բոլորովին մերկ էին և նրանցից շատերը, դատելով նրանց դեմքերի արտահայտությունից, բռնության զոհեր էին եղել։ Բոլոր մեռած երեխաները հագուստով էին»։

Քուլթեփեի և Խարաբ-Նասի միջև Մ-ն հեռախոսասյան մոտ տեսել էր մեռնող մի երեխայի, նրանից այն կողմում՝ բոլորովին մերկ վեց կանանց ու երեխաների դիակներ։

Թել-Աբիադում, աքսորյալների քարավանի ճանապարհվելուց հետո, ճանապարհի մոտ մնացին 17 մեռած ու մեռնող մարդիկ։ Հետագայում երկաթգծի ծառայողները կարգադրեցին թաղել այդ 17 դիակները։ Արդեն շատ օրեր շարունակ այս շրջանն են բերում աքսորական հայերի քարավանները։

Մ-ի հայտարարությունը համընկնում է այն ամենին, ինչ ինձ ասում էր տեղահանման գծով հանձնախմբի նախագահը, երբ ես նրան խնդրագիր տվեցի 4 հայ երեխաների վերաբերյալ։

«Դուք չեք հասկանում, թե մենք ինչ նպատակ ենք դնում մեր առաջ։ Մենք ուզում ենք «հայ» անունն իսկ ոչնչացնել։ Ինչպես որ գերմանացիները չեն ուզում, որ գոյություն ունենա ուրիշ որևէ մեկը, գերմանացիներից բացի, այդպես էլ մենք՝ թուրքերս, ուզում ենք, որ լինեն միայն թուրքեր»[31]։

Quelques documents sur le sort des Arméniens en 1915, Fascicule III, Genève, 1916, p. 162.

178. ՀԱԼԵՊԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԴՈԿՏՈՐ ՄԱՐՏԻՆ ՆԻՊԱԳԵԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԻՑ

1915 թ. սեպտեմբերին, երեքամսյա արձակուրդից հետո, Բեյրութից Հալեպ վերադառնալով, ես սարսափով իմացա, որ սկսվել է հայերի կոտորածների մի նոր ժամանակաշրջան, շատ ավելի ահավոր, քան Աբդուլ Համիդի օրոք էր եղել, որը նպատակ ուներ ամբողջովին ոչնչացնել հայ ժողովրդին՝ խելացի, աշխատասեր, առաջադիմության ծարավի այդ ժողովրդին։

Սկզբում հրաժարվում էի հավատալ դրան։ Ինձ պատմեցին, որ Հալեպի տարբեր մասերում հանդիպում են սովալլուկ և ուժասպառ մարդկանց բազմություններ՝ խղճուկ մնացորդները նրանց, ովքեր հայտնի էին որպես «տեղահանվածների քարավաններ»։ Որպեսզի թաքցնեին հայոց ազգի ոչնչացումը քաղաքականության դիմակի տակ, տկսեցին պնդել, որ, իբր, ռազմական նկատառումներն են իրենց ստիպել արտաքսելու հայերին նրանց հարազատ վայրերից, որտեղ նրանք ապրել են 2500 տարի, և ուղարկել Արաբական անապատ։ Այդ միջոցառումներն արդարացվում էին նաև նրանով, որ որոշ հայեր մեղադրվում էին լրտեսության մեջ։

Ես տեղեկություններ հավաքեցի այդ փաստերի վերաբերյալ և բազմակողմանի ինֆորմացիա ստանալով՝ եկա այն եզրակացության, որ հայերի դեմ առաջ քաշված մեղադրանքները վերաբերում են սակավանշանակ առանձին դեպքերի, որոնք սոսկ առիթ են ծառայում մեկ մեղավորի պատճառով տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց ոչնչացնելու համար, կանանց ու երեխաների դեմ դաժանագույն գործողություններ կատարելու և աքսորյալներին սովի դատապարտելու համար՝ նրանց համատարած ոչնչացման նպատակով։

Որպեսզի ամրապնդեի ստացված տեղեկությունների հիման վրա կազմված իմ կարծիքը, ես այցելեցի քաղաքի բոլոր շրջանները, որտեղ գտնվում էին նրանք, ովքեր դեռ մնացել են աքսորված հայերից։ Փլփլվող քարվանսարաներում ես հայանաբերեցի քայքայված դիակների կույտեր և դրանց միջև՝ դեռևս կենդանի էակներ, որոնք հոգեվարքի մեջ էին։ Այլ տեղերում դուս սոված ու հիվանդ մարդկանց զանգվածներ, որոնց վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում։ Մեր դպրոցի շուրջը կային չորս այդպիսի քարվանսարաներ, որտեղ օթևանել էին 700—800 սովյալներ։ Դասատուները և աշակերտները՝ մենք բոլորս ամեն օր ստիպված էինք անցնել այդ քարվանսարաների կողքով։ Դրանց բաց լուսամուտներից երևում էին ցնցոտիավոր, խղճալի, հյուծված արարածներ։ Մեր դպրոցի երեխաներն ամեն օր անցնում դառնում էին երկանիվ եզան սայլերից ուափանված արահետների երկայնքով, սայլեր, որոնք կրում տանում էին իրենց բեռները՝ 8—10 փայտացած դիակներ, առանց դագաղների կամ որևէ ծածկոցի, կախ ընկած ձեռքերով ու ոտքերով։

Մի քանի օրվա ընթացքում ականատես լինելով նման տեսարանների՝ ես իմ պարտքը համարեցի գրել ներքոհիշյալ զեկուցագիրը.

«Մեր՝ Հալեպի գերմանական ռեալական դպրոցի դասատուներիս դրությունը մեզ պարտավորեցնում է հաղորդել հետևյալ տեղեկությունները.

Մենք մեր պարտքն ենք համարում հայտարարել, որ մեր դպրոցի աշխատանքը կզրկվի ամեն մի բարոյական հիմքից և չի կարողանա այս քաղաքի բնակիչների հարգանքը հարուցել, եթե գերմանական կառավարությունը հնարավորություն չորոնի վերջ տալու այն դաժանություններին, որ կրում են սպանված հայերի կանայք ու երեխաները։ Աքսորյալների քարավանները, եթե Հայաստանից մեկնելիս երեք-չորս հազար էին լինում՝ տղամարդ, կին ու երեխա, ապա հարավ հասնելիս՝ կրճատվում հասնում էին 200—300-ի։ Տղամարդիկ սպանվել են ճանապարհին, կանայք և երիտասարդ աղջիկները (բացառությամբ տարեց կամ տգեղ կանանց և փոքրահասակ երեխաների) առևանգվել են թուրք զինվորների և սպաների կողմից կամ անհետացել թուրքական կամ քրդական գյուղերում, որտեղ նրանց ստիպել են ընդունել իսլամ։ Մնացածներին հնձել են սովն ու ծարավը։ Նույնիսկ գետերի մոտով անցնելիս՝ նրանց թույլ չի տրվել ջուր

խմել։ Այս մարդկանց միակ սնունդը մի բուռ ալյուրն է, որ լցնում են նրանց ափի մեջ, և նրանք տեղնուտեղը կուլ են տալիս միայն այն բանի համար, որպեսզի հետաձգեն իրենց մահը։

Մեր դպրոցի դիմաց, քարվանսարաներից մեկում, գտնվում են աքսորյալների այդ քարավաններից մեկի մնացորդները՝ մոտ չորս հարյուր տանջահար էակներ, որոնց մեջ կա 5—7 տարեկան հասակի հարյուր երեխա։ Նրանց մեծ մասը տիֆով կամ դիզենտերիայով հիվանդ է։ Երբ մտնում ես բակը, քեզ թվում է, թե դա գժանոց է։ Երբ նրանց ուտելիք են բերում, ապա երևում է, որ նրանք մոռացել են ուտելը։ Նրանց ստամոքսը, բազմամյա քաղցից փոքրացած, այլևս սնունդ չի ընդունում։ Երբ նրանց հաց են տալիս, նրանք անտարբերությամբ մի կողմ են նետում։ Նրանք հանգիստ սպասում են իրենց մահվանը։

Ինչպե՞ս կարող ենք մենք՝ ուսուցիչներս, մեր աշակերտների համար կարդալ գերմանական հեքիաթներ, սովորեցնել Աստվածաշնչի բարի սամարացու պատմությունը, հոլովումներ ու խոնարհումներ անցնել, եթե նրանց կողքին իրենց հայրենակիցները մեռնում են քաղցից։ Մեր աշխատանքը վիրավորանք է բարոյականության հանդեպ, մարդկային բոլոր զգացմունքների ժխտում։ Ի՞նչ պիտի լինի այդ դժբախտների՝ կանանց ու երեխաների վերջը, որոնց հազարներով քաղաքի միջով ու մերձակայքով քշում են դեպի անապատ։ Նրանց մի տեղից մյուսն են քշում այնքան ժամանակ, մինչև որ հազարներից հարյուրներն են մնում, հարյուրները վերածվում են փոքրիկ խմբերի, իսկ վերջիններիս շարունակ հալածում են, մինչև որ անհետանան ամբողջովին։ Դե, ուրիշ էլ ի՞նչ է պետք։ Ճանապարհորդությունն իր նպատակին հասել է, ահա՛ «նոր բնակավայրեր, որոնք նախատեսված են հայերի համար»,— այսպես են արտահայտվում թերթերը։

«Թաալիմ էլ արման» («սա գերմանացիների խրատն է»),— ասում է հասարակ թուրքը նրանց, ովքեր ուզում են իմանալ, թե ով է այս ոճրագործությունների սադրիչը։ Առավել լուսավորյալ թուրքերը խոստովանում են, որ եթե նույնիսկ գերմանացի ժողովուրդը դատապարտում է դաժանությունները, ապա գերմանական կառավարությունը, իր դաշնակից թուրքերի հանդեպ ունեցած հարգանքից, ոչինչ չի ձեռնարկում, որպեսզի արգելք հանդիսանա դրանց։

Նույնիսկ մուսուլմանները՝ այն թուրքերն ու արաբները, որոնք իրենց խառնվածքով զգայուն են, գլուխներն օրորում են և ի վիճակի չեն լինում զսպել իրենց արցունքները, տեսնելով, թե ինչպես են քաղաքի միջով անցնում գնում թուրք զինվորների ուղեկցությամբ ուղեկցվող աքսորականների քարավանները, զինվորների, որոնք դաժանորեն ծեծում են հղի կանանց, մեռնողներին, նրանց, ովքեր էլ ուժ չունեն շարժվելու։ Թուրքերն իրենք էլ դեռ չեն համոզվել այն բանում, որ հենց կառավարությունն ինքն է կարգադրել անելու այս դաժանությունները, և ամբողջ պատասխանատվությունը դնում են գերմանացիների վրա, նրանց դիտելով որպես Թուրքիայի քաղաքականությունը պատերազմի ժամանակաշրջանում ղեկավարող մարդկանց։ Մզկիթներում մոլլաները ասում են, թե հայերի ոչնչացման հրամանը և նրանց հանդեպ դաժանություններ գործելը գալիս են ոչ թե Բ. Դռնից, այլ՝ գերմանացի սպաներից...

Շատ ավելի սարսափելի փաստեր, քան նրանք, որոնք մենք զարադրեցինք, կան Ալեքսանդրետի, Հալեպի և Մոսուլի գերմանական հյուպատոսարանների հաշվետվություններում, որոնք հանձնված են դեսպանությանը։ Հյուպատոսների կարծիքով, անցած ամիսների ընթացքում ոչնչացվել են մեկ միլիոն հայեր, որոնց կեսը եղել են կանայք ու երեխաներ, և սրանք բոլորը կամ սպանվել են, կամ սովից մեռել...

Այդ պարոններից մեկը [ի նկատի են առնվում Թալեաթը կամ Էնվերը] թղթակցին ասել է. «Իհարկե, մենք պատժում ենք նաև բազմաթիվ անմեղ մարդկանց։ Բայց չէ՞ որ պետք է պաշտպանվել նրանցից, ովքեր կարող էին մեղավորներ դառնալ»։

Այսպիսին են այն փաստարկները, որոնցով թուրք պետական գործիչները արդարացնում են կանանց ու երեխաների զանգվածային ոչնչացումը։

Մի գերմանացի կաթոլիկ հոգևորական պնդում է, որ Էնվեր փաշան Կոստանդնուպոլսում Հռոմի պապի պատվիրակին՝ մոնսենյոր Դոլչիին ասել է, թե ինքը կանգ չի առնի, քանի դեռ գեթ մեկ հայ կենդանի մնացած լինի։

Տեղահանության նպատակն է հայ ժողովրդի գլխովին ոչնչացումը։ Այդ մտադրությունը պարզորոշ երևում է այն փաստից, որ կառավարությունը սիստեմատիկաբար խոչընդոտում է այն միսիոներներին, գթության քույրերին և երկրում գտնվող

ցյուս եվրոպացիներին, որոնք փորձում են օգնություն ցույց տալ հայերին։ Շվեյցարացի մի ինժեներ ռազմական դատարանին է հանձնվել աքսորյալ հայերի քարավանի մեջ հաց բաշխելու համար...»[32]։

Quelques documents sur le sort des Arméniens en 1915. Fascicule III. Genève, 1916, p. 147—148, 157—161.

174. ՇՎԵՅՑԱՐԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿՈՉԸ

Ժնև, [սեպտեմբեր—հոկտեմբեր] 1915 թ.

Այն ժամանակ, երբ պատերազմը, կլանելով Եվրոպայի մեծ ժողովուրդների բոլոր ուժերը, իր վրա է սևեռում աշխարհի ուշադրությունը, Թուրքիան դարձել է գազանություններով ուղեկցվող իրադարձությունների թատերաբեմ, գազանություններ, որոնց առաջ խունանում են այժմ այլ տեղերում կատարվող կամ այդ երկրում նախկինում կատարված չարագործությունները։

Խոսքը վերաբերում է ամբողջ հայ ժողովրդի սիստեմատիկ ոչնչացմանը՝ թուրքական կայսրության մեջ բացառապես իսլամի տիրապետություն հաստատելու անսասան մտադրությամբ։

Հարյուր հազարավոր հայեր կոտորվել են կամ էլ զանգվածային արտաքսման ենթարկվել իրենց քաղաքներից ու գյուղերից։ Միջագետքի անապատը և այլ վայրեր տեղափոխված լինելով՝ նրանք կործանվում են կարիքի և աղքատության մեջ։ Շատ-շատերը, մանավանդ կանայք և երեխաները, ստիպված են մահմեդականություն ընդունել։ Այս փաստերը հաստատված են անաչառ ականատեսների ցուցմունքներով, ովքեր իրենց բնավորությամբ ու դրությամբ լիակատար վստահության են արժանի։

Մենք՝ ներքոստորագրյալներս, դիմելով շվեյցարական կառավարությանը դժբախտ հայ ժողովրդի մնացած մասին նյութական օգնություն ցույց տալու կոչով, ցանկանում ենք համայն աշխարհի ուշադրությունը հրավիրել այդ փաստերին և բոլոր երկրների հասարակական կարծիքին կոչ ենք անում համապատասխան միջոցներ ձեռք առնել, որպեսզի նրանք, ովքեր կարող

են ազդեցություն ունենալ Կոստանդնուպոլսի վրա, անհապաղ իրականացնեն ողջ մնացած հայերի պաշտպանությունը։

[Հարյուր ստորագրություններ]

АВПР, Политархив, д. 3492, л. 15.

175. ԱՐԵՎՄՏԱՀԱՑՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԳՈՂՈՍ ՆՈՒՐԱՐ ՓԱՇԱՅԻՆ

Նամակից **[հոկտեմբեր 1915 թ.]**

Հենց հիմա մենք նոր լուրեր ստացանք Թուրքիայի հայկական գավառներից։ Տեղեկությունները ներկայացրել են ականատեսները և զոհերն իրենք։ Մոտ մեկ միլիոն հայեր իրենց հայրենիքից աքսորվել են հարավ։ Աքսորումները, ապրիլից սկսած, սիստեմատիկաբար կատարվում էին տեղական իշխանությունների կողմից։ Ամեն ինչ սկսվեց բոլոր գյուղերի ու քաղաքների բնակչության զինաթափումից. այս նպատակով օգտագործվել են ժանդարմներն ու բանտերից արձակված հանցագործները։ Զինաթափման պատրվակով նրանք սպանություններ էին կատարում և մարդկանց հրեշավոր կոտանքների ենթարկում։ Ապա տեղի ունեցան հայերի զանգվածային ձերբակալություններ. սրանց համար պատրվակ ծառայեցին իբրև թե նրանց մոտից գտնված զենքերը կամ գրքերը։ Հարուստ կամ պատշաճ դիրք ունեցող մարդիկ հաճախակի պարզապես ձերբակալվում էին առանց որևէ պատրվակի։ Դրան հետևեց աքսորը։ Աքսորը հարկավոր էր գավառներից արտաքսելու համար այն հայերին, որոնք կա՛մ դեռ բանտ չէին ընկել, կա՛մ էլ հանցանշան չունենալու պատճառով կալանքից բաց էին թողնվել։ Հետագայում նրանք բոլորը սպանվել են։ Ոչ ոք մահից չի խուսափել։ Աքսորից առաջ նրանք իշխանությունների կողմից խուզարկության էին ենթարկվում, որի ընթացքում նրանցից խլում էին բոլոր դրամներն ու արժեքավոր իրերը։ Սովորաբար նրանց կապկրպում էին մեկական կամ խմբերով՝ 5—10 հոգով։ Մնացածներին՝ ծերունիներին, կանանց ու երեխաներին, բռնավորները համարում էին իրենց ավարը. սրանց տալիս էին մուսուլմաններին ի տնօրինություն։ Բարձրաստիճան պաշտոնյաներն ու հասարակ գյուղացիները կանանց կամ աղջիկների միջից ջոկում էին ըստ իրենց ճաշակի և իրենց կինը դարձնում բռնի մահմեդա-

կանացնելով։ Ինչ վերաբերում է փոքր երեխաներին, ապա սրանց մի մասին տվել են մուսուլմաններին, իսկ մնացածներին՝ սովալլուկ ու ապրուստի միջոցներից զուրկ, բաց են թողել՝ ուր ուզում են գնան. երեխաները սովի են դատապարտվել կամ զոհը դարձել ավազակախմբերի։ Դիարբեքիրի նահանգում նույնպես կոտորած է եղել, մասնավորապես Մարդինում, որտեղ բնակչությունը նույնպիսի սարսափներ է ապրել։

Էրզրումում, Բիթլիսում, Սեբաստիայում ու Դիարբեքիրում տեղական իշխանությունները արտոնություններ տրամադրեցին աքսորվողներին. նրանց 5—10 օր ժամանակ տվեցին և թույլատրեցին վաճառել իրենց ունեցվածքի մի մասը և սայլ վարձել՝ մեկ սայլ մի քանի ընտանիքի համար։ Բայց մի քանի օր անց, մարդիկ վերադառնում էին քաղաք՝ սայլերը ճանապարհին նետելով։ Քարավանները հաջորդ օրը, իսկ երբեմն էլ՝ մի քանի օր անց, հանդիպում էին ավազակների կամ մուսուլման գյուղացիների, որոնք թալանում էին նրանց մինչև վերջին թելը։ Ավազակները միանում էին ժանդարմներին և սպանում քարավանում եղած սակավաթիվ հասուն տղամարդկանց կամ պատանիներին։ Բռնավորներն առևանգում էին կանանց, աղջիկներին ու երեխաներին։ Պառավներին ժանդարմները քշում էին մտրակներով, նրանց թողնելով, որ սովից մեռնեն ճանապարհներին։ Ականատեսներից մեկը պատմում է, որ Էրզրումից աքսորված կանայք, որոնց բերել նետել էին Խարբերդի հարթավայրը, մի քանի օր անց, բոլորը գլխովին կոտորվեցին սովից (օրական մեռնում էր 50—60 հոգի)։ Իշխանությունները սահմանափակվում էին միայն զոհերի թաղման համար մարդիկ ուղարկելով, որպեսզի կանխվեր մուսուլմանական բնակչության առողջությանն սպառնացող վտանգը։ Մի փոքրիկ աղջիկ պատմում է, թե, երբ Մարզվանի, Ամասիայի ու Թոքատի բնակիչները հասան Սարըկիշլա (Սեբաստիայի և Կեսարիայի միջև), տեղական իշխանությունների աչքի առաջ երեխաներին խլեցին մայրերից, թաքցրին տարբեր շինություններում և միայն դրանից հետո քարավաններին ստիպեցին շարունակել ճանապարհը։ Այնուհետև հարևան գյուղերի բնակիչներին լուր տվեցին, թե՝ ամեն ոք կարող է գալ երեխաներ ջոկել տանել։ Այս աղջկան ու ընկերուհուն առևանգել տարել է մի թուրք սպա։ Յուրաքանչյուր քաղաքում և յուրաքանչյուր գյուղում տեղ հասած կանանց ու երեխաների քարավաններին

շարում էին նահանգապետի շենքի առաջ, որպեսզի մուսուլմանները կարողանային իրենց համար ընտրել որին ուզենային։ Այսպես ցրիվ եկավ Բայբուրդից եկած քարավանը։ Մնացած կանանց և երեխաներին նետեցին Եփրատը՝ Երզնկայի մոտի Կամախ-Բողազ կոչվող վայրում։ Գերմանական Կարմիր խաչի երկու գթության քույրեր, վրդովված այս և բարբարոսության նմանօրինակ այլ փաստերից, հրաժարվել են աշխատել։ Նրանք մեկնել են Կոստանդնուպոլիս և անձամբ այցելել մի քանի դեսպանատներ՝ պատմելու համար այդ գազանությունների մասին։ Ջարագործություններ կատարվում էին ամենուրեք։ Եվ մինչև այժմ էլ ճանապարհորդները այդ գավառների ճանապարհներին հանդիպում են զոհված հազարավոր հայերի դիակների։ Մի մուսուլման ճանապարհորդ Մալաթիայից Սեբաստիա 9 ժամ տևող ամբողջ ճանապարհի ընթացքում տեսել է տղամարդկանց ու կանանց դիակներ։ Բոլոր հայ տղամարդիկ դուրս են հանվել Մալաթիայից ու սպանվել, բոլոր կանայք ու երեխաները զոհով մահմեդականացվել են։ Ոչ մի հայ չի կարող երևալ այդ տեղերում, քանի որ յուրաքանչյուր մուսուլման, մանավանդ ավազակներն ու ժանդարմները, իր պարտքն է համարում նրան սպանել տեղնուտեղը։

Վերջերս Զոհրապն ու Վարդգեսը՝ օսմանյան պառլամենտի հայ երեսփոխաններ, որոնք ուղարկված էին Դիարբեքիր, որպեսզի կանգնեին ռազմական դատարանի առաջ, սպանվել են ճանապարհին՝ Հալեպի մոտ։ Այդ գավառներում հայը կարող է ճամփորդել լոկ մուսուլմանի անվան տակ կամ ծպտված։

Ինչ վերաբերում է կանանց վիճակին, ապա այդ մասին մենք արդեն ասել ենք բավականին մանրամասնորեն։ Մարդկային կյանքն այստեղ ընդհանրապես մի գրոշի արժեք չունի։

Նույն բախտին են արժանացել նաև հայ զինվորները։ Նրանք բոլոր զինաթափվել են և հիմա աշխատում են ճանապարհաշինության մեջ։ Վստահության արժանի աղբյուրներից մեզ հայտնի է, որ Էրզրումի նահանգից զորակոչված հայ զինվորները, որոնք աշխատելիս են եղել Էրզրում—Երզնկա ճանապարհի վրա, բոլորն սպանվել են։ Դիարբեքիրի նահանգից զորակոչվածները սպանվել են Դիարբեքիր—Ուրֆա և Դիարբեքիր—Խարբերդ ճանապարհներին։ Միայն Խարբերդից 1800 զինվորներ՝ հայ պատանիներ են ուղարկվել Դիարբեքիր աշխատելու։ Նրանք բոլորն սպանվել են Արղանայի շրջակայքում։ Մենք տեղեկություն-

ներ չունենք այլ շրջաններից, բայց անկասկած է, որ այնտեղ էլ զինվորներին նույն բախտն է վիճակվել։ Շատ քաղաքներում կախել են բանտում գտնվող հայերին, որոնց սկզբում պարզապես մոռացության էին մատնել։ Հենց միայն Կեսարիայում անցած ամսին մի քանի տասնյակ հայերի են կախել։

Շատ տեղերում հայ բնակչությունը, որպեսզի կյանքը պահպանի, ցանկություն է հայտնել մահմեդականություն ընդունել։ Այսպես է եղել նաև անցած կոտորածի ժամանակ, բայց այս անգամ նրանց նկատմամբ զանազան խոչընդոտներ են հարուցել։ Սեբաստիայում մուսուլմանական կրոն ընդունել ցանկացողներին առաջարկել են իրենց մինչև 12 տարեկան երեխաներին տալ կառավարությանը՝ խոստանալով նրանց տեղավորել որբանոցներում։ Չափահասներից պահանջել են համաձայնություն տալ մեկնելու կառավարության կողմից նշանակված վայրերը։

Խարբերդում տղամարդկանց թույլ չեն տվել կրոնափոխ լինել։ Ինչ վերաբերում է կանանց, ապա նրանցից պահանջել են, որ կրոնափոխության ծեսին ներկա լինի այն մուսուլմանը, ով պատրաստ է հավատափոխվող կնոջն առնել։ Հայ կանանցից շատերը գերադասեցին նետվել Եփրատը՝ իրենց ծծկեր երեխաների հետ կամ ինքնասպան լինել այլ եղանակներով։ Եփրատն ու Տիգրիսը գերեզմանը դարձան հազարավոր հայերի։

Սեծովյան քաղաքների՝ Տրապիզոնի, Սամսունի, Կերասունդի և այլ տեղերի մուսուլմանություն ընդունած հայերը աքսորվել են երկրի խորքերը՝ միայն մուսուլմաններով բնակեցված վայրերը։ Շապին-Գարահիսար քաղաքը, որի բնակչությունը դիմադրություն էր ցույց տվել զինաթափմանն ու աքսորին, ենթարկվել է գնդակոծության։ Քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչները, սրանց թվում և՝ եպիսկոպոսը, անգթորեն մորթվել են։

Բավական է ասել, որ Սամսունից Սղերդ և Դիարբեքիր ամբողջ տարածքում այժմ չի մնացել ոչ մի հայ։ Մեծամասնությունը զոհվել է կոտորածի ժամանակ, մի մասին տեղափոխել են, մյուսներին էլ մահմեդականացրել։

Պատմության տարեգրություններում չկա և չի եղել նման կոտորած։ Սուլթան Աբդուլ Համիդի գահակալության ժամանակաշրջանի հայերը հիմա երջանիկ են թվում։

Նորին սրբազնություն Անանիա Հազարապետյանը՝ Բայբուրդի եպիսկոպոսը, կախաղան է բարձրացվել։ Սրբազան Տեր-

Խորենյանը՝ Խարբերդի եպիսկոպոսը, մայիսին արտաքսվել է քաղաքից, բայց հենց որ քաղաքից դուրս է եկել, սպանվել է զազանաբար։ Ավելորդ է խոսել տանջամահ արված քահանաների մասին։ Բնակչությանն աքսորելուց հետո, եկեղեցիները կողոպտվել են և վերածվել մզկիթների կամ ախոռների։ Կոստանդնուպոլսում սկսվել է հայկական եկեղեցիների պաշտամունքի առարկաների և սպասքի վաճառք։ Թուրքերը նույն տեղը՝ Կոստանդնուպոլիս են սկսել բերել հայ երեխաների, որոնք խլված են դժբախտ հայ մայրերից։

Կիլիկիայի բնակչությունն աքսորվել է Հալեպի, Դեյր Զորի կամ Դամասկոսի շրջանները, որտեղ նա դատապարտված է սովամահության։

Կառավարության մտադրությունը, հավանաբար, այն է, որ մեկընդմիշտ վերջ տա հայկական հարցին՝ ոչնչացնելով Թուրքիայի ամբողջ հայ բնակչությանը։ Եվ այդ ծրագիրն իրագործվում է նույնիսկ Կոստանդնուպոլսի շրջակայքում։

АВПР, Посольство в Константинополе, д. 3504, л. 99—101.

176. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՍՈՒՆՈՒՄ ԵՎ ՄՈՒՇՈՒՄ

(Ռուսաստանի արտաքին գործերի միհիստրությունում 1915 թ. նոյեմբերի 11-ին ստացված զեկուցագրից)

1914 թ. օգոստոսին էրզրում եկան Իթթիհադի ներկայացուցիչներ Բեհաէդդին Շաքիրը, Հաջի բեյը և Հիլմի բեյը հայերի հետ բանակցելու համար։ Նրանց գալու նպատակն էր՝ պարզել հայերի դիրքը ռուս-թուրքական ընդհարման դեպքում։ Նրանց առջև նաև խնդիր էր դրված հայերին հակել Թուրքիայի կողմը։ Նրանք ասում էին. «Ռուսաստանը և իր դաշնակիցները ի վիճակի չեն դիմադրելու կենտրոնական կայսրություններին։ Ամբողջ մահմեդական աշխարհը՝ Մարոկկոյից մինչև Բելուջստան և Աֆղանստան, համախմբվել է Թուրքիայի շուրջը՝ ընդդեմ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի։ Կովկասում մեզ կհարեն վրացիներն ու մուսուլմանական ցեղերը, որոնց Թուրքիան կկազմակերպի և զենք կմատակարարի։ Բայց Կովկասում մեր գործողությունների հաջողությունը ամբողջովին ձեր ձեռքին է, և ձեր կողմից հակառուսական շարժման գլուխ կանգնելու վերա-

բերյալ համաձայնություն տրվելու դեպքում բավական կլինի Կովկաս շարժել 200—300-հազարանոց մի բանակ, որպեսզի ռուսները հետ շպրտվեն Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ։ Ռուսներին արտաքսելուց հետո հյուսիս-արևմուտքում մենք կկազմակերպենք ինքնավար Վրաստան՝ Քութայիսի, Թիֆլիսի, Բաթումի և մասամբ Տրապիզոնի նահանգների սահմաններում, հյուսիս-արևելյան մասում կառանձնացնենք ինքնավար մուսուլմանական մի մարզ՝ կազմված Դաղստանի, Բաքվի և մասամբ Ելիզավետպոլի նահանգներից և, վերջապես, կենտրոնական մասում կկազմենք ինքնավար Հայաստան՝ բաղկացած Երևանի, Կարսի նահանգներից և Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից՝ դրանց միացնելով Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների հարակից մասերը»։

Լիազորված հայերը, որոնցից շատերը հետագայում կախվեցին և սպանվեցին, մերժեցին Թուրքերի առաջարկը և հայտարարեցին, թե ռուս-Թուրքական պատերազմի դեպքում, դրա ամբողջ ընթացքում իրենք քաղաքական նպատակներ չեն հետապնդի և, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Թուրքիայում, կհետևեն լոյալ քաղաքականության՝ իրենց կառավարությունների նկատմամբ։ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու Թուրքիայի ցանկությունը նրանք անվանեցին արկածախնդրություն, որն սպառնում է Թուրքիայի գոյությանը։ Թուրքիայի փրկությունը հայերը գտնում էին խիստ չեզոքության մեջ։ Բեհաէդդին Շաքիրը Թուրքիայի գործողությունների նկատմամբ այդպիսի վերաբերմունքը որակեց որպես դավաճանություն Թուրքական կայսրության շահերին և իդեալներին...

1914 թ. նոյեմբերի վերջին երիտԹուրքերը վերսկսեցին իրենց փորձերը՝ հայերին մղել ակտիվ գործողությունների ի նպաստ Թուրքիայի...

Հայերը կտրականապես մերժեցին Թուրքերի բոլոր առաջարկները։

Խորհրդակցությունից հեռանալիս՝ Թուրքական պատգամավորները հայերին հայտարարեցին. «Կովկասում հայերը ակնհայտորեն հանդես եկան Ռուսաստանի կողմում և Թուրքիայի ձգտումների դեմ խոչընդոտ են հանդիսանում։ Թուրքերի անհաջողությունների համար պատասխանատվությունն ամբողջովին ձեզ՝ հայերիդ վրա կընկնի»։

Իր դեկտեմբերյան անհաջողության մեջ, երբ ռուսական զորքերը ոչնչացրին IX, X և XI կորպուսները, Թուրքերը մեղադրում էին քրիստոնյաներին, գլխավորապես հայերին և 1914 թ. դեկտեմբերի վերջին սկսեցին զինաթափ անել հայ զինվորներին ու ոստիկաններին, իսկ ապա սկսվեցին հայ բնակչության զանգվածային սպանություններն ու ձերբակալությունները։ Փետրվարին հալածանքները վերածվեցին ջնջել կրելու ընդունակ բնակչության կոտորածների գյուղերում, օրինակ՝ Ցրոնքում, Վարդենիսում, Այլեջանում և այլուր։ Նաև փորձեր արվեցին, որ բռնեն հայ կազմակերպությունների պարագլուխներին, զինաթափ անեն բնակչությանը և ոչնչացնեն հայոց ամրոցը՝ Սասունի լեռնային մարզը։ Հայերին մնում էր՝ կամ կամավորապես մորթվելու հանձնվել, կա՛մ զենք վերցնել իրենց ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար։ Մշո դաշտի և Սասունի համար սկսվեցին ինքնապաշտպանության սև օրեր։ Բնակչությանը ոչնչացնելու կրկնակի անհաջող փորձից հետո, ընդ որում գործի էին դրվել կանոնավոր զորքերը, Թուրքական իշխանությունները վախենալով համընդհանուր ապստամբությունից՝ նորից բանակցությունների մեջ մտան հայերի հետ։ Հայերն այս անգամ պահանջ ներկայացրին.

1) չզինաթափել հայերին,

2) դադարեցնել զանգվածային կոտորածները,

3) հրաժարվել հայ բնակչությանը տեղահանելու ծրագրից,

4) ձեռք չտալ Սասունին։

Իշխանությունները, ենթադրելով, թե զինված հայերի թիվը 20 000-ից պակաս չէ, թեև իրականում նրանք կրկնակի, եռակի քիչ էին, ընդունեցին հայերի պայմանները, և հալածանքները ժամանակավորապես դադարեցվեցին...

Թուրքական կառավարությունը ռազմաճակատից բերեց և Մուշում կենտրոնացրեց նորանոր զորքեր, որոնց թիվը երբեմն հասնում էր մինչև 20 000 սվինի... Մայիսին Բիթլիսից արագորեն Մուշ բերվեցին դարձյալ նոր զորքեր, իսկ Վանից ժամանեցին ժանդարմական գնդեր՝ Քյազիմ բեյի հրամանատարությամբ։ Մայիսի կեսերին սկսվեց Սասունի ծայրամասային գավառակների, այն է՝ Փսանքի, Խուլբի, Խիանքի և Շատախի, կանոնավոր շրջափակումը։ Կանոնավոր և անկանոն զորքերի անընդմեջ հարձակումները մայիսի վերջից մինչև հունիսի 12-ը հայերը հետ էին մղում՝ մեծ կորուստներ պատճառելով Թուրքերին։ Բայց Թուրքական իշխանությունների կողմից Մուշ բա-

գաբի և դաշտի հայ բնակչության ոչնչացման ծրագրի իրագործման հարցում, ըստ երևույթին, որոշված էր կանգ չառնել ոչ մի զոհողության առաջ։ Հայերը սարերից իջնելով՝ դիրքավորվել էին Թուրքական զորքերից 2500—7000 մետր հեռու, քաղաքին իշխող բարձունքների վրա։ Թուրքերը Մուշից հանեցին արխիվը, թանկարժեք իրերը, ռազմական պարենամթերքն ու հանդերձանքը և ամրացան բուն քաղաքում և շրջակա գյուղերում։ Հունիսի վերջում Թուրքական իշխանությունները հայերին առաջարկեցին դադարեցնել դիմադրությունը և տեղափոխվել Ուրֆա, ընդ որում հայտարարում էին, թե տղամարդիկ պետք է չոկվեն կանանցից։ Հենց այդ ժամանակ էլ սպանեցին հայ բանտարկյալներին և 500 հայ զինվորների, որոնք մինչ այդ զինաթափ էին արվել և վերածվել երկոտանի բեռնակիր ուժի։ Բնակչությունը ոչ մի բոպե չէր կասկածում, որ իշխանությունների դրած պայմաններին համաձայնելու դեպքում իրեն սպասվում է գլխովին ոչնչացում, և մերժեց կառավարության պահանջի կատարումը։ Ամբողջ մարզը ապստամբեց։ Դաշտում անխմաստ էր թնդանոթների և գնդացիրների դեմ պայքարելը։ Չորս օրվա ընթացքում զորքերը կործանեցին և այրեցին Մուշ քաղաքը և դաշտի գյուղերը։ Նրանք չխնայեցին երեխաներին, կանանց ու ծերերին։ Բնակչության փրկված չնչին մասը ապաստանեց Սասունի սարերում։ Սասունցիները մի քանի անգամ փորձեցին ճեղքել Թուրքական զորքերի շղթան և բնակչությանը փրկել կոտորածից, բայց հրանոթներ և գնդացիրներ չունենալու պատճառով այդ փորձերը չէին կարող հաջողություն ունենալ։ Հուլիսի կեսերին Մշո դաշտ ժամանեց մեկ դիվիզիա զորք, կարծեմ, Բեքիր Սամիի հրամանատարությամբ, և հուլիսի 19-ին Թուրքերը ներխուժեցին Սասուն, իսկ 22-ին, կատաղի մարտերից հետո, գրավեցին Կեփին և Անդոկ սարերը։ Հայերի հետագա դիմադրությունն անիմաստ դարձավ, մանավանդ որ փամփուշտն ու պարենամթերքն արդեն սպառվում էին։ Եվ հայերն ստիպված եղան մանր խմբերի բաժանվել ու պարտիզանական կռիվ սկսել, որ շարունակվում է, հավանաբար, մինչև հիմա։

Հունիսի 12-ի և հուլիսի 19-ի միջև Մուշի ու Սասունի հայերը իրենց վրա շեղեցին 25 հազարից ավելի կանոնավոր զորքերի և է՛լ ավելի մեծ թվով քրդական աշիրեթների։ Այս հանգամանքի շնորհիվ Թուրքական ռազմաճակատն այնքան թուլացավ, որ ռուսական զորքերը Թուրքերի կողմից առանց որևէ

լուրջ դիմադրության հասան մինչև Վարդենիս ու Մկրագոմ գյուղերը, որոնցից չորս ժամվա ճամփա հեռու էին հայ ապստամբների դիրքերը[33]...

Սասունի և Մուշի հայկական պաշտպանության ղեկավար
Տեր-Միքայելյան

АВПР, Политархив, д. 3484, л. 139—141.

177. Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱՄՆ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻՆ

Կ.Պոլսում, 11 նոյեմբերի 1915 թ.

Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ ի գիտություն, որ պ. Ստեպան Սեմուխինը՝ Կոստանդնուպոլսի ռուսական կայսերական դեսպանության շենքի կառավարիչը, վերադառնալով Անգորայից, ուր նա աքսորված է եղել ռուսահպատակ հայերի 129-հոգանոց խմբի հետ, որոնք ձերբակալվել էին 1915 թ. սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը, հաղորդեց հետևյալը.

«1915 թ. սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը 129 ռուսահպատակ հայեր ձերբակալվել և բանտարկվել էին Ստամբուլի կենտրոնական բանտում։ Ձերբակալությունները տեղի էին ունեցել առանց նախնական ծանուցման՝ հայերին փոքր-ինչ սառուգելու անհրաժեշտության պատրվակով։ Ուստի նրանք ստիպված էին կանգնել Թուրքական իշխանությունների առաջ՝ իրենց հետ չվերցնելով ոչ մի հագուստ և առօրյա օգտագործման առարկաներ։ Նրանցից ոմանք ձերբակալվել էին նույնիսկ գիշերային սպիտակեղենով և հասցրել էին իրենց հետ վերցնել միայն վերարկու։

Երկուսուկես օրվա ընթացքում, երբ ձերբակալվածներն ստիպված են եղել անցկացնել կենտրոնական բանտում, նրանց չեն տվել ոչ մի ուտելիք։ Նրանք, ովքեր գրամ են ունեցել, բանտապանների միջոցով հաց են գնել, ամեն մի բոքոնը՝ 5 ղուռուշով։

Ուրբաթ գիշերը նրանց ասել են, որ հաջորդ օրը վաղ առավոտյան իրենց աքսորելու են Անգորա և որ նրանք պետք է վճարեն 173-ական պիաստր՝ որպես փոխհատուցում գնացքով իրենց տեղափոխելու համար։ Բանտարկվածներից նրանք, ով-

քեր հայտարարել են, թե իրենք չունեն այդքան գումար, խուզարկվել են, և նրանցից էլ խլվել է այն ամենը, ինչ ունեցել են։ Իշխանությունների ներկայացուցիչները բռնագրավել են 16 ռուբլի թուղթ փող, որը գտնվելիս է եղել ձերբակալվածներից մեկի մոտ։ Այդ ձևով հավաքված գումարը բավական է եղել գնացքով բոլոր բանտարկյալների տեղափոխման ծախսերը ծածկելու համար, բացառությամբ հինգի, որոնց ստիպել են ոտքով գնալ։ Սրանց մեջ եղել է մի ծերունի՝ 75—80 տարեկան, որը չի կարողացել տանել ուժասպառ անող երթը և ճանապարհին մահացել է։

Շաբաթ առավոտյան, բանտարկյալներին երկաթգծի կայարանն ուղեկցելուց առաջ, նրանց հրամայել են նետել գլխարկները և ֆեսեր դնել։ Նրանք, ովքեր չեն կարողացել ֆես ձեռք բերել, քայլել են գլխաբաց։ Մինչև Հայդարփաշա ուղեկցող ժանդարմները նրանց թույլ չեն տվել հաց գնել։ Բայց երբ գնացքը շարժվել է, ժանդարմներն իրենք են սկսել հաց վաճառել նրանց՝ ամեն բոքոնը՝ հինգ ղուռուշով։

Անգորա հասնելուց հետո կալանավորներին փակել են մի կեղտոտ շինության մեջ, որտեղ նրանք, իրար կողքի թափված, քնել են խիստ նեղվածքում։ Նրանք միանգամայն լքված վիճակում նետվել են այդ ծակը, և նրանց մեծագույն դժվարությամբ է հաջողվել մի քիչ հաց ձեռք բերել նախկին գնով։ Վերջապես, այդ պայմաններում 16 օր անցկացնելուց հետո, նրանց բաց են թողել և շատ խստորեն հրամայել, որ քաղաքում իրենց կարգին պահեն։

Այդ 129 ռուսահպատակ աքսորյալներից հազիվ քսան հոգին են կարողանում իրենց օրվա հացը ճարել։ Մնացած բոլորն աղետալի վիճակում են և հաճախ օրերով անսնունդ են մնում։

Նրանց դժբախտությունները, սակայն, սրանով չեն սահմանափակվել։ Այս աքսորյալները տեսել են, թե ինչպես են հայերին հալածում Անգորայում, իսկ հայերն այս քաղաքում կազմում են բնակչության $^4/_5$ մասը։

Թուրք սայլապանները, որոնք հայերին տարել էին կոտորածի տեղը, իրենք են ռուսահպատակ աքսորյալներին ասել, թե բոլոր հայերին սպանում էին մահակով կամ գնդակահարում ատրճանակով, հենց որ սայլապանները դուրս էին գալիս քաղաքից։ Ամենակոփված մարդիկ իսկ չէին կարող առանց սարսուռի դիտել այդ զարհուրելի տեսարանը։ Թուրք սայլապան-

ներից երկուսը չկարողանալով տանել այդ սարսափները, մեռել են։ Գտնվելով դաժան և արյունարբու բնազդի տեր մարդկանց շրջապատում՝ այդ դժբախտ աքսորյալները տառապում են ոչ միայն իրենց այժմյան ծանր դրությունից, այլև գլխավորապես սարսափից ու նախազգացումից տանջալի մահվան, որն անխուսափելիորեն սպասում է իրենց։

Կանայք ու երեխաները տրված են եղել տանջողների մի այլ խմբի, որի ձեռքին նրանք տառապել են ավելի շատ, քան իրենց հայրերը, եղբայրներն ու ամուսինները։ Մահվանից առաջ կանայք և աղջիկները պատվազրկվել են այդ մարդակերպ գազաններից։

Այժմ Անգորան մեռած քաղաք է։ Բոլոր խանութները փակ են։ Հայերին պատկանող բոլոր ապրանքները վաճառվում են աճուրդով։ Երեկոյան ժամը 6-ին ամեն ինչ դառնում է մռայլ ու տխուր, և նույնիսկ թուրք ընտանիքներն են համակվել սարսափով։

Այսպիսին է այն տեսարանը, որ ներկայացվել է ի տես ռուսահպատակ աքսորյալների, որոնք դատապարտված են այդքան ծանր ճակատագրի»։

Ջ. Դեոդես

АВПР, Политархив, д. 3504.

178. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ՝ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ Ծ. ՎՐԴ. ՎԵՀՈՒՆՈՒՆ

Կ. Պոլիս, 28 դեկտեմբերի 1915 թ.

Ասկե առաջ Պուլկարիո գեր. առաջնորդին հրահանգած էինք, որ մեր գրության պարունակությունը հաղորդեր նաև Ձեզի, Ամերիկայի հայությանը իրազեկ ընելու համար այն ահռելի եղեռնին, որ տեղի կունենար Թուրքիո մեջ՝ ամբողջ ազգ մը բնաջինջ ընելու համար։ Պատմությունը չեմ կարծեր, թե արձանագրած ըլլա այսպիսի կոտորած մը։ Լուրերը որքան ալ հասած ըլլան Ձեզի, սակայն չեմ կարծեր, թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8—9 ամիսներուն մեջ Թուրքիո մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը, առանց խնայվելու ամենափոքր գյուղը կամ

զառամյալ ծերունին և կաթնակեր մանուկը։ Համիտյան ռեժիմի ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները, հայկական ըլլան կամ հունական, պուլկարական ըլլան թե լիբանյան, չնչին բան մըն են ասոր քով։ Այս անգամ գործադրվածը իսկապես բնաջնջումի ծրագիր մըն է, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ, թե հայը իր հայրենիքին մեջ այլևս պատմական դարձած է, և արդեն կուսակալներեն ոմանք (Տիարպեքիրի Ռեշիտ, Պիթլիսի Ապտյուլխալըգ, Կարնո Թահսին և այլն) պարծանոք հեռագրեցին կենտ. կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ ոչ մի հայ կը գտնըվի այլևս։ Այս անգամ խուժանը չէր, որ հարձակվեցավ խաղաղ ժողովրդին վրա, այլ նույն ինքն կառավարությունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանդարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսակախումբերու ձեռքով։ Հրահանգը կեդրոնեն տրվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճմտորեն։ Նախ մտավորական գործունյա և բանիբուն դասակարգը ձերբակալվելով բանտարկվեցավ, և անոնք, որոնց մասին կարելի էր ամբաստանություն մը հերյուրել, պատերազմական ատյաններու շուտ ընդ փույթ վճռովը կախաղանի վրա իրենց կյանքը կնքեցին։ Ձենքի ամենաներելի տեսակն անգամ հավաքվեցավ, և շատեր իրենց չունեցած զենքերուն համար խիստ դատապարտվեցան։ Ժողովուրդը վտարվեցավ իր հայրենի օճախեն, լքելով ամեն ինչ և ճամփան կողոպտվեցավ և կոտորվեցավ։ Սամսունեն սկսյալ մինչև Տիգրանակերտ գրեթե հայ այր մարդ չէ ազատված։ Երիտասարդ կիներն ու աղջիկները առևանգվեցան և մանուկները կոտորվեցան։ Կոտորածը ահռելի եղած է Մուշ, Բաղեշ, Տիգրանակերտ, Եդեսիա, Տրապիզոն, Շապին-Գարահիսար, Քղի, Բալու և Երզնկա-Քեմախ, ուր գրեթե ոչ մեկ հայ ազատված է՝ մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով։ Հայաստանի մյուս նահանգներեն ազատվածներ կան, սակայն հազիվ 5 % համեմատությամբ։ Շատ մը քաղաքներե և գյուղերե հազիվ մեկ-երկու կիներ կան այսօր։ Լեռներ ու բանուկ ճամփաներ դիակներով լեցվեցան։ Գետերը օրերով դիակներ տարին իրենց ալիքներուն հետ։ Նշանավոր եղան Մալաթիա և Խարբերդ, որոնց մոտերը կոտորվեցավ տեղացի հայությունը, նույն բախտին ենթարկվեցան մյուս գավառներեն եկող և անկե անցնող գաղթականաց բոլոր կարավանները։ Մուշ և իր դաշտը, ուր հայ բնակչությունը Բուլանըխի և Խնուսի հայության հետ տուներու

և մարագներու մեջ լեցվելով՝ կրակի տրվեցան։ Բաղեշ և շրջականները, ուրկե հայ մը ազատված ըլլալու լուրը չունինք տակավին, Տիգրանակերտի նահանգը, ուր ոչ միայն հայերը, այլև ասորիներն ու քաղդեացիներն ալ կոտորված են, և կուսակալին գրված ջարդի հրամանը չգործադրելնուն համար երեք թուրք գայմագամներ պաշտոնանկվելով սպանված են։ Տրապիզոն և շրջականները, ուր հայությունը գրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամույն եղած է։ Բալու և Քղի, որոնցմե ոչ մեկ հայ ազատված ըլլալուն լուրը ունենք ցարդ։ Երզնկա և Քեմախ, ուր տեղացի հայությունը և Բաբերդի, Դերջանի և Կարնո հայությունը Արածանին թափված, ողջամբ թաղված կամ կոտորված է։ Շապին-Գարահիսար և Եդեսիա, ուր ժողովուրդը կամավ մեռնել չուզելով փոքր-ինչ դիմադրություն ընելու հանդգնությունը ունեցավ։ Էնկյուրի, որուն արու հայությունը, այդ նահանգը կանխավ Պոլսեն աքսորյալ հայերով միասին դեպ Ցոզղաթ տարվեցավ և ճամփան կոտորվեցավ։ Մանրամասնություններու վրա չեմ ծանրանար, ականատեսներու պատմությունները այնպիսի գազանային դեպքեր կհիշեն, որ մարդկային պատմությունը երբեք չի արձանագրած նույնիսկ նախաքրիստոնեական դարերու մեջ։

Հայ ժողովուրդը իր դարավոր հայրենիքեն վտարվելով դեպի հարավ քշվեցավ, ճամփան չեթեներուն բյուրավոր զոհեր տալով, յուր ինչքը, եթե թույլ տրված էր բան մը առնել իրեն հետ, կողոպտվեցավ, օրերով ու ամիսներով հետիոտն ճամփորդեց։ Կարավանները հնադարյան գերիներու պես ամեն քաղաք հասնելուն հրապարակները շարվեցան և իսլամ ժողովուրդը հրավիրվեցավ անոնցմե իր հավնածը առնելու։ Այրերեն շատերը արդեն իրենց ծննդավայրի մեջ կոտորված ըլլալով, մնացյալներն ալ ճամփան կոտորվեցան չեթեներու և ժանդարմներու կողմե, մանուկները խլվեցան իրենց մայրերուն գրկեն և իբրև անտեր ապրանք իսլամներու հանձնվեցան (այս մասին նշանավոր եղավ Սեբաստիո Սար Գշլա գավառակին կեդրոնը, ուրկե անցնող բոլոր հայ գաղթականաց մանուկները առնվեցան մայրերեն։ Երիտասարդ կին և աղջիկ գրեթե չմնաց, որ չբռնաբարվեցավ, այնպես որ այդ բյուրավոր ժողովուրդին դույզն բեկորները միայն կրցան հասնել Միջագետք)։

Ճիհադը լիովին գործադրվեցավ այս երկրին մեջ, որովհետև հայերը իբրև՝ օրենքե դուրս ձգված և իսլամության թշնամի

ժողովուրդ մը նկատվեցան և անոնց կյանքը, պատիվը և ինչքը հելալ համարվեցան, սպանությունը, բռնաբարությունք և կողոպտում կրոնական պարտականություն մը եղան նույնիսկ պաշտոնական անձանց համար։ Ի սկզբան իսլամացումները չընդունվեցան կամ զանազան պայմաններով ընդունվեցան։ Օր. իսլամացողը իր ծննդավայրեն դուրս կառավարության հարմար տեսած տեղը բնակի, իր զավակները անմիջապես հանձնե իսլամական կրոնքով կրթվելու և մեծնալու համար, շուտով ամուսնական կապեր հաստատե իսլամ ընտանիքներու հետ և այլն։

Այս կերպով և ավելի հաճախ բռնի շատ տեղեր բազմաթիվ հայ ընտանիքներ կրոնափոխ Էղան և ցայսօր կմնան այդպես։ Օրինակ՝ Կեսարիո գավառին մեջ 1000-ե ավելի ընտանիք, Սեբաստիո նահանգը (Եվդոկիա, Գանկալ, Շարգշլա, Ամասիա և այլն) իբր 800 ընտանիք, Խարբերդի նահանգը (Խարբերդ, Արաբկիր, Ակն, Մալաթիա) իբր 1000 ընտանիք։ Անպաշտոն իսլամացումները շուտով պաշտոնական դարձան և օգոստոսեն ի վեր սկսան պաշտոնական գործողություններ կատարվիլ և նույնիսկ պաշտոնական անձանց կողմե բրոպականդ և ճնշում ի գործ դրվիլ։ Զինվորներու ընտանիքները, որոնք քիչ տեղեր միայն տեղահան չեղան, իսլամ գյուղեր կղրկվին և հոն կբռնադատվին իսլամ կրոնը ընդունելու։ Հայ զինվորները ավելի խիստ ճնշումի ենթակա են և հազարավորներ արդեն իսլամացած են մահվան սպառնալիքով։ Զինվոր և սպա իսլամացնելու նույնիսկ պաշտոնական հրահանգ ղրկված է զորաբանակներուն։ Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Եվդոկիա և այլն որբանոցներ բացված են իբր թե «զինվորական նահատակներու զավակները կրթելու համար», սակայն մեծամասնությունը հայ մանուկներն են։ Իսկ աղջիկները ամեն գյուղ և քաղաք, նույնիսկ Պոլիս, կվխտան իսլամներու տուներուն մեջ։

Վանքերն ու եկեղեցիները մեծ մասամբ կործանվեցան կամ անարգ գործածությանց հատկացվեցան։ Մշո ս. Կարապետը թնդանոթի բռնված և հիմնահատակ եղած է, նույնպես Կարնո Կարմիր վանքը, Սեբաստիո ս. Փրկիչ և ս. Սարգիս եկեղեցիները և այլն։ Իսկ եկեղեցականությունը գրեթե ամբողջովին կոտորված է, ոչ մեկ քահանայի ողջ մնացած ըլլալու լուրը ունենք Խարդ։ Առաջնորդներեն Կարնո Սմբատ եպ. Սաատեթյանը իր ծողովրդին հետ դեպի Միջագետք տարված ժամանակ Քեմախի մոտերը հրոսակներու կողմե սպանված է։ Տրապիզոնի Գևորգ

ծ. վրդ. Թուրյան, Կարնո պատերազմական ատյանեն ղրկված ըլլալով՝ ճամփան սպանված է։ Շապին-Գարահիսարի Վաղինակ ծ. վրդ. Թորեկյան քաղաքին ռմբակոծման ատեն զոհ գացած է։ Բաբերդի Անանիա ծ. վրդ. Հազարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճիռով։ Մշո Վարդան ծ. վրդ. Հակոբյան բանտին մեջ բրածեծ մահացած է։ Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վրդ. Զլղատյան բանտին մեջ գանահար սպանված է։ Եվդոկիո Շավարշ ծ. վրդ. Սահակյան ձերբակալվելով Սեբաստիա ղրկված ատեն ճամփան սպանված է։ Խարբերդի Պսակ ծ. վրդ. Տեր-Խորենյան շղթայակապ դեպի Տիգրանակերտ այլոց հետ ղրկված ատեն խողխողված է։ Յոզգատի Ներսես եպիս. Դանիելյան Սեբաստիո մոտերը Ալիսի ափերուն վրա ուրիշ 450 յոզգատցիներու հետ սպանված է։ Եդեսիո Արտավազդ ծ. վրդ. Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է ուրիշ 60—70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ։ Բալուի Եզնիկ եպիս. Գալփակչյանի, Բաղեշի Սուրեն ծ. վրդ. Գալեմյանի, Սղերդի Եղիշե վրդ. Զանոյանի, Զարսանճաղի Գևորգ ծ. վրդ. Նալպանդյանի, Երզնկայի և Քեմախի Մելիքսեդեկ վրդ. Հովիվյանի, Սամսոնի Համազասպ ծ. վրդ. Եղիսեյանի և Կյուրենի Խորեն եպիս. Դիմաքսյանի մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կմնան։ Կեսարիո Խոսրով եպիս. Պեհրեկյան մշտնջենական և Պրուսայի Պարգև ծ. վրդ. Դանիելյան հնգամյա բերդարգելության դատապարտված են, սակայն հայտնի չէ, թե ուր կգտնվին։ Նիկոմեդիո Ստեփանոս եպիս. Հովակիմյան, Գոնիայի Գարեգին վրդ. Խաչատուրյան և Պանդրմայի Կարապետ եպիս. Մաշլըմյան տարագրված են իրենց հոտին հետ, և առաջինը՝ Հալեպ, բ.՝ Մոմպիճ, և գ-ը՝ Քիլսի Ազիզիե գյուղը։ Ասոնցմե զատ ողջ մնացող առաջնորդներն են. Գնել եպիս. Գալեմքիարյան, որ կմնա Սեբաստիա տան մը մեջ արգելափակ, Իզմիրի Մատթեոս եպիս. Ինճեյան և Հաճընի Պետրոս եպիս. Սարաճյան՝ իրենց վիճակներուն մեջ։ Չխնայվեցավ նույնիսկ Կիլիկիո Սահակ ս. կաթողիկոսը, որ նախ Հալեպի քովերը Պապ աքսորվեցավ և ապա ղրկվեցավ Երուսաղեմ, ուր կմնա այժմ։

Այս ընդհանուր գազանային կոտորածեն մեր կորուստը մեկ միլիոնեն պակաս չէ. մնացյալ հայությունը ամբողջովին տեղահան եղած դեպ անապատները քշված է, բացի Պոլսո, Իզմիրի, Քյոթահիայի հայությունեն և քանի մը տեղ թողված զինվորի ընտանիք, բողոքական և կաթոլիկ հայերե։

Տեղահան եղողները դրեթե բան մը չեն կրցած առնել իրենց հետ, և իրենց առածն ալ շուտով տվին պաշտոնական ու անպաշտոն ավազակներու։ Պոլսո լրագրաց մեջ կարդացիք անշուշտ սեպտ. 14-ին հրատարակված օրենքը, որով հայոց կալվածքներուն և գույքերուն գրավումը կօրինականացվի։ Օրենքը արդեն գործադրության տրված է հատկապես կազմված հանձնաժողովներու ձեռքով։ Ներքին գավառներեն Մոսուլեն Հալեպ և անկե Շամ և Քերեկ հասած հայության բեկորները զանազան գյուղեր ցրված են, Պոլսո շրջանակներեն և Կիլիկիայեն գացող հայությունը քանի մը ամիս ճանապարհներու, լեռներու վրա և երկաթուղիին երկայնքը հազարավոր զոհեր տվավ անոթության և հիվանդությանց և այս ալ Հալեպ հավաքվելով ղրկվեցավ մյուսներուն հետ դեպ այն երկիրը, որ իրենց օտար է կլիմայով, լեզվով, կրոնքով, ազգով և բարքով։

Հալածանքը չէ դադարած տակավին, Պոլսո հայությունեն ցարդ 5000-ի չափ գավառացի և ամուրի տարագրվեցավ, նույնպես Իզմիրեն իբրև 100 հոգի, և տակավին կշարունակվին։ Ցարդ Գոնիայի կողմերը մնացած իբրև 2000 ընտանիքները շրջակա գյուղերը ցրվեցան 5-ով, 10-ով, նույնպես ըրին ուրիշ տեղ գտնվողները, Տարսոն, Ատանա և այլն։ Ժողովուրդը տակավին շարժման մեջ կգտնվի. ոչ մեկ տեղ ապահով է, թե հոն պիտի մնա, Հալեպ գտնվողները դեպ առաջ կքշեն, Մումպիճ, Սրուճ գտնվողները այլուր կփոխադրեն, և այս բոլոր հալածանքը կըլլա, որպեսզի ժողովուրդը կամ մեռնի, կամ հուսահատվելով իսլամանա։ Անապատներեն եկած լուրերը քար սիրտերն անգամ արյունի կփոխեին, հայորդիներուն դիակները շուներու և գազաններու կեր կըլլան, և թաղող մը անգամ չունին. այդ անապատներուն մեջ, ուր... արապն ու քյուրդը ապրուստ չունին, հայու բնական վախճանը սովամահ ըլլալն է. հայ կրթված կիներն ու աղջիկները... իբրև գերուհի կծառայեն և առուտուրի առարկա դարձած են։ Թիֆուսը և այլ հիվանդություններ արդեն նախճիրներ կգործեն, և մեր վրա ոչ ոք կգթա տակավին։ Վայրի գազանները և երկնից գիշատիչ թռչունները հագեցան մեր մարմիններով, լեռները ներկվեցան մեր արյունով և ձորերը լեցվեցան մեր ոսկորներով, բայց տակավին մեր դահիճները չհագեցան և վագրերու պես իրենց զոհերը տանջելով կզվարճանան տակավին։ Այսքան անմեղներու արցունքը և ոչ իսկ կրցավ

շարժել պղինձ դարձած երկինքը և ողորմության անձրև մը տեղացնել։

Հայության բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց հղացված էր, գործադրության դրվեցավ՝ պատրվակ բռնելով Վանա դեպքերը, Կովկասի սահմանագլխի վրա մերայնոց ըրած շարժումները և իբրև թե ներքին գավառներու մեջ հայոց ապստամբելու մտադրությունը, որուն համար զինված է եղեր, կասեցնելու համար կարելի միջոցները գործադրվեցան մեր կողմե։ Օսման. պետական անձնավորությունները հայտարարած էին, թե չպիտի թույլ տան, որ Հայաստան ալ եվրոպական նահանգներու նման ձեռքե ելնե։ Քաբինիթյուլասիոններու ջնջումով օսմ. կառավարությունը այլևս ազատ գտավ ինքզինքը և գործեց անվերապահ և անվախ։ Համաձայնական տերությանց սպառնալիքները ոչ միայն արժեք չունեցան, այլև պատճառ ավելի սաստկացնելու հալածանքը։ Ներկա պատերազմին մեջ անոնց ունեցած անհաջողությունները մեր ազգին բնաջնջման ծրագիրը մինչև ցգլուխ տանելու համարձակություն տվին։

Օսմանյան պաշտոնական և անպաշտոն անձնավորությանց մեր բոլոր թախանձանքներն ու լացերը անարժեք եղան։ Օտար չեզոք պետությանց անպաշտոն և կես-պաշտոնական դիտողությունները ոչ մեկ ազդեցություն գործեցին։ Ամերիկյան գեսպանին և պուլկար գործակատարին քանիցս ըրած դիտողությունները ոչ մեկ ազդեցություն գործեցին և չկրցան կասեցնել հալածանքը, զի օսմ. կառավարությունը հայոց խնդիրը իրեն համար ներքին խնդիր նկատեց և քաբինիթյուլասիոններու ջնջումով ոչ մեկ պետության իրավունք տվավ անոր միջամտելու։ Դեպքերը այնպես բերին, որ ոչ մեկ կառավարություն սպառնալից շեշտ մը դրավ իր բողոքներուն մեջ...

ՀՀԳԳԱ, ֆ. 57, ց. 2, գ. 672, էջ 72—75։

179. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ԵՎ ԱԶԳԱՅՆՈՑ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ

1913 օգոստոս 19-ի գիշերը տեղի ունեցավ շուկայի ահռելի հրդեհը Գոմսեր Կավրանլի զատե Մեմտուհ պեյի կողմանե։

Հրդեհի շարժառիթը որոշ էր։ Իթթիհատականներու կողմանե կազմված էր Ինթիպահ շիֆեթի անվան տակ առևտրական

մի ընկերություն, հայերու հետ մրցելու և անսլայման հաջողություն մը ձեռք բերելու համար։ Երեսփոխան Ֆեյզի պեյի խորհուրդով և իթթիհատական գոմիթեի որոշումով ծրագրված էր շուկային հրդեհը. երկու ժամվան մեջ 1100 խանութներ և երկու խաներ մոխիր դարձան։ Հրդեհն երեք օր վերջ հասավ Տիարպեքիր նոր ընտրված կուսակալ Համիտ պեյը, որուն առաջին գործն եղավ շուկան հրդեհի տվող Գոմսեր Մեմտուհ պեյը պաշտոնանկել։ Իթթիհատի ազդեցության հետևանոք Մեմտուհի պաշտոնանկությունն ետ առնվեցավ, միայն կուսակալի արժանապատվությունն ալ չի վիրավորելու համար որոշվեցավ Մեմտուհը միևնույն պաշտոնով Ատանա ղրկել։ Համիտ պեյ պաշտոնավարեց 1913 օգոս. 23-են մինչև 1915 մարտ 28։

1914 օգոստոս 3-ին երկուշաբթի օրը զորաշարժի հրաման ազդարարվեցավ։ Հաջորդ օրը պատերազմական ատյան կազմվելով՝ սկսավ զուլումներու շրջանը։ Թեֆիֆ հարպիյեի անվան տակ հանձնաժողով մը կազմվեցավ, որուն ղեկը երկու իթթիհատական շեֆերու ձեռքն էր։ Ասոնց գործն եղավ ամբողջ տարի մը, գիշեր-ցորեկ, հայ վաճառականաց ապրանքները գրավել և հայ արհեստավորները ձրիաբար գերիի նման անընդհատ աշխատցնել։ Անուններն են իթթիհատի պատասխանատու տնօրեն Աբբար Հազզը և իթթիհատի մյուրեխես Ճարճիս աղա զատ Քոռ Յուսուֆ։

Քաղաքական մթնոլորտն ալ ևս ամպոտած էր։ Համիտ պեյ Պոլսեն ետ կը կանչվեր ուրիշ պաշտոնի մը և իրեն տեղ կուսակալ կանվանվեր Մոսուլ գտնվող կուսակալ արյունարբու տոքթ. Բեշիտ պեյը, ծագումով չերքեզ։ Բանակներուն մեջ գտնված հայ զինվորներու ձեռքեն զենքերն առնված ամբողջը լեռներու գլուխները ղրկված էին էմալե Թապուռի։ Իբր թե ճանապարհներ շինելու նպատակավ 18—45 տարեկան հայ զինվորցուները, որ Տիարպեքիրի հայության ուժը կկազմեին, բոլորն ալ քաղաքեն հեռացուցած էին։ Տոքթ. չերքեզ Բեշիտ պեյ, մեքթուպճի մը, իր պաշտոնին հասավ 1915 մարտ 28-ին իր հետ ունենալով Պետրետտին պեյ, իր ժանտարմա քոմանտանի չերքեզ Բյուշտի պեյ և յավեր մը չերքեզ Շաքիր պեյ անվամբ։ Ասոնցմե զատ ան հետը բերած էր 40—50 չերքեզ չեթեներ, որոնք ժանտարմայի տարազով հագնված էին։ Ասոնք բոլորն ալ հայկական բնաջնջման հավատարիմ գործիքներ էին։

95-ի հայկական ջարդերուն, Տիարպեքիրի կոտորածի առաջին կազմակերպիչ տխրահռչակ Փիրինչի զատե Արիֆ էֆենտիի որդին՝ Ֆեյզի պեյը, որ Պոլիս կը գտնվեր իբր Տիարպեքիրի երեսփոխան, խորհրդարանը գոցվելուն քաղաք վերադարձած էր։

Ապրիլի օրերուն էր կազմվեցավ Միլիս Թապուռի մը, որու կազմը հանձնված էր Ֆեյզի պեյին, իթթիհատի գոմիթեին, արյունարբու մի միրալեյի, մի հազարապետի, և 10 գազան հարյուրապետներու...

Հարյուրապետներուն ձգված էր արձանագրել նպատակին հարմար ոճրագործ չավուշներ, և չավուշներուն թողված էր արձանագրել գործին հարմար, առնվազն կենաց օրերուն մեջ 4—5 մարդ սպանող գանազան քյուրտեր։ Միլիս Թապուռին առաջին միրալյեն մինչև հետին նեֆերը մարդասպան գայլեր էին։

Ֆեյզի պեյն էր, որ փլանը պիտի գծեր Տիարպեքիրի հայկական բնաջնջման։ Ինքը, կուսակալ Բեշիտ, մեքթուպչի Պետրետտին, ժանտարմա գոմանտանի Բյուշտի պեյերը գլուխ գլխի տված դիշեր-ցորեկ աշխատելով, շինեցին բնաջնջման ծրագիրը և ի գործ դրին այսպես.

Ֆեյզիին առաջին գործն եղավ Ատանա գտնված գոմսեր սրիկա Մեմտուհը Ատանայեն բերելը, որուն պետք ուներ Ֆեյզի պեյը իբր ավերումի աննման գործիք։ Ֆեյզի պեյ ապրիլ 6-ի օրը Ճիզրե կը մեկներ, անկե վերադարձին քյուրտ աշայիրներուն պիտի այցելեր խիստ կարևոր դժոխային կարգադրություններու համար, կարգադրություններ, որ Ֆեյզի պեյեն զատ, նույն իսկ իսլամներու մարգարեն եթե երկինքեն իջներ, դարձյալ խոսքը լսելի չպիտի ըլլար քյուրտ աշայիրներուն, ինչու որ քյուրտերը կը պաշտեին ու կը հնազանդեին Ֆեյզի պեյին։

Երկու օր վերջ Միլիսի Թապուռիեն պաշտոնյա մը առաջնորդարան կուգա պահանջելու հայոց զենքերը։ Մկրտիչ վրդ. Չլղատեան ազգային վարիչ անձերու հետ ժողովին մեջ կը թելադրե, որ զենքեր չհանձնեն. ասոր ի պատասխան Խաչատուր էֆ. Տիգրանյան սպառնական շեշտով մը կը հայտարարե. «Ո՛ւ, վարդապետ, ինչպես որ եկեր ես, անանկ ալ քեզ ձիու վրա դրած կը ղրկենք, մենք կառավարության հակառակ չենք կրնար երթալ. մեր հավատարմությունը ցույց տալու համար պետք է, որ Հայոց քով եղած զենքերն հանձնենք» (Այս միջադեպը պատմեց մեզ օր. Ս. Քեշիշյան)։

1915 ապրիլ 19-ին երկուշաբթի առավոտուն սկսավ ազգային վարիչ մարմիններու ձերբակալությունը, անհիմն հարցաքն-

նության մը ենթարկելէ վերջ, սոսնք ևս կեդրոնական բանտ առաջնորդվեցան։ Ազգային շրջանակեն չի ձերբակալված մնաց միայն Մկրտիչ վրդ. Ջլղատեան. առաջնորդական փոխանորդը։

Ապրիլ 28-ին չորեքշաբթի օր ձերբակալվեցան հայ կուսակցականները և ահռելի ծեծերու ու ամենածանր տանջանքներու ենթարկվեցան։ Ծեծի տակ մեկ գիշերվա մեջ մեռան շատեր, որոնց մեջ կային տ. Աշոտ քահանան, Միհրան Պասթաճյանը, Կիրակոս Հովհաննեսյանը, Միսաք Շիրիկճյանը, մսագործ Վահանը, Տիգրան Ջագրճյանը և այլն։

1915 մայիս 1-ին ձերբակալվեցան քաղաքին բոլոր կարևոր դեմքերը և լեցվեցան մյուսաֆիրհանեներ։ Հազիվհազ 40—50 անձ բնակելիք շենքի մը մեջ լեցուցին 300—350 անձ։ Հաղորդակցութենե զրկված, աղտեղության և գարշահոտության մեջ խեղճ տառապյալները օրը տասն անգամ մահ կը փնտրեին, նեղութենեն, ծեծեն, նամանավանդ գարշահոտութենեն ազատելու համար։ Մայիս 7-ին կուսակցության ազդարարությամբ բռնի միջոցներով հավաքեցին հայերու զենքերը։

1915 մայիս 14-ին ուրբաթ օրը գիշերանց պաշարվեցան հայոց թաղերը։ Արշալույսին տանիքներն ու փողոցները լեցված էին ժանտարմներով, չերքեզներով, փոլիսներով և գանուններով։ Բռնի ույժով մտան տունները, փախստական զինվորի անվան տակ ձերբակալեցին 300 երիտասարդներ։ Հակառակ զինվորական օրենքին՝ փոխանակ բռնվածներն ախս-էսբեր մասնաճյուղը ղրկվելու, շիփ-շիտակ կեդրոնական բանտ տարվեցան։

Ֆեյզի պեյ Ճիզրեեն վերադարձին այցելեց շատ մը աշայիրներու՝ բրոպականտելով քյուրտ տարրը կյավուրները ջարդելու համար։ Գնաց Բեմման աշայիրին մեջ Ըշքեֆթան գյուղը Փիրիխան Խաթունին տունը։ Փիրիխանի որդին՝ Ամարոն, որ յուր ոճրագործություններուն համար կառավարութենեն Հեյիթին Մեյիթեն հետապնդվելուն՝ փախստական կը գտնվեր, Փիրիխան բերել կուտա Ամարոն, որ կելնե Ֆեյզի պեյի ներկայության, որմե կավետվի իրեն, թե յուր գործած բոլոր հանցանքներուն համար կայսերական ներում շնորհված է, և կը պատվիրե Ֆեյզի պեյը Ամարոյին, թե մոտ օրեն զինք Տիարպեքիր ուղելուն առանց վայրկյան կորսնցնելու անմիջական քաղաք իջնե, իրեն կարգ մը հրահանգներ պիտի տրուի կյավուրները ջարդելու համար։

Ֆեյզի պեյ մայիսի սկիզբը Տիարպեքիր վերադարձավ և ըստ իր հրահանգին ամեն գործ կարգի գտավ։ Բոլոր հայ երիտասարդությունը մոտավորապես 10 000 անձ քաղաքեն 20—25 ժամ հեռուները ղրկված էին։ Ազգային ժողովականները, կուսակցականները, կարևոր անձնավորությունները, ամբողջն ալ զնտաններու մեջ էին նետված։ Ջարդերու տոմը պատրաստված՝ վարագույրը բացվելու վրա էր. Ֆեյզի պեյի կսպասեին, որն ևս հասավ։

Քաղաքին գավառները իրենց գյուղերովը միասին, քյուրտ աշայիրներու և տեղվույն կառավարության ուժերով, տարագրության պատրվակավ ճամբա հանված մոտակա ձորերու մեջ սպանված, լմնցած էին և գեղադեմ հարս ու աղջիկները առեվանգված էին։ Քաղաքին մոտակա գյուղերն ամեն գիշեր նորակազմ Միլիս Թապուռին երթալով 4—5 գյուղ կոչնչացներ՝ սպաննելով և թալանելով ամեն ինչ։

Կարգը հասած էր քաղաքին հայության ոչնչացման։ Ֆեյզի և Բեշիտ պեյերը արյունաբերան կտրած 3 գիշեր Ուլի Ճամիի մեջ կը բանախոսեին կյավուրներու ջարդին համար, և գեշ կերպով կը պատվիրեին թուրք հասարակության, թե ոչ ոք մեկ հայ երեխա անգամ չի պիտի պահեր, ով որ հայ մը պահեր՝ մահվան պիտի ենթարկվեր։ Այս օրերուն, իթթիհատի գոմիթեն նախագահությամբ Ֆեյզի պեյին մեծ ժողով մը կը գումարե, որուն ներկա կը գտնվին բոլոր առաջնակարգ էշրեֆները, իթթիհատականները, նագիպ-էշրեֆ, նույնիսկ մուֆթին։ Օրակարգն էր հայերուն ջարդի խնդիրը։ Կը վիճեին, թե բոլո՞ր հայերը սրե անցնելու, թե՞ պզտիկներուն խնայելու է։ Մեծամասնությամբ կորոշեն, որ օրորոցի մանուկներն անգամ ջարդելու է, մինակ մուֆթին շատ կը պնդե, թե մինչև 12 տարեկաններուն խնայել և զանոնք իսլամացնելու է, սակայն անլսելի կըլլա, որովհետև ամբողջ ժողովը Ֆեյզի պեյի բերանը կը նայեր, որ ամբողջ ուժով կը պնդե, թե օրորոցի մանուկներն անգամ պիտի ոչընչացվին։ Ժողովը միաձայնությամբ որոշում կուտա հայոց բնաջնջման, որոշումը կստորագրեն ամբողջն ալ և գրությունը կը հանձնեն կուսակալ Բեշիտ պեյին։

635 նահատակներն Պեզվանու ձորին մեջ

Եկած էր ժամանակը Փիրիխանի որդին Ամարոն Տիարպէքիր կանչելու, Ֆեյզի պեյի հրամանին վրա Ամարո անմիջական քաղաք իջած էր, յուր չաքմաքլիով, լայն շալվարովը, կնոջի ապա

վերարկույովը և կես մետր բարձրությամբ բրդե շինված քյուլահովը։ Կատարյալ լեռան արջ մըն էր։ Հեյեթեն միյեթեն կառավարության կողմանե խստիվ հետապնդված գազանն, այսօր միևնույն կառավարության ժանտարմա գոմանտանին հետ կառքին մեջ նստած կուսակալին այցելության կերթար։

Կուսակալը սիրով կընդունի Ամարոն։ Ներկա կը գտնվի Ֆեյզի պեյը։ Երկու պեյերու կողմանե Ամարոյի կը հրահանգվի սապես։ «Զավակս, Ամարո, մի քանի օրեն 6—700 հայեր, մեր յավեր շերքեզ Շաքիր պեյի հրամանատարության տակ Մոսուլ աքսորվելու պատրվակավ պիտի հասնին Ըշքեֆթան գյուղն, այնտեղ յավեր Շաքիր պեյին հրահանգին համաձայն ամբողջ աշայիրովդ պիտի ոչնչացնեք զանոնք, առանց մեկ հայու մը խնայելու, և եթե իմանանք մեկ հայ ազատած եք, պատասխանատու եք, գիտցած եղիք։ Ամարո կուսակալի և Ֆեյզի պեյի հրամանն ընդունելով՝ հաջորդ օրը մեկնեցավ լաստով դեպի Ըշքեֆթան, Թեքելիֆ հարպիյի կողմեն երկու կառք պարան տրվեցավ իրեն, որ իրեն հետ միասին տարավ Ըշքեֆթան։ 1915 մայիս 27-ին կրկին անգամ պաշարեցին հայոց թաղերը։ Միլիսներու կողմե խուզարկության ենթարկվեցան տունները։ Նույն օրը ձերբակալվեցին նաև 100-ե ավելի անձեր։

Ամբողջ բանտարկյալներուն թիվը հասած էր 970—980 անձի։ Կուսակալը քննիչ հանձնախումբ մը կազմեց Ֆեյզի պեյի նախագահության տակ, որոնք պարապեցան միայն մեկ օր, իրենց ներկայության հանելով բոլոր ձերբակալվածները, Ֆեյզի պեյ աչքե կանցներ զանոնք մի առ մի, հարցնելով անուն, մականուն, նշանակելով կարևորագույններու անունները տոմարի մը մեջ թվով 635։

1915 մայիս 28-ին ուրբաթ օրը ձերբակալեցին առաջնորդական փոխանորդ Մկրտիչ վրդ. Չլղատեանը և դրին կեդրոնական բանտի վերնահարկը, զատեն սենյակի մը մեջ, հաղորդակցութենե զրկված։

Հաջորդ օրը բանտարկյալներուն ազդարարվեցավ, որ Մոսուլ պիտի աքսորվին։ Մայիս 30-ին՝ կիրակի օրը, արշալույսին, շինված ցանկին համաձայն բանտեն հանեցին այդ 635 անձերը, որոնք քաղքին հայության լավագույններեն էին, կը շրջապատեն զիրենք ամբողջ Միլիս Թապուռիի և շերքեզներու ուժերով, աքսորականներու մեջն ըլլալով նաև Չլղատյան վարդապետը։ Կառաջնորդեն զիրենք դեպի Տիգրիս գետը, ուր կամուրջին տակ 13

լաստ կը սպասեր պատրաստ. կը տեղավորեն աքսորականները լաստերուն վրա՝ շրջապատված միլիս և շերքեզ ուժերով. յավեր շերքեզ Շաքիրի հրամանատարության տակ լաստերը կարձակեն Տիգրիս գետին վրա, ճամփորդությունը կը սկսի։ Սակայն Չլղատյան վարդապետը հեռաձայնով Մարտին Գափուեն ետ վերադարձուցին և նորեն բանտ դրին. նույն գիշերը խեղճ կղերականը բանտեն հանելով փողոցներուն մեջ թմբկավոր ամբոխով մը, իբր արջ երեսին մուր քսելով, վիզը զանգակներ կախելով, գլուխը պախուրձ անցնելով, կը խայտառակեն հոգևորականն անվայել ընթացքներու մեջ։

Փողոցները շրջան ընելե վերջ, կը բերեն զինք կառավարության շենքին կից ճամիին բակը, թմբկավոր շեխերն թմբուկները զարնելով, կաղ կը սրսկեն Չլղատյանի մորուքին և կուրծքին, լուցկին տալով կրակը կը բռնկի։ Խղճալի վարդապետը կսկսի ցատկոտել, շեխերն իրենց ցանկությունը կը հագեցնեն ըսելով.— «Մուրախաս էֆենտի օյնիյոր...»։ Կիսամեռ վիճակի մեջ ջուր կը լեցնեն՝ մարելով կրակը, խելակորույս վիճակի մեջ կը վերցնեն զինք՝ նետելով բանտին հիվանդանոցին մեկ ախոռը, երկու միլիս հոն դնելով, հետո փայտի հարվածներու տակ կվերջացնեն Չլղատյանի կյանքը։

Լաստերը հունիս 19-ի օրը, դեռ Փիրիխանի Ըշքեֆթան գյուղը չհասած, Ամարոյին լուր հասած էր, որ կը մոտենան աքսորականները։ Ամարո քանի մը քյուրտերով հեռվեն երկու հրացան կարձակե՝ առաջին սուրացող լաստին վրա նստած աքսորականներեն երկու մարդ վիրավորելով։ Յավեր Շաքիր հրաման կուտա միլիսներուն, որ ցամաք ելնեն և էշքիաներն հալածեն. միլիս և շերքեզներեն մաս մը ցամաք ելնելով՝ կը հետապնդեն քյուրտերը, որոնք քիչ վերջ վերադառնալով կըսեն, որ երեք քյուրտ սպաննեցինք, մյուսները փախուստ տվին։ Յավեր Շաքիրն յուր նստած լաստին մեջ առած էր երեսփոխան Զրաճյան, Գազեզյան, Ապտուլ-Մեսիհ, Տիրան էֆենտիներն և ուրիշ շատ մը բարձր դիրքի տեր հայեր, որոնց կըսե, որ ճանապարհը վտանգավոր կտեսնեմ, խոսեցեք աքսորականներուն, որ իրենց վրա գտնված դրամները բերեն ձեզ. ահավասիկ պայուսակ մը լեցուցեք մեջը, յուրաքանչյուրի անունն և հանձնած դրամը նշանակեցեք, դրամները թող մնան այս լաստին վրա, արդեն ուժի մեծ մասը այս լաստին պիտի հատկացնեմ։ Այս վտանգավոր վայրեն անցնելուս պես յուրաքանչյուրի դրամն իրեն թող հանձ-

նրվի նորեն։ Յավերի հրամանին համաձայն կը հավաքեն դրամները լման 6000 (վեց հազար) ոսկի կը հանձնեն իրեն։

Լաստերն կը շարունակեն ճանապարհը, մեկը մյուսեն քիչ հեռավորությամբ, կը հասնին Ըշքեֆթան գյուղը։ Յավերը կը հայտարարե, որ պարտավորված է ջուրի ճամփորդությունը ձգել և ցամաքի ճամբով ընթանալ, պատճառ բռնելով քրդական մեծ հրոսակախումբը մը, որ պիտի հարձակի վրանին, ատոնց դիմադրելու չափ ուժ չունենալուն որոշած է ճանապարհը փոխել։ Յավերը կըսե, որ այս գիշեր հյուր պիտի մնաք այս Ըշքեֆթան գյուղը։

Առաջին լաստին վրա գտնված աքսորականները ցամաք կը հանեն, վեցական մարդ կը զատեն, իբր թե գյուղին մեջ ամեն տան վեց մարդ հյուր պիտի տան, կառնեն վեց մարդերը, կառաջնորդեն գյուղ. այն տեղ ձեռքերնին կը կապեն այն պարաններով, որ Ամարո Թեքելիֆեն բերած էր։ Կապյալները կը տանին գյուղեն հեռի Պեզվանու ձորը։ Երկու վայրկյան վերջը ուրիշ վեց հայ կապյալ կը հասցնեն ձորը։ Այսպես շարունակելով, հաջորդաբար 635 հայերը կապված կը լեցնեն որոշված սպանդանոցը։

Ձորի բարձունքները և բլրանը բռնված էր ամբողջ Բեմման աշիրեթովն՝ Ամարոյի հրամանատարության տակ, միլիս և չերքեզ զորքերով՝ յավերի և միլիսի հարյուրապետներու հրամանին տակ։

Ալ կրնաք երևակայել օրհասական սրտապատառ տեսարանը, աղմուկն ու վայնասունը։ Ոմանք արտասվելով, ոմանք անարգելով, ոմանք աղերսելով, ոմանք հայհոյելով, ոմանք Աստված ուրանալով, օգնությո՜ւն, օգնությո՜ւն կը պոռան, երկինք կը դղրդացնեն, բայց իզուր։

Վերջապես յավերն ու միլիսի հարյուրապետներն իրենց սուրերն վար առնելով, նշան կուտան կրակի, երկու ժամ ամբողջ հրացանաձգություն կըլլա միլիսներու, չերքեզներու և Ամարոյի աշիրեթի կողմանե։ Ձորը խոր լռության կը մատնվի, ամբողջին դիակները գետին փռված, արյունի գետակը միայն ձորեն կը վազե, յավեր կը հրամայե, որ միլիս և չերքեզները իջնեն ձորը, քննեն դիակները, տակավին դիակներուն մեջ շունչ ունեցողներ եթե կան՝ լմնցնեն։ Միլիս և չերքեզները վար իջնելով գեռ շունչ ունեցողներուն գլուխները կտրելով կը վերջացնեն։

1915 հունիս 19-ի երեքշաբթի օրը, արևմուտին, հայության

կարևորագույն, կարող, հարուստ, քաղաքին պարծանքն եղող անհատներու արևն իսպառ խավարեցավ, իրենց գերեզման ըլլալով Պեզվանու ձորն։ Անոնց դիակները շուներու և գիշատիչ թռչուններու կեր եղան։

Չի մոռնանք հիշել, որ իժի ծնունդ Ֆեյզի և Բեշիտ պեյերը 8—10 օր վերջ Ամարոն կրկին Տիարպեքիր հրավիրեցին, հանձնարարելով իրեն, որ հառաջանա դեպի Ամպար գետակը, իբր թե այնտեղ 4—5 հայ հեղափոխականներ կան բռնելու կամ հակառակ պարագային սպանելու համար։ Ֆեյզին և կուսակալն Ամարոյին հետ դրին 10 հատի չափ չերքեզներ իբր օգնական ույժ։ Ամպար գետակը չի հասած աղբյուրի մը մոտ չերքեզներու չավուշը կը խնդրե, որ մի քիչ հանգստանան և ապա շարունակեն ճանապարհը։ Չերքեզ չավուշը, չերքեզներուն աչքի նշան մ'ընելուն, անմիջապես չերքեզները բոլորն ալ իրենց հրացանի գնդակները կը տեղացնեն Ամարոյի մարմնուն, որն անակնկալի բերելով գետին կը փռեն. այս ալ քաղաքական հեռատեսություն մ'էր. Ֆեյզի և Բեշիտ պեյերը պետք էր Ամարոն մեջտեղեն վերցնեին, որպեսզի ապագային Ամարոն ավելի կամ պակաս չի խոսեր։

Մեքթուպճի Պետրետտին և գոմսեր Կավրանլի զատե Մեմտուհ պեյերը Մարտին ղրկվեցան, մին կառավարիչ և մյուսը գոմսեր՝ Մարտինի հայերը ջարդելու համար։ Ֆեյզի և Բեշիտ պեյերու կողմե կը հանձնարարվեր կառավարիչ Պետրետտինին, որ ամենեն առաջին գործն ընե քանի մը խոշոր հորեր փորել տալ, որպեսզի Տիարպեքիրեն և Մարտինեն տարագրվելիք ընտանիքները ղրկվին հորերուն գլուխը, այնտեղ ջարդվելով դիակները հորերը նետվին։

Պետրետտին առանց աշխատելու Բեսուլայնի մոտերը հին ժամանակեն մնացած պատրաստ խոշոր հորեր գտավ, որոնք եղան Տիարպեքիրի և Մարտինի հայության գերեզմանները։

Հունիս ամսո սկիզբներն էր, որ ձեռնարկվեցավ Տիարպեքիրի հայ ընտանիքներու տարագրության։ Միլիս Թապուռիի հազարապետ Շեֆգի և ժանտարմա գոմանտանի Բյուշտի պեյերը, ամեն օր ժամը 4—4 1/2 ըլլալուն, քանի մը միլիսներով և չերքեզներով կը մտնեին հայ տուները, կարձանագրեին տան անդամները և պահակներ կը դնեին տուները, արգիլելով տունեցիներուն դուրս ելնել, գիշերով բռնի կը հանեին զիրենք իրենց տուներեն, կը ղրկեին Մարտին, անկից ալ Բեսուլայնի հորերու գլուխը, այն-

տեղ չարդելով ամենքը կը նետեին հորերուն մեջ։ Բյուշտի պեյի և Շեֆգիի գործն այս էր. ամեն օր միօրինակ 30—40 ընտանիք տարագրել։ Այս վիճակը շարունակված է մինչև 1915-ի հոկտեմբեր ամսույն սկիզբները, մինչև որ Տիարպեքիրի հայությունն իր շրջակա գավառներով ու գավառակներով միասին բնաջնջվեցավ։

Տիարպեքիրի հայության անձի կորուստն է 35—36 000. իսկ շրջակայքից անձի կորուստն է մոտավորապես 40—45 000։

Տիգրան Մկուռդ, *Ամիդայի արձագանքներ*, Նյու Յորք, 1950, էջ 246—253։

180. ԿՈՏՈՐԱԾԸ ՄՈՒՇՈՒՄ ԵՎ ՍԱՍՈՒՆՈՒՄ 1915 Թ.

(Ականատեսի հիշողություններից)

Սասունի հայերը, կոտորածի երկյուղից, վաղուց արդեն դադարել էին կապ պահպանել քաղաքի հետ և պատսպարվել էին իրենց անմատչելի սարերում։

Հունիսի 20-ից հետո [1915] քաղաքային դարպասները փակվեցին Մշո դաշտի բոլոր հայերի համար, և գյուղից գյուղ օրը ցերեկով անցնելն անհնար դարձավ, որի հետևանքով մենք զրկվեցինք տեղի ունեցող իրադարձությունների մասին ճշգրիտ տեղեկություններից...

Հունիսի 23-ին 10 քուրդ ձիավորներ հայտնվեցին մեր գյուղում և գյուղական իշխանություններից պահանջեցին տասը ոչխար, տասը չափ ալյուր ու տասը հատ թաղիք։

Այն բանից հետո, երբ քրդերի պահանջը անհատույց կերպով բավարարվեց, նրանցից մեկը, անունը՝ Թամո Ալի, ասաց. «Հայե՛ր, ես պետք է ձեզ ճշմարտությունն ասեմ։ Սուլթանից հրաման է ստացված, որ բոլոր հայերը, որոնք ապրում են օսմանների երկրում, պետք է անգթորեն ոչնչացվեն։ Սիլվանի հայերն արդեն կոտորված են... Չորս-հինգ օր հետո այստեղ էլ կսկսվի կոտորածը, բոլորը, մինչև վերջին մարդը, ոչնչացվելու են, մեկ մարդ իսկ ողջ չի մնալու...»

Հունիսի 25-ի գիշերը Խասգյուղից մեզ նամակ ուղարկեցին, որի մեջ ասվում էր. «Մռայլ, սև ամպեր են կախվել մեր գլխին։ Հաջի Մուսա բեկը 2500 ձիավորներով ու հետևակով արդեն երկու օր է, ինչ տեղավորված է մեր գյուղում...»

Հունիսի 27-ին Արաղ գյուղը ներխուժեց վանեցի հարյուրապետ Քյամիլ էֆենդին՝ 200 ժանդարմների ու քրդերի գլուխ անցած։ Բոլոր տղամարդկանց, բացառությամբ ծերերի, կապոտեցին և փակեցին մի մեծ փարախում։ Փախուստի փորձ կատարելիս սպանվեցին Տիգրանը, Ոսկանը և Կարոն, իսկ Ստեփանը ծանր վիրավորվեց։ Ժանդարմները ցրեցին կանանց, որոնք հավաքվել էին, որ գնան Մուշ՝ իրենց բողոքը հայտնելու կառավարությանը։ Հունիսի 28-ի առավոտյան, դեռ արևը չծագած, Քյամիլ էֆենդին իր ջոկատով գնաց դեպի Առաքելոց վանքի կողմը՝ իր հետ տանելով արաղցի 55 տղամարդկանց՝ ձեռքները կապած։ Այնտեղ տեղի ունեցած փաստերի մասին էրզրումցի ժանդարմ Ախմանդը հետագայում ինձ պատմեց հետևյալը.

«Հենց որ հասանք վանք, Քյամիլ էֆենդին, ոտքը հենելով մի բարձր քարի, հրամայեց գնդակահարել հայերին։ Մենք իսկույն ուղղեցինք 200 հրացանների փողերը կապկպված հայերի վրա և կրակ բացեցինք։

Երբ մոտեցանք, որ ստուգեինք, թե բոլո՞րն են սպանված արդյոք, նրանցից մեկը տեղից վեր թռավ և, ազատվելով պարաններից, սկսեց փախչել Մերինի կիրճի կողմը։ Ամբողջ ջոկատը, կրակելով, ընկավ նրա հետևից։ Երկար հետապնդելուց հետո միայն, մենք կարողացանք նեղ կիրճում գնդակահարել նրան»։

Ես ինքս անձամբ գնացի նկարագրված հանցագործության վայրը և իմ աչքով տեսա սպանվածների արևի տակ չորացած 55 կմախքները։

Մինչ Քյամիլ էֆենդին 55 անմեղ երիտասարդ գյուղացիներին տարել էր զոհաբերելու պատմական վանքի հողում, Խասգյուղից դեպի Բերդակի, Արաղի, Դերկևանի և Ալիզրանի կողմն էին սլանում ձիավորներ՝ ծխի և փոշու սյուներ բարձրացնելով։ Մեր գյուղը 4 կմ հեռու է Բերդակից և Արաղից և գտնվում է բարձր սարի լանջին։ Այդ բարձունքից մենք տեսնում էինք այն ամենը, ինչ տեղի էր ունենում հարթավայրում։

Սպանելով հնձվորներին, հովիվներին ու ջրվորներին՝ Հաջի Մուսա բեկի ձիավորները ներխուժեցին գյուղը և, մարդկանց դուրս վռնդելով տներից, տավար-ոչխարի հոտերի հետ միասին, քշեցին դեպի դաշտը, հետները վերցնելով նրանց ունեցած-չունեցածը, ընդհուպ մինչև ավելները։

Ի նկատի ունենալով լեռների անմատչելիությունը՝ Հաջի

Մուսա բեկը շտապում էր ոչնչացնել դաշտավայրի գյուղերի հայերին, որպեսզի հաջորդ օրը հարձակվեր Հավատորիկ գյուղի վրա։

Մեզ հետ տան կտուրին կանգնած այդ ամբողջ զազրելի տեսարանը դիտում էր մշտական հարկահավաք Յուսուֆը՝ երկու ժանդարմների հետ, որոնք երեք օր առաջ եկել էին գյուղ, ինչպես և մեզ ծանոթ քուրդ Թոնդոն։

Յուսուֆը վախեցավ և խնդրեց ճամփու դնել իրեն։ Նա ստացավ վաղօրոք հավաքած հարկերը, 3000 ղուռուշ գումարով, և իսկույն նեթ մեկնեց։

Մենք Թոնդոյին խնդրեցինք անձամբ իջնել Բերդակ և Արաղ և մեզ ճշգրիտ տեղեկություններ բերել կատարվածի մասին։ Նա գնաց հասավ Բերդակ և, վերադառնալով, հաղորդեց. «Հայե՛ր, ես չեմ կարող ձեզնից թաքցնել ճշմարտությունը, քանի որ մենք ձեզ հետ հաճախ աղ ու հաց ենք կերել։ Ե՞լք գտեք. կա՛մ երկինք պիտի համբարձվեք, կա՛մ գետնի տակը թաքնվեք,— ախր շուտով ոչ մի հայ չի մնալու։ Եթե հիմա գնաք Բերդակ գյուղը, ապա ձեզ կթվա, թե այդ գյուղում հավանաբար 50 տարի մարդ չի ապրել։ Չեն փրկվել նույնիսկ շներն ու կատուները։

Փողոցներում մի քանի դիակներ տեսնելով՝ Մուսա բեկի ձիավորներին հարցրի այդ սպանության պատճառը։ Նրանք պատասխանեցին. «Հրաման կա, որ այսուհետև ով որ օսմանների հողում տա Հիսուս Քրիստոսի անունը, չպետք է կենդանի մնա»։ Նրանք հայտնեցին նաև, որ բոլոր գյուղացիներին քշում են ներքին գյուղերը և, փակելով մարագներում, վառում են»։

Այսպիսով, վերին գյուղերը թալանված են, իսկ ներքևիններ-ը, ինչպես օրինակ՝ Նորշենը, Սոզգոմը, Օխունկը, Հունանը, Քրդագոմը և մյուսները, մոխրակույտի են վերածված։

Հունիսի 29-ի գիշերը Քրդագոմի և Հունանի մարագներում մոտ մեկ հազար հայերի էին այրել՝ կանանց, երեխաների, երիտասարդների ու ծերերի։

Մեկ գիշերվա ընթացքում նման իրադարձություններ էին տեղի ունեցել տարբեր գյուղերում... Այսպիսով, Մշո դաշտը, որտեղ շատ դարեր առաջ ապրել ու աշխատել է հայ հողագործը, միայն մեկ օրվա մեջ՝ հունիսի 28-ին (հուլիսի 10) կառավարողներ Էնվերի և Թալեաթի հրամանով, վերածվեց անապատի։ Զարհուրելի կոտորածի հետևանքով զոհվեցին 105 գյուղերի 75 000 անզեն և անմեղ հայեր։

Այս կոտորածից քաղաքի հայերը տեղյակ չէին։ Իսկ ի՞նչ էր տեղի ունենում Մուշ քաղաքում։

Ոստիկանության պետ Բեզեր էֆենդիի միջոցով Սերվաթ փաշան իր մոտ կանչեց քաղաքի առևտրականներին, արհեստավորներին, հայ աստիճանավորներին, այդ թվում և՝ եկեղեցու գլուխ վարդան վարդապետին, ընդամենը 350 հոգու, և հայտարարեց.

«Ինձ անհայտ պատճառներով հրաման է ստացվել, որ դուք բոլորդ պետք է թողնեք Մուշը և տեղափոխվեք Դիարբեքիր, մինչև պատերազմի վերջանալը»։ Այս ասելուց հետո, նա բոլորին հանձնեց ժանդարմների ձեռքը։ Այդ գիշեր հայերի՝ քաղաքի բնակիչների մեջ խուճապ ընկավ։ Հունիսի 27-ին ոչ մի նոր բան չհաղորդվեց, և հայերը փակված մնացին իրենց տներում։ Հունիսի 28-ի առավոտյան չաուշը, անցնելով փողոցներով, հայտարարում էր. «Հայե՞ր, համաձայն մութեսարիֆ փաշայի հրամանի, պարտավոր եք ժամը 10-ին հավաքվել կառավարական գրասենյակի մոտ՝ ձեր ձիասայլերով, ձիերով, անասուններով, ձեր ամբողջ եղած-չեղածով և ընտանիքներով՝ Դիարբեքիր գնալու համար։ Ով որ չենթարկվի այս հրամանին, կարտաքսվի քաղաքից և նրա ունեցվածքը կբռնագրավվի»։

Հայերը չենթարկվեցին հրամանին և մնացին իրենց տներում։ Բայց չնայած Մշո դաշտի հայերի դիմադրությունն այնքան անշան էր եղել, այնուամենայնիվ Սերվաթ փաշան հրամայեց չորս թնդանոթներ դնել քաղաքի բարձունքների վրա և դրանց փողերն ուղղել հայոց թաղի կողմը։ Քաղաքի բոլոր ծայրերում խրամատավորվել էին գնդացիրներով ու հրացաններով զինված զորքերը և սպասում էին հրամանի։

Հունիսի 29-ի առավոտյան քաղաքային ոստիկանները զինված ժանդարմների ուղեկցությամբ շարժվեցին դեպի վերին թաղը՝ նպատակ ունենալով բռնությամբ աքսորել հայերին անհայտ ուղղությամբ։ Ասատուր աղայի տանը պատսպարված զինված հայերի մի խումբ ինքնապաշտպանություն էր կազմակերպել։ Իմանալով այդ մասին, Սերվաթը հրամայեց հրետանային կրակ բացել։ 12 հազար հայեր կանգնած էին ճակատագրական կործանման փաստի առաջ, և գնդակների կարկուտի տակ բոլորը մեկ մարդու պես ակսեցին պաշտպանվել՝ որոշելով պատվով մեռնել։

Քաղաքի շրջակայքից շարժվեցին զորքերը՝ ճանապարհին հրկիզելով տները։ Անհավասար կռիվ մղելով՝ հայերը նահան-

ջեցին և կենտրոնացան քաղաքի ձորում։ Թուրքական զորքերին օգնում էին նաև քաղաքի թուրք բնակիչները և հենց նոր եկած ջոկատները։

Հայերի վիճակը ավելի ու ավելի էր վատանում։ Պաշտպաններից շատերը զոհվեցին։ Փամփուշտը չէր բավարարում։ Թընդանոթների արկերից գիշեր ու ցերեկ այրվում-մոխրանում էին հայերի տները։

Սարսափահար կանայք ու երեխաները, իրար կոխկրտելով, փախչում թաքնվում էին տների նկուղներում, ձորերում։ Երրորդ օրվա գիշերը տանջահար և հուսահատ հայ երիտասարդները, հրաժեշտ տալով իրենց հարազատներին՝ փորձեցին դուրս գալ շրջապատումից։ Նրանցից շատերը հանդիպելով ջարդարարներին՝ զոհվեցին, և միայն աննշան մասին հաջողվեց ճեղքել օղակը և փախչել քաղաքի սահմաններից դուրս։

Հուլիսի 3-ի վաղ առավոտյան արյունռուշտ հրոսակախումբը կատաղորեն ներխուժեց ձորը, որտեղ մորթոտեցին և այրեցին տասնյակ հազարավոր կանանց, երեխաների և ծերունիների։

Քաղաքում և Մշո դաշտում ոչ մի կենդանի հայ չմնաց, և միայն ավերակների ու մոխիրների մեջ երևում էին նրանց սևացած դիակները։

Ի պատիվ այս «հաղթանակի», կառավարությունը հրաման տվեց «հանդիստ առնել» և թույլատրեց բաժան-բաժան անել հայերի կողոպտված ունեցվածքը։

Կառավարությունը ամենախիստ կերպով կանխորոք զգուշացրել էր մուսուլման բնակիչներին, որ «եթե որևէ մեկը համարձակվի իր տանը ապաստան տալ հայ երեխաների, կանանց և աղջիկների, ապա հայտնաբերվելու դեպքում թաքցնողը կհամարվի հայ և գլխով կփոխհատուցի»։

Այս հրամանը, որն իրագործվում էր քաղաքի խուզարկու ոստիկանության հսկողությամբ, իր ներգործությունն ունեցավ։ Թուրքերից ոչ ոք չհամարձակվեց իր տանը ապաստան տալ ո՛չ երեխաների, ո՛չ աղջիկների, այնինչ գյուղերում քրդերը օգնում էին, որ նրանք փախչեին ազատվեին։ Այդկերպ ազատված և մինչև մեր սարերը հասած փախստականներից էլ հենց լսեցինք սարսափելի, հոգեցունց պատմություններ բոլոր այն չարագործությունների մասին, որ նրանք տեսել էին իրենց աչքով...

Իսկ այն հայերը, որոնք ինչ-որ հրաշքով դեռ ողջ էին մնացել, փախչում էին մոտ ու հեռու վայրերից և գալիս բարձրանում էին Անդոկ սարը (Սասուն) կամ Քանասարը (Մշո դաշտից ոչ հեռու)։ Հուլիսի կեսերին Անդոկում 45 հազար մարդ էր կուտակվել, իսկ Քանասարում՝ 15 հազար։ Բազմաթիվ քուրդ ցեղեր Խիանքից, Բատկանից, Սարմեից, Շեկուդանից և Բդարից մայիսի սկզբին ամեն օր հարձակումներ էին գործում Անդոկի վրա, բայց խիզախ սասունցիների հարվածների տակ փախուստի էին դիմում։ Առանց զորքերի ու թնդանոթների նրանք չէին կարող ճնշել հայերի դիմադրությունը։

Քյամիլ էֆենդին Արաղի հայերին ոչնչացնելուց հետո, հրամայեց սպանել նաև Առաքելոց վանքում գտնվող 30 ոբքերին, ծեր վանահորը, 70 տնտեսուհիներին ու բանվորներին...

Օգոստոսի 1-ի լուսաբացին Քյամիլ էֆենդին 300 զինվորներով Ծիրնկատարի բարձունքներից հարձակվեց Հավատորիկի սարերում կուտակված անզեն հայերի վրա, մտավ Քանասար գյուղը և հրի մատնեց 60 տուն։ Ողջ մնացած հայերը ցրիվ եկան տարբեր կողմեր։

Օգոստոսի 5-ին մենք լուր ստացանք, որ Կազում բեկը ավարտելով Սասունի կոտորածը՝ այնտեղից շարժվել է Կանի կողմը և իր զորքով գիշերել է սարերում՝ Կրդ գյուղի մոտ։

Հենց նույն օրը դաշտի կողմից Քանասարի ուղղությամբ հարձակվեց Հաջի Մուսայի զորքը։ Տեղից շարժվեց նաև Կազում բեկը։ Ցերեկվա ժամը 11-ին հարձակվեցին հավատորիկցիների վրա և դեռ մինչև արևամուտը այդ ձորում կոտորեցին 500 հոգու։

Ապաստարաններում թաքնված վերջին հայերին բռնելու և ոչնչացնելու համար սիստեմատիկ խուզարկություններ կատարելու նպատակով Մուրադ բեկը 500 հոգանոց զորքով մնաց Սեմալ գյուղում։ Քյամիլ էֆենդին 300 զինվորով հաստատվեց Առաքելոց վանքում, իսկ Հաջի Մուսան և մյուսները գործում էին այնտեղ, որտեղ որ հարկ էր լինում։

Մի անգամ, երբ Քյամիլ էֆենդիին այցելեց Մուրադ բեկը, մերոնցից մեկը հայտնեց, թե նա կանչում է ինձ։ Երբ ես ներկայացա նրան, նա ինձ ասաց. «Վարպե՛տ, գիտե՞ս ինչ կա։ Մուրադ բեկն ասում է, որ այն կանայք ու երեխաները, որոնք չունեն ամուսիններ ու հայրեր, և որբացածները պետք է ուղարկվեն Դիարբեքիրի կողմը. այնտեղ տաք է լինում, թող ապրեն իրենց համար։ Իսկ նրանք, ովքեր ամուսիններ ունեն, կմնան այստեղ։ Վարպե՛տ, դու մեր չաուշների հետ գնա՛ գյուղը և գրի առ այդպիսիներին»։ Հրամանն իսկույն կատարվեց։ Եվ

հենց նույն օրը ժանդարմները Արաղից 300 կանանց ու երեխաների դուրս հանեցին և տարան Մուշի ճանապարհով։

Չորրորդ օրը, գիշերվա ժամը 12-ին, մեր տան դուռը բացվեց և մեր սենյակը մտավ մի կին՝ սարսափահար դեմքով, մազերն ուսերին թափթփված, պատառոտված շորերով և, քարացած, զարմացած հայացքով նայեց մեզ։ Սկզբում չճանաչեցի նրան, բայց երբ մայրս նրան դիմեց, հարցնելով. «Մանիշա՜կ, էդ դո՞ւ ես»,— ես իսկույնևեթ հիշեցի նրան։ Մանիշակը այն կանանց մեջ էր, որոնց ուղարկեցին Դիարբեքիր։ Նա նստեց ու պատմեց հետևյալը.

«Մեզ 20 ժանդարմներ տարան հասցրին Մուրադ գետի ափը։ Արդեն իրիկնանում էր, երբ մեզ կանգնեցրին և սկսեցին խուզարկել։ Խլեցին այն ամենը, ինչ որ գտան։ Ապա ստիպեցին հետ քաշվել և սկսեցին գնդակահարել մեզ։ Մենք, սարսափահար, ճիչ ու ողբով, նետվեցինք, որ փրկություն գտնենք Մուրադ գետի ալիքներում։

Ափին կանգնած ժանդարմները անընդհատ կրակում էին մեզ վրա։ Ես էլ հանձնվեցի հոսանքին և առաջ լողացի, բայց երբ մթնեց, բռնեցի գետափի խոտերից և այդպես տեղում մնացի, մինչև որ գիշերը վրա հասավ և հրաձգությունը դադարեց։ Մի կերպ ափ դուրս ելա և հազիվհազ եկա հասա այստեղ»։

Հոկտեմբերի 27-ին մութեսարիֆ Շեֆգի փաշան 22 ձիավորներով եկավ Արաղ և պահանջեց, որ այնտեղ գտնվող հայերը անհապաղ գրանցվեն և ուղևորվեն դեպի Մուշ մահմեդականություն ընդունելու համար։ Երբ բոլորը հավաքվեցին տեղական իշխանությունների գրասենյակի դռանը, զինված ժանդարմները սվիններով քշեցին տարան 600 գերիներին Մուշ տանող ճանապարհով։ Մուշ հասնելուց հետո, գերիների զանգվածից ջոկեցին բոլոր տղամարդկանց՝ 150 հոգի, և տարան դեպի արևվելք՝ Բիթլիս, իսկ կանանց ու երեխաներին քշեցին դեպի արևմուտք։ Այդ 600 գերիների հետագա ճակատագրի մասին ոչ մի լուր չստացանք և հետո միայն իմացանք, որ նրանք բոլորն էլ սպանվել են։ Բոլոր այն վայրերում, որտեղ հայերը գերի էին հանձնվում, կրկնվում էր նույնը, ինչ որ Արաղում։

1916 թ. հունվարին Մուշում ողջ չէր մնացել համարյա ոչ մի հայ, կային սոսկ մենավոր կանանց ու երեխաների ուրվականներ, որ մերկ ու անտուն, թաքուն թափառում էին քաղաքի

փողոցներում ու քրդական գյուղերում։ Սասունի հայկական գյուղերն այրված էին և լրիվ ամայացած։ Մնացել էին միայն շնչին թվով դերձակներ, հյուսներ, քարտաշներ, պայտարներ ու դարբիններ, որոնք, պատսպարված տարբեր տեղերում, մի կերպ պահպանում էին իրենց գոյությունը։

Իմ հարևանը՝ 60-ամյա Ալի աղան, շատ բարի թուրք էր։ Այդ ամեն նա իր տանը պատսպարեց ու փրկեց յոթ հայերի։ Մի անգամ Ալի աղային հարցրի իմ 350 հայրենակիցների ճակատագրի մասին, որոնց Սերվաթ փաշան ուղարկել էր Դիարբեքիր։ Նա ինձ պատմեց հետևյալը. «Վարպե՜տ, հենց այս առավոտ, ես, Հաջի Հալիմ էֆենդին և Բաղուլ էֆենդին ձիեր հեծանք ու գնացինք Ալիշխան գյուղը, որ Բաղուլ էֆենդու կողմից հայերին պահելու հանձնված անասունները քշեինք տանեինք Մուշ։ Գյուղը լեցուն էր ժանդարմներով, որոնք մեզ ասացին, թե 350 հայեր իրենց պարագլխի հետ փակված են մարագում։ Այդ լուրով հետաքրքրված՝ մենք բարձրացանք մի փոքր տան տանիքը և սկսեցինք սպասել, թե այդ ամենը ինչով է վերջանալու։ Կես ժամ անց, սերթեբիբը (զինվորական բժիշկը) 150 ժանդարմների ուղեկցությամբ մոտեցավ մարագին, բացեց դուռը և հրամայեց դուրս հանել հայերին։ Նրանք բոլորը շղթայված էին ու միմյանց հետ կապված և բոլորը մեզ ծանոթ դուրս եկան։ Նրանց բերեցին և շարեցին կալատեղի կենտրոնում։ Առջևի մասում կանգնած էր շղթայակապ կոշկակար Կարապետ էֆենդին։ Սաստիկ գունատ, մեռելատիպ դեմքերով՝ նրանք նայում էին մերթ գետնին, մերթ ժանդարմների հրացաններին։ Այդ պահին սերթեբիբը մոտեցավ Կարապետ էֆենդուն, դուրս քաշեց ռևոլվերը և փողն ուղղելով ուղիղ նրա ճակատին՝ սեղմեց ձգանը։ Սակայն կրակոց չեղավ։ Այնժամ սերթեբիբը կրկին նշան բռնեց, բայց այս անգամ էլ փուստ անցավ։ Օգտվելով այս հապաղումից՝ Կարապետ էֆենդին վհատ աղերսանքով դիմեց սերթեբիբին. «Բժի՜շկ էֆենդի, ինչպես տեսնում ես, աստված խնայում է ինձ, արի դո՜ւ էլ խնայիր, ինձ մի՜ սպանի»։ Բայց դրժբախտը դեռ չէր հասցրել վերջացնել իր խնդրանքը, երբ թընդաց կրակոցը, գնդակը ծակեց նրա ճակատը, և նա գետին փռվեց։ Սա առաջին ազդանշանը եղավ. պատրաստ կանգնած ժանդարմները տեղնուտեղը կրակ բացեցին և սպանեցին բոլորին։ Այս տխուր պատկերը մեզ լացեցրեց և այնպես դառնացրեց,

որ այլևս չէինք կարող մեր նախորդին նայել և ընդհանրապես որևէ բանով զբաղվել, և ուղիղ քաղաք վերադարձանք»։

Հունվարի 15-ից հետո թուրքերը վհատության մեջ ընկան և ինչ-որ բան էին գաղտնի քշփշում։ Մենք իմացանք, որ ռուսները մոտեցել են Խնուսին և թուրքերին վտանգ է սպառնում։ Հունվարի 27-ին և 28-ին քաղաքը տագնապալի օրեր էր ապրում։ Փողոցներում վխտում էին ասկյարներն ու ժանդարմները։ Մարդիկ սգի մեջ էին, բոլոր տներից անեծք ու ողբ էր լսվում։ Թուրք կանայք անիծելով մեղադրում էին իրենց կառավարությանը և ասում. «Սա հայերի անմեղ արյան համար մեր գլխին եկած պատիժն է...»

Մի քանի օր անց, երբ տարբեր կողմեր ցրիվ եկած փախստականները հավաքվեցին Մուշում, ես հաշիվ արի և եկա այն եզրակացության, որ Հավատորիկում մի քանի ամիս առաջ ապրող 1200 բնակիչներից մնացել էին միայն 8 տղամարդ և 12 կին ու երեխա, ընդամենը՝ 20 հոգի։

Այդ օրերին մեր միակ հույսն այն էր, որ Վանը, Բիթլիսը, Էրզրումը կմիացվեն Ռուսաստանին, որ մեր արյունը զուր չի թափվել։ Աշխարհով մեկ ցրիվ եկած հայերը կհավաքվեն, կգան այստեղ, և մի քանի տարի հետո, երկիրը նորից կբնակեցվի հայերով, իսկ մեր կորուստներն ու զրկանքները կմոռացվեն...

Եղիազար Կարապետյան
Մուշի գավառի Հավատորիկ գյուղից

ՀԽՍՀ ՊԳԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219, թ. 24—36:

181. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԲԺՇԿԻ ՕՐԱԳՐԻՑ

(«День» թերթում տպագրված թղթակցություն)

Ծովային բուռն մակընթացությունից հետո, երբ ծովը դարձյալ իր նախկին ափերի մեջ է մտնում, մերկ ավազների վրա, ժայռերի միջև, փոսերում սովորաբար մնում են ձկներ, որոնք չեն հասցնում լողալ հեռանալ, ծովային կենդանիներ, խեցեմորթներ, ջրիմուռների կույտեր։ Այդպես էլ այստեղ՝ Թուրքահայաստանում, Խալիլ բեյի անհաջող բուռն գրոհից հետո, որ կազմակերպված էր, ըստ երևույթին, գերմանական «կարճ հարվածների» համակարգով, մեր զորքերը, որոնք գնում են նահանջող թուրքերի հետքով, անվերջ դեմ են առնում հետ մնացած ասկյարների խմբերի՝ լքված վիրավորների ու հիվանդների գումակի, զենքերի, արկերի, փամփուշտների կույտերի։ Այդ մանր ու խոշոր ռազմավարի մեջ, գտնվեց, ի միջի այլոց, թուրքական բանակի մի բժիշկ, ծագումով լևանտացի, քրիստոնյա, որ կրթություն էր ստացել Փարիզում, մի խոսքով՝ ինտելիգենտ մի մարդ, որը կամովին մեզ էր հանձնվել Խլաթ քաղաքում (Վանա լճի հյուսիսային ափին)։

Նրա մոտ մի քանի անվնաս մնացած իրերի հետ պահպանվել էր մի օրագիր-ծոցատետր, որտեղ նա գրի էր առել իրենց դիվիզիայի ամբողջ անցած ուղու պատմությունը, որը ռազմերթով անցել էր Սիրիայից (Հալեպի մոտի Համա քաղաքից) մինչև Բիթլիս։ Ռազմական նշանակություն ունեցող, ուստիև հրապարակման ոչ ենթակա տվյալների միջև օրագրում հանդիպում են բազմաթիվ հետաքրքիր կենցաղային բնորոշ մանրամասներ և է՛լ ավելի շատ՝ հայերի գլխովին ոչնչացման պատկերներ, ոչընչացում, որն սկզբում հատուկենտ բնույթի է եղել, բայց հետո Կոստանդնուպոլսից ստացված մի շարք հրամաններով սիստեմի է բերվել։

Այդ դիվիզիան, որ սկզբում նշանակված է եղել անգլիացիների դեմ կռվելու համար, հետագայում հյուսիս է նետվել... Սիրիայից դուրս գալով 7—8 հազար սվիններով՝ հունիսի վերջերին դիվիզիան հալվել-հասել է մոտ 3 հազարի։ Ասենք, չէր էլ կարող չհալվել, որովհետև զորքերը կերակրվում էին բացառապես ավարառությամբ... Ասկյարներն ուտում էին օրական մեկ անգամից ոչ ավելի. կա՛մ միս, եթե անասուն էին ճարում մոտակայքում, կա՛մ՝ այլուրից շինված բլիթների գնդիկներ, որոնք զինվորներին բաժանում էին հում վիճակում, և զինվորներն իրենք էին դրանցից բլիթներ թխում։ Երբեմն այնպիսի չուր էին խմում, որից հրաժարվում էին անասունները։ Այստեղից էլ՝ տիֆով, դիզենտերիայով, դողէրոցքով բազմաթիվ հիվանդներ, որոնց, ինչպես և բազում ծանր վիրավորների, փոխադրական միջոցների անբավարարության պատճառով հաճախ նետում էին ճանապարհներին։

Այդ սովահար, ուժասպառ մարդիկ միավորվել էին սոսկ «ղազավաթի»՝ քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի ընդհանուր գաղափարով, որն այստեղ՝ փոքրասիական այս խուլ վայրերում, դեռ ընդունակ է կրոնականորեն տրամադրված

մահմեդականների գլուխները մշուշել և սրտերը բոցավառել։ Այստեղից էլ՝ անօգնական հայերի հանդեպ գազանությունների ու բռնությունների այն աներևակայելի պատկերները, որոնց հանդիպել էր օրագրի հեղինակը իր ճանապարհի առաջին օրվանից մինչև վերջինը։ Այդ գազանությունները, բնականաբար, հանգեցնում էին փոխադարձ դաժանության. հայերը երբեմն պատրաստ են եղել վրեժ առնել թշնամիներից՝ նույնիսկ իրենց կործանման գնով։ Սիրիացի բժշկի օրագրում մայիսի 30-ի տակ գրի է առնված այսպիսի մի դեպք. մի գյուղում, մի քանի տասնյակ մահմեդականների մեջ, որոնք բանտ էին նստեցվել ինչ-որ հանցանքների համար, պատահաբար եղել է մի հայ։ Նա թաքուն մի ման նավթ է ճարել, գիշերով շաղ է տվել բանտի շենքի մեջ և այրել իրեն ու բոլոր բանտարկյալներին։ Մեկ ուրիշը, որ մեղադրված էր եղել ռումբեր պահելու համար, երկար ժամանակ խաբել էր ոստիկանությանը, տարբեր տեղեր ցույց տվել, որտեղ ինքն իրը թե պահել էր դրանք։ Վերջապես նրան հաջողվել էր ելնել բավականին բարձր մի տան հարթ կտուրը, որտեղից ներքև էր նետվել՝ մտադիր լինելով ընկնել սալահատակին կանգնած սպայի գլխին, բայց վրիպել էր և ընկել ջախջախվել մահացու կերպով։ Ճանապարհին օրագրի հեղինակը հանդիպել էր տասնյակ գետերի, հովիտների, ձորերի, ավերված գյուղերի՝ կոտորված տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներով լեցուն, երբեմն փորներին ցից խրված։ Սևարիկ գյուղում նա այսպիսի տեսարանի է ականատես եղել. բանտարկված էին հայ տղամարդիկ։ Մեկը կաշառել է ժանդարմին, և սա թույլ է տվել բանտարկյալի կնոջը, որ երեխայի գլուխը զգուշորեն ներս մղցրեի լուսամուտի նեղ վանդակից, որպեսզի հայրը կարողանա համբուրել նրան։ Այդ պահին հայտնվել է պահակախմբի պետը։ Նա հայհոյել է ստորադրյալներին, բռնել է երեխայի ոտքից և դուրս քաշել լուսամուտի նեղ վանդակից՝ կիսամեռ ու արյունաշաղախ անելով։ Մայրը ճչացել է։ Նա մորը ծեծել է մտրակով, իսկ երեխային, որը գետին է ընկած եղել, սապոգով դեն է շպրտել։

Դիարբեքիրը, դիվիզիան մտնելու ժամանակ, կիսով չափ հրկիզված է եղել և դիակներով լցված։ Զորքի ժամանումից մի քանի օր առաջ, սուլթանական ինչ-որ տոնի օրը, այրվել է թուրքական հյուրանոցը։ Կրակն անցել է մուսուլմանական թաղամասը, որի հետևանքով քրիստոնյաներին մեղադրել են հրձիգությունը մեջ և կոտորել բոլորին, ովքեր չեն փախել։

Բայց ամենասարսափելի պատկերները այդ հազվագյուտ ականատեսը տեսել է Բիթլիսում։ Դեռ Բիթլիս չհասած, անտառում նա տեսել է ոչ վաղուց մորթոտված մի խումբ տղամարդկանց և նրանց կողքին էլ՝ երեք կնոջ, միանգամայն մերկ, գլխիվայր կախած։ Կանանցից մեկի կողքին սողում էր մեկ տարեկան մի երեխա և թաթիկները պարզում մորը, իսկ մայրը, դեմքն արյունով լցված, դեռ կենդանի, ձեռքերը մեկնում էր երեխային, բայց նրանք չէին կարողանում միմյանց հասնել։ Մի քիչ այն կողմում ընկած էին երեք կանանց արյունաշաղախ դիակներ և մի մանկիկ՝ մոր արյունով ողողված, խլվլում էր կանանցից մեկի կրծքի վրա։

Մի քուրդ ասկյար խղճացել է մանկանը ու վերցրել իր հետ, որպեսզի տանի պահի ու լավ մուսուլման դարձնի։ Հենց Բիթլիսի մոտ՝ անապատային հարթության վրա, նստած են եղել շուրջ 2000 հայեր՝ պահակախմբով շրջապատված։ Նրանք սպասելիս են եղել իրենց հերթին, քանի որ տեղական ոստիկանության առկա ուժերը չէին կարող բոլորին միանգամից կոտորել։

Բիթլիսի կոտորածին մասնակցել են նաև 36-րդ դիվիզիայի ասկյարները։ Բայց թուրքական իշխանությունների կաշառելիությունը առավել հարուստ հայերին հնարավորություն է տվել փրկել իրենց կյանքը։ Իմանալով այդ մասին՝ կայմակամը հրամայել է հրդեհել փրկվածների տները։

Օրագրի հեղինակը տեսել է, թե ինչպես էին կայմակամի սերալից առիշեղ հրկիզում երկհարկանի հարուստ մի տուն։ Երկրորդ հարկում երևաց մի կին՝ երեխան գրկին։ Նա լուսամուտից լուսամուտ էր նետվում. «ման» ճչում, բայց ամեն կողմից հանդիպում էր իր վրա ուղղված հրացանների փողերի։ Կրակն աստիճանաբար բռնում էր վերին հարկը, ծուխը պատում էր լուսամուտները մեկը մյուսի հետևից, և այդ կինն այրվել է նրա աչքի առաջ։

Խոսակցությանը ներկա ռուս բժիշկները սիրիացու պատմածին որոշ բաներ ավելացրին իրենց տպավորություններից։ Էլազիգ քաղաքում նրանք գտել էին հայ աղջնակների՝ ուղիղ աղիքները դուրս քաշված... Երբ գերի ասկյարներին հարցրին, թե ինչպե՞ս նրանք չէին ամաչում այդպես խոշտանգել անմեղ երեխաներին, նրանք պատասխանեցին. «Այդպես է սուլթանի հրամանը»

(ոմանք խոսում էին նույնիսկ Վիլհելմի մասին)։ Սիրիացի բժիշկը տեսել էր այդ հրամանները։ Նրա աչքի առաջ կոտորել էին պատանդ վերցված կանանց, քանի որ Կոստանդնուպոլսից եկած նոր հրամանը թուրքերին արգելել էր այդ եղանակով խնայել հայուհիների կյանքը։

Վերջերս այստեղ ստացվել է գեներալ Զ-ի հեռագիրը, որի ջոկատը կանգնել էր Վանի մոտ, բայց չէր կարողանում քաղաք մտնել դիակների ժանտահոտության պատճառով։ Հեռագրում, ի միջի այլոց, ասված է. «Վան քաղաքն ամբողջովին ավերակ է։ Լավագույն շինությունները հրկիզված են, իսկ կավաշենները՝ կլցված։ Փողոցներում և բակերում սփռված են հայերի ու կենդանիների դիակներ։ Ունեցվածքը թալանել տարել են։

Ականատեսների, պաշտոնական մարդկանց կողմից հավաստված, Թուրքահայաստանի այդ իր չափսերով չտեսնված ոչնչացումը, որը վերջին ժամանակներս թուրքական կառավարությունը սիստեմ է դարձրել, տեղի է ունենում «կարճ հարվածների» սիստեմին զուգահեռ, այլկերպ ասած՝ մեր ռազմաճակատում թուրքական բանակի հանկարծակի գրոհներին զուգահեռ։ Բայց ռազմավարական տեսակետից վնասաբեր այդ գրոհները, ինչպես երևում է շարադրվածից, ծայր աստիճանի կործանարար են հայ ժողովրդի համար. դրանք նպատակ ունեն նուազ ջնջել աշխարհի երեսից։ Այժմ հայերի ղեկավարները փաիբստականներին հորդորում են վերադառնալ հայրենիք, որը նոր է նվաճվել ռուսների կողմից։

Ն. Օգանովսկի

«День», 1915, 6 сентября.

132. ՄԻ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

(«Ժուռնալ դը Ժենև» ամսագրի առաջնորդող հոդվածը)

Ներկայումս այնպիսի սարսափելի մի գործ է կատարվում, որի համեմատությամբ նսեմանում է այն ամենը, ինչ մարդկությունը տեսնում է ահա արդեն մեկ տարի շարունակ. տեղի է ունենում մի ամբողջ ժողովրդի բիրտ ու սիստեմատիկ ոչնչացում։ Այս իրադարձությունը, գուցեև, աննախադեպ է համաշխարհային պատմության մեջ։ Երբ ասորեստանցիները հրեաներին ստրկացրին, այնուամենայնիվ պահպանեցին նրանց կյանքը, ընդ որում Կյուրոսը հետագայում հրեաներին թույլ տվեց, որ վերադառնան Երուսաղեմ և այնտեղ վերականգնեն իրենց տաճարը։ Աբդուլ Համիդի օրոք (նա դեռ կենդանի է և Բոսֆորի իր սպիտակ ապարանքից աջակցում է իր ծրագրի հաղթական վերածննդին) հայերի կոտորածը սահմանափակվում էր որոշ տեղանքով։ Այսօր խոսք է գնում ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին՝ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում, ամենուրեք, որտեղ էլ որ ապրելիս լինեն նրա ներկայացուցիչները։

Էնվեր փաշան ինքն է այդ մասին հայտարարել ցինիկ ժպիտով։ Հայաստանից եկած առաջին տեղեկությունները մեր կողմից ընդունվեցին մեծ զգուշավորությամբ և չափազանց զուսպ։ Մեզ հայտնի է, թե մեր խառնակ ժամանակներում ինչ հեշտությամբ են տարածվում երևակայական նորությունները։ Բայց, ցավոք սրտի, այն ինֆորմացիան, որ ունենք մեր տրամադրության տակ և մասամբ հրապարակված է, կասկածի տեղիք չի տալիս։

Ջարագործությունը հիմա էլ է կատարվում։ Երիտթուրքական կոմիտեի ընդունած որոշմանը համապատասխան՝ ռազմական մինիստր Էնվեր փաշան հրաման է արձակել Անատոլիայի ու Կիլիկիայի բոլոր գավառներից ամբողջ հայ բնակչությանը արաբական անապատները՝ Բաղդադյան երկաթուղուց դեպի հարավ, արտաքսելու մասին։ Տրապիզոն, Էրզրում, Սեբաստիա, Թիֆլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Ադանա նահանգները (վիլայեթները) ամբողջությամբ մաքրված են հայերից։ Իզմիդի նահանգում հայերից մաքրելու գործողությունը իրականացվում է հաջողությամբ։ Մինչև այժմ խնայել են միայն Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայերին...

Անհերքելի ցուցմունքներից երևում է նաև, որ սրբազան պատերազմի հայտարարումից ի վեր հարյուր հազարավոր հայեր կոտորվել են, հարյուր հազարավորներ էլ բռնի մահմեդականացվել։ Զինվորական ծառայության պիտանի տղամարդիկ բանակ են զորակոչվել և չեն կարող պաշտպանել նույնիսկ իրենց ընտանեկան օջախը։ Նրանցից շատերը, որոնք զինաթափվել էին և օգտագործվում էին ճանապարհաշինության վրա, գնդակահարվել են, ըստ լուրերի, իրենց զինված ընկերների ձեռքով։ Անա-

պատ աքսորվող հայերը իրենցից ներկայացնում են սոսկ խրոխտուկ նախիր՝ բաղկացած ծերունիներից, կանանցից ու երեխաներից, որոնք քշվում են ժանդարմների մտրակով։ Այդ արտաքսումը ըստ էության քողարկված ոչնչացում է։

Զգտելով խանգարել հայերին, որ չտիպեն հասարակական կարծիքին անսալ իրենց հուսահատ աղաղակներին, Կոստանդնուպոլսում ապրիլի 28-ի[34] լույս 29-ի գիշերը ձերբակալել են հայ ժողովրդի ղեկավարներին, մտավորականության ներկայացուցիչներին. երեսփոխաններ, գրողներ, բժիշկներ, պրոֆեսորներ։ Նրանց ուղարկել են երկրի խորքերը՝ Անգորա, Կոնիա, Դիարբեքիր։ Նույնպիսի միջոցներ են ձեռք առնվել նաև մյուս մեծ քաղաքներում։

Զանգվածային արտաքսումը և կոտորածը հայկական գավառներում սկսվեցին մայիսի 20-ին։ Հայ ընտանիքներին, իրենց տները թողնելուց առաջ, հազիվ մի քանի ժամ ժամանակ էին տալիս ճանապարհի պատրաստություն տեսնելու համար։ Հիմքեր կան կարծելու, որ մինչև նշանակված վայրը հասել է այդ դժբախտների մի քառորդ մասը։ Մնացածները մեռել են կամ տանջամահ արվել ճանապարհին։

Մինչդեռ այստեղ խոսքը վերաբերում է բարձր կուլտուրայի տեր մի ժողովրդի, որի ձեռքին էր Փոքր Ասիայի համարյա ամբողջ առևտուրը և արհեստների մեծ մասը։ Հազարավոր երիտասարդ տղջիկներ ու կանայք, որոնք ենթարկվել են ծանրագույն անարգանքների, հաճախել են մեր եվրոպական դպրոցները՝ Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, կամ Փոքր Ասիայի եվրոպական ու ամերիկյան կոլեջները։

Օսմանյան կառավարությունը չի հապաղի, Աբդուլ Համիդի օրինակով, կարծեցյալ դավադրություններ վկայակոչել, որպեսզի արդարացում գտնի իր գործողությունների համար։ Իսկ իրականում խոսքը վերաբերում է այն բանին, որ թուրքական կայսրությունից արմատախիլ է արվում ամեն մի ոչ մուսուլմանական տարր։ Դա արյունոտ սուլթանի ծրագիրն է, որն իրականացվում է հիմա ուրիշների կողմից։

"Journal de Genève", p. 9. IX. 1915.

188. ՆԱՄԱԿ «ԺՈՒՌՆԱԼ ԴԸ ԺՆԵՎ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ, 10 սեպտեմբերի 1915 թ.

Պարո՛ն խմբագիր, չէի՞ք թույլ տա ինձ արդյոք ի լրացումն պերճախոս այն հոդվածի, որ լույս էր տեսել ամսույս 9-ին Ձեր խիստ հարգարժան թերթում, արտահայտել իմ անձնական վերդոմունքը «Միություն և առաջադիմություն» («Union et Progrès») արյունարբու կոմիտեի կողմից կիրառվող մեթոդների վերաբերյալ, որը XX դարում հարություն տալով տխրահռչակ այն սխրանքներին, որոնք անցյալում հնարավոր են եղել տգիտության ու բարբարոսության պատճառով, իր վայրենությամբ գերազանցել է Չինգիզ խանին ու Լենկթեմուրին։

Ճշմարտությունը, ունիոնիստների [«Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների] տրամադրությունները քաղաքակիրթ աշխարհի առաջ իսկական լույսով երևացին միայն այն պահից սկսած, երբ նրանք բացահայտորեն կանգնեցին Գերմանիայի կողմը։ Վեց տարուց ավելի է, ինչ ես անդադար մերկացրել եմ այդ մարդկանց «Մեշրուտիետ» և այլ թերթերում ու ամսագրերում՝ նախազգուշացնելով Ֆրանսիային ու Անգլիային այն դավադրության մասին, որ նյութվում էր նրանց դեմ, ինչպես և՝ օսմանյան ազգությունների դեմ, այսինքն՝ հայերի դեմ։

Եթե կա մի ժողովուրդ, որը մեծ ծառայություններ է մատուցել Թուրքիային՝ շնորհիվ այն պետական գործիչների ու տաղանդավոր պաշտոնյաների, ովքեր դուրս են եկել նրա միջավայրից, իրենց մտավոր ընդունակությունների շնորհիվ, որոնք դրսևորվել են բոլոր ասպարեզներում՝ առևտրում, արդյունաբերության, գիտության և արվեստի մեջ,— ապա դա հայ ժողովուրդն է։

Հենց հայերն էին, որ Թուրքիա բերեցին գրատպությունը և եղան դրամատիկական արվեստի պիոներները։

Դժվար է թվարկել հայ բանաստեղծներին, գրականագետներին և խոշոր ֆինանսական գործիչներին. այս ազգի մեծ մարդկանցից շատերը պատիվ կբերեին Եվրոպայի ցանկացած երկրին, ինչպես երբեմնի Մովսես Խորենացին՝ պատմագիրն ու բանաստեղծը, կամ Արիստակես Լաստիվերցին, որին համեմատում են Երեմիայի հետ։ Մեր ժամանակակից դարաշրջանի

նշանավոր գործիչներից կանվանենք Բաֆֆուն, Սունդուկյանին, Շիրվանզադեին, Չոպանյանին և տասնյակ ուրիշների։ Մի՞թե հայ Օտյան էֆենդին չէ՞ր Միդհատ փաշայի՝ Օսմանյան սահմանադրության հեղինակի աշխատակիցը։ Հայ Եփրեմ խանը՝ «Արևելքի Գարիբալդին», մեծ հերոսն էր պարսկական հեղափոխության, որը նույնպես նախապատրաստվել էր հայի՝ Մալկոլմ Խանի կողմից։ Ի շահ ճշմարտության պետք է խոստովանել, որ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Պարսկաստանում, չեն եղել բռնապետության ավելի մոլեգին հակառակորդներ, քան հայերը, որոնք նշանակալիորեն աջակցել են սահմանադրական կարգի հաստատմանը։

Ձկա մի լուսավորյալ թուրք, որը շտորագրի հետևյալ հայտարարության տակ, որն արված է 18 տարի առաջ իմ հանգուցյալ բարեկամ, անգլիական պառլամենտի դեպուտատ Լինչի կողմից. «Հայերը բացառիկորեն ընդունակ են այն բանին, որ պետքի նոր քաղաքակրթության կրողներ լինեն։ Նրանց հարազատ են դարձել մեր ամենաբարձր իդեալները։ Նրանք եվրոպական կուլտուրայի նոր նվաճումները յուրացնում են մեծ ագահությամբ և դրանց տիրապետում են այնպիսի կատարելությամբ, որին երբեք չի կարողացել հասնել ոչ մի ազգ»։

Եվ այն մտքից, թե այսքան շռայլորեն օժտված ժողովուրդը, որն, ինչպես կենարար բալասան, կարող է օգնել Օսմանյան կայսրությանը, մեր աչքի առաջ անհետանում է պատմությունից, ընդ որում նա չի ստրկացվում, ինչպես մի ժամանակ ստրկացվեց հրեա ժողովուրդը ասորեստանցիների կողմից, այլ՝ ոչնչացվում է,— այդ մտքից ամենաքար սիրտն անդամ արյունարցունք է լալիս։ Ես կուզենայի, իմ կողմից, Ձեր հարգարժան թերթի միջոցով դիմել մարդասպանների դանակով կոտորվող այդ ռասային և արտահայտել իմ զայրույթը, որ ունեմ դահիճների նկատմամբ և իմ անսահման կարեկցանքը զոհերի հանդեպ։

Կատարելով այս բարեպաշտական պարտքը՝ համարձակվում եմ մի քանի վերապահություն անել ոչ թե բազմատառապ հայ ազգի վերաբերյալ, այլ մի քանի հայ գործիչների ու մի քանի պրոպագանդիստական խմբերի հասցեին, որոնք այս վեց տարիների ընթացքում այնքան անտեղի հանդես էին գալիս որպես «Միության և առաջադիմության»՝ այժմյան բոլոր աղետների համար մեղավորի պաշտպաններ ու ջատագովներ։

Ես բազմիցս նախազգուշացրել եմ նրանց՝ մատնանշելով ունիոնիստների անբարեխղճությունը, որոնց այլասերվածությունն ու նենգությունը ինձ լավ հայտնի էին։ Ասենք, Ադանայի կոտորածը, որ հրահրված էր ունիոնիստների կողմից, ամենայն հավանականությամբ, նրանց մեջ արթնացրել էր ռեալության զգացումը...

Գեներալ Շերիֆ փաշա

"Journal de Genève", 18.IX.1915.

184. ՄԻ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

(Դրքակցություն՝ տպագրված «Բազլեր Նախրիխտեն» թերթում)

Դեռևս բոլորի հիշողության մեջ է հայերի կոտորածը Աբդուլ Համիդի օրոք, դեռ սրտի ցավով ենք հիշում Ադանայի արյունոտ սպանդը, որով իրեն արատավորեց երիտասարդ Թուրքիան։ Բայց մենք արդեն նորից պետք է պաշտպան կանգնենք դրժբախտ Հայաստանին, որը մեկ սերնդի կյանքի ընթացքում երրորդ անգամ դարձավ անլուր դաժանության զոհ։ Այս դաժանությունը կհանգեցնի հայ ժողովրդի լիակատար ոչնչացմանը Թուրքիայում, եթե, իհարկե, այն չդադարեցվի։

Իսկ ի՞նչ է տեղի ունեցել։

Մայիսի 20-ից, համաձայն երիտթուրքերի կոմիտեի որոշման, ռազմական մինիստր էնվեր փաշան հրամայել է ամբողջ հայ բնակչությանը Անատոլիայի վիլայեթներից և Կիլիկիայից գաղթեցնել արաբական անապատները՝ Բաղդադյան երկաթուղուց հարավ։

Տրապիզոնի, Էրզրումի, Սվազի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայեթները մաքրված են հայերից։ Իզմիդում արտաքսումը դեռ չի ավարտված։ Առայժմ դեռ անվնաս են մնացել Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Ադանայի և հայկական գավառներից դուրս գտնվող մի քանի մարզերի (Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Հալեպ) հայերը, ինչպես և Վանի վիլայեթի 25 000 բնակիչները, որոնք թուրքական սահմանից անցնելով փախել են Կովկաս։ Անմարդկային բռնությունները տեղահանվածների նկատմամբ,— ամբողջ շարժական և անշարժ գույքի

բռնագրավումը ու բնակչության լիակատար կողոպուտը,— Ասիական Թուրքիայի աշխատասեր, նախաձեռնող և ամենակուլտուրական ժողովրդին, որը համարյա բոլոր արհեստներն ու առևտուրը իր ձեռքին էր պահում, վերածել են մուրացկանների ժողովրդի։ Դեռ ավելին. սրբազան պատերազմ հայտարարելուց ի վեր ոչնչացվել են հարյուր հազարավոր հայեր, հարյուր հազարավորներ ստիպված են եղել իսլամ ընդունել, իսկ մնացած՝ խղճուկ, կիսամերկ, հիվանդ և մեռնող կանանց, երեխաների և ծերունիների խումբը քշվել է անապատ ու դատապարտված է սովամահության։

Արտաքսումն ինքը քողարկված կոտորած էր՝ լլսված մասշտաբներով և ամենասարսափելի հետևանքներով։ Երիտթուրքական հանցախումբը, որը խոստանում էր սահմանադրության վերականգնումով ոչնչացնել ամենաահավոր ավտոկրատիայի տիրապետությունը և որն ամբողջ Եվրոպայի առաջ հանդես էր գալիս որպես ազատության և մարդկայնության նեցուկ, իրենից դեն նետեց հավատահանդուրժողության ու ամոթի դիմակը քաղաքակիրթ Եվրոպայի առաջ և հնարեց մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի ոչնչացման ստորագույն ու դաժանագույն համակարգ, որի հանդեպ նսեմանում են Աբդուլ Համիդի ամենաամոթալի ոճրագործությունները։ Զինվորական ծառայության ընդունակ հայերը իբրև թե զորակոչվեցին, բայց իրականում նրանց զինաթափեցին և որպես ճանապարհաշինարար ու քարագործ բանվորների ուղարկեցին Անատոլիայի լեռնային հովիտները, որտեղ նրանք մեկ առ մեկ և զանգվածաբար գնդակահարվեցին զինված ջոկատների կողմից։ Իսկ անպաշտպան կանայք ու երեխաները տեղահանվեցին, ինչը ըստ էության նրբբահնար միջոցը եղավ նրանց ոչնչացման։

Որպեսզի հայ ժողովրդին ստիպեին լռել, նախքան նրա ոչընչացումն ու սնանկացումն սկսելը, Կոստանդնուպոլսում ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը ձերբակալեցին հայերի բոլոր գաղափարական ղեկավարներին՝ երեսփոխաններ, քաղաքագետներ, բժիշկներ, նկարիչներ, պրոֆեսորներ և ուրիշներ, առանց կուսակցական պատկանելության ու դավանանքի խտրության, և լուսաբացին արդեն աքսորել էին Անգորա, Կոնիա, Դիարբեքիր։ Քաղաքներում նույն բախտին արժանացան բոլոր կրթված մատդիկ։ Նրանց սպանեցին կամ աքսորեցին՝ առանց դատի ու քննության, միայն նրա համար, որ հայ էին։ Նախապես ամբողջ

հայ բնակչությունը զինաթափվել էր, իսկ բոլոր մահմեդականները զինվել էին։ Թուրքական ու քրդական ավազակախմբեր էին կազմակերպվել այն անձանցից, որոնց բանտից էին արձակել։ Պատերազմի սկզբին՝ մարտից մինչև ապրիլը, այս ավազակախմբերի ձեռքով Վանի և Էրզրումի վիլայեթներում թալանվել են 500-ից ավելի հայկական գյուղեր և 26 000 հոգուց ավելի սպանվել է։

Տեղահանությունն սկսվեց մայիսի 20-ին։ Պաշտոնական մունետիկները քաղաքներում և գյուղերում պահանջեցին, որ ամբողջ հայ բնակչությունը մի քանի ժամվա ընթացքում թողներ իր տները։ Զինված ասկյարների պահակախմբերով դեպի հեռավոր անհայտ վայրեր աքսորվող հայերը այնտեղ գնում-հասնում էին շատ ամիսների ընթացքում։ Հայերի տները, կալվածքները և ունեցվածքը բռնագրավեցին ու բաժանեցին մահմեդականներին։ Հարուստներին թույլատրվում էր բարձր գնով վարձել սայլ կամ ձի, որոնք շատ դեպքերում խլում էին քաղաքից մեկնելուց անմիջապես հետո։ Ինչպես աղքատներին, այնպես էլ հարուստներին մնում էր սոսկ այն, ինչը կարող էին իրենց հետ վերցնել։ Մահմեդական բնակչությանն արգելված էր սննդամթերք վաճառել հայերին կամ նրանցից որևէ բան գնել, որի հետևանքով ամբողջ ճանապարհորդության ժամանակ հայերը չէին կարողանում նույնիսկ իրենց ուտելիքն ապահովել։ Առաջին հերթին առանձնացրին տղամարդկանց կանանցից, ծնողներին՝ զավակներից և ընտանիքի անդամներին՝ միմյանցից։ Տեղահանությունից առաջ ջոկեցին ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին՝ գերազանցապես ունևոր ընտանիքներից և քշեցին հարեմները։ Շատ երեխաներ մնացել էին մահմեդական ընտանիքներում՝ ծնողների համաձայնությամբ կամ առանց համաձայնության։ Անատոլիայի լեռնային կիրճերի միջով, կիզիչ արևի տակ, մտրակի ու մահակի օգնությամբ, ինչպես անասունների, բռի ասկյարները քշում էին սոված, ոտաբոբիկ, հյուծված կանանց ու երեխաներին։ Ով որ հետ էր մնում կամ վայր ընկնում, նրան խողխողում էին։ Ճանապարհի առանձին կետերում, օրինակ՝ Կամախ-Բողազի մոտ՝ Եփրատի ափին, Երզնկայի ու Խարբերդի միջև, տեղի է ունեցել զանգվածային ոչնչացում։ Դերսիմի մարզում կանխապես պատրաստված հարձակմանը զոհ են գնացել համարյա բոլոր դեռ ողջ մնացած տղամարդիկ, շատ կանայք ու երեխաներ։ Աքսորյալների ճա-

ճապարհը մահվան ճանապարհ դարձավ։ Մինչև նշանակված վայրը հասել է աքսորյալների մեկ քառորդից պակասը...

Քաղաքների մոտ ստրկավաճառական շուկաներ էին բացում, որտեղ երեխաներն ու ջահել աղջիկները վաճառվում էին մահմեդականներին առասպելական էժան գներով։ Այն ընտանիքներին, որոնք քրիստոնյա երեխաներ էին վերցնում, որպեսզի դաստիարակեին որպես մահմեդականների, իշխանությունների կողմից աջակցություն էր խոստացված։ Ինչ խոսք, որ այն տասնյակ հազարավոր կանանց, աղջիկներին ու երեխաներին, որոնք ընկել էին հարեմ ու մահմեդական ընտանիքներ, այլ բան չէր մնում, քան իսլամ ընդունել։ Իսլամ ընդունել հարկադրում էին նաև նրանով, որ աքսորից ազատում էին այն ընտանիքներին, որոնք համաձայնում էին հավատափոխ լինել։

Չպետք է մոռանալ, որ այս բոլոր գործողությունները՝ տեղահանությունը, թալանը, մահմեդական հարեմներում արգելափակելը և երեխաների վաճառքը վերաբերում էին հազարավոր ընտանիքների, որոնց կանայք ու դուստրերը դաստիարակվել էին Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում ու Շվեյցարիայում, որոնց զավակները կրթություն էին ստանում ամերիկյան, ֆրանսիական և գերմանական դպրոցներում ու քոլեջներում, որոնք կրթվածության մակարդակով շատ ավելի բարձր էին կանգնած նույնիսկ ունևոր թուրքերից, ընտանիքների, որոնք իրենց բարքերով և ինտելեկտով մեր եվրոպական կրթության բարձրության վրա էին կանգնած։

Թուրքական կառավարությունը իր պաշտոնական հաղորդագրություններում և իր եվրոպական ներկայացուցիչների ելույթներում մինչև վերջերս փորձում էր, և բավականին հաջողությամբ, թաքցնել հայերի համընդհանուր աքսորի և նրանց սիստեմատիկ ոչնչացման փաստը։

Ի արդարացումն դրա՝ վկայակոչում էին ռազմավարական նկատառումները, ինչպես և առանձին ելույթներն այն հայերի, որոնք, հրահրված նենգ սպանություններից ու կոտորածի պլանաչափ նախապատրաստություններից (ինչպես, օրինակ՝ եղել էր Վանում ու Շապին-Գարահիսարում), ստիպված էին դիմել ինքնապաշտպանության։ Այդ ելույթները որակվում էին որպես հեղափոխական բունկումներ և որպես գաղտնի համագործակցություն թշնամու հետ։ Չնայած կեղծ փաստաթղթերին ու ստորագրություններին, որ հավաքում էին խոշտանգումների միջոցով, ոչ ոք չէր կարողանում ապացուցել, որ հայերի որևէ քաղաքական կամ կրոնական կազմակերպություն պլանավորել կամ գոնե մտադրված է եղել հեղափոխական ապստամբություն բարձրացնել, կամ էլ թշնամական գործողություն կատարել ընդդեմ հայրենիքի։ Այդ կեղծ մեղադրանքները չեն կարող հայ ժողովրդի և նրա առաջնորդների մաքուր խիղճն արատավորել։ Սահմանադրության գոյության սկզբից ևեթ հայերի քաղաքական առաջնորդներն ու պատգամավորները անհողդողդ կանգնած են եղել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմը։ Նրանք անձնական բարեկամներն էին երիտթուրքերի առաջնորդների, որոնց ռեակցիայի ժամանակ թաքցնում էին իրենց տներում, վտանգի ենթարկելով իրենց կյանքը՝ փրկում էին նրանց։ Եվ ահա այժմ նրանք վարձահատուցում ստացան իրենց օրինապահության ու նվիրվածության համար։ Նրանք տառապում են բանտերում կամ պառկած են հողում։

Ո՛չ ռազմական, ո՛չ ստրատեգիական նկատառումները չեն կարող արդարացում ծառայել հայ ժողովրդի ոչնչացման համար։ Զանգվածային, գիշատիչ ոչնչացումը, որն սկսվել է հայ ժողովրդի ոչնչացումից, դա օսմանման պետության մեջ թուրքացման և իսլամացման սիստեմի հետևանքն է, որի մասնակի արձագանքներն էին, ի միջի այլոց, հրեական ջարդերը Պաղեստինում այս տարվա փետրվարին և հույների անցյալ տարվա հալածանքները Զմյուռնիայի մերձակայքում։ Աբդուլ Համիդի սիստեմը մնացել է, սոսկ դեմքերն են փոխվել. ոչ-մուսուլման ժողովուրդները պետք է ոչնչացվեն, ոչ-թուրքական ռասսաները պետք է ստրկացվեն։

Քաղաքակիրթ մարդկության անունից մենք պահանջում ենք Թուրքիայում դեռևս ներկայացված տերությունների կառավարություններից, դեսպաններից ու հյուպատոսներից, օգտագործելով քաղաքակիրթ ու քրիստոնյա պետությունների ողջ հեղինակությունը՝ հանդես գալ թուրքական կառավարության առաջ, որ դադարեցվի հայ ժողովրդի պլանավորված ոչնչացումը և ապահովվի տեղահանված բնակչության կյանքն ու անվտանգությունը։

Եթե որևէ մեկի կողմից կասկածի ենթարկվի եվրոպացի վկաների ցուցմունքների վրա հիմնված փաստերի իսկությունը, ապա մենք պահանջում ենք, որ Թուրքիայում ներկայացված

տերությունները հերքեն այդ փաստերը հյուպատոսական զեկուցագրերի միջոցով։

"Basler Nachrichten", 16.IX.1915.

185. ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(«Թայմս» թերթի թղթակցի հաղորդագրությունը)

Կահիրե, 27 սեպտեմբերի 1915 թ.

Այստեղ ստացվել է հայերի նկատմամբ կատարված նողկալի ու սարսափելի գազանությունների մասին տարածված լուրերի հաստատումը։ Անկասկած է, որ ինչպես նախորդ դեպքերում, այս ոճրագործություններն էլ ներշնչված են Ստամբուլի կողմից։ Հիմք կա ենթադրելու, որ հայերի վրա հարձակվելու հարցը վճռվել է Կովկասից Էնվեր փաշայի վերադարձից հետո, որտեղ նա ջախջախվել էր և կատաղել-փրփրել այն հավանական փաստից, թե հայերն օգնում են ռուսներին։ Թալեաթ բեյը, ըստ երևույթին, օգտվեց դրանից, որպեսզի վրեժխնդիր լիներ Փոքր Ասիայի հայոց անպաշտպան գաղութներից։ Որպես պատրվակ ընդունված բանաձևը հայերին խորը թիկունք արտաքսելու մասին հրամանն էր։ Կառավարության այդ հրամանի կատարմանը դիմադրելը կամ այն ձգձգելը առիթ էին ծառայում սպանությունների, բռնաբարությունների և այլ գազանությունների համար...

Նահանգական իշխանությունները, որպես կանոն, իրենց հանձնարարված խնդիրը կատարում էին ամենայն ճշտակատարությամբ։ Ի տարբերություն պատմականորեն նախորդած սպանությունների, այժմյան գազանությունները չեն սահմանափակվում մեկ որոշակի մարզով։ Սամսոնից ու Տրապիզոնից, Օրդուից ու Այնթապից, Մարաշից ու Էրզրումից միևնույն տեղեկություններն են գալիս այդ գազանությունների մասին. տղամարդկանց մասին, որոնց անողոքաբար գնդակահարել են, խաչել, խեղել կամ տարել աշխատանքային գումարտակներ, երեխաների մասին, որոնց առևանգել են և բռնի մահմեդականացրել, կանանց մասին, որոնց բռնաբարել են և ստրկության վաճառել խորը թիկունքում, գնդակահարել տեղում կամ երեխաների հետ աքսորել անապատ՝ Մոսուլից արևմուտք, որտեղ ո՛չ

ուտելիք կա, ո՛չ ջուր, կամ թե աքսորել Դեյր էլ-Զոր՝ Հալեպի ու Բաղդադի միջև, որտեղ մթերք չկա։ Ե՛վ այս, և՛ այն դեպքում նրանց սպասվում է սարսափելի մահ։ Այդ դժբախտ զոհերից շատերը չեն հասել մինչև նշանակված վայրը, որովհետև պահակախումբն այնպես էր նրանց քշում, որ նրանք ընկնում էին, և քանի որ ծեծելով կամ քացիներով անհնար էր նրանց ստիպել, որ առաջ շարժվեին, ապա նրանց թողնում էին, որ մեռնեն ճանապարհներին, և նրանց դիակները ճշգրիտ ցույց էին տալիս այն ուղին, որով աքսորականներն անցել էին։ Շատերին կապում էին զույգ-զույգ, մեջք-մեջքի ու ողջ-ողջ շպրտում գետը։ Զնյբունում հայերը խաբվել են Ֆաքրի փաշայից, որը հայտնի է Ադանայի դեպքերից։ Մի քանի գերմանական հյուպատոսներ ոգեշնչողներն են եղել այդ իրադարձությունների։ Այսպես, Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը, մի անձնավորություն, որն արժանի է Հայֆայի իր գործընկերոջը, մեկնել է Այնթեպ, այդ բանն անձամբ դիտելու համար, իսկ վատահամբավ բարոն Օպենհայմը առաջարկել է կազմակերպել դաշնակիցների կանանց ու երեխաների փոխադրում Ուրֆա, որտեղ նրանք չէին կարող չդառնալ վկաներն այն բարբարոսությունների, որ զորքերը կատարում էին տառացիորեն արյունով ողողված փողոցներում։

Խիզախ դիմադրություն։ Բանից պարզվում է, որ Սուեդիայից եկած փախստականները, որոնք ներկայումս Պորտ Սաիդում են, շատ քաջաբար մարտնչել են։ Երբ ստացվել է աքսորի հրամանը, 4300 հոգի բարձրացել են սարերը, որտեղ յոթ շաբաթ դիմադրություն են ցույց տվել, ընդ որում թուրքական զրոհներից մեկը տևել է 26 ժամ անընդմեջ։ Զարմանալի է այն փաստը, որ նրանց մեջ եղել է միայն 600 առողջ տղամարդ, և սրանց սոսկ քառորդ մասն է հրացաններով զինված եղել։ Մնացածներն ունեցել են որսորդական հրացաններ, որոնք փողից են լիցքավորվում։

Ենթադրում են, թե հայերը ամենուրեք դիմադրություն են ցույց տալիս, բայց ներքին գավառների դրությունն անհուսալի է։ Սուեդիայի հայերը խուսափել են իրենց հայրենակիցների տխուր ճակատագրից, շնորհիվ այն բանի, որ գտնվել են ծովափին։

Սիստեմատիկ կոտորածները, առևանգումներն ու աքսորը դեպի անապատ, որոնք դեռ շարունակվում են, խոսում են այն

մասին, որ Համիդյան ռեժիմի օրոք զոհվածների ընդհանուր քանակից մարդկային կորուստներն այժմ հավանաբար գերազանցել են։ Բելգիայում կամ Աբդուլ Համիդի օրոք տեղի ունեցած գազանությունները չափավոր են թվում՝ համեմատած Թուրքիայի ժամանակակից կառավարողների գազանությունների հետ, որոնք, իհարկե, կարող են բռնության բնագավառում գերազանցել իրենց տեսոնական ուսուցիչներին։ Այն, որ Թալեաթ բեյը այս ամենի համար պատասխանատու է, դա անվիճելի է։ Բերև ապացույց կարելի է բերել այն փաստը, որ աքսորի մասին հրաման տալով՝ նա ասել է. «Սրանից հետո հիսուն տարի հայկական հարց չի լինելու»։ Եվ դա ասել է մի մարդ, որը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարն է, պառլամենտական այն պատգամավորության գլխավոր անդամներից մեկը, որն Անգլիա էր եկել 1909 թվին և որտեղ նրան ողջունում էին որպես Թուրքիայի բարեկորոգիչներից մեկի։

"The Times", 29.IX.1915.

186. ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ 1915 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ

(«Թայմս» թերթի հաշվետվությունից)

Կոմս Քրոմերը *ոտքի ելավ և հարցրեց. 1) նորին մեծության կառավարությունը ստացե՞լ է որևէ տեղեկություն, որ հաստատում է մամուլում արված հայտարարություններն այն մասին, թե հայերի վերսկսված կոտորածը տեղի էր ունենում լայն մասշտաբով, 2) իրականությանը համապատասխանո՞ւմ է հայտարարությունն այն մասին, թե գերմանական հյուպատոսության աշխատակիցները իրազեկ են եղել այդ սպանություններին, 3) Բ. Դոանը վերջին ժամանակներս որևէ հետագա դիմում արվե՞լ է այդ հարցի կապակցությամբ։ Նա ասաց.*

— Մեր երկիրը ցնցվել է վերսկսված հայկական կոտորածների մասին հաղորդագրություններից, կոտորածներ, որոնք սկսվեցին նշանակալիորեն ավելի լայն մասշտաբով, քան նրանք, որոնք մի քանի տարի սրանից առաջ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը սարսափեցրին։ Ես թերթերից մեկում կարդացի, որ զոհերի թիվը հասնում է 800 000-ի։ Այս թվերը անհավանական են

թվում և, հուսով եմ, որ սաստիկ չափազանցված են։ Թերթերում հայտարարություն է եղել, թե գերմանական հյուպատոսությունից որոշ անձինք այդ դաժանությունները խրախուսել են այն աստիճանի, որ մասնակցություն են ունեցել կոտորածի կազմակերպմանն ու հրահրմանը։ Այս դեպքում նույնպես անհավանական է թվում, թե իրեն քաղաքակիրթ անվանող որևէ կառավարություն կամ նրա գործակալները կարող էին մասնակցություն ունեցած լինել նման միջոցառումների։ Մյուս կողմից, լորդ Բրայսի զեկույցից մենք գիտենք, թե ինչպիսին է եղել գերմանական բանակի վարքագիծը Բելգիայում, և Ֆրանսիական կառավարության խիստ մեղադրական ակտից մեզ հայտնի է նաև, թե ինչպիսին է եղել գերմանացիների վարքագիծը Ֆրանսիայում։ Անկախ այն բանից, թե ինչպիսին կարող էր լինել գերմանական կառավարության կարծիքը, մենք մեր տրամադրության տակ ունենք որոշ տվյալներ և նշանավոր լրագրողի կարծիքը։

Պալատ գալուց քիչ առաջ ես երեկոյան թերթում կարդացի մի քաղվածք այն նամակից, որ հայտնի կոմս Ռևենտլովը հասցեագրել է գերմանական թերթին, և այդ նամակն այնքան բնութագրական է տվյալ հարցի նկատմամբ գերմանական տեսակետին, որ ես մի քանի տող կկարդամ դրանից.

«Եթե թուրքական իշխանությունները վճռական միջոցներ են ձեռք առնում ընդդեմ անհուսալի, արյունարբու և մոլեգին հայերի, դա ոչ միայն նրանց իրավունքն է, այլև այդկերպ վարվելը նրանց ուղղակի պարտքն է։ Թուրքիան այսուհետև ևս կարող է վստահ լինել, որ գերմանական կայսրությունը միշտ այն կարծիքին է լինելու, թե այդ հարցը միայն ու միայն Թուրքիային է վերաբերում»։

Ես հակված չեմ ենթադրելու, թե այստեղ ունենք վստահության արժանի ինչ-որ մի վկայություն, որը կարող է ապացույց ծառայել այդ կոտորածին գերմանական կառավարության կամ նրա գործակալների մասնակցության վերաբերյալ։ Բայց եթե մենք նկատի ենք առնում այն վճռական ազդեցությունը, որ ունի գերմանական կառավարությունը Կոստանդնուպոլսում, ապա յուրաքանչյուր ոք, ով ծանոթ է Արևելքին, կհարի այն կարծիքին, թե գերմանական կառավարությունը չի կարողանա իրեն ազատ համարել բարոյական լուրջ պատասխանատվությունից, եթե պարզվի, որ նա, իմանալով նման երևույթների

մասին՝ վճռական ու եռանդուն քայլեր չի ձեռնարկի այդ գործողությունները դադարեցնելու համար...

Ես հավատում եմ, որ եթե Թուրքերին իրենց կամքին թողնեին, նրանք կցանկանային խաղաղ ապրել երկրագնդի մնացած բնակչության հետ, և մանավանդ՝ Անգլիայի։ Դժբախտաբար, Թուրքերն ընկել են նեղ, սահմանափակ մի հանցախմբի ձեռքը, որը խախտել է Օսմանյան կայսրության իսկական անկախությունը։ Բայց եթե որևէ բան կարելի է ասել ի պաշտպանություն Թուրք ազգի, ապա ոչ մի խոսք չի կարող ասվել ի պաշտպանություն Թուրքական կառավարության։

Դուրս է գալիս, որ այժմյան Թուրքական կառավարությունը շարունակելով իր նախորդների գիծը՝ կոտորածը դարձրել է իր քաղաքական համակարգի մի մասը։ Եթե դա այդպես է և եթե չի կարելի որևէ այլ բան ձեռնարկել, մենք կարող ենք նրանց վարքը դատապարտել ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ և մնացած ժողովուրդներին, լինեն դրանք քրիստոնյաներ, մահմեդականներ թե ինդուսներ, նախազգուշացնել, որ Թուրքիայի նկատմամբ համակրանք ցուցաբերելով՝ նրանք սերունդների աչքում իրենց վրա այնպիսի բիծ կդնեն, որը չի կարող բնավ երբեք մաքրվել։

Լորդ Գրեյի պատասխանը: Ես ամբողջովին համաձայն եմ ազնիվ կոմսի հետ, թե՝ քանի որ մենք մեր տրամադրության տակ ունենք պաշտոնապես հաստատված փաստեր, պետք է դրանց իրազեկ դարձնենք ամբողջ աշխարհին։

Թիֆլիսի թերթում, որտեղ, ինքնին հասկանալի է, բոլոր հնարավորությունները կան համոզվելու, թե ինչպիսին է գործերի իրական վիճակը, հաշվետվություններ են հրապարակվել իրադարձությունների մասին։ Փաստերը շատ տխուր բնույթի են։ Նորին մեծության Բաթումի հյուպատոսը քաղվածքներ բերելով Թիֆլիսյան մամուլից՝ նկարագրում է սարսափելի գազանություններ, որոնք տեղի են ունեցել Սասունում, որտեղ բնակչությունը բացարձակապես ոչնչացվել է և սոսկ մի քանիսին է հաջողվել փրկվել։ Ամբողջ երկրամասը լրիվ ավերվել է։ Մի քանի երևելի բնակիչների հաջողվել է փախչել սարերը, բայց նրանց, ում չի հաջողվել այդկերպ փախչել Թաքնվել, բոլորին կոտորել են։ Ապա երևացել է հայերի, ասորիների և այլ փախրստականների ահռելի հոսք դեպի Ուրմիա ու դեպի կովկասյան նահանգները։ Մեծ թվով փախստականներ են գնացել լցվել

էջմիածին ու Երևանի նահանգի այլ վայրեր։ Նրանք եկել են գլխավորապես Մանազկերտի լեռնային շրջաններից ու Վանից։ Հյուպատոսը հաղորդում է, որ մոտ 160 000 փախստականներ նշված շրջաններից Իգդիրով անցել են էջմիածին։ Նրանք, հյուպատոսի ասելով, իրենցից ներկայացնում էին ուժասպառ մարդկանց մի տխուր պատկեր, որոնցից շատերը մեռնում են սովից։ Օրական միջին հաշվով ոչ պակաս, քան 100 հոգի մեռնում է։

Անհնար է գերագնահատել տեղական իշխանությունների ջանքերը, որոնք գործադրվում են այդ սարսափելի աղետից ելք գտնելու ուղղությամբ՝ բայց փախստականների դրությունը դեպի լավը էականորեն փոխելու համար անհրաժեշտ է ուժեղացնել դեղորայքի ու պարենամթերքների մատակարարումը։

Ելենովկայում և Ախտայում 9000 փախստականներ կան, որոնց դրությունը ավելի լավ չէ։ Զեկուցագրերից մեկում ասվում է, որ եթե ժամանակին օգնությունը չհասցվի, երկյուղ կա, որ փախստականների կեսը կմահանա։ Կա նաև հաշվետվություն Ուրմիայում փախստականների սարսափելի դրության մասին։ Ես ճշգրիտ տվյալներ չեմ ստացել նրանց թվաքանակի մասին, բայց մի բան անկասկած է. նրանք շատ-շատ են։ Ուրմիայի ռուսական հյուպատոսը անում է այն ամենը, ինչ կարող է, որպեսզի օգնի նրանց։

Այսպիսին են սահմռկեցուցիչ փաստերը, և ես բացարձակապես համաձայն եմ ազնիվ կոմսի հայտարարության հետ այն մասին, որ այդ սարսափելի էքսցեսները քիչ չեն հուզում նորին մեծության հպատակ մուսուլմաններին Հնդկաստանում, և այն մասին, որ անհրաժեշտ է այդ ամենը մուսուլմանական հասարակական կարծիքին իրազեկ դարձնել, այնպես ինչպես դա մենք մեզ մոտ ենք անում։ Նրանք, իհարկե, ոչ մի դեպքում չեն ղեկավարվում իսլամի հրահանգներով, և իսլամը նրանց չի ների։ Ես համաձայն եմ նաև այն բանին, որ այդ իրադարձությունները կարող էին հասցվել եվրոպական ամեն մի ժողովրդի կամ ժողովրդի մի մասի սրտին, նրանց, ովքեր հակված են իրենց բախտը կապել Թուրքիայի հետ։ Կառավարությունը իր տրամադրության տակ չունի փաստեր, որոնք պաշտոնապես հաստատեն այն հայտարարությունները, թե Ասիայում գերմանական հյուպատոսական ներկայացուցիչները ոչ միայն չեն խոչընդոտել, այլև ոգեշնչել են այդ գազանությունները կատարողներին։

Այս հաղորդագրությունը, սակայն, արվել է Միացյալ Նահանգների դիտորդների կողմից, որոնք ի վիճակի են կարծիք կազմել, և մենք ստիպված ենք հայտարարել, որ դա մեզ անհավանական չի թվում։ Հայտարարությունն այն մասին, որ երբ դա հատուցման օրը, սպանություններին մասնակցած անձինք չեն մոռացվի, դեռևս պահպանում է իր ուժը, բայց կառավարությունը չի գտնում, որ Թուրքական կառավարության հետ ուղղակի թե անուղղակի կապ ստեղծելու փորձը կարող է որևէ օգուտ բերել։ Թուրքական կառավարությունը տեղյակ է մեր տեսակետին, և այն մեր կողմից կրկնելը, կարծում ենք, անպատակ է։

Կոմս Բրայս: Տարբեր աղբյուրներից իմ ստացած տեղեկությունները խոսում են այն մասին, թե այն տվյալները, որոնք ազնիվ կոմսը համարում է անհավանական, այսինքն, որ 800 000 հոգի ոչնչացվել է մայիս ամսից մինչև հիմա, ցավոք, միանգամայն իրական թիվ է։ Սպանությունները հետևանքն են այն քաղաքականության, որը, որքանով որ հնարավոր է հաստատել, նախապես լավ մտածված է եղել այժմ Թուրքական կայսրության կառավարության գլուխ կանգնած ավազակների կողմից։ Նրանք տատանվում էին դա իրականացնել այնքան ժամանակ, քանի դեռ չէր եկել պահը և այդպիսի հարմար պահ դարձավ մայիս ամիսը։ Այդ ժամանակ տրվեցին հրամաններ, և դրանք բոլորը Կոստանդնուպոլսից էին գալիս։ Որոշ դեպքերում նահանգապետները, լինելով մարդասեր և աստվածավախ մարդիկ, հրաժարվել են կատարել այդ հրամանները և փորձել են պաշտպանել չարաբախտ հայերին բոլոր միջոցներով, ինչ որ ունեցել են իրենց տրամադրության տակ։ Ես լսել եմ նահանգապետների ազատման երկու դեպքերի մասին, երբ նրանք հրաժարվել են կատարել հրամանները։ Կոտորածը, այնուամենայնիվ, տեղի է ունեցել։

Կոտորածը վերին աստիճանի սիստեմատիկ բնույթ էր կրում։ Քաղաքի ամբողջ բնակչությունն արտաքսվել է։ Տղամարդկանց բանտ են նետել, իսկ մնացածներին՝ կանանց ու երեխաներին, շարասյուներով դուրս են հանել քաղաքից։ Երբ նրանք մի փոքրը հեռացել են քաղաքից, նրանց իրարից բաժանել են. տղամարդկանց տարել են առանձին վայրեր, որտեղ նրանց բոլորին հրացանների կրակոցներով ու սվինի հարվածներով սպանել են Թուրք զինվորները։ Կանայք, երեխաներն ու ծերերը ամենատիչացած զինվորների պահակախմբի հսկողությամբ ուղարկվել են դեպի աքսորավայր՝ հաճախ վնասակար շրջաններ, բայց ավելի հաճախ՝ վիթխարի մի շրջան, որը տարածվում է մինչև Հալեպի արևելյան մասը, Եփրատի ուղղությամբ։ Օրը օրին շարժվում էին նրանք՝ քշվելով զինվորների կողմից։ Շատերն ընկնում էին ճանապարհին, ուրիշները՝ մեռնում սովից։ Թուրքական կառավարությունը չէր տվել ոչ մի ուտելիք, իսկ զինվորները նրանցից խլել էին այն ամենը, ինչ ունեցել էին։ Շատ հաճախ կանայք, որոնց զինվորները լրիվ մերկացրել էին, քայլում էին այդ տեսքով։ Շատ կանայք ցնորվում էին, դեն էին նետում իրենց երեխաներին՝ այլևս ի վիճակի չլինելով տանել նրանց։ Այդ քարավանի անցած ուղին գծվել էր դիակներով, և, թվում է, նրանցից քչերն են հասել նշանակված վայրը։

Տրապիզոնի կոտորածի փաստերը հաստատում է Իտալիայի հյուպատոսը, որն այդ ժամանակ քաղաքում է եղել։ Համաձայն Կոստանդնուպոլսից ստացված հրամանների՝ Տրապիզոնի բոլոր քրիստոնյա հայերը պետք է սպանվեին։ Մուսուլմաններից շատերը փորձել են փրկել իրենց քրիստոնյա հարևաններին՝ ապաստան առաջարկելով իրենց տներում, բայց Թուրքական իշխանություններն անողոք են գտնվել։ Ենթարկվելով ստացված հրամաններին՝ նրանք տներից դուրս են վռնդել բոլոր քրիստոնյաներին, հավաքել են մեկտեղ և փողոցներով քշել դեպի ծով։ Նրանց նստեցրել են առագաստանավեր, ափից որոշ տարածությամբ հեռացրել և ջուրը նետել։ Ամբողջ հայ բնակչությունը՝ 8—10 հազար հոգի, այդկերպ մեկ օրում վերացվել է։ Այս ամենից հետո մարդկանց պատմածները դառնում են հիմնավորված, և ես ցավում եմ, որ դրանք բոլորը սարսափելի ու սահմռկեցուցիչ տանջանքների միևնույն տարրն են պարունակում։ Համարյա ամբողջ մի ազգ ոչնչացվել է, և ես կարծում եմ, որ նման դեպքեր պատմությանը հայտնի չեն Լենկթեմուրի ժամանակներից ի վեր։

Կուզենայի ավելացնել, որ այն սակավաթիվ տվյալները, որոնք կան իմ ձեռքի տակ, հաստատում են ազնիվ կոմսի կողմից այստեղ արտահայտված այն պնդումը, որ հիմք չկա կարծելու, թե այս դեպքում մենք գործ ունենք մուսուլմանական մոլեռանդության հետ։ Որքանով որ ես կարող եմ հասկանալ, մուսուլմաններն այս իրադարձություններն ընկալել են ավելի շատ սարսափով, քան համակրանքով։ Համենայն դեպս, նրանք

հավանություն չեն տվել Թուրքական կառավարության գործելակերպին։ Ինձ շատ կարևոր է թվում, ի նկատի ունենալով արդարացման այն քաղաքականությունը, որ սկսել է վարել գերմանական կառավարությունը իր բարեկամների ու դաշնակիցների վերաբերմամբ, այստեղ հայտարարել, որ ոչ մի հիմք չկա հայերի բարձրացրած ապստամբության մասին ենթադրություններ անելու համար։ Չկա և չի կարող որևէ արդարացում լինել Թուրքական կառավարության գործողությունների համար։ Այդ գործողությունները պարզապես Աբդուլ Համիդի քաղաքականությունն անցկացնելու փորձ են, որը մի անգամ հայտարարել է, թե՝ «Հայկական հարցից ազատվելու ուղին դա հայերից ազատվելու ուղին է»։ Այդ քաղաքականությունը այժմյան Թուրքական կառավարության ղեկավարները վարում են նշանակալիորեն ավելի լիակատար կերպով, շատ ավելի արյունռուշտությամբ, քան Աբդուլ Համիդի ժամանակ է եղել։

"The Times", 7.X.1915.

187. ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

(«Թայմս» թերթի թղթակցի հաղորդագրությունը)

Բուխարեստ, 18 դեկտեմբերի 1915 թ.

Ես հաղորդագրություն եմ ստացել Ադրիանապոլսում հայ ազգաբնակչության լրիվ ոչնչացման մասին։ Հոկտեմբերի 10-ին Թուրքական ոստիկանությունը բանտարկել է Ադրիանապոլսի 45 հայ բնակիչների, որոնք բուլղարական հպատակություն էին ընդունել։ Բոլոր ձերբակալվածներն ուղարկվել են Կոստանդնուպոլիս և նույնիսկ Փոքր Ասիա, բացառությամբ 10 հոգու, որոնց հաջողվել է փախչել և ապաստանել Բերա փողոցում գտնվող բուլղարական ներկայացուցչությունում։ Բուլղարական կառավարության միջամտությունը այդ անձանց հնարավորություն է տվել ազատորեն վերադառնալ Կարաաղաջ։ Ինչ վերաբերում է մնացած երեսունհինգ հայերին, ապա Բ. Դուրը գլուխն ազատում է անգիտությամբ։

Այս միջադեպից քիչ անց, Ադրիանապոլսի բոլոր հայերը՝

մոտ 1600 հոգի, ձերբակալվել են, տղամարդիկ անհապաղ աքսորվել են Փոքր Ասիա, իսկ կանայք ու երեխաները երկու օր պահվել են բանտում՝ դառնալով բանտապանների կողմից կոպիտ հարձակումների օբյեկտներ։ Նրանցից ոմանց հետագայում նստեցրել են առագաստանավեր, որպեսզի տեղափոխեն Փոքր Ասիա։ Երկու նավակներ սուզվել են Ռոդոսթոյի մոտ և դրանցում եղածների մեծ մասը խեղդվել է։ Աքսորված ընտանիքների մի մասը վաճառվել է ծիծաղելիորեն ցածր գներով, պխավորապես՝ հրեաներին։ Կարաաղաջից պատգամավորություն է ուղևորվել Սոֆիա՝ կառավարության միջամտությունը ձեռք բերելու համար, բայց ոչ մի պատասխան չի ստացել իր խնդրագրին։ Մեկ ուրիշ պատգամավորության կողմից բուլղարական կառավարությանը մինչ այդ ուղարկված զեկուցագիրը տալիս է լիակատար պատկերն այն տառապանքների, որ ապրել են հայ գերիները Փոքր Ասիայում Թուրքական իշխանությունների ձեռքին։

Փաստաթղթում տրված է ցուցակը այն 29 շրջանների, որոնցում ամբողջ հայ բնակչությունը, որը հասնում է 835 000-ի, կա՛մ սպանվել է, կա՛մ աքսորվել, կա՛մ բռնի մահմեդականացվել։ Մի քահանայի ողջ-ողջ այրել են, հինգին՝ կախել կամ սպանել այլ եղանակով և 10-ին ձերբակալել։

"The Times", 21.XII.1915.

188. ԲԱՍԿԱՆԻ ԴՐԱՄԱՆ

(«Կավկազսկոյե սլովո» թերթում տպագրված թղթակցություն)

1915 թվի հունիսի 11-ին Չապանի սարահարթի բարձունքներում, սարահարթ, որը իշխում է Վարդո անունով երբեմնի գեղեցիկ ու ծաղկուն հովտի վրա, տեղի ունեցավ արյունոտ մի դրամա, որ պետք է այս պատերազմի տարեգրության մեջ դրանցվի որպես մի էջ, որը ներկված է վառ-ծիրանագույն և առանց որի Վիլհելմ Հոհենցոլլերնի ու թագաժառանգի՝ Թուրքիայի այդ թագադրյալ դաշնակիցների ու բարեկամների, ռազմական սխրանքների գիրքը, թերևս թերի ու խունացած լիներ։

Չապանի սարահարթի ստորոտում փոքրիկ Բասկան գյուղակն է փռված, որը Գյունդամիրի և Խուլանի հետ եռանկյունի

է կազմում։ Բասկանը և Գյունդամիրը բնակեցված են եղել հայերով, Խուլանը՝ քրդերով։ Բասկանը Թուրքական Անատոլիայի սովորական տիպի գյուղակներից մեկն է՝ քարե, հարթատանիք տներով, բանջարանոցների շուրջը քաշված քարե ցանկապատերով և ընտանի կենդանիների համար ֆետնափոր շինություններով։ Արագընթաց ու մաքուր լեռնային գետ, ձկնառատ, և ուռենու վտիտ թփուտներ։ Կես կիլոմետր հեռվում գետնից բխում է տաք աղբյուր, որին բնակիչները բուժիչ հատկություններ են վերագրում և որի մեջ հիմա մեր զինվորները լողանում են ու լվանում իրենց սպիտակեղենը։

Հունիսյան դրամային, որի վկան են եղել լուին երկինքը և Ջապանի գորշ, մոայլ ժայռերը, նախորդել են այլ իրադարձություններ, որոնց մասին անհրաժեշտ է ասել մի երկու խոսք։

1915 թվի մայիսի 20-ին Խնուսի և Խնուսի շրջանի, որն ընդգրկում է 27 գյուղեր, բնակիչ բոլոր հայերին հրամայված է եղել դուրս գալ իրենց տեղերից և ճամփա ընկնել դեպի Վարդո։ Ընդ որում պահանջվել է հետները վերցնել իրենց ողջ շարժական ունեցվածքը։ Բուն Խնուսը առևտրական կենտրոն էր ու բնակեցված էր առավել ունևոր դասակարգով և արհեստավորներով։ Այդ հրամանը, որ խնուսցի հայերին կանգնեցրել էր փակուղու առաջ, պատճառաբանված է եղել թուրքական «սրտացավ» կառավարության ցանկությամբ, այն է՝ հայերին հեռացնել պատերազմական գործողությունների ոլորտից և նրանց կյանքն ու ինչքը պաշտպանել պատերազմի հետ կապված վտանգներից։

Թվում էր, թե խնուսցիները պետք է որ խնամատարի փափկասրտության հետևում ճանաչեին նրա ընչաքաղց էությունը... բայց խնուսցիները հավատացել են։

Եվ 1700 ծխով նրանք շարժվել են Վարդոյի ուղղությամբ, սայլերով հետները տանելով իրենց ամբողջ ունեցվածքը... Կյում-Կյումում տեղացի հայերը խնուսցիներին նախազգուշացրել են հետագա շարժումից դեպի երկրի խորքը, քանի որ իրենց հայտնի էր դարձել, որ եկողներին Ջապանի բարձունքների կողմից կոտորած է սպառնում։ Այս տեղեկությունից տագնապահար եղած խնուսցիները հեռագիր են տվել սուլթանին, պաշտպանություն խնդրելով, բայց հեռագրի պատասխանը չի ստացվել, իսկ խնուսցիներին ուղեկցող թուրք ժանդարմները շարունակել են հանգստացնել նրանց, հավատացնելով, թե թուրքական կառավարությունը հոգալով նրանց անվտանգությունը՝

նրանց բոլորին կուղեկցի մինչև Դիարբեքիր, որտեղ նրանց արդեն չի կարող որևէ վտանգ սպառնալ։

Բայց խնուսցի հայերն արդեն ինչ-որ շար բան զգալով՝ հեռագրել են Մուշ, որտեղից մեկ հարյուրյակ ասկյար են ուղարկել։

Դա արդեն համենայն դեպս անվտանգության եռաշխիք է եղել, և ճանապարհը դեպի Օգնոտ ու մինչև Դիարբեքիր, կարծես թե, հայերի համար ապահովված էր։ Եթե ուշադրության առնենք նաև ամենօրյա կաշառատվությունը, որ հարկ է եղել կատարել ամբողջ ճանապարհին, հասկանալի կդառնա այն համեմատաբար հանգիստ տրամադրությունը, որով հայերը թողել են Կյում-Կյումը և շարժվել առաջ։

Բայց արդեն Գյունդամիրում նրանց նորից անհանգստություն է պատել... Մի փոքր խորհրդակցությունից հետո, նրանք վճռել են առաջ չգնալ, ինչը ժանդարմներին և ասկյարներին ստիպել է գործի դնել լիակատար անվտանգության հավաստիացումներ։ Իսկ միլիցիապետ քուրդ Ահմեդ աղան մարդ է ուղարկել նրանց ասելու, թե ինքը «երաշխավորում է ճանապարհի անվտանգություն մինչև Օգնոտ», եթե, սակայն, իրեն ուղարկեն 2 հազար թուրքական լիրա։

Ավա՜ղ, այդքան գումար խնուսցիները, իրենց դրության ամբողջ ողբերգականությամբ հանդերձ, արդեն հավաքել չեն կարողացել. այնպես հիմնովին էին «բարյացակամ» ուղեկցորդները նրանց պլոկել ճանապարհին՝ մինչև Գյունդամիր հասնելը, որ էլ ոչինչ չէր մնացել։

Դա եղել է հունիսի 10-ին։

Անցել է ևս մեկ տագնապալի գիշեր։

Վերջին գիշերը։

Երեքշաբթի՝ հունիսի 11-ին, ցերեկվա ժամը 12-ին, բոլոր խնուսցիներին քշել են, արդեն ուժով, դեպի Բասկան։ Այդտեղ՝ գյուղի եզրին, գետի վրա կա մի հին քարե կամուրջ, որից սկսվում է ճանապարհը դեպի սարը՝ դեպի Ջապանի բարձունքները, և ամբողջ ժամանակ անցնում է անհեթեթորեն շաղ եկած քարերի միջով, խանդակների ու կիրճերի միջով, որոնք այնտեղ կրում են «խուշ» անվանումը։ Ճանապարհն այնտեղ նեղանում է, ուստիև խնուսցիներն ստիպված են եղել սարնիվեր բարձրանալ երկար շարասյունով, որի գլուխը շուտով կորել է այդ ճանապարհի ոլորանների մեջ։

Այնտեղ եղել են ծերունիներ, հասուն տղամարդիկ, պատանիներ, երեխաներ, պառավներ, ջահել կանայք՝ կրծքի երեխաներով աղջիկներ, տղաներ։ Այնտեղ եղել են հինգ հայ քահանաներ, ուրֆացի մի հայ արքեպիսկոպոս և երեք քարոզիչներ այլ դավանանքներից, թե ո՞ր՝ չկարողացան ինձ բացատրել։ Հենց որ վերջին մարդն անցկ է կամրջից, ուղեկցող պահակախումբը, ինչպես հետո է պարզվել, պայմանական ազդանշան է տվել՝ հրացանի կրակոց։ Դա ազդանշան է եղել, թե մտադրված և որոշված գործը կարելի է ի կատար ածել... Եվ այդտեղ կատարվել է մի բան, որն, անկասկած, տառապանքների ևս մի ծակող փուշ է ներհյուսել Թուրքահայերի ճակատագրի փշե պսակին, ևս մի կաթիլ է ավելացրել այդ ժողովրդի շարշարանաց առանց այդ էլ լեփ-լեցուն գավաթին։

Ինձ հաջողվեց ոչ միայն լինել այդ վայրում, որտեղ մահն իր արյունոտ հանդեսներից մեկն էր կատարել, այլև Բասկանի կենդանի մնացած փոքրաթիվ բնակիչների միջից փնտրել գտնել այդ օրվա բոլոր սարսափների վկային։

Ես Բասկան եկա ընթացիկ սեպտեմբերի 8-ին և այստեղ գտա մի մարդու, որը պատրաստակամություն հայտնեց ինձ ուղեկցել Չապանի գագաթները։

Այդ գյուղացին Խաչիկ Ավետիսյանն էր։ Անցած տարվա հունիսի 11-ի արյունոտ օրը նրան հաջողվել է համագյուղացի տասնմեկ ջահել տղաների հետ փախչել սարերը։ Եվ այնտեղից, ծայրերի ու թփերի մեջ թաքնված, նրանք տեսել են ամեն ինչ։

Կոտորածն սկսվել է վերևում, բայց մարդ-գազանների էլ ավելի դազազմանը զուգընթաց, այդ գազանացման ալիքը փոխանցվել է շարասյան շարժման ամբողջ գծին։

«Մենք տեսանք,— պատմում է Խաչիկը,— թե ինչպես դրժբախտներից նախ պլոկեցին բոլոր թանկարժեք իրերը, ապա հանեցին շորերը, և ոմանց տեղնուտեղն սպանեցին, իսկ ոմանց էլ տարան ճանապարհից դուրս, խուլ անկյունները, և այնտեղ վերջ տվին։ Մենք տեսանք երեք կանանցից բաղկացած մի խմբի. նրանք մահվան սարսափով բռնված՝ գրկեցին միմյանց։ Եվ նրանց արդեն անհնար էր անջատել, բաժանել։ Բոլոր երեքին էլ սպանեցին։ Մենք տեսանք, թե ինչպես մի կնոջ, մերկացրած, ծառից կապեցին գլխիվայր, իսկ նրա տակ թողեցին նրա փոքրիկ երեխաներին։ Ոչ մայրը, ոչ մանկիկները չէին կարողանում միմյանց հասնել։ Խնուսի արքեպիսկոպոսին և Խնուսի երկուերեք ամենախոշոր վաճառականներին քարշ տվին տարան Չապանի ամենաբարձր տեղը։ Անասելի ողբ ու ոչական էր բռնել սար ու ձորը, փշաքաղվում էինք, արյունը սառչում էր մեր երակներում, բայց ի՞նչ կարող էինք անել։ Ինչո՞վ կարող էինք օգնել մեր եղբայրներին»։ Եվ, իրոք, ի՞նչ կարող էին անել մի բուռ անզեն գյուղացիները հարյուրավոր զազանացած թալանչիներին ու մարդասպաններին։

Այդ սպանդը ժամը 12-ից շարունակվել է մինչև երեկոյան ժամը 6-ը՝ Չապանի սարահարթի ողջ երկարությամբ, անհեթեթորեն ցաքուցրիվ ժայռերի մեջ, ձորակների և հյուսթեղ ու գեղեցիկ խոտերով ծածկված լեռնային մարգագետիններում։ Դրժվար է ճշգրիտ սահմանել, թե ընդհանուր ջարդի ժամանակ քանիսի՞ն է հաջողվել փախչել, եթե միայն հնարավոր է եղել այդ քարե թակարդից ընդհանրապես դուրս փախչել։ Գուցե մեկերկուսին հաջողվել է ճանապարհին բթացնել պահակների զգոնությունը։

Մերձակա գյուղերի՝ Գյունդամիրի և Բասկանի բնակիչները պնդում են, որ շնորհիվ խիտ թփուտներով պատված խոր ու մթին ձորերի՝ 300 կանանց հաջողվել է կենդանի մնալ։ Բայց դա դեռ լիովին հաստատված փաստ չէ։ Այդ 300 կանանց մասին էլ խոսք կլինի ներքևում։

Խաչիկն ինքը պատմում է, որ ուշ երեկոյան, երբ ամեն ինչ խաղաղվել էր, և իրենց սարսափելի գործն արած մարդիկ թջել էին բարձունքներից ու ցրվել գնացել իրենց գյուղերը, նա ընկերների հետ սողոսկել է այնտեղ և դիակների միջից 27 կենդանի ծծկեր երեխաների է գտել, որոնք կպած են եղել իրենց սպանված մայրերին։ Հաջողվել է դիակների տակից գտնել երկու պատանիների, որոնք, ակներևաբար, թաքնվել են և այդկերպ փրկվել։ Այդ երկու պատանիները Խնուսցի Հայկազ Ավետիսյանը և Սարլու գյուղից Հովսեփ Մնացյանն էին։ Երեխաներին Խաչիկը տարել հասցրել է Բասկան։ Երեք օր անց՝ ևս երեք կենդանի երեխաների է գտել։

Այս զանգվածային սպանության լուրը, իհարկե, արագ տարածվել է շրջակայքի Թուրքահայերի մեջ։ Եվ շատերը (ասում են, երեք գյուղերի բնակիչներ) գալիս էին այստեղ՝ Չապանի բարձունքների մոտ, և նույնպես այստեղ մահ գտնում, քանի

որ Ահմեդ աղան ժամանակ առ ժամանակ այստեղ էր ուղարկում իր մարդկանց «կարգ հաստատելու համար»։

Ճիշտ է, այդ մարդիկ ջանացել են համենայն դեպս թաքցնել կատարված ոճրագործության հետքերը և դիակները քարշ են տվել, հեռացրել մեծ ճանապարհից ու նետել ձորերը, խանդակները և լեռնագոգերը։ Ինձ բնորոշ մի փաստ հաղորդեցին Բասկանում։ Բասկանի սպանդից քիչ անց, այստեղ է եկել գերմանական զինվորական գործակալը։ Տեսնելով կամրջից դեպի բարձունքները տանող ճանապարհը, որ համատարած ծածկված է եղել այլանդակված դիերով, նա, իր դաշնակիցների վայրագությունները թաքցնելու ցանկությունի՞ց, թե՞ պարզապես եվրոպական զզվանքից, հրամայել է դիակներն իսկույն հավաքել տանել մի հեռու տեղ։ Դրանով է, հավանաբար, բացատրվում 1915 թվի ամռանը Բասկանի լեռնային ճանապարհի սկզբում կատարված ոճրագործության հետքերի բացակայությունը։

Կամրջի այն կողմում, մի երկու հարյուր սաժեն հեռվում, դեռ ընկած էին երկու մարդկային գանգեր ու սրունքոսկրեր։ Բայց ճանապարհը որքան լեռնիվեր էր գնում, այնքան ավելի ու ավելի էինք հանդիպում արդեն խանձված խոտերի մեջ ընկած չորացած դիակների։

Իմ ուղեցույցը լեռնային կածանից մի կողմ թեքվեց, և այդտեղ խմբերով, մեկական, զույգ-զույգ, մոլախոտով ու քարերով ծածկված, ընկած էին խնուսցիների աճյունները։ Տասական, երեսնական և ավելի շատ լցված էին դրանք խանդակները։

Ես երբեք այդպիսի սարսափ չէի ապրել, ինչպես այստեղ՝ այս լռին, վայրի բնության մեջ, այս գորշ ժայռերի և հարյուրավոր այլանդակված դիակների մեջ...

Եվ այսպես, մի կույտից մյուսին անցնելով, 5—6 վերստ գնացինք։ Հավանաբար, շնորհիվ այն բանի, որ 1915 թվի ամառն ու աշունը չորային էին եղել, ձմեռը՝ դաժան, իսկ գուցեև շնորհիվ հողի, կլիմայի և այստեղ փչող քամիների առանձնահատկությունների, համարյա բոլոր դիակները պահպանել էին մաշկը, որն, իհարկե, չորացել էր ու թեթևակի դեղնել։ Բայց հեշտությամբ կարելի է դեմքերից ու գլուխների լրիվ պահպանված մազերից որոշել նրանց տարիքը։

Հատկապես լավ էին պահպանվել ձեռքներն ու ոտքները։ Բայց դրանք, դրանց դիրքը, ջղաձգորեն սեղմված ու սառած մատների ձևը ի՞նչ պերճախոսորեն են պատմում այն դրամայի

մասին, որ տեղի է ունեցել այստեղ 1[illegible] ամիս առաջ։ Ի՞նչ պերճախոսորեն են վկայում կանանց դիակների չոված ոտքերը և ձեռքերի սեղմված մատների ձևը այն զազրելիությունների մասին, որոնք տեղի են ունեցել այստեղ։ Հրազենից ու սառը զենքից առաջացած վերքերի խորը բացված հետքերը երևում են դիակների վրա։

Ուղեցույցս ինձ տարավ սարահարթի ամենաբարձր տեղը։ Այստեղ էին մահ գտել խնուսցի բոլոր երեք հարուստ վաճառականներն ու արքեպիսկոպոսը, որոնց մասին խոսեցի վերևում։ Ըստ գանգերի և սեացած մաշկի ծվենների՝ դժվար է ասել, սակայն, թե ում դիակներն են դրանք։

Գնում ենք առաջ, որտեղ լեռնագոգում քարերի մեջ աննկատ ընկած է մի աղջկա աճյուն։ Գանգը, որը բաժանված է մարմնից, ընկած է հենց այստեղ։ Գանգի մոտ լավ պահպանված աղջկական ծամեր կան՝ խնամքով հյուսված ու բրդի թելով կապված։ Ներքնազգեստի մնացորդները երևում են արդեն մերկացած ոսկորների վրա։ Գանգը արտասովոր գեղեցիկ է և իդեալականորեն կանոնավոր ձև ունի՝ վիթխարի ակնախոռոչներով, որտեղից, թվում է, նայում է սարսափն ինքը։ Գանգի ու ոսկորների չափսերն ասում են, որ միանգամայն պատանեկան տարիքում է եղել այդ անհայտ աղջիկը։

Ձմեռվա ընթացքում սոված շներն ու գայլերը հասցրել են մաս-մաս անել, տանել շատ դիակներ։ Դա են ցույց տալիս դիակների դեսուդեն ընկած մասերը, ձեռքերի ու ոտքերի թաթերը՝ սփռված Զապանի ընդարձակ տարածքով մեկ։ Վայրենացած շների ու գայլերի տեր ու տնօրինություն անելն են ցույց տալիս բազմաթիվ դիակների կրծոտված ձեռք ու ոտքերը։

Ես հարցրի փրկված 300 կանանց ճակատագրի մասին։ Եվ ինձ պատմեցին մի պատմություն, որ անհավատալի է յուրաքանչյուր մի այլ երկրում, բայց հնարավոր է սրբազան կիսալուսնի երկրում։ Ուշ գիշերին այդ կանայք դուրս են եկել Զապանի փոսերից ու ձորերից և վազել դեպի Բասկան, որտեղ հանդիպել են Մուշից եկած ասկյարներին։ Բոլոր կանանց փակել են տեղի եկեղեցում, իսկ առավոտյան Գյունդամիրի միջով ուղարկել են ղզլբաշների Տատան գյուղը, որտեղ և հանձնել են միլիցիոներների ջոկատի պետ Միրզա Ալիի ձեռքը, որը նրանց հետ վարվել է ասես թե չափազանց արևելյան ձևով. բոլորին ջրահեղձ է արել Ամարակ լճում։

Այդպես են պատմում այս մասին...

Միրզա Ալին ինքը հիմա այստեղ համարվում է «խաղաղ բնակիչներից» և շատ է սիրում խոսել բարձրյալ աստծու մասին։

Ես և կյում-կյումցի ուղեկիցս ու ուղեցույցս մեր ողջ տեսածից պապանձված ու ճնշված՝ Զապանի սարահարթից դանդաղ իջանք Վարդոյի հովիտը։

Աջ կողմում՝ մայր մտնող արևի ոսկեշող ճառագայթների մեջ, շառագունել էր Դիադինը։ Իսկ այնտեղ՝ կապույտ-կապույտ լեռնաշղթայի հետևում, Մուշն էր։ Է՛լ ավելի հեռվում՝ խորհրդավոր, անզսպորեն դեպի իրեն ձգող Դիարբեքիրն էր։

Մեր հետևում մնացին Զապանի մռայլ ժայռերը։

Եվ թեթևակիորեն սպիտակին էր տալիս քարքարոտ, ոլորապտույտ ճանապարհը, որով հարյուրավոր դժբախտ խնուսցիներ գնացել էին դեպի ստույգ ու մարտիրոսական մահ։

Ա. Կիպիանի

«Кавказское слово», 5. X. 1916, № 219.

189. «ԽԱՐԲԵՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՒՐՖԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» ԳՐՔԻՑ*

1915 թ. մայիսի 1-ին մեզ մոտ՝ Խարբերդում հանկարծակի ձերբակալեցին ու բանտ դրեցին բոլոր առավել ազդեցիկ, առավել ուներ հայերին։ Բանտում նրանց ծեծում էին ու տանջում, ասում էին. դուք զենքի պահեստներ ունեք, ցույց տվեք, որտե՞ղ են դրանք։

Ոչ ոք ոչինչ չասաց։ Ասենք, ոչ մի պահեստ էլ չկար։ Առանձին անձանց մոտ, շատ քչերի, թաքցված էին հրացաններ ու ատրճանակներ, բայց սրանք չէին ուզում խոստովանել։

Խոստովանություն չկորզելով տղամարդկանցից՝ կպան կանանց։ Ձերբակալեցին՝ ում վրա որ կասկածանք կար կամ ումից հույս ունեին հարուստ փրկագին ստանալ։ Բայց կանայք էլ ոչինչ չասացին. շատերը՝ նրա համար, որ չգիտեին տեղը, մյուսներն էլ, որ չէին ուզում մատնել ամուսիններին։

Թեմական առաջնորդը, մյուս հոգևորականները և ազատության մեջ մնացած սակավաթիվ մեծամեծները իրար հետ խորհրդակցելով՝ որոշեցին հավաքել ու հանձնել եղած զենքը, որպեսզի ձերբակալվածներին ազատեին խոշտանգումներից։

Երբ մենք հավաքեցինք և հանձնեցինք զենքը, կոտանքները ժամանակավորապես դադարեցին։ Բայց շուտով դրանք վերսկսվեցին է՛լ ավելի դաժանորեն։ Ասում էին. սա այն զենքը չի, բացե՛ք ձեր պահեստները։

Խոշտանգում էին սարսափելիորեն, անմարդկայնորեն։ Պոկում էին տղամարդկանց ոտքերի եղունգները, արյունոտված ոտքերը դնում տաք ջրի մեջ, ապա ուռենու ճիպոտներով խփում վերքերին։ Սափրում էին կանանց գլուխները, շիկացած պղնձե թասեր կոխում գլուխներին կամ այրում էին կրծքերը...

Շատերը չդիմացան տանջանքներին, մեռան բանտում, ամանք խելագարվեցին։

Բայց մենք արդեն տվել էինք այն ամենը, ինչ ունեինք, և այլևս ոչինչ տալ չէինք կարող։

Այնժամ հայտարարեցին, թե բոլոր հայերը պետք է աքսորվեն երկրից, թե այդ մասին հրաման կա Կոստանդնուպոլսից...

Սկսվեց աքսորը։

Ջորքերը շրջապատեցին մեր թաղամասերը, ոստիկանական ջոկատները մտան տները բռնելու ու ձերբակալելու բոլորին, ում որ գտնեին (սկզբնական շրջանում՝ միայն տղամարդկանց)։ Ձերբակալվածներին տարան բանտը, այնտեղ նրանց ձեռքերը կապեցին պարաններով, ապա խումբ-խումբ շղթայեցին ու գիշերով, մեծ բազմությամբ՝ 1000-հոգուց ավել, դուրս հանեցին քաղաքից։

Մենք այդ մասին իմացանք միայն հաջորդ օրը։

Առավոտյան, երբ մայրերն ու կանայք գնացին ուտելիք կամ հագուստ տալու բանտարկյալներին, բանտը դատարկ տեսան։ Այնժամ նրանք սարսափելի ողբ ու կական բարձրացրին, հուսահատորեն սկսեցին իրենց կուրծքը ծեծել, շորերը պատառոտել ու մազերը փետել։ Նրանց հրամայեցին ցրվել։ Նրանք ցրիվ չէին գալիս, նրանք ճչում էին. «Վերադարձրե՛ք մեր ամուսիններին։ Վերադարձրե՛ք մեր եղբայրներին ու հայրերին»։

Նրանց ցրեցին հրացանների խզակոթերով ու մտրակներով։

Դա կրկնվեց մի քանի օր, մինչև որ քաղաքի բոլոր տղամարդիկ ձերբակալվեցին ու աքսորվեցին։ Հետո անցան կանանց և երեխաներին։ Նրանց նույնպես հավաքում էին խումբ-խումբ՝

* Այս պատմությունը գրի է առնվել ըստ տիկին Պ. Ֆ-յանցի պատմածի, երիտասարդ, ուներ քեռանիքի պատկանող մի կնոջից, որը կրթություն է ստացել Խարբերդի գերմանական միսիայի դպրոցում։

1000—1500 հոգի, և ժանդարմների հսկողությամբ դուրս էին հանում քաղաքից։

Բանտում մնացին 200-ից ոչ ավելի տղամարդիկ՝ առավել ունևորներից։ Սրանք փրկագին էին տվել՝ մարդը 10 ոսկի և թույլտվություն ստացել, որ քաղաքից տեղափոխվեն ոչ թե իրենց ընտանիքներից առանձին, այլ՝ միասին։

Փրկագնվածների թվում էր նաև իմ ամուսինը։

Մենք պատրաստվեցինք և հունիսի 14-ին՝ շաբաթ օր, մյուսների հետ դուրս եկանք Ուրֆա տանող ճանապարհով։

Մեր խումբը բաղկացած էր առավել ունևոր, առավել կրթված և քաղաքում հարգված ընտանիքներից։ Մենք մեզ հետ ունեինք սայլեր և ձիեր, բայց շատ դանդաղ էինք առաջ ընթանում, քանի որ տղամարդիկ ոտքով էին գնում։

Հինգերորդ օրը հասանք Իզոլի գյուղը և կանգ առանք հանգստանալու։ Մենք խարբերդից մեզ հետ մթերքի մեծ պաշար էինք վերցրել, բայց Իզոլիում խլեցին, մեզ ոչինչ չթողեցին։

Մոտերքում, գյուղի կողքով, Եփրատ գետն է հոսում։ Մենք տեսնում էինք, թե ինչպես են հոսանքի հետ քշվում գնում այլանդակված, ուռած դիակներ՝ երկուական միասին կապված։ Դրանք այնքան շատ էին և տեսարանն այնպես սարսափելի էր, որ մենք աշխատում էինք չնայել գետի կողմը։

Երբ վրա հասավ երեկոն, տղամարդկանց մեզանից առանձնացրին։ Նրանց մեկական կամ մի քանիսին միասին տարան գետի ափը և ասացին՝ ոսկի տվեք, թե չէ ձեզ կսպանենք։ Հետն էլ հայհոյում էին ու ծեծում։ Ով որ կարողացավ փրկագնվել, փրկագնվեց ու վերադարձավ ճամբար, ով չկարողացավ, նրան սպանեցին և դիակը ջուրը նետեցին։

Իզոլիում մնացինք մի քանի օր։ Հետո վեր կացանք ու գնացինք դեպի Մալաթիա։

Մինչև Մալաթիա նույնպես հինգ օր գնացինք և սաստիկ տանջահար եղանք։ Մեզ հետ դեռ մնում էին մեր սայլերն ու ձիերը։ Բայց ո՛չ տղամարդկանց, ո՛չ էլ 10—11 տարեկանից մեծ երեխաներին թույլ չէին տալիս սայլ նստել։ Շատերը քայլում էին ոտաբոբիկ, քանի որ խլել էին նրանց կոշիկները։ Սոված, հոգնած, ուռած, արնակոլոլ ոտքերով քայլում էին մեր ամուսինները, հայրերը, եղբայրները և երեխաները։ Հենց որ մեկը ուժասպառ ընկնում էր, այլևս ոտքի չէին հանում, այլ՝ քարով խփում էին գլխին, սպանում կամ թողնում էին, որ մեռնի ճանապարհին... Իզոլիից Մալաթիա ճանապարհին մենք շատ դիակներ սփռեցինք։

Բայց ամենասարսափելին, ամենաանտանելին այն էր, որ այդ ճանապարհին սկսվեցին արդեն բռնությունները կանանց նկատմամբ։ Բռնաբարում էին զազրելի ցինիզմով, գազանային ծաղրուծանակի ենթարկելով, ամուսինների, հայրերի ու մայրերի աչքի առաջ...

Մալաթիայում առանձնացրին տղամարդկանց և 10 տարեկանից մեծ տղաներին, իսկ մեզ՝ կանանց, աղջիկներին ու փոքր երեխաներին, բաժանեցին խմբերի և տեղավորեցին իջևանատներում։

Խարբերդում մեր ամուսիններն ու հայրերը ոսկով իրավունք գնեցին մնալու իրենց ընտանիքների հետ։ Այդ իրավունքը զորություն ունեցավ միայն մինչև Մալաթիա։ Այնտեղ անհրաժեշտ եղավ նորից փրկագնվել։ Բայց քանի որ արդեն ոչ ոքի մոտ դրամ չէր մնացել,— ամբողջ դրամը խլել էին ճանապարհին, ուստի մեզ զրկեցին վերջին արտոնությունից, վերջին մխիթարությունից։

Ես երեք տարվա ամուսնացած էի, բայց երեխաներ չունեի։ Եվ դա մեծ բախտավորություն էր ինձ համար։ Բայց ես ջերմորեն սիրում էի ամուսնուս... Երբ նրան, մյուսների հետ մեկտեղ, տանում էին, ես ուշաթափ եղա։ Ուշքի գալով՝ կողքիս տեսա արցունքներով ողողված 14-ամյա քրոջս։ Այնուհետև իմ մերձավորներից միայն նա մնաց ինձ հետ, քանի որ մորս՝ փոքրահասակ եղբայրներիս ու քույրերիս հետ առանձնացրին մի ուրիշ խմբում։

Գիշերն անցկացրինք ողբալով ու արցունք թափելով։ Աղոթում էինք աստծուն, որ գթա մեզ... Չեմ հասկանում, թե նա ինչպե՞ս կարող էր լսել այդքան մայրերի, այդքան անմեղ երեխաների հուսակտուր կանչերը։

Վաղ առավոտյան մութեսարիֆը պաշտոնյաների հետ եկավ ասելու, թե գիշերը տղամարդկանց ուղարկել են Ուրֆա և որ շուտով այնտեղ կուղարկեն նաև մեզ։ Ապա ասացին, թե պետք է խուզարկեն մեզ, քանի որ այդպիսի հրաման կա։

Մենք խելքներս կորցրել էինք, ոչինչ չէինք հասկանում, թույլ էինք տալիս, որ մեզ հետ վարվեն, ինչպես ցանկանում են։

Սկսեցին մեզ մեկ-մեկ մոտեցնել մութեսարիֆին և մերկացնել՝ խուզարկելու համար։ Շատերի նույնիսկ ներքնազգեստներն

էին հանում, հրամայում էին՝ շուռ գալ, կռանալ, ձեռքով ափըլ-փում էին մերկ մարմինը, անամոթ խոսքեր ասում, ծիծաղում ու զվարճանում։

Հետո հավաքեցին, որ Ուրֆա տանեն։

Սայլերն ու ձիերը խլեցին։ Չթողեցին նույնիսկ իշուկներին, որպեսզի հնարավոր լիներ երեխաներին նստեցնել-տանել։ Մայրերը փոքրերին շալակներն առան, իսկ նրանց, որոնք կարող էին քայլել, ձեռքը բռնեցին ու գնացինք։

Մենք արդեն պարեն չունեինք։ Ուտելու համար միայն հաց էին տալիս։ Այն երեխաները, որոնք չէին կարող քարթու հաց ուտել, քմահաճում էին, լալիս, ճչում։ Եթե ժանդարմներից որևէ մեկին ձանձրացնում էր մանկական ճիչը, նա մորից խլում էր լալկանին և երեխայի գլուխը ճամփեզրի քարերին խփելով՝ ջախջախում, սպանում էր։

Առաջին իսկ օթևանում գիշերելիս՝ վերսկսվեցին բռնությունները կանանց նկատմամբ։ Նրանց նույնիսկ մի կողմ չէին տանում։ Այս մարդիկ ավելի վատն էին, քան անասունները. դրանք գոնե քիչ թե շատ ամոթի զգացում ունեն, իսկ սրանց պետք էր հնարավորին չափ ավելի շատ զազրելիություններ ու նողկալիություններ... Ինչ-որ նորմայի ու հերթի պես բան էին սահմանել. յուրաքանչյուր 10 զինվորի հատկացնում էին մեկ կին, զվարճանում էին նրանով 2—3 ժամ անընդմեջ, ապա տանջահար, կիսամեռ, հաճախ ուշաթափ՝ թողնում հեռանում...

Ջղջված չթողեցին նույնիսկ 10, նույնիսկ 8 տարեկան աղջիկներին։

Դա կրկնվում էր յուրաքանչյուր կանգավայրում։

Նրանց մեջ կային հղի կանայք, որոնք բռնաբարություններից ու ծեծից ծննդաբերում էին վաղաժամ, արյունաքամ լինում ու մեռնում մեր աչքի առաջ։

Որպեսզի փրկվեին հետապնդումներից, շատերը վերքերով այլանդակում էին իրենց դեմքն ու մարմինը, կեղտոտում, զզվելի դարձնում իրենց։ Ասենք, առանց այդ արհեստական միջոցների էլ (սոված, պատառոտված, կեղտոտ, վշտից ու տառապանքից խելակորույս) մենք այնպիսի տեսք ունեինք, որ, թվում էր, ամենազազրելի անառակն էլ մեզ վրա չէր կարող նայել տոփանքով... Բայց դրանք մարդկային ամեն մի զգացմունքից զուրկ մարդիկ էին, նույնիսկ՝ հասարակ ֆիզիկական զզվանքի զգացմունքից զուրկ։

Այսպես մենք քայլեցինք մոտ երկու ամիս։ Այն հազարաստները, որ մեզ դեռևս թողել էին կրկնվող կողոպուտներից հետո, քրքրվել էին ամբողջովին։ Բոլորը սարսափելի ցնցոտիների մեջ էին, իսկ շատերը՝ համարյա մերկ։ Որպեսզի ինչ-որ բանով ծածկեինք մեր մերկությունը, մենք տերևներից ու խոտերից գոտիներ էինք հյուսում, ինչպես վայրենիներն են անում...

Երբ վերջապես հասանք Ուրֆա, մենք 200 հոգուց ավել չէինք մնացել, մինչդեռ, Խարբերդից դուրս էինք եկել մոտ 2000 հոգով, իսկ Մալաթիայից, տղամարդկանց առանձնացնելուց հետո, 1000-ից ավել էինք։ 1000 կանանցից ու երեխաներից ողջ էին մնացել հազիվ 200-ը. մյուսները կա՛մ մեռել էին ճանապարհին, կա՛մ սպանվել, կա՛մ առևանգվել։

Մեզ՝ խոշտանգված, կիսամեռ, մեր տեսած սարսափներից ու տառապանքներից խելացնոր՝ քշեցին մտցրին Ուրֆայի ինչ-որ իշևանատուն, ասելով, թե այստեղ մեզ թողնելու են մի քանի օրով հանգստանալու համար, իսկ հետո կտանեն ավելի հեռու։

Ես իմացա, որ Ուրֆայում կա գերմանական միսիա, և մի բարի կնոջ խնդրեցի, որ թաքուն մի գրություն տանի տա միսիոներներին։ Այն, որ ես սովորել էի գերմանացիների մոտ և լավ գիտեի նրանց լեզուն, փրկեց ինձ։ Միսիայից եկան մի տիկին ու մի բժիշկ։ Նրանք բանակցեցին մեր դահիճների հետ և թույլտվություն ստացան, որ ինձ, քրոջս և երկու ուրիշ կանանց բուժելու տանեն։

Գերմանական հիվանդանոցում մենք մնացինք մի քանի օր, մի քիչ հանգստացանք, կազդուրվեցինք։ Հետո մեզ տեղափոխեցին մի այլ շենք, որը նույնպես միսիային էր պատկանում։

Դրանից ոչ շատ առաջ Ուրֆայում հայերի սարսափելի կոտորած էր եղել։ Շատերին սպանել էին, շատերին քշել անապատ՝ սովամահ լինելու։ Բայց ոմանք հասցրել էին թաքնվել թաղամասերում և զենքի դիմել։ Նրանց ձեռք գցելու համար թուրքերի բոլոր փորձերը մինչև հիմա վերջանում էին անհաջողությամբ։ Հայերն ամուր նստել էին և անձնուրացորեն պաշտպանվում էին։

Այն տունը, որտեղ ապրում էի, մի երեսով նայում էր դեպի հայկական թաղամասը, մյուսով՝ թուրքականը։

Ա՜խ, ի՜նչ բերկրանքով էի լսում, թե ինչպես են կրակում հայերի հրացանները։ Ի՜նչ հիացմունքով էի տեսնում, թե թուր-

քերն ինչպես են փախչում այդ կրակոցներից՝ տանելով իրենց վիրավորներին ու սպանվածներին...

Բայց շուտով Հալեպից մեծաթիվ զորք եկավ, հետն էլ՝ գերմանացի մի սպա ու լավ հրանոթներ։ Հրանոթները դրեցին բարձունքների վրա և սկսեցին ռմբակոծել։

Երեք օր անց հայերի բոլոր ամրությունները կործանվեցին, և թուրքերը ներխուժեցին թաղամասերը։

Հայերը, որքան որ դեռևս ողջ մնացածներ կային, փախան թաքնվեցին ամերիկացիների շենքում։

Գերմանացի սպան հայտարարեց, որ նրանց, ովքեր կհանձնվեն, ոչ մի վատ բան չի արվի։ Այնժամ հայերը հանձնվեցին գերմանացի սպային։ Բայց սպան չպահեց խոստումը. շատերին կապկպեց, ուղարկեց բանտ, իսկ մնացածին արտաքսեց քաղաքից՝ չգիտես թե ուր։

Հետո սկսեցին խուզարկել թուրքերի, ասորիների և եվրոպացիների տները, որպեսզի գտնեին այնտեղ թաքնված հայերին։ Ում որ գտնում էին, տանում էին բանտ։ Այդ խուզարկությունների ժամանակ ձերբակալեցին նաև մեզ՝ ինձ և ինձ հետ եղածներին։

Հետո կախաղան սարքեցին և սկսեցին կախել նրանց, ում որ անվանում էին խռովարարների պարագլուխներ...

Ես որոշեցի փախչել, ինչ ուզում է լինի։ Պայմանավորվեցի մի քանի ուրիշների հետ, և, երբ գիշերն իջավ, մենք զգուշորեն դուրս եկանք ճամբարից ու փախանք... Ես փախչում էի ամբողջ ուժով, հասցրի փախչել ու թաքնվել քարերի արանքում։ Երեկոյան այստեղ ինձ գտավ մի կին, որը, իմ բախտից, հայ էր, արաբի հարճ այդ գյուղում։ Նրանից ես իմացա, որ իմ բոլոր ընկերուհիներին գերի են վերցրել, իսկ քրոջս ինչ-որ մեկը տարել է Ուրֆա։

Այս կինը իր մոտ ապաստան տվեց ինձ և թաքուն իմ նամակը հասցրեց Ուրֆա՝ քույր-միսիոներներին։ Նրանք իմ հետևից մարդ ուղարկեցին, և ես գիշերը նրա հետ գաղտագողի մտա քաղաք։

Ուրֆայում ես շատ հարցուփորձ արեցի քրոջս մասին, բայց ոչինչ չիմացա։ Դառն էր իմ վիճակը, է՛լ ավելի դառն էր ջահել քրոջս բախտը, որն այժմ մնացել էր բոլորովին մենակ, աստված գիտե ում ձեռքին...

Ես թաքնվեցի իմ մտերիմ գերմանուհու մոտ։ Մի քանի օր

անցավ։ Ոչ ոք ինձ չէր անհանգստացնում։ Բայց ահա մի անգամ առավոտյան ոստիկանները շրջապատեցին մեր տունը։ Հասկացա, որ ուզում են խուզարկություն կատարել։ Իսկույն ևեթ դրեցի ծանոթուհուս լայնեզր գլխարկը (զգեստս փոխել էի, վենց որ եկել էի Ուրֆա) և տնից դուրս եկա։ Դռան մոտ կանգնած էր ոստիկանական սպան։ Ես հանգիստ անցա նրա մոտով։ Նա ինձ գերմանուհու տեղ դրեց և բաց թողեց՝ ոչինչ չասելով։ Գնացի այգիների կողմը, որտեղ մի ուրիշ գերմանուհի ծանոթ ընկերուհի ունեի։ Այստեղ մնացի մինչև երեկո, իսկ երեկոյան նորից վերադարձա մտերմուհուս մոտ, որի տունը առավոտյան վերից վար խուզարկել էին, բայց, իհարկե, ապարդյուն...

Գարնանն իմացա, որ մորս հաջողվել է իր մոտ մնացած երեխաների հետ, քրդերի օգնությամբ, փախչել Մալաթիայից և որ նա հիմա թաքնված է Մեզրեում՝ Խարբերդի մոտ...

Ինչ-որ հրաշքով, եվրոպացի կնոջ տեսք առած՝ ինձ հաջողվեց առանց խոչընդոտի գնալ հասնել Մեզրե, որտեղ գտա մորս, կրտսեր քույրերիս և եղբայրներիս։

Նրանցից իմացա, որ ամուսնուս սպանել էին Մալաթիայում մեր բաժանումից մեկ-երկու օր հետո։ Երբ ժանդարմական սպան սկսել էր խուզարկել նրան, նա դուրս էր քաշել հագուստի տակ թաքցրած դաշույնը, մի հարվածով սպանել թուրքին ու փախել։ Թուրքերը հետևից կրակ էին բացել և տեղնուտեղն սպանել։ Իմանալով այս մանրամասնությունները, ես ավելի շատ ուրախացա, քան վշտացա։ Թող սպանված լինի։ Նա համենայն դեպս հասցրել էր մահից առաջ վրեժն առնել և՛ իր, և՛ իմ, և՛ հազարավոր ուրիշ տղամարդկանց ու կանանց։

Հազիվ էինք մի քանի օր ապրել Մեզրեում, երբ նորից ստիպված եղանք փախչել, որովհետև թուրքերը մեր հետքը գտել էին։

Այս անգամ մենք փախանք հարևան Դերսիմ, այնտեղի քրդերի մոտ։ Իսկ երբ իմացանք, որ ռուսական զորքերը գրավել են Երզնկան, եկանք ռուսների մոտ։ Երզնկայից, մյուս փախստականների հետ, ուղարկվեցինք այստեղ՝ Ռուսաստան։

Ամուսնուս ընտանիքը 48 շունչ էր։ Նրանցից կենդանի են մնացել ընդամենը երեք հոգի. ես և երկու տղա։

«На пути от Харберта до Урфы», М., 1917.

190. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԱՌՆՈԼԴ ԹՈՅՆԲԻԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ» (1915 Թ.) ԳՐՔԻՑ

...Այդ ամբողջ զարհուրանքը, այդ բոլոր ոճրագործությունները կատարվել են հայերի նկատմամբ՝ չնայած նրանց կողմից ամենափոքր իսկ մարտահրավերի բացակայության։ «Մենք պատերազմական դրության մեջ ենք»,— հավանաբար կառարկի Թուրքական կառավարությունը։ «Մենք պայքարում ենք մեր գոյության համար։ Հայերը հույս էին տածում մեր թշնամու հաղթանակի նկատմամբ։ Նրանք օգնության ծրագրեր էին որոճում այդ հաղթանակի իրականացման համար։ Նրանք դավաճաններ էին ազատության մեջ՝ մերձճակատային գոտում, և մենք ստիպված եղանք նրանց դեմ գործել ռազմական ժամանակի ողջ խստությամբ»։ Բայց այսպիսի արդարացումները լիովին հակասում են փաստերին։ Այդ հայերը մերձռազմաճակատային գոտու բնակիչներ չէին։ Ոչ մի քաղաք կամ գյուղ, որտեղից նրանց սիստեմատիկորեն քշում էին դեպի մահ, չէր գրտնվում ռազմական գործողություններին թատերաբեմին մոտիկ։ Դրանք բոլորը Անատոլիայի խորքերում էին, հավասարապես հեռու և՛ կովկասյան սահմանից, և՛ Դարդանելից։ Նրանք ոչ մի հնարավորություն չունեին համագործակցելու Անտանտի զորքերի հետ, ինչպես և չէին կարող ապստամբություն բարձրացնել, քանի որ մեկ հոծ համայնք չէին կազմում։ Նրանք ոչ մեծ գաղութներով ցրված էին ընդարձակ երկրով մեկ և փոքրամասնություն էին կազմում իրենց հարևան Թուրքերի համեմատությամբ։ Քաղաքացիական և զինվորական իշխանությունը Թուրքերը ամուր պահում էին իրենց ձեռքին, և խռովություն բարձրացնելը ոչ մի լավ բան չէր խոստանում հայերին։

Ես պետք է կրկնեմ, որ այդ հայերը՝ քաղաքաբնակները, հիմնականում խաղաղ տրամադրված և աշխատասեր մարդիկ են եղել, զենք գործածելու մեջ անհմուտ։ Նրանց, ինչպես որ Արևմտյան Եվրոպայի քաղաքային բնակչությանը, խորթ է վրեժխնդրության գաղափարը։

Օսմանյան կառավարությունը ի վիճակի չէ թաքցնել իր հանցագործությունը նախազգուշական միջոցառումների պատրվակի տակ, քանզի հայերը հեռու են եղել վատ դիտավորություններից... Եվ իրոք, մինչև այժմ գրանցված է երկու դեպք, երբ տեղահանության ծրագիրը հանդիպել է դիմադրության։ Դա Անտիոքի շրջանում տեղի ունեցած հաջող դիմադրությունն էր, երբ հայ գյուղացիները սարերը բարձրացան և պաշտպանություն ունենալով ծովի կողմից՝ յոթ շաբաթ պայքարում էին, մինչև որ համարյա հրաշքով փրկվեցին ֆրանսիական նավատորմի օգնությամբ... Եվ մեկ էլ՝ անձնուրաց հերոսությունը Շապին-Գարահիսարի, մի քաղաքի, որ գտնվում է Տրապիզոնից ոչ հեռու, որտեղ 4 հազար հայեր, ի պատասխան արտաքսման պահանջի, զենքի դիմեցին և Թուրքական զորքերին դիմադրեցին մայիսի կեսից մինչև հուլիսի սկիզբը։ Այնժամ Թուրքերը համալրումներ ու հրետազոր բերեցին և հեշտությամբ կործանեցին քաղաքը։ «Գարահիսարը,— ասվում էր մի հայ քահանայի հասցեագրված նամակում,— ոմբակոծության է ենթարկվել, և շրջակա շրջանների ամբողջ բնակչությունը, ինչպես և քաղաքինը, անողոքաբար կոտորվել է, չբացառելով իրեն՝ եպիսկոպոսին»։ Ոչ մի այլ բան չի կարող սրանից լավ ապացուցել, թե Թուրքական կառավարությունը որքան քիչ էր վախենում հայերից և ինչ եռանդով միջոցներ ձեռք առավ նրանց արագ ոչնչացման համար, հենց որ դրա հնարավորությունը եղավ։

Այսպիսին է եղել կառավարության գործելակերպը անպաշտպան, ոչ մի կասկած չհարուցող քաղաքաբնակ հայերի նկատմամբ։ Իսկ երբ բանը հասավ նվազ հնազանդ գյուղացիական համայնքներին, որոնք հիմնավորվել էին սարերում, կառավարությունը հրաժարվեց որևէ ձևացումից. չթաքցնելով իր մտադրությունները և չսպասելով, մինչև որ նրանք իրենք ենթարկվեին տարագրման հրամանին, իսկույնևեթ սուրը մերկացրած հարձակվեց նրանց վրա։

Նա [կառավարությունը] նույնկերպ վարվեց Զեյթունի հետ՝ հայկական մի մարզի, որը ութ հարյուր տարի փաստորեն անկախ ապրում ու բարգավաճում էր Կիլիկյան հարթավայրի վրա խոյացող լեռների մեջ։

Զեյթունցիները մնացած հայերից՝ Կիլիկիայի բնակիչներից, տարբերվում էին նրանով, որ զենք ունեին և, թվում է, ժամանակին նախապատրաստվել էին մոտեցող հանգուցալուծմանը։ Բայց նրանք զենքերը հանձնեցին, հենց որ խոստացան, որ հնազանդության դեպքում կխնայեն նրանց անպաշտպան եղբայրակիցներին, որոնք ապրում էին հարթավայրի գյուղերում։ Թուրքերը, հենց որ իրենց նպատակին հասան, իհարկե, չպահեցին իրենց խոստումը։ Այսպիսի անբարենպաստ դրության

մեջ դրված լինելով՝ քաջարի լեռնականները անխուսափելիորեն պետք է որ պարտվեին[35]...

Arnold J. Toynbee. Armenian Atrocities. The Murder of a Nation. New-York—London, 1915, p. 69—72.

191. Դ-Ր ԼԵՓՍԻՈՒՍԸ 1915 Թ. ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Հայերի տեղահանությունը կատարվել է երեք տարբեր շրջաններում և անցել է հետևյալ երեք իրար հաջորդող էտապներով։ Երեք խտաբնակ շրջանները, որտեղ հայերը կազմել են բնակչության նշանակալի մասը (10-ից 40 տոկոսը), հետևյալներն են.

1. Կիլիկիան և Հյուսիսային Սիրիան
2. Արևելյան Անատոլիան
3. Արևմտյան Անատոլիան։

Կիլիկիայի այն շրջանը, որտեղ նրանք ապրում էին, իր մեջ ներառում է Ադանայի վիլայեթը և Հալեպի վիլայեթի առավել բարձրադիր մասերը, որոնք տեղավորված են Տավրոսում և Ամանոսում (Մարաշի սանջակ)։ Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում նրանք բնակվում էին Հալեպի, Անտիոքի, Սուեդիայի, Քեսաբի, Ալեքսանդրետի, Քիլիսի, Այնթապի և Ուրֆայի շրջաններում։

Արևելյան Անատոլիայի յոթ վիլայեթներն են՝ 1. Տրապիզոն, 2. Էրզրում, 3. Սեբաստիա, 4. Խարբերդ (Մամուրեթ ուլ-Ազիզ), 5. Դիարբեքիր, 6. Վան, 7. Բիթլիս։

Արևմտյան Անատոլիայում պետք է հիշատակել Իզմիդի մութեսարիֆությունը և Բրուսայի, Կաստամոնուի, Անգորայի և Կոնիայի վիլայեթները։

Կիլիկիայի բնակչության տեղահանությունն սկսվում է մարտի վերջին և հետևողականորեն շարունակվում ապրիլ ու մայիս ամիսների ընթացքում։ Արևելյան վիլայեթներից տեղահանությունը (բացառությամբ Վանի վիլայեթի) սկսվում է մայիսի վերջին և սիստեմատիկորեն շարունակվում մինչև հուլիսի 1-ը։

Տեղահանությունն Արևմտյան Անատոլիայից, որն սկսվել էր օգոստոսին, շարունակվում է սեպտեմբերի ընթացքում։

Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում սկզբում միջոցառումները սահմանափակվել են ազդեցիկ մարդկանց ձերբակալությամբ։ Տարագրություններն սկսվում են մայիսի վերջին և շարունակվում մինչև հոկտեմբեր ամիսը...

Անատոլիայի արևելյան վիլայեթներից տեղահանությունը իրագործվում է երկու էտապով։

Կոստանդնուպոլսի մտավորականության ձերբակալությունից երեք օր առաջ, որը տեղի է ունեցել ապրիլի լույս 25-ի գիշերը, իշխանությունները ձեռնարկեցին մեծ թվով անվանի քաղաքացիների ձերբակալությանը ներքին մարզերի շատ քաղաքներում։ Ձերբակալությունները սիստեմատիկորեն տեղի են ունեցել չորս շաբաթ շարունակ՝ ապրիլի 21-ից մինչև մայիսի 19-ը։ Այսպես, ապրիլի 21-ից սկսած, ձերբակալվել և աքսորվել են անվանի քաղաքացիներ Իզմիդում՝ 100, Պարտիզակում՝ 80, Բրուսայում՝ 40, Պանդրմայում՝ 40, Բալըքեսիրում՝ 30, Ադաբազարում՝ 80։ Հաջորդ օրերին, ապրիլի վերջին և մայիսի սկզբին. Մարզվանում՝ 20, և 20 անվանի քաղաքացիներ էլ՝ Դիարբեքիրում։ Մայիսի առաջին շաբաթներին բռնվել և աքսորվել են 600 երևելի անձինք Էրզրումից, Սեբաստիայից՝ 500, Քղիից՝ 50, Շապին-Գարահիսարից՝ 50 և Խնուսից՝ 25։

Մայիսի երկրորդ կեսին հերթը հասավ Դիարբեքիրին, որտեղ սկզբում ձերբակալվել էին 500, իսկ հետո ևս 300 հոգի, և Կեսարիային (200 անվանի քաղաքացիներ)։ Այդ նույնը պատահեց նաև Բաբերդում ու Յոզգաթում։ Նույնպես մի քանի ազդեցիկ մարդիկ ձերբակալվեցին Մարաշում և Ուրֆայում։

Քանի որ վերոհիշյալ քաղաքները գտնվում են հայաբնակ մարզերում, պետք է ենթադրել, որ խոսքը գնում էր համընդհանուր միջոցառման մասին, ինչը նպատակ ուներ հայ ժողովրդին զրկել իր առաջնորդներից և հոետորներից, որպեսզի արտահայտումները կարելի լինեն իրագործել առանց աղմուկի ու դիմադրության։ Ուզում էին նաև խանգարել այն բանին, որ երկրի ներսում կատարվող իրադարձությունների մասին լուրերը ժամանակից շուտ չդառնային հասարակայնության ու Եվրոպայի սեփականությունը։ Հունիսի սկզբից պետության մեջ վարչական պաշտոններ զբաղեցնող բոլոր հայերը հանվեցին իրենց պաշտոններից, իսկ բոլոր բժիշկները, որոնք պատերազմի սկզբից ևեթ հավատարմորեն կատարում էին իրենց պարտականությունները թուրքական զինվորական հոսպիտալներում, բանտ նետվեցին։

Հազարավոր հայերի, պատվավոր ու կրթված մարդկանց՝ դեպուտատների, հրապարակախոսների, գրողների, բանաստեղծների, իրավաբանների, փաստաբանների, նոտարների, ծառայողների, բժիշկների, վաճառականների, բանկիրների և բոլոր ունևոր ու ազդեցիկ տարրերի բոլոր այդ ձերբակալությունները կատարվեցին առանց որևէ մի դատաքննության։ Ոչ մի անգամ և ոչ մի դեպքում նրանց հանդեպ մեղադրանք չի հարուցված եղել պետության դեմ ուղղված որևէ թշնամական գործողության մեջ կամ նման մտադրության մեջ։ Պարզապես նրանք [թուրքերը] ուզում էին գլխատել հայ ժողովրդին՝ նախքան նրա առանձին մասերի ջախջախմանն անցնելը։ Մենք մի այլ տեղում դեռ մանրամասն կանգ կառնենք այդ միջոցառումների ծագման վրա և այն պատճառաբանությունների, որոնցով ղեկավարվում էին կառավարական շրջանները։ Բարձրագույն պաշտոնատար անձանց հասցեագրված հրամանները գալիս էին Ստամբուլից և, չնայած այն դիմադրությանը, որ ցուցաբերվում էր առանձին պետական ծառայողների, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հենց թուրք բնակչության կողմից, այնուամենայնիվ դրանք անշեղորեն և անողոքաբար կատարվում էին։

Միջոցառումների երկրորդ էտապը, որ նախորդել է համընդհանուր տարագրությանը, վերաբերում է բնակչության արական մասին, որը բանակ էր կանչվել կամ արդեն այնտեղ ծառայում էր այս իրադարձությունների ժամանակ։ Զինվորական ծառայության մեջ գտնվող հայերը, որոնք ռազմական մինիստրի վկայությամբ քաջաբար մարտնչում էին ոչ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ճակատում՝ Ռուսաստանի դեմ, մեծ մասամբ զինաթափվել են և օգտագործվել բանակի կարիքների համար՝ որպես բեռնակիրներ կամ ճանապարհների վերականգնման վրա աշխատողներ։ Համարյա բոլոր գավառներից լուրեր են ստացվել, որ ոչ միայն հարկադիր աշխատանքի մեջ գտնվող հայերն են տարվել խուլ տեղեր և սպանվել իրենց ընկեր-մուսուլմանների ձեռքով, այլև ամբողջ խմբեր՝ 80, 100 և ավելի մարդուց բաղկացած, գնդակահարվում էին զինվորների ու զինվորական ժանդարմերիայի ձեռքով՝ իրենց սպաների հրամանի համաձայն։ Հավանաբար երբեք, համենայն դեպս մինչև պատերազմի ավարտը, չի պարզվի, թե ինչ չափեր էր ընդունել բանակ զորակոչված հայերի սպանությունը։

Զինվորական պարհակ կատարելու պատրվակով շատ քաղաքներում ու գյուղերում 16—70 տարեկան տղամարդկանց, չնայած այն բանին, որ նրանք բանակում ծառայելուց ազատվելու համար հարկ էին վճարել կամ պիտանի չէին բանակում ծառայելու, շարասյուներով տարել են լեռները և գնդակահարել առանց նախնական որևէ քննության, ինչն ի միջի այլոց, ո՛չ ժամանակը, ո՛չ հանգամանքները թույլ չէին տալիս կատարելու...

Մենք արդեն նշել ենք, որ չպետք է ծանրակշիռ համարել այն փաստարկները, որոնք բերվում են արտաքսումը հիմնավորելու համար։ Բացառությամբ Վանի շրջանի, որը խուսափեց տեղահանությունից, քանի որ այն գրավված էր ռուսական զորքերի կողմից, երկու-երեք տեղերի, որտեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին (Զեյթուն և Շապին-Գարահիսար), մնացածներն այնքան հեռու են մերձճակատային գոտուց, որ մեկուկես միլիոն բնակիչների արտաքսումը, որոնք ցրված կյան կայությունների բոլոր մասերում, մանավանդ ռազմական գործողությունների թատերաբեմից ամենահեռու գտնվողներն, ոչ մի չափով չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով։

Միակ բացատրությունը, որը հիմք չի տալիս կառավարության այդ միջոցառման մեջ խելացնորության ակտ տեսնել, դա այն է, որ (կառավարությունը) գործում էր համաձայն ներքաղաքական պլանի ու սառնարյուն հաշվարկով և նախապես կրոնադատված մտադրությամբ իր առջև խնդիր էր դրել ոչնչացնել հայկական էթնիկական տարրը[36]...

Dr. Johannes Lepsius. Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916, S. 3—4, 21—23.

192. 1915 Թ. ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԿԱՄ ՍՊԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ (ՅՈ. ԼԵՓՍԻՈՒՍԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

Վիլայեթի անվանումը	բնակչության թիվը	օկրուգի անվանումը	լուսավորչականներ	կաթոլիկներ	բողոքականներ	ընդհանուր թիվը	գթության են արժանացել	փախել են	տեղահանվել են կամ սպանվել
1	2	3	4	5	6	7	8	9	
1. Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա									
Ադանա	79 600	Սիս	9000		500	9500			9500
		Ադանա	35 000	2000	900	37 900			37 900
		Հաճըն	20 000	1000	200	21 200			21 200
		Պայաս	11 000			11 000			11 000
Հալեպ	163 350	Հալեպ	15 000	5000	2000	22 000			22 000
		Մարաշ	30 000	4000	3500	37 500			37 500
		Յունուզ	7000			7000			7000
		Զոյթուն	20 000	500	550	21 050			21 050
		Այնթապ	30 000	1000	4000	35 000			35 000
		Ուրֆա	24 000	1000	800	25 800			25 800
		Անտիոք	12 000	2000	1000	15 000		4000	11 000
	242 950		213 000	16 500	13 450	242 950		4000	238 950
2. Արևելյան Անատոլիա									
Տրապիզոն	53 500	Տրապիզոն	30 000	2000	700	32 700			32 700

1	2	3	4	5	6	7	8	9	10
		Սամսոն	20 500	500	300	20 800			20 800
Էրզրում	203 400	Էրզրում	75 000	8000	2000	85 000		25 000	60 000
		Երզնկա	25 000			25 500			25 500
		Բաբերդ	17 000		500	17 000			17 000
		Հասանկալե	10 000	500		10 500			10 500
		Դերջան	15 000			15 000			15 000
		Քեմախ	10 000		200	10 200			10 200
		Կորտիջան	24 000	1000		25 000			25 000
		Բայազետ	14 000	1000	200	15 200		15 200	
Սեբաստիա	200 000	Սեբաստիա	80 000	5000	1000	86 000			86 000
		Թոքաթ	21 000	2000	500	23 500			23 500
		Ամասիա	25 000	500	3000	28 500			28 500
		Նեկոպոլիս	25 000		200	25 200			25 200
		Դիվրիգ	11 000		300	11 300			11 300
		Գյուրուն	17 000	500	1000	18 500			18 500
		Դարենդե	7000			7000			7000
Խարբերդ (Մամուրեթ ուլ-Ազիզ)	131 200	Խարբերդ	45 000	2000	4000	51 100			51 000
		Ակն	10 000		200	10 200			10 200
		Արաբկիր	18 000	500	1000	19 500			19 500
		Իմշկածագ	9000			9000			9000
		Զարսանշակ	18 000	500		18 500			18 500
		Մալաթիա	20 000	2000	1000	23 000			23 000
Դիարբեքիր	81 7000	Դիարբեքիր	45 000	1000	1000	47 000			47 000
		Բալու	22 000		300	22 300			22 300

1	2	3	4	5	6	7	8	9	10
		Արղանա	6000	500	200	6700			6700
		Զընկուշ	5000		700	5700			5700
Վան	192 200	Վան	100 000	500	200	100 700		100 700	
		Լիմ և Կտուց	11 000			11 000		11 000	
		Բաշկալե	10 000			10 000		10 000	
		Ախթամար	70 000		500	70 500		70 500	
Բիթլիս	196 000	Բիթլիս	50 000	500	1000	51 500		8000	43 500
		Մուշ	90 000	3000	1000	94 000			94 000
		Սղերդ	25 000	1000		25 500			25 500
		Խիզան	25 000			25 500			25 500
	1 058 000		1 005 000	31 500	21 500	1 058 000		240 400	817 600
3. Արևմտյան Անատոլիա									
Իզմիդ	71 100	Նիկոմեդիա	65 000	500	600	66 100			66 100
		Արմաշ	5000			5000			5000
Բրուսա (Խոդավենդիքիար)	91 200	Բրուսա	35 000	3000	500	38 500			38 500
		Բիլեջիկ	17 000	1000		18 000			18 000
		Պանդրրմա	15 000	500		15 500			15 500
		Քյոթահիա	18 000	1000	200	19 200			19 200
Զմյուռնիա (Այդին)	27 200	Զմյուռնիա	25 000	2000	200	27 200	27 200		
Կաստամունի	14 000	Կաստամունի	14 000			14 000			14 000
Անգորա	108 500	Անգորա	16 000	7000	500	23 5000			23 500

1	2	3	4	5	6	7	8	9	10
		Կեսարիա	40 000	2000	2000	44 000			44 000
		Յոզգաթ	40 000		1000	41 000			41 000
Կոնիա	25 000	Կոնիա	25 000			25 000			25 000
	337 000		315 000	17 000	5000	337 000	27 200		309 800
4. Եվրոպական Թուրքիա									
Կոստանդնուպոլիս	161 000	Կ. Պոլիս	150 000	10 000	1000	161 000	151 000		10 000
Անդրիանապոլիս	33 000	Ադ. Պոլիս	8000			8000	4000		4000
		Ռոդոսթո	25 000			25 000	9000		16 000
	194 000		183 000	10 000	1000	194 000	164 000		30 000
5. Սիրիա, Պաղեստին, Բաղդադ									
Երուսաղեմ	4200	Երուսաղեմ	3000	200		3200	3200		
		Հայֆա	1000			1000	1000		
Սիրիա	2000	Դամասկոս	2000			2000	2000		
Բեյրութ	1300	Բեյրութ	1000	300		1300	1300		
Բաղդադ	6000	Բաղդադ	5000	1000		6000	6000		
	13 500		12 000	1500		13 500	13 500		

1	2	3	4	5	6	7	8	9	10
			ընդհանուր դումար						
1. Եդեսիայի և Հյուսիսային Սիրիա	242 950		213 000	16 500	15 450	242 950		4000	233 950
2. Արևելյան Անատոլիա	1 058 000		1 005 000	31 500	21 500	1 058 000		240 400	817 600
3. Արևմտյան Անատոլիա	337 000		315 000	12 000	5000	337 000	27 200		309 800
4. Կոստանդնուպոլիս և Անդրիանապոլիս	194 000		183 000	10 000	1000	194 000	164 000		30 000
5. Սիրիա, Պաղեստին, Բաղդատ	13 500		12 000	1500		135 000	13 500		
	1 845 450		1 728 000	76 500	40 950	1 845 450	204 700	244 400	1 396 350

Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներից փախածների թվում (նախավերջին սյունակ) ներառնված են նաև քրդերի ձեռքով սպանվածները և փախուստի ժամանակ զոհվածների կամ սպանվածների թվում (վերջին սյունակ) չեն մատնանշված նրանք, ովքեր մահմեդականացվել են։

Dr. Johannes Lepsius, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam. 1916, S. 298—303.

193. ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

1915 թ. հունիսի 2 (15)-ին երիտթուրքերի կառավարության պատերազմական ատյանի որոշմամբ Կ. Պոլսի Պայազիդի հրապարակում կախաղան հանվեցին հնչակյան կուսակցության հետևյալ նշանավոր գործիչները. ՓԱՐԱՄԱԶ (ՄԱՏԹԵՈՍ ՍԱՐԳԻՍՅԱՆ), ՎԱՆԻԿ (ԳԵՂԱՄ ՎԱՆԻԿՅԱՆ), ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՏՈՔՏ. ՊԵՆՆԵ (ՊԵՏՐՈՍ ՊԵՆՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ), ԱՐԱՄ ԱԶԸԳՊԱՇՅԱՆ, ՀՐԱՆՏ ԲԵՂԱՎՅԱՆ, ԵՐՎԱՆԴ ԹՈՓՈՒԶՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵՐՂԱԶԱՐՅԱՆ, ԹՈՎՄԱՍ ՎԱՀԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՄՈՒՐԱՏ ՂԱԶԱՐՅԱՆ, ՄԻՆԱՍ ՔԵՇԻՇՅԱՆ, ՍՄԲԱՏ ԳԼՃՅԱՆ, ԱԲՐԱՀԱՄ ՄՈՒՐԱՏՅԱՆ, ՄԿՐՏԻՉ ՄՈՒՐԱՏՅԱՆ, ՀԱԿՈԲ ՊԱՍՄԱՃՅԱՆ, ԳԱՐԵԳԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ, ՊՈՂՈՍ ՊՈՂՈՍՅԱՆ, ԵՐԵՄԻԱ ՄԱԹՈՍՅԱՆ, ԳԱՌՆԻԿ ՊՈՅԱՃՅԱՆ, ԱՐՄԵՆԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ։

Ռուսական գրավումեն առաջ Վանի բանտին մեջ խեղդամահ եղած ընկերներու անունները. ԱՍՈ, ԱԲՐԱՀԱՄ ԲՐՈՒՏՅԱՆ, ԱՐՏԱՇԵՍ ՍՈԼԱԽՅԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ՏԱՆԹՅԱՆ։

Քսան կախաղաններ, Փրավիտենս, 1916, էջ 8։

194. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔԱՐՈԶԻՉ Վ. ՋԵՔՍԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Գավառից Կոստանդնուպոլիս ուղևորությունս տեղի ունեցավ դժոխային պայմաններում. այն, ինչ տեսա ու լսեցի, երբեք չեմ մոռանա։

Ես ականատեսը եղա մի ամբողջ ժողովրդի բնաջնջման, և այն, ինչ այժմ գրում եմ, կատարվածի սոսկ ամփոփ շարադրանքն է, ուրվապատկերը, և այն չի կարող ներկայացնել ամբողջ տեսածիս ու վերապրածիս անգամ հազարերորդական մասը։

Սույն հաղորդում-հոդվածը կազմելիս, իմ ճանապարհորդական հուշերից բացի, օգտվել եմ մահմեդականացված և Կոստանդնուպոլիս բերված մի կնոջ, մի թուրք սպայի առևանգած և Կ. Պոլիս տարած 10-ամյա աղջկա, Խարբերդից եկած մի մուսուլմանի, Երզնկայից ժամանած օտարերկրյա ճանապարհորդների հաղորդած տեղեկություններից։

Երբ մեկնում էի Կ. Պոլիս, հայերի ջարդերն արդեն սկսվել էին։ Հայերի արտաքսման դժոխային ծրագիրը իրականացվում էր հետևողականորեն՝ ահավոր միջոցներով։ Նախ և առաջ ամե-

նուրեք՝ քաղաքներում և գյուղերում հայ բնակչությունը ոստիկանների կողմից դինաթափվել էր ահավոր գազանություններով ու բազմաթիվ սպանություններով, որ կատարել էին չեթեները, որոնք կազմվում էին բանտերից արձակված ոճրագործներից։

Այնտեղ, որտեղ դենք, գրքեր կամ կուսակցություններին վերաբերող որևէ բան էին հայտնաբերում, համատարած խուզարկություններ էին կատարվում, ինչը ահաբեկում էր խաղաղ բնակչությանը։

Դրանից հետո սկսվեց դեռևս չձերբակալված տղամարդկանց և ձերբակալվածներից նրանց բռնագաղթը, ում դեմ հանցանքներ չկային. արտաքսման պատրվակով նրանց խմբերով ուղարկում էին տարբեր կողմեր և մինչև վերջին մարդը բոլորին սպանում։ Մինչև ուղարկելը տեղական իշխանությունները խուզարկում էին նրանց, փողերը և արժեքավոր ամեն ինչ խլում։ Ես տեսել եմ քարավաններ, որոնցում քայլում էին 5—10-ական մարդ իրար կապված, իսկ այլ վայրերում՝ երկու-երկու կամ հինգ-հինգ իրար կապկպված դիակներ։

Երբ հասա Խարբերդ, տղամարդկանց տեղահանությունն արդեն ավարտվել էր, իսկ մնացած բնակչությունը՝ կանայք, ծերունիները, երեխաները, ինչպես դեն նետված իր, թողնված էին մուսուլմանների հայեցողությանը։ Սկսած բարձրաստիճան պաշտոնյայից և վերջացրած հասարակ գյուղացիով, բոլորն էլ կարող էին ցանկացած կնոջը կամ աղջկան կնության առնել և բռնությամբ մահմեդականացնել։ Փոքր երեխաներին բաժանում էին բոլոր ցանկացողներին, բայց վերջում, երբ այլևս չկամեցան նրանց պահել, շատերին ճանապարհ հանեցին, որպեսզի նրանք՝ մերկ ու սոված, գառնային գազանակերպ չեթեների զոհերը կամ սովամահ լինեին։

Խարբերդում իմացա, որ Դիարբեքիրի վիլայեթում, գլխավորապես Մարդինում կոտորած էր եղել, իսկ փրկվածները ահավոր բռնությունների էին ենթարկվել։ Էրզրումի, Բիթլիսի, Սվազի և Տրապիզոնի վիլայեթներից հայ բնակչությանը բռնագաղթեցնելիս կառավարությունը որոշ արտոնություններ էր տվել. մեկնելու տասնօրյա ժամկետ, ունեցվածքը վաճառելու թույլտվություն, որոշ ընտանիքների սայլեր էին տրամադրվել, որոնք, սակայն, 2—3 օր հետո ճանապարհին խլվել էին, իսկ չեթեները ու մուսուլման գյուղացիները նրանց անխնա կոտորել էին։

Առաջ կանանց, աղջիկներին ու երեխաներին խնայում էին։

Այս անգամ նրանք էլ չխուսափեցին վայրագ վերաբերմունքից. առաջինները զոհ գնացին ստոր կրքերին, մյուսները փեղքհղ էին հանձնվում մուսուլման ընտանիքներին։

Մի ականատես պատմում էր, որ Էրզրումի վիլայեթում մի խումբ կանայք, որոնք հասել էին Խարբերդի դաշտ, այնտեղ թողնվել էին բախտի քմահաճույքին, որտեղ նրանք աստիճանաբար բոլորն էլ կործանվել էին (օրական տալով 50—60 զոհ), և կառավարությունը ընդամենը մի քանի մարդ էր ուղարկել թաղելու դիակները, որպեսզի գյավուրների մեղքով մուսուլման տարրերի առողջությունը չտուժեր։

Զիլեցի մի փոքրիկ աղջիկ ինձ հայտնեց, որ երբ Մարզվանից, Ամասիայից, Թոքաթից տեղահանվողները ճանապարհ էին ընկել դեպի այսպես կոչված Սար Ղշլու (Սվազի և Կեսարիայի միջև), երեխաները խլվել էին մայրերից ու փակվել առանձին շինություններում, իսկ մայրերին ստիպել էին շարունակել ճանապարհը։ Իսկ այնուհետև հարևան գյուղերում հայտարարվել էր, թե ցանկացողները կարող են ստանալ ուզած երեխային։ Իսկ այդ աղջնակն ինքը իր ընկերուհու՝ ամասիացի Նվարդի հետ Կ. Պոլիս էր բերվել մի թուրք սպայի կողմից։ Կանանց ու երեխաների քարավանները ամեն մի քաղաքում ու գյուղում ի ցույց էին դրվում կառավարական հիմնարկների առջև, որ մուսուլմանները ընտրություն կատարեն նրանց միջից։ Այն բանից հետո, երբ Բաբերդից տեղահանվածները սրի էին քաշվել, մնացած կանայք ու երեխաները Երզնկայի մոտ նետվել էին Եփրատը այն տեղում, որը կոչվում է Քեմախ Բողազի։ Այդ գազանություններից վրդովված, Երզնկայի կարմիր խաչի հիվանդանոցի գթության երկու քույրեր՝ նորվեգուհի օրիորդ Ֆլորա Ա. Վետել Յարսենբերգը, ազնվական ընտանիքից սերված մի աղջիկ, և նրա գերմանացի ընկերուհին[37], թողնելով իրենց ծառայությունը, եկել էին Կ. Պոլիս և այդ ահավոր բաների մասին անձամբ հաղորդել մի քանի դեսպանություններ։

Հայերը այդպիսի բարբարոսությունների են ենթարկվել անընդհատ, այժմ էլ բոլոր ճանապարհներին ուղևորները հանդիպում են հայերի դիակների։ Մալաթիայից մինչև Սվազ 9 ժամ շարունակ ամբողջ ճանապարհին հանդիպում էի խիտ շարքերով դիակների, որոնք իրար էին կապված երկու-երկու, հինգ-հինգ կամ տաս-տաս։ Մալաթիայից բոլոր տղամարդիկ բերվել են այստեղ ու սպանվել, իսկ կանայք ու երեխաները մասամբ

կոտորվել են, մասամբ էլ մահմեդականացվել։ Այդ շրջակայքում ոչ մի հայ տղամարդ չի կարող ճանապարհորդել. ամեն մի մուսուլման, ամեն մի չեթե կամ ոստիկան իրենց պարտքն են համարում սպանել նրան։ Վերջին օրերս այս նույն ճանապարհին՝ Հալեպից դուրս, սպանվել էին թուրքական խորհրդարանի երեսփոխաններ Զոհրապը և Վարդգեսը, որոնք Դիարբեքիր էին ուղարկվել այնտեղի զինվորական դատարանի առաջ կանգնելու համար։ Այդ վիլայեթներում կարելի է ճանապարհորդել միայն ներկայանալով իբրև մուսուլման։

Ճանապարհորդությանս ընթացքում հաճախ էի հանդիպում ճանապարհ կառուցող տղամարդկանց, որոնք իմ այն հարցին, թե իրենք ովքե՞ր են, պատասխանում էին, որ իրենք զինաթափված հայ զինվորներ են և որ իրենց շինարարական աշխատանքներ են հանձնարարված։ Հավաստի տեղեկությունների համաձայն, նրանց մեծ մասը կոտորված է։ Այսպես, Էրզրումի վիլայեթի հայ զինվորները, որոնք աշխատում էին Երզնկա—Էրզրում ճանապարհին, կոտորվել են։ Դիարբեքիրի վիլայեթի զինվորները սպանվել են Դիարբեքիր—Ուրֆա, Դիարբեքիր—Խարբերդ ճանապարհներին։ Խարբերդից Դիարբեքիր էին ուղարկվել միանգամից 1800 երիտասարդներ՝ որպես զինվորներ, որ աշխատեին ճանապարհներին՝ բանակին մոտ. նրանց բոլորին կոտորել են։ Բանտ նետված տղամարդկանցից շատերին կախել են։ Այսպես, կախաղան են հանվել Կեսարիայի հայտնի հնչակյաններ Մինաս Մինասյանը, Հաջի Հակոբ Չեթեմյանը, դ-ր Կարապետը իրենց այլ ընկերների հետ։

Սվազում, Խարբերդում, Էրզրումում և Ադանայում վերջին մեկ ամսվա ընթացքում կախաղան են հանվել մի քանի տասնյակ հայեր։

Շատ վայրերում իր կյանքը փրկելու համար հայ ժողովուրդը պատրաստակամություն էր հայտնում ընդունելու իսլամը, բայց, ինչպես որ նախորդ ոչ մեծ կոտորածի ժամանակ, այս անգամ նույնպես նման դիմումները հեշտությամբ չէին բավարարվում։

Սվազում բոլոր մահմեդականություն ընդունել ցանկացողներին առաջարկվել էր մինչև 12 տարեկան իրենց բոլոր երեխաներին հանձնել կառավարությանը և վերաբնակվել այն վայրերում, որոնք կմատնանշի կառավարությունը։

Միայն այս պայմանով էին նրանք ընդունվել մահմեդական։

Խարբերդի վիլայեթում տղամարդկանց չէր թույլատրվում ընդունել իսլամը, իսկ մուսուլմանություն ընդունող կանանց հայտնվում էր ի գիտություն, որ նրանք պետք է պատրաստ լինեն ամուսնանալու մուսուլմանի հետ։

Շատ հայ կանայք իրենց կրծքի երեխաների հետ նետվում էին Եփրատը կամ այլ կերպ վերջ տալիս իրենց կյանքին։ Եփրատը և Տիգրիսը դարձան հազարավոր հայերի գերեզմանը։

Սեծովյան առափնյա քաղաքներից՝ Տրապիզոնից, Սամսոնից մուսուլմանություն ընդունածները հեռացվում էին ներքին՝ զուտ մուսուլմանական շրջաններ։

Գարահիսարը զինաթափման ու տեղահանության ժամանակ ցույց տված դիմադրության համար ոչնչացվել էր հրետանային կրակով, իսկ քաղաքի ու գյուղերի բնակչությունը կոտորվել էր, թեմի առաջնորդը՝ կախաղան հանվել։

Վերջապես, Սամսոնից սկսած և Սվերդով ու Դիարբեքիրով վերջացող տարածքում ժողովրդի մեծ մասը կոտորված է, մի մասը ենթարկվել է բռնությունների և սոսկ աննշան մասն է մուսուլմանության դավանափոխված։ Ի տես այդ համընդհանուր դժբախտության՝ հայերը տխրությամբ ասում էին, որ Աբդուլ Համիդի ժամանակները կարող են համարվել իրենց պատմության առավել երջանիկ ժամանակաշրջանը։

Պետք է ենթադրել, որ կառավարության այդ ծրագիրը նպատակ ուներ մեկընդմիշտ վերջ տալ հայկական հարցին, 6 վիլայեթները դատարկել հայերից և Կիլիկիայից ցրել հայությանը... Այն 7 վիլայեթներում, որտեղ պետք է բարենորոգումներ կատարվեին, հայ բնակչության մեկ տոկոսն անգամ չի փրկվել։ Մինչև օրս դեռ հայտնի չէ, թե հայերից գեթ մեկը հասե՞լ է Մոսուլ կամ նրա շրջակայքը։

Պատմությունը երբեք չի տեսել ու չգիտի նման ոճրագործություն։ Կիլիկիայից եկող լուրերը կցկտուր են ու հակասական, մինչև Կ. Պոլիս գալս ոչինչ չգիտեի այդ վայրերում կատարված ջարդերի կամ կոտորածների մասին, բայց ինձ ասում էին, որ ամբողջ բնակչությունը ցրվել է կամ բռնագաղթեցվել Հալեպի վիլայեթի հարավային մաս՝ Դեր Զորի, Դամասկոսի կողմը։ Կառավարությունը չի խնայել անգամ Հալեպի և Ուրֆայի փոքր գաղութները։ Երբ ժամանեցի Կ. Պոլիս, սկսվել էր տեղահանությունը մայրաքաղաքի շրջակայքից. Զմյուռնիայի և Բրուսայի վիլայեթների հայերի մեծամասնությունը, թողնելով իր ամբողջ

զունցվածքը, հարկադրված էր տարագրվել Միջագետք։ Հայոց վանքի վանահայրը միաբանության և բոլոր աշակերտների հետ հեռացել էին, լքելով վանքը իր հարստություններով ու գրադարանով։

Կոստանդնուպոլսից մեկնելիս իմացա, որ հերթը հասել է Կ. Պոլսին, որտեղ արդեն վերջին օրերը խուզարկություններ էին կատարվում, հատկապես գավառացիների շրջանում։

«Армянский вестник», М., 1916, № 3, с. 7—10.

195. ԱԿԱՆԱՏԵՍ ԱՐԱԲ ՖԱՅԶԷ ԷԼ ՂՈՍԵՑՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

(1915 թ. հայերի կոտորածի մասին)

Ես բեդվին եմ, Իլիջուում ապրող սուլութ ցեղի առաջնորդներից մեկի որդին։ Ուսանել եմ Կոստանդնուպոլսում՝ աշիր ցեղի դպրոցում, այնուհետև ընդունվել եմ պետական քոլեջ։ Ուսումնառությունից հետո ինձ ուղարկեցին աշխատելու Դամասկոսի գեներալ-նահանգապետի (վալիի) մոտ։ Միառժամանակ անց նշանակվեցի Մամուրեթ ուլ Ազիզի (Խարբերդ) կայմակամ և այդ պաշտոնում մնացի շուրջ երեքուկես տարի։ Ապա աշխատել եմ Դամասկոսում որպես փաստաբան։ Համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո կառավարության կողմից հետ կանչվեցի, որպեսզի նորից կայմակամի պաշտոն զբաղեցնեմ, բայց ես հրաժարվեցի թողնել ազատ մասնագիտությունս։

Մի դավաճան ամբաստանել էր ինձ, թե իբր ես գործակալն եմ մի գաղտնի ընկերության, որը Լիբանանում կազմակերպվել է թուրքական կառավարության դեմ ցեղերի ապստամբություն բարձրացնելու միջոցով արաբներին ազատագրելու և Անգլիայի ու Ֆրանսիայի հովանավորության ներքո անկախություն հրռչակելու նպատակով։ Այդ ամբաստանության հիման վրա ձերբակալվեցի, բանտ նետվեցի, իսկ հետո փոխադրվեցի Ալիյա (Վիբանան) և կանգնեցի զինվորական ատյանի առաջ։ Ինձ արդարացրին, բայց կառավարությունը, որոշելով հեռացնել «երիտասարդ արաբներին», կարգադրեց ինձ աքսորել Էրզրում։ Ջեմալ փաշան հրամայեց ինձ այնտեղ հասցնել մի սպայի և հինգ զինվորի հսկողությամբ։ Երբ հասանք Դիարբեքիր, Հասան-Կալեն արդեն գրավվել էր ռուսների կողմից, և Դիարբեքիրի վալին կարգադրեց, որ ինձ այլևս այն կողմ չուղարկեն։

22 օր այդ քաղաքի բանտում մնալուց հետո ինձ ազատ արձակեցին։ Ես Դիարբեքիրում ապրեցի վեցուկես ամիս։ Այդտեղ ինքս եմ տեսել կամ ամենահավաստի աղբյուրներից իմացել այն ամենը, ինչ տեղի է ունեցել հայերի հետ։ Ինձ տեղեկություններ էին հաղորդում սպաներ, Դիարբեքիրի, ինչպես նաև Վանի, Բիթլիսի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Հալեպի և Էրզրումի բարձրաստիճան պաշտոնյաներ, անվանի մարդիկ... Երբ պատերազմը վերջանա, այս գրքիս ընթերցողները կհամոզվեն, որ ես ճշմարտությունն եմ գրել և որ այս պատումը շարադրում է սոսկ աննշան մասը այն չարագործությունների, որ կատարվել են տաբաբախտ հայ ժողովրդի դեմ...

***

Հալեպում կարճատև մնալուց հետո ինձ ուղարկեցին Սեր-Արաբ-Բունարի, որտեղ մեզ միացրին հինգ հայի, որոնք պետք է հասցվեին Դիարբեքիր։ Այնտեղից ոտքով գնացինք Սերուջի ուղղությամբ, որտեղ կանգ առանք մի իշևանատանը, որը լեփ լեցուն էր հայ կանանցով ու փոքր երեխաներով։ Այդ դժբախտները թշվառ վիճակի մեջ էին, քանի որ Էրզրումից մինչև Սերուջ նրանք անցել էին ոտքով։ Ես նրանց հետ խոսեցի թուրքերեն, և նրանցից մի քանիսը ինձ պատմեցին, որ ժանդարմները իրենց բերել էին ամայի վայրերով, թողնելով առանց ջրի։ Ծնընդաբերած կանայք ստիպված էին նորածիններին բախտի քմահաճույքին նետել անմարդաբնակ վայրում։ Ոմանց մայրական սերը թույլ չէր տալիս բաժանվել իրենց մանկիկներից, և նրանք միասին զոհվում էին անապատում...

Սերուջից ինձ ուղարկեցին ավելի հեռու՝ Ուրֆա։ Ճանապարհին տեսա հետիոտն ընթացող մարդկանց ամբոխներ։ Հեռվից նրանց զորամասերի տեղ դրեցի, բայց երբ մոտեցանք, տեսա, որ դրանք հայ կանայք են, որոնք գնում էին ստվար շարքերով, բոկոտն ու հյուծված, իսկ նրանց առջևից ու հետևից գնում էին ժանդարմները։ Եթե կանանցից որևէ մեկը ուժասպառ լինելուց հետ էր մնում, ապա ժանդարմները խզակոթով ծեծում էին նրան, ստիպելով հասնել իր ուղեկիցներին։ Իսկ նրանց, ովքեր ուժասպառ էին լինում հիվանդությունից, թողնում էին մեն մենակ ճանապարհի մեջտեղում՝ հոշոտվելու վայրի գազանների կողմից, կամ էլ ժանդարմները գնդակահարում էին նրանց...

Հասնելով Ուրֆա, իմացանք, որ իշխանությունները ժանդարմների ու զինվորների մի ջոկատ են ուղարկել հայկական թաղերը, որ հայերից խլեն զենքն ու նրանց հետ վարվեն նույն կերպ, ինչպես որ մյուս վայրերի նրանց եղբայրակիցների հետ։ Բայց երբ հայերը Ուրֆայով անցնող կանանց ու երեխաների քարավաններից իմացան իրենց եղբայրակիցների ճակատագրի մասին, նրանք հրաժարվեցին զենքը հանձնել, զինված դիմադրություն ցույց տվեցին և սպանեցին մի ժանդարմի ու երեք զինվորի։ Այդժամ իշխանությունները խնդրեցին զորամասեր ուղարկել Հալեպից, և Ջեմալ փաշայի՝ Սիրիայի դահճի հրամանով խռովարարներին պատժելու ժամանեց Ֆահրի փաշան։ Նա հրետանու կրակով հայկական թաղերը վերածեց փլատակների, կոտորեց տղամարդկանց, երեխաներին ու կանանց, բացի նրանցից, ովքեր անձնատուր եղան զինվորներին և աքսորվեցին Դեր Զոր։

Թողնելով Ուրֆան, մենք հանդիպեցինք ցնցոտիների մեջ կորած, սովից ու հյուծվածությունից մեռնող կանանց խմբերի, տեսանք ճանապարհի եզրերին ընկած բազմաթիվ դիակներ։

Մենք դադար առանք Ղարա Ջուրն դյուղին մոտիկ մի վայրում՝ Ուրֆայից վեց ժամվա հեռավորության վրա։ Ես փոքր-ինչ հեռացա աղբյուրի կողմը և այստեղ մի սարսափելի ու նողկալի տեսարան բացվեց աչքերիս առջև. գետնին պառկած էր մի կիսամերկ կին՝ կապկպված արնաթաթախ շապիկով, կրծքից չորս փամփուշտով գնդակահար եղած։ Ես այնպես էի ցնցված այդ տեսարանից, որ սկսեցի հեկեկալ։ Երբ գրպանիցս հանում էի թաշկինակը, որ արցունքներս սրբեմ, և շրջվեցի, որ համոզվեմ թե ուղեկիցներից ոչ ոք չի նկատել դա, տեսա մոտավորապես ութ տարեկան մի տղայի՝ կացնով փեղեկված գանգով։ Այդ տեսարանը է՛լ ավելի ուժեղացրեց ցավս... Մենք շարունակեցինք մեր ճամփան դեպի Ղարա Ջուրն։ Մեր կառապանը, որն ազգությամբ թուրք էր, ցույց տվեց քարերի մի կույտ հեռվում՝ մի բլրի մոտ. և բացատրեց, որ այդ տեղում էին սպանվել Զոհրապն ու Վարդգեսը՝ երկու նշանավոր հայ երեսփոխանները։

Զոհրապը Կ. Պոլսի հայոց երեսփոխանն էր Օսմանյան խորհրդարանում։ Նրա ծառայությունները, պերճախոսությունն ու ազատամիտ հայացքները չէին կարող դուր գալ երիտթուրքերին, որոնք ոչ մի պատկերացում չունեին իսկական քաղաքականության ու սահմանադրական սկզբունքների մասին։ Այդ պատճառով էլ նրանք փութացին հաշվեհարդար տեսնել նրա հետ, որպեսզի վերադառնան իրենց նախնիների ավերիչ գործելակերպին։

Ինչ վերաբերում է Վարդգեսին, ապա մի քուրդ ինձ ասել է, որ նա համարձակ ու արիակամ մարդ էր։ Դեռևս սուլթան Աբդուլ Համիդի կառավարման օրոք նա գլխավորում էր հայ ապըստամբներին և վիրավորվել էր արկի պայթյունից. նրան բանտ էին նետել, որտեղ նրան կեղծ խոստումներ էին տվել, որպեսզի նա մեղա գար։ «Ես խիղճս չեմ ծախի ոչ մի պաշտոնի համար,— պատասխանել էր նա։— Ես երբեք չեմ ասի, թե Աբդուլ Համիդի կառավարությունը արդարամիտ կառավարություն է, քանի որ իմ աչքերով եմ տեսնում ու մշտապես զգում նրա անարդարացիությունը»։

Երիտթուրքերը չէին կարող հանդուրժել նման մարդկանց։ Դրա համար էլ նրանք Զոհրապին ու Վարդգեսին Կ. Պոլսից աքսորեցին [հայ] մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչների հետ, հրամայելով նրանց բոլորին ոչնչացնել ճանապարհին։ Հետո լուր տարածեցին, թե իբր նրանց սպանել են ավազակները։

Երեկոյան հասանք Ղարա Ջուրն ու գիշերեցինք այդտեղ։ Արևածագին ճամփա ընկանք դեպի Սևերեկ։ Ճանապարհին մեր առջև ահավոր տեսարան բացվեց։ Ճանապարհի երկու կողմերում մեծ քանակությամբ դիակներ էին ընկած։ Մի տեղ ընկած էր մի կին, որի երկար վարսերը ծածկում էին մարմնի կեսը, մի այլ տեղ մեկ ուրիշն ընկած էր բերանքսիվայր։ Տղամարդկանց դիակները՝ արևից չորացած, սև էին, ինչպես ածուխը։ Ինչքան մոտենում էինք Սևերեկին, այնքան ավելանում էր դիակների քանակը, հատկապես երեխաների...

Մենք գիշերեցինք Սևերեկում և հաջորդ առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը։ Նախքան Դիարբեքիր հասնելը ճանապարհին հանդիպեցինք հայ կանանց քարավանի, որոնց ժանդարմների պահակախմբի հսկողության ներքո քշում էին դեպի Սևերեկ։ Նրանց այնքան հուսահատ ու թշվառ տեսք ունեին, որ այդ տեսարանը կշարժեր անգամ քարերի գութը և կհարուցեր նույնիսկ վայրի գազանների կարեկցանքը։ Ինչի՞ համար էին նրանց դատապարտել նման ճակատագրի։ Ի՞նչ հանցագործություն էին կատարել այդ կանայք։ Մի՞թե նրանք դատերազմել էին թուրքերի դեմ կամ սպանել էին նրանցից չէթ

մեկին։ Ո՞րն էր այդ անպաշտպան էակների հանցանքը։ Նրանց միակ մեղքն այն էր, որ նրանք հայուհիներ էին, որոնք գիտեին միայն իրենց գործն ու տնտեսությունը, դաստիարակում էին իրենց երեխաներին, և երբեք չէին հետաքրքրվում ոչ մի բանով, բացի ամուսինների ու որդիների համար ընտանեկան բարեհարմարություն ստեղծելուց և իրենց պարտականությունը կատարելուց... Երեկոյան հասանք մի իշևանատուն, որ գտնվում էր Դիարբեքիրից մի քանի ժամվա հեռավորության վրա։ Գիշերն անցկացրինք այստեղ, իսկ առավոտյան նորից ճամփա ընկանք։ Ամենուրեք դիակներ էին. այստեղ մի տղամարդ էր կրծքից զարնված, այնտեղ՝ մի կին հոշոտված մարմնով, կողքին՝ երեխա, որ քնել էր հավերժական քնով, փոքր-ինչ այն կողմ՝ մի մատղաշ աղջիկ, որ ձեռքերով ծածկել էր իր մերկությունը։ Այդպես շարունակվեց մեր ուղին, մինչև որ հասանք Դիարբեքիրի մոտակա Ղարա Բունար փոքր ջրանցքին։ Այստեղ հանդիպեցինք սպանության ու գազանությունների մի այլ մեթոդի։

Տեսանք ամբողջովին այրված դիակներ։ Լոկ միայն ամենատես տիրոջն է հայտնի, թե քանի-քանի ջահել տղաներ ու գեղեցիկ աղջիկներ էին ողջ-ողջ այրվել այդտեղ, որոնք կարող էին միացնել իրենց կյանքերը։ Մենք չէինք կարծում, թե դիակներ կգտնենք նույնիսկ Դիարբեքիրի պարիսպների մոտ։ Բայց ամբողջ ճանապարհը՝ ընդհուպ մինչև քաղաքի դարպասը, պատված էր դրանցով։ Ինչպես հետո իմացա եվրոպացիներից, միայն այն բանից հետո, երբ եվրոպական թերթերն սկսեցին գրել այդ մասին, կառավարությունը կարգադրություն էր արել թաղել սպանվածների դիակները։

Հասնելով Դիարբեքիր, ինձ հանձնեցին տեղական իշխանություններին և բանտ նստեցրին, որտեղ մնացի 22 օր։ Բանտում ինձ հետ միասին ձերբակալված դիարբեքիրցի մի մուսուլմանից իմացա քաղաքի հայերի կոտորածի բոլոր մանրամասնությունները։

Հարցրեցի, թե Դիարբեքիրում հայերը արդյոք սպանե՞լ էին կառավարական աստիճանավորի կամ գեթ որևէ թուրքի կամ քրդի։ Նա պատասխանեց, որ հայերը ոչ ոքի չէին սպանել, բայց թե նոր վալիի՝ Ռաշիդ բեյի, և [ժանդարմերիայի] պետի՝ Ռուշդի բեյի գալուց հետո արգելված շատ զենք էր հայտնաբերվել տներում և եկեղեցում։ Դա պատրվակ էր ծառայել, որպեսզի իշխանությունները ձերբակալեին և բանտ նետեին քաղաքի անվանի հայերին։ Նրանց պաշտպանությամբ հանդես եկած հոգևոր պետերին էլ էին ձերբակալել ու բանտ նետել։ Ձերբակալվածների թիվը հասել էր 700-ի։ Մի օր պետը ներկայացել էր նրանց ու հայտարարել, թե կայսերական կարգադրության համաձայն նրանք աքսորվելու են Մոսուլ, որտեղ մնալու են մինչև պատերազմի վերջը։ Նրանք ուրախացել էին ու սկսել ճամփորդության պատրաստություն տեսնել։ Նրանց լցրել էին այսպես կոչված «քելեկների»՝ օդով լի տիկերով լաստերի վրա, որոնցից բնակիչներն օգտվում են Տիգրիսն ու Եփրատը գետանցելիս։ Բայց շուտով հայտնի էր դարձել, որ նրանց բոլորին խեղդել էին Տիգրիսում, և նրանցից ոչ մեկը չէր հասել Մոսուլ։ Իշխանությունները շարունակում էին գործադրել այդ եղանակը, ջրամույն անելով ամբողջ ընտանիքներ՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների։ Դիարբեքիրից տարագրված հայերից այդպիսի մահով են բնաջնջվել Ղազազյանի, Թորփաղյանի, Մինասյանի, Քեչիշյանի և ուրիշների ընտանիքները։ Առաջին 700 ձերբակալվածների մեջ էր մի հայ արքեպիսկոպոս՝ հարգարժան, ուսյալ 80-ամյա ծերունի, որին Թուրքերը մյուսների հետ ջրախեղդ էին արել Տիգրիսի ալիքներում...

Հայերին մահվան մատնելը վրդովեցուցիչ, ահավոր դաժանություն էր։ Մի զինվորական Դիարբեքիրում ինձ պատմեց, թե դա սովորաբար ինչպես էր արվում. հենց որ որևէ մի հայ ընտանիք բնաջնջելու հրաման էին ստանում, նրանց տուն էր ներկայանում պաշտոնյան, հաշվում էր ընտանիքի անդամներին և նրանց հանձնում ժանդարմական սպայի։ Այս վերջինը իր մի քանի զինվորների թողնում էր հսկելու տունը մինչև երեկոյան ժամը 8-ը։ Դժբախտ մարդկանց նախազգուշացնում էին, որ նրանք պետք է պատրաստվեն մահվան։ Կանայք ճչում էին սարսափահար, տղամարդիկ մատնվում էին մռայլ հուսալքության, երեխաները, տեսնելով իրենց ծնողների վիճակը, լաց էին լինում կամ էլ ուրախ խաղում էին, չկասկածելով, թե իրենց ինչ է սպասում մի քանի ժամ հետո։ Ժամը 8-ից հետո սայլ էին բերում, որով զոհերին հասցնում էին մի հեռավոր տեղ, որտեղ նրանց գնդակահարում էին, հաճախ էլ սպանում կացնի հարվածներով։

Հայերին ոչնչացնելուց հետո ամեն ինչ՝ կահ կարասին, սպիտակեղենը, իրերն ու ամեն տեսակ գործիքները, ինչպես և խանութների, կրպակների ամբողջ պարունակությունը հավաքվում

էր ու փոխադրվում եկեղեցի կամ ուրիշ խոշոր շինություններ։ Կ։ ռավարությունն ստեղծել էր հատուկ կոմիտեներ, որոնք ապրանքները ծախծխում էին ամենաշնչին գներով, ինչպես սովորաբար լինում է սեփականատիրոջ մահից հետո, միայն այն տարբերությամբ, որ գոյացած գումարը ոչ թե տրամադրվում էր ժառանգներին, այլ մուծվում էր թուրքական գանձարան։ 30 ոսկի արժողությամբ գորգերը վաճառվում էին 4—5 ոսկով։ Արվեստի ստեղծագործությունները տրվում էին շնչին գներով։ Ինչ վերաբերում է դրամին ու թանկարժեք իրերին, ապա դրանք ժողովվում էին ժանդարմերիայի պետ Ռուշդի բեյի և նահանգապետ Ռաշիդ բեյի մոտ։ Վերջինս այդ բոլորը տարավ Կ. Պոլիս, որ սնձամբ հանձնի Թալեաթ բեյին...

Ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները, որ ճմլում են ականատեսի սիրտը, երբ նա մտածում է այդ դժբախտ ու հերոսական ազգի մասին, որն աշխարհին զարմացրել է իր քաջությամբ ու խիզախությամբ, որը դեռ երեկ ամենակենսունակն ու առաջավորն էր Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդներից, իսկ այժմ դարձել է անցյալի հուշ։ Նրա դրպրոցները, որ մի ժամանակ լի էին աշակերտներով, այժմ դատարկ են. ամենաթանկարժեք գրքերը նպարավաճառներն օգտագործում են պանիր փաթաթելու համար. երեսուն հատոր ֆրանսերեն գրականություն էր վաճառվել ընդամենը հիսուն ղուրուշով...

Հայերին բնաջնջելու եղանակները տարբեր էին։

Մի սպա ինձ պատմել է, որ Բիթլիսում իշխանությունները հայերին լցնում էին մեծ, հարդով լի մարագները, դռները պատում ծղոտով և հրկիզում, այնպես որ խեղճերը շնչահեղձ էին լինում ծխից։ Հաճախ այդ կերպ ոչնչացնում էին միանգամից մի քանի հարյուր մարդ։ Ես ցնցվել էի, երբ նա ինձ պատմեց, որ տեսել էր մի ջահել աղջկա, որը գրկից բաց չէր թողնում իր փեսացուին և աներկյուղ մահվան էր գնացել նրա հետ միասին, մտնելով կրակով բռնկված մարագը։

Մուշում էլ էին հայերին կոտորում հարդով լի կալատներում։ Մեծ մասը, սակայն, զոհվում էր գնդակներից, դանակներով ու դաշույններով։ Իշխանությունները վարձում էին մսագործների, որոնք մարդասպանի արհեստի համար օրական ստանում էին 1 ոսկի...

Ժանդարմները ուրիշ եղանակ էլ էին կիրառում։ Նրանք կանանց ու երեխաներին կապում էին իրար և մեծ բարձրությունից ցած նետում։ Այդ վայրը, ինչպես ցույց տվեցին ինձ, գտնվում է Դիարբեքիրի ու Մարդինի միջև, այսօր էլ մարդկային ոսկորները այնտեղ փոքր բլուր են գոյացրել։

Դիարբեքիրում իշխանությունները հայերին բնաջնջում էին մերթ հրով, մերթ սրով։ Հաճախ նրանց խումբ-խումբ նետում էին ջրհորները կամ փոսերի մեջ ու ողջ-ողջ թաղում։ Շատ հայեր էլ ջրահեղձ են արվել Տիգրիսում և Եփրատում։ 2000-ից ավելի հայերի կոտորել էին Դիարբեքիրի պարիսպների մոտ՝ քաղաքից կես ժամվա հեռավորության վրա, սուլթան Մուրադի ապարանքի ու Տիգրիսի միջև...

Դիարբեքիրի դպրոցի մի երիտասարդ թուրք դասատու ինձ պատմեց հետևյալը.

«Բրուսայի իշխանությունները այնտեղի հայերին հայտնել էին, թե կառավարությունը որոշել է բոլորին ուղարկել Մոսուլ և Դեր Զոր և որ մեկնումը տեղի է ունենալու երեք օր հետո։ Նրանք վաճառեցին իրենց ունեցվածքից այն ամենը, ինչ կարող էին, սայլեր ու բեռնասայլեր վարձեցին ընտանիքներն ու բեռները փոխադրելու համար և նշված ժամանակին ճանապարհ ընկան։ Երբ նրանք ահագին հեռացել էին բնակեցված տեղանքից, կառապանները իրենց տրված հրահանգի համաձայն լծից արձակել էին ձիերին և դժբախտ աքսորյալներին լքել անապատում։ Դիշերը նրանք վերադարձել և թալանել էին վերջիններիս։ Նրանցից շատերը մահացան սովից ու սարսափից։ Մյուսներին կոտորեցին ճանապարհին, և այդ մարդկանց լոկ փոքր մասը հասավ Դեր Զոր»։

Շևքեթ բեյը՝ պետական ծառայողներից մեկը, որին հանձնարարված էր հայերին կոտորելու գործը, վկաների ներկայությամբ ինձ պատմեց հետևյալը.

«Ես ուղեկցում էի աքսորված հայերի մի շարասյան։ Երբ Դիարբեքիրի սահմաններից դուրս էինք եկել և սկսեցինք գընդակահարել նրանց, առջևս հայտնվեց մի քուրդ։ Ձեռքերս պատելով համբույրներով, նա սկսեց աղաչել, որ իրեն տամ իր աչքին ընկած մի տասնամյա աղջկա։ Ես դադարեցրի հրաձգությունը և ժանդարմներից մեկին կարգադրեցի բերել նրան։ Ես նրան հրամայեցի նստել ու ասացի. «Մենք քեզ կհանձնենք

այս մարդուն, և կյանքդ կփրկվի»։ Մի ակնթարթ անց տեսա, թե նա ինչպես նետվեց մահվան դատապարտվածների կողմը։ Եվ նորից կարգադրեցի դադարեցնել կրակը և բերել աղջնակին։ «Չէ որ ես քեզ մեղք եմ գալիս,— ասացի ես,— և ուզում եմ փրկել կյանքդ։ Ինչո՞ւ խառնվեցիր նրանց։ Գնա այս մարդու հետ, նա քեզ հետ կվարվի ինչպես իր աղջկա»։ Նա պատասխանեց. «Ես հայի աղջիկ եմ. ծնողներս ու ազգականներս նրանց մեջ են, որոնց շուտով կսպանեն։ Ես չեմ ցանկանում ուրիշ ծնողներ ունենալ և չեմ ուզում նրանցից հետո ապրել նույնիսկ մեկ ժամ։ Նա սկսեց հեկեկալ։ Ես երկար փորձեցի համոզել նրան գնալ քրդի հետ, բայց նա լսել անգամ չէր ուզում այդ մասին, և ես բաց թողեցի նրան։ Ես տեսա, թե ինչպես նա շատ գոհ վազեց հոր ու մոր մոտ և նրանց հետ միասին գնդակահարվեց»։ Այդ պատմությունն անելուց հետո նա եզրափակեց. «Եթե այդպես են վարվում նրանց երեխաները, հապա էլ ինչ ասել տղամարդկանց մասին»։

Թուրքերը զորակոչել էին բոլոր զինապարտ հայերին և նրանց բաշխել տարբեր գնդերի վրա։ Երբ կառավարությունը որոշում կայացրեց տեղահանել ու կոտորել հայերին, հրաման տրվեց կազմել առանձին հայկական գումարտակներ և դրանք ուղարկել ճանապարհներ կառուցելու և ներքաղաքային աշխատանքներ կատարելու։ Այդ գումարտակներն 8 ամիս օգտագործվեցին ծանր աշխատանքներում։ Երբ սկսվեցին ուժեղ անձրևներն ու ձյան տեղումները և այլևս հնարավոր չէր նրանց օգտագործման ասպարեզ գտնել, կառավարության հրամանով այդ գումարտակները Էրզրումից, Տրապիզոնից և մյուս հեռավոր վայրերից ուղարկվեցին Դիարբեքիր։ Դեռ նախքան նրանց տեղ հասնելը քաղաքի իշխանությունները իրազեկ էին պահվել այդ մասին։ Վերջիններս նրանց ընդառաջ ուղարկեցին լավ զինված ժանդարմների, որոնք նրանց դիմավորեցին հրացանազարկերով։ Վերջին շարասյունը, որը բաղկացած էր 840 երիտասարդներից, այդ կերպ իր վախճանը գտավ Դիարբեքիրի պարիսպների տակ...

Ուքահիդատ ցեղի մի արաբ ինձ պատմել է, որ Եփրատի ափին՝ Դեր Զորի մոտ, ինքը տեսել է, թե խուժանն ինչպես էր քաշքշում-պատառոտում շորերը հայ կանանց վրայից, նրանց թողնելով միանգամայն մերկ։ Նա նրանցից հաշիվ էր պահանջել իրենց գործողությունների համար և կարգադրել էր վերագարձնել հագուստը։ Բայց նրանք չէին հնազանդվել։ Կանայք աղաչում էին խնայել, բայց համոզվելով, որ իրենց աղաչանքը զուր է, մահը գերադասել էին խայտառակությունից և նետվել գետը։ Նույն արաբը պատմել է, որ երեխան գրկին մի կին հաց էր մուրում անցորդներից, բայց իշխանությունների ահից ոչ ոք չէր համարձակվում նրան ողորմություն տալ։ Երբ երկու օր անց նա զգաց, որ շուտով սովից մեռնելու է, երեխային թողեց քաղաքի շուկայի հրապարակում, իսկ ինքը նետվեց Եփրատը։ Կանայք այնպիսի արիություն ու խառնվածքի վեհություն էին դրսևորում, որոնցով օժտված չեն շատ տղամարդիկ։

Թուրքիայի կառավարությունը հասկանում էր, որ եվրոպական տերությունները առիթը բաց չեն թողնի իմանալու հայերի կոտորածի մասին և որ այդ նորությունը կտարածվի ողջ աշխարհում, հասարակական կարծիքը տրամադրելով թուրքերի դեմ։ Ուստի մեծ թվով հայերի սպանությունից հետո կառավարությունը իր գործակալներին հրամայեց նրանց զգեստափոխել քրդերի հագուստով, դիակների գլխին չալմաներ դնել, որից հետո եկան քուրդ կանայք և շրջապատելով դիակները, սկսեցին լաց ու կոծ անել ու ճչալ, թե հայերը սպանել են իրենց ամուսիններին։ Այդ ամբողջ տեսարանը նկարահանվել էր այն նկատառումով, որ հետագայում «ապացուցեին», թե հենց հայերն էին հարձակվել քրդերի վրա ու սպանել նրանց և թե քրդական ցեղերը ոտքի էին ելել վրեժ լուծելու, թե կառավարությունը ոչ մի մասնակցություն չէր ունեցել այդ ամենին։ Բայց խելամիտ մարդիկ կռահեցին այդ խաղը, և այդ մասին շուտով հայտնի դարձավ Դիարբեքիրում...

Երբ Դիարբեքիրի իշխանությունները հրաման արձակեցին ոչնչացնելու հայերին, էլ Բեշիրի կայմակամը բաղդադցի մի արաբ էր, Իլիջայի կայմակամը՝ ալբանացի։ Ստանալով հրամանը, նրանք անմիջապես վալիին հեռագրել էին, որ իրենց խիղճը թույլ չի տալիս վարվել այդ կերպ, այդ պատճառով էլ իրենք հրաժարական են տալիս։ Նրանց հրաժարականն ընդունվել էր, բայց երկուսն էլ ծածուկ սպանվել էին։ Ես մանրակրկիտ քննեցի այդ փաստը և պարզեցի, որ սպանված բաղդադցի արաբի անունը Սաբեթ բեյ էլ Սուեյդի էր։ Ալբանացու անունը պարզել ինձ չհաջողվեց, որի համար շատ եմ ափսոսում։ Նրանք երկուսն էլ իրենց ազնիվ արարքով բարի հիշատակի են արժանի։

Բանտարկությանս ընթացքում ոստիկանության ոմն թուրք կոմիսար հաճախակի էր այցելում իր ընկերներից մեկին, որը նստած էր ինձ հետ նույն բանտախցում։ Մի անգամ ներկա եղա հայերի, նրանց դժխեմ ճակատագրի մասին մի զրույցի. կոմիսարն սկսեց նկարագրել այն եղանակները, որոնք նա գործադրել էր դժբախտներին սպանելիս։ Որոշ հայեր ապաստանել էին քաղաքից դուրս գտնվող անձավում։ Նա հայտնաբերել էր նրանց, ստիպել էր դուրս գալ և երկուսին սպանել էր իր ձեռքով։ Լսելով դա, նրա ընկերը բացականչեց. «Իսկ աստծուց դու չե՞ս վախենում։ Քեզ ո՞վ է իրավունք տվել սպանելու տիրոջ պատվիրաններին հակառակ»։ Նա պատասխանեց. «Այդպիսին է սուլթանի հրամանը։ Սուլթանի հրամանը տեր աստծո հրամանն է, և այն կատարելը պարտականություն է»։

1915 թվականի օգոստոսի վերջերին բանտում ինձ այցելեց գործընկերներիցս մեկը, մոտիկ ընկերը մի պաշտոնյայի, որին հանձնարարված էր ղեկավարել հայերի կոտորածը։ Խոսակցության ընթացքում նրանից իմացա, որ մինչ այդ պահը Դիարբեքիրում և մյուս վիլայեթներում սպանվել էր 570 000 հայ։

Եթե դրան ավելացնենք հետագա ամիսներին սպանված 50 000 մարդկանց, Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայեթների 230 000 սպանվածներին և այն 350 000 հայերին, որոնց կոտորել էին Էրզրումում, Խարբերդում, Սեբաստիայում, Ուրֆայում, Զեյթունում և Այնթապում, ապա կստանանք մի թիվ, որ հավասար է 1 200 000-ի՝ սպանվածների կամ սովից, ծարավից ու հիվանդություններից մահացածների։

***

Եթե Թուրքիայի կառավարությանը հարցնելու լինեն հայերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների բնաջնջման, նրանց պատվի պղծման, նրանց ունեցվածքի բռնագրավման ու կողոպտման դրդապատճառների մասին, ապա նա կպատասխանի, թե Վանում հայերը կոտորել էին մուսուլմաններին, թե նրանք արգելված զենք ու ռումբեր էին պահում, թե հայտնաբերվել են հայոց պետականության այնպիսի խորհրդանիշներ, ինչպես դրոշներ և այլն։ Այդ ամենն, իբր, ապացույցն են այն բանի, թե հայերը չեն հրաժարվել իրենց դավերից և սպասում են հարմար առիթի, որ խռովություններ բորբոքեն և սպանեն մուսուլմաններին, ապավինելով Թուրքիայի թշնամու՝ Ռուսաստանի օգնությանը։

Այսպիսիք են Թուրքական կառավարության վկայակոչումները։

Ես այդ հարցն ուսումնասիրել եմ ամենահեղինակավոր աղբյուրների հիման վրա։ Դիարբեքիր այցելած վանեցի բնակիչներին ու պաշտոնյաներին հարց ու փորձ եմ արել, թե Վանում կամ վիլայեթի սահմաններում հայերը արդյոք սպանե՞լ էին մուսուլմանների։ Բոլորը ժխտում էին դա և ասում, որ կառավարությունը շատ ավելի վաղ էր բնակիչներին հրամայել հեռանալ քաղաքից, քան ռուսները կմտնեին այնտեղ կամ կսպանվեր թեկուզ մեկ մարդ։ Իշխանությունները նաև պահանջել էին, որ հայերը հանձնեն զենքը, բայց վերջիններս հրաժարվել էին՝ վախենալով քրդերի կամ հենց իրենց՝ իշխանությունների հարձակումներից։ Նրանք հրաժարվել էին նաև պատանդ հանձնել առավել երևելի մարդկանց։

Այդ ամենը տեղի ունեցավ ռուսների Վան մտնելու ժամանակ։ Մյուս վայրերում իշխանությունները հայերին հավաքել ու քշել էին երկրի խորքը, որտեղ նրանց ոչնչացնում էին, չնայած որ ոչ մի ծառայող թուրք կամ քուրդ չէր սպանվել նրանց կողմից։ Ինչ վերաբերում է Դիարբեքիրի իրադարձություններին, ապա գրքույկիս ընթերցողն արդեն գիտի այդ մասին։ Այնտեղ չէր եղել ոչ մի միջադեպ, ոչ մի սպանություն կամ անդորրի խանգարում, որը Թուրքական կառավարության համար պատրվակ հանդիսանար հայերի դեմ զազանություններ գործադրելու...

Հրատարակելով այս գրքույկը, նախ և առաջ նպատակ էի հետապնդում հերքելու այն բոլոր մեղադրանքները, որոնք առաջ կքաշվեն Իսլամի դեմ, և ապացուցելու, որ հայերի դեմ գործադրված դաժանությունների պատասխանատվությունը ընկնում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների վրա, որոնք իրենց ձեռքին են պահում իշխանությունը և որոնք առաջնորդվում էին ցեղապաշտ մոլեռանդությամբ և հայերի հանդեպ տածած նախանձով։ Մուսուլմանական կրոնը մերժո՛ւմ է նրանց։

Վերջում ես դիմում եմ եվրոպական տերություններին և նրանց հայտարարում, որ այդ նրանք էին Թուրքական կառավարությանը ոգեշնչում ոճրագործությունների, քանի որ, իմանալով Թուրքական անարգ վարչակազմի և բազմիցս Թուրքերի կատարած հանցագործությունների մասին, այդ տերությունները

նրանց չխանգարեցին այդուհետև էլ շարունակել մարդկանց վնաս հասցնել[38]։

Faiez el Ghocéin. Témoignage d'un Arabe musulman sur l'innocence et le massacre des Arméniens. Trad. de l'arabe par A. El.—G. [Bombey], 1917, p. 3—4, 20—22, 39—44.

196. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՄԵՎԼԱՆ-ՉԱԴԵ ՌԻՖԱՏԻ[39] ՀՈՒՇԵՐԻՑ

Հայերի տեղահանությունն ու կոտորածը չափազանց վայրագ և ցավալի քաղաքական հանցագործություն է...

«Միություն և առաջադիմության» ղեկավարները կենտրոնական կոմիտեում կայացած իրենց մի գաղտնի խորհրդակցությունում որոշում էին կայացրել առանց սեռի ու տարիքի խբտության և ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով կոտորել և բնաջնջել հայերին։ Այդ որոշումը իրականացնելու համար նախաձեռնությունը ստեղծեց դոկտ. Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ և հանրակրթական մինիստր Շյուքրի բեյերից կազմված մի հանձնաժողով՝ տալով նրան «Երեքի գործադիր կոմիտե» անվանումը, որը «Թեշքիլաթը մահսուսե» (հատուկ կազմակերպություն) անվան տակ սկսեց բանտերից հավաքագրել քրեական հանցագործներին և ստեղծել չեթեների հրոսակներ։

Համառոտ նկարագրությունը չի կարող իրական պատկերացում տալ այդ ահավոր ոճրագործության մասին։

Եթե ես կարողանամ մոտավորապես նկարագրել, թե ինչպես տեղի ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության այդ հանցագործ արարքը, նրա պատմական այդ գաղտնի խորհրդակցությունը, աղդեցիկ անձանց կատարած առաջարկություններն ու ծավալած վեճերը, բացահայտել դրանք թելադրած քաղաքական ու հասարակական նկատառումները, նրանց «գիտական» կարողությունները, ապա դրանով իսկ ես ծառայություն մատուցած կլինեմ պատմությանը, ի հայտ բերելով այդ որոշման դրդապատճառներն ու իսկական մեղավորներին։

Իրականում տեղի ունեցած դեպքերն ու պատահարները ես գրի եմ առել իրավասու և իրազեկ անձանց հաղորդումների ու իմ ընթերցած մեծ թվով գրքերի հիման վրա։ Ուստի, որպեսզի ավելի լավ ներկայացնեմ հայկական իրադարձությունները, տեղի ունեցած այդ սահմռկեցուցիչ ողբերգությունը, դրանց կազմակերպիչներին ու մեղավորներին, նպատակահարմար եմ գրտնում արձանագրության ձևով ճշտիվ վերարտադրել այդ խորհրդակցությունը։

***

Թալեաթի նախագահությամբ անցկացվող գաղտնի խորհրդակցությունում առաջինը ձայն տրվեց դոկտոր Նազըմին։ Դոկտոր Նազըմը դողդոջուն ձայնով սկսեց շարադրել իր կարծիքը խնդրի շուրջը...

Դոկտոր Նազըմ. Խոսքով փլավ չեն եփում։ Պետք է գործել արագ և վճռականորեն։ Հայերը վտանգավոր են, ինչպես թարախապալարը. սկզբում այդ թունավոր վերքը թվում է անվտանգ, բայց եթե այն ժամանակին չվիրահատվի փորձված վիրաբույժի կողմից, ապա անպայման կհանգեցնի մահվան։ Անհրաժեշտ է գործել և գործել արագ։ Եթե բավարարվենք մասնակի կոտորածով, ինչպես եղավ 1909 թվին Ադանայում և այլ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վտանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից՝ արաբներին և քրդերին. վտանգը կեռապատկվի և մեր մտադրության իրականացումը կդժվարանա։ Ես մի քանի անգամ այս ժողովում ձեզ ասել եմ և այժմ էլ կրկնում եմ. եթե մաքրագործումը համընդհանուր ու վերջնական չլինի, ապա օգուտի փոխարեն վնասն անխուսափելի է։ Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում և մոռացվի բուն այդ անունը։ Հիմա պատերազմ է, այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի։ Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի։ Այս անգամ մեր գործողությունները պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն. անհրաժեշտ է ոչնչացնել բոլորին՝ մինչև վերջին մարդը։

Հնարավոր է, որ ձեզանից ոմանք դա գաղանություն համարեն, ասեն՝ ի՞նչ վնաս կարող են պատճառել ծերունիները, երեխաներն ու տկարները, որ հարկ լինի նրանց ոչնչացնել։ Թող պատժվի միայն նա, ով մեղավոր է. իսկ տանը նստած կանանց, ծերունիների ու կրծքի երեխաների վրա հարձակվելը բարբարոսություն է ու վայրենություն և հակասում է քաղաքակրթության

ու մարդասիրության օրենքներին։ Թե իբր դոկտոր Նազրմը շափազանցնում է ու դատում անխոհեմ։

Խնդրում եմ ձեզ, էֆենդիներ, մի եղեք այդքան փափկասիրտ ու գթասիրտ, դա վտանգավոր հիվանդություն է։ Հիմա պատերազմ է։ Ես ձեզ հարցնում եմ՝ մի՞թե պատերազմը բարբարոսություն չէ։ Ինչո՞վ է մեղավոր հողագործը, որը գնացել է հայրենի գյուղից ու սպանվել ռազմաճակատում, կամ վաճառականը, որը թողել է իր կրպակը, որ զոհվի արկի պայթյունից։ Նրանք ի՞նչ հանցագործություն են կատարել, որ զոհվում են այդպիսի ահավոր մահով։ Դաժանությունը բնության օրենքն է, այն կարելի է ընդունել կամ մերժել միայն դատողություններում։ Մի՞թե կենդանի էակները, նույնիսկ բույսերը չեն ապրում ուտելով ու ոչնչացնելով միմյանց։ Միգուցե դուք ասեք. «Արգելեցեք նրանց դա, չէ որ դա բարբարոսություն է»։

Հասան Ֆեհմի։ Այո, էֆենդի, ես էլ եմ ծանոթ ուժեղի կողմից թույլին խժռելու այդ օրենքին, որը հայտնի է կենսաբանության մեջ։

Դոկտոր Նազրմ (շարունակելով)։ Լավ խորհենք, թե ինչու հեղափոխություն արեցինք, ի՞նչ նպատակ էինք հետապնդում։ Ես չեմ ուզում մտածել, թե մեր նպատակն էր վերացնել սուլթան Համիդի մարդկանց և գրավել նրանց տեղը։ Ես ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրն եմ դարձել, որ վերածնենք Թրքությունը։ Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի Թուրքն ու միայն Թուրքը։ Թող անհետանան բոլոր ոչ Թուրք տարրերը, ինչ ազգության և կրոնի էլ որ նրանք պատկանելիս լինեն։ Մեր երկիրը պետք է մաքրել ոչ Թուրք տարրերից։ Կրոնն ինձ համար իմաստ ու նշանակություն չունի։ Իմ կրոնը Թուրանն է։

Դոկտոր Բեհաեդդին Շաֆիր (բառերն արտաբերում է հատհատ ու շեշտված)։ Եթե մի այնպիսի խեղճի մեկը, ինչպիսին Յովսեսն էր, մի այնպիսի հալածական, ինչպես Հիսուսը, և մի այնպիսի որբ, ինչպես Մուհամմեդը, կարողացան աշխարհում ստեղծել առանձին մեծագույն կրոններ, ապա ինչու մենք՝ ուժեղ կամքի ու մտքի տեր մարդիկս, չենք կարող ստեղծել և տարածել Թուրանի կրոնն ու գաղափարը։

Հասան Ֆեհմի։ Թող աստված ների այդ խոսքերի համար (վախվորած նայում է շուրջը)։ Չլինի՞ թե սատանաները վրա տան մեզ։

Կարա Քեմալ։ Խոջա էֆենդի, ի՞նչ եք քրթմնջում, աղոթո՞ւմ եք։ Աղոթեք գլխիս վրա, որ գլխացավս անցնի։

Դոկտոր Նազրմ (շարունակելով)։ Վայ մեզ, եթե այդ մաքրագործումը վերջնական չլինի, եթե նրանց չոչնչացնենք լիովին. այդ դեպքում վաղը մենք չենք կարող զբաղեցնել մեր տեղերը. նրանք կբռնեն մեր ձեռքից և այստեղից դուրս կշպրտեն և, դրանով էլ չբավարարվելով, կսպանեն բոլորիս։ Հեղափոխությունը խղճահարություն չի ճանաչում։ Նա հետամուտ է իր նպատակին և փշրում է իր ճանապարհին եղած բոլոր խոչընդոտները։

Դոկտոր Բեհաեդդին Շաֆիր։ Մենք՝ հեղափոխականներս հանուն թուրք ազգի ստեղծելով օսմանյան պետություն ազգայնականության սկզբունքներով, ստեղծեցինք «Իթթիհադ վե թերաքքի» իշխանությունը։ Մեր ազգային մշակույթում մենք կարող ենք թույլ տալ միայն թուրքական հունդի ծաղկում։ Մենք պարտավոր ենք մեր հայրենիքը մաքրել մնացած օտար ժողովուրդներից, արմատախիլ անել նրանց որպես մոլախոտերի։ Սա է մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանը։ Այդ իսկ պատճառով Իթթիհադի իշխանությանը մենք տվեցինք «Նոր Թուրքիայի կառավարություն» անվանումը, զրոյի հավասարեցնելով «օսմանցի» անվանումը։ Եվ իրոք, ի՞նչ արժեք կարող էր ունենալ այն։ Ի՞նչ կարող է ավելանալ օսմանյան անունով հիմնադրված պետության մշակույթում։ Տարբեր ազգությունների ներկայացուցիչները օսմանցու միասնական անվան ներքո ստեղծել են մի զարմանալի խառնուրդ, որը, եթե դրան մոտենանք խիստ գիտականորեն, նույնիսկ չի էլ կարելի պետություն անվանել։ Լավագույն դեպքում կարելի է ասել, որ սա հայրենական կալվածք է, որն Օսմանը ժառանգություն է թողել իր որդիներին։ Բաղկացած լինելով այլազան տարրերից, օսմանյան խառնուրդը չունի իր ազգային դեմքը, այն նման է տարբեր ընտանի կենդանիների կուտակմանը մի տնտեսության մեջ։ Հայերը, հույները, բուլղարները, բոսնիացիները, պոմակները, սերբերը, ալբանացիները, քրդերը, չերքեզները, արաբները, վրացիները, լազերը՝ այս բոլոր տարրերն իբրև թե կազմում էին մի ամբողջություն օսմանցի անվամբ։ Պետք է հրաժարվել նման հասկացությունից։ Ինչպես որ անասնաբակում սագը, բադը, հավը, ոչխարը, կովը, այծը, եզը, գոմեշն ու ձին ապրում են իրար կողքի և չեն տեսակափոխվում, ճիշտ այդպես էլ այդ ազգությունները մնացել են մեր հողի վրա, չփոխելով իրենց ազգությունն

ու լեզուն։ Բարենպաստ հանգամանքների դեպքում նրանք նույնիսկ նեղում էին Թուրքերին և անջատվում, զավթելով նրանց հողերը, ինչպես արեցին, օրինակ, ռումինները, սերբերը, բուլգարները և հենց վերջերս՝ ալբանացիները։

Կարա Քեմալ։ Թող կորչե՛ն...

Հասան Ֆեհմի։ Ձերդ բարձրության բարեհաճ թույլտվությամբ և աստծո օգնությամբ ես նույնպես, ինչպես որ իմ դոկտոր եղբայրները, կցանկանայի մի քանի խոսք ասել, բայց ոչ թե արևմտյան գիտության տեսանկյունից, այլ հենվելով արևելյան գիտության և սուրբ օրենքի՝ շարիաթի վրա, որի համաձայն, այն ամենը, ինչ վնասակար է, պետք է կործանվի։ Ճշտիվ ապացուցված է, որ հայերը վնաս են պատճառում։ Քանի որ նրանք աշխատեցին մեր կուսակցության՝ «Իթթիհադ վե Թերաքքիի» դեմ, ամոթալի փախուստի մատնեցին ազատության հերոս Էնվեր փաշայի փեսային, ապա պետք է առանց տատանվելու կոտորել նրանց բոլորին մինչև վերջին մարդը։ Անգամ ես պատրաստ եմ տալ սրբազան վճիռը՝ ֆեթվան։ Մի կարծիք, թե ձեր առջև անփորձ փաթթոցավոր մի սոֆթա է։ Իմ մեջ խոսում է երախտագիտությունը. ազատության շնորհիվ ես դարձա խոջա, մեդրեսեների 50 հազար սաների հոգևոր ուսուցիչ եմ։ Ես հանդում եմ այս եզրակացության. քանի որ վնասը համընդհանուր է, ապա դրանից խուսափելու համար թույլատրելի է մասնակի վնաս հասցնելը։ Իրավաբանական սկզբունքի համաձայն, նկատի չեն առնվելու՝ ծերունիներ են, երեխաներ, թե կանայք, հաշմանդամներ են, թե տկարներ. բոլորն սպանվելու են և բնաջինջ արվելու։ Գլխումս միտք ծագեց բնաջնջման դյուրին եղանակի մասին։ Ձեր թույլտվությամբ հիմա կշարադրեմ այն։ Հիմա պատերազմի մեջ ենք. զենք կրելու ընդունակ բոլոր հայերին կուղարկենք կրակի առաջավոր գիծ՝ կռվելու ռուսների դեմ, իսկ հետևից կրակի տակ կառնենք հատկապես դրա համար մեր ուղարկած ուժերի կողմից և բոլորին կբնաջնջենք։ Տանը մնացած տկարներին, կանանց ու երեխաներին մեր հրամանով անմիջապես կվերացնեն մեր հավատացյալները, որոնք կկողոպտեն նրանց ունեցվածքն ու կառնեն կտանեն աղջիկներին։ Իմ այս նկատառումը կընդունվի՞ արդյոք։

Կարա Քեմալ։ Կեցցե՛ս, խոջա էֆենդի։ Եղբայրներ, տեսա՞ք, ահա մեզ արժանի շեյխ-ալ-իսլամ։

Էնվեր (լրջորեն)։ Բնաջնջման եղանակի մշակումը գործադիր մարմնի պարտականությունն է.

Ջավիդ։ Եզրափակենք։ Դոկտորներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի և նույնիսկ խոջա Հասան Ֆեհմիի բացատրությունները բավականաչափ լույս սփռեցին հարցի վրա... Մինչև վերջին մարդը հայերի բնաջնջումը որչափ որ անհրաժեշտ է մեր ազգային քաղաքականության համար, նույնչափ էլ կարևոր է Թուրքերի տնտեսական իշխանությունը հիմնելու համար։ Անցնենք քվեարկության...

Թալեաթի առաջարկությամբ քվեները հավաքվեցին ու հաշվվեցին։ Արդյունքները ցույց տվեցին, որ բոլոր ներկա գտնվողները միաձայն քվեարկել էին ընդհուպ մինչև վերջին մարդը հայերին իսպառ բնաջնջելու օգտին։

Mevlan Zade Rifat. Türkiye inkilabin iç yüzü. Halep, 1929, s. 83—93.

197. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԸ՝ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐ ԻԶՎՈԼՍԿՈՒՆ ԵՎ ԲԵՆԿԵՆԴՈՐՖԻՆ

Հեռագիր № 800 **17 հունվարի 1916 թ.**

Մեր ընդհանուր քաղաքական շահերի տեսակետից կարևոր եմ համարում, որ դաշնակիցները նախաձեռնություն ստանձնեն նյութական օգնություն ցույց տալու այն Թուրքահայերին, որոնց Բ. Դուռը աքսորել է Հալեպ—Մոսուլ ճանապարհի շրջան և ավելի հեռու՝ դեպի Բաղդադ։ Հաճեցեք իմանալ, թե կառավարությունը, որին առընթեր դուք հավատարմագրված եք, չի՞ համաձայնի արդյոք մասնակցելու հավասար բաժիններով հայերին 1 միլիոն ֆրանկ միանվագ նպաստ բաց թողնելուն։ Այդ գումարը կարող էր փոխանցվել Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանին՝ հայոց պատրիարքի փամ Սսի կաթողիկոսի տրամադրության տակ դնելու համար կամ, եթե այդ եղանակը հարմար չի լինի, ամերիկյան գործակալների միջոցով հայերին բաժանելու համար։ Հասկանալի է, նախատեսվող նվիրատվության աղբյուրը պետք է գաղտնի մնա Թուրքերի նոր բռնություններից հայերին զերծ պահելու նպատակով։

Սազոնով

АВПР, Политархив, д. 8493, л. 14.

198. ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 88 **26 հունվարի (6 փետրվարի) 1916 թ.**
Պատճենը՝ Լոնդոն

№ 300 հեռագիրն ստացված է։

Բրիանը ինձ հաղորդեց, որ Ֆրանսիայի կառավարությունը սկզբունքորեն համաձայնել է ստանձնելու հայերին օգնելու համար մեկ միլիոն ֆրանկի միանվագ նպաստի մեկ երրորդ մասը, պայմանով, որ անգլիական կառավարությունը նույնպես համաձայնի դրան։ Ֆրանսիայի կառավարության կարծիքով, նպաստի բաշխումը գերադասելի է հանձնարարել Թուրքիայում ամերիկյան դեսպանին, դրանք բաշխելու միջոցին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հայ բնակչության ներկայացուցիչներին գաղտնի իրազեկ պահելով այն մասին, թե ումից է բխում այդ նպաստը։

Իզվոլսկի

АВПР, Политархив, д. 3493, л. 15.

199. ԼՈՆԴՈՆԻ ՌՈՒՍԱՑ ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր № 96 **22 փետրվարի (6 մարտի) 1916 թ.**

Ձեր № 300 հեռագիրն ստացված է։

Անգլիայի կառավարությունը ցավում է, որ Անգլիայի և դաշնակից տերությունների հպատակներին օգնություն ցույց տալու հնարավոր բազմիցս շտապ կարգով անգլիական գանձատանը դիմելու պատճառով ինքը զրկված է այդ օգնությունը նաև Թուրքահայերի վրա տարածելու հնարավորությունից։ Ուստի նա հայերին նյութական օգնություն ցույց տալու համար առավել նպատակահարմար կհամարեր դիմել մասնավոր նվիրատվությունների՝ այդ նպատակով գոյություն ունեցող բարեգործական ֆոնդերի միջոցով։

Բենքենդորֆ

АВПР, Политархив, д. 3493, л. 28.

200. ԿՈՎԿԱՍՅԱՆ 2-ՐԴ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅՑԱԳՐԻՑ

Մուշ, 14 փետրվարի 1916 թ.

Տեղիս բնակիչներին՝ ինչպես մուսուլմանների, այնպես էլ փրկված հայերի, հարցուփորձ անելուց հաջողվեց առայժմ հակիրճ պարզել Բիթլիսի վիլայեթի վիճակը պատերազմի սկզբից մինչև այս օրերն ընկած ժամանակամիջոցում, ընդ որում ես շարադրում եմ միայն այն փաստերը, որոնք համընկնում են թե՛ թուրքերի և թե՛ հայերի վկայություններում, որոնք հարցման են ենթարկվել տարբեր ժամանակներում և միմյանց հետ հարաբերության մեջ չեն եղել...

Բնակչությունը մեծ դժգոհությամբ է ընդունել զորահավաքը, ու թեև դեռ հայտնի չէր, որ պատերազմը կլինի Ռուսաստանի դեմ, բայց ամեն ինչ դա էր ցույց տալիս, և ժողովուրդը երկյուղ էր հայտնում այդ պատերազմի ելքի առթիվ։

Տեղիս հայերը հեռագիր էին ուղարկել Կոստանդնուպոլիս՝ պատրիարքին, որով խնդրվում էր նշել, թե Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում քրիստոնյաներն ինչպես վարվեն, որին պատրիարքից պատասխան էր ստացվել, որ սուլթանի հպատակները անկախ դավանանքից պետք է ենթարկվեն իրենց միատեսի կամքին, որից հետո հայերը մտան թուրքական բանակի շարքերը, թեև ոչ մի ռազմական պատրաստություն չունեին... Երբ Էրզրումում զորատեսչ էին անցկացնում, գերմանացի սպաները հայերից խլել էին զենքը։ Դրանից հետո հայերին սկսել էին նշանակել զորքերի աշխատանքային, գումակային ու մյուս օժանդակ շարքերում, և միաժամանակ սկսվել էր հայերի զանգվածային դասալքություն։

Հայերը պարհակ էին կատարում և՛ ծառայություն կրելով, և՛ բնամթերքով վճարելով ռազմական հարկը, ընդ որում բանակ էին զորակոչվում առանց բացառության 20-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ, իսկ հարկը նրանք մուծում էին իրենց ունեցած պարենի ամբողջ պաշարի $^1/_3$ չափով, ընդ որում այդ $^1/_3$-ը մի քանի անգամ էր վերցվել ամենակարճ ժամանակամիջոցում. բանը վերջանում էր նրանով, որ բնակչությունը կողոպտվում էր բառացիորեն մինչև վերջ։ Քրիստոնյաներին զինահարկման ենթարկելուց մեկ ամիս անց այդ նույն հարկմանը ենթարկվեց նաև երկրի ոչ քրիստոնյա բնակչությունը։ Վանի

գրավումը կոտորած սկսելու ազդանշան հանդիսացավ, ընդ որում Թուրքիայում լուրեր տարածվեցին, թե Վանը գրավել են հայերը, թե ռուսներն ու Թուրքահայերը կռվում են ռուսական զորքերի շարքերում և այդ պատճառով էլ քրիստոնյաներին պետք է ոչնչացնել։ Այդ լուրերը հայտնի չէ թե որտեղից էին բխում, բայց կարծում եմ, որ դրանք տարածում էր միմիայն կառավարությունը։ Մուշում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչ Ռեշիդ բեկը, հետագայում զինվորական գաղտնի հետախուզության պետը, սկսված կոտորածի գործուն կազմակերպիչը հանդիսացավ, և երբ նրան միացան Աղո Մստո բեկը, Մեհմեդ Քադրմ բեկը և հատուկ այդ նպատակով Վանից ժամանած Քյազրմ բեկը՝ Վանի ժանդարմական ճամբարի հրամանատարը, ամբողջ վիլայեթը բաժանվեց շրջանների, որոնցից յուրաքանչյուրում տերուտնօրինություն էր անում իշխանության վերոհիշյալ ներկայացուցիչներից մեկը, որոնք միավորվել էին Մուշի մյութեսարիֆ Սարվաթ բեկի ընդհանուր ղեկավարության ներքո։ Սովորաբար այսպես էր արվում. մի մեծ փոս էր փորվում, դեպի նրա եզրն էին քշվում կանայք երեխաների հետ, և մայրերին ստիպում էին երեխաներին հրել նետել այդ հորը, որից հետո հորի մեջ մի քիչ հող էին լցնում, ապա կապկված հայ տղամարդկանց աչքի առաջ բռնաբարվում էին կանայք ու սպանվում, այդ ա՛ռնից հետո վերջապես սպանվում էին տղամարդիկ, դիակները լցնում էին փոսը գրեթե մինչև վերը։ Քրիստոնյաների մի մասին քշում էին դեպի գետը և կամուրջներից նետում ջուրը, ընդ որում դուրս լողացողներին բռնում էին ու նորից նետում։ Եփրատում և Մուշի մոտակա գետում հիմա կլինեն հայերի առնվազն 25 000 դիակներ (հայերի վկայությունը)։

Այդ գազանության դեմ բողոքել էր տեղի մուսուլման հոգևորականությունը, ընդ որում քաղաքի իմամ Շեյխ Ավիս Քադրը անձամբ դիմել էր մյութեսարիֆ Սարվաթ բեկին, վերջինիս խնդրելով հարգել Մուհամեդի օրենքը, որը թույլ է տալիս սպանել միայն զենք կրելու և դիմադրություն ցույց տալու ընդունակ, այսինքն 15—60 տարեկան արական սեռի անձանց, որին ի պատասխան ձերբակալվելու սպառնալիք էր ստացել և փողոցային հայհոյանքների արժանացել։ Դրանից հետո քաղաքի հոգևորականության և աշխարհիկ իշխանությունների միջև թշնամանք սկսվեց, և հոգևորականությունը մի կողմ քաշվեց

հասարակական կյանքից։ Միևնույն ժամանակ հոգևորականությունն սկսեց իր մոտ թաքցնել հայերին, ենթարկվելով տուգանքների ու վիրավորանքների նահանգապետի և ոստիկանության կողմից։ Հովանավորություն ընձեռողների թվում էին հետևյալ անձինք. 1) Մուշ քաղաքի իմամ Շեյխ Ավիս Քադրը, 2) Շեյխ Աբդուլ Համիդը, 3) հարուստ և երևելի անձինք Ջաֆար աղան եղբոր՝ Նադրը խանի հետ, Սիջար աղա Մոլլա օղլին Հաջի Մահմեդ աղայի և ազգականների՝ Բսուֆ աղայի և Քյարիմ աղայի հետ, Ալի աղա Բայրամդար զադեն և 4) Շեյխ Թաղի օղլին՝ Սասունից բադրի ցեղի մի քուրդ, որտեղ նա ապրել էր հայ ֆիդայիների հետ և աշխատել էր նրանց հետ ու նրանց օգտին՝ իբրև երախտիք այն օգնության համար, որ մի ժամանակ նրան ցույց էին տվել հայերը։ Վերը նշված բոլոր անձինք մինչև այժմ մնացել են քաղաքում, բացի իմամ Շեյխ Քադրրից։ Հայ ընտանիքներից մի քանիսը խնայվել էին, բայց ամեն մի այդպիսի ընտանիքում մի Թուրք էր հիմնավորվում, որը լիիրավ տեր ու տիրականն էր թե՛ մարդկանց, թե՛ ինչքի։

Վերն ամբողջ շարադրվածը և կոտորածին առնչվողը վերաբերում է 1915 թվականի ամռանը, երբ նախճիրը առանձնակի մոլեգնության հասավ գաղտնագրով Կ. Պոլսից ստացված հեռագրի հետևանքով, ուր այն թելադրվել էր Բեռլինից. սրանում հատկապես են համընկնում թե Թուրքերի և թե հայերի վկայությունները։ Այդ հեռագիրը վերացրեց մարդկային կերպարանքի վերջին գծերը փաղիշահի կառավարությունից, և Հայաստանում վերակենդանացան սուլթան Աբդուլ Համիդի ժամանակները։ Կոտորածը մերթ հանդարտվում էր, մերթ նորից բռնկում և չմարեց մինչև Մուշում Թուրքերի մնալու վերջին օրերը։ Կառավարության կամքն իրագործողները զորքերն էին, մասամբ նաև քրդերը, բայց գլխավոր ղեկավարները միշտ էլ վերը թվարկածս անձինք էին...

Մուշում գերմանական միսիոներական հանձնաժողովի գթության երեք քույրեր, որոնցից երկուսը ականատես էին եղել կոտորածին, բողոքել էին, բայց ապարդյուն, բայց գրելու կամ հեռագրելու հնարավորություն նրանք չունեին, քանի որ նրանց ամբողջ նամակագրությունը գրաքննության էր ենթարկվում հենց իր՝ Սարվաթ բեկի կողմից և այն ամենը, ինչ անցանկալի էր, ոչնչացվում էր։ Այդ քույրերի ազգանուններն են Բոդիլե (Նորվեգիայից) և Ալեմոն (Շվեյցարիայից), երկուսն էլ մյու-

թնսարաֆի կարգադրությամբ տարվել էին Խոռնուտ, ուր մեկնել էր Սարվաթ բեկը (այնտեղ էլ մեռել է)։ Սարվաթ բեկից հետո նահանգապետը Շավքի բեկն էր, որը մի տարի առաջ մեկնել էր Բիթլիս և այնուհետև Մոսուլ, իսկ վերջին ժամանակներս նահանգապետի տեղն ու պաշտոնը տնօրինում էր 34-րդ դիվիզիայի հրամանատար Վելս փաշան։ Երբ Կարա Ջոբանը գրավվեց, սկսվեց Մուշի էվակուացումը, ընդ որում քաղաքի կառավարիչները բոլոր բնակիչներին հրամայեցին հեռանալ. իսկ Խնուսի անկումով ձեռնարկվեցին բռնի միջոցներ, որոնք դրդսևորվում էին նրանով, որ ոստիկանությունը փշրում էր այն տների լուսամուտներն ու ջարդում դռները, որի բնակիչները չէին ուզում ենթարկվել նահանգապետի հրամանին։ Քաղաքում թուրքերի գտնվելու վերջին պահերին հրկիզվել էին մահուդի, կոշկի, հացահատիկի ու պարենի պահեստները, բայց այն հապշտապությունը, որով կատարվում էր փախուստը, հնարավորություն չէր տվել ոչնչացնել ամեն ինչ, ի դեպ մոռացել էին հին հայկական վանքը, որը Սարվաթ բեկը բռնձի, օճառի ու կաշվի պահեստների էր վերածել։ Վանքը ես գտա կողոպտված վիճակում... Փետրվարի 7-ին Ձերդ գերազանցության հրամանով ժամանելով Մուշ քաղաք, վերջինս գտա ահավոր վիճակում։ Բացարձակապես ամեն ինչ ջարդուփշուր էր արված ու ապականված...

Շտաբս-կապիտան Կրիմ Շամխալ

Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության
ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 1—6

201. ԶԵԿՈՒՑՑ ՇՏԱԲՍ-ԿԱՊԻՏԱՆ ԿՐԻՄ ՇԱՄԽԱԼՈՎԻՆ

Կովկասյան ռազմաճակատ, 6 մարտի 1916 թ.

Սույն թվականի մարտի 16-ին մեկնեցի Դեյրյուք գյուղ անասնակեր հայթայթելու։ Ճանապարհին մտա Հախկան գյուղը, որը ստուգելիս 3 այրված մարագներում հայտնաբերվեցին առնվազն 200 մոխրացած մարդկային դիակներ։ Միակ փրկված հայը, որն ընտանիքի հետ գտնվում էր Դեյրյուքում, ինձ պատմեց, որ դրանք հայերի ոսկորներ են, որոնց թուրքերը քշել էին մարագները և հետո մարագները հրկիզել։

Դեռակալ-գրագրշիկ Ուդովից

Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության
ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 5—6 շրջ.

202. ԲԵԹՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՈՆՈՎԻՆ

№ 265 հեռագրից 2 մայիսի 1916 թ.

Մանդելշտամը խնդրում է հաղորդել. տարբեր աղբյուրներից, այդ թվում մի քանի շաբաթ առաջ Փոքր Ասիայով անցած մի անձից տեղեկություններ է ստացել, որոնք Թուրքիայի ներքին դրությունը պատկերում են հետևյալ կերպ. Փոքր Ասիայում հայեր գրեթե չկան, նրանք կամ բնաջնջվել են, կամ աքսորվել, և միայն բեկորներ են թաքնվել ղզզըլբաշների մոտ... Թուրքական իշխանությունների հրամանով հեռանալով մեր հարձակվող զորքերի առջևից, մուսուլմանները տանում են հայերի ունեցվածքն ու քշում-տանում հայերի անասունները...

Ռուսաստանի արտաքին քաղաքականության
արխիվ, Քաղարխիվ, գ. 3504, թ. 93

203. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Պետրոգրադից անգլիական թերթերին ուղարկված հեռագրում տրված են զարհուրելի մանրամասնություններ Տրապիզոնում հայերի կոտորածի մասին, նախքան ռուսները կգրավեին այդ քաղաքը։ Ռուսներն այնտեղ գտել են սոսկ 50 հայ որբ, 15 կին և մոտավորապես 1000 տղամարդ, որոնք թաքնվել էին հարևան գյուղերում։

Ամերիկյան հյուպատոսը հայտարարում է, որ ինքը երկար ժամանակ ապրում է Տրապիզոնում և երբեք մտքովը չէր անցնի, որ թուրքերն ընդունակ են այդպիսի գազանություններ։

Հայ երեխաները ծովն էին նետվել շան լակոտների պես, հասուն հայերին դուրս էին հանել քաղաքի սահմաններից և խումբ-խումբ գնդակահարել, ջահել աղջիկներին վաճառել էին հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցվածքը վաճառքի համար աճուրդի էր հանվել Տրապիզոնի տաճարում։ Եվ քանի որ հույները հրաժարվել էին գնել այդ ապրանքները, դրանց աճուրդով վաճառքը տեղի չէր ունեցել։

Հույները հաստատեցին, որ թուրքերն իրենց ահաբեկում էին,

սպառնալով գնդակահարությամբ, եթե հայտնաբերվի, որ Տրապիզոնում թողնված թեկուզև մեկ հայ երեխա ապաստան գտած լինի իրենց մոտ։ Թուրք կանայք ձեռքերը կոտրտելով ասում են, թե ալլահն օսմանցիներից երես է շուռ տվել հայերի հետ նրանց դաժան վարմունքի համար։

"Le Temps", 7.V.1916.

204. Կ. ՊՈԼՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

Զեկուցից 10 հուլիսի 1916 թ.

Արևելյան նահանգներում հայերի հալածանքը թևակոխել է իր վերջին փուլը։

Հայ ցեղը բնաջնջելու միջոցով Հայկական հարցը վերացնելու իր ծրագիրն իրագործելիս Թուրքական կառավարությունը չարձագանքեց ոչ մեր դիմումներին և ամերիկյան դեսպանության ու Վատիկանի նվիրակի դիմումներին, ոչ էլ Անտանտի տերությունների սպառնալիքներին և ամենից քիչ հաշվի նստեց Արևմտյան Եվրոպայի կարծիքի հետ. այժմ նա մտադիր է մասնատել ու քշել հայերի վերջին խլյակները, որոնք կենդանի են մնացել առաջին աքսորից հետո...

Մեսեռնիկ

Deutschland und Armenien..., S. 280.

205. ՆԱՄԱԿ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ

Կարին, 28 հոկտեմբերի 1916 թ.

Ծրագրված, այո, տարիներ առաջ ծրագրված հայաջինջ քաղաքականությունը դրութենական կերպով գործադրվեցավ Խարբերդին մեջ, ինչպես նաև Հայաստանի բոլոր նահանգներու մեջ։ Մոնկոլին հատուկ անհրաժեշտ խժդժություններով, եղեռներով և նախճիրներով խառն. ահավասիկ եղանակները, որք գործածվեցան Խարբերդին մեջ ջնջելու անմեղ հայերը իրենց բոլոր պարագաներով, խլելով անոնցմե ինչք և պատիվ, կյանք և երջանկություն, կրոնքը և լեզուն...

Առաջին քայլը տեղի ունեցավ կրթական հաստատությունները քանդելու և փճացնելուն մեջ. գոցելով ազգային բոլոր դպրոցները. ինչպես նաև Ամերիկյանը, Եփրատ գոլեճը՝ թե տղոցը և թե աղջկանցը։ Գոլեջները, վարժարանները ամենքն ալ գոցելու հրաման ըրավ կառավարությունը, առարկելով «համաճարակ հիվանդություն կան» փուճ և սնոտի փաստաբանությամբ. ցրվել տվավ բոլոր աշակերտությունը, շենքերը վերածելով հիվանդանոցներու և զորանոցներու։ Դպրոցներու փակվելը և այլն տեղի ունեցավ 1915 մարտի 28-ին. վարիչ մարմինները, ամերիկյան միսիոնարությունը կրկնակի դիմումներ ըրին, սակայն արդյունքը բոլորովին պարապ. լսող չեղա՜վ...

Ապրիլին տեղի ունեցավ կարգ մը տուներու խուզարկություններ՝ ամբաստանելով իբրև կուսակցականներ, սկսան փնտռել գրություններ և այդ առթիվ ձերբակալել ականավոր անձինք։ Բայց այս առթիվ ծեծ, չարչարանք և այլն չկար, եղածը բանտարկությունն էր սոսկ։ Մայիս 1-ին սկսան ձերբակալել փրոֆեսորները՝ Եփրատ գոլեճին, կրթական հաստատությանց պատկանող անհատներ, հարուստներ և նշանավոր գրողներ, վարդապետներ և քահանաներ, որոնք որ նախապես աչքի զարնված էին։ Մայիս 10-ին սկսավ ծեծ, չարչարանք հետևյալ կերպերով. նախ սկսան ծեծել, հետո ծեծվողները պայտել, բևեռել, գլուխները մեքենայից մեջտեղ դնել և ճզմել. վերջին կերպը չարաչար կերպով գործադրվեցավ Եփրատ գոլեճի փրոֆեսորներու և ուրիշ նշանավոր հայ մտավորականներու վրա. չմոռնամ ըսել, թե աքցաններով սկսան նաև ոմանց եղունգները և մատները քակել, ձեռքներուն մեջտեղ քեզասլ սուի լեցնել վառել և տանջանքները այսպես կրկնապատկել։

Տառապանքի այս շրջանին, որ ատեն ժողովուրդը ծայր աստիճան սկսած էր հուսահատիլ աներևակայելիորեն, անգութ կառավարությունը մաք(ի)ավիելական խաղի մը սկսավ. «Հեռագիր ունինք, չեզոքները պիտի արձակենք, իսկ կուսակցականները պիտի թեթևորեն պատժենք. ժողովուրդը գրգռվելու չէ»։

Վալին, կանչելով հայոցս առաջնորդը Պսակ Ծ. վարդապետը, գերման Շովեն «միսիոնար մը» Օյմանը, հայ ավետարանականաց հովիվը Վեր. Վարդան Ամիրխանյանը, ասոնց բոլորին կը հաղորդե իրեն եկած հեռագիրին պարունակությունը, պատվիրելով հանդերձ այնքան հրամայական և իշխանական թոնով մը «եթե ժողովուրդը կուզե, որ բանտի մեջ եղող չե-

զոքները շուտ արձակված տեսնել, քովերնին եղած ոևէ զենք և ռազմամթերք շուտով մեզի հանձնելու են, անկե վերջ հավանական է, որ բոլորն ալ ազատ արձակինք» ակնարկված «բոլորը» կուսակցականներու ազատման հավանականությունք կը ցուցնե։

Հոգևոր պետերը գերման միսիոնարին հետ հավատացած, այո՛, թուրքին հատուկ փաղաքշական և քաղաքավարական կեղծ հարգանքներուն և խոսքերուն, ասոնք սկսան կատարյալ եռանդով քարոզել, որ «զենքերը կառավարությանը հանձնելու ենք, (եթե) ոչ մերիները բանտ պիտի մնան»։ Գերման միսիոնարը, որն որ ժողովուրդի վրա նախապես լավ ազդեցություն մը թողուցած էր, վարդապետը իրենց եկեղեցիներու մեջ խոսած քարոզներովը, կարողացան համոզել ու համոզել խեղճ ժողովուրդը, թե «փրկությունը միայն բանտարկյալ եղբարց զենքերը հանձնելուն մեջ կը կայանա. առանձին առանձին ժողովներով, այսպես համոզկեր խոսքերով ժողովուրդին մեջ այն հավատքը ստեղծեցին, թե «խոհեմությունը զենքերը հանձնելն է»։

Բողոքականաց երեցն ալ նույն հավատք ունենալով, հետևելով մյուսներու արարքներուն և կառավարության խոստումներուն վստահած, սա ալ սկսավ քարոզել...

Այս պարագային խորամանկ կառավարությունը հաջողեցավ թշնամանք և դժգոհանք սերմանել ժողովրդյան մեջ. կուսակցականները (և) ոչ կուսակցականները... փոխադարձաբար սկսան գիրար խծբծել, մեղադրել, որու հաջորդեց կարգ մը անախորժ դեպքեր...

Քարոզներու արդյունքը եղավ զենքերու հանձնումը, մերիներու հիմարաբար խաբվիլը. խեղճ, միամիտ առաջնորդը այնքան համոզված թուրք պաշտոնեից խոսքերուն, որ կսկսի գյուղեր մարդ ղրկել, նամակներ գրել, որ ունեցածնին անհապաղ և առանց այլևայլի հանձնին. միամիտ ժողովուրդը իսկույն կը համակերպի։ (Ստորագրյալս պաշտոնիս բերումով Կարմրի գյուղը կը գտնվեի, երբ Պսակ վարդապետ ինծի ուղղած էր միևնույն իմաստով նամակ մը, որուն հակառակը պատասխանեցի և քիչ մնաց որ... ես արդեն այդ օրեն փախստական մը եղա և ուր լինելս ոչ ոք գիտեր մեկե մը ի զատ, որը ուտելիք կհասցներ ինծի)։ Այս բոլոր գործողությունները, լավ ասած, խաղերը տեղի ունեցան մայիսի վերջերը և մինչև հունիսի 10-րդ օրը, որ ատեն արարվածը կը փոխվի։

Զենքներու հանձնելուն անմիջապես հաջորդեց բանտի մեջ

եղողներուն աքսորումը, որոնց թիվը 1500—1600 կը լիներ, և քաղաքի և շրջակայից սոսկալիորեն պաշարումը։ Խարբերդեն Մեզրե կես ժամ կամ երեք քառորդ հեռավորությամբ տեղը երթևեկությունը դադրեցավ. դուրսերը տեսնվող ոևէ այր մարդ անխընա կը ձերբակալին և կը ծեծին, գլուխները, պեխերը և կրոնականաց մորուքները կը փետեն... խժդժությունները աննկարագրելի են այլևս, տունե տուն մինչ իսկ երթևեկությունը անկարելի է, կը լսինք, որ բանտարկյալները գիշերները կը քշին... (Թուրքը որչա՜փ հավատարիմ է իր խոստումներուն)։ Պսակ վարդապետը դիմում կը կատարի և վերադարձին վերջնականապես կը ձերբակալվի, տասնհինգ (օր) անոթի, ծարավ բանտը անցկացնելե վերջ իննհարյուր ինտելեգենտներու հետ կաքսորվի արդեն ուժասպառ եղած։ Մարդիկ հականե հանվանե կսկսին փնտռվիլ ըստ կառավարական տոմարին. տեսեք որքա՜ն խորամանկությամբ. երբ այրերու ձերբակալումները խստությամբ կը շարունակվեին, շրջակա գյուղերի բնակիչները բոլորովին ջարդված էին. կանանց դիմումները գերման գթոտ միսիոնարին մոտ «մեր էրիկներու արյունաթաթախ հագուստները դիտմամբ մեր դուռները կը բերին ձգին» խոսքերը միսիոնար մը. էյմանին գութը չի շարժիր։ «Չեմ հավատար ձեր խոսքերուն, կառավարությունը մեզի վստահացուցած է, թե աքսոր պիտի ըլլա, բայց ոչ ջարդ»... Հիմարի տրամաբանություն. խաբվելու քանիերորդ անգամն է արդյոք։ Հունիսի 15-են սկսան ընդհանուր ժողովրդյան աքսորումը։ Բանտեն կարգ մը անհատներ արձակվեցան մեծ կաշառքներով, որ իրենց ընտանեաց հետը մեկնին։ Թաղե թաղ սկսան պարպիլ, հանել Տիարպեքիր և Մալաթիո գծով երկու ճամբու վրան՝ լեռներ և ջուրեր, որպեսզի կուլ տան... Այլևս թող ամերիկյան քոնսուլը՝ մր. Տեյվիսը, ամերիկյան միսիոնարությունը, եթե խիղճ ունին, գերման միսիոնարք և միսիոնարությունք, թող վկայեն իրենց աչքերով տեսածները, փախչողներու դեմ հանդիման իրենց ըրած պատմությունները, իրենք իրենց աչքերով տեսածները թող պատմեն աշխարհին ճշմարտությունը, ցուցնելու թե կարավան կարավան, խումբ խումբ հանվող անմեղ բնակչությունը ինչպես ժամուկես հեռավորությամբ Կեոլճիք ծովակին եզերքը, լեռներու մեջտեղերը, ինչպես կը ջարդեին, կը կողոպտեին, Մալաթիո ճամբան Իզթլի ջուր ըսված տեղին մեջ, Եփրատ գետին մեջ ինչպես դիակները լեցուցին, ինչպես մաքուր ջուրը արյան փոխված էր տառապան-

քի այդ շրջանին մեջ, ինչպե՞ս հայուն գույքերը կը խլին քյուրտերը և ինչ եղանակներով կը փախցվին հա՛յ կույսերը, հոս կը Քաղում կարող գրիչներու, որ իրենք պակասս լրացնին...

Լսեցինք, մայրեր իրենց ձեռքերով կը կտրին իրենց գեղանի աղջկանց մազերը, երեսնին գշիռոտ, աղտ քսելով տգեղցնելու համար, հայ կիները և հայ աղջիկները հոժարաբար ինքզինքնին ջուրերը կը ձգին, ոմանք ալ բռնի կնության կառնվին։ Խարբերդին և Մալաթիո մեջ 5000—6000 հայ աղջիկներ կան գեղեցիկ տեսակեն, որոնք ակամայից կիներ են Թուրք զապետներու, խոճաներու և ժանտարմաներու։ Տիարպեքիրի և Խարբերդի շրջանակի մեջ 3000-են ավելի 8—10—12 տարեկան մանչեր կան քյուրտերու և Թուրքերու տունները, որ ճամբաներ տեսած, գթացած և քովերնին առած են ու այժմ մայրենի լեզվնին խոսիլը մոռցած են...

Աքսորանքը հուղարկավորության փոխված էր, առաջին օրեն միսիոնարք և խելացիներ կռահեցին զայս։ Սակայն ազատելը և փախչել անկարելի էր. շորս կողմը պահնորդներ կային... Քաղաքին մեջ համբվելիք աղջիկներ մնացին, այն ալ Թրքանալով և ամուսնանալով, համակերպվելով և ամեն մասամբ տուժելով... Օգոստոսին սկսան շրջակա գյուղերու եկեղեցիները և գերեզմանատները քակել, այսօր միայն Խարբերդի մեջ ամերիկյան միսիոնարության աչքին առջև շքանդված կը կենան Սբ. Գևորգ եկեղեցին և հայ. ավետ. եկեղեցին ու Մեզրեի մեջ գուցե գերման միսիոնարաց ի պատիվ երկու եկեղեցիներ, ասոնք բոլորն ալ հիվանդանոցներ ըրած են արդյոք իրենց պետք գալու համար չեն քանդած, Թե օտարները կը խաբին...

Տասնևութը ամիս Խարբերդ և շրջակայք անցուցի պահված կյանք մը, յոթը ամիս ամերիկյան հիվանդանոցի մեջ իբրև հիվանդապահ, նոյեմբերի 18-րդ օրը բումելցի Մեհմետ Ալիի, Մելազեմի էվել և սրվա(ղ)ցի Մեհմետ Ռիզայի հետ ունեցած խոսակցության մը առթիվ. «Պիչարե Արսեն. Ձեր ազգին բնաջնջումը պիտի ըլլար Պուլկարական պատերազմին ատենը, սակայն չհաջողեցանք, հետո սահմանադրությամբ շատ քիչ մնաց, որ հաջողեինք։ Բայց Անգլիայեն և Ռուսաստանեն ու Ֆրանսայեն վախցանք, իսկ այժմ որ այս երեքն ալ մեր թշնամիներն են ու գերման հզոր պետություն ալ մեր կողմն է և ինք մեզի ազատություն տվավ մեր նեքքին գործերը անկախորեն վարելու, ալ ի՞նչ կարգիլեր մեզ ձեզ նման վատ, ըմբոստ ազգ մը փճացնելու. Նուպար փաշան պեկլեկ կուզեր. Թող գա, որ առնե և տեսնե»... Արսեն, եթե դուք խելացի ազգ լիներիք, երբ քաբինֆյուլասոնները ջնջվեցան, ձեր ջնջումն ալ հասկնալու էիք»... Նայեցեք որչափ առաջներ ծրագրված էր դրուքենական այս ջարդը։

Խարբերդի Եփրատ գոլեճի և Աստվածաբանական ճեմարանի շրջանավարտներեն

Արսեն Խաչիկյան

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 125, թ. 13—15։

206. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1916 Թ. ՔԸՂԻՒ ԳԱՎԱՌՈՒՄ ԿՈՏՈՐԱԾԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԹՎԻ ՄԱՍԻՆ*

Գյուղերի անունները	Հայ տուն	Հայ բնակչություն	Կոտորածի զոհվածները	Ներտասահման եղողներ	Զոհվածների թիվը
1	2	3	4	5	6	7
1 Գասապա	350	3900	18	250	3632
2 Խուրս	280	1980	13	325	1642
3 Թեմրան	385	2650	38	350	2262
4. Ասեգ	225	1570	16	200	1354
5 Ջանախճի	200	1400	7	200	1103
6 Ճերմակ	165	1155	14	120	991
7 Աստղաբերդ	180	1250	14	125	1081
8 Խոսնակ	95	850	22	70	758
9 Սերկևիլ	85	650	7	75	568
10 Հոզաս	55	450	7	55	388
11 Ապողնակ	70	450	6	40	404
12 Ճըպս գյուլ	64	480	—	60	420
13 Ղաչի	25	180	—	25	155
14 Քար Բույս	60	450	—	55	395
15 Ջան	60	450	—	40	410
16 Սագաձոր	65	450	92	55	303
17 Խաչագուր	10	60	1	4	55
18 Էրթիճ	200	775	176	85	514
19 Ապեվանք	21	270	1	23	246
20 Ալթուն Հյուսեյն	12	80	43	10	27

* Տեղեկությունները կազմել էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և հաղորդել ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին (խմբ.)։

1	2	3	4	5	6	7
21	Ագրակ	55	450	—	25	425
22	Հագստուն	55	400	72	54	274
23	Խուպեկ	13	115	3	20	92
24	Խաս գյուղ	5	30	1	4	25
25	Խոլ Խոլ	6	66	1	7	58
26	Աորդնիկ	18	120	—	15	105
27	Աղբջուտ	7	45	—	5	40
28	Ջելեպի Մեզրե	8	56	—	7	49
29	Լրք	8	65	—	10	55
30	Խոշ Քար	22	160	—	20	140
31	Օրոր	68	460	10	70	380
32	Ջարի Պաշ	30	300	2	15	283
33	Սեղանք	25	200	1	20	179
34	Ինախ	5	45	—	6	39
35	Էրմեջ	10	70	5	6	59
36	Ջումախ	7	67	10	7	50
37	Տինեք	26	320	13	18	289
38	Ամառիճ	10	140	5	6	129
39	Ասինձ	35	300	8	25	267
40	Մելիքան	60	450	30	11	409
41	Շեն	10	70	11	5	54
42	Ջերման		156			156
43	Շարու	24	182	20	18	144
44	Խարապեկ	35	260	2	18	240
45	Լիշիք	46	385	30	42	313
46	Ջիֆթլիկ	42	480	61	10	409
47	Խրշ չպուղ	28	278	15	6	257
			25 670			22 374

ՀԽՍՀ ՊԳԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 161, թ. 8—10

207. «ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶՈՀԵՐԸ» ՀՈԴՎԱԾԻՑ

Դ-ր Ե. Ի. Մինասյանցը, որը նոր է վերադարձել Սարիղամիշի և Էրզրումի շրջաններից, ուր նա գործուղվել էր մասնակցելու քաղաքների միության նոր կազմակերպությունների հարցերի մշակմանը, էրզրումում սպառիչ կերպով ծանոթացել էր Հայաստանի հայերի վիճակին, նրանց հալածանքներին ու այն գազանություններին, որ գործադրվել են և մինչև օրս էլ գործադրվում են «նորոգ» Թուրքիայի ներկայացուցիչների՝ երիտթուրքերի «առաջարկություններով»։ Դ-ր Մինասյանցը հավաքած նյութերը սիրալիր տրամադրեց մեր աշխատակցին, ընդ որում նշեց հիմնական աղբյուրները, որոնցից ինքը քաղել էր անհրաժեշտ տեղեկությունները։

«Այն ամենը, ինչ լսել էի հայերի նկատմամբ թուրքերի, ավելի ճիշտ՝ թուրքական իշխանությունների վերաբերմունքի մասին, կարելի էր անհավանական համարել, եթե այդ մասին չասեին մարդիկ, մի կողմից հայ ժողովրդի ամբողջ ողբերգության ականատեսներ, մյուս կողմից՝ անձինք, որոնք կամ իրենք էին իրենց ուսերին կրել թուրքական իրավարկության ու վայրագությունների ամբողջ լուծը, կամ էլ երջանիկ հնարավորություն էին ունեցել այս կամ այն պատճառով գտնվելու «բարձրագույն իշխանության» որևէ թուրք ներկայացուցչի զորեղ հովանավորության ներքո։

Հայերի տարաբախտության մասին ինձ պատմել են նախ և առաջ ու ամենից շատ էրզրումում ամերիկյան հյուպատոս մ-ր Սթեփելտոնը տիկնոջ հետ և դ-ր Քեյսը՝ ամերիկյան ներկայացուցչությանն առընթեր հիվանդանոցի վարիչը։ Այդ անձինք, որոնք 9 տարուց ավելի ապրում են Հայաստանում, մասամբ անձնական դիտարկումների միջոցով, մասամբ էլ Սվազի, Խարբերդի, Բիթլիսի, Տրապիզոնի և Մոսուլի իրենց ներկայացուցիչների հաղորդումներից միշտ էլ լայնորեն իրազեկ էին թուրքական «տրամադրությունների», բաղձանքների և, որ գլխավորն է, պատերազմի սկզբից թուրքահպատակ հայերի նկատմամբ տարվող քաղաքականության մասին։ Չեզոք տերության այդ ներկայացուցիչների աչքի առաջ էին ընթացել Հայաստանի կառավարման ողջ համակարգը, այն բոլոր դավերն ու գազանությունները, որոնց հետևանքով մեկուկես տարում բնաջնջվեցին հարյուր հազարավոր մարդիկ...

Գազանն արթնանում է։ «Արշավանքն» ընդդեմ ողջ Հայության սկսվեց ամբողջ Հայաստանով մեկ։ Հայերի դեմ բացահայտ հրահրումն հենց այդ ժամանակ էլ ուժգին դրսևորվեց էրզրումում։ Իշխանությունները ուղղահավատներին հայտարարեցին, թե էրզրումի երեսփոխան, հայ Կարո Բաստերմաջյանը որպես կամավորական գտնվում է ռուսաց բանակատեղում։ Այդ հաղորդման հետևանքը եղավ նախ և առաջ երեսփոխանի եղբոր սպանությունը։

Իշխանությունները անհապաղ կարգադրեցին էրզրումի կայազորի մեջ եղած բոլոր հայ զինվորներից խլել զենքը և նրանց

ուղարկել սև աշխատանքների։ Էրզրումում հայերի բացահայտ բնաջնջում չէր եղել, բայց անմիջապես էլ սկսվել էին հալածանքներ ու ծաղրուծանակ նրանց նկատմամբ... Հայերի տասը ամենահարուստ ընտանիքների կարգադրվեց մաքրել իրենց տները։ Ստիպված էին փրկագնով ազատվել, և հայերը իշխանություններին տվեցին 1500 լիրա, բայց դժբախտների հանգրստությունը երկար չտևեց։ Մեկ շաբաթ անց նրանց վտարեցին և, բացի այդ, բռնագրավեցին ամբողջ ունեցվածքը՝ ընդհուպ մինչև պարենամթերքը։ Բոլորի համար պարզ դարձավ, որ ամպերը կուտակվում են, մթնոլորտը գնալով ծանրանում է, և ամպրոպը՝ անհամար տառապանքներն անխուսափելի են։

Խաղաթղթերը բացվեցին։ Նման վիճակը, տագնապով լի տառապալից օրերը տարաբախտների համար շարունակվեցին մինչև մայիս ամիսը։ Վրա հասան Վանի իրադարձությունները, իսկ դրանց հետ էլ հայերի կոտորածը։ Երբ Եվրոպայում և Ամերիկայում սկսեցին խոսել Թուրքերի վայրագությունների մասին, երբ հայերի իրական տառապանքները գերազանցեցին ամենահրեշավոր երևակայությունը, երբ, վերջապես, դրանց համար սկսեցին մեղադրել ոչ թե «Ստամբուլին», այլ Բեռլինի գերմանացիներին, ուղարկվեց բովանդակ Հայաստանից հայերի բացահայտ բռնագաղթի, փաստորեն գաղտնի բնաջնջման ծրագիրը...

Բռնագաղթի իրականացման կարգը։ Բուն տեղահանությունը բավական հատկանշական ձևեր էր կրում։ Իշխանությունները չէին համարձակվում անմիջապես ձեռնամուխ լինել հայերի զանգվածային տեղահանությանը, նկատի առնելով մուսուլման բնակչության լայն խավերի տրամադրությունը։ Նրանք գիտեին, որ պատերազմը, որը հենց ծագման պահից ժողովրդականություն չէր վայելում, Կովկասյան ռազմաճակատում Թուրքերի կրած առաջին անհաջողություններից հետո ատելի էր դարձել ամբողջ երկրի համար։

Նյութական և մարտական աջակցության մասին երիտթուրքերի, առաջել ևս գերմանացիների լայնորեն տարփողվող խոստումները սին դուրս եկան։ Բնակչությունը, հատկապես գյուղացիան, որն իր ամբողջությամբ հեռու էր ամեն կարգի հայրենասիրական նկրտումներից, որը տարիներ շարունակ ապրել էր հայերի հետ, իշխանությունների համար վերածվեց առեղծվածի. իշխանությունները վախենում էին, որ Հայաստանից հայերի համատարած տարագրումը կարող է հարուցել մուսուլմանների

բողոքը, որոնք չափից ավելի շատ ընդհանուր բան ունեին նրանց հետ, այդ պատճառով էլ որոշեցին գործել զգույշ և քողարկել իրենց իսկական ծրագրերը։ Առաջին հերթին սկսեցին տարագրել հայ գյուղացիությանը...

Հասարակության տականքներն սկսեցին բնակչության շրջանում բացեիբաց քարոզել, թե անհրաժեշտ է գլխովին բնաջնջել հայերին։ Զանգվածների տրամադրությունն այն աստիճան սպառնալից դարձավ, որ Էրզրումի վալին՝ Թիսիմ (Թահսին) բեյը, որը համեմատաբար հաշտ էր տրամադրված հայերի նկատմամբ, հարկ համարեց հավաքել բոլոր մեծամեծներին և նրանց առջև հարց դնել, թե ինչպես վարվել հայերի հետ։

Այդ պատմական ժողովը գումարվեց անցյալ տարվա հունիսի սկզբին Էրզրումի Բաշպե-քյոշկ արվարձանում։ Այդտեղ բացեիբաց հայտարարվեց, թե անհրաժեշտ է անհապաղ կոտորել բոլոր հայերին Հայաստանում, և մասնավորապես Էրզրումում։ Ի վերջո այդ «անմեղ» հարցը տրվեց հատուկ հանձնաժողովի եզրափակիչ որոշմանը, որը վալիի մասնակցության շնորհիվ լավագույն կիրառման արժանի գործարարությամբ որոշեց հայերին ա ռ ա յ ժ մ ձեռք չտալ, այլ բոլորին անխտիր տարագրել Միջագետք...

Հայաստանից Միջագետք տարագրվելիս հայերի կրած ծանր չարչարանքների մասին դ-ր Մինասյանցը հաղորդում է.

— Բառեր չկան, գույներ չկան, որոնք կարողանային նկարագրել տառապանքների այն ուղին, որ հայերը կրեցին Թուրքական կառավարության «բարեխնամ» հոգատարության ու հոգածության շնորհիվ նոր «ավետյաց երկիր» տարագրվելիս։ Այդ մասին, միստրը Սթեփելտոնից և դ-ր Քեյսից բացի, որոնց չի կարելի կասկածել տվյալ հարցում որևէ սուբյեկտիվ բան մուծելու ցանկության մեջ, ինձ ասել են նաև այդ տեղահանության բոլոր սարսափները կրած անձինք։ Այսպես, 70 տարեկան մի ծեր հայ կին՝ բաբերդցի Հայկանուշը, որը գաղթականների հետ հասել էր ընդհուպ մինչև Քեմախ և հրաշքով փրկվել էր այն բանից հետո, երբ Թուրքերը նետել էին գետը, հաղորդեց իր մերձավորներին ու բոլոր գաղթականներին ոչնչացնելու «տեխնիկան»։ Այդ մասին հանգամանորեն և էլ ավելի կապակցված էր ասում հայ զինվոր Երվանդ Երզությանը, որը պահակախմբի կազմում ուղեկցել էր գաղթականներին մինչև որոշ հանգրվաններ։ Երզությանը ծառայության էր գրանցվել գնդում և որպես

սպասյակ ընկել էր մի գնդապետի մոտ, որը մոտիկություն անելով սիրել էր նրան, վստահ չէր, թե կկարողանա նրան պահպանել ընդհանրապես բանակում և մասնավորապես իր գնդում հայերի հանդեպ եղած ընդհանուր չարակամությունից։ Գնդապետի անզորությունը թուրքական բանակի բարոյալքության ցուցանիշն է։ Իր սպասյակին պաշտպանելու միակ միջոցը համարում էր այն, որ նրան համոզի մուսուլմանություն ընդունելու, ինչն էլ բացեիբաց սկսում է խնդրել Երզրությանից։ Վերջինս կատարել էր իր հրամանատարի կամքը, մուսուլմանություն էր ընդունել և մնացել նրա մոտ։ Երբ գնդապետին Էրզրումից հետ էին կանչել ինչ-որ տեղ, Երզրությանը մնացել էր այստեղ, իսկ հետո նշանակվել հայ գաղթականների առաջին խմբերի ուղեկցորդ։

Որպես նրանց տառապանքների ականատես նա քիչ նյութ չտվեց թուրքական վայրագությունների ապագա նկարագրողի համար։

Հետաքրքիր շատ վկայություններ տվեց ոմն տիկին Շ.-ն՝ Էրզրումում գտնվող մի գերմանացի սպայի տանտիրուհիս։ Սպան, մի կողմից, եղել էր վերջինիս պահապանը քաղաքում, մյուս կողմից ինքն էր պատմել գաղթականներին ուղեկցելիս իրեն ենթակա զինվորների կատարած «սխրանքների» մասին։

Աքսորյալներին ստիպում էին քայլել ոտքով, բացառություն չէին անում ծերերի, կանանց և երեխաների համար։ Իրենց խրճուկ ունեցած-չունեցածը դժբախտները սկզբնական շրջանում կրում էին իրենց վրա, բայց հետո ուժասպառ լինելով երկար ճանապարհից ու թերասնվելուց, ամբողջը նետում էին։ Գաղթականների հսկողության համար «հոգատար» իշխանությունները պահակախումբ էին կազմել հասարակության տականքներից, բանտերից արձակված ոճրագործներից և ուրիշ մութ անձանցից, որոնք մտել էին չեթայական ջոկատների մեջ։ Երզրնկայից հետո առաջին իսկ դադարքի ժամանակ հայերից խլվեցին մթերքի պաշարները պահակախմբի կարիքների համար։ Հետո պահակները սկսեցին բացեիբաց փող պահանջել, սպառնալով հրաժարվելու դեպքում անխտիր կոտորել բոլորին։ Խլելու արարողությունը կրկնվում էր ամեն մի նոր պահակախմբի կողմից։ Այդպիսով, գաղթականները շուտով տվեցին իրենց ամբողջ ունեցածը, քայլում էին սովահար, ի վիճակի չլինելով իրենց համար գոնե հաց գնել այն գյուղերում, որոնց միջով

անցնում էին։ Երբ տարագիրների փողերը պրծան, ուղեկցորդ պահակներն սկսեցին իրենց համար պահանջել գեղեցիկ կանանց, աղջիկներին ու դեռահասներին, չխնայելով անգամ 5—10 տարեկաններին։ Դիմադրության առաջին իսկ փորձի դեպքում սկսվում էր ծեծուջարդը առանց խտրության, մահացու ծեծուջարդը։

Գաղթականների առաջին խմբերը բաղկացած էին ծերերից, կանանցից ու երեխաներից, և միայն Վանի իրադարձություններից հետո նրանց մեջ սկսեցին հայտնվել նախկին զինվորական հայեր, իսկ այնուհետև պարզապես ճակատային բանվորներ։ Նրանց մեծ մասին կոտորել էին տարբեր բանտերում, իսկ այստեղ հասնողները բառացիորեն մերկ էին, և կանայք նրանց հագցնում էին իրենց շրջազգեստներն ու փալաս-փուլուսները։ Թալանը, ծաղր ու ծանակը և բռնաբարությունները բնավ էլ չէին լրման հասցնում բռնագաղթի ծրագիրը. ինչպես պարզվում է, խնդիրը հանգում էր հայերի համատարած բնաջնջմանը։ Երբ բոլոր սարսափները թափանցեցին եվրոպական մամուլ, թուրքական իշխանությունները դրանք բացատրեցին որպես առանձին տխուր դեպքեր։ Թե ըստ էության ինչպիսին է այդ «տխուր դեպքերի» բնույթը՝ կարելի է դատել հետևյալ փաստերից։ Գաղթականների ընթանալու ամբողջ ճանապարհին բոլոր գյուղերում կազմվել էին թուրք չեթեների ջոկատներ, որոնց ներկայացուցիչները Էրզրումի պատմական խորհրդակցությունում բացեիբաց պահանջել էին գլխովին կոտորել հայերին։ Նրանք վաղօրոք դիրքավորվում էին գաղթականների ընթանալու ճանապարհին և այդտեղից կրակ էին բացում նրանց վրա կամ պարզապես հարձակվում էին ու կոտորում։ Նման դարան էր սարքվել, օրինակ, Զադահ բնավայրում, Երզնկայից ոչ հեռու։ Այստեղ անպաշտպան մարդկանց վրա հարձակվել էին չեթեները, և շատ քչերին էր հաջողվել փրկվել։ Հայերին նույն արյունոտ «բաղնիքն» էր սպասում Քեմախ քաղաքի մոտակա կիրճում։ Փրկվածներին մահ էր սպասում բուն Քեմախում։ Այստեղ գեան էին նետում բոլորին, ով փրկություն էր որոնում քաղաքում, չխնայեցին անգամ երեխաներին։ Կենդանի ականատեսը, որի մասին ասվեց վերը, պառավ Հայկանուշը, որին նույնպես նետել էին գետը, հրաշքով փրկվել էր, շորով բանդ լինելով քարին։ Այդ քարի տակ նա նստել էր մինչև խոր գիշեր, տեսել էր

իր ազգակիցների կրած բոլոր սարսափները և այժմ, հասնելով Էրզրում, պատմում է վերապրածի մասին։

«Պահեր էին լինում, որ գիտակցաբար ուզում էինք ընդվզել,— ասում էր ծեր կինը,— մտածելով, որ փոքրաթիվ փրկվածներիս էլ կկոտորեն ու դրանով կդադարեն մեր տանջանքները»։

Բնաջնջման իրագործման եղանակը հանգեցրեց նրան, որ Երզնկայում փրկվեց ընդամենը երեք տղամարդ, որոնք, կարելի է ենթադրել, կենդանի մնացին միայն այն պատճառով, որ կանացի քրջեր հագած լինելով, չէին ճանաչվել։

Հայերի բնաջնջումը լայնորեն էր կազմակերպված։ Այն քարոզվում էր ամբողջ Հայաստանում, ծավալվելով մինչև Մոսուլ։ Այստեղ մի հարուստ հայ՝ վաճառական Դիկտանյանը, ընտանիքը փրկելու համար մուսուլմանություն էր ընդունել և իր երկու աղջիկներին կնության տվել մուսուլմանների։ Հայերը հալածվում էին անկախ հպատակությունից։ Ամերիկահպատակ շատ հայեր, չնայած ամերիկյան հյուպատոսների բողոքին, մատնվեցին մնացած հայերի ընդհանուր ճակատագրին։ Չօգնեց նաև սկզբում Էրզրումում գերմանական հյուպատոսի դիմումը՝ մեղմացնելու դժբախտների վիճակը։ Կոստանդնուպոլսից նրան կարգադրվել էր չմիջամտել Թուրքիայի «ներքին քաղաքականությանը»։ Ի վերջո ամերիկահայերի ուսուցչական ողջ անձնակազմը (տղամարդիկ և կանայք) բանտ էր նետվել և այնտեղ ոչնչացվել։ Այդ մասին հայտարարում է հյուպատոս մ-ր Սթեփելտոնը։ Զարդը շարունակվել է անցյալ տարվա հունիսից մինչև սեպտեմբեր։ Երբ այլևս հնարավոր չէր թաքցնել «բարեխնամ պահպանության կարգի»՝ իբր ռուսների հարձակմամբ պարտադրված տարագրման հետքերը, Բեռլինից կարգադրություն եկավ հայերին պաշտպանելու «ելուզակախմբերից»։

Վերջում մի քանի խոսք գերմանացի սպաների վարքագծի մասին։ Նրանց մեծամասնությունը խրախուսում էր իշխանությունների քաղաքականությունը և անձամբ մասնակցում կոտորածին։ Այսպես, ոմն կապիտան Շիբներ եղել էր չեթեների կազմակերպիչ, որոնց հետ մեկնել էր Մոսուլ կոտորելու հայերին։ Աքսորի վերջին ճանապարհահատվածին հասնելուց դեռ շատ առաջ նա կոտորել էր հայերի մի ստվար խմբի և անձամբ իր հետ տարել երեք հայ աղջկա։ Էրզրումից հեռանալիս բեռլինցի սպա Կաալ Վերթը բռնությամբ հետը տարել էր տեղացի հարուստ հայ Ջիրինգինյանի դստերը։ Մայոր Ստաշևսկին և

Էրզրումի ամրությունների պետ գնդապետ Շտանգերը, Էրզրումից հեռանալիս, տեղական իշխանությունների իմացությամբ, երբ ցերեկով իրենց հետ տարել էին մի քանի աղջկա, ինչպես իրենք էին արտահայտվել՝ «ի հիշատակ», չնայած նրանց դժբախտ ծնողների արցունքներին ու աղաչանքներին։

Պ. Ն-կո

«Кавказское слово», 6, 9 и 17 марта 1916 г., №№ 53,55,62.

208. Պ. Ա. ԲՈՒՌԻՇԿԻՆԻ «ԷՐԶՐՈՒՄՈՒՄ» ՀՈԴՎԱԾԻՑ

Վերադառնալով Թիֆլիսից, ես անհետաքրքիր չեմ համարում ընթերցողներին հաղորդելու այն տեղեկությունները Էրզրումի և նրան հարող շրջանի դրության մասին, որ ինձ հաջողվեց ստանալ դրանք տեղերում հավաքած անձանցից։

Քաղաքը ներկայումս [1916 թվականին] բաժանված է տեղամասերի, և բժիշկների ու սպաների ղեկավարությամբ մաքրման աշխատանքներ են տարվում։ Ախտահանման աշխատանքներ են կատարում նաև Քաղաքների համառուսաստանյան միության երեք ախտահանիչ ջոկատներ, յուրաքանչյուրը՝ 15-ական մարդուց, և նրանց աշխատանքը մեծապես անհրաժեշտ է։ Էրզրումին համաճարակային հիվանդությունների մեծ վտանգ է սպառնում, առավել ևս, որ անցած տարում բծավոր տիֆի համաճարակը ըստ երևույթին ահավոր է եղել։

Քաղաքում քիչ բնակիչ է մնացել. նրա սովորական բնակչությունը կազմող 120 000-ից հազիվ փրկված լինեն քսան հազարը՝ մեծ մասամբ թուրքեր և ընդ որում՝ չունևոր։ Բոլոր քիչ թե շատ ունևորները փախել են։

Հայեր գրեթե բոլորովին չեն մնացել. Էրզրումում ապրող 25 հազարից թերևս փրկված լինեն երկու հարյուր մարդ։ Անցյալ տարվա հուլիսին և օգոստոսին ամբողջ քիչ թե շատ ունևոր ու մտավորական բնակչությունը հրաման ստացավ վերացնել իր ունեցվածքը և տարագրվել երկրի խորքը։ Ինչքը պետք է վաճառվեր, իսկ ստացված փողերը պետք է անդորրագրով գցվեին Էրզրումի օսմանյան բանկ։ Բացի այդ, հայերի ունեցվածքի մեծ մասը հակերով տեղավորել էին հայոց մայր եկեղեցում, որի զգալի մասը ներկայումս լցված է այդ կահ-կարասիով։ Ունեցվածքի վերացվելուց հետո հայերը ճանապարհ ընկան։ Երաշխա-

վորված էր նրանց անձնական ապահովությունը և պահնորդությունն էր տրված տեղական բնակչության կողմից հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար։ Ճամփորդությունը բարեհաջող սկսվեց, բայց դա երկար չտևեց։ Շուտով վերաբերմունքը փոխվեց։ Թուրքերն սկսեցին թալանել, բռնաբարել կանանց, սպանել երեխաներին, և ի վերջո դժբախտները գլխովին բնաջնջվեցին։ Դիակները նետում էին գետերը և, ինչպես հաղորդում են ականատեսները, դիակների զանգվածից ջուրը կանգ էր առնում։ Ամբողջ տեղի ունեցածը անհնար է նկարագրել և վերաբերում է ներկա պատերազմի իրենց ողբերգականությամբ ամենաահավոր դրվագներին։ Կարելի է ենթադրել, որ ամեն ինչ կազմակերպվել էր խստիվ ծրագրով, և տվյալներ կան կարծելու, որ այդ ծրագիրը հուշել էին գերմանացիները։ Գերմանացիները հետամուտ էին բացորոշ ազգային գժտություն հրահրել և հայերին բնաջնջելով՝ ռուսական զորքերին կանխապես զրկել աջակցությունից։ Չէ որ իզուր չէին Գերմանիայում հնչում Ռոհրբախի և ուրիշների համանման կոչերը։

Սակավաթիվ փրկվածները ներկայումս վերադառնում են հիմա արդեն մեր գրված շրջակա գյուղերից։ Նրանցից բացի, Էրզրումի առանձին թրքական տներում, ինչպես ասում են, կան իսլամացված հայ գերուհիներ։ Հնարավոր է, որ նրանք վախենում են երևալ՝ ճնշվելով հարազատ կրոնին դավաճանելու ամոթից։ Թուրքերի բոլոր զոհերին փնտրել գտնելու համար թերևս հարկ լինի համատարած ստուգել թուրքերի տները։

«Армянский вестник», 1916, № 7.

209. ՄԻ ՇԱՐՔ ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՈՃԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1915—1916 ԹԹ.

Հայերի աքսորի և կոտորածի կազմակերպիչների թվում աչքի էին ընկել մեծ թվով թուրք բժիշկներ, որոնցից շատերը անմիջականորեն պատասխանատու են դաժան արարքների համար։ Ոմանք իրենց գործընկերների սպանողներն էին, հափշտակելով նրանց ունեցվածքը, և իսլամիզմի շատագովներ։ Մյուսները հետագա սերունդներին կհետաքրքրեն նրանով, որ ծծվոր տիֆի վիրուս էին պատվաստում հայ զինվորներին. .

Թուրք բժիշկներն ու մանրէաբանները օգտվեցին նպաստավոր առիթից, որպեսզի հիվանդների վրա փորձեն իրենց երևակայական պատվաստանյութը ծծվոր տիֆի դեմ։

«Մահվան դատապարտվածների վրա փորձեր դնելու» հրամանն ու դրա թույլտվությունը բխում էին սանիտարական վարչությունից։ Որպես փորձաէակներ ընտրվել էին հայերը։ Նախքան սպանելը առնվազն կարելի էր օգտագործել նրանց։

Հայաստանում փորձերին ձեռնամուխ եղան անհապաղ... Փորձի ենթարկվողների մեծ մասը մեռնում էր մի քանի օրից։ Պատվաստումները շարունակվում էին մեծ ընդգրկումներով։ Երիտասարդ, ամրակազմ հայ զինվորներին հավաքեցին աշխատանքային գումարտակներում և բռնությամբ պատվաստումներ արեցին նրանց։ Կ. Պոլսի թերթերը մերթ ընդ մերթ խոսք էին բացում հրաշքի և գիտական մեծ հայտնագործության մասին։ Շնորհավորական հեռագրեր էին ստացվում անվերջ։

Քաղաքական հանդեսներում և բժշկական տեղեկագրերում տպագրված հոդվածներում հաղորդվում էր, որ վիճակագրական տվյալները հիանալի են։ Բայց այդ խանդավառությունը երկար չտևեց, աստիճանաբար փոխարինվելով հիասթափության ու բազմանշանակ լռության։ Եթե մի քանի թուրք բժիշկներ իսկապես գիտական նպատակներ էին հետապնդում, ապա մյուսների համար տվյալ դեպքում դա «անցանկալի անձանց» ոչնչացնելու անվրեպ ու արագ միջոց էր։

Եվ իրոք, շշուկով հաղորդում էին փորձերի մանրամասները։ Փորձի էին ենթակա ոչ թե ծովախոզուկներ կամ ճագարներ, այլ երիտասարդ, հիանալի մարմնակազմվածքով հայերը, որոնք ոչ մի հանցագործություն կամ զանցանք չէին կատարել։ Այդ նոր տեսակի փորձակենդանիներին ներարկում էին տիֆավարակ սպիտակուցազերծված արյուն, որը եռացված չէր մինչև 56°, հետևաբար և «ակտիվազերծված» չէր։

Այս տխուր գործերն անցկացվել էին 1915—1916 թթ. Երզնկայում ախտաբանական կազմախոսության պրոֆեսոր Համդի բեյի և նրա օգնականների կողմից՝ 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թևֆիկ Սալիմի կարգադրությամբ։

Շատ քաղաքացիներ ու զինվորականներ, այդ թվում և հայ բժիշկներ էին ներկա լինում այդ հանրահայտ ներարկումներին. որոնց պատվաստանյութը, ինչպես հենց նոր նշեցինք, պատրաստված էր պարզունակ եղանակով և ամեն մի գիտական տեսության հակառակ։

Մենք մի կողմ ենք թողնում ինչպես փրկվածների, այնպես էլ այդ փորձերին ներկա եղած հայ բժիշկների վկայությունները, որպեսզի լսենք մեր թուրք գործակիցների հայտարարությունները։

Ահա վիրաբույժ Հայդար Ջեմալի ստորագրությամբ բաց նամակը ներքին գործերի մինիստրին, որը տպագրված է «Turkdje Stambul» թերթում (23 դեկտեմբերի 1918 թ. № 45)։

«Ձերդ գերազանցություն, պարոն մինիստր։

Այն պահին, երբ պատրաստվում են քննել հայերի տեղահանության հարցը, ես նկատում եմ գլխավորապես գեներալ նահանգապետներին ու պետերին մեղադրելու միտում...

Իմ կողմից պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը հաղորդելու գիտության անվան տակ կատարված վայրագությունների մասին...

1915 թվականին, դեկտեմբեր ամսին Երզնկայում 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թևֆիկ Սալիմի կարգադրությամբ բծավոր տիֆով հիվանդներից վերցված արյունը առանց «ակտիվաղերծման» օգտագործվել էր որպես պատվաստանյութ անմեղ հայերի վրա, որոնք դատապարտված էին աքսորման։ Նման փորձերը սովորաբար դրվում էին որոշակի փորձակենդանիների վրա։

Այդ գործողությունների հետևանքով փորձի ենթարկվող անձանցից շատերը հիվանդանում էին ու մեռնում։ Նախքան նրանց պատվաստումներ անելը նրանց խաբում էին, հայտարարելով, թե այդ պատվաստումներն արվում են որպես նախազգուշական միջոց բծավոր տիֆի դեմ։

Այդ փորձերի կազմակերպիչ Համդի Սուադը՝ օսմանյան բժշկական դպրոցի ախտաբանական կազմախոսության պրոֆեսորը, իր ուսումնասիրությունների արդյունքները տպագրելով «Gazette Médicale militaire de Constantinople»-ում, հայտարարել էր, թե դրանք կատարվել էին մահապարտների վրա, մինչդեռ Ձեր խոնարհ ծառան ականատես է և կարող է հաստատել, որ պրոֆեսորի մահաբեր գիտափորձերի օբյեկտները ոչ մի ուրիշ մեղք չունեին, բացի այն, որ հայ էին։ Այդ փաստերը կարող են հաստատել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի գլխավոր բժիշկ դոկտոր Ռեֆեթ բեյը, երկու հայ բժիշկներ, որոնք աշխատում էին նրա հետ, ինչպես նաև Երզնկայի կարմիր խաչի գլխավոր բժիշկ դոկտոր Սելահէդդին բեյը։ Եվ այս-

պես, Ձեր խոնարհ ծառան հայտարարում է, որ քաղաքական հանցագործությունների հետ մեկտեղ կատարվել են նաև գիտական հանցագործություններ, որոնց մասին պատրաստ եմ տալու ցանկացած պարզաբանումները»։

Ահա մի ուրիշ նամակ, որը դոկտոր Սելահէդդինը հասցեագրել է «Turkdje Stambul» թուրքերեն թերթին և տպագրվել է այդ թերթի № 46-ում՝ 1918 թ. դեկտեմբերի 24-ին. «Վիրաբույժ Հայդար Ջեմալի կողմից ներքին գործերի մինիստրին հասցեագրված բաց նամակում երեկ ես հիշատակվել էի իբրև որոշ փաստերի անմիջական ականատես։ Իրազեկ լինելով նրան, ինչ տեղի է ունեցել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցում, ես խղճիս պարտքն եմ համարում պարզաբանել այդ գործը...

1915 թ. այն հայերից շատերին, որոնք դժվարությամբ թաքնվել էին Երզնկայում, ընտրեցին և որպես ենթափորձայիններ տեղավորեցին քաղաքի կենտրոնական հիվանդանոցում, որպեսզի նրանց վրա մանրէաբանական փորձեր դնեն, որոնք սովորաբար դրվում էին ծովախոզուկների ու ճագարների վրա։ Այդպես զոհվեցին շատ հայեր...»։

Ահա և երրորդ նամակը, որը նույն բժիշկը գրել է այդ նույն թեմայով և որը տպագրվել է «Alemdar» թուրքերեն թերթի 1919 թ. հունվարի 8-ի համարում։

«Եթե ընդունենք, որ «Միության և առաջադիմության» կառավարությունը (ավելացրեք նաև Գերմանիան) երբեք նշանակություն չի տվել խղճին, բարոյականությանը, պատվին ու սրբագործված բոլոր սովորույթներին, ապա կարելի է դյուրությամբ հասկանալ այն առաջնորդող գաղափարը, որը նրան մղել է այնքան շատ տառապանքներ պատճառելու հայերին։ Այն ժամանակ ոչ ոք հաշիվ չէր պահանջում կատարված վայրենությունների համար, և մարդիկ կարծում էին, թե այդ ամենը անպատիժ կմնա։

Հենց այդ մտայնությունն էլ մղեց բծավոր տիֆի պատվաստանյութի հետ կապված փորձեր իրականացնելուն Երզնկայում... Մեր հարուցած մեղադրանքները հաստատելու համար մենք բավականաչափ ապացույցներ ունենք։ Հետաքրքրական է, որ արդեն եղած բազմաթիվ ելույթների պատճառով ես հրաժարվեցի հրապարակել տվյալ խնդրին վերաբերող որևէ բան, այն դեպքում, երբ տվյալ հարցում միանգամայն անձեռնհաս բժիշկներ մամուլում հանդես եկան՝ հերքելով ճիշտ մեղադրանքները։ Հենց

դա էլ ինձ ստիպեց գրիչ վերցնել։ Պետք է նկատի ունենալ, որ այդ մարդիկ, որոնք սիրում են իրենց ցույց տալ, դիմում են ամբոխին և ապավինում զարմանահարույց միջոցների։

Եթե այդ գործին ձեռնամուխ լինեն ձեռնհաս ու հեղինակավոր անձինք, ապա ճշմարտությունը երևան կհանվի։ Այդ գործում էլ, ինչպես որ տեղահանության, ջարդերի ու կողոպուտների հարցում, կան մեղավորներ։

Մեր բժիշկները չպետք է տագնապի մատնվեն։ Մեղավորները հայտնի են։

Եթե կա մեկը, որը ցանկանում է հովանավորել հանցագործներին, թող սպասի այնքան, մինչև որ նորից իշխանության գլուխ անցնի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարությունը։

Ճշմարտությունը կպարզվի ոչ թե լրագրային հոդվածների հրապարակումով, այլ դատարանում»[40]։

Les persécutions contre les médecins arméniens. Pendant la guerre générale en Turquie. Constantinople, 1919, p. 7, 20—25.

210. 1916 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ԷՄԻԼ ԴՈՒՄԵՐԳԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

Երբ երիտթուրքերը հայտնվեցին Ստամբուլում, նրանք իրենց հետ բերեցին ազատախոհություն և, ասում են, նույնիսկ Մարսելիեզը։ Բայց այդ կատակերգությունը տևեց այնքան, որքան պահանջվեց հիացնելու... մի քանի դիվանագետների։ Մի որոշ ժամանակ անց պանիսլամականությունը փոխարինվեց պանթուրքիզմով, այսինքն՝ ամենաթունդ ազգայնամոլությամբ, որպիսին աշխարհը երբևէ կարող էր պատկերացնել։ «Ոչ մի քրիստոնյա Թուրքիայում»,— հայտարարեց Էնվեր փաշան։ Լորդ Բրայսի կարծիքով, որը նա արտահայտել էր Լորդերի պալատում արտասանած ճառում, դա լկտի արկածախնդիրների ավազակախումբ է, որն իրեն անվանում է «Թուրքիայի կառավարություն»...

Այն նույն պահին, երբ երիտթուրքերը գահընկեց արին Աբդուլ Համիդին, տեղի ունեցավ Ադանայի ջարդը Կիլիկիայում. հիմնովին ավերված քաղաքներ, 25 հազար սպանված հայեր։

Դա արդյո՞ք հեռացող վարչակարգի հրաժեշտն էր։ Ոչ, դա նորեկ վարչակարգի ողջույնն էր։

Այդ ժամանակվանից սկսած միանգամայն գաղտնի նախապատրաստվում էր հայ ազգի համատարած բնաջնջման ծրագիրը, և կոտորածը կազմակերպվել էր ջանադրաբար, հաշվենկատորեն ու մեթոդաբար...

1915 թ. ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը Ստամբուլում ձերբակալվեցին հայերի բոլոր ղեկավարները, իսկ շուտով նաև շատ ուրիշներ՝ գրողներ, բժիշկներ, պրոֆեսորներ։ Դրան նախորդել էր հայ բնակչության զինաթափումը և մուսուլմանների զինումը։ Բանտից ազատ էին արձակվել 30 հազար հանցագործներ։ Անգամ ծրագրված էր, ընդ որում շատ խնամքով, որ քրիստոնյա բնակչության տեղում բնակեցվելու են որոշակի թվով թուրք բնակիչներ՝ իրենց դիրքին համապատասխան։ Եվ, վերջապես, Էնվեր փաշան ուղարկել էր իր զարմիկ Ջևդեթ բեյին, որպեսզի սա գործեր հին Հայաստանի բուն սրտում. արդեն մարտին և ապրիլին կողոպտվել էին 500-ից ավելի գյուղեր և կոտորվել 25 000-ից ավելի հայեր Վանի և Էրզրումի վիլայեթներում։

Այնուհետև, մայիսի 20-ին, հրապարակվեց երիտթուրքական կոմիտեի և Էնվեր փաշայի հրամանը համընդհանուր տեղահանության մասին։ Իսկ տեղահանությունը նշանակում էր բնաջնջում երեք հաջորդական ձեռնարկումների միջոցով. դրանք էին կոտորածը, քարավանը և անապատը...

Այսօր չեզոք երկրներից ոչ մեկը չի ընդհատել իր դիվանագիտական հարաբերությունները երիտթուրքական կառավարության հետ, և նրանք բոլորն էլ հունվարի 1-ին ամանորյա շնորհավորանքներ փոխանակեցին նրա հետ...

Իսկ մե՞նք, ի՞նչ արեցինք մենք ինքներս, երբ Աբդուլ Համիդը բացեց այն արյունոտ ճանապարհը, որով ընթանում են երիտթուրքերը։ Անցյալում կատարված ահավոր ջարդերի, հետևաբար և ներկայիս զարհուրելի կոտորածի համար պատասխանատու են Եվրոպայի առանց բացառության բոլոր ժողովուրդները։ Նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է, հարկավ, ոչ հավասար չափով, բայց պատասխանատվության նույնիսկ ամենաանշան բաժինը անչափ մեծ է...[41]։

Emile Doumergue. L'Arménie, les massacres et la question d'Orient. Conférences, études, documents. Paris, 1917, p. 23—25, 33—34.

211. Ս. Մ. ԿԻՐՈՎԻ «ՏԱՌԱՊՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՀՈԴՎԱԾԸ

Պետական դումայում արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովի արտասանած ճառում կար մի տեղ, որը չի կարելի չընդգծել։

Անդրադառնալով Էրզրումի անկմանը, մինիստրը նշեց, որ Վանից մեր նահանջին հաջորդած ժամանակամիջոցում թուրքերը տասնապատկել են իրենց դաժանությունները հայերի նկատմամբ։

Դաշնակից Գերմանիայի բարեհաճ հովանու ներքո, ասաց Ս. Դ. Սազոնովը, թուրքերն, ըստ երևույթին, մտադիր են իրագործել իրենց վաղեմի երազանքը՝ լիովին բնաջնջել հայ բնակչությանը, որը չի ձուլվում մուսուլմանական զանգվածին և այդպիսով խոչընդոտ է հանդիսանում թուրքական կայսրությունը տնտեսապես ու քաղաքականապես իրեն ենթարկելու գերմանական ծրագրերին։

Թուրքերը հրեշավոր երազանք են փայփայում բնաջնջելու Թուրքիայի ողջ հայ բնակչությանը։

Այդ մասին մենք միանգամայն հեղինակավոր հայտարարություն ենք լսում։

Եվ սարսափում ես, որ առաջին հայացքից այդ անհավանակն գաղափարը փաստական հիմք ունի։

Թուրքիայի դեմ մղվող պատերազմի առաջին իսկ օրերից մենք գիտենք, որ թուրքերը միանգամայն աներկմտորեն արդարացնում էին նշված կասկածը։ Օրը օրին Թուրքահայաստանից գալիս էին միևնույն մղձավանջային լուրերը։ Թե այնտեղ ինչ էին անում թուրքերը, այդ մասին չեն պատմի հայ կանանց ու երեխաների արցունքները, այլ անասելի զարհուրանք ու տառապանքներ ապրած խաղաղ հայ բնակչության բարբարոսաբար հեղված արյունն է միայն որոշ, խիստ հեռավոր պատկերացում տալիս հայ ժողովրդի գողգոթայի մասին։

Միգուցե հետո միայն, երբ կանգ կառնեն մարդկային արյան գետերը, մի նոր Դանթե կնկարագրի միլիոնավոր մարդկանց ահասարսուռ տառապանքները։

Եվ այդ նկարագրությունը կմտցնեն մեծ պատերազմի պատմության մեջ, և ամեն մեկի ուժերը չէ, որ կբավեն ավելի ուշադիր կանգ առնելու նրա վրա, քանի որ այն համառարած մղձավանջ կլինի։

Եվ այդ մասին հարկ է, որ հիշենք բոլորս, որ նստած ենք այստեղ՝ թիկունքում։

Չէ որ առաջինը մենք պետք է օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացած, իրենց հայրենի օջախները թողած հայ գաղթականներին։

Նրանք շատ են, և դրանով իսկ ավելի ողբալի է նրանց վիճակը։

Անպատված, անարգված, թշվառության մատնված՝ նրանք գեգերում են մեր երկրամասում ապաստան որոնելով։ Եվ, իհարկե, միշտ չէ, որ գտնում են։ Որովհետև նրանք շատ շատ են։

Մենք էլ ենք շատ, բայց գաղթականները հաճախ չունեն ամենաանհրաժեշտը՝ օթևան ու հաց։

Այնտեղ՝ հայրենիքում, նրանք կորցրել են ամեն ինչ, կարոտացել են պահպանել միայն իրենց կյանքը, և այստեղ մեզ մոտ նրանք պետք է գտնեն մնացածը։

Չէ որ նրանք մեզ մոտ են գալիս այն վայրերից, որտեղ նրանց ուզում են կոտորել, և մենք պետք է ընդունենք նրանց և ջերմացնենք[42]*։*

ՍԵՐՄԻ

«Терек», 1916, 14 февраля, № 5417, Владикавказ.

212. 1916 Թ. ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

Պարոնա՛յք, տիկնա՛յք։

Երբ քսան տարի առաջ սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերը արյամբ հեղեղեցին Հայաստանը, Եվրոպայում միայն մի քանի ձայն, մի քանի վրդովված ձայներ բողոքեցին մի ամբողջ ժողովրդի խեղդելու դեմ։ Ֆրանսիայում խիստ ընդդիմադիր կուսակցությունների պատկանող աննշան թվով մարդիկ միավորվեցին պաշտպանելու խորապես անարգված մարդկության իրավունքները։ Դուք գիտեք նրանց. Ժորես, Դրնի Կոջեն, Գաբրիել Սեայ, Էռնեստ Լավիս, Ժակ Ֆինո, Վիկտոր Բեբար, Ֆրանսիս դը Պրեսանսե, հայր Շարմբտան, Պիեռ Կայար, Կլեմանսո, Ալբեր Վանդալ և էլի մի քանի մարդ, որոնց անունները, ներեցեք, չեմ մտաբերում։ Մնացածները համր էին։ Շատերը խորին խղճահարությամբ համակվեցին հայերի հանդեպ, բայց քանի որ սովորաբար մարդկանց մեծամասնությունը երես

է թեքում դժբախտներից, ապա շատերը կարողացան հիմքեր գտնել մեղադրելու զոհերին, նրանց կշտամբելով թուլակամության մեջ։ Ոմանք, պաշտպան կանգնելով դահիճներին, վերջիններիս պատկերում էին իբրև մարդկանց, որոնք պատժում են խռովարարների կամ վրեժ լուծում այն թուրք բնակիչների համար, որոնց սնանկացրել են քրիստոնյա վաշխառուները...

Սակայն, չնայած հայասերների բողոքներին և մի քանի տեբությունների վեհերոտ դիմումներին, հակառակ թուրքական կառավարության հավաստիացումներին, հալածանքները՝ երբեմն խլացված ու քողարկված, չէին դադարում։ Պալատական հեղաշրջումը անհարկի փոխեց կայսրության ղեկավարներին։ Երիտթուրքերը, տիրանալով իշխանությանը, իրենց դաժանությամբ գերազանցեցին Աբդուլ Համիդին, կազմակերպելով Ադանայի կոտորածը։ Ժամանակի ընթացքում Արևելքի այդ քրիստոնյաների դժբախտությունները ձանձրացրին մարդկանց, հայերը մնում էին օտար քաղաքակիրթ Եվրոպային։ Հայ ժողովրդին մենք գիտեինք ոչ այլ կերպ, քան այն հարվածներից, որ հասցնում էին նրան։ Մենք պատկերացում չունեինք ոչ նրա անցյալի, ոչ նրա ոգու և դավանանքի, ոչ էլ նրա բաղձանքների մասին։ Անհասկանալի էր մնում, թե ինչու էին նրան կոտորում։

Այդպես էր դեռ մի երկու տարի առաջ։ Պայթեց համաշխարհային պատերազմը։ Թուրքիան նրա մեջ մտավ որպես Գերմանիայի կամակատար։ Եվ հանկարծ Հայաստանն ու նրա մարտիրոսության պատճառները միանգամայն այլ լույսի ներքո հառնեցին Ֆրանսիայի առջև։ Մենք հասկացանք, որ թուրք կեզեքչի և հայի տևական անհավասար պայքարը՝ բռնակալության պայքարն է, բարբարոսության պայքարը ընդդեմ արդարության ու ազատության ոգու։ Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ հռված մարող աչքերով, որոնց մեջ հույսի շող առկայծեց, մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մեռնում Արևելքում և մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, մտածում էր այնպես, ինչպես մենք ենք մտածում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեր նման գնահատում էր իմաստությունը, արդարությունը, քերթությունը, արվեստը։ Սա էր նրա անքավելի հանցանքը։

Հետևաբար, տիկնայք և պարոնայք, հարկավոր է, որ Ֆրանսիացիների հավաքը պատշաճը հատուցի անհուն դժբախտության մատնված այդ ժողովրդին։ Մենք կատարում ենք մեր սրբազան պարտքը, Հայաստանին մատուցում նրան արժանի մեծարանքներ՝ ոչ այնքան բոլորին հայտնի տառապանքների համար, որքան այն տոկունության համար, որով նա դրանք տանում է...

Ի դեպ, մեզ սիրող այդ ժողովրդին բնաջնջելու որոշումն ընդունվել էր թուրքական կառավարության խորհրդակցություններում։ Բոլոր հայերը, որքան որ կային Սամսոնից մինչև Դիարբեքիր՝ երիտասարդներ, ծերունիներ, կանայք, երեխա՛հր, նրանք բոլորը զոհվեցին, սպանվելով սուլթանի հրամանով, Գերմանիայի հանցակցությամբ։

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կվերածնվի։

Արյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու։ Ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, երբե՛ք չի մեռնի...[43]։

La Revue des "Amitiés franco-étrangères", № 4, 1916, mai-juin, p. 33—35.

218. ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԻՑ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ)

Գերմանիան... դաշնակիցն է Թուրքիայի, որն իր ձեռքերը ներկեց հայերի արյամբ և այս պատերազմի ընթացքում անչափ մեծացրեց իր մեղքը, դաժանագույն կոտորածի մատնելով տարաբախտ հայ ժողովրդին...[44]։

Карл Либкнехт. Мой процесс по документам. Петроград, 1918, с. 54.

214. ՋԵՅՄՍ ԲՐԱՅՍԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Հայերի) կոտորածը հետևանքն է այն քաղաքականության, որը, որքանով կարելի է պարզել, մի որոշ փուլում ընդունել էր այն անսկզբունք բախտախնդիրների ավազակախումբը, որի ձեռքին է ներկայումս գտնվում իշխանությունը Թուրքական

կայսրությունում։ Նրանք չէին համարձակվում այն իրագործել այնքան ժամանակ, քանի դեռ չէր հասել նպաստավոր պահը։ Այդ պահը, թվում էր, ամենուրեք վրա հասավ ապրիլին [1915 թ.], երբ հրամաններ արձակվեցին, որոնք բոլոր դեպքերում բխում էին Կոստանդնուպոլսից և որոնք պաշտոնատար անձինք պարտավոր էին կատարել հեռացվելու վախից։

Դա հայ քրիստոնյաների դեմ ուղղված մահմեդականների ցասման բռնկում չէր։ Ամեն ինչ կատարվեց կառավարության կամքով, և ոչ թե կրոնական մոլեռանդության, այլ քաղաքական նկատառումների հետևանք էր. կառավարությունն ուզում էր ազատվել ոչ մուսուլման ժողովուրդներից, որոնք խախտում էին կայսրության միատարրությունը, կազմելով մի տարր, որը միշտ չէ, որ պատրաստ էր հնազանդվելու կեղեքման...

Կենտրոնական կառավարությունը իր ներկայացուցիչներն ուներ տեղերում՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի տեղական բաժանմունքների ղեկավարները, տեղական ժանդարմերիայի պետերը, կամ նույնիսկ նահանգապետների վարչական ապարատի առանձին ստորին պաշտոնյաներ։ Եթե գթասիրտ նահանգապետները անփութություն էին դրսևորում հրահանգները կատարելիս, անտեսում էին դրանք, նրանց հարկադրում էին ենթարկվել, իսկ եթե նրանք հրաժարվում էին ենթարկվել, նրանց պաշտոնանկ էին անում, փոխարինելով ավելի հարմարվող հաջորդներով։ Այսպես թե այնպես, կենտրոնական կառավարությունը ճնշում էր գործադրում և վերահսկում ծրագրի կատարումը, որը բխում էր միայն իրենից. երիտթուրք մինիստրներն ու նրանց պոլսեցի պաշտոնակիցներն են անմիջականորեն և անձամբ լիակատար պատասխանատվություն կրում այն ահռելի ոճրագործության համար, որը 1915 թվականին ամայացրեց Մերձավոր արևելքը[45]։

A Speach delivered by Lord Bryce in the House of Lords, (The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916, p. 653).

215. Հ. Ա. ԳԻԲՈՆՍԻ «ՎԵՐՋԻՆ ՋԱՐԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԳՐՔԻՑ

Թուրքիայում գտնվելուս հենց սկզբից և ամենից մոտ ինձ հաջողվեց ծանոթանալ հայ բնակչության հետ և հասկանալ նրանց վերաբերմունքը երիտթուրքերի և նոր վարչակարգի

նկատմամբ։ 1909 թ. ապրիլին Ադանայում անձամբ ականատես եմ եղել, թե հայերի խանդավառությամբ լի նվիրվածությունը ինչպես փոխհատուցվեց նրանց 30 000 բնակչության կոտորածով Կիլիկիայում և Հյուսիսային Սիրիայում։ Ես հետևում էի նրանց տրամադրությանը նախքան այդ կոտորածը. աչքիս առաջ հեղվեց նրանց արյունը, իսկ երբ ջարդի մոլեգնությունը հանդարտվեց, ինձ նորից վիճակվեց ապրել նրանց շրջանում՝ տարբեր վայրերում։

Ես խիստ դժկամորեն եմ հիշատակում անձս, բայց ես դա գիտակցաբար եմ անում, որպեսզի խուսափեմ այն առարկումներից, որոնք հիմնված են իմ իբր թե «անիրազեկության վրա» այդ հարցերում կամ այն բանի վրա, թե «չի կարելի կողքից ճիշտ կարծիք կազմել դրա մասին»։ Ես շատ անգամ եմ համոզվել, որ թուրքերն ու նրանց բարեկամները հայկական հարցի մասին խոսելիս պարզապես ժխտում են բոլոր փաստերը և վկայակոչում են անգիտությունն ու անտեղյակությունը։ Այդ պատճառով պարտքս եմ համարում հայտարարել, որ նվազագույն իսկ կասկած չունեմ այս գրքում բերածս բոլոր փաստերի լիակատար հավաստիության նկատմամբ և այդ փաստերի առթիվ արտահայտածս կարծիքը երկարամյա դիտարկումների և բոլոր տվյալների մանրակրկիտ ուսումնասիրման արդյունքն է։

1915 թվականի ապրիլից օսմանյան կառավարությունը ամբողջ Թուրքիայում սիստեմատիկաբար սկսեց կենսագործել հայ ժողովրդին բնաջնջելու խնամքով մտածված ծրագիրը։ Վեց ամսվա ընթացքում սպանվել է մեկ միլիոն հայ։ Զոհերի թիվն ու նրանց բնաջնջման եղանակը աննախադեպ են նորագույն պատմության մեջ։

1914 թվականի աշնանը Թուրքերը բանակի կարիքների համար սկսեցին մուսուլմաններին համահավասար զորակոչել նաև քրիստոնյաներին։ Վեց ամիս շարունակ ամբողջ Թուրքիայում հայերը զենքի էին կոչվում։ Նրանք, ովքեր կարող էին փրկագնվել, զորակոչից ազատվում էին։ Բայց ընդամենը մի քանի շաբաթ անց դադարեցին ուշադրություն առնել ազատվելու մասին տրված փաստաթղթերը, և ազատվածներին սկսեցին բանակ տանել։ Կոստանդնուպոլսից ոչ հեռու ապրող հայերից առավել երիտասարդներին, ինչպես որ Բալկանյան պատերազմի ժամանակ, նշանակում էին գործող բանակ։ Ավելի տարեցներն ու հեռավոր գավառների բնակիչներն օգտագործվում էին ամրություն-

ների և երկաթուղային ու խճուղային ճանապարհների կառուցման աշխատանքներում...

1915 թվականի ապրիլին Կ. Պոլսից Փոքր Ասիայի տեղական իշխանություններին հրաման ուղարկվեց բոլոր միջոցները ձեռնարկել «նախապես» կանխելու և ճնշելու հայերի հնարավոր ապստամբությունը։ Հրամանում ասված էր, թե հայերն սպառնում են կայսրության անվտանգությանը, ուստի և պետական պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ամենաանհողդողդ խստությունը կիրառել թշնամուն վնասազերծելու համար։

Որոշ պաշտոնատար անձինք պատասխանել էին, թե իրենք հայերի կողմից ոչ մի կասկածելի բան չեն նկատել և կառավարությանը հիշեցրել էին, որ հայերը առավել ևս անվտանգ են, քանի որ զինաթափված են, իսկ առավել առողջ և ուժեղ տարրը բանակ է վերցված։ Ինչպես երևում է, որոշ թուրքերի մեջ դեռ բոլորովին չէին չքացել խիղճն ու կարեկցանքի զգացումը։ Բայց բողոքողները շուտով փոխարինվել էին, իսկ պաշտոնյաների մեծ մասը ուրախությամբ էր արձագանքել Կ. Պոլսի արտահայտած ցանկությանը։

Սկսվեց հայերի ջարդի նոր շրջանը։

Սկզբում, կարգադրությունները հնարավորին չափ նվազագույն վտանգով կատարելու նպատակով, քաղաքներում և գյուղերում դեռևս մնացած հայ արական բնակչությունը կանչվում էր հատուկ նախատեսված հարմար վայրեր, մեծ մասամբ քաղաքից դուրս, ընդ որում ոստիկանությունը հետևում էր, որ ոչ ոք չխուսափի հրավերից։ Ոչ ոք մոռացված չէր։ Երբ այդ վայրերում հայ տղամարդկանց մի որոշ քանակություն էր հավաքվում, նրանց սրախողխող էին անում... Դա արվում էր սովորաբար փոքր քաղաքներում ու շեներում։ Ավելի խոշոր կենտրոններում միշտ չէ, որ հարմար էր լինում այդպես հեշտ ու հանգիստ կատարել Կ. Պոլսից ստացված կարգադրությունները։ Հայ վերնախավը սպանվում էր փողոցներում ու սեփական տներում։ Եթե բանը տեղի էր ունենում ներքին նահանգներում, ապա հայ տղամարդիկ պահակախմբի հսկողությամբ ուղարկվում էին որևէ այլ քաղաք։ Մի քանի ժամ անց պահակախումբը վերադառնում էր առանց իր գերիների։ Առափնյա քաղաքներում հայերին նավակներով ուղարկում էին այլ նավահանգիստ։ Նավակները զարմանալիորեն արագ էին վերադառնում՝ առանց ուղեվորների։

Հաղորդակցության ուղիներ կառուցելու համար զորակոչված հայերի ապստամբությունը կանխելու նպատակով հայերին բաժանում էին խմբերի՝ յուրաքանչյուրը 300—500 մարդուց, և այդ խմբերն աշխատում էին իրարից մի քանի վերստ հեռավորության վրա։ Թուրքական ամբողջ կանոնավոր գնդեր, որոնք նշանակված էին «հայկական հեղափոխությունը ճնշելու» համար, հանկարծակի վրա էին տալիս այդ խմբերի վրա, որոնք խաղաղ աշխատում էին քլունգներով, լինգերով ու բահերով, և չթողնելով, որ նրանք ուշքի գան, գնդակահարում էին նրանց։ Եթե որևէ մեկը փորձում էր փախչել, նրան հետապնդելու էին նետվում հեծյալ թուրքեր և խողխողում կամ գնդակահարում էին նրան։

Այդ կերպ հաշվեհարդար տեսնելով հայ ցեղի արական կեսի հետ, թուրքական կառավարությունը չհանգստացավ։ Ծերունիները, կանայք ու երեխաները, այնուամենայնիվ, վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրության համար։ Հայերին պետք էր իսպառ բնաջնջել ամբողջ Թուրքիայում։ Բայց դա ինչպես անել, որպեսզի Վաշինգտոնում թուրքական դեսպանը և գերմանական թերթերը կարողանային ասել նույնը, ինչ ասում էին և շարունակում են ասել. «Սպանվել են միայն խռովարարները, որոնք բռնվել են հանցանքի վայրում դեռևս արնաթաթախ կարմիր ձեռքերով կամ էլ մերկացվել են թուրքական կառավարությանը դավաճանելու մեջ. իսկ կանանց և երեխաներին ոչ ոք ձեռք չի տվել»... Թալեաթ բեյը, սակայն, արագ ելք գտավ՝ կազմելով գործողությունների նոր ծրագիր...

Մայիս ամսից մինչև հոկտեմբեր օսմանյան կառավարությունը կենսագործեց մի ավելի դժոխային ծրագիր, քան ամենահավոր կոտորածը։ Ամբողջ Փոքր Ասիայով մեկ հրամաններ ուղարկվեցին ողջ հայ բնակչությանը Միջագետք աքսորելու մասին։ Հրամանները միանգամայն որոշակի էին և շատ հանգամանալի։ Ոչ մի շեն անգամ չէր մոռացված։ Մունետիկները բարձրաձայն ազդարարում էին բոլոր հայերին այսինչ ժամին պատրաստ լինել մեկնելու նշանակման անհայտ վայր։ Բացառություն չէր արվում ոչ հիվանդների, ոչ ծերունիների, ոչ էլ հղի կանանց համար։ Միայն հարուստ վաճառականները, գեղեցիկ կանայք ու աղջիկները կարող էին խուսափել ընդհանուր ճակատագրից, ընդունելով իսլամը. ի պատիվ նրանց պետք է ասել, որ շատ քչերը դիմեցին դրան։ Ճանապարհին նախապատրաստվելու համար տրվում էր երկու օրից մինչև վեց ժամ։ Արգելվում

էր հետները վերցնել որևէ գույք, ընտանի կենդանիներ կամ նույնիսկ ավելորդ հագուստ։ Պարեն ու անկողնի պարագաներ կարելի էր վերցնել այնքան, որքան յուրաքանչյուր ոք կարող էր կրել։ Եվ նրանց վիճակվեց «ոտքով» երեքից մինչև վեց շաբաթ տևող անցում կատարել, և՛ կիզիչ արևի տակ, խանձված անապատով, և՛ ձյունապատ լեռնանցքներով։

Երբ նրանք անցնում էին քրիստոնեական գյուղերի միջով, որտեղ դեռևս աքսորի հրաման չէր ստացվել, նրանց թույլ չէր տրվում ոչ ուտելիք, ոչ էլ որևէ օգնություն ընդունել բնակիչներից։ Հիվանդները, ծերերն ու երեխաները ընկնում էին ճամփեզրերին, որպեսզի այլևս ոտքի չելնեն։ Երկունքի ցավերով բռնված կանանց առաջ էին հրում սվիններով կամ մտրակի հարվածներով, մինչև որ վրա էր հասնում ազատվելու պահը, որից հետո նրանց անօգնական թողնում էին ճանապարհին մեռնելու՝ արևաքամ լինելով։ Փոքրիշատե գրավիչ աղջիկներին վերցնում էին հարեմները... Ով կարողանում էր՝ վերջ էր տալիս իր կյանքին։ Խելակորույս մայրերը իրենց երեխաներին նետում էին գետը, որ վերջ տան նրանց տառապանքներին։ Հարյուր հազարավոր կանայք ու երեխաներ էին մեռնում սովից, ծարավից, ուժասպառ լինելուց ու ամոթից։

Ճանապարհի սկզբին տարաբախտ ճամփորդների թիվը նվազում էր օրեցօր, վերջում՝ ժամ առ ժամ։ Այդ տառապյալների ամենաբուռն ցանկությունը մեռնելն էր։ Էլ ինչ հույս կարող էր մնալ, էլ ինչ ուժ մնար, անգամ ամենադիմացկունների մեջ, երբ ճանապարհի վերջը չէր երևում։ Եվ եթե որևէ մեկը փորձում էր շեղվել այդ դժոխային ճանապարհից, տեղնուտեղը անխնա սրախողխող էր լինում կամ գնդակահարվում...

Ահա այն միջոցները, որոնցով շարունակում են արմատախիլ անել «հայկական հեղափոխությունը» Փոքր Ասիայում։ Ես հենց նոր էի գրել ամբողջ վերն ասվածը, երբ ինձ այցելեց մի անգլուհի, որին ճանաչում եմ շատ տարիներ։ Նա ընդամենը մի ամիս է, ինչ վերադարձել է Ադանայից։ Նրա պատմածները հաստատում են շատ ուրիշներ։ Ականատեսների վկայած նույնական փաստեր ունեմ ամերիկյան, անգլիական, գերմանական և շվեյցարական աղբյուրներից։ Ահա թե ինձ ինչ պատմեց ինձ ծանոթ անգլուհին. «Հայերի բռնագաղթը շարունակվում է։ Այդ դժբախտները ներքին նահանգներից ուղարկվում են Բաղդադի երկաթուղու երկայնքով, Ադանայով, մահվան ճանապարհով։

Այնտեղ, որտեղ երկաթուղիներ կան, դրանցից օգտվում են, որպարագացնեն բնաջնջման գործը։ Երկաթուղիներ չունեցող հեռավոր նահանգներից տեղաշարժվելու սովորական եղանակը արդեն բավականաչափ արագ չի թվում անողոք դահիճներին։ Օ՜։ Ինչքան ավելի լավ կլիներ, եթե շարունակեին նրանց պարզապես սպանել, ինչպես Աբդուլ Համիդի օրոք։ Ես եղել եմ Ադանայի երկաթուղային կայարանում և տեսել, թե կանայք ինչպես էին վագոնի պատուհաններից մեկնում իրենց երեխաներին և արցունքն աչքերին աղաչում ջուր տալ նրանց։ Հաց արդեն նրանք չէին խնդրում. միայն ջուր՝ մի կում ջուր։ Կայարանում ջրմուղ կար, և ես ծնկաչոք աղաչում էի թուրք ժանդարմին, որ թույլ տա նրանց ջուր տամ խմելու։ Բայց գնացքը շարժվեց, և դեռ երկար ժամանակ լսվում էին այդ տարաբախտների աղեկտուր ճիչերը։ Եվ սա բնավ էլ եզակի փաստ չէ։ Ամեն օր կրկնվում էր նույնը։ Լորդ Բրայսը հաշվել էր 800 000 զոհեր։ Այժմ արդեն հասել է միլիոնի։ Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել, որ մարդիկ ընդունակ լինեին նման մահվան մատնելու անգամ վայրի կենդանիներին»։

Բայց Վաշինգտոնում թուրքական դեսպանը հայտարարում է, թե ամենը ամբողջովին մտացածին բան է և թե թուրքերը երբեք չեն սպանել ոչ կանանց, ոչ երեխաների։

Քննարկելով Ամերիկյան կոմիտեի հաշվետվությունը հայերի կոտորածի մասին, Նյու Յորքում թուրքական ինժեներական հյուպատոս Ջելալ Մյունիֆ բեյը հայտարարել է. «Որքան էլ որ ցավալի են այդ իրադարձությունները, այդուհանդերձ, մենք կարող ենք ասել, որ դրանց մեղավորները հայերն իրենք են»։ Այնուհետև Ջելալ Մյունիֆ բեյը պատմել է, թե հայերը մտադրվել էին հեղափոխություն կատարել և թուրք զինվորների կողմից սպանվել էին միայն օրինական իշխանություններին դիմադրելու դեպքում, երբ նրանց բռնում էին դեռ չչորացած արյունը ձեռքերի վրա։

Ահա այն մշտական բացատրությունը, որ տրվում է Թուրքիայում հայերի կոտորածի առթիվ։ Մենք դա լսել էինք 1895—1896 և 1909 թթ.։ Դա նորից լսեցինք 1915 թվականին։ Բայց ոչ ոք երբեք փաստեր չի բերել, որոնք հաստատեին այդ խոսքերի իսկությունը։ Մյուս կողմից, միանգամայն ակներև է, որ նման բացատրությունը ոչ մի քննադատության չի դիմանում և ոչ մի կերպ չի կարելի վկայակոչել դա...

Եթե վերջին ջարդերի ու բռնագաղթի ժամանակ, ինչպես որ 1909 թվականին Ադանայում, հայերը որոշ դեպքերում զենքը ձեռքներին պաշտպանում էլ էին իրենց տունն ու ընտանիքը, ապա նրանք դրան դիմեցին միայն այն ժամանակ, երբ լիովին համոզվեցին, որ օսմանյան կառավարությունն իրենց խաբել է և որ իրենց ոչնչացման հարցը լուծված է։ Ի դեպ, երբ Ստամբուլի կառավարությունը, ինչպես որ Ադանայում էր եղել, նրանց նորից խոստանում էր իր հովանավորությունը և պաշտպանությունը մոլեռանդ մուսուլմաններից, նրանք նորից պատրաստ էին հավատալու։ Եվ ամեն անգամ նրանց խաբում էին. թող ընթերցողը չմոռանա, որ սա ասում եմ ականատեսների վկայությունների հիման վրա։ Օսմանյան կառավարության ներկայացուցիչները դրժում էին տված խոսքը և սպանում հայերին, հենց որ սրանք զենքը վայր էին դնում։

...Եվ այսպես, լիովին համոզվելով, որ հայերին կոտորելու և տեղահանելու բոլոր դեպքերը, որոնք տեղի էին ունեցել միաժամանակ ամբողջ Թուրքիայում, կարելի է համարել Կոստանդնուպոլսում մշակված կարգադրությունների պլանաչափ կենսագործման հետևանք, մենք ստիպված ենք կատարվածի համար ամբողջ պատասխանատվությունը դնել Ստամբուլի թուրքական կառավարության անդամների վրա։ Ակներև է, որ հայերի ջարդն ու տեղահանությունը, որ անընդհատ իրագործվում էին 1915 թ. ապրիլից մինչև նոյեմբեր, կատարվում էին ինչ-որ մեկի կողմից խստիվ մտածված ծրագրով, որն ի կատար էր ածվում ինչ-որ մեկի հրամանով, ինչ-ինչ նպատակներով։

Բայց ո՞վ էր մտահղացել այդ ծրագիրը։ Ո՞վ էր հրամայել այն իրագործել։ Ի՞նչ նպատակներով։

Այդ ծրագրի գաղափարը բնավ էլ նոր չէ։ Մենք վերն ասել ենք, թե հայերը ինչպես հարուցեցին երիտթուրքերի ատելությունն ու անվստահությունը նրանով, որ հավատացել էին վերջիններիս անկեղծությանը և կարծել էին, թե նախատեսվող սահմանադրությունն էլ հենց լինելու է իսկական սահմանադրություն։ Ադանայի կոտորածը հայերին ոչնչացնելու առաջին փորձն էր նրանց կողմից, ովքեր, զավթելով Աբդուլ Համիդի իշխանությունը, ժառանգել էին նաև գործելու նրա եղանակը։ Այդ ժամանակ քանիցս լսել էի, թե իրենց խելքով ու դիրքով երևելի երիտթուրքերը ինչպես էին համոզված կրկնում տարածված արտահայտությունը. «Հայկական հարցից ազատվելու միակ եղանակը հենց իրենցից՝ հայերից ազատվելն է»։ Ադանայում սկսած հայերի ջարդն ավարտին հասցնելու միտքը քաղաքական ուղեցույց գաղափար էր վեց տարի շարունակ։ Այն իրագործելու առիթը վերջապես ներկայացավ։ Դրանից, անշուշտ, անմիջապես օգտվեցին։

Դաշնակիցների կողմից Դարդանելի պաշարման սկզբին Կոստանդնուպոլսում բոլորը գիտեին, որ հասել է ժամանակը, երբ վերջապես կիրագործվի հայ ազգի մահավճիռը, որը վաղուց արդեն կայացված էր և միայն միաժամանակ թաքցված էր Բարձր Դռան ու սերասքյարության (ռազմական նախարարության.— Ծանոթ. թարգմ.) դիվաններում։ Մի՞թե հնարավոր է ենթադրել, թե գերմանական դեսպանությունը այդ մասին չգիտեր և թե Թալեաթ բեյը իր հրամաններն արձակում էր, դրանց մասին չծանուցելով բարոն Վանգենհայմին։ Մի՞թե հնարավոր է հավատալ, թե Բեռլինի գերմանական կառավարությունը իրազեկ չէր թուրքական ծրագրին, անգամ եթե Կոստանդնուպոլսում գտնվող նրա ներկայացուցիչները աչքաթող էին արել դրա մասին ծանուցել նրան։ Բերենք փաստեր։

Թուրքական սուլթանի մեկուկես միլիոն հպատակների՝ անմեղ քրիստոնյաների կոտորածը կանխորոշված ու կարգադրված էր Կոստանդնուպոլսից։

Կոստանդնուպոլսում միակ մարդը, որը իր կառավարության աջակցության դեպքում կարող էր մի խոսքով խոչընդոտել հայերին կոտորելու և տեղահանելու հրամանի արձակումը, գերմանական դեսպանն էր։

Ենթադրենք նույնիսկ, թե կոտորածի առաջին շաբաթներին գերմանական դեսպանը դա անմիջապես չէր հասկացել, բայց նրա բարոյական պարտականությունն էր, քանի դեռ շատ ուշ չէր, օգտագործել Գերմանիայի ամբողջ ազդեցությունը՝ կանգնեցնելու այն իրադարձությունները, որոնք նորագույն պատմության ամենասև էջն են։

Հենց այն փաստով, որ Գերմանիան հրաժարվեց պաշտպան կանգնել հայերին դեռ նախքան նրանց կոտորածի սկիզբը, արդյոք դրանով նա չդարձա՞վ հանցակիցը այն մեկ միլիոն մարդկանց նկատմամբ զենքով, քաղցով, ծարավով, բռնությամբ և այլ գազանություններով գործադրված հանցագործություններին ու սպանությունների, որոնց միակ մեղքը այն էր, որ նրանք

խանդարում էին նրա ծրագրերին և որոնք առավել ևս իրավազուրկ ու անպաշտպան էին, քանի որ քրիստոնյա էին։

Քանի որ Գերմանիան հրաժարվեց հանդես գալ ի պաշտպանություն հայերի նաև հենց ջարդի ժամանակ, արդյո՞ք նա particeps criminis չէ։

Ասիական Թուրքիայի մեծ քաղաքներից մեկում մի ամերիկացի քարոզչախոս, որի հետ անձամբ ծանոթ եմ և որի խոսքին, անշուշտ, կարելի է հավատալ, տեսել էր, թե մի գերմանացի սպա ինչպես էր թուրքական հրետանու կրակն անձամբ ուղղում հայ խաղաղ բնակչության վրա։ Առնվազն ևս երկու այլ վայրերում գերմանական հյուպատոսները աջակցում էին հայերի ջարդի ու տեղահանության թուրքական քաղաքականությանը...[46]։

Герберт Адамс Гиббонс. Последние избиения в Армении. Факты и ответственности. Перевод с английского. Петроград, 1916.

216. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՌԸՆԵ ՊԻՆՈՆԻ «ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ» ԳՐՔԻՑ

Երիտթուրքերը միայն հարմար առիթի էին սպասում իրենց չարամիտ դիտավորությունները իրագործելու համար։ Սահմանային իրադարձությունները բավարար պատրվակ եղան դրա համար. Դարդանելում դաշնակիցների անհաջող գրոհներից հետո պահը նպաստավոր էր։ Մայիսի 20-ի (մեր տոմարով հունիսի 2-ի) հրովարտակով կարգադրվում էր հայերին զանգվածաբար աքսորել Միջագետք...

Հայերի՝ կանանց, երեխաների և ծերունիների տեղահանությունը լոկ նենգորեն քողարկված մահավճիռ էր։ Տեղում կոտորելը ավելի մարդկային կլիներ. այն մարդկանց կազատեր ահավոր տառապանքներից։

Ամենուրեք նկատվում էր գրեթե միևնույն պատկերը։ Նախ և առաջ դա անզեն հայ զինվորների ջարդն էր նրանց զինված ընկերների կողմից. այդ դժբախտներին հարյուրներով, հազարներով տանում էին ամայի վայրեր և այնտեղ գնդակահարում։ Նրանց, ում խնայել էին, ստիպում էին կատարել ամենածանր աշխատանքները, որից նրանք բոլորն էլ աստիճանաբար կործանվում էին։ Քաղաքներում և գյուղերում հրաման էր ստացվել

տեղահանության մասին. սովորաբար ժամկետի ոչ մի հետաձգում չի ընձեռվում։ Հայերը չեն կարող հետները վերցնել իրենց ունեցվածքը, այն վաճառվում է շատ հազվադեպ և էժան գնով։ Ում էլ որ հաջողվում է վաճառքից որոշ գումար ստանալ, այն երկար չի մնում նրա մոտ։ Զինվորները, թուրք ժանդարմները, քրդերը հարձակվում են խղճուկ սայլախմբերի վրա, ինչպես գայլերի ոհմակը իր զոհի վրա. նրանք թալանում են այն ամենը, ինչ թեկուզ որոշ արժեք է ներկայացնում։ Ծերունիներին սպանում են, կամ էլ նրանք զոհվում են սովից ու հոգնատանջ լինելուց։ Ջահել կանանց ու աղջիկներին բռնությամբ տանում են թուրքական հարեմները կամ էլ հանձնում զինվորներին, որ զվարճանան։ Փոքրահասակ երեխաներին խլում են մայրերից և հանձնում մուսուլմաններին...

Բոլոր ամենավայրենի, ամենանողկալի մարդկային կրքերը հագուրդ են ստանում թշվառ, աստիճանաբար հալվող և ոչնչացող ամբոխի հաշվին։ Եթե առանձին մարդիկ հասնում էլ են Միջագետք, ապա նրանք այնտեղ մնում են անապատային կամ ճահճուտ վայրերում, առանց օթևանի ու սննդի. տոթը, խոնավությունը վերջնականապես կործանում են տարաբախտներին, որոնք սովոր են խստաշունչ, բայց առողջ լեռնային կլիմայի... Հայերի քարավանների վերջին մնացորդները վերջ են գտնում նրանով, որ մահանում են տենդախտից և աղքատությունից...

Մենք կարող էինք ավելացնել այս պատմությունների թիվը, հավաքել վկայություն առ վկայություն, պատմել, օրինակ, այն մասին, թե շատ վայրերում նախքան քարավանները ճանապարհելը, թուրք դահիճները ինչպես էին գավազաններով ջարդում մարդկանց ոտքերի ներբաները, ասես հավաստելով, որ նրանք հեռու չեն գնա, բայց դրանով լոկ մանրամասներ կավելացնեինք ընդհանուր պատկերին։

Այն, ինչ ապշեցնում է այդ բոլոր պատմություններում, կանոնավոր ու շարունակական կոտորածի կազմակերպումն է։ Սա այն դեպքը չէ, երբ տարբեր ազգության տեղական ներկայացուցիչները վայրենի անիշխանության մոլուցքով նետվում են միմյանց վրա։ Ոչ։ Գործողությունն սկսվում է գյուղերում կախված կառավարական հրովարտակից. հրահանգները Կոստանդնուպոլսից ուղարկվում են բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ նրանցից՝ կատարողներին։ Հեռախոսը հսկայական դեր է խաղում այդ մռայլ դրամայում... Ամեն ինչ անցնում է օրի-

նակելի կարգ ու կանոնով, քաղաքներում չեն սպանում, որ խուսափեն վարակից...

Այստեղ սխալվել անհնար է. հետապնդվող նպատակը հայ ժողովրդի համատարած բնաջնջումն է կոտորածի կամ բռնի իսլամացման միջոցով։ Նրանցից հետո հարձակման կենթարկվեն նաև մյուս քրիստոնյա ժողովուրդները... Նրանց հերթը կհասնի, երբ պահը հարմար թվա թուրքական կառավարությանը։ Դա կառավարության դավանանքն է, անհողդողդ վճիռը, դա 1908 թվականի «լիբերալ» հեղափոխության ծայրահեղ հետևանքն է։ Երիտթուրքական կառավարությունն է լիովին պատասխանատու «հայկական սարսափների» համար։ Եթե նույնիսկ ապացուցվեր էլ, թե Հայաստանում դավադրություններ ու խռովություններ են եղել, թեև այդպիսի դեպք չի եղել, այդ պատասխանատվությունը, միևնույն է, չէր նվազի. ոչինչ չի կարող արդարացնել ոչ բանակ զորակոչված հայերի բնաջնջումը զինակից եղբայրների ձեռքով, ոչ երեխաների ու ծերունիների կոտորածը, ոչ կենդանի մնացածների բռնի իսլամացումը, ոչ կազմակերպված կողոպուտը, ոչ էլ այն անհամար զազրելի արարքները, որոնք գրիչը հրաժարվում է նկարագրել...[47]։

René Pinon. La suppression des Arméniens. Méthode alemande-travail turc. Paris, 1916, p. 27—29, 59—61.

217. ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատերազմի սկզբին հայկական հողերի մի մասը (մինչև Վանի շրջանը) գրավվել էր ռուսական զորքերի կողմից, իսկ մնացած մասերում թուրքերը շարունակում էին իրենց նախկին քաղաքականությունը, կանգ չառնելով այնպիսի վիթխարի ջարդերի առաջ, որպեսիք կատարել չէր հանդգնում անգամ Լենթեմուրը։

...Մենք արդեն հնարավորություն չունեինք օգտագործելու 1915 թ. «Կապույտ գիրքը» հայկական հարցի վերաբերյալ, որտեղ ժողովված են փաստեր, որոնք հիրավի սահմռկեցուցիչ են իրենց աներևակայելի դաժանություններով։ Ինչ էլ որ ասեն թուրքերի պաշտպանները, ինչպես էլ որ վկայակոչեն «պետական անհրաժեշտության» փաստարկները, ոչինչ չի կարող արդարացնել զանգվածային ջարդերը, ամբողջ նահանգների ամայացումը, գյուղերի ու քաղաքների տեղահանվող բնակչությանը սովամահության դատապարտելը և այլն։ Բնավ էլ երևակայական չէ այն հաշվումը, որը մատնանշում է, որ ներկա պատերազմի սկզբին թուրքական մարզերում մահապատիժներից, սպանություններից, սովից, հյուծվածությունից, հրդեհների մեջ, աքսորի ճանապարհին, բնակության համար նշանակված անապատներում և այլուր զոհվել է ավելի քան մեկ միլիոն շունչ հայ բնակչություն...[48]։

Валерий Брюсов. Летопись исторических судеб армянского народа. М., 1918, с. 100, 115.

218. ԱՆՐԻ ԲԱՐԲԻՐ «ՍԱՐՍԱՓ ԵՐԿՐՈՒՄ» ԳՐՔԻՑ

Ապրիլ, 1916 թ.

Տրապիզոնի տասնչորս հազար սպանվածները։ Նույնիսկ Աբդուլ Համիդի հրամանով իրականացված զանգվածային ջարդերի չարաղետ ժամանակներում (1894—96), անգամ երիտթուրքերի օրոք Ադանայի համակոտորածի շրջանում (1909) հայ ժողովուրդը երբեք չէր իմացել այն տառապանքները, որ կրեց, և դեռ այժմ էլ կրում է։ Ռուսների կողմից Տրապիզոնի գրավումը ինձ հնարավորություն տվեց իմանալու, թե այդ քաղաքում ինչ էր տեղի ունեցել 1915 թ. հունիսի վերջերին, երբ թուրքերը սառնասրտորեն և վճռականորեն ձեռնամուխ էին եղել բնաջնջման իրենց գործին...

Ես հնարավորություն էի ստացել լրացնելու ջարդերի մասին իմ ունեցած նյութերը։

Գլխավոր նավահանգիստն այն բոլոր նավերի, որոնք լողում են Սև ծովով, Բաթումի հարևանը, որ մշտապես կապերի մեջ էր Օդեսայի, Նովոռոսիյսկի և բոլոր խոշոր միջերկրածովյան նավահանգիստների հետ, Թուրքիայի խորքը և Պարսկաստան, Էրզրում, Խոյ, Թավրիզ և Թեհրան ուղղվող քարավանների ճանապարհի սկիզբը՝ Տրապիզոնը քաղաքակիրթ քաղաք էր թվում։ Փողոցներում կարելի էր հանդիպել ոչ միայն թուրքերի, հույների, հայերի, պարսիկների և լեռներից իջած լազերի, այլև բազմաթիվ եվրոպացիների... Սարիղամիշի տակ կրած պար-

տությունից հետո, ինչպես արդեն ասել եմ, բոլոր քրիստոնյա զինվորները՝ հույներ թե հայեր, զինաթափվեցին և ուղարկվեցին Տրապիզոնից Գյումուշհանե ճանապարհին բարեկարգման աշխատանքների, որտեղ նրանք գրեթե բոլորն էլ զոհվեցին զբրկանքներից ու խստաշունչ եղանակից։ 1915 թ. հունիսի 28-ին հայ բնակչությանը հրաման տրվեց պատրաստ լինել հինգ օր հետո թողնելու Տրապիզոնը։ Այդ հրամանի հետ միաժամանակ թուրքական իշխանությունները ձերբակալեցին հայ անվանի մարդկանց ու մտավորականության ներկայացուցիչներին՝ ընդհանուր հաշվով մոտ վեց հարյուր մարդու։ Այդ բոլոր ձերբակալվածներին նստեցրել էին փոխադրանավեր իբր Սամսոն տեղափոխելու համար։ Սակայն մի քանի ժամ անց բոլոր նավերը վերադարձան դատարկ։ Պարզվեց, որ բաց ծովում նրանց սպասելիս են եղել ուրիշ փոխադրանավեր ժանդարմներով և... «բոլոր հայերը սպանվել էին ու ծովը նետվել...»։ Երբ նշանակված հնգօրյա ժամկետն անցավ, հայ բնակչությանը փոքր խմբերով սկսեցին քրդերի ու ավազակների (այսինքն ժանդարմների) ուղեկցությամբ դուրս բերել քաղաքից, որտեղ ճանապարհների առաջին իսկ խաչմերուկում նրանց ջարդում էին կամ ստրկության վաճառում։

Քաղաքի դարպասի մոտ՝ Ջևեզլիկ գյուղի մոտակայքում ահասարսուռ տեսարաններ են սարքվում։ Սկսվում է նրանից, որ տղամարդկանց առանձնացնում են իրենց կանանցից ու երեխաներից, որոնց ահաբեկ ճիչերը լցնում են շրջակայքը։ Այնուհետև թրերի, դաշույնների հարվածներով կամ հրացանի կրակոցներով, ամենահնար դաժանություններով կոտորում են տղամարդկանց։ Հողը, խոտը հագենում են արյամբ։ Երեխաները սարսափից լայն բացված աչքերով, անդադար բարձրաձայն աղաղակում են ու լաց լինում. կանայք, ձեռքերով հուսահատ շարժումներ անելով, աղաչում են խնայել, կորցնում են գիտակցությունը, վայր ընկնում։ Նոր հեղված արյան զգայագրգիռ հոտը տարածվում է շուրջ բոլորը մի քանի հարյուր մետրի վրա։ Բայց ահա չարաղետ գործը մոտենում է ավարտին... Տղամարդկանց վերջ տալուց հետո դահիճները ուղղվում են դեպի կանանց, ջահել աղջիկների ու երեխաների ահուդողի մատնված ամբոխը։ Սարսափից կիսախելագար, կրծքներին սեղմելով իրենց փոքրիկներին, մայրերը հետևում են մոտեցող թուրքերին, որոնցից ոմանք ոտից գլուխ արյան մեջ են... Ահա նրանք մոտեցան։

Նրանց աչքերը փայլում են... նրանք ծիծաղում են... նրանք ծաղրում են... Հենց նոր իրենց ամուսինների, հայրերի և որդիների մահը տեսած կանանց տառապանքները չեն վերջացել։ Բարբարոսներն ահա ճանկեցին մի քանի երեխա, տարան մինչև մոտակա ժայռերը և այնտեղից նետեցին ծովը։ Նրանք մոլեգնորեն ջանում են մայրերի ձեռքերից պոկել փոքրիկներին, որոնց վերջիններս սեղմել են կրծքներին. մայրերն արդեն չորացած աչքերով իրենք են իրենց ձեռքով խեղդում իրենց երեխաներին, որ նրանց փրկեն թուրքերի խոշտանգումներից։ Սրտակեղեք ճիչերը, սարսափի ու տառապանքների ճիչերը երկինք են հասնում... Լսվում են թախանձագին պաղատանքներ, խելահեղ ճիչաղաղակներ, հոգևարքի հառաչանքներ... Մեկը մյուսի հետևից երեխաներին պոկում են մայրերի գրկերից։ Մանկիկների ոտքերից բռնելով, դահիճները նրանց գլխիկները փշրում են ժայռերին կամ նրանց բռնում են երկու ձեռքով և ծնկին հարվածելով ջարդում ողնաշարը... Երբ բոլոր երեխաները կոտորված են, հորդան անցնում է կանանց։ Նրանց մեծ մասը ընկած է կտրված կոկորդով կամ թրի հարվածով փողոտված որովայնով։ Ցարաբախտների ճիչերն այնքան ահավոր են, որ լսելի են Տրապիզոնում։

Մի հույն՝ բժիշկ Մետաքսան, որ ականատես էր եղել այդ ահասարսուռ տեսարաններին, տեղնուտեղը խելագարվել էր...

Ոչ մի տրապիզոնցի հայ չխուսափեց ընդհանուր ճակատագրից։ Բոլորը, անգամ նրանք, որոնք ապաստան էին գտել բարեկամ հույների կամ թուրքերի ընտանիքներում, հանվել էին այնտեղից ու կոտորվել։ Հարյուր հիսուն ջահել աղջիկների հաջողվել էր քաղաքում թաքնվել հույն միտրոպոլիտի հովանավորության ու ջանքերի շնորհիվ։ Թուրքական իշխանությունները իմացան այդ մասին, և «manu militari» (զինված ուժի միջոցով) աղջիկներին դուրս հանելով իրենց ապաստարաններից, բոլորին կամ բռնաբարեցին, կամ խեղդեցին, ոմանց՝ բացեիբաց, փողոցում, հենց միտրոպոլիտի տան մուտքի առաջ։ Վերջում նշում եմ հայ արքեպիսկոպոս Դուրյանի սպանությունը, որը դատարանի առաջ կանգնելու համար հրավիրված լինելով էրզրում՝ սպանվել էր այնտեղ մեկնելու ճանապարհին։

Տարագիրների «խաչի» անավոր ուղին։ Թուրքիայի սարսափելի ոճրագործությունը՝ մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի հե-

տեղականորեն բնաջնջելը, թուրքական կառավարության և Գերմանիայի հանցագործությունն է։

Իրոք, գրեթե ամենուրեք, ուր ռուսական հարձակմանը զուգընթաց կարելիություն էր ընձեռվում իմանալու աղետի մասին իր համապարփակությամբ ու իսկությամբ, ասում եմ, գրեթե ամենուրեք նկատվում էր, որ մուսուլմանական բնակչության մի մասը ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Էրզրումում միանգամայն հաշտ ու խաղաղ էր ապրում հայերի հետ և ցանկանում էր միշտ էլ այդպես ապրել։ Գտնվում էին նույնիսկ պաշտոնյաներ, ցավոք, այդպիսիները քիչ էին, որոնք մարդասիրությունից մղված՝ իրենց կարելին էին անում մեղմացնելու թուրքական կառավարության հրամանների անողոք խստությունը, որոնց Նրանք ենթարկվում էին սրտի ցավով։

Այսպիսով, չարագործության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է կառավարության վրա։ Սակայն ընդսմին չպետք է մոռանալ և պետք է ի լուր ամենի հայտարարել ու կրկնել, որ այդ չարագործությունը կանխելու, հենց սկզբում այն կասեցնելու համար բավական էր Գերմանիայի մի շարժումը, նրա ներկայացուցչի կես խոսքը Էնվեր փաշային, այն նույն Էնվերին, որը սառնասրտորեն հայտարարում էր. «Ես մտադիր չեմ այլևս հանդուրժել քրիստոնյաներին Թուրքիայում»։ Բայց Գերմանիան ոչ միայն չասաց ոչ մի բառ, ոչ միայն չշարժեց անգամ մատը, ոչ, նա ինքն էր դեռ օգնում դահիճներին, նրանց տալով պետական խորհուրդներ և փորձիմաց ցուցումներ։

1915 թ. ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը Կոստանդնուպոլսում հայ մտավորականության բոլոր հայտնի ներկայացուցիչները՝ երեսփոխաններ, պրոֆեսորներ, բժիշկներ, արտիստներ, գրողներ և այլն, բոլորը՝ առանց կրոնի ու կուսակցության խտրության, որոնց այս կամ այն կերպ պետք էր լռեցնել, ձերբակալվեցին, ուղարկվեցին գավառներ և մեծ մասամբ աքսորի ճանապարհին խողխողվեցին։

Նույն բախտը վիճակվեց նաև գավառների մտավորականությանը։ Առանց ներկայացնելու որևէ ամբաստանագիր, առանց որևէ դատի, առանց աննշան իսկ առիթի, եթե առիթ չհամարենք նրանց հայկական ծագումը, նրանք բոլորն էլ նետվեցին բանտերը, կամ աքսորվեցին, կամ սպանվեցին։ Դրա հետ միաժամանակ հայ բնակչությանը զինաթափեցին և զինեցին մուսուլմաններին։ Քրդերից ավազակախմբեր էին կազմում։ Բանտերից ազատում էին հանցագործներին, որպեսզի նրանցից կազմեին «չեթեներ», որոնք այնուհետև ծառայում էին որպես տարագիրներին ուղեկցող պահակախմբեր։ 1915 թ. մայիսի 20-ի հրեշավոր հրամանագիրը, որով ռազմական մինիստր Էնվեր փաշան երիտթուրքական կոմիտեի անունից հրամայեց Հայաստանի, Անատոլիայի և Կիլիկիայի բոլոր հայերին աքսորել արաբական անապատներ՝ Բաղդադի երկաթուղագծից հարավ, հայ ժողովրդի համար հնչեց իբրև թաղման զանգահարություն։ Եվ իրոք, այդ տեղահանությունը ոչ այլ ինչ էր, քան դարձյալ նույն կոտորածը, միայն թե իրար հաջորդող երեք գործողությամբ՝ քարավանանապատ-ջարդ։ Մի ամբողջ ժողովրդի բնաջնջում էտապային կարգով։

Բանն սկսվեց մայրաքաղաքից արձակված հրամանով, որը պատերին փակցվեց բոլոր քաղաքներում և գյուղերում։ Ընդսմին թուրք բարձր աստիճանավորները ստացան նաև որոշ «օգտակար» ցուցումներ։ Հեռագիրն ու հեռախոսը արագացրին հրամանների տարածումը։ Իսկ հրամաններով ազդարարվում էր, որ ամբողջ հայ բնակչությունը պետք է պատրաստ լինի հույժ սեղմ ժամկետում գաղթելու հեռավոր նահանգներ, որտեղ հնարավոր էր հասնել ոչ թե օրերի, ոչ թե շաբաթների, այլ երկար ամիսների ընթացքում։ Այս անմարդկային միջոցառմանը, ինչպես տեսանք, ավելացրին նաև ամբողջ շարժական ու անշարժ կայքի բռնագրավումը, ինչը Արևելքի առավել գործունյա, աշխատասեր ու քաղաքակիրթ ժողովուրդներից մեկին վերածում էր մուրացկանների։

Որոշ քաղաքներում միջոցներ ունեցողներին թույլատրվում էր իրենց համար սայլեր կամ գրաստներ ճարել խիստ թանկ գնով։ Բայց ամեն անգամ կամ գրեթե ամեն անգամ, երբ քարավանները քաղաքի սահմաններից դուրս էին գալիս, այդ սայլերն ու կենդանիները անմիջապես խլվում էին։ Այդպիսով հարուստներն էլ, աղքատներն էլ վերջ ի վերջո մնում էին նրանով, ինչ ունեին իրենց վրա։ Բացի այդ, մուսուլմանական բնակչությանն էլ էր հատկապես խստիվ արգելված ինչպես որևէ բան գնել տարագրյալներից, այնպես էլ վաճառել նրանց։ Ի դեպ, միևնույն է, առնեին թե վաճառեին, ամբողջը անմիջապես խլվում էր և այդպիսով, ոչ ահավոր ու հեռավոր տարագրության մեկնելուց առաջ, ոչ էլ ճանապարհին գժբախտները ոչ մի մթերք չէին կարողանում հայթայթել իրենց համար։

գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքում սպիտակին չտային կմախքների բաց կույտեր, քանի որ գրեթե ոչ մի տեղ մարդախողխողները ոչ ժամանակ ունեին, ոչ էլ նեղություն էին քաշում թաղելու իրենց զոհերին։

Այդ ընդարձակ մարզերում, որտեղ մի ժամանակ հայկական աշխույժ, ծաղկուն շեներ էին, այսօր թագավորում են ավերածությունն ու անմարդաբնակությունը։

Տակավին թուրքական մնացող մարզերում հայ բնակչության բնաջնջումը, թվում է, էլ ավելի կատարյալ է եղել և իրագործվել է ավելի սիստեմատիկաբար, քան կովկասյան սահմանին հարող շրջաններում. այնտեղ դահիճները ժամանակ ունեին ազատ գործելու։ Դրա օրինակն է Խարբերդը։

«Խարբերդում,— գրում է այդ քաղաքի արդեն հիշատակածս ամերիկյան հյուպատոսը,— բռնագաղթն սկսվեց մի քանի հազար տղամարդկանց ձերբակալումով։ Գիշերը նրանց տարան շրջակա լեռները։ Նրանց թվում էին մի հայ արքեպիսկոպոս, հայկական ճեմարանի ուսուցչապետեր և քաղաքի երևելիները, ինչպես նաև այն բոլոր հայ զինվորներն ու զինակոչման ենթակա բոլոր տղամարդիկ, որոնք, սակայն, ազատվելու հարկ էին վճարել... Նրանցից ոչ մեկը չվերադարձավ։

Հուլիսի 15-ի առավոտյան ձերբակալեցին ևս ութ հարյուր մարդու։ Իսկ հաջորդ օրը նրանք նույնպես ուղարկվեցին անմարդաբնակ լեռնային շրջաններ։ Այնտեղ, տասնչորսական մարդ խումբ առ խումբ կապկպված (պարանի երկարությունը այդքան էր թույլ տալիս)՝ նրանք գնդակահարվել էին։

Հարևան գյուղերից մեկում հայերի մի այլ խմբի փակել էին մզկիթում և շրջակա տներում։ Այնտեղ նրանք մնացել էին երեք օր առանց հացի ու ջրի, որից հետո նրանց տարել էին մոտակա հովիտը, կանգնեցրել էին այնտեղ ժայռապարի մոտ ու գնդակահարել։ Գնդակահարությունից հետո դեռևս շնչողներին խողխողել էին սվիններով կամ մորթել դաշույններով»...

Այդ բարբարոսական մահապատիժները սովորաբար ուղեկցվում էին անմարդկային դաժան կտտանքներով։ Այսպես, Սվազից Խարբերդ ճանապարհին (այդ ճանապարհով աքսորավայր էր քշվել մոտ կես միլիոն հայ) թուրք սպաները հրամայել էին կանանց առանձնացնել տղամարդկանցից։ Սարսափահար կանանց հավաքել էին մի խմբի մեջ։ Իսկ նրանցից մի քանի քայլի վրա շարել էին պարանով միմյանց կապված տղամարդկանց։

Ամենուր առաջին հերթին ջանում էին իրարից անջատել տղամարդկանց ու կանանց, տղամարդկանց հեռացնել և երեխաներին խլել ծնողներից։ Ամենուրեք ուղևորության ընթացքում, իսկ երբեմն էլ մեկնելուց անմիջապես հետո և նույնիսկ նախքան դա ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին, հատկապես ունևոր ընտանիքներից, խլում էին ու փակում հատուկ, հաճախ պարզապես հասարակաց տներում։

Իսկ այնուհետև դժբախտները ճանապարհ էին ընկնում Անատոլիայի ջրազուրկ լեռներով ու ամայի հարթավայրերով։ Ամռան անտանելի շոգին, արևի մահացու ճառագայթների տակ գնում էին նրանք՝ սովահար, ոժաստպառ, բոկոտն, ցնցոտիների մեջ կորած, բազմամբոխ գնում էին դեպի անհայտ տարագրություն, որտեղ, նրանք գիտեին, որ փրկվելու ոչ մի հույս չունեն։ Ուղեկցող պահակախմբի ժանդարմները մտրակներով ու ճիպոտներով էին քշում տարաբախտներին, հոգնածությունից կամ հյուծվածությունից ընկնողների՝ կյանքին վերջ տալով սվիններով կամ թրի հարվածներով...

Վերջապես, շատ տեղերում, ինչպես, օրինակ, դա եղել է Քեմախ Բողազում[49]՝ Երզնկայից տասներկու ժամվա հեռավորության վրա, որտեղ Եփրատը սեղմված զառիթափ ժայռերով, առաջ է սլանում նեղ ժապավենով, դիմում էին ավելի արագ հաշվեհարդարի՝ զանգվածային կոտորածի, «խմբային» սպանդի։

Եվ բոլոր աքսորյալների հազիվ քառորդ մասն էր հասնում մինչև նշանակման վայր...

Մի համատարած գերեզմանոց, մի վիթխարի գերեզման՝ ահա թե պաշտոնական Գերմանիայի կողմից խրախուսվող երիտթուրքերը ինչի վերածեցին արյան գետերի մեջ խեղդվող Հայաստանը...

1916 թ. հուլիս։

Սարսափի երկիրը։ *Ով էլ որ այժմ անցնում է ամայացած Հայաստանով, չի կարող չցնցվել, այնքան արտառոց շատ բան են ասում ավերակների ու մահվան այդ անվերջ հեռաստաններ։ Չկա մի ծառ, մի ժայռ, մի կտոր մամուռ, որ վկա չլինի մարդու կոտորածի, որ պղծված չլինի հեղված արյան վտակներով։ Չկա մի առվակ, գետ կամ գետակ, որ դեպի հավիտենական մոռացություն քշած-տարած չլինի հարյուրավոր, հազարավոր մեռյալ մարմիններ։ Չկա մի անդունդ, մի կիրճ, որոնք չլինեին*

Այդ ամենն արվում էր անշտապ, մեթոդաբար, այն ժամանակ, երբ սպաները հանգիստ գլանակ էին ծխում, դատարկաբանում կանանց հետ, գրկելով այդ անբախտներից առավել գեղեցիկներին... Հանկարծ սպաներից մեկը հրաման տվեց։ Ուղեկցող պահակախմբի մի ժանդարմ, միայն մեկը, լիցքավորեց հրացանը, կանգնեց տղամարդկանց շարքի ծայրում, նշան բռնեց ու կրակեց... Մի հայ ընկավ... Ժանդարմը նորից լցարկեց ու նորից կրակեց... Ահաբեկված կանայք ողբ ու կոծ բարձրացրին, իսկ սարսափահար տղամարդիկ հաշվում էին կրակոցները, որոնք մեկը մյուսի հետևից սպանում էին նրանց։ Երբ ընկավ վերջինը, ժանդարմները մտրակների հարվածներով հավաքեցին կանանց ու քշեցին առաջ։ Նրանց, ովքեր հրաժարվում էին գնալ, տեղում սպանում էին... Իսկ քարավանը շարունակում էր քայլել, ճանապարհին թողնելով մի շարք զոհեր, որոնցից ոմանք դեռ թպրտում էին հոգևարքի ջղաձգություններում։

Սվազից մինչև Խարբերդ ընկած այդ ճանապարհը այնպիսի համակոտորածների ասպարեզ է եղել, որ վերջին ամռանը դրանով անցած ճանապարհորդները այն անվանում էին «Նեխության դժոխք»։ Հնարավոր չի եղել կանգնել ձիերին ջրելու։ Աներևակայելի ժանտահոտ էր փչում հազարավոր անթաղ դիակներից։ Ամեն ինչ վարակված էր՝ և՛ գետերի ջուրը, և՛ նույնիսկ ջրհորները։ Ներկայումս այդ ամբողջ շրջանը լի է մարդկային գանգերով...

Բիթլիսի, Մուշի, Սասունի գավառներում, որտեղ շուրջ 150 հազար հայ էր ապրում, հիմա տաս հազար էլ չի մնացել, այն էլ հիմնականում կանայք ու երեխաներ, որոնց թշվառ վիճակը ողբալի է։

Բիթլիսում ջարդն սկսվել է միայն 1915 թ. հուլիսին՝ Վանից ռուսական զորքերի ժամանակավոր նահանջից հետո։ Այդ քաղաքում սպանությունները պարբերական բնույթ էին կրում։ Քուրդական կամ թուրքական գյուղեր կամ լեռներ փախած հայերին խմբերով բերում էին քաղաք, որ այստեղ կոտորեն։ Սկզբում արհեստավորները՝ կառագործները, դարբինները, դերձակները և կոշկակարները, որոնց կարիքն զգում էր թուրքական բանակը, խնայվել էին, բայց հայ կամավորների և ռուս զինվորների կողմից Բիթլիսի գրավումից մի քանի օր առաջ նրանց բոլորին խեղդել էին։

Այս շրջանում ևս, ինչպես որ բոլոր գյուղերում, ինչպես որ

բուն Բիթլիսում, գտնում են բազմաթիվ մարդկային ոսկորներ, տարաբախտ հայ զոհերի կմախքներ։

Հացահատիկի գրեթե բոլոր ամբարները (այս երկրներում հացահատիկը պահվում է գետնի մեջ փորված խոր փոսերում) ծայրեծայր լիքն են իրար վրա լցված բազմաթիվ մարդկային ոսկորներով։ Բիթլիսում ապրող 18 000 հայերից կենդանի են մնացել մոտ 300—400 կին ու երեխա, և նրանք բոլորն էլ իսլամացվել են։

1916 թ. օգոստոս։

Երզնկայում։ Մեր ռուս դաշնակիցների կողմից Երզնկայի գրավումը ինձ կարելիություն ընձեռեց մեկ անգամ ևս ստուգել այն բոլոր ողբերգական մանրամասները, որոնց մասին ասել եմ նախորդ գլուխներում։

Այս քաղաքում, որը գտնվում է 20—25 վերստ երկարությամբ կանաչ մի հովտում, շրջապատված բարձր լեռներով, կային երեք հազար հայկական, վեց հազար թուրքական և քսանհինգ հունական տներ։ Մինչդեռ, մտնելով Երզնկա, ռուսներն այնտեղ գտան ոչ ավելի, քան մի տասնյակ հայուհիների, որոնք, օգտվելով թուրքերի մեջ տիրող խուճապից, փախել էին հարեմներից, որտեղ նրանց փակի տակ էին պահում։

Այն ամենը, ինչ նրանք պատմեցին իրենց տառապանքների ու սպանդի մասին, որի մեջ զոհվել էին նրանց բոլոր հարազատները, հաստատեց այն, ինչ արդեն ասել եմ, բայց բոլոր ողբերգական պատմություններից է՛լ ավելի ահավոր մի տեսարան հնարավորություն տվեց դատելու թուրքական իշխանությունների աներևակայելի դաժանությունների մասին։

Այդ տեսարանը այն մարդկային ոսկորներն են, որոնք այժմ արդեն ճերմակել են ժամանակից, դեռևս հազարներով կարելի է տեսնել հովտում և այն շրջապատող լեռների լանջերին։ Դրանք աճյուններն են Էրզրումից, Խարբերդից, Բաբերդից և այլ վայրերից տեղահանված այն տարաբախտների, որոնց Միջագետք աքսորելու պատրվակով 1915 թ. հունիսին հսկայական թվով կոտորել էին Երզնկայի շրջակայքում։ Հենց այստեղ էր սպանվել Էրզրումի հայ եպիսկոպոս Սմբատ Սաղաթյանը, որի ճակատագրի մասին բուն Էրզրումում ոչինչ չէի կարողացել իմանալ պրպտումների ընթացքում։

Քաղաքի ոստիկանապետ Մեմդուխ բեյը այնպես հիմնովին

էր կողոպտել հայերին՝ նախքան կհրամայեր կոտորել նրանց, որ միանգամից հարստացել էր 50 000 թուրքական ոսկով (մոտ 1 250 000 ֆրանկ)։

Յուցաբերած ջանադրության համար որպես պարգև թուրքական կառավարությունը այդ ոստիկանապետին նշանակել էր Կաստեմոնիի նահանգապետ։

Հոգեառներին դիմադրածները։ Դատապարտվածների ապըստամբությունը... Վերջերս տեղի ունեցած ջարդերից հետո և նույնիսկ դրանցից առաջ, հենց որ հայտնի դարձան կառավարության բարբարոսական միջոցառումները, շատ հայ համայնքներ փորձեցին դիմադրություն կազմակերպել, բայց նրանց բոլոր փորձերը, որոնք նախօրոք և գրեթե ամենուրեք դատապարտված էին անհաջողության, մեծ մասամբ արագացնում էին միայն մասնակիցների կործանումը։

Հենց այդպես պատահեց Մարզվանում, որտեղ դիմադրության սոսկ ակնարկ էր եղել, Շապին-Գարահիսարում, որտեղ ապստամբների ավելի եռանդագին ջանքերը ընկճվեցին թուրք բնակչությանն օգնության կանչված կանոնավոր զորքերի կողմից, Ուրֆայում, որտեղ հայերը իսկական մարտի մեջ մտան ջարդարարների դեմ և տեղի տվեցին միայն նրանց դեմ ուղարկված կառավարական զորքերի բազմաքանակության առջև։ Կիլիկիայում ապստամբական շարժումն ավելի լայնորեն ծավալվեց, չնայած Սահակ եպիսկոպոսի ընդդիմությանը, որը, վախենալով իր հոտի ճակատագրի համար, ջանում էր Այնթապի եպիսկոպոսի հետ հանդարտեցնել հուզումը, ընդսմին զանազան խոստումներ տալով կառավարության անունից, որոնք, ինքնին հասկանալի է, երբեք չկատարվեցին։ Այսպես, օրինակ, Զոք Մարսվանի անվեհեր բնակչությունը, որը 1895 թ. աչքի էր ընկել իսկական արիությամբ, այժմ, հավատալով նման խոստումներին, դիմադրություն ցույց չէր տվել և ամբողջովին տարագրվել էր։

Զեյթունում ապստամբությունը կազմակերպել էին երիտասարդները, որոնք, թաքնվելով լեռներում, հաղթականորեն հետ էին մղել մի ամբողջ թուրքական գնդի հարձակումը, ընդ որում գրավելով զգալի քանակությամբ զենք ու զինամթերք։ Անընդհատ հարձակվելով իրենց կեղեքիչների վրա, նրանք քիչ վնաս չէին հասցնում թուրքական ուժերին։ Նրանց հաջողվում էր հարձակվել նույնիսկ աքսորյալներին ուղեկցող պահակախմբերի վրա,

ջարդել նրանց ու ազատել աքսորվողներին։ Դրա համար զենքի չդիմած նրանց բոլոր հայրենակիցները աքսորվել էին Կոնիայի կործանարար ճահիճներ, իսկ նրանց տեղում բնակեցրել էին թուրքերի, և նույնիսկ բուն երկրամասը կորցրել էր իր անվանումը և այդուհետ սկսել էր կոչվել «Սուլեյմանիե»...

Մովսեսի լեռան ապստամբները։ Կիլիկիայում մարդասպաններին առանձնապես հերոսական ու համառ դիմադրություն ցույց տվեցին Անտիոքի ծովածոցի մոտ ապրող հայերը։

Այդ դիմադրության վերջերգը եղավ 1915 թ. սեպտեմբերին ֆրանսիական նավատորմի կողմից չորս հազար ապստամբներին փրկելը, որոնք պատսպարվել էին Ջեբել Մուսա կամ Մովսեսի լեռան վրա, որի համար նրանց սրտերում հավերժ է երախտագիտությունը հանդեպ Ֆրանսիան։

***

Անտիոքի ծովածոցի հայերի համար կենտրոնական տերություններին թուրքիայի միանալը մի ամբողջ շարք ամեն կարգի ապօրինի տուրքերի սկիզբ հանդիսացավ, որոնք եզրափակվեցին 1915 թ. հուլիսի 13-ին բոլոր վեց հայկական գյուղերի պատերին փակցված իշխանությունների պաշտոնական ծանուցումով, որով բնակիչներին ազդարարվում էր պատրաստ լինել 8 օր հետո տարագրվելու Միջագետք։ Այդ հրամանի կատարումը բոլորի համար սնանկացում կլիներ, իսկ մեծամասնության համար՝ մահ։

Սարսափը համակեց դժբախտներին։ Բայց, չնայած, որ ոչ ոք դույզն իսկ հույս չուներ, թե հնարավոր է հաջող դիմադրություն ցույց տալ իշխանություններին, այդուհանդերձ, մեծամասնությունը որոշեց չենթարկվել բարբարոսական հրամանին։

Մինչդեռ հարթավայրում գտնվող բուն գյուղում դիմադրելու մասին մտածել իսկ չարժեր։ Այդժամ, հավաքելով բոլոր մթերքները, որպիսիք միայն ճարվեցին, ապստամբները՝ մոտ հինգ հազար տղամարդ, կին ու երեխա, իրենց հետ տանելով նախիրն ու հոտը, քաշվեցին Ջեբել Մուսայի՝ Մովսեսի լեռան ընդարձակ ժայռոտ գագաթը։

Այդ ժամանակ նրանք ունեին նոր նմուշի ընդամենը 120 հրացան և մոտավորապես երեք անգամ ավել հին կայծքարի հրացաններ ու ատրճանակներ։

***

Ահա նրանցից մեկի՝ բողոքական քահանա Տիգրան Անդրեասյանի[50] պատմածը հերոսական դիմադրության և վերջին պահին, երբ դրությունը դարձել էր օրհասական, «Guichen»-ի վրա նրանց փրկվելու մասին։

Հենց որ փախստականները հասել էին լեռան գագաթը, անմիջապես էլ ձեռնամուխ էին եղել ամրացման աշխատանքներին. որտեղ հողը թույլ էր տալիս, խրամատներ էին փորել, իսկ որտեղ ոչ, այնտեղ ամուր պատնեշներ էին կառուցել, դրա համար իրար վրա գլորելով ժայռաբեկորներ։ Այդ աշխատանքները նրանցից պահանջեցին հենց այն ութ օրը, որոնք թուրքական իշխանությունները ողորմածաբար տվել էին նրանց աքսորի պատրաստվելու համար, որոնք նրանց որոշման ու խռովարար գործողությունների մասին իմացել էին միայն հունիսի 21-ին, երբ ձեռնարկվել էր առաջին հարձակումը ապստամբների վրա։

Բայց զորքերը, որոնք կարծում էին, թե հեշտությամբ վերջ կտան խռովարարներին, հետ շպրտվեցին, ընդսմին կրելով զգալի կորուստներ։

Այնժամ թուրքական իշխանությունները, զենքի կոչելով շրջակա գյուղերի մուսուլմաններին, մի իսկական բանակ հավաքեցին՝ բաղկացած կանոնավոր զորքերի երեք հազար զինվորից և չորս հազար կամավորից, որոնք ծարավի էին կոտորածի։ Եվ այդ ամբողջ պատկառելի ուժը մի գեղեցիկ առավոտ հայտնվեց միաժամանակ բոլոր լեռնանցքներում։ Ապստամբները պաշտպանվում էին խիզախորեն, բայց նրանց սպառազինության և հարձակվողների սպառազինության միջև եղած տարբերությունը անչափ մեծ էր։

Թուրքերը քիչ առ քիչ առաջ էին շարժվում, և մայրամուտի մոտ կռվողներին միայն մի ձոր էր բաժանում։ Վստահ հաղթանակին՝ թուրքերը որոշեցին սպասել լույսը բացվելուն, որ վերջ տան ապստամբներին։

***

Թվում էր, թե փրկվելու ամեն մի հույս կորած է ապստամբների համար։ Այնժամ վերջին խորհրդում նրանց առաջնորդները որոշեցին դիմել հուսահատ քայլի՝ գիշերվա քողի ներքո սողալով շրջապատել թուրքերի դիրքերը և անակնկալի բերել թշնամուն, կրակ բացելով բոլոր կողմերից և նետվելով ընդհանուր գրոհի։ Ապստամբների կողմից տեղանքի, անտառային արահետների, քարաժայռերի ու լեռան ապառաժների քաջիմացությունը հնարավոր դարձրեց այդ հանդուգն ծրագրի իրագործումը։ Նրանք անաղմուկ սողացին խավարում և երբ գրեթե ամբողջովին շրջապատել էին թուրքերին՝ բոլորը նետվեցին հակառակորդի բանակատեղի վրա։

Խոր քնի մեջ, այդ անսպասելի հարձակումից անակնկալի եկած, թուրքերը դիմեցին համատարած փախուստի. խավարում բախվելով միմյանց և դեմ առնելով ժայռերին, նրանք վերջնականապես գլուխները կորցրին հակասական հրամաններից, որ գոռգոռալով արձակում էին սպաները, ջանալով հավաքել իրենց մարդկանց։ Երբ լույսը բացվեց, հայերը ռազմի դաշտում հաշվեցին երկու հարյուր սպանված թուրք և զգալի ավար հավաքեցին՝ զենք ու զինամթերք, որը նրանց օգնեց համալրելու իրենց սպառազինության պակասը։

Մինչդեռ թուրքական իշխանությունները, չցանկանալով մնալ պարտված, հետագա օրերին զենքի կոչեցին շրջակա մի քանի մզոնի վրա եղած ամբողջ մուսուլման բնակչությանը։ Այդ կերպ նրանց հաջողվեց հավաքել 15 000 մարդուց բաղկացած մի հորդա, որով էլ նրանք ցամաքից շրջապատեցին Ջեբել Մուսան, որ խռովարարներին ընկճեն սովահարության մատնելով։

Ծովի կողմից լեռը չէր պաշարված, քանի որ զառիթափ լանջերը և նավահանգստի բացակայությունը դա դարձնում էին անհնար։

***

Իրոք, շուտով պաշարվածների մոտ մնաց հազիվ տասներկու օրվա մթերապաշար։ Այնժամ նրանք սկսեցին փրկության ուղի որոնել ծովի կողմից։

Երեք լավագույն լողորդների հրամայված էր մշտապես աչալուրջ հետևել, թե արդյոք որևէ նավ չի՞ մոտենում լեռանը. մոտեցող նավ տեսնելիս, նրանք պետք է նետվեին ծովը և ջանային նավ հասցնել նամակ՝ գրված երեք օրինակից, որով ապստամբ հերոսները «աստծու անունով և հանուն համայն մարդկության եղբայրության աղաչում էին ամեն մի անգլիացու, ամերիկացու, ֆրանսիացու, իտալացու կամ ռուսի՝ լինի նա ծովակալ, նավա-

պետ թե որևէ այլ պետ, ում կհասնի իրենց նամակը, փրկել իրենց և փոխադրել Կիպրոս կամ որևէ այլ ազատ երկիր»։

Այնուհետև, բացատրելով, թե բարբարոսական ինչ տառապանքներ են իրենց ստիպել ապստամբել, և նշելով, որ իրենց ընդհանուր թիվը չորս հազար է, պաշարվածները իրենց խնդրանքը վերջացնում էին այսպես. «Եթե սա՝ բոլորիս փրկելու խնդրանքը ձեզ, շափից ավելի է, ապա տեղափոխեք գոնե մեր կանանց, երեխաներին ու ծերունիներին, իսկ մեզ զենք տվեք, զինամթերք ու պարեն, և մենք մեր բոլոր ուժերով ձեզ հետ միասին կկռվենք թուրքերի դեմ։

Աղաչում ենք ձեզ, ժամանակ մի կորցրեք, որ ուշ չլինի»։

Բայց օրերն անցնում էին, իսկ հորիզոնում ոչ ծուխ էր երևում, ոչ առագաստ։

***

Այդ ընթացքում կանայք երկու հսկայական սպիտակ դրոշ կարեցին։ Դրանցից մեկի վրա գրեցին.

«Քրիստոնյաներս աղետի ենք մատնված։ Փրկեցե՛ք մեզ»։

Մյուսի մեջտեղում մի մեծ կարմիր խաչ էր։

Երկու դրոշներն ամրացրին երկու ամենաբարձր ծառերից և ժամապահներին հանձնարարեցին վաղ լուսաբացից մինչև գիշեր աչք չկտրել ծովից։

Մինչդեռ թուրքերը շարունակում էին Ջեբել Մուսայի պաշարումը, ձեռնարկելով գրոհ գրոհի հետևից, բայց պաշարվածների վիճակը այլևս երբեք չէր դառնում այնպես օրհասական, ինչպես եղել էր առաջին ընդհարման ժամանակ, քանի որ այժմ իրենց գերիշխող դիրքերից նրանք կարող էին սարալանջերն ի վար ժայռաբեկորներ գլորել թշնամու վրա, դրանով էական վնաս պատճառելով նրան։

Սակայն մարտական պաշարները գնալով նվազում էին, սպառվում էր նաև պարենամթերքը, չնայած օրաբաժնի կրճատմանը մինչև minimum։

Դրանք տագնապալից ցերեկներ ու երկար գիշերներ էին։

***

Վերջապես, մի կիրակի առավոտ դիմադրության հիսուներեքերորդ օրը, պաշարվածները տեսան դետերից մեկին, որն ամբողջ ուժով վազում էր և ինչքան ուժ ուներ բղավում էր.

«Նա՛վ... Ռազմանա՛վ է մոտենում։ Նա նկատել է մեր ազդանշանը և պատասխանում է մեզ»։

Դա հենց ֆրանսիական «Guichen» ռազմանավն էր։ Մինչ՝ նրանից նավակ կիջեցնեին, մի քանի ապստամբներ նետվեցին ծովը և լողալով հասան նավին։

Նավապետը խնդրեց պատվիրակություն ուղարկել իր մոտ, որ ստույգ պարզի ապստամբների թիվը և նրանց իսկական վիճակը, որից հետո անթել հեռագրով նա ամեն ինչի մասին զեկուցեց ծովակալին, և մի որոշ ժամանակ անց ֆրանսիական այլ նավերի ու անգլիական հածանավի ուղեկցությամբ «Guichen»-ին մոտեցավ «Ժաննա դ'Արկը»։ Փրկված ապստամբներին նավ նստեցնելուց հետո— նրանք 4058 հոգի էին— որը խլեց մի որոշ ժամանակ, երկու օր հետո բոլոր հայերն արդեն փրկված էին և ափ իջեցվեցին Պորտ Սայիդում[51]։

Վանի հերոսական դիմադրությունը։ Է՛լ ավելի լուրջ քան Կիլիկիայում, դիմադրություն ցույց տրվեց Մեծ Հայքում՝ Վանում, 30—40 հազարանոց գերազանցապես հայ բնակչությամբ քաղաքում...[52]։

Հայ երեխաներ։ Թափառական երեխաներ։ Շրջելով նահատակ Հայաստանի լեռներով ու հովիտներով, որն այժմ ազատագրում են ռուսական զորքերը, ես ոչ միայն հավաքեցի բազմաթիվ պատմություններ սարսափների ու մահվան մասին, ոչ միայն գտա բազում արյունոտ ողբերգությունների հետքեր, այստեղ, ասես միջնադարի խորքը հետ շպրտված այս երկրում տեսա նաև տառապալից տարօրինակ մի երևույթ, որը հիշեցնում և վերակենդանացնում է միջին դարերի ամենաարտառոց, ամենաեղերական առասպելապատումները, երբ դեռևս թույլ տոտիկներով պստիկ արարածները, դեռ հազիվ թոթովել սկսած, միայնակ էին գալիս հիասթափության ու տառապանքների այս աշխարհը։

Հայ երեխանե՛րը... Ես արդեն ասել եմ, թե ինչպիսին էր նրանց ճակատագիրը, ովքեր (խեղճ մանկիկները, տնանկները), փրկվելով մահից, մնացել էին իրենց ծնողների դահիճների ձեռքում. թուրքերը նրանց բաժանել էին մուսուլմանական ընտանիքների վրա, որտեղ ամեն ինչ խորթ էր նրանց ու թշնամական, իսկ քրդերը նրանց տարել էին իրենց հետ խուլ լեռները։

Այս վերջին երեխաների թվից բավականին շատերին հաջողվել էր փախչել իրենց առևանգողներից, և նրանք, իրենց հաշիվ

չտալով ճանապարհի վտանգների ու անհաղթահարելի դժվարությունների մասին, ջանում էին վերադառնալ իրենց հայրենի շեները, այնտեղ, ուր մի ժամանակ իրենց հայրենի տունն էր եղել...

Նրանցից քանի՞ քանիսն են մոլորվել։ Քանի՞ քանիսն են, սպառելով իրենց թույլ ուժերը, ճանապարհին զոհվել հոգնությունից, սովից, ցրտից ու սարսափից։ Իսկ նրանք, ովքեր ինչ-որ հրաշքով հասել էին մինչև իրենց վայրերը, չէին գտել ոչ գյուղ, ոչ տուն, այլ միայն ամայի փլատակներ, սառը մոխրակույտեր այստեղ ու այնտեղ և ոսկորներ...

Եվ այդուհանդերձ նրանք մնացել են ապրելու այդ աղբակույտերի ու բեկորների մեջ, որոնք մի ժամանակ նրանց հայրենի տունն էին։ Նրանք, թաքնվելով, մերկ ու վայրենացած, այնտեղ ապրում էին շաբաթներ ու ամիսներ, ապրում էին բոլորից կտրված, սնվելով զանազան թափուկներով, խոտով, արմատիքով ու միջատներով։

Ես տեսել եմ նրանցից մի քանիսին, որոնց հավաքել էին ռուսական զորքերն ու հայ կամավորները։

Երբ ռուսական զորքերը մտնում էին Վարդենիս՝ Մուշին հարևան գյուղ, հետախուզության գնացած կազակների առջև հանկարծ մի սարսափելի տեսարան էր բացվել. հյուծված ու նիհար շորս երեխաներ, լրիվ մերկ, պպզել էին ձիու նեխված լեշի շուրջը և պոկոտելով նեխված մսակտորներ՝ ագահորեն խժռում էին։ Կազակներին տեսնելով, նրանցից երեքը անչափ արագ փախել էին հանդը, և չէր հաջողվել նրանց գտնել։ Մնացել էր միայն մի փոքրիկ, մոտ տասը տարեկան մի աղջնակ, շարունակելով իր խորշելի խնջույքը, որին էլ վերցրել էին։

Ջողազում գյուղի ավերակների մեջ գտնվել էր նույնպես մի փոքրիկ՝ մոտ ութ տարեկան տղա։ Սովից մեռնելով, ուժասպառ եղած, կմախքանման, նա հազիվհազ էր շարժվում։ Երեք ամիս էր, ինչ նա ապրում էր այնտեղ մենակ, բոլորի կողմից լքված...

Միջագետք ավտոբուսների հոգեարքը։ Խոշտանգումների ու մահվան կայանատեղեր։ Հեռավոր Եփրատի տոթակեզ ափերի երկայնքով, երկնքից կրակ թափող Միջագետքի ու Բաղդեթ էլ Շամի միջև՝ Սիրիայի մերկ անապատում, մի անիծյալ վայրում, որն ինքը դժոխք է, գտնվում են ընդհանուր նախճիրից խուսափած աքսորված հայերի կայանատեղերը։ Հատուկենտ ճանապարհորդների միահամուռ վկայությամբ, որոնց հաջողվել էր

մոտենալ այդ կայանատեղերին, տարաբախտների գոյավիճակն այնպիսին է, որ նրա սարսափները նկարագրելու բառեր չկան. Հալեպից մինչև Բաղդադ նրանք դանդաղ մահանում են։

Ահավոր տառապանքներ կրելով, չունենալով օթևան, բավարար սնունդ, միշտ հողմահարվելով՝ թե ձմռան մահացու սառնամանիքներին, թե անգութ ամռան ահավոր շոգին, նրանք ամեն օր մեծաթիվ զոհեր են տալիս, և այնքան մեղք չեն նրանք, որոնց մահը տանում է, որքան նրանք, որոնք կենդանի են մնում...

Ողբերգական փաստաթուղթ։ Սովի, հյուծվածության ու հիվանդությունների պատճառած տառապանքներից դանդաղ զոհվող այդ բոլոր դժբախտ աքսորյալների ահավոր ճակատագրի վերաբերյալ հետագայում իմ տրամադրության տակ դրվեց մի նոր փաստաթուղթ՝ անհերքելի ու ստույգ։

Այդ փաստաթուղթը «Հայերին ու ասորիներին օգնելու ամերիկյան կոմիտեի» արխիվից է։ Դա վերջին զեկույցն է, որը 1916 թ. աշնանը կոմիտեին է ուղարկվել թեպետև ոչ ամերիկացու, բայց մի անձնավորության կողմից, որը պատկանում է չեզոք տերություններից մեկին։

«Ինձ համար անհնար է հաղորդել այն սարսափելի տպավորությունը, որ մեջս մնացել է հատկապես Եփրատից արևելք՝ Մեսկենեի և Դեյր էլ Զորի միջև ընկած հայերի կայանատեղեր այցելելուց հետո,— ասվում է զեկուցագրում։— Այդ շրջանում նույնիսկ կայանատեղեր էլ չի կարելի անվանել այն վայրերը, որտեղ աքսորյալները, որոնք մեծ մասամբ մերկ են, մնում են գրեթե անսնունդ, անասունների նման քշվել են միատեղ և ապրում են բաց երկնքի տակ, առանց որևէ օթևանի, անապատի անչափ դաժան կլիմայի՝ արևակեզ ամռան և համատարած սառնաշունչ ձմռան ահավոր պայմաններում։

Միայն շատ քչերին, դեռ բոլորովին ուժասպառ չեղածներին է հաջողվել իրենց համար պատսպարան սարքել գետնի տակ, գետի ափին. և մեկ էլ մի քանի ուրիշների, որոնք ջարդից պահպանելով ինչ-որ քուրջ ու փալաս, վրանանման խղճուկ բաներ են պատրաստել։

Բոլորը սովատանջ են։ Բոլորն էլ իրենց հյուծված, դժգույն, մռայլ դեմքերով, չորացած, սաստիկ նիհարած մարմիններով քայլող կմախք են հիշեցնում, որոնց ներսից կրծում են ամենաահավոր հիվանդությունները։ Տպավորությունն այնպիսին է,

որ կառավարությունը ցանկանում է նրանց բոլորին սովամահ անել։

Ապա զեկուցագրի հեղինակը հիշեցնում է, որ Թուրքահայաստանի հայ բնակչության այդ մնացորդները, որոնք նետված են Եփրատի ափը, բացառապես կանայք են, երեխաներ ու ծերուններ։ Միջին տարիքի տղամարդիկ և երիտասարդները մեծավ մասամբ կոտորվել են, իսկ կենդանի մնացածները ցրված են կայսրության բոլոր ճանապարհներին, որտեղ նրանք խիճ են ջարդում։ Երիտասարդ աղջիկները, նույնիսկ տակավին դեռահասները դարձել են մուսուլմանների ավար. եթե միայն նրանք էլ չեն կոտորվել ճանապարհին։

Այնուհետև զեկուցագրում ասվում է.

«Համակենտրոնացման ճամբարների շուրջը հեռվում շրջում են հեծյալ ժանդարմներ, որպեսզի խոշընդոտեն անապատ փախչելը, որտեղ մահն անխուսափելի է։

Ես հանդիպեցի մի քանի այդպիսի փախստականների, որոնց ժանդարմները թողել էին իրենց բախտին, նրանք շրջապատված էին սոված շների մի ամբողջ ոհմակով, որոնք հենց միայն սպասում էին, թե դժբախտներից մեկնումեկը երբ կփչի վերջին շունչը...»։

Դահիճներին մեղադրող երեխաների ձայները: Դժբախտ Հայաստանի նահատակության մասին ակնարկս վերջացնելու համար պետք է նկարագրեմ նաև մի շարք զարհուրելի տեսարաններ, թերևս ավելի զարհուրելի, քան մնացած բոլորը, քանի որ դահիճների զոհերը երեխաներ են...

Եվ դրանց մասին ինձ պատմել են հենց իրենք՝ երեխաները։

Թիֆլիսի մոտ, քաղաքից վեր, շրջակա բարձրություններում ցրված են մոտ մի տասնյակ ագարակներ ու ամառանոցներ, որոնք ներկայումս վերածված են ապաստարանների, որոնցում հայ ազգային բյուրոյի կողմից մասնավոր բարեգործության շնորհիվ պահվում են հայ երեխաները, որոնց ծնողները կամ մեռել են կամ էլ անհայտ կորել նրանց հայրենիքն ամայացրած փոթորկի մեջ։

Թիֆլիսի հայուհիները կամ էլ հենց Թուրքահայաստանից փախստական կանայք են խնամում այդ երեխաներին, որոնց տարիքը տատանվում է մի քանի ամսականից մինչև պատանեկան հասակը, և ջանում են նրանց համար փոխարինել այն

թանկագին մերձավորներին, որոնց մեծ մասն այլևս երբեք չի տեսնի։

Գրեթե բոլոր երեխաները Վանի, Բիթլիսի և Շատախի գավառներից են Կովկաս ընկել Թուրքահայ գաղթականների բազմության հետ։

Ես եղա այդ երեխաների մոտ և հարց ու փորձ արեցի նրանց։ Մեծամասնությունը դեռևս մի տեսակ անզգայացած վիճակի մեջ է ապրած սարսափներից և վախենում է խոսել. իրենց տեսածի ու կրածի մասին հենց միայն հիշեցնելիս նրանց համակում է դողն ու սարսափը։

Օրինակ, մոտ յոթ տարեկան մի աղջիկ ինձ ասաց. «Օ՜, ես սարսափելի շատ բաներ եմ տեսել, բայց դրանց մասին չեմ ուզում պատմել... ինձ նորից կտանջեն չար երազները»։ Մեկ ուրիշը՝ մոտ տասը տարեկան, որի անունը Փայլուն էր, պատասխանեց միայն այսքանը. «Երբ հենց ձեռքերիս վրա սպանեցին ծծկեր եղբորս, լեզուս կապ ընկավ... Ես դեռ կարողանում էի բղավել, երբ սպանում էին մորս, բայց էլ երբեք...»։ Նրա լեզուն սկսեց փաթ ընկնել, և նա լռեց։ Այդպես կիսահամր էլ նա մնաց մի քանի շաբաթ, ասենք հիմա էլ բավական է մի ֆիոքր հուզվի, և նա պապանձվում է...[53]։

Анри Барби. В стране ужаса. Тифлис, 1919.

219. ԹՈՒՐՔ ՊԱՇՏՈՆՅԱ ՆԱՅԻՄ ԲԵՑԻ ՀՈՒՇԵՐԻՑ[54]

(Ափսորն ու կոտորածը Ռաս ուլ-Այնում և Դեյր Զորում 1916 թ.)

Ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը... իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ։ Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ։

Այն ժամանակ ինձ դեռ չէր վիճակվել գործ ունենալ աքսորյալների հետ. Ռաս ուլ-Այնում ես քարտուղար էի ծառայում Մխախոտի մոնոպոլիայում։ Գյուղից անդին՝ գետի ափի մոտ, ես տեսնում էի հարյուրավոր դժբախտ կանանց ու երեխաների

մի քարավան, որոնք ամեն առավոտ գյուղ էին գալիս ողորմություն մուրալու։ Նրանցից ոմանք ջուր էին կրում, փորձելով գոյությունը պահպանել այդ կերպ վաստակած հացի փշրանքներով։

Բայց այն ժամանակ դեռ ամառ էր, և նրանք կարող էին ապաստան գտնել ժայռերի կամ բլուրների փապարներում։ Իսկ երբ վրա հասավ ձմեռը, գիշերվա խավարում լսվում էին ցրտից ու սովից մեռնողների թառանչները...

Երբեք չեմ մոռանա այդ գիշերը։ Ես կայմակամի տանն էի։ Դրսում մոլեգնում էր փոթորիկը։ Մեր գտնված տեղից տաս րոպե քայլելու հեռավորության վրա լսելի էին տարերքի քմայքին մատնված այդ դժբախտ մարդկանց հառաչանքներն ու լացը։ Կայմակամ Յուսուֆ Զիա բեյը բարի, սրտացավ մարդ էր։ Մենք միասին դուրս եկանք տնից և ուղղվեցինք դեպի մի աղայի տուն, հետո էլի մի քանի ուրիշների և դժվարությամբ երկու-երեք վրան ճարեցինք։ Տաս թե տասնհինգ ժանդարմների և ուրիշ մարդկանց օգնությամբ մեզ հաջողվեց վրանները խփել, որոնք կարող էին պատսպարան ծառայել տարաբախտ զոհերի համար։ Նրանց մահը մի տխուր տեսարան էր, բայց էլ ավելի սարսափելի էր տեսնել, թե շներն ինչպես էին խժռում մարդկանց դիակները։

Դրանք Սեբաստիայի, Դիարբեքիրի և Խարբերդի տարաբախտ հայ բնակչության մնացորդներն էին։ Հինգ կամ վեց նահանգից աքսորվել էին մոտ մեկ միլիոն բնակիչներ։ Աքսորավայր հասնելու պահին յուրաքանչյուր քարավանում հազիվ 100—150 կին ու երեխա էր մնում։ Դա ասում է այն մասին, որ մեծ մասը կոտորվել էր ճանապարհին։

Ժամանեցի Հալեպ։ Պատահեց այնպես, որ Աբդուլահադ Նուրի բեյը, որը երեք-չորս օր առաջ էր ժամանել իբրև աքսորյալների գործերի գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ, ինձ նշանակեց իր գլխավոր քարտուղար։

Չնայած, որ ես Ռաս ուլ-Այնում ականատես էի եղել հանցագործությունների, այնուամենայնիվ չէի կարողանում հասկանալ դրանց նպատակը։ Միայն հետագայում ըմբռնեցի դրանց իմաստը։ Ես սարսռում էի ամեն անգամ, երբ հարկ էր լինում գրանցել ծածկագրված գաղտնի հրամանները։ Մահվան էր դատապարտված մի ամբողջ ազգ, այդ թվում կանայք ու մանկահասակ երեխաները։

Կառավարությունը սկզբում որոշել էր տարագրված հայերին ուղարկել Մահարա, Բաբ և Հալեպի հեռավոր այլ շրջաններ։ Այնուհետև, սակայն, հետևեց Խան Զոր գետի հովիտը (Դեյր Զորի մոտ) աքսորավայր նշանակելու հրամանը։

Մի անգամ ներքին գործերի մինիստրից ստացվեց հետևյալ հեռագիրը. «Հայտնի ժողովրդին[55] աքսորելու նպատակն է ապահովել մեր հայրենիքի բարօրությունն ապագայում, քանի որ նրանք որտեղ էլ որ ապրեն, երբեք չեն հրաժարվի խռովարար գաղափարներից։ Ուստի մենք պետք է ձգտենք ինչքան հնարավոր է նվազեցնել նրանց թիվը»։

Այդ հեռագիրն ստացվեց 1915 թվականի նոյեմբերին։ Ութ օր անց այն հանձնվեց Աբդուլահադ Նուրի բեյին նույնիսկ առանց գեներալ-նահանգապետի հաստատման։ Նույն երեկոյան ժամը 11-ն անց 30 րոպեին աքսորյալների պետ Էյուբ բեյը և ժանդարմերիայի պետ Էմին բեյը շտապեցին նահանգապետի վարչություն՝ հանդիպելու Նուրի բեյի հետ։ Նուրի բեյը անմիջապես նրանց ցույց տվեց ստացված հեռագիրը, և նրանք զրուցեցին ևս մի ժամի չափ։ Նրանց զրույցի նյութը հայերի ոչնչացման եղանակների հարցն էր։ Էյուբ բեյը բացահայտ ջարդի կողմնակից էր, բայց Աբդուլահադ Նուրի բեյը, որ շատ խորամանկ մարդ էր, այդ պլանի հետ չհամաձայնեց։ Նրա մտահղացումն այն էր, թե ավելի նպատակահարմար է նրանց ծանր փորձությունների ենթարկել կարիքի ու դաժան ձմռան միջոցով։ Սպանելով նրանց այդ կերպ, կարելի էր ապագայի համար կանխագահովել այն ապացույցը, թե նրանք իբր մեռել էին բնական մահով։

Մինչ այդ պահը ժանդարմները չէին միջամտում Հալեպ աքսորվածների գործերին։ Այժմ ժանդարմներն սկսեցին գործել ոստիկանության հետ համատեղ։

Շուտով Հալեպում ձեռնամուխ եղան եռանդուն գործողությունների։ Աքսորյալներին կենտրոնացրին Գարմայի և Քիլիսի շրջաններում, ինչպես նաև Հալեպի շուրջը։ Նրանց խմբերով ուղարկում էին Աքթերիմ, իսկ այնտեղից էլ Բաբ։ Հետևանքը եղավ այն, ինչի հույս ունեին իշխանության ներկայացուցիչները։ Ամեն օր զեկուցագրեր էին ստացվում սովից, ցրտից ու հիվանդություններից հարյուրավոր մեռածների մասին։ Էյուբ բեյը մեկնեց Ազազ։ Վերադառնալուց հետո նա ներկայացավ նահանգապետի վարչություն և ուրախությամբ հաղորդեց, որ այրել է վրանները։ Բաբը լեփ-լեցուն էր մարդկանցով։ Ամենուրեք

մոլեգնում էր տիֆը։ Կայմակամն ու աքսորավայրի գործերը տնօրինող պաշտոնյաները ամեն օր զեկուցագրեր էին ուղարկում մահացության մասին։ Մահը ճարակում էր ոչ միայն հայերին, այլև հնձում էր նաև տեղական բնակչությանը։

Մի անգամ Աբդուլահադ Նուրի բեյին ասացի. «Բեյ էֆենդի, եկեք հայերի աքսորի խստությունը նվազեցնենք, այլապես մահը կսպառնա ողջ Միջագետքին։ Այս ընդարձակ մարզերում սատանաներից բացի ոչ ոք չի մնա։ Ռաս ուլ-Այնի կայմակամը տագնապալի տեղեկություններ է հաղորդում»։

Նուրի բեյը ծիծաղեց. «Տղաս,— ասաց նա,— այդպիսով մենք միանգամից կազատվենք երկու վտանգավոր տարրից։ Չէ որ հայերի հետ միասին մեռնում են արաբները։ Մի՞թե դա վատ է։ Չէ որ մաքրվում է ճանապարհը թրքության համար»։

Այդ ահավոր պատասխանից սարսռացի։

Ի՞նչն էր այդ մարդուն ստիպում այդպես համարձակ ու աներկյուղ իրագործել այդ դաժան ու դիվային ծրագիրը։ Այդ մասին շատ բան կարելի է ասել, բայց աքսորի գործերի կոմիտեի թղթերի մեջ գտածս մի հրամանի պատճենը ինքնըստինքյան բավական է բացատրելու այն համարձակությունն ու վրստահությունը, որով Նուրի բեյը կատարում էր իրեն հանձնարարված խնդիրը՝ բնաջնջել բոլոր հայերին։ Ահա այդ հրամանը։

«Թեև հայ տարրը բնաջնջելու հարցը, որը դարեր շարունակ ջանում էր ավերել մեր Կայսրության ամրակուռ հիմքը, իսկ ներկայումս իրական վտանգ է դարձել, վճռվել էր ավելի վաղ, սակայն հանգամանքները թույլ չէին տալիս իրագործել այդ սրբազան գործը։ Այժմ, երբ բոլոր արգելքները վերացված են և հասել է մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրից ազատելու ժամանակը, հաստատակամորեն խորհուրդ է տրվում չենթարկվել կարեկցանքի զգացմունքին՝ ի տես նրանց թշվառ վիճակի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում։ Հետևեք, որ նրանք, ում կվստահվի այդ խնդրի իրագործումը, հայրենասեր և հուսալի մարդիկ լինեն»։

Հայտնի չեն ոչ այդ փաստաթղթի ամսաթիվը, ոչ էլ այն անձը, ում այն հասցեագրված էր, քանի որ դա պատճեն էր։ Սակայն ամեն ինչ մատնանշում է, որ հրամանը ուղարկվել էր Թալեաթ փաշայի՝ ներքին գործերի մինիստրի անունից անմիջապես գեներալ-նահանգապետին և նրա կողմից հանձնվել աքսորի գործերի կոմիտե։ Այդ հրամանը պետք է Հալեպ հասած լիներ նախքան Աբդուլահադ Նուրի բեյի ժամանումը, հավանաբար դեռևս Ջելալ բեյի կառավարման օրոք։ Թերևս հենց այդ առիթով էր Ջելալ բեյը հեռագրել Կոստանդնուպոլիս. «Ես նահանգի նահանգապետն եմ, և չեմ կարող լինել նրա դահիճը»։ Նա անմիջապես ազատվել էր, և նրա փոխարեն ուղարկել էին Բեքիր Սամի բեյին, որը նույնպես կոտորածի հակառակորդ էր։

Գլխավոր վերակացու Շյուքրի բեյը արդեն մի քանի ամիս Հալեպում էր, կազմելով աքսորի ու կոտորածի ծրագրերը։ Բայց նա չէր կարողացել բավականաչափ հուսալի մարդիկ գտնել ահավոր ծրագրի կատարման համար։ Գեներալ նահանգապետ Ջելալ բեյը դեռևս ազատված չէր, և չէր կարելի հույս դնել նրա օգնության վրա։ Ոստիկանության պետ Ֆիքրի բեյը գտնվում էր Ջելալ բեյի ազդեցության ներքո և նույնպես հավանություն չէր տալիս կոտորածին, այնպես որ նրա օգնության վրա էլ չէր կարելի հույս դնել։ Միակ մարդը, որի վրա Շյուքրի բեյը հույս էր դնում, Ջեմալ բեյն էր, որը հատուկ ուղարկվել էր հայերի կոտորածը ղեկավարելու համար։ Երկուսը համատեղ աշխատում էին իրականացնել չարագործությունը, բայց նրանք ոչինչ չէին կարող անել...

Միայն այն բանից հետո, երբ Հալեպի գեներալ-նահանգապետ նշանակեցին Մուստաֆա Աբդուլհալիգ բեյին, տեղի ունեցավ այդ ահավոր կոտորածը։

Սկզբում հայերին անապատային շրջաններ աքսորելն իրականացնում էր Հալեպի աքսորման գործերի կոմիտեին առընթեր գործադիր հանձնախումբը։ Քանի դեռ այդ գործով գործադիր կոմիտեն էր զբաղվում, աքսորյալները համեմատաբար պաշտպանված էին բռնությունից ու կոպիտ վերաբերմունքից։ Կառավարությունը պարզ հասկանում էր, որ այդ հանգամանքներում չէր կարող հասնել իր վերջնական նպատակին, ուստի և ազատեց նահանգապետին (Բեքիր Սամի բեյին) և նրա տեղը նշանակեց Մուստաֆա Աբդուլհալիգ բեյին, որին կարողացավ գրավել իր կողմը։ Այդ մարդը հայերի թշնամին էր և ձգտում էր իր հանուն Թուրքիայի բնաջնջել ողջ հայ ժողովրդին։ Հրամանները, որ նա արձակում էր աքսորի գործերի կոմիտեին, այն աստիճան անգութ էին, որ դժվար է բացատրել...

Կառավարությունը այդ մարդու օգնական էր նշանակել Աբդուլահադ Նուրի բեյին։ Աքսորի գործերի գլխավոր կոմիտեի

ներկայացուցիչ Նուրի բեյը շատ խելացի, բայց ի բնե դաժան մարդ էր։ Հայերի հանդեպ համակված լինելով ատելությամբ, նա նրբացված դաժանության մարմնավորում էր։ Հայերի չարչարանքներն ու դժբախտությունները, ինչպես նաև նրանց մահվան դեպքերի մասին հաճախակի զեկուցագրերը նրան այնպիսի ցնծություն էին պատճառում, որ նա քիչ էր մնում ուրախությունից պարեր, քանի որ այդ ամենը նրա կարգադրությունների արդյունքն էր։ «Կառավարությունը չի ցանկանում, որ այդ ժողովուրդը գոյություն ունենա»,— ասում էր նա սովորաբար։ Նա դա կրկնել էր, երբ Հալեպ մեկնելուց առաջ նրան կանչել էին կառավարության դիվանատուն։ Ներքին գործերի մինիստրությանն առընթեր խորհրդականը նրան առաջարկել էր տեսնվել Թալեաթ փաշայի հետ։ Նուրին մեկնել էր Բարձր Դուռ։ Փաշայի մոտ մի քանի այցելուներ էին եղել։

«Ե՞րբ եք մեկնում»,— հարցրել էր Թալեաթը և նրան տանելով մի կողմ՝ լուսամուտի մոտ, ցածր ձայնով ավելացրել էր. «Դուք, անշուշտ, գիտեք ձեր վրա դրված խնդիրը։ Մենք պետք է Թուրքիան տեսնենք այդ անիծված ժողովրդից [հայերից] ազատված»...

Աբդուլահադ Նուրի բեյի գլխավոր գործակիցը իր անմիջական ենթակա էյուբ Սաբրի բեյն էր, մի արյունախում ու կաշառակեր մարդ։ Սպանությունները, իսկ էլ ավելի շատ կողոպուտները նրա կյանքի նպատակն էին։ Այդ պաշտոնում ծառայելու շրջանում նա մեծ կարողություն կուտակեց...

Հալեպի նահանգապետ Աբդուլհալիգ Նուրի բեյի կարգադրությանը համապատասխան, աքսորի գործերի գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ Աբդուլահադ Նուրի բեյը ձեռնամուխ եղավ տարագրումների կազմակերպմանը, և երբ դրանք սկսվեցին, հանցագործությունները հաջորդեցին մեկը մյուսին։

Ներքին գործերի մինիստրությունից նոր ահասարսուռ հրաման եկավ, որը նրանց գործողությունների լիակատար ազատություն էր ընձեռում, թեպետև նրանք դրա կարիքը չէին էլ զգում։

Այդ հրամանը ասում էր.

«Հալեպի նահանգապետին։

9 սեպտեմբերի 1915 թվականի։ Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է։ Դրան համապատասխան կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին։ Մի քանի նահանգներում այս հրամանի իրագործումը արդեն տվել է իր արդյունքները։ Չնայած դրան, մեզ անհայտ պատճառներով բացառություն էին արվել հանրահայտ մարդկանց նկատմամբ. փոխանակ աքսորված լինելու ուղիղ աքսորավայր, նրանք թողնվել են Հալեպում։ Դա էլ ավելի դժվարին կացության մեջ է դնում կառավարությանը։ Ուշադրության չառնելով նրանց առարկումները, այդտեղից հեռացրեք բոլորին, ինչպես կանանց, այնպես էլ երեխաներին, անգամ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվելու։ Մարդկանց թույլ մի տվեք պաշտպանելու նրանց, քանի որ իրենց անդիտակցականության հետևանքով նրանք նյութական օգուտները հայրենասիրական զգացմունքներից բարձր են դասում և չեն կարողանում հասկանալ կառավարության մեծ քաղաքականությունը, որը պնդում է այդ միջոցառումների իրականացումը։ Բնաջնջման զարտուղի միջոցների փոխարեն, որ կիրառվում են ուրիշ վայրերում, ինչպես, օրինակ, խստությունը, հապճեպ աքսորը, տեղափոխումների դժվարությունները և զանազան ձախորդությունները, կարելի է առանց վտանգի դիմել անմիջական միջոցառումների։ Միայն թե գործեք ջանադրաբար։

Ռազմական մինիստրությունը ընդհանուր կարգադրություն է արել բանակի հրամանատարներին, որ նրանք չմիջամտեն աքսորի գործին։

Այս առաջադրանքի կատարման համար նշանակված պատասխանատու անձանց հաղորդեք, որ իրենք պարտավոր են կենսագործել մեր բուն մտադրությունը, չվախենալով պատասխանատվությունից։ Հաճեք ամեն շաբաթ թվական հաշվետվություններ ներկայացնել Ձեր գործունեության մասին։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»[56]։

Երբ այս հրամանն ստացվեց, Հալեպի աքսորի գործերի կոմիտեն իրավունք ուներ գեներալ-նահանգապետի անմիջական ցուցումով կատարել ցանկացած գործողությունը։

Աքսորման ամբողջ գործը կենտրոնացված էր մեկի ձեռքում, որպեսզի բարբարոսական միջոցառումներ իրականացնելու հրամանները հնարավորին չափ գաղտնի պահվեին, որ լայն հանրությունը չիմանար տեղի ունեցածի մասին և ոճրագործությունների մասին լուրերը արտասահման չթափանցեին։

Ճամբարը, որտեղ հավաքված էին աքսորյալները, գտնվում

էր շարաբաստիկ Գարլըք բլրի վրա, Հալեպից 20 րոպեի հեռավորության վրա։ Այդտեղից աքսորյալները ուղարկվում էին անապատ։ Այստեղ հայերի կյանքը կախված էր ոստիկանական տասնապետի կամ աքսորավայրի պաշտոնյայի քմահաճույքից։

Ամեն դեպքում, այստեղ կենդանի մնալու քիչ հույս կար բոլոր նրանց համար, ովքեր հայտնվում էին Հալեպի սահմաններից դուրս։ Գարլըք բլրից մինչև Դեյր Զոր տառապանքների ճանապարհ-գերեզմանոց էր։ Պատասխանատու աստիճանավորներին հրամայված էր չվախենալ դիմելու այնպիսի դաժանությունների, որոնք կհանգեցնեին մահվան։

Դա հաստատվում է հետևյալ երկու հեռագրով, որ ուղարկել էր ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան։

«Մեզ տեղեկություններ են հասել, որ մի քանի պաշտոնյաներ զինվորական դատի են հանձնվել դրամաշորթության և հայտնի ժողովրդի [հայերի] նկատմամբ գործադրած դաժանության մեղադրանքով։ Անգամ եթե դա լոկ հասարակ ձևականություն լինի, մյուս աստիճանավորների եռանդը կարող է թուլանալ։ Այդ պատճառով էլ հրամայում եմ թույլ չտալ նմանօրինակ հետաքննություններ։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

«Եթե ուշադրություն դարձվի ամեն տեսակ անձնական գործերով հայտնի անձանց (հայերի) կողմից տրվող գանգատներին, ապա ոչ միայն կձգձգվի նրանց անապատ ուղարկելը, այլև հիմք կստեղծվի մի շարք գործողությունների համար, որոնք կարող են ապագայում քաղաքական դժվարություններ հարուցել։ Անհրաժեշտ է համապատասխան հրամաններ տալ աստիճանավորներին։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Ավելի ուշ ներքին գործերի մինիստրից հրահանգներ ստացվեցին այն մասին, որ կառավարական բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված գանգատի նամակներն ու հեռագրերը պետք է ընդունվեն, բայց տեղ չհասցվեն։

Ռաս ուլ-Այնի կոտորածը։ Այն ժամանակ, երբ աքսորն իրականացվում էր երկաթուղով, կայմակամ Յուսուֆ Զիա բեյը զեկուցում էր, որ Ռաս ուլ-Այնում այլևս տեղ չկա հայերի համար։ Բացի այդ, նա հաղորդում էր, որ օրական հինգ-վեց հարյուր

մարդ է մեռնում և թե հնարավոր չէ ոչ թաղել մեռածներին, ոչ էլ ողջերին ուղարկել ավելի հարավ։

Նա ստացել էր հետևյալ բովանդակությամբ պատասխանը. «Արագացրեք աքսորը, այդ դեպքում նրանք, ովքեր ի վիճակի չեն շարժվելու, կընկնեն և կմեռնեն քաղաքից մի քանի ժամվա հեռավորության վրա, և քաղաքը կազատվի ինչպես ողջերից, այնպես էլ մեռածներից»։

Ինչպես երևում է տարագրման տեղական պաշտոնյաների վերջին զեկուցագրերից և կայմակամի հաշվետվությունից, չորս ամսում սովից ու հիվանդություններից մահացել էր 13 000-ից մինչև 14 000 մարդ։

Այսպիսին էր հայերի վիճակը Ռաս ուլ-Այնում, իսկ մինչ այդ Հալեպում թուրքերը մտածում էին նրանց լիովին բնաջնջելու նոր եղանակների մասին։ Ամեն ինչ խոսում էր այն բանի օգտին, որ Յուսուֆ Զիա բեյը չի համաձայնի այդ հանցագործության կատարման գործիք դառնալ։ Սակայն է՛լ ավելի մեծ խոչընդոտ էր հանդիսանում Դեյր Զորի նահանգապետ Ալի Սուադ բեյը, որը արեց ինչ որ կարող էր, հայերի տառապանքները թեթևացնելու համար...

Մի անգամ Սուադ բեյը կայմակամին դիմեց հետևյալ բառերով. «Ձենք հարցնում, թե հայերն ինչու են աքսորվում։ Դա մեզ չի վերաբերում։ Մենք կարող ենք նրանց հետ վարվել այնպես, ինչպես հարմար գտնենք, եթե մենք ուզենանք, կարող ենք պաշտպանել նրանց կյանքն ու օգտագործել նրանց արհեստները։ Եթե մենք ուզենանք, կարող ենք ոչնչացնել նրանց։ Մենք չենք կարող վերացնել նրանց վրա կախված դժբախտությունը, բայց կարող ենք մեղմացնել այն։ Ես կարծում եմ, որ նրանց աշխատանքի շնորհիվ այս անապատները կարող են վերածվել ծաղկուն դաշտերի և այս հյուղակների փոխարեն կկառուցվեն գեղեցիկ շենքեր»։

Այդ նույն ժամանակ Հալեպում նյութվում էր այդ մարդկանց բնաջնջելու ծրագիրը։

Ռաս ուլ-Այնում աքսորը տնօրինող պաշտոնյաներին տրված կարգադրությունները չէին կատարվել։ Արդուլահադ Նուրի բեյը, ժամանելով Ռաս ուլ-Այն և վախեցնելով աքսորը տնօրինող պաշտոնյային՝ Ատիլ բեյին, պարզել էր, որ Դեյր Զորի նահանգապետն ինքը՝ Սուադ բեյը չէր կատարել հայերին անապատ աքսորելու հրամանը։

Վերադառնալով Հալեպ, Նուրի բեյը իսկական իրավիճակի մասին զեկուցում է գեներալ-նահանգապետ (վալի) Աբդուլհալիգ բեյին։ Գեներալ-նահանգապետը անհապաղ Ալի Սուադ բեյին է ուղարկում հետևյալ ծածկագրված հրամանը.

«Այն, որ հազարավոր հայեր մնում են Ռաս ուլ-Այնում, հակասում է կառավարության սրբազան նպատակներին։ Նրանց քշեք անապատ»։

Սուադ բեյը պատասխանել էր. «Միջոցներ չկան այդ մարդկանց ուղարկելու համար։ Եթե Ձեր նպատակը նրանց սպանելն է, ապա ես չեմ կարող դա անել ինքս կամ ստիպել ուրիշներին»։

Մուստաֆա Աբդուլհալիգ բեյը այդ հեռագիրն ուղարկել էր Կոստանդնուպոլիս՝ ներքին գործերի մինիստրին, որան ավելացնելով հետևյալ զեկուցագիրը Սուադ բեյի վերաբերյալ.

«Ներքին գործերի մինիստրին։

23 դեկտեմբերի 1915 թ.

Աքսորի գործերի կոմիտեի գլխավոր վերակացուի ներկայացուցչից մենք իմացանք, որ Ռաս ուլ-Այն տարագրված հայերը դեռևս գտնվում են այնտեղ... Նրանց հովանավորող և նրանց բնակվել թույլ տվող անձը Դեյր Զորի նահանգապետ Ալի Սուադ բեյն է։

Չնայած, որ մենք բազմիցս գրել ենք, որ հայերի կուտակումը, որն արդարացվում է փոխադրամիջոցներ չլինելով, փոքր, բայց իր դիրքով այնքան կարևոր քաղաքում, ինչպիսին Ռաս ուլ-Այնն է, մեր վրա մեծ պատասխանատվություն է դնում, մենք, այդուհանդերձ, ոչ մի արդյունքի չհասանք։

Ալի Սուադ բեյի կողմից նրանց նկատմամբ ցուցաբերվող կողմնակալությունը և հովանավորությունը հասել են աներևակայելի չափերի։ Եղած տեղեկությունների համաձայն, նա ինքը հաղցնում ու խնամում է մի քանի հայ երեխաների, նա նրանց հետ միասին ողբում է նրանց ծնողների տառապանքների համար...

Քանի որ նման իրավիճակի պահպանումը անհարկի ձգձգում է առաջացնում Հալեպից աքսորվածների հետագա տեղափոխման գործում, ուստի մենք դիմում ենք Ձերդ գերազանցությանը՝ անհրաժեշտ կարգադրություն անելու խնդրանքով։

Մուստաֆա Աբդուլհալիգ,
գեներալ-նահանգապետ (վալի)»։

Հենց այս զեկուցագրի պատճառով Ալի Սուադ բեյը հետագայում հեռացվեց։

Այսպիսին էր վիճակը մինչև 1916 թվականի փետրվարը։ Այնուհետև Ռաս ուլ-Այն ժամանեց հայերի կոտորածի ամենադաժան կազմակերպիչներից վատահամբավ մեկը՝ Վանի նախկին գեներալ-նահանգապետ Ջևդեթ բեյը, ռազմական մինիստր Էնվեր փաշայի քեռայրը։ Վանում վերջացնելով կոտորածը, նա ժամանում է Մուշ, որտեղ նույնպես նա է ղեկավարում կոտորածը։ Այնտեղից նա մեկնում է Բիթլիս, որ վերջացնի Մուստաֆա Աբդուլհալիգ բեյի սկսած կոտորածը։ Նշանակվելով Ադանայի նահանգապետ, նա այնտեղ մեկնելու ճանապարհին 1916 թ. փետրվարին ժամանեց Ռաս ուլ-Այն, որտեղ այդ ժամանակ մոտ 50 000 աքսորված հայեր էին կուտակվել։ Կայմակամը դուրս եկավ դիմավորելու շքախմբով։

Պատահաբար տարագրվողների մեջ էր գտնվում մի հայ բժիշկ՝ դոկտոր Հրեշտակյանը, որը Բաղդադի երկաթուղու գործադիր հանձնաժողովի հաստիքի մեջ էր։ Այդ դոկտորը հետագայում պատմում էր, որ Ջևդեթ բեյը նախ և առաջ ուշադրություն էր դարձրել այն սարին, որի ստորոտին խփված էին աքսորված հայերի հազարավոր վրանները։

Ջևդեթ բեյը կարծել էր, թե դա ռազմական ճամբար է, և հարցրել էր, թե այդ զինվորներն ուր են գնում։ Կայմակամը բացատրել էր, որ դրանք զինվորներ չեն, այլ աքսորյալ հայեր։ Ջևդեթ բեյը, չկասկածելով, որ ներկաների մեջ հայ կա, բացականչել էր. «Մի՞թե այդ շները դեռ գոյություն ունեն։ Ես ձեզ հրամայում եմ նրանց բոլորին կոտորել»։

Կայմակամը հրաժարվեց կատարել այդ կարգադրությունը, ասելով, որ ինքը չի կարող հեղել այդքան մեծ թվով միանգամայն անմեղ մարդկանց արյունը, որոնք երբեք ոչ մի չարիք չեն պատճառել իրեն։

«Ուրեմն ձեզ հայտնի չէ՞ կառավարության վարած քաղաքականությունը»,— ասաց Ջևդեթ բեյը, նրան սպառնալով հեռացումով։

Խոսքին հետևեց գործողությունը. նա կանչեց հեռագրական գրասենյակի պետին և տեղի ունեցածի մասին անհապաղ զեկուցեց Կոստանդնուպոլիս։ Դրա հետևանքը կարող էր լինել միայն կայմակամի հեռացումը, ինչն էլ հետևեց։ Յուսուֆ Զիա բեյը հեռացվեց Ռաս ուլ-Այնից, և տասը օր անց ժամանեց նոր

կայմակամը՝ մի երիտասարդ Քոչանայից (Ռումելիա), Քերիմ Ռեշիդ բեյը։ Նա Ջևդեթ բեյի համախոհն էր։

Ռաս ուլ-Այնում հանցավոր գործողություններ ձեռնարկելու հրամանը ելնում էր անմիջականորեն Հալեպից։ Այդ հրամանը տրվել էր պահակազորի պետերին։ Նրանցից մի քանիսը ժամանել էին Հալեպ և տեսակցություն ունեցել Մուստաֆա Աբդուլ-Հալեգ բեյի հետ։ Նրանց վերադառնալուց չորս թե հինգ օր անց կայմակամը ծածկագիր հեռագրով հաղորդում էր, որ նրանք ժամանել են և ստացել իր կարգադրությունները։ Կոտորածն անմիջապես հաջորդել էր տեղահանմանը, քանի որ այն կատարվել էր քաղաքից ոչ հեռու, հիմնականում Ճրրճրպ գետի ափին և Շադադի ճանապարհին։ Հայերին տանում էին խմբերով և սպանում ամենադաժան եղանակով։ Նրանցից մի քանիսին հաջողվել էր փախչել Ռաս ուլ-Այն, քանի որ այլ տեղ փախչելու հնարավորություն չկար, որտեղ նրանք պատմել էին այդ սարսափների մասին։ Կարելի է պատկերացնել այն սարսափը, որ համակել էր այդ անօգնական մարդկանց, երբ նրանց մոտ էին գալիս ատրճանակներով, մտրակներով ու մահակներով, որ քշեն ելանդանոց։ Չէին խնայում ոչ հիվանդներին, ոչ երեխաներին, ոչ ծերերին։

«Ոչ ոքի մի թողեք կենդանի, մասնավորապես մինչև հինգյոթ տարեկան երեխաներին։ Այլապես նրանք կմեծանան և կնշտեն վրեժխնդիր լինել»։

Ալի Սուադ բեյի փոխարեն որպես նահանգապետ Դեյր Զոր ժամանեց Զեքի բեյը։ Քանի որ կոտորածն արդեն սկսվել էր, ապա նրան հարկավոր էին մարդիկ այդ դիվային գործի իրականացման համար։ 200 000 մարդ կոտորելը հեշտ գործ չէ։

Երկաթուղու շինարարությունում աշխատող մարդկանց մեծամասնությունը հայեր էին։ Կառավարությունը, պատրվակ բռնելով, թե նրանք պիտանի չեն տվյալ աշխատանքի համար, արձակեց հետևյալ հրամանը.

«№ 801։ 26 դեկտեմբերի 1915 թ.։ Հալեպի նահանգապետին։

Որոշված է, որ երկաթուղում կամ այլ շինարարությունում աշխատող բոլոր հայերը տարագրվեն աքսորավայրեր։ Ռազմական մինիստրությունը այդ մասին հաղորդել է աքսորյալների ճամբարների պետերին։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Այդ հրման վրա երկաթուղիների զինվորական կոմիսարիատների միջոցով պահանջվել էին նրանց ցուցակները։ Երկաթուղու երկու կոմիսարներն էլ՝ Խայրի բեյը և Ջելալ փաշան այդ հարցում մեծ փափկասրտություն էին ցուցաբերել...

Դրանից հետո շուտով հարցը վերստին արծարծվեց, և այդ ժամ եկավ հետևյալ հեռագիրը.

«№ 840։ 16 հունվարի 1916 թ.։ Հալեպի նահանգապետին։

Մեզ տեղեկություն է հասել, որ գծի երկայնքով Ինթիլի, Այրանի և Հալեպի միջև գտնվում են մոտ քառասուն թե հիսուն հազար հայեր, առավելապես կանայք ու երեխաներ։ Այն անձինք, որոնք դժվարություններ են հարուցում, աքսորյալների կուտակումներ ստեղծելով այնպիսի վայրերում, որոնք կարևոր նշանակություն ունեն զորքերի փոխադրման համար, կպատժվեն ամենայն խստությամբ։ Ուստի կապվեցեք Ադանայի նահանգապետի հետ և այդ հայերին անհապաղ ուղարկեցեք Հալեպ, նրանց թույլ չտալով շարժվել ավելի առաջ։ Ես անհամբերությամբ արդյունքների մասին տեղեկություններ եմ սպասում մեկ շաբաթվա ընթացքում։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Հենց նույն օրը, ի լրումն առաջին հեռագրի, ստացվեց մեկ այլ հեռագիր.

«Հալեպի նահանգապետին։

Ի լրումն հունվարի 16-ի № 840 հեռագրի։

Ինթիլիում և Այրանում թողնված հայ բանվորներին մի աքսորեք մինչև երկաթուղու շինարարության ավարտվելը։ Բայց քանի որ նրանց չի թույլատրվում ապրել իրենց ընտանիքների հետ, ապա նրանց ժամանակավորապես տեղավորեք Հալեպի շրջակայքում։ Մնացածներին՝ կանանց ու երեխաներին անհապաղ ուղարկեցեք անապատ նախորդ հեռագրի համաձայն։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Այդ հրամանի կատարման հետևանքով փոքրահասակ երեխաները տեղնուտեղը թողնվել էին ծառերի տակ սոված ու մերկ։

Պարոն Քոպելը[57] հավաքել էր այդ երեխաներին, տեղավորել ուժանակի արկղների մեջ և նրանց տարել էր Ինթիլի, որտեղ նրանց դաստիարակում էին որբանոցում։ Մի քանի օր անց

Բաղդադի երկաթուղու գերմանացի տնօրենը նրան նախատել էր նման բարեգործության համար։

Այնթապով ու Մարաշով ուղարկված խմբերը ամբողջովին կոտորվել էին ճանապարհին, այնպես որ նրանցից ոչ ոք Մարդին չէր հասել։ Այդ խմբից 500 մարդ հասցվել էր Ռաս ուլ-Այն...

Այն ժամանակ, երբ Ռաս ուլ-Այնում և Ինթիլիում կոտորածը ավարտվելու վրա էր, սկսեցին նախապատրաստվել է՛լ ավելի զարհուրելի կոտորածի. այս անգամ Զեքի բեյը պետք է բնաջնջեր Դեյր Զոր աքսորված 200 000 հայերի։

Զեքի բեյը անհամբերությամբ հեռագրեր էր ուղարկում Հալեպի նահանգապետին, պահանջելով, որ այդ քաղաքի հարևանությամբ եղած հայերը հնարավորին չափ արագ ուղարկվեին իր մոտ։

Բայց իսկական ահաբեկչությունն սկսվեց այն ժամանակ, երբ սկսեցին մարդկանց Հալեպից ու նրա շրջակայքից քշել Մեսքենեի ուղղությամբ։ Քարավաններին վերջ չկար։ Բաբը, Մահարան ու Մումբուջը լիովին տեղահանված էին։ Չնայած դժնդակ եղանակին, հայերին քշում էին Մեսքենեի ուղղությամբ հաճախ ոտքով, հազվադեպ էշերով կամ ուղտերով։ Բայց նույնիսկ այնտեղ էլ նրանք իրավունք չունեին մնալու. հրամանը պահանջում էր, որ նրանք ժամանեին Դեյր Զոր։

Եփրատի ափ աքսորվածների մեծ մասը Կոստանդնուպոլսի շրջակայքից էին, ինչպես նաև Ռոդոսթոյից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Ադաբազարից, Զիզրեից և Կոնիայից, մի խոսքով, դրանք այն հայերն էին, որոնք աքսորվել էին Անատոլիական երկաթուղու երկայքով գտնվող վայրերից ու Կեսարիայից։

Այս նոր տեղահանությունները համընդհանուր զարմանք առաջացրին։ Անհասկանալի էր, թե մարդկանց ինչու էին քշում Դեյր Զորի ուղղությամբ։ Բայց տագնապի համար էլ ավելի հիմնավոր պատճառ կար։ Ռաս ուլ-Այնի կոտորածի լուրը, այլ վայրերից բացի, թափանցել էր նաև Մեսքենե։ Կոտորածը, որը շարունակվում էր մի քանի տարի, չէր կարող գաղտնիք մնալ անգամ անապատում։

Հայտնի էր դարձել, որ տարագիրներին այլևս չեն ուղարկելու Տիգրիսի աջ ափով, այլ՝ միայն ձախով։ Ուղարկվող քարավանների համար դա համազոր էր մահավճռի, քանի որ այդ քարավանները ստիպված էին լինելու Տիգրիսի ափից մինչև Ռաքքա ընթանալ անապատով, որտեղ նրանց սպառնում էր անխուսա-

փելի մահ սովից ու ծարավից։ Էլ Զեզիրեն, այսպես էր կոչվում գետի ձախ ափը, գերեզմանի ճանապարհ էր։

Բաբից եկած աքսորյալներն ուժեղացրին խուճապը, հաղորդելով Բաբի կայմակամի անունով Հալեպի գեներալ-նահանգապետի և այդ քաղաքի քաղաքագլխի ուղարկած հետևյալ հրամանի մասին.

«Հույժ շտապ և գաղտնի։

Մի պահեք անգամ դատապարտված հայերին և ոստիկանության կողմից մեղադրվող կամ ձերբակալված հայերին։ Նրանց անհապաղ ուղարկեք Դեյր Զոր...»։

Կառավարության բոլոր հրամաններում ասվում էր. «Միացրեք քարավաններին և ուղարկեք նրանց»։ Այս երկիմաստ բառերը նշանակում էին «Նրանց ուղարկեք անապատ»։ Բայց անգամ անապատում աքսորյալ հայերը որոշակի տեղ չունեին։ Նրանց շարունակ հարկադրում էին տեղից տեղ շարժվել հայտնի չէ, թե ուր։ Բավական էր, որ նրանք երկար չմնային մի տեղում, քայլելը պետք է ուժասպառ աներ նրանց։

Կառավարությունը հետևյալ հեռագիրն ուղարկեց Հալեպ.

«№ 723։ Ներքին գործերի մինիստրից ծածկագիր հեռագիր Հալեպի նահանգապետի անունով։

3 դեկտեմբերի 1915 թ. Հայերին ու նախ և առաջ նրանց, ովքեր գտնվում են Հալեպի շրջակայքում, անհապաղ ուղարկեք իրենց աքսորավայրերը և զեկուցեք կատարման մասին։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Տեղահանությունների սկզբին հայերի բնակության համար նախատեսվում էին Հալեպի շուրջը եղած գյուղերը։ Այդ գյուղերում մեծ թվով հայեր էին տեղավորվել։ Նշված հեռագիրն ստանալուց հետո Հալեպի շրջակայք ուղարկվեցին հեծյալ ժանդարմներ, որոնք ամենաանողոք կերպով մարդկանց վտարում էին գյուղերից և նրանց քշում Մեսքենեի ուղղությամբ, որտեղ մեծամասնությունը զոհվեց...

Հալեպից ցուցումներ ստացվեցին, որ ճանապարհին աքսորյալներին չթողնեն ոչ ուտել, ոչ խմել, որպեսզի այդ կերպ հնարավորին չափ նվազեցվի նրանց թիվը։

1916 թ. հունվարի 20-ին Աբդուլահադ Նուրի բեյը Բաբի աքսորի գործերի կոմիտեի պաշտոնյա Մուհառեմ բեյին գրում է.

«№ 344։ 20 հունվարի 1916 թ.։ Դուք, անտարակույս, գնա-

հատում եք Ձեր հանդեպ կառավարության ցուցաբերած վստահությունը և Ձեզ հաշիվ եք տալիս Ձեզ վստահված գործի կարևորության մասին։ Դուք ոչ մի հայի չպետք է թույլ տաք մնալու Բաբում։ Միայն Ձեր խստությունը և աքսորի հարցում գործելու արագությունը կարող են ապահովել մեր նախատեսած ծրագրի իրագործումը։ Դուք պետք է միայն հետևեք, որ դիակները չմնան ճանապարհներին։ Փոստով մեզ հաղորդեք վարձատրման առավելագույն գումարը, որ Դուք նախատեսում եք վճարել մարդկանց այդ աշխատանքը կատարելու համար։

Փոխադրամիջոցների խնդրով մի անհանգստացեք. աքսորվածները կարող են ոտքով էլ գնալ։

Մահացության մասին մեկշաբաթյա ամփոփագիրը, որ մեզ հաղորդվել է վերջին մի քանի օրվա համար, անբավարար է...

Աքսորյալներին ուղարկելը չպետք է ճանապարհորդության բնույթ կրի։ Ուշադրություն մի դարձրեք բողոքներին ու լացին։ Կառավարությունը անհրաժեշտ ցուցումներ է տվել նաև կայմակամին։

Աբդուլահադ Նուրի»:

Աբդուլահադ Նուրի բեյը այնուհետև արձակում է հետևյալ հրամանը.

«Ոչ մի պաշտոնյա ոչ մի պատասխանություն չի կրի աքսորյալ հայերի հետ խստությամբ վարվելու համար»։

Նախորդ ցուցումներին համապատասխան Բաբում գտնվող բոլոր աքսորյալները պետք է վտարված լիներին քսանչորս ժամում։ Մահացածների մասին երկու շաբաթը մեկ ծածկագիր հեռագրերով զեկուցվում էր Կոստանդնուպոլիս։

Կառավարությունը պահանջում էր, որ բոլոր հայերը ոչնչացվեին. նրանք այլևս գոյություն ունենալու իրավունք չունեին...

Այն ժամանակ, երբ թուրքերի ցնծությունը հասել էր իր գագաթնակետին, Հալեպում տարագրումները այնպիսի դաժան բնույթ էին ընդունել, որ ժանդարմներն ու ոստիկանությունը ներխուժում էին տները, կապկպում տարաբախտ հայերին և դուրս քշում նրանց, ովքեր, չունենալով ոչ մի պաշտպանություն, աստծուց բացի, թաքնվում էին մահվան սարսափը սրտներում։

Մի անգամ մի դժբախտ մարդ դիմում էր տվել, որի մեջ ասվում էր, որ իր ընտանիքի բոլոր անդամներին, որոնք հիվանդացել էին տիֆով, փողոց էին շպրտել, գցել աղբասայլի վրա ու տարել Գարլըք։ Դժբախտը լաց ու կոծով աղաչում էր, որ գոնե տասնօրյա տարկետում տան իրեն։ Նա չգիտեր, որ մահվան է դատապարտված։ Ոչ ոք նրան չէր խղճում։ Ծառայության ժամանակամիջոցում աքսորված հայերը 10 000 խնդրագիր էին ներկայացրել մեր գրասենյակ։ Ես չտեսա, որ դրանցից թեկուզ տասը գրավեին որևէ մեկի ուշադրությունը։

Մի անգամ տեսա դիարբեքիրցի մի կնոջ, որը Հայաստանի պետնիշով սկուտեղ էր տանում։ Նրան տարան աքսորի գործերի գլխավոր կոմիտե և հարցրին, թե որտեղից է վերցրել այդ սկուտեղը։ Կինը պատասխանեց, որ դա վաղուց էր իր տանը և որ ինքը չգիտի էլ, թե որտեղից էին այն բերել։ Նրան տարան ժանդարմերիայի խցիկ, որտեղ ութ թե տաս օր խոշտանգում էին, որ իմանան, թե նրան որտեղից էր այդ սկուտեղը։ Բայց խեղճ կինը դա չգիտեր։ Նա մահացավ խոշտանգումների ժամանակ, որոնք սաստկացել էին սովից։

Եվ այսպես, Հալեպից, ուր ականատես էի եղել հարյուրավոր ու հազարավոր այսպիսի դժբախտությունների, ինձ ուղարկեցին Մեսքենե որպես Տեղահանության գործերի կոմիտեի պաշտոնյայի։ Երբ պատրաստվում էի մեկնել, ինձ կանչեց Էյուբ բեյը և ասաց. «Մենք գոհ չենք Մեսքենե ուղարկված պաշտոնյաներից և ոչ մեկի աշխատանքից։ Դուք գիտեք այդ գործը և ծանոթ եք ստացված հրամաններին։ Հետևեք, որ այդ մարդկանցից [հայերից] ոչ մեկը կենդանի չմնա։ Եթե պետք է, նրանց սպանեք ձեր ձեռքով։ Նրանց սպանելն իսկ հաճույք է»։

Մեկնեցի Մեսքենե։ Ես լսել էի կատարված ոճրագործությունների մասին։ Այնտեղ ես մնացի երկու ամիս և միայն մեկ անգամ ճամփեցի մի խումբ, որը հազիվ երեսուն մարդուց բաղկացած լիներ։

Երբ դեռ Հալեպում էի, Կ. Պոլսից ստացել էի հետևյալ ծածկագիր հեռագիրը.

«Ծածկագիր հեռագիր ներքին գործերի մինիստրից՝ հասցեագրված Հալեպի նահանգապետին։

1 դեկտեմբերի 1915 թ. Մեզ տեղեկություններ են հասել, որ մի քանի հոգևոր անձինք ուղարկվել են այնպիսի կասկածելի տեղեր, ինչպիսիք են Սիրիան և Երուսաղեմը, չնայած որ հայ հոգևորականությունը պետք է բնաջնջվեր առաջին հերթին։ Նմանօրինակ թույլտվությունը աններելի վրիպում է։ Այդ խոռ-

վարարների աքսորավայրը ոչնչացումն է։ Ես Ձեզ հանձնարարում եմ գործել սույնին համապատասխան։

Ներքին գործերի մինիստր Թալեաթ»։

Երբ ես ժամանեցի Մեսքենե, այնտեղ էր գտնվում Նիկոմեդիայի (Իզմիդի) ծեր եպիսկոպոսը։ Նա նստած էր փոքր վրանում և խորհում էր իր ճակատագրի մասին։ Հայտնի չէ, թե այդ մարդը, որն ընդունակ չէր վնաս պատճառել որևէ մեկի, ինչով էր գրավել Տեղահանության գործերի կոմիտեի ղեկավարի ուշադրությունը։

Ես գրություն ստացա, որի մեջ նշված էր, որ այստեղ է գտնվում Իզմիդի եպիսկոպոսը։ Ինչո՞ւ են նրան այստեղ պահել։ Նա պետք է այնպես տարագրվի, որ ճանապարհի որևէ շրջադարձում ընկնի ու մեռնի։ Ես չէի կարող ասել, թե այդպիսի բան չեմ անի, կամ հրաժարվել նրան աքսորելուց։ Այնուամենայնիվ մենք նրան չուղարկեցինք։

Մեկ այլ դեպքում երկու հոգևորական էին ուղարկվել Մեսքենե։ Նրանց վերաբերյալ հրամանը անչափ խիստ էր. այն ուղղակի պահանջում էր նրանց մահը։ Ես չաքսորեցի այդ երկու հոգևորականին և նրանց թողեցի իրենց տեղում։ Ես նրանց անունները չեմ հիշում, բայց կարծում եմ, որ երկուսն էլ ներկայումս գտնվում են Հալեպում։

Մեսքենեն ծայրեծայր լցված էր կմախքներով։ Այն նման էր մի հովտի, որը լցված էր չորացած ոսկորներով։

Միայն Հալեպից երկու հարյուր հազար հայ էր ուղարկվել Մեսքենեի և Ռաս ուլ-Այնի ուղղությամբ, և այդ հսկայական զանգվածից ընդամենը հինգ-վեց հազար մարդ էր մնացել կենդանի... Նորածիններին նետում էին Եփրատը։ Կանանց անողորմ ժանդարմները սպանում էին սվիններով կամ ատրճանակներով ճանապարհի տարբեր տեղերում...

Դեյր Զորի կոտորածը։ Դեյր Զորի փոստային գրասենյակի պաշտոնից արձակված պետը այսպես էր նկարագրում կոտորածի սկիզբը Դեյր Զորում։ Դեյր Զորում ստացվել էր ներքին գործերի մինիստրի ծածկագիր հեռագիրը, որի մեջ ասվում էր. «Տեղահանությունները վերջացած են։ Սկսեք գործել նախկին հրամանների համաձայն, և դա արեք հնարավորին չափ արագ»։

Կոտորածն սկսվեց ծածկագիր հեռագիրն ստանալուց երկու օր անց։

Դեյր Զորից մարդկանց քշում էին խմբերով՝ Մոսուլ ուղարկելու պատրվակով։ Բայց նրանք ի վիճակի չէին գնալ Շադադից դենը։ Ձեքի բեյը կոտորածի վայր էր ընտրել Շադադի ճանապարհին ընկած Մարաթի և Սուլարի անապատները։ Եվ քանի որ անհնար էր կոտորել այդքան մեծ թվով մարդկանց, ապա նա արհեստական սով առաջացրեց, որի ժամանակ մարդիկ սկզբում կերան ավանակներին, շներին ու կատուներին, իսկ ապա, երբ այլևս ուտելու բան չկար, սկսեցին խժռել մարդկանց դիակները, հատկապես փոքրահասակ երեխաների դիերը։

Թուրքերի ջարդարարական եռանդը չպաղեցնելու համար Ձեքի բեյը հաճախ ձի նստած ճանկում էր որևէ մանկիկի ձեռքից և գլխավերևում պտտացնելով գետին էր շպրտում՝ պատառ-պատառ անելով նրան։ Ընդամին նա սովորաբար ասում էր. «Չկարծեք, թե ես սպանեցի անմեղ էակի։ Այս ժողովրդի (հայերի) նորածին երեխաներն անգամ հանցագործներ են, քանի որ իրենց մեջ կրում են վրիժառության սերմեր։ Եթե ուզում եք ապահովել վաղվա օրը, ապա սպանեք նույնիսկ նրանց երեխաներին»։

Եվ նրանք ոչ ոքի չէին խնայում։

Միայն մի քանի գրավիչ աղջիկներ փրկվեցին կոտորածից։ Մեկ թե երկու շաբաթ անց այդ աղջիկներին ուղտերով ուղարկեցին Ռաս ուլ-Այն՝ Մարդինի ուղղությամբ, որտեղ նրանց վաճառում էին սովորաբար հինգ ղուրուշով (մեկ շիլինգ)։ Այսպես վերջացավ Դեյր Զորի կոտորածը, որի ժամանակ անապատ աքսորված գրեթե բոլոր հայերը՝ ավելի քան 200 000 մարդ, ոչնչացվեցին...

The Memoirs of Naim Rey. Turkish official documents relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian. London, 1920, p. 1—47.

220. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Երզնկա, 21 հունվարի 1917 թ.

Քղրի գավառին տեղահանությունը առանց միջոցի սկսած և վերջացած է 1915 մայիս 28-ին։

Ժողովուրդը քշած են դեպի Գուրուչայ և Մեզկենե, տեղ առ տեղ ենթարկելով զանազան սոսկալի կոտորածներու։ Քամախցի

երիտասարդությունը նույնպես զոհ է գացեր վարդապետի խոհեմ քարոզներուն, թաքցնելով իր զենքն ու փամփուշտը։

Կոտորածին գլխավոր պատասխանատուներ Հալլիթ պեյ (Դահիր փաշայի որդին) և բոլոր կառավարական պաշտոնյայք. լէ գտնված ամբողջ Քամախի շրջանը թուրք մը կամ քյուրտ մը, որ մարդասիրական զգացումով պաշտպանած կամ պահած ըլլա հայ մը։

Երզնկայի կառավարիչ Մեմտուհ պեյ իր բոլոր արբանյակներով ոչ մեկ խտիր դնելով միջոցներու մեջ, Մամախաթունեն մինչև Քամախի ծայրամասը կոտորեց հայերին։ Այսպիսով քամախցին ալ տված է իր արյան բաժինը ողջակիզված Հայաստանին հետ. քիչեր միայն ազատված են Տերսիմի քյուրտերու մոտ ապաստանելով և հիմա կապրեն Երզնկա քաղաքը։

Քամախը այժմ պատերազմական ճակատ է՝ զրկված իր զավակներեն...

Գ. Թառիկյան

ՀԽԱՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 683, թ. 17։

221. 1915—1917 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱԳՐԱԾ ՄԻ ԳԵՐՄԱՆԱՅՈՒ ՆԱՄԱԿԻՑ

Մալաթիա, 26 մարտի 1917 թ.

...Համոզված եմ, որ եթե մեր ժողովուրդն իմանար ճշմարտությունը, ապա վրդովմունքի աղաղակ կհնչեր։ Տարակույս չկա, որ այն ամենը, ինչ գործադրվում է հայ ժողովրդի նկատմամբ և դեռ վիճակվելու է նրան, մեծագույն ոճրագործությունն է համաշխարհային պատմության մեջ...

Էռնստ Ժ. Քրիստոֆել

Deutschland und Armenien..., S. 355.

222. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՏԵՐԵՇՇԵՆԿՈՅԻՆ ՀՂՎԱԾ ՀԵՌԱԳՐԻՑ

Փարիզ, 31 մայիսի 1917 թ.

...Նվաստացուցիչ կլիներ ձեռք մեկնել ինչ-որ Թալեաթի՝ լլսված պաշտոնական ջարդերի կազմակերպչին, կամ թուրքերին, որոնք յոթ դար շարունակ քրիստոնյաների ջարդեր են կազմակերպել։

Բոլոր հայերը հույս ունեն, որ Ռուսաստանը կլինի թուրքահայերի ապատարարը և գոհացում կտա նրանց ազգային բաղձանքներին։

Գեներալ-լեյտենանտ Կամսարական

АВПР, Политархив, д. 3484.

223. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ V-ԻՆ

Զեկուցագրից **Էրզրում, 27 հունիսի 1917 թ.**

Շրջելով Դերջան գավառի գրեթե բոլոր գյուղերը, մեծ մասը քանդված գտա. եկեղեցիներեն միայն Փրկչի, Ծաղկավորի և Ապրունքի եկեղեցիները չորս պատերով կանգուն տեսա։ Անոնց բոլորի շարժական ստացվածքները թալանված են իրենց սրբանոթներով ու գրքերով։ Ձեռագիր կտորներեն մեկ ավետարան խաչախ գյուղացի ծերունի Ղազարը ինձ հանձնեց, որ քրդերեն ձեռք գցած էր իր անշահախնդիր և անկեղծ ջանքերով։

Հայ եկեղեցին, ինչպես բոլոր վայրերու մեջ, տուժած է նաև այս գավառի մեջ մեծ չափով. անոր հողերը միայն կը մնան առանց տոքյումենտներու, սոսկ այս ու այն դերջանցիին վկայությամբ։

Սբ. Դավիթ վանք, Ապրունք գյուղին սահմանին մեջ, բարձունքին մը վրա գեղեցիկ դիրքով, գավառին հարավային տափաստանները, բլուրները և լեռները դիտող պարսպապատ վանք մը մեկ եկեղեցիով սբ. Կարապետ և մատուռով մը սբ. Դավիթ անունով, որուն մեջն է սրբոյն գերեզմանը...

Վանքը թալանված է ամբողջ գույքերով, 150 չափ ոչխարով և հարյուրի չափ նախիրով՝ եզ, կով, գոմեշ և մատակներով։

Վանքին տոմարական հաշիվներու մասին տեղեկություններ կարելի է ստանալ վերջին վանապետ Գրիգոր Ղազարյանե (Թարացի) և Գալուստ Ոսկանյանե (Ծաղկավոր), որոնք այժմ կը մնան Կարնո դաշտի Զիֆթլի գյուղը, և որոնք կրնան նաև տեղեկություններ տալ վանքը կողոպտողներու մասին։

...Դերջանի հայությունը, որուն թիվը եղած է 10—11 000 (տասն-տասն և մեկ հազար), գրված է Դերջանի լեռնաստանի կենտրոնական մասերը երեսունի չափ գյուղերով, երբեմն զուտ հայկական, երբեմն քյուրտ և թուրքերով խառն, շրջապատված խզլպաշ քյուրտերով։

Դերջանցին հողագործ եղած է ընդհանրապես. անոր երկու սեռերը աշխատած են հավասարապես. դերջանցի կինը արդյունաբերող ձեռք է իր ամուսնույն հավասար...

Դերջանցին 1000 (հազարե) ավելի պանդխտություն ունեցած է մեծ մասով Ռումանիո, Պուլկարիո և փոքր մասով Ռուսիո և Ամերիկայի մեջ։

1915 մայիսի 1-ին սկսած է տեղահանությունը և կոտորածը և վերջացած է մինչև մայիսի 17-ը։

Դերջանի ժողովրդին մեծ մասը Կոթերի կամուրջին մոտ կոտորված և ջուրը լեցված են. իսկ մնացյալ մասը Եբրատի ամբողջ երկայնքեն մինչև Երզնկա քաղաքի արևմտյան կողմը՝ Քեմախի կիրճը։

Ականատեսներու վկայությունը կա, որ Բաբերդի տեղահանված ժողովրդին մեկ մասը, որոնց հետամար 40 (քառասուն) հատ սայլեր հատկացուցած է եղեր գազանացած կառավարությունը տեղափոխելու պատրվակով. Կոթերի կամուրջին մոտ պատրաստված շեթայական խումբը հարձակվելով բնաջնջած է բոլորին, առանց խնայելու ոչ ոքին։

Դերջանի ժողովրդեն պատմողներ կան, որ Էրզրումի դաշտի և Փասենի բնակիչ հայերին շատ մասը կոտորվեցան մեր աչքին առջև մեզ հետ. Մամախաթունեն սկսյալ մինչև Քեմախի կիրճը։

Ջարդերու գլխավոր դերակատարները եղած են Երզնկա քաղաքի կառավարիչ (մյութեսարրֆ) Մեհմուտ պեկ, պալապան աշիրեթի պետը՝ Կյուլե աղա, քեմախցի Հալլիթ պեկ (Օսմ. խորհրդարանի անդամ). ասոնք են, որ Մամախաթունեն մինչև Քեմախի վերջին սահմանը կատարված ջարդերու և սոսկալի տեսարաններու դիվային նախագիծը մշակած են, հրահանգած են այս ու այն գազանին, որ իր գազանությունները կրկնապատկե և քառապատկե...

Այս տեղեկությունները տվող Ապրունք գյուղացի Մարտիրոս Տերոյան, մինչև Մամախաթունի անկումի ատեն ըլլալով հացագործ, տեսած է ամեն ինչ իր աչքով, և կիրճով մը անցումեն 48 ժամ առաջ լեռ փախած է մինչև ռուս հաղթական բանակի մուտքը...

Համեմատած Կարնո նահանգի մյուս գավառներու հետ Դերջանը համարելու է ամենաբաղդավորը, որ իր զավակներեն երկու հազար մինչ հարյուրի չափ, կրելով ամեն կարգի չարչարանքներ, կապրին այսօր հայրենի գավառին մեջ՝ մոտ քսան և հինգ գյուղերու փլատակներու մեջ հինգով և տասնով ծխնելույզներե ծուխեր բարձրացնելով։

Կամավորական շարքերու մեջ գտնված դերջանցին և զարիպութենե դարձողներ իրենց սիրելիներու հետ կը կազմեն ավելի քան երեք հազարի թիվ մը։ Համառ ուխտյալները հայրենի ավանդություններուն, տոկալով ամեն կարգի դժվարության, որոշած են տակավ առ տակավ շենցնել գավառը՝ վերականգնելով գյուղերը։

Նա շուտ կը վերականգնի, եթե անոր սերմ, եզ և այս օրվան ապրուստ տրվի։

Տվեք անոր սերմ և եզներ, հաջորդ տարին նա կը հոգա երկու-երեք հազար գաղթականներու հացահատիկը իր օրհնյալ գութանով և բերրի արտերով։

Հավաքեց և ամփոփեց Գ. ԹԱՌԻԿՅԱՆԸ

ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թ. 20—24

224. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՋԵԿՈՒՅԱԳՐԻՑ

(Խարբերդի մեջ հայ կղերներու կրած չարչարանքներու տեսակները)*

Ականատեսներե պատմված և բուն իսկ անձամբ տեսած և հետաքրքրված եմ կառավարության անգութ վերաբերումին հանդեպ հոգևոր պաշտոնեից մասնավորապես։ Ահա կերպերը և տեսակները չարչարանքներուն։

I. (1) Մորուքները վառել, փետել, ածիլել։

(2) Գլուխնին մեքենային տակ ճզմել ուշաթափության չափ։

(3) Կախարանի վրա հանել և կիսամեռ վիճակի մեջ վար առնել և ստիպել, որ գաղտնիքները պարզի և բռնի ստորագրել կուտան, երբ ենթական ինքնագիտակցութենե զրկված է արդեն...

II. (4) Ոտքերը բևեռել, խաչել, պայտել այնքան անխղճորեն։

* Փաստաթուղթը չի թվագրված։ Հավանաբար կազմվել է 1917 թ. սկզբին Խարբերդում (Խմբ.)։

Երկու քահանաներ հատկապես հետևյալ կերպով չարչարվեցան և այդ տանջանքներու տակ հանգյաՀ ի տեր։

(1) Խարբերդեն 3½ ժամ հեռու Կարմրի գյուղի Տեր Ասատուր քահանան կիսախնդդ վիճակի մեջ կախարան բարձրացուցին, հետո վար առին, ստիպեցին, որ զենքերու տեղը հայտնե։ Հիշյալը քաջաբար կը դիմադրե, հետո սաստիկ ծեծ, գլուխը արտաքնոցի մեջ կախել շնչահեղձ վիճակով մը երեկոյեն մինչև առավոտ... Արժ. քահանան թող տվին առավոտ մը, որ զենքերու տեղը հայտնե։ Խեղճը փախավ Խոյու ըսված գյուղը և ինքնահոժար ինքզինք ջրհորը մը ձգեց, ուրկից իսկույն ժանտարմները զինքը դուրս հանեցին, վերջապես երկար չարչարանքներե վերջ տապարով գլուխը ջարդ ու փշուր ըրին և մեռա՜վ...

(2) Բալուի քահանաներեն տեր Աստվամը ձիու նման թամբեցին և 1½ ժամու չափ տեղ վրան հեծնելով ուժասպառ վիճակի մը հասցնելեն հետո ստիպեցին, որ գաղտնիքները և զենքերուն տեղը հայտնե։ Սակայն տոկուն և կորովի կամքով դիմադրած պահուն կը պայտին, հետո կը խաչե՜ն... Տանջանքներուն այս բեռին տակ կավանդե՜ իր հոգի՜ն։

Արսեն Խաչիկյան

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 125, թ. 16

225. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԿՐԵՏԸ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ*

29 դեկտեմբերի 1917 թ. (11 հունվարի 1918 թ.)

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի զինաթափված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար։

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը այդպիսի երաշխիքներ է համարում՝

1) Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանի» սահմաններից և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձի ու կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով.

2) Տարբեր երկրներում ցրված գաղթական հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները.

3) Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, ինչը ժողովրդական կոմիսարների խորհուրդը կպնդի թուրքական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս.

4) «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության կազմակերպումը դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով։

Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թուրքահայաստանի» բնակչությանը ըստ ամենայնի օժանդակել 2-րդ և 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև ձեռնամուխ լինել խառը հանձնաժողովի ստեղծմանը «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերի դուրս բերման ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին)։

Ծանոթություն. «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի դեմոկրատորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, հարակից և վիճելի (մուսուլմանական և այլ) օկրուգների դեմոկրատորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ համատեղ[58]։

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ
Վ. Ուլյանով (Լենին)

Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար
Ի. Ջուգաշվիլի (Ստալին)

Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի կառավարիչ
Վ. Բոնչ-Բրուևիչ

Խորհրդի քարտուղար
Ն. Կորբուճով

«Декреты Октябрьской революции», т. I, Партиздат, М., 1933, с. 393—394.

* Դեկրետը հաստատվել է Խորհուրդների 3-րդ համառուսաստանյան համագումարի կողմից 1918 թ. հունվարի 15-ին (28-ին)։

226. ԳՆԴԱՊԵՏ Զ.-Ի ՀԵՏ ԿԱՅՑԱԾ ԶՐՈՒՅՑԻՑ

Մեր մեծ ու ահավոր օրերին արյան գինը մեծ չէ։

Գրեթե երեք տարվա անխնա, կատաղի պայքարի ընթացքում մենք ընտելացել ենք մահվան։

Գրեթե անտարբեր ենք աչքի անցկացնում լրագրային հաղորդումները նոր մահեր ու նորանոր տառապանքներ պատճառած նոր արյունոտ մարտերի, թույլի նկատմամբ ուժեղի նոր անողոք ու արյունռուշտ ծաղրուծանակի, սանձարձակ կրքերի այդ աննախադեպ հրճվալից մոլեգնման նոր ու հանապազ արյունահեղ իելահեղությունների մասին, որպիսին եղավ ներկայիս պատերազմը...

Չգիտեմ, ընթերցող, թե Դուք ինչպես, բայց ես տակավին չեմ կարողանում անտարբեր մնալ, երբ ինձ պատմում են, պատմում են ականատեսները, ինչպես որ հենց երեկ սակրավորների կովկասյան դումարտակներից մեկի հրամանատար գնդապետ Զ.-ն, որը մի քանի կարճ օրով պոկվել է ռազմաճակատից, այն արյունալի սարսափների, այն նոր գազանությունների մասին, որոնց մասին արդեն ասել են գուցե և սառը, խուլ, մեզ չհուզող լրագրային թվերը։

Այո, տեսնողների խոսքերը տակավին զարմանալիորեն անհաղթահարելի ուժ ունեն։ Իսկ գնդապետ Զ.-ն ընդամենը ոչ միայն տեսել է, այլև ինքն իր կրտսեր սպայի հետ մասնակցել է դժբախտ հայ ժողովրդի մշտահոլով, անհատնում ողբերգության անթիվ-անհամար տեսարաններից մեկին, հողին հանձնելով մի քանի հարյուր տանջամահ արված հայ կանանց, մանկատի աղջիկների և կրծքի երեխաների արդեն կիսափտած ոսկորները։

Բայց ավելի լավ է ես աշխատեմ հաղորդել իր իսկ գնդապետ Զ.-ի պատմածը, և ընթերցողը կտեսնի, որ այն դաժանորեն պարզ է նաև առանց մեկնաբանությունների։

«Մուշ քաղաքի շրջանի Օ. գյուղի մոտով, որ հենց Եփրատի ափին է,— սկսեց պատմել գնդապետը,— պատահաբար անցել էի դեռ նախորդ գարնանը և բնավ չէի մտածում, որ երբևէ նորից կընկնեմ այդ վայրերը։

Եփրատի վրայի մեծ, զանգվածեղ, հավանաբար, արդեն դարավոր կամոջի մոտերքում, որով մենք պատրաստվում էինք անցնել... մեզ հանդիպեց մի կորամեջք, բոլորովին ալեհեր հայ ծերունի, որը ինչ-որ խղճուկ գունավոր ցնցոտիներ էր հագել, եթե միայն կարելի է ասել, թե նա հագնված էր... Ծերունին խոր գլուխ տվեց ինձ... Հանձնակատարիս միջոցով (նա հայ է) խոսեցի նրա հետ։ Ուզում էի իմանալ, թե ուր է անհետացել Ս.-ի՝ մեծ ու երբեմնի, թերևս, ունևոր գյուղի ողջ բնակչությունը, քանի որ անցնելով նրա միջով, այնտեղ ոչ մի մարդու չհանդիպեցի։ Նույնիսկ սովորական շների. դրանք էլ չկային։ Միայն կիսավեր տների այլանդակ երախներ էին, քարուքանդ փողոցներ, կեղտ ու լքվածություն։

Եվ սահմռկեցուցիչ, գերեզմանային լռություն։

Ինչպես Ձեզ ասացի, որոշեցի հարց ու փորձ անել հանդիպած ծերունուն, թե ուր են փախել բնակիչները։

Հանձնակատարս այդպես էլ հարցրեց նրան։ Հենց այդ պահին ոտք էինք դնում կամրջին։

«Ուր են փախել բնակիչնե՞րը»,— ասես չհասկանալով հարցը, կրկնեց ծերունին...

«Ուր են փախել»,— և նա դառնորեն ուշադրությամբ ժպտաց։

«Ա՜յ, այնտեղ,— պատասխանեց նա,— այնտեղ»,— և դողդողուն ձեռքով ցույց տվեց ներքև՝ գետը... «Միայն թե այն ժամանակ ուրիշ ջուր էր,— ավելացրեց նա, մի պահ լռելով,— ջուրը հորդ էր։ Խորն էր Եփրատն այն ժամանակ ու սրընթաց։ Ափերից դուրս էր հորդել... Բոլորն այնտեղ գնացին։ Միայն ես եմ մնացել։ Գյուղում չէի։ Գործով հարևան գյուղ էի գնացել...»։

Եվ ես իմացա զարհուրելի եղելությունը, թե գյուղը գրված թուրքերը ինչպես էին շրջապատել այն, ամբողջ, բացարձակապես ամբողջ արական բնակչությանը, ներառյալ մինչև իսկ ամենափոքր տղաներին քշել կամուրջ, ուղիղ մեջտեղը և այնուհետև խզակոթերի ու սվինների հարվածներով սկսել էին այդ դժբախտներին թափել հորդառատ Եփրատը։ Ընդ որում կամրջի երկու կողմում հսկողներ էին կարգել, որ գետը նետվածներին թույլ չտան ափ ելնել։ Նրանց, ովքեր համառում էին, առանց որևէ այլևայլության գնդակահարում էին ինչպես վայրի գազանների։

«Իսկ ի՞նչ եղան կանայք, երեխաները»,— հարցրի ես։

«Կանա՞յք, երեխանե՞րը»,— նորից կրկնեց ծերունին։ «Ի՞նչ իմանանք։ Մենք չգիտենք։ Գուցե ավելի հեռու են քշել, գուցե նրանց էլ են որևէ տեղ ոչնչացրել»։ Եվ այստեղ ծերունին այլևս դադարեց թաքցնել իր զգացմունքները, նա այնպիսի ատելու-

թյամբ, այնպիսի չարությամբ էր լցված թուրքերի հանդեպ, որ ամբողջ մարմնով դողում էր ցնցվելով, ինչպես երկարատև ցըրտից, թեև շոգ էր։

Այսպիսով, այն ժամանակ Ս.-ի կանանց ու երեխաների մասին այդպես էլ ոչինչ չիմացա։ Նրանց ճակատագրի մասին իմացա չորս ամիս անց՝ օգոստոսին։ Եվ ահա թե ինչպես։ Այդ ժամանակ ես Ս.-ում հայտնվեցի, արդեն ոչ պատահաբար։ Հրամայված էր որոշ ինժեներական աշխատանքներ կատարել այդ գյուղում։ Մենք էլ ձեռնամուխ եղանք դրանց։ Այլ աշխատանքների թվում պետք է ամրացնեինք և զանազան նպատակների համար հարմարեցնեինք մի քանի մարագ։ Առաջինից, որից մենք սկսեցինք, մնացել էին միայն անտաշ քարից կրով շարված պատերը, ոչ լուսամուտ կար, ոչ դուռ, ոչ տանիք։ Պատերը 20 քայլ երկարություն և 10 քայլ լայնություն ունեին։

Հենց նոր էին իմ զինվորները գործի անցել, երբ նրանց անմիջապես զարմացրեց այն, որ մարագի հատակը անսովոր փրխրուն է, ասես հերկած լինի, մինչդեռ սովորաբար այնպիսի մարագներում, ինչպիսին դա էր, որի մասին ասում եմ, հատակը լինում է հիանալի հարթ ու պինդ, ինչպես կավե հատակը։ Մտածեցինք, թե մարագում ինչ-որ նպատակով բերովի հողի շերտ է փռած։ Սկսեցինք փորել... և՝ մի գանգ, հետո ուրիշը... Երբ այդ ամենի մասին ինձ զեկուցեցին, հրամայեցի փորել հնարավորին չափ զգուշորեն, և մեկ-երկու օրից վրայի շերտը հանեցինք։ Այն, ինչ մենք տեսանք, այն աստիճան սարսափելի էր, որ ամեն ինչի ընտելացած զինվորներն էլ էին երկար ու լուռ կանգնած։

Մենք տեսանք, որ երկարությամբ ձգվող երկու պատերի տակ իրար շատ մոտ փռված են մարդկային կմախքներ՝ ծածկված, կիսափտած, բայց և այնպես բավականաչափ պահպանված հագուստով, այն աստիճան պահպանված, որ տարբեր դիրքերով՝ հանգիստ, ասես քնած վիճակներից մինչև շարշարանքներից ջղաձգորեն խեղված, գունավոր շորեր հագած կմախքների սահմրոկեցուցիչ տպավորություն էին թողնում։

Ինչպես պարզվեց, այդ ահավոր ատամնաբաց գանգերն ու կմախքները, բոլորն էլ կանացի էին ու մանկական։ Ընդ որում, եթե դատելու լինենք հագուստի գույներից, հյուսքերի գույնից ու երկարությունից, իսկ ըստ էությանս հիանալի մարգարտաշար առողջ ատամներից, թուրքերի զոհն էին դարձել կամ բոլորովին

ջահել կանայք, կամ դեռատի աղջիկներ, կամ երեխաներ։ Դանգերի մեծ մասը գլխաշորերով էր, որոնք կապված էին այնպես, ինչպես սովորաբար կապում են հայուհիները։ Դուք պատկերացնո՞ւմ եք մերկ գանգ, որը ժպտում է ամբողջ ատամնաշարով և գլխաշորով է։ Բայց բոլորիս վրա առանձնապես ծանր տպավորություն թողեց մի երիտասարդ մոր կմախք, որի ոսկրոտ ձեռքերում, կրծքավանդակին սեղմված, հանգչում էր չորս-հինգ ամսական մի մանկիկ։ Ես այդ դժբախտին առանձին լուսանկարեցի։ Ցավոք, հետո, երբ թաղում էինք այդ բոլոր զոհերին, փոքրիկ կմախքը չպահպանվեց մոր գրկում և ցրիվ եկավ բազում քայքայված ոսկրակտորների, իսկ փոքրիկ գանգը բոլորովին փոշեցրիվ եղավ։ Այդ զոհի առաջ ես ու զինվորներս երկար կանգնեցինք ճնշող լռության մեջ։

Գանգերի և առհասարակ ոսկորների մեծամասնությունը ոչ մի զենքով վնասված չէր, բայց մենք գտանք մի քանի գանգեր՝ ճեղքված ու հատված սուր սառը զենքով, հավանաբար տապարներով, իսկ թուրքերի տապարները իրոք շատ սուր են։

Հենց այդտեղ՝ մարագում, թափթփված էր զանազան տնային կահ-կարասի, որն օգտագործվել էր։ Ըստ երևույթին թուրքերը կերակրել էին դժբախտներին, քանի դեռ ինչ-որ բանի համար պահում էին մարագում։ Թուրքական բանակի բարբարոսության ու վայրենության այդ զոհերի կործանումը ես այսպես եմ պատկերացնում. հավանաբար, երբ մենք սկսել էինք հարձակվել, և թուրքերը որոշել էին թողնել գյուղը, կանանցով մարագը, պինդ մեխելով նեղ լուսամուտներն ու դուռը, նրանք հրկիզել էին։ Փայտե սյուներն ու նույնպես փայտե տանիքը այրվելով փլվել էին և թաղել բոլորին, ովքեր գտնվում էին մարագում։ Իսկ ինչ վերաբերում է այն կանանց, որոնց գանգերը ճեղքված էին, ապա դա հավանաբար նրանք էին, ովքեր փորձել էին փրկվել։

Երբ փորել հանել էինք բոլոր կմախքները, որոնք, պարզվեց, 112 էին, մենք դրանք թաղեցինք մի ընդհանուր գերեզմանում, տակը փռելով խոտ ու ճիմ, իսկ դրսից մի մեծ բլուր շինելով, որի գլխին փայտե մեծ խաչ տնկեցինք, վրան տախտակ՝ հետևյալ մակագրությամբ. «Աստ հանգչում են թուրքական բանակի գործողության զոհերի՝ հայ կանանց ու երեխաների 112 կմախքներ՝ կիսաայրված, հրկիզված մարագի տանիքի տակ ճզմված, որը գտնվում է խաչից աջ։ Բացվել են Ս. գյուղում ինժեներական աշխատանքներ կատարելիս և թաղվել սակրավորների կով-

կասյան գումարտակի հրամանատար գնդապետ Զ.-ի և նույն գումարտակի կրտսեր սպա, վառատար Ռ.-ի հոգածությամբ»։ Քանի որ մեզ հետ քահանա չկար, հուղարկավորման ծեսը կատարեցի ինքս. մի քանի աղոթք ասացի, որոնք հիշում էի, սակրավորների հետ երգեցինք «հավերժ հիշատակը» և վերջ։

Մեկ ամիս անց հայկական մի ուրիշ գյուղում նույն կերպ թաղեցինք շուրջ հարյուր կանանց ու երեխաների կմախքներ, որոնք նույնպես գտել էինք մարագում աշխատանքներ կատարելիս, ինչպես որ Ս.-ում։

Ես նկարահանել եմ մեր գտած բոլոր ոսկորները։ Ցավոք, այս բոլոր կմախքները (ընդսմին գնդապետ Զ.-ն ինձ ցույց տվեց մի լուսանկար) ինձանից առաջ ինչ-որ այլասերված դեղամոլի կողմից կտրատվել էին ու դասավորվել «պատկերային կարգով»։ Ես խիստ վրդովվել էի այդ «պատկերայնությունից»։

Բուն գյուղը, ես Ձեզ արդեն ասացի, մենք գտանք կիսավեր։ Հայկական եկեղեցին, ըստ երևույթին, բավականին գեղարվեստական ճարտարապետությամբ, վերածված է աղբանոցի և ժամանակի ընթացքում միաձուլված աղյուսների ու ցեմենտի առանձին մեծաբեկորների, մի քանիսը՝ գեղարվեստական երեսպատմամբ։ Առհասարակ հայկական տաճարների հետ Թուրքերը վարվում են առանձնապես բարբարոսաբար, մի առանձին վայրենությամբ։ Ի դեպ, ինձ վիճակվել է աշխատանքներ կատարել Շանկի Քիլիսայի կամ սբ. Կարապետի հայկական վանքում։ Այն գտնվում է Բագլանի լեռնանցքի լանջին։ Բնությունն այստեղ աչք է շոյում։ Վանքը, ինչպես ինձ ասացին, շատ հին է։ Մինչ պատերազմը վանքը ծաղկում էր։ Ուներ իր ջրաղացները, իր ձիթհանը, խաղողի այգիները, գինեգործական և տնտեսական այլ «ծառայություններ»։ Իսկ այժմ այդ բոլորը փլատակների են վերածված։ Միայն ջրմուղն է մնացել անվնաս. առանց դրա բարբարոսներն էլ չեն կարող ապրել։

Ճարտարապետական ինքնատիպ ոճի վանական խցերն էլ են փլատակների վերածված և, բացի այդ, սարսափելի ապականված են ու կեղտոտված։ Ապականված է նաև մայր եկեղեցին։ Եկեղեցու սեղանի մոտ ինչ-որ կերպ պահպանվել են զարմանալի նուրբ փորագրությամբ ճերմակ-ճերմակ, ինչպես ձյունը, մարմարե սալեր։ Այդ սալերից մեկը, ինչպես նաև 117 տարի առաջ ձուլված զանգը՝ ամբողջովին գնդակոծված ու արկերով ջարդված, բերել եմ հետս, և ահա կուզենայի պահպանել հինավուրց եկեղեցու այդ հուշարձանները, մինչև որ այն վերականգնեն...

Ես Ձեզ պատմեցի, որ Թուրքերը մի առանձին համառությամբ ու վայրագությամբ են ավերում հայկական եկեղեցիները։ Եվ այդպես է ամենուրեք։ Մուշում փրկվել է մեն մի եկեղեցի և դա էլ այն պատճառով, որ նրանում տեղավորված էր Թուրքերի ալյուրի պահեստը։ Սրբապատկերները ամենուր և միշտ ապականված են ու պղծված ամենանողկալի, ամենաբարբարոսական ձևով։ Թուրքն ասես ուզում է աշխարհիս երեսից ջնջել այն ամենը, ինչ հայկական է։ Օրինակ, ինչպիսի չարությամբ պետք է համակվել, որ հրետանին դիտմամբ տեղադրվի հայկական տները գնդակոծելու համար, ինչպես եղել էր Մուշում, որտեղ Թուրքական հրանոթները հայկական թաղն ավերել էին գրեթե գիշեր-ցերեկ։ Եվ այդ չարության, այն ամբողջ չարիքի դիմաց, որ Թուրքերը պատճառել են և պատճառում են նահատակ ժողովրդին, հայերը հատուցում են միայն մի բանով, ինչով որ միայն կարելի է հատուցել՝ խոր, ամենաահագնալից, մոլեգին ատելությամբ, որը խլացնում է մնացած բոլոր մտքերը»։

Այսպիսիք են ահավոր եղելությունները, որոնց մասին ինձ պատմեց գնդապետ Զ.-ն, և վստահ եմ, ընթերցող, որ չնայած ամբողջ ընտելությանը մահվանն ու արյանը, չնայած համակ անտարբերությանը տառապանքների հանդեպ, այս եղելությունները այնուամենայնիվ կշանթեն ձեր ուղեղը և կստիպեն ձեր սրտերին տանջալից ճմլվել...

Ֆ. Շիշմարյով

«Кавказское слово», 1917, 22 января, № 18.

227. ՀԱՏՎԱԾՆԵՐ Ա. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ «ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ» ԳՐՔԻՑ

Կոտորածի նախանշանները: *1914 թվականի աշնանը բանակ էին զորակոչվել օսմանյան բոլոր հպատակները՝ 18-ից մինչև 50 տարեկան, այդ թվում և այն հայերը, որոնք զինծառայությունից ազատվելու հարկ էին վճարել։ Բայց 1915 թվականի սկզբին՝ Թուրքերի առաջին պարտություններից հետո, բոլոր հայ զինվորները հեռացվեցին Թուրքական շարքերից և հավաքվեցին «աշխատանքային գումարտակներում»՝ ճանապարհների*

ու ամրությունների շինարարությունում օգտագործելու համար։ Միևնույն ժամանակ դեկրետով կարգադրված էր զինաթափել կայսրության ամբողջ հայ քաղաքացիական բնակչությանը։ Այդ դեկրետով դրվեց ահաբեկչական վարչակարգի սկիզբը հայկական բոլոր նահանգներում։ Այն դեպքերում, երբ հայերը հանձնում էին զենքը, Կոստանդնուպոլիս զեկուցագրեր էին ուղարկվում դավադրության բացահայտման մասին։ Իսկ եթե խուզարկությունները ցանկալի արդյունք չէին տալիս, ապա դիմում էին խոշտանգումների, և խաղաղ տրամադրված շատ հայեր ստիպված էին զենք գնել մուսուլմաններից, որպեսզի այն հանձնեն իշխանություններին։ Բայց ոմանք էլ, կանխատեսելով, որ հայերի զինաթափումը սոսկ կոտորածի նախանշան է, պահում էին պաշտպանության միջոցները, վճռելով ավելի թանկ վաճառել իրենց կյանքը, քան իրենց հայրենակիցները 1895 թվականին։

Կոտորած տեղում։ Թուրքական կառավարության ստահոդ հայտարարություններին հակառակ, ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չէր եղել։ Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան կոտորածի սպառնալիքը, ենթարկվելով իրենց կյանքը հնարավորին չափ թանկ վաճառելու բնական ցանկությանը։

Վանում նրանք զենքի դիմեցին միայն շրջակա գյուղերի բնակչության մեծ մասի կոտորածից և գալիի՝ Ջևդեթ բեյի հրամանով նրանց անվանի շատ քաղաքացիների դավաճանական սպանությունից հետո, որը, բացի այդ էլ, նրանց թաղերը շրջապատել էր խրամատներով։ Ռազմական գործողություններն սկսել էին թուրքերը, որոնք, սակայն, չէին կարողացել գրավել հայկական դիրքերը և 1915 թ. մայիսի 20-ին դադարեցրել էին պաշարումը ռուսների մոտենալու հետևանքով։ Վանից վռնդված Ջևդեթ բեյը իր «մսագործների գումարտակներով» (kasap taburu), ինչպես անվանում էին նրանց, սկզբում շարժվեց Սորբի վրա, որտեղ նա սրի քաշեց (մայիսի վերջերին) բնակիչների մեծ մասին։

Էնվեր փաշայի պատվարժան փեսան այնուհետև վերադարձավ Բիթլիս, որտեղ կոտորեց (հուլիսի վերջերին) 15 000 հայ, որոնք սոսկ թույլ դիմադրություն ցույց տվին։ Այդ ընթացքում Դիարբեքիրի թուրքերն ու քրդերը կոտորեցին Սիլվանի, Բեշերի և Դիարբեքիրից մինչև Սասնա լեռների ստորոտը փռված ընդարձակ հարթավայրում ապրող հայերին։ Բայց Սասունի լեռնցիները գաղթականների աջակցությամբ որոշեցին պաշտպանվել։ Հուլիսի սկզբներին 20 000 մարդուց բաղկացած բանակով համալրված թուրքերը Քյազիմ բեյի հրամանատարությամբ, չնայած կատաղի դիմադրությանը, կոտորեցին Մուշի հարթավայրի բոլոր գյուղացիներին։ Հուլիսի 10-ին ռմբակոծվեց բուն Մուշ քաղաքը. չորսօրյա դիմադրությունից հետո տղամարդիկ սպանվեցին, կանայք ու երեխաները ողջակիզվեցին ճամբարներում, ուր քշել էին նրանց։ Բայց սասունցիների դիմադրությունն ընկճվեց միայն օգոստոսի 5-ին, երկարատև ու ահավոր մարտերից հետո, որոնց ժամանակ նրանց մեծ մասը զոհվեց։ Հուլիսի վերջերին թուրքերին հաջողվեց ժամանակավորապես վերադառնալ Վան և ոչնչացնել քաղաքի այն բնակիչներին, որոնք չէին հետևել ռուսական բանակին նրա ժամանակավոր նահանջի ժամանակ։

Հարկ է ընդունել, այդպիսով, որ Վանի, Բիթլիսի, Մուշի և Սասունի շրջանների հայերը օրինապահ էին մնացել մինչև այն պահը, երբ նրանք դիմադրություն էին ցույց տվել, թույլ չտալով, որ իրենց սրի քաշեին իբրև «վնասակար ու վտանգավոր» տարրի՝ հանուն թանկագին օսմանյան հայրենիքի բարօրության ու անվտանգության։ Հարկ է նաև նշել, որ չնայած պատերազմի սկզբնական շրջանում ձեռնարկված բոլոր փորձերին ու իրականացված խուզարկություններին, նրանք կարողացել էին ինչ-որ զենք պահել և հանդգնել էին դրանից օգտվել ընդդեմ իրենց դահիճների, որոնք որոշակի քանակությամբ շարունակում էին ուղեկցել նրանց վախճանի ճանապարհին։ Բայց պետք է հատկապես ընդգծել, որ հայերը միայն պաշտպանվում էին և երբեք առաջինը չէին հարձակվում թուրքական զորքերի վրա։

Առավել ևս ճիշտ չէ խոսել հայկական խռովության մասին Օսմանյան կայսրության այլ մասերում։

Զեյթունում «խռովությունը» սահմանափակվել էր մի վանքի պաշտպանությամբ երկու տասնյակ հայերի կողմից, որոնց համբերությունից հանել էին ժանդարմների դաժանությունները. մի ձեռնարկում, որը մեկուսի էր և բնավ չէր պաշտպանվել բնակչության կողմից, վերջինս, տակայն, այդուհանդերձ տարագրվել էր։

Սվազի վիլայեթի որոշ քաղաքների, ինչպես, օրինակ, Ամասիայի և Շապին-Գարահիսարի հայերը սկզբում ամեն ջանք

գործադրեցին Թուրքերի հետ ընդհարումից խուսափելու համար, բայց, կանխատեսելով կոտորածը, գերադասեցին զոհվել զենքը ձեռքներին։ Նույն կերպ զոհվեցին նաև Ուրֆայի հայ բնակիչները։ Մուսա լեռան վրա նույնպիսի վիճակում գտնվող հայերը փրկվեցին ֆրանսիական տորմիղի կողմից։

Եվ, այդպես, զինված դիմադրության բոլոր դեպքերում տեսնում ենք ոչ թե հեղափոխականների, այլ դժբախտների, որոնք ինչ-որ զենք էին պահել և գերադասել էին կռվել մինչ ի մահ, քան դանդաղ տառապանքներ կամ աքսորի թշվառությունները կրել։ Ի դեպ, թե ինչի էին հանգեցնում ամեն տեսակ դիմադրությունից հրաժարվելը և զենքը հանձնելը, երևում է Գ. քաղաքի օրինակից, որտեղ վալին, ստիպելով հանձնել զենքը, շտապեց զեկուցել Կոստանդնուպոլիս հայկական հեղափոխության բռնկման մասին, որն ինքը, հետևաբար, հարկադրված էր ճնշել։

Այսպիսով, հայերին չի կարելի նախատել այն բանի համար, որ նրանք պաշտպանում էին իրենց կյանքը։ Սակայն չպետք է մոռանալ, որ միայն աննշան փոքրամասնությունը կարող էր դա անել։ Հայերի մեծ մասը դեռ պատերազմի սկզբին իր զենքը հանձնել էր իշխանություններին, որի հետևանքով էլ պետք է առանց նվազագույն իսկ դիմադրության ենթարկվեր այն դաժան ճակատագրին, որ նրա համար նախապատրաստել էր կառավարությունը։

Ամսորյալների տարագրումը։ Տեղահանությունը միանման չէր իրականացվում ամբողջ կայսրությունում։ Սկզբում տարագրվեց աշխատունակ արական բնակչությունը։ Որոշ վայրերում բանակ չտարված երիտասարդ հայերը դեռ գարնանը նետվել էին բանտերը։ Այլ վայրերում նախապատրաստությունների համար սովորաբար ժամկետ էին տալիս մի քանի օր կամ ժամ և նույնիսկ ընդամենը մեկ ժամ*։ Շատ հաճախ մունետիկի միջոցով հայերին կանչում էին կառավարական շենքի մոտ ու ձերբակալում. երբեմն կալանում էին փողոցում կամ էլ իրենց տներում։ Այնուհետև ձերբակալում էին կանանց ու երեխաներին, գործադրելով նույն անողոք եղանակները։

Այն պայմաններում, երբ տղամարդիկ հանկարծակի կտրվում էին իրենց աշխատանքից և հարկադրված էին թողնել իրենց արհեստանոցներն ու կրպակները, հնարավորություն չունենալով անգամ կողպել դրանք, երբ նրանք ստիպված էին լքել իրենց անասունները սարերում և իրենց գութանները, վարատեղերում, երբ կանանց ճանկում էին անկողիններում կամ լվացք անելիս, ակներև է, որ խոսք անգամ չէր կարող լինել այն մասին, որ նրանք հաջողեցնեին կարգավորել իրենց գործերը։ Բայց անգամ այն դեպքերում, երբ դրա համար մի քանի խղճուկ օր էր տրվում, տարագրվողները սոսկ աննշան օգուտ կարող էին քաղել դրանից։ Քանի որ, եթե մի քանի քաղաքներում, դեկրետի պահանջներին հակառակ, իշխանությունները թույլ էլ էին տվել ծախծխելու ունեցվածքը, դա կատարվում էր չնչին գնով, բացի այդ էլ վաճառքից ստացված գումարը հաճախ բռնագրավվում էր ոստիկանության կողմից։ Այն վայրերում, որտեղ վաճառքն արգելված էր, հայերի գույքը մասամբ կիտվում էր խանութներում առանց որևէ հաշվառման, մասամբ էլ հափշտակվում բնակչության կողմից. իսկ անշարժ կայքը, որպես կանոն, վարձով տրվում էր մուսուլման մուհաջիրներին։ Ինչ վերաբերում է տարագրվողների ունեցվածքը հսկելու համար ստեղծված կառավարական հանձնախմբերին, ապա նրանք չէին բավարարվում նրանով, որ մնային օսմանյան իշխանությունների առանց այդ էլ բավականաչափ անփառունակ համբավի սովորական մակարդակին. նկատված չարաշահումները գերազանցում էին նմանօրինակ ամեն բան, ինչ մինչև այդ հայտնի էր անգամ Թուրքիայում։

Այսպիսով, տարաբախտ աքսորյալները իրենց գողգոթայի սկզբին ունեին միայն մի հնարավորություն՝ իրենց հետ վերցնել ինչ-որ բան, որքան որ դա հնարավոր էր անել փոխադրամիջոցների պակասի և թանկության պայմաններում։

Կոտորած ճանապարհին։ Տարագրվող հայերի քարավանները, որոնք բաղկացած էին բացառապես առողջ տղամարդկանցից, լիովին ոչնչացվում էին ճանապարհին, սովորաբար մեկնման վայրից ոչ հեռու։ Այդ չարանենգ ոճրագործությունը կատարվում էր կամ քուրդ ավազակների, կամ Թուրք գյուղացիների, կամ Թուրք ժանդարմների, կամ էլ կանոնավոր բանակի զինվորների միջոցով։ Խառը քարավաններում սովորաբար սպանում էին միայն տղամարդկանց, իսկ երիտասարդ կանանց առևանգում էին կամ բռնաբարում։ Բայց եղան դեպքեր, երբ կոտորեցին առանց խտրության՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին։ Գերմանացի պրոֆեսոր Նիպագեն հաղորդում է Ռաս ուլ-Այնում

* Եղել էին մի քանի բացառություններ, ինչպես, օրինակ, Էրզրումում, որտեղ վալին համաձայնել էր երկու շաբաթ ժամկետ տալ։

բացառապես կանանցից ու երեխաներից բաղկացած քարավանը կոտորելու մասին։ Կոտորածին սովորաբար նախորդում էին ահավոր դաժանություններ։

Պետք է առանձնապես նշավակել ճանապարհների շինարարությունում չբաղված հազարավոր հայ զինվորների սպանությունը, որոնց գնդակահարել կամ սրատել էին իրենց թուրք «ընկերները»։

Աքսորյալների նկատմամբ տմարդի վերաբերմունքը տեղահանության ժամանակ։ Աքսորյալների քարավանները, որոնք բաղկացած էին գլխավորապես ծերերից, կանանցից ու երեխաներից, ճամփա ընկնելու պահից դառնում էին ամենաանամոթ շահագործման թիրախ իշխանությունների կողմից, որոնք պետք է հոգ տանեին նրանց մասին։ Քաղաքից մեծ հեռավորության վրա սայլապանները ժանդարմների մասնակցությամբ նրանց իջեցնում էին և հետ դառնում իրենց սայլերով, որոնց համար ոսկու գին էին վճարած լինում, դժբախտներին թողնելով ճանապարհը շարունակելու ոտքով... Գիշերները ավազակները հարձակվում էին քարավանների վրա ու թալանում դրանք, սպանում տղամարդկանց, բռնաբարում կամ առևանգում ջահել կանանց, գողանում երեխաներին։ Այդ բանում ժանդարմներն օգնում էին հրոսակներին, իրենց զոհերից փող շորթելով նրանց «պահպանության» համար։ Կայմակամները (գավառապետները) հայերի անվտանգությունը երաշխավորելու համար նրանց ստիպում էին իրենց փող վճարել, իսկ հետո թույլ էին տալիս հարձակվել նրանց վրա։ Իշխանությունները գրեթե պարեն չէին բաշխում. հաճախ նույնիսկ խոչընդոտներ էին հարուցում, որ աքսորյալները իրենց պարենով չապահովեին տեղահանության ժամանակ։ Այդ պատճառով էլ աքսորյալները հազարներով զոհվում էին քաղցից ու ծարավից։

Ժանդարմների ու ելուզակների դաժանությունը չափ ու սահման չուներ։ Որոշ դեպքերում նրանք գաղթողների վրայից հանում էին ամբողջ հագուստը և ստիպում քայլել օրեր շարունակ, միանգամայն մերկ քայլել անապատի կիզիչ արևի տակ, իսկ երբ հասնում էին ջրհորների, ժանդարմները վաճառում էին խմելու իրավունքը։ Ծննդաբերելուց անմիջապես հետո կանայք պետք է շարունակեին ճանապարհը. հազարավոր մարդիկ ընկնում էին ճանապարհներին, մահանալով սովից, ծարավից ու հոգնածությունից։ Դիակները, հատկապես երեխաների, հաճախ՝ հատված թաթիկներով, մնում էին փռված ճանապարհներին։ Ժամանակ առ ժամանակ դահիճները, ասես կատաղելով կենդանի մնացածների դիմացկունությունից, կանանց ու երեխաներին ջրահեղձ էին անում գետերում, ողջակիզում կամ սպանում դաժան կտտանքներով։ Եփրատը հազարավոր դիակներ էր տանում։ Բազմաթիվ ուրիշներ, հուրախություն ճուռակների ու շների թողնվելով անթաղ, ժանտահոտությամբ թունավորում էին մեծ ճանապարհները։

Նման պայմաններում, ինչպես վկայում են գերմանացիները, տարագիրների քարավանները, որոնք Մեծ Հայքից ճանապարհ ընկնելիս հասնում էին հազարավորների, հարավ ժամանելու պահին կրճատվում էին մինչև հարյուրավոր ու ավելի պակաս թվով մարդիկ։ Խարբերդից, Ակնից, Թոքաթից և Սեբաստիայից 18 000 տարագրվածներից Հալեպ էին հասել ընդամենը 350 մարդ, իսկ Էրզրումից տեղահանված 19 000-ից մնացել էր 11 մարդ։ Ակներև է, որ տեղահանությունը երբեք այդպիսի «արդյունքների» չէր հանգեցնի առանց թուրքական իշխանությունների մասնակցության և նույնիսկ հրահրման, որոնք ոչ միայն անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեցին պարեն մատակարարելու և քարավանների անվտանգությունն ապահովելու համար, այլև խրախուսում ու կազմակերպում էին հրոսակների հարձակումներ աքսորյալների վրա, ժանդարմներին և կանոնավոր զորքերն օգտագործելով օրինականացված կոտորածի համար։ Եվ եթե, չնայած այդ համագործակցությանը, աքսորյալների մի մասը այնուամենայնիվ հասնում էր նշանակման վայր, ապա դա միայն այն պատճառով, որ հարկավոր էր եվրոպական [հասարակական] կարծիքին ապացուցել, թե նշանակման վայր էր ժամանել հայերի առնվազն գոնե մի որոշ մասը, ինչպես և այն պատճառով, որ նոր տեղում ողջ մնացածների կործանումը կասկած չէր հարուցում։

Աքսորյալների նկատմամբ վերաբերմունքը ժամանակավոր ճամակենտրոնացման ճամբարներում և նշանակման վայրերում։ Այն հայերը, որոնց փոխադրում էին Անատոլիական երկաթուղիով, ճիշտ է, խուսափեցին ելուզակների հալածանքներից, քանի որ գնացքներում էին, բայց նրանց վիճակն ավելի նախանձելի չէր։ Լցված լինելով անասնավագոններ, գտնվելով ավելի մեծ նեղվածքի մեջ, քան անասունները, նրանք շնչահեղձ էին լինում այնտեղ, մեռնում սովից ու ծարավից. հաճախ մայրերը

իրենց երեխաներին պատուհաններից նետում էին գետը, որ վերջ դնեն այդ սովահար փոքրիկ արարածների տառապանքներին։ Ջորքերի տեղաշարժը և աքսորյալների քանակը շատ էին դանդաղեցնում այդ ճանապարհորդությունը, և շատ կետերում մարդկանց քշում էին համակենտրոնացման ճամբարներ, որտեղ նրանք մնում էին բազում շաբաթներ կամ ամիսներ, սպասելով նոր փոխադրման։ Այդ բացօթյա ճամբարներում, որտեղ աքսորյալներն ապրում էին իրենց քրջերից իրենց իսկ սարքած վրաններում, առողջապահական պայմանները բնավ հնարավոր չէ նկարագրել։ Իշխանությունները պարեն չէին բաշխում, իսկ եթե ինչ-որ բան էլ տալիս էին, ապա միանգամայն անբավարար քանակությամբ։ Ճամբարներն ամայացնում էին նաև տիֆատենդի, դոզէրոցքի և արյունալուծի ահավոր համաճարակները։ Ինչ վերաբերում է իշխանություններին, ապա նրանք ամենաամոթալի կերպով շահագործում էին աքսորյալներին, նրանց ստիպում վճարել ամեն ինչի համար, ընդհուպ մինչև մեռածներին թաղելը։

Պակաս ահավոր չէր հայերի վիճակը նշանակման վայր հասնելուց հետո, որտեղ նրանք հույս ունեին, թե գեթ որոշ չափով կթեթևանան իրենց տառապանքները։ Լիներ դա Սուլթանիեում, Կոնիայի վիլայեթի առողջության համար վնասակար անապատում, Հալեպի, Ղամի, Հոմսի և Դամասկոսի շրջաններում, թե առավել խոշոր հավաքակայանում՝ Դեյր էլ Զորում, նրանք շարունակում էին ենթարկվել այնպիսի վերաբերմունքի, որը նվազագույն իսկ կասկած չէր թողնում, որ իշխանությունները մտադիր են կործանել նրանց։ Իրենց ահավոր ճամփորդության տանջանքներից ուժասպառ, նրանք մահանում էին անհամար քանակությամբ, իսկ կառավարությունը, մտքով էլ չանցկացնելով պարենով նրանց ապահովելու մասին, որ բավարար լիներ կյանքի պահպանման համար, խոչընդոտում էր ամեն մի օգնություն, որ կարող էր նրանց հասնել արտասահմանից։

Կրոնական հանգամանքը։ Հայերին հալածելու որոշումը կառավարությունը կայացրել էր քաղաքական, այլ ոչ թե կրոնական շարժառիթներով, և հենց այդ պատճառով էլ թուրքական իշխանությունները այդպես անբարեհաճ էին վերաբերվում նրանց հավատափոխ լինելուն, ինչը նորադարձներին կազատեր աքսորի դեկրետի գործողությունից։ Այսպիսով, միայն մեկ թե երկու քաղաքում կարողացան քիչ թե շատ թվով ընտանիքներ փրկվել հավատուրացության շնորհիվ։ Իսկ շատ դեպքերում հավատափոխները, ինչպես որ մյուսները, որոշ ժամանակ անց աքսորվեցին։ Շատ կանայք իսկապես ընդունեցին իսլամը, բայց թուրքի հետ ամուսնանալուց հետո. միայն մահմեդականություն ընդունելը բավական չէր աքսորից խուսափելու համար։ Թուրքերի վերցրած հայ երեխաները, բնականաբար, նույնպես մուսուլմանական հավատով էին դաստիարակվում։

Որոշ վայրերում Կոստանդնուպոլսից տրված հրամանները աքսորելիս բացառություն էին անում բողոքական կամ կաթոլիկ հայերի համար, քանի որ այդ երկու համայնքները չէին միջամտում լուսավորչականների քաղաքական գործերին, և Ավստրիայի ու Ամերիկայի դեսպանությունները հանդես եկան նրանց պաշտպանությամբ։ Բայց այդ հրամանները հազվադեպ էին կատարվում, և կաթոլիկների ու բողոքականների մեծ մասը դարձավ լուսավորչականների բախտակիցը։

Չնայած հալածանքների, այսպես ասած, աշխարհիկ բնույթին, քանի որ դրանք ուղղված էին ցեղի, և ոչ թե կրոնի դեմ, այդ իրադարձությունների ժամանակ թուրքերի մեջ մեկ անգամ չէ, որ արթնանում էր կրոնական մոլեռանդության բնազդը։ Դա դրսևորվում էր հայ հոգևորականների դաժան մահապատիժներով, եկեղեցիների թալանով և դրանք մզկիթների վերածելով։

Այսպիսով, կարելի է համարձակ պնդել, որ հայ քրիստոնյաների կրած ահավոր տառապանքներում ոչ միայն նրանց ցեղը, այլև նրանց կրոնն էլ անարգվեց, անպատվվեց ու պղծվեց։

Դաժանություններն ու խոշտանգումները։ Այն խոշտանգումներն ու դաժանությունները, որոնց զոհը դարձան հայերը 1915 թ., հնարամտության ու բազմազանության առումով բնավ չէին զիջում նրանց, որոնց ենթարկվել էին նրանք 1895 և 1909 թթ.։

Անողոք գանահարություն, հանված աչքեր, պոկված եղունգներ ու մազեր. սղոցված կամ կտրված քթեր, ձեռքեր, ոտքեր և մարմնի այլ մասեր. շիկացած երկաթով դաղում, առաստաղից կախում՝ ոչինչ չէր բացակայում ցուցակից։ Վիրավորական կլիներ այստեղ չհիշելը այն ահավոր մեղադրանքի մասին, որ հայերը հրապարակավ կայացրել էին Էնվեր փաշայի փեսայի՝ Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի, «մսագործների գումարտակների» պետի նկատմամբ։ Հենց նորին գերազանցությանն է պատկանում խոշտանգումների երկու ձևի գյուտի պատիվը.

դրանցից մեկը հայերի ներբանները պայտելն է, ինչպես գրաստներին, նորություն, որի համար նրա գյուտարարն արժանացել է «բաշկալեցի պայտառ» մականվան. մյուսը կատուներով խոշտանգելն էր, որի դեպքում կատուներ էին խցկում խոշտանգվողների հագուստի տակ և ապա ծեծում կենդանիներին, որ նրանց ստիպեն իրենց ատամներն ու ճանկերը խրել զոհի փորոտիքը։

Կենտրոնական կառավարության, նրա մարմինների և թուրք ժողովրդի պատասխանատվությունը... Ինչպես ստույգ հաստատված է «Կապույտ գրքում», այդպիսի հսկայական չափերով մարդկային կյանքեր ոչնչացնելը, որն ուղեկցվում էր նման տառապանքներով, կրոնական մոլեռանդության դրսևորում չէր։ Դա կոտորած էր հրամանով, որն իրականացվում էր անգիտակից զինվորների, կամ այնպիսի անձանց կողմից, որոնց բիրտ բնազդները խթանելու կարիք չկար։

«Կապույտ գիրքը» և նրա հետ մենք արձանագրում ենք, որ եթե քաղաքային բնակչությունը աքսորն օգտագործում էր թալանի համար, անվանի մուսուլման քաղաքացիները հաճախ բողոքում էին կատարվող չարագործությունների դեմ, իսկ երբեմն էլ նույնիսկ փորձում էին խոչընդոտել դրանք, ի դեպ, առանց որևէ էական հաջողության։ Որոշ թուրքեր նույնիսկ պատժվել էին այդ մարդասիրական միջամտության համար։ Նա, ում ծանոթ է արևելյան խառնվածքը, «Կապույտ գրքի» հետ միասին ընդունում է, որ մուսուլման գյուղացիները երբեք չէին համարձակվի գործել այդպես առանց պաշտոնական իշխանությունների հրահրման։

Թուրք ժանդարմների վարքագիծը, որոնք արբած էին հազարավոր մարդկային կյանքերի նկատմամբ իրենց տրված իշխանությամբ, է՛լ ավելի շատ է նողկանք, սարսափ ու արհամարհանք հարուցում, քան քրդերի կամ գյուղացիների վարքագիծը...

Հանուն արդարության պետք է խոստովանել, որ գտնվում էին թուրք պաշտոնյաներ, որոնք հրաժարվում էին կատարել Կոստանդնուպոլսի արյունոտ հրամանները և նույնիսկ ջանում էին հակազդել դրանց։ Այսպես, Զմյուռնիայի վալիին՝ Ռահմի բեյին, Բաղդադի վալի Սուլեյման Նազիֆ բեյին, Քյոթահիայի նահանգապետ Ֆայիկ Ալիին հաջողվել էր խոչընդոտել ամեն մի կոտորած։ Բայց նմանօրինակ ընդդիմությունը, որքան մենք գիտենք, հաջողությամբ էր պսակվել միայն այդ երեք դեպքում։

Էրզրումի վալի Թահսին բեյը, Տրապիզոնի, Անգորայի, Հալեպի և Ադանայի վալիները նույնպես փորձել էին հակազդել Կոստանդնուպոլսից ստացված անմարդկային հրամաններին։ Բայց նրանց դիմադրությունն արագ ընկճվել էր, և Կոստանդնուպոլսի հրամանները կատարվել էին այնպիսի պաշտոնյաների կողմից, որոնք ավելի հնազանդ էին երիտթուրքական կառավարության կամքին, որը որոշել էր բնաջնջել ամբողջ հայ ցեղը կայսրությունում։ Ահավոր ճշմարտությունն է արտահայտել մի օտարերկրացի ականատես, հայտարարելով, որ «տարագրումը կոտորածի սոսկ քաղաքավարի ձև էր»։ Գավառական պաշտոնյաները, որոնք նվիրված էին կառավարությանը և իրազեկ էին նրա մտադրություններին, դա բնավ չէին թաքցնում։ Այդ մասին նրանք բացեիբաց բղավում էին ամերիկացիների ու գերմանացիների երեսին։ Մուշի մյութեսարիֆը բացեիբաց հայտարարել էր, որ առաջին իսկ հնարավորության դեպքում թուրքերը կկոտորեն ամբողջ ազգը։ «Բնաջնջումը միակ միջոցն է»,— հայտարարել էր նրա պաշտոնակից Գ.-ն... «Դուք չեք հասկանում, թե մենք ինչ նպատակ ենք դնում մեր առջև,— ասել էր աքսորի հանձնաժողովներից մեկի նախագահը մի գերմանացու,— մենք ուզում ենք ոչնչացնել բուն «հայ» անունը։ Ինչպես որ գերմանացիները չեն ուզում, որ գոյություն ունենա որևէ մեկը գերմանացիներից բացի, այդպես էլ մենք՝ թուրքերս, ուզում ենք, որ լինեն միայն թուրքեր»։

Այսպիսին է ահավոր ճշմարտությունը։ Հենց երիտթուրքական կառավարությունն էր կանխամտածված ու սառնասրտորեն հրամանագրել հայ ժողովրդի բնաջնջումը։ Մենք չգիտենք, թե գերագույն կառավարիչների ծրագրի մեջ մտնո՞ւմ էր նաև այն, որ կտրեին փոքր երեխաների ձեռքերը, որ մերկացված կանայք դեգերեին անապատում, բռնաբարվեին այլանդակված ամուսինների կամ ծնողների ներկայությամբ, թե՞ այդ ամենը լրացվել էր հենց իրենց՝ կատարողների կողմից հանուն սեփական զվարճության։ Ամերիկացիների մեջ այն տպավորությունն է ստեղծվել, որ նույնիսկ դաժանություններն էին լավ կազմակերպված։ Բայց մենք հավաստիորեն գիտենք, որ տեղերում և ճանապարհին կոտորածն իրականացվել էր հրամանով։ Ճակատագրի քմայքին մատնված, սարեռնի մատակարարումից զուրկ համակենտրոնացման ճամբարներում համաճարակները ցանկալի էին։ Ճանապարհին սովով, ծարավով ու

հիվանդություններով քարավանների ոչնչացումը նախատեսված էր։ Նախատեսված էր նաև առողջության համար վնասակար աքսորավայրեր հասած հայերի դանդաղ մահը, քանի որ թուրքական կառավարությունը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամները աչալրջորեն հետևում էին, որ իրենց «կարգերի» խստությունները ոչ մի չափով չմեղմացվեին։ Թուրքական կառավարությունը անողոք համառամտությամբ արգելում էր և մերժում ինչպես երկրում գտնվող եվրոպացիների, այնպես էլ ամերիկյան կառավարության ամեն տեսակի գթասիրտ միջամտություն, որին նա թույլ չէր տալիս նույնիսկ հայերին տանել Ամերիկա։ Նա շատ ավելի դաժանորեն էր մահվամբ պատժում այն թուրքերին, որոնք հանդգնում էին օգնել հայերին, քան Աբդուլ Համիդի օրոք։ Եվ «Միություն ու առաջադիմության» տեղական կոմիտեների անդամները տեղերում էին գտնվում, որպեսզի խթանեն իշխանությունների եռանդը, մերկացնեն և պաշտոնանկ անեն խղճահարությամբ համակվող պաշտոնյաներին։ Ոմանք, ինչպես, օրինակ, հայտնի Ջեմալ էֆենդին, անձամբ էին միջամտում, որպեսզի գոնե ոչ մեծ կոտորած կազմակերպեն տեղում կամ օգտակար օգնություն ցույց տան մարդասպաններին, չմոռանալով բարեպաշտ «հանգիստը» սրի քաշվածների «ճշմարիտ» հավատի բերված դուստրերի գրկում։ Եվ այդ բոլոր զազրելիությունների հետևում, որոնք ամենախայտառակ անարգանքով նշավակեցին արևաշաղախ դարը, հնչում էին Աբդուլ Համիդին փոխարինած «մեծ մարդասպանների»՝ «ազատության հերոս» Էնվեր փաշայի, «Միություն ու առաջադիմության», «մարմնավորում» Թալեաթ բեյի լպիրշ ու ցնծագին ձայները...

Այո, Էնվերը և Թալեաթը՝ կայսրության երկու բռնապետներն են հայերի նախճիրի գլխավոր մեղավորները։ Շատ հավանական է, որ նրանք եղեռնագործության էին հրահրվել շարագուշակ դոկտորներ Բեհաէդդին Շաքիրի և Նազըմ բեյի կողմից։ Բայց երկու հրեշների հնարավոր հանցակցությունը չի վերացնում մեղադրանքները Թուրքիայի այդ երկու տերերի վրայից։ Սա ասելով, մենք, իհարկե, չենք ուզում հանել պատասխանատվությունը Սայիդ Հալիմ փաշայի կառավարության մյուս անդամների վրայից։ Նրանք բոլորն էլ միասին պատասխանատու են դժբախտ հայ ազգի ահավոր սպանության համար։ Ոչ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային՝ դատարկամիտ ու փքուն,

ոչ «մեծ իրավարան» Խալի բեյին, ոչ նենգ Ջեմալ փաշային չի հաջողվի իրենց անունների վրայից մաքրել ահավոր կեղտը։ Նրանք չբողոքեցին եղեռնի դեմ, նրանք այն թույլ տվեցին, քանի որ նրանք բոլորն էլ մնացին արնաներկ կառավարության մեջ[59]։

A. Mandelstam. Le sort de l'Empire Ottoman. Lausanne-Paris, 1917, p. 248—278.

228. Վ. Ա. ԳՈՐԴԼԵՎՍԿՈՒ «ՀԱՅԵՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ՀՈԴՎԱԾԻՑ (1917 Թ.)

...Հողը մեկ անգամ չէ, որ կարմիր է ներկվել հայերի արյամբ, բայց պատերազմը ահռելի չափեր հաղորդեց կոտորածին, ասես մարդուց դեն են նետված զսպիչ քողերը. և քամահրելով աստվածային ու մարդկային օրենքները, մարդը ազատություն տվեց հոգու խորքում թաքնված գազանին։ Կրքերը մոլեգնեցին ամբողջ ուժով։

Կոտորածի ժամանակ թուրքերից հետ չէին մնում նաև նրանց քաղաքական բարեկամները՝ գերմանական իմպերիալիզմը։ Համենայն դեպս Մուշում մի գերմանուհի, ապաստարանի տնօրինուհի, իշխանություններին էր մատնում այն հայերին, որոնք պարզամտորեն պաշտպանություն էին փնտրում նրա մոտ որպես քրիստոնեուհու...

Եղեռնը իրագործվում էր որոշակի դրոշմակերպով։ Բնակչությունը քաղաքներից տարվում էր ամայի վայրեր, ամենից հաճախ խուլ կիրճեր և այնտեղ ջարդվում էր կամ սովամահության մատնվում։

Անցնելով Բիթլիսով, ականջալուր եղա այնտեղ տեղի ունեցած կոտորածի արձագանքներին։ Ինչպես ինձ պատմում էին տեղի բնակիչները, այն փողոցները, տները, որտեղ ապրում էին հայերը, եկեղեցիներն ու վանքերը լցված էին դիակներով, կանայք ընկած էին սպանված՝ բռնաբարությունից հետո, հաճախ թափված էին ածխացած դիակներ, «ինչպես խորոված խոճկորը»,— ասում էին ականատեսները։ Հաճախ որովայնախոռոչը լցված էր լինում ավազով, հյուսքերը կտրված էին. կիսամոխրացած կոշկի և տաբատի մեջ թաքնված էր ոտքը, իսկ փոքր-ինչ հեռու թավալվում էին գանգը, թևը։ Բիթլիսից դուրս՝

Էրզրումում դիակների բլուրներ էին կիտված, ոմանց պարանոցին մետաղե ծայրակալներով պարաններ էին կապված, կարծես թե տանջողները նախ եղջերահարել էին զոհերին։ Դա սպանդ էր, ժողովրդի աննախադեպ ջարդ։ Մարդիկ ասես կորցրել էին խիղճը։ Բայց ամաչել էր Եփրատը և լաց եղել արյուն-արցունքով. Մուշի մոտակա կամուրջը իր վրա տակավին պահպանում է շերտերը, այն հետքերը, երբ գետն արյունից վարարել էր։ Այդպես զոհվեցին մեկ միլիոնից ավելի հայեր։

«Այժմ հայերի կարելի է հանդիպել թերևս միայն թանգարաններում»,— երբեմն ցավոտորեն ժպտում էին հայերը։

Կոտորածը կոտորած, պատերազմն էլ պատերազմ, իսկ հայերին վերցնում են զինծառայության, բայց, երևում է, նրանց առաջավոր դիրքեր չեն ուղարկում, այլ թողնում են թիկունքում՝ աշխատանքներ կատարելու։ Հազվադեպ հայեր են պատահում նաև զորքերում։ Մի անգամ մեզ մոտ էր փախել մի հայ, որը նախքան պատերազմը ապրել էր Ռուսաստանում։ Նա պատմում էր, որ հայերը իրենց կյանքը փրկելու համար բանակ զորակոչվելիս երբեմն ընդունում էին իսլամը, կամ, ավելի ճիշտ, բռնությամբ մահմեդականացվում էին։ Երբ շարքում անվանականչի ժամանակ մի այդպիսի նորադարձ մուսուլման տվել էր իր քրիստոնեական անունը, նա տեղնուտեղը գնդակահարվել էր...

Եվ այդպես անվերջ գազանություններ, կոտորած, ստրկացում, գնդակահարություններ։ Թուրքիայում ապրող հայերի միայն համեմատաբար փոքր մասին հաջողվեց փրկվել։ Եվ հիշում եմ այն դառնաղետ տեսարանը, երբ ռուսական զորքի անակնկալ նահանջից ահաբեկված հայերը լքեցին տակավին նոր վերականգնված տները և ուղղվեցին դեպի Ալաշկերտի հովիտ։ Ահա եզը դանդաղ քաշում է ճոռացող սայլը, որի վրա դարսված է ամբողջ տնային կահ-կարասին։ Իսկ կողքից քայլում է մի կին, մի ձեռքին հայելի պահած, մյուսին՝ դաշույն։ Ինքներդ որոշեք, թե նրա մեջ ինչն է ավելի ուժեղ՝ պչրանքի, թե ինքնապաշտպանության բնազդը...

Երբ հարցափորձ ես անում գերիներին, նրանք լռում են. կամ ամաչում են կամ էլ երկյուղ կրում, թե պատմելով կվատթարացնեն իրենց վիճակը՝ չգիտեմ։ Ի դեպ, Լատերի զորահանդիսավանում հանդիպեցի մի թուրք ռազմագերու. և նա ինձ շատ բան պատմում Զմյուռնիայի մասին և ասում, որ ինքը հայ ընկեր ուներ...

Բայց արդյոք կհանդարտե՞ն մոլեգնած կրքերը, երբ լռի թընդանոթների որոտը։ Եվ ո՞վ կդատի հիրավի ճշմարտացիորեն և թուրքերին ու քրդերին կհաշտեցնի հայերի հետ։ Եվ ես հավատում եմ, կանցնի մղձավանջի պես ծանր այս ժամանակը, և մարդը կամաչի...

Թուրքիայում հարյուր հազարավոր հայեր զոհ գնացին գազանություններին։ Հսկայական արիությամբ էին մահվան գնում Հայաստանի զավակները. նրանք գիտեին, որ մահվամբ հայ ժողովուրդը կվերածնվի կյանքի, լավագույն կյանքի։ Եվ կապրի Հայաստանը։

Իմ նո՞ր հայրենիք,
Հզո՞ր հայրենիք...

ինչպես ժամանակին խանդավառ երգել է Հ. Թումանյանը, հայ պոեզիայի նահապետը[60]։

Академик В. А. Гордлевский. Избранные сочинения, т. III, М., 1962, с. 128—130.

229. ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ Վ. ՏԵՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳՐԻՑ (1917 Թ.)

...Հայերը, որոնք իրենց հարազատ երկրում՝ Հայաստանում, դեռևս 17-րդ դարում կազմում էին ամբողջ ազգաբնակչության 98 %-ը, ունենալով 2 % մուսուլման ազգաբնակչություն, 1914 թվին արդեն կազմեցին Հայաստանի ամբողջ ազգաբնակչության միայն 42 %-ը, մնացած 58 %-ը հույներ էին, քրդեր, եզդիներ, ղզլբաշներ և թուրքեր, ըստ որում, ամբողջ մուսուլման ազգաբնակչությունը կազմում էր Հայաստանի ազգաբնակչության 38 %-ը։ Բայց և այնպես, պատերազմի սկսվելուց առաջ հայերը կազմում էին Հայաստանի ազգաբնակչության ամենամեծ թիվը ունեցող ազգային խումբը։ Ընդսմին պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ հայ ազգաբնակչության տոկոսը զգալիորեն կբարձրանար, եթե Թուրքահայաստանում ստեղծվեին անձնական և գույքային անվտանգության տարրական երաշխիքներ, որը հնարավորություն կտար վերադառնալ ամենավերջին տարիներս Հայաստանից զանազան երկրներ գաղթած, բայց հայրենիքի հետ կապերը չխզած հարյուր հազարավոր հայերի,

որոնք պատրաստ էին առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալ իրենց ավերված հարազատ օջախը։

Եվ այսպես, չնայած պարբերական ջարդերին, դեռ պատերազմի սկզբին հայերը իրենց հայրենիքում այնուամենայնիվ կազմում էին չափազանց զգալի մեծամասնություն՝ համեմատած յուրաքանչյուր առանձին վերցված ազգային խմբի հետ, իսկ դեռ վերջերս գոյություն ունեցած (կամ, ավելի ճիշտ, սպանդից փախած) տարբեր երկրներում ցրված հարյուր հազարավոր հայերին հետ վերադարձնելու հնարավորության դեպքում հայերը կկազմեին Հայաստանի ամբողջ տարածքի ազգաբնակչության կեսից ավելին...

Ամբողջովին համիսլամականության գաղափարով տոգորված երիտասարդ Թուրքերի կառավարությունը հայկական շարաբաստիկ հարցից մեկընդմիշտ ազատվելու պատրվակ որոնող Էնվերի ու Թալեաթի տիպի իմպերիալիստորեն երազող հայրենամոլների գլխավորությամբ օգտվեց համաշխարհային հրդեհից, որպեսզի ամենաարմատական ձևով լուծեր հայկական հարցը։ Այդ կառավարությունը վճռեց հայերին ֆիզիկապես բնաջնջել, որպեսզի դրանով իսկ մեկընդմիշտ վերջ տար Հայաստանին վերաբերող հարցին...

Սկսվեց, մի կողմից, Թուրքահայաստանի խաղաղ և անզեն հայ ազգաբնակչության անողոք բնաջնջումը և, մյուս կողմից, հայերի բռնի արտաքսումը Միջագետք, ըստ որում, արտաքսումը զուգակցվում էր ոչ միայն հայերի ամբողջ ունեցվածքի կողոպուտով, ոչ միայն դաժանություններով, այլև շատ հաճախ արյունալի դատաստանով, այնպես որ արտաքսվողների կեսից ավելին կործանվեց մարդասպանների ձեռքով՝ աքսորավայր չհասած։

Բնաջինջ արվող ու արտաքսվող հայերի այդ ամբողջ զանգվածից շատ քչերն ազատվեցին։ Ամերիկյան միսիոներների վկայությամբ՝ Միջագետքի զանազան կետերում կենտրոնացած են մոտ 1/2 միլիոն հայեր, որոնք հազիվ են քարշ տալիս իրենց խղճուկ գոյությունը։ Մի որոշ քանակությամբ հայեր ողջ են մնացել (գլխավորապես՝ արհեստավորներ, մասնագետ-տեխնիկներ և բանվորների որոշ կատեգորիաներ, որոնց Թուրքերը ողջ են թողել իրենց կարիքների համար) Կոնիայում և Թուրքիայի այլ կետերում, բայց նրանց ստույգ թիվը կարելի է որոշել միայն պատերազմի ավարտվելուց հետո։

Ռուսաստան կարողացել են փախչել միայն երեք հարյուր հազարից փոքր-ինչ ավելի հայեր, որոնք տեղաբաշխված են Անդրկովկասի զանազան կետերում, սպասելով, թե իրենց երբ հնարավորություն կտրվի վերադառնալ իրենց հարազատ օջախը և վերականգնել իրենց ավերված տնտեսությունը։ Այսպիսով, երկու և մեկ քառորդ միլիոն Թուրքահայերից ողջ է մնացել մոտավորապես կեսը։ Բայց Թուրքահայաստանի ազգաբնակչության այդ կեսը, ինչպես հիշատակված էր վերը, ավել կամ պակաս նշանակալից խմբերով ցրված է Թուրքիայի տարբեր անկյուններում (Միջագետքում, Կոնիայում և այլն) և Ռուսաստանում։ Բացի դրանից, հարյուր հազարավոր հայեր սպանդի սարսափի տակ արտագաղթել են միայն վերջին տարիներս Եվրոպա և Ամերիկա, բայց կապերը չեն խզել հայրենիքից և պատրաստ են վերադառնալ Հայաստան, հենց որ այստեղ ստեղծվեն անձնական և գույքային անվտանգության գեթ տարրական երաշխիքներ...[61]

Վահան Տերյան, *Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, 1979, էջ 354—358։*

«Жизнь национальностей», М., 1920, № 18.

280. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փետրվարի 24-ին [1918 թ.] Թուրքական զորքերը նորից օկուպացրին Տրապիզոնը, որը 1916 թվականի ապրիլի 18-ից պատկանում էր ռուսներին։ Քաղաքի հույն և հայ բնակչության այն մասը, որին չհաջողվեց փախչել, խիստ տուժեցին այդ վերաօկուպացման ժամանակ... Թուրքերը գնդակահարեցին, ջրամույն արեցին կամ ողջակիզեցին ոչ միայն հետ մնացած ռուս զինվորներին, որոնց ճանկել էին իրենց առաջխաղացման ընթացքում, այլև խոշտանգում էին իրենց ձեռքն ընկած հայերին։

Տրապիզոնում հայ երեխաներին լցրեցին պարկերը, դրանց բերանները կապեցին ու նետեցին ծովը։

"L'Asie française", Janvier-avril, Paris, 1918, № 172, p. 23.

231. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՕԳՆԱԿԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԿՅՈՒԼՄԱՆԻՆ

Հեռագրից — Բեռլին, 22 մարտի 1918 թ.

Լիոնի ձայնասփյուռը մարտի 17-ին հաղորդեց. «Հայկական լրատվական բյուրոն հաղորդում է, որ Թուրքերի վերադարձը Տրապիզոն ուղեկցվում էր դաժանությունների նոր գործողություններով։ Հազարավոր մնացած ռուսներ գնդակահարվել են կամ ողջակիզվել։ Հայերը անասելի տանջանքների են ենթարկվում։ Երեխաներին կապում են պարկերի մեջ և նետում ծովը։ Ծերունիներին ու պառավներին խաչում են ու խեղդում։

Բուսշե

Deutschland und Armenien..., S. 377.

232. ՌԻՖՍԱՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՆՈՏԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Հաղորդվել է ձայնասփյուռով — 12 ապրիլի 1918 թ., № 71

Կովկասյան ռազմաճակատում Թուրքական զորքերի ու քրդերի հարձակումն ուղեկցվում է հայ բնակչության զանգվածային բնաջնջմամբ. խաղաղ բնակչությունը, կանայք ու երեխաները սրի են քաշվում հազարներով, նրանց ունեցվածքը մատնվում է կողոպուտի ու հրո ճարակ դառնում։ Պայմանագիրը, որը մենք հարկադրված էինք ստորագրել Բրեստում, Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերի բնակչության ճակատագիրը հանձնում էր բուն բնակչության կամքի ազատ արտահայտմանը։ Այն, ինչ տեղի է ունենում այդ մարզերում, վկայում է, որ տասնյակ տարիներ կիրառված հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը շարունակվում է առ այսօր։ Թուրքական ռազմաճակատում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը ստիպված էր Արդահանը, Կարսը և Բաթումը հանձնել միայն այն պատճառով, որ Թուրքիայի դաշնակիցը Գերմանիան էր։

Այն սարսափների համար, որոնց ենթարկվում է հայ բնակչությունը, ներկայումս Թուրքական զորքերի կողմից գրավվող մարզերում, պատասխանատվությունն ընկնում է գերմանական կառավարության վրա, որի անմիջական օգնությամբ Թուրքիան խնդրելով իրեն վերապահեց այդ մարզերը։

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը վճռականորեն բողոքում է Արդահանի, Կարսի ու Բաթումի բնակչության ինքնորոշման իրավունքի նման կիրարկման դեմ, և վստահություն է հայտնում ու պնդում, որ անհրաժեշտ է Գերմանիայի արագ ու վճռական միջամտությունը այն բանին, ինչ տեղի է ունենում Կովկասում, նպատակ ունենալով կանխել խաղաղ բնակչության հետագա բնաջնջումն ու սրի քաշելը, ինչպես դա տեղի ունեցավ Արդահանում։

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ

Չիչերին, Կարախան։

Документы внешней политики СССР, М., 1957, с. 240—241.

233. ՀԱԼԵՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ՀԵՐՏԼԻՆԳԻՆ

Հեռագրից — Հալեպ, 15 մայիսի 1918 թ.

Ինչպես հենց այժմ ինձ հայտնի դարձավ, մարտի կեսերին 4-րդ զորաբանակի հրամանատար Ալի Իխսան փաշայի հրամանով դարձյալ սկսել են հայերի մնացորդների դեմ միջոցներ ձեռնարկել, նրա ղեկավարության ներքո գտնվող տարածքում, հատկապես Մամուրեթ ուլ-Ազիզի վիլայեթում։ Բերդազ և Փերի բնակավայրերից Մամուրեթ ուլ-Ազիզ են հասցվել շուրջ 8000 կին ու երեխա։ Դեռահասները շղթայված էին և բերվել են առանձին։ Մամուրեթ ուլ Ազիզի վալին կանանց ու երեխաներին ազատ է արձակել, իսկ դեռահասները բանտ են նետվել...

Ֆյոլեր

Deutschland und Armenien.., S. 333.

284. ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

<1918 թ. մայիսի վերջ>

Հայոց ազգային խորհրդին հաղորդում են, որ վերջին օրերս ընդհատվել էր հեռագրական կապը Ղարաքիլիսայի և Երևանի միջև, որի պատճառով նշված ուղղությունից ոչ մի տեղեկություն չէր ստացվում։ Այժմ Բաթումից հաղորդում է ստացվել թուրքական աղբյուրներից, որ Ղարաքիլիսայի մոտ արյունահեղ ճակատամարտ է տեղի ունեցել հայկական զորամասերի և թուրքերի միջև, որը տևել է 4 օր։ Թուրքական տվյալներով, հայերի կողմից ճակատամարտին մասնակցում էր 7000 զինվոր, թուրքերի կողմից՝ 10 000։ Հայկական զորամասերը կռվում էին արիաբար, բայց նրանք հարկադրված են եղել Ղարաքիլիսան հանձնել միայն թվապես գերազանցող թշնամու ճնշման ներքո։ Հայերից սպանվել ու վիրավորվել են 1500 և գերվել 1000 հոգի, թուրքերի կորուստները նույնպես նշանակալի են։ Հայերի մի մասը նահանջել է դեպի Դիլիջան, մի մասը՝ դեպի Սանահին։

«Кавказское слово», 1918, 4 июня, № 112.

285. ՄԱՐՏԵՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԵՎ ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ՄՈՏ

<1918 թ. մայիսի վերջ>

Գեներալ Սիլիկովը հունիսի 10-ին էջմիածնից հեռագրել է Հայոց ազգային խորհրդին. «Սարդարապատի ուղղությամբ մղված եռօրյա համառ մարտերից հետո մայիսի 27-ին թուրքերը, շրջանցվելով թևից և ջախջախվելով ճակատից, անկանոն նահանջեցին, հետապնդվելով մեր զորքերի կողմից։ Հետապնդումը շարունակվեց մինչև Ղարանլու կայարանի գիծը և Սողութլի գյուղը։ Թուրքերի կորուստները նշանակալի են[62]։ Միևնույն ժամանակ Բաշ Ապարանի ուղղությունում հակառակորդը մոտ 2 գնդի և հրետանու ուժով մեր առաջապահ հեծյալ զորամասերին նեղելով Ղազանֆար—Ղարաքիլիսա գյուղերի գծում, 2-օրյա համառ մարտերից հետո՝ մայիսի 29-ի երեկոյան կողմ ոլխովին ջախջախվեց և հետ շպրտվեց Ղարագյոլի բարձունքների գիծը, մարտի տեղում թողնելով 200-ից ավելի դիակ, 2 գնդացիր, 100-ից ավելի հրացան և շատ ռազմաավար։ Այդ մարտերում մեր կորուստները աննշան են։ Զորքերի ոգին գերազանց է։ Ներկա պահին զորքերն ուժեղ դիրքեր են զբաղեցնում և սահմանազատման գիծ են հաստատում»։

«Кавказское слово», 1918, 12 июня, № 119.

286. ՎԵՀԻԲ ՓԱՇԱՆ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<1918 թ. հունիս>

Հաշտության հայկական պատվիրակության անդամների ասելով, թուրք-հայկական հաշտության պայմանագիրն ստորագրելուց առաջ Վեհիբ փաշան հայկական ռազմաճակատում թուրքական զորքերի ռազմական գործողությունների ընդհանուր ամփոփում է կատարել։ Թուրքական գլխավոր հրամանատարի ասելով, հայկական զորամասերի տոկունությունն ու հաստատակամությունը դրսևորվեցին Բեգլի Ահմեդի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և Սարդարապատի մարտերում։ Բեգլի Ահմեդի մոտ հայերի համառ դիմադրությունը ընկճվեց շնորհիվ այն բանի, որ հայկական 2 գունդ՝ ինքնագլուխ թողեցին դիրքերը, մերկացնելով հայերի աջ թևը և ստիպելով ընկրկել ամբողջ ճակատով։ Կարսի տակ թուրքերն ունեին 19 000 սվին Կարսի կայազորի 7000 զինվորի և հայերի դաշտային բանակի դիմաց։ Եվ այդուհանդերձ, թուրքական գլխավոր հրամանատարը հույս ուներ երեք շաբաթում գրավել Կարսը։ Ալեքսանդրապոլի մոտ անակնկալի եկած հայկական սակավաթիվ զորամասերը կռվում էին գերազանց։ Սարդարապատի տակ գեն. Սիլիկովի ջոկատը գլխովին ջախջախեց թուրքերին (դա հաստատվում է գեն. Սիլիկովի ուշացած հեռագրով...)։

«Թեպետև,— շտապեց ավելացնել Վեհիբ փաշան,— Սարդարապատի մոտ մենք սխալ թույլ տվեցինք, իջնելով հովիտ այն դեպքում, երբ մերոնք զբաղեցնում էին բարձունքները։ Դրա համար էլ մենք հատուցեցինք»։

Բայց թուրքական գլխավոր հրամանատարի վրա ամենից ավելի ազդել էին 4-օրյա մարտերը Ղարաքիլիսայի տակ, որտեղ հապճեպ հավաքված և նույնիսկ գումարտակների ու գնդերի մեջ չմիավորված 7000 հայերի դիմաց, որոնք ունեին 10

հրանոթ և 20 գնդացիր, Թուրքերն ունեին 10 000 ընտիր զորք, 70 հրանոթ և 40 գնդացիր։ Եվ այնուամենայնիվ վերջնական հաջողությունը Թուրքերը ձեռք բերեցին հսկայական զոհերի գնով։ Առաջին երկու օրը հայերը հետ էին մղում Թուրքական բոլոր գրոհները, անցնելով հակագրոհների, և միայն փամփուշտների ու արկերի սպառումը հարկադրեց դադարեցնել այդ հերոսական պայքարը և նահանջել։

«Դուք բոլոր տվյալներն ունեք երկրորդ բուլղարներ դառնալու համար։ Ձեր գյուղացիները նույնքան աղնիվ, անզիջում և քաջ ռազմիկներ են, ինչպես որ բուլղարները»,— եզրափակել է Վեհիբ փաշան։

«Кавказское слово», 1918, 12 июня, № 119.

287. ԹՈՒՐՔԵՐԻ ԳԱՂԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ

Հունիսի 25-ին Ղարաքիլիսայից Թիֆլիս ժամանեց դաշտային փոստի ծառայողը, որն ականատես էր եղել Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի բնակչության նկատմամբ Թուրքերի կատարած վայրագություններին, երբ նրանք անցած մայիսի վերջերին գրավել էին դրանք։

Նրա պատմելով, Ղարաքիլիսան և Ղշլաղը երեք օր հանձնվել էին Թալանի ու ամեն տեսակ բռնացումների ինչպես Թուրքական կանոնավոր զորամասերի, այնպես էլ մուսուլմանական հրոսակախմբերի կողմից. անտառում 50—60 մարդուց բաղկացած խմբերով գնդակահարվում էին գյուղերի տղամարդիկ, նրանք գնդակահարվում էին նաև գետակի ափին, ընդ որում գնդակահարվողներին նախօրոք ստիպում էին իրենց համար գերեզմաններ փորել։ Բռնաբարվում էին կանայք, աղջիկները և նույնիսկ դեռահասները. տեղի էր ունենում գյուղացիների ունեցվածքի բացահայտ և բարձրագույն հրամանատարության կողմից Թույլատրված կողոպուտ... 3 օր անց Թուրքական զորամասերի հրամանատարի հրամանով կողոպուտն ու բռնությունները հայտարարվեցին դադարեցված և դրանց համար խիստ պատիժներ սահմանվեցին, ինչը, սակայն, ասկյարներին չէր զրկում բռնագրավման անվան տակ իրենց համար վերցնելու անհրաժեշտ ամեն ինչ կամ ինչ որ դուր էր գալիս։ Բնակչությունից խլում էին յուղը, ալյուրը, կաթը, ձուն, անասունները

և այլն, դրա դիմաց շպրտելով գոռոշներ կամ ոչինչ չվճարելով։ Բանն այնտեղ էր հասնում, որ գյուղացիների վրայից հանում էին հագուստն ու կոշիկը։

Նույնպիսի սարսափների է ենթարկվել Նալբանդ, Համամլու, Ավդաշեկ և ուրիշ գյուղերի բնակչությունը, ընդ որում այդ գյուղերի փրկված արական բնակչությունը ներկայումս Թուրքերի կողմից ցերեկը քշվում է աշխատանքի՝ խրամատներ փորելու, իսկ երեկոյան տուն է վերադարձվում։ Ներկայումս Թուրքերն ամրացել են Շահալի ու Քոլագիրան կայարանների միջև և արևելյան կողմից նրանք փակել են Քոլագիրանի Թունելը։

«Кавказское слово», 1918, 28 июня, № 131.

288. ՌՈՖՍԱՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունիսի 1918 թ.

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, 1918 թ. հունիսի 26-ի նիստում լսելով հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին ընկ. Ավանեսովի դիմումը, որոշեց. նկատի ունենալով, որ հայ գաղթականների օգտին 15/1—18-ին հատկացված 3 490 000 ռուբլի և Ներքին գործերի կոմիսարիատի (գաղթականների գործերի բաժնի) կողմից հատկացված 2 704 789 ռուբլի գումար կազմող դրամը ճանապարհին հափշտակվել էին Կալեդինի և Կորնիլովի հրոսակախմբերի կողմից, Ժողկոմխորհը, ուշադրության առնելով գաղթականների ծայրահեղ կարիքավոր վիճակը, որոշեց վերոհիշյալ գումարները (ընդհանուր հաշվով 6 194 784 ռուբլի)՝ վեց միլիոն հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր ութսունչորս ռուբլի, կրկին հատկացնել Հայկական գործերի հանձնաժողովին՝ գաղթական հայերին անհապաղ օգնություն ցույց տալու համար։ Նշված գումարը անհապաղ փոխանցել Համկենտգործկոմի դրամարկղ՝ Հայկական գործերի կոմիսարիատի համար։

Ընկ. ընկ. Ավանեսովին և Ռոզինին հանձնարարել անհապաղ փնտրել-գտնել Շահումյանի զեկուցագիրը հայերին հատկացված դրամը Կալեդինի և Կորնիլովի հրոսակախմբերի կողմից հափշտակելու հարցի մասին և պաշտոնապես հանձնել Աղ-

գերի գործերի կոմիսարիատ, որին իր հերթին հանձնարարել այն հանձնելու Պետական վերահսկողության կոմիսարիատ։

Խորհրդի քարտուղար (ստորագրություն)

ԽՍՀՄ ՀՀԿՊԱ, ֆ. 1235, ց. 93, գ. 163ա, թ. 76

239. ԿՈՎԿԱՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՆԵՐԱԼ ՖՈՆ ԿՐԵՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, 10 հուլիսի 1918 թ.

Կյանքը վտանգի ենթարկելով, Երևանից եկել է Մեսրոպ Եպիսկոպոսը, որպեսզի գերմանացիներից օգնություն հայցի։ Նրա ասելով, գրեթե կես միլիոն հայեր սովամահ կլինեն, եթե անմիջապես հայերին չթույլատրվի վերադառնալ Սարդարապատ—Իգդիրի և Դավալուի մարզեր, որ հավաքեն հասած բերքը։

Հարգարժան եպիսկոպոսի նկարագրությունը ցնցող է։ Ողջ հայ ազգին սովի մատնելու թուրքերի մտադրությունը ակներև է։ Էսադը աննշան պատճառներով մերժեց խնդրանքս՝ հայ գաղթականներին և հայոց ազգային խորհրդին թույլ տալու վերադառնալ հայրենիք։

Թուրքերի վրա կենտրոնական տերությունների ուժգին ճընշումը մարդասիրության և քաղաքականության հրամայական պահանջն է։

Deutschland und Armenien... *փաստ. 404*

240. ԲԵՌԼԻՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐ ԴՈԿՏՈՐ ՆԻԿԻՖՈՐՈՎԻՆ

Բեռլին, 20 հուլիսի 1918 թ.

Ունկնդրության ժամանակ, որը Ձեր բարձր բարեծնությունը հաճեց այսօր ընձեռել մեզ, մեզ թույլ տրվեց Ձեզ բանավոր հաղորդումներ անել թուրքական հարձակման հետևանքով Կովկասյան Հայաստանում ստեղծված օրհասական կացության մասին։

Բրեստի պայմանագրով Ռուսաստանից խլված Կարսի, Արդահանի և Բաթումի նահանգների համար նախատեսվում է բնակչության հանրաքվեի իրավունք և չի թույլատրվում զորք ուղարկել այնտեղ։ Չնայած դրան, թուրքական զորքերը ոչ միայն մտան այդ նահանգները, այլև անցան Բրեստի պայմանագրով հաստատված սահմանները և խորացան Կովկասյան Հայաստանում։ Ներկայումս Կովկասյան Հայաստանի գրեթե կեսը գրավված է նրանց կողմից։

Թուրքիայում մեր ժողովրդին պատուհասած ահավոր փորձություններից հետո, հասկանալի է, որ որտեղ էլ որ հայտնվում են թուրքերը, հայերը, ամեն ինչ թողնելով բախտի քմահաճույքին, աճապարանքով փախչում են, միայն թե փրկեն իրենց կյանքը։ Այդպիսով ներկայումս ավելի քան 600 000 հայ գաղթականներ, օթևանից զուրկ, թաքնվում են լեռներում և անտառներում, ենթարկվելով վտանգների, զրկանքների, աննպաստ եղանակի հարվածներին ու տարափոխիկ հիվանդություններին։

Հայ գաղթականների հոսքը և նրանց շրջանում մահացությունը օրեցօր ավելանում են...

Հայերի սպանություններն ու կողոպուտները հաճախացել են ահավոր չափով, և Կովկասյան Հայաստանում մեր ազգությանն սպառնում է լիակատար բնաջնջման այն նույն ճակատագիրը, ինչպես որ եղավ Թուրքիայում, եթե նրանց շուտափույթ օգնություն ցույց չտրվի։

Կովկասյան Հայաստանը, Կովկասյան Հանրապետության տրոհվելուց հետո, հետևելով Վրաստանի օրինակին, հռչակեց իր պետական ինքնուրույնությունը և կազմեց սեփական կառավարություն, որը մեզ պատգամավոր է ուղարկել այստեղ բողոքելու թուրքերի կողմից Բրեստի պայմանագրի խախտման դեմ և պահանջելու, որ անհապաղ մաքրվի մեր տարածքը մինչև Բրեստի սահմանները։

Համոզված լինելով, որ բուլղար ժողովուրդը, իր պատմական անցյալն աչքի առաջ ունենալով, կարող է բոլորից լավ հասկանալ մեր տառապանքներն ու բաղձանքները, մենք լիավստահ դիմում ենք Բուլղարիայի կառավարությանը, որն ստորագրել է Բրեստի պայմանագիրը, և խոնարհաբար խնդրում ենք ներազդել ի շահ արդարության և մեր ապագա պետականության, և մանավանդ, առաջիկա խորհրդաժողովում կովկասյան հասունացած հարցերի կարգավորման համար, որպեսզի

մեր տարածքի շուտափույթ դատարկմամբ նորից վերականգնվի Բրեստի պայմանագիրը և նոր պետությանը՝ Կովկասյան Հայաստանին հնարավորություն ընձեռվի անարգել ձեռնամուխ լինելու շինարարության...

Հայաստանի կառավարության լիազորներ
Հ. Օհանջանյան և Ա. Ջուրաբով

ՀԵՍՀ ԿԳԳԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 229—231:

241. ՀԱՅ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԵՏԻ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՑ

<1918 թ. մայիս>

Ղարաքիլիսայի ճակատամարտին հաջորդած իրադարձություններին ծանոթանալու համար հարցաքննության են ենթարկվել այդ դեպքերի ականատեսները, որոնք վերադարձել են ռազմաճակատից, և Թուրքական գերությունից փախած զինվորներ։ Գործուղվել էին նաև հատուկ լիազորներ այն շրջանների մասին տեղեկություններ հավաքելու համար, որոնցով նահանջել էին իրենց զորամասերից շեղված ռազմիկները, որոնց հասել էին Թուրքական հեծելազորի ջոկատները։

Նշված անձանց ցուցումները և հայթայթված տեղեկությունների տեսությունը բացահայտում են հայ զինվորների և հայ բնակչության նկատմամբ Թուրքերի գործադրած խենթ ծաղրուծանակի, բռնությունների, գազանությունների պատկերը։

Ղարաքիլիսայում գյուղը գրավելուց երկու օր անց, այսինքն մայիսի 30-ին, ակներևաբար տրված գաղտնի հրամանով, սկսվեց հայ ռազմագերիների և խաղաղ բնակիչների համընդհանուր ջարդը։ Ջարդն սկսվեց ցերեկվա ժամը 4-ին։ Դրա ազդանշան հանդիսացան ուժգին հրաձգությունն ու համազարկերը. պարաններով իրար կապկպված հայ գերիներին խմբերով տանում էին մոտակա անտառը։ Տասնյակներով և հարյուրներով էին գընդակահարում սպաներին ու զինվորներին։ Միաժամանակ հենց գյուղում էլ տեղի հայ բնակիչների համընդհանուր կոտորած էր տեղի ունենում։ Շատ ընտանիքներ լիովին սրի են քաշված։ Գյուղում գրեթե տղամարդ չի մնացել։ Կանայք բռնաբարվում էին ամեն օր. այդ բռնաբարությունները, ցուցմունքների համաձայն, մինչև այժմ էլ շարունակվում են։ Երկու-երեք օրում ամբողջ գյուղը ամայացավ։ Այդպես շարունակվեց 4 օր, այսինքն մինչև հունիսի 2-ը ներառյալ, երբ Թուրքական իշխանություններին հրաման տրվեց դադարեցնել կոտորածը. և դա ակնհայտ ծաղր էր, քանի որ մարդ չկար սպանելու, Թերևս միայն մազապուրծ կանայք ու երեխաները։ Փրկվել են միայն նրանք, ովքեր պառկած էին բուժհիմնարկներում, և այդ հաստատությունների բուժանձնակազմը։ Բայց նրանք էլ էին կիսաքաղց գոյություն քարշ տալիս, քանի որ խիստ սահմանափակ քանակությամբ էր մթերք բաց թողնվում։ Կենդանի մնացած երեխաներն ու կանայք մատնված էին սովամահության, քանի որ անասունները խլվել էին և ցանքսերը ոչնչացվել, իսկ ամբողջ ունեցվածքն էլ՝ թալանվել։ Այսպիսին է Ղարաքիլիսայում հայերի նկատմամբ գործադրված արյունոտ հաշվեհարդարի պատկերը։

Նահանջից հետո հայ ռազմիկների մի ջոկատ՝ թվով 2 հազար մարդ, որոնց մեջ էին գնդապետներ Օսիպյանցը, Վլադիմիրովը, Կորգանովը, փոխգնդապետ Կոբիլևսկին և ուրիշներ, ժամանեց Սանահին կայարան։ Քանի որ դեպի Թիֆլիս և Երևան տանող ճանապարհները փակված էին Թուրքերի կողմից, հրամանատարները որոշում են ցրել ջոկատը, ամեն մեկին թողնելով ինքնուրույն տնօրինելու իր ճակատագիրը։ Ջոկատը բաժանվում է խմբերի. մի խումբը գնդապետ Կորգանովի գլխավորությամբ սարերով ճանապարհ է ընկնում դեպի Դիլիջան, մյուսը գնդապետ Օսիպյանցի և փոխգնդապետ Կոբիլևսկու գլխավորությամբ բռնում է Շուլավեր գյուղ տանող ճանապարհը, երրորդ խումբը գնդապետ Վլադիմիրովի գլխավորությամբ ուղղվում է դեպի Ալավերդի գյուղ։

Առաջին խմբի ճակատագիրը ստույգ հայտնի չէ. երկրորդ խումբը Թուրքական հեծյալ ջոկատի կողմից գլխովին կոտորվել է Ջանախչի գյուղում հետևյալ հանգամանքներում։ Ջոկատը՝ թվով 150 մարդ, փոխգնդապետ Կոբիլևսկու՝ առանձին լեռնային հեծյալ հրետամարտկոցի հրամանատարի գլխավորությամբ աննպաստ եղանակի պայմաններում հասնում է Ջանախչի գյուղ։ Թուրքերի գալստյան սպասումով գյուղը էվակուացվել էր, և մնացել էին միայն ծերերը։ Մինչ տեղի հայ բնակիչները ռազմիկներին համոզում էին հեռանալ անտառ, քանի որ Թուրքեր էին սպասվում, Աղքորփի (գյուղի) կողմից երևաց Թուրք սու-

վարիների մի ջոկատ՝ թվով 105 մարդ։ Ջոկատն իր հետ բերում էր 30 հայ ռազմիկների, որոնք գերվել էին Աղքորփիում։

Կոբիլևսկին խորհրդակցություն անցկացրեց, որպեսզի որոշեն հանձնվելու կամ դիմադրելու հարցը...

Ջոկատը անձնատուր եղավ, և զինաթափվելուց հետո բոլոր գերիներին քշեցին ախոռ...

Ուշ գիշերին թուրքերը մտան ախոռ և մասամբ դուրս բերելով, մասամբ էլ տեղում սկսեցին սառը զենքով կոտորել գերիներին։ Այդպիսով բոլոր գերիները ոչնչացվեցին։ Մի քանիսից թուրքերը հանեցին նոր համազգեստը և հագան իրենք. հեռանալով գիշերվա ժամը երկուսին, նրանք հրկիզեցին ախոռը։ Նրանց հեռանալուց հետո Ջանախչի գյուղի բնակիչները հանգցրին կրակը և բացեցին դուռը։ Կենդանի էին մնացել երկու վիրավոր զինվոր, որոնք ապրել էին այդ սարսափները...

Երրորդ խումբը գնդապետ Վլադիմիրովի հետ թաքնվել էր Ալավերդի գյուղում, չհամարձակվելով շարժվել որևէ տեղ։ Նրանց այնտեղ գտնվելու հինգերորդ օրը Ալավերդի ժամանեց մի թուրք փաշա սպաներով ու ասկյարներով։ Փաշան խոսք տվեց ոչ ոքի ձեռք չտալ և բոլոր նրանց, ովքեր կտրված էին Թիֆլիսից, անարգել թողնել, որ գնան այնտեղ։ Գնդապետ Վլադիմիրովը զինվորների, սպաների, կանանց ու երեխաների անունից դիմեց, որ նրանց օժանդակեն անարգել մեկնելու Թիֆլիս։

Փաշան նախապես խուզարկեց բոլորին, խլելով դրամը, ոսկե ու արծաթե իրերը և այլն։ Հաջորդ օրը, ի մի ժողովելով 32 սպայի, շատ զինվորների, 18 օրիորդների և մոտ 600 երեխաների, մեկնեց Մանես կայարան, որտեղ բոլորին նստեցրեց վագոններն ու թուրք ասկյարների ուղեկցությամբ ուղարկեց Սադախլո կայարանի ուղղությամբ, որտեղ բոլորը գլխովին կոտորվեցին։

Աշաղա Սարալ կայարանից ոչ հեռու լրատվական բյուրոյի լիազոր Դարբինյանը հայտնաբերել էր մոտ 5 սաժեն խորությամբ մի հին ցամաքած ջրհոր, որտեղ գտնվել էր 36—40 դիակ։ Կայարանում ծառայող վրացիները պատմում էին, թե թուրքերը ինչ դաժանությամբ էին կոտորում հատկապես սպաներին, առանց ազգային խտրության։ Նախապես կողոպտելով ու հանելով հագուստը, թուրքերը կտոր-կտոր էին արել դիակները և մարդկային մարմինների ամբողջ զանգվածը նետել ջրհորը։

Այսպիսիք են թուրքական զորքերի անպատիժ բռնացումների ու գազանությունների պատկերները, որ նրանք գործադրել էին անպաշտպան բնակչության ու ռազմագերի զինվորների նկատմամբ, որոնք մեծ մասամբ կամովին և վստահորեն իրենց կյանքը հանձնում էին թուրքական զինվորական իշխանությունների խնամքին, իսկ վերջիններս պահպանության փոխարեն հրի ու սրի էին մատնում միանգամայն անմեղ ու անպաշտպան հայ ռազմագերիների և խաղաղ բնակիչների կյանքն ու ունեցվածքը։

Լրատվական բյուրոյի պետ

Շտաբս-կապիտան (ստորագրություն)

Հայկ. ԽՍՀ ԿԳՊԱ, ֆ. 68 (200), գ. 609, թ. 20—21:

242. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՆՑԼԵՐ ՖՈՆ ՀԵՐՏԼԻՆԳԻՆ ՖՈՆ ԿՐԵՍԻ ՀՂԱԹ ՀԵՌԱԳՐԻՑ

Թիֆլիս, 4 օգոստոսի 1918 թ.

Թուրքերն այստեղ էլ չպահպանեցին Բաթումի հաշտության պայմանները և շարունակում են օկուպացնել Բաթումի սահմանից այն կողմ ընկած մարզերը։ Հայաստանը կենսունակ կլինի, պահպանելով Բրեստ Լիտովսկի զինադադարի սահմանները՝ առանց թուրքական ուղղումների, որոնք Թուրքիային են հատկացնում առանձնապես կարևոր տնտեսական շրջանները։ Ժամանակին գրեթե բոլոր ամենաարդյունաբերական մարզերը օկուպացված էին Թուրքիայի կողմից, որը դրանք պլանաչափորեն կողոպտել է։ Չնայած պայմանագրին, նրանք տարել են բամբակի խոշոր պաշարներ։ Բերքը մասամբ հավաքել են թուրքերը, մասամբ էլ փչանում է։ Մինչև Նախիջևան երկաթուղին անպայման պետք է պատկանի հայերին, որը հազիվ տանելի վիճակում է։ Հայերը պնդում են, որ երկու պետությունների միջև մարտեր տեղի կունենան, եթե թուրքերը չհեռանան Բաթումի սահմանից։

Էնվերի հակասական պնդումները սոսկ վարագույր են օկուպացված երկիրը ամայացնելու և քայքայելու համար ժամանակ ձգելու նպատակով։ Թուրքերն ուզում են Ադրբեջանով թափանցել վաղնջական հայկական Ղարաբաղի նահանգը և ավերել այն։ Անխուսափելի են զինված լեռնցիների նոր կռիվները մահմեդականների դեմ, եթե մենք դրան չխոչընդոտենք։

Deutschland und Armenien..., փաստ № 424.

243. ԳԵՆԵՐԱԼ ՖՈՆ ԿՐԵՍԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՆՑԼԵՐ ՀԵՐՏԼԻՆԳԻՆ

Քաղվածքներ զեկուցագրից **Թիֆլիս, 5 օգոստոսի 1918 թ.**

Այստեղ ես տալիս եմ Հայաստանի իսկական կացության նկարագրությունը, որպիսին է այն սեփական դիտարկումների և հեղինակավոր անձանց հետ ունեցած զրույցների հիման վրա։ Ներկայումս Հայաստանը շրջապատված է Թուրքերի կողմից, բացի Երևանից ու արվարձաններից, և սահմանափակված է լեռնային փոքր տեղանքով, որը բնավ պիտանի չէ ապրելու համար։

Թուրքերը չկատարեցին հայերի հանդեպ Բաթումի հաշտության իրենց իսկ կազմած պայմանները։ Նրանք օկուպացրին մի շարք մարզեր սահմանից այն կողմ, որոնց կորուստը շատ ցավագին է Հայաստանի համար, քանի որ դրանով նրանից խլեցին վերջին պիտանի արգավանդ մարզերը։

Ներկայումս Թուրքիան ցանկանում է Ադրբեջանից հարձակում սկսել հայաբնակ Ղարաբաղի վրա, քայքայել այնտեղի բնակչությանն այն պատրվակով, թե այնտեղի հայերը ագրեսիվ են տրամադրված մուսուլմանների դեմ։ Թուրքական քաղաքականությունը պարզ է։ Թուրքերը մտադիր են բնաջնջել հայերին։ Հայերին հալածում են հնարավոր ամեն տեղ, նրանց սադրում են և պատրվակներ ստանում նոր հարձակումների համար։ Եթե դա չի հաջողվում, ապա նրանց հարկադրաբար մատնում են քաղցի ու աղքատության։ Այդ նպատակով նրանք կողոպտում են օկուպացված մարզերը, տանում ամեն ինչ՝ Բաթումի պայմանագրին հակառակ։ Ալեքսանդրապոլում Թուրքերի ձեռք գցած ավարը շատ մեծ է։ Ես Ձեզ արդեն զեկուցել եմ, որ նրանք տարել են ամբողջ բամբակը։

Օկուպացրած մարզերը մաքրելու խնդրում Թուրքերի կողմից ցույց տրվող դիմադրությունը հանգում է նրան, որ նրանց դեռևս չի հաջողվել դուրս տանել ամբողջ ավարը։ Հայաստանը գրտնվում է շատ ծանր վիճակում։ Կառավարությունը հաստատապես որոշել է խուսափել այն ամենից, ինչը կարող է հարձակման նոր առիթներ տալ, բայց նա հնարավորություն չունի խոշընդոտելու նոր հրոսակախմբերի ստեղծումը։ Դա տեղի է ունենում ամենևին էլ ոչ քաղաքական դրդապատճառներով, այլ ավելի շուտ սովի պատճառով, որը մարդկանց ստիպում է դիմել կողոպուտի։

Հայաստանի կառավարությունը գիտակցում է այն վտանգը, որի մեջ երկիրը գտնվում է արդեն երկար ժամանակ։ Նա վճռել է խուսափել պայքարից և խոշընդոտել դրան։ Նա հաստատապես որոշել է և համաձայն է ողջ հայ ժողովրդի հետ պաշտպանվել մինչև արյան վերջին կաթիլը, եթե Թուրքերը նորից հարձակվեն երկրի վրա։ Այդ դեպքում Թուրքերը կներքաշվեն լեռնային մարտերի մեջ, որոնք երկար ժամանակով կկաշկանդեն նրանց ուժերը, եթե, իհարկե, հայերը չպարտվեն սովի միջոցով։

Էնվերի այն պնդումները, թե Թուրքիան պետք է գրավի Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և այլ մարզեր, որպեսզի խոշընդոտի վրացիների և հայերի ընդհարումները, արվում են միայն ժամանակ շահելու նպատակով, որպեսզի այդ մարզերից դուրս տանեն բերքը և կարողանան ամբողջությամբ կողոպտել դրանք։

Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին դրությանը, ապա այն չափազանց ծանր է հսկայաքանակ գաղթականների պատճառով, որոնք ներկայումս հավաքված են մի ոչ մեծ տարածքում, այն է՝ Երևանի շրջակայքում։ Հանրապետության նստակյաց բնակչությունը կազմում է 750 հազար մարդ։ Մարզում, որը չի կարող կերակրել այդ մարդկանց, գտնվում են ևս 500 հազար գաղթականներ։ Այդ մարդիկ գլխապատառ փախել են Թուրքերից և լքել են իրենց ողջ ունեցվածքը։ Նրանց ունեցած քիչ ու միլ պաշարները վաղուց են վերջացել։ Նրանք կամաց-կամաց մորթել են իրենց անասունները և դրանով իսկ իրենց զրկել գոյության վերջին հնարավորությունից։

Նստակյաց բնակչությունը կորցնում է իր բերքի մի մասը։ Հայերը պետք է կապկված ձեռքերով նայեն, թե Թուրքերն ինչպես են զինագրավված մարզերից տանում բերքը...

Deutschland und Armenien..., *փաստ № 426.*

244. ԱԿԱՆՆԱՏԵՍ ԲԻՍՄԱՐԿԸ ԲԱՔՎՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղվածքներ նամակից **30 սեպտեմբերի 1918 թ.**

Թուրքական գնդացիրների անընդհատ ճարճատյուն, ռմբակոծություն, հրանոթային արկերի սուլոց ու թշշոց (և այդ ամենը փոթորկալից), նավահանգիստների և նավթամբարների հրդ-

գեհ Սև քաղաքում՝ ահեղորեն լուսավորելով քաղաքը, ահավոր խուճապ... ահա այսպիսին էր այդ գիշերվա սարսափների պատկերը։

Կիրակի՝ սեպտեմբերի 15-ին, առավոտյան ժամը 9-ին թուրքերը սարերի կողմից ներխուժեցին մեզ մոտ։ Իսկ առջևում, նրանց կանխելով, սկսեցին իրենց գործը տեսնել տեղացի թաթարները։

Սկսած Շամախինկայից Վորոնցովսկայայով և քաղաքի մյուս գլխավոր զարկերակներով՝ Տորգովայայով, Տելեֆոննայայով, համատարած կողոպուտ էր մինչև վերջին թելը, կայքի, փորձարանների, բուժասենյակների, դեղատների, խանութների, բնակարանների բարբարոսական ոչնչացում... Տանում էին ամբողջ ապիտակեղենը, հագուստը, կահույքը, դրամը, ջարդուփշուր էին անում այն ամենը, ինչ ծանրաշարժ էր ու հաստատուն, բռնաբարվում էին կանայք ու երեխաները՝ առանց ազգային խտրության։ Բայց սպանում էին գրեթե միայն հայերին։ Պատահում էր, որ հայերի գլուխներ էին ցույց տրվում ջարդարարների խաժամուժին, և դա է՛լ ավելի էր սաստկացնում ջարդը։ Մարդիկ ամբոխի առաջ գլուխ էին գովում իրենց սխրանքներով և պարծենում, թե վրեժ լուծեցին մարտ ամսի համար։ Ընդհանուր հաշվով հայերից զոհվեց շուրջ 30 հազար մարդ։ Այնպիսի պատկերները, ինչպես երկու օրվա մեռած մոր ստինքը ծծող կամ ծնողների արյան մեջ խաղացող երեխան, սովորական երևույթ էին։ Առաջին իսկ անգամ հայտնվելով մեր զինվորական հիվանդանոցում, թուրքերը հիվանդներից խլեցին բոլոր կոշիկներն ու ճտքակոշիկները, բռնաբարեցին 6 հիվանդապահուհու, քիչ էր մնում վարիչին սպանեին նրա համար, որ նա միանգամից գանձարկղը չտվեց նրանց, և այլն։ Բեռնատարներով հիվանդանոց բերելով հայերին, թուրքերը նրանց նետում էին մայթերին և մտրակներով քշում մեզ մոտ։ Մեր հիվանդանոցում կան 70 տարեկան մի պառավ կին, որի նստուկի փափուկ մասերը փեռեկել են, 5—8 տարեկան երեխաներ, որոնցից մեկի ձեռքը հոդախախտված է, պլոկված է վերնամաշկը, բոլոր մկանները մերկացած են, խոր վերք կա կրծքին, մյուսի ոտքն է նույն վիճակում, երրորդի վրա վերք կա ու փամփուշտ գլխի մեջ, բազում տղամարդիկ կան կտրված ձեռքերով, ոտքերով, գանգի վնասվածքներով, ծանր վերքերով ու խեղումներով։ Իսկ քաղաքով մեկ փռված էին հայերի դիակները, որոնք քայքայվում

էին մի քանի օր, մինչև որ հավաքեցին։ Միխայլովյան հիվանդանոցը լեփ լեցուն է բռնաբարված աղջիկներով ու կանանցով։ Բոլոր զինվորական հիվանդանոցները լեփ-լեցուն են վիրավոր հայերով։ Հրեաները տուժեցին ունեցվածքի առումով. զոհվեց միայն մի ծերունի։ Տուժեցին բժիշկները՝ Կորոնան, Բեռնշտայնը, Բրոնը, Շտայնը, Վարշավսկին, ֆոն Շտայնը, Լեյբզոնը, Իվանովը և շատ ուրիշներ։ Վայրենիների տերուտնօրինությունը շարունակվեց երեք օր, որոնց «առաքելությունն էր» թալանել ու սպանել հայերին, իսկ մնացածներին կողոպտել ու բռնաբարել։ Հինգ օր դուրս չէինք գալիս մեր տնից։ Հերթապահում էինք առանց հանվելու, զոր ու գիշեր։ 11 ընտանիքից 5-ը նախօրյակին փախել էր շոգենավով։ Մենք նստած էինք խավարում (դուրս նայող սենյակները չէինք լուսավորում) սարսափահար ու սոված։ Նման բան երկրորդ անգամ վերապրելը միանգամայն անհնար է։

Այնուհետև հարաբերական հանգստություն տիրեց, կյանքն սկսեց դանդաղ մտնել հունի մեջ։ Բայց ի՞նչ կյանք։ Խանութները փակ են, քանի որ իմաստ չունի դրանք բացելը։ Հանրությունն ընկճված է. շուրջ բոլորը թրևում են ասկյարներն ու զինված թաթարները։ Երեկոյան, ժ. 7-ից հետո արգելված է փողոց դուրս գալ։ Շուրջ բոլորը խավար է։ Փողոցներում կանայք չեն երևում։ Եվ դեռ կախաղաններն էլ մի կողմից՝ Պարապետում, Կուբանկայում, Ազատության հրապարակում, Պետրովսկայայում, կայարանի առջև՝ ամենուրեք կախաղաններ են...

Փախչել, շուտ փախչել այստեղից։ Բայց փախչել էլ չի կարելի։ Կասպից ծովը կտրված է, քանի որ բոլորովին նավատորմ չկա։ Երկաթուղիներն էլ են կտրված։ Այնուամենայնիվ, առաջին իսկ հնարավորության դեպքում այստեղից փախչում են բոլորը, ովքեր կարող են։ Փախչում են քաղաքի լավագույն բժիշկները։ Բայց անհնար է իրերը դուրս տանել։ Ահռելի մաքսերը սպանում են. առանց մաքսի կարելի է դուրս տանել ընդամենը 1300 ռուբլու իրեր։ Մնացած բոլորի դիմաց հսկայական մաքսեր են գանձվում։ Ակամայից սկսում ես մտածմունքի մեջ ընկնել։ Բացի այդ, մասնավորապես Թիֆլիս մեկնելու համար պահանջվում է վկայագիր բարեհուսության, զինապարտների կարգին չպատկանելու մասին և այլն։ Կարծեմ, վրացական հպատակություն էլ է պահանջվում՝ Վրաստանի կողմից... Ոչ, երևում է այս մղձա-

վանջից փախչել էլ չի հաջողվի... Այս պայմաններում մենք ոչ թե ապրում, այլ գոյություն ենք քարշ տալիս դժբախտ Բաքվում։

«Кавказское слово», 8. 10. 1918, № 215.

245. ՌԽՖՍՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՆՈՏԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

20 սեպտեմբերի 1918 թ.

1918 թվականի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանի և Թուրքիայի միջև սահմանվեցին տարածքաքաղաքական նոր հարաբերություններ։

Բրեստ Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածով նախկինում Ռուսաստանի Հանրապետության կազմի մեջ մտնող Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի բնակչությանը իրավունք էր վերապահվում «դրացի պետությունների, հատկապես Թուրքիայի համաձայնությամբ նոր կարգեր հաստատել»։

Հիշյալ մարզերի ճակատագիրը, դրանց միջազգային իրավական դրությունը պետք է որոշվեին այդ մարզերի բնակչության կամքի արտահայտմամբ։ Մինչդեռ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Թուրքական ռազմական ուժերը գրավեցին այդ մարզերը և դրանց նկատմամբ կիրառվեց զինագրավման ռեժիմ, որն ուղեկցվում էր խաղաղ բնակչության անթույլատրելի կողոպուտներով և նրա նկատմամբ գործադրվող բռնություններով։ Թուրքական վարչակազմ մտցնելու հետ միաժամանակ անցկացվեց 19 տարեկանից վեր արական բնակչության հարկադիր հավաքագրում։

Բնակչությունը, որի կամքի ազատ արտահայտմամբ պետք է սահմանվեին նոր կարգեր, կանխապես ահաբեկվեց և դրվեց այնպիսի պայմանների մեջ, որոնց դեպքում երեք մարզերի բնակչությանը վերապահված իրավունքը վերածվում էր բացահայտ ծաղրանքի նրա նկատմամբ։ Քվեարկության նախօրեին պատվարժան քաղաքացիները, որոնց ազդեցությունը կարող էր Թուրքիայի օգտին չլինել, աքսորվում էին, ձերբակալվում, իսկ շատ դեպքերում նույնիսկ գնդակահարվում։ Քվեարկությունը տեղի էր ունենում Թուրքական իշխանությունների ակնհայտ հրահանգների ներքո, որոնք ընդամենը նկատի էին առնում իրենց ոխակալության և առաջիկա բռնացումների զոհերին։ Նման պայմաններում քվեարկության արդյունքները չէին կարող կանխորոշված չլինել։

Ռուսաստանից բռնի անջատված մարզերի բնակչության նկատմամբ այդպիսի բռնությունը համարելով պայմանագրի 4-րդ հոդվածի էական խախտում, խորհրդային կառավարությունը սույնով հայտարարում է, որ չի կարող համաձայնվել Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի բնակչության այսպես կոչված կամքի արտահայտման արդյունքների հետ և գտնում է, որ այդ բնակչությունը իր մարզերում նոր կարգ սահմանելու իրավունքը չի օգտագործել և որ հիշյալ մարզերի նոր կարգի հարցը մնում է առկախ։

Հաշտության պայմանագրով դադարեցվում էին պատերազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև, մինչդեռ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Թուրքիայի կողմից վերսկսվեցին պատերազմական գործողությունները և շարունակվում են ցայժմ։ Թուրքական կանոնավոր զորքերը՝ դաշինք կապած ավազակաբարո հրոսակախմբերի հետ, գրավում են խորհրդային Հանրապետության տարածքը, ավերելով ու կողոպտելով քաղաքներն ու գյուղերը, գնդակահարելով կամ ամեն տեսակ բռնությունների ենթարկելով քրիստոնյա բնակչությանը, չբացառելով կանանց ու երեխաներին։

Խորհրդային կառավարությունը բազմիցս բողոքել է Թուրքիայի կողմից շարունակվող պատերազմական գործողությունների դեմ, բայց այդ բոլոր բողոքները մնում էին անհետևանք։ Վերջապես, սույն թվականի հուլիսին Թուրքական բանակն արշավանք ձեռնարկեց Բաքվի վրա և իր գերակշիռ ուժերով հաղթահարելով խորհրդային զորքերի հերոսական դիմադրությունը, իր համար ճանապարհ բացեց դեպի այդ քաղաքը՝ Ռուսաստանի Հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը։ Խորհրդային կառավարության բոլոր բողոքներին օսմանյան կառավարության ներկայացուցիչները պատասխանում էին Թուրքական հարձակման բուն փաստի հասարակ ժխտումով կամ թե պատճառ էին բռնում, թե իբր Բաքվի մոտ գործում են միայն տեղացի բնակիչների անկանոն հրոսակախմբերը, այն դեպքում, երբ իրականում Բաքվի վրա հարձակումը կատարվել էր միանգամայն կանոնավոր Թուրքական բանակի կողմից, և հուլիսի 30-ին քա-

զաքը հանձնելու պահանջով Բաքվի բնակիչներին էր դիմել Շևքեթ փաշան։

Այժմ, երբ Բաքու քաղաքն արդեն գրավված է և թուրքական զորքերը գտնվում են բուն քաղաքում, երբ անպաշտպան բնակչությունը և ամբողջ քաղաքը թուրքական զորքերի ու նրանց միացած թաթարական հանցախմբերի կողմից օրեր շարունակ ենթարկվում են ավերածության ու կողոպուտի բոլոր սարսափներին, թուրք ներկայացուցիչների վկայակոչումը, թե Բաքվի վրա կատարված հարձակմանն իբր մասնակցել են միայն տեղացի ավազակները, չի համաձայնում Թուրքիայի բռնի գործողությունները քողարկելու փաստերի հետ, որի քողի տակ են տեղի ունեցել և տեղի ունենում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սիստեմատիկ խախտումները և Ռուսաստանի Հանրապետության տարածքների բացահայտ զավթումն ու կողոպտումը։

Անցած կես տարվա ընթացքում օսմանյան կառավարությունն անընդհատ խախտում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, չնայած Խորհրդային կառավարության բոլոր բողոքներին։ Վերջապես այժմ, ի լրումն ամենի, նա զավթել է և ահավոր ավերածության ենթարկել Ռուսաստանի Հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը։ Օսմանյան կառավարությունը դրանով ցույց տվեց, որ այլևս Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն չունի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Ռուսաստանի Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կառավարությունը հարկադրված է ընդունել, որ օսմանյան կառավարության գործողությունները փաստորեն ի չիք դարձրին Ռուսաստանի և Թուրքիայի միջև խաղաղ հարաբերություններ հաստատած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որը կնքված էր այդ երկու պետությունների միջև։

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերին

«Известия», № 205 (469), 1918, 21 сентября.

246. Գ. Վ. ՉԻՉԵՐԻՆԻՆ Մ. ՕՐԶՈՆԻԿԻՁԵԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՀԵՌԱԳՐԻՑ

12 սեպտեմբերի 1918 թ.

Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառի մի փոքր հողակտորի վրա կուտակվել են 600 000-ից ավելի գաղթականներ, որոնք զանգվածաբար կոտորվում են սովից ու խոլերայից։ Նվաճած գավառներում թուրքերը բնակչության կեսին կոտորել են։ Ղարաբաղում թուրքերը գրավել են Շուշիի և Զանգեզուրի գավառները, բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս։

Օրջոնիկիձե

ԽՍՀՄ Արտգործմինիստրության արխիվ.
Չիչերինի ֆոնդ, գ. 56822, թ. 14։

247. ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ՝ ԲԱՔՎԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՆԱԿՑՈՑ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Մ. ԹՈՄՍՈՆԻՆ

Ձեռագրություն Բաքու, 10 (23) նոյեմբերի 1918 թ.

Ողջունելով Անգլիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների գլխավորությամբ դաշնակից զորքերի մուտքը քաղաք, ես՝ որպես Բաքվի թեմի հայ բնակչության հոգևոր ներկայացուցիչ, սրբազան պարտք եմ համարում գազանաբար սպանվածների, տանջամահ արվածների, մինչև վերջին թելը կողոպտվածների, ամենանողկալի ոճրագործությունների մերկ, սովյալ, անմեղ զոհերի անունից Ձեզ ծանոթացնել հոտիս կրած տնասելի տառապանքներին։

Թուրքական և ադրբեջանական զորքերի կողմից քաղաքը գրավելիս, բաքվեցի հայերի համար այդ ճակատագրական օրը՝ սեպտեմբերի 2/15-ին, սպիտակ դրոշով նրանց ընդառաջ ուղարկվեց մի խաղաղ պատվիրակություն։

Քաղաքի խաղաղ բնակչությունը հավատում էր և հույս ուներ, որ Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետության կանոնավոր զորքերը խժդժություններ թույլ չեն տա և կվերականգնեն քաղաքի բնականոն կյանքը։

Եվ, իրոք, պատվիրակությանը, որի կազմի մեջ էին մտնում Դանիայի և պարսից հյուպատոսները, բանակի հրամանատար Մյուրսել փաշայի կողմից պաշտոնական հավաստիացումներ տրվեցին խաղաղ քաղաքացիների անվտանգության և նրանց ինչքի անձեռնմխելիության վերաբերյալ։ Բայց հենց կիրակի՝ կեսօրին, երբ կազմակերպված հրոսակախմբերը և զորամասերը մտան քաղաք, սկսվեց անմարդկային, զանգվածային կոտորածը և բացահայտ ալան-թալանը, որը շարունակվեց ամբողջ երեք օր։ Կոտորում ու սպանում էին առանց որևէ խարության

հայերին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, ծերուներին, առողջներին ու հիվանդներին, անգամ կրծքի երեխաներին, իրենց առջև, ըստ երևույթին, նպատակ դնելով բնաջնջել ողջ հայ բնակչությանը։ Մեր ունեցած հավաստի տեղեկությունների համաձայն, դիակառքերից ու սայլերից բացի, 25 բեռնատար ավտոմեքենաներ, յուրաքանչյուրը՝ 250 փութ բեռնամբարձությամբ, չորս օր շարունակ անընդհատ, գիշեր-ցերեկ դուրս էին կրում դիակները, և այդ աշխատանքը դեռևս չէր ավարտված։ Զանգվածային կոտորածի հետքերը թաքցնելու համար դիակների մեծ մասը հրկիզվեց Սալյանի զորանոցների մոտ, հիմնականում աղբանոցում։ Մոտավոր հաշվումներով ենթադրում են, որ սպանված հայերի թիվը քսան հազարից (20 000) ավելի է։ Արդեն միջոցներ են ձեռնարկված ավելի մեծ ճշտությամբ պարզելու զոհերի թիվը*։ Հրեշավոր կոտորածի հետ մեկտեղ, զորամասերը, ինչպես նաև տեղացի մուսուլմանները անդադրում, սիստեմատիկաբար, ասես նախապես մտածված ծրագրով զբաղված էին խաղաղ քաղաքացիների ունեցվածքի նույնքան հրեշավոր կողոպուտով։ Բոլորից շորթում ու խլում էին դրամը, ոսկյա և արծաթյա իրերը, ամեն տեսակ թանկարժեք բաներ. հայերի բնակարաններից, պահեստներից, խանութներից, կրպակներից դուրս էին հանում ու տանում գողացված բարիքի ամբողջ սաբեր՝ ապրանքներ, գործվածքեղեն, կահույք, հագուստ, կոշիկ, սպիտակեղեն և ամեն տեսակ տնային կահ-կարասի, ընդ որում շորթումների ու կողոպուտների ժամանակ շատ հաճախ տարբերություն չէին դնում հայերի և մյուս ազգությունների, անգամ օտարերկրացիների միջև։ Իսպառ կողոպտված են տեղի հայկական բոլոր եկեղեցիներն ու հասարակական-ազգային հիմնարկները. եկեղեցիներից տարել են բոլոր ոսկյա և արծաթյա պարագաները, եզակի և բազմարժեք հնություններ, հոգևորականների զգեստները, եկեղեցական սպասքը և առհասարակ այն ամենը, ինչ որևէ արժեք էր ներկայացնում։ Տաճարների ներսը գարշելիորեն աղտոտված է ու սրբապղծված։ Մարդասպաններն ու թալանչիները բացեիբաց հայտարարում էին, թե քաղաքը երեք օրով լիովին տրամադրված է իրենց տնօրինությանը։ Գազանաբարո զանգվածային կոտորածը երբեմն այնպիսի դաժանությամբ էր իրագործվում, որ դժվար է նույնիսկ

* Հրդեհված տվյալների համաձայն զոհերի թիվը կազմել է ավելի քան 30 000 (Խմբ.)։

հավատալ նման վայրագության հնարավորությանը։ Եղել են դեպքեր, երբ դահիճները խելակորույս հայերի աչքի առաջ սրում էին դանակները և ինչ-որ հրեշավոր խենթությամբ համակված, ոգևորում էին իրենց, թվարկելով ու պատկերելով այն բոլոր խոշտանգումները, որոնց նրանք ենթարկվելու են։ Բալախանիում՝ Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի հիվանդանոցում կոտորեցին բոլոր հիվանդ հայ ծառայողներին և երեք հայ բժիշկների, ընդ որում ծանր հիվանդներին բակ էին քարշ տալիս ոտքերից բռնած։ Հայ գաղթականների մանկատանը վայրագորեն ճանկում էին սարսափից խելագարված երեխաներին և չորրորդ հարկից նետում փողոց։ Վայրագությունն ու անմարդկայնությունը այնպիսի ծայրահեղ աստիճանի էին հասել, որ տեղացի մուսուլմանները ասկյարների ձեռքից գնում էին հայերին վրիժառության ու դաժան հաշվեհարդարի համար։ Երիտասարդ հայուհիները, երբեմն էլ տղաները գազանաբար բռնաբարվում էին, հաճախ ամուսինների ու հարազատների ներկայությամբ։ Նրանցից շատերը այդ նույն նպատակով քաղաքից տարվել են հայտնի չէ թե ուր, և այդ տառապյալները, որոնց աչքի առաջ սպանում էին իրենց իսկ ամուսիններին ու մերձավորներին, անհայտ կորան։ Աներևակայելի սարսափների մղձավանջային օրերը շարունակվեցին երեք գիշեր-ցերեկ, ընդ որում շորթումներին, կողոպուտին ու բռնաբարություններին հավասարապես մասնակցում էին օսմանյան կանոնավոր բանակը, ադրբեջանական զորքերն ու քաղաքացիական մուսուլման բնակչությունը, մինչդեռ կոտորածին ու սպանություններին մասնակցում էին գլխավորապես ադրբեջանական զորամասերն ու տեղացի մուսուլմանները։ Ապրած սարսափներից հետո կենդանի մնացած հայերը, որոնք փրկվել էին՝ թաքնվելով նկուղներում, մառաններում և այլ ծածուկ տեղերում տեղի քրիստոնյաների, հրեաների, մասամբ նաև պարսկահպատակ մուսուլմանների օգնությամբ ու օժանդակությամբ, կարծում էին ու հավատում էին, թե քաղաք մտած թուրքական իշխանություններն ու Ադրբեջանի կառավարությունը կդադարեցնեն արյունալի խժդժություններն ու բռնությունները։ Նրանք առավել ևս իրավունք ունեին հուսալու, որ սարսափները կդադարեն, քանի որ քաղաքի գրավման առաջին օրերին Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակի գլխավոր հրամանատարը և Ադրբեջանի հանրապետության վարչապետը պաշտոնապես հայտարարել էին, թե

Ադրբեջանում բնակվող բոլոր քաղաքացիները, առանց ազգությունների ու դավանանքի խտրության, կվայելեն կառավարության միատեսակ վերաբերմունքը, որ հավասարապես կպահպանի բոլոր քաղաքացիների կյանքը, ունեցվածքն ու իրավունքները։ Այդ հանդիսավոր պաշտոնական խոստումները, ինչպես նաև համապատասխան լրագրային հաղորդումներն ու հոդվածները Հայերի առնչությամբ սոսկ դիվանագիտորեն անհրաժեշտ եղանակ էին ահավոր ճշմարտությունը արտաքին աշխարհից թաքցընելու համար։

Այնինչ իրականում զանգվածային հանցագործություններից հետո սկսվեց Ադրբեջանի կառավարության եռանդուն, հետևողական, վաղօրոք մտածված գործունեությունը, որը չի կարելի անվանել այլ կերպ, քան արյունոտ վրիժառության քաղաքականություն, խաղաղ հայ բնակչությանը կոտորելու, և տնտեսապես լիովին սնանկացնելու քաղաքականություն։ Ընդհուպ մինչև դաշնակից զորքերի մուտքը քաղաք հայ բնակչության փրկված մնացուկները գտնվում էին օրենքից դուրս ու տարրական պաշտպանությունից զուրկ ու մռայլ բարբարոսության ժամանակների հալածական հելոտների ու իրավազուրկ ստրուկների վիճակում։

Արդեն անմարդկային տառապանքներ կրած խաղաղ հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի կառավարության վերաբերմունքի ցայտուն ապացույց կարող են հանդիսանալ հետևյալ փաստերը.

1) Մինչև վերջին ժամանակներս հայերի անընդհատ ու անդադար ձերբակալություններ էին կատարվում փողոցներում և տներում, որոնք հասնում էին մինչև զանգվածային շուրջկալների։ Բանտերը, Սալյանի զորանոցը, կրկեսը և այլ տեղեր լեփ լեցուն էին հազարավոր հայերով, որոնց ոչ մի մեղադրանք չէր ներկայացվում։ Բանտերում ձերբակալվածներին ոչ հաց էին տալիս, ոչ սնունդ և անտանելի վիճակի մասին նրանց բազմաթիվ դիմումներին իշխանությունների ներկայացուցիչները հայտարարում էին, թե թող նրանք բոլորն էլ սատկեն սովից։ Ադրբեջանի հանրապետության ներքին գործերի մինիստր Բեռուիխան Ջևանշիրը, որը հոկտեմբերի 29-ին անձամբ այցելել էր Բայիլովի բանտը, կալանավորվածներին բացեիբաց հայտարարել էր, թե նրանք բոլորն էլ կալանքի են վերցվել անկախ այն բանից, թե նրանք մեղավոր են, թե ոչ, և որ նրանք ազատ

կարձակվեն միայն այն ժամանակ, երբ ինքը կպարզի ու կհամոզվի, թե նրանք ինչքանով չեն մասնակից եղել մարտյան ու հետագա իրադարձություններին, այսինքն ռազմաճակատի պաշտպանությանը։ Ձերբակալված կամ կալանված հայերից շատերը բանտ չէին ընկնում, այլ ոստիկանատից տարվում էին հայտնի չէ, թե ուր և անհետ չքանում էին։ Այդպես անհետացան նախկին քաղաքագլուխ Ջումշուդ Հարությունովը, Սամսոն Ամիրովը, Սերոբ Բաբաևը, Կոստանդին Քալանթարովը, դոկտոր Տ. Զաքարյանը, Ս. Այդինյանցը, Բաղիրյանցը և շատ այլ անձինք։

Նկատի առնելով համաշխարհային պատերազմի փոփոխված պայմանները և դաշնակից զորքերի կողմից քաղաքի սպասվող գրավումը, Ադրբեջանի կառավարությունն սկսեց աստիճանաբար բաց թողնել կալանավորներին։ Սակայն կալանավորված հայերից շատերը ընդհուպ մինչև դաշնակիցների ժամանելու օրը հեծում էին բանտերում, քանի որ կառավարությունը երկու ամսվա ընթացքում չէր հասցրել տեղեկություններ հավաքել նրանց անմեղության մասին։

2. Կամայականության ու անպաշտպանվածության բացառիկ ծանր պայմաններում էին գտնվում հայ ռազմագերիները։ Այն դեպքում, երբ մյուս ազգությունների ռազմագերիները ազատ էին արձակվել, հայ ռազմագերիները, որոնց հետ խառնել էին նաև հազարավոր քաղաքացիական հայ բնակիչների, ովքեր զանգվածաբար կալանվել էին փողոցներում և տներում, պահվում էին, ինչպես ստրուկները, ծանր ու ահավոր պայմաններում։

Նրանց սովատանջ էին անում, խոշտանգում, անխնա ծեծում, սպանում, ընդ որում այդ ամենն անում էին վայրագ դաժանությամբ։ Նրանցից շատերը, որոնցից ասկյարները բռնությամբ խլել էին հագուստն ու կոշիկը, հագել էին կեղտոտ պարկեր, որ ծածկեն իրենց մերկությունը և այդ տեսքով, ոտաբոբիկ դուրս էին գալիս հարկադիր աշխատանքների։ Նրանց շարք էին կանգնեցնում և ծեծուշարդով ու խոշտանգումներով ստիպում էին խմբովին կրկնել, որ իրենք գյավուր-շներ են։ Նրանց լծում էին ծանր բեռնված սայլեր ու արաբաներ, իսկ ասկյարները քաղաքացիների աչքի առաջ մտրակներով խփում էին նրանց ու քշում քաղաքով մեկ, ինչպես գրաստի, նրանց հետ ավելի վատ վարվելով, քան կենդանիների։ Գերիներից, հիվանդներից ու սովյալներից շատերին փակում էին արտաքնոցներում և նրանց

ստիպում ձեռքերով հանել կղկղանքն ու մաքրել ոտաց ճանապարհները։

Բոլոր ոստիկանական տեղամասերն ու քաղաքապետության նախկին շենքը, որն զբաղեցրել էին ոստիկանության տեսուչն ու նրա գրասենյակը, խոշտանգումների և ծեծուջարդի սովորական վայրեր էին։ Դժվար է նկարագրել այն բոլոր գազանային հանցագործությունները, որ կատարվել են այդ զնդաններում։ Այդտեղ բացեիբաց ասկյարներին տղաներ էին առաջարկում բռնաբարելու համար։ Հայ ծերունիներին այդտեղ ստիպում էին երգել ու պարել մտրակների ու գավազանների հարվածների տակ։ Երեկոյան որոշակի ժամերի հավաքում էին բոլոր կալանավորներին և բոլորին հերթով ծեծում էին մինչև լիովին ուժասպառ լինելը, ընդ որում նրանց գլուխները կոխում էին գետնի մեջ հատուկ փորված փոսում, իսկ վզերին ու ոտքերին նըստում էին ասկյարները։

Խոշտանգումներով ու կոտանքներով ստիպում էին անմեղ մարդկանց խոստովանել չկատարած հանցանքներ։ Այդ ամենը տեսած ու իրենց վրա կրած մտավորական հայերը պատմում են, որ իրենց համար ավելի հեշտ էր տանել բուն ֆիզիկական տանջանքը, քան այն բարոյական տառապանքները, որ իրենք կրում էին խոշտանգվող զոհերի սրտակեղեք աղաղակներից ու գանգատներից։ Կալանավորներից ու գերիներից շատերը մեռան սովից ու խոշտանգումներից, կենդանի մնացածներից շատերը ասես անդրշիրիմյան կմախքների տեսք ունեն, իսկ նրանցից ոմանք էլ, որ խեղված են թե մարմնապես, թե հոգեպես, կորցրել են մարդկային նորմալ կերպարանքը և վերածվել կիսապուշների։ Այդ բոլոր տառապյալների տեսքն ու արտաքին կերպարանքը սարսափ ու սարսուռ են առաջացնում։

Դաշնակից զորքերի կողմից քաղաքի գրավումից փոքր-ինչ առաջ բոլոր քիչ թե շատ առողջ գերիները, թվով 1000-ից ավելի, քշվեցին Ելիզավետպոլի [Գանձակի] ուղղությամբ, չնայած Ադրբեջանի Հանրապետության վարչապետ Ֆաթալի խան Խոյսկուն, ներքին գործերի մինիստր Բեբութ խան Ջևանշիրին և բանակի հրամանատար Մյուրսել փաշային ուղղված միջնորդագրերին։

Ամբողջ շարադրվածից հետո կարելի է պատկերացնել, թե ինչպիսին կլինի նրանց հետագա ճակատագիրը, ինչպես նաև այն գերիների, ավելի ճիշտ ստրուկների, որոնք՝ թվով մի քանի

հազար հոգի, քշվել են հարկադիր աշխատանքների և գտնվում են ամբողջ երկաթուղագծի երկայնքով և մոտակա գյուղերում՝ մինչև Փոյլի կայարանը։

Ադրբեջանական իշխանությունները իրենց մոտ վերակենդանացրել են ամենանողկալի կամայականության ժամանակների դաժան ստրկությունը, և միայն աստծուն են հայտնի այն վայրագ վերաբերմունքը, խոշտանգումները և ծաղրուծանակը, որոնց նրանք հայերին ենթարկել են քաղաքից դուրս, խուլ անկյուններում։ Շատ բան, իհարկե, կպարզվի հետագայում, բայց հիմա էլ է հավաստի հայտնի դարձել, որ Ալյաթիում և Շիխովում հայ գերիներին նույնիսկ խմելու ջուր չեն տվել։ Մի գավաթ ջուրը ծախում էին 25 ռուբ. և ավելի թանկ։ Գերիներից նրանք, որոնք հարազատներից փող չէին ստանում, այն աստիճան էին տառապում ծարավից, որ ստիպված խմում էին ծովի ջուրը։

Ադրբեջանի կառավարությունը Շամախու գավառի հայ գաղթականներին ուղարկեց իրենց բնակության վայրերը իբրև թե տնտեսությունը վերականգնելու համար, արտաքուստ ու ձևականորեն նրանց երաշխավորելով անվտանգություն և մարդասիրական վերաբերմունք։ Մինչդեռ իրականում նրանց հանդեպ մարդասիրական վերաբերմունքն ու անվտանգությունն արտահայտվեց միայն նրանով, որ նրանք բոլորն էլ ճանապարհին թալանվեցին ու ծեծվեցին, կանայք գազանաբար բռնաբարվեցին, իսկ նրանց տնտեսությունները վերականգնելու փոխարեն կառավարությունը բռնագրավեց խաղողի ամբողջ բերքը, և հողագործության ու պետական կայքի մինիստրի կողմից աճուրդով վաճառվեց մոտ 200 000 դույլ գինի՝ նրանց վերջին ունեցվածքը, ընդ որում այդ աճուրդների մասին հայտարարությունը հայկական գյուղերի ցուցակի հետ տպագրված է «Կասպի» թերթի № 37-ում՝ հողագործության մինիստր Խ. Սուլթանովի ստորագրությամբ։

3. Զերբակալությունների ու գերեվարության հետ մեկտեղ անընդհատ հայկական տներում խուզարկություններ էին կատարվում ինչպես կառավարության հրամանագրերով, այնպես էլ անպատասխանատու անձանց, մեծ մասամբ հենց կառավարական ծառայողների կողմից, որոնք ամեն մի հարմար առիթից օգտվում էին, որպեսզի նորից կողոպտեն արդեն կողոպտ-

վածներին և վիրավորանքներ հասցնեն նրանց ընտանեկան պատվին։

Դրա հետ մեկտեղ Թուրքական և ադրբեջանական իշխանությունները հորինել էին և օրինականացրել հայերին կողոպտելու յուրօրինակ ձև, որը նրանք անվանում էին «բռնագրավում»։

Հայերի լքած տներից, որոնց տերերը սպանված էին կամ թաքնվում էին ուրիշների տներում կամ էլ բացակայում էին քաղաքից, բացեիբաց, բոլորի աչքի առաջ, թե ցերեկը, թե գիշերը բեռնատարներով, արաբաներով ու սայլերով սկսեցին տանել բոլոր տնային իրերն ու կահ-կարասին ընդհուպ մինչև վերջին թելը։ Այդ կողոպուտը սիստեմատիկաբար կատարվում էր երկու ամիս շարունակ և առանց ընդհատման շարունակվեց ընդհուպ մինչև քաղաքը դաշնակիցներին հանձնելու պահը։ Մինչև հանձնումը վերջին օրերին բոլոր փողոցները, հատկապես գիշերները, բռնված էին թալանված կայքով բարձված բեռնատարներով, սայլակառքերով ու արաբաներով։

Ամբողջովին թալանված են հայերի բոլոր պահեստները, խանութներն ու կրպակները, իսկ շինությունները բռնությամբ ու ինքնագլուխ կերպով զբաղեցրել են մուսուլման վաճառականները, որոնք վաճառում են այն ապրանքները, որոնք կամ իրենք են գողացել կամ էլ աննշան գներով ձեռք են բերել պաշտոնական ու ոչ պաշտոնական կողոպտիչներից։ Այդ ամենն, իհարկե, կատարվում էր բարձրագույն կառավարական իշխանության լիակատար անգործության պայմաններում և նույնիսկ, անտարակույս, նրա իմացությամբ ու համաձայնությամբ, վաղօրոք նախանշված ծրագրով։

Պաշտոնապես կողոպտված կայքի մի մասը բացեիբաց վաճառվում էր Ելիզավետպոլում՝ հրապարակային աճուրդով իր իսկ իշխանության կողմից, որի մասին կառավարական հատուկ հայտարարություններ կան տեղական լրագրերում։

Հափշտակված ամբողջ ունեցվածքի, բռնությամբ խլված դրամի, ոսկյա ու արծաթյա իրերի, թանկարժեք զարդերի, ապրանքների, հագուստի, կոշկի, կահույքի և այլնի արժեքը դժվար է ստույգ որոշել, բայց իրազեկ մարդկանց, տեղացի առևտրականների կարծիքով միայն հայ բնակչության վնասները համարձակ կարող են գնահատվել ավելի քան մեկ միլիարդ ռուբլի։

4. Բաքու քաղաքի և նրա շրջանների նավթարդյունաբերության առնչությամբ, որտեղ հայ ծառայողներն ու բանվորները

բավականին մեծ տոկոս են կազմում՝ ավելի քան տասնհինգ հազար հոգի, Ադրբեջանի կառավարությունը առանձնահատուկ քաղաքականություն էր վարում՝ նրանց լիովին հեռացնելու արդյունաբերական գործունեությունից։ Հաստիքների կրճատումներ անցկացնելիս աշխատանքից ազատվում ու տուժում էին գրեթե բացառապես հայերը։

Կառավարությունը հատուկ կարգադրություն էր հրապարակել, որ նավթահանքերի և օժանդակ ֆաբրիկագործարանային ձեռնարկությունների այն բոլոր աշխատավորները, որոնք հընթացիկ ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 6-ը, աշխատանքի դուրս չեն եկել, պետք է համարվեն ազատված։ Այդ կարգադրությունն ուղղված էր հայերի դեմ, որոնք զանգվածային ձերբակալությունների, գերման և իրենց կյանքի անապահովվածության պատճառով ստիպված էին թաքնվել ու պահվել, բնականաբար, չէին կարող դուրս գալ աշխատանքի, առավել ևս, որ արդյունահանման շրջաններում ապրող մուսուլմանները, ինչպես որ կառավարության գործակալները, կտրականապես հայտարարում էին, թե ոչ մի հայի չեն թողնի մտնել արդյունահանման շրջան։ Բոլոր նրանց, ովքեր համարձակություն էին ունենում գնալ Բալախանի և Ապշերոնյան թերակղզու նավթաբեր այլ վայրեր, տեղական մուսուլմանները բռնում էին, շատ հաճախ՝ ոստիկանության աջակցությամբ, սպառնում սպանությամբ, տանում մի հիմնարկից մյուսը, մի պաշտոնատար անձից մյուսի մոտ, և միայն անասելի ջանքերից ու խնդրանքներից հետո բաց էին թողնում նրանց ու վերադարձնում քաղաք, իհարկե, խիստ վախեցած ու ահաբեկված։ Հայտնի են դեպքեր, երբ այնտեղ մեկնած հայերը սպանվում էին կամ անհետ կորչում։

Վերը շարադրված փաստերը լոկ թույլ արտացոլումն են այն արյունոտ նախճիրի ու դաժան հաշվեհարդարի հրեշավոր մանրամասնությունների, որոնց ճակատագրական անխուսափելիության մասին պաշտոնապես ակնարկվել էին հայերին քաղաքը հանձնելու պահանջագրերում և որոնք կանխամտածվել էին պատանայական զգուշավորությամբ և ի կատար ածվել անմարդկային սառնասրտությամբ։

Թուրք-ադրբեջանական իշխանությունները թե տպագիր, թե բանավոր խոսքով պնդում էին և պնդում են, թե տեղի ունեցած սարսափները հարուցված են մարտյան իրադարձությունների,

դաշնակից անգլիացիներին քաղաք կանչելու և քաղաքի գրավմանը դիմադրելու համար վրեժ լուծելու հետևանքով։

Ադրբեջանի կառավարության իրավագիտակցությանը բնորոշ այս բացատրությունը, որն իր պետական գործունեության մեջ առաջնորդվում է այդ նույն նկատառումներով, բնավ չի բացահայտում իրադարձությունների հիմնական, գլխավոր պատճառը։

Մարտյան արյունոտ ընդհարումը, որը տեղի էր ունեցել բոլշևիկյան իշխանության և Մուսուլմանական ազգային խորհրդի միջև, ոչ մի ընդհանուր բան չունի սեպտեմբերյան սարսափների հետ։ Մարտին իշխանության համար զինված պայքար էր տեղի ունեցել բուն քաղաքում, վերածվելով դիակապտության այլանդակ ձևերի։ Այդ պայքարում սպանվել էին երկու հազարից ոչ ավելի մուսուլմաններ և մոտ հազար երկու հարյուր ռուսներ ու հայեր։ Այդ երկպառակությանը հայ զինվորների մասնակցությունը եղել էր բացառապես այն մուսուլմանների դավաճանական վարքագծի պատճառով, որոնք թիկունքը և ռուս-թուրքական ռազմաճակատը քայքայելու նպատակով հայերի առջև փակել էին բոլոր ճանապարհները և Թիֆլիս—Բաքու ճանապարհին վագոններից քաշում հանում էին անգամ խաղաղ, անզեն հայերին և նրանց գազանաբար մորթում ուղևորների աչքի առաջ։

Ռուս-գերմանական և պարսկական ճակատներից հայ զինվորները, որոնք շտապում էին տուն, մասամբ էլ Կովկասյան ռազմաճակատ, պահվել ու կուտակվել էին Բաքվում, անապաստան էին, կիսաքաղց և «Մուսավաթ» մուսուլմանական կուսակցության ու վայրի դիվիզիայի հանցավոր գործողություններից կատաղած, բնականաբար հարեցին բոլշևիկներին և նրանց պայքարին։

Բայց տեղացի մուսուլմանները հո չե՞ն կարող ժխտել, որ Բաքվի հայ բնակչության մտավորական, գիտակից մասը ճակատամարտի թեժ պահին, շատ հաճախ վտանգելով կյանքը, փրկեց, թաքցրեց և սիրով իր մոտ պատսպարեց առնվազն քսան հազար մուսուլմաններին։

Դեռ նախքան մարտյան իրադարձությունները, տեղի մուսուլմանների գերակշիռ ու գիտակից մասը, բացառությամբ քչերի, ղեկավարվելով թուրք գործակալների կողմից, ըստ ամենայնի ձգտում էր աջակցել Կովկասի և Արևելքի մյուս մուսուլմանական մարզերի նվաճմանը։ Հայերը, որոնք հակադիր կողմնորոշման էին և իրենց թույլ ուժերով պայքարում էին Համաձայնության տերությունների կողմում, բնականաբար, իրենց դեմ վայրի ցասում հարուցեցին ինչպես Թուրքիայում, այնպես էլ Կովկասում, դարձան խելահեղ վրիժառության և բարբարոսական մոլեռանդության զոհ։

Մարտյան և հետմարտյան իրադարձությունները սոսկ հարմար պատրվակ են թաքցնելու ճշմարտությունն ու շեղելու ուշադրությունը հայ-թուրքական թշնամանքի և գժտության հիմնական, գլխավոր պատճառից։

Բաքվի սարսափները, անտարակույս, համաշխարհային պատերազմի մղձավանջային դրվագներից մեկն են և քրիստոնյա հայ բնակչության բազմադարյան ողբերգության արարներից մեկը։

Թուրք-ադրբեջանական իշխանությունների կողմից չարանուղղելի, ահավոր բան կատարվեց ոչ միայն հայերի, այլև սեփական ժողովրդի նկատմամբ վրիժառության ու բարբարոսության իրենց անհեռատես և կործանարար քաղաքականությամբ։

Նրանց հանցավոր գործունեության անմեղ զոհերը՝ հոտիս մնացորդները ներկայումս անասելի ծանր պայմաններում են գտնվում ինչպես Բաքվում, այնպես էլ Բաքվի նահանգի Շամախու և Գյոկչայի գավառներում։ Մեծավ մասամբ աղքատացած, մերկ, սովյալ և հիվանդ, նրանք անխուսափելի կործանման են դատապարտված վերահաս ձմռան ցուրտ ամիսներին, եթե ժամանակին անհրաժեշտ օգնություն ու պաշտպանություն ցույց չտրվի նրանց։

Իմ հոտը հավատում է և հաստատապես հույս ունի, որ դաշնակից զորքերի մուտքով քաղաք մղձավանջային ոճրագործությունները, վերջապես, կդադարեցվեն, և ես՝ որպես նրանց հոգևոր ներկայացուցիչ ու կարիքների արտահայտիչ, Ձեզ եմ դիմում ամենահարգալից խնդրանքով ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ՝

1) Անհապաղ ազատել և Բաքու վերադարձնել երեք հազարից ավելի գերյալ հայերին, որոնք գտնվում են աննկարագրելիորեն ահավոր պայմաններում։

2) Պարսկաստանից, Կրասնովոդսկից բաքվեցի գաղթական-

ներին վերադարձնել Բաքու, նկատի ունենալով վերահաս ցրտերը։

3) Վերադարձնել թուրքական և ադրբեջանական իշխանությունների կողմից բռնագրավված հայերի ունեցվածքն ու թանկարժեք իրերը և ձեռնամուխ լինել հայ բնակչությանը պատճառված բազմամիլիոնանոց վնասների հատուցմանը և՝

4) Թեթևացնել հայերի, հատկապես նրանց ողբերգական վիճակը, որոնք գտնվում են Բաքու քաղաքից դուրս՝ Բաքվի նահանգի սահմաններում։

Ստորագրություն՝ Բաքվի հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ, Բաքվի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս

Հայկ. ԽՍՀ ԿԳԳԱ, ֆ. 200, ց 1, գ. 56, pp. 69—73:

248. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅԵՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՀԱՅԵՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Թիֆլիս, 1 դեկտեմբերի 1918 թ.

Ի պատասխան նոյեմբերի 30-ի ձեր № 59 գրության և ի լրումն իմ №№ 39 և 41 զեկուցումների, սրանով պարտք եմ համարում ներկայացնել Ձեզ Ալեքսանդրապոլի և շրջանի գյուղերի ծանր վնասների և ավերածությունների մասին համառոտ մի ցուցակ.

Տաճիկները իրանց հարձակման և տիրապետության շրջանում գործել են գազանություններ և կատարել սրածություններ հետևյալ գյուղերում. 1) Արթիկ, Ղփչաղ, Արխվալի, Բաշգյուղ գյուղերում կատարել են աննկարագրելի թալան, մինչև վերջին թելը։ Արթիկ գյուղում, որ ունի 400—500 ծուխ, թալանի ժամանակ կոտորել և գերել են տղամարդ ազգաբնակչության ամենաառողջ, երիտասարդ մասը, բռնաբարել և գերել են ահագին քանակությամբ կանայք, աղջիկներ, սկսած ութ-տաս տարեկան հասակից։

2) Թալանել են և կոտորածի ենթարկել Ճլոխան, Իլխիաբի, Թումարտաշ, Հոռոմ և Մեզիդլու շեն, բազմամարդ և հարուստ գյուղերը. եղել է սրածություն, բռնաբարություն, գերություն կանանց և տղամարդկանց։

3) Ալեքսանդրապոլի վերա հարձակվելիս ոմբակոծել և կիսավեր են դարձրել Խլի-Ղարաքիլիսա գյուղը, որի 1500 հոգի տղամարդ երիտասարդությունը գերել և սպանել են։ Ղարաքիլիսան շրջանի աչքի ընկնող խոշոր գյուղերից էր, ուներ 900 տուն բնակչություն, նահապետական խոշոր ընտանիքներից բաղկացած։ Լինելով քաղաքի արվարձաններից մեկը, Շիրակի հարուստ, ճոխ և վաճառաշահ ավաններից մեկն էր։ Ներկայումս կիսավեր, խեղճ և ողորմելի մի գյուղ է, կանացի և ծերունի ազգաբնակչությամբ։ Այս գյուղը նույնիսկ Հասան-խանի արշավանքի ժամանակ չի ենթարկվել նման անգթությունների և անագորույն բռնությունների։

4) Թալանված և սրի են քաշված Դահուրլի, Աղին գյուղերը, Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղագծի վրա։ Աղինցիները տաճիկների հարձակման ժամանակ ամբողջապես փախել էին գյուղից։ Սակայն տաճիկ հրամանատարությունը աղինցիներին խաբեությամբ հետ է դարձնում և համարյա բոլորին կոտորում։ Սրածությունից ազատվածներին կարելի է մատների վերա հաշվել։

5) Թալանի և ավերի են ենթարկվել Զիթիհանով գյուղը, որի ազգաբնակության կրած տանջանքները հիշեցնում են VII դարի արաբական արշավանքները։ Զիթիհանքովի ամբողջ արական սեռը առանց խտրության, մոտ 400—500 հոգի լցվում են մարագները և այրվում ամենաանգութ կերպով։ Այրվողների սարսափելի և աղիողորմ ճիչը բռնել էր ամբողջ շրջանը։

6) Բոլորովին հիմնահատակ և անհետք կերպով ավերվել են Սոգյութլի և Մահմուդոտ շեն և լի ավանները։ Ազգաբնակությունը կոտորված է մինչև վերջին մարդը։ Գյուղերը նույնիսկ չունին որևէ մեկը իբրև հիշատակ այդ գյուղերի վաղեմի գոյության։

Այս գյուղերը զոհ են գնացել մի սառը, անարգ և դավադիր պրովոկացիայի տաճիկների կողմից, որպես թե նոքա տաճիկներին դիմադրության փորձ են արել։

7) Նույնպիսի կոտորածի է ենթարկվել նաև Ղլիճեաթաղ գյուղը, որից չի ազատվել ոչ մի կենդանի շունչ։

8) Կոտորվել և ավերվել են Կասպ, Մեծ և Փոքր Ղանլիճա գյուղերը, որոնց բնակիչների մեծ մասը գերվել են։ Միայն 200 հոգի տղամարդ մորթվել են և սրախողխող եղել կենդանիների նման։

9) Ավերվել և մինչև վերջին թելը թալանվել են հետևյալ շեն

ու լի գյուղերը՝ Թորոսի գյուղ, Օրթա-Ֆիլիսա, Սալութ, Գյուլլի-Բուլաղ, Ղրզրլ-Քիլիսա, Դուզ-Խարաբա, Ջիֆթալի, Բոզ-Էոխուշ, Ղզղոզ, Շիշթափա. շրջանի ամենահարուստ և վաճառաշահ գյուղը՝ Ղազանչի, Թիթոյի-Խարաբայ, Քոռ-աղբյուր և ուրիշներ։ Այս գյուղերից շատերում հիմնահատակ քանդվել են շինությունները, ջրաղացները, կողոպտվել և տարվել են տարիների ընթացքում ամբարած հարստությունները, ոտացվածքները, երկրագործական բազմաթիվ գործիքներ, պարագաներ, տավար, ոչխար և ամեն ինչ։ Գերվել, բռնաբարվել և մահմեդականացել են հազարավոր կույսեր, հարսներ, մատղաշ օրիորդներ՝ սկսած ութ տարեկան հասակից։ Այս գյուղերի սարսափահար ազգաբնակությունը փախչում էր դեպի Լոռի, տաճիկները խաբեությամբ հետ են դարձնում և ամենաստոր, ամենաանարգ կերպով ենթարկում սրածության և կոտորածի։ Երիտասարդության մեծ մասը մյուս գյուղերի հետ քշվեց Կարսի ուղղությամբ երկրի խորքերը և նրանցից չվերադարձավ և ոչ ոք...

10) Ավերված ու թալանված են Զրախլի, Դուսքեանդ, Մեծ և Փոքր Քյափանակ, Հաջի-Նազար, մասամբ Ջաջուռ, Ախքիլիսա, Դարբանդ, Սամրլի, Քարմասոնի, Արխիվալի և այլ գյուղերը։ Այս գյուղերի երիտասարդներին տարել են դեպի դիմացի սարը և խմբերով գնդակահարել։ Ամբողջ հայ գյուղերի կայտառ երիտասարդությունը աշնան տերևների նման յուր դիակներով ծածկել է լեռների կատարները և ստորոտները։ Այս բոլոր գյուղերում տաճիկները ցուցադրել են հին և նախնական դարերի ասորեստանցիների խստասրտությունը և անխղճությունները։

11) Վրեժխնդրության պատրվակով մինչև վերջին թելը թալանի են ենթարկվել Ղարաբոյեա, Ղալթախչի, Ավդերեկ, Աղբուլաղ, Գեոզ-Էոխուշ, Համամլի, Ուրթավ, Գեորան, Ղշլաղ, Վարդանլու, Դարբաղ, Բզովդար գյուղերը, հիմնահատակ ավերված է Նալբանդը։

Սոցա հետ և ուրիշ շատ գյուղեր։

12) Մեծ Ղարաքիլիսան յուր շրջանով հիշատակալից ճակատամարտից հետո ենթարկվել է անագորույն սրածության, ավերի և կողոպուտի։ Միայն Ղարաքիլիսայի ձորերում և անտառներում սրածության և գնդակահարության են ենթարկվել մոտ 20 000 տղամարդ, շարքերով և այն [էլ] պարբերաբար, անխնա կերպով։ Այլանգակված դիակները ձորերում, հորերում և սարերում մինչև օրս վկա են այդ տմարդի և փոքրոգի գազանություններին։

Առհասարակ, Ալեքսանդրապոլի շրջանի 120-ից ավելի հայաբնակ գյուղերից, շեն ու լի, հարուստ ու ճոխ, առատ, հյուրասեր, և ոչ մեկը զերծ չի մնացել տաճկական ավերիչ ու կործանիչ սրից ու յաթաղանից։

Շատ գյուղերի մասին մինչև օրս չեմ կարողացել տեղեկություն հավաքել, որովհետև շրջանը կտրված է եղել արտաքին աշխարհից և փակված դրսի հարաբերությունների առաջ, նույնիսկ Ալեքսանդրապոլ քաղաքի համար։

Այս գյուղերի հետ միասին ավերվել ու կործանվել են 10—15-ից ավելի եզդիների գյուղեր, անհետ կորել նրանց խաղաղ և աստվածավախ ազգաբնակության հետ միասին։

Անհաշիվ են իմ հայրենի գավառի նյութական ու բարոյական վնասները։ Անփոխարինելի նորա կորուստները։ Այս րոպեիս նորա վերաշինության համար երկու միլիարդ հազիվ բավականացներ, սակայն ոչ մի հատուցում, ոչ մի վարձատրություն, ոչ մի նյութական վճար չի կարող փոխարինել Ալեքսանդրապոլի հայաշատ գավառի կենդանի, աշխույժ, կայտառ, ժրաջան և աշխատավոր երիտասարդության մատաղ կյանքերի ոչընչացման։ Երկիրը լի է այրիներով, անհայր ու անմայր քաղցած որբերով։ Դեռ Ալեքսանդրապոլը յուր շրջանով երկար կծխա ու կմխա յուր զավակների անփոխարինելի կորուստներով և կողբա նոցա զգալի բացը..

Ալեքսանդրապոլի և շրջանի հայրենակցական միության
վարչության նախագահ՝ Ա. Խան-Գասյան

ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ,
ֆոնդ 1, ց. 1, գ. 242, թ. 2—3։

249. ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Թիֆլիս, 2 դեկտեմբերի 1918 թ.

Ի պատասխան խորհրդիդ յ30-ն նոյեմբերի 1918 թ. № 56, վարչությունս ընդսմին պատիվ ունի ներկայացնելու Ախալքալաք գավառի բոլոր վնասված, ավիրված և կոտորածի ենթարկված հայկական գյուղերի ցանկը, որ տեղի է ունեցել սույն տարվա մայիսի վերջերին տաճիկ զորքի ներս խուժման ժամանակ։

1. Ախալքալաք քաղաք
2. Աբուլ գյուղ
3. Արագովա
4. Բղավեթ
5. Գորիս
6. Գուլիկամ
7. Մաճատիա
8. Օլավերտ
9. Օրճա
10. Խոսպիա
11. Աջանա
12. Ալաթուման
13. Բալխո գյուղ
14. Բալարեթ
15. Բեժանո (Ճանճղրազ)
16. Բուղաշեն
17. Բուռնաշեթ
18. Ղատոլար
19. Գոման
20. Ջակ
21. Էխթիլա
22. Գաճո
23. Լոմատուրա
24. Միրինիա
25. Սամսուր մեծ
26. Սամսուր փոքր
27. Սիրկ կամ Փոքր Գաճո
28. Տրրկրնա
29. Ազավրեթ
30. Ալաստան
31. Վարեան
32. Տուրս
33. Խանդո
34. Գյումբուրդա
35. Դիլիսկա
36. Ջամտուրա
37. Վաշեան
38. Ղուռի Դատեշ
39. Տիլ՛ֆ
40. Մեծ Գէոնտուրա
41. Փոքր Գէոնտուրա
42. Ղուլալիս
43. Նամզարա
44. Մուրճախեթ
45. Սուլտա
46. Մեծ Խանչալի
47. Փոքր Խանչալի
48. Կարծաղ
49. Մրակովալ
50. Արագյուղ մեծ
51. Արագյուղ փոքր
52. Դանձա
53. Օրոճալլարը
54. Փոկու
55. Սադխա
56. Խոճարեգ
57. Ճիգրաշեն
58. Կաուրմա
59. Թախճա
60. Խորենիա
61. Մոտիկամ
62. Թոթխամ

Թե Ախալքալաք քաղաքը և թե վերոհիշյալ գյուղերը թողել են իրենց շարժական և անշարժ կայքերը, ազատելով մի չնչին մասը, ապաստարան գտնելով Բակուրիանի անհյուրընկալ անտառներում, Ծալկայում և այլուրեք, իսկ Թախճա և Խորենիա գյուղերը ամբողջապես սրի են անցկացրած։

Գավառում մնացել են հետևյալ հայ կաթոլիկ գյուղերը՝

1. Բավրա
2. Կավթիկամ
3. Խուգումա
4. Թորիա
5. Ոիրճմանա
6. Բ՛եշտիա

Այս գյուղերի մասին Վարչությունս ճշգրիտ տեղեկություն չունի։

Փոխ-նախագահ՝
Ի տեղի քարտուղարի՝ Աբ. Տեր-Հակոբյան

ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ,
ֆ. 1, ց. 1, գ. 242, թ. 4—5։

250. ՓԱՄԲԱԿԵՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

8 դեկտեմբերի, 1918 թ.

Թյուրքական արշավանքից Փամբակի շրջանում ֆիզիկապես, տնտեսապես և նյութապես վնասվել են հետևյալ գյուղերը.

1) Մեծ Ղարաքիլիսա, 2) Ղշլաղ, 3) Եղաբլու, 4) Վարդանլու (կեսը թյուրք է բնակիչ— կեսը՝ հայ), 5) Սարումսախլու, 6) Դարբազ, 7) Բեզովտալ, 8) Հաջի-Ղարա, 9) Պարնի գեղ, 10) Համամլու, 11) Սպիտակ, 12) Ավտիբեկ, 13) Ջիգդամալ, 14) Ոլթնավ, 15) Թափանլու, 16) Նալբանդ, 17) Ղալթաղչի, 18) Ղարալ, 19) Աղբուլաղ, 20) Գյոգյողուշ, 21) Գյորան, 22) Ղարադարզի, 23) Էֆենդի։

Քարտուղար՝ Ստ. Ջորյան

ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1,
գ. 242, թ. 6։

251. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԴԱՇՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Թիֆլիս, 19 դեկտեմբերի 1918 թ.

Համաշխարհային պատերազմի ավարտի և համաշխարհային տերությունների ընդհարումների վերջնական արդյունքի ամփոփման այս նշանավոր ժամին Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը արձանագրում է հետևյալը. հայ ժողովուրդը, որն իր հայրենիքի աշխարհագրական պայմանների և իր համար աննպաստ դասավորված պատմության ընթացքի բերումով դարեր շարունակ անհավասար պայքար է մղել հանուն գոյության, չնայած դրան, առանց մտածելու իր թույլ ուսերին ընդունեց նաև մեր օրերի վիթխարածավալ պատերազմին մասնակցելու ուժերից վեր բեռը, իր բոլոր ուժերը հանելով Կենտրոնական Եվրոպայի պետությունների կոալիցիայի դեմ։

Գտնվելով դաշնակից տերությունների պատերազմական գործողությունների հեռավոր ծայրամասում, հայ ժողովուրդը իր համեմատաբար փոքրաթիվ ուժերով հայտնվեց թվապես և ռազմական ուժով իրեն բազմակի գերազանցող թշնամու՝ Թուրքիայի դեմ հանդիման, որն, ընդսմին, քիչ է հաշվի նստում մարդկային հասարակության տարրական կանոնների հետ, որոնք եվրոպական մշակույթի արգասիք են։

Պատերազմի առաջին շրջանում, երբ Ռուսաստանը դեռևս զենքը ցած չէր դրել, հայերը զանգվածաբար միախառնվում էին ռուսական զորքերի շարքերին և վերջիններիս հետ համահավասար կրում պատերազմի բոլոր դժվարությունները. բացի այդ, կազմակերպելով կամավորների հատուկ ջոկատներ, նրանք գործում էին ռուսական բարձրագույն հրամանատարության ղեկավարության ներքո, էական ծառայություններ մատուցելով ռուսական բանակին։ Իսկ ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը թողնելուց հետո հայերը կազմեցին ազգային զորամասեր՝ այս ռազմաճակատում դաշնակիցների գործը շարունակելու համար. սակայն ճնշվելով թշնամիների անհամեմատ գերազանցող ուժերի կողմից և թուլանալով թիկունքից իրենց վրա հարձակված կովկասյան թաթարների հրոսակախմբերի կողմից, որոնց կազմակերպել ու վինել էին Թուրքիայի և նրա դաշնակիցների գործակալները, հայերը վիթխարի կորուստներ կրեցին և անհամար զոհեր տվեցին դաշնակիցների գործին։

Թուրքական կանոնավոր զորքերը, մոլեռանդությամբ համակված, ծրագրված կերպով ու հետևողաբար կատարում էին հայ ժողովրդին բնաջնջելու իրենց առջև դրված հանցավոր խնդիրը։ Գործելով թուրք սպաների ղեկավարությամբ, կովկասյան թաթարների խավարամիտ հրոսախմբերը, մղվելով վայրի բնազդներով, հրի ու սրի մատնեցին մեր երկիրը, անխնա կոտորելով բոլորին, ովքեր չէին հասցրել թաքնվել նրանց տեսադաշտից։

Սրի է քաշվել ու բնաջնջվել առնվազն մեկ միլիոն հայ։ Ամբողջ Թուրքահայաստանը և Կովկասյան Հայաստանի մեծ մասը անապատի են վերածված։ Հրկիզված են քաղաքներն ու գյուղերը, կողոպտված է այն շրջանների հայերի ամբողջ ունեցվածքը, որտեղ ոտք են դրել թուրքերը և նրանց դաշնակիցները՝ կովկասյան մուսուլմանները. և ներկայումս՝ հատուցման հանդիսավոր պահին, մեր հայրենիքը ավերի ու մահվան մի տխուր պատկեր է իրենից ներկայացնում։ Ահավասիկ.

Կարսի մարզ: *Սարիղամիշի ճակատում թուրքական զորքերի ճեղքման պահին Կարսի մարզի Արդահանի և Օլթիի օկրուգների տեղացի մուսուլման բնակչությունը թուրք սպաների հրամանատարությամբ կտրեցին հայ բնակչության նահանջի ճանապարհը, և վերջինս, մնալով տեղում, գլխովին կոտորվեց, բացառությամբ մեկ հազար երեխաների ու կանանց, որոնց ջարդելով, բռնաբարելով, պղծելով, հետագայում Արդահանի մոտից բաց թողեցին գնալու Հարևան Ախալքալաքի գավառ։ Իսկ նույն Կարսի մարզի մյուս երկու՝ Կարսի ու Կաղզվանի օկրուգների հայերը մեծ մասամբ հասցրել էին փախչել Կարս, տեղում թողնելով իրենց ողջ ունեցվածքը՝ հացահատիկն ու այլուրը, անասունները, գործիքներն ու կահ-կարասին։ Կարսի հանձնումից հետո ամբողջ գաղթականությունը խուճապահար նետվեց դեպի Ալեքսանդրապոլ, բայց Կարայազ կայարանի մոտ մուսուլմանների կազմակերպված հրոսախմբերի կողմից թալանվեց մինչև ջերջին թելը։ Այնուհետև փախչելով Ալեքսանդրապոլից, այդ դրժբախտների մեծ մասը կոտորվեց ճանապարհին և Մեծ Ղարաքիլիսա գյուղում։*

Ալեքսանդրապոլը և գավառը: *Չնայելով Բրեստ-Լիտովսկի*

Հաշտության պայմանագրի պայմաններին, Թուրքերը Ալեքսանդրապոլ քաղաքի անակնկալ ռմբակոծումով խուճապի մատնեցին վերջինիս բնակչությանը, հարձակման անցան ամբողջ գծով մեկ, հրի ու թալանի մատնեցին գյուղերն ու բնակչությանը, որը խելակորույս էր իր դեմ գործադրված գազանություններից, քշեցին Ղարաքիլիսայի լեռնանցքներն ու ձորերը։ Այստեղ Թուրքական կանոնավոր զորամասերը իրենց դաշնակիցների՝ մուսուլմանական հրոսակների հետ, անասելի վայրագություններ կատարեցին. կանանց բռնաբարում ու երեխաների պղծում, տղամարդկանց մեթոդաբար զանգվածային բնաջնջում՝ նրանց բաժանելով կարգերի, միմյանց կապկպած հարյուրավոր խաղաղ բնակիչների գնդակահարություն, սարսափներ, որոնք անհնար է նկարագրել։ Ականատեսներից հարյուրավոր մարդիկ խելացնորվել են, ի վիճակի չլինելով տանել այդ գազանությունները։ Ջրհորները, փոսերը, ձորերը, գետերն առ այսօր էլ լի են սպանվածների նեխած դիակներով։ Ալեքսանդրապոլի գավառի տեղերում մնացած բնակչությունից, որը չէր հասցրել փախչել, ավելի քան 10 000 երիտասարդներ քշվեցին Թուրքահայաստանի խորքը՝ դեպի Էրզրում, որտեղ նրանք զոհվեցին ասկյարների գնդակներից ու հարվածներից, սովից, ցրտից ու հիվանդություններից։ Այդ տարաբախտներից միայն մի քանի հարյուր մարդ վերադարձավ հայրենիք։ Թե Ալեքսանդրապոլի գավառի և մերձակա շրջանների գյուղերում ինչպիսի կամայականություն ու սանձարձակություն է տիրել, կարելի է տեսնել հետևյալից։ Խլի Ղարաքիլիսա գյուղում 1500 բնակչից կենդանի է մնացել ընդամենը 200 մարդ։ Այդ շրջանում բռնաբարվել և առևանգվել են առնվազն 5000 կին ու աղջիկ, որոնցից շատերը թույն են խմել, ի վիճակի չլինելով դիմանալ խայտառակությանն ու իրենց դեմ գործադրված գազանություններին, շատերն ընդունել են իսլամը։ Հենց այդտեղ գնդակահարվել են հազարավոր խաղաղ բնակիչներ, որոնք ոչ մի մասնակցություն չէին ունեցել ռազմական գործողություններին։ Քշվել տարվել են ավելի քան 50 հազ. գլուխ խոշոր եղջերավոր, 100 հազ. գլուխ մանր անասուններ, 5 հազ. ձի, տարվել է մոտ 2 1/2 միլիոն փութ ցորեն, 1 միլիոն փութ գարի, կողոպտված են բոլոր մանուֆակտուրաները, գործիքները, սարքավորանքը, տների կահ կարասին, զարդերը, ոսկին, արծաթը, փողերը, հրի ճարակ են դարձել հանրային ու պետական շինությունները, ոչնչացված են այգիները, բանջարանոցները, ջրաղացները, հանված տարված են լուսամուտների ու դռների շրջանակները և նույնիսկ գեղջկական խրճիթների գերաններ։

Ախալքալաքի գավառ։ Զավթելով Ախալքալաքի գավառը, Թուրքերը կոտորեցին մնացած ամբողջ հայ բնակչությանը, բացի հայ կաթոլիկներից։ Այսպես, գլխովին սրի են քաշված Թաղչա և Խորենիա գյուղերի երկու հազար գյուղացիները, որոնք չէին հասցրել փախչել։ Իսկ գավառի փախած հարյուր հազար բնակչությունը տեղում թողել էր իր ունեցվածքը սակավ բացառությամբ, իր հետ քշելով անասունների սոսկ մի մասը, և ապաստան էր գտել հարևան՝ Բակուրիանիի ու Ծալկայի շրջաններում, որոնք շուտով համատարած գերեզմանոցների վերածվեցին այդ դժբախտների համար։ Այդ գավառի 85 հազ. գաղթական հայերից 5 ամսում զոհվեց ավելի քան 40 հազար մարդ։ Հիվանդություններից, ցրտից ու սովից օրական միջին հաշվով 300 մարդ էր մեռնում։ Պաշտոնական տվյալներով 1918 թ. օգոստոս ամսին Բակուրիանիում գաղթականական կազմակերպությունների կողմից սպասարկվում էր 32 հազ. մարդ, իսկ նոյեմբերին՝ ընդամենը միայն 14 հազ., մնացած 18 հազ. զոհվել էին։ Գանձա գյուղի 2060 շունչ բնակչից այդ նույն ժամանակամիջոցում Ծալկայում զոհվել է 720 մարդ։ Խանչալի գյուղի 1700 շնչից զոհվել է 1150 մարդ, Սաթկա գյուղի 3250 շնչից զոհվել է 2500 մարդ։ Մինչդեռ այդ սովյալ զանգվածը գավառում թողել էր ավելի քան 2 1/2 միլիոն փութ հացահատիկ, մոտ 8 միլիոն փութ բերք, 15 հազար մեղվափեթակ, մեծ քանակությամբ անասնակեր, հողամշակման գործիքներ, գյուղատնտեսական մթերքներ, գործվածքեղեն և այլ ապրանքներ, հանրային ու ռազմական ունեցվածք, եկեղեցական սպասքեղեն, հին ձեռագրեր։ Գաղթականների մոտ մնացած շարժական ունեցվածքը աննշան գներով ծախծխվել է տարաղդի վերավաճառողներին, իսկ անասունները գրեթե ամբողջությամբ քշվել տարվել են Ախալքալաքի գավառում Թուրքերի կազմակերպած ավազակախմբերի կողմից, որոնք Թուրք սպաների ղեկավարությամբ և ասկյարների մասնակցությամբ սիստեմատիկաբար ասպատակություններ էին կատարում գաղթականների դեմ, ընդ որում քշված անասունները, ինչպես դա հաստատված է ականատեսների կողմից, դրվում էին Ախալքալաքում և Ախալցխայում գտնվող Թուրքական բարձրագույն հրամանատարության տնօրի-

նության ներքո, ինչպես դա տեղի էր ունեցել հունիսի 12-ին, հուլիսի 19-ին և այլն։

Փամբակի շրջան։ Այս շրջանի 28 հայաբնակ գյուղերից փրկվել է միայն Համզաշիման գյուղը, ուր թուրքերը չեն մտել, իսկ մնացած 27 գյուղերը ենթարկվեցին թուրք-թաթարական զորքերի ու հրոսակախմբերի բոլոր սարսափներին։ Գազանությունների ձևերն ու տեսակները հայտնի են. մարդիկ կոտորվել են զանգվածաբար՝ միմյանց կապկպված գնդակահարվել են հարյուրներով, բռնաբարված են կանայք, երեխաները... Թուրքերն իրենց զոհերին ստիպում էին գերեզմաններ փորել իրենց համար և ողջ-ողջ թաղում էին նրանց։

Ղըշլաղ գյուղում կոտորվել է 250 մարդ, Պարնիում՝ 150 մարդ, Բզովդալում՝ 200 և այլն։ Գերի են տարվել հազարավոր կանայք ու աղջիկներ, կողոպտված է Փամբակի գյուղերի ամբողջ ունեցվածքը՝ անասունները, հացահատիկը, տնային կահկարասին, գործիքները, գորգերը, կարպետները, փողերը, զարդերը, կանանց ու տղամարդկանց վրայից հանված է քիչ թե շատ տանելի հագուստը, մի խոսքով, շրջանը ամբողջովին քարուքանդ է արված։ Գրադարանների գրքերը օգտագործված են որպես վառելանյութ։ Սպանությունները, կողոպուտները, բռնաբարությունը, գերեվարությունը, ծանր աշխատանքների պարտադրումը շարունակվել են սիստեմատիկաբար և Փամբակի շրջանում թուրքերի գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում, մի խոսքով, շրջանը հիմնիվեր ավերված է։ Նյութական վնասները միլիոնների են հասնում։

Լոռվա շրջան։ Համեմատաբար նվազ վայրենությամբ է կողոպտված ու քարուքանդ արված Լոռվա շրջանը։ Այստեղ էլ են տեղի ունեցել սպանություններ, կանանց բռնաբարություններ ու առևանգումներ, երեխաների պղծում, բայց այդ հանցագործությունները զանգվածային բնույթ չէին ընդունել։ Սակայն ունեցվածքի առումով այս շրջանի կորուստները նույնպես հրսկայական են. քշել տարել են անասունները, տարել են հացահատիկը, կարտոֆիլը, կաղամբը, ոչնչացվել են տնտեսությունները, տարվել է այն ամենը, ինչ կարող է գեթ որևէ արժեք ներկայացնել՝ դռները, լուսամուտների շրջանակները և այլն. այդ ամենը՝ տեղի հայերի սայլերով, որոնք այդպես էլ անհետ կորան իրենց սայլերով ու բանող անասուններով...

Նոր Բայազետի գավառ։ Նոր Բայազետի գավառում, որը բոլորից քիչ է տուժել, նույնպես վնասներ են եղել. թուրք սպաների ղեկավարությամբ գործող թաթարների հրոսախմբերը Ղըրբուլախ, Տուսկուլու և Զաղալու գյուղերում ոչնչացրել են մի քանի հարյուր տնտեսություն, ընդ որում քշել տարել են միլիոնների արժողությամբ եղջերավոր անասուններ։ Բասարգեչար գյուղը վեց ամիս պաշարված էր, որի հետևանքով այնտեղ կոտորվեց 5000 խոշոր և 10 000 մանր եղջերավոր անասուն։

Ղարաբաղ և Զանգեզուր։ Ղարաբաղը, որն ընդգրկում է Ջիվանշիրի, Շուշիի և Կարյագինի գավառները և Զանգեզուրի գավառը՝ երկու հարյուր հազար հայ բնակչությամբ, չցանկանալով մտնել Ադրբեջանի կազմի մեջ, դառնալ թուրք-թաթարական զորքերի ու հրոսախմբերի գործողությունների ասպարեզ, մինչև վերջերս պաշտպանվում էր։ Բայց Բաքվի գրավումից հետո հինգհազարանոց թուրքական մի զորաջոկատ շարժվեց Ղարաբաղի վրա։ Ճանապարհին կործանելով մի ամբողջ շարք հայկական գյուղեր, վերջիններիս բնակչությանը ենթարկելով թուրք-թաթարների համար սովորական սարսափների և գրավելով մարզի կենտրոնը՝ Շուշի քաղաքը, պահանջեց, որ մինչև ատամները զինված թաթարական զանգվածների կողքին գտնվող հայ բնակչությունը զինաթափվի։ Հայերը, մյուս գավառների իրենց ազգակիցների փորձից դաս առած, հարկադրված են դիմել զենքի, որպեսզի զոհ չգնան թուրք-թաթարների վայրի սանձարձակությանը։ Բոլոր կողմերից պաշարված ղարաբաղցի հայերը շատ վայրերում արդեն զանգվածային զոհեր են տվել սովին։ Թուրքական զորքերը ձգտում են այդ երկրամաս ներխուժել Զանգեզուրի գավառով, որը նույնպես պաշարված է նրանց կողմից, բայց պաշտպանվում է գեներալ Անդրանիկի ջոկատի ուժերով, որը պատերազմի հենց սկզբից անհավասար պայքար է մղում թուրք-թաթարների դեմ։

Ելիզավետպոլ։ 1917 թ. դեկտեմբեր ամսից Ելիզավետպոլում սկսվեցին հայերի մասնակի սպանություններ ու կողոպուտներ, որոնք աստիճանաբար զանգվածային բնույթ էին ընդունում, և ի վերջո ինչպես քաղաքը, այնպես էլ հայկական գյուղերի ամբողջ շրջանը պաշարվեցին թաթարական զանգվածների ու հրոսախմբերի կողմից, որոնց ղեկավարում էին թուրք սպաները։ Մի քանի տասնյակ հազարի հասնող բնակչությունը ութ ամիս շարունակ ապրում էր առնս պաշարված ճամբարում։ Հայերի բազմամիլիոնանոց ունեցվածքը, ինչպես բամբակի բերքն ու

պաշարները, գործարանները, պահեստները և այլն, որոնք մնացել են մուսուլմանական մասերում կամ վերջիններիս գործողությունների շրջանում, հափշտակված է ու յուրացված։ Արտաքին աշխարհի հետ հայերի ամեն տեսակ հարաբերություններ ընդհատված են, դադարեցված է առևտուրը։ Ելիզավետպոլի և շրջանի բնակչության նյութական վնասները, այդպիսով, կազմում են տասնյակ միլիոնավոր ռուբլիներ։

Շամախի և Գյոկչա։ Ղեկավարվելով Թուրք գործակալների կողմից, Շամախիում տեղացի թաթարները ռուսների և հայերի դեմ իրենց թշնամական գործողություններն սկսեցին մարտին։ Նրանք հանկարծակի հարձակվեցին զորանոցների վրա, ջարդեցին ու զինաթափեցին ռուսական կայազորը, որը բաղկացած էր ռուս և հայ զինվորներից։ Դրանից հետո տրված ազդանշանով գյուղերից շարժվեցին թաթար զանգվածները և սկսեցին կոտորածը ինչպես քաղաքում, այնպես էլ գավառում։ Հայերի մի մասը հասցրեց թաքնվել հարևան՝ մալականների գյուղերում, որոնց բնակչությունը հայերի հետ փախավ Բաքու։ Ճանապարհին գաղթականների մեծ մասը կոտորվեց, նրանց ունեցվածքը կողոպտվեց թաթարների կողմից, և նրանց միայն խղճուկ մնացուկները հասցրին գալ Բաքու։ Այդ տարաբախտները մահից չխուսափեցին նաև այստեղ. գրավելով Բաքուն, թուրքերը նրանց մեծ մասին անխտիր կոտորեցին։ Շամախու և Գյոկչայի գավառների հայկական բոլոր գյուղերը քարուքանդ են արված ու հավասարեցված հողին, այդ թվում և մեծ ու հարուստ գյուղերը՝ Մադրասան, Սալյանը, Կրկեժը և մյուսները... Նույն բախտը վիճակվեց նաև Գյոկչայի գավառի հայերին. բոլոր կանայք բռնաբարված են, իսկ տղամարդիկ՝ սրի քաշված։ Հայկական բոլոր 11 գյուղերը հողին են հավասարեցված։ Հայերի մի աննշան մասը թաքնվել է Ռուշան գյուղի մոտակա անտառում, որտեղ թաթարներն ու թուրքերը նրանց հետապնդում են ինչպես գազանների, որսում են ու սպանում, իսկ նրանք, ում հաջողվում է խուսափել հալածական գազանի ճակատագրից, անտառում զոհվում են սովից, ցրտից ու տարափոխիկ հիվանդություններից։

Նուխիի և Արեշի գավառներ։ Նուխիի և Արեշի հայ բնակչությունը, թվով՝ 60 հազար, շրջապատված լինելով մուսուլման բնակչության ծովով, անգամ խաղաղ ժամանակ հարաբերություն չուներ արտաքին աշխարհի հետ ավարառության, կողոպտու-

ների և սպանությունների պատճառով։ Այս գավառներում թուրք սպաների ղեկավարությամբ սկսվեց հայերի ջարդը։ Վերջիններս մի քանի անգամ ենթարկվեցին հարևանների սարքած կոտորածին ու վայրի սանձարձակությանը, որոնք նրանց խիտ օղակի մեջ էին առել։ 1918 թ. փետրվարին քարուքանդ արվեց 16 գյուղ, նույն տարվա հունիսի վերջերին կոտորածն ավելի լայն շրջան ընդգրկեց, և Արեշի ու Նուխիի գավառների 52 գյուղից ժամանակավորապես փրկվեցին առաջինում միայն Բոյուք Սոգյութլի, Բալա Սոգյութլի, Խոշքաշեն, Ջիրիկ և Թոսիկ, իսկ երկրորդում՝ Վարդաշեն, Ստորին Ջաղութ, Ջաղու և Միրզա Բեքլի գյուղերը։ Այդ բոլոր իբր փրկված գյուղերը զինաթափվել են թուրքական հրամանատարության կողմից, ընդ որում նրանց խոստացվել էր կյանքի և ինչքի անձեռնմխելիություն։ Սակայն հացահատիկի բերքահավաքը ավարտվելուց հետո սեպտեմբեր ամսին նրանց ամբողջ ունեցվածքը խլվեց թուրք-թաթարների կողմից, 12 տարեկանից վեր տղամարդիկ, որոնք չէին հասցրել փախչել, բոլորն անխտիր սրի քաշվեցին, իսկ կանայք ու երեխաները տարվեցին Աղդաշ բնակավայրը և նրանցից առավել գեղեցիկները նվեր ուղարկվեցին զանազան բեգերի և մուսուլման ազդեցիկ անձանց։ Շարադրվածի հերոսներ են անվանում տեղացի կալվածատեր Մահեզդ բեկ Լուբֆալիբեկովին և թերգեշցի Գալջի Յուսուֆին, որն իրեն հռչակել էր Թուրքիայի և Ադրբեջանի կառավարությունների հատուկ լիազոր։ 52 հայկական գյուղերի ամբողջ շարժական կայքը առանց մնացորդի զավթվել է մուսուլմանների կողմից, իսկ ամայացած գյուղերում բնակություն են հաստատել լեզգիները։ Հայերի մի մասը՝ մոտ 20 հազար, հասցրել է թաքնվել հարևան անտառներում և սարերում, իսկ մի մասն էլ հասել է անգամ Դաղստանի մարզ, որտեղ իր վերջին օրերն է ապրում առանց որևէ օգնության։ Այս գավառներում զոհվածների թիվը հասնում է 40 հազարի։ Նյութական կորուստները հասնում են հարյուր միլիոնավոր (ռուբլիների)։

Օրդուբադ-Ազուլիսի շրջան։ Կոտորածով ու ավերով ուղեկցված Նախիջևանի իրադարձություններից հետո, որոնք տեղի ունեցան սույն՝ 1918 թվականի հուլիսի 5—6-ը, թուրքական զորամասերը շարժվեցին Ջուղայի ուղղությամբ, իսկ այդտեղից նրանց մի մասն ուղղվեց դեպի Օրդուբադ։ Այդ ճանապարհին ընկած հայաբնակ Ազա մեծ գյուղը, հարձակման ենթարկվելով,

հիմնահատակ ավերվեց։ Շրջակա գյուղերի թաթարները, միանալով թուրքական կանոնավոր զորամասերին, հրի ու սրի մատնեցին ամբողջ գյուղը, հրկիզեցին տներն ու շինությունները, կողոպտեցին ու տարան հայերի ամբողջ կարողությունը, իսկ իրենց՝ բնակիչներին, կոտորեցին։ Կոտորվել է 150-ից ավելի մարդ, կանայք ու աղջիկներն առևանգվել են։ Հրաշքով մահից փրկված բնակչության մի մասը հեռացել է լեռները։ Նույն բախտը վիճակվեց հայաբնակ Կախակիկ գյուղին. նախապես ավերելով գյուղը, իսպառ կողոպտելով հայերի ունեցվածքը, թուրք-թաթարներն այստեղ էլ արյունոտ, բայց իրենց սովորական գործն արեցին. սրի քաշեցին խաղաղ բնակիչներին, իսկ թվով 35 կանանց ու աղջիկների տարան։ Վերջիններից հետագայում հաջողվեց փրկել մի քանիսին, իսկ մնացած մասն առ այսօր էլ գերության մեջ է։ Այստեղ սրի է քաշվել առնվազն 100 մարդ։ Իսկ նրանք, ում հաջողվեց փրկվել փախուստով, մասամբ զոհվեցին, մասամբ էլ կոտորվում են սովից, ցրտից ու տարափոխիկ հիվանդություններից։

Ամբողջովին ավերված է Թանակերտ հարուստ ու բարեկարգ հայկական գյուղը։ 120 ծխից բաղկացած բնակչությունը փախել է լեռները, որտեղ զոհվում է սառնամանիքի, սովի ու հիվանդությունների ահավոր պայմաններում։ Սրի է քաշված Դիսատի ողջ բնակչությունը։ Փախուստով փրկվել է սոսկ 4—5 և գերի է վերցվել 9 մարդ։

Այս շրջանի մնացած հայկական գյուղերը, գտնվելով թուրք-թաթարների տիրապետության ներքո, ապրում են ստրկության բոլոր սարսափները և խղճուկ գոյություն են քարշ տալիս։ Այստեղ լինում են դեպքեր, երբ թուրք սպաների կամ փաշաների համար հայուհիներ են տանում։ Վերջին տեղեկությունների համաձայն, Խալիլ բեյը պաշարել է Փառակա, Բիստ, Ցղնա և Ռամիս հայկական գյուղերը, պահանջել է հանձնել զենքը, չկատարելու դեպքում սպառնալով նրանց մատնել Ազգի բախտին։ Այս շրջանի կրած նյութական վնասները միլիոնների են հասնում։

Այսպիսով, եվրոպական քաղաքակրթությանն ու դաշնակից տերություններին իր նվիրվածության համար մեր հայրենիքը վերջիններիս թշնամիների կողմից անապատի է վերածված։ Պատերազմի ժամանակ մեկ միլիոն հայ զոհվեց, իրենց դիակներով պատելով անսահման տարածություններ՝ Էրզրումից մինչև տոթակեզ Միջագետք և հարավային Ռուսաստանի տափաստաններ։ Հարյուրամյակների ընթացքում ժրաջան աշխատանքով և ժողովրդի ճառնդի ծայրահեղ լարման գնով կուտակված ազգային ստացվածքը քարուքանդ է արված, ավերված, ոչնչացված...

Բայց մեր գործի արդարացիության հաստատուն գիտակցումը և քաղաքակրթության սկզբունքների վերջնական հաղթանակի նկատմամբ աներեր հավատն էին պայծառ լույսով լուսավորում մեր բազմաչարչար ժողովրդի խաչի ճամփան, և այժմ՝ դաշնակիցների հաղթահանդեսի ու նոր հիմունքներով հաշտության հաստատման պահին, հայոց հայրենակցական միություններս, մ՝ ներկայացնում ենք մեր նահանգն ու նրա բնակիչներին, դաշնակիցներիդ ենք դիմում հետևյալ խնդրանքով.

Առաջին: Խնդրում ենք մեր հայրենիքն անհապաղ ազատել օսմանյան կառավարության զորամասերից և վերջինիս ակնհայտ ու գաղտնի գործակալներից, որոնք շարունակում են մեր և մեր դարավոր հարևանների՝ աշխատավոր մուսուլման զանգվածների միջև գժտություններ ու խառնակություններ սերմանելու իրենց չար գործը, օգտվելով վերջիններիս խավարամտությունից։

Երկրորդ: Իրական միջոցներ ձեռնարկել գաղթականներին շտապ կարգով և առանց քաշքշուկների հարազատ վայրեր վերադարձնելու համար։

Երրորդ: Շտապ միջոցներ ձեռնարկել, որպեսզի հետ քաշվող թուրքական զորքերը և մուսուլմանական հրոսախմբերը իրենց հետ չտանեն և չոչնչացնեն մեր փրկված ունեցվածքը։

Չորրորդ: Միջոցներ ձեռնարկել անհապաղ կալանք դնելու արդեն դուրս հանված մեր ունեցվածքի վրա, որտեղ էլ որ այն գտնվելիս լինի՝ երկաթուղային կայարաններում, նավահանգիստներում և Թուրքիա տանող այլ ճանապարհներին, և մասնավորապես հսկողություն սահմանել Էրզրումի խճուղում և Բաթումի գծում՝ բացահայտ ավարառությունը դադարեցնելու համար։

Հինգերորդ: Թուրքական հրամանատարությանն ու վերջինիս ղեկավարության ներքո գործող տեղիս թաթարներին առաջարկել վերացնելու Ղարաբաղի (Ելիզավետպոլի նահանգ) պաշարումը, եթե այն դեռևս շարունակվում է, ազատ արձակել Գյոկչալի և Շամախու գավառների գաղթականներին, որոնք շրջափակված են անտառներում, և Նուխիի ու Արեշի գավառների

գաղթականներին, որոնք պաշարված են լեռներում ու անտառների թավուտներում։

Վիցերոյ։ Անդրկովկասում հաստատել երթևեկության ազատություն և ապահովել նաև հայերի կյանքի ու ինչքի ապահովությունը նրանց երթևեկության ժամանակ։

Յոթերոյ։ Կարգ սահմանել, որով վերացվեին թուրքերի և նրանց գործակալների ազդեցությունն ու ճնշումը մեր և մեր հարևան մուսուլման աշխատավոր զանգվածների միջև ներքին հարցերը լուծելիս։

Ութերոյ։ Մինչև առաջիկա համաշխարհային վեհաժողովում մեր հայրենիքի խնդրի վերջնական քաղաքական կարգավորումը չմերժել հույժ շտապ կարգով բավականաչափ նյութական միջոցներ՝ դրամ, պարեն և երկրագործական գործիքներ բաց թողնելու մեր աշխատանքային տնտեսությունը վերականգնելու համար, առանց որի մեր ժողովրդի բնաջնջումը կշարունակվի այսուհետև էլ, միայն թե արդեն խաղաղ ճանապարհով։

Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը, ստանձնելով դաշնակից տերությունների ներկայացուցիչների առջև սույն միջնորդությունը հարուցելու հաճելի պարտականությունը, միանգամայն վստահ է նրանում առաջադրված հարցերի բարեհաջող լուծմանը հայ ժողովրդի համար, քանի որ դա բխում է արդարության, քաղաքակրթության բուն հասկացությունից և ոտնահարված իրավունքը վերականգնելու անհրաժեշտությունից, դեպի որն առ այսօր այնպես հետևողականորեն ու պլանաչափորեն ընթանում էին դաշնակից տերությունները։

Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահ՝

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԽՍՀ ԿԳԳԱ, Ռ. Հովհաննիսյանի ճավաքածու, միկրոժապավեններ։

252. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ՀՈՒՇԵՐԻՑ

1915 թ. հայ ազգի բնաջնջումը որոշակի դժվարություններ հարուցեց, որպիսիք չկային 1895 թ. և ուրիշ տարիների թուրքերի կազմակերպած ջարդերի ժամանակ։ Այդ վաղ շրջանում

հայերը բավականաչափ հզորություն կամ դիմադրելու միջոցներ չունեին։ Այն օրերին հայերին չէր թույլատրվում ռազմական պատրաստություն անցնել, ծառայել թուրքական բանակում կամ զենք կրել... 1915 թ. սկզբներին Թուրքիայի ամեն մի քաղաքում հազարավոր հայեր կային, որոնք զինվորական ուսուցում էին անցել որպես զինվորներ, ունեին հրացաններ, ատրճանակներ և այլ զենք ինքնապաշտպանության համար։ Վանի իրադարձությունները մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ այդ մարդիկ կարող են հաջողությամբ գործադրել իրենց զենքը... Որպեսզի ազգի բնաջնջման ծրագիրը հաջողություն ունենար, հարկ էր նախապես երկու քայլ անել. անհրաժեշտ էր բոլոր խոշոր ու փոքր քաղաքներում բոլոր հայ զինվորներին զրկել պաշտպանության միջոցներից և նրանցից խլել արդեն ունեցած զենքը։ Նախքան հայերին բնաջնջելը հարկավոր էր նրանց զինաթափել։

1915 թվականի սկզբին թուրքական բանակում ծառայող հայ զինվորները նոր կարգավիճակ ստացան։ Մինչ այդ նրանց մեծամասնությունը շարայիններ էին, բայց այժմ նրանցից խլեցին զենքը, և նրանք վերածվեցին գործավորների։ Այդ նախկին զինվորներն այժմ նկատեցին, որ փոխանակ ծառայելու... որպես հրետանավորներ ու հեծելազորայիններ, իրենք դարձել են ճանապարհաշինարար բանվորներ ու բանող կենդանիներ։

Նրանց ուսերին էին բարդվում բոլոր տեսակի մատակարարումները բանակի համար, և օրորվելով բեռան ծանրության տակ, քշվելով թուրքերի մտրակներով ու սվիններով, նրանք պետք է հաղթահարելով հոգնածությունը, դժվարությամբ քարշ գային Կովկասի լեռներում։ Երբեմն նրանք, բեռան տակ կքած, ստիպված էին իրենց առջև ճանապարհ բացել մարդասպան ձյան միջով։ Փաստորեն նրանք ստիպված էին ամբողջ ժամանակ լինել բաց օդում և քնել մերկ գետնին, եթե վերակացուները, որոնք անընդհատ նրանց արթնացնում էին սվիններով խթելով, նրանց չէին զրկում այդ հնարավորությունից։ Նրանց տալիս էին միայն ուտելիքի թերմացքը. եթե նրանք ուժասպառությունից չէին կարողանում ոտքի կանգնել, ապա նրանց թողնում էին այնտեղ, որտեղ պառկած էին, իսկ նրանց թուրք կղեքիչները ոտքները կախ էին գցում, անշուշտ, միայն նրա համար, որ գողանան նրանց պատկանող իրերը, անգամ հագուստը։ Եթե ճանապարհին մնացած զինվորներից որևէ մեկին հաջողվում էր հասնել նշանակման վայր, ապա հազվադեպ էր պատահում, որ

նրան չսպանեին։ Ամենից հաճախ հայ զինվորներին զգալիորեն ավելի շուտ էին սպանում, քանի որ սովորական երևույթ էր դարձել նրանց սառնասրտորեն գնդակահարելը։ Գրեթե բոլոր դեպքերում վարվում էին նույն կերպ։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ հավաքում էին 50—100 մարդուց բաղկացած խմբեր, նրանց իրար էին կապկպում 4-ական մարդ և ապա տանում էին գյուղից ոչ հեռու մի մեկուսի տեղ։ Հանկարծ օդը դղրդում էր հրացանների կրակոցներից, և թուրք զինվորները, որ ուղեկցել էին նրանց, շուտով վերադառնում էին ճամբար։ Նրանք, ում ուղարկում էին թաղելու սպանվածների դիակները, գրեթե միշտ դրանք գտնում էին միանգամայն մերկ վիճակում, քանի որ թուրքերը, որպես կանոն, նրանց վրայից հանում էին ամբողջ հագուստը։ Ինձ հայտնի մի քանի դեպքերում մարդասպանները իրենց զոհերի տառապանքները խորացնում էին նրանով, որ գնդակահարելուց առաջ նրանց ստիպում էին իրենց համար գերեզմաններ փորել։

Բույլ տվեք ինձ վկայակոչել մի դրվագ, որը բերված է մեր հյուպատոսների զեկուցագրերից մեկում և որն այժմ մտել է ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի հաշվետվությունների մեջ։ Հուլիսի սկզբներին 2000 հայ «amele»-ներ (թուրքերն այդպես են անվանում այն զինվորներին, որոնց վերածում են գործավորների) խարբերդից ուղարկվել էին ճանապարհներ կառուցելու։ Այդ քաղաքում ապրող հայերը կռահել էին, թե դա ինչ է նշանակում, և դիմել էին նահանգապետին, խնդրելով խնայել զինվորներին։ Բայց այդ պաշտոնյան հայտարարել էր, թե նրանք կարող են չանհանգստանալ. նա նույնիսկ գերմանացի միսիոներ պ-րն Էհմանին խնդրել էր վերացնել խուճապը, նրան ազնիվ խոսք տալով, թե նախկին զինվորները պաշտպանություն կունենան։ Պարոն Էհմանը հավատացել էր նահանգապետի խոսքին և փարատել ժողովրդի երկյուղները։ Բայց իրականում այդ բոլոր 2000 մարդիկ սպանվել էին, իսկ նրանց մարմինները նետվել էին անդունդը։ Փախել էր միայն մի քանի մարդ, և նրանց շնորհիվ այդ կոտորածի լուրը հայտնի էր դարձել աշխարհին։ Դրանից մի քանի օր անց Դիարբեքիր ուղարկվեց ևս 2000 զինվոր։ Այդ մարդկանց բնակավայրերի սահմաններից դուրս ուղարկելու միակ նպատակը նրանց սպանելն էր։ Որպեսզի նրանց մեջ ուժ չմնար դիմադրության կամ փախուստի համար, այդ խեղճերին սիստեմատիկաբար սոված էին թողնում։

Կառավարության գործակալները այդ խմբերից առաջ էին անցնում՝ քրդերին իրազեկ պահելով, որ քարավանը մոտենում է, և նրանց հրամայելով կատարել իրենց վրա դրված պարտականությունը... Ամբողջ Թուրքական կայսրությունում ձեռնամուխ էին եղել պլանաչափորեն ոչնչացնելու բոլոր առողջ տղամարդկանց ոչ միայն նրա համար, որպեսզի ոչնչացնեին հայերի նոր սերունդ վերարտադրելու ընդունակ ողջ արական բնակչությանը, այլև նրա համար, որ բնակչության ավելի թույլ մասը հեշտ ավար դառնար։

Ինչքան էլ ահավոր լինեին անզեն զինվորների այդ սպանությունները, դրանք շատ ավելի գթասիրտ էին այն հայերի նկատմամբ ունեցած դաժան վերաբերմունքից, որոնց կասկածում էին զենք թաքցնելու մեջ։ Բնական է, որ քրիստոնյաները տագնապահար էին, երբ գյուղերում ու քաղաքներում հրամաններ փակցվեցին ըստ բնակության վայրի ունեցած ամբողջ զենքը իշխանություններին հանձնելու պահանջով։ Թեև այդ հրամանը վերաբերում էր բոլոր բնակիչներին, հայերը հիանալի հասկացան, թե ինչ կլինի հետևանքը. իրենք կմնան անպաշտպան, մինչդեռ նրանց մուսուլման հարևաններին թույլ կտրվի պահել զենքը։ Շատ դեպքում, սակայն, հալածանքների ենթարկվող մարդիկ հլու-հնազանդ կատարեցին հրամանը, իսկ հետո թուրքական իշխանությունները գրեթե ուրախությամբ ցուցադրում էին այդ հրացանները իբր ապացույց այն բանի, թե «հեղափոխություն» էր նախապատրաստվում, և իրենց զոհերին բանտ նետեցին պետական դավաճանության մեղադրանքով։ Հազարավոր մարդիկ չկարողացան զենք բերել պարզապես այն պատճառով, որ չունեին. միևնույն ժամանակ էլ ավելի մեծ թվով մարդիկ համառորեն հրաժարվեցին զենքը հանձնել ոչ թե այն պատճառով, որ նրանք խռովություն էին նյութում, այլ նրա համար, որ մտադիր էին պաշտպանել իրենց կյանքը, ինչպես նաև իրենց կանանց պատիվը ոտնձգություններից, որոնք, ինչպես նրանց հայտնի էր, արդեն նախապատրաստվում էին։ Այն պատիժների նկարագրությունը, որոնց ենթարկվեցին այդ անհնազանդները, ժամանակակից պատմության առավել նողկալի գլուխներից մեկն է։ Մեզանից շատերը կարծում են, թե խոշտանգումը վաղուց արդեն դադարել է վարչական կամ դատական միջոց լինելուց, բայց ես չեմ կարծում, որ ամենամռայլ դարաշրջաններում անգամ եղած լինեին առավել ահասարսուռ տեսարաններ, որոնք

ներկայումս տեղի են ունեցել ամբողջ Թուրքիայում։ Թուրք ժանդարմների համար ոչ մի սրբություն գոյություն չուներ. թաքցրված զենք որոնելու պատրվակով նրանք ներխուժում էին եկեղեցիները, խիստ արհամարհալից վարվում բեմերի ու սրբարան սպասքի հետ և նույնիսկ ծաղրական արարողություններ սարքում՝ նմանակելով քրիստոնեական խորհուրդները։ Նրանք ծեծ ու ջարդի էին ենթարկում հոգևորականներին մինչև ուշաթնացության աստիճան, նրանց մեղադրելով այն բանում, թե խռովության սադրիչներ են։ Երբ ժանդարմներին չէր հաջողվում զենք հայտնաբերել եկեղեցիներում, նրանք երբեմն եպիսկոպոսներին ու քահանաներին գինում էին հրացաններով, ատրճանակներով ու թրերով, իսկ ապա նրանց զինվորական դատարանին հանձնում իբր ապօրինաբար զենք պահելու համար, ընդ որում նրանք այդ մարդկանց այդ տեսքով ման էին ածում փողոցներում՝ ամբոխի մոլեռանդ ցասումը հարուցելու ակնհայտ նպատակով։ Ժանդարմները կանանց հետ էլ էին վարվում նույնքան անողոք ու անվայելուչ կերպով, ինչպես տղամարդկանց։ Նկարագրվում են դեպքեր, երբ զենք թաքցնելու մեջ մեղադրվող կանանց լրիվ մերկացնում էին և գանահարում հենց նոր ծառից պոկված ճիպոտներով, ընդ որում այդ պատժին ենթարկվում էին անգամ հղի կանայք։ Զենքի այդ որոնումները այնքան հաճախ էին ուղեկցվում կանանց անարգանքներով, որ ժանդարմների մոտենալու դեպքում հայ կանայք ու աղջիկները սովորաբար փախչում էին անտառները, թաքնվում բլուրներում կամ լեռնային քարանձավներում։

Որպես այդ որոնումների նախաբան, բոլոր գյուղերում և քաղաքներում ձերբակալվում և բանտ էին նետվում բոլոր առողջ տղամարդիկ։ Նրանց տանջողները սատանայական հնարագիտություն էին դրսևորում, ջանալով իրենց զոհերին ստիպել, որ իրենց «հեղափոխականներ» հայտարարեն և ցույց տան, թե որտեղ է թաքնված զենքը։ Սովորաբար գերյալին տեղավորում էին սենյակում, որտեղ նրա երկու կողմում երկուական թուրք էին կանգնում։ Կոտանքներն սկսվում էին ներբաններին հարվածելով։ Կոտանքների այդ ձևը անսովոր բան չէ Արևելքում. դրա էությունը այն է, որ բարակ ճիպոտներով հարվածներ են հասցվում ոտքերի ներբաններին։ Սկզբում ցավը աննշան է, բայց քանի որ ծեծելու պրոցեսը դանդաղորեն շարունակվում է,

ապա ցավը վերածվում է ահավոր տառապանքի, ոտնաթաթերը ուռչում են ու վառվում են ասես կրակից, և քիչ չեն դեպքերը, երբ նման խոշտանգումից հետո դրանք հարկ էր լինում անդամահատել։ Ժանդարմները իրենց հայ զոհի ներբաններին խփում էին այնքան, մինչև որ նա կորցնում էր գիտակցությունը. ապա ջուր ցանելով դեմքին, նրան ուշքի էին բերում և նորից շարունակում խոշտանգել։ Եթե նրանց չէր հաջողվում այդ կերպ իրենց զոհին ստիպել խոստովանելու, ապա նրանք խոշտանգումների բազմաթիվ այլ եղանակներ ունեին։ Նրանք պոկում էին հոնքերն ու մորուքը գրեթե մազ առ մազ, պոկում էին եղունգները, կարմրության աստիճան շիկացած երկաթով այրում կուրծքը, շիկացած ունելիով մսի կտորներ պոկում, իսկ հետո վերքերի վրա տաք յուղ լցնում։ Որոշ դեպքերում ժանդարմները ձեռքերն ու ոտքերը մեխերով գամում էին փայտի կտորների, ըստ երևույթին, նմանակելով Քրիստոսի խաչելությունը, և այն ժամանակ, երբ նրանց զոհերը ջղաձգվում էին հոգևարքի տառապանքներում, բղավում էին նրանց. «Դե թող հիմա քո Քրիստոսը գա ու օգնի քեզ»։

Այս և մյուս դաժանությունները, որոնց նկարագրությունից ես ձեռնպահ եմ մնում, սովորաբար կատարվում էին գիշերները։ Թուրքերը տեղավորվում էին բանտերի շուրջը, թմբուկ զարկում ու սուլում, որպեսզի տանջվող մարդկանց աղաղակները չհասնեին գյուղերի բնակիչներին։

Հազարավոր դեպքերում հայերը տոկում էին այդ չարչարանքներին և հրաժարվում էին հանձնել իրենց զենքը պարզապես այն պատճառով, որ հանձնելու բան չունեին։ Բայց նրանք չէին կարող դրանում համոզել իրենց տանջողներին։ Ուստի հայերի համար սովորական էր դարձել խուզարկությունների նախօրեին զենք գնել իրենց հարևան թուրքերից, որպեսզի այն հանձնեն իշխանություններին և այդ կերպ խուսափեն ահավոր պատիժներից։

Տեղի ունեցող դեպքերի առիթով մի անգամ զրուցում էի մի պատասխանատու թուրք պաշտոնյայի հետ, որը նկարագրում էր կիրառվող խոշտանգումները։ Նա չէր թաքցնում, որ կառավարությունը հավանություն է տալիս դրանց, և, ինչպես որ կառավարող դասակարգի բոլոր թուրքերը, ինքն էլ էր խանդավառ հավանություն տալիս իրեն ստեղի ազգի նկատմամբ նման

վերաբերմունքին։ Այդ պաշտոնյան ինձ ասաց, խոշտանգումների այդ բոլոր մանրամասնությունները քննարկվել էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կենտրոնականում անցկացված գիշերային նիստում։ Ցավ պատճառելու ամեն մի նոր եղանակ դիտվում էր իբրև փայլուն հայտնագործություն, և պաշտոնյաները շարունակ գլուխ էին կոտրում, թե ինչ մի նոր կըտտանք հորինեն։ Նա ինձ պատմեց, որ նրանք նույնիսկ դիմել են խոպանական հավատաքննության ատյանի և պատմական այլ հաստատությունների հաշվետվություններին, որոնք վերաբերում են կտտանքների գործադրմանը, և փոխ են առել այն ամենը, ինչ այնտեղ գտել են։ Նա ինձ չասաց, թե ում էր բաժին հասել այդ ահավոր մրցության մրցանակը, բայց այն հաստատուն համբավը, որ Հայաստանում ամենուրեք վայելում է Ջևդեթ բեյը՝ Վանի վալին, որի այդ շրջանում ծավալած գործունեությունն արդեն նկարագրել եմ, նրան գերազանցության իրավունք է տալիս չլսված ստորության մեջ։ Ամբողջ երկրում Ջևդեթը հայտնի էր որպես «բաշկալեցի պայտառ», քանի որ խոշտանգումների այդ գիտակը հայտնագործել էր այն, ինչն, անշուշտ, գլուխգործոց էր, այն ամենից լավագույնը, ինչ հայտնի էր նախկինում. հենց նա էր ձիու պայտերը մեխում իր հայ զոհերի ոտնաթաթերին։

Բայց և այնպես այդ դեպքերը լոկ մի մասն էին նրա, ինչը թերթերը սովորաբար անվանում էին հայկական սարսափներ. դրանք սոսկ նախապատրաստական քայլեր էին ազգի բնաջնջման գործում։

Երիտթուրքերը ավելի մեծ հնարամտություն դրսևորեցին, քան նրանց նախորդ Աբդուլ Համիդը։ Գահընկեց արված սուլթանը պարզապես հրամայում էր «սպանել, սպանել», այն դեպքում, երբ թուրքական դեմոկրատիան գործում էր միանգամայն նոր ծրագրով։ Հայերի անսքող կոտորածի փոխարեն նրանք որոշեցին աքսորել նրանց։ Օսմանյան կայսրության հարավում և հարավ-արևելքում են գտնվում Սիրիական անապատը և Միջագետքի հովիտը։ Թեև այդ շրջանի մի մասը արդեն եղել էր ծաղկուն քաղաքակրթության երբեմնի շրջան, վերջին հինգ դարի ընթացքում այդ քաղաքակրթությունը անկում էր ապրել, ինչն առհասարակ դարձել էր ցանկացածդ երկրի վիճակը, որն ընկել էր թուրքական տիրապետության տակ. հիմա նա անմարդաբնակ անապատ է առանց քաղաքների ու գյուղերի կամ կյանքի որևէ

այլ նշանի... Միայն ամենաջանասեր աշխատավորները, տրքնելով բազում տարիներ, կարող էին այդ անապատը փոքրիշատե զգալի թվով մարդկանց մշտական բնակության համար պիտանի վայր դարձնել։ Կենտրոնական կառավարությունն այժմ հայտարարեց, որ մտադիր է կայսրության որոշ մասերից հավաքել շուրջ երկու միլիոն կամ ավելի հայերի և նրանց տեղափոխել այդ լքված ու անհյուրընկալ շրջանը։ Եթե նա անգամ բարի նպատակներով ձեռնարկեր այդ վերաբնակեցումը, ապա դա էլ կլիներ դաժանության ու անարդարության գագաթնակետ։ Բայց բանն այն է, որ թուրքերը երբեք էլ մտադիր չէին հայերին թույլ տալ իրենց կյանքը դասավորելու այդ նոր երկրում։ Նրանք գիտեին, որ աքսորյալների գերակշիռ մեծամասնությունը ոչ մի գնով չի հասնի իր նշանակման վայրը, իսկ ովքեր էլ հասնեին, կամ կմեռնեին ծարավից ու սովից, կամ էլ կսպանվեին անապատաբնակ մահմեդական վայրենի ցեղերի կողմից։ Տեղահանության բուն նպատակն էր թալանել ու ոչնչացնել. դա կոտորածի իսկապես որ նոր եղանակ էր։ Երբ թուրքական իշխանությունները հրաման էին արձակում այդ աքսորների մասին, նրանք փաստորեն մահավճիռ էին կայացնում մի ամբողջ ազգի նկատմամբ. նրանք դա հիանալի հասկանում էին և ինձ հետ ունեցած խոսակցությունների ժամանակ առանձնապես չէին փորձում թաքցնել այդ փաստը։ Աքսորը շարունակվում էր 1915 թ. ամբողջ գարնանն ու ամռանը։ Այն չշոշափեց միայն խոշոր քաղաքները՝ Կոստանդնուպոլիսը, Զմյուռնիան և Հալեպը. իսկ մնացած բոլոր վայրերը, որտեղ գեթ մի հայ ընտանիք կար, աննկարագրելի ողբերգությունների ասպարեզ դարձան։ Հազիվ թե բացառություն արված լինի թեկուզ մեկ հայի համար՝ անկախ նրա կրթությունից, բարեկեցությունից կամ դասակարգային պատկանելությունից։ Որոշ գյուղերում աքսորից մեկ կամ երկու օր առաջ հրամաններ էին փակցվել, որոնք ողջ հայ բնակչությանը պարտադրում էին նշանակված ժամին ներկայանալ մի որոշակի տեղ, իսկ այլ վայրերում քաղաքի մունետիկն անցնում էր փողոցներով և հրամանը բանավոր հրապարակում։ Որոշ տեղերում այդ մասին աննշան իսկ նախազգուշացում չէր արվում։ Հայերի տան առաջ հայտնվում էին ժանդարմները և նրա բոլոր բնակիչներին հրամայում հետևել իրենց։ Իրենց տնային գործերով զբաղված կանանց տանում էին, հնարավորություն անգամ չտալով հագուստը փոխել։ Ոստիկանությունը

Նրանց առջև հայտնվում էր նույնքան անակնկալ, որքան անակնկալ էր եղել Վեզուվի ժայթքումը Պոմպեյի համար։ Կանանց պոկում էին տաշտերից, երեխաներին ճանկում էին ուղղակի անկողնում, վառարանում էր թողնվում կիսաթխված հացը, ընտանիքի ճաշը՝ անավարտ, երեխաներին հավաքում էին ուղղակի դպրոցի դասասենյակից, դասագրքերը թողնելով բաց, տղամարդիկ ստիպված էին իրենց գութանները նետել դաշտի մեջ և անասունները թողնել լեռներում։ Նույնիսկ նոր ծննդաբերած կանանց ստիպում էին վեր կենալ անկողնից և քնած երեխաները ձեռքներին միանալ խուճապահար ամբոխին։ Աճապարանքի մեջ մարդիկ հասցնում էին հետները վերցնել տան եղած չեղածից շալ, վերմակ և, թերևս, մի քիչ ուտելիք։ Նրանց խելահեղ հարցերին, թե՝ «ո՞ւր ենք գնում», ժանդարմները հազիվ էին բարեհաճում պատասխանել. «Ծրկրի ներքին մարզերը»։

Որոշ դեպքերում տարագրվողներին տրվում էր մի քանի ժամ և բացառիկ դեպքերում՝ մի քանի օր, որպեսզի տնօրինեն իրենց ունեցվածքն ու տնային իրերը։ Բայց այն, ինչ տեղի էր ունենում դրանից հետո, հանգում էր բացահայտ թալանի։ Նրանք իրերը կարող էին վաճառել միայն թուրքերին, և քանի որ ինչպես գնորդը, այնպես էլ վաճառողը գիտեին, որ ամբողջ կյանքում կուտակված ունեցվածքը պետք է վաճառվի ընդամենը մեկ կամ երկու օրում, ապա վաճառքը կատարվում էր այնպիսի գներով, որոնք կազմում էին իրերի իսկական արժեքի սոսկ փոքրը մասը։ Կարի մեքենան վաճառվում էր մեկ կամ 2 դոլարով, կովը՝ մեկ դոլարով, ամբողջ տան կահ-կարասին՝ աննշան դրոշներով։ Շատ դեպքերում հայերին արգելվում էր վաճառել, իսկ թուրքերին՝ գնել անգամ այդ ծիծաղելիորեն ցածր գներով, պատրվակ բռնելով, թե կառավարությունն իբր մտադիր է այդ տնային իրերը վաճառել, որպեսզի վճարի հայերի վարկատուներին։ Նրանց կահույքը փոխադրվում էր պահեստներ կամ ցուցադրվում հանրային վայրերում, ուր այն հափշտակվում էր թուրքերի կողմից։ Կառավարական պաշտոնյաները հայերին նախազգուշացնում էին, թե քանի որ տեղահանությունը ժամանակավոր միջոցառում է և պատերազմը վերջանալուց հետո նրանք վերադառնալու են հետ, ապա նրանց թույլ չի տրվում վաճառել իրենց տները։ Բայց տների նախկին տերերը դեռ չէին հասցնում հեռանալ գյուղից, երբ նրանց բնակարաններում տեղավորվում էին Թուրքիայի այլ մարզերից եկած մահմեդական

վերաբնակները։ Նույն կերպ էլ հայերի բոլոր արժեքավոր իրերը՝ դրամը, մատանիները, ժամացույցներն ու թանկարժեք իրերը վերցնում էր ոստիկանությունը իբր մինչև դրանց տերերի վերադարձը «հուսալիորեն պահելու» համար, իսկ հետո դրանք բաշխվում էին թուրքերի միջև։ Բայց այդ կողոպուտները համեմատաբար քիչ տառապանքներ էին պատճառում աքսորյալներին, քանի որ նրանց վիճակվում էր տեսնել շատ ավելի զարհուրելի ու աղեխարշ տեսարաններ։ Շարունակվում էր տղամարդկանց սիստեմատիկ բնաջնջումը։ Ոչնչացվում էին նաև այն տղամարդիկ, որոնք փրկվել էին նախորդ մահապատիժների ժամանակ, որոնց մասին արդեն պատմել եմ։ Դեռ նախքան քարավանն ուղարկելը սահմանված էր հետևյալ գործելակերպը. պատանիներին առանձնացնում էին իրենց ընտանիքներից, իրար էին կապում չորոսկան մարդ, հեռացնում էին գյուղի ծայրը և այնտեղ գնդակահարում։ Մշտապես տեղի էին ունենում հրապարակային մահապատիժներ կախաղանի միջոցով, առանց դատ ու դատաստանի՝ մեն մի պատճառով, որ զոհերը հայեր են։ Ժանդարմները հատուկ կիրք էին դրսևորում՝ ոչնչացնել կրթված ու ազդեցիկ մարդկանց։ Ես անընդհատ հաղորդումներ էի ստանում ամերիկյան հյուպատոսներից ու միսիոներներից նման մահապատիժների մասին, և շատ իրադարձություններ, որ նրանք նկարագրում էին, երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից։ Անգորայում տասնհինգից մինչև յոթանասուն տարեկան բոլոր հայ տղամարդիկ ձերբակալվել էին, կապկպվել 4-ական մարդ և տարվել Կեսարիայի ուղղությամբ։ Երբ հինգ-վեց ժամ քայլելուց հետո նրանք հասել էին մի մեկուսի հովիտ, նրանց վրա էր հարձակվել խուժանը... մահակներով, մուրճերով, կացիններով, գերանդիներով, բահերով ու սղոցներով։ Այդ գործիքները ոչ միայն ավելի տանջալից մահ էին պատճառում, քան հրացաններն ու ատրճանակները, այլև, ինչպես պարծենում էին թուրքերն իրենք, ավելի ձեռնտու էին խնայողության իմաստով, քանի որ վերանում էր վառոդ ու փամփուշտներ ծախսելու անհրաժեշտությունը։ Նրանք այդ կերպ ոչնչացրին Անգորայի ողջ արական բնակչությանը, ներառյալ հարուստ ու կրթված տղամարդկանց, իսկ նրանց սարսափելի այլանդակված մարմինները թողնվել էին հովտում՝ վայրի գազաններին ի կեր... Տրապիզոնում տղամարդկանց նստեցրել էին նավակներ և ուղար-

կել Սև ծով։ Նավակներում նրանց հետ կային ժանդարմներ, որոնք գնդակահարում էին նրանց, իսկ դիակները նետում ջուրը։

Ուստի, երբ ազդանշան տրվեց, որ քարավանները ճամփա ընկնեն, ապա պարզ դարձավ, որ դրանք գրեթե միշտ բաղկացած էին կանանցից, երեխաներից ու ծերունիներից։ Յուրաքանչյուր ոք, ով կցանկանար նրանց փրկել սպասվող ճակատագրից, կսպանվեր հենց տեղում։ Երբ քարավանը ճանապարհ էր ընկնում, քաղաքապետը հաճախ հեգնորեն նրանց «հաճելի ճանապարհորդություն» էր մաղթում։ Երբեմն նախքան քարավանն ուղարկելը կանանց առաջարկում էին մահմեդականություն ընդունել։ Բայց անգամ այն դեպքերում, երբ ոմանք համաձայնվում էին, նրանց երկրային տառապանքները չէին վերջանում։ Հավատափոխին ստիպում էին իրենց երեխաներին հանձնել այսպես կոչված «մուսուլմանական ապաստարան» և համաձայնել, որ նրանք ուսանեն այնտեղ՝ հապացույց իր հավատափոխության անկեղծության, նրանից պահանջում էին ամուսնանալ մուսուլմանի հետ։ Եթե մահմեդականներից ոչ մեկը նրան ամուսնություն չէր առաջարկում, ապա, անկախ այն բանից, որ նա հանդիսավորապես հայտարարել էր իսլամն ընդունելու մասին, նա տարագրվում էր...

Այդ դժբախտ քարավանները շարժվում էին հազարավոր հայկական քաղաքներից ու գյուղերից, խցանելով հարավ ձգվող բոլոր ճանապարհները. առաջ շարժվելու համեմատ նրանք ամենուրեք իրենց հետևից փոշու հսկայական ամպ էին առաջացնում ու իրերի դեն նետված մնացորդներ՝ աթոռներ, վերմակներ, անկողնու սպիտակեղեն, տնային կահ-կարասի և իրենց խանգարող այլ իրեր, որոնք ասես գծում էին նրանց ճանապարհը։ Երբ քարավանները դեռ նոր էին սկսում շարժվել, մարդիկ դեռևս նմանվում էին մարդկային էակի, բայց մի քանի ժամ անց ճանապարհի փոշին նստում էր նրանց դեմքերին ու հագուստին, ցեխը կպչում էր ոտքերին, և դանդաղ շարժվող մարդկանց ամբոխը, որոնք հաճախ հոգնածությունից կորացած էին լինում կամ իրենց «պաշտպանների» դաժանությունից ցնորված, ինչ-որ նոր ու տարօրինակ կենդանիների տարատեսակ էին հիշեցնում։ 6 ամիս ջարունակ՝ 1915 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր, որոնք առավել հարմար էին տեղաշարժվելու համար, Փոքր Ասիայի բոլոր ճանապարհները լցված էին տարագրյալների այդ ահավոր ամբոխներով։ Նրանց կարելի էր տեսնել ցանկացած հովտում, գրեթե

բոլոր լեռներում՝ անվերջ քայլելիս, հայտնի չէ՝ թե ուր, իմանալով միայն, որ ցանկացած ճանապարհ տանում է դեպի մահ։ Ահավոր հանգամանքներում, որոնց մասին հանգամանորեն պատմվեց վերը, հայ բնակչությունը լքում էր գյուղ գյուղի, քաղաք քաղաքի հետևից։ Ինչքան մեզ հաջողվել է պարզել, այդ վեց ամսում դեպի Սիրիական անապատ այդ ահավոր ճամփորդության էր մեկնել մոտ 1 200 000 մարդ։

«Աղոթեցեք մեզ համար»,— ասում էին նրանք, հեռանալով իրենց օջախներից, որոնցում նրանց նախնիներն ապրել էին դեռևս մոտ 2500 տարի առաջ։ «Այս աշխարհում մենք այլևս չենք տեսնի իրար, բայց երբևէ կհանդիպենք։ Աղոթեցեք մեզ համար»։

Հայերը դեռ չէին հասցրել հեռանալ իրենց հարազատ գյուղերից, երբ սկսվեցին նրանց տառապանքները։ Ճանապարհները, որոնցով նրանք ստիպված էին գնալ, մի քիչ էին լայն ավանակի արահետներից, և այն, ինչ մի քանի ժամ առաջ նման էր կանոնավոր թափորի, վերածվում էր մարդկանց անկանոն, իրար հրհրող ամբոխի։ Կանանց անջատել էին իրենց երեխաներից, իսկ տղամարդկանց՝ կանանցից։ Ծերունիները շուտով կորցրին կապը իրենց ընտանիքների հետ և արագ հոգնելով, խոնջենք էին տալիս ոտքերին։ Եղնասայլերի թուրք կառապանները, որոնք իրենց վարձողներից շորթել էին վերջին փողերը, անսպասելիորեն սայլերից իջեցնում էին նրանց և եղած-չեղածը թափելով ճանապարհին, հետ էին դառնում իրենց գյուղերը՝ ուրիշ զոհերի հետևից։ Այսպիսով, մի կարճ միջոց անց փաստորեն բոլորը՝ թե՛ երիտասարդները, թե՛ ծերերը, հարկադրված էին ընթանալ ոտքով։ Ժանդարմները, որոնց կառավարությունը դրել էր իբր տարագրյալներին պաշտպանելու համար, մի քանի ժամ հետո դառնում էին նրանց տանջողները։ Նրանք իրենց զոհերի հետևից գնում էին մերկացրած սվիններով, դրանցով խշտելով ամեն մեկի, ով քայլերը դանդաղեցնելու մտադրություն էր դրսևորում, իսկ հանգստանալ փորձողներին կամ հոգնածությունից ճանապարհին ընկնողներին անսահման դաժանությամբ ստիպում էին հասնել շարժվող ամբոխին։ Նրանք սվինով խշտում էին անգամ հղի կանանց. եթե նրանցից ոմանք, ինչպես հաճախ էր պատահում, ծննդաբերում էին ճանապարհին, նրանց ստիպում էին անմիջապես ոտքի ելնել ու առաջ շարժվել...

Ժանդարմների դաժանությունն աճում էր, թերևս, այն պատ-

ճառով, որ ճամփորդությունը ձգձգվում էր, թվում էր, թե նրանք վրդովվում էին այն բանից, որ իրենց զոհերը դեռ շարունակում են կենդանի մնալ։

Հաճախ ժանդարմները սվինահարում էին ուղածդ մարդուն, ով ընկնում էր ճանապարհին։ Հայերը հարյուրներով էին մեռնում սովից ու ծարավից։ Նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք մոտենում էին գետերի, ժանդարմները նրանց թույլ չէին տալիս խմել միայն նրա համար, որ տանջեն նրանց։ Անապատի արևի կիզիչ ճառագայթները այրում էին նրանց կիսամերկ մարմինները, իսկ նրանց բոբիկ ոտքերը այնպես էին ցավում անապատի տաք ավազից, որ հազարավոր մարդիկ ընկնում էին ու մեռնում տեղում կամ սպանվում այնտեղ, որտեղ ընկնում էին։ Այդպիսով, մի քանի օր անց այն, ինչ մարդկային նորմալ էակների թափոր էր, վերածվում էր փոշեպատ կմախքների զառանցող ամբոխների, որոնք անհագորեն ուտելիք էին փնտրում, ուտում ամեն տեսակ թափուկներ, որ պատահում էին ճանապարհին, խելացնորվում այն սարսափներից, որոնցով լի էր նրանց գոյության ամեն մի ժամը, տառապում էին այն բոլոր հիվանդություններով, որպիսիք ուղեկցում են նման դժվարություններն ու զրկանքները, բայց որոնք դեռևս քշվում էին իրենց տանջողների մտրակներով, խզակոթերով ու սվիններով։

Իրենց առաջխաղացման համեմատ նրանք իրենց հետևում թողնում էին մի ուրիշ քարավան՝ մեռած ու չթաղված ծերուկների և կանանց դիակների, որոնք մահացել էին տիֆի, դիզենտերիայի ու խոլերայի վերջին փուլում, փոքրիկ երեխաների, որոնք պառկած էին մեջքներին և իրենց վերջին սրտաճմլիկ թառանչն էին արձակում՝ սնունդ ու ջուր աղերսելով։ Որոշ կանայք իրենց երեխաներին մեկնում էին անծանոթ մարդկանց, աղաչելով վերցնել նրանց և փրկել տանջողներից. բայց մերժում ստանալով, նրանց նետում էին ջրհորները կամ թողնում թփերի մեջ, որ այդպիսով հնարավորություն ունենան գոնե հանգիստ մեռնելու։ Նրանց հետևում էր մնում աղջնակների մի փոքրիկ բանակ, որոնք ստրկության էին վաճառվում, հաճախ մոտավորապես 8 ցենտով... Ճամբարների շարան, որոնք լեփ-լեցուն էին հիվանդներով կամ մեռնող մարդկանցով, որ պառկած էին չթաղված կամ կիսաթաղ դիակների հետ խառնիխուռն՝ ահա թե ինչով էր նշված շարժվող ամբոխների ուղին։ Նրանց մշտապես հետևում էին օդում թռչող գիշանգղների երամները և

գիշատիչ շները, որոնք գիշանգղների հետ միասին հարձակվում էին մեռածների դիակների վրա։ Ամենից ահավոր տեսարանները տեղի էին ունենում գետերի, հատկապես Եփրատի մոտ։ Երբեմն գետանցի ժամանակ ժանդարմները կանանց հրում էին ջրի մեջ, զնդակահարելով բոլոր նրանց, ովքեր լողալով դեպի ափը՝ փորձում էին փրկվել։ Հաճախ կանայք փրկում էին իրենց պատիվը, երեխաները ձեռքներին նետվելով ջուրը։ Ես մի հատված կբերեմ հյուպատոսի զեկուցագրից. «Հունիսի վերջին շաբաթվա ընթացքում Էրզրումից հետևողականորեն տարագրվեցին մի քանի խմբեր, և այդ մարդկանց մեծամասնությունը սպանվեց ճանապարհին. նրանց կամ զնդակահարում էին, կամ ջրահեղձ անում։ Տիկին Զարուհին, տարոց, հարուստ մի կին, որին նետել էին Եփրատի մեջ, փրկվել էր՝ կառչելով ընդջրյա քարից։ Նրան հաջողվել էր հասնել մինչև ափ, վերադառնալ Էրզրում և այնտեղ թաքնվել իր թուրք բարեկամների տանը։ Նա իշխան Արղությանին՝ Էրզրումում «Համառուսաստանյան քաղաքային միության» ներկայացուցչին պատմել էր, որ չի կարող առանց սարսուռի հիշել, թե թուրքերն ինչպես էին հարյուրավոր երեխաների սվինահարել ու նետել Եփրատի ջրերի մեջ և թե ինչպես էին լրիվ մերկացված ու իրար կապկպված հարյուրավոր տղամարդիկ ու կանայք զնդակահարվել ու գետը նետվել։ Նա պատմել էր, որ Երզնկայի մոտ մի տեղ, որտեղ Եփրատը դարձապտույտ է գործում, հազարավոր դիակներ այնպիսի ամբարտակ էին գոյացրել, որ գետը մոտավորապես հարյուր յարդով շեղվել էր իր հունից»։

Անհերթեր են թուրքական կառավարության այն հավաստիացումները, թե ինքը լրջորեն մտադիր էր հայերին վերաբնակեցնել նոր վայրերում. պահակազորով ուղեկցվող խմբերի նկատմամբ վերաբերմունքը պարզ ցույց է տալիս, որ Էնվերի և Թալեաթի իսկական նպատակն էր բնաջնջել հայերին։ Հարավ աքսորվող մարդկանցից քանի՞սը իրենց նշանակման վայր հասան նման վրդովեցուցիչ պայմաններում։ Մի քարավանի օրինակը ցույց է տալիս, թե տեղահանության այդ ծրագիրը ինչպես էր կանխամտածված կերպով վերածվում բնաջնջման ծրագրի։ Մանրամասնությունների մասին հաղորդումները, որոնց մասին ասվում է, ես ստացել էի անմիջապես Հալեպի ամերիկյան հյուպատոսից, և այդ փաստաթղթերը այժմ գտնվում են Վաշինգ-

տոնում՝ Պետական դեպարտամենտում։ Հունիսի մեկին պահակախմբի ուղեկցությամբ Խարբերդից դուրս էր եկել երեք հազար հայերից բաղկացած մի խումբ, հիմնականում կանայք, աղջիկներ ու երեխաներ։ Հետևելով իր սովորական գործելակերպին, կառավարությունը նրանց հետ ուղարկել էր յոթանասուն ժանդարմից բաղկացած ուղեկցող պահակախումբ՝ Թուրք բեյի հրամանատարությամբ։

Փորձն արդեն ցույց է տվել, որ այդ ժանդարմները բնավ էլ իրենց չէին պահում իբրև տարագրվողների պաշտպաններ, այլ ավելի շուտ նրանց տանջողներն էին ու դահիճները։ Քարավանը դեռ չէր հասցրել ճամփա ընկնել, երբ բեյը տարագրվողներից 400 լիրա հավաքեց իբր նրա համար, որ նրանց ավելի հուսալիորեն պահպանի մինչև Մալաթիա հասնելը. հենց որ նա խլեց միակ բանը, ինչը կարող էր ճանապարհին նրանց համար սնունդ ապահովել, նա փախավ, նրանց թողնելով ժանդարմների քմահաճույքին։

Մինչև Ռաս ուլ-Այն ընկած ամբողջ ճանապարհին, որը դարձավ նրանց առաջին կանգառը Բաղդադի երկաթգծում, այդ դժբախտ տարագյալների կյանքը համատարած սարսափ էր։ Քարավանի առջևից գնում էին ժանդարմները, որոնք կիսավայրենի լեռնական ցեղերին նախազգուշացնում էին, որ մոտենում են մի քանի հազար հայ կանայք ու աղջիկներ։ Աղջիկներին սկսեցին առևանգել... Քարավանի վրա էին հարձակվում լեռնցիները, որոնք բռնաբարում, սպանում էին կանանց, ընդ որում այդ վայրագ խենթությանը միացել էին հենց իրենք՝ ժանդարմները։ Քարավանից մեկը մյուսի հետևից սպանվել էին մի քանի տղամարդ... Վերջապես, երեսուն օր կողոպուտներով, զարդերով, իրենց զոհերի բռնաբարությամբ ու սպանությամբ հագեցնելուց հետո, ժանդարմները բոլորովին լքեցին նրանց։ Երկու օր անց այդ խմբի վրա հարձակվեցին քրդերը և կենդանի մնացած բոլոր տղամարդկանց, որոնք մոտ 150 հոգի էին՝ 15-ից մինչև 90 տարեկան, հավաքեցին մի տեղ. նրանց անմիջապես մի կողմ տարան և կոտորեցին բոլորին մինչև վերջին մարդը։ Բայց հենց այդ նույն օրը Խարբերդից եկող խմբին միացավ մի այլ խումբ, որ գալիս էր Սեբաստիայից, դրանով իսկ քարավանի թվակազմը հասցնելով 18 000 մարդու...

Հաջորդ հինգ օրվա ընթացքում նրանք ոչ մի կտոր հացի ու ոչ մի կաթիլ ջրի երես չտեսան։ «Հարյուրավոր մարդիկ մեռան

ճանապարհին,— ասվում է հաղորդման մեջ,— նրանց լեզուները սկսեցին նմանվել փայտածխի կտորի, և երբ նրանք հինգ օր անց մոտեցան աղբյուրի, բնականաբար, ամբողջ բազմությունը նետվեց դեպի այն։ Բայց այստեղ ոստիկանները, փակելով նրանց ճանապարհը, արգելեցին գեթ մի կաթիլ ջուր վերցնել։ Նրանք մտադիր էին ջուրը ծախել բաժակը մեկից մինչև երեք լիրայով, իսկ երբեմն, ստանալով փողը, հրաժարվում էին ջուր տալ։ Մի այլ վայրում, որտեղ ջրհորներ կային, կանայք նետվեցին ուղիղ ջրհորները, քանի որ պարան կամ դույլ չկար ջուր վեր հանելու համար։ Նրանք խեղդվում էին ջրհորներում, ու թեև նրանց դիակները մնում էին այնտեղ և կեղտոտում էին ջուրը, այդուհանդերձ մարդիկ խմում էին այդ ջրհորներից... Երբ այդ մարդիկ, որ լրիվ մերկ էին, անցնում էին մի արաբական գյուղի մոտով, արաբները, խղճալով նրանց, հնամաշ հագուստի լաթեր տվեցին նրանց, որ սրանք կարողանան ծածկել իրենց մերկությունը։ Աքսորվածներից ոմանք, որոնք դեռ փող ունեին, իրենց համար ինչ-որ հագուստ էին առնում, բայց և այնպես շատերը մերկ կտրեցին անցան մինչև Հալեպ ընկած ամբողջ ճանապարհը։ Խեղճ կանայք, ամաչելով իրենց մերկությունից, հազիվ էին կարողանում քայլել. նրանք բոլորն էլ գնում էին երկտակ եղած։

Տասնյոթերորդ օրը այդ տարաբախտ արարածները հասան Հալեպ։ 18 000 մարդուց բաղկացած միացյալ քարավանից իրենց նշանակման վայր հասան ընդամենը 150 կին ու երեխա։ Նրանցից ոմանք, որ առավել գրավիչ էին, դեռ կենդանի էին մնացել. նրանք դարձան քրդերի ու Թուրքերի գերուհիները, իսկ մնացած բոլորը զոհվեցին։

Ես պատմեցի բնավ էլ ոչ ամենասարսափելի մանրամասները, քանի որ մարդախոշոշների այդ վայրագ խենթությունների լրիվ նկարագրությունը, որոնց զոհը դարձան հայերը՝ տղամարդիկ ու կանայք, ոչ մի կերպ չեն կարող հրապարակվել ամերիկյան որևէ հրատարակության մեջ։ Այդ դժբախտ, դատապարտված ժողովուրդը ամեն օր իր վրա էր զգում այն բոլոր ոճրագործությունները, որպիսիք միայն ընդունակ է նյութել մարդկային ուղեղի այլասերված բնազդը, և այն բոլոր նրբահնար խոշտանգումներն ու տանջանքները, որպիսիք միայն կարող է հղանալ ամենաստոր երևակայությունը։ Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, ինչքան որ այս կոտորածը։ Անցյալում նըշ-

ված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915 թ. հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ։ Տասներեքերորդ դարի սկզբին ալբիգոյցիների կոտորածը միշտ էլ համարվել է պատմության ամենատխուր իրադարձություններից մեկը։ Մոլեռանդության այդ բռնկման ժամանակ սպանվել էր մոտ 60 000 մարդ։ Բարդուղիմեոսյան գիշերը կյանքից զրկվել էին մոտ 30 000 մարդկային արարածներ։ Սիցիլիական ճրագալույցի ժամանակ, որը միշտ էլ ներկայացվում է որպես այդ կարգի առավել դաժան բռնկումներից մեկը, ոչնչացվել էր 8000 մարդ։ Ամբողջ հատորներ են գրված Տորկվեմադայի օրոք իսպանական հավատաքննության մասին, բայց և այնպես նրա տասնութամյա իշխանության ընթացքում մահապատժի էին ենթարկվել 8000-ից փոքր-ինչ ավելի հերետիկոսներ։ Հնարավոր է, որ հայերի տեղահանությունը թերևս ամենից ավելի հիշեցնում է միայն մի իրադարձություն. դա Իսպանիայից հրեաների արտաքսումն էր Ֆերդինանդի և Իզաբելայի կողմից։ Ըստ Պրեսկոտի, իրենց տներից վտարվել և ամբողջ Աֆրիկայով ու Եվրոպայով մեկ սփռվել էին 160 000 հրեաներ։ Բայց այդ բոլոր հալածանքները գրեթե աննշան են թվում հայերի կրած տառապանքների համեմատությամբ, որոնցից ոչնչացվեց առնվազն 600 հազար, իսկ հնարավոր է նաև 1 միլիոն մարդ[63]։

Հայերի մասին արածս պատմությունը կարող էի որոշ փոփոխություններով պատմել նաև հույների և ասորիների վերաբերյալ։ Իրականում հույներն էին եղել ազգայնամոլ գաղափարի առաջին զոհերը։ Ես արդեն նկարագրել եմ, թե եվրոպական պատերազմի սկսվելուց մի քանի ամիս առաջ օսմանյան կառավարությունը ինչպես էր սկսել իր թուրքահպատակ հույներին տարաբնակեցնել Փոքր Ասիայի ափերից... Երեք թե չորս ամսվա ընթացքում 100 000-ից ավելի հույներ բռնագաղթեցին այն վայրերից, որտեղ նրանք ապրել էին հարյուրավոր տարիներ, և տարագրվեցին Միջերկրական ծովի ափ, իսկ այնտեղից էլ հունական կղզիներ և երկրի ներքին մարզեր... Հավանաբար այն բանի հետևանքով, որ քաղաքակիրթ աշխարհը չբողոքեց այդ տարագրումների դեմ, թուրքերը հետագայում որոշեցին այդ նույն եղանակը, բայց էլ ավելի մեծ մասշտաբներով, գործադրել ոչ միայն հույների, այլև հայերի, ասորիների, նեստորականների և իրենց իշխանության տակ եղած մյուս ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ։ Իրոք, Բեդրի բեյը՝ Կոստանդ-

նուպոլսի ոստիկանապետը ինքն էր իմ քարտուղարներից մեկին պատմել, որ իրենք որոշել են այդ նույն եղանակը գործադրել կայսրության մնացած բոլոր ազգերի նկատմամբ[64]...

Henry Morgenthau. Ambassador Morgenthau's story. Garden-City, New York, 1918, p. 301—325.

253. ԹԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայերի բնաջնջման մեթոդը, որը մշակվել էր Թալեաթի և Էնվերի դիվանատներում՝ այդ մասնագիտության գծով գերմանացի խրատատուների աջակցությամբ, գործադրվեց Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում չորս տարբեր ձևերով.

1. Երիտասարդության զինակոչում քրիստոնեական կենտրոններից դիմադրունակ բոլոր տարրերին հեռացնելու նպատակով. այդ մարդկանց օգտագործում ճանապարհների ու ռազմական ամրությունների շինարարության մեջ, իսկ այնուհետև զանգվածային հաշվեհարդար նրանց նկատմամբ։

2. Քրիստոնեական կենտրոնների կողոպտում և բնակչության մի մասի կոտորում, կանանց ու աղջիկների բաժանում կամ վաճառք հրապարակային աճուրդների միջոցով (շատ հաճախ յուրաքանչյուրին հինգ ֆրանկով), անհավատների շարժական ու անշարժ կայքի հափշտակում։

3. Բնակչության մնացուկների տարագրում, որն ամբողջ ճանապարհին ուղեկցվում էր կոտորածով, հիվանդների, երեխաների ու ծերերի ոչնչացում, մնացած կանանց ու աղջիկների բաշխում այն նահանգների բնակիչների միջև, որոնցով անցնում էին այդ թշվառ շարասյուները։

4. Կենդանի մնացած մարդկանց համակենտրոնացում Միջագետքի ճամբարներում, այսինքն նողկալի ստրկություն այնպիսի պայմաններում և այնպիսի կլիմայի դեպքում, որ աքսորյալների զգալի մասը պետք է մեռներ։

Այդ շարասյուների մարդկանց վաթսուն տոկոսը զոհվեց (հիվանդություն, հյուծվածություն, սպանություններ) նրանց ուղարկելուց մինչև համակենտրոնացման ճամբարներ հասնելն ընկած ժամանակամիջոցում. բայց դրան պետք է ավելացնել նաև տեղում մահապատժի ենթարկված երիտասարդությանը և բաղ-

մաթիվ մարդկանց, որոնք սրի էին քաշվել աքսորյալների շարասյուների ճանապարհ ընկնելուց առաջ։

Թուրքերի գլխում չէր կարող ծագել բնաջնջման ավելի դաժան ու ավելի հնարամիտ եղանակ, և գերմանացիները, չբավարարվելով այդ բարբարոսներին ոգեշնչելով, հաճախ ուղղություն էին տալիս նրանց չարագործություններին և, իրենց հերթին, վերցնում էին որոշ «հուշանվերներ»՝ իրեր կամ ջահել աղջիկների՝ հելլենուհիների, հայուհիների, ասորուհիների։ Այդ են վկայում հավաստի փաստերը...

Ի դեպ, Գերմանիայի հասարակական կարծիքը պաշտպանում է թուրքերի կատարած նողկալիությունները։ Պաստոր Ֆր. Նաումանը, ամփոփելով իր հայրենակիցների մտայնությունը, ասել է. «Դա զարհուրելի ձեռնարկում է, մանրամասներում՝ դա խայտառակություն է, բայց ընդհանրապես քաղաքականության մի մասն է...»։

Բելգիացիները և սերբերը իրենց դժբախտության մեջ կարող էին մխիթարանք գտնել գոնե նրանով, որ հնարավորություն ունեին պայքարելու իրենց երկրի դահիճների դեմ։ Մինչդեռ հայերը, որոնք իշխանությունների հրամանով զինաթափվել էին կոտորածից շատ առաջ և որոնք, որպես կանոն, փոքր գաղութներով էին ապրում իրենց թշնամի բնակչության մեջ, կարող էին փորձել միայն շատ թույլ դիմադրություն ցույց տալ։ Ի դեպ, թուրքերի կողմից արդյոք նախազգուշական միջոց չէ՞ր այն, որ նրանք զորակոչեցին և իրենց հայրենի վայրերից հեռացրին 20—50 տարեկան ամբողջ արական բնակչությանը, որպեսզի նրան առանձին բնաջնջեն։

Այդպիսով, քաղաքներում և գյուղերում մնում էին միայն կանայք, երեխաներն ու ծերունիները՝ մի ամբոխ, որին դժվար չէր սպանդանոց քշել։

Երբ ուշադիր կարդում ես հայերի կոտորածին վերաբերող փաստաթղթերը, ապշում ես այն շրջահայեցությունից ու հմտությունից, որով երիտթուրքական կառավարությունը կազմակերպել էր այդ չարագործությունները։ Կանխատեսված էր ամեն ինչ՝ զոհերի զինաթափում, դիմադրունակ երիտասարդության հեռացում, զանգվածային տարաբնակեցում ու տանջանքներ ճանապարհին, տղամարդկանց ոչնչացում ճանապարհին, կանանց ու աղջիկների ընտրություն նրանց իսլամացնելու համար... Այդ սարսափները հիշողությանս մեջ վերակենդանացնում են մեր պատմության ամենամռայլ ժամանակներում Նանտում, Լիոնում և Ֆրանսիայի շատ այլ քաղաքներում կատարված զանգվածային հաշվեհարդարները...

Աշխարհում չկա մի լեզու բավականաչափ հարուստ ու գունեղ, որ նկարագրի նմանօրինակ սարսափները, որ արտահայտի այն մարմնական ու հոգևոր տառապանքները, որ կրել էին այդ անմեղ նահատակները, նախքան երկինքը հավիտենական հանգիստ կառաքեր նրանց ի վերուստ։ Ահավոր չարդերից մազապուրծ այդ մի բուռ թշվառ մարդիկ, իրենց բոլոր մերձավորների, իրենց համար թանկ էակների մահվան ականատեսները գտնվում են այնտեղ՝ համակենտրոնացման ճամբարներում, ենթարկվելով ամեն տեսակ անպատվության, դատապարտված լինելով կործանման «բարձրաստիճան թուրք պաշտոնյաների», գերմանացի սպաների ու ժանդարմների աչքի առաջ, որոնք հենվելով իրենց հրացաններին, զոհունակությամբ ժպտում են, տեսնելով մեռնողների հոգեվարքի չղաձգություններն ու խրոխրոցները...

Կգա օրը, երբ այդ ոճրագործները՝ լինեն դրանք բեռլինցի թե ասիացի, ստիպված կլինեն պատասխան տալ իրենց արածների և հատուցել կատարած չարագործությունների համար։ Պետք է անխնա լինել նման սրիկաների նկատմամբ. նրանց կատարած քրեական հանցագործությունները չեզոք երկրներին թույլ են տալիս հանձնել նրանց, որպեսզի նրանց պատժեն հարյուրապատիկ, հազարապատիկ, ինչին նրանք միանգամայն արժանի են։ Ոչ մի տարակույս չկա, որ... երբ նրանք փորձեն իրենց համար ապաստան գտնել արտասահմանում, նրանք կվկայակոչեն «քաղաքական հանցագործների համար» ապաստանի հանրահայտ իրավունքը, որի շնորհիվ այնքան շատ հանցագործներ են մնացել անպատիժ։ Բայց այդ դեպքում կգտնվի՞ գեթ մի բավականաչափ բարոյազուրկ ազգ, որը նրանց թաքնի իր դրոշի հովանու ներքո։ Պետք է հուսալ, որ ո՛չ[65]։

J. de Morgan. Contre les barbares de l'Orient. Etudes sur la Turquie. Paris, 1918, p. 178—183.

254. ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՂԻՏՈՒՐՔԵՐԻ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԻ 1919 Թ. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[66]

Որոշ տատանումներից հետո այդ դատավարությունը վերջապես սկսվեց երեկ կեսօրից հետո [1919 թ. փետրվարի 5-ին]։ Խուռն ամբոխը խուժեց զինվորական ատյանի փոքր դահլիճը։ Թրքուհիները, բարձրաստիճան պաշտոնյաները աճապարում էին այստեղ ներկա լինելու այդ դատավարությանը, որը թուրքական մամուլը անվանում է պատմական։ Այն, հիրավի, պատմական կլինի, բայց ի՞նչ իմաստով։ Դա դեռ հայտնի չէ։

Մեղադրյալների աթոռին նստած են նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, սենատի նախագահ Խալիլ բեյը, Ահմեդ Նեսիմի բեյը, Զիա Գյոքալփը, Միդհատ Շյուքրին, Ահմեդ Շյուքրին, Զևադ Քեմալ Իբրահիմը, Յուսուֆ Ռիզան և Աթիֆը։ Նրանք փոքր-ինչ անհարմար են զգում իրենց սևեռված հայացքների ներքո։

Նախագահը հաստատում է նրանց ինքնությունը, այնուհետև ընթերցվում է մեղադրական եզրակացությունը. դրանից հետո խոսք է վերցնում գլխավոր դատախազը և պահանջում, որ ատյանը մեղադրյալներին դատի այդ ակնհայտ մեղադրանքների հիման վրա։ Նա ավելացնում է, որ այդպիսին է նաև Նորին մեծություն սուլթանի կամքը, որը մտադիր է մարդասպաններին պատժել առանց ցեղի ու կրոնի խտրության և այդպիսով նպաստել համերաշխության հաստատմանը կայսրության տարբեր տարրերի միջև։

Նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի դատապաշտպանը հարց է բարձրացնում զինվորական ատյանի իրավասության մասին, որին, ասում է նա, իրավունք չի տրված դատելու բարձրաստիճան պաշտոնյաներին։ Նա հայտարարում է, թե այդ դատավարությունը Գերագույն գատարանի իրավասությունից դուրս է։ Նրա գործընկերները, թվով առնվազն 18 հոգի, պաշտպանում են նրա պահանջը։ Գլխավոր դատախազը հայտարարում է, որ ամբաստանյալները մեղադրվում են ոչ սովորական հանցագործությունների մեջ, և որ ամենուրեք նման դատավարություններով զբաղվում են զինվորական ատյանները։ Ատյանի նիստը, որի ընթացքում որոշում է կայացվելու դատարանի իրավասության վերաբերյալ, նշանակվում է հինգշաբթի։

Մեղադրական եզրակացություն

Մանրամասն քննարկեցինք հետաքննության փաստաթղթերը, ինչպես նաև զինվորական ատյանի գլխավոր դատախազության եզրակացությունը, որը վերաբերում է լուծարքի ենթարկված «Միություն և առաջադիմություն» կուսակցության նախագահ Սայիդ Հալիմ փաշայի, մեջլիսի գլխավոր խորհրդի անդամներ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Իբրահիմի, Շյուքրիի, Խալիլի, Ահմեդ Նեսիմիի, կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրիի, կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ստամբուլի պատգամավոր Քեմալի, Զիա Գյոքալփի, դոկտ. Ռուզուհիի, Քյուչյուկ Թալեաթի, ինչպես նաև նույն կոմիտեի անդամներ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ղեկավարներ դոկտ. Բեհաէդդին Շաքիրի, դոկտ. Նազիմի, Աթիֆի, Ռիզայի և նույն կազմակերպության գործադիր կոմիտեի անդամներ՝ հասարակական անվտանգության նախկին պետ Ազիզ բեյի և մայրաքաղաքի նախկին պարետ Զևադ բեյի դատաքննությանը։

Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն միաժամանակ բաղկացած է եղել երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կանոնադրության ու ծրագրի համաձայն, իսկ մյուսը՝ ընդհատակյա և գաղտնի հրահանգներով։ Փաստերը, որոնք հաստատում են այդ կոմիտեի վերոհիշյալ ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը, վկայում են, որ կոմիտեն՝ նրա իրավական դեմքը, մեղադրվում է օրինազանցության, շարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով։ Ստորև բերված փաստարկները լիովին ապացուցում են նրանց կատարած հանցագործությունների չափը։

Կուսակցության ազդեցիկ ղեկավարների, այդ թվում ներկայումս զինվորական շարքերից վտարված, փախուստի մեջ գտնվող Էնվերի, Ջեմալի, Թալեաթի և մյուս գործընկերների մասնակցությամբ 1330 (1914) թվականի հուլիսին տեղի ունեցած խորհրդակցությունից անմիջապես հետո, երբ պատերազմ հայտարարվեց, նրանք ձգտեցին օգտագործել այն առիթը, որ Եվրոպան զբաղված է համաշխարհային պատերազմով, և ջանացին ահաբեկությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի էր հարթել հանդարտորեն, արդար և առողջ բա-

ճակատությամբ: Այդպիսով, իրենց ճակատագրական գործունեությամբ ստեղծեցին անվերջ խողովանույզ վիճակ՝ խիստ ծանրացնելով ժողովրդի կացությունը:

Արտաքուստ նրանք այնպես էին ձևացնում, թե իբր պայքարում են ազգային շահերի համար, մինչդեռ իրականում հետապնդում էին միայն իրենց անձնական շահը և պատերազմի հետ կապված ծանր հոգսեր ստեղծելով՝ աշխատում էին լռեցնել ժողովրդին: Իրենց նենգ դիտավորությունները իրականացնելու համար նրանք ի վերջո կարողացան երկիրը ներքաշել համաշխարհային պատերազմի մեջ: Ռազմական գործողությունների ընթացքում, իրենց գաղտնի ծրագիրը իրականացնելու համար, սկսեցին աշխուժացնել գաղտնի կոմիտեների գործունեությունը: Այսպես, հանցագործներին բանտերից ազատ արձակելով՝ ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսեն» («Հատուկ կազմակերպություն»), որն իր գաղտնի հրամաններն ու հրահանգներն ստանում էր Ստամբուլում ստեղծված հատուկ կոմիտեից, որի կազմի մեջ մտնում էին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ Աթիֆ և դոկտ. Նազըմ բեյերը: Կոմիտեի որոշումները հաստատվում և կյանքի էին կոչվում ռազմական շտաբի կամ Ստամբուլի պարետ Ջևադ բեյի կողմից:

[«Թեշքիլաթ-ը մահսուսեն»-ի] գործակալներին և ընդհանրապես նրա գործունեության շրջաններն առաքվում էին հրամայական գումարներ:

Դոկտ. Բեհաէդդին Շաքիրը «Թեշքիլաթ-ը մահսուսեն»-ի ղեկավարներին տվել էր ծածկագրի բանալին, տրամադրել ավտոմեքենաներ, դրամական մեծ գումարներ և այլ անհրաժեշտ զինամթերք: Այս ձևով նա սկսել էր գաղտնապես իրագործել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերը:

Առանձին շրջաններ ուղարկված այս կազմակերպության գործակալներից մի քանիսը, իրենց ղեկավարների ցուցմունքներով, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության այլ վայրերի կոմիտեների ներկայացուցիչներն ու պետական պաշտոնյաները, իբրև թե կուսակցության հրամանները կատարելու մղումով, կամ էլ որոշ մարդկանց գործադրած հարկադրանքի ներքո, առանց ազգի և հավատքի խտրականության, սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցվածքը այրել և ջատերին տանջամահ անել: Չնայած որ ահաբեկման սլաքը

հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այդուհանդերձ տուժեցին նաև (կայսրության) այլ տարրերն ու մեծ թվով թուրքեր:

Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված են իրականացվել վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «Հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով: Գրավոր ապացույցների, փաստաթղթերի և հավաստի վկայությունների հետաքննության արդյունքը հետևյալն է: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների կողմից սկզբնական շրջանում պատերազմական գործողություններին մասնակցելու համար ստեղծված «Թեշքիլաթ-ը մահսուսեն»-ն, ինչպես պարզ երևում է մեղադրական փաստաթղթերից, բացառապես գաղտնի բնույթ էր կրում, և նրա բուն նպատակը հանցագործ արարքներ կատարելն էր: Այդ գաղտնի ցանցը ղեկավարում էին կենտրոնական կոմիտեի անդամներ դոկտ. Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը, Աթիֆը, Ռիզան և հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյը: Սրանցից Բեհաէդդին Շաքիր բեյի կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որտեղից նա ղեկավարում էր արևելյան վիլայեթների ուժերը: Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը գործում էին Ստամբուլում, որոնց արարքները հաստատում և կյանքի էր կոչում մայրաքաղաքի պարետ Ջևադ բեյը: Բեհաէդդին Շաքիր բեյին ուղղված № 150 գաղտնի կարգադրությունը բովանդակում է հետևյալը. «Կոմիտեն պահանջում է, որպեսզի գալաթացի խալիլը պատժվի: Ավանդադրված դրամը վերցվելու է փոստատնից և անհրաժեշտության դեպքում բաժանվելու է բնակչությանը» (տե՛ս գործ № 10, փաստաթուղթ № 1):

Այս փաստաթուղթը ստորագրել են Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը և վավերացված է Ջևադի ստորագրությամբ: Ներքևում գրված է նաև. «Դրդապատճառը՝ խարդավանք. դրամ հավաքելը»: Վերոհիշյալ կարգադրության հետ ուղարկված է նաև մի ծածկագիր հեռագիր. «Ա. Ջևադ» ստորագրությամբ, որտեղ ասված է. «Արդվին, Բեհաէդդին Շաքիր բեյին, վերծանել անձամբ»:

Խալիլ, Նազըմ, Աթիֆ, Ազիզ բեյերի ստորագրություններով Միդհատ Շյուքրի բեյին ուղղված № 59 գրությունը ցույց է տալիս, որ փախուստի մեջ գտնվող էնվեր բեյի հորեղբայր Խալիլ փաշան Ստամբուլի պարետ եղած ժամանակ նույնպես ընդգրկված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ, որ տվյալ կազմակերպությունը ներքին կապ է ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ։ Դա ապացուցվում է նաև Խալիլ բեյի Իզմիրի քաղաքագլխին ուղարկած № 67 հեռագրով, որտեղ խոսվում է կալանավորներին բանտից ազատելու, առաջնորդներ նշանակելու և այլ ծրագրերի մասին (տե՛ս գործ № 10, փաստաթուղթ № 4)։

1330 (1914) թվականի նոյեմբերի 16-ին Խալիլ բեյի՝ ռազմական գերատեսչությանն ուղղված № 68 գրությունից պարզվում է, որ կործանիչ սարքերը ուղարկված են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի համար։ Այս կազմակերպությանը վերաբերող թղթապանակներում գտնվում են նաև համանման այլ փաստաթղթեր։

Հետաքննությունից պարզվում է նաև, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին և կուսակցության կենտրոնական կոմիտեին վերաբերող կարևոր գրությունները մեջտեղից վերացված են։ Հավաստի ապացույցները վկայում են նույնպես, որ Թալեաթ բեյի պաշտոնանկությունից առաջ ներքին գործերի մինիստրությունից հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյին ուղղված հրահանգներն ու այլ կարևոր թղթակցություններ հետ չեն վերադարձվել (տե՛ս գործ № 31)։ Պարզվում է նաև, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն, դեռևս պատերազմ հայտարարելուց առաջ նպատակադրված է եղել պատերազմի մեջ մտնելու։ Այս պարագան անհերքելիորեն հաստատվում է 1330 (1914) թվականի օգոստոսի 17-ի կուսակցության գլխավոր քարտուղար Միհդատ Շյուքրի բեյի ստորագրությունը կրող գրությունից, որը Էրզրումի քաղաքագլխի միջոցով հանձնվել է Բեհաէդդին Շաքիր բեյին։

Դիարբեքիրում կոտորածներն ու խոշտանգումները տեղի են ունեցել փախուստի մեջ գտնվող Թալեաթ բեյի դրդմամբ։ Այն հաստատվում է (Դեյր)-Զորի մյութեսարիֆ Ալի Սուադ բեյի կողմից հիշյալ Թալեաթ բեյին ուղարկված ծածկագիր հեռագրի բովանդակությունից, ուր խոսվում է վալիին և կոմիսար Մեմդուհին իր համհարզի հետ մահապատժի ենթարկելու անհրաժեշ-

տության մասին։ Վերծանված պատասխան ծածկագիր հեռագրում կա «Ի պահ տալ» նշումը (Գործ № 8, փաստաթուղթ № 1)։

Ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը զբաղվելիս է եղել Քիլիսի կայմակամի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը (հայերի) ոչնչացումն է», և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալեաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (Թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը։ (Տե՛ս հարցաքննության փաստաթղթերը, էջ 15)։

Բալուի քաղաքագլուխ Մյուֆիդ բեյը 1331 (1915) սեպտեմբերի 11-ի թվագրությամբ ներքին գործերի մինիստրություն ուղարկած ծածկագիր հեռագրով հաղորդել է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը դեռևս Բալուի պատասխանատու քարտուղար եղած ժամանակ Ջանկըրրիից Բալուի մյութեսարիֆությունն ուղարկած հեռագրով հայտնել է, որ Անկարայի վիլայեթից աքսորված հայերի ընդհանուր թիվը հասել է 61 000-ի, որ այդ տեղահանությունը նպատակահարմար է նախ տեղի մահմեդականների թիվը կայունացնելու, մյուս կողմից էլ այն հետագայում նպաստավոր կլինի Բալուի համար (գործ № 8, փաստաթուղթ № 2)։ Այս փաստը վկայում է, որ տեղահանությունը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել զուտ կոմիտեի ցանկությամբ և նախաձեռնությամբ, ինչից և ներշնչվել է Միդհատ բեյը։

Կարճ ժամանակում Ջանկըրրիում գտնվող այս անձը հեռվից չէր կարող պատկերացում ունենալ Անկարայի վիլայեթի բնակչության մասին։ Նա սխալ կարծիք ուներ նաև իր վիլայեթի բնակչության մասին։ Ջանկըրրին մտնում է Կաստամոնուի մեջ և այդտեղի մահմեդականները շրջակա վայրերում տեղի ունեցող դեպքերին վերաբերվել են ատելությամբ։ Նույնիսկ մի օր մի խումբ մեծամեծներ և ավագանիներ իրենց մյուֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիդ փաշային հետևյալ խոսքերով. «Շրջակա վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթվող անասունների նման քշում են դեպի լեռները և այնտեղ կոտորում։ Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում

այդպիսի բան կատարվի։ Մենք վախենում ենք աստծո ցասումից։ Պետությունը ոչ թե դաժանությամբ է կառավարվում, այլ բանականությամբ։ Խնդրում ենք, որպեսզի մեր վիլայեթում այդպիսի կոտորած տեղի չունենա»։ Այս անձինք արտասվալի աչքերով հեռացել են քաղաքապետի մոտից, խոսք առնելով, որ իրենց վիլայեթում նման արարք չկատարվի։ (Այս մասին արձանագրված է վկայությունների երկրորդ մասի 15-րդ էջում)։

Ստորև բերվում է Էրզրումի վիլայեթի վալի Թահսին բեյի 1331 (1915) հուլիսի 15-ի թվագրությամբ ծածկագիր հեռագիրը, ուր խոսվում է «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի և նրա հետ համագործակցող ժանդարմների կողմից հայերի հանդեպ գործադրված բռնությունների և վայրագությունների մասին. «Ֆայիք անունով մի լեյտենանտ տիրացել է Արաբյանի 4 աղջիկներին, իսկ լեյտենանտ Քյամիլ էֆենդին հափշտակել է 1863 լիրա գումար, 35 բեռ ապրանք և մեծ քանակությամբ գոհարեղեն։ Դրամի հափշտակությունը և կանանց հանդեպ գործադրված բռնությունները չափազանց ամոթալի և քաջության հետ ոչ մի առնչություն չունեցող երևույթներ են։ Անհրաժեշտ է այդ վայրագություններին վերջ տալ, հատկապես «Թեշքիլաթ-ը մահսուսե» անվան տակ բոլոր կողմերում թափառող հրոսակներին։ Խարբերդի վալին հաղորդում է, որ բոլոր ճանապարհները լի են կանանց և երեխաների դիակներով, որոնց չեն հասցնում թաղել։ Լավ կլինի, որ մենք պաշտպանենք մեր անցյալի քաջության նկարագիրը»։ (Գործ № 8, փաստաթուղթ № 4)։ Փախուստի մեջ գտնվող Թալեաթ բեյին ուղղված այս հեռագիրը պահվում է մեջլիսի 5-րդ բաժնի թղթապանակում։ Այս հեռագիրը հաստատում է (Դեյր)-Զորի քաղաքապետ Ալի Սուադ բեյի վերոհիշյալ ծածկագիր հեռագրում արտահայտված գաղտնի նպատակները։

Ստորև բերվում է Էրզրումի «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյի ստորագրությամբ Խարբերդի վալի Սաբիթ բեյին և Նազըմ բեյին ուղղված ծածկագիր հեռագրի բովանդակությունը, որի լուսանկար-պատճենը գտնվում է № 9 գործում։

«Եղբայր իմ, մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին զտո՞ւմ եք, թե՝ ոչ։ Վտանգավոր մարդկանց, որոնց վտարման ու աքսորի մասին հայտնել եք, ոչնչացնո՞ւմ եք, թե ճամփու եք դնում»։

Այս փաստը ցույց է տալիս, որ մինչև այսօր փախուստի մեջ գտնվող վերոհիշյալ Ռեսնելի Նազըմ բեյը, այդ ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի քննիչ-լիազորը լինելով, գաղտնի կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և զբաղվել է հայերի բնաջնջման գործով։

Սամսոնի պատասխանատու քարտուղար Ռյուշդի բեյի ստորագրությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված հեռագիրը, ինչպես նաև Միդհատ Շյուքրի բեյի կողմից «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ներկայացուցիչ՝ դոկտ. Նազըմին հասցեագրված 1330 (1914) դեկտեմբերի 16-ի թվագրությունը կրող հետևյալ բովանդակությամբ հեռագիրը՝ «55 հոգուց բաղկացած չեթեների 5-րդ խումբը Թուֆան աղայի գլխավորությամբ մոտորային նավով ուղարկեք», լիովին հաստատում է, որ կուսակցության կոմիտեն կապված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և այլ վայրերում գտնվող նրա մասնաճյուղերը վաղուց ի վեր զբաղված են եղել հրոսակախմբեր պատրաստելու գործով։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Բալըքեսիրի քննիչ-լիազոր Մուսայի ստորագրությամբ Միդհատ Շյուքրի բեյին և դոկտ. Նազըմին հասցեագրված 1330 (1914) նոյեմբերի 20-ի թվակիր նամակների բովանդակությունից լիովին բացահայտվում է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն համագործակցել է ներքին գործերի մինիստրության հետ՝ հրոսակախմբեր պատրաստելու գործում։

Կուսակցության Բրուսայի ներկայացուցչի 1330 (1914) թվականի դեկտեմբերի 19-ի կենտրոնական կոմիտեին ուղարկված գրությունը նույնպես հաստատում է, որ բանտերից դուրս բերված հանցագործներն ու ավազակներն ընդգրկվելու են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ։ Եվ այս կապակցությամբ սկզբնական շրջանում ջանք գործադրվեց միամիտ մարդկանց համոզելու, որ այդ ավազակախմբերը իբրև թե մասնակցելու են պատերազմական գործողություններին։ Մինչդեռ վերոհիշյալ ապացույցներն ու բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ հրոսակախմբերը ստեղծված են տեղահանված (հայերի) քարավանները կոտորելու և ոչնչացնելու նպատակով։

Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ (գործ 11)։ Թալեաթ բեյի 1331-ի

(1915) հուլիսի 21-ի թվակիր-ծածկագիր հեռագիրը, որն ուղղված է Դիարբեքիրի, Խարբերդի, Ուրֆայի և (Դեյր)-Զորի վալիներին ու մյութեսարիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքյալ գույքը վառելու և ընդհանրապես դիակները ձորերը, գետերը և լճերը չգցելու մասին։

Դիարբեքիրի վալիին ուղղված չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ բեյի 1331-ի (1915) հուլիսի 1-ի թվակիր մի այլ հեռագրից ենթադրվում է, թե Եփրատ գետի հարավային մասում, ջրի երեսին հայտնվող դիակները կարող են ապստամբական շարժման ընթացքում սպանված հայեր լինել, ուստի պահանջվում է, որ դրանք հավաքվեն և թաղվեն իրենց բնակավայրերում (գործ 11, փաստաթուղթ № 3)։

Ի պատասխան Ջեմալ բեյին, 1331-ի (1915) հուլիսի 3-ի թվակիր, «անձամբ» նշումը կրող հեռագրում ասված է. «Եփրատը առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից։ Այստեղ, ապստամբության ընթացքում սպանվածների դիակները գցվում են ամայի վայրերում գտնվող խոր քարայրները կամ էլ այրվում են։ Թաղելը բացառված է»։

(Դեյր)-Զորի նախկին մյութեսարիֆ Ալի Սուադ բեյը հիշյալ շրջան ուղարկվող հայերի ճակատագրի մասին տեղեկություն տալով, նշել է, որ Հալեպի հեռագրական գործակալությունում աշխատող «Թասվիր-ի էֆքյար» թերթի նախկին թղթակից Ակյահ բեյը (Դեյր)-Զորի մյութեսարիֆ Սալիհ Զեքի բեյի հետ զրուցելիս հարցրել է. «Քո մասին ասում են, թե 10 հազար հայ ես ոչնչացրել, ճի՞շտ է»։ Ի պատասխան այդ հարցումի, Զեքի բեյը պարծենալով ասել է, «ես նամուս ունեմ, 10 հազարը ի՞նչ է որ, մի քիչ վեր բարձրացիր» (տես գործ 6 և 14, փաստաթուղթ № 4, ինչպես նաև գործ 11, փաստաթուղթ № 1)։

Խարբերդի վալիի կողմից Մալաթիայի մյութեսարիֆին ուղարկված ծածկագիր հեռագրի առաջին մասում հաղորդվում է, որ ճանապարհներին շատ մեծ թվով դիակներ կան, և դրանք կարող են վտանգավոր հետևանքներ ունենալ։ Խորհուրդ է տրվում զգուշացնել ներքին գործերի մինիստրությանը, որպեսզի վճռական քայլեր ձեռնարկվի այս հարցը անուշադրության մատնող պաշտոնյաներին պատժելու համար։ Նշվում է նաև, որ անհրաժեշտ է մի քանի ազդեցիկ ղեկավարների տրամադրության տակ բավարար թվով ժանդարմներ նշանակել՝ սահմանի ներսում գտնվող բոլոր դիակները թաղելու համար։ Ներքին գործերի մինիստրությանը Ռեշիդի ուղարկած 1331-ի (1915) սեպտեմբերի 15-ի թվակիր ծածկագիր հեռագրում նշվում է, որ Դիարբեքիրից արտաքսված հայերի թիվը հասնում է հարյուր քսան հազարի, որը ցույց է տալիս կատարվող գործողության ծավալն ու նշանակությունը (գործ 12, փաստաթուղթ № 1)։

Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրությունը կրող հեռագրում նշված է, որ հայերից որևէ մեկին հովանավորող մահմեդականը մահապատժի է ենթարկվելու իր բնակավայրում, և տունն էլ հրդեհվելու է։ Եթե հովանավորողը պետական պաշտոնյա լինի, ապա գործից վտարվելով դատվելու է զինվորական դատարանով։ Իսկ եթե զինվորական լինի, ապա որպես հանցագործ՝ կանգնելու է զինվորական բարձրը ատյանի առաջ (գործ 13, փաստաթուղթ № 1)։ Այս խրստությունները ցույց են տալիս, թե տվյալ վայրի մահմեդականները և մանր պաշտոնյաները ինչու չէին կարողանում տեղի ունեցող գազանությունների առաջն առնել։

Տրապիզոնի նախկին պատգամավոր Հաֆըզ Մեհմեդ բեյի տված ցուցմունքից (գործ № 15) բացահայտվում է, թե հայերին Սև ծովի ափերին նավ նստեցնելով՝ ինչպես են խեղդամահ արել։ Նույնիսկ այդ ողբերգության մասին, երբ ինքը հայտնել է Թալեաթ բեյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել (Տրապիզոնի) վալի Ջեմալ Ազմիի նկատմամբ։ Այս հանգամանքն առավել ևս ծանրացնում է Թալեաթ բեյի հանցագործությունը։

Էրզրումի վալի Մյունիր բեյի 1331-ի (1915) դեկտեմբերի 14-ի թվակիր ծածկագիր հեռագիրը (գործ № 16) ցույց է տալիս, որ հակառակ նախկին վալի Թահսին բեյի գործադրած ջանքերին, Էրզրումից Քըղիի ճանապարհով ուղարկված հայերի քարավանները կոտորածի են ենթարկվել կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից։

Ջեմալ Ասաֆ բեյի գրավոր ցուցմունքի մեջ (գործ № 18) նշված է, թե տեղահանվածները ինչպես են կոտորածի ենթարկվել քուրդ Ալոյի ավազակախմբի կողմից, որը կազմակերպել էր Ջանկըրիի կուսակցության նախկին պատասխանատու քարտուղար, այժմ առևտրական Ջեմալ Օղուզ բեյը։ Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, թե կենտրոնական կոմիտեն այս խնդրում

ինչպես է համագործակցել կուսակցության (շրջանային) ներկայացուցիչների հետ։

Հատկապես ուշադրության արժանի տեղեկություններ կան գնդապետ Խալիլ Ռիֆայ բեյի ընդարձակ տեղեկագրում, որը կազմված է որոշակի անուններով և փաստացի վկայություններ-ի հիման վրա (տե՛ս գործ № 2, էջ 1)։ Այսպես, Անկարայի տեղահանության ընթացքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական ակումբի վարիչի մոտ ուղարկելով Թայիբ անունով մեկին, կենտրոնական կոմիտեն հրահանգել է, որ զինվորական առողջապահության հայ ծառայողները պաշտոնից հեռացվեն։ Մեմդուհ Շևքեթ բեյը և նրա եղբայր Ռաֆետ բեյը, այդ ժամանակամիջոցին Անկարայում լինելով, գործակցել են կենտրոնական կոմիտեի հետ և ձեռք բերել հսկայական կարողություն։ Տեղեկագրում նշվում է, թե ինչպես կուսակցության ներկայացուցիչ-քարտուղար Նեջատի բեյը միջամտել է Անկարայի տեղահանության գործին և այդ խնդրում իր եռանդուն մասնակցությունն է ունեցել նաև հիշյալ վիլայեթի նախկին ոստիկանապետ մանաստրրցի Բեհաէդդին բեյը։

Այն ժամանակ, երբ տեղի ռազմական դատարանը մեղադրական գործ է հարուցել վերոհիշյալ Բեհաէդդին բեյի նկատմամբ, նրան շտապ կանչել են Ստամբուլ։ Հակառակ ներքին գործերի մինիստրության ներկայացրած պահանջին, նրան վերաբերող հետաքննության փաստաթղթերը մնացել են տեղում։ Հետագայում նրա գործը քննարկվել է ռազմական մինիստրությունում, և այդպիսով վերջինս ազատվել է դատաքննությունից։

Հետաքննության արդյունքների համաձայն, նրանք, ովքեր քննադատել են կատարվող ողբերգությունները և չեն մասնակցել դրանց, համարվել են հայրենիքի դավաճաններ, իսկ [մանաստրրցի] Բեհաէդդինի նման ակտիվ գործիչներն արժանացել են շափից ավելի հովանավորության։ Նույնիսկ ներքին գործերի նախկին մինիստր Թալեաթ բեյը հիշյալ [մանաստրրցի] Բեհաէդդին բեյին հատուկ ծանուցագրով ծառայության է ուղարկել արևելյան զորքերի օպերատիվ զորախմբի հրամանատար Վեհիբ փաշայի մոտ։ Միաժամանակ նա աշխատել է Սամսունի զինվորական ատյանում, այնուհետև նոր նշանակում ստանալով, մեկնել է անհայտ ուղղությամբ։ (Նրա մասին տրված ցուցմունքները գտնվում են Վեհիբ փաշային վերաբերող թղթապանակում)։

Փաստերը ցույց են տալիս, որ Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան ծածկագիր հեռագիր է ստացել Բեհաէդդին Շաքիր բեյից, ուր նշված է եղել, որ հայերի տեղահանության հարցը խիստ անհրաժեշտություն է... Իսկ կուսակցության Կաստամոնուի քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին, չնայած, որ իր ժամանակին զգուշացրել է [ներքին գործերի] մինիստրությանը տեղի ունեցող տեղահանության, կոտորածի և այլ վայրագությունների մասին, նրա գործադրած ջանքերը, սակայն, մնացել են ապարդյուն։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության գումարած մի ժողովում նախագահը թաքրիր է ներկայացրել Թալեաթ բեյին, ուր նկարագրված են եղել հայերի հանդեպ գործադրված դաժանություններն ու կոտորածները, և այս կապակցությամբ պահանջել է դատաքննության ենթարկել կուսակցության մի շարք շրջանային պատասխանատու քարտուղարների, այդ թվում դոկտ. Ռեշիդին, Ջեմալ Ազմին, Սաբիթին, Մուամերին, Աթիֆին և կալանատների ընդհանուր տնօրեն Իբրահիմ բեյին։ Մինչդեռ Թալեաթ բեյը մի կողմ է շպրտել այդ թաքրիրը, ակնարկելով, որ այն պահվի։

Իզմիրի պատգամավոր Իհսան Օննիկ էֆենդիի ցուցմունքում նշված է, որ երբ ինքը Իզմիրի «Սպորտինգ կլուբի» մեջ Թալեաթ բեյին ասել է, որ դոկտ. Նազիմը և իր գործընկերն են իսկական բռնություն գործադրողները, Թալեաթը պատասխանել է. «Ես այս տեղացիներին մյուսների նման կենթարկեի նույն ճակատագրին»։

Վեհիբ փաշայի վկայության մեջ (տե՛ս գործ № 7, էջ 3) նշվում է, որ հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից։ Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր գազանությունների իրագործման համար Բեհաէդդին Շաքիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել նրանց։ Նույնիսկ պետության ղեկավարներն են ենթարկվել Բեհաէդդին Շաքիրի հրամաններին և հրահանգներին։ Երրորդ բանակի կատարած բոլոր բռնությունների, խարդավանքների և բանսարկությունների մտահղացողը նույնպես եղել է Բեհաէդդին Շա-

քիրը։ Նրա հավաքագրած մարդկանց մի մասը եղել են մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մի մասն էլ՝ արնախում ժանդարմներ... Գրավոր բերված բոլոր ցուցմունքները մեղադրական հավաստի ապացույցներ են՝ ուղղված «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի և մեջլիսի անդամների դեմ։

Հարցաքննությանը վերաբերող փաստաթղթերի 6-րդ էջում նշված է, որ Սուլեյման Նազիֆ բեյը Բաղդադից դեպի Դիարբեքիրի սահմանամերձ շրջանները գալու ժամանակ դիակների գարշահոտությունից փակել է քիթը։ Երբ Ջեմալ փաշան հարցում է կատարել Թալեաթ բեյին Կոնիայի նախկին վալի Ջելալ բեյի Հալեպից հեռացվելու մասին, վերջինս պատասխանել է, որ հայկական հարցին վերաբերող իր տեսակետը համընկնում է կենտրոնական կառավարության տեսակետի հետ, որ դոկտ. Նազիմի կողմից ուղարկված պատգամավոր Ալի Ռիզայի նշանակման հարցը վճռված է եղել կենտրոնական կոմիտեում մանրամասն քննարկվելուց հետո։

[Ջելալ բեյի] հեռացման պատճառը այս ձևով բացատրվելուց հետո, երբ [Ջեմալ փաշան] այս հարցի վտանգավորության մասին Ստամբուլում զգուշացրել է Թալեաթին և Նազիմին, նրանք պատասխանել են, որ դա անհրաժեշտ է և օգտակար։ Դոկտ. Նազիմը նույնիսկ ասել է, որ այս նախաձեռնությունը վերջնականապես կլուծի արևելյան հարցը։

Հայրի էֆենդին իր վկայության մեջ նշում է, որ ինքը ամեն ջանք գործադրել է այդ բոլորը կանխելու, բայց և այնպես տեղահանության և կոտորածին հակառակվելու համար իրեն էլ են հեռացրել պաշտոնից (հարցաքննության թղթապանակ, էջ 17)։ Քաղաքացիական հետաքննության հանձնաժողովի նախկին պետ Համիդ բեյի տված ցուցմունքից պարզվում է, որ Անկարայի նախկին վալի Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմակամներին այն բանի համար, որ նրանք դեմ են եղել [հայերի] տեղահանությանը, ինչպես նաև արաբների դեմ գործադրվող բռնություններին ու սպանություններին։

Հարցաքննությանը վերաբերող թղթապանակի 34-րդ, 38-րդ, 43-րդ էջերում տրված է ֆինանսների մինիստրության եկամտի բաժնի ընդհանուր տնօրեն Լութֆի բեյի ցուցմունքը, որը վերաբերում է կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործունեությանը, ինչպես նաև Տրապիզոնում կատարված ողբերգությանը և նրա պատասխանատուներին։

Բեհաէդդին Շաքիր բեյի էրզրումից Անթալիայի մյութեսարիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշված է. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսվել են Մոսուլի և [Դեյր] Զորի կողմերը։ Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»։

Անթալիայի նախկին մյութեսարիֆ Սարուր Սամի բեյը իր բացատրագրում (հարցաքննության թղթապանակ, էջ 44) նշում է, որ այս հեռագրի պատճենը ինքն ուղարկել է Թալեաթ բեյին, բայց ոչ մի պատասխան չի ստացել։ Անկարայի տեղահանության և այդ տեղի կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջատի բեյի մասին Ռադի բեյի տված տեղեկությունները բավարար ապացույցներ են այդ ամբաստանությունը հաստատելու համար։

Բեհաէդդին Շաքիր բեյը ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյի միջոցով ծածկագիր հեռագիր է ուղարկել կենտրոնական կոմիտե։ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի փաստաթղթերի թղթապանակներից մեկում հայտնաբերված և 69 համարի տակ վերծանված այդ հեռագրի հակառակ կողմում, որպես պատասխան, գրված է հետևյալը. «Քանի որ այդտեղ այլևս գործ չունեք, Արդվինից առավել կարևոր մի պաշտոն ստանձնելու համար շտապ շարժվեք դեպի Տրապիզոն։ Այստեղից մեկնող Յակուբ Ջեմիլ բեյը ձեզ կբերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը»։

Այս [հեռագիրը] լիովին հաստատում է նրանց միջև գոյություն ունեցող ներքին կապն ու համագործակցությունը։

Մեղադրվող մինիստրները հարցաքննության ընթացքում պատճառաբանել են, որ իրենց գործը ըստ պաշտոնավարության լսվելու է ոչ թե զինվորական ատյանում, այլ սահմանադրական սկզբունքով կազմված գերագույն դատարանում։ Ավելորդ է բացատրել, որ նրանց կողմից հիշատակված 92-րդ հոդվածը՝ «մինիստրի կամ մինիստրների խորհրդի անդամի պաշտոնավարությամբ», վերաբերում է քաղաքական հանցագործությանը։ Սահմանադրական օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, սովորա-

կան հանցագործություն կատարելու կամ մասնակցություն ունենալու դեպքում մինիստրներին ոչ մի արտոնությունից օգտվելու իրավունք չի վերապահվում։ Նման հանցագործությունների քննելու հարցը մտնում է սովորական դատարանների իրավասության մեջ։ Արտակարգ դրություն հայտարարված շրջաններում քաղաքացիական օրենքների և դատարանների փոխարեն իրավասություն են ձեռք բերում զինվորական ատյանները։

Սպանություններին և բռնագրավումներին վերաբերող հոդվածների հաստատումը մտնում է զինվորական ատյանի իրավասության մեջ և ըստ մեղադրական եզրակացության բովանդակության, պաշտոնի հարցում ոչ մի վերապահություն չի կատարվելու։

Այսպիսով, մեղադրյալների դատապաշտպանների կողմից առաջ քաշված դատական անիրավասության հարցը վերացվում է։ Վերևում բերված փաստերի ու վկայությունների հիման վրա դոկտ. Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Աթիֆ, Ռիզա, Ջևադ, Ազիզ, Էնվեր, Ջեմալ և Թալեաթ բեյերը, որպես հանցագործության անմիջական մասնակիցներ, մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին կետով և 171-րդ հոդվածով։ Սայիդ Հալիմ փաշան, Միդհատ Շյուքրի, դոկտ. Ռուզուհի, Քյուչյուկ Թալեաթ, Զիա Գյոքալփ, Քեմալ, Ահմեդ Նեսիմի, Շյուքրի, Իբրահիմ, Խալիլ բեյերը, չնայած որ անմիջական մասնակցություն չեն ունեցել կատարված հանցագործություններին, բայց գիտակցաբար համագործակցելով, անուղղակիորեն մասնակցել են վերոհիշյալ հանցագործություններին, որի համար էլ մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով։ Մեղադրյալների դատաքննության գործը ներկայացվում է Ստամբուլի կայսերական զինվորական ատյանին, իսկ մեղադրական փաստաթղթերի մանրամասն հետաքննությունը՝ նույն ատյանի դատախազությանը։

10 ռեջեբ 1337 թ. [1919 թ. ապրիլի 13]

ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 51—64։ Տես նաև «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» գիրքը (թարգմ. թուրքերենից Ա. Հ. Փափազյանի), Եր. 1988, ԳԱ հրատ., էջ 36—49։

255. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԵՎ ԽԱՐԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԸ[67]

1. Տրապիզոնի դատավարությունը (1919)

Զինվորական ատյանի նախագահ՝ **գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա**

Դատարանի անդամներ՝ գեներալ-մայոր Զեկի փաշա
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա
գնդապետ Թեջեր Ֆերդի բեյ

Դատավարությանը ներկա մեղադրյալների անունները. *Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյ, Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի բեյ, Տրապիզոնի [գաղտնի] գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդի, Տրապիզոնի ժանդարմերիայի քննչական տեսչի օգնական, կայմակամ Թալեաթ բեյ, Տրապիզոնի հյուրանոցի տնօրեն Նիազի էֆենդի, Տրապիզոնի առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյ։*

Հեռակա կարգով դատվող մեղադրյալների անունները. *Տրապիզոնի վալի Ջեմալ Աղմի բեյ, [կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյ]։*

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև դատական բոլոր փաստաթղթերը։

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել։ Բայց իսլամի բարձր դրույթները, օսմանյան օրենքները ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը և հասարակական իրավունքները հավասարապես։ Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյաների պարտականությունների մեջ։

Մեղադրյալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Աղմի բեյը, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցու-

թյան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են ստացված գաղտնի հրամանագրերը իրականացնելիս։ Արտաքուստ նրանք իբրև թե գործել են տեղահանության օրենքի հիման վրա, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների համատեղ իրականացումը համարձակություն է տվել նրանց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին կոտորելու և բնաջնջելու համար։

Մի շարք հանցագործ, անառակ մարդկանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմից նրանց կազմած հրոսակախմբերը իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները։ Մինչդեռ շտապ տեղահանության ենթարկված և պաշտպանության միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և վերոհիշյալ հանցագործներից կազմված շեթեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը և այնուհետև աներևակայելի դաժանությամբ սպանել և բնաջնջել բոլորին։ Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով՝ հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը և բռնաբարության ենթարկել։ Այնուհետև ամիսներով ճանապարհներին քարշ գալուց հետո շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված տառապալի ուղևորությունից, սովից ու ծարավից։ Իսկ [ողջ] մնացածներին Երզնկայի (Երզինջանի) ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր։

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին իբրև թե պաշտպանելու պատրվակով տեղավորել են հիվանդանոցներում և դերվիշների տներում։ Այնուհետև, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ նետել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին։ Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված են եղել ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ՝ կանոնավոր ու խիստ կազմակերպված։

Վերոհիշյալ մեղադրյալներից հարկային տեսուչ Մեհմեդ Ալի էֆենդին, լինելով վալի Ջեմալ Ազմի բեյի վաղեմի ծանոթը, սերտորեն համագործակցել է նրա հետ, կատարել նրա հրամանները և նպաստել վալիի կատարած շարագործություններին և այդ ողբերգական ձեռնարկումների իրականացմանը։ Իսկ

վալի Ջեմալ Ազմի բեյը օգտագործել է նրան, նկատի ունենալով, որ նա սերտ առնչություն ունի լքյալ գույքի, գոհարեղենների, զինվորական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շինությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ստուգման տեսչությունների, ինչպես նաև «Կարմիր մահիկ» հիվանդանոցի և «Կանանց ընկերության» հետ։

Մեհմեդ Ալի բեյի թույլտվությամբ հայ կանանց և աղջիկներին իբրև թե «պատսպարման» քողի տակ հապճեպորեն հավաքել են մարդասիրական նպատակներով կառուցված հիվանդանոցում, դերվիշների տներում և այնուհետև հայրենասիրական գործ կատարած լինելու պատրվակով, որպես աղախին ու կին օգտագործելու նպատակով բաժանել տարբեր մարդկանց տները։ Եվ այդպես նրա մեղքով շատերը կուսապղծվել են և ենթարկվել այլևայլ բռնությունների։ Այդ դժբախտներին ավյալ վայրերում հապճեպորեն հավաքելու և կարճ ժամանակամիջոցում քաղաքից դուրս հանելու, կուսապղծելու և այլ բռնությունների ենթարկելու մասին գոյություն ունեն հավաստի վկայություններ։ Նույնիսկ իրենց ստորադաս հարկային տեսչության քննիչը բազմիցս գրավոր և բանավոր զգուշացրել է, որ իր պաշտոնի հետ առնչություն չունեցող այդ ստոր գործերին խառնվելը կարող է խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ։ Իսկ նա (Մեհմեդ Ալի էֆենդին), ամենևին կարևորություն չտալով դրան, գիտակցաբար շարունակել է օժանդակել հիշյալ Ջեմալ Ազմի բեյի՝ քաղաքի ներսում կատարած անմարդկային, դաժանաբարո բոլոր հանցագործություններին։

Ոստիկանապետ Նուրի էֆենդին, որը պաշտոնատար այլ անձնավորությունների հետ նշանակվել էր հետևելու քաղաքի կարգուկանոնին, միևնույն ժամանակ ընդգրկված է եղել տեղահանության կազմակերպման, գաղտնի ոստիկանության և գոհարեղենների պահպանության հանձնաժողովների մեջ։ Նրան է հանձնարարվել հավաքելու, գրանցելու տեղահանված հայերի լքյալ գույքը։ Մինչդեռ նա ոչ մի գործնական միջոց չի ձեռնարկել լքյալ գույքի պահպանման հարցում։ Ավելին, նրա թույլտվությամբ հայերի լքյալ գույքի պահեստավորումը կատարվել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ և առանց «դաֆթար» կազմելու։ Այսպիսով, նրա մեղավորությամբ լքյալ գույքը հափշտակվելով՝ կատարյալ կորստի է մատնվել։

Չնայած որ նա այդ ապրանքների գողության մեջ մեղադրվող մի քանի պաշտոնատար անձանց ուղարկել է զինվորական ատյանի հետաքննությանը, այդուհանդերձ ոչ մի պաշտոնական կամ ոչ պաշտոնական միջոց չի ձեռնարկել Ջեմալ Ազմի բեյի և նրա պաշտոնյաների արարքները սանձահարելու, ինչպես նաև սաստելու այն ոստիկաններին ու ժանդարմներին, որոնք, օգտվելով դիշերային «պարետային ժամից», զբաղվել են թալանով ու հափշտակությամբ։ Նա, նույնիսկ ականատես լինելով այդ ողբերգական տեսարանին, ոչ մի արգելք չի հարուցել, երբ ժանդարմներն ու ոստիկանները քաղաքում մնացած կանանց և երեխաներին խեղդելու նպատակով նավ բարձրացնելով՝ տարել են ծովի խորքերը։

Ըստ նրա տված ցուցմունքի, իբրև թե խորապես ազդվելով իր ներկայությամբ կատարված մի շարք դեպքերից, քաշվել է իր սենյակը և այն աստիճան հուզմունք ապրել, որ նույնիսկ չի կարողացել միաժամանակ դուրս գալ փողոց։ Այդ ամենով հանդերձ, նա աչք է փակել վալիի կատարած արարքների վրա և նույնիսկ քաջություն չի ունեցել կամովին հեռանալու և պաշտոնը զիջելու մեկ ուրիշին, որը գուցե կարողանար կանխել այդ հանցագործությունները։

[Գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա բեյը, միաժամանակ զինվորական լինելով, կարողացել է վաղուց ի վեր շահել Ջեմալ Ազմի բեյի համակրանքը և սերտ հարաբերություն հաստատել նրա հետ։ Օգտվելով այդ մտերմությունից, Մուստաֆա բեյը ձեռք է բերել զինվորական շատ կարևոր պաշտոններ, ինչպիսիք են նավահանգստային և առևտրական զինվորական տեսչությունները։ Մուստաֆա բեյը կարողացել է նաև իր պաշտոնավարությունը երկարաձգել շնորհիվ Ջեմալ Ազմի բեյին ենթակա զինվորական հրամանատարների աջակցության և կենտրոնական կառավարության հովանավորության։ Հայերից հափշտակված գույքի տեղափոխության ընթացքում նա, շարաշահելով իր պաշտոնը, զինվորական փոխադրամիջոցները տրամադրել է վալիին և նրա պաշտոնյաներին։

Նրան պաշտպանելու միտումով վկայություն տվողները նշեցին, որ նա, լավ հարաբերության մեջ գտնվելով վալիի հետ, իբր կարողացել է մի շարք հայերի ազատել տեղահանությունից։ Լինելով քաղաքի ազնվահարուստներից մեկը, իր անձնական շահի համար չի զոհաբերել իր պատիվը։ Նույնիսկ վալի Ջեմալ

Ազմի բեյի ագահ բերանը փակելու համար իրեն հանձնված գանձարկղի դրամն ու զարդեղենը առանց հաշվարկի տրամադրել է նրան և նյութական վնաս կրել։

Նուրի բեյի, Մեհմեդ Ալիի և գործակալ Մուստաֆա էֆենդիի օգտին տրված այդ վկայությունները, ինչպես նաև նրանց դատապաշտպանների կողմից արված պարզաբանումները իրականության հետ ոչ մի առնչություն չունեն և միանգամայն անհիմն են։

Այսպիսով, [զինվորական ատյանը] միաձայն որոշում կայացրեց, որ ոստիկանապետ Նուրի էֆենդին, [գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա բեյը իրենց պաշտոնավարության ընթացքում կատարած չարաշահումների համար հանցավոր են ճանաչվում։ Վալի Ջեմալ Ազմի բեյը, [կուսակցության] պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը, [հարկային տեսուչ] Մեհմեդ Ալի էֆենդին մեղադրվեցին կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով։

Տեղի ունեցած խորհրդակցությունից հետո [ատյանը] Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերին ճանաչեց որպես հանցագործության անմիջական մասնակից և պատժաչափ սահմանեց վերոհիշյալ 45-րդ հոդվածի առաջին մասը, ուր ասված է.

«Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրը այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում նույնպես հանցակից են համարվում և պատժվում են ուղղակի հանցանք կատարողի նման»։

Մեհմեդ Ալի էֆենդին հանցագործությանը անուղղակի մասնակցություն ունենալու համար մեղադրվում է վերոհիշյալ հոդվածի երրորդ մասով, ուր ասված է.

«Որևէ հանցագործության կամ ոճրագործության իրականացմանը ինչ-որ ձևով օժանդակողները, այսինքն սպառնալիքով կամ խարդավանքով գործարքի մեջ մտնել, դրամ կամ նվեր տալ, պաշտոնը չարաշահելով ազդեցություն բանեցնել. զենք, այլևայլ գործիքներ կամ միջոցներ հայթայթելով նախապատրաստական գործունեություն ծավալել, ինչ-որ ձևով հանցագործությանը նպաստել, դատապարտվում են այդ հանցագործությանը կամ ոճրագործությանը անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով»։

Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են կայսերական զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ և քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածներով։ Հիշյալ 171-րդ հոդվածում ասված է.

«Եթե մի խումբ մարդիկ, կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն՝ խորտակելով դռներն ու ցանկապատերը, կողոպտեն կամ փչացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները, ...դատապարտվում են մահվան»։

170-րդ հոդվածում ասված է.

«Կանխամտածված սպանություն կատարողները կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»։

Այս հոդվածների հիման վրա վերոհիշյալ Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են մահվան՝ իրենց ունեցվածքի բռնագրավումով։

Մեհմեդ Ալին վերոհիշյալ քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի ստորև բերված երկրորդ մասի հիման վրա դատապարտվում է 10 տարվա բանտարկության...

[Գաղտնի ոստիկանության] գործակալ Մուստաֆա էֆենդին, ոստիկանապետ Նուրի բեյը ստորև բերված քաղաքացիական քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածի հիման վրա, դատապարտվում են մեկական տարվա բանտարկության և երկուական տարով պաշտոնազրկման...

...[Կայմակամ] Թալեաթ և Նիազի բեյերը վերոհիշյալ հանցագործությունների հետ առնչություն չունենալու պատճառով բանտից ազատ են արձակվում։ Մեղադրյալ՝ առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյի նկատմամբ որոշակի հանցանշան չլինելու պատճառով դատաքննությունը կարճվում է։

[Զինվորական ատյանի] միաձայն վճիռը հրապարակվեց բոլորի ներկայությամբ, իսկ Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով։

22 մայիսի 1919 թ.
Նազրմ
Զեքի
Մուստաֆա

Ալի Նազրմ
Ռեջեբ Ֆերդի

Զինվորական արտակարգ ատյանի արձանագրական հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր

2. Խարբերդի վիլայեթում կատարված ջարդերի դատավարությունը

Նախագահ՝ գեներալ-մայոր Խալիլ փաշա
անդամներ՝ գեներալ-մայոր Հիսան փաշա
գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա
գեներալ-մայոր Իսմայիլ Հաքը փաշա
գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ

Հեռակա կարգով դատվող մեղադրյալների անունները. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ դոկտ. Բեհաէդդին Շաքիր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազրմ բեյ։

Դատավարությանը ներկա մեղադրյալների անունները. Դերսիմի նախկին պատգամավոր Հաջի Բայլուս զադե Մեհմեդ Նուրի բեյ, Խարբերդի հանրակրթական նախկին տեսուչ Ֆերիդ բեյ։

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին դատական բոլոր փաստաթղթերը։ Կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ մեղադրյալ դոկտ. Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես «Հատուկ կազմակերպության» նախագահ, Ստամբուլից դուրս գալով, սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում։ Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքը ենթարկել կողոպուտի։ Նա իր նենգ ծրագրերն իրագործելու համար այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դեպքերը, ուղարկում էր նաև անտեղյակ և դյուրահավատ այնպիսի մարդկանց, որոնք միանում

էին վերոհիշյալ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին՝ ակամա ատելությամբ կամ շահույթ ստանալու մոլի ցանկությամբ համակված։ Իր պարտականությունները դատարելու ընթացքում հաճախ բանավոր կարգադրություններ և երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել [այս ու այն կողմ] և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարության ներքո՝ հայերին կոտորելու և բնաջնջելու նպատակով։

Հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյը՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղարը, Խարբերդի վալի Սաբիթ բեյի միջոցով այժմ փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազրմ բեյին Էրզրումից ուղարկած 1915 մայիսի 4-ի թվակիր ծածկագիր հեռագրով հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրեք՝ այդտեղից ուղարկվող հայերին զտո՞ւմ եք, թե՞ ոչ։ Վտանգավոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն եք հայտնել, ոչնչացնո՞ւմ եք, թե՞ ճամփու եք դնում»։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մեջ գտնվող ծածկագիր հեռագրերից մեկում Էրզրումի վալի Մյունիր բեյը հայտնում է.

«Քրդիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հարուստ հայերի քարավանները, հարձակման ենթարկվելով Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից, կոտորվել են, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտվել»։

Կաստամոնուի նախկին վալի Ռեշիդ փաշան հայտնում է, որ ինքը հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյից ծածկագիր հեռագիր է ստացել տեղահանության մասին։ Իսկ Վեհիբ փաշան հայտնում է, որ «հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհաէդդին Շաքիր բեյն է»։

Անթեպի նախկին մյութեսարիֆ Սաբուհ Սամի բեյը հայտնում է, որ Բեհաէդդին Շաքիր բեյը Էրզրումից ուղարկած ծածկագիր հեռագրով հետևյալ հարցումն է արել.

«Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և Դեյր Զորի կողմերը, իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»։

Զինվորական ատյանի արձանագրություններում հավաստի փաստարկներով բերված մի շարք վկայություններում ևս հաստատվում են վերոհիշյալ ողբերգական իրադարձությունների ընթացքում Բեհաէդդին Շաքիր բեյի և նրա համախոհների համատեղ կատարած հանցագործությունները։

Ինչ վերաբերում է փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազրմ բեյին, ապա զինվորական ատյանի երեք անդամները նրան ևս մեղսակից ճանաչեցին վերոհիշյալ ողբերգություններին, քանի որ տեղահանության ընթացքում նա սերտորեն համագործակցել է Բեհաէդդին Շաքիր բեյի հետ։ Դա ապացուցվում է Նազրմ բեյին ուղղված 1915 մայիսի 4-ի թվակիր վերոհիշյալ հեռագրի բովանդակությամբ, ինչպես նաև Խարբերդի վալի Սաբիթ բեյի, [կուսակցության] կենտրոնական կոմիտեի ղեկավար քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի և այլ վկաների արած հայտարարություններով։ Ուշագրավ փաստարկ է նաև այն հանգամանքը, որ դատաքննության նախօրեին նա թաքնվեց և ցայսօր գտնվում է փախուստի մեջ։

Բացի այդ, փաստաթղթերի մեջ գտնվող մյուս թղթակցությունների բովանդակությունից էլ է հասկացվում, որ նա մասնակցություն է ունեցել հիշյալ ողբերգություններին։

Օրենքի տեսանկյունով, հիշյալ հանցագործության ընթացքում Նազրմ բեյը իսկական մեղսակիցների նման որոշակի հանցանշաններ չի թողել, բայց Բեհաէդդին Շաքիր բեյի հետ նրա ունեցած թղթակցությունները և վկաների ցուցմունքները հաստատում են, որ նա անուղղակի մասնակցություն է ունեցել տվյալ հանցագործությանը, քանի որ գիտակցաբար օժանդակել է այդ ողբերգության մեղսակիցներին։

Այսպիսի իրավիճակում օրենքի պահանջներից ելնելով՝ քվեների մեծամասնությամբ որոշում կայացվեց, որ Նազրմ բեյը ենթակա է դատապարտման՝ հանցագործությանը անուղղակիորեն մասնակցություն ունենալու ամբաստանությամբ։ Վերոհիշյալ անձանց կատարած հանցագործության պատժի չափը որոշվեց հետևյալ կերպ։ Քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի հաստատմամբ, 170-րդ հոդվածի հիման վրա Բեհաէդդին Շաքիր

բեյը դատապարտվեց մահվան, իսկ Ռեսնելի Նաղըմ բեյը նույն օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով՝ 15 տարվա տաժանակիր աքսորի։ Բռնագրավված ունեցվածքը տնօրինվելու է ըստ օրենքի։ Նաղըմ բեյը զրկվում է նաև քաղաքացիական իրավունքից...

Կառավարության կազմակերպած համընդհանուր տեղահանության և կոտորածին մասնակցելու խնդրում ստույգ հանցանշաններ չլինելու պատճառով հանրակրթական տեսուչ Ֆերիդ բեյը ազատ է արձակվում։ Մեհմեդ Նուրի բեյը նույնպես անմեղ է ճանաչվում, նկատի ունենալով, որ նա առնչություն չի ունեցել Հոլովենկ գյուղի հայ բնակչության տեղահանության և կոտորածի խնդրում։ Նրա քենակալ Ասըմ բեյը հայերի ունեցվածքը տեղափոխելու և Մեհմեդ Նուրի բեյի տանը պահելու ամբաստանությունից անմեղ է ճանաչվում։

Այսպիսով, զինվորական ատյանի միաձայն վճիռը հրապարակվեց Մեհմեդ Նուրի բեյի և Ֆերիդ բեյի ներկայությամբ, իսկ Բեհաէդդին Շաքիր և Ռեսնելի Նաղըմ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով։

13 կանունի սանի 1336 թ. Մուստաֆա Քեռիմի, Ինսան
(13 հունվարի 1920 թ.)

«Մենք, միանալով այս դատավճռին, այն կարծիքին ենք, որ մեղադրյալ Ռեսնելի Նաղըմ բեյը նույն աստիճանի հանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիր բեյը»։

Սուլեյման Շաֆիր, Իսմայիլ Հաֆը, Խաչ

Jean-Marie Carzou. Un génocide exemplaire. Arménie, 1915, Annexes, p. 236—246.

«Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»։ Թարգմ. թուրքերենից Ա. Հ. Փափազյանի, Ե., 1988 թ., էջ 167—173, 176—180։

256. ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳՐՈՂ ԱՐՄԻՆ Թ. ՎԵԳՆԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔԻ ԱՆԱՊԱՏՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

...Հայերը դարձան այս պատերազմի զոհը։ Երբ թուրքական կառավարությունը 1915 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին բնաջնջելու իր հրեշավոր նախագծի իրագործմանը... Թուրքիայի խավարամիտ տիրակալներին ոչ ոք չխանգարեց իրականացնելու այն տանջալից խոշտանգումները, որոնք կարող են համեմատվել միայն խելագար հանցագործի գործողությունների հետ։

Այդպես նրանք մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ծերունիների ու երեխաների, հղի կանանց ու ծծկեր մանկիկների քշեցին Արաբիայի անապատները մեն մի նպատակով՝ բոլորին մատնելու սովամահության...

Հարազատ վայրերից, որտեղ հայերն ապրել էին երկու հազար տարուց ավելի, կայսրության բոլոր ծագերից՝ լեռնային շրջանների ժայռոտ կիրճերից մինչև Մարմարի ծովի ափերն ու հարավի արմավենիների օազիսները, նրանք քշվեցին այդ անմարդաբնակ անապատները։ Դա նրանց բնակության նոր վայրեր տրամադրելու անհրաժեշտությամբ արդարացնելը, անշուշտ, ծաղր է մարդկային զգացմունքների հանդեպ։ Տղամարդկանց կոտորում էին զանգվածաբար, խմբերով կապկպում էին իրար շղթաներով կամ պարաններով և հրում-գցում գետը կամ նետում ժայռերից։ Կանանց և՝ երեխաներին վաճառում էին հրապարակային աճուրդներում, ծերերին ու դեռահասներին ճիպոտների մահացու հարվածներով քշում էին հարկադիր աշխատանքների։ Չբավարարվելով նրանով, որ մեկընդմիշտ կեղտոտել էին իրենց ձեռքերը՝ ժողովրդին զրկելով իր առաջնորդներից ու երեսփոխաններից, նրանք (թուրքերը) սկսեցին ի մահ քշել կիսամերկ մարդկանց, որոնց հանել էին ուղղակի անկողնից, թալանեցին նրանց տները, կրակի մատնեցին նրանց գյուղերը, ավերեցին կամ մզկիթների վերածեցին նրանց եկեղեցիները, քշեցին տարան բոլոր անասունները, խլեցին բոլոր սայլերը. նրանք իրենց զոհերի ձեռքից խլում էի հացի վերջին կտորը, հանում նրանց վրայի հագուստը, պոկում զարդերը։ Պաշտոնատար անձինք, սպաները, զինվորները, քոչվորները միմյանց հետ մրցում էին արյունռուշտ խրախճանքներում՝ ապաստարաններից ուժով դուրս էին քաշում մանկատի որբ աղջիկներին իրենց անասնական կրքին հագուրդ տալու համար, մահակներով ծեծում էին հղի կանանց ու մեռնողներին, որոնք հազիվհազ էին քարշ տալիս ոտքերը, մինչև որ ընկնում էին անշնչացած, ճամփի փոշին վերածելով արնաշաղախ զանգվածի։

Այդ ճանապարհներով անցնող ուղևորները սարսափով լի աչքերը շրջում էին դիվային դաժանությամբ քշվող, այդ շարժվող

զանգվածից, շրջվում էին, որ չտեսնեն իջևանատների աղբյուրների մեջ թաղված նորածին մանկիկներին և տղաների սրատված ու ճամփաներին թափված բազմաթիվ ձեռքերը, որ պաղատանքով մեկնվել էին իրենց դահիճներին։

Հայերի քարավանները, որոնք իրենց հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից աքսորվելու սկզբին բաղկացած էին հազարավոր մարդկանցից, Հալեպի շրջակայքը հասնելու պահին կազմում էին ընդամենը մի քանի հարյուր, այն դեպքում, երբ դաշտերը ծածկված էին ուռած, սևացած, գարշահոտությամբ օդը թունավորող դիակներով, մերկ ու բռնաբարված մարմիններով։ Շատերին զույգ-զույգ կապված նետում էին Եփրատը՝ ի կեր ձկներին։ Երբեմն ժանդարմները, ծաղրելով դժբախտներին, մի քիչ ալյուր էին լցնում սովահար մարդկանց դողդողացող բուռը, որը նրանք ագահորեն լիզում էին սոսկ նրա համար, որ երկարաձգեն իրենց հոգեվարքը։

Անգամ Հալեպի դարպասի մոտ աքսորյալներին թույլ չէին տվել շունչ քաշելու. ելնելով անըմբռնելի, անհիմն նկատառումներից, բոկոտն, հյուծված և տենդից ու այլ հիվանդություններից ուժասպառ մարդկանց այդ ծայր աստիճան նոսրացած խմբերը արևի կիզիչ ճառագայթների տակ ժայռոտ կիրճերով ու անանցանելի սարերով քշում էին հարյուրավոր մղոններ հեռու, դեպի կիսաարևադարձային ճահիճները՝ մահվան գիրկը։ Այստեղ էլ նրանք գտնում էին իրենց վախճանը՝ սպանվելով ու կողոպտվելով քրդերի ու ժանդարմների ձեռքով, գնդակահարվելով, կախաղան հանվելով, թունավորվելով, խեղդամահ արվելով, դաշունահարվելով, զոհվելով ծարավից ու ցրտից, հնձվելով համաճարակներից, ջրահեղձ արվելով, սառչելով, թողնվելով շնագայլերին ի կեր...

Երեխաները մեռնում էին արցունքն աչքերին, տղամարդիկ նետվում էին ժայռերից, մայրերն իրենց փոքրիկներին նետում էին ջրհորները, հղի կանայք երգելով նետվում էին Եփրատի ջրերի մեջ, նրանք մեռնում էին ամեն տեսակ երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով...

Ավերակ քարավանատներում տարաբախտները անօգնական ու անկարեկից պառկած էին կիսանեխած դիակների կողքին, սպասելով իրենց անխուսափելի մահվան, քանի որ ինչքա՞ն կարելի էր քարշ տալ խղճուկ գոյությունը, ցորենի հատիկներ փնտրելով ձիերի թրիքի մեջ կամ սնվելով խոտով։ Բայց այդ

ամենը սոսկ աննշան մասն է նրա, ինչ տեսել եմ ինքս, ինչ ինձ պատմել են ծանոթներս ու ճանապարհորդները, կամ ինչ ես լսել եմ հենց աքսորյալների շուրթերից...[63]

Armin T. Wegner. Offener Brief an den Präsidenten der Bereinigten Staten von Nord Amerika Herrn Woodrow Wilson... Berlin-Schöneberg, 1919, S. 2—4.

257. ՑՈՂԵՖ ՄԱՐԿՎԱՐՏԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻՆ ԲՆԱՋՆՋԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

...Նույնիսկ «Սահմանադրության» հռչակումից հետո օսմանյան քաղաքականության հիմնական կարգախոսը մնում էր «երբ չեն լինի հայերը, չի լինի նաև հայկական հարցը»։ Ադանայի ահավոր կոտորածը ցույց տվեց, որ երիտթուրքերը, որ այնքան տարօրինակ կերպով իրենց համար լիբերալների վարկ էին ստեղծել Եվրոպայի հասարակական կարծիքի ոլորտում, իրենց կամայական դաժանությամբ ոչնչով չէին զիջում մեծ մարդասպան Աբդուլ Համիդին։ 1910 թ. Սալոնիկում կայացած իր համագումարում «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ընդունել էր գաղտնի որոշում, որը հանգեցնում էր Օսմանյան կայսրությունում թուրքերի ազգային միասնության ստեղծմանը այլացեղ տարրերին, այսինքն քրիստոնյաներին դուրս մղելու միջոցով։ Բալկանյան պատերազմների շրջանում այդ ձգտումը խորացվում էր մեր համագերմանականների և գլխավոր շտաբի այն համակիրների հարաճուն աղմկոտ պահանջներով, որոնց կարծիքով Թուրքիան պետք է վերականգներ իր բանակի մարտունակությունը, նրանից հեռացնելով նախ և առաջ քրիստոնյաներին...

Օսմանյան կառավարությունը, անտարակույս, դեռ այն ժամանակ մոտալուտ համաշխարհային պատերազմը առավել նպաստավոր պահ էր համարում վաղուց ի վեր փայփայած ծրագրի վերջնական կենսագործման համար։ Ջիհադը՝ ի պատիվ ալլահի սպանությունն ու կողոպուտը, մեղմ անվանված «սրբազան պատերազմը», որը Թուրքիան հռչակեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ, առնվազն, հավանությամբ, այդ սրբազան պատերազմը, որի հետ այստեղ այնքան մեծ հույսեր էին կապում, ունեցավ այն մեն մի հետևանքը, որ թուրքերին օգնեց իրականացնելու սպանությունների իրենց ծրագրերը՝

կազմակերպելու Արևելքի քրիստոնյաների, գլխավորապես հայերի գրեթե լիակատար բնաջնջումը։

Այդ դիվային միջոցառումներն արդարացնելու համար, որ մուսուլմանները ձեռնարկեցին նվաճված ժողովրդի նկատմամբ, որի միակ մեղքն այն էր, որ չէր ցանկանում հրաժարվել իր ազգությունից ու իր նախնիների քրիստոնեական հավատից և մահմեդականություն ընդունել, գերմանական մամուլը զրպարտիչ հաղորդումների հեղեղ տեղաց գերմանացի քաղաքացու վրա, որոնք բխում էին մասամբ թուրքական աղբյուրներից, մասամբ էլ նույն այդ մամուլի հերյուրանքներն էին։ Հայերին պատկերում էին ամենամռայլ գույներով՝ իբրև առևտրականների ու հանցավոր վաշխառուների խառնամբոխի, այն դեպքում, երբ «պանծալի օսմանյան դաշնակիցները», ինչպես որ բալկանյան պատերազմների շրջանում, երկինք էին հասցվում իրենց թվացյալ արիության համար։ Իրականում դա սոսկ թմբկահարության նոր ալիք էր, որի աղմուկի ներքո փորձում էին խլացնել համիդյան ջարդերի զոհերի ճիչերը... Խժդժությունների և թուրքերի հանդեպ ստրկական հաճկատարության մեջ առաջնության դափնին, անշուշտ, պատկանում է «Դոյչե տագեսցայտունգի» տխրահռչակ Յոկային, որը հանդգնել էր ոչ միայն ներել ու հավանություն տալ հայերի բնաջնջմանը, այլև նույնիսկ աներկմտորեն արդարացնել դա։ Մինչև 1918 թ. հոկտեմբերը կառավարությունը խստագույնս արգելում էր ամեն տեսակ հայանպաստ հաղորդումները (գրքույկի կամ մամուլի հոդվածի ձևով), թուրքական հերյուրանքների որևէ ուղղում, այն ամենը, ինչ կարող էր բացել հասարակայնության աչքերը իսկական իրադարձությունների վրա։ Հայերի նկատմամբ կատարված գազանությունների մասին հազվադեպ թափանցող լուրերը ներկայացվում էին իբր մեր թշնամիների չարամիտ հերյուրանքները։ «Քյոլնիշե ցայտունգը»՝ գերմանական այդ «Մատենը» նույնիսկ լկտիություն էր ունեցել պարզապես ժխտելու դոկտ. Մարտին Նիպագեի՝ «Դիմում գերմանական ժողովրդի ներկայացուցիչներին» վերնագրով տպագրված հարուցյալ գրքույկի հեղինակի գոյությունը։

Զինվորական մամուլի ծառայությանն առընթեր գրաքննության բաժնի կողմից 1917 թ. սկզբներին հրատարակած գրաքննության գրքում այդ առթիվ հրահանգվող վարքագիծը ցարադրված էր հետևյալ բառերով.

«Հայերի նկատմամբ գործադրվող վայրագությունների մասին կարելի է ասել հետևյալը. այդ հարցերը, որոնք վերաբերում են ներքին վարչակազմին, ոչ միայն չպետք է սպառնալիքի տակ դնեն մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, այլև անհրաժեշտ է, որ այս ծանր պահին մենք ձեռնասահմանք անգամ դրանց քննարկումից։ Ուստի մեր պարտականությունն է լռություն պահպանել։ Հետագայում, եթե արտասահմանը Գերմանիային ուղղակի մեղադրի հանցակցության մեջ, հարկ կլինի քննարկել այդ հարցը, բայց մեծագույն զգուշավորությամբ ու զսպվածությամբ, ամբողջ ժամանակ հայտարարելով, որ թուրքերը վտանգավոր կերպով հրահրվել էին հայերի կողմից (sic!)։ Ամենից լավ է լռություն պահպանել հայկական հարցում...»։

Գերմանական կառավարությունը գերմանական մամուլին թույլ էր տալիս տպագրել հայերի համար աննպաստ ամեն տեսակ ասեկոսներ ու ամեն կարգի հերյուրանքներ. նա սիստեմատիկաբար լռություն էր մատնում այն բոլոր հաղորդումները, որ հայերի օգտին էին, ինչպես նաև հրապարակային հաղորդումներն այն մասին, ինչ իրականում տեղի էր ունենում Հայաստանում...

Ի դեպ, պակաս ծանր չէ այն պատասխանատվությունը, որն ընկնում է ռայխստագի վրա։ Գրքույկներից ու բանավոր հաղորդումներից ամեն ինչի մասին ստույգ հայտնի էր ռայխստագին։ Նա ցանկացած պահին կարող էր լրացուցիչ բացատրություններ պահանջել կառավարությունից։ Չնայած դրան, չհաշված երեք անկախականների՝ Լիբկնեխտի, Լեդեբուրի և Հաազեի ելույթներին, նա համառորեն լռություն էր պահպանում։ Պակաս չափով պատասխանատու չէ մեծ մամուլը, քանի որ իմանալով ողջ ճշմարտությունը, նա չհրաժարվեց թուրքական աղբյուրներից ընդունել ստահոդ հաղորդումներն ու զրպարտանքը։ Բայց ամենածանր պատասխանատվությունն ընկնում է գլխավոր շտաբի վրա...[69]

Professor Dr. Marquart. Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation. Berlin, 1919, S. 45—48, 53.

258. ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԲԵՌԼԻՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅՈ. ԼԵՓՍԻՈՒՍԻ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ[70]

Համընդհանուր տեղահանության որոշումը կայացրել էր երիտթուրքական կոմիտեն, այդ հրամանը տվել էր ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան (ռազմական մինիստր Էնվեր փաշայի հետ համատեղ)։ Հայերի բռնագաղթն իրականացվեց երիտթուրքերի հատուկ կազմակերպության միջոցով...

Անատոլիայի ողջ հայ բնակչությունը, ի վերուստ ստացված հրամանի համաձայն, աքսորվեց Միջագետքի անապատի հյուսիսային և արևելյան շրջաններ՝ Դեյր Զոր, Ռաքքա, Մեսքենե, Ռաս ալ-Այն, ընդհուպ մինչև Մոսուլ։ Տեղահանվեցին մոտավորապես 1 400 000 հայեր։

Ի՞նչ էր նշանակում այդ տեղահանությունը։

Թալեաթ փաշայի ստորագրած հրամանում կան այսպիսի բառեր. «Տեղահանությունը՝ բնաջնջում է»։

Ամեն ինչ կատարվում էր այդ հրամանի համաձայն։ Արևելյան Անատոլիայի վիլայեթներից տեղահանված ողջ բնակչության սոսկ 10 տոկոսը հասավ աքսորավայրեր։ Մնացած 90 տոկոսը կոտորվեցին աքսորի ճանապարհին. ժանդարմների վաճառած կամ քրդերի առևանգած կանանցից ու աղջիկներից բացի, մնացած բոլորը մահացան սովից ու հյուծվածությունից։

Իսկ Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից և Հյուսիսային Միջագետքից անապատ աքսորված հայերին հավաքել էին համակենտրոնացման ճամբարներում, որտեղ աստիճանաբար մեծ թվով մարդիկ կուտակվեցին։ Հետագայում նրանք բոլորը ոչնչացվեցին սիստեմատիկ սովի և պարբերական ջարդերի հետևանքով։ Երբ ճամբարները լցվում էին աքսորյալների նոր խմբերով և մարդկանց համար այլևս տեղ չէր մնում, նրանց մեծ խմբերով քշում էին անապատ և այնտեղ սպանում։ Թուրքերը հայտարարում էին, թե իրենք համակենտրոնացման ճամբարների գաղափարին են հանգել անգլիացիների օրինակով, որոնք նույն կերպ էին վարվում Հարավային Աֆրիկայի բուրերի հետ։

Պաշտոնապես հայտարարվում էր, թե այդ տեղահանությունները լոկ նախազգուշական միջոցառումներ են, բայց առանձին հեղինակավոր անձինք միանգամայն բացեիբաց խոստովանում էին, որ աքսորի նպատակը հայ ազգի բնաջնջումն է։

Ասածս բխում է նաև Գերմանիայի կայսերական դեսպանության և արտաքին գործերի մինիստրության այն փաստաթղթերից, որոնք ես արդեն հրատարակել եմ, հատկապես Կ. Պոլսում գերմանական դեսպանների ու հյուպատոսների զեկուցագրերից...

Հարց է առաջանում, թե ինչպե՞ս հաջողվեց այդքան կարճ ժամանակամիջոցում բնաջնջել մեկ միլիոն մարդ։ Դա հնարավոր եղավ ամենաբարբարոս մեթոդների շնորհիվ, ինչն ապացուցված է նաև Ստամբուլի զինվորական ատյանի նյութերով, որը դատել էր Թալեաթ փաշային և նրա զինակիցներին...

Der Prozess Talaat Pascha. Stenographischer Prozessbericht mit einem Vorwort Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921, S. 56—57.

259. Դ. ԼԼՈՅԴ ՋՈՐՋԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում Աբդուլ Համիդը և երիտթուրքերը գիտակցաբար գոհեհկացնում էին բոլոր դժվարությունները, բնաջնջելով ու քշելով մի ժողովրդի, որին նրանք դավաճանների ու անհավատների ժողովուրդ էին համարում։ Այդ վայրենի հաշվեհարդարում նրանք իսկապես «առաջադիմեցին»։ Ասես մրրկասյուն անցավ Հայաստանի հարթավայրերով։ Փրկվածների կարելի էր փնտրել միայն անհասանելի լեռներում, այստեղ էին հալածական փախստականները դաժան ու անհուսալի ապաստան գտնում թուրքական բարբարոսությունից։ Շատերը փախչում էին Սիրիա։ Թեև սիրիացի արաբները գտնվում էին թուրքերի տիրապետության ներքո և ուղղահավատ մահմեդականներ էին, այդուհանդերձ նրանք մարդասպաններ չէին և չէին ցանկանում մասնակցել անպաշտպան անհավատների բնաջնջմանը, որոնք վրստահել էին նրանց մարդկայնությանը, որ ուսուցանում էր մարգարեն։

Աշխարհամարտի ժամանակ Փոքր Ասիայի հույները էլ սաստիկ տուժեցին թուրքերի դաժանություններից։ Հարյուր հազարավոր հույներ սառնասրտորեն սրի քաշվեցին պատերազմի տարիներին, և էլ ավելի շատերը քշվեցին հայրենի վայրերից։ Նրանք ապաստան էին գտնում Հունաստանում ու հունական

կղզիներում։ Մի խոսքով, թուրքերը անընդհատ ու բարբարոսական խորամանկություններով փոփոխում էին վիճակագրական տվյալները իրենց օգտին։

Дэвид Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 199—200.

260. Դ. ԼԼՈՅԴ ՋՈՐՋԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սան Ստեֆանոյի հաշտությամբ ռուսական զորքերը պետք է օկուպացնեին Հայաստանը, մինչև որ իրականացվեին անհրաժեշտ բարենորոգումները։ Այդ որոշումը չեղյալ հայտարարվեց Բեռլինի 1878 թվականի պայմանագրով, որը մեր սպառնալից ճնշման արդյունքն էր և մեր կողմից հռչակվում էր իբրև Անգլիայի մեծագույն հաղթանակ, որը «պարտավոր հաշտություն» բերեց։ Հայաստանը զոհաբերվեց մեր կերտած հաղթական զոհասեղանին։ Ռուսները հարկադրված էին հեռանալ. տարաբախտ հայերը նորից ճզմվեցին իրենց կեղեքիչների կրնկով, որոնք պարտավորվել էին «բարելավումներ ու բարենորոգումներ անցկացնել հայաբնակ նահանգներում»։ Բոլորիս հայտնի է, թե այդ պարտավորությունները ինչպես էին խախտվում քառասուն տարի շարունակ, չնայած այն երկրի բազմաթիվ բողոքներին, որը Հայաստանը թուրքերի տիրապետության տակ վերադարձնելու գլխավոր մեղավորն էր։ Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թվականների ահավոր սպանդներին և 1915 թվականի զարհուրելի եղեռնին։ Անգամ թուրքական բռնապետության պատմության մեջ այդ անօրինակ չարագործությունների հետևանքով Թուրքիայում հայ բնակչության թիվը կրճատվեց ավելի քան մեկ միլիոնով։

Дэвид Ллойд Джордж. Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 390.

261. ՉԵՐՉԻԼԸ ՀԱՅԵՐԻ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

1915 թ. թուրքական կառավարությունը սկսեց Փոքր Ասիայում ապրող հայերի նկատմամբ անխնա զանգվածային կոտորածի ու տեղահանությունների քաղաքականություն վարել։ 300

կամ 400 հազար տղամարդիկ, կանայք ու երեխաներ փախան ռուսական տարածք, մասամբ էլ Պարսկաստան ու Միջագետք։ Բայց Փոքր Ասիան այնպես հիմնավորապես մաքրվեց հայ տարրից, որքան որ հնարավոր էր դրան հասնել նմանօրինակ միջոցներով, որոնք իրագործվում էին ամենալայն ընդգրկումով։ Մոտավոր հաշվումներով, այդ բռնացումներին ենթարկվեցին 1 1/4 միլիոն հայեր, որոնց կեսից ավելին զոհվեց։ Ոչ մի կասկած չկա, որ այդ ոճրագործությունը մտահղացվել ու իրականացվել էր քաղաքական շարժառիթներով...

У. Черчиль. Мировой кризис. М.—Л., 1932, с. 27.

262. Մ. ԳՈՐԿՈՒ ԱՍՈՒՑԹՆԵՐԻՑ

...Հիշողության մեջ հառնում են Հայաստանի 19-րդ դարի վերջի—20-րդ դարի սկզբի ողբերգական պատմությունը, Կոստանդնուպոլսի, Սասունի կոտորածները, «մեծ մարդասպանը», «բարեկիրթ» Եվրոպայի քրիստոնյաների նողկալի անտարբերությունը, որով նրանք վերաբերվեցին իրենց «քրիստոնյա եղբայրների» բնաջնջմանը, միապետական կառավարության կողմից Հայաստանի եկեղեցական կայքի կողոպտման ամենախայտառակ քայլը, վերջին տարիների թուրքական արշավանքների սարսափները. դժվար է վերհիշել այդ եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգությունները։

Այդ կարգի փաստերը զարմանալիորեն արագ ու ճարպկորեն են մոռանում պարոնայք «մարդասերները», իդեալիստները, այդ «քաղաքակրթության» պաշտպանները, որը հիմնված է ագահության, նախանձի, ստրկության վրա և ժողովրդական զանգվածների լկտի բնաջնջման վրա։ Այդ «քաղաքակրթության» մինչև ականջները արյան ու կեղտի մեջ խրված պաշտպանների կեղծիքն ու երկերեսանիությունը հասնում են ակնհայտ խելահեղության, այնպիսի ոճրագործության, որի համար արժանի պատիժ չկա[71]։

«Наши достижения», М., 1929, № 1, с. 81.

268. ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

...Երիտթուրքերի ծրագիրն էր ստեղծել ինչ-որ «Մեծ Թուրքիա»՝ Թրքախոս ու բացառապես թրքական վարչակազմով. անգամ արաբներն էին հեռացված լինելու հասարակական գործերից։ Ինչ վերաբերում է քրիստոնյաներին, հատկապես հայերին, ապա պետք էր նրանց ստիպել մեկընդմիշտ լռել...

Հայերին հալածելու երիտթուրքերի և հին թուրքերի քաղաքականության մեջ եղած միակ տարբերությունն այն էր, որ առաջինները հետևում էին լավ կանխամտածված ծրագրի և այդ պատճառով էլ շատ ավելի վտանգավոր էին։ Երիտթուրքական կուսակցության շատ պարագլուխներ կրթություն էին ստացել Պրուսիայում, որտեղ ուսումնասիրել էին բնաջնջման մեթոդը։ Այդ շրջանի բազմաթիվ փաստաթղթեր հաստատում են, որ դեռ նախքան համաշխարհային պատերազմը թուրքական կառավարությունը որոշում էր կայացրել թուլացնել ու «նոսրացնել» Հայաստանի քրիստոնյա բնակչությունը՝ այն օտար տարրերով բնակեցնելու միջոցով...

Երիտթուրքական պարագլուխները ծրագրել էին ամբողջովին բնաջնջել այդ կամակոր «խառնամբոխին»։ 1915 թվականի փետրվարի 18-ի թվակիր նամակում, որը «պատասխանատու իշխանությունների հրամանով» գրել էր երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներից մեկը և հասցեագրված էր պատերազմի տարիներին Սիրիայի բռնապետ Ջեմալ բեյին, իրոք հայտարարվում էր, որ կոմիտեն որոշել է թուրքական հայրենիքը մաքրել «այդ անիծյալ ազգից, հայրենասիրական մղումներով իր վրա վերցնելով պատասխանատվությունը այն խայտառակության համար, որը սև բիծ կնետի օսմանյան պատմության վրա։ Կոմիտեն... որոշեց կոտորել Թուրքիայում ապրող բոլոր հայերին, չխնայելով ոչ մի հոգու, և անսահմանափակ լիազորություններ ընձեռեց կառավարությանը, որը նահանգապետերին ու բանակային հրամանատարներին անհրաժեշտ կարգադրություններ կանի կոտորածը կազմակերպելու համար»։

Այդ ծրագրի իրագործումը նախապատրաստվեց մեթոդական։ Բանտերից արձակված ավազակների և համանման այլ տարրերի թվից երիտթուրքերը հավաքագրեցին կամավորներ՝ հրոսակախմբեր (որոնք «չեթեներ» անվամբ տխրահռչակ համբավ վաստակեցին), դեռևս բանակ չզորակոչված բոլոր մուսուլման տղամարդիկ միլիցիա կազմեցին և զենք ստացան, այն դեպքում, երբ քրիստոնյաները մնում էին անզեն։

Եվ այսպես, 1915 թվականի հունիսին սկսվեցին այդ սարսափները, որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ։

Քրիստոնյաներին զանգվածաբար վտարում էին Կիլիկիայի, Անատոլիայի և Միջագետքի բոլոր գյուղերից, նրանց քշելով դեպի անխուսափելի կործանում։ Դա մեթոդիկ զտում էր գավառակ առ գավառակ, չնայած, որ դրանք հեռու էին ընկած պատերազմական գործողությունների թատերաբեմից։ Թուրքերը որոշել էին օգտվել առիթից, որպեսզի մեկընդմիշտ վերջ տան այն ամենին, ինչ հայկական էր. տղամարդկանց մեծամասնությունն արդեն զորակոչված էր բանակ, մնում էին միայն ծերունիները, կանայք, երեխաներն ու տկարները, որոնք էլ տեղահանվեցին։ Այդ դժբախտ մարդկանց մեծամասնությունը նախազգուշացվել էր մեկնումից ընդամենը մի քանի ժամ առաջ։ Նրանք պետք է թողնեին այն ամենը, ինչ ունեին՝ հողը, անասունները, բերքը, շարժական գույքը և այլն։ Այդ բոլորը զավթվեց թուրքական իշխանությունների կողմից։ Դրամը, թանկարժեք իրերը կամ տոկոսաբեր թղթերը, որ առանձին անձանց հաջողվել էր վերցնել հետները, հետագայում խլվում էին ժանդարմների կողմից. և անգամ նրանք, ում թույլ էին տալիս սայլակներ կամ գրաստ վերցնել, ստիպված էին լինում դրանք նետել ճանապարհին։

Դժբախտներին հսկայական շարասյուներով լեռներով քշում էին դեպի Արաբիայի անապատները։ Չէր կազմակերպված նրանց մատակարարումը. ճանապարհին նրանք ստանում էին միայն ամենաանհրաժեշտ բաները կյանքը պահպանելու համար, քանի որ ոճրագործների ծրագրերի մեջ մտնում էր սովամահ անել նրանց, ովքեր չէին սպանվել կամ դեռևս չէին մահացել հյուծվածությունից։

Հենց որ մարդկային էակների այդ ամբոխները ճանապարհներով ընթանալիս մնում էին ամեն տեսակ հսկողությունից դուրս, ժանդարմների անտարբերությունը անմիջապես տեղը զիջում էր աննկարագրելի դաժանությանը։ Բոլոր մնացած տղամարդիկ ու երիտասարդները ժողովվում էին առանձին, մի կողմ տարվում ու սրի քաշվում։ Կանանց, երեխաներին ու ծերունիներին քշում էին առաջ. անասելի տառապանքներ կրելով, նրանք մեռնում էին սովից ու ծարավից։ Նրանց, ովքեր այլևս

չէին կարողանում քայլել, մտրակի հարվածներով քշում էին այնքան, մինչև որ դժբախտները ընկնում էին, այդժամ վերջ էին տալիս նրանց կյանքին...

Բազմաթիվ փաստաթղթեր ոչ միայն ցույց են տալիս դահիճների անմարդկայնությունը, այլև լիուլի ապացուցում, որ ամեն ինչ արվել էր երիտթուրքերի պարագլուխների ու նրանց կոմիտեի մանրակրկիտ նախապատրաստած ծրագրին համապատասխան։ Այն երկչոտությունը, որով նրանք հետագայում ժխտում էին իրենց իսկ կատարած, իրենց կամքով՝ ու հրամաններով իրագործված գազանությունները, նրանց լավագույն կողմով չի դրսևորում...

1915 թվականի օգոստոսի 31-ին Թալեաթ բեյը գերմանացի դիվանագետներին հայտարարեց, թե «հայկական հարց այլևս գոյություն չունի»։ Նա իրավացի էր, քանի որ այդ ժամանակ տեղահանությունն ավարտված էր։ Մնում էր միայն ազատվել հազվադեպ զոհերից, որոնք հրաշքով էին փրկվել մահվան ճամփաներով քայլելիս։ Նրանց հավաքեցին համակենտրոնացման հսկայական ճամբարներում, թողնելով գրեթե առանց սննդի ու գոյության որևէ միջոցի։

1916 թ. հունվարին Այնթապից 5—6 հազար հայեր քշվեցին անապատ. ապրիլին 14 հազար աքսորյալներ սրի քաշվեցին Ռաս ուլ-Այնում։ Կայմակամի հրամանով ամեն օր 300—500 մարդուց բաղկացած խմբեր էին տարվում քաղաքից 10 կիլոմետր հեռավորության վրա՝ գետի ափը, որտեղ վարձկանների հրոսակախմբերը սպանում էին նրանց, իսկ մարմինները նետում ջուրը։

Հալեպից հարավ՝ Մեսքենեի ճամբարում, որը Եփրատի ափին է, իրենց իսկ՝ թուրքերի վկայությամբ, թաղվել էին սովամահ եղած 55 հազար հայեր։

Հենց միայն 1915 թվականին 60 հազար հայեր աքսորվեցին Դեյր Զոր՝ Եփրատի ափին, և նրանք գրեթե բոլորն էլ վերացան։ 1916 թվականի ապրիլի 15-ին չորս շարասյունով Մոսուլ ուղարկվեցին 19 հազար հայեր, որոնք պետք է 300 կմ կտրեին անցնեին անապատով։ Մայիսի 22-ին այնտեղ հասավ ընդամենը 2500 մարդ։ Ճանապարհին կանանց ու երիտասարդ աղջիկների մի մասը վաճառվեց բեդվիններին, մնացածները մահացան սովից ու ծարավից։ 1916 թ. հուլիսին Դեյր Զորում կային 20 հազար աքսորյալներ. ուշ ամիս անց մի գերմանացի սպա

այնտեղ տեսել էր ընդամենը մի քանի հարյուր արհեստավորներ։ Մյուսներից հետք անգամ չէր մնացել։ Մարդկանց մեծ մասը սովամահ էր եղել։ Մի ականատես պատմում էր, որ Բաբում իր անցկացրած երկուսուկես օրվա ընթացքում սովից 1029 հայ էր մահացել։

Սովի ու հոգեվարքի այդ տեսարանների մեջ հասած նկարագրությունները իսկական մղձավանջի տպավորություն են ստեղծում։ Դժբախտ սովերները, որոնք երևի մի ժամանակ բարեկիրթ տղամարդիկ ու կանայք էին եղել, վիճում էին սննդի խշճուկ թերմացքների համար, իսկ նրանց վերակացուները, նրանց տառապանքներին անհաղորդ, նայում էին, թե նրանք ինչպես են մեռնում։ Դա դժոխք էր։ Իսկ թուրքական իշխանություններն ամեն բան արել էին, որ խանգարեն նրանց, ովքեր փորձում էին օգնել այդ տարաբախտ մարդկանց...

Հայերի թշնամիները ապացույցներ են փնտրում նրանց նվաստացնելու այն բանի համար, որ լինելով այդքան բազմաթիվ, նրանք առանց դիմադրության թույլ տվեցին, որ իրենց քշեն սպանդի, թեև այդ կշտամբանքը հակասում է թուրքերի մեղադրանքին, որոնք ցանկանում են իրենց զոհերին ներկայացնել իբրև վտանգավոր խռովարարների։

Նրանք [հայերը] ինչպե՞ս կարող էին պաշտպանել ընդդեմ զինված ժանդարմների, զինվորների ու «կամավորների» բազմաթիվ հրոսակախմբերի, եթե աշխատունակ տղամարդկանց մեծամասնությունն արդեն հավաքագրված էր զինվորական ծառայություն կրելու, իսկ ամբողջ բնակչությունը սիստեմատիկաբար զինաթափվում էր։

Սակայն ամենուրեք, որտեղ դա հնարավոր էր, հայերն արիաբար դիմադրում էին, երբեմն որոշակի հաջողությամբ, ինչպես դա եղավ Վանում և Կիլիկիայի լեռներում՝ Սուեդիայի մոտ։ Ուրֆայում հայերը զոհվեցին հուսահատ պայքարից հետո։ Ասենք, այն ժողովուրդը, որը կարողանում է մարտնչել հանուն գործի, որը արդար է համարում...., կարող է արհամարհանքով վերաբերվել երկչոտության բոլոր մեղադրանքներին...

Այդ գազանությունները իրենց չափերով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են պատմության մեջ հայտնի բոլոր [վայրագությունները]... Այն նամակը, որից մենք վերը մեջբերում կատարեցինք, ապացուցում է, որ երիտթուրքերի ղեկավար կոմիտեն պատրաստ էր իր վրա վերցնել ամբողջ պատաս-

խանատվությունը հայ ժողովրդին բնաջնջելու... և «այն խայտառակության համար, որը սև բիծ կնետի օսմանյան պատմության վրա»։ Գերմանիայի դեսպանի ներկայացուցիչներին Էնվեր փաշան պատասխանել էր, որ լիովին իր վրա է վերցնում պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ կատարվել է Անատոլիայում։ Այդպիսով, նա և կառավարության մյուս անդամներն են իրենց վրա կրում ամբողջ խայտառակությունն այն բանի համար, որ Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ այնպիսի մի ահավոր գլուխ, որը ստվերի տակ է թողնում բոլոր նախորդները։ Աբդուլ Համիդի ջարդերը դատարկ բաներ են թվում «ժամանակակից Թուրքերի» իրականացրած նախճիրի համեմատությամբ[72]։

Fridtjof Nansen. L'Arménie et le Proche Orient. Paris, 1928, p. 330—333, 339—344, 356—357.

201. Ե. Վ. ՏԱՌԼԵՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՀԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[73]

Գնահատ է նշել, որ Թուրքական կառավարությունը հենց այդ տարիներին [1914—1917 թթ.] արտաքին պատերազմի հետ միաժամանակ վիթխարի մասշտաբով ձեռնարկեց հայ ժողովրդին բնաջնջելու գործը, որպեսզի վերջնականապես և առհավետ իրեն պաշտպանի Կովկասից եկող վտանգից և ռուսական հավակնություններից։ Այն, ինչ այդ առնչությամբ տեղի ունեցավ Թուրքիայում, համաշխարհային պատմության մեջ միանգամայն բացառիկ բան է (իր չափերով) Չինգիզ խանի ժամանակներից ի վեր։

1914 թ. սեպտեմբերին հայկական բոլոր վիլայեթներում անխնա ու բծախնդիր կերպով անցկացված զորահավաքը ուժասպառ արեց հայ բնակչությանը. մնացին կանայք, երեխաները և զառամյալ ծերունիները։ 1915 թվականի հունվարի առաջին օրերին Սարիղամիշում Թուրքերի պարտությունից հետո ռուսները, հետ շպրտելով Թուրքական բանակը, գրավեցին Թավրիզը։ Նախատեսվում էր պատերազմ Թուրքական սահմաններում։ Եվ այդժամ մեծ վեզիր Թալեաթ փաշան[74] ու ռազմական մինիստր Էնվեր փաշան որոշեցին ի կատար ածել հայ ժողովրդին ֆիզիկապես բնաջնջելու ընդարձակ ծրագիրը։ Ձեռնարկումը տեսա-

կանորեն համարձակ էր, բայց գործնականորեն պատերազմի ժամանակ միանգամայն իրագործելի։ Համենայն դեպս այդպես էր թվում երիտթուրքական կառավարությանը։ «Հայկական հարց այլևս գոյություն չունի, քանի որ այլևս հայեր չկան»,— հեգնորեն հայտարարեց Թալեաթ փաշան 1916 թվականին։ Թալեաթ փաշան պահը հարմար համարեց այդ կերպ կատակել այն բանից հետո, ինչ 1915—1916 թթ. տեղի ունեցավ Հայաստանում։ Եվրոպան միայն սըր Էդուարդ Գրեյին Բրայսի ներկայացրած զեկուցագրից իմացավ (մասամբ) եղելությունը։ Ճիշտ է, այն ժամանակ Եվրոպան հայերով զբաղվելու ժամանակ չուներ։ Բայց և այնպես զարհուրելի այնպիսի սարսափ էր փչում դրանից, որ Թալեաթ փաշան այլևս չէր կատակում, այլ աճապարանքով անցավ հերթական հարցերին, արդեն խուսափելով շոշափել հայկական խնդիրը։ Ահա թե մի քանի խոսքով ինչպես է պատկերվում ամբողջ ձեռնարկման ընթացքը։

Ցանկալի էր համարված հայերին կոտորել ըստ հնարավորին մինչև վերջին մարդը։ Ինչպես ասվեց, զորահավաքից (և զորակոչվածներին ռազմաճակատի ամենավտանգավոր վայրեր քշելուց) հետո մնաց թույլ բնակչությունը, որից չէր կարելի նվազագույն իսկ հակահարված սպասել։ 1915 թվականի փետրվարին՝ ձմռան մի գիշեր սպաներ ու ենթասպաներ ցրվեցին հայկական թաղամասերը, լուսամուտներն ուժգին բախելով արթնացնում էին քնածներին և պահանջում հանձնել ունեցած ամբողջ զենքը։ Բայց, Վանի շրջանի գյուղերից բացի, որտեղ արդեն այդ նախնական փուլում զենքը հանձնողներին տեղնուտեղը սպանում էին կանանց ու երեխաների հետ, մյուս վայրերում դեռևս սպանություններ տեղի չէին ունենում։ Անգամ բուն Վան քաղաքում նույնպես դեռևս սպանություններ չեղան։ Բայց 1915 թվականի ապրիլի 20-ին միանգամայն առանց որևէ հրահրման (բնաջնջման ծրագիրը, և դա չէին ժխտում նաև Թուրքերը, մանրամասնորեն մշակվել էր Կոստանդնուպոլսում) նահանգապետ Ջևդեթ փաշան կոտորածի ազդանշան տվեց Վան քաղաքում... Վանի սկզբում և Վանում ռուսական մասնակի հարձակումը հասցրեց ոմանց փրկել։ Բայց այն կանգնեցվեց, և ջարդերը թևակոխեցին սուր փուլ։ Այսպես էր արվում։ Մոնեոտիկը թմբկահարի հետ հայտնվում էր տվյալ քաղաքում կամ գյուղում և ազդարարում հրամանը՝ ողջ արական բնակչությանը անհապաղ մահվան ապառնալիքի ներքո ներկայանալ այսինչ

տեղը։ Հայերը... աճապարում էին կատարել հրամանը։ Հավաքվածներին տեղնուտեղը ձերբակալում էին և 2—3 օր անց նրանց բոլորին հեռացնում էին քաղաքից։ Քշելով առավել հարմար ամայի տեղ (անտառակ, քարհանք, ձոր), նրանց կոտորում էին մինչև վերջին մարդը։ Թուրքերն առանձնապես անխնա էին 1915 թվականին. արդեն 1916 թվականին, թեև հազվադեպ, բայց լինում էին դեպքեր, երբ ինչ-ինչ պատճառներով ամեն մի այդպիսի խմբից մի քանի մարդ փրկվում էր։ Հետաքրքրական է, թե ռազմաճակատում ինչպես էին Հայաստանում տեղի ունեցողի մասին իմացել սպաներն ու զինվորները, իսկ նրանցից էլ Թուրքիայի դաշնակից տերությունների զինվորական կցորդները. զորակոչված և առաջավոր գծերում խրամատների ամրացման վրա աշխատող հայերին հանկարծ (1915 թվականի գարնանն ու ամռանը) սկսեցին ամբողջական խմբերով փոխադրել Թիկունք և այնտեղ էլ գնդակահարել՝ առանց նախազգուշացման ու բացատրության։ Հայերի ջարդը վերջնական աստիճանում ղեկավարում էր Թալեաթ փաշան, բայց զինվորական իշխանությանը ենթակա օկրուգներում՝ Էնվեր փաշան։ Առավել լիովին բնաջնջվեցին զինվորական իշխանությանը ենթակա օկրուգներն ու քաղաքները՝ Բիթլիսը, Մուշն ու Սասունը։ Այդ քաղաքների ու օկրուգների հայերը թողնվել էին քրդական գումարտակներին։ Ուրիշ վայրերում կանայք ու երեխաները չէին կոտորվում այնպես սիստեմատիկաբար, ինչպես տղամարդիկ։ Տղամարդկանց տանջելուց ու սպանելուց հետո հայերի կանանց ու երեխաներին հրամայվում էր ճամփի պատրաստություն տեսնել (նույնպես հատուկ մունետիկների միջոցով)։ Նախապատրաստվելու համար տրվում էր մի քանի օր։ Կանանց պաշտոնապես առաջարկվել էր աքսորից փրկվել անհապաղ մահմեդականություն ընդունելով և ամուսնանալով մահմեդականի հետ։ Եթե այդ անհապաղ ամուսնությունն անհնար էր, ապա մահմեդականություն ընդունելն ինքնին կնոջը չէր փրկում աքսորվելուց։ Գավառների մեծ մասում արգելված էր կահույքը վաճառել, քանի որ դատարկվող տներում տեղավորում էին Թուրքերին։ Աքսորի վայրը երբեք նախօրոք չէր հայտարարվում։ Նրանց քշում էին ոտքով, իսկ նրանց սովորաբար ուղեկցում էր հեծյալ պահակախումբը։ Երբեմն աքսորվողների համար, ով փող ուներ, հայտնվում էին եզներ լծված սայլեր. բայց այդ դեպքում գրեթե առանց բացառության կրկնվում էր միևնույն բանը.

սայլի տերը, որը լցված գումարներ էր վերցրել հարուստից, երկու-երեք լեռնանցք անցնելուց հետո նրան լքում էր իր ունեցածչունեցածով և հետ դառնում քաղաք։ Զինվորական իշխանությունները լիովին հավանություն էին տալիս այդ արարմունքներին։

Այդ ուղին,— կարդում ենք «կոմս Գրեյին լորդ Բրայսի ներկայացրած փաստաթղթերում»,— շատ դժվարին կլիներ նույնիսկ զինվորների համար, իսկ կանանց համար, որոնցից շատերը մեծացել էին ունևորության մեջ և նույնիսկ հարմարավետ պայմաններում, քարքարոտ կամ ավազոտ արահետներով, որոնք հաճախ կտրուկ բարձրանում էին լեռն ի վեր, կիզիչ տապի ներքո ոտքով գնալը միանգամայն անտանելի էր։ Զինվորները նրանց ծեծում էին անխնա, եթե նրանք հոգնած պառկում էին գետնին, որ հանգստանան։ Կային նաև հղի կանայք. «Նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց»,— գրում է լորդ Բրայսը։ Բայց այդ ստոռապալից ճանապարհին զոհվեց նաև աքսորվող ոչ հղի կանանց մի ահռելի զանգված. «Նրանք մեռնում էին սովից, ծարավից, արևի հարվածից, կաթվածահարությունից, իսպառ հյուծվելուց»։ Հենց դա էլ վերջնական նպատակն էր, որ լավ մտցվել էր ուղեկցող պահակների գլուխը՝ այս կամ այն կերպ նրանց վերջ տալ ճանապարհին։ «Կառավարությունը գիտեր, թե ինչ էր նշանակում այդպիսի ճամփորդությունը, և կառավարության կամակատարները, որ նրանց տանում էին, ինչ-որ կարող էին, ամեն ինչ արեցին, որ ավելի ծանրացնեն նրանց անխուսափելի ֆիզիկական տանջանքները»։ Բայց դա էլ դեռ ամենը չէր. ճանապարհին մուսուլմանական գյուղերի գյուղացիները հարձակվում էին նրանց վրա ու անխնա ծեծում փայտերով. պահակախումբը բնավ չէր խոչընդոտում։ «Երբ նրանք հասնում էին որևէ գյուղ, նրանց ի ցույց էին դնում հրապարակում իբրև ստրկուհիների և առաջարկում՝ թե ում համար ցանկալի է, կարող է նրանց վերցնել իր հարեմի մեջ»։ Ամենից վատթարը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ ոտք դրեցին քրդական լեռները։ Այդտեղ ծերունիներն ու երեխաները պարզապես կոտորվեցին քրդերի կողմից (պահակախմբի աչքի առաջ, որն, ի դեպ, մասնակցեց ջարդերին), իսկ կանայք բաժանվեցին նրանց միջև... Խմբերը գնալով թվապես նվազում ու նվազում էին. և այստեղ պահակախումբն սկսեց անհամբերություն դրսևորել. ցանկալի էր ըստ հնարավորին շուտ ազատվել ծանր ճանապարհից և այդ ամբողջ հոդ-

սաղատ հանձնարարությունից։ Այդժամ պահակախումբը սկսեց անմիջականորեն սպանել ողջ մնացածներին։ Նախ սպանեցին հետ մնացող ծերունիներին ու հիվանդներին, իսկ ապա նաև առհասարակ բոլորին, օգտվելով հարմար առիթից։ «Գետեր, հատկապես Եփրատն անցնելը միշտ էլ առիթ էր հանդիսանում զանգվածային սպանությունների համար։ Կանանց ու երեխաներին նետում էին գետը և կրակում նրանց վրա, երբ նրանք փորձում էին փրկվել»։ Շատ քչերն էին ինչ-որ հրաշքով հասնում նշանակման վայր և ստորագրությամբ հանձնվում իշխանություններին։

Միահամուռ գնահատմամբ (որին բնավ չէին հակառակում նաև թուրքական իշխանությունները, քանի դեռ նրանց թվում էր, թե ռազմական գործերը լավ են ընթանում և հաղթողներին չեն դատում), այդ բոլոր ջանքերի արդյունքը եղավ նոր ժամանակների համաշխարհային պատմության մեջ հիրավի աննախադեպ՝ ժողովրդի երկու երրորդի պլանաչափ ու հաջողությամբ իրագործված գիտակցված բնաջնջումը։ Էրզրումում 20 000 հայերից մնաց հարյուր մարդուց էլ պակաս. Էրզրումի, Բիթլիսի և Վանի նահանգներում, որտեղ 580 հազար հայ էր ապրում, փրկվեց 12 000 մարդ (American Relief Committee-ի տվյալներով, 1916 թ. ապրիլի 5-ի տեղեկագիր)։ Լորդ Բրայսի նախագահությամբ աշխատած կոմիտեի հաշվումներով, առավել հավաստի են հետևյալ թվերը, որոնք բնութագրում են Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի ջանքերի ընդհանուր արդյունքը։

Մինչև 1915 թվականի ջարդերն սկսվելը Թուրքիայում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2 100 000 մարդ (թիվը նշված է հայկական պատրիարքարանի կողմից)։ Լորդ Բրայսը դիտամամբ է վերցնում նվազագույն թիվը՝ 1 600 000 մարդ, որպեսզի դրանով առավել անկասելիորեն ընդգծի տեղի ունեցածի իմաստը, և համառորեն ավելացնում է, որ ճիշտ է համարում ոչ թե այդ թիվը, այլ այն, որը մոտ է 2 միլիոնին։ Եվ այսպես, ընդունենք նույնիսկ 1 600 000։ Նրանցից ռուսական Կովկաս էր հասցրել փախչել 182 000 մարդ, անգլիական Եգիպտոս՝ 4200 մարդ. համեմատաբար քիչ էր տուժել Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայ բնակչությունը. վերջապես, իսլամ ընդունելով և թուրքական հարեմներն ընկնելով փրկվել էին որոշ հայ կանայք։ Բրայսի կոմիտեի հաշվումներով, Կոստանդնուպոլսում,

Զմյուռնիայում և, ինչպես ասվեց, Կովկաս ու Եգիպտոս փախածներն էլ հետը ընդհանուր հաշվով փրկվել էր 350 000 մարդ։

Բացի այդ, տեղ-տեղ փրկվել էին մոտ 250 000 հոգի՝ հայ բողոքականներ, կաթոլիկներ, իսլամացածներ (մինչև 1915 թ. ջարդերը)։ Ընդամենը փրկվել է ոչ ավելի, քան 600 000 հազար հայ, մինչդեռ զոհվել էր (վերցնելով ամենանվազ նախնական թիվը, որ դիտամամբ ընդունել է լորդ Բրայսը, այսինքն 1 600 000) մոտ մեկ միլիոն մարդ, բայց Բրայսը նորից է ավելացնում, որ ինքն այդ թիվը խիստ փոքր է համարում, և որ կոտորվել ու աքսորվել էր հավանաբար նույնիսկ 1 200 000-ից ավելի մարդ։ Բրայսը ջանացել է պարզել, թե աքսորվածներից ինչքան կանայք ու երեխաներ են փրկվել։ Բայց այդտեղ ոչինչ հնարավոր չի պարզել ստուգությամբ, ոչ էլ հանգել ընդհանուր թվերի։ «Որոշ վիլայեթներում, ինչպես, օրինակ, Վանում ու Բիթլիսում, ոչ մի աքսոր չի եղել, բայց եղել են անմիջական ջարդեր, ուրիշ վիլայեթներում, ինչպես Էրզրումի և Տրապիզոնի տեղահանություններն ու ջարդերը համահավասար են եղել, ինչպես և Անգորայում»։ Կիլիկիայում նրանց անմիջապես չէին սպանում, այլ նրանք զոհվում կամ ջարդի էին ենթարկվում միայն ճանապարհին։

Բայց այն ամենը, ինչի մասին գրել է լորդ Բրայսը, դժդունում է պաշտոնական փաստաթղթերի, վկայությունների, հաղորդումների առջև, որ 1919 թվականին հրատարակել է գերմանացի Յոհաննես Լեփսիուսը Բեռլինի արտաքին գործերի արխիվի տվյալների հիման վրա։ Նա նույնքան կտրականորեն, ինչպես որ Բրայսը, խոսում է Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի կողմից հայ ազգի պլանաչափ, սկզբունքորեն որոշված ոչնչացման մասին։ Մտացածին պատրվակը՝ Վանում հայերի թվացյալ «խռովությունը» (1915 թ. ապրիլի 20-ին) լոկ պատահական առիթ էր ջարդեր ու աքսորներ (բնաջնջման հավասարազոր) սկսելու համար։ Դա շարունակվեց մինչև 1915 թվականի դեկտեմբերը։ Իսկ 1915 թ. դեկտեմբերից սկսվեց ողջ մնացածների բռնի իսլամացումը, որը նույնպես ուղեկցվում էր խելահեղ ջարդերով, և շարունակվեց մինչև Թուրքիայի ջախջախումն ու անձնատուր լինելը, այսինքն մինչև 1918 թվականի հոկտեմբերի վերջը։ Գերմանացի հյուպատոսները, միսիոներները, զինվորականներն ու քաղաքացիական անձինք դժվարանալով զուսպ կերպով (չէ որ Թուրքիան կարևոր դաշնակից էր) իրենց

կառավարությանը իրազեկ էին պահում պլանաչափորեն իրագործվող անլուր ու անհամար զանգվածային սպանությունների մասին, բայց ոչ Վիլհելմը, ոչ Բեթման-Հոլվեգը հարկ չէին համարում միջամտելու։ Գերմանական իշխանությունների մի խոսքը բավական էր կանգնեցնելու ջարդերի երկու ղեկավարներին՝ Թալեաթ փաշային և Էնվեր փաշային։ Բայց դեսպանության բարձրաստիճան պաշտոնյաները չասացին այդ խոսքը։ Ընդհակառակն, նրանք այնպես էին պահում իրենց, որ երիտթուրքերը կարող էին միանգամայն վստահ լինել, որ գերմանական կառավարությունը համակիր է իրենց գործելակերպին։

Իսկ մնացած բոլոր տերությունները, այդ թվում նույնիսկ դեռևս 1915—1916 թթ. չեզոք Միացյալ Նահանգները միանգամայն անզոր էին որևէ կերպ ազդելու մեծ վեզիրի և ռազմական մինիստրի վրա։

Ամերիկյան դեսպան Մորգենթաուն, ամենաարդարամիտ, սթափ դատող, անկանխակալ ականատեսներից լսելով Հայաստանում կատարվող անլուր սարսափների պատմությունները, վերջապես որոշում է գնալ Թալեաթ փաշայի մոտ։ Վերջինս կտրականապես հրաժարվում է խոսել հայերի մասին. «Մի՞թե նրանք ամերիկացիներ են»,— հարցնում է նա Մորգենթաուին։ Նա դեսպանին պատասխանել էր ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես որ «Berliner Tageblatt»-ի թղթակցին. «Մեզ կշտամբում են, թե մենք տարբերություն չէինք դնում անմեղ և մեղավոր հայերի միջև. դա միանգամայն անհնար էր, քանի որ այսօրվա անմեղները կարող են վաղը դառնալ մեղավորներ»։ Որ հայ ժողովուրդը ամբողջովին կբնաջնջվի՝ Թալեաթ փաշան միանգամայն վստահ էր, և նրա մեղքը չէ, որ այնուամենայնիվ մի քանի հարյուր հազար հայեր պատահաբար փրկվեցին աշխարհում։ «Զարմանալի այդպես վիճել,— մի առիթով ասել է Թալեաթ փաշան ամերիկյան դեսպանին,— մենք արդեն վերացրել ենք հայերի երեք քառորդը։ Նրանք այլևս չկան ոչ Բիթլիսում, ոչ Վանում, ոչ Էրզրումում»։ Թալեաթ փաշան այնքան էր համոզված դրանում, որ լկտիաբար համարձակվել էր (ամենայն լրջությամբ ու համառամտորեն) դեսպանին խնդրել, որ նա ազդի ամերիկյան ապահովագրական ընկերությունների վրա, որտեղ շատ հայեր ապահովագրել էին իրենց կյանքը. «Քանի որ հայերը գրեթե բոլորը այժմ արդեն մեռել են, չթողնելով ժառանգորդներ, ապա, հետևաբար, հարկ կլինի, որ նրանց փողերն

ստանա Թուրքական կառավարությունը. նա պետք է օգտվի դրանցից։ Կարո՞ղ եք այդ ծառայությունը մատուցել ինձ»։

Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, որին դիմել էր Մորգենթաուն, խնդրելով զսպել Թալեաթին ու Էնվերին և պաշտպան կանգնել բնաջնջվող հայերին, ի պատասխան սկսել էր ամենակոպիտ հայհոյանքները տեղալ հայերի հասցեին և կտրականապես հրաժարվել էր որևէ բան անել նրանց համար։ Գերմանական դեսպանատան խորհրդական Նոյրատը, Թալեաթի ու Էնվերի անլուր չարագործություններից վրդովված, փորձել էր ինչ-որ բան անել նրանց վրա ազդելու համար, բայց հայ ժողովրդի բնաջնջման գործին հենց իր՝ դեսպան Վանգենհայմի ակնհայտորեն համակիր լինելու պայմաններում դեսպանության երկրորդական պաշտոնյայի այդ բոլոր փորձերը, անշուշտ, ապարդյուն էին։ Գերմանական դեսպանության ծովային կցորդ Գումմանը՝ Վիլհելմ II-ի սիրեցյալը, բացեիբաց հայտարարում էր, թե Թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ (Գումմանը Վիլհելմ կայսեր անձնական հովանավորյալն էր և նամակագրական կապի մեջ էր նրա հետ)։ Իսկ Լիման ֆոն Սանդերսը վճռականորեն իր դժգոհությունն էր հայտնում ամերիկյան դեսպանին (նրա որդու միջոցով) այն. առթիվ, որ նա Թուրքական գազանությունների մասին հաղորդում է Եվրոպա և Ամերիկա։ Միայն Կառլ Լիբկնեխտն էր վրդովմունքով նշավակում մարդասպաններին։ Բայց նա անզոր էր։

Պատերազմի վերջին անուղղելի ոճրագործությունը, ըստ էության, ավարտված էր։ Երիտթուրքական կառավարության մեղքը չէր, որ հայերը ոչնչացվեցին ոչ թե 100 %-ով, այլ միայն 65 %-ով։ Բայց այդ ձեռնարկման պտուղները Թուրքերը չտեսան։ Հայերի հետ, իսկ հետո հույների վերաբնակեցման հետ չքացավ փոքրիշատե մոտ ապագայում եվրոպական ֆինանսական կապիտալի ճիրաններից ազատվելու և իր՝ Թուրքական դրամական տնտեսությունը կառուցելու անգամ թույլ հույսը, և հայերի անհետացումով ոչ թե Թուրքական, այլ ֆրանսիական և մասամբ էլ անգլիական կապիտալը գրավեց այն դիրքերը, որ մնացել էին հայ լուսավորչական դավանանքի Թուրքական քաղաքացիներին կոտորելուց հետո։ Երբ հայ ուսանող Թեհլիրյանը, որն իր ողջ կյանքը նվիրել էր արդեն 1918 թ. Թուրքիայի ջախջախվելուց հետո Կոստանդնուպոլսից փախած Թալեաթ փաշայի անդամ

որոնումներին, հինգ տարի անց[75] նրան վերջապես գտավ Բեռլինում ու սպանեց փողոցում, և երբ Բեռլինի դատարանում բացահայտվեցին Հովհաննու հայտնության այդ բոլոր սարսափները (մի վկայի արտահայտությամբ), ապա ոչ միայն Թեհլիրյանը արդարացվեց, այլև գերմանական մամուլը ձայն բարձրացրեց՝ պահանջելով պարզել Վանգենհայմի բարոյական մեղավորության աստիճանը հայ ժողովրդի բնաջնջման խնդրում...[76]։

Академик Е. В. Тарле. Европа в эпоху империализма. 1871—1919 гг., М.—Л., 1928, с. 387—393.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1. Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Աբեդին փաշային հասցեագրված այս փաստաթուղթը առաջին անգամ օգտագործել է բելգիացի իրավաբան-միջազգայնագետ Գյուստավ Ռոլեն Ժեկմենը «Հայաստանը, հայերը և դաշնագրերը» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1889 թ. Ֆրանսերեն, իսկ ապա՝ 1891-ին հրատարակվել է Լոնդոնում անգլերեն։ Հիշյալ աշխատությունը ռուսերեն թարգմանությամբ զետեղված է «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году» ժողովածուում (Մ., 1896)։ Վերլուծելով մեծ տերությունների համատեղ հուշագրերը և սուլթանական կառավարության կողմից դրանց տրված պատասխանները՝ Ռոլեն Ժեկմենը արդարացիորեն եզրակացնում էր, որ «ամեն ինչ, այսպիսով, սահմանափակվել է սոսկ դիվանագիտական մի կատակերգությամբ»։— 8։

2. «Հայրենյաց իրավունքների պաշտպանության կոմիտեն», ինչպես որ իրականում կոչվել է այն, կազմված էր հայ հայրենասերներից, որոնք ապրում էին Եվրոպայի երկրներում՝ Բուլղարիայում, Ռումինիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր։ Բերված փաստաթուղթը՝ մեծ տերություններին ուղղված շրջաբերական խնդրագիրը, հանձնվել է Վառնայում Ռուսաստանի փոխհյուպատոսին՝ արտաքին գործերի մինիստրին փոխանցելու համար։ Կոմիտեի կողմից նույնանման դիմումներ են հասցեագրվել նաև մյուս մեծ տերություններին՝ նպատակ ունենալով նրանց ուշադրությունը հրավիրել Թուրքիայի հայերի վիճակի վրա։— 18։

3. Հայ խաղաղ բնակչության կոտորածին քրդական մի շարք ցեղերի մասնակցության մասին զեկույցներում հաճախ աչքաթող է արվում այն հանգամանքը, որ սուլթանական կառավարությունն ինքն էր կազմակերպում, ոգեշնչում և հրահրում նրանց։ Սուլթանական կառավարությանը հաճախ էր հաջողվում իր կողմը գրավել քուրդ հետադիմական շեյխերին և նրանց օգտագործել իր արյունոտ քաղաքականության մեջ։ Այնուամենայնիվ հիմնական դերը դրա իրագործման մեջ հատկացվում էր տեղական թուրքական իշխանություններին և կանոնավոր զորքերին։— 19։

4. Ամերիկյան քաղաքացիների այս նամակները առաջին անգամ անգլերեն տպագրվել են ամերիկացի միսիոներ Ֆրիդրիկ Դևիս Գրինի «Հայկական հարցը և Թուրքերի տիրապետությունը» գրքում, որը լույս է տեսել 1895 թ. Նյու Յորքում և հեղինակի կողմից նվիրված է եղել 1894 թ. Սասունի կոտորածի զոհերի հիշատակին։ Այս նամակ-հաշվետվությունները գրված են Արևմտյան Հայաստանի վեց տարբեր քաղաքներում, ամերիկյան քաղաքացիների կողմից, որոնք երկար տարիներ ապրելիս են եղել այդտեղ։ Վախենալով նամակների

* Ծանոթագրությունների հեղինակն է պատմ. գիտ. դոկտոր Ռ. Գ. Սանակյանը։

հեղինակների նկատմամբ Թուրքական իշխանությունների հալածանքներից՝ Ֆր. Գրինը իր գրքում չի հրապարակել ո՛չ քաղաքների անունները, որտեղից ուղարկվել են դրանք, ո՛չ էլ հեղինակների անունները։ Ֆր. Գրինի գրքի սկզբում զետեղված դիմումի մեջ, որն ստորագրել են մտավորականության ներկայացուցիչներ, հասարակական և պետական գործիչներ ու հոգևոր անձինք, հավաստիացվում է, որ «զետեղված փաստաթղթերը իրենցից ներկայացնում են անկախ հաղորդագրություններ այն վայրերից, որտեղ փախստականները և սուլթանի զորացրված զինվորները պատմում են իրենց իմացածը։ «Մենք լիովին վստահ ենք այդ պատմությունների հավաստիությանը և դրանք համարում ենք համընդհանուր վստահության արժանի»,— ասվում է հիշյալ դիմումի մեջ։ (Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, с. 227-228): — 42։

5. Սասունի 1894 թ. կոտորածից հետո, եվրոպական հասարակական կարծիքի ճնշման տակ, 1895 թ. սկզբին Մուշում ստեղծվեց հետաքննական հանձնախումբ՝ տեղի ունեցած իրադարձությունների հանգամանքները հետաքննելու համար։ Բայց դա միջազգային հանձնախումբ չէր, ինչ որ պահանջում էր հասարակայնությունը, այլ՝ Թուրքական, որը սուլթանական կառավարության կողմից ստեղծվել էր, որպեսզի հետաքննության անվան տակ ամբաստանությունից զերծ պահեր կոտորածի իսկական մեղավորներին, որոնք խրախուսվել ու գործել էին կառավարության ցուցումներով ու ծրագրով։ Ճիշտ է, Թուրքական հետաքննական հանձնախմբի նիստերին ներկա էին լինում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, բայց նրանց լիազորությունները խիստ սահմանափակ էին, և նրանք զրկված էին հետաքննության ընթացքի վրա լրջորեն ներգործելու հնարավորությունից։ Դեռ ավելին. հետաքննական հանձնախմբի առաջ խնդիր էր դրված հենց հայերի վրա բարդել կոտորածների ողջ պատասխանատվությունը։ Թուրքական պաշտոնաթերթ «Թարիքը» չէր թաքցնում, որ «հանձնախմբի նպատակն է բացահայտել այն հանցավոր արարքները, որ կատարել են հայ ավազակները»... (Տես՝ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897. Paris, 1897, p. 17-18)։ Ինչպես գրել է Ստիվենսոնը անգլիական "Contemporary Review" ամսագրում (1895 թ. փետրվար), «Թուրքական հանձնախմբերը միջոց են հանդիսանում ճշմարտությունը մթագնելու և հարցերը բարդացնելու համար»։— 64։

6. Իռլանդացի լրագրող և ցիտնական Էմիլ Դիլոնի հոդվածը՝ «Գործերի վիճակը Թուրքահայաստանում» առաջին անգամ տպագրվել է "Contemporary Review" ամսագրի 1895 թ. օգոստոսի համարում։ Այնուհետև հրապարակվել է ռուսերեն՝ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году» ժողովածուում, համընդհանուր ուշադրություն-ու կարեկցանք հարուցելով Թուրքիայի հայերի դրության նկատմամբ։ Է. Դիլոնը (1854—1933) մի քանի տարի ապրել է Ռուսաստանում, եղել է արևելյան լեզուների մասնիստրոս Պետերբուրգի համալսարանում, ապա՝ Խարկովի համալսարանի համեմատական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր։ 1895թ. փետրվար-մարտ ամիսներին Դիլոնը գտնվում էր Թուրքիայում որպես լոնդոնյան "Daily Telegraph" թերթի թղթակից։ Թաքցնելով իր ճանապարհորդության նպատակը՝ նա եղավ Արևմտյան Հայաստանում, որպեսզի տեղում ծանոթանար հայկական

ջարդերի հանգամանքների հետ։ Հեղինակը զրուցել է կոտորածի շատ ականատեսների հետ, նույնիսկ նրանց հետ, ովքեր իրագործել էին այն։ Հաղթահարելով սուլթանական կառավարության և տեղական իշխանությունների հարուցած խոչընդոտները, արհամարհելով վտանգը, Դիլոնը հավաքեց վիթխարի քանակությամբ հավաստի տեղեկություններ, որոնք լիովին հաստատում էին Թուրքական կառավարության հանցավորությունը հայ բնակչության զանգվածային կոտորածների կազմակերպման մեջ։— 98։

7. Այստեղ, ինչպես և այլ փաստաթղթերում, «մուսուլմաններ» ասելով ի նկատի են առնվում գերազանցապես Թուրքերը։— 148։

8. 1894—1896 թթ. հայկական կոտորածների վերաբերյալ ֆրանսիական «Դեղին գրքի» փաստաթղթերն առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ հրապարակվել են «Братская помощь пострадавшим в Турции армянам» ժողովածուում։ «Դեղին գրքի» երկու ծավալուն հատորներում (Տե՛ս Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897. Paris, 1897. Documents diplomatiques. Affaires arméniennes. Supplément. 1895-1896. Paris, 1897) մեծ քանակությամբ փաստաթղթեր են բերվում Օսմանյան կայսրության մեջ արյունալի իրադարձությունների նախօրյակին հայերի դրության վերաբերյալ և, գլխավորապես, 1894—1895 թթ. զանգվածային ջարդերի մասին։ Ֆրանսիացի հյուպատոսների, դեսպանների և այլ դիվանագիտական աշխատողների բազմաթիվ զեկույցներում տրվում է կոտորածների հանգամանալի պատկերը հայաբնակ առանձին վիլայեթներում, շրջաններում, քաղաքներում ու գյուղերում, բերվում են տվյալներ զոհերի թվի մասին, տուժած ընտանիքների ցուցակներ և այլն։— 167։

9. Ի նկատի է առնվում Փարիզում 1896 թ. հրատարակված "Les massacres d'Arménie. Témoignages des victimes" գիրքը, որի մեջ հավաքված են կոտորածներին անմիջականորեն ականատես հայերի նամակները։— 177։

10. Սույն ժողովածուում զետեղված հատվածը վերցված է Ժան Ժորեսի ճառից, որն արտասանել է 1903 թ. փետրվարի 15-ին Փարիզի "Château d'eau" թատրոնում տեղի ունեցած միտինգում՝ նվիրված Հայաստանին ու Մակեդոնիային։ Միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ, «Յումանիտե» թերթի հիմնադիր Ժան Ժորեսը (1859—1914) մատնանշել է Թուրքական բռնապետության լծի տակ ընկած հայ ժողովրդի ճակատագրով։ Իր հրապարակային ելույթներում ու հոդվածներում Ժորեսը բազմիցս դիմել է Եվրոպայի հասարակական կարծիքին՝ կոչ անելով հանդես գալ ընդդեմ այն բռնությունների, որ սուլթանական կառավարությունը գործադրում էր Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ խաղաղ բնակչության նկատմամբ։ Դեռ 1896-ին, արևմտահայերի զանգվածային կոտորածների կապակցությամբ, նա հանդիմանում էր տարբեր երկրների սոցիալիստներին, որ նրանք անհրաժեշտ տեղեկությունների բացակայության պատճառով չէին կարողացել արտահայտել իրենց վերաբերմունքը։ "Petite République" թերթի 1896 թ. մայիսի 17-ի համարում տպագրված հոդվածում նա գրում էր. «Բոլոր երկրների սոցիալիստների համար երկրորդ կանոն է՝ ձեռք բերել առավել մարդասիրական վերաբերմունք, առավելագույն երաշխիք Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի պարտված ժողովուրդների կամ նվաճված ժողովուրդների հա-

Հայ։ Խոսքը վերաբերում է հնդկացիներին, որոնք նվաճված են անգլիացիների կողմից, արաբներին, որոնք նվաճված են ֆրանսիացիների կողմից, թե աֆրիկյան ժողովուրդներին, որոնց պատճառով կռվում ու վիճում են Եվրոպայի պետությունները, սոցիալիստների պարտքն է իրենց երկրների պառլամենտներում նախաձեռնություն դրսևորել և այդ ժողովուրդների համար ձեռք բերել գոյության մարդկային պայմաններ կամ էլ, անհաջողության դեպքում, բարձրացնել իր ձայնը...

Շատ անգամ է եղել, որ նման երբին ու բարդ հարցերում, վախենալով գործել հօգուտ մարդասիրական դիմակի տակ թաքնված եսասիրական շահերի կամ կոմբինացիաների՝ սոցիալիստները խուսափել են այնպիսի ելույթներից, որոնք կարող էին օգուտ բերել մարդկությանը։ Կարող եմ բերել կոնկրետ օրինակ։ Հայաստանում տեղի ունեցավ դաժան կոտորած, որի համար մենք քիչ չցավեցինք։ Լոնդոնից հայեր ժամանեցին, որպեսզի ֆրանսիացի սոցիալիստներին խնդրեին Փարիզում միտինգ կազմակերպել ի պաշտպանություն իրենց։ Բայց մենք, եթե խղճի մտոք ասենք, չէինք իմանում, թե ի՞նչ են իրենցից ներկայացնում Լոնդոնի հայկական կոմիտեները և, երկյուղ կրելով, թե այդ հայկական կոմիտեների հետևում թաքնված են անգլիական տորիների խարդավանքները և թե մենք դրությունը բարդացնելու և կոնֆլիկտ ստեղծելու ենք մեզ ենթարկում, այդպես էլ չհամարձակվեցինք հանդես գալ։ Բայց եթե Եվրոպայի բոլոր սոցիալիստների միջև, որոնց բարձր ազնվությունը մեզ համար բավարար երաշխիք էր, գոյություն ունենար կարծիքների մշտական ու կանոնավոր փոխանակություն և կապ բոլոր այն հարցերում, որոնք հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի ու մարդկության համար, ապա միջազգային սոցիալիստական շարժումը, կազմակերպելով հզոր համաժողովրդական շարժում, կարող էր ծառայել մարդասիրության գործին՝ չվախենալով մարդասիրության դիմակի տակ թաքնված փառասիրական հաշվարկների կամ ազգային պահանջատիրությունների խաղալիքի վերածվելուց։ Ներկայումս սոցիալիստական գիտակցությունը այն աստիճանի բարձր մակարդակի է հասել, որ բոլոր երկրների սոցիալիստները, ինֆորմացիայի փոխանակության շնորհիվ, կարող են իսկական ճշմարտությունն իմանալ այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում աշխարհում, այդ տեղեկություններն օգտագործել ի շահ մարդկության և աշխարհի» (Տես՝ Жан Жорес. Против войны и колониальной политики. Составитель и автор комментариев Мадлен Реберіу. Перевод с французского. М., 1961, с. 115—116). — 207:

11. Անդրանիկ Օզանյան *(1865—1927)*— Հայ ազատագրական շարժման ակնառավոր գործիչ, ժողովրդական հերոս, ռուսական Կովկասյան բանակի գեներալ-մայոր։ Ծնվել է Շապին-Գարահիսարում, պատանեկան տարիքից իրեն նվիրել է նախ սուլթանական, ապա երիտթուրքական բռնապետական լծի դեմ մղվող պայքարին՝ հանուն հայ ժողովրդի ազատագրության։ 90-ական թվականների սկզբին անցնելով Արևմտյան Հայաստան՝ Սասունի շրջանը, Անդրանիկը, Ցիգայի հայտնի զեկավարներ Աղբյուր Սերոբի և Գևորգ Չաուշի զոհվելուց հետո, զեկավարեց արևմտահայ գյուղացիական զանգվածների ազատագրական պայքարը։ Արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի շատ ավելի դիրակշիռ կանոնավոր զորքերի դեմ փորձառիվ չոկատով Առաքելոց վանքում, Մուշի մոտ, հերոսական դիմադրությունից (1901թ.) և 1904 թ. ազատագրական մարտերից հետո, Անդրանիկը ստիպված եղավ ժամանակավորապես թողնել Սասունը և անցնել Բուլղարիա, որտեղ աչքի ընկավ, հայ կամավորական խմբի գլուխ անցած մասնակցելով առաջին Բալկանյան պատերազմին, որպես բուլղարական բանակի սպա։ 1915թ. Անդրանիկը ղեկավարում էր հայկական առաջին կամավորական գունդը (որը մտնում էր Կովկասյան բանակի կազմի մեջ), աչքի ընկնելով Թուրքիայի դեմ մղված մի շարք ճակատամարտերում, մանավանդ Դիլմանում։ Անդրանիկը ողջունեց ցարիզմի տապալումը, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նա հեռագիր ուղարկեց Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին (1918 թ. հուլիսի 14-ին), որով հաղորդում էր, որ իր չոկատը դնում է Կենտրոնական Ռուսաստանյան կառավարության տրամադրության տակ և ենթարկվում է նրան։ Ստ. Շահումյանը ողջունեց ժողովրդական հերոսին և Անդրանիկին կոչ արեց արգելել Թուրքական զորքի առաջխաղացումը դեպի Բաքու։ 1919 թ. մայիսին դատապարտելով արևմտյան իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ և հավանություն չտալով Հայաստանի Հանրապետության կառավարիչների գործունեությունների՝ Անդրանիկը թողեց Հայաստանը և տեղափոխվեց ԱՄՆ՝ հաստատվելով Ֆրեզնո քաղաքում, որտեղ և մահացավ 1927 թ. օգոստոսի 31-ին։ Գտնվելով օտարության մեջ, Անդրանիկը մի քանի անգամ իր համակրանքն է արտահայտել Խորհրդային Հայաստանի նկատմամբ, ողջունել նրա հաջողությունները։

Անդրանիկի մասին մանրամասն Տե՛ս Нерсисян М. Г. Народный герой. «Коммунист» թերթ, Երևան, 1965 թ., 25 փետրվարի։ Арутюнян А. О. Кавказский фронт 1914—1917 гг., Երևան, 1971 թ. էջ 184—185, 299—310։ Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1980, Материалы о генерале Андранике (публикация М. Нерсисяна, А. Арутюняна, Д. Мурадяна). «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4(95), էջ 242—248: — 212:

12. 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում բացվեց միջազգային կոնֆերանս՝ նվիրված Մերձավոր արևելքի դրությանը և, գլխավորապես, Հայկական հարցին։ Այդ ժամանակ Արևմտյան Հայաստանի մի շարք մարզերում, մասնավորապես Մուշ-Սասունում, շատ լարված իրավիճակ էր ստեղծվել. սուլթանական կառավարությունը, 1894—1896 թթ. կոտորածից հետո, որոշել էր վերջնականապես հայերից մաքրել Մշո դաշտը և միայն 1904 թ. մարտ-մայիս ամիսների ընթացքում ոչնչացրեց վեց հազար հայերի (տե՛ս Report of the International Conference on the situation in the Near East Held in London on 29-th June, 1904. London, 1904 p. 12—13)։ Կոնֆերանսը, որին մասնակցություն ունեցան եվրոպական շատ երկրների քաղաքական և հասարակական գործիչներ, դատապարտեց Աբդուլ Համիդի արյունոտ քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ և մեծ տերություններին կոչ արեց հանդես գալ ի պաշտպանություն նրանց։ Ի վիճակի չլինելով մասնակցել կոնֆերանսի աշխատանքներին, Ժան Ժորեսը նամակ էր գրել կազմկոմիտեի նախագահ Ջեյմս Բրայսին, որը և տրվում է այստեղ ամբողջությամբ։ Ժորեսից բացի, հայերի նկատմամբ համակրական նամակներով կոնֆերանսին էին դիմել նաև այլ նշանավոր գործիչներ՝ Անատոլ

Ֆրանսը, Վիկտոր Բերարը, Ֆ. Տուրատին և ուրիշներ։ Իր նամակում Անատոլ Ֆրանսը գրում էր. «Խորապես ցավում եմ, որ ի վիճակի չեմ միանալու ձեզ՝ հայասիրական կոնգրեսում։ Դուք հավաքվել եք հանուն մարդկության և խաղաղության։ Եվ ոչ թե նրա համար, որպեսզի արտահայտեք դատարկ ցանկություններ կամ անօգուտ դժգոհություն։ Այն, ինչ դուք պահանջում եք, օրինական է և իրագործելի... (Տե՛ս նույն տեղը, էջ 18)։— 213։

13. Խոսքը Դաշնակցություն կուսակցության անդամների մասին է։— 226։

14. Ռազմա-դատական հանձնախմբերում, որոնք կազմվել էին 1909 թ. սկզբին՝ իբրև թե Ադանայի արյունոտ իրադարձությունները հետաքննելու և մեղավորներին պատժելու համար, մտնում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները և մակեդոնական բանակի երիտթուրքական սպաները, որոնք ուղարկվել էին Կիլիկիա «ապստամբներին հնազանդեցնելու» և կարգությունը վերականգնելու համար։ Իսկ իրականում, ինչպես երևում է փաստաթղթերից, երիտթուրքական զորքերը գործուն մասնակցություն են ունեցել խաղաղ և անզեն հայ բնակչության կոտորածներին։ Եվ այս զորքերի ներկայացուցիչները, տեղ գրավելով ռազմական դատարաններում՝ բարձրաստիճան պաշտոնյա իթթիհադականների հետ միասին, ամեն կարգի անօրենություններ էին անում՝ խստագույն պատժի ենթարկելով գերազանցապես անմեղ հայերին և պաշտպանելով կոտորածի իսկական մեղավորներին։— 234։

15. Ադանայում և Կիլիկիայի այլ քաղաքներում տեղի ունեցած դեպքերի մասին Ս. Զ.-ի գրքից բերվող հատվածները տպագրվել են «Баку» թերթի 1909 թ. չորս համարներում (197—200)։ Նույն տարում «Ադանայի սև օրերը» լույս է տեսել առանձին գրքույկով։— 246։

16. Գրքի հեղինակը՝ Ա. Ադոսիդեսը ֆրանսիացի լրագրող է, ազգությամբ հույն։ Ադոսիդեսի՝ փաստաթղթերով լավ հիմնավորված աշխատությունը Կիլիկիայի իրադարձություններին վերաբերող փաստերի անաչառ ու հանգամանալի ուսումնասիրության արդյունք է։ Դրանց մեջ կան Թուրքիայում օտարերկրյա հյուպատոսների զեկույցներ ու տեղեկագրություններ, կաթոլիկական միսիաների պաշտոնական հաշվետվություններ, անգլիացի, գերմանացի, ամերիկացի և այլ միսիոներների՝ Ադանայի, Ցարսոնի, Օսմանիեի և Կիլիկիայի այլ քաղաքներում տեղի ունեցած կոտորածների անմիջական ականատեսների գրություններ ու նամակներ, օտար լեզուներով դրպրոցների դասատուների պատմածներ, ուրիշ շատ վկաների ցուցմունքներ, որոնք հրապարակվել են "Frankfurter Zeitung", "Temps", "Le journal de Genève" և այլ թերթերում 1909-ի մայիս-հուլիս ամիսներին։ Ա. Ադոսիդեսի գրքում բերվում են նաև բազմաթիվ հավաստի փաստեր Անտիոքում, Քեսաբում, Բեյլանում և Ադանայի վիլայեթի այլ քաղաքներում ու բնակավայրերում հայերի կոտորածի մասին (Տե՛ս A. Adossidès. Arméniens et Jeunes-turcs. Les massacres de Cilicie. Paris, 1910, p. 83—93)։ Ադանայի ողբերգությանը նվիրված այլ հրատարակություններից պետք է նշել ֆրանսիացի հեղինակներ Ժորժ Բրեզոլի, Ժան դ'Անեզեի և Աշանայի հայ եպիսկոպոս Մուշեղի գրքերը, Հակոբ Թերզյանի՝ փաստաթղթերով հիմնավորված երկհատոր աշխատությունը և այլն։ 1909 թ. ողբերգական դեպքերի մասին և, մասնավորապես, երիտթուրքական զեկավարների պատասխանատվության մասին, տես նաև՝ André Mandelstam. Le sort de l'Empire ottoman, Lausunne-Paris, 1917, p. 203—206:— 246:

17. Փաստական անճշտություն է։ Երիտթուրքական զորքերը Ստամբուլը գրավել են 1909 թ. ապրիլի 26-ին։— 253։

18. Հեղինակի կողմից բերված թիվը՝ 20 հազար զոհ, արտացոլում է հայերի կորուստները միայն Ադանայի վիլայեթում, մինչդեռ շատ սպանվածներ են եղել նաև Անտիոքում, Բեյլանում, Ալեքսանդրետում, Մարաշում և Հալեպի վիլայեթի այլ քաղաքներում ու բնակավայրերում ապրող հայերի մեջ։ Իրականում, Ադանայի ողբերգության հետևանքով, 1909 թ. ապրիլ-մայիսին զոհվել են մոտ 30000 հայեր։ Այս թիվը բերվում է օտար մի շարք հեղինակների աշխատություններում։— 263։

19. Ադանայի իրադարձությունները լայն արձագանք առաջացրին, և օսմանյան պառլամենտը ստիպված էր քննել այդ հարցը։ Հայ պատգամավորների, մասնավորապես Զոհրապի և Վարդգեսի ճնշման տակ պառլամենտը երկու պատգամավորների՝ Հակոբ Պապիկյանին և Յուսուֆ Քեմալին հանձնարարեց հետաքննություն կատարել տեղում։ 1909 թ. մայիսի 29-ին նրանք մեկնեցին Ադանա։ Սակայն շուտով պարզվեց, որ Յուսուֆ Քեմալը հակված չէ անաչառ կերպով հետաքննել գործը և փորձում է պատասխանատվությունը դնել հայերի վրա։ Դրա համար էլ Հ. Պապիկյանը որոշեց այդ հարցով զբաղվել ինքնուրույն։ Երեք շաբաթ անց նա վերադարձավ Ստամբուլ և հայ հասարակայնության ներկայացուցիչներին ծանոթացրեց իր եզրակացությունների հետ։ Հակոբ Պապիկյանի հաշվետվության մեջ մերկացվում էր տեղական իշխանությունների վարքագիծը, ռազմական դատարանի և այլ մարմինների աշառու մոտեցումը։ Օգոստոսի սկզբներին նա պետք է ելույթ ունենար պառլամենտի նիստում, սակայն օգոստոսի 1-ին Հ. Պապիկյանը անսպասելիորեն մահացավ, և նրա հաշվետվության մասին դադարեցին խոսել։ Ինչ վերաբերում է Յուսուֆ Քեմալի հաշվետվությանը, ապա դրանում պատասխանատվության մեծ մասը դրվում էր հայերի վրա, իսկ երիտթուրքերի և մոլեռանդ ամբոխի գործողությունների արդարացման համար դանվեցին բազմազան մեղմացուցիչ հանգամանքներ։ Սակայն նույնիսկ այս փաստաթուղթը հրապարակայնության չարժանացավ։ Յուսուֆ Քեմալը հանվեց պառլամենտի կազմից և նշանակվեց Փարիզում սովորող թուրք ուսանողների տեսուչ (Մանրամասն տե՛ս A. Adossidès. Les Arméniens et Jeunes turcs..., p. 112—115; Georges Brézol. Les Turcs ont passé là..., p. 237—245.— 265:

20. Այս փաստաթուղթը, ինչպես և № 137, 138, 143, 151, 179, 199, 205 փաստաթղթերը հրապարակել է պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանը։ Տե՛ս Մ. Ներսիսյան, Նյութեր հայկական կոտորածների մասին։ «Պատմա-բանասիրական հանդես» 1965, №1, էջ 85—100։ Տե՛ս նաև Մ. Нерсисян. Геноцид западных армян в 1915 году, նույն տեղը, № 2, էջ 55—60: — 280:

21. Այս փաստաթուղթը, ինչպես և №№ 115, 171 փաստաթղթերը, հրապարակված են Տե՛ս Ս. Այեմանյան, Վ. Էվոյան, Ա. Մարգսյան, Մարդկությունը չպետք է ների (Փաստաթղթեր հայ ժողովրդի բնաջնջման թուրքական հրեշավոր պլանների և Մեծ եղեռնի մասին)։ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965 № 1։— 289։

22. Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկի (1851—1916)— ռուս իրավաբան, պատմաբան, և լիբերալ քաղաքական գործիչ։ Լայնորեն հայտնի են պրոֆ. Մ. Կովալևսկու ազգագրական աշխատությունները, մասնավորապես Կովկասի լեռնականների նախնադարյան մշակույթի մասին աշխատությունները։ Երկար տարիներ խմբագրել է և հրատարակել է «Вестник Европы» ամսագիրը, որի էջերում հանդես է եկել Արևմտյան Հայաստանի դրության մասին հոդվածներով։ Մ. Կովալևսկու «Հայկական հարցը» հոդվածը ինքնատուն ուսումնասիրություն է, որը հետաքրքիր դիտարկումներ և եզրահանգումներ է պարունակում արևմտահայերի ճակատագրի, հայ գյուղացիության ծանր վիճակի վերաբերյալ՝ սուլթանական և երիտթուրքական վարչակարգերի օրոք։ 1915թ. մայիսին գրված հոդվածը, բնականաբար, չէր կարող տեղեկություններ պարունակել այդ ժամանակ սկսված հայերի զանգվածային բռնագաղթի և կոտորածի մասին— 306։

23. Ռուս բանաստեղծ և գրականագետ Յուրի Ալեքսանդրովիչ Վեսելովսկին (1872—1919) Վ. Բրյուսովի, Մ. Գորկու, Ն. Մաոի և ռուս մտավորականության ականավոր այլ ներկայացուցիչների հետ վիթխարի դրական դեր է կատարել ռուս հասարակայնությանը հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու գործում, իր հայրենիքի ազատության և անկախության համար մղած նրա պայքարին։ Մեծ հումանիստ, հայերի հավատարիմ բարեկամ, հայ դասական գրականության խորագետակ և գնահատող Յուրի Վեսելովսկին դատապարտում էր սուլթանական և երիտթուրքական գահիճներին՝ հայ ժողովրդի, նրա նյութական ու հոգևոր արժեքների բարբարոսական ոչնչացման համար։ Յուրի Վեսելովսկին աշխատակցել է «Армянский вестник»-ին, որը հրատարակվում էր Մոսկվայում 1916—1917 թթ.։ Այդտեղ տպագրվել են նրա հոդվածները՝ «Տառապյալ զավակներ», «Վարգան Մամիկոնյանը հայ բանաստեղծների ստեղծագործություններում» և այլն (մանրամասն այդ մասին տե՛ս А. М. Давтян. Поборник гуманизма и дружбы народов. ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր, հասարակական գիտություններ, 1965, № 10 էջ 37—46)։ Պետրոգրադի «Вестник Европы» ամսագրում լույս է տեսել Վեսելովսկու «Թուրքահայերի գրական ստեղծագործությունը» հոդվածը (տե՛ս «Вестник Европы», 1916, մարտ, էջ 75—108)։ Այդ տարիներին առանձին գրքերով հրատարակվել են Վեսելովսկու արժեքավոր աշխատությունները՝ «Трагедия Турецкой Армении» (М., 1915) և «Дети обездоленного края» (М., 1916): — 310.

24. Այս փաստաթուղթը, ինչպես և №№ 126, 127, 129, 131 փաստաթղթերը, որոշ փոփոխություններով հրապարակվել են։ Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 года — 10 мая 1914 года, Петроград, 1915. — 315.

25. Սաղոնիկի առաջարին ընդունվել է անգլիական և ֆրանսիական կառավարությունների կողմից։ 1915 թ. մայիսի 13-ին թերթերը տպագրել են համատեղ պաշտոնական հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ. «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում կատարած է տեղի ունեցել քրդերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ երբեմն էլ՝ ուղղակի համագործակցությամբ։ Ապրիլի կեսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում։ Գլխավորն կոտորված են Վանի շրջակայքի հարյուրավոր գյուղերի բնակիչներ, բուն Վանում հայկական թաղը շրջապատվել է քրդերի կողմից։ Միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը բանտարկում և չտեսնված ճնշումների է ենթարկում հայ խաղաղ բնակչությանը։

Ի նկատի ունենալով այս նոր ոճրագործությունները, որոնք Թուրքիայի կողմից կատարվել են ընդդեմ մարդկության և քաղաքակրթության, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները սույնով Դռանը հրապարակավ հայտարարում են, որ նրանք այդ բոլոր ոճրագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների վրա, ինչպես և այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք մասնակից են լինում նման կոտորածին («Свет», № 124, 13 մայիսի 1915 թ.)։— 339։

26. Էրզրումի հայերի տեղահանության մասին այս փաստաթուղթը հաշվետվությունն է օտարերկրյա ռեզիդենտներից մեկի, որն այդ ժամանակ եղել է Արևմտյան Հայաստանում։ Փաստաթուղթը հայերին և ասորիներին օգնող ամերիկյան կոմիտեի կողմից հանձնվել է Ջեյմս Բրայսին (American Committee for Armenian and Syrian Relief): Ինչպես և այլ դեպքերում, Բրայսը զգուշության համար չի տալիս հեղինակի անունը։ Բրայսի ժողովածուում տպագրված է նաև այդ օտարերկրացի ակնատեսի հաշվետվության շարունակությունը, ականատես, որը պատմում է Էրզրումից աքսորված հայերի հետագա ճակատագրի մասին և, մասնավորապես, տեղեկացվում է, որ 18,000-հոգանոց քարավանից միայն 150 կին ու երեխա է հասել Հալեպ։ (Տե՛ս The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—16..., p. 265—267):— 356:

27. Փաստաթուղթը լրիվ հրապարակված է։ Տե՛ս Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств, 1878—1917 гг., серия III, т. VII, часть 2, М. Л., 1936, с. 455—458: — 364:

28. Առաջին անգամ տպագրված է գերմանական միսիոներական "Allgemeine missions Zeitschrift"'-ի 1915 թ. նոյեմբերի համարում և Հայերի օգնություն շվեյցարական կոմիտեի ժողովածուի նույն տարվա I պրակում (Տե՛ս Quelques documents sur le sort des Arméniens en 1915. Faschicule I, Genève, 1915): Բրայսի ժողովածուի անգլիական հրատարակության մեջ բերված է ոչ լրիվ տեքստը և սխալմամբ ասված է, թե կարմիր խաչի երկու գթության քույրերն էլ դանիուհիներ են։ Իսկ ֆրանսիական հրատարակության մեջ, որտեղ «Գթության երկու քույրերի հայտարարությունը» բերված է ամբողջությամբ՝ ճիշտ կերպով նշված է, որ նրանք երկուսն էլ գերմանուհիներ են (Տե՛ս Le traitement des Arméniens dans L'Empire Ottoman..., p. 249—257):— 375:

29. Փաստաթուղթն առաջին անգամ հրապարակվել է Բրայսի ժողովածուում։ Տրվում է աննշան կրճատումներով։— 382։

30. Երիտթուրքական «հոյակի» անդամներից մեկի՝ Ջեմալ փաշայի այս հրամանը հրապարակվել է այն բանից հետո, երբ եվրոպական մամուլում երևացին թուրքական գազանությունները, աքսորյալ հայերի սոսկալի վիճակը

պատկերող լուսանկարներ։ Հենց այդ նույն նպատակին՝ հանցագործությունների հետքերը թաքցնելուն էր ծառայում Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի հրամանը՝ 1915 թ. դեկտեմբերի 29-ին, հասցեագրված Հալեպի նահանգապետին, որի մեջ ասվում էր. «Մեզ հայտնի է դարձել, որ օտարերկրացի շատ սպաներ ճանապարհներին սեսիլ են վերոհիշյալ մարդկանց [հայերի] դիակներ և լուսանկարել են։ Անհրաժեշտ է, որ այդ դիակները իսկույն թաղվեն, այլ ոչ թե ի ցույց դրվեն։ (Տե՛ս Саакян Р. Г. Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915—1916 гг. ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1965, № 3, էջ 84)։— 387։

31. Հայերի կոտորածի անմիջական ականատես գերմանացու ճամփորդական նյութերը գրվել են նրա Թուրքիայում եղած ժամանակ և ուղարկվել են Ժնև՝ Հայերի օգնության շվեյցարական կոմիտեի հասցեով, որը և հրատարակել է "Quelques documents sur le sort des Arméniens en 1915" ժողովածուի III պրակում։

Նոթերի հեղինակը իր ծառայության բերումով ստիպված է եղել շրջել Օսմանյան կայսրության ընդարձակ շրջաններում, լինելու Կիլիկիայում, Սիրիայում և այլ վայրերում, որտեղ նա վկան է եղել այն ոճրագործությունների, որ կատարել են Թուրք ոստիկանները, սպաները և տեղական իշխանությունները հայ խաղաղ բնակչության նկատմամբ։ Իր պատմության մեջ հեղինակը բերում է կոտորածի այլ վկաների ցուցմունքներ (դատելով նրանց արտահայտություններից, նրանք Թուրքեր են կամ օտարերկրացիներ), որոնց անունները հրատարակիչները լրիվ չեն տալիս, այլ նշում են միայն անվանատառերը, քանի որ այդ անձինք շարունակում էին մնալ Թուրքիայում։ Զգուշության նկատառումներով չի հրապարակված նաև «Ճանապարհորդական նոթերի» հեղինակի անունը, որն այն ժամանակ մահացել է Թուրքիայում, բայց, ըստ երևույթին, այնտեղ ազգականներ է ունեցել։ Այս փաստաթուղթն ամբողջությամբ տրված է Բրայսի ժողովածուի երկու հրատարակություններում։— 390։

32. Դ-ր Մարտին Նիպագե— գերմանացի ուսուցիչ, 1912—1916 թթ. եղել է Հալեպի գերմանական ռեալական դպրոցի ավագ դասատու։ Նրա դիմումը՝ «Մի քանի խոսք գերմանական ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչներին», Թուրքիայում հայերի կոտորածի մասին գերմանացի ականատեսների առաջին փաստաթղթերից մեկը, բազմաթիվ արձագանքներ առաջացրեց եվրոպական մամուլում։ Երիտթուրքական պարագլուխների ոճրագործությունների մերկացումը վնաս էր բերում Գերմանիայի հեղինակությանը, ուստի և գերմանական ոլոր կիսապաշտոնական թերթերում փորձեր արվեցին կասկածի ենթարկել դ-ր Նիպագեի գոյությունն իսկ։ Մարտին Նիպագեի դիմումը առաջին անգամ հրատարակվել է ֆրանսերեն՝ "Quelques documents sur le sort des Arméniens en 1915" ժողովածուի III պրակում, ապա Բրայսի ժողովածուի ֆրանսիական հրատարակության մեջ, նոր փաստաթղթերի բացումով։ 1917 թ. այդ փաստաթուղթը տպագրվել է Լոնդոնում անգլերեն հրատարակվող հայկական "Ararat" ամսագրի № 44—45-ում։ Նիպագեի դիմումը գերմաներեն լույս է տեսել առանձին գրքույկով 1919-ին։— 394։

33. Այս փաստաթուղթը հիմնականում համընկնում է նրա հետ, որը հրապարակվել է հունվարին ռուսական թերթերում, իսկ ապա արտատպվել "Gazette de Lausanne"-ում 1916 թ. փետրվարի 13-ին։ Այս փաստաթուղթը տպագրվել է նաև Բրայսի ժողովածուի երկու հրատարակություններում։ Ֆրանսիական հրատարակության մեջ փաստաթղթին կցված է բացատրական տեքստ, որտեղ ասվում է, թե Մուշի և Սասունի ինքնապաշտպանության ղեկավար Ռուբեն Տեր-Մինասյանին, հայերի հերոսական ինքնապաշտպանության ճնշումից հետո, հաջողվել է անցնել Կովկաս և ապա մեկնել Պետրոգրադ՝ ռուսական կառավարությանը հաղորդելու Արևմտյան Հայաստանի օրհասական դրության մասին։ Վերադարձի ճանապարհին, Մոսկվայի հայկական գաղութում նա հաղորդում է կատարել, որը և հրապարակվել է ռուսական թերթերում (Տե՛ս Le traitement des Arméniens dans l'Empire Ottoman..., Paris, 1916, p. 201—204):— 403:

34. Հայ լավագույն մտավորականության ձերբակալությունը տեղի է ունեցել ոչ թե ապրիլի 38-ին, այլ՝ 1915 թ. ապրիլի 24-ին։ Այդ սարսափելի գիշերը և հաջորդ մի քանի օրերին Կոստանդնուպոլսում և գավառներում ձերբակալվել է ընդհանուր առմամբ 800 հոգի՝ օսմանյան պառլամենտի պատգամավորներ, ուսուցիչներ, բժիշկներ, գրողներ, հրապարակախոսներ, փաստաբաններ, նկարիչներ, երաժիշտներ և այլն։ Ձերբակալվածների մեջ էին եղել ականավոր գրող, իրավաբան և հասարակական գործիչ Գրիգոր Զոհրապը (1860—1915), տաղանդավոր բանաստեղծներ Դանիել Վարուժանը (1884—1915), Սիամանթոն (Ատոմ Յարճանյան, 1878—1915), Ռուբեն Սևակը (Չիլինկիրյան, 1885—1915), հայտնի գրողներ Թլկատինցին (Հովհաննես Հարությունյանը (1860—1915), Տիգրան Չոյջությանը (1884—1915), Սմբատ Բյուրատը (1862—1915), նշանավոր դերասան Ենովք Շահենը (1881—1915) և ուրիշ շատերը։ Նրանց բոլորին խմբերով աքսորեցին Անատոլիայի խորքերը, մեծ մասամբ Չանկըրի քաղաքը (Անկարայի և Կաստամոնուի միջև) և Չորում ավանը (Ամասիա քաղաքից արևմուտք)։ Այնտեղ նրանցից շատերը առանց որևէ դատի ու հետաքննության գազանաբար սպանվեցին։ Մյուսները զոհվեցին աքսորի ճանապարհին՝ անասելի տառապանքների՝ և խոշտանգումների ենթարկվելուց հետո։ Վառուժանին, օրինակ, ստիպել են իր ձեռքով փորել իր գերեզմանը։ Զոհրապի դուխը ջախջախել են Շեյթան Դերե ավանի մոտ (Ուրֆայի և Դիարբեքիրի միջև)։ Հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասը (1869—1935) հոգեկան ցնցումներից խելագարվեց։ Բարբարոսաբար ոչնչացնելով Թուրքիայի հայ մտավորականությանը՝ երիտթուրքական կառավարությունը դյուրացրեց հիմնական ծրագրի իրականացումը՝ Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության ոչնչացումը։— 434։

35. Առնոլդ Ջոզեֆ Թոյնբի (1889—1975)— անգլիացի հայտնի պատմաբան և փիլիսոփա, Լոնդոնի համալսարանի միջազգային հարաբերությունների պատմության պրոֆեսոր։ Հեղինակն է "Stady of History" բազմահատոր հրատարակության և այլ աշխատությունների, այդ թվում և Թուրքիայի մասին մի քանի գրքերի (տես մատենագիտությունը)։ "Armenian Atrocities" գիրքը, որից բերվում են հեղինակի առանձին արտահայտություններ ու փաստաթղթեր, գրված է գերմանացի միսիոներների, շվեյցարացի, ամերիկացի և այլ քաղաքացիների բազմաթիվ հաղորդումների ու վկայությունների,

ինչպես և եղեռնի ականատեսների նամակների ու պատմածների հիման վրա, որոնք տպագրվել են չեզոք երկրների մամուլում։ Ա. Թոյնբիի գիրքը 1916 թ. տպագրվել է ֆրանսերեն։ Թարգմանվել է նաև արևմտահայերեն և գերմաներեն։— 468։

36. Յոհաննես Լեփսիուս (1858—1926)— գերմանացի հումանիստ, արևելագետ, բողոքական քահանա, «Գերմանա-հայկական ընկերության» նախագահը։ Յ. Լեփսիուսը երկար տարիներ Օսմանյան կայսրության հայերի վիճակի վերաբերյալ փաստեր էր հավաքում և ուսումնասիրում։ 1896 թ. լույս տեսավ նրա առաջին գիրքը՝ «Հայաստանն ու Եվրոպան» (թարգմանված է ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով), որտեղ բազմաթիվ վավերագրական տեղեկություններ էին հավաքված 1894—1896 թթ. հայկական կոտորածների մասին։ 1915 թ., այն բանից հետո, երբ մամուլում լուրեր թափանցեցին արևմտահայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածի մասին, Լեփսիուսը եղավ Թուրքիայում, որտեղ իր ունեցած կապերի շնորհիվ նրան հաջողվեց թուրքական ցեղասպան քաղաքականությունը մերկացնող բազմաթիվ փաստաթղթեր հավաքել։ Այդ հավաստի տեղեկությունների հիման վրա Լեփսիուսը 1916 թ. գրեց «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» և, հրատարակելով ձեռագրի իրավունքով, գաղտնաբար ուղարկեց "Deutsche Orient Mission"-ի անդամներին։ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո Լեփսիուսի այս գիրքը լույս տեսավ երկրորդ անգամ, արդեն մասսայական հրատարակությամբ, ինչպես և թարգմանվեց ֆրանսերեն և հայերեն։ 1919 թ. դ-ր Լեփսիուսը հրատարակեց փաստաթղթերի մեծարժեք ժողովածու՝ «Գերմանիան և Հայաստանը», որտեղ հավաքված են գերմանական դեսպանների, հյուպատոսների և Թուրքիայում հավատարմագրված այլ դիվանագիտական աշխատողների զեկույցները, գերմանացի քաղաքացիների դիմումներն ու նամակները և բազում այլ փաստաթղթեր, որոնք անհերքելիորեն վկայում են արևմտահայ բնակչության ոչնչացման կանխամտածված բնույթը և անուղղակիորեն բացահայտում կայզերական Գերմանիայի կառավարող շրջանների թողտվությունը։ Դ-ր Լեփսիուսի մասին տես Герман Гольц, Р. С. Корхмазян. Доктор Иоганнес Лепсиус. Страницы жизни. «Страны и народы Ближнего и Среднего Востока». XII, Турция». Е., 1985, с. 116—142: — 471։

37. Անճշտություն է։ Խոսքը երկու գերմանուհիների՝ գթության քույրերի մասին է։ Տե՛ս ծանոթագրություն 29.— 479։

38. Ֆայեզ էլ Ղոսեյնի գրքույկը առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն 1917 թ. Բոմբեյում, ուր հեղինակին հաջողվել էր փոխադրվել երկար դեգերումներից հետո։ Այդ նույն թվականին այն թարգմանվել և տպագրվել է անգլերեն։ 1918 թ. դրոշ հավելումներով գրքույկը լույս է տեսել գերմաներեն Ցյուրիխում, իսկ 1922-ին՝ Պոտսդամում։ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության 50-ամյակի առթիվ Ֆայեզ էլ Ղոսեյնի գրքույկը 1965 թ. վերահրատարակվեց ֆրանսերեն՝ Բեյրութում։

Գրքույկը թարգմանված է նաև հայերեն։ Ֆրանսերեն տեքստը համադրված ու համեմատված է 1922 թ. գերմաներեն, ինչպես նաև հայերեն հրատարակությունների հետ, որոնցից ավելի ժողովածուի շարադրանքի մեջ են

մտցվել առանձին փոքր հատվածներ, որ չէին ընդգրկված ֆրանսերեն առաջին հրատարակության մեջ։— 494։

39. Մեվլան-զադե Ռիֆաթ— երիտթուրքական կուսակցության նախկին գործիչ։ Իր գրքում, որը կիսահուշագրական բնույթ է կրում, հեղինակը բացահայտում է հայերի տեղահանության ու զանգվածային ջարդերի կազմակերպման մի շարք պատճառներ։ Գրքում նկարագրված են նաև քեմալական շարժման ծագումն ու այլ իրադարձություններ։ Մեջբերված հատվածները թարգմանված են արաբատառ թուրքերեն բնագրից, համադրվել ու համեմատվել են 1938 և 1968 թվականներին Բեյրութում հրատարակված արևմտահայերեն թարգմանությունների հետ։— 494։

40. Հրապարակվող հատվածը բովանդակող գրքում բերված են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մի շարք հայտնի թուրք բժիշկների կատարած դաժան, անմարդկային արարքների բազմաթիվ փաստեր, ցույց է տրված, որ հայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի կազմակերպման և իրականացման համար անմիջականորեն մեղավոր թուրք պատասխանատու գործիչների մեծամասնությունը դիպլոմավոր բժիշկներ էին, որոնք կրթություն էին ստացել Ստամբուլի բարձրագույն բժշկական դպրոցում կամ եվրոպական համալսարաններում։ Այդ մարդասպանների թվում էին դոկտոր Նազիմը և դոկտոր Բեհաեդդին Շաքիրը՝ հատուկ կազմակերպության, կոտորածների գործերի յուրատեսակ մինիստրության («Թեշքիլաթի մահսուսե», տես 237 փաստաթուղթը) ղեկավարները, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ փաշան, որը գլխավորել էր 100000-ից ավելի քրիստոնյաների (հայերի, ասորիացիների, քաղդեացիների) կոտորածը, Մարզվանի նահանգապետ Ֆայիքը, որը պարծենալով հայտարարել էր, թե սպանել ու կախել է հազարավոր հայերի, և շատ ուրիշներ։ Գրքում նշված են հայ բժիշկների՝ վիրաբույժների, թերապևտների, ատամնաբույժների, դեղագործների և այլոց անունները (ընդհանուր հաշվով 221 մարդ), որոնց գազանաբար տանջամահ էին արել (Մանրամասն տե՛ս Les persécutions contre les médecins arméniens. Pendant la guerre générale en Turquie. Constantinople, 1919, էջ 26—53)։— 524։

41. Սույն ժողովածուում կրճատված տեսքով զետեղված Էմիլ Դո Մերգի՝ Մանտոբան քաղաքի բողոքական աստվածաբանության ֆակուլտետի դեկանի ճառը արտասանվել է Փարիզում 1916 թ. հունվարի 16-ին՝ Հայաստանին նվիրված երեկոյին, իսկ այնուհետև հրապարակվել որպես 1917 թվականին հեղինակի լույս ընծայած «L'Arménie, les massacres et la question d'Orient» վերնագրով գրքի նախաբան։ Այդ գրքում հեղինակը բերում է հայերի կոտորածի անմիջական ականատեսների՝ տարբեր ազգության մարդկանց պատմածները, հանգամանորեն շարադրում երիտթուրք պարագլուխների համախոլամական ու համաթուրքական ծրագրերը, տալիս Իթթիհադի ղեկավարներ Թալեաթի ու Էնվերի քաղաքական գործունեության բնութագիրը և այլն։— 525։

42. Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ականավոր գործիչ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը (1886—1934) մտահոգվել էր արևմտահայերի ճակատագրով։ Դատապարտելով հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, Ս. Մ. Կիրովը դրա հետ մեկտեղ ասա հասա-

կայնության ուշադրությունն էր հրավիրում հրաշքով փրկված հայ գաղթականների աղետալի վիճակի վրա, կոչ անելով համակողմանի օգնություն ցույց տալ նրանց։ «Գաղթականների մոտ» հոդվածում, որը տպագրվել էր «Թերեք» թերթի 1916 թ. փետրվարի 25-ի համարում, Ս. Կիրովը գրում էր. «...եթե ոմանց համար պատերազմն իսկական աղետ էր, սարսափ, ապա զա այդպիսին էր, անտարակույս, այն մարդկանց համար, ովքեր հարկադրված էին թողնել հարազատ վայրերը և ապաստան փնտրել օտար եզերքում, օտար մարդկանց շրջանում։

Գաղթականները սփռվել են ռուսական երկրով մեկ։ Հայրերը կորցրել են իրենց երեխաներին, եղբայրները չգիտեն, թե որտեղ են իրենց քույրերը, քայքայվել են ամբողջ ընտանիքներ, կորսված է նրանց ողջ կարողությունը։

Վիճակն իրոք որ ահավոր է...»։— 527։

43. Ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսը (1844—1924) ավելի քան երկու տասնամյակ հետևողականորեն և իրեն հատուկ կրքոտությամբ հանդես էր գալիս ի պաշտպանություն ճնշված ու կեղեքված հայերի, ի պաշտպանություն համիդյան և երիտթուրքական ջարդարարների զոհերի։ Նա եղել է կազմակերպիչ ու ոգեշնչողը բազմաթիվ միջոցառումների, նպատակ ունենալով լայն հասարակայնությանը ծանոթացնել կամայականության, հալածանքների և պարբերական ջարդերի այն իրադրությանը, որ մշտապես տիրում էր Արևմտյան Հայաստանում։

Դեռևս XIX դարի վերջերին՝ 1894—1896 թթ. զանգվածային կոտորածի ժամանակ Ա. Ֆրանսը բողոքի ձայն բարձրացրեց սուլթանական դահիճների դեմ, որոնք արյամբ էին հեղեղել հայերի բուն հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը։ Նա կազմակերպում է և անձամբ մասնակցում նվիրատվությունների հանգանակմանը որբացած հայ երեխաների օգտին (այդ մասին տես Ա. Ֆրանսի նամակագրությունը Ա. Չոպանյանի հետ։— Հայաստանի Հանրապետության մշակույթի միխիստրության գրականության ու արվեստի թանգարան։ Արշակ Չոպանյանի արխիվ, արտասահմանյան նամակների բաժին, № 9684)։ Ժան Ժորեսի և Ֆրանսիս դը Պրեսանսեի հետ Ա. Ֆրանսը մասնում էր 1900—1914 թթ. Փարիզում լույս տեսնող "Pro Armenia" հանդեսի խմբագրության կազմի մեջ և եռանդուն համագործակցում հանդեսին։ 1903—1904 թթ. «Ի պաշտպանություն Հայաստանի և Մակեդոնիայի» կոմիտեի կողմից Փարիզում, Լոնդոնում, Հռոմում, Միլանում, Ժնևում և Եվրոպայի այլ խոշոր կենտրոններում միտինգներ ու խորհրդաժողովներ էին կազմակերպվում ի պաշտպանություն հայերի ու մակեդոնացիների, որոնք ամենից շատ էին տուժում սուլթանական արյունոտ լծից։ Այդ շարժման ղեկավարներից ու եռանդուն մասնակիցներից մեկը Անատոլ Ֆրանսն էր։ 1903 թ. մայիսին նա երկու անգամ մեկնում է Իտալիա՝ մասնակցելու նման կարգի հանրահավաքների։ Առաջին հանրահավաքը տեղի է ունենում Միլանում՝ 1903 թ. ապրիլ 26-ին, մյուս երկուսը՝ Հռոմում (1903 թ. մայիսի 7-ին և 24-ին)։ Վերջին հանրահավաքում, մայիսի 24-ին "Adriano" թատրոնի դահլիճում արտասանած ճառում Անատոլ Ֆրանսը նշում է. «Սուլթան Աբդուլ-Համիդ II-ը մի հրեշ է, որը մշտապես դողում է իր խղճուկ ամենազորության մեջ և, սարսափելով իր իրական ոճրագործություններից, իրեն հանգստացնում է նրանով, որ նոր ոճրեր է գործում. 1893-ից մինչև 1896 թ. նա կախել ու ողջակիզել է 300

հազար հայերի և այդ ժամանակից սկսած նողկալի զգուշավորությամբ զբաղվում է որբացած ժողովրդի հետևողական բնաջնջմամբ...» (Մանրամասն տե՛ս Anatole France. Trente ans de vie sociale. *I.* Introduction générale, *1897—1904*. Paris, *1949, էջ 137—138, 143—147*)։ Անատոլ Ֆրանսը ողջունում է նաև 1906 թ. հունվարի 23-ին Լոնդոնում բացված խորհրդաժողովը, որը նվիրված էր հայկական հարցին (Այդ մասին տե՛ս «Pro Armenia», premier mars, *1906, № 129, էջ 865*)։ Սույն ժողովածուում բերված Ա. Ֆրանսի ճառը արտասանվել է Հայաստանին նվիրված երեկոյին, որը տեղի էր ունեցել 1916 թ. ապրիլի 9-ին Սորբոնի Մեծ դահլիճում (Տե՛ս «Hommage à l'Arménie», Paris, 1919, p.V—VII, 1—5, 44—47)։

Ա. Ֆրանսից բացի, հիշյալ երեկույթում ելույթ են ունեցել պատգամավորների պալատի նախագահ և արտասահմանյան երկրների հետ Ֆրանսիայի բարեկամության ընկերության նախագահ Պոլ Դեշանելը, լուսավորության մինիստր ակադեմիկոս Պոլ Պենլևեն, աբբահայր Վետելեն և ուրիշներ։ Հանդիսավոր ժողովի հասցեով հեռագրեր էին ստացվել «Հանուն Հայաստանի անգլիական կոմիտեի» նախագահ Էնյուրին Ուիլյամսից, լորդ Բրայսից, Մոսկվայի գրական-արտիստական խմբակի նախագահ, հանրահայտ բանաստեղծ Վալերի Բրյուսովից, Թուրինում լույս տեսնող «Armenia» հանդեսի խմբագիր պրոֆեսոր Կոռադո Կոռադինոյից, շվեյցարացի հայտնի հասարակական գործիչ Լեոպոլդ Ֆավրից և ուրիշներից։ Վ. Բրյուսովի հեռագրում ասվում էր. «Մոսկվայի գրական-արտիստական խմբակը արտահայտում է իր ամենախոր համակրանքը, իր ամենասրտագին զղացումներն ու անկեղծ մաղթանքները հայ ժողովրդին» (La revue des "Amitiés franco-etrangères", № 4, mai-juin 1916, p. 9—11)։— 529։

44. Գերմանական և միջազգային սոցիալիստական շարժման նշանավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը (1871—1919) քանիցս հանդես է եկել գերմանական կայսրապաշտների գիտությամբ և երիտթուրք կառավարիչների հրամանով խաչաղ հայ բնակչության նկատմամբ գործադրված հրեշավոր արարքների մերկացմամբ։ 1916 թ. հունվարի 11-ին Լիբկնեխտը ռայխստագում հանդես եկավ հարցապնդմամբ այդ խնդրի առթիվ, աներկմտորեն ակնարկելով, որ կայզերի կառավարությունը ևս պատասխանատվություն է կրում հայերի զանգվածային կոտորածի համար։ Լիբկնեխտի հարցապնդումն իրարանցում առաջացրեց գերմանական պառլամենտում։ Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան շտապ նիստ գումարեց այդ հարցը քննարկելու համար, սակայն կուսակցության աջցենտրիստական ղեկավարությունը թշնամաբար վերաբերվեց Լիբկնեխտի ելույթին և դատապարտեց այն։— 529։

45. Ջեյմս Բրայս (1838—1922)— անգլիացի պետական գործիչ, Լորդերի պալատի անդամ։ Հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, 1876 թ. այցելել է Կովկաս և Հայաստան, իր դիտարկումներն ընդհանրացնելով "Transcaucasia and Ararat" գրքում, որը լույսը էր տեսել Լոնդոնում 1877 թ.։ 1916 թ. Լոնդոնում նրա լույս ընծայած «Հայերի նկատմամբ վերաբերմունքը օսմանյան կայսրությունում» ծավալուն ժողովածուն բազմաթիվ փաստաթղթեր է պարունակում 1915—1916 թթ. Թուրքիայում հայերի տեղահանության ու զանգվածային կոտորածների մասին։ Ժողովածուն բովանդակում է 158 փաստաթուղթ։ Դրանք ջարդի անմիջական ականատեսների՝

շնորք երկրների՝ Շվեյցարիայի, Դանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (վերջինս համաշխարհային պատերազմի մեջ էր մտել 1917 թ.) և այլ պետությունների միսիոներների, բժիշկների, պրոֆեսորների, սանիտարուհիների, պետական ծառայողների և այլ ներկայացուցիչների պատմածներն են, ինչպես նաև նամակներն ու դիմումները իրենց կառավարություններին։ Բրայսի ժողովածուում զետեղված են նաև Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի ներկայացուցիչների մերկացնող ցուցմունքներն ու վկայությունները և շատ այլ նյութեր։ Համադրման ու համեմատման միջոցով Բրայսին հաջողվել էր հաստատել ժողովածուում զետեղված փաստերի բացարձակ հավաստիությունը։ Գրքին կցված է Ջ. Բրայսի ծավալուն առաջաբանը, որի մեջ հեղինակը տալիս է Հայաստանի պատմության համառոտ ակնարկը հնագույն ժամանակներից մինչև 1915 թ. և մանրամասն շարադրում արևմտահայության տեղահանության ու զանգվածային ջարդերի պատմությունը։ Այդ նույն 1916 թ. Ջ. Բրայսի ժողովածուն Փարիզում հրատարակվեց ֆրանսերեն՝ լրացված երեք նոր փաստաթղթով, որոնք չէին բերված անգլիական հրատարակության մեջ։ Կրճատված տեսքով հրատարակվել է նաև հայերեն։— 530։

46. Հերբերտ Ադամս Գիբոնս (1880—1934)— ամերիկացի լրագրող և իրավաբան-միջազգայնագետ, փիլիսոփայության դոկտոր, «Օսմանյան կայսրության հիմնադրումը», «Եվրոպայի նոր քարտեզը» և այլ աշխատությունների հեղինակ։ Տարբեր ժամանակներում, մասնավորապես 1908—1913 թթ. գտնվել է Թուրքիայում, որպես "New York Herald" ամերիկյան թերթի և եվրոպական մի քանի լրագրերի թղթակից, ինչպես նաև դասավանդել է Տարսոնի ամերիկյան քոլեջում։ Թուրքիայում գտնվելու տարիներին դ-ր Գիբոնսը բազմիցս ականատես է եղել սուլթանական և երիտթուրքական իշխանությունների կազմակերպած հայկական ջարդերին։ «Մարդկությունը չի կարող խուլ մնալ դժբախտ զոհերի օգնության ձիչերի հանդեպ...,— գրել է նա իր գրքույկի առաջաբանում։— Իմ բարոյական պարտքն եմ համարում հանրության ուշադրությունը սևեռել «նորագույն պատմության ամենասև էջերին», լուսաբանելով փաստերն ու բացահայտելով, թե ում վրա է ընկնում պատասխանատվությունը»։ Գիբոնսի գիրքը հիմնված է հավաստի փաստերի վրա։ Նրա համար աղբյուր են հանդիսացել մասնավորապես «Հայերի ու սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեի» զեկուցագիրը, որը պարունակում էր 35 վկաների ցուցմունքներ, "Sonnenaufgang" հանդեսի խմբագրությանը դերմանացի միսիոներների ուղարկած նամակները, ականատեսների վկայություններ, որոնք հեռագրերի ձևով 1915 թ. օգոստոս-հոկտեմբերին հրապարակվել են "Temps", "Courrier du Centre", "Tribune de Genève", "Journal de Genève", "Gazette de Lauzanne", "Evening Post", "Manchester Guardian", Frankfurter Zeitung", "Paris-Midi" և այլ թերթերում։ 1916թ. Հ. Ա. Գիբոնսի գրքույկը հրատարակվել է նաև ֆրանսերեն, հայերեն և ռուսերեն։— 538։

47. Ռենե Գիենոն (1870—1958)— ֆրանսիացի պատմաբան, հրապարակախոս, Թուրքիայի պատմությանը նվիրված հետազոտությունների հեղինակ։ Գիենոնի գիրքը ամբողջությամբ թարգմանվել է հայերեն և հրատարակվել Սամսունում 1919-ին։— 540։

48. Ռուս նշանավոր բանաստեղծ և գիտնական Վալերի Յակովլևիչ Բրյուսով (1873—1924) շատ շանքեր ու ժամանակ է նվիրել հայ ժողովրդի բազմադարյա պատմության և մշակույթի խոր ուսումնասիրմանն ու տարածմանը։ «Ինչքան ավելի էի խորամուխ լինում Հայաստանի ուսումնասիրմանը, այնքան պարզորոշ էին իմ առջև ուրվագծվում նրա պատմական ճակատագրերն ու նրա մեծ մարդկանց կերպարները..., այնքան ավելի համառորեն էր իմ առջև հառնում այն կշտամբանքը, որ անցյալում կարող էի այդպես անտարբեր անցնել այդ աշխարհի կողքով»,— գրել է Վ. Բրյուսովը իր պատրաստած «Հայաստանի պոեզիան» ժողովածուի նախաբանում։ (Տե՛ս Поэзия Армении с древнейших времен до наших дней. Под редакцией, со вступительным очерком и примечаниями **Валерия Брюсова.** М., 1916, с. 6)։ 1916 թ. Վ. Բրյուսովը այցելում է Հայաստան, լինում Երևանում, էջմիածնում, ականատես դառնում հայ գաղթականների ողբերգությանը, հանդիպումներ ու զրույցներ ունենում կոտորածի անմիջական ականատեսների հետ։ Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված գազանությունների դեմ Վ. Բրյուսովն իր բողոքն արտահայտել էր այդ ժամանակ արդեն տպագրության պատրաստ մի շատ հետաքրքիր և ինքնատիպ աշխատության՝ «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրության» մեջ (Մ., 1918), որը երկրորդ հրատարակությամբ լույս տեսավ 1940 թ. Երևանում՝ Մ. Գ. Ներսիսյանի առաջաբանով։ Հայաստանում Վալերի Բրյուսովի անունը շրջապատված է խոր հարգանքով ու սիրով։— 541։

49. Հեղինակը նկատի ունի հայերի զանգվածային կոտորածը Քևմախի ֆիրմում (Երզնկա քաղաքից հարավ-արևմուտք) 1915 թ. հունիսին։ Մայիսի վերջերին-հունիսի սկզբներին այստեղ էին քշվել 20—25 հազար հայեր, նամավելապես կանայք ու երեխաներ, որոնք տեղահանվել էին Երզնկայից։ Մի քանի օրում՝ 1915 թ. հունիսի 10—14-ը նրանք բոլորն էլ բարբարոսաբար սպանվեցին։ Դա անպաշտպան կանանց, երեխաների ու ծերունիների նկատմամբ գործադրված գազանային հաշվեհարդար էր, անողոք նախճիր։ Կոտորածից մազապուրծ սակավաթիվ հայեր պատմում էին, որ Քևմախի կամրջից երեխաներին նետում էին անդունդը։ Ի տարբերություն այլ վայրերի, որտեղ տեղահանված հայերի կոտորածն իրականացնում էին նրան ուղեկցող ժանդարմներն ու զինված պատանեկախմբերը, այստեղ ոճրագործությունը կատարել էին թուրքական 86-րդ հեծելազորային բրիգադի զինվորները։ Այդ մասին իր զեկուցում հաղորդում էր Էրզրումում գերմանական հյուպատոս Ռիխտերը, որը նաև նշել էր, որ այնտեղ գտնվող թուրքական երրորդ զորաբանակի հրամանատարությունը ոչ միայն իրազեկ էր գործին, այլև ինքն էր կանոնավոր զորքերին թույլ տվել մասնակցելու Երզնկայի հայ բնակչության բնաջնջմանը (Deutschland und Armenien 1914—1918. Potsdam, 1919, S. XXIV. Տե՛ս Ե. Ղ. Սարգսյան. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918։ Երևան, 1964, էջ 245)։— 546։

50. Տիգրան Անդրեասյանի՝ Զեյթունի հայ բողոքականների քահանայի պատմածը տպագրվել էր 1915 թ. «Ararat» հանդեսի նոյեմբերյան համարում։ Այնուհետև այն զետեղվել էր Բրյուսի ժողովածուի երկու հրատարակություններում, ինչպես նաև առանձին գրքույկով հրատարակվել ֆրանսերեն։ Մուսա լեռան հայերի հերոսական ինքնապաշտպանության առավել

մանրամասն նկարագրությունը տրված է Տիգրան Անդրեասյանի հուշագրություններում, որոնք լույս են տեսել 1915 և 1935 թթ.։ Այդ գոյամարտի վերջին օրերի մասին գրել է ֆրանսիացի պատմաբան Պոլ դյու Վեոն իր «Քրիստոնյաները վտանգի մեջ են Մուսա լեռան վրա» գրքում (Տե՛ս Paul du Véou. Chrétiens en péril au Moussa Dagh. Paris, 1989. p. 49—55)։ Հայերի քաջարի դիմադրությանն է նվիրել իր «Մուսա լեռան քառասուն օրը» հիանալի վեպը ավստրիացի նշանավոր արձակագիր Ֆրանց Վերֆելը (1890—1945), որի գիրքը լավագույնն էր ճանաչվել 1934 թ. արձակ ստեղծագործությունների թվում և արժանացել միջազգային գրական մրցանակի։ Լույս տեսնելուց անմիջապես հետո Վերֆելի պատմավեպը թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն և այլ լեզուներով։ Վեպը հայերեն, լեհերեն, անգլերեն, գերմաներեն, հունգարերեն, չեխերեն և ռուսերեն հրատարակվել է մի քանի անգամ։ Թարգմանվել է մոտ 30 լեզուներով։— 552։

51. Առաջին աշխարհամարտից հետո, երբ Օսմանյան կայսրության փլուզման հետևանքով արաբական երկրների ժողովուրդները թոթափեցին թուրքական դարավոր լուծը, Սուեզիայի գրեթե բոլոր հայերը վերադարձան իրենց հարազատ վայրերը։ Բայց հետագայում նրանք ստիպված եղան երկրորդ անգամ թողնել իրենց օջախները. թուրքական կառավարող շրջանների հետ Ֆրանսիայի կառավարության կնքած գործարքի հետևանքով Ալեքսանդրետի սանջակը 1939 թվականին անցավ Թուրքիային, և հայերը նորից էին ստիպված գաղթել։ 1947 թվականին մուսալեռցիների մի մասը, այդ թվում ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ Ծսայի Ցաղուբյանը (մահացել է Երևանում 1957 թ.) հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան։— 555։

52. Վանի, Շապին-Գարահիսարի, Սասունի և Ուռհայի հայության հերոսական ինքնապաշտպանության մասին տես. Оборона Вана. М., 1917. Кок они разгромили наш Сасун. М., 1917. La défense héroique de Van (Arménie). Genève, 1916. The Treatment of Armenians in the Ottoman Empire..., London, 1916. Հ. Տեր-Հարությունյան. Շապին-Գարահիսարի ապստամբությունը, Թիֆլիս, 1917, Դիլիջանական հայորդին Մկրտիչ Եպիսկոպոսյան, Աթենք, 1937. Հուշամատյան Մեծ եղեռնի. Հրատ. «Ջարթոնքի» խմբագրության, Բեյրութ, 1965 և այլն։— 555։

53. Անրի Բարբի— ֆրանսիացի լրագրող։ Որպես Փարիզի «Le Journal» թերթի թղթակից 1916—1917 թթ. նա եղել էր պատերազմական գործողությունների ասիական թատերաբեմում, Արևմտյան Հայաստանում և Միջագետքում, որտեղ նրան վիճակվել էր դառնալ այն ողբերգական անցուդարձերի ականատեսը, որոնց մասին նա գրել է իր թղթակցություններում։ Անրի Բարբիի գիրքը լույս է տեսել Փարիզում 1917 թվականին հետևյալ վերնագրով. Henry Barby. Au pays de l'épouvente. L'Arménie martyre. Հենց այդ հրատարակությունից էլ ռուսերեն է թարգմանվել 1919 թ. և հայերեն՝ 1920-ին։— 559։

54. Նայիմ բեյ— թուրք պաշտոնյա, 1915—1917 թթ. եղել է Հալեպի գաղթականների տեսչության գլխավոր քարտուղարը։ Հենց այդ տեսչությանն էր հանձնարարված կազմակերպել կայսրության բոլոր ծայրերից Հալեպ աքսորված հայերին Դեր Զորի անապատ քշելու գործը։ Այդ պաշտոնին գտնվելու Նայիմ բեյը ականատես էր եղել անպաշտպան մարդկանց դեմ կատարվող

հանցագործություններին։ Պաշտոնավարության տարիներին նրա ձեռքով անցել էին մեծ թվով գաղտնի փաստաթղթեր՝ Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի ծածկագիր հեռագրերը, որոնք վերաբերում էին հայերի տեղահանության ու կոտորածի կազմակերպմանը, թուրք պաշտոնատար անձանց հասցեագրված հրամաններ ու հրահանգներ և այլն։ Երբ 1918 թվականի հոկտեմբերին անգլիական զորքերը մտան Հալեպ, հայերի բնաջնջմանը մասնակից բոլոր թուրք պաշտոնատար անձինք հեռացան քաղաքից։ Ինչպես խոստովանում է Նայիմ բեյը, «քաղաքից թուրքերի հեռանալը շատ նման էր հանցագործների փախուստի» (The Memoirs of Naim Bey, London, 1920, p. XI):

Նայիմ բեյը մնացել էր Հալեպում, ուր նրան փնտրել-գտել էր հայ մտավորական Արամ Անտոնյանը, որը պատահաբար փրկվել էր տարագրվելիս։ Նայիմ բեյը համաձայնվում է Արամ Անտոնյանին հանձնել գաղտնի փաստաթղթերը իր հուշագրությունների հետ միասին, որոնք 1920 թ. հրապարակվեցին անգլերեն՝ Լոնդոնում։ Նույն թվականին այդ փաստաթղթերն ու Նայիմ բեյի հուշերը Փարիզում լույս տեսան ֆրանսերեն՝ Արամ Անտոնյանի մեկնաբանությամբ։ Այդ գիրքը երեք անգամ հրատարակվել է արևմտահայերեն։ Վերջին հրատարակությունը տես Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը։ Երևան, 1990։ «Նայիմ բեյի հիշողությունները» երեք հրատարակություն են ունեցել անգլերեն։ 1964 թ. այն լույս տեսավ երկրորդ հրատարակությամբ Նյուքասլ Սքվար քաղաքում (Փենսիլվանիա, ԱՄՆ), գրքի վերջում զետեղված է 18 լուսանկար, որոնք պատկերում են արևմտահայերի նկատմամբ կատարված բռնությունները։ Լուսանկարներն արված են գերմանացի և ավստրիացի սպաների՝ կոտորածի անմիջական ականատեսների կողմից։ Վերջին՝ երրորդ հրատարակությունում, որը լույս է ընծայվել 1965 թ.՝ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության 50-ամյակի առթիվ, տրված է 8 նոր լուսանկար, ինչպես նաև 1948 թ. Նյու Յորքում հրատարակված Ջ. Գուտմանի «The beginnings of genocide. A brief account of the armenian massacres in World War I» գրքույկի լրիվ շարադրանքը։ Սույն ժողովածուում կրճատ տպագրվող «Նայիմ բեյի հիշողությունները» համադրված և համեմատված են ֆրանսերեն և արևմտահայերեն շարադրանքների հետ, ընդսմին վերացված են անգլերեն հրատարակություններում տեղ գտած անճշտությունները։— 559։

55. Տեղահանության ու կոտորածին վերաբերող բոլոր գաղտնի փաստաթղթերում «Հայտնի ժողովուրդ» արտահայտությունն օգտագործվել է միայն հայերի վերաբերմամբ։— 561։

56. «Նայիմ բեյի հիշողությունների» անգլերեն հրատարակություններում այս փաստաթուղթը սխալմամբ թվագրված է 9 մարտի 1915 թ.՝ փոխանակ 9 սեպտեմբերի 1915 թ. (Տե՛ս Aram Andonian. Documents officiels concernant les massacres arméniens, Paris, 1920, p. 34):— 565:

57. Կոպիլը շվեյցարացի ինժեներ էր։ Նշված տարիներին նա շատ ջանքեր էր գործադրել փրկելու համար աքսորված հայերին, որոնք աշխատում էին Բաղդադի երկաթուղում։— 571։

58. Այս դեկրետի իրականացմանը խանգարեց երիտթուրքական պարագլուխների զավթողական քաղաքականությունը, ինչպես նաև համապատաս-

խան նախապայմանների բացակայությունը, մասնավորապես ռուսական զորքերի հեռանալը Արևմտահայաստանից։ Մինչդեռ պաշտոնական հրատարակություններում Դեկրետի ձախողման պատճառները գնահատվել են միակողմանի։ «1918 թ. փետրվարին Թուրքերը, որպես պատրվակ օգտագործելով իրենց իսկ հրահրած բախումը հայկական ջոկատների և մուսուլման բնակչության միջև, իրենց զորքերը մտցրին «Թուրքահայաստանի» տարածք և հայ բնակչությանը զրկեցին ազատ ինքնորոշման իրենց իրավունքն իրականացնելու հնարավորությունից, որը նախատեսված էր Ժողկոմխորհի դեկրետով»։ (Документы внешней политики СССР. М., 1957, т. I, с. 712): — 583:

59. Անդրեյ Նիկոլաևիչ Մանդելշտամ (1869—1939)— ռուս դիվանագետ, իրավաբան և պատմաբան, Պետրոգրադի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր։ Տասնվեց տարի՝ 1898-ից մինչև 1914-ը Ա. Մանդելշտամը գտնվել է Թուրքիայում՝ որպես Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանության առաջին թարգման։ Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը» հիմնարար աշխատությունը գրված է հսկայական քանակությամբ փաստերի, պաշտոնական փաստաթղթերի, թուրքական աղբյուրների բարեխիղճ ուսումնասիրման, ինչպես նաև հեղինակի անձնական դիտարկումների հիման վրա։

Ա. Մանդելշտամի գրքից մեջբերված հատվածները սոսկ մի փոքր մասն են այն բաժնի, որը նվիրված է 1915—1916 թթ. Թուրքիայում իրականացված հայերի զանգվածային կոտորածին, որտեղ մեջ են բերվում վկաների բազմաթիվ ցուցմունքներ և արժանահավատ փաստեր, որոնք մինչև վերջ մերկացնում են հրեշավոր ոճրագործությունների մեղավորներին՝ երիտթուրք կառավարիչներին, ինչպես նաև ցույց են տալիս կայսերապաշտական Գերմանիայի անփառունակ դերը արևմտահայության ցեղասպանության իրականացման մեջ։ (Մանրամասն տե՛ս André Mandelstam. Le sort de l'Empire Ottoman. Lausanne – Paris, 1917, p. 187—331)։ Նշված գրքի առաջին մասը, որը նվիրված է երիտթուրքերի քաղաքականությանը պատերազմի նախօրյակին ու նրա տարիներին և հայերի զանգվածային ջարդերին, հայերեն է թարգմանվել և առանձին գրքով հրատարակվել Ստամբուլում 1919-ին։ Հայկական հարցում մեծ տիրություններ վարած քաղաքականությանն է նվիրված Ա. Մանդելշտամի մի այլ մեծարժեք աշխատությունը La Société des Nations et les Puissances devant le problème arménien. Paris, 1926: Ռուսերեն հրատարակված է նրա «Երիտթուրքական տերությունը» գիրքը (Մ., 1915)։— 601։

60. Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորդլևսկի (1876—1956)— խորհրդային նշանավոր արևելագետ, թուրքերենի, թուրքական գրականության, բանահյուսության և Փոքր Ասիայի միջնադարյան պատմության խոշոր մասնագետ։ 1946 թվականից՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։ Վ. Ա. Գորդլևսկու «Հայերը և պատերազմը» հոդվածը գրվել է 1917 թ.՝ ռուսական զորքերի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանում հեղինակի գտնվելու ժամանակ։ Առաջին անգամ լույս է տեսել «Թուրքիայի ուրվագծերը» վերնագրով հոդվածների ու ակնարկների ժողովածուում, այնուհետև

զետեղվել է Վ. Ա. Գորդլևսկու Ընտիր երկերի երրորդ հատորում, որը լույս է տեսել Մոսկվայում 1962 թ.։— 603։

61. «Թուրքահայաստանի մասին զեկուցագիրը» ՌԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ էր ներկայացվել 1917 թվականի նոյեմբերին, որի մասին ասվում է «Жизнь национальностей» շաբաթաթերթի խմբագրական ծանոթության մեջ, որն առաջին անգամ հրապարակել էր Վ. Տերյանի «Զեկուցագիրը»։ Հայ մեծատաղանդ բանաստեղծ և պետական ականավոր գործիչ Վանահ Տերյանը (1885—1920) եռանդագին մասնակցում էր Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր հայկական գործերի կոմիսարիատի աշխատանքին, Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ էր։ «Զեկուցագրի» հետ միասին Վ. Տերյանը Ժողկոմխորհին էր ներկայացրել «Դեկրետ Հայաստանի մասին» փաստաթղթի նախագիծը, որի առանձին դրույթներ արտացոլվեցին «Թուրքահայաստանի մասին դեկրետի» մեջ (տես փաստաթուղթ № 226)։— 605։

62. 1918 թվականի սկզբներին Թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս և գավթեցին Կարսն ու Ալեքսանդրապոլը։ Երևանի ուղղությամբ առաջացող Թուրքական ստորաբաժանումները 1918 թվականի մայիսի 21-ին դուրս եկան Սարդարապատ գյուղը, բայց հետագա օրերին՝ մայիսի 22—26-ը, հայկական զորամասերը աշխարհազորայինների հետ միասին ջախջախեցին Թուրքական զորքերին և հարկադրեցին նահանջել Ալեքսանդրապոլ։ Սարդարապատի հերոսամարտը կանխեց Երևանի և ամբողջ Արևելյան Հայաստանի գրավումը Թուրք գավթիչների կողմից։— 608։

63. Ցեղասպանության քաղաքականության հետևանքով 1914—1918 թթ. արևմտահայերի կրած մարդկային կորուստների մասին սույն ժողովածուում բերված տվյալների միջև զգալի անհամապատասխանություն կա. նշված են տարբեր թվեր՝ 600 հազար, 800 հազար, մեկ միլիոն և այլն։ Դ-ր Լեփսիուսը, հենվելով Թուրքիայում գերմանական հյուպատոսների ու դեսպանության պաշտոնական տվյալների վրա, հանգում է այն հետևության, որ 1915 թվականին տեղահանվել և կոտորվել էր 1396350 հայ։ Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ այն հեղինակների մեծամասնությունը, որոնց կարծիքով զոհվել էր մոտ մեկ միլիոն հայ, ելնում է այն բանից, որ նախքան պատերազմը Օսմանյան կայսրությունում 1800000 հայ էր ապրում։ Մինչդեռ այդ թիվը ակնհայտորեն նվազեցված է։ Շատ հետազոտողներ այն կարծիքին են, որ 1914-ին Թուրքիայում 2,3—2,5 միլիոն հայ էր ապրում։ (Տե՛ս Советская историческая энциклопедия, т. I, М., 1961, с. 748. Maurice Pernot. La question turque. Paris, 1923, p. 207, Jacques de Morgan. Histoire du peuple arménien. Paris, 1919, p. 297 և այլն)։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով, մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայում հայերի թիվը հասնում էր մոտ 2100 հազարի։ Այսպիսով, եթե նկատի առնենք, որ պատերազմի նախօրյակին արևմտահայերի թիվը կազմում էր մոտավորապես 2,3 միլիոն, ապա կարելի է հավատի համարել, որ միայն առաջին աշխարհամարտի տարիներին զոհվել է ավելի քան 1,3 միլիոն հայ, քանի որ փրկվածների թիվը մեկ միլիոնից էլ պակաս էր։— 608։

64. Հենրի Մորգենթաու (1856—1946)— ամերիկյան դիվանագետ, 1913—1916 թթ. ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիայում։

Երբ ամերիկացի հյուպատոսների բազմաթիվ զեկույցներից միանգամայն ակներև դարձավ, որ տեղահանության բուն նպատակը արևմտահայերի իսպառ բնաջնջումն է, Հ. Մորգենթաուն հանդիպում ունեցավ Թալեաթի և Էնվերի հետ, նրանց ապարդյուն կոչ անելով մարդասիրության։ Հ. Մորգենթաուի հուշագրություններում շարադրված են նրա զրույցները Թալեաթ փաշայի և երիտթուրքական այլ պարագլուխների հետ։ Հայերի տեղահանությանը և Միջագետքի անապատներում նրանց անմարդկային բնաջնջմանը վերաբերող գլուխները գրված են Հալեպում ամերիկյան հյուպատոսի զեկույցների հիման վրա։ «Դեսպան Մորգենթաուի հուշերը» հրատարակվել են նաև ֆրանսերեն ու արևմտահայերեն (Կ. Պոլիս, 1919, Երևան, 1990)։ 1918 թ. Փարիզում ֆրանսերեն հրատարակվեց նրա մեկ ուրիշ գիրքը՝ Պատմության ամենազարհուրելի անցքերը», որտեղ համառոտակի շարադրվում է Թուրքիայում հայերի ցեղասպանության պատմությունը։— 669։

65. Ժակ դը Մորգան (1857—1924)— ֆրանսիացի ականավոր հնագետ և պատմաբան, Եգիպտոսի քարի դարի առաջին հետազոտողը։ Հայտնի է նաև Ուրարտուին նվիրված ուսումնասիրություններով։ Ժ. դը Մորգանի գրքին է պատկանում հայ ժողովրդի պատմությանը նվիրված լայնորեն հայտնի աշխատությունը (Histoire du peuple arménien depuis les temps les plus reculés de ses annales jusqu'a nos jours. Préface par G. Schlumberger. Paris, 1919), որը թարգմանվել է մի քանի լեզվով։ Ժողովածուում բերված հատվածները քաղվածքներ են Ժ. դը Մորգանի հոդվածներից, որոնք 1916—1917 թթ. տպագրվել են "L'Eclaire de Montpeller" և "La Revue de Paris» պարբերականներում։ Այդ և մյուս հոդվածները մտել են «Ընդդեմ Արևելքի բարբարոսների» վերնագրով գրքի մեջ, որը լույս է տեսել 1918 թ. Փարիզում։ Օսմանյան կայսրությունում հայերին և մյուս քրիստոնյա ժողովուրդներին հալածելու թուրքական քաղաքականության մասին խոսվում է նաև Ժակ դը Մորգանի «Ակնարկ ազգությունների մասին» աշխատության մեջ։ (Տե՛ս J. de Morgan. Essai sur les nationalités. Paris—Nancy, 1917):— 671:

66. Դեռ մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, երբ պարզ դարձավ, որ երիտթուրքական կուսակցությունը լիակատար քաղաքական սնանկության է մատնվել, նրա պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերը և մյուսներն ստիպված էին թողնել իրենց պաշտոնները։ 1918 թ. հոկտեմբերի 7-ին Թալեաթ փաշայի կառավարությունը հրաժարական տվեց, իսկ Թուրքիայի նոր կառավարության կողմից Անտանտի տերությունների հետ Մուդրոսի զինադադարի ստորագրումից (1918 թ. հոկտեմբերի 30-ին) անմիջապես հետո երիտթուրքական բոլոր պարագլուխները դիմեցին փախուստի։ Թուրքիայի ռազմական աղետի և հայկական կոտորածների կազմակերպման գլխավոր մեղավորները՝ Թալեաթը և Էնվերը ուրիշի անվան տակ ապրում էին Բեռլինում։ 1919 թ. փետրվարին մի շարք երկրների հասարակայնության ճնշման ներքո, որը պահանջում էր պատժել Հայոց եղեռնի մեղավորներին, Ստամբուլում սկսվեց երիտթուրքական կոմիտեի և կառավարության նախկին գործիչների դատավարությունը։ Նրանց դատում էր թուրքական զինվորական տայանը գեներալ Մուստաֆա Նազիմ փաշայի նախագահությամբ։ Երկար դատաքննությունից հետո Ստամբուլի զինվորական տայանը 1919 թ. հունվարի 5-ին վճիռ կայացրեց հեռակա կարգով մահվան դատապարտել գլխավոր հանցագործներին՝ նախկին մեծ վեզիր ու ներքին գործերի մինիստր Թալեաթին, ռազմական մինիստր Էնվերին, ծովային մինիստր Ջեմալին և երիտթուրքական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար դոկտոր Նազիմին (Տե՛ս Der Prozess Talaat Pascha. Stenographischer Bericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang. Berlin, 1921. S. 91—92):— 672։

67. Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից և «Իթթիհադ վե Թերաքի» երիտթուրքական կուսակցության ինքնալուծարքից հետո նրա պարագլուխներն ու ղեկավարության մի շարք անդամներ փախան արտասահման, իրենց հետ տանելով կուսակցական դրամամիջոցներն ու պետական արժեքներ։ Սուլթանական կառավարությունը ստիպված էր Կոստանդնուպոլսում և մի շարք նահանգներում ստեղծել դինվորական տայաններ երիտթուրքական վերնախավի կատարած հանցագործությունները քննելու համար։ Այդ դատավարությունների նյութերը հրապարակվել են Ստամբուլում լույս տեսնող «Թաքվիմի վաքայի» պաշտոնական թերթի հավելվածներում։ Այդ հավելվածների պատճենները, որոնք Հայաստանին է նվիրել ֆրանսահայ հասարակական գործիչ Ռոժե Ջերբաջյանը, պահվում են Հայկական ԽՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվում։ Սույն ժողովածուում գետեղված են այն դատավճիռները, որ կայացվել են այդ դատավարություններից երկուսում, 1919 թ. մայիս— 1920 թ. հունվարի ընթացքում Տրապիզոնում և Խարբերդում։ Մանրամասն տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի։ Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի։ Ե. 1988։— 687։

68. Արմին Թ. Վեգներ (1886—1978)— գերմանացի հակաֆաշիստ գրող ու հրապարակախոս։ 1915—1916 թթ. գտնվել է Միջագետքում՝ որպես սանիտարական ծառայության սպա գեներալ ֆոն դեր Գոլցի բանակում։ Միաժամանակ Ա. Վեգները գերմանական մի քանի թերթերի զինվորական թղթակիցն էր։ Թուրքիայում գտնվելու ընթացքում Ա. Վեգներն անմիջականորեն ականատես է եղել երիտթուրք դահիճների ոճրագործություններին։ Այդ ահասարսուռ պատկերներից շատերը նա հանել էր 2 հազար լուսանկարների վրա, որոնց մեծ մասը կորավ այն տարիներին, երբ գրողը հալածանքների ենթարկվեց իր հակահիտլերյան ելույթների համար։ Ի տարբերություն գերմանացի շատ զինծառայողների, որոնք անտարբեր դիտում էին հայերի հրեշավոր չարդերն ու տառապանքները, Վեգներն ապարդյուն փորձեր էր անում Գերմանիայի հասարակական կարծիքի ուշադրությունը սևեռելու այդ գազանություններ վրա։ 1919 թ. Արմին Վեգները հանդես եկավ հրապարակային դասախոսություններով Գերմանիայի խոշոր քաղաքներում, պատմելով անապատ աքսորված հայերի տառապանքների մասին, ցուցադրելով լուսապատկերներ։ Մարդասեր գրողը հետագա տարիներին էլ է պայքարել հանուն արդարության։ Նա գրել է մի շարք պատմական ու գեղարվեստական ակնարկներ՝ վիր հանելով արևմտահայերի եղերական ճակատագիրը առաջին աշխարհամարտի տարիներին. «Անդարձ ճանապարհ», «Հայապատում», «Հայ մորը» և այլն։ Երբ Հիտլերն անցավ իշխանության գլուխ, Ա. Վեգները

հակաֆաշիստական գործունեություն ծավալեց, հանդես եկավ ի պաշտպանություն հրեաների, որի համար բանտ նետվեց և խոշտանգումների ենթարկվեց։ «Ինձ ձերբակալեցին այն պահին,— գրում է նա,— երբ նոր էի ավարտել հայերի մասին պատմող վեպս այն մասը, որտեղ նկարագրվում էին Թուրքական բանտում հայերի կրած տառապանքները։ Շուտով այդ ամենը զգացի կաշվիս վրա» (Տե՛ս «Նայիրի», 1965 թ., ապրիլի 24-ի համարը)։ Միայն հրաշքով է Ա. Վեգներին հաջողվում փրկվել մահից և փախչել Անգլիա։ Սույն ժողովածուում բերված հատվածը վերցված է «Բաց նամակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին» գրքույկից, որը 1919 թ. գերմաներեն լույս էր տեսել Բեռլինում։ Արմին Վեգների «Բաց նամակը» անգլերեն տպագրվել է 1920 թ. «Նայիմ բեյի հիշողությունների» հավելվածում։ (Տե՛ս The Memoirs of Naim Bey. Appendix, London, 1920 , p. 72—84): 1927 և 1968 թվականներին Ա. Վեգներն այցելել է Հայաստան։ (Տե՛ս նաև Ռ. Գ. Սահակյան, Լ. Կ. Մելիք-Օհանջանյան, Արմին Վեգներ (ծննդյան 100-ամյակի առթիվ). Պատմաբանասիրական հանդես, 1986, № 3, էջ 3—10)։— 699։

69. Յոզեֆ Մարկվարտ (1864—1930)— գերմանացի նշանավոր արևելագետ, հայագետ։ Բազմիցս հանդես է եկել ի պաշտպանություն հայ ժողովրդի, երիտթուրք պարագլուխներին մեղադրելով Օսմանյան կայսրության հայ բնակչությանը բնաջնջելու համար։ Միաժամանակ Յ. Մարկվարտը խրատիվ դատապարտում էր գերմանական կառավարությանը նրանց աջակցելու համար։ (Այդ մասին մանրամասն տե՛ս Ռ. Գ. Սանակյան. Մարկվարտը արևմտահայերի գենոցիդի մասին. Հասարակական գիտությունների տեղեկագիր, Երևան, 1966, № 7, էջ 111—120)։ Յ. Մարկվարտից բերված հատվածները վերցված են 1919թ. Բեռլինում տպագրված նրա գրքի եզրափակիչ մասից։ Գերմաներեն լույս տեսնելուց հետո այդ մասը շուտով ամբողջությամբ թարգմանվեց ֆրանսերեն և հրատարակվեց Փարիզում առանձին գրքույկով։ Լույս է ընծայվել նաև հայերեն։ Թուրքական կառավարության հայասպան քաղաքականության մեջ կայզերական Գերմանիայի դերի մասին մանրամասն տե՛ս Ստ. Ստեփանյան. Հայաստանը կայսերապաշտ Գերմանիայի քաղաքականության մեջ (Երևան, 1975, ռուս.), ինչպես նաև Harry Stuermer. Deux ans de guerre à Constantinople, Paris, 1917, Ulrich Trumpener, Germany and the Ottoman Empire 1914—1918. Princeton. New Jersey, 1968, p. 200—270։ Այս վերջին գրքի մասին Ռ. Գ. Սահակյանի գրախոսականը տես «Հասարակական գիտությունների տեղեկագիր» 1969, № 12, էջ 91—94, ռուս։ Լիբանանցի իրավաբան Մուսա Պրենսը 1975թ. տպագրված իր ինքնատիպ աշխատության մեջ, որը վերնագրված է «Չդատապարտված ցեղասպանությունը՝ հայասպանություն», մանրակրկիտ ուսումնասիրելով մեծ տերությունների պատասխանատվության հարցը, հանգում է այն եզրակացության, որ գլխավոր մեղավորներից՝ երիտթուրքական կառավարությունից և «Միություն ու առաջադիմություն» կոմիտեից հետո գալիս են կայզերական Գերմանիան և Ավստրո-Հունգարիան։ Moussa Prince. Un Génocide impuni: L'Arménocide. Beyruth, 1975:— 701:

70. 1921թ. հունիսի 2—3-ը Բեռլինի նահանգային դատարանում կայացավ Թալեաթ փաշայի ահաբեկիչ Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը։

Դատարանը մասնավորապես արդարացի ճանաչեց Թալեաթ փաշայի նկատմամբ Ստամբուլի զինվորական ատյանի կայացրած հեռակա կարգով մահվան դատավճիռը։ Նույնքան էլ արդարացի էր Թեհլիրյանի նկատմամբ կայացված դատավճիռը։ Բեռլինի նահանգային դատարանը, որի կազմի մեջ մտնում էին նախագահ դ-ր Լեմբերգը, դատավորներ՝ խորհրդական Բատեն ու դ-ր Լոքսը և երդվյալ ատենակալներ, լիովին արդարացրեց նրան և ազատ արձակեց։ (Տե՛ս Der Prozess Talaat Pascha..., Berlin 1921, S. 127)։ Արդար պատժից չխուսափեցին նաև մյուս ոճրագործները՝ Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ փաշան, Սայիդ Հալիմ փաշան, Ջեմալ Ազմին և ուրիշներ, որոնք բոլորն էլ ոչնչացվեցին ժողովրդական վրիժառուների կողմից։— 702։

71. Մաքսիմ Գորկին զգալիորեն նպաստել է ռուս առաջադեմ հասարակայնությանը ծանոթացնելու հայ ժողովրդի պատմությանն ու գրականությանը։ Նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ 1916թ. Մոսկվայում լույս տեսավ «Հայ գրականության ծաղկաքաղը», որը կազմել էին Վահան Տերյանն ու Պողոս Մակինցյանը։ Սույն ժողովածուում բերված Մ. Գորկու խոսքերը վերցված են «Խորհուրդների Միությունում» ակնարկաշարից, որը հրապարակվել էր Մ. Գորկու կողմից խմբագրվող «Наши достижения» հանդեսում։ Այդ ակնարկներն ամբողջությամբ մտել են Մ. Գորկու Երկերի ժողովածուի 17-րդ հատորի մեջ։— 705։

72. Ֆրիտյոֆ Նանսեն (1861—1930)— նորվեգացի մեծ գիտնական ու հումանիստ։ Նանսենը ջանքեր է գործադրել իմպերիալիստական պատերազմի զոհերին օգնություն ցույց տալու, մասնավորապես եղեռնը վերապրած արևմտահայերին սովից փրկելու համար։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Նանսենը Ազգերի լիգայի գերագույն կոմիսարն էր ռազմագերիների գործերով, սովյալ Պոլոժիհին ցույց տրված օգնության (1921 թվականին) կազմակերպիչներից մեկը։ Նանսենն առանձնապես եռանդուն գործունեություն ծավալեց սովյալ հայ գաղթականներին օգնություն ցույց տալու համար։ Նանսենի նախաձեռնությամբ 1922 թվականին Ազգերի լիգայի կողմից մտցվեցին այսպես կոչված «նանսենյան անձնագրեր» գաղթականների համար, որոնք օրինական փաստաթղթեր չունեին։ 1922 թվականին Նանսենին շնորհվեց խաղաղության Նոբելյան մրցանակ։ 1926 թվականին մեծ գիտնականն ու մարդասերը եղավ Խորհրդային Հայաստանում։ Վերադառնալով հայրենիք, նա գրեց հայ ժողովրդի հանդեպ համակրանքով ու հարգանքով տոգորված «Հայաստանը և Մերձավոր արևելքը» գիրքը, որը լույս տեսավ նորվեգերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և հայերեն։— 710։

73. Եվգենի Վիկտորովիչ Տարլե (1875—1955)— խորհրդային ականավոր պատմաբան, հրապարակախոս ու մանկավարժ, 1937 թվականից ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Ֆրանսիայի, միջազգային հարաբերությունների պատմությանը, Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ։

«Թուրքիան և հայերը», բաժինը Ե. Տարլեի «Եվրոպան իմպերիալիզմի դարաշրջանում։ 1871—1919թթ.» դասընթացի թեմաներից է։ Այն առանձին գրքով լույս է տեսել 1927 թ. և վերահրատարակվել 1928թ.։ Այդ աշխատությունն ընդգրկված է Ե. Տարլեի Երկերի ժողովածուի 3-րդ հատորում։— 710։

74. Անճշտություն է։ Թալեաթ փաշան մեծ վեզիր էր 1917թ. ապրիլից։ Մինչև այդ նա զբաղեցնում էր ներքին գործերի մինիստրի պաշտոնը։— 710։

75. Թալեաթ փաշան սպանվել է ոչ թե 1923թ., այլ 1921թ. մարտի 15-ին։— 718։

76. Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության 50-ամյակը լայնորեն նշվեց շատ երկրներում։ Ինչպես խորհրդային Հայաստանում, այնպես էլ արտասահմանում՝ Բուլղարիայում, Հունգարիայում, Հարավսլավիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Շվեյցարիայում, Կիպրոսում, Հունաստանում, Ավստրիայում, Իտալիայում, Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Քուվեյթում, Եգիպտոսում, Իրանում, ԱՄՆ-ում, Ուրուգվայում, Արգենտինայում, Բրազիլիայում 1965թ. ապրիլի 24-ին տեղի ունեցան սգո երեկույթներ և հանրահավաքներ։ Հայերից բացի, դրանց մասնակցում էին հիշյալ երկրների հասարակայնության ներկայացուցիչներ, քաղաքական ու պետական գործիչներ, գրողներ, լրագրողներ, պառլամենտի անդամներ։ Թերթերը խմբագրական հոդվածներ նվիրեցին այդ իրադարձությանը, որոնցում դատապարտվում էր հայերի ցեղասպանության երիտթուրքական քաղաքականությունը։ Այսպես, «Ցումանիտեն» 1965թ. ապրիլի 23-ի համարում զետեղել էր մի հոդված, որի մեջ մասնավորապես ասվում էր. «Անհնար է մի քանի խոսքով հաղորդել այդ ահասարսուռ իրադարձությունների պատմությունը, որոնց ընթացքում մեկուկես միլիոնից ավելի հայեր, առանց սեռի ու տարիքի խտրության, գազանաբար, հետևողականորեն կոտորվեցին այն ժամանակվա թուրքական կառավարության լավ մշակած ծրագրի համաձայն։

Բավական է ասել, որ իր տարածքում ապրող ժողովրդի ցեղասպանության առաջին ոճրագործությունը կատարվեց XX դարի սկզբին՝ 1914—1918թթ. պատերազմի ժամանակ։ Եվ այդ եղեռնագործությունը երբեք չի դատապարտվել։ Ահա թե ինչու հայերը, որոնք մյուսներից ավելի լավ գիտեն խաղաղության գինը, չեն կարող մոռանալ այդ եղելությունը, որը ոչ միայն պարզապես հուշ է, այլև պատմական ժամանակահատված, որը կարող էր դառնալ մի ողջ ժողովրդի կործանման շրջան։

Հայերը չեն կարող մոռանալ արյան գետերը, մահապատիժները, աքսորները անապատ՝ անխուսափելի մահվան դատապարտվելով սովի, համաճարակների, ամեն տեսակ տառապանքների հետևանքով։ Նրանք չեն կարող մոռանալ այդ մեկուկես միլիոն նահատակներին...

Եթե խաղաղության շարժումը պայքարում է այն հանցագործությունների վաղեմության ժամկետը չեղյալ հայտարարելու դեմ, որոնք կատարվել են Գերմանիայի դեմ, ապա դա արվում է նրա համար, որ այսուհետև նման հրեշավոր ձեռնարկումների միտք անգամ չծագի որևէ մոլագարի գլխում։ Կա արդար գործ է, և այն պետք է հաղթանակի։

Ահա թե նաև ինչի համար ենք հիշում Հայոց եղեռնը»։ ("L'Humanité", 26 avril 1965):

Հայերի ցեղասպանության 50-րդ տարելիցի արձագանքների մասին մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, Սփյուռքահայության մշակութային ու հասարակական կյանքը (1965թ. հունվար-հունիս)։ Պատմաբանասիրական հանդես, 1966, № 3, էջ 294—298։

Հայերի ցեղասպանությունը դատապարտվեց նաև 1965 թվականի հուլիսին Հելսինկում կայացած խաղաղության համաշխարհային կոնգրեսում Երկրորդ ենթահանձնաժողովի ընդունած բանաձևում, որով դատապարտվում էին բռնակալությունը, գաղութատիրությունը և ցեղասպանությունը, մտցված էր հետևյալ կետը. «Ընթացիկ տարին 50-րդ տարելիցն է հայկական ջարդերի, որոնք Օսմանյան Թուրքիան կազմակերպել էր մի ամբողջ ժողովրդի բնաջնջման միջոցով ազգային հարցը լուծելու նպատակով։ Այդ ցեղասպանությունն արժեցավ ավելի քան մեկուկես միլիոն ազատատենչ հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»։ Այդ բանաձևը մյուս ենթահանձնաժողովների բանաձևերի թվում միաձայն ընդունվեց կոնգրեսի եզրափակիչ նիստում՝ 1965թ. հուլիսի 15-ին և մտցվեց կոնգրեսի գրքում՝ որպես պաշտոնական փաստաթուղթ։ (Տե՛ս «Էջմիածին» հանդես, 1965, օգոստոս-սեպտեմբեր, էջ 69—70)։

1915-ի եղեռնի դատապարտման հարցը լայն ծավալ ստացավ 1970—80-ական թվականներին՝ քննարկման առարկա դառնալով ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև պետական պաշտոնական շրջանակներում և միջազգային հեղինակավոր կազմակերպություններում։ Այսպես, 1973 թ. հայոց ցեղասպանությանը անդրադարձավ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովը, ռասիզմի ու ցեղասպանության ենթահանձնաժողովին հանձնարարելով ուսումնասիրել հարցը՝ 1915-ի եղեռնը, որպես գենոցիդ որակելու տեսանկյունից։ Իր մի քանի նիստերում վերստին քննելով հարցը, ՄԱԿ-ի վերոհիշյալ հանձնաժողովը 1985-ի օգոստոսի 27-ին ընդունեց դրական որոշում։ 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունեց բանաձև «Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ», որի 2-րդ կետում ասված էր, որ «Օսմանյան կայսրության տարածքում հաստատված հայերի հետ 1915—1917 թթ. տեղի ունեցած ազբերգական դեպքերը իրենցից ներկայացնում են գենոցիդ՝ 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության ոճիրը կանխարգելելու և պատժելու վերաբերյալ» կոնվենցիայի դրույթների տեսանկյունից (Տե՛ս Journal officiel des Communautés européennes, № C 190/119)։ Կարևոր քայլ էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1988 թ. նոյեմբերի 22-ին ընդունված օրենքը «Օսմանյան Թուրքիայում 1915 թվականի հայերի ցեղասպանության դատապարտման մասին», որն ըստ էության պետական մակարդակով ընդունված առաջին փաստաթուղթն է։— 718։

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ
ՑՈՒՑԱԿ

Նախաբան— Մ. Գ. Ներսիսյան III

Առաջին մաս

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ (1876—1908 թթ.) ՕՐՈՔ

1. Նամակ Թուրքիայից։ 19 (31) դեկտեմբերի 1876 թ. 3
2. Դարալագյազի բնակչության դիմումը Գևորգ IV կաթողիկոսին։ 10 օգոստոսի 1877 թ. 6
3. «Թայմս» թերթի թղթակից Նորմանի հաղորդագրությունից։ 24 օգոստոսի 1877 թ. 7
4. Եվրոպական տերությունների կոլեկտիվ նոտայից՝ Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին։ 7 սեպտեմբերի 1880 թ. . . . 7
5. Ռուսաստանի գինվորական գործակալ գնդապետ Ֆիլիպովը՝ Թուրքիայում դեսպան Նովիկովին։ 19 հոկտեմբերի 1880 թ. . . . 14
6. Վանի վիլայեթի հայերը՝ Ալեքսանդր III կայսրին։ 10 փետրվարի 1882 թ. 16
7. Վանի ռուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարը՝ Կ. Պոլսում դեսպան Նովիկովին։ 14 մարտի 1882 թ. 17
8. Եվրոպայի հայ հայրենասերների կոմիտեն՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին։ 27 հոկտեմբերի 1885 թ. 18
9. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Դեննետի հեռագրից Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 10 հունիսի 1890 թ. . . . 21
10. Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը՝ արտաքին գործերի մինիստր Գիրսին։ 19 (31) հուլիսի 1890 թ. 22
11. Կ. Պոլսում ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Գիրսին։ 1 (13) հոյեմբերի, 1890 թ. 23
12. Դեսպան Նելիդովը՝ մինիստր Գիրսին։ 22 հոյեմբերի 1890 թ. . 24
13. Անգլիայի հյուպատոսի պաշտոնակատարը՝ Կ. Պոլսում դեսպան Քլեր Ֆորդին։ 20 հունիսի 1892 թ. 25
14. Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Քլեր Ֆորդը՝ կոմս Ռոզբերիին։ 13 մարտի 1893 թ. 26
15. Կովկասի քաղաքացիական մասի պետը՝ ներքին գործերի մինիստրին։ 20 օգոստոսի 1893 թ. 28
16. Դեսպան Քլեր Ֆորդը՝ կոմս Ռոզբերիին։ 28 հոկտեմբերի 1893 թ. . 28

17. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 20 օգոստոսի 1894 թ. 30
18. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 1 հոկտեմբերի 1894 թ. 31
19. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 29 հոկտեմբերի 1894 թ. 32
20. Կ. Պոլսի ռուսական դեսպանության խորհրդական Ժադովսկու հեպեշից՝ ուղղված արտաքին գործերի մինիստրությանը։ 10 (22) հոյեմբերի 1894 թ. 32
21. Վրացա-իմերեթական հայկական թեմի առաջնորդի նամակը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Գիրսին։ 24 հոյեմբերի 1894 թ. 33
22. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպանության խորհրդական Ժադովսկուն։ 26 հոյեմբերի 1894 թ. . . 34
23. Կ. Պոլսի բրիտանական դեսպանը՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստրին։ 26 հոյեմբերի 1894 թ. 35
24. Ամերիկյան քաղաքացիների երեք նամակ Սասունում հայերի կոտորածի մասին։ 16 հոյեմբերի 1894 թ. 42
25. Էրզրումի ռուսական հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 25 փետրվարի 1895 թ. 50
26. Գլխավոր հյուպատոսը՝ դեսպան Նելիդովին։ 4 մարտի 1895 թ. . 57
27. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 18 մարտի 1895 թ. 61
28. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսության կրտսեր քարտուղարը՝ գլխավոր հյուպատոս Մաքսիմովին։ 20 մարտի 1895 թ. . 64
29. Տրապիզոնի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 14 դեկտեմբերի 1894 թ. 66
30. Հալեպի ռուսական հյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպան Նելիդովին։ 15 դեկտեմբերի 1894 թ. 70
31. Կ. Պոլսի հայոց պատրիարքը՝ Թուրքիայի արդարադատության ու պաշտամունքների մինիստր Ռզա փաշային։ 8 փետրվարի 1895 թ. 71
32. Էրզրումի հայոց եպիսկոպոսը՝ Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Մաքսիմովին։ 8 (20) մարտի 1895 թ. 82
33. Շապին-Գարահիսարի հայ բնակչությունը՝ Կ. Պոլսում ռուսական դեսպան Նելիդովին։ 25 հունիսի 1895 թ. 85
34. Էմ. Դիլոնի «Գործերի վիճակը Թուրքահայաստանում» հոդվածից (1895 թ.) 86
35. Վ. Գլադստոնի ճառը՝ արտասանված 1895 թ. հուլիսի 26-ին Ջնտերի հանրահավաքի ժամանակ 98
36. Կ. Պոլսի հայոց պատրիարքը՝ Թուրքիայի արդարադատության և պաշտամունքների մինիստր Ռզա փաշային։ 15 օգոստոսի 1895 թ. . 106
37. Մարզվանի հայ բնակչությունը՝ Սամսոնում Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին։ 9 հոյեմբերի 1895 թ. 109
38. Ջարսանջակի հայ հասարակությունը՝ Սամսոնում Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին։ 28 հոյեմբերի 1895 թ. 116

39. Նամակ Խարբերդից՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ 14 դեկտեմբերի 1895 թ. 118
40. Ախթամարի կաթողիկոսը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Իզմիրլյանին։ 19 դեկտեմբերի 1895 թ. 122
41. Մշո թեմի առաջնորդական փոխանորդը՝ ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանին։ 26 դեկտեմբերի 1895 թ. 126
42. Խրիմյան կաթողիկոսը՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին։ 13 հունվարի 1896 թ. 135
43. Տեղեկագիր Տիգրանակերտեն։ 12 հունվարի 1896 թ. . . . 137
44. Հալեպում Պորտուգալիայի հյուպատոսը՝ Կ. Պոլսում իտալական դեսպանին։ 29 հունվարի 1896 թ. 146
45. Ռիզեում Ռուսաստանի հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Նելիդովին։ 18 փետրվարի 1896 թ. 149
46. Կոնիայի ռուսական հյուպատոսի զեկույցից՝ ուղղված Կ. Պոլսում դեսպանությանը։ Մարտ 1896 թ. 151
47. Կոտորածը Վանի վիլայեթում 154
48. Կ. Պոլսի ռուսական զինվորական գործակալ գնդապետ Պեշկովի զեկույցներից։ 16 օգոստոսի 1896 թ. 156
49. Կ. Պոլսի կոտորածը 157
50. Նամակ ԱՄՆ-ի միսիոներ Բարնեմից՝ Կ. Պոլսում ամերիկյան միսիային։ 29 սեպտեմբերի 1896 թ. 163
51. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպանին։ 5 հոկտեմբերի 1896 թ. 165
52. Կ. Պոլսի բրիտանական դեսպանությունը՝ Ռուսաստանի դեսպանությանը։ 10 հոյեմբերի 1896 թ. 166
53. Կ. Պոլսի բրիտանական դեսպանությունը՝ Ռուսաստանի դեսպանությանը։ 18 հոյեմբերի 1896 թ. 167
54. Հայերի կոտորածը 1895—1896 թթ. 167
55. Թուրքական զոհերի նամակներ Փոքր Ասիայից։ 1895—1896 թթ. . 177
56. Սամսոնի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպան Նելիդովին։ 27 մարտի 1897 թ. 191
57. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Լամզդորֆին։ 5 հուլիսի 1897 թ. 193
58. Վանի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 24 հունվարի 1898 թ. 194
59. Բեյրութի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 23 հուլիսի 1898 թ. 197
60. Բեյրութի ռուսական գլխավոր հյուպատոսը Կ. Պոլսում դեսպանին։ 12 սեպտեմբերի 1898 թ. 198
61. Կ. Պոլսի ռուսական դեսպանը արտաքին գործերի մինիստրին։ 2 (14) հոկտեմբերի 1899 թ. 199
62. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսության քարտուղարը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 19 հուլիսի 1990 թ. . . . 200
63. Էրզրումի ռուսական հյուպատոսության քարտուղարը՝ դեսպան Զինովևին։ 29 օգոստոսի 1900 թ. 200

64. Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևին՝ Տրապիզոնի հյուպատոսի զեկույցից։ 4 հոյեմբերի 1900 թ. 201
65. Սամսոնի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 12 սեպտեմբերի 1901 թ. 202
66. Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևի ճեպագրից՝ ուղղված արտաքին գործերի մինիստրությանը։ 20 սեպտեմբերի (8 հոկտ.) 1901 թ. 203
67. Վանի ռուսական փոխհյուպատոսության զեկույցից՝ ուղղված Կ. Պոլսի դեսպանությանը։ 27 հոյեմբերի 1901 թ. 204
68. Ժան Ժորեսի ճառից՝ արտասանված Փարիզում 1903 թ. փետրվարի 15-ին 206
69. Հունանի հայերի 1904 թ. փետրվարի 5-ի կոտորածի մասին . 208
70. Մուշ-Սասունի 1904 թ. իրադարձությունների մասին։ 31 հունվարի 1904 թ. 208
71. Ժան Ժորեսի նամակը Մերձավոր արևելքին նվիրված միջազգային կոնֆերանսի նախագահին։ 1904 թ. հունիս 213
72. Հայոց կաթողիկոս Խրիմյանը՝ Նիկոլայ II-ին։ 1 հուլիսի 1904 թ. . 213
73. Հաղորդագրություն Վանի վիլայեթի հայերի վիճակի մասին։ 19 հունվարի 1905 թ. 214
74. Կիլիկիայի հայերի վիճակի մասին եվրոպացի ճանապարհորդի նամակից։ 5 մարտի 1906 թ. 215
75. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 21 հուլիսի 1906 թ. 215
76. Բայազետում թուրքական զինվորների բռնությունների մասին։ 5 փետրվարի 1907 թ. 216
77. Դվնիկի բնակչությունը՝ Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Սկրյաբինին։ 21 փետրվարի 1907 թ. 217
78. Գարմասանի բնակչությունը՝ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Սկրյաբինին։ 1 ապրիլի 1907 թ. 218
79. Կանի բնակիչները՝ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Սկյաբինին։ 2 ապրիլի 1907 թ. 219
80. Վանի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 9 ապրիլի 1907 թ. 220
81. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 10 մայիսի 1907 թ. 221
82. Բիթլիսի ռուսական հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 27 մայիսի (9 հունիսի) 1907 թ. 222
83. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկուն։ 2 (15) օգոստոսի 1907 թ. 222
84. Կաթողիկոս Խրիմյանը՝ Նիկոլայ II-ին։ 1907 թ. 223
85. Բիթլիսի ռուսական հյուպատոս Շիրկովը՝ Կ. Պոլսում դեսպան Զինովևին։ 2 (15) մարտի 1908 թ. 225
86. Վանի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպանին։ 12 (25) մարտի 1908 թ. 225

87. Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևի ճեպագրից՝ ուղղված Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին։ 22 մարտի (4 ապրիլի) 1908 թ. 226
88. Վանի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպան Զինովևին։ 31 մարտի 1908 թ. 227

Երկրորդ մաս

Հայերի զանգվածային կոտորածները եվրոպացիների կողմից (1909—1918)

89. Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևին՝ Էրզրումի գլխավոր հյուպատոսի զեկույցից։ 19 հունվարի 1909 թ. 230
90. Էրզրումում գլխավոր հյուպատոսը՝ դեսպան Զինովևին։ 2 մարտի 1909 թ. 230
91. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Զարիկովին։ 18 ապրիլի (1 մայիսի) 1909 թ. . . . 231
92. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Զարիկովին։ 2 (15) մայիսի 1909 թ. . . . 232
93. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկուն։ 18 (31) մայիսի 1909 թ. 233
94. Կ. Պոլսի դեսպանը՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Իզվոլսկուն։ 30 մայիսի (12 հունիսի) 1909 թ. 233
95. Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնակատարը՝ գլխավոր շտաբի գեներալ-կվարտիրմեյստերին։ 5 հունիսի 1909 թ. 235
96. Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնակատարը՝ գլխավոր շտաբի գեներալ-կվարտիրմեյստերին։ 15 հուլիսի 1909 թ. 236
97. Լրագրային հաղորդագրություն Ադանայի կոտորածի մասին։ 26 ապրիլի 1909 թ. 239
98. «Ադանայի սև օրերը» գրքից (1909 թ.) 239
99. Ջարգերն Ադանայում 246
100. Մոնաստրի անգլիական փոխհյուպատոսի զեկույցից Կ. Պոլսում դեսպան Լոուիներին։ 28 օգոստոսի 1910 թ. 266
101. Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպանության խորհրդական Սվեչինին։ 29 սեպտեմբերի 1910 թ. . 267
102. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զարիկովին։ 24 նոյեմբերի 1910 թ. 268
103. Կ. Պոլսի հայոց պատրիարքի թաքրիրը՝ Թուրքիայի արդարադատության մինիստրին։ 14 փետրվարի 1911 թ. 268
104. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Զարիկովին։ 11 մարտի 1911 թ. 275
105. Կ. Պոլսի ռուսական դեսպան Զարիկովը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ներատովին։ 8 հոկտեմբերի 1911 թ. . . 275
106. Կ. Պոլսի հայոց պատրիարքության ստացած հեռագրերից։ Հոկտեմբեր 1912 թ. 277

107. Արևմտահայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Աբշարունին՝ կաթողիկոս Գևորգ Սուրենյանին։ 4 սեպտեմբերի 1912 թ. . 277
108. Ադանայի ռուսական փոխհյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Գիրսին։ 8 (21) սեպտեմբերի 1912 թ. 280
109. Երևանի բարեգործական և կուլտուր-լուսավորական հաստատությունների ներկայացուցիչների դիմումը կաթողիկոս Գևորգ V-ին։ 25 սեպտեմբերի 1912 թ. 283
110. Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին։ 2 հոկտեմբերի 1912 թ. 283
111. Տարոնի հայոց հոգևոր առաջնորդի նամակը կաթողիկոս Գևորգ V-ին։ 13 հոկտեմբերի 1912 թ. 284
112. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսության քարտուղարի գրությունից՝ ներկայացված Կովկասյան զինվորական օկրուգի շտաբին։ 23 նոյեմբերի 1912 թ. 289
113. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 26 նոյեմբերի 1912 թ. 290
114. 3000 վասպուրականցիների դիմումից՝ ուղղված կաթողիկոս Գևորգ V-ին։ 11 դեկտեմբերի 1912 թ. 294
115. Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Նիկոլայ II-ին։ 24 դեկտեմբերի 1912 թ. 299
116. «Պրավդա» թերթում (1912 թ.) տպագրված «Թուրքական դեպքերը» հոդվածից 303
117. «Պրավդա» թերթում (1912 թ.) տպագրված «Թուրքիայում» հոդվածից 304
118. Պրոֆ. Կովալևսկու «Հայկական հարցը» հոդվածից 305
119. Հատվածներ Ծուրի Վեսելովսկու «Թուրքահայաստանի ողբերգությունը» գրքից 306
120. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը՝ Կ. Պոլսի դեսպան Գիրսին։ 7 ապրիլի 1913 թ. 311
121. Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը՝ արտաքին գործերի մինիստրությանը։ 24 ապրիլի 1913 թ. 311
122. Կովկասի փոխարքան՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 2 մայիսի 1913 թ. 312
123. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 14 (27) մայիսի 1913 թ. 315
124. Արևմտահայոց պատրիարքը՝ ռուսական դեսպան Գիրսին։ 20 մայիսի 1913 թ. 315
125. Կ. Պոլսի ռուսական դեսպանի հեռագրից՝ հղված Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությանը։ 20 մայիսի (2 հունիսի) 1913 թ. 320
126. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 4 հունիսի 1913 թ. 321
127. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպան Գիրսին։ 26 հոկտեմբերի 1913 թ. 321
128. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 7 (20) դեկտեմբերի 1913 թ. 323

129. Հայերի դրության մասին 324
130. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 29 դեկտեմբերի 1913 թ. 324
131. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսի դեսպանին։ 4 հունվարի 1914 թ. 325
132. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը՝ Կ. Պոլսի դեսպանությանը։ 15 փետրվարի 1914 թ. 325
133. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը՝ Կ. Պոլսի դեսպանությանը։ 15 մարտի 1914 թ. 327
134. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը՝ Կ. Պոլսում դեսպան Գիրսին։ 5 մայիսի 1914 թ. 329
135. Կաթողիկոս Գևորգ V-ը՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին։ 5 օգոստոսի 1914 թ. 330
136. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 20 սեպտեմբերի 1914 թ. 333
137. Կ. Պոլսի ռուսական դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 11 հոկտեմբերի 1914 թ. 333
138. Կաթողիկոս Գևորգ V-ը՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին։ 8 նոյեմբերի 1914 թ. 333
139. Բաշկալեի կոտորածը 1914 թ. դեկտեմբերին 334
140. Նամակ Կովկասյան ճակատի 1-ին բանակի հրամանատարի տեղակալին։ 24 փետրվարի 1915 թ. 335
141. Կ. Պոլսի ռուսական դեսպանության թարգմանիչը՝ արտաքին գործերի մինիստրությանը։ 15 մարտի 1915 թ. 336
142. Կաթողիկոս Գևորգ V-ը՝ ռուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 7 ապրիլի 1915 թ. 337
143. Կ. Պոլսի դուսական դեսպանության թարգմանիչը՝ արտաքին գործերի մինիստրությանը։ 10 ապրիլի 1915 թ. 338
144. Արտաքին գործերի մինիստրությանը՝ Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների գծով աստիճանավորից։ 10 ապրիլի 1915 թ. 338
145. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը՝ Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Իզվոլսկուն և Բենկենդորֆին։ 12 ապրիլի 1915 թ. 339
146. Արտաքին գործերի մինիստրին՝ Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների գծով աստիճանավորից։ 23 ապրիլի 1915 թ. 339
147. Արտաքին գործերի մինիստրությանը՝ Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների գծով աստիճանավորից։ 29 ապրիլի 1915 թ. 340
148. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի հեռագիրը Լոնդոնում ռուսական դեսպանին։ 1 մայիսի 1914 թ. 340
149. Կաթողիկոս Գևորգ V-ը՝ ռուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 14 մայիսի 1915 թ. 341
150. Նամակ՝ հղված կաթողիկոս Գևորգ Սուրենյանին։ 28 մայիսի 1915 թ. 341

151. Վանի իտալական հյուպատոսական գործակալը՝ Պետրոգրադի իտալական դեսպանին։ 31 մայիսի 1915 թ. 344
152. Գերմանական հյուպատոս Շոյքների հեռագիրը Կ. Պոլսի դեսպանությանը։ 2 հունիսի 1915 թ. 348
153. Կ. Պոլսի դեսպանության թարգմանիչը՝ արտաքին գործերի մինիստրը Սազոնովին։ 4 հունիսի 1915 թ. 349
154. Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանի զեկույցից՝ ուղղված կանցլեր Բեթման-Հոլվեգին։ 17 հունիսի 1915 թ. 349
155. Կահիրեի ռուսական դեսպանորդը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 25 հունիսի 1915 թ. 350
156. Կաթողիկոս Գևորգ V-ը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 5 հուլիսի 1915 թ. 351
157. Դեսպան Վանգենհայմը՝ կանցլեր Բեթման-Հոլվեգին։ 7 հուլիսի 1915 թ. 352
158. Էրզրումցի հայերի տեղահանությունը։ 11 հուլիսի 1915 թ. . . 352
159. Գերմանական հյուպատոս Շոյքեր-Ռիխտերի զեկույցից՝ հղված դեսպան Վանգենհայմին։ 28 հուլիսի 1915 թ. 356
160. Ռուսական կովկասյան բանակի շտաբի թարգմանիչը՝ I Կովկասյան բանակային կորպուսի պետին։ 3 օգոստոսի 1915 թ. . . 357
161. Սոֆիայի ռուսական դեսպանորդը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 5 օգոստոսի 1915 թ. 357
162. Պետական դումայի անդամ Պապաջանյանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 8 օգոստոսի 1915 թ. 358
163. Ռուսական կովկասյան բանակի շտաբի թարգմանիչը՝ I Կովկասյան բանակային կորպուսի պետին։ 11 օգոստոսի 1915 թ. . . 359
164. Աթենքի ռուսական դեսպանորդը՝ արտաքին գործերի մինիստրությանը։ 11 օգոստոսի 1915 թ. 360
165. Կոնիայում ապրող գերմանացիների դիմումից՝ ուղղված Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը։ 16 օգոստոսի 1915 թ. . . 360
166. Կ. Պոլսի գերմանական զինվորական ներկայացուցչությանը՝ փոխգնդապետ Շտանգեի զեկուցագրից։ 23 օգոստոսի 1915 թ. . . 361
167. Կահիրեի ռուսական դեսպանորդը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 2 սեպտեմբերի 1915 թ. 362
168. Բժիշկ Զավրիևի նամակից՝ ուղղված ռուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 3 սեպտեմբերի 1915 թ. 362
169. Էրզրումի գերմանական զինվորական միսիայում ծառայած երկու գթության քույրերի հայտարարությունը 364
170. 1915 թ. հունիսին Էրզրումցի հայերի կոտորածի մասին պարսիկների և թուրքերի ցուցմունքներից 375
171. Մուշում հայերի կոտորածի ականատես գերմանացու հայտարարությունից 377
172. Կիլիկիայի դեպքերի մասին գերմանացի ականատեսի ուղեգրություններից 382
173. Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ դոկտոր Մարտին Նիպագեի հազորդումից 399

174. Եվլյցարիայի հասարակական և գիտական գործիչների կոչը [սեպտեմբեր–հոկտեմբեր 1915] 394
175. Արևմտահայոց պատրիարքը՝ Պոլոս Նուբար փաշային։ (հոկտեմբեր 1915 թ.) 395
176. Իրադարձությունները Սասունում և Մուշում։ 11 հոյեմբերի 1915 թ. 399
177. Պոլսում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսության աշխատակիցը՝ Թուրքիայի ամերիկյան դեսպան Մորգենթաուին։ 11 հոյեմբերի 1915 թ. 403
178. Արևմտահայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը՝ ամերիկահայոց հոգևոր առաջնորդ ծ. վրդ. Վեհունուն։ 28 դեկտեմբերի 1915 թ. 405
179. Համառոտ տեղեկագիր Տիարպեքիրի վերջին կոտորածին և ազգայնոց տեղահանության 411
180. Կոտորածը Մուշում և Սասունում 1915 թ. 420
181. Թուրք բժշկի օրագրից 428
182. Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը 432
183. Նամակ «Ժուռնալ դը Ժենև»-ի խմբագրությանը։ 10 սեպտեմբերի 1915 թ. 435
184. Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը (տպագրված թղթակցություն)՝ «Բազլեր Նախրիխտեն» թերթում 437
185. Զանգվածային սպանությունները Հայաստանում։ 27 սեպտեմբերի 1915 թ. 442
186. Մտքերի փոխանակություն լորդերի պալատում 1915 թ. հոկտեմբերի 6-ին 444
187. Հայերի նկատմամբ գազանությունները շարունակվում են։ («Թայմս» թերթի թղթակցի հաղորդագրությունը)։ 18 դեկտեմբերի 1915 թ. 450
188. Բասկանի դրաման («Կավկազսկոյե սլովո» թերթում տպագրված թղթակցություն) 451
189. «Խարբերդից մինչև Ուրֆա ճանապարհին» գրքից 453
190. Քաղվածքներ Առնոլդ Թոյնբիի «Հայկական սարսափներ» 1915 թ.) գրքից 466
191. Դ-ր Լեփսիուսը 1915 թ. հայերի տեղահանության և կոտորածի մասին 468
192. 1915 թ. տեղահանված կամ սպանված հայերի թիվը (Լեփսիուսի տվյալներով) 472
193. Քան կախազաններ 477
194. Ամերիկացի քարոզիչ Վ. Ջեքսի հաղորդումը 477
195. Ականատես արաբ Ֆայեզ էլ Ղոսեյնի պատմածից (1915 թ. հայերի կոտորածի մասին) 482
196. Հատվածներ Մելսն-զադե Ռիֆատի հուշերից 494
197. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը՝ Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Իզվոլսկուն և Բենկենդորֆին։ 17 հունվարի 1916 թ. 499
198. Փարիզում ռուսաց դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 26 հունվարի (6 փետրվարի) 1916 թ. 500
199. Լոնդոնում ռուսաց դեսպանը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 22 փետրվարի (6 մարտի) 1916 թ. 500

200. Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պետին ներկայացված զեկուցագրից։ 14 փետրվարի 1916 թ. 501
201. Զեկույց շտաբս-կապիտան Կրիմ Շամխալլին։ 6 մարտի 1916 թ. 504
202. Բեռնում ռուսական դեսպանորդը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովին։ 2 մայիսի 1916 թ. 505
203. Հաղորդագրություն Տրապիզոնում հայերի կոտորածի մասին . . 505
204. Կ. Պոլսում գերմանական դեսպանը՝ կանցլեր Բեթման-Հոլվեգին։ 10 հուլիսի 1916 թ. 506
205. Նամակ ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին։ 28 հոյեմբերի 1916 թ. 506
206. Տեղեկություններ 1916 թ. Քրդի գավառում կոտորածի ժամանակ զոհված հայերի թվի մասին 511
207. «Երիտթուրքերը և նրանց զոհերը» հոդվածից 512
208. Ֆ. Ա. Բուտիշկինի «Էրզրումում» հոդվածից 519
209. Մի շարք թուրք բժիշկների ոճրագործությունները 1915—1916 թթ. 520
210. 1916 թ. հունվարի 16-ին Փարիզում Էմիլ Գումերդի արտասանած ճառից 524
211. Ս. Մ. Կիրովի «Տառապյալ ժողովուրդ» հոդվածը . . . 526
212. 1916 թ. ապրիլի 9-ին Փարիզում Անատոլ Ֆրանսի արտասանած ճառից 527
213. Կարլ Լիբկնեխտի ասույթներից (1916 թ. հուլիս) 529
214. Ջեյմս Բրայսը երիտթուրքական կառավարության պատասխանատվության մասին 529
215. Հ. Ա. Գիբոնսի (Վերջին շարքերը Հայաստանում» գրքից . . 530
216. Հատվածներ Ռենե Պինոնի «Հայերի բնաջնջումը» գրքից . . 538
217. Վալերի Բրյուսովը արևմտահայերի ողբերգության մասին . . 540
218. Հաների Բարբիի «Սարսափի երկրում» գրքից 1916 թ. ապրիլ . 541
219. Թուրք պաշտոնյա Նայիմ բեյի հուշերից (Աքսորն ու կոտորածը Ռաս ուլ-Այնում և Դեյր Զորում 1916 թ.) 559
220. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին ուղարկված նամակից։ 21 հունվարի 1917 թ. 577
221. 1915—1917 թթ. Թուրքիայում ապրած մի գերմանացու նամակից։ 26 մարտի 1917 թ. 578
222. Արտաքին գործերի մինիստր Տերեշչենկոյին հղված հեռագրից։ 31 մայիսի 1917 թ. 578
223. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին։ 27 հունիսի 1917 թ. . 579
224. Ամենայն հայոց կաթողիկոսին ուղարկված զեկուցագրից (Խարբերդի մեջ հայ կղերներու կրած չարչարանքներու տեսակները) . 581
225. Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը «Թուրքահայաստանի» մասին։ 29 դեկտեմբերի 1917 թ. (11 հունվարի 1918 թ.) . 582
226. Գնդապետ Զ.-ի հետ կայացած զրույցից 584
227. Հատվածներ Ա. Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը» գրքից 589
228. Վ. Ա. Գորդլևսկու «Հայերը և պատերազմը» հոդվածից (1917 թ.) 601

229. Թուրքահայաստանի մասին Վ. Տերյանի զեկուցագրից (1917 թ.) . 603
230. Հաղորդում Տրապիզոնում թուրքական զորքերի կատարած գազանությունների մասին 605
231. Գերմանիայի արտաքին գործերի մինիստրի օգնականը արտաքին գործերի մինիստր Կյուլմանին։ 22 մարտի 1918 թ. . . 606
232. ՌՆՏԱՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նոտան Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը։ 12 ապրիլի 1918 թ., № 71 606
233. Հալեպում Գերմանիայի հյուպատոսը ռայխսկանցլեր Հերտլինգին։ 15 մայիսի 1918 թ. 607
234. Ղարաքիլիսայի ճակատամարտը (1918 թ. մայիսի վերջ) . . 608
235. Մարտեր Սարդարապատի և Բաշ Ապարանի մոտ (1918 թ. մայիսի վերջ) 608
236. Վեհիբ փաշան հայերի ինքնապաշտպանության մասին (1918 թ. հունիս) 609
237. Թուրքերի գազանությունները Ղարաքիլիսայում 610
238. ՌՆՏԱՀ Ժողկոմխորհի որոշումը հայ գաղթականներին երկրորդ անգամ օգնություն ցույց տալու մասին։ 26 հունիսի 1918 թ. . 611
239. Կովկասում գերմանական զինվորական ներկայացուցչության զեկավար գեներալ Ֆոն Կրեսի հեռագիրը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունն։ 10 հուլիսի 1918 թ. 612
240. Բեռլինում Հայաստանի կառավարության լիազորների դիմումը Բուլղարիայի թագավորության գործերի հավատարմատար դոկտոր Նիկիֆորովին։ 20 հուլիսի 1918 թ. 612
241. Հայ խաղաղ բնակչության և ռազմագերիների նկատմամբ թուրքական զորքերի գործադրած բռնությունների մասին Հայկական լրատվական բյուրոյի պետի զեկուցագրից (1918 թ. հուլիս) . . 614
242. Գերմանիայի կանցլեր Ֆոն Հերտլինգին Ֆոն Կրեսի հղած հեռագրից։ 4 օգոստոսի 1918 թ. 617
243. Գեներալ Ֆոն Կրեսը Գերմանիայի կանցլեր Հերտլինգին։ 5 օգոստոսի 1918 թ. 618
244. Ականատես բժիշկը Բաքվում թուրքերի կատարած գազանությունների մասին։ 30 սեպտեմբերի 1918 թ. 619
245. ՌՆՏԱՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի նոտան Թուրքիայի բատաքին գործերի մինիստրությանը։ 20 սեպտեմբերի 1918 թ. 622
246. Գ. Վ. Չիչերինին Ս. Օրջոնիկիձեի ուղարկած հեռագրից։ 12 հոկտեմբերի 1918 թ. 624
247. Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպիսկոպոսը՝ Բաքվի շրջանի դաշնակից զորքերի հրամանատար գեներալ-մայոր Վ. Մ. Թոմսոնին։ 10 (23) հոյեմբերի 1918 թ. . 625
248. Ալեքսանդրապոլի հայրենակցական միության վարչության դիմումը հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդին։ 1 դեկտեմբերի 1918 թ. 636
249. Ախալցխայի հայրենակցական վարչությունը հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդին։ 2 դեկտեմբերի 1918 թ. 639
250. Փամբակցիների հայրենակցական միության վարչությունը հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդին։ 3 դեկտեմբերի 1918 թ. 641
251. Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի դիմումը Կովկասում դաշնակից պետությունների ներկայացուցիչներին։ 19 դեկտեմբերի 1918 թ. 642
252. Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերից 652
253. Ժակ դը Մորգանը օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման մասին 669
254. Հաղորդում երիտթուրքերի պարագլուխների 1919 թ. դատավարության մասին 672
255. Տրապիզոնի և Խարբերդի վիլայեթներում կատարված տեղահանության ու սպանությունների մեղավորների դատավարությունների դատավճիռները 687
256. Գերմանացի գրող Արմին Թ. Վեգները Միջագետքի անապատներում զոհված հայերի մասին 696
257. Յոզեֆ Մարկվարտը արևմտահայերին բնաջնջելու ծրագրի մասին 699
258. Թալեաթ փաշայի սպանության առթիվ Բեռլինի դատավարությունում Յո. Լեփսիուսի ունեցած ելույթից 702
259. Դ. Լլոյդ Ջորջը Թուրքիայում հայերի և հույների կոտորածի մասին 703
260. Դ. Լլոյդ Ջորջի խոստովանությունը 704
261. Ջերչիլը հայերի զանգվածային կոտորածի մասին . . . 704
262. Մ. Գորկու ասույթներից 705
263. Ֆրիտյոֆ Նանսենը Մեծ եղեռնի մասին 706
264. Ե. Վ. Տաուլին արևմտահայերի ջնջապանության մասին . . 710

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան— Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ III

Առաջին մաս

Հայերի կոտորածները սուլթան Աբդուլ Համիդի (1876—1908 թթ.) օրոք 1

Երկրորդ մաս

Հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909—1918 թթ.) 229
Ծանոթագրություններ 719
Փաստաթղթերի և նյութերի ցուցակ 746

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում
Փաստաթղթերի և նյութերի ժողովածու

Геноцид армян в Османской империи.
Сборник документов и материалов

(На армянском языке)

Ереван «Айастан» 1991

Ռուսերեն երկրորդ, լրացված հրատարակությունից
թարգմանեցին Հ. Ա. Հարությունը և Ռ. Ա. Այվազյանը
Հայերեն թարգմանության խմբագիր՝ Վ. Ա. Դիլոյան
Հրատ. խմբագիր՝ Շ. Ս. Բաղինյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Դ. Ա. Գալոյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Տոնոյան

ИБ — 7200

Հանձնված է շարվածքի 4.10.1990 թ.։

Ստորագրված է տպագրության 15.07.1991 թ.։

Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպ. № 2։ Ցառատեսակ՝ «Գրքի սովորական»։

Տպագրություն՝ բարձր։ 41,58 պայմ. տպագր. մամ., 39,34 հրատ. մամ.։

Տպաքանակ՝ 25000։ Պատվեր՝ 1448։ Գինը՝ 7 ռ. 50 կոպ.։

«Հայաստան» հրատարակչության, Երևան—9, Ավ. Իսահակյան 28։

Издательство «Айастан», Ереван-9, ул. Ав. Исаакяна, 28.

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Հանրապետության 65։

Типография № 1 Комитета по печати при Совете Министров Республики Армения. Ереван-10, ул. Анрапетутяна, 65.